

Հ. ԱՄԱՐՅԱՆ

ԼՄԿԱՍՏԱՐ
ՔԵՐԱԿԱՆԼԱԹՅԱՆ
ՀԱՅՈՑ ԼԵԶՎ

ՀԱՏԱՐ

VI

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Г. АЧАРЯНА

Г. АЧАРЯН

**ПОЛНАЯ
ГРАММАТИКА
АРМЯНСКОГО ЯЗЫКА**

В СРАВНЕНИИ
с 562
ЯЗЫКАМИ

ТОМ
VI

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН ~ 1971

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

4147.925
W-50

Հ.ԱՃԱՌՅԱՆ

**ԼԻԱԿԱՏԱՐ
ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ**

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՐԲ
562
ԼԵԶՈՒՆԵՐԻ

1321

Հասոր
VI

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ~ 1971



Տպագրության պատրաստեց և խմբագրեց
պրոֆ. է. Բ. ԱՂԱՅԱՆԸ

Подготовил к печати и редактировал
проф. Э. Б. АГАЯН



24972

Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Մ Ո Ւ Տ Ք

Ձայնագիտությունը լեզվաբանության այն ճյուղն է, որ զբաղվում է ձայնի, բայց հատկապես մարդկային ձայնի ուսումնասիրությամբ: Ձայնը կարելի է ուսումնասիրել նախ բնագիտական տեսակետով, այսինքն՝ թե ի՞նչ է ձայնը, ի՞նչից է առաջանում այն, ի՞նչպես է ձևավորվում և թե ի՞նչ մասնավոր և ընդհանուր հատկություններ ունի: Երկրորդ՝ կարելի է ուսումնասիրել ձայնը մարդակազմական և բնախոսական տեսակետով, այսինքն՝ թե ինչպես է առաջանում մարդկային ձայնը, ի՞նչ գործարաններ և ի՞նչպես մասնակցում են նրա առաքելության, և թե այդ արտաբերված ձայնը ի՞նչպես է հասնում լսողական գործարանին և այդպեղից էլ փոխանցվում է լսողական կենտրոնին: Երրորդ՝ որո՞նք են այն ձայները, որ հնարել են մարդկային զանազան լեզուներն ընդհանրապես և այս կամ այն լեզուն մասնավորապես, այդ ձայների գիտական համակարգությունը և դասավորությունը: Չորրորդ՝ ձայների զանազան խմբակցությունց մեջ ի՞նչ փոխադարձ ազդեցություն ունեն ձայներն իրար վրա, և թե ի՞նչ փոփոխություններ են կրում այդ ձայները լեզվի զարգացման հետագա շրջաններում:

Այս շորս կետերից առաջին երկուսը զուտ լեզվաբանական շեն և շեն էլ կազմում լեզվաբանության նպատակը, բայց նրանք անհրաժեշտ են մեզ՝ բմբունելու համար այն սկզբունքները, որոնք հիմքն են կազմում մյուս երկու զուտ լեզվաբանական նպատակներին: Ամեն մի լեզվի բովանդակված ձայների նույնիսկ շատ հա-

սարակ դասակարգութիւնը անհրաժեշտաբար պահանջում է ունեւնալ որոշ զաղափար այն գործարանների մասին, որոնք մասնակցում են այդ ձայների արտաբերության, իսկ այդ ձայների փոփոխութեան օրենքները կարող են բացատրվել միմիայն բնախոսական պատճառներով: Առանց այդ պատճառների քննութեան, մենք կարող ենք միայն նկատել լեզվաբանական օրենքներն ու երևույթները, բայց ըմբռնել նրանց էութիւնը և խորամուխ լինել նրանց ծագման՝ անկարող կլինենք:

Այս տեսակետներով, ուրեմն, ձայնագիտութիւնը լեզվաբանական գիտութեան կարեւոր և անհրաժեշտ մասն է կազմում. առանց ձայնաբանութեան գիտական օրենքների լեզվաբանութիւնը դառնում է բառախաղութիւն, ինչպես էր հնների մոտ: Նոր լեզվաբանութիւնը հիմնված է միայն և միմիայն ձայնաբանութեան հաստատուն օրենքների վրա. այդ օրենքներն են, որ որոշում են լեզուների ցեղակցութիւնը, նրանց ճշուգտութիւնը և նոր լեզուների ու բարբառների բաժանումը. այդ օրենքներն են, որ տալիս են մեզ ձևաբանական (քերականական) փոփոխութեանց իսկական պատճառները, բացատրում շեշտադրութեան ու տաղաչափութեան կանոնները, և այդ օրենքներն են վերջապես, որ հնարավորութիւն են տալիս մեզ ծանոթ լեզուների համեմատութեամբ անձանոթ ու անհետ կորած նախալեզուները վերականգնելու:

Այս բոլորից դուրս ձայնագիտութիւնը ծառայում է նաև գործնական նպատակների: Նկարագրելով ձայնական գործարանների կամ նրանց այս ու այն մասի դերն ու դիրքը այս կամ այն ձայնի արտաբերութեան մեջ, նա մեզ միջոց է տալիս սովորելու որևէ օտար ու անձանոթ լեզվի ձայները և նրանց հնչյունը ըստ կարելիութեան ճիշտ արտաբերելու: Նա ծառայում է նաև ուղղելու զանազան թերութիւններ արտասանութեան մեջ, ինչպես են անգախոսութիւն և կակազում. վերջապես, ձայնագիտութիւնը կարեւոր է խոյ և համրերի ուսուցման գործը կազմակերպելու համար:

ՄԱՄՆ ԱՌԱՋԻՆ

ՉԱՅՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Չ Ա Յ Ն¹

Ռուսերենում մարդու ձայնը և սաարկայի ձայնը ճիշտ գանազանվում են միմյանցից: Մարդու ձայնը կոչվում է ГОЛОС, սաարկայի ձայնը կոչվում է ЗВУК: Ֆրանսերենում մարդու ձայնն է la voix, իսկ սաարկայինը կլինի SON: Բայց ստամ ենք la vitesse du son «ձայնի արագությունը», որ իհարկե թե՛ սաարկայի և թե՛ մարդու ձայնի համար է: Ավելի դարձանայի են voyelle «ձայնափոս» և consonne «բաղաձայն» բառերը, որոնց մեջ գտնված VOIX և SON բառերը հավասարապես դարձել են հայերենն աւյն:

Չայն բառը հայերենում հասկացված է թե՛ մարդու, թե՛ անասունների և թե՛ իրերի հանած ձայնին, ինչպես՝ «Լուայ գծայն քո», «Փոխանակ զի լուար ձայնի կնոջդ», «Հասանկին ձայնի փողոյն», «Ի լսել ձեզ գծայն եղչեր փողոյ», «Լսիցես դու գծայն շարժման», «Լուա գծայն ոտից նորա», «Չայն մեղմոյ օղոյ», «Չայն մարտի», «Չայն պատերազմի», «Չձայն ալեաց նորա», «Ի ձայնէ շուրց», «Որպէս գծայն փշոց ի ներոյ կարսայի», «Ի տկարութենէ ձայնի աղօրոյն», «Չայն տաարակի լսելի եղև», «Չայն ուտան պղղեցէլ գունկն», «Իբրև գծայն ծովու», «Իբրև գծայն բոցոյ հրոյ», «Չայն արաւ կախան»:

¹ Stone, Elementary lessons on sound, London, 1891: Հմտ. Chassigny, Cours élémentaire de physique, Paris, 1912, p. 433—521.—Drincourt et Dupays, Traité de physique, Paris, 1902, p. 146—204.—Langlebert, Cours de physique, Paris, 1909, p. 443—447:

Այս բնույթը օրինակները քաղված են Ս. Գրբի Համարաբարեացի:
Հին հայերենում երկու ուրիշ համանիշներ էլ կան ձայն բառի
համար. բարբառ և հնչյուն: Առաջինը աշխարհաբարում բուրբովին
տարբեր իմաստ է ստացել (զավառական լեզու), իսկ հնչյունը, որ
այժմ սովորական գործածություն է ստացել, շատ դեպքերում
պատշաճ չի լինում կիրառել:

Այս գրքում մենք ձայն բառին տվեցինք ընդհանուր գործա-
ծություն՝ գրաբարի նման:

* * *

Ձայնի տառամասերովքամը զբաղվող դիտությունը կոչ-
վում է ֆոնետիկա, և այս բառով հասկացվում են նրա բոլոր
ճյուղերը: Գերմանացիք առաջ տնեին միայն Lautlehre բառը,
որով հասկանում էին նախապես այդ դիտության բոլոր ճյուղերը.
բայց այժմ վերցրել են նաև Phonetik բառը, որով հասկանում են
ձայնի ստամառարարության ֆիզիկալի և կազմախոսական մասը,
իսկ Lautlehre բառով հասկանում են ձայնի փոփոխություն օրենք-
ները լեզվի մեջ՝ ժամանակի ընթացքում:

Ֆրանսիացիք էլ առաջ գործածում էին միայն մի բառ. որ է
Phonétique, բայց երբ դիտությունը ընդարձակվեց և նրա բնա-
խոսական և պատմական մասերի մեջ կարիք զգացին խառնված
զնեյու, առաջինը կոչեցին Phonologie, երկրորդը՝ Phonétique.

Մենք հարմար համարեցինք այս դիտության բոլոր ճյուղերի
համար տալ միասնական Ձայնագիտություն անունը, նրա բնախո-
սական մասը կոչել Ձայնախոսություն, իսկ պատմական (քերա-
կանական) մասը՝ Ձայնափոխություն:

Երաժշտական մասի համար մնում է ձայնագրություն հին
բառը:

* * *

Ձայնը այն սպալորությունն է, որ գործում է օդի թրթուր
ականջի վրա:

Թրթուրն նշանակում է մի տեղում հաստատված մի անարկա-
չի կատարած պարբերական շարժումները՝ հավասար տեղու-
թյամբ, որոնց հաջորդում է հետո հանգիստը. օրինակ՝ ժամացույ-
ցի ճոճանակի կանոնավոր շարժումները, մի ծայրից ամբացած


անաձիգ թիթեղի կտորի ցնցումները, երկու ծայրից սրկված մի
լիկի ցնցումները թրթուրներ են:

Ձայնական թրթուրները կամ ուրիշ խոսքով ձայն առաջացնե-
լու համար կան զանազան միջոցներ, որոնց մեջ ամենակարևոր-
ներն են բախում, շփում, պայթում, մուրճի հարվածը արույրին
կամ լեզվակի բախումը զանգակին տալիս են որոշ ձայն, մատնե-
րի շփումը բաժակի եզրերնեքին կամ կնտնտոցի շփումը ջութակի
լարերին տալիս են ախորժեկի ձայն. հրացանի կամ սուժի պայ-
թյունը տալիս են մի հանկարծական և ուժեղ ձայն:


Կարելի է թղթի վրա նկարել այս թրթուրները: Սրա համար
կա առանձին մեքենա (պատկեր 1): Մեքենան բաղկացած է երկու
մասից: Առաջինն է մի տուփ, որի մեջ կա ժամացուցային կազմու-
թյամբ մի զսպանակ, որ լարվելով սկսում է պտտվել միօրինակ և
համաշափ շարժումով: Երկրորդ մասն է մի զլան, որ մի առանց-
քով միացած է նույն տուփին և զսպանակի շարժման ժամանակ
ինքն էլ նրա հետ համաշափորեն պտտվում է: Եթե ուղևոր արձա-
նագրել մի որևէ մարմնի թրթուրները, այդ մարմինը մի սուր
ծայրով կհաստատենք զլանի վրա, որի վրա նախապես կպցրած է
լինում մրով սեացած փաչլուն թուղթ: Ձսպանակը սկսում է
շարժվել, զլանը պտտվում է, թրթուրացող մարմնի ցնցումները նշա-
նակվում են մրած թղթի վրա սպիտակ խաղերով: Գլանի մի պտույ-
տը տալիս է մեկ թրթուրների մի բավական երկար գիծ. իսկ եթե
կարիք կա ավելի երկար գծեր ստանալու, կարելի է շարունակել
փորձը՝ հետեյալ ձևով: Գլանի առաջ կա մի շարժական սալակ,
որի վրա հաստատված է լինում այն մարմինը, որի թրթուրները
ուզում ենք արձանագրել. քանի զլանը պտտվում է, սալակն էլ
շարժվում է և իր հետ առաջ տանում նաև թրթուրացող մարմինը.
այսպիսով թրթուրների գծերը իրար վրա չեն նկարվում: Փորձից
հետո զլանի վրայից հանում ենք կպցրած թուղթը, թաթախում
որևէ ֆիքսատիվի մեջ, հետո շորացնում: Այսպիսով ստանում ենք
թրթուրների գծերը՝ ժապավենի պես, ըստ կամս հորիզոնական
կամ ուղղահայաց դիրքով: Ստացված գծերը լինում են սովորաբար
ալեձև զիգզագներ՝ զանազան ձևով և մեծությամբ: Որովհետև մենք
գիտենք, թե զլանը մի բույեում քանի անգամ է պտտվում, հետևա-
բար կարող ենք հաշվել, թե մի բույեում քանի թրթուր է լինում,
և թե յուրաքանչյուր թրթուր ինչքա՛ն տեղություն ունի:

Թրթուրների արձանագրության պարզագույն ձևը կարելի է
փորձել մի հասարակ սոսկալի բարակ կտորով, որի մի ծայրը


ամբողջված է սեղանի վրա (պատկեր 2): Չեռքի պարզ շարժումով բաշում ենք բաց մնացած մասը և թողնում է թրթռալ, մեքենան ստանալով նույն շարժումները, արձանագրում է. թերթը հանելով գտնում ենք թրթռումների այնչև նկարը (պատկեր 3):



Պատկեր 1



Պատկեր 2



Պատկեր 3

Ապացուցելու համար, թե ձայնը թրթռումների արդյունքն է, առենք մի երկար առաձգական ձող և մի ծայրը հաստատենք սեղ-միշի մեջ, ինչպես պատկեր 2: Այժմ հեռադեմեր բաց ծայրը իր հավասարակշիռ վիճակից և թողնենք: Պիտի տեսնենք, որ ձողը սկսելու է կատարել իր ճոճումները: Եթե ձողը բավական երկար է, ճոճումները բավական զանգաղ են լինում, այնպես որ կարելի է

լինում պարզ աչքով տեսնել ու հաշվել: Քանի կարճացնենք ձողը և փոքր կրկնենք, կտեսնենք, որ ճոճումներն էլ այնքան արագ են լինում: Հեռագհեռ կարճացնելով ձողը, վերջապես կհասնենք այնպիսի աստիճանի, երբ ճոճումները այլևս նշմարելի չեն դառնում և ձողը մեզ թվում է ծայրն ուռած մի առարկա: Գա նրանից է, որ աչքի կրած ապաօբյեկտիվը յուրաքանչյուր ճոճման ժամանակ՝ այնքան արագ չի շնչվում, որքան ճոճումներն են հետևում իրար և հետևարար մենք տեսնում ենք ձողը իր բոլոր դիրքերի մեջ միանգամայն: Եթե սրանից հետո էլի շարունակենք կարճացնել ձողը, վերջապես կսկսենք լսել մի թավ ձայն, որ այնքան ուժեղ կլինի, որքան ձողի ծայրը հաստ երևա, այսինքն թրթռումները լի լինեն: Իսկ եթե է՛լ ավելի կարճացնենք ձողը, կլսենք ավելի սուր մի ձայն, բան առաջինը: Այսպիսով ապացուցվում է, որ ձայնը որոշ արագությամբ թրթռումների արդյունք է:

Թրթռումներից առաջացած ցնցումը փոխանցվում է հետոն, ճիշտ այնպես, ինչպես հանգարտ ջրի մեջ զցված մի բար տալիս է վետվետումներ, որոնք շրջանակի ձև առնելով հասնում են մինչև եզերքը: Փոխանցումը կատարվում է բնականաբար որևէ մարմնի միջոցով, ինչպես օդ, ջուր, գազ, հաստատուն մարմիններ, մի խոսքով ամեն կշռելի առաձգական մարմին: Չայն էլ ուրեմն փոխանցվում է այս մարմինների միջոցով: Առանց օդի, կատարյալ պարապոթյան մեջ, ձայն չկա: Այս բանը ապացուցելու համար կարելի է կատարել հետևյալ հասարակ փորձը:

Օդահան մեքենայի զանգակի տակ զնենք մի էլեկտրական զանգ. բանի զանգակը լի է օդով, ձայնը լսելի է լինում, բայց երբ սկսում ենք դատարկել օդը, նրա հետ էլ աստիճանաբար նվազում է ձայնը և, վերջապես, երբ օդը ամբողջովին պարպվում է, ձայնն էլ այլևս դադարում է, թեև զանգի լեզվակի ցնցումները չեն դադարում: Երբ օդը նորից սկսենք լցնել զանգակի մեջ, ձայնն էլ սկսում է հնչել: Արդյունքը նույնն է լինում, եթե օդի տեղ զանգակի մեջ լցնենք որևէ գազ:

Այսպիսով ապացուցվում է, որ ձայնը պարապոթյան մեջ լսելի չէ. նրա փոխանցման համար անհրաժեշտ է օդը:

Չայնի փոխանցումը կատարվում է նաև հեղուկների և հաստատուն մարմինների միջոցով: Լուրդըր ծովի տակ լսում է ամենատեղի ձայնը: Երբ ականջներս կպցնենք մի գերանի, մյուս ծայրին զնգասեղով արված շնչին շարժումները պարզ լսելի են լինում:

զգացողություն. զա առաջանում է ձայնի երանգից: Ձայնափորների հնչակն տարբերությունն էլ առաջանում է ձայնի երանգից:

Տեղություն ասելով հասկացվում է այն ժամանակը, որ արբւյում է այսինչ ձայնի արտաբերության համար, առանց փոխելու էրանգը և բարձրությունը:

Այս շորս հատկությունները անկախ են իրարից. կարող ենք արտաբերել ձայնը ուժգին, բայց միևնույն ժամանակ կարճ, բարձր, բայց միևնույն ժամանակ թույլ, և այլն, և այլն:

Ուժգնությունը կապ ունի հնչող առարկայի հեռավորության, օդի խտության ու ցնցման, ինչպես և մի հնչող առարկայի մերձավորության հետ:

Ուժգնությունը խոտոր համեմատական է ձայնական կենտրոնի հեռավորության հետ. որքան հեռու է հնչող առարկան, այնքան էլ ակար է մեր ականջի կրած ազդությունը, այսինքն՝ այնքան նվազ է ձայնի ուժգնությունը:


Ուժգնությունը ուղիղ համեմատական է օդի ճնշման աստիճանի հետ. բարձր մի սարի գլխին արձակված ատրճանակի պայթյունը տղայի խաղալիքի նման մի բան է դառնում: Փորձով կարելի է տեսնել նույնը օդահան մեքենայի զանգակի տակ, ուր օդը դատարկելուց հետո, երբ նորից սկսում ենք օդը ներս հոսեցնել, զանգակի հնչյունը հեռուցհետ սաստկանում է և ավելի ուժեղ դառնում, քանի ներմուծված օդի քանակը շատանում է: Նույնպես, եթե օդի փոխարեն լցնենք մի ուրիշ գաղ, զանգակի հնչյունը կավելանա կամ կզակասի գաղի ծանրության կամ թեթևության համեմատ: Սրանից երևում է, որ ձայնի ուժգնությունը ուղիղ համեմատական է նաև ծանրության կամ խտության հետ:

Ամեն մարդ գիտի նույնպես, որ զանգի ձայնը ավելանում կամ սլակասում է համեմատ այն պատկերի, որ տալիս է նրանց թրթրոսումների պատկերը մրած թղթի վրա: Եթե հաշվենք, կտեսնենք, որ միևնույն երկարությամբ գծի վրա ձևացած թրթրումները նույն թիվն ունեն: Իսկ եթե տարբեր նոտաներ վերցնենք, սուր ձայնը ներկայացնում է ավելի շատ թրթրումներ, քան թավը: Սրանից հետևում է, որ ձայնի բարձրությունը ուղիղ համեմատական է թրթրոսումների արագության հետ:

Որպեսզի ձայնը լսելի լինի մեր ականջին, պետք է ունենա որոշ թվով թրթրումներ: Այս թիվը թեև ականջի զգայնության համեմատ անձից անձ փոփոխվում է, բայց սովորաբար ընդունված է, որ նա պետք է ունենա առնվազն 16 զույգ (կամ 32 առանձին) և

առավելն 38 000 կրկնակ (կամ 76 000 առանձին) թրթրում մի վայրկյանում, ըստ քննության Գեսպրեց բնագետի: Սրանից պակաս կամ ավելի թրթրումներ ունեցող մի ձայն մեր ականջը չի ջուկում:

Բացի սրանից, մի հատիկ թրթրում կամ թրթրումի մի ակիբ բավական չէ լսողության համար. պետք է որ առնվազն 10—15 թրթրում համաչափությամբ հաջորդեն իրար վերև հիշված արագության սահմանում, որպեսզի կարողանան գալ խփել մեր ականջը:



24942

1321

Ձայնի բարձրությունը շափելու կամ որոշելու համար կան զանազան գործիքներ, մեքենական, տեսողական, լուսանկարչական, էլեկտրական և այլն, որոնցից պարզագույնները հետևյալներն են.

1. Ձայնափող (tuyau sonore), որ բաղկացած է մի զանաձև խողովակից և ծայրին ունի մի շերտ. մյուս ծայրից փչելուց՝ շերտը սկսում է թրթրալ և այսպիսով լսվում է մի որոշ ձայն, որ զանազան է լինում համաձայն փողի մեծության: Միևնույն ձայնափողը տալիս է միշտ միևնույն ձայնը, որ և ծառայում է նրանից բարձր և նրանից ցածր մյուս ձայնները որոշելու:

2. Ձայնորդ (diapazon, կամերտոն). պողպատից երկմատ մի ձող է, որ խփելով որևէ մարմնի, սկսում է թրթրալ և տալիս է մի որոշ ձայն: Յուրաքանչյուր ձայնորդ ունենում է մի որոշ ձայն. սրանով նույնպես որոշվում են մյուս ձայները:

Կա մի հատուկ ձայնորդ (պատկեր 4), որով կարելի է դուրս բերել զանազան ձայններ: Սա նույնպիսի սովորական մի ձայնորդ է, որի երկու ճյուղերի վրա ագուցված է հավասար մեծությամբ մի-մի հավելվածական շարժական կտոր: Կտորները բռնված են մի





պտուտակով և պահվում են զուգահեռապես հեռավորությամբ: Չայնորդը եթե թրթռացնենք, այս պարագային կտա ավելի ցածր ձայն, և այդ ձայնը այնքան ավելի ցածր կլինի, որքան հավելվածները ծանր են և ծայրերին ավելի մոտ ամրացված:

3. Չերեկի սիբենա (պատկեր 5). բաղկացած է խավաքարե կամ մետաղե մի սկավառակից, որի վրա բացված են համաչափ հեռավորությամբ և հավասար մեծությամբ բազմաթիվ ծակեր: Սկավառակը պտտվում է իր առանցքի վրա միօրինակ շարժումով: Սկավառակի հետևում հարմարացրած է մի փուքս, որի խողովակի ծայրից շարունակ փչվում է քամին: Սկավառակը պտտվելով, ծակերը հաջորդաբար գալիս անցնում են փուքսի խողովակի առջևով, այնպես որ քամին անցնում է ծակերի միջով: Սրանով առաջանում է մի ձայն, որ այնքան բարձր է լինում, որքան արագանում է պտույտը: Եթե սկավառակն ունի n ծակ և կատարում է N պտույտ մի վայրկյանում, ուրեմն ստացված ձայնը իր բարձրությամբ համապատասխանում է մի այնպիսի ձայնի, որ ունի մի վայրկյանում $n \times N$ թրթռում: Սկավառակը կանոնավոր կերպով իր պտույտները կատարելու համար ունի մի շուռտվիկ: Բացի սրանից, սկավառակի ներքև դարձող երկու ատամնավոր անիվները պտտվելով միաժամանակ, ցույց են տալիս սկավառակի կատարած պտույտների թիվը: Անիվներից մեկն ունի 100 ատամ և սկավառակի պտույտի հետ ինքն էլ պտտվելով, միևնույն ժամանակ շարժվում է երկրորդ անիվը: Առաջին անիվի մի ատամին համապատասխանում է սկավառակի մի պտույտ, իսկ նրա 100 ատամին շարժվում է երկրորդ անիվից մի ատամ. այսպիսով հեշտությամբ կարելի է իմանալ, թե սկավառակը քանի՞ անգամ է պտտվել: Թրթռումների թիվը իմանալու համար պետք է պտտեցնել սկավառակը և արտադրված ձայնը համեմատել ցանկացած ձայնի հետ: Քանի արագացնենք սկավառակի պտույտը, ձայնն էլ այնքան կբարձրանա: Հենց որ սկավառակի ձայնը հավասարվեց քննելի ձայնին, կսկսենք նորից շարժել սկավառակը նույն արագությամբ՝ հաշվելով վայրկյանները: Այնուհետև անիվների վրայից իմանալով պտույտների թիվը, կբազմապատկենք սկավառակի ծակերի թվի հետ և արտադրյալը բաժանելով վայրկյանների թվով, քանորդը կլինի նույն ձայնի համար արված թրթռումների թիվը մի վայրկյանում:

4. Cagniard-Latour սիբենա.— Հիմնված է նույն սկզբունքով, ինչ որ նախորդը. միայն թե օդի հոսանքը գործ է ածվում սկավա-

ռակը պտտցնելու համար (պատկեր 6—7): Սեղանի տակին հաստատված է մի փուքս, որ շարժվում է ոտքի բախումներով: Սեղանի վրա հաստատված է բուն գործիքը: Սա բաղկացած է նույնպես մի սկավառակից, որ դրված է մետաղյա տուփի երեսի վրա: Թե՛ սկավառակը և թե՛ տուփի երեսը ունեն որոշ թվով և համաչափ հեռավորությամբ ծակեր: Տուփը մի խողովակով ազուցվում է սեղա-



նի վրա և միանում փուքսին: Փուքսի շարժման ժամանակ օդը անցնելով խողովակով, դուրս է գալիս տուփի երեսի բոլոր ծակերից. որովհետև, սկավառակի ծակերն էլ այնպես են շինված, որ ճիշտ նրանց դեմ առ դեմ են գալիս, ուստի օդի հոսանքը անցնում է նրանց միջով և ստեղծում որոշ ձայն: Քանի արագանա շարժումը, ձայնն էլ ավելի կբարձրանա: Միևնույն ժամանակ սեղանի վրա հաստատված է լինում մի ձայնափող, իսկ գործիքի վրա երկու անվակ՝ պտույտների թիվը հաշվելու համար: Սկավառակին տալիս են պետք եղած արագությունը, մինչև որ արտադրված ձայնը հավասարվի ձայնափողի ձայնին. այնուհետև անվակների վրա որոշելով պտույտների թիվը, շարժում են մեքենան 15 վայրկյան և նախորդի պես հաշվում թրթռումների թիվը մի վայրկյանում՝ ցանկացած ձայնի համար:

Այս գործիքներով ահա գիտունները շահելով ձայնի բարձր-
թյունը, որոշել են նրա զանազան աստիճանների թրթուսների
թիվը:

Եթե ձայնը շարժվում է 16-ից 38 000 թրթուսների միջև, նշա-
նակում է, որ կա այսքան աստիճանի ձայն: Բայց սա տեսականո-
րեն միայն ուղիղ է. ականջը անկարող է զանազանել, օրինակ,
400, 401, 402, 403 և այլն թրթուսներ ունեցող ձայներն իրարից.
ճիշտ ինչպես որ աչքը անկարող է լինում զանազանել սպիտակից
մինչև սև հասնող գույնի բոլոր երանգները: Ինչպես որ աչքը կա-
րողանում է ըմբռնել սպիտակից մինչև սև եղած երանգների առան-
ձին հանգրվանները միայն, այն է կաթնագույն, մոխրագույն, գորշ,
կապարագույն և թուխ, այնպես էլ ականջը ըմբռնում է ձայների
որոշ հանգրվանները: Հնագույն ժամանակներից սկսած մարդիկ
որոշել են ձայնի հետևյալ աստիճանները, իրենց թրթուսներով
միասին.

do ⁻²	re ⁻²	mi ⁻²	fa ⁻²	sol ⁻²	la ⁻²	si ⁻²
16	18	20	22	24	27	33
do ⁻¹	re ⁻¹	mi ⁻¹	fa ⁻¹	sol ⁻¹	la ⁻¹	si ⁻¹
32	36	40	43	49	54	66
do	re	mi	fa	sol	la	si
65	73	81	87	98	109	122
do ^{2*}	re ²	mi ²	fa ²	sol ²	la ²	si ²
130	146	162	174	196	218	244
do ³	re ³	mi ³	fa ³	sol ³	la ³	si ³
261	292	324	348	392	435	488
do ⁴	re ⁴	mi ⁴	fa ⁴	sol ⁴	la ⁴	si ⁴
522	584	648	696	783	872	976
do ⁵	re ⁵	mi ⁵	fa ⁵	sol ⁵	la ⁵	si ⁵
1044	1168	1296	1392	1568	1744	1952
do ⁶			fa ⁶			
2088			2784			
do ⁷						
4176						

* Այս թվերի մեջ կոտորակները զանց են առնված, այսպես, օրինակ, do ունի
խնայակես 65,25 թրթուս. սրա համեմատ էլ մյուսները: Թրթուսների իբրև տի-
պար առնվում է la³ (435 թրթուսով), որով շինում են սովորաբար կամերտոնը:

Մարդկային ձայնի ամենացածր աստիճանն է do¹ (որ է բաս),
իսկ սովորաբար ամենաբարձր ձայնն է do⁵. Երաժշտության մեջ
ամենացածր ձայնն է do², որ առաջանում է 16 ոտք երկարու-
թյամբ փակ խողովակի մեջ և երգեհոնի ամենամեծ խողովակն է.
do¹ (65 թրթուս) թավջութակի թավ ձայնն է:

Ամեն մի մարդ կյանքի ընթացքում մի քանի անգամ փոխում
է իր ձայնը. այլ է մանկական ձայնը, այլ է արբունքի հասած մարդու
ձայնը, այլ է երիտասարդության կամ ծերության ժամանակ, այլ է և
հիվանդ ժամանակ: Նույնիսկ միևնույն մարդը միևնույն օրվա ըն-
թացքում, նայած իր արամադրության կամ հանգամանքներին,
փոխում է իր ձայնը: Երկու հայ միևնույն լեզվով են խոսում, բայց
նրանց ձայնը տարբեր երանդ ունի. և հաճախ, առանց իրար տես-
նելու, մարդիկ ճանաչում են իրար՝ իրենց ձայնի երանդով, որ և
երկար տարիներ հիշողության մեջ մնում է անմոռաց:

Մերձավոր ժողովուրդներ իրար մոտիկ երանգներ ունեն
իրենց խոսակցության ձևի մեջ, քան հեռավոր ժողովուրդներ. օրի-
նակ, հայի ձայնը շատ ավելի նման է հնչում վրացու ձայնին, քան
մի անգլիացու:

Անշուշտ այս բոլորի մեջ կան նախ և առաջ ուժի, շեշտի և ձայ-
նի բարձրության տարբերություններ, մանավանդ հոգավորման
հիմքի (արտասանության եղանակի) տարբերություններ, բայց
սրանցից դուրս կա նաև մի այլ հատկություն, որ երանգ է կոչվում:

Նոտաների ձայնաստիճանների թրթուսների վերաբերյալ
թվերը եթե համեմատենք իրար հետ, կտեսնենք, որ նրանց մեջ
կա կանոնավոր մի հարաբերություն: Այսպես, օրինակ.

$$\begin{aligned} \text{re հավասար է do ձայնի } \frac{9}{8}\text{-ին, որովհետև } 65,25 \times \frac{9}{8} = \\ = \frac{587,25}{8} = 73,40 \end{aligned}$$

$$\text{mi հավասար է do ձայնի } \frac{10}{8}\text{-ին կամ որ նույն է } \frac{5}{4}\text{-ին,}$$

$$\text{որովհետև } 65,25 \times \frac{10}{8} = \frac{625,5}{8} = 81,5$$

$$\text{fa հավասար է do ձայնի } \frac{11}{8}\text{-ին կամ որ նույն է } \frac{4}{3}\text{-ին}$$


$$\text{որովհետև } 65,25 \times \frac{4}{3} = \frac{261}{3} = 87$$

sol հավասար է do ձայնի $\frac{12}{8}$ -ին, կամ որ նույն է $\frac{3}{2}$ -ին,
 որովհետև $65,25 \times \frac{3}{2} = \frac{195,75}{2} = 97,87$
 la հավասար է do ձայնի $\frac{13}{8}$ -ին կամ ավելի ճիշտ $\frac{5}{3}$ -ին,
 որովհետև $65,25 \times \frac{5}{3} = \frac{326,25}{3} = 108,75$
 si հավասար է do ձայնի $\frac{15}{8}$ -ին, որովհետև $65,25 \times \frac{15}{8} =$

$= 122,3$:
 Միևնույն հարաբերությունը ճշտիվ պահվում է մյուս շարքերի մեջ էլ, իսկ յուրաքանչյուր շարքի ամեն մի ձայնը նախորդ շարքի համապատասխան ձայնի $\frac{16}{8}$ կամ որ նույնն է՝ կրկինն է. այսպես $do^2 = 65,25 \times 2 = 130$ և այլն:

Ուրիշ խոսքով, ամեն մի ձայն նախորդից $1/8$ անգամ ավելանում է այսպես՝ $do = \frac{8}{8}$, $re = \frac{9}{8}$, $mi = \frac{10}{8}$, $fa = \frac{11}{8}$, $sol = \frac{12}{8}$, $la = \frac{13}{8}$, $si = \frac{15}{8}$, $do^2 = \frac{16}{8}$:

Այս ութ հարաբերությունը պատճառով, ահա, երաժշտադեմոնստրացիայի որոշիչ են 8 ձայն, որ նշանակում են հետևյալ ձևով ու անուններով.



Կեղծ հարկական ձևով ու անուններով՝
 ✓ ~ ~ ~ ~ ~ ~ ~ ✓

փո է վե բե խո նե պա փո
 (այս վերջինները համառոտված են փուշ, եկորձ, վերնախաղ, բեկեկորձ, խոսքովային, ցերքնախաղ, պարույկ անուններից):
 Այս 8 ձայներից ցածր եղած ձայները նշանակում են do^{-1} , re^{-1} , do^{-2} , re^{-2} ..., իսկ ավելի բարձր գտնված ձայները do^2 , re^2 ..., do^3 , re^3 ...: Բացի սրանից, ձայները կարելի է կոչել նաև ըստ կարգի, այսպես do -ից հետո՝ re կամ երկրորդ (seconde), mi կամ

երրորդ (tierce), fa կամ չորրորդ (quarte), sol կամ հինգերորդ (quinte), la կամ վեցերորդ (sixte), si կամ յոթերորդ (septième): Մի որևէ ձայնից 8 աստիճան բարձր ձայնը կոչվում է ութերորդ (octave), այսպես do^2 ութերորդն է do^1 -ի, do^3 ութերորդն է do^2 -ի, re^3 ութերորդն է re^2 -ի և այլն: Իսկ իրար հաջորդող և աստիճանաբար իրարից բարձր ութ ձայների խումբը կոչվում է ութնյակ (gamma): Ութնյակը կարող է սկսվել որևէ ձայնով, do կամ mi կամ fa^2 և այլն, միայն թե հաջորդ 7 ձայները նրանից աստիճանաբար բարձր պիտի լինեն: Ամեն մի ութնյակի սկիզբը դրված ձայնը կոչվում է tonique, որովհետև նա է, որի վրա չափվում են ութնյակի հաջորդ ձայները: Ութնյակի մեջ հինգերորդ ձայնը (որ tonique ձայնից հինգ աստիճան վերև է գտնվում) կոչվում է տիրոնիկ ձայն (dominante), որովհետև նա է, որ ամենից ավելի տպավորում է ականջը: Իսկ երկու ձայնի իրար հետ անեցած հարաբերությունը ($9/8$, $10/8$, $16/8$ և այլն) կոչվում է ձայնամիջոց (intervalle):

Ձայնի բարձրության վերաբերյալ և մեղ համար կարևոր օրենքները հետևյալներն են.

1. Նույն կազմությամբ, նույն հաստությամբ և նույն չափով պրկված երկու թելերի ձայնի բարձրությունը խոտոր համեմատական է իրենց երկարության հետ:
2. Նույն կազմությամբ, նույն երկարությամբ և նույն չափով պրկված թելերի ձայնի բարձրությունը խոտոր համեմատական է իրենց հաստության հետ:

Ըստ այսմ, որքան երկար է թելը, այնքան ցածր է ձայնը և որքան կարճ է թելը՝ այնքան բարձր է ձայնը: Սրա համեմատ էլ կազմված է ջութակը, ուր մատներով կարճացնելով թելի երկարությունը, տրվում է նրան հետզհետե ավելի բարձր ձայն: Նմանապես դաշնամուրի թելերը սկսելով ամենացածր ձայնից, հետզհետե կարճանում են, հասնում մինչև ամենաբարձր ձայնին:

Որքան մեծ է թելի հաստությունը, այնքան փոքր է թրթռումների թիվը. սրա համեմատ էլ ջութակի առաջին երեք թելերը մեկը մյուսից հաստ են և հետևաբար տալիս են իրարից թավ ձայն. առաջինն է mi^4 , երկրորդը la^3 և երրորդը re^3 :

Այժմ մնում է երկու խոսք ասել ներդաշնակությանց և հնչարանների մասին:

Ներդաշնակություն ասելով հասկացվում է զանազան ձայների միաժամանակ արտաբերությունը, եթե նրանք մարդկային ականջին ախորժեխ են թվում: Հակառակը կոչվում է աններդաշնակ:

Երբ, օրինակ, դաշնամուրի վրա երկու հաջորդական ստեղծներ միասին խփենք, ականջը զգում է շատ անախորժ ապավորություն, իսկ եթե որևէ մեկի հետ միասին խփենք նրա հաջորդ կամ նախորդ ութերորդ մասը, ականջն զգում է մի հաճելի սպավորություն: Այս պարագային ասում ենք, որ հաջորդական երկու մասների միությունը կազմում է աններդաշնակություն, իսկ առաջինի և ութերորդի միությունը կազմում է ներդաշնակություն:

Ձանազան տեսակի ներդաշնակություններ կան. դրանց ամենապարզ ձևը նույն ձայնն (unisson) է. եթե որևէ երաժշտական գործիքի վրա լաված մի ձայն կրկնելու լինենք մեր ձայնով կամ որևէ նվագարանի վրա, դուրս կգա նույնաձայն ներդաշնակություն: Ուրեմն նույնաձայն ներդաշնակություն նշանակում է ձայների միևնույն բարձրություն, տարբեր երանգով:

Երկրորդ ներդաշնակությունն է յուրաքանչյուր ձայնի ութերորդը (octave), որ նախորդի կրկին թրթումներն է ներկայացնում, այսպես՝ mi և mi², կամ la³ և la⁴ և այլն:

Երրորդ ներդաշնակությունն է յուրաքանչյուր ձայնի հինգերորդը (quinte), որ նախորդի հետ 3/2 հարաբերությունն ունեն. օրինակ՝ do և sol և այլն:

Կարելի է նաև կազմել 3 ձայնով ներդաշնակություններ, որոնք է՛լ ավելի ախորժելի են ականջին, քան նախորդները. այսպես, օրինակ՝ gamme majeure-ի առաջին, երրորդ և հինգերորդ ձայները միասին (do—mi—sol), (որոնց թրթումների հարաբերությունն է $1, \frac{5}{4}, \frac{3}{2}$ կամ ամբողջ թվերի վերածելով՝ 4, 5, 6)

շատ դարեկան են: նույն շարքը gamme mineure-ի մեջ (la—do²—mi²), որոնց հարաբերությունն է 10, 12, 15, շատ գուրեկան է նույնպես: Սրանք կոչվում են կաաարյալ ցերղաշնակութուններ:

Այս ներդաշնակություններից տարբեր է այն, որ երաժշտական լեզվով կոչվում է harmonia. սա կազմվում է ձայների մի այնպիսի շարքից, որոնց յուրաքանչյուրի թրթումների թիվը նախորդի մի ամբողջական բազմապատիկը լինի. օրինակի համար do¹, do², sol², do³, mi³, sol³ և այլն կազմում են մի harmonia. որովհետև do ունենալով 65 թրթում և do² 130, վերջինս նրա կրկինն է. sol² ունենալով 196 թրթում, նրա երեք անգամն է. այսպես և do³ 260 = 4 × 65, mi³ 324 = 5 × 65 և այլն*:

* Պյութագորասին է վերագրվում երաժշտական ներդաշնակության վերածումը մաթեմատիկական հարաբերությունների (Ֆ. Լեգելս, Բնությունի վերաբերյալ, էջ 164):

Հնչարան ասելով հասկանում ենք որևէ բնորոշարան, որի միջով անցնելով հնչված ձայնը, ստանում է ավելի հնչականություն կամ ուժեղանում է: Եթե մի թել պրկելով սկսենք թրթապնել, նա կտա մի որոշ ձայն, իսկ եթե նրա մոտ գնենք մի հնչուն արկղ, կտեսնենք, որ նույն ձայնը շատ ավելի հնչուն կգտնա: Եթե գրպանի ժամացույցը գնենք սեղանի վրա սլառկած դիրքով, անշուշտ կլսենք դարկի ձայնը. իսկ եթե հենենք ձայրի օղակի վրա, ձայնը շատ ավելի հնչուն կգտնա. պատճառը հնչարանն է, այսինքն այն փոքրիկ բնորոշարանը, որ ձևացավ ժամացույցի տակ մինչև օղակը: Այս օրենքի համեմատ է կազմված դանազան նվագարանների, ինչպես թառի կամ ջութակի զոգավոր մասը, որ նրա հնչարանն է և որոշ շափով ուժեղացնում է հնչված ձայնը:

Հնչարանի մեծությունը և ձևը որոշ նշանակություն ունի ձայնի ավելի հնչող դառնալու մեջ: Երբ մի թիթեղյա աման գնենք ծերակի առաջ և ջուրը միօրինակ հոսի նրա մեջ, նախ կլսենք բավական բարձր և հնչուն մի ձայն, որ քանի գնա կթուլանա և կթավանա: Պատճառը հնչարանի բարձրությունն է, որ քանի գնում ջրի ավելանալով կարճանում է:

Հնչարանի (chambre de résonance) ձևի փոփոխությամբ ձայնը փոփոխելու հեշտ փորձ կարելի է կատարել հետևյալ ձևով.— Փողի ծայրին անց են կացնում իրար ետևից դանազան մեծությամբ և ձևով խողովակներ (կլոր, ձագարածև, գնդածև և այլն), և երբ փչում ենք փողի բերանից, տեսնում ենք, որ ամեն անգամ մի տարբեր երանգի ձայն է դուրս գալիս: Որովհետև փողը նույնն է միշտ, ուստի հասկանալի է, որ երանգների տարբերությունը հնչարանի ձևից է:

Այս սկզբունքի վրա է հիմնված բոլոր փողավոր նվագարանների կազմությունը:

Հնչարանների ձևի և բարձրության և նրանց հնչեցրած ձայնի աստիճանի միջև կան որոշ և հաստատուն օրենքներ. օրինակ՝ մի գնդածև հնչարան ուժեղացնում է միայն մի ձայն, որ համարվում է նրա հիմնական ձայնը: Այս օրենքները ուսումնասիրված են ֆիզիկայի մեջ և նրանք հիշել այստեղ երկար կլինեն:

Վերը բացատրեցինք, թե ի՞նչ բան է ձայնի երանգը. դա միևնույն բարձրությամբ և մինչև իսկ միևնույն ուժգնությամբ ձայնն է տարբեր նվագարանների վրա. օրինակ՝ եթե անենք «Միծեռնակ»-ը ջութակով, թառով, դաշնամուրով և այլն, բոլորն էլ դուրս կգան «Միծեռնակ», բայց այնուամենայնիվ նրանց մեջ մի տարբերություն կա: Այդ տարբերությունը կոչվում է երանգ:

Մինչև այժմ մեր տեսած օրենքները կարող են բացատրել, թի՛նչու՞մն է կայանում երանգը:

Եթե պրկենք մի թել և նրա մեջտեղից թրթռացնենք, նա կսկսի թրթռալ և կտա մի որոշ ձայն, որ կոչում ենք նրա հիմնական ձայնը. թրթռումներն էլ կտան թելին մի առանձին պատկեր, որ նման է մի լցված իլիկի (տե՛ս պատկեր 8ա): Հելմհոլց բնագետը ուսումնասիրելով այս երևույթը, գտնում է երանգի էությունը, որ հետևյալն է: Եթե ուշադրությամբ լսենք թելի քառորդի բախումով առաջացած ձայնը, վարժ ահանջը կզգա ո՛չ միայն թելի հիմնական ձայնը, այլև նրա բարձր ութնյակը: Ուրեմն թելը այս պարագային կրում է երկու տեսակ թրթռում միաժամանակ, ինչ որ ցույց է տալիս նաև պատկերը, որի կենտրոնն է թելի մեջտեղը. երկրորդը նրա կրկինն է, երկու ալիք, որոնց կենտրոնն է թելի շորբորդ մասը, այսինքն ձայնի ութերորդը: Ուրեմն այս պարագային ձայնը բաղադրյալ է, այսինքն՝ բաղկացած է երկու նոտաներից, մեկը՝ հիմնական ձայնը, մյուսը՝ իր ութնյակը:

Նման երևույթ պիտի գտնենք, եթե թրթռացնենք թելը իր 1/6 մասում. այն ժամանակ պիտի լսենք, բացի հիմնական ձայնից, նաև իր 3-րդ աստիճանի հարմոնիան:

Այս փորձերից հետևում է, որ երանգը կայանում է ձայների այնպիսի խմբակցության մեջ, ուր կա մի հիմնական ձայն՝ իր զանազան աստիճանի հարմոնիաներով ընկերացած. հիմնական ձայնը ամենից թավն է և իր հաստությունը հաղթելով բոլորին, տալիս է ամբողջին իր բարձրությունը. մյուս հարմոնիաների աստիճանը, ուժղությունը, քանակությունը և դիրքը կազմում են ամբողջ երանգը: Ահանջը առհասարակ այնպես է վարժված, որ հարմոնիաները խառնում է հիմնական ձայնի հետ. բայց երաժիշտները վարժված են դրանք զանազանելու և հենց որ մեկը սխալ ձայն հանեց՝ բռնում են:

Չայնորդը կազմված է այնպես, որ ունի միայն մի ձայն, առանց հարմոնիաների. այսպիսի ձայնը կոչվում է պարզ. երգչհոնի խոշոր փակ խողովակները տալիս են պարզ ձայներ, որոնք խուլ են և առանց պայթյունի (éclat): Պարզ ձայները ուրեմն երանգ չունեն և զանազանվում են իրարից միայն ուժղությամբ և բարձրությամբ:

Երաժշտական մյուս գործիքների ձայները, ինչպես և լեզվի բոլոր ձայները, բաղադրյալ են, այսինքն՝ ունեն իրենց զանազան երանգները. դաշնամուրի մի ձայնը տալիս է մինչև 12 աստիճան

հարմոնիա: Եթե մի որևէ գործիքի ձայնի բաղադրիչ մասերը հիմնական ձայնի հետ կանոնավոր հարմոնիա են կազմում, համագումարը կլինի դուրեկան և ախորժելի, իսկ եթե նրա հետ հարմոնիա չեն կազմում, այսինքն՝ եթե նրանց թրթռումների թիվը հիմնական ձայնի թրթռումների թվի բազմապատիկը չէ, ամբողջությունը դառնում է անդուրեկան: Այսպիսի ձայները կոչվում են աղմուկ, ինչպես են՝ մուրճի հարվածը, փայտի թրխկոցը, կառքի թավալման ձայնը և այլն. աղմուկն այնքան անախորժ է լինում, որքան անհամապատասխան են նրա բաղադրիչ հարմոնիաներն իրար հետ: Ըստ որում երաժշտական ձայների մեջ հիմնական ձայնը գերազանցում է երկրորդական հարմոնիաներից, դրա համար էլ որոշվում է ձայնի բարձրությամբ, որ հիմնական ձայնի բարձրությունն է, իսկ աղմուկի մեջ, որովհետև մի հիմնական ձայն չկա, այլ զանազան ձայներ, ուստի սովորաբար աղմուկը բարձրություն չունի: Չայնավորը երաժշտական ձայն է, բաղաձայնը՝ աղմուկ:

Եթե ձայները բաղադրյալ են զանազան մասերից, կարելի է ուրեմն նրանք տարրալուծել և գտնել նրանց բաղադրիչ մասերի բարձրությունը: Ահանջը անկարող է կատարել այսպիսի նրբություններ: Հելմհոլցը մտածել է մի ուրիշ հնարք: Որովհետև գնդաձև հնչարանները թրթռացնում են միայն մի ձայն, ուստի նա վերցնում է մի շարք արույրե գնդաձև սնամեջ հնչարաններ զանազան մեծություններ և հարմարացրած այնպես, որ յուրաքանչյուրը հնչեցնում է այս կամ այն աստիճանի ձայնը: Հնչարանի տակին հարմարացրած է մի խողովակ, որ գնում են ահանջի մեջ. հնչարանի բերանում հնչում են քննելի ձայնը և ինչքան էլ բարդ լինի այն, հնչարանը ցույց է տալիս, եթե կա, այն ձայնը միայն, որ ընդունակ է հնչելու. իսկ եթե այդ ձայնը չկա ամբողջի մեջ, չի հնչում: Իրար հետևից փոխելով հնչարանները, վերջապես կարելի է գտնել նույն ձայնի բոլոր բաղադրիչ մասերը:



Այս սկզբունքի վրա Քյունիզը կազմել է մի ավելի կատարյալ գործիք (տե՛ս պատկեր 9ա): Սա բաղկացած է մի շարք հնչարաններից, զանազան աստիճանի, որոնց բերանը դարձած է դեպի ձայնը. կառուցված խողովակներով յուրաքանչյուրը հաղորդակցում է մի անգայտաշափային փամփուշտ (capsule manométrique), որոնց բոցը ցրանում է մի շրջուն հայելու մեջ: Չայնի հնչման ժամանակ հնչարաններից նրանք, որոնք ունեն հիշյալ ձայնի բաղադրիչ մասերից մեկը կամ մյուսը, սկսում են հնչել և նրանց բոցը միայն սկսում է երկրալ հայելու մեջ, մինչդեռ մյուսները մնում են

անշարժ: Յուրաքանչյուր ձայնավոր որոշ բարձրության մեջ տալիս է որոշ ձևի բոցեր, ինչպես տեսնում ենք պատկեր 9-ի մեջ:

Այս ձևով ձայները վերլուծելուց հետո, Հելմհոլցը մտածեց կաղմել նրանց համադրությունը. սրա համար նա կաղմեց մի նոր մեքենա. դա բաղկացած է մի շարք ձայնորդներից, որոնք ամենացածր ձայնի զանազան հարմոնիաներ են ներկայացնում: Յուրաքանչյուրի մոտ կա մի խողովակ, որ կարելի է ըստ կամս կարճացնել կամ երկարել՝ համապատասխան ձայնը ուժեղացնելու համար: Հիմնական ձայնի հետ խառնելով զանազան հարմոնիաներ և ձայները ուժեղացնելով կամ տկարացնելով խողովակների միջոցով, կարելի է դուրս բերել երգեսունի, դաշնամուրի և նույնիսկ շեփորի կամ սրնգի ձայն: Նույն արդյունքին կարելի է հասնել նաև Քյունիգի սիրենայով, միաժամանակ հնչեցնելով զանազան ձայներ և հարմոնիաներ: Վերջապես երգեսունի վրա կարելի է նման խառնուրդներով դուրս բերել զանազան նվագարանների երանգներով ձայներ:

Ձայնի բոլոր շորս հատկությունները՝ ուժգնություն, բարձրություն, երանգ և տևողություն, պարզ կերպով երևում են ձայնագրի գծագրության մեջ: Պատկեր 10-ը ներկայացնում է երեք յայտարար գծագրություն. առաջինը թրթռացող թելի պարզ հնչյունն է, այսինքն պարզ ձայն՝ առանց հարմոնիայի. երկրորդը նույնի ուժեղություն է (այսինքն երկրորդ աստիճանի հարմոնիան). երրորդը նույն թելի բարդ ձայնն է: Ալիքի կորության բարձրությունը (այն է ab) ներկայացնում է ձայնի ուժգնությունը. ինչքան մեծ է ab տարածությունը, այնքան ուժեղ է ձայնը: Ալիքի լայնքը (այն է cd խարիսխը), ցույց է տալիս թրթռումի տևողությունը կամ արագությունը, որիչ խոսքով ձայնի բարձրությունը. որքան խարիսխը փոքր է, ձայնն էլ այնքան բարձր է. ըստ որում երկրորդ գծի մեջ ալիքները երկու անգամ կարճ են առաջինից, որովհետև մին մյուսի երկրորդ աստիճանի հարմոնիան է: Վերջապես ալիքի ձևը ներկայացնում է ձայնի երանգը, ինչ որ հայտնի կերպով երևում է երրորդ գծի մեջ: Այստեղ կետերով նկարված են առաջին և երկրորդ գծերի ալիքները, որոնց դումարը իրոք տալիս է սև գծով նկարված ալիքը:


Կանոնավոր երաժշտական ձայների գծագրության մեջ ալիքները հետևում են իրար կանոնավոր շարքով, իսկ երբ ձայնը կաղմված չէ հարմոնիաներից, ալիքների մեջ կարգ ու պարբերականություն չկա: Այսպիսի ձայնը ըստ Հելմհոլցի կոչվում է աղ-



Պատկեր 9^F

մուկ. աղմուկի և ձայնի տարբերությունը կայանում է ուրեմն թրթր-
թրոտմաների կանոնավոր պարբերականության մեջ:

Նկատելի է, որ ձայնի ուժգնությունը կապ չունի բնավ նրա
բարձրության, ինչպես և՛ երանգի հետ. ուրիշ խոսքով, զծագրու-
թյանց մեջ ab դիժը կարող է շատ ավելի երկար կամ կարճ լինել,
բայց եթե cd փոխված չէ, ուստի ձայնի բարձրությունն էլ փոխված
չէ. կարելի է շատ բարձր մի ձայնանիշ երգել շատ մեղմ, այսինքն՝
շատ նվազ ուժգնությամբ:



Գ Լ Ո Ւ Խ Բ

ՉԱՅՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ
ԵՎ ՆՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

Չայնը ունի երկու կողմ. ձայնի արտադրությունը և ձայնի
ստացումը. այս երկուսի միջև գտնվում է փոխանցումը: Չայնական
գործարաններն էլ երկու են. խոսողական և լսողական. առաջինները
ճեղքորձական դեր ունեն, այսինքն՝ արտադրում են ձայն և բառ,
երկրորդները՝ կրավորական դեր, այսինքն՝ ստանում են արտա-
դրված ձայնն ու խոսքը:

Այս որակումները (ճեղքորձական և կրավորական) ենթադրելի
են տալիս մեզ, թե խոսողական գործարանների դերը ավելի մեծ
և կարևոր է, իսկ լսողական գործարաններինը՝ երկրորդական և
անկարևոր: Այսպես կարող է լինել ֆիզիկայի համար և այսպես
էին հասկանում նաև հին լեզվաբանները, որոնք իրենց ամբողջ
ուշադրությունը դարձրել էին խոսողական գործարանների և ձայնի
արտաբերության վրա: Մինչդեռ իրապես լեզվաբանության համար
ավելի կարևոր էր լսողությունը, որովհետև լսողությամբ է, որ
երևան է գալիս ձայների անհատականությունը: Եթե կինոյի մի-
ջոցով լուսանկարենք, օրինակ, bal բառը, պիտի տեսնենք բերանի,
խուչակի, շրթունքների և լեզվի զանազան հաջորդական և իրար
հարակից շարժումներ, որոնք կազմում են մի ամբողջական շղթա
և կարելի չպիտի լինեն որոշել նրանց կազմիչ մասերը: Ականջն է,
որ զգացության տարբերությամբ տալիս է մեզ b, a և l ձայների

* Vendryès, Le langage, p. 21.

անհատականությունը*, որի համեմատ էլ կազմված են աշխարհիս բոլոր այբուբենները: Բացի սրանից, լսողությունը է, որ լեզուն փոխանցվում է սերնդից-սերունդ, լսողությունը է, որ ամեն անհատ ստանում է լեզուն, նրա համեմատ կազմավորում է իր ձայնական գրությունը: Ամեն լեզու էլ պարունակում է միայն այն ձայնները, որոնք ականջով ըմբռնելի են: Լսողության թերացումներով է, որ, ինչպես քարոզում են նորագույն լեզվաբանները, լեզուն ստանում է իր աստիճանական փոփոխությունները և անցնում հաջորդ սերունդներին: Ավելին կա: Այն ձևափոխությունները, որոնք ենթադրելի է, թե տեղի են ունենում ձայնի փոխանցման միջոցին, անշուշտ ավելի կարևոր են ձայնի ստացման համար և հետևաբար լեզվի ուսումնասիրության մեջ: Այս պատճառով ահա նորագույն լեզվաբանները սկսել են ուշադրություն դարձնել այժմ հակառակ ուղղությամբ, և թերևս կարելի լինի մի օր օգտակար արդյունքի հասնել:

Բնությունը հատուկ խոսողական գործարան չի տվել մարդուն. և թե այդպես լինեք, մարդը խոսողությունն էլ բնությունից ստացած պիտի լինեք: Ծրթունքները նրա համար չեն, որ բ, պ, փ ձայնները արտասանեն, այլ որպեսզի մոր տված կաթը ծծեն. ատամները նրա համար չեն, որ ա, դ, ք ձայններն արտաբերեն, այլ որպեսզի ուտելիքը ծամեն. լեզուն նրա համար չէ, որ ձայնավորներն ու ր, լ և այլն ձայնները հնչե, այլ որպեսզի ծամած ուտելիքը շաղախեն և այլն: Մարդն է, որ ինչպես բնության զանազան բարիքներից, նույնպես և այս կողմից օգտվել է ուղեցել և հնարել է խոսողությունը, ճիշտ ինչպես հնարել է նշանացի խոսակցությունը՝ ձեռքերի և այլ անդամների միջոցով: Այստեղ գլխավոր դերակատարն է խոչակը (larynx), որ ձայն արտադրելու գործարանն է և շատ հարմարավոր կերպով օգտագործված է խոսողության համար:

Այս տեսակետով նայելով հարցին, խոսողական գործարանները տարբերվում են ուրիշ գործարաններից հենց ի բն: Օրինակի համար, ոտը միայն քայլելու համար է, ձեռքը և մատները՝ բռնելու կամ շոշափելու համար և այլն: Ասել, թե լեզուն կամ ատամները խոսելու համար են տրված, նույն է ասել, թե աչքերը տրված են լրագիր կարդալու համար, կամ թե ձեռքը գիր գրելու համար են և մատները՝ դաշնամուր ածելու: Այս կողմից միայն ականջն է, որ կրավորական գործարան լինելով հանդերձ, բնությունից տրված է

մեզ լսելու և միայն լսելու համար: Նա է, սակայն, նաև իսկական պատճառը խոսողության ու լեզվի, որովհետև, ինչպես տեսանք վերևում, ականջն եղավ նախապատճառ ձայնը օգտագործելու, և մարդը ընտրելով ձայնը իբրև միջոց հաղորդակցության, հնարեց ձայնի բոլոր նրբությունները և խոսակցական լեզուն: Եթե չլինեք ականջը, մարդը իբր միջոց հաղորդակցության՝ պիտի գործածեր երևի աչքերը, այն է տեսողությունը և կատարելության պիտի հասցներ նշանացի խոսակցությունը:

Ընտրելով ձայնը իբրև միջոց հաղորդակցության, մարդը օգտագործեց իր բոլոր այն գործարանները, որոնք կարող էին պիտանի լինել իրեն, սկսած թոքերից և խոչակից մինչև շրթունքները և քիթը, որ տրված է մարդուն լուկ իբրև հոտառության գործարան:

Այսպիսով մարդը, որ ստեղծիչն եղավ խոսակցական լեզվի և հոգավոր ձայնի, ստեղծիչն եղավ նաև ձայնական գործարանների հավաքական այս գործունեության: — Համբերին մնաց ձեռքով, աչքով ու նշաններով խոսակցելու տկար և անկազմակերպ միջոցը, ինչպես որ հետագայումն էլ կույրերի համար հնարվեց մատներով կարգալու միջոցը:

Աչ ու ձայն թոքերից դուրս են գալիս մի-մի ցնցուղ (bronche), որոնք միանալով կազմում են շնչափողը (trachée), որ սյունի պես բարձրանում է վզի մեջ: Շնչափողի ամենաբարձր մասում, իբր մի սյունագլուխ կամ խոչակ, հաստատված է խոչակը, վզի բոլորովին ծայրը՝ առաջակողմում, մորթի անմիջապես տակը: Արտաքուստ երևում է վզի վրա՝ իր դուրս ցայտած ձևով, որ հատկապես նկատելի է նիհար տղամարդկանց վրա և կոչվում է Ադամի խնձոր: Խոչակից վերև կա լեզուն, ետևում ստուգը և ողնաշարը. լեզվի ետևում՝ խոչակի ճիշտ վերևը, գտնվում է սոսորդը (épiglotte):

Խոչակի մեծությունը ըստ սեռի և տարիքի զանազանվում է. ահա նրանց միջին թվերը.

	Այր	Կին
	սմ.	սմ.
Բարձրություն (առանց սոսորդի)	4,4	3,6
Տրամագիծ լայնության	4,3	4,1
Տրամագիծ առաջից ետև	3,37	2,64
Շրջագիծը	13,6	11,2

Այս թվերը ներկայացնում են միջինները, բայց տեսնված է մինչև 11 միլիմետր լայնության տրամագիծ արունների մոտ և 9 կանանց մոտ:


* Saussure, Cours de linguistique générale, p. 63—64.

Խոշակը կազմված է 5 գլխավոր կոճիկներից և 5 գլխավոր մկաններից, որոնք տալիս են նրան զանազան շարժումներ: Գրեթե խոշակի մեջտեղում, ներսում կա երկու կողմից մի մի ծալք, սպիտակ սատափի գույնով, որ անհարմար անունով կոչվում է ստորին ձայնական լարեր կամ ձայնալարեր (cordes vocales): Սա ունի առաձգական եզրերներ և կարող է փակվել և բացվել, մեջտեղը ձգելով մի բացվածք՝ կոճակամայրի (լամբակի) նման, որ կոչվում է ձայնարան (glotte): Ձայնական լարերից մի քիչ վերև կա երկու ուրիշ ծալք կարմրագույն, որ կոչում են կեղծ կամ վերին ձայնալար, որոնք սակայն բնավ գործ չունեն ձայնի արտադրության մեջ: Վերին և ստորին ձայնալարերի միջև կա մի խորշ, որ կոչվում է Մորգանի խորշ: Երբ թոքերից օդը բարձրանում է դեպի վեր շնչափողի մեջ, նրա ճնշման տակ, ձայնալարերը իրենց առաձգականությունը պատճառով բոլորովին հեռանում են իրարից և օդը ազատ դուրս է գալիս նրանց միջով, որով ճնշումն իսկույն իջնում է և հետևաբար լարերն էլ ստանում են իրենց նախկին ձևը: Եվ այսպես շարունակ: Մարդկային ո՛չ մի գործարան, համեմատած իր մեծություն, այնքան դյուրաշարժ ու հարաշարժ չէ, որչափ խոշակը:

Ստորոգը առանձին վերցրած ունի ձվաձև տերևի ձև, նա շատ ձկուն մի գործարան է. հաստատվելով խոշակի առաջակողմը և լեզվի հիմքի հետնամասում, կցված է լեզվին երեք թելերով: Եթե մատով կամ գդալի ծայրով ցած կոխենք լեզուն, տեսնվում է ստորոգի մի մասը, մանավանդ փոքրերի վրա: Մի բան կուլ տալու ժամանակ, նա իջնում է և կափարիչի նման ծածկում ձայնարանը. խոշակն ու շնչափողը, որպեսզի ուտելիքը մտնի ստուգի մեջ և ոչ թե թոքերի ճանապարհը, որ և այսպիսով բոլորովին ապահովվում է:

Ձայնարան (glotte) կոչվում է ստորին ձայնալարերի միջոցը, որ ունի եռանկյունի ձև, գազաթը առաջակողմը հաստատված և անշարժ, իսկ խարիսխը դեպի ետև ու ըստ իր ձևափոխությանց ավելի կամ պակաս լայնությամբ: Միջին հաշվով իր երկարությունն է 26—28 միլիմետր տղամարդկանց մոտ. խարիսխը 7,5—10 միլիմետր է տղամարդկանց մոտ և 5—7,5 միլիմետր կանանց մոտ: Նրա երկարությունը ձայնական լարերի երկարությունն է: Միջին հաշվով ինչ մեծություն որ ունի փոքրերի ձայնարանը, նրա 1,5 անգամն է կնոջը և կրկնակին՝ շափահաս տղամարդուներ:

Կարելի է քննել խոշակը և ձայնալարերի շարժումները կամ խոշակադեռ (laryngoscope) կոչված գործիքով և կամ պարզապես աչքով:




Խոշակադեռը (laryngoscope) մի պարզ գործիք է, բաղկացած մի թեք հայելուց, որ ազուցված է մի երկար կոթի վրա: Բռնում են կոկորդի խորքում, լուսավորելով այն մի ցողացուցիչ լամպով կամ հայելով. այդ պարագային խոշակի պատկերը երևում է գործիքի մեջ հակառակ դիրքով:

Խոշակադեռը հնարեց Կիրշտեյնը, 1895 թվականին: Սա արվում է հետևյալ ձևով: Որովհետև խոշակի և բերանի անցքերը իրար ուղղահայաց են, ուստի՝ եթե ուղիղ անկյունը ուղղեինք և բերանը դնեինք խոշակի ուղղության վրա, այն ժամանակ խոշակը տեսանելի կդառնար: Ըստ այսմ դիտելին նստում է իրանը թեքված ազդրերի վրա և գլուխը շատ հետև. քննիչը բահակը (spatule) դնում է լեզվի հիմքի վրա և այն ժամանակ խոշակը երևում է: Այս ձևով կարելի է քննել միայն որոշ տառերի հնչումը, քանի որ մյուս-

ների համար բերանի մյուս մասերի գործունեությունը անհրաժեշտ է:

Խոշակը ընդունում է 2 շարք ջղեր, որոնք գանգային ջղերի 10-րդ և 11-րդ զույգերն են կազմում. առաջինը շնչառական ջղերի մասերն են խոշակի մեջ, երկրորդները, որոնք վերին և ստորին ճյուղեր ունեն, առաջ են բերում խոշակի մկանների շարժումները. առանց դրանց մարդ անխոս է:



Պարկեր A




Պարկեր B

Պատկեր A-ի մեջ L լեզուն է. E ստորոզը. 1 և 1 ստորին ձայնալարերն են, որ երևում են խոշակի խորքում, և որոնք ծածկված են ավելի կամ պակաս չափով ավելի վեր գտնված մասերով. այն է 3—3 վերին ձայնական լարերը, 2—2 Մորգանի խոռոչը. ներքևում S—S և W—W աճառներն են. երկու լարերի միջև գտնվում է ձայնարանը, բոլորովին բաց. այս այն ձևն է, երբ մարդ շնչում է ազատ, առանց խոսել փորձելու. նրանք փակված դիրքով են, երբ խոսողը արտասանում է a ձայնը (պատկեր B) և այս ժամանակ երկու ձայնալարերը իրար կպած են լինում իբր դանակի երկու բարակ բերաններ, մոտ-մոտի դրած, մեջտեղը դժի նման մի ձեղքով. ձայնը իրապես արտասանելու ժամանակ երևում է, թե ինչպես ձայնալարերը թրթռում են:


Լսողական գործարանը բաժանվում է երեք մասի. արտաքին ականջ, միջին ականջ և ներքին ականջ: Առաջինը ծառայում է ընդունելու ձայնը, երկրորդը փոխադրելու, երրորդը լսելու:

Արտաքին ականջը բաղկացած է վրանից (pavillon) և լսողական անցքից (conduit auditif, ականջափող): Վրանը ականջի ամենաարտաքին ձվաձև մասն է և կազմված է մորթով պատած աճառից, որի ցածի ծայրում գտնվում է բլթակը՝ ականջի միակ մսեղեն մասը: Վրանը ունի բազմաթիվ ծումուռներ, որոնք ծառայում են ավելի լավ հավաքելու ձայնը: Վրանը ավելի զարգացած է զանազան անասունների մոտ, բայց մարդու համար այդ մեծությունը այնքան կարևոր չէ, որովհետև եթե լսողական անցքի մեջ մի խողո-

վակ խրենք (ծայրը գեպի գուրս) և վրանի գերը չեզոքացնենք, կտեսնենք որ լսողությունը որոշ փոփոխություն չի կրել: Նույնպես անասունների մոտ վրանը շարժական է. այդ շարժման նպատակն է վրանը ուղղել գեպի ձայնը՝ ավելի լավ հավաքելու համար ձայ-



Պարկեր 11



Պարկեր 12

նական ալիքները: Բայց մարդու ականջը այնպես է կազմված, որ ընդունակ է ամեն կողմից եկած ձայներն էլ հավաքելու, ուստի և շարժման կարող է: Վրանի խորքում գտնվում է կոնքը, ուր հավաքվում է ձայնը. այդտեղից սկսում է ականջափողը և ունի 25 միլիմետր երկարություն. նա ծածկված է աղվամաղով և արտադրում է դեղնագույն մի նյութ (սուսկ, cerumen), որի նպատակն է պաշտպանել լսողական անցքը փոշուց և զանազան միջատներից: Ականջափողի խորքը փակված է մի լավ ձգված և նուրբ թաղանթով, որ կոչվում է քմբուկ կամ քմբկաքաղանք (tympan). նա ունի 1/10 մի-

լիմեար հաստութիւն, բայց չնայած այդ նրբութեան, շատ դիմացկուն է:

Լսողութեան մեջ նշանավոր դեր է կատարում այս թաղանթը:

Միջին ականջը, որ թմբուկով բաժանվում է լսողական անցքից, ձևացնում է մի խոռոչ, որ կոչվում է թմբկախորշ. սա մի անցքով հաղորդակցում է արտաքին օդի հետ՝ քթային խոռոչի (fosse nasale) միջոցով: Այս անցքը կոչվում է եվստաքիան փող (trompe d'Eustache) և ունի 35—40 միլիմետր երկարութիւն: Թմբկախորշը լցված է օդով:

Ներքին ականջը, որ իր կնճատ կազմութեան պատճառով կոչվում է նաև բավիղ (labyrinthe), բաղկացած է մի փոսից, որ քունքոսկրի (ostemporal) ամենակարծր մասի մեջ է փորված և սրանով էլ ամեն վտանգից ազատ է մնում: Այդ տեղը կոչվում է ժայռ (rocher): Ներքին ականջը պարունակում է երեք մաս. ա) կիսաշրջանակաձև անցքերը (canaux semi-circulaires), որոնք շարված են երեք ուղղանկյուն մակարդակի վրա. բ) գավիթ (vestibule), որ հաղորդակցում է միջին ականջի հետ երկու փոքրիկ բացվածքներով (կոոր պատուձան և ձվաձև պատուձան). գ) խրխունջ (limacon): Ամբողջ բավիղը ծածկված է մի տեսակ թաղանթային պարկով, որ ամբողջապես լցված է ժելատինային հեղուկով, որի մեջ լողում են լսողական ջղի ծալրի մազմզուկները: Դրանք չափազանց շատ են, մոտ 60 000, և կպած են մի տեսակ միջնորմի վրա, որ խխունջը բաժանում է երկու բաժնի (rampe), այս մազմզուկները կոչվում են Կորտյան թելեր (fibre de Corti):

Ձվաձև պատուձանը կապված է թմբուկի հետ 4 փոքր ոսկորների մի շղթայով. այդ ոսկորները բաժանված են միջին խոռոչի մեջ փոքրիկ մկաններով և են մուրճը (marteau), որ ուղղակի հենված է թմբուկին, սալը (enclume), ոսպնաձև ոսկրը (os lenticulaire), որ մարդկային մարմնի ամենափոքր ոսկորն է, և ապակաղաղ (étrier), որի հիմքը նստած է ձվաձև պատուձանի վրա:

Երբ մի ձայնական ալիք հասնում է ականջին, վրանի և լսողական անցքի միջոցով գնում է մինչև թմբուկը, որ այդ միջոցին ձևափոխվում է իր երկու երեսների վրա տիրող ճնշումների անհավասարութեան ազդեցության տակ, այսինքն՝ թրթռում է: Գիտունները երկար ժամանակ կարծում էին, թե մուրճի մկանը պաշտոն ունի ավելի կամ պակաս չափով ձգելով թմբուկը, հարմարեցնելու նրան այս կամ այն ձայնի ուժգնություն: Նոր գիտունները չեն ընդունում այս կարծիքը: Ամեն թաղանթ, որ որոշ աստիճանի պրկում

ունի, հարմար է հնչեցնելու միայն այս կամ այն ձայնը: Ականջի թմբուկը չի կարող այդպես լինել, որովհետև այդ պարագային նա պիտի հնչեցնէր միայն իրեն հարմար ձայնաստիճանը, իսկ մյուսները ոչ, հետևաբար և մի երդի մեջ ամեն ձայն էլ հավասարապես լսելի չպիտի լինէր մեզ: Արդ, եթե այդպես չէ, եթե երդի բոլոր ձայները համաշափությամբ լսում ենք, ուրեմն ականջի թմբուկը որոշ պրկում չունի. նա գտնվում է մի այնպիսի թույլ վիճակի մեջ, որ հնչեցնի բոլոր ձայները:

Այսպես ուրեմն, թմբուկը փոխանցում է իր ստացած բոլոր ձայնական ցնցումները, համաձայն նրանց համեմատական ուժգնության, առանց մեկը կամ մյուսը դորացնելու: Ձայնի դորացումը կատարում է միջին ականջը, ծառայելով իբր հնչարան: Ոսկորների շղթան ներգործելով ձվաձև պատուձանի վրա, թմբուկի թրթռումները փոխանցում է ներքին ականջին:

Ներքին ականջի պաշտոնն է վերլուծել ձայները, ալիքը հասնելով այդտեղ, առաջացնում է բավիղի հեղուկի մեջ համապատասխան մի շարժում, հանելով կոհակաձև ալիքներ կամ թրթռումներ, որոնք լսողական ջղերի միջոցով հաղորդվում են ուղեղին: Որքան ձայնը ուժեղ է, բնականաբար ձայնական ալիքներն էլ այնքան մեծ են և հետևաբար այնքան էլ մեծ կոհակներ են առաջացնում բավիղի հեղուկի մեջ, որով զգայնութիւնն էլ լինում է ավելի զորեղ: Հելմհոլցը ենթադրում է, թե հիշյալ թրթռումները իրենց բարձրության համեմատ գրգռում են տարբեր ջղային ցանցեր. ուրիշ խոսքով, 60 000 Կորտյան թելերից յուրաքանչյուրը, կամ ավելի ճիշտ Կորտյան թելերին հարակից որոշ փոքրիկ խմբակներ ձգում են որոշ բարձրությամբ թրթռումներ, բայց ոչ ուրիշներ: Այսպես է բացատրվում տպավորությանց այն զանազանութիւնը, որ տալիս են մեզ ձայները, իրենց թրթռումների հաճախության կամ իրենց բարդութեան համաձայն:

Մարդկային ձայնը երեք գործարանների միահաղույն գործունեության արդյունքն է. այն է՝ թոքերը, խոշակը և բերանը: Առաջինի դերն է շնչումը, երկրորդի՝ ձայնի արտադրությունը, երրորդի՝ ձայնի հողավորումը:

Շնչումը ունի երկու երևույթ. ներշնչում և արտաշնչում: Ստոծանիի և կողոցի մկանների պրկման ու թուլացման հաջորդական գործողությամբ, օդը զրսից խուժում է թոքերի մեջ և այնտեղ թթվածինն արյան հետ հաղորդելուց հետո, մնացած ապականյալ

մասը դուրս է մղվում, բայց հարկի ավելի կամ պակաս քանակությամբ:

Չափը այս արտաշնչված օդի ձևավորությունն է: Չափը կարող է կազմվել թե՛ ներշնչման և թե՛ արտաշնչման միջոցին: Չանազան բացականչություններ, օրինակ, համբույրի ձայնը կազմվում է ներշնչմամբ, որոշ լեզուներ, հատկապես Հարավային Աֆրիկայի լեզուներից մի քանիսը գործ են ածում խոսակցության մեջ այնպիսի հնչյուններ, որոնք կազմվում են ներշնչմամբ. հոտենդոտների լեզվի մեջ կա 4 այնպիսի ձայն և բուշմենների մոտ՝ 7 ձայն, որոնք գործ են ածվում միայն բառակազմում. եվրոպացիք տառադարձում են ! կամ ; ձևերով: Նման ներշնչական ձայներ գտնվում է նաև Հնդկաստանի Մուլթանի բարբառում (BSL № 111, էջ 55): Ֆրանսերեն օւի, երբեմն էլ ոօն բառը անփութ արտասանություն ժամանակ ներշնչմամբ է հնչվում. Վալես բարբառի մեջ կա մի տեսակ «այն», որ կազմվում է ներշնչվալ լն հնչյունով. ամենքս էլ «ոչ» ասելու համար տենենք ց՛ք ց՛ք ձևը: Ամերիկյան մալու լեզուն ունի մի տեսակ | և մի տեսակ Ժ, որոնք ներշնչմամբ են կազմվում (Boas, Handbook I, 684):

Բայց սրանք բացառիկ երևույթներ են:

Առհասարակ լեզուները խոսողության մեջ գործ են ածում միայն այնպիսի ձայներ, որոնք կազմվում են արտաշնչմամբ:

Այստեղ նկատենք նաև, որ նորմալ շնչառության ժամանակ ներշնչումը կատարվում է միայն քթի միջոցով, արտաշնչումը քթի, մասամբ էլ բերանի միջոցով, իսկ խոսակցության ժամանակ թե՛ ներշնչումը և թե՛ արտաշնչումը կատարվում է թե՛ քթի և թե՛ բերանի միջոցով:

Ռուսերը (Principes, I, 488—495) նկարագրում է զանազան լեզուների մեջ ներշնչմամբ արտասանված ձայները, նույնիսկ սուսերենի մեջ: Կա նաև իմ արտասանությամբ շե՛՛-ծիու «թռչուն» բառի ձայնական նկարը, որ ես սովորել եմ մի շերքեղից:

Բայց կան դեպքեր, երբ բոլորս էլ արտասանությունը կատարում ենք ներշնչմամբ կամ ավելի ճիշտ՝ ներշնչման ժամանակ: Այսպես, երբ հորանջելու միջոցին միաժամանակ խոսում ենք: Այս բանը, բնականաբար, տևում է միայն մի քանի վայրկյան: Նմանապես երբ անդիր արած մի բան ենք ասում կամ արագ աղոթք անում և այդ միջոցին հարկ է լինում շնչել, մի կողմից օդը ներս ենք քաշում (ներշնչում ենք) և մյուս կողմից միաժամանակ բառերն ենք ասում: Այս էլ տևում է միայն մի քանի վայրկյան: Այս

ձևով արտասանված բառերը հստակ չեն դուրս գալիս և լսողն էլ լավ չի հասկանում: Միայն խոսողն է իմանում, թե ի՞նչ է ասում:

Թոքերից դուրս գալով օդը և ցնցուղներից անցնելով, մանում է շնչափողի մեջ և հասնում ստորին ձայնալարերին, որոնք արտադրելիք ձայնի համեմատ ձևափոխվում են, երկարում կամ կարճանում, ձգվում կամ կծկվում, թրթռում կամ թրթռացնում օդը՝ ձայնարանի բացվածքի մեջ: Այս ձևափոխություններով ձայնն էլ ստանում է զանազան տոներ, զանազան բարձրություններ: Այս էլ խոշակի ձայնը, որ սակայն դեռ երանգ չունի:

Նուշակազեար ցույց է տալիս, որ ձայնալարերի ավելի գործոն դերն ընկնում է նրանց առջևի մասի վրա, մինչդեռ հետևի մասը, որ չափազանց զգայուն է, միայն շնչառության համար է:

Ասացինք, որ ձայնալարերը կարող են ստանալ բազմաթիվ ձևափոխություններ իրենց արտադրելիք ձայնի համեմատ. դրանցից կարևորները հետևյալներն են.

1. Ձայնալարերը հետևի մասով հեռանում են իրարից, այնպես որ ձայնարանը լինում է լայն բացված. այս է շնչառության ժամանակ խոշակի նորմալ վիճակը. այդ միջոցին օդը ազատ դուրս գալով, լսվում է մի տկար աղմուկ, որ ուրիշ բան չէ, եթե ոչ օդի հոսանքի շփման ձայնը խոշակի, քթի և բերանի պատերին: Ձայնալարերը այս դիրքն ստանում են նաև պ, կ, ա, ս, ֆ և այլ այս կարգի ձայների արտասանության ժամանակ, որոնք կոչվում են խուլ ձայներ (պատկեր A):

2. Ձայնալարերը հեռանում են իրարից, բայց նրանց կազմած անկյունը շատ ավելի սուր է և աճառների ներքին երեսները զբառնում են լարերի երկարության վրա, մինչդեռ առաջին դեպքում նրանք թեքված էին դեպի դուրս: Այս վիճակում, երբ օդը դուրս է գալիս ձայնարանից, ստացվում է ավելի կամ պակաս ուժեղ հընչյունը (պատկեր B):

3. Ձայնալարերը մոտենում են իրար, բայց ոչ բոլորովին. նրանց մի մասը արգեն կպած է իրար, սակայն մնացյալը դեռ բավական բաց է և չի թրթռում: Այս վիճակը ներկայացնում է այն, որ ստանում է խոշակը փսփսոցի ժամանակ:

4. Ձայնալարերը կպում են իրար ամբողջ երկարությամբ. այս միջոցին ձայնարանը փակված է. օդը դուրս գալու ժամանակ բռնի կերպով հեռացնում է նրանց իրարից, որով առաջանում է ձայնալարերի թրթռումը. այս է իսկական ձայնը (պատկեր C): Այս ձևով

արտասանված հնչյունները կոչվում են բրբռում և են ձայնավոր-ներն ու ր, գ, դ, ձ, ժ և այլ նման բաղաձայնները¹:


Կարելի է դուրսբերել զգալ ձայնավարների թրթռումը արտասանության ժամանակ: Երբ ատամի խնձորի վրա բռնենք մատիտի մի ծայրը և արտասանենք գ, ժ, դ և այլ բաղաձայնները, մատների մեջ զգում ենք այդ թրթռոցը: Նույնպես եթե մի ավել դնենք գաթի վրա, կամ երկու մատները խփենք ականջածակերի մեջ և կամ երկու ձեռքով փակենք ականջները և արտասանենք նույն ձայները, կզգանք մի տեսակ բզկոց, որ ձայնավարների թրթռման արձագանքն է. մինչդեռ ս, շ, խ ձայների համար այդպիսի բզկոց չկա:

5. Ձայնավարները կոչվում են իրար և ձայնարանը փակ է, բայց աճառների միջև գտնված մասը դեռ բաց է. այս պարագային մենք լսում ենք միաժամանակ ձայնավարների թրթռոցը և օդի շփման ձայնը, որ անցնում է աճառների միջով: Այս այն ձայնն է, որ կոչվում է թրթռուն և (z) և գտնվում է Կարինի և Մուշի բարբառների մեջ:

Կարելի է ներկայացնել այս բոլորը շատ հեշտությամբ մի արվեստական խոշակի վրա, հետևյալ ձևով.— Առենք ապակյա մի խողովակ կամ սնամեջ մի եղեգ. սա շնչափողն է: Մայրին անցկացնենք կաուչուկի կարճ ու բարակ մի խողովակ, այնպես որ նրա շարունակությունը կազմի.— սա ձայնարանն է: Կաուչուկի խողովակը ներկայացնում է կոոր մի բացվածք.— սա ձայնարանի հանգիստ վիճակն է: Եթե փչենք եղեգի ծայրից, կլսենք մեր շնչի շփման ձայնը: Եթե կաուչուկը բռնենք մատներով երկու հակառակ կետերից և մի քիչ քաշելով երկարավուն մի ձև տանք, կստանանք ձայրից և մի քիչ քաշելով երկարավուն մի ձև տանք, կստանանք ձայնարանի վիճակը փսփսոցի ժամանակ. եթե այս միջոցին փչենք եղեգի մեջ, կստանանք մի ուրիշ տեսակ աղմուկ, որ նախորդից ավելի ուժեղ է: Իսկ եթե կաուչուկը քաշենք այնքան, որ երկու կողերը իրար վրա գան և մի ուղիղ գիծ ձևացնեն, կստանանք ձայնարանի փակ վիճակը, և եթե այժմ փչենք եղեգի մեջ, կաուչուկը կսկսի ուժեղ կերպով թրթռալ.— սա մարդկային ձայնն է:

Ձայնավարների այս զանազան դիրքերի համեմատ ստացված թրթռումը կամ խուլությունն անցնում է օդի հոսանքին, որ այնուհետև

տե մտնում է ըմպանի, բերանի կամ քթի խոռոչը և սրանց բազմազան ձևակերպությանց, բացվածքի մեծության և փոքրության համեմատ, որին գործակցում են ստորին ծնոտը, շրթունքները, լեզուն ու բիմբը, ստանում է իր երանդը, կազմվում են զանազան



ձայնավորներն ու բաղաձայնները: Իսկական ձայնը կազմվում է ուրեմն այստեղ: Եթե մարդիկ շունենային բերան ու քիթ, նրանց ձայնն էլ ո՛չ մի անհատականություն չպիտի ունենար. նրանք կարող պիտի լինեին ըստ կամս ավելի ուժգին կամ տկար, ավելի բարձր կամ ցածր ձայներ դուրս բերել, բայց բոլոր մարդկանց ձայներն էլ իրար նման պիտի լինեին, քանի որ պակասում է երանդը: Ձայնի անհատականությունը, որ է երանդը, առաջ է գալիս ուրեմն բերանի և քթի խոռոչների մեջ, որոնք մարդուց մարդ զանազանվում են իրենց ձևով: Այս բանը կարելի է փորձել նույնիսկ միևնույն մարդու վրա. մենք գիտենք, թե ի՞նչքան փոխվում է ձայնը, երբ նշագեղձերը ուռած են կամ քիթը փակ է, լեզուն հիվանդ կամ առամենքը պակասում են և կամ նույնիսկ երբ բերանում որևէ բան կա պահած:

Կարելի է նույնը փորձել նաև ուրիշ ձևերով. պահենք բերանը լեզուն և այլն մի որոշ դիրքի մեջ և աշխատենք երգել. ինչ էլ որ անենք, ինչքան էլ կծկենք կամ փոփոխենք մեր խոշակը, ձայնը կփոխի իր աստիճանը, բայց դուրս կգա միևնույն ձայնավորը (այսինքն երանդը չի փոխվի):

Վերջապես կարելի է նույնը փորձել նաև գիակի խոշակի վրա.— մի թել անց են կացնում խոշակի ձայնավարերով և ուզած շփով լայնացնում կամ նեղացնում են ձայնարանի բացվածքը. միևնույն ժամանակ ներքևից փուքսով շունչ են փչում խոշակի մեջ. ի՞նչքան էլ փոփոխենք փուքսի շունչը և թելի պրկման շփքը, այնուամենայնիվ ձայնը դուրս կգա միշտ միևնույն երանդով (թեև տարբեր բարձրությամբ և տարբեր ուժգնությամբ): Տեսնվել է մի անձնասպան մարդ, որ հաջողել էր կտրել խոշակը և բաժանել մասամբ վերի մասերից, այնպես որ խոշակից անցած օդը չէր մտնում քթի և բերանի խոռոչը. արդ, նա արտաբերում էր միշտ միևնույն ձայնը և ոչ մի բառ չէր դուրս գալիս, թեև իհարկե նա ուզում էր որոշ բաներ ասել:

¹ Պրաններեն կոչվում է sonore, առաջ ասում էին vocalique, որ հիմա չի գործածվում. ես էլ գործածում եմ թրթռուն, որ շատ ճիշտ պատկերացնում է երևույթը. ուրիշները ասում են ձայնեղ կամ հաղագային, որ համապատասխանում է vocalique հնացած ձևին:

Այսպիսով՝ մարդն ինքը ներկայանում է մեզ իբրև մի կատար-
յալ նվագարան, հորոյ կամ կլառնետ. — թոքերը կազմում են նվա-
գարանի փուքսը, ցնցուղը և շնչափողը նվագարանի ձայնատար
փողերն են. խոշակը լեզվակալոր մի գործիք է, որի թերթիկի ձայ-
նալարերն են. բերանի և քթի խոռոչը հնչարանն է, բայց մի այն-
պիսի հնչարան, որ գերազանցապես շարժուն լինելով, իր բազմա-
զան փոփոխություններով փոփոխում է իր մեծությունը և ձևը, և
նրանց համեմատ էլ ուժեղացնում է այս կամ այն հարմոնիան,
որով և փոխում ձայնի երանգը: Առանց սրանց, լոկ խոշակի ձայնը
կարելի է համեմատել ջութակի հնչարանից պոկված մի լարի ձայ-
նի հետ:

Ձայնի ուժգնությունը առաջանում է թոքերից դուրս արտա-
շնչված օդի քանակությանից և հողավորիչ գործարանների գործ-
դրած ալելի մեծ ճիգից. սրա համեմատ էլ ձայնալարերի թրթռում-
ները լինում են ալելի կամ պակաս ընդարձակ. իսկ ձայնի տեղ-
դրությունը առաջանում է ձայնարանի ալելի կամ պակաս բացվե-
լուց: Երբ թոքերը իրենց ներշնչած օդը դուրս են տալիս, այդ գոր-
ծողությունը մի անգամից և անմիջապես շեն կատարում. երկու
հատուկ մկաններ պաշտոն ունեն կանոնավորելու այս գործը, այն
է արտաշնչումը որոշ շափով դանդաղեցնելու: Երբ շնչում ենք, ձայ-
նալարերը լայն բացված լինելով, օդը առատությամբ է դուրս գա-
լիս, որով թոքերից արտաշնչված օդի պաշարը շուտ է սպառվում
և շունչի և ձայնի տեղդրությունն էլ շատ կարճ է լինում: Եթե փո-
խանակ շնչելու, թեթև շնչով փշենք, կտեանենք, որ տեղդրությունը
շատ ալելի երկար է լինում. պատճառն այն է, որ ձայնարանի բաց-
վածքը շատ նեղ թողնված լինելով, արտաշնչված օդն էլ քիչ քա-
նակությամբ է դուրս գալիս, որով պաշարը ուշ է սպառվում և ձայ-
նի տեղդրությունն էլ կարելի է լինում բավական երկարել: Նույն
երևույթը նկատելի է նաև խոսակցության ժամանակ, երբ ձայնա-
լարերը գրեթե իրար կպած, թողնում են միայն մի շատ նեղ բաց-
վածք, այնչափ, որչափ պետք է օդը դուրս տալու համար: Այս
պատճառով, ահա, արտասանությունը շնչառությունից միշտ ալելի
երկարատե է լինում:

Ըստ որում ձայնի բարձրությունը համեմատական է թրթռա-
ցող լարի երկարության հետ, այսպես էլ քանի ձայնալարերը կարճ
են, ձայնն էլ այնքան սուր է լինում: Մանուկների ձայնալարերը
կարճ են, ուստի նրանց ձայնն էլ շատ սուր է. կանանց ձայնալա-
րերը նրանցից 1,5 անգամ ալելի երկար են, ուստի նրանց ձայնն

էլ այնքան ալելի ցածր է: Քանի մարդ մեծանա, մյուս անդամների
հետ ձայնալարերն էլ են մեծանում, ուստի և ձայնն էլ հետզհետե
ցածրանում է. տղամարդկանց ձայնալարերը մանուկների ձայնա-
լարերից երկու անգամ ալելի երկար են լինում, ուստի և նրանց
ձայնն էլ ևս ալելի ցածր է լինում: Այս պատճառով մանուկների և
կանանց ձայնը ալելի լսելի է լինում, քան տղամարդկանցը: Մին-
չև 6 տարեկան հասակը ձայնաստիճանը լինում է մոտ մեկ ութ-
նյակ. արբունքի հասնելիս ձայնը փոխվում է, մանավանդ տղա-
ներինը, որովհետև տղաների խոշակը ալելի է մեծանում քան աղ-
ջրկանցը, և առաջանում է նույնիսկ մինչև Ադամի խնձորը, ուր
ձևանում է մի անկյուն: Այս միջոցին տղաների ձայնը մոտ մեկ
ութնյակ ցածրանում է, իսկ աղջիկներինը 2 տոն միայն: Միևնույն
անձի ձայնի բարձրությունը կամ ցածրությունը կախված է ձայնա-
լարերի ճգումից, երբ մկանները կծկվեն և ձայնալարերը կարճա-
նան, բնականաբար ձայնն էլ կլինի ալելի սուր. իսկ երբ պարզվեն
և երկարեն, ձայնն էլ կլինի ալելի թավ կամ ցածր: նկատելի մի
կետ էլ այն է, որ ձայնալարերի թրթռումները համաժամ (synchro-
ne) են, առանց որի ձայնական ալիքների մեջ պիտի առաջանար
անկարգություն:

Սերություն ժամանակ ձայնի ուժգնությունն ու բարձրությունը
պակասում են, ինչ որ արդյունք է շնչառության և մկանների տկա-
րության: Նույնը պետք է ասել նաև հիվանդության համար: Խրո-
շակի զարգացումը անշուշտ շատ անձուկ կապ ունի նաև սեռական
գեղձերի զարգացման հետ. երբ դրանք զարգանում են, ձայնն էլ
ցածրանում է. երբ մեկին ներքինացնում են, ձայնը դառնում է
մանկական:

Ձայնը երկու տեսակ է. փսփսացող և հնչուն. այս վերջինն էլ
ունի երկու ձև. հողավոր և երգային: Փսփսացի մեջ ձայնալարերը
մնում են իրարից բավական հեռու և շեն թրթռում. օդը անցնում է
նրանց միջով և հասնելով բերանի խոռոչը, համաձայն նրա ձևի,
բեկբեկվում է. ուրեմն և փսփսացի մեջ ձայնը արտաբերվում է մի-
այն բերանի և լեզվի շարժումներով: Սրա համար է, որ խոշակի
հիվանդություն ունեցող մարդոց խորհուրդ են տալիս խոսել միայն
փսփսացով, որպեսզի խոշակը հանգիստ մնա: Փսփսացը ուժգնու-
թյուն չունի, դրա համար էլ հեռուն չի լսվում. իսկ նրա բարձրու-
թյունը հազիվ է նկատվում:

Հողավոր ձայնը, որ մեր սովորական խոսակցական ձայնն է,
առաջանում է ձայնալարերի թրթռումով: Նա թեև ըստ անձի և ըստ

շեշտի ստանում է տարբեր բարձրություն, բայց առհասարակ շատ փոքր ձայնաստիճան ունի. շարժվում է մոտ կես ութնյակի մեջ: Հոդավոր ձայնի ամբողջ ձայնաստիճանը հայտնի կերպով երևում է, երբ արտասանենք իրար հակառակ ծաղրական հո, դրական հր (այո) և հարցական հր (ի՞նչ ասացի՞ր): Ընդհակառակը, երգի ձայնը ավելի շատ ընդարձակ ձայնաստիճան ունի, սովորաբար նա խաղում է երկու ութնյակի, երբեմն 2,5 ութնյակի և բացառաբար 3 ութնյակի միջև: Հոդավոր ձայնի, կամ որ նույնն է՝ խոսակցության և երգի տարբերությունն այն է, որ երգի մեջ ձայների տեղությունն ու ձայնաստիճանը շատ մեծ է լինում, իսկ հոդավոր ձայնի ժամանակ՝ շատ կարճ: Կա և այդ երկուսի միջինը, որ է ռեչիտատիվ երգեցողությունը, ուր ձայների տեղությունը շատ կարճ է, գրեթե խոսակցականի շափ: Բայց այնուամենայնիվ նա երգ է, որովհետև ձայնաստիճանը մեծ է: Կան ժողովուրդներ, որ սովորություն ունեն խոսակցության մեջ որոշ վանկերի տեղությունը շափից ավելի երկարել. սրանով խոսքը երգի տպավորություն է թողնում, բայց այնուամենայնիվ երգ չէ: Այսպես են մեր հարևան պարսիկները, Ասորյատականի թուրքերը, ինչպես և Շամախու, Քավրիզի, Ատափազարի և Պարտիզակի հայերը: Քանի խոսակցությունը ոգևորված կամ ավելի բանաստեղծական գույն ստացած լինի, այնքան էլ երգային կդառնա. այս բանը հայտնի կերպով տեսնվում է, երբ համեմատենք մի պարզ պատմություն՝ անեծքի օրհնանքի կամ մաղթանքի հետ. ինչպես.

Ես այսօր հորեղբորս տանն էի:


Ա՛խ, դավակս, քո տեղակ ե՛ս մեռնեի...:

Առաջինը բոլորովին հասարակ է, երկրորդը՝ երգային ձևով: Հոդավոր ձայնի և երգի ուրիշ տարբերությունների մասին կտեսնենք ավելի հետո:

Ամենացածր ձայնը, որ երբևիցե եղել է դա է fa⁻¹ (43 թըրթըռում), իսկ ամենաբարձրը եղել է, ըստ Մոցարտի, Բաստարդելլա անունով կնոջ ձայնը, որ հասնում էր մինչև do⁷ (4176 թըրթըռում): Բայց սրանք բացառիկ երևույթներ են: Մարդկային ձայնը սովորաբար բաժանվում է երեք տեսակի. արական ձայնն ունի բաս, բարիտոն և տենոր (basse, baryton, tenor), իսկ իգական ձայնը կոնտրալտո, մեցցո-սոպրանո և սոպրանո (contralto, mezzo-soprano, soprano). ահա նրանց աստիճանները (տե՛ս էջ 47):

Այս բոլորը կախված է զանազան անձերի խոշակի մարդա-

կազմական հորինվածքից, այսինքն՝ նրա մեծությունից, և որևէ բարոյական կամ մտավոր ընդունակության հետ կապ չունի:



Կա նաև զլխի ձայն, որի մեջ ձայնական լարերի եզերքներն են միայն թրթռում և այդտեղ ձայնը կարող է է՛լ ավելի բարձր դուրս գալ: Խոշակադեա գործիքը ցույց է տալիս, որ այդ միջոցին խոշակը ավելի լայն է բացվում, քան թե կրծքի ձայնի միջոցին, որ մեր սովորական ձայնն է և որտեղ կուրծքն էլ որոշ շափով ծառայում է իրրև հնչարան:

Խոշակից վեր գտնված այն բոլոր գործարանները, որոնք մասնակցում են խոշակի ձայնը երանգավորելու, կոչվում են հոդավորիչ գործարաններ (organes articuloires): Այս բոլորը գործում են հետևյալ եղանակներով.

1. Ձևացնում են առավել կամ նվազ գոգավոր մի հնչարան, որ օդի թրթռուն հոսանքին տալիս է իր բնորոշ երանգը: Այսպես են ձևանում ձայնավորները:

2. Ձևացնում են մի խողովակ կամ մի նեղ անցք, որի միջով սահում անցնում է օդի հոսանքը, արտադրելով մի ձայն, որ զանազանվում է խողովակի ձևի ու մեծության համաձայն: Այսպես են ձևանում սեղմ (constrictives) կամ առաջաց (continues) կոչված բաղաձայնները, ինչպես f, v, s, z, l, r և այլն, որոնք կարելի է ըստ կամս երկարել:

3. Ձևացնում են մի խողովակ կամ մի անցք, որ մի բույն ամբողջապես փակ է մնում և օդի հոսանքի ճնշման տակ հանկարծ բացվում է. այս բացումով առաջանում է մի ձայն, որ զանազանվում է համաձայն փակման կետի և եղանակի: Այսպես են ձևանում պայթական (occlusives) բաղաձայնները, որոնք են p, b, t, d, k, g և այլն:

Հոդավորիչ գործարանները առհասարակ տեսանելի և շոշափելի են. նրանք պարփակված են երկու խոռոչի մեջ. բերանային խոռոչ և ռեզոնանսային խոռոչ:

Բերանային խոռոչը պարունակում է անշարժ մի կամար, որ ձևացած է քիմքից և վերին ատամներից, և մի քանի շարժուն գործարաններից, որոնք են վերին և ստորին շրթունքները. ստորին ծնոտը (որի վրա հաստատված են ստորին ատամները), լեզուն, կատիկը և լեզվակը:

Շրթունքները կազմում են մի շատ շարժուն գործարան, զանազան մկանների միջոցով կարող են նրանք ավելի կամ պակաս չափով կծկվել և այսպիսով կա՛մ բոլորովին փակել բերանային խոռոչը, կամ թողնել մի կտրակ անցք և կամ հորիզոնական մի բացվածք ձևացնելով, օդի հոսանքը դուրս թողնել: Կատարյալ փակումը տեղի է ունենում պ, փ, բ, մ ձայների արտաբերության միջոցին, իսկ նեղ բացվածքը՝ է, ի ձայնավորների և ֆ, վ բաղաձայնների արտաբերության միջոցին:

Ստորին ծնոտը, շնորհիվ որոշ մկանների, կարող է իջնել ու բարձրանալ և այսպիսով մեծացնում կամ փոքրացնում է բերանի խոռոչը: Զայնավորը կարող է լինել բաց, փակ և միջակ. այսպես è, e և é.— ձայնավորը կոչվում է բաց, երբ բերանի խոռոչը բավական լայն է բացված, փակ՝ երբ նրանից շատ ավելի նեղ է, իսկ այդ երկուսի միջին դիրքը կոչվում է միջակ: Բաց, փակ և միջակ սրանք ընդհանուր բառեր են. բայց լեզուների մեջ կան նաև սրանց ավելի նուրբ աստիճանները. օրինակ, լառներեն լեզվի մեջ ձայնավորներն ունեն 4 աստիճան (բաց, շատ բաց, փակ և շատ փակ), որոնք նշանակվում են առանձին տառերով կամ նշաններով՝ լաոսական այբուբենի մեջ, որ շատ բարդ կազմություն ունի (Hospitalier, Gramm. laoss., 32, 34): Բայց կարևոր է նկատել, որ ծնոտի շարժումները ձայնավորի բացման ու փակման մեջ երկրորդական դեր ունեն, և կարելի է արտասանել բաց, փակ ու միջակ ձայնավորներ՝ շրթունքների միջև մի մատիտ կամ մի սիգարետ սեղմած, այսինքն առանց ստորին ծնոտը շարժելու, ուրիշ խոսքով՝ ծնոտի նույն բացվածքը պահելով: Սրանից երևում է, որ ձայնավորների բացման աստիճանի մեջ կարևորագույն դերը ընկնում է այն բացվածքի վրա, որ կազմվում է լեզվի և քիմքի մերձեցմամբ:

Քիմքը ոսկրից մի անշարժ կամար է, որ ծածկված է դրսից հուղաթաղանթով, կողքերից և առաջից շրջապատված է վերին ատամների շարքով, հետևից կատիկով, որ կազմում է քիմքի կապույտ շարունակությունը, որ շարժական է և կարող է ըստ կամա բանալ ու փակել բերանային խոռոչի և ռնգային խոռոչի հաղորդակցությունը: Քիմքի ամբողջության 2/3 մասը կազմում է կարծր մասը, 1/3-ը՝ կատիկը:

Լեզուն 17 մկանների մի զանգված է. այդ մկանները հնարավորություն են տալիս նրան առնելու բազմաթիվ ու բազմազան ձևեր ու դիրքեր. նա շարժվում է քիմքի տակ. մերթ իր ամբողջ լայնությունը կաչում է նրան և փակում օդի հոսանքը, մերթ կաչում է երկու եզերքներից և ձևացնելով միջին մասում մի ազատ անցք, կազմում է մի հնչարան ձայնավորների համար, մերթ կաչում է քիմքի մեջտեղից՝ երկու եզերքները բաց թողնելով և մերթ էլ ծալրովը միայն թրթռում: Լեզվի և քիմքի այս զանազան դիրքերը ճշտելու համար, լեզվաբանները հատկացրել են այլևայլ բառեր, որոնցով որոշում են նրանց այս կամ այն մասերը՝ այսպես, լեզվի մասերն են (առաջից հետև գնալով)՝ ծայր, պսակ, կոնակ և արմատ. քիմքի մասերն են, ատամներից հետո՝ կապիկները (alvéoles), քիմք, կատիկ և լեզվակ: Այն ձայները, որ հոգավորվում են հիշյալ կետերի վրա, փոխադարձաբար կոչվում են լեզվածայրային (apicale), լեզվապսակային (coronale), լեզվակալային (dorsale), լեզվարմատային (radicale), ատամնային, կապկային, քմային, կապկային (vélaire), լեզվակային (uvulaire): Կարելի է կազմել սրանց զույգերի խառնուրդները, ինչպես՝ ծայրատամնային, պսակա-կապկային և այլն:


Լեզվակը երկրորդական դեր ունի ձայնի հոգավորման մեջ. բայց կարող է նաև թրթռալ և ձևացնել ֆրանսական Դ ձայնը, որ կոչվում է լեզվակային Դ: Աֆրիկյան լեզուների մեջ ևս կան մի քանի հնչյուններ (b, d, dy) որոնք կազմվում են լեզվակի թրթռումով:

Ռնգային խոռոչը բաղկացած է քթի երկու փոսերից, որոնք վերջանում են առաջից երկու ուղեղով, իսկ հետևից երկու ծակերով, որոնք հաղորդակցում են բերանի խոռոչի հետ: Կատիկը կարող է բարձրանալով փակել այս ծակերը, որով օդի հոսանքը ամբողջապես անցնում է բերանով, և այսպիսով արտադրված ձայնը կոչվում է բերանային (buccal, oral), բայց կատիկը կարող է նաև իջնել ցած և ռնգային անցքերը ազատ թողնել. այն ժամանակ օդի հոսանքը մտնում է նաև քթի խոռոչը, դուրս գալու համար ռունգերից, և այսպիսով արտադրված ձայնը կոչվում է ռնգային (ինչպես են մ և ճ): Երբ հարբուխ ենք ստանում, կատիկը բորբոքված լինելով, չի կարողանում հեշտություն բարձրանալ քթի անցքը փակելու և բոլոր ձայնավորները ռնգային արտասանություն են ստանում:

Ամբողջ այս նկարագրությունը, որ տվինք այստեղ, կարելի է ամփոփել հետևյալ սխեմատիկ նկարի մեջ¹, ուր A ցույց է տա-

¹ F. de Saussure, Cours de ling. gen; p. 67.

լիս սնդալին խոռոչը, B բերանալին խոռոչը, C խոչակը, E ձայնարանը՝ երկու ձայնալարերի միջև: Բերանալին խոռոչում գտնվում են շրթունքները a, a), լեզուն (B ծայրը, γ հետնամասը), վերին ատամները (d), վերին ատամնակապիճները (e), քիմքը (t—h առջևի բուլբալին մասը, i կատիկը), և վերջապես լեզվակը (δ): Այս բոլորի մեջ հունարեն տառերը ցույց են տալիս արտաբերության մեջ գործուն մասնակցություն ունեցող գործարանները, իսկ լատիներեն տառերը՝ կրավորականները:



Պատկեր 13

Յուրաքանչյուր անձ իր ձայնական սխեմայի մեջ ունի մի առանձին երանգ. ըստ կիկերոնի բացատրության, մարդու համեմատ ձայները լինում են հնչուն կամ խուլ, քաղցր կամ թթու, թավ կամ սուր, ճկուն կամ խռպոտ և այլն. մարդկային ականջը կարող է զանազանել այս ձայները և հիշողության մեջ էլ շատ երկար պահում է. բայց այդ երանգը գրելու համար որևէ միջոց չկա: Այսպես և՛ յուրաքանչյուր լեզու իր ամբողջ ձայների արտասանության եղանակի մեջ ունի մի յուրահատուկ ձև, որ տարբերվում է մյուս լեզուներից՝ իր ընդհանուր բնավորությամբ: Մարդուց մարդ երանգի տարբերությունը ավելի փոքր է, քան ազգից ազգ: Այսպես, օրինակ, ականջը դյուրություն կարող է զանազանել անգլիացու, հրեայի, պարսիկի, հայի կամ ֆրանսիացու արտասանության տարբերությունը և զգալ նրանց ընդհանուր բնավորությունը: Տաթևացին տալիս է իրեն ծանոթ մի խումբ լեզուների արտասանության բնորոշ նկարագիրը հետևյալ ձևով.

«Փափուկ հելլեն. սաստիկ հոմայեցին սպառնական հոնին.

աղաչական ասորին. պերճական պարսիկն. գեղազանդ աղուանն. ծաղրական մունդն. խափարածայն եգիպտացին. ճճուղական հնդկին. համեղական հայն, որ կարող է զամենայն լեզուս յինքն ամփոփել և բոլոր խօսիլ... որ բոլորապէս կարող է զամենայն լեզու ուղղակի ուսանիլ. և այլք զհայոցն՝ ծերական և թիւր ուսանին, զի մասնաւոր է լեզու նոցա»¹:

Լեզուների ձայնական դրության այս ընդհանուր բնավորությունը, որ կոչվում է հոդավորության հիմքը (base d'articulation) առաջանում է լեզվի, շրթունքների, կատիկի և ձայնական լարերի որոշ դրությունից, որ սերնդից-սերունդ անցնում է ժառանգաբար: Օրինակ, անգլիացու հոդավորման հիմքի հատկանիշն այն է, որ շրթունքները կպած են ատամներին և քիչ են շարժվում, լեզուն ցած ու տափակ է, ծայրը զոգավոր ձևով կպչում է քիմքի բարձրության: Ֆրանսիացին, ընդհակառակը, ունի շատ շարժուն շրթունքներ, որոնք հաճախ կլորանում և առաջ են կարկառվում, լեզուն ստանում է կորնթարգ ձև և դիմում է դեպի առաջ: Ալյայան գագաթների որոշ ժողովուրդներ բերանը հազիվ են բաց անում, Համբուրգում կատիկը կախված է կամ ծնոտները դեմ-դեմի մոտեցած (Roussetot, Princepes, I, p. 467): Հայերենի և գերմաներենի արտասանությունը բռնում է այս երկուսի միջին ձևը: Ռուսերենի մեջ շրթունքները թույլ են, շատ դեպի առաջ ձգված, ծայրերը կախված, լեզուն լարված, տափակ և ցածր նստած, իսկ ծայրը սուր և դեպի ատամները կարկառած (Р. Шор, Язык и общество, стр. 52—53), սակայն հոդավորման հիմքը ինչքան էլ որ դյուրությամբ զգալի, այնքան էլ դժվար կարելի է բացատրել, իսկ գրել՝ անկարելի է: Ընդհանրապես մի օտար լեզու, նշանակում է յուրացնել նրա հոդավորման հիմքը, որ շատ ավելի դժվար է քան բուն իսկ լեզուն սովորելը: Շատերը գիտեն խոսել թուրքերեն, ֆրանսերեն կամ ռուսերեն, բայց նրանց հոդավորման հիմքը հայերեն է. և որքան սխալվում են նրանք, որ կարծում են, թե թեկուզ տարիների աշխատությունից հետո յուրացրել են որևէ օտար լեզու...:

Ամփոփելով մինչև այժմ խոսողության վերաբերյալ ասվածները, գտնում ենք, որ՝

ա) Մտածողությունը խոսողությունից անկախ է: Ինչպես որ կիրնոյի նկարները անձայն անշշուկ անցնում են մեր աչքի առաջով, ներկայացնելով մեզ ամբողջ գործողություններ, նմանապես մտածողությունը (բոլոր գաղափարները) անցնում են մտքի առաջով.

¹ «Գիրք հարցմանց», էջ 298 և այլն:

առանց պետք ունենալու որևէ ձևական արտահայտություն: Երազի մեջ մարդը ընդհանրապես չի խոսում, բայց գործողության բոլոր պատկերները անցնում են մտքի առաջով, նույնիսկ խոսակցում է առանց ձայնի:

բ) Մտածողությունը կարող ենք հաղորդել արտաքին աշխարհին զանազան ձևերով (հտպտանք, շարժում և այլն), բայց այդ բոլորից լավագույնը հողավոր ձայնով (բառերով) խոսակցությունն է:

գ) Բառերը այնպիսի հեշտ ու ճիշտ միջոց են առարկաներն ու զաղափարները ներկայացնելու համար, որ մենք նույնիսկ ներքին մտածողությունը հաճախ կատարում ենք բառերով:

դ) Խոսակցությունը այժմ գլխավորապես կատարում ենք միայն բառերով, որ հողավոր ձայների մի խումբ է, թեև այդ հողավոր ձայները ազգից ազգ տարբեր հիմք ունեն:

ե) Որպեսզի խոսակցիցը կարողանա լսել մեր ձայնը, մենք մեր ձայնին ստիպված ենք տալ որոշ ուժգնություն, որ պայմանավորվում է լսող անձի հեռավորությամբ և մեր թոքերի կարողությամբ:

զ) Երբ այս վերջին երկու պայմանները վերածվում են մինիմումի, (այսինքն երբ լսողը ուղղակի մեր քթի տակն է կամ երբ մեր թոքերը շատ հիվանդ են) և կամ երբ մենք ուզում ենք մեր ասածը թաքուն պահել երրորդ անձի լսողությունից, խոսակցությունը վարում ենք փսփսոցով:

է) Ձայնավոր խոսողության և փսփսոցով խոսակցության միջին աստիճանը պտպտալն է: Պտպտալու ժամանակ հողավորման հիմքերը ամբողջապես պահվում են, բայց ձայնի ուժգնությունը բոլորովին ջնջվում է: Ուրիշ խոսքով ձայնական գործարանները ստանում են բոլոր իրենց դիրքերը, բայց առանց ձայնը արտաբերելու՝ հեռանում են այդ դիրքերից: Խոսում ենք առանց ձայնի: Այդ միջոցին երևում են խոսողի բոլոր շարժումները (ծնոտի, շրթունքների, լեզվի և այլն), բայց ոչինչ չի լսվում: Պտպտալու գործողությունը կատարվում է ամենից ավելի աղոթելու ժամանակ, ինչպես նաև անգիր արած որևէ բան կրկնելու կամ մենակ՝ իրեն համար մտածելու ժամանակ: Ընթերցումն էլ հաճախ կատարվում է այս ձևով: Պտպտալու ժամանակ երբեմն լինում է, որ որոշ ձայներ ավելի ուժեղ արտասանվելով լսելի են դառնում: Այսպես, օրինակ, շրթունքների ուժեղ բախումից դուրս է գալիս ալ կամ փ, լեզվի ուժեղ հնչումից գ, ծ, շ, ւ և այլն, բայց այդ բոլորից այնուամենայնիվ ո՛չ մի բառ չի ջոկվում:

ԱՅՐՈՒԲԵՆ ԵՎ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ

Նախորդ գլխի մեջ տեսանք, թե մարդկային ձայնը եթե ո՛չ շատ բազմազան, զոնե շափազանց բազմերանգ է: Լեզվաբանի համար անհրաժեշտ է ունենալ մի այնպիսի միջոց, որով այդ ձայները իրենց ամբողջ նրբությունը ճշտորեն ներկայացվեն թղթի վրա: Ի՞նչ միջոց ունենք այս բազմաթիվ երանգները ներկայացնելու համար: Մի կողմ դնելով մեհենագիր, գաղափարագիր, նշանագիր և այլ նման անուններով կոչված գրությունները, որոնք ո՛չ թե բառի հնչումը, այլ միայն նրա իմաստն են ներկայացնում, զուտ մարդկային ձայնը ներկայացնելու համար կա միայն երկու տեսակ գրություն՝ վանկագիր և դասական այբուբեն, որոնք իրապես միևնույն բառերն են:

Ձայնը իբրև անկախ միություն՝ գոյություն չունի մարդկային գիտակցության մեջ: Մարդը վարժված է հնչելու բառը իբրև մի ամբողջություն, առանց արտասանելու նրա կազմիչ տարրերը, այն է առանձին ձայները: Ձայների անկախ և առանձին գոյության գիտակցությունը մարդու մեջ վերլուծման արդյունք է միայն: Վերլուծումն սկսվում է մարդու մեջ նախ այն դեպքերից, երբ պատահաբար այս կամ այն լեզվի մեջ այսինչ կամ այնինչ բառը բաղկացած է լինում միայն մի ձայնից. օրինակ՝ գրաբար ի «մէջ» և ռուսերեն և «և». աշխարհաբար ու «և» և ֆրանսերեն օս՝ «ո՛ւր»: Այսպես նաև բաղաձայններից՝ ս՝ «լոի՛ր», խ՝ «այո՛»: Երկրորդ՝ երբ համեմատի իրար հետ երկու այնպիսի բառեր, որոնք միայն մի ձայնով են տարբերվում իրարից. օրինակ, բարի՛ք և շարի՛ք, կամ ողո՛ք և բողո՛ք:

Այն օրից, երբ մարդիկ առանձին ձայների գոյություն գիտակցության հասան և այդ հնչյունները նշանակել մտածեցին, այսինքն հնարեցին այբուբենը, այդ օրից լեզվաբանությունը իր առաջին քայլն առավ:

Այբուբենի ծագման և հորինման պատմությունը լեզվաբանության շի վերաբերում. այստեղ մեզ հետաքրքրում է միայն այն հարցը, թե այդ այբուբենը կամ այբուբենները ի՞նչքան ճշտությամբ և հարազատությամբ կարող են ներկայացնել ձայնը, քանի որ լեզվաբանության հիմքը ձայնն է:

Աշխարհիս մեջ ոչ մի այբուբեն կատարյալ չէ: Կան լեզուներ, որոնց այբուբենի անկատարությունը գերազարկան աստիճանի է հասած, ինչպես են տանկերները, անգլերենը, տիրեթերները, Ֆրանսերենը, պահլավերենը և այլն: Փրանսերենում օ ձայնը կարելի է գրել 46 ձևով, an 52 ձևով, e 55 ձևով (Grégoire, Petit traité de linguistique, 1923 p. 124). hauts «բարձունք» միայն օ հնչյունն ունի: Տանկերենում Kürk «մուշտակ», körek «փուքս» kürek «թի», gevrek «պաքսիմատ», Kevork «Գևորգ», görek «արաաքին սևսք» միևնույն ձևով են գրվում: Անգլերենում a կարգացվում է e, e կարգացվում է i, i կարգացվում է ay և այլն:

Ամենաանկանոն այբուբեններից մեկն է, օրինակ, դանիերենը ուր թե՛ ձայնավորները և թե՛ բաղաձայնները ունեն դանազան հնչյուններ, գրեթե առանց որոշ կանոնի. օրինակ, միևնույն ց տառը կարելի է կարդալ q, d, η, [w, j, v] և կամ թողնել անձայն: Շատ վատ է նույնպես իռլանդերենը, ուր օրինակ, saoghal, lannamhaim, oidhche, cathughadh բառերը կարգացվում են sîl, lânnun, î, cahu:

Չափազանց վատ է պահլավերենը, ուր ո՛չ միայն միևնույն տառը ունի մի քանի արժեք, ո՛չ միայն տառերը գրություն ժամանակ կրճատվում և իրար են միանում, ո՛չ միայն ձայնավոր տառերը չեն գրվում, այլև ունի այն գարմանալի սովորությունը, որ գրում են արամերեն և կարդում են պահլավերեն. օրինակ «հաց» գաղափարի համար գրում են 𐭪𐭥𐭥, որի տառերն են

rxma և ներկայացնում է արամերեն 𐤓𐤍𐤏 laxmā «հաց» և

կարդում են nān. «մեծ» գաղափարի համար գրում են 𐭪𐭥𐭥

որի տառերն են rba, որ ներկայացնում է արամերեն 𐤓𐤁𐤏

rabbā «մեծ» և կարդում են vazurg¹, և այս՝ ո՛չ թե միայն մի քանի բառ, այլ բազմաթիվ ձևեր, գոյականներ, ածականներ. դերանուններ, նախդիրներ և բայեր:

Պահլավերեն գրության դժվարությունը պղելի պարզ ցույց տալու համար բավական է ասել, թե այբուբենը բաղկացած է միայն 14 տառից, ուստի մի տառը կարող է մի քանի ձևով կարգացվել. օրինակ, ձայնավորներից ա կարգացվում է a, ā, h, x, բաղաձայններից l կարգացվում է u, o, n, v, r, l. ավելի դժվար են տառերի կցումները, օրինակ, 𐭪𐭥𐭥 կարգացվում է āh, ha,

hā, ax, āx, xa, hax, al, ad, iia, ih, aš, āš, hāš, iš, eš, giḥ.

𐭪 կարգացվում է ahō, ahu, ahū, āha, āān, axv, āxu, hava, hau, han, xāna, xān, xan և այլն (տե՛ս Թիրվաքյան, Հայ-երանական ուսումն., էջ 35—37):

Դելիչը (Delitzsch, Kleine sumerische Sprachlehre, էջ 3—5) ցույց է տալիս, որ սումերական այբուբենն էլ անկատար է, երևի լեզուն ուներ երկար ու կարճ ձայնավորներ, a և ā, e և é, o և ō u և ū, բայց այս բոլորը միատեսակ էին գրվում: Սումերական այբուբենի անկատարության լավագույն ապացույցը այն է, որ երկու տարբեր թվականներ՝ aš «մեկ» և aš «վեց» միևնույն ձևով են գրվում: Տարակույս չկա, որ նրանցից մեկը պիտի հնչվեր aš կամ āš. այժմ այս վերջինը ընդունված է իբր «վեց»:

Ուրիշ լեզուներ ունեն ըստ կարելիվույն կանոնավոր կազմված այբուբեն. այսպես են վրացերենը, իտալերենը, սլովեներենը, իսպաներենը, գերմաներենը և այլն: Բայց այնուամենայնիվ ո՛չ մի այբուբեն չունի պահանջված կատարելությունն ու ճշտությունը:

Այբուբենների պակասությունը առաջանում է հետևյալ պատճառներից.

1. Այբուբենները փոխ են առնված ազգից ազգ և հետևաբար ներկայացնում են միայն փոխատու լեզուների ձայնական պատկերը և ո՛չ թե փոխառու լեզվի. այնպիսի ձայներ, որ հատուկ են եղել փոխատու լեզվին, բայց չկան փոխառու լեզվի մեջ, մնում են այբուբենում, օրինակ, տանկերեն և պարսկերեն այբուբենում ց տառը շարունակում է իր գոյությունը, թեև այդ ձայնը չկա տանկերենի և պարսկերենի մեջ: Ջավայերենը 8 տառ է, վերցրել արաբական այբուբենից, բայց նրանց հատուկ ձայները չունի, ուստի ավելորդ բեռ են այբուբենի մեջ: Ընդհակառակը, փոխառու

¹ Nyberg, Hilfsbuch des Pehlevi, I, Uppsala, 1928, էջ 50—51.

լեզուն ունենում է ձայներ, որ չկան փոխառու լեզվի մեջ. այդ ձայների համար նոր նշաններ ստեղծվում են, ինչպես հինգուստանի ت, ث, ج, ح, د պարսկերեն ع , անգլերեն w , ռուսերեն в, вь, ш , բայց երբեմն էլ կա՛մ ամենեին ո՛չ մի նշան չի ստեղծվում և կամ նոր ձայնը մի քանի տառերի կապակցութլամբ է ներկայացվում: Առաջին պարագային միևնույն տառը ունենում է երկու հնչյուն. ինչպես պարսկերեն ك=K կամ گ , ռուսերեն е=б կամ ю , իտալերեն g=գ կամ ջ , z=ց կամ ձ . երկրորդ պարագային երկու և ավելի տառ ունենում են մի հնչյուն, ինչպես ֆրանսերեն ch=չ , անգլերեն ch=չ , գերմաներեն ch=խ , անգլերեն sh=շ , գերմաներեն sch=շ , tsch=չ և այլն:

2. Այբուբենները (փոխառյալ կամ նոր հորինված) կազմված լինելով լուրջաբանչուր լեզվի որոշ վայրկյանին, ներկայացնում են միայն այդ վայրկյանի ձայնական պատկերը, հետևաբար լեզվի հաշորդական վիճակների համար ճիշտ չեն, ըստ որում լեզուն շարունակական փոփոխման մեջ է: Անճշտութլունն առաջանում է երկու կողմից. ա) որոշ ձայներ փոխում են իրենց հնչումը. բ) լեզվի մեջ ստեղծվում են նորանոր հնչյուններ, որոնց համար նոր տառեր չեն ստեղծվում: Այսպես՝ յ ձայնը հինգերորդ դարում հնչվում էր ֆրանսերեն y ձայնի պես, ապա կարգում էինք h, y և ավելի h ենք համարում քան y : Հին հայերենի մեջ չկան ö, ü ձայները. արդի բարբառներն ունեն այդ ձայները, բայց նրանք ներկայացնող տառերը չկան մեր այբուբենի մեջ:

3. Ուղղագրութլունը կազմող անձնավորութլուններից ոմանք տողորված են եղել ստուգաբանական սկզբունքներով և ուզեցել են բառին տալ այնպիսի մի պատկեր, որ ո՛չ միայն հնչյունը, այլև մանավանդ ծագումը պատկերացնի: Այսպես, ֆրանսերեն vingt «քսան» բառը գրվում է vingt g և t ավելորդ տառերով, որոնց նպատակն է ցույց տալ, թե vingt ծագում է լատիներեն viginti բառից կամ նրա շարունակութլունն է: Երբեմն սխալ ստուգաբանութլուններ էլ են տեղի ունեցել. օրինակ, puga «կշիռ» բառը կարծել են, թե առաջանում է լատիներեն pondus բառից, ուստի գրել են poids , պահելով լատիներենի d և s ձայները, մինչդեռ այս ստուգաբանութլունը սխալ է, բառը ծագում է լատիներեն pensum ձևից և d -ի գրութլունը ամեն կերպով անտեղի է:

4. Այբուբենները փոխանցվելով ազգից-ազգ և հարմարեցվելով այս կամ այն լեզվի տարրեր շրջաններին, ստանում են իրա-

րից բուրրովին այլազան արժեքներ. այսպես՝ լատիներեն j տառը արժե ֆրանսերեն đ , գերմաներեն j , անգլերեն z , իսպաներեն ju և այլն: Նույնպես են նոր հարմարեցրած կապակցութլունները. օրինակ, ch , որ արժե ֆրանսերեն z , լանգդոկ լեզվով չ , սեռոտման լեզվով ch հնչվում է dg կամ tg (Conradi, 1), անգլերեն z գերմաներեն ju , իտալերեն p և այլն: Հունգարերենում s արժե z իսկ si հնչելու համար գրում են sz : Լատիներեն c , որ լատիներենի մեջ միայն k հնչյունն ունեք, գերմաների մոտ դարձել է g , ֆրանսերեն q , u , իտալերեն q , z և այլն և այլն, մինչև այնքան ենք առաջ գնացել, որ լատիներեն բառերն էլ այս աղճատ հնչումով ենք արասանում. օրինակ, Cicero(n) կարգում ենք Յիցերոն, մինչդեռ ըստ լատիների կարգացվում էր Կիկերոն, ըստ որում հույները այդ բառը գրել են իրենց տառերով Κικέρων և հայերը՝ Կիկերոն (Kuhner, 40):

X տառը ընդհանրապես pu է, պորտուգալերենի մեջ կարգացվում է š , ռուսերենում ju , որ ընդունված է նաև գիտական տառագարձութլան մեջ: Կատալան լեզվումն էլ š է, ինչպես xamos (կարգա՛ շրմոս) «սիրուն», xeix (կարգա՛ շեշ) «X տառի անունը» (Huber, 20):

Պրովանսալ լեզվում g կարգացվում է հայերեն ձ ՝ e, i ձայնավորներից առաջ, j կարգացվում է հայերեն ձ ՝ a, e, i, o, u ձայնավորներից առաջ, իսկ ch կարգացվում է միշտ հայերեն ց (Savinian, 6):

Նույնիսկ ձայնավորների մեջ հնչման միօրինակութլունն չէ պահված լեզվից լեզու. օրինակ, u իտալերեն և գերմաներեն կարգացվում է ou , ֆրանսերեն ju (իւ). լանգդոկ լեզվի մեջ o կարգացվում է ou ! իսկ o կարգալու համար գրում են ö և ü տառն էլ հնչում են ֆրանսերենի նման ü (Salvatori, Grumm, Occitane, p. 1): Նույն լեզվի այբուբենով nh կարգացվում է քմային ñ, ñj, ny (անդ, էջ 9): Այբուբենում ë հնչվում ö, y հնչվում է ü (Feizl, 9): Նորվեգերենում aa կարգացվում է o :

5. Ամեն այբուբենի մեջ էլ տառը պայմանական մի նշան է և տրամաբանորեն կապված չէ իր ներկայացրած հնչյունի հետ: Պայմանականութլունը երբեմն գնում է մինչև այնտեղ, որ նույնիսկ լեզվի ընդունած հնչյունական նշաններով էլ բառը չի ներկայացնում հնչումը: Այսպես, ֆրանսերեն oiseau բառի մեջ ո՛չ մի հնչյուն չի նշանակված իր նշանով: Այս տեսակետով ուրեմն այբուբենը ամենեին չի կարող ներկայացնել այն, ինչ որ է ձայ-

նր. այս պատճառով, ահա, միևնույն տառը ազգից ազգ բոլորովին տարբեր հնչում ունի. միևնույն u ձևը հնչվում է հայերեն u, ֆրանսերենյու (ju), գերմաներեն և իտալերեն ու, ուսերեն ի, հունարեն (ձեռագրով) ց և այլն: Դրա համար է, որ որևէ հիշատակարան, որ գրված է մի անձանոթ՝ այբուբենով, մեզ համար բոլորովին անլուծելի մի հանելուկ է:

6. Բայց եթե տառը ձայնի տրամաբանական ներկայացուցիչը չէ, ուրեմն կարող չէ բնավ ներկայացնել այն բազմերանգ նրբութուններն ու հոգավորումները, որ ստանում է միևնույն ձայնը բերանում: Ֆրանսերենում առնվազն 7 տեսակ օ կա, բայց բոլորի համար էլ միևնույն օ նշանն է գրվում: Ատամի ծայրից մինչև քիմքի միջին կետը առնվազն 5 հենակետ կարելի է որոշել և հետևաբար նույնքան տեսակ է կամ ձ հնչել. բայց այդ բոլորի համար մենք միայն մի-մի տառ ունենք: Ավելորդ է խոսել ձայնի ուժի և նոտայի մասին, որոնք ո՛չ մի ձևով չեն կարող ներկայանալ այսպիսի այբուբենների մեջ:

Վերոհիշյալ պակասություններից առաջին երեքը լինելով արտաքին և պատահական, կարելի էր դյուրությամբ դարձանել. այս հիման վրա է, որ զանազան ազգերի և լեզուների մեջ տեղի են ունենում ուղղագրական բարեփոխություններ, ինչպես՝ իտալերենի, գերմաներենի, վերջերս ուսերենի և հայերենի մեջ: Բայց ի՞նչ պետք է անենք ձայնի և գրության մեջ տրամաբանական որևէ կապ զնելու և տալու համար այբուբենին իդեալական հարստությունն ու նրբությունը:

Այբուբենների արդի սխառմը, իբրև գումար զանազան պայմանական նշանների, բոլորովին անընդունակ է այդպիսի մի ձև բնդունելու:

Որպեսզի բարձրենք, թե կարելի էր ձայնի և գրության մեջ էլ տրամաբանական որոշ կապ հաստատել, աչքի առաջ բերենք հայ և եվրոպական ձայնագրության նշանները.

Հայկական

✓	~	^	^	~	w	r	w
կո	է	վ	բ	յու	նե	աա	աո



քո բե մի փա սոլ ա սի դո

Եվրոպական

Հայկական ձայնանիշները պայմանական նշաններ են, ճիշտ այբուբենի տառերի պես. այնպես որ v նշանը գրելու տեղ եթե ~ գրված լիներ, որևէ անպատեհություն չէր առաջանա: Բայց եվրոպական ձայնանիշները ներկայացնում են մի սանդուղ, որի յուրաքանչյուր մատի վրա գրված նշանը մյուսից այնքան բարձր է կամ ցածր, որքան ձայնը ինքը: Ահա այս է տրամաբանական կապը ձայնի և գրության միջև:

Որպեսզի այբուբենն էլ ունենար որևէ տրամաբանական կապ ձայնի հետ, պետք էր, որ միաժամանակ առանձին նշաններով ներկայացված լինեին բերանի, քթի, խոշակի, լեզվի, քիմքի, ատամների և այլն գերը յուրաքանչյուր ձայնի արտաբերության ժամանակ: Այդպիսի մի գրություն հնարել է անգլիացի Բելլ ձայնաբանը¹, որ կոչվում է visible speech (տեսանելի խոսք). բայց այդ այբուբենը շատ բարդ ձև ունենալով, բնագիտության կիրառության գրված չէ:

Նույն կարգի, բայց ավելի հեշտ մի այբուբեն հնարել է Եսպերսենը², ուր յուրաքանչյուր ձայն ո՛չ թե ներկայացված է մի՛ միակ նշանով, այլ մի ամբողջ ֆորմուլայով, որ բաղկացած է երեք տարրերից. հունարեն գրեր, լատիներեն գրեր և թվանշաններ, համաձայն այն սխեմատիկ նկարի, որ գրինք վերը (էջ 51): Լատին տառերը ցույց են տալիս անշարժ հոգավորիչ գործարանները (վերին շրթունք, վերին ատամներ, քիմք և բմպանի պատերը), հունական տառերը ցույց են տալիս շարժուն հոգավորիչ գործարանները (ստորին շրթունք, լեզվի զանազան կետերը, կատիկ, լեզվակ, ձայնարան, շնչառության գործարանը), իսկ թվանշանները ցույց են տալիս գործարանների ձևն ու բացվածքը (0 փակ դիրքն է, 1 մոտեցում, 3 բաց դիրք): Օրինակ՝

	p	m	n
a	0	0	3
β	3	3	0
δ	0	3	3
ε	3	1	1

Միևնույն գրությունն ունի նաև Սոսյուրը (Cours de linguistique générale, Paris, 1922, 68—76): Ձայնի տարբերության մեջ կա երկու գործոն.

a) արտաշնչություն,

¹ Եկարագրությունը տե՛ս Sweet, A primer of phonetics, Oxford, 1902.

² Եկարագրությունը տե՛ս Jespersen, Articulations of speech sounds represented by means of alphabetic symbols, Marburg, 1889.

b) բերանային հոդավորություն,
որոնք անհրաժեշտորեն գոյություն ունեն ամեն ձայնի համար և
բավական են իրենք իրենց: Սրանց վրա կարող են ավելանալ
կամ ոչ՝

c) խոչակի թրթռումը,

d) ոնգային թրթռումը:

Այս չորսից a, c, d միշտ միօրինակ կամ միատեսակ են.
Իսկ b կրում է բազմատեսակ ձևափոխություններ: Ուրեմն լուրա-
քանչյուր ձայնի պատկերը սալու համար պետք է a. բավական է
տալ b, c, d գործոնները: Սրանց համար իրրև պալմանական
նշան գրվում է՝

~ խոչակի թրթռում.

. . . ոնգային թրթռում.

[] սրանցից մեկի կամ մյուսի բացակայությունը:

Հստ որում կունենանք բոլոր կարելի փոփոխությունց հետև-
յալ պատկերը.

	I	II	III	IV
a	արտաշնչում	արտաշնչում	արտաշնչում	արտաշնչում
b	բերանի հոդ	բերանի հոդ	բերանի հոդ	բերանի հոդ
c	[]	[]	[]	[]
d	[]	[]	[]	[]

Այս աղյուսակի մեջ I սլունակը ներկայացնում է խուլ ձայ-
ները, II—թրթռումները, III—ոնգայինները և IV—թրթռուն ոնգա-
լիները:

Մնում է որոշել մի անձանոթի, այն է բերանային հոդավո-
րումների ձևափոխությունները: Սրա համար իբրև հիմք է ընդու-
նում քիմքի զանազան կետերը (ըստ նույն սխեմատիկ պատկերի),
իսկ 0—6 թվանշաններով նշանակում է բացվածքի զանազան աս-
տիճանները (0 կատարյալ փակումն է, 6 ամենաբաց աստիճանը):
Թվանշանի ձախ կողմում գրվում է հունարեն տառը (ներգործող
գործարան) և աջ կողմում լատիներեն տառը (կրավորական գոր-
ծարան): Այսպես, օրինակ, β0e նշանակում է, թե լեզվի ծալքը (β)
պինդ կպած է (o) ատամնակապիճներին (e):

Ահա շրթնային և կոկորդային երեք (երկու պարզ և մի ուն-
գային) բաղաձայնների պատկերը.—

շրթնային			ատամնային			կոկորդային		
p	b	m	t	d	n	k	g	ŋ
α0α	α0α	α0α	β0e	β0e	β0e	γ0h	γ0h	γ0h
[]	[]	[]	[]	[]	[]	[]	[]	[]

Այս դրույթամբ գրում են նաև մյուս բոլոր ձայները, ինչպես
բաղաձայն, նույնպես և ձայնավոր: Վերջինները ստանում են բաց-
վածքի 4, 5, 6 աստիճանները. օրինակ՝

u	a
oγ4i	γbh
[]	[]

(0 նշանը ցույց է տալիս շրթունքների կտրացումը):

Բայց այս և վերի դրույթունն էլ ունենալով իրենց անհարմա-
րությունները և լինելով շատ երկար, ավելացնենք՝ նաև ամեն մի
ներթույթուն նշանակելու անհարմար, գործածության չեն գրվում:

Վերոհիշյալ ձևերից շատ ավելի հասարակ կազմություն ունի
այն դրույթունը, որով նման ձայները նշանակվում են նման նշան-
ներով, ճիշտ ինչպես են b, p, առաջինը թրթռուն շրթնային, երկ-
րորդը համապատասխան խուլը: Բայց այս դրույթամբ արդեն չի
կարելի ներկայացնել ձայնի բնախոսական կազմությունը, հետևա-
բար և արժեքից զուրկ է և բնավ չի ընդունված լեզվաբանության
մեջ:

Լեզվաբանները որոշել են ուրեմն բավականանալ սովորական
այբուբեններով:

Ընդհանուր լեզվաբանության մեջ սովորաբար գործ են ածում
երկու այբուբեն. հունարեն և լատիներեն, առաջինը միայն հունա-
րենի համար, երկրորդը՝ լատիներենի և բոլոր նույն այբուբենը
գործածող լեզուների համար:

Աճա ալփ երկու այբուբենների տառերը.

A	α	N	ν	A	ā	N	n
B	β	Ξ	ξ	B	b	O	o
Γ	γ	O	ο	C	c	P	p
Δ	δ	Π	π	D	d	Q	q
E	ε	P	ρ	E	e	R	r
Z	ζ	Σ	σ ζ	F	f	S	s
H	η	T	τ	G	g	T	t
Θ	θ	Υ	υ	H	h	U	u
I	ι	Φ	φ	I	i	V	v
K	κ	X	χ	J	j	X	x
Λ	λ	Ψ	ψ	K	k	Y	y
M	μ	Ω	ω	L	l	Z	z
				M	m		

Երկու տեսակ այբուբեն է ընդունված լեզվաբանության մեջ. 1. աղագային կամ ավանդական այբուբեն և 2. գիտական այբուբեն: Յուրաքանչյուր ազգ, որ գրականության բարձրացրած մի լեզու ունի, ունի նաև իրեն համար մշակած մի այբուբեն, սկսած չինարենից, ասուրերենից կամ եգիպտերենից, մինչև արդի քրդերենը: Բայց այս բոլորից լեզվաբանությունը ընդունում է միայն հունական այբուբենը, լատինականը և լատինականի վրա ձևված այբուբենները, ինչպես գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն, լեհերեն, հունգարերեն և այլն, որոնց վրա պիտի ավելանան այժմ տաճկերենը, քրդերենը և այլն: Այստեղ, բնականաբար, առաջանում են այլընդայլո գրություններ. օրինակ, միևնույն ch գրությունը ֆրանսերենի համար շ (երբեմն էլ f) է, անգլերենի համար շ, գերմաներենի համար խ և այլն:

Ավելի զարմանալին այն է, որ նոր ժողովուրդներ փոխ են առել եվրոպական մի այբուբեն և չեն պահել լատինական տառերի հնչումը: Օրինակ, անցյալ դարում Ռուսին և Լեզրո անունով երկու ֆրանսիացի Մագագասկար են մտցրել ֆրանսիական այբուբենը, բայց y տառը բառի վերջում հնչվում է i (ուրեմն պետք էր գրել i), o հնչվում է u, ai հնչվում է ei, ai-ao հնչվում է au, io հնչվում է iu, eo հնչվում է eu, ao հնչվում է ô, իսկ ամենից վատն ա՛յն է, որ j հնչվում է հայերեն ձ, իսկ z հնչվում է չ:

Ավելի վատ է աֆրիկյան nzima լեզվի նորակազմ եվրոպա-

կան այբուբենի մեջ hy, որ կարգացվում է š (շ) (Welman, A preliminary study of the nzima, 16):

Այբաներեն այբուբենը մի դարի հնութուն էլ չունի, բայց տեսք, թե ի՞նչ թերութուններ ունի: Չայնավորները այս լեզվում 3 աստիճան ունեն՝ կարճ, երկար և անգային. կարճերը ո՛չ մի նշան չունեն, երկարների համար դրել են շեշտ, անգայինների համար պարույկ. ինչպես՝

a=ǎ, á=ā, â=a:

Մյուս տառերից ունենք՝

ē հնչել ǒ, u=u, y=u,

c=g, ç=z, dh=s, g=g,

gj=gy, ll *տեղ* l, nj=ny,

r=p, rr=n, sh=z,

th=v, x=á, xh=z, í,

z=z, zh=ž:

(Feizi, 8—10)

Նորվեգերենը վերցրել է լատինական այբուբենը, որից դուրս է գցել նախ q տառը, c, w և x գործածվում են միայն օտար բառերի մեջ, ավելացրել են ae և Ø տառերը, որոնցից առաջինը կարդում են è, երկրորդը ö, —aa կարգացվում է o, y=ü, u նորվեգերեն հատուկ մի հնչյուն է, որ գտնվում է ֆրանսերեն օu և u ձայնավորների միջև. o կարդում են երբեմն օ, երբեմն էլ u. բաղաձայններից g երբեմն g է, երբեմն gʸ և երբեմն էլ ž. —gj հրնչվում է իբրև ֆրանսերեն l mouillé. —j=y, kj=գերմաներեն ich հնչման. s միշտ հայերեն ս է, իսկ sj և skj հավասարապես կարգացվում են š շ:

Նույնիսկ այն տառերը, որ ամեն տեղ էլ իբր թե նույնն են, իրապես տարբեր են. այսպես, օրինակ, k տառը ֆրանսերենի և ուսերենի մեջ պարզ խուլ է, գերմաներենում և անգլերենում շնչեղ խուլ, սկանդինավյան լեզուներում ավելի շնչեղ խուլ:

Մինչև իսկ միևնույն այբուբենի տառերը զանազան ժամանակ և զանազան բարբառներում տարբեր հնչյուններ են ունեցած. օրինակ, հունարեն ÷ միևնույն թվականին մի տեղ th էր, մի տեղ ÷. —ε 600 թվականին էր ei, 400-ին ē, 200-ին i, հիմա պարզ i, և այլն և այլն:

Ընթերցողին մնում է դուրս գալ այս խառնակ վիճակից, վարժվելով կարգավ լուրաքանչյուր տառ այդ լեզվի այբուբենի օրենքներով:

Գիտական այբուբենը այն է, որ գիտնականները հորինել են լատինական այբուբենի վրայից և հարմարեցրել ո՛չ թե այս կամ այն լեզվի պահանջներին, այլ ընդհանրապես մարդկային ձայնին (հնչական այբուբեն): Որովհետև լատին այբուբենը բավական չէ բոլոր ձայները, ևս առավել ձայների նրբությունները նշանակելու, ուստի լեզվաբանները լատին այբուբենի վրա ավելացրել են մի քանի նոր տառեր, որ փոխ են առել հույն և գոթական այբուբենից, ինչպես և մի խումբ պայմանական նշաններ, որով տրվում է ձայներին պահանջված նրբությունը կամ երանգը ըստ կարելիության:

Գիտական այբուբենը հիմնված է երկու սկզբունքի վրա. 1. Ամեն մի ձայն պիտի նշանակվի միայն մի տառով. 2. Ամեն մի տառ պիտի ունենա միայն մի հնչյուն: Այսպես, չ միայն մի ձայն է, ուստի նշանակել այն ch, tch կամ tsch ձևով հակառակ է գիտական սկզբունքին, դրա համար էլ գիտական այբուբենը մերժել է բոլորը և հնարել է ձ ձևը:—g մի տառ է. ուստի հնչել այն մերթ գ, մերթ ծ, մերթ ջ, մերթ դ, հակառակ է գիտական սկզբունքին, դրա համար էլ գիտական այբուբենը հնչում է այդ տառը միայն գ հնչյունով:

Պայմանական նշանները հետևյալներն են.

— զրվելով ձայնավորի վրա նշան է երկարություն, մինչդեռ սուղ է. այսպես ā, ē, ī, ō, ū և այլն երկար են, իսկ ā, ē, ī, ō, ū և այլն սուղ: Եթե երկու նշաններն էլ զրված լինեն նույն ձայնավորի վրա, նշանակում է թե ձայնավորը կա՛մ երկար է կա՛մ սուղ, ինչպես ä:

o նշանը զրվելով a տառի վրա, ցույց է տալիս, որ այդ ձայնավորը պետք է արտասանել շատ փակ, գրեթե o ձայնի նրման. այսպիսի հնչում գտնում ենք անգլիերենի մեջ (ä): Վանա բարբառում և այլն:

< նշանը զրվելով ձայնավորի տակ, ցույց է տալիս ռնգալին հնչում. այսպես a, i, e, o, ā, ä և այլն:

•• զնելով ձայնավորների վրա, տալիս է նրանց նոր երանգ. այսպես ä ունի a և e ձայնավորների միջին աստիճանը (հայերեն նշանակում էմ տ ձևով, այլ տառադարձությունը եա).—ö կազմում է o և e ձայների խառնուրդը (հայերեն եօ), ü ունի u և i ձայների խառնուրդը (հայերեն իւ—յու):

՝ զրվելով ձայնավորի վրա, նշան է բաց արտասանության, մինչդեռ փակ արտասանության. հատկապես è, é և այլն: Այս նշանները այն անհարմարությունն ունեն, որ շփոթվում են շեշ-

տի հետ: Ուստի ումանք (օր. Բրուգմանը) նրանց փոխարեն գործածում են ստորագրվալ ստորակետ (բաց նշան) և միջակետ (փակ նշան). այսպես e և e:

• նշանը զրվելով խուլ բաղաձայնների կողքին, ցույց է տալիս, որ պետք է արտասանել շնչեղ, ինչպես p' = փ, t' = փ, k' = ք. որոնք կարելի է գրել նաև ph, th, kh. Խճողումից խուսափելու համար, c և ç տառերի համար նույն նպատակով զրվում է տակին կետ. ç = ց, ç = չ:

• նշանը և կամ մի փոքր ՚ զրվելով ուրիշ բաղաձայնների կողքին, նշան է քմայացման, ինչպես t'a, t'a այա l'a, l'a այա և այլն:

• զրվելով ըստ հարմարության թրթռուն բաղաձայնի տակը կամ վրան, ցույց է տալիս, որ նույնը պետք է խուլ արտասանել այսպես b, g, d և այլն ըստ գերմանական արտասանության և կամ պոլսահայ բարբառում:

• զրվելով ատամնականների տակ, ցույց է տալիս հետ քաշված արտասանություն, այն է քիմքի մեջտեղում. հատուկ է անգլիերենի և սանսկրիտին, այսպես d, t, n, s և այլն:

Դնում ենք այստեղ գիտական այբուբենի ըստ կարելիության կատարվալ մի ցանկը.

Ձայնավորներ

a ա e, ə (ը), i, o, u (ու).

երկար ā, ē, ā, ī, ō, ū

սուղ ä, ë, e, i, ö, ü.

ā (ա), ö (էօ), ü (իւ-յու)

ā, ö, ü (համապատասխան երկարները):

Բաղաձայններ

b բ, ֆ երկշրթնալին շփական բ, ք խուլ բ (իրբ պ).

c ծ, ճ, ց, չ, ճ:

d դ, ժ կամ ծ անգլիական կամ նոր հունական թրվատ թըրթռուն դ, ժ հետ քաշված դ.

g գ, ց կամ չ դ (ումանք չ).

h հ, իսկ ք ավելի ուժեղ, մոտ իս-ի: նույն h բաղաձայնը զրվելով թրթռուն և խուլ բաղաձայնների կողքին, ցույց է տալիս շնչեղ արտասանություն. այսպես bh, gh, dh, qh, ph, th, kh և այլն:

յ ձ (պարզապես յ=լ գերմանական ձևը դարձել է անգործածական գիտական այբուբենի մեջ):

կ կ, կհ ք (պետք չէ գործածել իբր կ), կ կոկորդալին կ.

լ լ լ կատկալին լ. | ձայնավոր լ.

մ մ, մ̄ ձայնավոր մ.

ն ն, ն կամ ղ կոկորդական ն, ն քմալին ն, ն ձայնավոր ն.

ք պ, քհ կամ ք փ, ք երկշրթնալին շփական խուլ ք.

ւ լ (որ է անդլիական կես վ, մոտ ու ձայնին).

թ կամ թ, փ անդլիական կամ նոր հունական թլվատ խուլ թ.

զ կոկորդական զ, որի ավելի ուժեղն է զ կամ զ⁰.

ր պարզ ր, ՚ ուժեղ ր(ռ), ր ձայնավոր ր.

ս ս, Տ կամ Տ շ (երկրորդ ձևը հետզհետե տեղի է տալիս).

x միշտ խ և ոչ բնավ քս.

z զ, չ ժ, չ ձ.

Այս այբուբենը գործ է ածվում գրի առնելու համար բոլորովին անգիր լեզուները, կամ գրավոր ազգերի զանազան բարբառները (նույնիսկ հայերենի), և կամ վերջապես գրավոր մի ազգի կամ այն բառի ճիշտ հնչումը նշանակելու համար (օրինակ՝ Ֆրանսերեն jour=jour):

Բազմաթիվ նշանների խճողումից խուսափելու համար, այժմ լեզվաբանների մեջ ձգտում կա հնարել բոլորովին նոր տառեր (փոխանակ կետերով զանակելու). այսպես էր մտածում նաև 1928 թվականին Կոպենհագենում գումարված բնդհանուր լեզվաբանական կոնգրեսը¹:

Ասացինք, թե բացի հունարենից, լատիներենից և լատինագիր այբուբեններից, մնացյալ բոլոր լեզուների այբուբենները սկզբունքով դուրս են վտարված գործածությունից՝ լեզվաբանական աշխատությունների մեջ, ըստ որում տառի ձևը ամենևին նշանակություն չունի լեզվաբանության համար, այլ՝ միայն ձայնը: Տարբեր է բանասիրական աշխատությունների մեջ, ուր բառի գրության ձևը մեծ նշանակություն ունի ձեռագրական բնթերցվածների, վրիպակների և այլ տեսակետով: Շատ անգամ գիտնականները որևէ բառ

¹ Վերջերս մի ամերիկացի հնարել էր միջազգային այբուբենի մի նոր սխառեմ, բաղկացած 120 տառից, որից 60 ձայնավոր և 60 բազմաձայն (A. Klugh, The etymologic cipher alphabet, Chicago, 1922): Բայց այս այբուբենը ո՛չ մի առավելություն չունի, որովհետև ձայնավորները նույն լատինական տառերն են, իսկ բազմաձայնները բմահաճ կերպով ձևափոխված նորաձև տառեր. օրինակ, փոխանակ գրելու զ, գրել է հայերեն կ և այլն:

բնիկ այբուբենով գրելուց հետո, նույնը տառադարձում են նաև լատինական այբուբենով, որպեսզի հնչման ճշտության մասին որևէ կասկած չմնա: Բայց այս լատին տառադարձությունը բնագրից ավելի անհրաժեշտ է և իզուր է ծանրաբեռնել մտքերը ավելորդ գծավորություններով:

Այժմ խոսենք լեզվաբանության մեջ շրջանված ազգային այբուբենների տառադարձության մասին: Ինքնին հայտնի է, որ կենդանի լեզուների հնչումը կարելի է միշտ տեղի վրա ստուգել և ըստ այնմ ճշտիվ նշանակել, համաձայն վերոհիշյալ գիտական լատինական այբուբենի: Այսպես, օրինակ, պարսկերենը, թուրքերենը, հայերենը և այլն: Բայց ի՞նչպես վարվել հին լեզուների հետ, որոնց տառերի արժեքը հայտնի չէ մեզ այն կատարյալ ճշտությամբ, ինչ որ նոր լեզուներինն է: Բնագրին հավատարիմ մնալու և նոր թյուրիմացությունների տեղիք չտալու համար, լեզվաբանները որոշել են հին ազգային այբուբենների չուրաքանչյուր տառին մի տառ հատկացնել, վերևում նշանակված գիտական այբուբենի ոգու համաձայն և այդ ձևով էլ գործ են ածում: Դժբախտաբար այս տառադարձությունները կատարելապես միօրինակ չեն, որովհետև կազմվել են տարբեր ժամանակներում և տարբեր դրությամբ, իսկ այժմ փոխել դրանք և վերածել գիտական այբուբենին ունի այն անպատեհությունը, որ նորից պետք է տպագրել այն բազմաթիվ աշխատությունները, որոնք հրատարակվել են մինչև այժմ: Այսպես, հայերենի և սլավերենի համար շ նշանակում է ծ, իսկ շ=ճ ընդհակառակը, սանսկրիտ շ նշանակում է ճ և ոչ ծ.—սեմական լեզուների մեջ շ նշանակում է ց, իսկ սանսկրիտի մեջ շ.—y տառը ամեն տեղ էլ յ ձայնն ունի (ինչպես այո՝ բառի մեջ), բայց սլավերենի մեջ գրեթե ը ձայնն ունի և լիտվաներենի մեջ երկար ի է: Նույնիսկ միևնույն լեզվի համար գոյություն ունեն տարբեր տառադարձություններ և կան մարդիկ, որ այս կամ այն պատճառով չեն ուզում հետևել ճշտիվ վերև մեջ բերված գիտական այբուբենին, որ ամենից հարմարն ու տարածվածն է:

Զանազան լեզուների համար ընդունված տառադարձություններից կարևորները հետևյալներն են.

Ս ա ն ս կ ր ի տ

կարճ ձայնավորներ—a, i, u, ր կամ ր, լ.

երկար ձայնավորներ—ā, ī, ū, ր̄, կամ ր̄, ē, o (իմա ē ō).

երկբարբառներ —ai, au (կարդա՛ ai, āu).

կիսաձայններ —y, r, l, v (վերջինը կիսաշրթնալին)

բաղաձայններ

- շրթնային —p, ph, b, bh, m.
- ատամնական —t, th, d, dh, n.
- զանգային —t, th, d, dh, n.
- կոկորդական —k, kh, k, gh, (n) n.
- քմական —c, ch, j, jh, ñ (իմա՝ չ չ յ յի).
- շչական —s, ş, ç, ś (բացի առաջինից բոլորն էլ ś).
- հագագային —h (որ է թրթռուն շունչ), և (խուլ ինչպես հայերեն հ).
- ոնգային —m (հնչված նախորդ ձայնավորի հետ):

Ձ ա ն դ կ ե ր ե ն

- կարն ձայնավորներ —a, i, u, e, o, ē, ō (ալս երկուսը պետք չէ հասկանալ երկար), ə, ʔ.
 - երկար ձայնավորներ —a, i, u, ə.
 - երկարբառ —ā (իմա՝ āo).
 - բաղաձայններ՝
 - շրթնային —p, b, f, w, m.
 - ատամնական —t, d, θ, ð, n t.
 - կոկորդական —k, g, x, ɣ, w.
 - քմական —č, j
 - շչական (chuint.) —š, ž.
 - սուլողական (siff.) —s, z.
 - հագագային —h.
 - կիսաձայն —y, r, v.
 - ոնգային —n (հետքմային), ñ (նախաքմային):
- Նույնն է և հին պարսկերենը, բայց այստեղ շատ անգամ ձայնավորների երկարությունը չէ նշանակված, պակասում են w, ð, ɣ և այլն: Ավելանում է l, ձայնավորներից կան միայն a, i, u.

Սլավական

- Սլավական այբուբենը ծանոթ է մեզ ուսուցիչներից, որ և գործ ենք անում մենք մեր աշխատություններից: Եվրոպացիք ունեն նաև նրա տառադարձությունը հետևյալ ձևով.
- կոշտ ձայնավորներ —a, o, u, y (հետքմային i), ɔ կամ ʔ (այն է՝ ոնգական o).
 - փափուկ ձայնավորներ —ě (շատ բաց e), e, i, ĭ (ը), e (ոնգական e).

բաղաձայններ՝

- շրթնային —p, b, m.
- ատամնական —t, d, n.
- կոկորդական —k, g.
- ծեքական —c, dz.
- քմական —č.
- սուլական —s, z.
- շչական —š, ž.
- հագագային —x, v.
- կիսաձայն —r, v, l (որ սրտասանվում է նախորդ բաղաձայնի հետ):

Կիավաներեն

Այս լեզվի մեջ գործ է անվում լատինական այբուբենը, որից տարբեր ձևերը հետևյալներն են (փակագծից դուրս գրվածները լիտվանացիների հին տառադարձությամբ են, իսկ նրանց մոտ փակագծի մեջ գրվածները նոր գրական լեզվի ընդունված ձևերն են, որոնք միևնույն ժամանակ տալիս են նախորդների բացատրությունը գիտական այբուբենով).

- ձայնավորներ —ē (ē), o (իմա՝ ō), y (իմա՝ ĭ) —բոլորն էլ երկար.

- ոնգային —ę, ʔ.
- երկարբառներ —ū (uo), ē (ie) (ճիշտ ինչպես մեր բարբառների մեջ u և և).

- բաղաձայններ —ż (ʃ), sz (š), cz (č). կամ ʔ
- Ձայնավորները հաճախ կրում են շեշտեր. բուլթ շեշտը (') նշան է կարճ և շեշտյալ ձայնավորի, սուր շեշտը (˘) նշան է երկար և շեշտյալ ձայնավորի, որի սկիզբը բարձր է և հետո իջնում է. պարուկը (˘) նշան է, թե ձայնավորն սկզբում և վերջում ունի ուժեղ շեշտ: Նույն նշանները գրվում են նաև երկարբառների վրա, ինչպես áu aū, án, an, ĭr ĭr և այլն:

Գերմանական լեզուներ

- Գերմանականի համար կարևոր տարբերություններն են.
- ձայնավորներ —e (ē), o (ō), ei (ī).
 - երկարբառներ —ai, au (երբեմն արժեն կարճ և բաց, e o).
 - բաղաձայններ —p (θ), w (v), j (y), q (qw), z (c):
- Իսլանդերենի մեջ շեշտը նշանակում է ձայնավորների երկար-

բութունը և ո՛չ թե շեշտ. այսպես á=ā. բաղաձայններից b (շրթնային spirant թրթռուն է), d (ծ) և) 3 (չ).-հրգ. z=ց:

Իռլանդերեն

Գործ է ածում լատինական այբուբենը. ձայնավորների արժեքը դժվար է որոշել, որովհետև բառի մեջ իրենց ունեցած դիրքի համեմատ տարբեր են հնչվում: Բաղաձայններից կարևոր են th (=θ) ch (=x), b, d, q երկու ձայնավորների միջև հնչվում են b, ծ, չ, իսկ նույն դիրքում գտնված խուլ բաղաձայնը հնչվում է թրթռուն, ինչպես cretim իմա՝ Kredim:

Լատինական նյութ

Օսկյան և ումբրյան լեզուներով արձանագրությունները գրված են կա՛մ լատին այբուբենով և կամ տեղական զանազան այբուբեններով, որոնք առաջանում են հունարենից: Լեզվաբանները սովորություն ունեն առաջինները տառադարձել շեղատառ լատին այբուբենով, իսկ երկրորդները բացատրել լատին այբուբենով, որոնց մեջ i և ù նշանակում են e և o:

Սեմական այբուբեններ

Բոլոր սեմական այբուբենները գրեթե նույն շարքն ունեն, դրանց մեջ ամենահարուստը լինելով արաբերենը, բավական ենք համարում զննել այստեղ նրա լատինական տառադարձությունը՝ բնիկ այբուբենի շարքով:

ا	ب	ت	ث	ج	ح	خ	د	ذ	ر	ز
a	b	t		j	h	x	d	z	r	z
ذ	س	ش	ص	ض	ظ	ب	ع	غ	ف	ق
ž	s	š	s		t		z		f	q
ك	ل	م	ن	ه	و	ي				
k	l	m	n	h	v	y				

Ձայնավորները, եթե միայն ձայնանիշով են, զանազանվում են a, i, u, իսկ եթե գրված են տառերով, այսինքն երկար են, նրանակվում են ā, ī, ū: Այսպես է նաև պարսկերենի, ինչպես նաև թուրքերենի մեջ, ուր սակայն երկար ձայնավորների նշանակումը ձևական է միայն, քանի որ թուրքերենը գուրկ է երկար ձայնավորներից:

Ավելացնենք ի վերջո, որ այժմ նոր լեզվաբանների մեջ

ձգտում կա նաև հունարեն այբուբենը լատիներեն տառադարձելու, հետևյալ ձևով.

Հունարեն	α	β	γ	δ	ε	ζ	θ	ι	κ	λ	μ	ν	ξ	ο	π	ρ	σ
Լատիներեն	a	b	g	d	e	z	th	i	k	l	m	n	ks	o	p	r	s
Հունարեն	τ	υ	φ	χ	ψ	ω											
Լատիներեն	t	u	ph	ch	ps	ō											

Մինչև այժմ գիտամաթ շխտեցինք հայերենի մասին, որովհետև հայերենի գրությունը պահում ենք անփոփոխ, հակառակ եվրոպացի լեզվաբանների, որոնք հայերենը դնում են եվրոպական տառադարձությանը:

Տառերի հին հնչյունների մասին կիսոսենք տասներորդ գլխում: Անցնենք հայերեն գիտական այբուբենին:

Որովհետև հայերեն տառերը տեղից տեղ և բարբառից բարբառ տարբեր հնչում ունեն, իսկ մեզ հարկավոր է գիտական աշխատությանց համար միօրինակ և ճշտված գրություն, կարիք ենք զգում գիտական այբուբենի, հատկապես բարբառային գրվածքների համար: Այս կարիքը բնականաբար պիտի լրացնեն գիտական լատինական այբուբենը: Բայց մեր մեջ դեռ այբուբենը տարածված կամ ընդհանուր ընդունելություն գտած չէ: Ուստի լավ կլիներ, եթե ընդհանուր գործածության գրվեր միօրինակ հայերեն գիտական մի այբուբեն, որի մեջ տառերը ունենային միշտ իրենց ճիշտ հնչումը, անկախ որե՛ք բարբառից, անկախ նույնիսկ հին ու նոր հայերեն այբուբենից:

Այսպիսի մի այբուբեն գործածել եմ ես իմ բարբառագիտական աշխատությունների մեջ, սկսած 1898 թվականից, որի մանրամասն բացատրություն էլ տվել եմ իմ «Բարբառագիտություն» մեջ (Նոր-Նախիջևան, 1911), էջ 6—11:

Հայերեն գիտական այբուբենի հիմնական սկզբունքներն են. 1. Ամեն մի տառ պիտի ունենա միշտ և ամեն տեղ միևնույն հնչումը. չհնչված տառ չպիտի գրվի. 2. Մի հնչյունը պիտի նշանակվի միայն մի տառով:

Այս սկզբունքների համեմատ, հայերեն այբուբենի մեջ մտնում են հետևյալ փոփոխությունները.

Է տառը հնչվում է e, իսկ ե ունի երկրաբառային ie հնչումը (և ո՛չ երբեք e կամ ye):

Օ տառը հնչվում է o, իսկ ո ունի երկրաբառային ոօ հնչումը (և ո՛չ երբեք o կամ vo):

Բ, գ, դ, ձ, ջ բաղաձայնները թրթռուն են, ճիշտ ինչպես b,

g, d և այլն. պ, կ, տ, ծ, և խուլ են, փ, բ, ք, ց, չ ունեն իրենց սովորական հնչումը. բ', գ', դ', ձ', ջ' ներկայացնում են թրթր-թրուուն շնչավորները (իրբ bh, gh և այլն):

Բաղաձայնի մոտ գրված փոքր ' տառը քմայնացման հա-մար է. ինչպես գ', բ', կ', ճ', լ' :

յ տառը ներկայացնում է թրթրուուն հագագը, որ հատուկ է Կարնո, Մշո բարբառներին և այլն:

դ' ներկայացնում է խիստ կոկորդական դ, իրբ գ:

ւ կիսաձայն w հնչումն ունի:

յ միշտ արժե կիսաձայն y և ոչ բնավ հ:

Հայ այբուբենին անձանոթ ձայնավորներն են ա (ä), եօ (ö)

իւ (ü):

Ավելորդ չենք համարում հիշել նաև հայերենի կվրոպական տառադարձությունը, որի զանազան ձևերի մեջ ամենից ավելի ընդունվածն է Հլուբլմանի տառադարձությունը, որ հետևյալն է, համեմատությունը հայ այբուբենի շարակարգության.

ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ	ժ
a	b	g	d	e	z	ē	ə	t'	ž
ի	լ	խ	ծ	կ	հ	ձ	ղ	ճ	մ
i	l	x	c	k	h	j	l	č	m
ր	ւ	շ	ո	չ	պ	ջ	ս	վ	վ
y	n	š	o	č	p	j	f	s	v
տ	ր	ց	ւ	փ	ք	օ	ֆ		
t	r	č	w	p'	k'	o	f		

Արդի տառադարձությունն էլ երկու տեսակ է՝ ըստ գրության և ըստ հնչման: Եվրոպայի բոլոր ազգերը, որոնք գործ են անում լատինական այբուբենը, հետևում են ըստ գրության ձևի, այսինքն պահում են այն լեզվի գրության ձևը, որից փոխ են առնում: Բայց լատին այբուբենը լեզվից լեզու տարբեր հնչում ունի. տառադարձության մեջ փոխառու լեզուները ի նկատի չեն ունենում այդ և փոխառյալ բառը հնչում են իրենց լեզվի արտասանության օրենքներով: Այսպիսով միևնույն բառը (հատկապես անունը) զանազան լեզուների մեջ ունենում է տարբեր հնչում, թեև գրությունը նույն է: Օրինակ, Գերմանիայի մայրաքաղաքը գերմաներեն գրվում է Berlin, որ կարդացվում է Բեռլին: Բոլոր կվրոպական ազգերը պահում են այս ձևը. բայց ահա ֆրանսերենում, որ in ունի էն հնչումը, այս նույն Berlin բառը կարդացվում է Բեռլէն, հակառակ գերմաներենի հնչման: Ավելի ծանր է, օրինակ, Suczava քաղաքի

անունը: Այս բառը ըստ հունգարերենի կարդացվում է Սուչավա, ինչպես կոչվում է այդ քաղաքը: Բայց բոլոր եվրոպացիք էլ, պահելով գրության ձևը, կարդում են Սյուսգավա կամ Սուսգավա, ոչ մեկը չի հնչում Սուչավա: Singer կարի մեքենայի անունը շատ լեզուներում պահում է իր ինքնուրույնությունը (ուսերենում Зингер), իսկ ֆրանսերենում դառնում է Սենժե!

Այն լեզուները, որոնք չեն դորձածում լատինական այբուբենը և ունեն սեփական այբուբեն, դերժ են այս ձախորդ կացությունից: Բայց այստեղ էլ սկսում է նոր դժվարություն: Գրել և հնչել ինչպես գրվում է, թե գրել և հնչել ինչպես հնչվում է: Առաջինը կոչում ենք ըստ գրության տառադարձություն, երկրորդ՝ ըստ հնչման տառադարձություն: Երկու գրությունն էլ ընդունված է լեզուների մեջ, առանց նախապատվությունը մեկին կամ մյուսին տալու: Օրինակի համար, Ֆրանսիայի մայրաքաղաքի անունը գրվում է Paris և ըստ ֆրանսերենի հնչվում է Պարի. բայց հայերենում ըստ գրության տառադարձում և հնչում ենք Պարիզ կամ Փարիզ (երկրորդը արևմտահայ տառադարձությամբ, առաջինը արևելահայ կամ հին տառադարձությամբ): Իսկ Chateaubriand անունը ըստ հնչման տառադարձում և հնչում ենք Շաթուպրիան (արևմտահայ ձև) կամ Շատոբրիան (արևելահայ ձև): Ի՞նչ անճոռնի և անընթեռնելի բան պիտի դուրս գար, եթե պահենք երկբարբառների գրության ձևը, չհաշվելով վերջին բաղաձայնը d, որ գրվում, բայց չի հնչվում ֆրանսերենում: Այսպես է նաև ֆրանսիացի մի նշանավոր գրողի անունը՝ Racine, որ ըստ գրության դարձել է մեր մեջ Հուսկին. հմմտ. «Գարագաշ, «Հուսկինեայ կրգը վասն կրօնից», Վիէննա, 1842»:

Երկու գրությանց առավել կամ պակաս կողմերը հաշվելով, գտնում ենք, որ հնչական տառադարձությունը առհասարակ ավելի լավ է բան ըստ գրության ձևը: Բայց հնչական տառադարձությունն էլ ներկայացնում է հետևյալ երկու անպատեհությունները.

ա) Միևնույն բառը կամ անունը լեզվից լեզու կամ ազգից ազգ տարբեր հնչումներ ունի. օրինակ Albert անունը գերմաներեն հնչվում է Ալբերտ, անգլերեն՝ Ալբրտ, ֆրանսերեն՝ Ալբեռ: Սրանցից ո՞րը պետք է վերցնել: Եթե յուրաքանչյուր անուն յուրաքանչյուր ազգի հնչման համեմատ վերցնենք, անունը իր ինքնությունը կկորցնի մեր աչքում: Այնուամենայնիվ այնպիսի անուններ, որոնք իրարից շատ տարբեր հնչում են ստացել լեզվից լեզու, տարօրինակ պիտի լինեն, եթե միևնույն ձևով պահենք: Օրինակ, կարելի չէ

Ֆրանսերեն George (ժորժ), անգլերեն George (Ջորջ), գերմաներեն Georg (Գեորգ), ռուսերեն Георгий (Գեորգի) և այլն փոխանակել իրար հետ և անգլերեն Ջորջը ֆրանսերենի ձևով ժորժ կարգալ, կամ հակառակը և կամ ռուսերեն Գեորգի ասելու տեղ անգլիական ձևով Ջորջ ասել: Ավելի վատ է գերմաներեն Johann (Իոհան), ֆրանսերեն Jean (ժան), անգլերեն John (Ջոն), ռուսերեն Иван (Իվան) և այլն անունը, որ անտեղի և ծիծաղելի պիտի լինի, ինչպես գերմաներեն Georg (Գեորգ), այնուամենայնիվ ծիծաղելի կլինի, եթե ասեինք «Հովհաննես Հակոբոս Ռուսո» (փոխանակ ժան ժակ Ռուսսոյի), կամ «Լեոն (Ղևոնդ) Տոլստոյ» (փոխանակ Լե Տոլստոյի):

բ) Հաճախ մենք շփոթենք, թե ինչպես է հնչվում օտար բառը, կամ մոտավորապես միայն գիտենք, որովհետև շատ լեզուներ կան, որոնք այլ բան են գրում և այլ բան են հնչում: Այսպես, օրինակ, Ֆելզիայի մայրաքաղաքը ֆրանսերեն գրությունը գրվում է Bruxelles, որ ըստ օրինի պիտի հնչվեր Բրյուսել, բայց հնչվում է Բրյուսել: Գրա համար էլ արևմտահայերը գրում են Պրիսել, իսկ արևելահայերը գրում են Բրյուսել (խրատվելով ռուսերեն Брюссель ձևից): Ֆրանսիացի մի ճարտարապետ, Charles Texier, 1836 թվականին այցելել է Կիլիկիա և շատ բան է գրել հայ երկրի աշխարհագրության և ճարտարապետության մասին: Նրա ազգանունը պետք է կարդալ Տեսիե (Տէսիէ) և այդպես էլ ունի Ալիշան, «Սիստան», 7բ, 561բ, 580բ (արևմտահայ տառադարձությամբ գրած Գէսիէ). բայց ուրիշներ գրում են Տէսիէ կամ Թեսիէ (վերջին ձևով ունի մեր բազմահմուտ ճարտարապետ Թորամանյանը իր «Հայկական ճարտարապետություն» աշխատության մեջ (Նրևան, 1942):

Այստեղ ուզում ենք բերել սխալ գրչության և տառադարձության մի շարք այլ օրինակներ ևս:

Միջին հայերենի շրջանում, տառադարձության փոփոխությամբ, գրաբարի ուղիղ գրչությունն էլ փոխվեց և նոր տառադարձությամբ առաջ եկած ձևերը գրականի բարձրացան: Նույնիսկ արևելյան գրականում սովորական են դարձել տառադարձությամբ ձևեր. օրինակ՝

Պարոն, որ ֆրանսերեն baron ձևից անցնելով հայերենի պիտի գրվեր բարոն, բայց ըստ արևմտյանի գրվում է միշտ պարոն:

Ընտիր, ընտրել, որի ճիշտ գրչությունն է ընդիր, ընդրել, ինչ-

պես գրված է հին ձևադրերում և ինչպես ցույց է տալիս բառի ստուգաբանությունը, որովհետև կազմված է ընդ նախդիրով՝ դիր, դենլ արմատից: Բարբառներում էլ մինչև այժմ հնչվում է ընդրել կամ ընդրել:

Թանկ, որից բանկագին, երկան էլ գրված են թե՛ նկ և թե՛ նգ: Ճիշտ ձևն է բանգ, որովհետև ծագում է պարսկերեն tang հոմանիշից: Գրչությունը ստատանվում է, բայց բանկաբան բառը միշտ էլ գրվում է գ-ով, նույնիսկ արևմտյան գրականում, որ և հնչվում է t'ankaran:

Թափցնել բառն էլ երկրնարանքի մեջ է. առաջ այդ բառի ստուգաբանությունը ծանոթ չէր և հետևաբար գրությունն էլ անորոշ էր: Բայց երբ Մեյիի ստուգաբանությամբ բառը կապվեց լատիներեն taceo «լուել» բառի հետ, հայտնի դարձավ, որ պետք է գրել. քափչիլ, քափցնել, քափուստ, քափսոց, քափուն, բուլոն էլ ք-ով:

Սանգուլը և սանգուլիք վիճելի գրչությունն ունեին, բայց երբ բառը կապվեց հունարեն σκα'νδάλωս = եվրոպական scandale բառի հետ, հայտնի եղավ, որ պետք է գրել սանգուլը (սանգ արմատից, ուղ մասնիկով):

Բախտ և բաղտ բառը իր ամանցներով անստույգ գրչություն ունեն, մինչև անգամ ավելի ճիշտ էին համարում բաղղ ձևը: Բայց երբ հաստատվեց, որ սա պարսկերեն baxt բառից է փոխառյալ, այլևս տարակույս չմնաց, որ ճիշտ ձևն է բախտ, ինչպես ընդունված է այժմ ամենուրեք:

Բացօրեայ (բացօրյա), թեև գրաբարից հայտնի էր, որ ծագում է օր, օրևան արմատից, ոմանք (կեղծ գիտուններ) սխալ ստուգաբանությամբ, կարծելով, թե արմատն է օղ (իբրև թե բացօրեայ (բացօթյա) նշանակում էր բաց օղում), սկսեցին գրել բացօրեայ (բացօրյա): Այս սխալ գրչությունը գեո շատերը շարունակում են:

Պատշգամբ, հնում գրված է նաև պատշկամ, պատշկամբ: Այս երկու գրչություններից ուղիղն է միայն պատշկամբ, որովհետև ծագում է իրաներեն paiti-škamba «սյունաշարք» բառից: Երկրորդ՝ ա և շ բաղաձայններից հետո բնականաբար պիտի գրվեր կ՞: Բայց արևմտյան տառադարձությամբ կ-ի փոխարեն գրվելով գ, այս ձևն էլ քաղաքացիության իրավունք ստացավ: Բառարանում, ըստ այբբենական կարգի, առաջին տեղը տրվեց պատշգամ ձևին, իսկ երկրորդ տեղը (հաճախ մանրատառ) պատշկամ ձևին: Այսպիսով առաջնություն ստացավ երկրորդ, սխալ ձևը: Արևելահայերը, թեև գրում են պատշգամբ, բայց միշտ էլ հնչում են պատշկամբ:

մով): Արևելահայերը մերթ հետևելով ուսերենին, գրում են Յապոնիա և մերթ հետևելով արևմտահայերենին գրում են Ճապոնիա, որի մեջ և տառի հնչումը սխալ է, որովհետև արևմտահայ ձևով է:

Սրա նման է Ջավա կղզու անունը: Այս երկրի բնակիչները իրենց երկիրը կոչում են ճիշտ Ջավա, Ֆրանսիացիք գրում են Java և կարգում են ժավա, անգլիացիք գրում են և կարգում Java=Ջավա, որ շատ ճիշտ է, գերմանացիք գրում են նույն ձևով և կարգում Յավա, որ սխալ է, և սրանից էլ ուսերեն գրվում է Ява: —Արևմտահայերը գրելով ձավա, պահում են ճիշտ հնչումը իրենց տառադարձության համաձայն, իսկ արևելահայերը մերթ հետևելով արևմտահայերին գրում են ձավա, մերթ հետևելով ուսերենին, գրում են Յավա, երկուսն էլ սխալ են:

Սխալ է նաև Մեքսիկա երկրանունը, որ հիմնվում է Ֆրանսերեն Mexique ձևի վրա, որ կարդացվում է Մեքսիք: Բայց այս երկրանունը տեղում հնչվում է Մեխիկա, որ երբեմն երևում է գրականության մեջ, իսկ մեծ մասամբ տարածված է Մեքսիկա սխալ ձևը:

Զուգաշերեն լեզուն օ և ֆ ձայները չունի լեզվի մեջ, ուստի օտար բառերի մեջ միայն պահում են այդ ձայները և տառերը. ինչպես fosfar, tif. բնիկ և կամ բնիկ դարձած բառերի մեջ օ-ի փոխարեն գտնում ենք a կամ ä.-այս լեզուն ունի նաև այն հատկությունը, որ բառակցում և վերջում սիրում է պահել խուլ ձայներ և մինչև անգամ օտար լեզուների թրթռուն ձայները վերածում է խուլի: Վերջերս ընդունելով ուսական այբուբենը իրենց լեզվի համար, լավ են արել, որ ըստ հնչման գրում են пирамит (pyramide), Кермани (Գերմանիա), крамматѣк (քերականություն), Пурис (Բորիս), пушмак (башмак), шилет (ժիլետ), журнал (ժուռնալ), cabät (կարգա՝ savät և իմա՝ завод), арап (արաբ) և այլն:

Մյուս կողմից, զուգաշերեն լեզվի մեջ k, x, p, t, š, s խուլ բաղաձայնները, գտնվելով երկու ձայնավորի կամ թրթռուն բաղաձայնի և ձայնավորի միջև, հնչվում են g, γ, b, d, ž, z, իսկ é հնչվում է dz (=հայերեն ձ): Զարմանալի է, որ ուսական այբուբենը ընդունողները, փոխանակ նրանից նաև г, з, ж, д և այլն տառերը վերցնելու, հետևելով լեզվաբանական բարդ կանոնին, գրել են

каранташ և կարգում են karandas,
лаша (ձի) " " " laža

вакун " " " wagon,
Лонтан " " " London և այլն:

Բայց այս գրություն համաձայն, երկու ձայնավորի և կամ մի թրթռուն բաղաձայնի և մի ձայնավորի միջև գտնվող խուլ բաղաձայններն էլ թրթռուն պիտի դառնալին (t>d և այլն), ուստի օտար բառերի միջև խուլ ձայները պահպանելու նպատակով, նոր կանոն էլ են հնարել, որ օտար բառերի մեջ նույն կարգի խուլ բաղաձայնները գրեն երկու անգամ. այսպես՝ лампа «ճրագ» меттәр «մետր», карттин (ուսերեն картина «պատկեր»), театтәр «թատրոն», пролеттарн «պրոլետար» և այլն (Горский, 9—13):

Տառադարձության մի այլ ձևն է, երբ մի լեզու հրատարակելով իր հին այբուբենից, ընդունում է մի ուրիշ այբուբեն: Այս երևույթը տեղի ունեցավ հատկապես այն ժողովուրդների մեջ, որոնք իրենց կրոնը փոխելով մահմեդականությունն ընդունեցին: Այսպես եզան պարսիկները, որոնք գրադաշտական կրոնը թողնելու հետ պահլավերեն այբուբենն էլ թողեցին, և հնդիկ զանազան ժողովուրդներ, որոնք հնդկական կրոնը թողնելով, նաև սանսկրիտ այբուբենն էլ թողեցին: Բոլորն էլ վերջին արաբական այբուբենը, որ նոր տառերով հարստացրին: Այս բոլորի մեջ առաջինը պարսիկներն են, որոնք ամբողջությամբ վերջին արաբական այբուբենը, ավելացնելով նրա վրա 4 տառ՝ پ (p), چ (č), ژ (ž), گ (g): Արաբական այբուբենը կետերով հարուստ էր արդեն. նման ձևի տառերը կետերով էին տարբերվում, այսպես՝ ب (b), ت (t), ث (s) և այսպես ուրիշներ (մի կետ, երկու կետ կամ երեք կետ. չորս կետով տառ չկա): Երեք կետով տառեր երկու հատ էին՝ ث (ð) և ش (š). այս վերջինը՝ զանազանելու համար س s տառից, թեև երկու կետանի նման տառ չկա: Պարսիկները իրենց ավելացրած տառերի վրա դրեցին երեք կետ:

Աֆղանները և բելուջիները ավելի հարստացրին նույն այբուբենը՝ ավելացնելով 4 կետանի տառեր:

Այս այբուբենների մեջ ամենից ավելի հարուստն է հնդկական սինդհի այբուբենը:

Հնից նորին անցնելու ժամանակ տառերի արժեքը փոխելու ամենալավ օրինակը տալիս է հունական այբուբենը, որ ծանոթ է մեզ մեր թվարկությունից առաջ VII դարից: Այս շուրջ 2 600 տարվա մեջ 24 տառերից 9 հատը ավելի կամ պակաս շափով փոխած է իր հնչումը, այնպես որ, երբ եվրոպացի գիտնականները կարգում են հունարեն մի հին գրվածք հին հնչումով, արդի հույներ շի հասկանում և ծաղրով է վերաբերվում:

Այս 9 տառերից 2-ը ձայնավոր են. այն է ղ հնչումով օ, նոր հնչումով i — u հնչումով ü, նոր հնչումով նույնպես i:

Բաղաձայններից ունենք՝

β հին հնչումով	b, նորով	v.
γ " "	g " "	γ (g).
δ " "	d " "	δ (d).
ζ " "	a " "	z.
θ " "	p, th " "	θ
φ " "	ph " "	f
χ " "	kh " "	x

Հին հունարենը ունեցել է Ի նշանը, որ կարդացվում էր h, այժմ նշանակվում է ' նշանով և բնավ չի հնչվում:

Հին հունարենը ուներ նաև երկար և կարճ ձայնավորներ, որոնք այժմ կորցրել են այդ տարբերությունը. այսպես՝

α հնչվում էր հնում,	a, ā, այժմ	a.
ε " " "	e " "	e.
η " " "	ē " "	i.
ι " " "	i, ī " "	i.
ο " " "	o " "	o.
υ " " "	ū, ū " "	i.
ω " " "	ō " "	o

Կալին նաև զանազան երկարաբառներ, որոնք այժմ դարձել են կամ պարզ ձայնավոր, կամ ձայնավոր + բաղաձայն, ինչպես αί > e, οί, ει > i, αυ > av և այլն:

Գիր և գրականություն ունեցող լեզուների մեջ սովորական է այն երևույթը, որ ժամանակի ընթացքում լեզվի հնչյունները փոխվում են, և տառն էլ, որ անմոռունը ներկայացուցիչն է բառերի, հետևելով նրանց, ստանում է նոր հնչում: Նոր ժամանակի ընթացքով, անտեղյակ անցյալին, կարգում է բառերն իր նոր հնչման համաձայն, և կարծում է, թե այդ նոր հնչումը նաև հին ժամանակի ներքին են, որ կարող են այդ տառերի և բառերի հին հնչումը երևան հանել նորից և հինը կարդալ հնի ձևով: Այսպես են եղել ի միջի այլոց հունարենը, լատիներենը, ինչպես և հայերենը:

Այս երևույթի համար մի լավ օրինակ է տալիս եթովպերենը: Եթովպական այբուբենն ունի ፩ տեսակ h, այն է h, h և x,

որոնք համապատասխանում են արարական օ չ և չ ձայններին: Ավելի ուշ h և x ստացան h հնչումը, բայց տառերը մնացին: Նմանապես տառ կար š, որ հետո դարձավ s, բայց տառը մնում է: Կար նաև ʿ (չ) ձայնը, որ ապա դարձավ a, բայց տառը մնում է, ինչպես և ʿ ʿ, որ հետո եղավ ʿ š (ցաղեք), բայց տառը նույնպես մնում է (Dillmann, p XIII):

Առանձին կարևորություն ունի ավելորդ վերջնաձայնը, որն ընդհանրապես բաղաձայն է լինում, բայց կարող է լինել նաև ձայնավոր (ինչպես ֆրանսերեն e): Ֆրանսերենում բառավերջում p, s, t, d, x նույնիսկ ամբողջ մի վանկ (ինչպես ent), ռուսերենում ь և ы բառավերջում չեն կարդացվում, այսպես և հայերեն j տառը ա և ո ձայնավորներից հետո (հին ուղղագրությունը):

Գիտությունը հաստատում է, որ այս ավելորդ համարված տառերը սկզբում կարդացվում էին և հետո միայն բառերի հնչումը փոխվելով, վերջնաձայնները ավելորդ դարձան: Այսպես ֆրանսերեն corps հնչվում էր առաջ այնպես, ինչպես գրված է (կորպս) ինչպես ցույց է տալիս լատիներեն corpus "մարմին": Այս բառի վերջին ձայնավորը կրճատվելով, բառը դարձավ նախ corps, որ կարդացվում էր կորպս: Ավելի հետո ընկավ նաև վերջնաձայն s-ը, բառը կարդացվեց կորպ, բայց գրվեց դարձյալ corps: Էլ ավելի հետո վերջնաձայն p ևս ընկավ և բառը կարդացվեց կոր, բայց և գրվեց հին ձևով՝ corps: Այսօր ֆրանսերենն այս երրորդ վիճակումն է: Եթե պատահի, որ մի օր այս բառի r վերջնաձայնն էլ կտրվի և բառը հնչվի կո, դարձյալ կարող է գրվել corps!

Ռուսերենի ь-ը, որ գրվում էր բառերի վերջում բաղաձայնից հետո, նախապես հնչվում էր u, հետո դարձավ ə, ավելի հետո այս ə և ո շնչվեց և նշան դարձավ այն բանի, թե բաղաձայնը կոշտ է, այսինքն՝ փափուկ հնչում չունի: Այս վիճակը ներկայացնում է ռուսերենը նախքան հեղափոխությունը: Նոր ուղղագրությունը եկավ այդ ավելորդ տառը շնչելու, որովհետև ь տառի գոյությունը բավական էր հիշեցնելու տառի փափկությունը, իսկ չգոյությունը հիշեցնում էր տառի կոշտ լինելը:

Սրանց նման է նաև հայերեն j ձայնը, որ անշուշտ նախապես հնչվում էր (y): Միևրոպը, հնարելով հայերեն տառերը, ամենին կարիք չունեի ավելորդ տառեր ստեղծելու, և արդեն հարուստ հայ այբուբենը ավելորդ տառերով ժանրաբեռնելու: Այսպես հսկայ, ազգոյ, զշտոյ հնչվում էին hskay, azdoy, dšxoy

և այլն: Իսկ եթե կաթսայ, աղայ, քահանայ, սառանայ, շուկայ, ծնծղայ, շղթայ և այլն բառերը, որոնք ասորերենից են փոխառ-
յալ, ասորերենում գուրկ են բառավերջի յ ձայնից, այդ ցույց է
տալիս, որ հայերը անընդունակ էին բառավերջում սոսկ ա և ո
հնչելու և միշտ հնչում էին ալ, ոյ: Սրա ապացույցն է Գ լծոր-
գության ներկայի եզակի Գ գեմքը՝ աղայ, որ հնիս. alati ձևից
առաջացած լինելով, ի>լ ձայնափոխությամբ դարձել էր նախ
alay, որ հետո Կ-ի անկումով դարձավ ala, հետո էլ ալա: Այս
բոլորն ասացինք ցույց տալու համար, թե լեզուները բառավեր-
ջում ավելորդ տառ չեն ունեցել նախապես:

Գ Լ Ո Ի Խ Դ

Ո Ի Ղ Ղ Ա Գ Ր Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Գիտական այբուբենը հորինելուց հետո, հարց է առաջանում
նույնը նաև կյանքում կիրառելու մասին:

Սրա վրա խոսելուց առաջ, տեսնենք նախ, թե ի՛նչ է ուղղա-
գրությունը և թե ի՛նչ հարցեր կան նրա շուրջը:

Ուղղագրությունը լեզվի հնչական վիճակը որոշ կանոններով
թղթի վրա ներկայացնելու արվեստն է: Ըստ որում լեզուն ավելի
հին է, քան գրությունը: Հետևաբար ուղղագրությունը լեզվի մի
որևէ շրջանի պատկերը միայն կարող է լինել, այսինքն՝ այն շրջա-
նի, երբ գրի է առնված: Ամեն լեզվի մեջ էլ, երբ առաջին անգամ է
մտնում գիրը, անշուշտ գրվում է բացարձակապես այնպես, ինչ-
պես հնչվում է: Երբ քրդերը հնարեցին իրենց լեզվի համար նոր
տառեր և ստեղծեցին գրականություն, բնականաբար շգործածեցին
այնպիսի տառեր, որոնք մի տեղ այս, մի տեղ այն հնչումն ունե-
նային և մի ուրիշ տեղ էլ անձայն մնային, զուր տեղը գրվեին:
Ուրեմն առաջին գրվածքները լինում են հնչական ուղղագրությամբ,
այսինքն՝ համաձայն այն սկզբունքների, որոնց վրա հիմնված է
գիտական այբուբենը:

Ժամանակի ընթացքում լեզուն բարեշրջության օրենքի համա-
ձայն կրում է զանազան փոփոխություններ. ձայները կամաց-կա-
մաց փոխվում են. բայց որովհետև գիրքը նյութական անշունչ
մարմին է, մնում է այնպես, ինչպես կա, և ընթերցողները նույն
հին գրվածքին դարձյալ տալիս են այն արժեքը, որ ունի նոր լե-
զուն: Այստեղ սկսում է տարբերությունը հնչվածի և գրվածի միջև.

Հայերենում բառամիջումը ը չի գրվում, բայց երբ ը-ով սկսվող մի բառ բարդվում է, ը գրվում է. ինչպես դասընկեր, նախընթացիկ և այլն: Սխալմամբ երբեմն այսպիսի բառերն էլ առանց ը-ի են գրվում, իսկ ըստ նախդիրով կազմված բառերի համար ը չգրելը լավագույն է համարվում, ինչպես՝

անստերիւ—անըստերիւ.

անստգիւտ—անըստգիւտ.

անստգտանելի—անըստգտանելի:

Երբ գրվածքի և հնչման մեջ եղած տարբերությունը շատ խոշոր չէ, տանելի է. իսկ երբ նրանք շատ մեծ շափերի են հասնում, պատճառ են դառնում մեծամեծ դժվարությունների. մարդիկ պարտավոր են իրենց լեզվի հետ սովորել նաև հին գրությունը, հակառակ պարագային ենթակա են բազմաթիվ ուղղագրական սխալներին, իմաստի թյուրիմացություն և այլն: Պահպանողական ժողովուրդները տանում են այս բոլոր դժվարությունները, ճիշտ այնպես, ինչպես ֆեոդալական երկրներում ճորտը տանում է ազնվականների բռնակալությունը: Բայց երբ մարդիկ դառնում են ավելի ազատախոհ, սկսում են մտածել, թե հանուն ինչի՞ է այդ դժվարությունը, պահանջում են գրել այնպես, ինչպես հնչում են. ուղղագրական բարեփոխությունը օրվա հարց է դառնում:

Ինչպես որ ամեն մի հասարակական հեղափոխություն քաջալերություն է գտնում ազատականների կողմից և դիմադրություն՝ պահպանողականների կողմից, այսպես է լինում նաև ուղղագրական բարեփոխության հարցը: Հները դեմ են կանգնում նրան: Նրանք ունեն իրենց պատճառաբանությունները:

Առաջին՝ աչքի վարժությունը.— գրությունը վերջ ի վերջը դառնում է պատկեր և մարդ երբ կարդում է, ո՛չ թե տառերը մի առ մի, այլ ամբողջությունը միասին է տեսնում. տառերի փոփոխությամբ փոխվում է նաև բառը, հետևաբար նաև նրա հարուցած մտապատկերը: Այսպիսով նոր ուղղագրությունը թեև ինքնին ավելի բնական և ավելի հեշտ, բայց մտապատկերի տեսակետից դժվարություններ է հարուցում բոլոր գրագետների համար:

Երկրորդ՝ հին գրականության ջնջումը.— յուրաքանչյուր գրականություն, ինչքան էլ փոքր լինի այն, մի քանի տարիների գործունեության արդյունք չէ, այլ ժողովրդի երկար ջանքերի, նյութական և բարոյական աշխատանքի արդյունքը: Ուղղագրության փոփոխությամբ ի չիք է դառնում այդ բոլոր աշխատանքը և հարկավոր է լինում նորից սկսել վերարտադրել և վերահրատարակել նոր

ուղղագրությամբ այն բոլորը, ինչ որ դարերի աշխատանքով ձեռք է բերված ու մթերված: Մարդ էակը չի սիրում խնայված հարստությունը այնպես հեշտությամբ վատնել, ոչնչացնել:

Երրորդ՝ բարբառների հարցը.— յուրաքանչյուր լեզու ունենում է զանազան բարբառներ և արտասանության զանազան եղանակներ. ուղղագրության որոշ ձևը, որ ժամանակի ընթացքում կազմակերպված, հաստատված և սովորության միջոցով նվիրագործված է, դառնում է բոլորի համար մի ընդհանուր կաղապար, որի մեջ այդ աշխարհի արտասանությունները հալվում ու միանում են: Չինացիք չեն հրաժարվում իրենց անճոռնի պատկերագրից՝ որովհետև այնքան բարբառներ ունեն և այդ բարբառները այնքան տարբեր են իրարից, որ եթե յուրաքանչյուրը հնչական մեթոդով գրի առնվեր, ոչ ոք ոչ ոքի չէր հասկանալու: Պատկերագրին է, որ ծառայում է իբրև միության կապ բոլորի համար և խոսակցության մեջ իրար անհասկանալի բարբառները գոնե գրության մեջ դառնում են հավասարապես հասկանալի:

Չորրորդ՝ հին ուղղագրությունը համարվում է մի սրբազան ավանդ, նվիրագործված մի կտակ, որ անաղարտ պետք է պահվի և հանձնվի հաջորդ սերունդներին:

Այս պատճառաբանություններից վերջինը շատ անարժեք, երկրորդը մեծ գրականության համար անշուշտ բավական ընդունելի, իսկ առաջինը և երկրորդը ամենից ավելի բանավոր կետերն են: Այս պատճառով ահա ուղղագրության բարեփոխությունը աշխարհիս բոլոր լեզուների մեջ էլ չի ստացել իր վերջնական լուծումը: Գերմանացիք 80-ական թվականներից սկսած ընդունեցին որոշ բարեփոխություններ իրենց ուղղագրության մեջ, ավելի հետո նորվեգիացիք և բրազիլիացիք: Հարց բարձրացավ նաև Հոլանդիայում, Անգլիայում, մանավանդ Ամերիկայում. նախագահ Ռուզվելտն առաջարկեց մի քանի հարյուր բառերի գրության ձևը փոխել, բայց արմատական փոփոխություն ո՛չ մի տեղ չեն մտցրել: Ֆրանսերենի համար էլ եղան փորձեր, բայց ապարդյուն, և ակադեմիան դիչեց միայն մի քանի աննշան փոփոխությունների, որոնք ծովի մեջ մի կաթիլ էլ չեն:

Նույնիսկ այնպիսի մի անձ, ինչպիսին է Սոսյուրը, որ ֆրանսերենի ուղղագրական բարեփոխության կողմնակից էր, ու-

1 Վերջին տարիների ընթացքում որոշ բարեփոխություն մտցվել է չինական գաղափարաբանների մեջ, և չինական կառավարության կողմից կազմված հանձնաժողովը դեռ շարունակում է իր աշխատանքները: Մանր. խմբ.:

զում էր, որ մնա tant & temps,-et, est, ais,-du, dû, -il, devait, ils devaient & այլն բառերի տարբերությունը, այսինքն՝ նրանց գաղափարադրային արժեքը (F. de Saussure, Cours de linguistique générale, 57): Նույն կարծիքը շարունակում էր իր աշակերտը՝ Մելեն, որ գտնում էր. թե ֆրանսերենի մեջ հոմանունների առատության պատճառով հնչական ուղղագրությունը պիտի դժվարացներ ընթերցումը և շատ լավ էր գտնում poids, pois, poix, ces, ses գրչությունները (BSL № 103, 91):

Բավական մեծ փոփոխություն մտքին սուսները իրենց լեզվի մեջ հեղափոխությունից հետո, բայց այստեղ էլ բարեփոխությունը չեղավ կատարյալ, քանի որ շարունակվում է գրել самовар և հնչել самавар, գրել легкий և հնչել лехкий՝ «թեթե»:

Ուղղագրական բարեփոխության առաջարկություններ եղել են նաև մեր մեջ. գիտենք, որ Ե դարում գրում էին բեյ, եթե, սիրեալ և այլն, որոնք հետո դարձան թե, եթե, սիրեալ և այլն: ԺԲ դարում հնարվեց օ գիրը, որ առաջ համապատասխանում էր աւ ձայնին: Նույնիսկ վերջին ժամանակներում սկսեցինք փոխել դանազան բառերի գրչությունը, ինչպես երբէք—երբեք, հեճ—հեց, կէա—կետ, հրեայ—հրէայ և այլն:

Այս բոլորը մասնակի երևույթներ էին:

Ուղղագրական հիմնական բարեփոխություն առաջարկեց Խորեն Ստեփանյան և հենց ինքը գործադրության գրեց իր «Հայկական աշխարհ» թերթում, բայց դա որևէ հաջողություն չունեցավ և նույնիսկ ինքը հեղինակը ստիպվեցավ շուտով հրաժարվել իր առաջարկից:

Ավելի մեծ հաջողություն ունեցավ այն բարեփոխությունը, որ առաջարկեց Ղազարոս Աղայանը, 1888 թվականից սկսած, վերացնելու համար վ, յ, ու ձևերի շփոթությունը: Աղայանը առաջարկեց ջնջել ու գրությունը և պահել բաների մեջ յ, բառակցքին և ու-ից հետո վ: Թեև այս առաջարկությունը հիմնված էր շատ սխալ գիտական հիմքերի վրա՝ և հիմնապես չէր դարձանում գրության ձևը, այն պատճառով, որ ջնջում էր երեք ձևերից միայն մեկը, այնուամենայնիվ Աղայանը մեծ հաջողություն ունեցավ կովկասում: Դրա վրիսավոր պատճառն այն էր, որ ինքը լինելով սիրված ուսուցիչ, ունենալով շատ աշակերտներ, կազմած լինելով բազմաթիվ

¹ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Անտոյան, Հայոց գրերը, Վիեննա, 1928, 137—145:

դասագրքեր մանուկ սերնդի համար, առաջարկն արագ ծավալ և գործադրություն ստացավ:

Աղայանի դեմ դուրս եկան հակառակ առաջարկներ էլ, որոնք պաշտպանում էին վ գրությունը, հատկապես մշակ թերթը, և որի մեծագույն պաշտպանը եղավ վերջին անգամ Ստեփան Մալխասյանը և իր ուղղագրական սխեման (Վ, ու ձևերի դեմ միշտ և միայն վ) գործադրել սկսեց «Արօր» ամսագրում:

Վերջին անգամ Մանուկ Աբեղյանը, հայոց գրերի 1500-ամյակի առթիվ, առաջարկեց ավելի մեծ բարեփոխություն հայ ուղղագրության մեջ, որի գործադրության համար էլ կազմվելու էր առանձին գիտական հանձնաժողով էջմիածնում: Սակայն առաջարկը բարձր թողի արվեց և ո՛չ մի ձեռնարկ էլ չեղավ:

Սովետական կարգերի հաստատումից հետո Մ. Աբեղյանի ուղղագրական բարեփոխությունն ընդունվեց կառավարության կողմից (1922 թվականի մարտի 4) և ընդհանուր գործադրություն ստացավ Սովետական Միության սահմաններում:

Նոր ուղղագրությունը հիմնվում է հնչական գրության վրա՝ Ավանդական ուղղագրությունից տարբերվող կետերը հետևյալներն են.

1. Բառակցում գրել յե փոխանակ ե-ի:
2. է գիրը ամեն տեղ դարձնել ե:
3. յ տառը բառակցում գրել հ, բառավերջից անձայն յ հանել, ձայնավորների հանդիպման դեպքում շարունակ ավելացնել յ:
4. ո բառակցում գրել վո:
5. ոյ երկբարբառը գրել ույ, եթե այդպես է հնչվում:
6. յ (նաև բաղաձայն ու) տառը դարձնել վ. նույնիսկ և գրել յեվ:

7. օ տառը իսպառ ջնջել և դնել ո:

8. եա գրել յա:

9. իւ երկբարբառը գրել յու:

Մի անգամից եղած հանկարծական փոփոխությունները խրատը չեցնում են շատերին. այսպես էլ եղավ Աբեղյանի ուղղագրությունը, որ բացի նորամուծություն լինելուց, շատ անհարիր կողմեր էլ ուներ: Ուստի արտասահմանի հայությունը շարունակ քննադատեց, բողոքեց և ուր որ կարող էր, կուսակցական կազմակերպու-

¹ Տե՛ս հատկապես իր «Ջեկուցում հայոց լեզվի ուղղագրության օեֆորմի մասին», էջմիածին, 1921, և «Առաջնորդ հայոց լեզվի նոր ուղղագրության», Երևան, 1922:

ՁԱՅՆԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Ձայնական գործարանների մասին խոսելու ժամանակ մենք նույնպես, թե ինչ ու ինչ գործարաններ մասնակցում են ձայնի արտաբերության մեջ: Ձայնաբանությունը, իբրև ճշմարիտ փորձառական գիտություն, պետք ունի մանրամասն քննելու և իմանալու, թե այս կամ այն ձայնի արտաբերության ժամանակ հատկապես ո՞ր գործարանները դեռ ունեն, ի՞նչ շափով մասնակցում են նրանք և ի՞նչ ուժով ու ի՞նչ տևողությամբ:

Կար ժամանակ, երբ գիտնականները բավականանում էին միայն ականջով. բայց լսողությունը շատ տկար գործիք է և շատ հաճախ կապված է վարժության հետ. իրոք, վարժ ականջը զանազանում է շատ նուրբ տարբերություններ. օրինակ, ֆրանսիացին լսում է իր 7 տեսակ օ ձայնը, և սակայն անսովոր ականջը չի կարող զանազանել չիմացած ձայները, և մի օտար լեզվի մեջ մի նոր ձայն լսելիս, կարծում է լսել իր մայրենի լեզվի ծանոթ մեկ ձայնը. նույն ֆրանսիացին, որ 7 տեսակ օ զանազանել գիտի, չի կարող զանազանել Գ և Խ ձայների տարբերությունը, որովհետև չկա նրա լեզվի մեջ: Փորձեցեք մի թուրքի զգալ տալ ց և ս կամ օ և գ ձայների տարբերությունը և պիտի տեսնեք, որ չպիտի հաջողիք: Հայի մոտ թող անգլիացին արտասանի իր ժև, էև թլվատ ձայները, և նա պիտի լսե Գ, Ք, Գ, Լ, Ֆ, Վ, և երբեք չպիտի կարողանա իսկական հնչումը որոշել: Նույնիսկ արեմտյան հայր անընդունակ է լսել և զանազանել կովկասյան Բ, Վ—Գ, Կ—Պ, Մ—Ն, Ծ—Զ, և ձայների

տարբերությունը: Վերջապես նկատենք, որ ամենօրյա գործածության պատճառով մարդու ուշադրությունը բթացած է լինում և չի կարողանում նույնիսկ իր լեզվի սովորական հնչյունների տարբերությունը զանազանել: Արդ, եթե այսքան խոշոր տարբերություններ անկարող է ականջը զանազանել, ի՞նչ պետք է լինեն ձայների ավելի նուրբ տարբերությունները, մանավանդ արտասանության կազմության մանրամասնություններն ու ձայների վերլուծումը:

Ականջից ավելի լավ է երբեմն աչքը, որ կարողանում է զանազանել և որոշել այնպիսի ձայնական նրբություններ, որ ականջը չի կարող: Այսպես, ամեն մի մարդ կարող է հայելու մեջ նայելով տեսնել ծնոտի և շրթունքների շարժումը բաց և փակ ձայնավորների և շրթնային ու ոչ շրթնային բաղաձայնների արտասանության ժամանակ: Կարելի է նույնպես տեսնել լեզվի զանազան կետերի հպումը քիմքին և կատիկի շարժումները ա, օ, ի, օ ձայնավորների արտաբերության միջոցին: Նույնպես՝ տեսնել շունչի շափը ֎, փ—կ, Բ—տ, ք—ծ, ց—ն, չ բաղաձայնների արտաբերության մեջ՝ ուղղելով շունչը դեպի աշտանակի բոցը, որ պիտի անշուշտ ճոճի և նույնիսկ հանգի փ, Բ, ք, ց, չ բաղաձայնների արտաբերության միջոցին և սակայն անշարժ պիտի մնա մյուսների ժամանակ:

Վերջապես կարելի է շոշափմամբ իմանալ որոշ ձայների կազմության եղանակը. այսպես մատը դնելով քիմքին, մենք կարող չենք զգալ լեզվի բարձրացման շափը. ա, ք ձայների արտաբերության ժամանակ նա բավական ցածր է. ճնշումը բարձրանում է է ձայնի արտասանության ժամանակ. բայց հենց որ հնչում ենք ի, իւ՝ մատը մնում է կատարելապես սեղմված վիճակի մեջ՝ քիմքի ու լեզվի միջև: Նույն փորձերը կարելի է կատարել մատը դնելով ատամների վերին և ստորին շարքի միջև, և այն ժամանակ պիտի տեսնենք, որ մատը մինչև իսկ ցավում է ի, իւ ձայների արտասանության ժամանակ:

Բայց այս բոլորը իրողության մասին մի ընդհանուր գաղափար միայն տալիս է մեզ և չի լրացնում գիտության խստագույն պահանջները:

Ինչպես ուրիշ փորձառական գիտությունների, նույնպես և ձայնաբանության համար նոր և նորագույն գիտնականները հնարել են զանազան գործիքներ, որոնք աչքի և ականջի դերը տալով մեքենաներին, պատկերացնում են մեզ խոսողության ժամանակ ձայնի վերաբերյալ եղած բոլոր գործողությունները՝ պահանջված գիտական ճշտությամբ:

Լեզվաբանութիւնն այն ճշուրդը, որ մանրամասն տալիս է ձայնարանական գործիքների նկարագրութիւնը, սովորեցնում է նրանց գործածութեան եղանակը և ուսումնասիրում տրված արդիւնքը, կոչվում է փորձառական ձայնարանութիւն (phonétique expérimentale) կամ գործիական ձայնարանութիւն (phonétique instrumentale): Առանց մանկու ալդ գիտութեան մանրամասնութեանց մեջ, մենք այստեղ կտանք բոլոր կարեւոր գիտելիքները ձայնարանական գործիքների և փորձառական ձայնարանութեան մասին:

Փորձնական քննութիւններից ամենապարզը դիակի վրա կատարված քննութիւնն է: Խոշակը դնելով փութսի հետ հաղորդակցութեան մեջ, իսկ խոշակի վրա անց կացնելով տարբեր մեծութեամբ հնչարաններ, մենք կարող ենք ստանալ զանազան ձայնավորներ: Սրա համեմատ կեմպելինը և Մյուլլերը կազմել են արհեստական խոշակներ, որոնց մեջ կաուչուկե երկու թաղանթ դրված են իրար մոտ ձայնալարերի դիրքով և այնպես, որ կարելի է ըստ կամու ձգտել կամ կծկել. այդ թաղանթները դրված են մի խողովակի ծայրը. խողովակի վրա անց են կացնում զանազան մեծութեամբ հնչարաններ և փութսի միջոցով արտաբերում են զանազան ձայնավորներ: Այսպիսով արհեստական խոշակը դառնում է խոսող մեքենա և կարելի է նրա վրա ըստ կամու փորձեր անելով՝ ստուգել ձայների կազմութեան եղանակը:

Մյուս գործիքները զանազան են. նրանցից մի քանիսը մենք արդեն տեսանք Ա գլխում և պատկանում են ընդհանրապես բնագիտութեան: Բուն լեզվաբանութեան համար հնարված գործիքներից լավագույնն է այն, որ հնարել է Ֆրանսիացի արքա Ռուսլոն 1890 թվականին Փարիզում (ավելի ճիշտ կատարելագործել է իր նախորդների հնարած նախնական գործիքները): Սկզբում գիտնականները թերահավատութեամբ էին վերաբերվում այս գործիքների հետ, պատճառաբանելով, թե օդի հոսանքը նրանց միջով անցնելու ժամանակ, կորցնում է իր ուժի մի մասը և հետևաբար չի տալիս այն, ինչ որ իրապես է: Այս առարկութիւնը արգարացի էր: Բայց ըստ որում գործիքները միշտ նույն են և առաջացած փոփոխութիւնները նմանօրինակ, ուստի տրված արդիւնքներն էլ պիտի լինեին ճշտիվ համեմատական իրար հետ: Նոր գիտնականները առհասարակ կողմնակից եղան այդ գործիքներին և նրանք ընդունված են հիմա բոլոր եվրոպական համալսարանների լեզվաբանական աշխատանոցներում (լաբորատորիաներում): Կա մինչև անգամ

Գուցմանի ձեռքով կատարելագործված ճամփորդական միկնույն գործիքը, որ ծանր չի կշռում և կարող է կատարել բոլոր կարևոր լեզվաբանական փորձերը:

Ռուսլոյի գործիքի հիմնական մասը կազմում է արձանագրիչ գլանը՝ իր ժամացուցային կազմութեամբ, որի մասին արդեն խոսել ենք Ա գլխում: Բացի դրանից, կան մի խումբ մանր գործիքներ, որոնք հաստատվելով խոսողական գործարանների վրա, հաղորդակցութեան մեջ են դրվում միկնույն ժամանակ մի բարակ և ճկուն խողովակով գլանի հետ և գործարանների կատարած ցնցումները մի նուրբ փետուրի միջոցով արձանագրում են պատվող գլանի վրա, որը պատված է լինում մրով սեւացրած թղթով: Այդ գործիքներն են փողպատը, փամփուշտը, տանձիկը, ձագաբը և գոտին:

Փողպատը բաղկացած է մի փոքրիկ ժամացույցի նման տուփից, որ շինված է մի կողմը նուրբ կաշվից, մյուս կողմը՝ մետաղից. մետաղյա մասերից մեկում կա մի բարակ խողովակ, որ հաղորդակցում է արձանագրող գլանի հետ: Տուփիկից աջ ու ձախ մեկնում է մի կտոր ժապավեն, որ կապում են ենթակայի վզին, այն ձևով, որ տփիկի փափուկ կողմը հաստատվում է ճիշտ խոշակի վրա, իսկ ժապավենը հանգուցվում է ծոծրակի վրա: Երբ ենթական արտասանում է պահանջված ձայնը, կոկորդի թրթռումները ցնցում են տփիկի փափուկ կաշին, որով տփիկի օդը ցնցվում է և ստացված թրթռումները անցնելով նեղ խողովակի՝ միջով, շարժման մեջ են դնում փետուրը, որ և արձանագրում է գլանի վրա: Այս գործիքով կարելի է քննել ուրեմն, թե յուրաքանչյուր ձայն թրթռում է թե խոշ, ե՞րբ է սկսում թրթռումը և ինչքա՞ն է տևում, միկնույն ժամանակ ի՞նչ ձև ունեն այդ թրթռումները:

Փամփուշտը մի փոքրիկ արկղիկ է, պատրաստված նուրբ կաուչուկից, ծայրը՝ մի կարճ խողովակով ավելի ամուր նյութից, որի վրա հաստատում են կաուչուկի մի երկար խողովակ՝ հաղորդակցութեան մեջ դնելու համար արձանագրիչ գլանի հետ: Այս գործիքով կարելի է քննել և չափել նախ, թե ի՞նչ ուժով լեզուն հպվում է քիմքին, երկրորդ, թե ի՞նչ ուժով շրթունքները սեղմվում են իրար: Առաջին պարագային փամփուշտը դնում են լեզվի և քիմքի մեջտեղը, հատկապես այն մասի վրա, ուր կատարվում է լեզվի հպումը և որ կարելի է իմանալ արվեստական քիմքի միջոցով: Երկրորդ պարագային փամփուշտը դնում են շրթունքների միջև: Կատարված ճնշման համաձայն գրչի փետուրը գծում է մեծ ու փոքր կորութիւններ գլանի թերթի վրա:

Տանձիկը մի փոքրիկ տանձածե ոսկոր է, մեջը ծակ, և որի ծայրին հաստատված է կաուչուկե մի խողովակ: Այս գործիքը ծառայում է շափելու համար քթից դուրս եկող օդի հոսանքի տեղումը, ուժը կամ քանակը և նրա թրթռումները, և անուղղակի կերպով կատիկի իջեցման շափը բերանում, որի համար որևէ ուղղակի միջոց չկա: Որքան մեծ է քթից դուրս եկող օդի հոսանքը, ուրեմն և այնքան շատ է իջած կատիկը, հետևաբար և այնքան շատ սնգային է արտասանված ձայնը (լինի դա սնգային ձայնավոր և կամ բաղաձայն և, մ): Գործածության համար տանձիկը խրում են քթի մի ծակի մեջ և ենթակայի արտասանությունը արձանաչրում գլանի վրա: Արձանագրությունը տալիս է մեզ թրթռում մի գիծ, եթե ձայնը սնգային է. ուժեղ անթրթիւ մի գիծ, եթե սնգայնություն չկա:

Ոնգայնության աստիճանը կարելի է տեսնել նույնիսկ պարզ աչքով. երբ խողովակը ուղղենք դեպի մոմի բոցը, եթե ձայնավորը սնգային է, բոցը սկսում է ճոճվել, իսկ եթե ոչ՝ մնում է հանդարտ:

Չազարը շորս սանտիմետր բարձրությամբ և գրեթե նույնչափ տրամագծով մի փոքր բաժակ է, որի տակից մեկնում է գլանին հաղորդվող խողովակը: Ենթական բերանը գրեթե ամբողջապես կպցնում է բաժակին և քննելի ձայնը արտասանում է նրա մեջբերանի շունչը, իր ամբողջ ուժգնությամբ և թրթռումներով, լցվում է բաժակի մեջ և ցնցման մեջ դնելով այնտեղի օդը, խողովակի միջոցով շարժում է փետուրը, որ և արձանագրում է իր ստացած թրթռումները: Այսպիսով հնարավոր է լինում շափել բերանից դուրս եկող օդի հոսանքի բոլոր հանգամանքները. ուժը, տեղումը, բարձրությունը, շարժման սկիզբը և վախճանը, թրթռումներն ու նրանց ձևը և այլն:

Գոտին փողպատի մեծ տեսակն է, որ կապում են փորի վրա և նրա միջոցով շափում թոքերի ճնշման շափը՝ հատկապես և ձայնի արտասանության համար, ներշնչման և արտաշնչման քանակությունը:

Այս հինգ գործիքները անուղղակի կերպով տալիս են մեզ գործարանների գործունեության պատկերը: Նրանք գլանի վրա նկարում են զանազան կոր գծեր, որոնք ենթարկելով թվաբանական և երկրաչափական պարզ հաշիվների, կարելի է ամենամեծ ճշտությամբ ուսումնասիրել ձայնի վերաբերյալ ամեն խնդիր: Այդ ձայնական գծագրությանց մեջ թրթռումների թիվը մի վայրկյանում ցույց է տալիս ձայնի բարձրությունը, նրանց լիությունը ցույց է տալիս ուժգնությունը, երկարությունը ցույց է տալիս տեղումը:

նր, իսկ ձևը ցույց է տալիս երանգը: Որովհետև հայտնի է, թե զայնը որոշ ժամանակում որքան պտույտ է գործում, ուստի կարելի է հաշվել, թե որքան է տեղում ամեն մի ձայնի պատրաստությունը, փակումը, բացումը կամ պայթյունը, թրթռումների ընդհանուր տեղումը, նույնիսկ յուրաքանչյուր թրթռումի տեղումության շափը (մի վայրկյանի այսքան հարյուրերորդ մասը): Չայնաբանության համար շատ կարևոր է իմանալ գործարանների գործունեության ժամանակակիցության աստիճանը, և այս բանը կատարյալ ճշտությամբ ցույց են տալիս գծերը: Վերցնելով միաժամանակ երկու կամ ավելի գործարանների գործունեության արդյունքը (օրինակ՝ բերան և կոկորդ, քիթ և կոկորդ և այլն) և քաշելով նրանց միջև ուղղահայաց գծեր, ճշտիվ կարելի է շափել, թե ո՞ր գործարանը կանխում կամ ուշանում է մյուսից և ո՞րքան ժամանակով: Մանր թրթռումների քննությունը կատարվում, այսինքն՝ շափվում է մանրադեղատով, որով որակական երևույթները վերածվում են քանակականի, այսինքն մտնում են շափի և թվի տակ, որ է իրական գիտություն: Այնուհետև ավելորդ են դառնում, օրինակի համար, բաց, փակ, խուլ, թրթռում, սուղ և այլն անորոշ բառերը և հարկավոր դեպքում կարելի է տալ թրթռումների թիվը, ալիքների բարձրությունը, լայնքը և այլն:

Բացի վերոհիշյալ հինգ գործիքներից, որոնք անուղղակի կերպով տալիս են արտասանության պատկերը, կա նաև արվեստական քիմքը, որ ուղղակի տալիս է արտասանության պատկերը, այնպես ինչպես կա:

Արվեստական քիմքը պատրաստում են հետևյալ ձևով.— նախ մեղրամոմի փափուկ մի մեծ գունդ դնում են բերանը և ճնշելով՝ առնում բերանի ներքին կաղապարը. այդ կաղապարի վրայից կարծր կաուչուկի, նուրբ մետաղի կամ թիթեղի նուրբ շերտով և կամ նույնիսկ որոշ տեսակի թղթով ձևում են քիմքի մակարդակը: Այս մակարդակը նախ ներկում են սև գույնով, իսկ քննության ժամանակ կավիճով կամ կաուչինի փոշով սպիտակացնելով, զգուշությամբ դնում են ենթակայի բերանը, կպցնում են քիմքին: Այնուհետև ենթական արտասանում է քննելի տառը և իսկույն զգուշությամբ արվեստական քիմքը դուրս բերում: Արտասանության ժամանակ բնականաբար լեզուն քսվելով քիմքին՝ հանում է սպիտակ փոշին. արվեստական քիմքի սև մնացած մասի սահմաններից իսկույն իմացվում է, ուրեմն, թե քիմքի ո՞ր մասերը կրում են լեզվի հպումը նույն ձայնի արտասանության ժամանակ, և ո՞ր մասերը մնում են ազատ:

Այսպիսով, ուրեմն, գործիքները ծառայում են մեզ ստանալու նախ՝ արտասանության ժամանակ օդի վեկտորները և երկրորդ՝ արտասանող գործարանների շարժումները:

Բայց փորձառական ձայնաբանության մեջ գործիքները կարելի է դրա նկատմամբ միայն արձանագրելու ճիշտ ձայնը, այլ մանավանդ վերլուծելու նրա կազմությունը: Քերականությունը բառերի և ձևերի ուսումնասիրությունն է, ձայնաբանությունը բառերի և ձևերի ձայնների ուսումնասիրությունը, իսկ փորձառական ձայնաբանությունը գնում է ավելի հեռու. նա վերածելով յուրաքանչյուր հնչյուն իր կազմի մասերին, մանրագիտական քննությամբ ուսումնասիրում է նրա ամենանախնական մասերը, ճիշտ ինչպես կենսաբանը քննում և ուսումնասիրում է բջիջների կազմությունը բուսական և կենդանական թագավորության մեջ:

Եվրոպական մեծ լեզուները, հատկապես ֆրանսերենը, մանրամասնորեն ենթարկված են այսպիսի ձայնաբանական քննություն: Հայերեն ձայների ուսումնասիրության համար ես հրատարակած եմ մի տետրակ («Les explosives de l'ancien armenien étudiées dans les dialectes modernes», Paris)¹ աշխատակցությունում նույն ձայնաբանական գործիքների հեղինակ Ռուսլոյի և Մեյե հայագետի: Չորս տասնյակի մեջ գրված են հայերեն լեզվի պլիոցիկ բաղաձայնների բոլոր աստիճանները (բ, պ, փ, բ', գ', կ, ք, դ', դ, ա, ք, ձ, ձ', ճ, ճ', ծ, ց, ջ, ջ', ն, չ) վեց անձի արտասանությամբ՝ տարբեր գավառներից (Պոլիս, Ասլանբեկ, Նուխի, Մուշ, Սերաստիա): Փորձերը կատարված են Փարիզում, արքա Ռուսլոյի ձայնաբանական աշխատանոցում: Պատկերները ներկայացնում են խոչակի և բերանի շունչի դերը նույն ձայների արտասանության ժամանակ, այսինքն՝ այն ձայների, որոնք հատկապես տեղիք են տալիս թյուրիմացություն և տարաձայնություն: Ամբողջ հայերեն ձայների (ձայնավոր թե բաղաձայն) արձանագրությունը կատարել եմ նույն աշխատանոցում, իմ կողորդի վրա, բայց այս աշխատությունը անտիպ է:

Ռուսլոյի գործիքների մանրամասն նկարագրությունը, ինչպես և փորձառական ձայնաբանության ամբողջ գիտությունը բովանդակությունը տե՛ս իր «Principe de phonétique expérimentale», Paris, 1902, երկու հատոր:

¹ Այս աշխատության վրա ընդարձակ մատենախոսական ունի Հ. Հաչոբոս Տաշյան, «Հանդէս ամսօրեայ»-ում, որի մեջ գրեթէ ամբողջ գործը հայերեն է թարգմանված:


Ռուսլոյի մեքենայից ավելի կատարյալ մի գործիք է էլեկտրալսողական (électro-acoustique) ապարատը, որ բուրոպիւն նոր գյուտ է: Ապարատը կազմված է մի մանրաձայնից (microphone), մի էլեկտրական ամպլիֆիկատորից (amplificateur), և մի ճոճագրից (oscillographe): Փորձարկության ենթարկող անձը խոսում է միկրոֆոնի առաջ, միկրոֆոնը ընդունում է թրթուսները, ամպլիֆիկատորը՝ մեծացնելով այդ թրթուսները, փոխանցում է ճոճագրին: Ճոճագրից էլեկտրամագնիսական մի ապարատ է, որ չափազանց զգայուն է ամեն մի թրթուսի առաջ. նա ունի մի փոքր հայելի, որ հայաքում է լույսի ճառագայթները և զբոսնում լուսանկարչական թղթի վրա. այսպիսով ստացվում է խոսքի գծագրությունը: Այս մեքենայի առավելությունը մյուսի վրա աչք է, որ ա) փորձարկողը բոլորովին ազատ է, չունի ոչ մի կապ կողորդին, բերնին կամ քիթին և միկրոֆոնի առաջ նստած խոսում է բնական ձևով: Բ) Արձանագրությունները շատ ավելի սուտ է բնական ձևով: Բ) Արձանագրությունները շատ ավելի մանրամասն և ընթեռնելի են, որովհետև մի վալրիլանում 1—10 մետր կարելի է ստանալ: Միևնույն ժամանակ կարելի է ստանալ նույն ձայնից գրամաֆոնային մի պլաստիկ կամ հնչուն ֆիլմ, որով կարելի է ականջով էլ ստուգել աչքով կարգացված գծագրությունը:

Այս գործիքը սակայն պահանջում է մեծ ծախս, ժամանակ և աշխատանք: Այս պատճառով ահա մինչև այժմ (1935) կատարված է մի քննություն իտալերենի ձայների վրա, որ հինգ տարվա աշխատանքի արդունք է (BSL, 36, № 108, p. 12):



Այն բոլոր գործիքները, որ նկարագրեցինք վերևում, տալիս են այսպես ասած ձայնի երկրաչափական նկարը, որ ամենամեծ արժեքն ունի ուսումնասիրության համար, բայց ոչինչ չի ասում լսողության, ուրիշ խոսքով չի կարող հնչումը վերարտադրել: Չայնի, հատկապես մարդկային ձայնի և երգի վերարտադրության, ինչպես նաև պահպանության համար մարդիկ հնարել են ձայնագիր կամ ֆոնոգրամ և կոչված գործիքը:

Առաջին ֆոնոգրամ և հնարեց էդիսոն ամերիկացին (պատկեր 15): Սա կազմված էր մի արույրե գլանից (A), որ անցնում է մի պտուտակավոր առանցքի վրա (D). գլանի վրա կան խիտնջաձև փորվածքներ (H), որոնք ճշտիվ համապատասխանում են պտուտակի պտույտներին, այնպես որ երբ շուռովիկը (M) դարձնենք, գլանն ու պտուտակը կանոնավոր կերպով իրար կազուցվեն: Գլանի փորվածքների վրա անցկացված է անագե կամ շատ բարակ պղնձե

մի թերթ, որ պատում է նրան: Գլանի առջև կա մի բացվածք (B), որը ձայնական ալիքները ընդունում է և կենտրոնացնում մի թրթր-թռացող թերթի վրա (r). այս թերթը հենված է ուղղակի մի կառուցուկի խողովակի վրա (e), իսկ այս խողովակն էլ առաձգական մի թերթի վրա (i), որ վերջանում է պողպատյա մի սուր ծայրով: Այնպես է հարմարեցված, որ պտույտի ժամանակ սուր ծայրը քերում է անագե թերթը՝ գլանի փորվածքներին համապատասխան: Գոր-



Պարկեր 14



Պատկեր 15

կին ձևով շարժում. այն ժամանակ տկար ձայնով լսվում է զրված արձանագրությունը՝ երգ կամ խոսք:

էդիսոնի այս գործիքից հետո հնարվել են շատ ուրիշ տեսակ ֆոնոգրաֆներ, որոնք բոլորն էլ հիմնված են միևնույն սկզբունքի վրա: Ամենից լավն է նույնիսկ էդիսոնի կատարելագործած ձևը: Սրա գլխավոր մասն է m կամ m' մոմե գլանը, 15 սմ. երկարությամբ և 5 սմ. տրամագծով: Սա անցնում է մի ուրիշ մետաղյա

ծիքի վրա փորձելու համար պետք է բարձրաձայն խոսել կամ երգել բացվածքի մեջ, ըստ կարելիվույն մոտիկ է թերթին, միևնույն ժամանակ պտտացնելով շուռուղիկը հետևից առաջ, որով սկսում է գլանը առաջ շարժվել: Այն ժամանակ է թերթին ըսկըսում է թրթռալ մեր ձայնի հետ նույնաձայն, իր թրթռումները փոխանցվում են i թերթին, հետո էլ նրա սուր ծայրին, որ սկսում է մետաղե թերթի վրա գծեքիչ կամ շատ ցայտուն փոսեր՝ ձայնի ուժգնություն համեմատ: Այսպես արձանագրվում է ձայնը:

Կարելի է այժմ կարգալ այս արձանագրությունը: Դրա համար նախ շուռուղիկը դարձնելով՝ գլանը հետ են քերում և նորից նախ-

դանի վրա (CC), որ թեթևակի կոնսաձե է: Այս գլանը կանոնավոր կերպով պտտվում է մի էլեկտրական շարժիչով, որ դանվում է E արկղում և ունի նաև մի կանոնավորիչ ն. մի բոպեում ստացվում է 80 պտույտ: Գլանի վերջում կա մի պտուտակ (V), 1/4 միլիմետրանոց առամներով, որ կարող է մտնել E էգ պտուտակի մեջ: Պտտվելու ժամանակ այս էգ պտուտակը կանոնավոր շարժումով շարժվում է պտուտակի երկարությամբ և իր հետ տանում M խողովակը, որ սահում է պտուտակին զուգահեռական մի հաստատուն կոթի վրա (B): Այս M խողովակը իր վրա կրում է մի ուրիշ կտոր, որի վրա շարված են արձանագրիչը (L) և արտադրիչը (K): Արձանագրիչն ունի քիչ խոր և շրջանակաձև մի փոս, որի խորքը ձևացած է թրթռուն մի սկավառակով (m): E ծակին հարմարացրած է P ձայնատարը կամ լայնաբերան մի խողովակ (առաջինը խոսակցության, իսկ երկրորդը երաժշտության համար): Սկավառակը կատարում է թմբկաթաղանթի պաշտոն. նա ստանում է ձայնական ալիքները և կառուցուկի մի խցանի միջոցով այս թրթռումները փոխանցում է մի փոքրիկ և շատ սուր սլաքի (c), որ նստած է մի թիթեղաձև զսպանակի վրա և որի ծայրը հենվում է մոմի գլանի վրա, և այդ գլանի վրա կազմում է փոսիկներ, խխունջաձև կերպով:

Արձանագրելու համար L մասը տարվում է գլանի ծայրը, և երբ շարժիչն սկսի շարժվել, ինքն էլ առաջանում է գլանի վրա:

Երբ ուզենանք արձանագրությունը կարգալ, արձանագրիչ L-ի տեղ դնում ենք K արտադրիչը, շուռ տալով A ծխին, որ կրում է նրանք: K և L գրեթե նույն կազմությունն ունեն, միայն K արտադրիչի ժամանակ, թրթռուն սկավառակն ստանում է իր շարժումները մի բուլ ծայրով, որ անց են կացնում սլաքի գծած փոսիկների մեջ, և երբ գլանը պտտվում է, նա էլ հետևում է փոսիկներին: Արտադրիչի բերանում զրված է մի երկճյուղ լսողական խողովակ, որ ախանջներին անց կացնելով, ավելի լավ է լսվում:

Ֆոնոգրաֆի մի ուրիշ դարգացած ձևն է հեռագրագիրը, որ հնարեց Պուլզեն դանիացի բնագետը՝ 1900-ին: Մի փոքրիկ էլեկտրոմագնիս միացած է մանրաձայնի (միկրոֆոնի) հետ և հորիզոնական ձևով շարժվում է պողպատյա թելի մի սպիրալի առջև, որը փաթաթված է իր առանցքի վրա պտտվող մի թմբուկի վրա: Երբ խոսում ենք մանրաձայնի առջև, խոսքից առաջացած դանազան հոսանքները դանազան ձևերով մագնիսացնում են էլեկտրոմագնիսը, իսկ սրա բևեռներն (pôle) էլ ազդում են նույն ձևով պողպատյա թելի համապատասխան մասերին, որոնք բոպեապեռ զրը-

ված են իր գործունեության տակ: Պողոսյանի դիմադրությունը կորցնելու համար՝ իր մագնիսականությունը պատճառ է դառնում, որ թեև Վրա մնում է մի տեսակ մագնիսական գրություն, կատարելապես անտեսանելի: Բայց եթե էլեկտրոմագնիսի բևեռները միացնենք սովորական մի հեռախոսի, այդ գրության գծերը էլեկտրոմագնիսի մեջ առաջ են բերում խոսքի հոսանքներին համապատասխանող նոր հոսանքներ. ըստ որում մագնիսականությունը երկար ժամանակ մնում է պողոսյանի վրա, նրա համեմատ էլ ձայնը մնում է շաբաթներ և ամիսներ: Երկար խոսակցություններ գրելու համար թեև տեղ դնում են պողոսյանյա մի ժապավեն, որ երկու ճախարակների արանքով անցնում է էլեկտրոմագնիսի առջևով, ճիշտ ինչպես թղթի ժապավենը հեռագրական մեքենայի մեջ:

Ասացինք, որ ձայնագիրը արժեք չունի ձայների ուսումնասիրության և վերլուծման համար, բայց մեծ է նրա արժեքը լեզվաբանության մեջ այն իմաստով, որ տալիս է մեր ականջին կենդանի պատկերը այնպիսի լեզուների և բարբառների, որոնք լսելու համար ստիպված ենք մեծախոս ու հեռավոր ճամփորդություններ կատարել աշխարհի զանազան կողմերը:

Ամենամանրամասն նկարագրությունն անգամ որևէ լեզվի հնչման կամ արտասանության մասին, այն չէր երբեք, ինչ որ է ձայնագիրը:

Ձայնագիրը հրաշալի կերպով տալիս է մեզ լեզվի արտասանությունը իր ճիշտ ելևէջներով ու շեշտով, թեև որոշ ձայներ (ինչպես ա, զ, շ, ծ) շփոթվում են: Եվրոպացիք արդեն սկսել են բարբառների և լեզուների ուսումնասիրության հետ կցել ձայնագրական թիթեղներ ու զլաններ՝ հատուկ այս նպատակով: Այսպիսին է Գրիբերսոնի 16 հատոր հոյակապ հրատարակությունը Հնդկաստանի լեզուների համար՝ բազմաթիվ ֆոնոգրամներով:

Վիեննայում 1899 թվականին հիմնվել է ֆոնոգրամների մի արխիվ, ակադեմիայի շնորհիվ, ուր հավաքված են աշխարհիս զանազան լեզուներով ու բարբառներով ֆոնոգրամներ: Նման մի հաստատություն էլ հիմնվել է Փարիզում 1911 թվականին, որ, սակայն դեռ բավական աղքատ է: Լոնդոնում էլ կա „Linguaphone institute“ նույն նպատակով:

Պետք է զանազանել սակայն սովորական ձայնապնակները լեզվաբանականներից, առաջինները ներկայացնում են մի երգ, մի բանաստեղծական արտասանություն կամ թատերական ներկայացում, որոնց մեջ ձայնը միշտ կեղծված է համաձայն արտաստի

բանահմուտների: Լեզվաբանական ձայնապնակները պատրաստված են հատկապես ուսուցման նպատակով, հայտնի արտասանողների կողմից, մաքուր և ճիշտ արտասանությամբ: Ձայնապնակներին ընկերանում է նաև տպված բնագիրը, որով մեքենան կարելի է գործածել բոլորովին գործնական նպատակով: Կարելի է շատ դանդաղեցնել ձայնապնակի ընթացքը, կրկնել ու կրկնել տալ միևնույն դարձվածք բազմիցս անգամ, կարելի է նույնիսկ մեքենայի թելադրությամբ գրել նույն հատվածը և հետո համեմատել տպագրվածի հետ՝ ուղղագրության վարժվելու համար (Bruneau, Manuel de phonétique, XVI):

Փորձառական ձայնաբանության մեջ մտնում են նաև կինոն և X ճառագայթները (ռենտգենյան) կամ ռադիոն: Ռադիոն նկարում է խոսողին այսինչ կամ այնինչ ձայնի արտասանության ժամանակ, որ հետո ըստ կամս մեծացնելով ու դանդաղեցնելով, քննության է առնում մանրամասնությունները: Ռենտգենյան ճառագայթներով քննում են ձայնի բարձրության կորագծերը և այլն: Այսպիսի քննություններ ունեն Parmenter, Trevino, Bevans և Lenk' Zeitschrift für Experimentalphonetik թերթում (հատ. Ա) և այլն:

Թե՛ ձայնագիրը և թե՛ բոլոր այն գործիքները, որ վերևում նկարագրեցինք, արժեք ունեն բնականաբար միմիայն արդի կենդանի լեզուների համար: Ապագային, նույնիսկ եթե այդ կենդանի լեզուները մեռնեն, գիտնականները կկարողանան ձայնապնակների միջոցով ուսումնասիրել արդեն մեռած լեզուները: Սակայն, մենք որ շունենք մեզանից առաջ մեռած լեզուների հնչական արձանագրությունը, այլ միայն մի այբուբեն, որ շատ անգամ անկատար, իսկ հնչական նբությունց մեջ շատ անկատար է, ստիպված ենք դիմել կողմնակի միջոցների.— ձեռագրական սխալներ, օտար սառագարձություններ, փոխառյալ բառեր, հին քերականների զանազան նկարագրությունները, ոտանավորների շափր և հանգը, բայց ամենից ավելի ստուգաբանություններ և այդ ստուգաբանություններից բխած ձայնական օրենքները: Այս բոլորը կարող են չլինել բացարձակապես ճշմարիտ, բայց ահա կենդանի լեզուների ճիշտ քննությունը, նրանցից դուրս բերված ձայնական ստույգ օրենքները և առհասարակ ձայնաբանության գիտական տեսությունները պիտի զան ստուգման ենթարկելու հին լեզուների մասին մեր դուրս բերած օրենքները և նրանց արժեքը ճշտելու: Նորերի փորձով ուսումնասիրվում և պարզաբանվում են հին երևույթները:

ՉԱՅՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆԸ

Չայնի ամենից ավելի ցայտուն կողմը և միևնույն ժամանակ նրա անհատականության անհրաժեշտ պայմանն է երանգը: Երկու ձայն կարող են ունենալ միևնույն տեղությունը, միևնույն բարձրությունը և միևնույն ուժը, բայց եթե երանգով տարբեր են, ուրեմն և տարբեր ձայններ են: Ընդհակառակը՝ երկու ձայն կարող են ունենալ տարբեր տեղություն, տարբեր բարձրություն և տարբեր ուժ, բայց եթե երանգով նույն են, ուրեմն և նույն ձայններն են:

Երանգի այն տարբերությունը, որ զգում է ականջը, ենթակայական է, բայց եթե քննենք նրա հորինվածությունը, կգտնենք, որ այդ տարբերությունը առարկայական է և կայանում է բնախոսական պայմանների մեջ:

Եթե երանգը ձայնի անհատականությունը կազմող հատկություն է, ուրեմն և ձայները կարելի է դասակարգել իրենց երանգի համեմատ, ուրիշ խոսքով իրենց բնախոսական կազմության համաձայն:

Մարդկային ձայների թիվը չափազանց մեծ է, թե՛ բազմաձայնների և թե՛ ձայնավորների կողմից. այբուբենները նրանց մի քանի համար կմախքն են ներկայացնում: Միևնույն ձայնավորը, ընդհանուր կմախքն են ներկայացնում: Միևնույն ձայնավորը, համաձայն իր ստացած դիրքի (շեշտյալ կամ անշեշտ, բաց կամ փակ և այլն), փոխում է իր երանգը և հետևաբար ստանում է բազմապիսի ձևեր. -օ-ն մի ձայնավոր է, բայց Փրանսերենի մեջ կա 7 տեսակ օ: Այսպես՝

1. Փակ և սուղ օ—ինչպես beau.
 2. Փակ և երկար օ—ինչպես chose.
 3. Բաց և սուղ օ—ինչպես sotté
 4. Բաց և երկար օ—ինչպես fort.
 5. Սուղ և միջակ օ—ինչպես mauvais.
 6. Սուղ և շատ քիչ բացված օ՝ անշեշտ վանկերի մեջ,—ինչպես sottise.
 7. Սուղ և շատ քիչ փակ օ՝ անշեշտ վանկերի մեջ,—ինչպես morose.
- Կառուցելով լեզվի մեջ կա նույնպես 7 տեսակ օ.

1. Շատ բաց և շատ կարճ օ.
2. Փակ և կարճ օ.
3. Բաց և երկար օ.
4. Փակ և կարճ (տոնով) օ.
5. Բաց և երկար (տոնով) օ.
6. Շատ փակ և շատ կարճ օ.
7. Երկար և շատ փակ օ.

(*St' u Hospitalier, Gramm. Laotienne, 46—55*):

Կարելի էր դեռ սրանց վրա ուրիշ ավելի նուրբ երանգներ էլ ավելացնել և այդ բոլորը կլինեին օ ձայնի զանազան տեսակները¹: e և i կազմում են մի ձայն. բայց բերանը և լեզուն, սկսած առաջինից մինչև երկրորդը, կարող են ստանալ բազմաթիվ դիրքեր և յուրաքանչյուրը կազմում է մի առանձին երանգ. այսպիսով ստացվում է ձայների մի մեծ թիվ, որոնք բոլորը e-ի և i-ի տեսակներն են:

Այսպես են նաև բաղաձայնները. օրինակ է և ձ ատամնական բաղաձայններ են, առաջինը խուլ, երկրորդը թրթռուն: Ատամնական ձայնի արտաբերության համար անհրաժեշտ է, որ լեզվի ծայրը դիպչի ուղիղ կամ կորացած ձևով ատամներին. բայց այդ սահմանը մի կետի վրա չէ ամփոփված, այլ ատամների ներքևի ծայրից սկսած գնում է մինչև քիմքի հետևի կորուսությունը. յուրաքանչյուր կետի վրա արտաբերվում է մի ատամնական, որ տարբեր է մյուսներից: Այսպիսով ձևանում են բազմաթիվ տեսակի է և ձ ձայններ:

Սակայն հակառակ սրան, աշխարհիս բոլոր լեզուների մեջ գտնված բոլոր ձայների տեսակը շատ փոքր թիվ է կազմում: Քրն-

¹ Dauzat, La philosophie du langage, p 206.

նությունը ցույց է տվել, որ սոմանական և գերմանական մի քանի բարբառներ միասին վերցված, բովանդակում են աշխարհի բոլոր լեզուների ձայնական հարստությունը, ձայնավորների բոլոր գամմաներն ու բոլոր բաղաձայնները: Օրինակի համար, Փարիզի ձայնաբանական աշխատանքի մեջ մանրակրկիտ կերպով քննելով մալգաշերենի բոլոր ձայները, տեսան, որ բոլորն էլ կան ֆրանսերենի և իր բարբառների մեջ, բացառությամբ մի ձայնի, որ և զբաղվեց անգլերենում (ե խմբի անգլիական արտասանությունը): Աշխարհիս վրա խոսված անթիվ լեզուների ու բարբառների քննությունը շտվեց ուրեմն ձայների մի այնքան մեծ զանազանություն, որքան կարծվում էր: Պատճառն այն է, որ մեր խոսողական գործարանները, ինչքան էլ որ մարդուց մարդ և ազգից ազգ տարբեր, այնուամենայնիվ վերջ ի վերջո անսահման միջոցներ չունեն իրենց արամագրության տակ և իրենց գործունեությունը պտտվում է շարունակ միևնույն փոքր շրջանակի մեջ¹: Բերանի ամենափոքր տեղից մինչև շրթունքները 9 սմ տարածություն է:

Բացի սրանից, հնչյուններ արտագրելու միջոցներն էլ շատ զանազան չեն և բոլոր լեզուների մեջ էլ միևնույն բաներն են. ամեն տեղ էլ ունենք ձայնավորներ և բաղաձայններ միայն. ձայնավորները իրարից քիչ զանազանությամբ պտտվում են ամենաբաց ձայնի և ամենափակ i, ü ձայների միջև. բաղաձայններն էլ ունեն միշտ երկու տեսակ պայթական՝ կամ սեղմ և կամ սրանց միջին աստիճանը. այնպիսի մի հնչյուն, ինչպես l, որ բավական չուրահատուկ կազմություն ունի, գրեթե ամեն լեզվի մեջ կա և ամեն ժամանակ եղել է: Բայց ավելի կարևոր պատճառն այն է, որ ինչքան էլ մեր գործարանները կարենան ստանալ զանազան դիրքեր և արտաբերեն զանազան տեսակի ձայներ, ականջը անընդունակ է այդքան նրբություններ զանազանել և բավականանում է միայն մի քանի գլխավոր կետերը որոշելով:

Հնագույն զարբերից սկսած, քերականները մարդկային ձայնը բաժանում են երկու մեծ խմբի՝ ձայնավոր և բաղաձայն: Ըստ ավանդական բացատրության, ձայնավոր կոչվում են նրանք, որ առանձին ընդունակ են կազմելու մի վանկ, իսկ բաղաձայն կոչվում են նրանք որ վանկ կազմելու համար կարոտ են ձայնավորների ընկերակցության: Այս բացատրությունը սխալ է. նախ՝ որովհետև չի որոշում ձայնավորի և բաղաձայնի էությունը, ավելի նրանց պաշտոններից մեկին է հայտնում. երկրորդ՝ շատ լեզուներում

¹ Dauzat, La philosophie du langage, p. 207.

կան, որոնք բաղաձայն տառերով կազմում են վանկեր, այսպես անգլերեն ridden, temple, mutton, գերմաներեն Acker, Löffel, bitten, դանիերեն Katten, handel (կարգա kadn, han!) բառերի երկրորդ վանկի մեջ վանկ կազմող ձայներն են r, n, l, սրանց մեջ e ձայնավորը լոկ գրչապահան է, որ գոթերենի մեջ նույնիսկ պակասում է. այսպես՝ գերմաներեն Acker, vogel, zeichen բառերի համապատասխան գոթերեն ձևերն են akrs, fugls, taikns r, l, n ձայնավորներով (Braune 16): Աֆրիկյան ավանդի լեզվի մեջ m և n կարող են առանձին վանկ կազմել, ինչպես m-tu (մարդ), n-čil (երկիր) երկվանկ բառեր են (Seidel, Suah, 1): Չեխերենը ունի շատ բառեր, որոնք իսպառ զուրկ են ձայնավորից և որոնց մեջ վանկ կազմելու պաշտոնը ընկնում է l, r բաղաձայնների վրա. այսպես, օրինակ, vlk «զայլ», vrch «զագագթ», plst' «թաղիք», krk «վիզ», tvrz «քերդ», brk «փեռուր», prst «մատ»: Կարելի է նույնիսկ կազմել ամբողջ նախադասություններ առանց ձայնավորի, ինչպես.

strč prst krsk krk.

Ի՛ր մատը ընդ վիզ:

Այսպես է նաև սլովերենի մեջ. օրինակ՝ strd «մեղր»:

Թամիլ քերականները գեղեցիկ փոխաբերությամբ ձայնավորը կոչում են uyir (բառի կյանքը), իսկ բաղաձայնը՝ mey (բառի մարմինը) (Coldwell, Dravid. 132):

Ըստ ձայնաբանության, ձայնավորներն ու բաղաձայնները տարբերվում են իրարից լսողական և բնախոսական տեսակետով: Ձայնավորը իսկական և ամբողջական ձայն է, որ ունի երաժշտական ձայնի բոլոր հատկությունները՝ երանդ, ուժ, բարձրություն և տեղություն. բաղաձայնը ազմուկ է. բաղաձայնների մի մասը, ինչպես p, t, k զուտ ազմուկներ են, ուրիշներ, ինչպես z, ž, v ազմուկ են՝ խոսնված երաժշտական ձայնի հետ. զուտ ազմուկները թեև ունեն երանդ և ուժ, բայց տեղություն և բարձրություն չունեն: Ձայնավորի արտաբերության ժամանակ գործարանները ձևացնում են մի կամ երբեմն էլ երկու հնչարան, որոնք ուժեղացնում են երաժշտական ձայնի մի որոշ նոտա, որոշ բարձրությամբ: Ավելի պարզ լեզվով խոսելով, լեզվի զանազան շարժումներով բերանը ստանում է զանազան ձևեր, որոնք փոխում են ձայնի երանդը, ճիշտ ինչպես զանազան ձևի խողովակները շփոթի վրա ազուցված: Բնախոսական տեսակետով ձայնավորի և բաղաձայնի տարբերությունը կայանում է հետևյալ հանգամանքի մեջ. երբ գործա-

բանները մոտենում են իրար այնքան, որ նրանց միջև բավական բաց տարածություն կա, որպեսզի խոշակից բարձրացած օդի հոսանքը պատերեն դուրս գա, առանց պատերին շփվելու, այդ պարագային ստացվում է ձայնավոր, իսկ երբ այդ անցքը շատ նեղ է և կամ բոլորովին փակ, այնպես, որ օդի հոսանքը ստիպված է բնդարձակորեն շոշափել պատերը կամ նույնիսկ բախումով դուրս գալ, այդ պարագային ստացվում է բաղաձայն:

Այն երևույթը, թե ձայնավորը բերանի բաց անցքի, իսկ բաղաձայնը փակ անցքի արդյունքն է, կարելի է իմանալ և հաստատել հետևյալ հասարակ փորձով: — Գնենք մատը բերանի մեջ և հենենք քիմքին. սկսենք արտասանել իրար ետևից ա, ր, օ, ու, է, ի ձայնավորները. կղզանք, որ լեզուն հետզհետե վեր է բարձրանում և ավելի ու ավելի սեղմում մատը. ուրիշ խոսքով՝ բերանի մեջ կազմված անցքը փոքրանում է. երբ հասնենք ի ձայնավորին և լեզուն նրանից ավելի հուպ տանք, կլսենք չ ձայնը, որ բաղաձայն է: Սրանից երևում է, որ մինչև որոշ աստիճանի բաց անցքում հնչված ձայնը ձայնավոր է, այդ բացություն վերջին աստիճանը ի ձայնավորն է, որից ավելի սեղմված անցքը տալիս է բաղաձայն հնչյուն: Նույն փորձը կարելի է կրկնել մատը դնելով երկու շրթունքների միջև և արտասանելով իրար ետևից ա, ր, է, ի, օ, ու ձայնավորները. վերջին ու հնչման ժամանակ շրթունքները բոլորովին մոտենում են իրար, այսինքն՝ բացվածքը բոս կարելվույն նեղ է լինում, որից ավելի սեղմելուց՝ լսվում է այլևս Վ բաղաձայնը: — Այս երկու փորձերը կարելի է կրկնել ուրիշ ձևով. մատը դնելով քիմքին, արտասանել իջի, կամ շրթունքների միջև բռնելով՝ արտասանել ուվու. երկու դեպքում էլ պիտի զգանք, որ ի, ու արտասանած ժամանակ մատը նվազ է ճնշվում քան չ, Վ արտասանած ժամանակ, և որովհետև դիտենք, որ ի, ու ձայնավոր են, իսկ չ, Վ բաղաձայն, դրանից երևում է, որ ձայնավորների արտասանությունը բերանի անցքը որոշ չափով սեղմելու արդյունքն է, իսկ բաղաձայնների արտասանությունը նրանից մի քիչ էլ ավելի սեղմելու արդյունքն է:

Սակայն այս բացատրությունից հետևում է նաև այն, որ ձայնավորը և բաղաձայնը միենույն երևույթի զանազան աստիճաններն են և նրանց միջև մի կտրական սահման չկա: Ծայրերը բոլորովին տարբեր են, այսպես ա, որ ներկայացնում է ամենալայն բացվածքը, բոլորովին տարբեր է ր-ից, որ ներկայացնում է բոլորովին փակ մի անցք. բայց միջին կետերում ձայնավոր և բաղաձայն շփոթվում են իրար հետ. այսպես՝ ֆրանսերեն yeux,

huit, oui բառերի նախաձայնի արտաբերություն միջոցին միաժամանակ լսվում է օդի հոսանքի շփումը, որ հատուկ է բաղաձայններին և այն երանգը, որ հատուկ է i, u, u ձայնավորներին: Այս կարգի ձայնավորները կոչվում են կիսաձայն և բռնում են ձայնավորի և բաղաձայնի միջին տեղը: Միջին դիրք են բռնում նաև l, m, n, r ձայները, որոնք մինչև անգամ որոշ լեզուների մեջ համարվում են ձայնավոր, այսպես են հնդկերենում l և r:

Ձայնների երեք մեծ բաժանմունքներն են ուրեմն՝

1. Ձայնավորներ
2. Կիսաձայններ
3. Բաղաձայններ

Այս մեծ բաժանմունքներից յուրաքանչյուրն ունի իր բաղաձայնի ստորաբաժանումները, համաձայն բնախոսական պայմանների, այսինքն նայած այն բանի, թե ձայնը որպիսի՝ գործարանների միջոցով է արտադրվում:

Ձ Ա Յ Ն Ա Վ ՈՐ Ն Ե Ր

Ձայնավորների երանգի տարբերությունը առաջանում է հո-
ղավորիչ գործարանների ընդունած դիրքից, ուրիշ խոսքով՝ հնչա-
րանի ձևից ու մեծությունից:

Ձայնավորների արտաբերության մասնակցում են հետևյալ
գործարանները.

1. **Կատիկ.** Ձայնավորների արտաբերության ժամանակ սա-
կարող է ընդունել երկու դիրք. կա՛մ բարձրանում է վերև և հենվե-
լով ըմպանի պատերին, բոլորովին ծածկում է քթային անցքը, և
կամ ընդհակառակը մնում է անշարժ բերանի և քթային անցքի մի-
ջև, որով քթային անցքի ճանապարհը մնում է բաց: Առաջին պա-
րագային օդի հոսանքը ստիպված է ամբողջապես անցնել բերա-
նով և այս ձևով արտաբերված ձայնավորները կոչվում են պարզ
կամ բերանային, ինչպես *a, e, i, o, u.* — երկրորդ պարագային
օդի հոսանքը ստիպված է դուրս գալ երկու ճանապարհով, մի մա-
սը՝ քթի խոռոչով, մյուս մասը՝ բերանային խոռոչով. ուրիշ խոսքով
ձևանում է երկու հնչարան: Այս ձևով արտաբերված ձայնավոր-
ները կոչվում են ռնգային, ինչպես *ձ, ֆ, ի, օ, ւ:*

2. **Ստորին ծնոտք,** ինչպես արդեն նկատել ենք, կարող է հե-
ռանալ վերին ծնոտից և ձևացնել զանազան մեծությամբ անկյուն-
ներ: Որքան մեծ է անկյունը, այնքան բաց է ձայնավորը և որքան
փոքր է անկյունը, այնքան փակ է ձայնավորը: Ըստ այսմ ձայնա-
վորները կարող են լինել բաց կամ փակ՝ ո՛չ միայն իրար հետ հա-
մեմատած, այլև յուրաքանչյուրն ինքն իր մեջ: Օրինակ *i* ձայնը

փակ է համեմատությամբ *e-ի*, և *e* ձայնը փակ է համեմատու-
թյամբ *a-ի*, բայց *a* ձայնն էլ կարող է արտասանվել ավելի կամ
պակաս բաց կամ փակ, համաձայն լեզվի ուղուն. այսպես՝ *à, a, â:*

3. **Շրթունքները** կարող են ձևացնել զանազան մեծությամբ
բացվածքներ՝ կլորակ կամ հորիզոնական. երբ ձայնավորի արտա-
բերության ժամանակ շրթունքները ստանում են կլորակ ձև, ձայ-
նավորը կոչվում է կլոր կամ շրթնային. ինչպես *o, u, õ, ü,* իսկ
երբ ստանում են հորիզոնական ձևը բացվածքի ձև, ձայնավորը կոչ-
վում է ոչ-շրթնային, ինչպես *e, i:*

4. **Լեզուն** ունի ամենակարևոր դերը ձայնավորների արտա-
սանության մեջ. նա է, որ տալիս է այն ձևն ու մեծությունը, որ
պետք է առաջ բերելու համար ձայնավորի այս կամ այն երանգը:

Բոլոր ձայնավորների արտաբերության ժամանակ էլ լեզվի
հպումը քիմքին՝ կատարվում է հետևյալ ձևով: Լեզվի եզրերները
գալիս հենվում են քիմքի երկու կողերին, այնպես որ քիմքի կա-
մարը լեզվի գոգավորության հետ միասին կազմում է մի կլորակ
անցք՝ ավելի կամ պակաս նեղությամբ: Այդ անցքը չի տարածվում
ամբողջ քիմքի վրա, ո՛չ էլ լեզվի ամբողջ երկարությամբ, այլ մի-
այն սրա մի մասն է, որ երկու եզրերով հպում է քիմքի մի մասի
կողերին: Այդ հպման կետը կոչվում է ձայնավորի հողավորման
վայրը (*région d'articulation*), որից դուրս քիմքը և լեզուն ոչ մեկ
կետում չեն շոշափում իրար:

Համաձայն այս հողավորման վայրի, ձայնավորները բաժան-
վում են երեք կարգի:

ա) Աջակողմյան կամ ֆմային ձայնավորներ, որոնց ար-
տաբերության ժամանակ լեզվի առաջամասը հպվում է կարծր քիմ-
քին. օրինակ՝ *e, i, õ, ü:*

բ) Հետակողմյան կամ կատկային ձայնավորներ, որոնց ար-
տաբերության ժամանակ լեզուն հետ է քաշվում և հետսակողմով
հպվում է փափուկ քիմքին, որ է կատիկը. օրինակ՝ *o, u:*

գ) Խառն ձայնավորներ, որոնց արտաբերության ժամանակ
լեզվի միջին մասը հպվում է կարծր քիմքի հետսակողմին և կատի-
կի աջակողմին: Այսպես են ը ձայնավորի զանազան ձևերը հայե-
րենում, ռուսերեն *ы* կամ գերմաներենում *gabel*, անգլերենում *sir*
և այլն բառերի մեջ լսված ը ձայնը:

Ըստ Ռուսլոյի և դ-ր Նասիեի քննությունների, լեզվի շար-
ժումները բերանում, զեպի առաջ և զեպի հետ, խաղում են ըն-
դամենը 60 միլիմետրի մեջ. ամենաառաջակողմյան ձայնավորն է


փակ ի, որի արտասանությունն ժամանակ լեզուն ատամնաշարից 20 միլիմետր հեռու է գտնվում, իսկ ամենահեռավորման ձայնավորն է փակ u, որի արտասանությունն ժամանակ լեզուն ատամնաշարից 80 միլիմետր հեռացած է լինում: Միջին հեռավորությունն է 45 միլիմետր ատամներից հեռու, a 50 միլիմետր. 55 միլիմետր. իսկ մյուս գլխավոր ձայնավորներից՝ e 37, ä 26, i 25, í 20, ò 40, ò 37, ò 32, ü 26, ü 23, ò 60, o 65, ò 70, u 75, ú 80: Ինչ վերաբերում է լեզվի բարձրացման դեպի քիմքը, նույն հեղինակները տալիս են հետևյալ թվերը. a 13 միլիմետր հեռավորություն քիմքի և հոգավորման կետի միջև, o 10, ì 10, è 8, e 4,5, é 2,5, ü 3, i պակաս 1-ից, u 8, ò 13, ò 10, ò և ü 3, á 18, ò 12, o 10, ó 9, u 8, ü 6:¹

Յուրաքանչյուր ձայնավորի արտաբերության ժամանակ կա երեք մոմենտ. լարում (tension), կացք (tenue) և էջք (détente): Լարումն այն մոմենտն է, երբ շարժուն գործարանները (լեզու, կատիկ, ծնոտ և շրթունք) իրենց հանգիստ դիրքից դուրս գալով, դիմում են դեպի այն դիրքը, որ պետք է առնեին այսինչ կամ այնինչ ձայնավորը արտաբերելու համար. այս է ձայնավորի պատրաստության բույնը: Կացքը այն մոմենտն է, երբ գործարանները արդեն ընդունած լինելով պատշաճ դիրքը, արտաբերում են ձայնավորը, իսկ էջքը այն պահն է, երբ գործարաններն արդեն արտաբերությունը վերջացրած լինելով, հետ են դառնում և անցնում կա՛մ իրենց նախկին դիրքը, այն է լիակատար հանգիստը, և կա՛մ դիմում հաջորդ ձայնի արտաբերության: Այս երեք մոմենտներից ամենակարևորը երկրորդն է, որ կազմում է իսկական ձայնավորը, և երբ գործարանները կարող են պահել որոշ անողություն. մյուս և երկուսը անցողական ու խուսափուկ են: Տեսականորեն մտածելով, անշուշտ այդ մոմենտներին էլ գործարանները վատնում են որոշ ժամանակ, անցնում են դիրքից դիրք, մինչև հասնում են բուն ցանկացված դիրքը և հետևաբար արտաբերում են բազմաթիվ երկրորդական ձայներ, բայց այդ բոլորն այնքան կարճ և վաղանցուկ են, որ ախանջի համար մնում են աննկատելի:

Ամփոփելով հիշյալ բոլոր պայմանները և հոգավորիչ գործարանների ստացած դիրքը, մարդկային լեզվի ձայնավորները կարելի է դասակարգել ու ներկայացնել հետևյալ պատկերի մեջ, որ մի անհավասարակողմ եռանկյուն է, հորիզոնական XX' և ուղղահայաց YY' առանցքների վրա հաստատված:

¹ Rousselot, Principes, II, 647—648.

Եռանկյան դագաթին հաստատված է a (ա) ձայնը, որ առաջակողմյան և հետսակողմյան ձայնավորների միջև բռնում է միջին դիրք և կարող է ծառայել բոլորի համար իբրև մեկնակետ: Այստեղից սկսելով մինչև աջ կողմի ծայրը շարված են առաջակողմյան



կամ բմային ձայնավորները, մեկը մյուսից ավելի փակ, a-ից մինչև ի. իսկ մինչև ձախ կողի ծայրը շարված են հետսակողմյան կամ կատկային ձայնավորները, նույնպես մեկը մյուսից ավելի փակ, a-ից մինչև u: Միջին գծի վրա գտնվում են ò ձայնավորի զանազան աստիճանները: Աջ կողից մի քիչ դեպի ձախ, երկրորդական գծի վրա շարված են առաջակողմյան կամ բմային ձայնավորների կլոր կամ շրթնային ձևերը, մեկը մյուսից փակ, ò ü: Այսպիսով երևան են գալիս բոլոր ձայնավորների փոխադարձ հարաբերությունները, յուրաքանչյուրի մեջ լեզվի շարժումներն ու շրթունքների բացվածքի մեծությունը: Աջ ու ձախ կողերի վրա շարված ձայնավորներից յուրաքանչյուրը որքան հեռու է ուղղահայաց YY' առանցքից, նշանակում է լեզուն էլ այնքան առաջացած կամ ետ է բաշված միջին a դիրքից, և որքան բարձր է հորիզոնական XX' առանցքից, նշանակում է այնքան էլ բարձրացած է դեպի քիմքը՝ միջին a դիրքից: Վերջապես որքան բարձր է լեզուն, շրթունքներն էլ այնքան ավելի փակ են:

Եռանկյունը կազմված է այնպես, որ կարող է հարմարվել բոլոր լեզուներին և հարստանալ նորանոր ձայնավորներով. այսպես անգլերենը և ֆրանսերենը ունեն a և o ձայնավորների զանազան նրբություններ, որոնք պիտի շարվեն a—o և a—e կողերի զանա-

զան կետերում. Ֆրանսերենն ունի նույնպես օ և ü ձայնավորների զանազան նրբություններ, որոնք պիտի շարվեն a—ö և ö—ü գծերի զանազան միջին կետերում: Վերջապես զանազան լեզուների մեջ կան նույնպես և ռնգային ձայնավորներ, հատկապես Ֆրանսերենում և պորտուգալերենում. դրանց համար էլ կարելի է աջ ու ձախ կողերի կողքին անցկացնել երկրորդական մի-մի գիծ և նրանց վրա համապատասխան ձայնավորի դիմաց դնել իր ռնգայինը:

Գալով երկար ձայնավորներին, սրանք իհարկե առանձին տեսակ չեն կազմում և կարող են նշանակվել յուրաքանչյուր կարճ ձայնավորի կողքին, ինչպես a—ā, o—ō և այլն:

Անցնենք այժմ յուրաքանչյուր ձայնավորի նկարագրության, սկսելով եռանկյան գազաթից և հետևելով աջից ձախ կողերի շարքին:

Առաջին կողի վրա գտնում ենք a. մարդկային բոլոր ձայների ամենապարզ հնչյունն է, կազմում է բոլոր ձայնավորների հիմքը և ամեն լեզվի մեջ էլ կա: Արտասանության ժամանակ բերանը բացվում է չափավոր աստիճանով, շրթունքները, այտերն ու լեզուն բռնում են ազատ դիրք, լեզուն փոված է բերանի հատակում, այնպես որ եզերքներով հպվում է ստորին ատամների շարքին, իսկ հետևի մասը թեթևակի բարձրանալով, երկու կողմից հպվում է կարծր քիմքի ու կատիկի միջասահմանին: Այս է միջակ կամ կանոնավոր a-ի նկարագրությունը, որ և համապատասխանում է մեր լեզվի ա հնչման:

Հետզհետե բարձրանալով, a-ն տալիս է նախ ā. այս ձայնը չունենք հայերենի մեջ, բայց կա Ֆրանսերենում. այսպես, օրինակ, patte, natte և այլն բառերի մեջ: Արտասանության ժամանակ լեզուն մի քիչ ավելի է բարձրանում քան a և մի քիչ էլ ավելի է առաջանում, այնպես որ թեթևակի հպվում է ստորին կտրիչ ատամներին (incisif): Հիպերբորյան գիրիակ լեզվի մեջ կա մի տեսակ a, որի արտաբերման ժամանակ լեզվի ծալը հպվում է ստորին ատամներին: Եռանկյան մեջ այս ձայնը գտնվում է a և ā ձայների միջև:

Ավելի բարձր գտնում ենք ä ձայնավորը, որի արտասանության մեջ լեզուն ավելի առաջացած և բարձր է կանգնած քան ā ձայնի ժամանակ և պակաս քան è. բայց որովհետև այս երկու ձայներն էլ առհասարակ չկան հայերենի մեջ, ուստի բավականանանք ասելով, որ կազմում է a և e ձայների միջին աստիճանը:

ä ձայնը նույնպես գոյություն չունի ոչ հին հայերենի մեջ և ոչ էլ արդի գրական լեզվի մեջ, բայց շատ սովորական է մի խումբ հայերեն բառարաններում, ինչպես են Ղարաբաղի, Շամախիի, Ագուլիսի, Վանի, Տիգրանակերտի, Խարբերդի, Շապին-Գարահիսարի, Համշենի, Կիլիկիայի, Սիրիայի, Մուսա-լեռան, Արաբկիրի, Սերաստիայի, Նիկոմիդիայի, Մարաղայի և Խոյի ու Սալմաստի բարբառներում: Չափազանց առատ է Տիգրանակերտի բարբառում. Վանա բարբառում, ուր որ վ ձայնին հաջորդում է ա, անպատճառ հետևում է ä: Անձանոթ չէ նաև Կարինի բարբառին, ուր գրտնըվում է սակավաթիվ օրինակներով. բոլորովին բացակայում է Երևանի, Տփղիսի, Պոլսի, Ռոտոսթոյի, Ղրիմի և Նոր Նախիջևանի ու Ալստրո-Հունգարիայի բարբառներում:

Եվրոպական լեզուներից անգլերենն է, որ առատորեն ունի այս ձայնը, ինչպես man, pat և այլն բառերի մեջ: Դանիական բարբառներն էլ a-ի փոխարեն հնչում են ä: Ուրիշ լեզուներից ամերիկյան Կիրիբի լեզուն ունի ä (Cobelentz, 5): Ֆրանսերենի և գերմաներենի այդ ձայնը լսում են é, որ նրանից մի քիչ ավելի բարձր է: Մեր շրջակա ազգերից ռուսերենը, վրացերենը և տաճկերենը դուրկ են այդ ձայնից, իսկ քրդերենը, պարսկերենը, Ատրպատականի թուրքերենը, ինչպես և գավառական տաճկերենը լի են այդ ձայնով: Ըստ այսմ էլ մեր բարբառներից նրանք, որ ապրում են ä շունեցող լեզուների շրջանում, դուրկ են մնացել այդ ձայնից, ինչպես Տփղիսի, Պոլսի և Նոր-Նախիջևանի բարբառները, իսկ նրանք, որ մեծապես ազդված են ä ունեցող լեզուներով, գիտեն այդ ձայնը: Սրանց մեջ առաջին տեղն է բռնում Տիգրանակերտի բարբառը, ուր հայերենի գրեթե բոլոր ա-երը դարձած են ä: Նրանից հետո գալիս են Մարաղայի, Շամախիի և Ղարաբաղի բարբառները, ինչպես և Փոքր Ասիայի հայերեն բարբառները: Կարինի բարբառում գտնվում է միայն այն բառերի մեջ, որոնք փոխառյալ են թուրքերենից, որից հետևում է, թե ä ձայնը բնիկ հայերեն չէ, այլ հետո մտած փոխառության: Երևանի բարբառը, որ ավելի քիչ է ենթարկվել թուրքապատմության, չունի այդ ձայնը, թեև տեղացի հայերը, որ գիտեն թուրքերեն, թուրքերեն խոսելիս կարողանում են հնչել ä: Այս կողմից հետաքրքրական է Նոր-Ջուղայի բարբառը, ուր տեղի հայերը իրենց բնիկ բարբառի մեջ չունենալով a ձայնը, պարսկերեն խոսելիս ամեն ä դարձնում են a, որով իրենց արտասանության այդ սխալը աչքի է խիստ պարսիկների մեջ: Այժմ նոր սերունդն արդեն վարժվելով այդ ձայնին, իր ձայնական գրության մեջ մըտ-

ցրել է նաև օ ձայնավորը, բայց միմիայն պարսկերենից փոխառյալ բառերի համար. մինչդեռ հին սերունդը շարունակում է նախկին վիճակը: Այսպես, օրինակի համար՝ bāxt «բախտ», bālki «թերևս», gār «մանանա», bās «բավական», piškaš «պարզև» և այլն պարսկերեն բառերը, որոնք փոխառություններ մտած են նաև նոր-Ջուղայի հայերեն բարբառի մեջ, հին սերունդը հնչում է բախա, բալի, գագ, բասս ա (ինձ բավական է), փիշխաշ, իսկ նոր սերունդը հնչում է բախա, բալի, գագ, բասս ա, փիշխաշ և այլն: Ո՛ր լեզվի կամ բարբառի մեջ որ այս ձայնը չկա, խոսողները հարկավոր դեպքում (հատկապես փոխառությունների մեջ) փոխանակում են անմիջապես մոտավոր ձայներով. այսպես հայերենում ա, տաճկերենում է, ֆրանսերենում é:

Հին լեզուների մեջ արդյոք կա՞ր օ ձայնավորը: Այս մասին մի լավ նկատողություն ունի Delitzsch, Kleine Sumerische Sprachlehre, Leipzig, 1914, ուր 3-րդ էջում ասում է, թե որովհետև սումերերեն արձանագրությունների մեջ շատ հաճախ օ ձայնավորը գրվում է e, ուրեմն և այդ ձայնը հնչվում էր օ, ինչպես երբայիերեն, արաբերեն, անգլերեն և այլն:

Հին լեզուներից սանսկրիտը չունի օ, բայց նոր հնդկական լեզուներից, օրինակ, սինհալի լեզուն ունի օ (Geiger, 11):

Օ ձայնից վերև, եռանկյան վրա ունենք e ձայնի երեք երանգները (բաց è, միջակ e և փակ é): Յուրաքանչյուրի մեջ լեզուն հետզհետե ավելի է առաջանում և ավելի բարձրանում: Քիչ լեզու կա, որ e ձայնավորի այս երեք երանգներն էլ ունենա. ամենից լավ է ֆրանսերենը, որ որոշ կերպով գիտե դանազանել è, e և é. օրինակ, père, mère, café: Այսպես է նաև բրետոներենը, որ գիտե դանազանել բաց, միջակ և փակ e-ի երեք աստիճանները. վերջինը սակայն այնպես փակ է, որ Vannes գավառում գրեթե i է լսվում (Guillome, Gramm. fr.-bret, 6):

Յրանսերենին նման է գերմաներենը, որ ունի փակ é (ինչպես Réde, Géhen), միջակ e (ինչպես Bett, nett), իսկ բաց è կարելի է գտնել որոշ վայրերում միայն (ինչպես Bär, Ä hre բառերի մեջ):

Այսպես է նաև դանիերենը:

Իր վերոհիշյալ աշխատության մեջ Delitzsch (էջ 3) գտնում է, որ սումերերենի e ձայնը փակ էր և մոտենում էր i ձայնավորին, ըստ որում արձանագրությունների մեջ e ձայնավորն էլ հաճախ գրվում է i:

e ձայնի աստիճանները (è, é) սովորություն է նշանակել

ֆրանսերենում, բայց մանավանդ կատարան լեզվում, ուր é, è, ó օ ձայնների տարբերությունը բոլորովին տարբեր բառեր են ստացվում, օրինակ, be «գառնուկ», be «լավ», te «թե», té «ա՛ն, վերցրո՛ւ», dona «տիկին», dona «տալիս է» (Huber, 4):

Հունգարերենը ունի è, որ շատ ավելի բաց է, քան ֆրանսերեն è-ն և երկրորդ è, որ գտնվում է ֆրանսերեն è և é ձայների միջև (Sauvageot, BSL, 34, № 102, էջ 117):

Անգլերենը ունի միջակ e (ինչպես bed, net) և մի տեսակ բաց è (ինչպես bear, fair, there), որ սակայն ավելի բաց է քան ֆրանսերեն è, ուստի եռանկյան մեջ կարող է գրվել ä և è ձայների միջև:

Սրա ճիշտ հակառակը, հրեական ժարգոնի մեջ գտնվում է մի տեսակ շատ փակ é, որ գրեթե մոտենում է i ձայնին և եռանկյան մեջ կարող է գրվել e և i ձայների միջև:

Բանտու լեզուների մեջ (օրինակ լաոնդե լեզվում) կա մի տեսակ é, որ այնքան փակ է, որ գծվար է ասել e ձայնն է, թե i (Nekes, 6):

Ամերիկյան չիբչա (Chibcha) լեզվի մեջ կա մի ձայն, որ միջինն է e և i ձայների, այնպես որ Ուրի Կոլչես գիտնականը, որ գրել է այս լեզվի քերականությունը, չի կարողացել որոշել, թե ի՞նչպես արտահայտե այս ձայնը և գրել է y. «es una que ni es de E ni de I, sino un medie entre les dos, la cual escribimos con 'la y griega» (E. Uricoechea, Gramatica de la lingua Chibcha, Paris, 1871, 2):

Յիլիպյան տագալոգ լեզվի մեջ չկա ոչ մի տեսակ e և այս լեզուն գիտի միայն 4 ձայնավոր՝ a, i, u, o (Blake, 5):

Ճավայերենը ճանաչում է երկու տեսակ e, այն է բաց è և փակ é, որոնց համար սակայն առանձին տառեր չունի. անձանոթ է իրեն միջակ e (Bohatta. Gramm. jav., 13):

Աննամերենը ունի բաց և փակ e, բայց միջին աստիճանը չունի (Dirr., Gramm. annam., 2):

Հայերենի մեջ e ձայնավորի երանգները քիչ են. հին հայերենը ուներ երկու տեսակ e, որոնցից մեկը ալբուրենի մեջ նշանակված է b ձևով, մյուսը ք ձևով: Թեև այս երկուսի հնչական տարբերությունը մեզ անհայտ է, բայց քննությունները ցույց են տալիս, որ b բաց è էր, ք փակ é: Ուրեմն միջին երանգը պա-

1 Անառլաե, Հայոց գրերը, 299—303.

կասում էր: Արդի գրական լեզվի, ինչպես նաև բարբառների ա-
մենամեծ մասի մեջ, կա միայն մի տեսակ *e*, որ ներկայացնում
է միջակ *e*, այսինքն՝ գրաբարի *ե* և *է* ձայների միջին աստիճա-
նը, ինչ որ չկար հին հայերենում: Բայց բարբառների մեջ կարե-
լի է գտնել նաև *e* ձայնի ուրիշ աստիճաններ, այսպես Ասլանքե-
կի բարբառում կա շատ բաց *è* և միջակ *e*¹: Թերևս ուրիշ տեղեր
գտնվի *e* ձայնի փակ ձևը:

Ի ձայնի համար եռանկյան մեջ դրված է միայն երկու
աստիճան, բայց զանազան լեզուներ ցույց են տալիս մինչև չորս
աստիճան. այսպես՝ շատ բաց *i*, բաց *i*, միջակ *i* և փակ *i*: Այս
բոլորի մեջ լեզուն հետզհետե ավելի առաջացած ու բարձրացած
գիրք է ստանում, քան *e* ձայնավորի համար, երկու ծնոտները
մոտենում են իրար և շրթունքները երկար հորիզոնական ձևով
բացվում: Փակ *i* ներկայացնում է մարդկային ձայնի ամենասուր
աստիճանը, երբ լեզուն ուժգին կպած է քիմքին, ծնոտը և ա-
տամները բոլորովին մոտեցած են իրար, և որից վերև էլ ձայն
չկա:

Չորս աստիճաններից առաջինը գիտի միայն անգլերենը և
կոչվում է «կարճ *i*» ինչպես *bit*, *tip*, *lick* և այլն բառերի մեջ:
Երկրորդը, բաց *i*, գտնվում է գերմաներենի մեջ, բաղաձայննե-
րից առաջ, ինչպես *bitte*, *hippe* և այլն: Երրորդը, միջակ *i* գտնու-
վում է ֆրանսերենի մեջ՝ անշեշտ վանկերում, ինչպես *filer*, *mi-
roir* և այլն: Այս է նաև մեր հայերենի ձայնը: Վերջապես չոր-
րորդը, փակ *i*, գտնվում է ֆրանսերենի մեջ՝ շեշտյալ
վանկերում (ինչպես *si*, *mari* և այլն) և գերմաներենի մեջ, ուր
կրում է «երկար *i*» անունը (ինչպես *sie*, *wie*, *lieben*):

Հայերենը թե՛ հին լեզվի և թե՛ նոր լեզվի մեջ ունի միայն
մի տեսակ *i*, որ միջակ *i*-ի աստիճանն է. թվում է սակայն, որ
Մարաղալի բարբառում ունի երկրորդ մեջ վերջին ի ձայնը
փակ *i* է²:

Եռանկյան երկրորդ կողմ հատկացված է առաջակողմյան կամ
քմային ձայնավորների կլոր կամ շրթնային տեսակներին: Այս
կարգի ձայնավորների արտասանությունը կատարվում է հետևյալ
ձևով. լեզուն ստանում է ճիշտ նույն դիրքը, ինչ որ քմային ձայնա-
վորների համար, միայն թե միաժամանակ շրթունքներն էլ կլորակ

ձև են առնում. ուրեմն երկու խմբերի արտասանության տարբերու-
թյունը կայանում է միմիայն շրթունքների ձևի մեջ: Այս բանը կա-
րելի է իմանալ շատ հասարակ փորձով. — արտասանենք նախ *e*
ձայնը և հետո առանց շունչը ընդհատելու անցնենք *ö* ձայնին. պի-
տի տեսնենք, որ լեզուն ո՛չ մի շարժում չի կատարում, ուրիշ խոս-
քով մնում է միևնույն դիրքի մեջ: Նույնը պիտի տեսնենք նաև, երբ
ի ձայնի արտասանությունից անցնենք *ü* -ի արտասանության կամ
նաև հակառակը՝ *ü* ձայնից *i* և *ö* ձայնից՝ *e*:

Այս սահմանից հետևում է այն, որ ի՛նչքան քմային ձայ-
նավոր կա, ուրեմն այնքան էլ շրթնային ձայնավոր կա: Եռան-
կյան վրա մենք նշանակել ենք միայն *ö* և *ü*, որոնք նույն շար-
քի երկու ամենակարևոր ներկայացուցիչներն են: Բայց զանազան
լեզուների մեջ կարելի է գտնել լուրջ քանջուրի համար չորս տե-
սակ. այսպես՝

Բաց *ö*, որ գտնում ենք ֆրանսերենի մեջ շեշտյալ վանկում,
բաղաձայնից առաջ. ինչպես *fleur*, *peur*, *beurre* և այլն: Ար-
տասանության ժամանակ լեզուն ստանում է մոտավորապես այն
դիրքը, ինչ որ *a* ձայնավորի համար:

Միջակ *ö*, որ գտնում ենք ֆրանսերեն *neuf*, *œil* և այլն
բառերի մեջ. լեզուն բռնում է *è* և *a* ձայների միջին դիրքը: Փակ
ö, որ գտնում ենք գերմաներեն *völker*, *götter*, *öffne* և այլն
բառերի և ֆրանսերեն *le* որոշիչ հոդի արտասանության մեջ:

Շատ փակ *ö*, որ գտնում ենք ֆրանսերեն *deux*, *noeud*,
creux և այլն բառերի արտասանության մեջ. լեզվի դիրքը հա-
մապատասխանում է *è* ձայնավորին (և ոչ թե *é*)¹: Նույն ձայնն է
նաև գերմաներեն *schön*, *böse* և այլն բառերի մեջ:

Բաց և փակ *ö* գտնում ենք նաև զանիերենում, ուր ունի և
առանձին տառանիշ, այսպես *ö* բաց է, *ø* փակ:

Շվեդերենում կան փակ, բաց և շատ բաց *ö* ձայները (*Poes-
tior*, *Sch. wed.* 15):

Միջակ *ü*, որ գտնում ենք ֆրանսերեն *bureau*, *mulet* և
այլն բառերի մեջ, այսինքն անշեշտ վանկերում. լեզուն ստանում
է փակ *é* ձայնի դիրքը:

Փակ *ü* գտնում ենք ֆրանսերեն շեշտյալ վանկերի մեջ,
ուր լեզուն ստանում է շատ փակ *é* ձայնի դիրքը: Նույնը կա
նաև գերմաներենում:

¹ Աճառյան, Քննություն Ասլանքեկի բարբառի:

² Աճառյան, Քննություն Մարաղալի բարբառի:

¹ Roulet, *Elémentes de phonétique général*, 1910, p. 96.

Շատ փակ *ü*, որ գտնվում է ֆրանսերենի և գերմաներենի մեջ. լեզուն ստանում է նույն դիրքը, ինչ որ *i* ձայնի համար, ինչպես *über, kühn* և այլն:

Քիչ լեզու կա, որ կլոր քմային ձայնավորներ ունենա. հին լեզուներից շատերը, ինչպես սանսկրիտը, զենդերենը, հին պարսկերենը և այլն չունեն այդ ձայները: Արդի եվրոպական լեզուներից շատերը նույնպես չգիտեն, ինչպես անգլերենը, իտալերենը, ռուսերենը և այլն: Առատորեն գտնվում են ֆրանսերենի, գանիերենի, շվեդերենի և գերմաներենի մեջ: Ուրիշներ ունեն նրանցից միայն մի տեսակը. այսպես, հին հունարենը ունի միայն *ü* (ինչպես *γουνή*), լատիներենը միայն *ö* (ինչպես *poena*): Մեր շրջակա ազգերից վրացերենն ու պարսկերենը ոչ *ü* ունեն և ոչ *ö*. բայց քրդերենը, ադրբեջաներենը և տաճկերենը ունեն երկու ձայներն էլ: Աննամերենը գիտի թե՛ *ö* և թե՛ *ü* (*Dirr, Gram. annam., 2*): Մոնղոլական բարբառները գիտեն երկուսի էլ բաց և փակ գանազան ձևերը (*Попе, Алар. говор., 64*): Օստյակերենն էլ ունի *ö*, *ü* (*Castren, 1*):

Դեկտր իր վերոհիշյալ աշխատության մեջ (*Kleine Sumerische Sprachlehre, Leipzig, 1914*), 4-րդ էջում նկատում է, թե որովհետև *e* ձայնավորը սումերական արձանագրությանց մեջ հաճախ գրվում է *u*, ինչպես և *u* հաճախ գրվում է *i*, ուստի պետք է ենթադրել, թե սումերերենը ունի *ö* և *ü* հնչումները, և այդ սխալագիր գրությունները նրանց ներկայացուցիչներն են:

Հին հայերենը վրացերենի ու պարսկերենի պես չունի ոչ *ü* և ոչ *ö*: Արդի բարբառներից շատերը կա՛մ անկախ զգացմամբ և կա՛մ թուրքերենից փոխառությամբ ձևեր են բերել *ü* և *ö* ձայները՝ միջակ աստիճանով: Այսպես են Շամախիի, Ղարաբաղի, Ագուլիսի, ինչպես և Պարսկաստանի ու Տաճկաստանի բարբառները. բայց Տփղիսի և Երևանի բարբառներում գոյություն չունեն. հարկավոր զեպքում տեղացիք այդ ձայնավորները փոխարինում են *yu* և *yo* ձայնախմբերով:

Նոր գրական լեզուն այս կողմից ներկայացնում է երկու տեսակ արտասանություն. ուր որ բարբառներն ունեն *ü* և *ö* ձայնավորները, նույն տեղերում գրական լեզվի մեջ էլ կա այդ արտասանությունը. առաջինը հայերեն և օտար բառերի մեջ, երկրորդը միայն օտար անունների մեջ. ընդհակառակը, ուր որ բարբառները զուրկ են այդ ձայնավորներից, նույն տեղերում էլ գրական լեզուն արտասանում է *yu, yo*: Այսպես *áru*, *áru* (*áru*,

սլուն), *Göthe* բառերը արտասանվում են Պոլիս, կարին, Ախալ-ցըխա, Ղարաբաղ, Քավրիզ և այլն *ü, ö* ձայներով, իսկ Երևան, Տփղիս և այլն *yu, yo* վանկերով, որ համապատասխանում է ճիշտ առական արտասանության:

Նուանկյան երրորդ գիծը հատկացված է խառն ձայնավորներին, որոնց արտասանության ժամանակ լեզվի միջին մասը հպվում է կարծր քիմքի և կառիկի սահմանին. այսպիսով կազմվում է երկու հնչարան. մեկը բերանի հետևի կողմում, մյուսը առաջի կողմում: Մենք նշանակել ենք այդ գծի վրա երեք աստիճան, որոնցից միջինը մեր գրական լեզվի մեջ ծանոթ ը ձայնն է, որ կա՛նաև գրաբարի և արդի բոլոր բարբառների մեջ: Ուրիշ բարբառներ ներկայացնում են երկու ուրիշ աստիճաններ էլ. առաջինը ավելի բաց քան *ը*, երկրորդը ավելի բաց: Բաց *ը*, որ կարելի է նշանակել *ը* ձևով, գտնվում է Ջեյթունի և Հաճընի բարբառում և իր արտասանությամբ բռնում է *ը* և ա ձայնավորների միջին տեղը. օրինակ, Ջեյթունի բարբառով մը՛ս «միս», զը՛նազ «կնիկ», Հաճընի բարբառով զըննիլ «գտնել», բըբըսիլ «բորբոսնել» և այլն:

Փակ *ը*, որ կարելի է նշանակել *ը՛*, գտնվում է Մարաղայի բարբառում և իր արտասանության փակությամբ նման է առական *ե* ձայնավորին:

Վիտենցն իր գտնական մեծ քերականության սկզբում ասում է, թե սանսկրիտի ա տառը հնդիկները հնչում են *ը*, իսկ եվրոպացիք գրում են միշտ *a*: Ստիվենսոնը ևս իր մարաթի քերականության մեջ (*Bombay, 1868, 4*) ասում է, թե առաջին տառի հնչումը, եթե կարճ է, անգլերեն *but* բառի ձայնավորի նման է (ուստի իբր *ը*), իսկ երկարը դնում է ա. նաև թե եվրոպացիք չեն տարբերում այս երկու հնչյունները (*ə* և *a*), որով և ինքը գրում է *Murathec*, մինչ արիշ եվրոպացիք ընդհանրապես գրում են *Marathi*: Ըստ այսմ հնդիկների այն սովորությունը, որով *a* տառը առանձին չեն գրում, զուգորդվում է մեր *ը* ձայնավորը չգրելու սովորություն:

Հին լեզուներից երբայերենը առատորեն ունի *ə* ձայնը, որ կոչվում է *šewā*, և այս բառը ընդունված է նաև ձայնարանություն մեջ՝ նշանակելու համար *ə* ձայնը:

Եվրոպական լեզուների մեջ լատինական խումբը չունի այս կարգի ձայնավորներ, բացի առաջիններից, որ հարուստ է *ə* ձայնով. գրվում է *ä*. երեկ բրբառն լեզվի մեջ էլ կա միջակ *ə* ձայնը

(տե՛ս Guillaume, Gramm. fr.-bret., 6): Ռուսերենի մեջ կա միայն նույն ձայնավորի ամենափակ աստիճանը (Ե), որ գտնվում է նաև սլավոններենում (ուր գրվում է ѣ, і ձևով), լեհերենում և չեխերենում:

Նույնը գործնալ կա չավաշերենում (Ашмарин, Матер. 7)

Չիլիի առկա լեզվի մեջ կա մի ձայնավոր, որ Գրաստերին (էջ 11) նշանակում է u ձևով և նկարագրում է հետևյալ ձևով. շրթունքները բանալ, ներքեի առամները վերինների աակ զրած սեղմել և այս գիրքով հնչել ա: Հենց հեղինակի վկայությունը, «երեի թուրքերենը կամ ուսերենը էլ ձայնին նման է»:

Սուգանական շիլլակ լեզուն էլ ունի ը ձայնավորը, որ գրծվարություն է նկարագրում ուսումնասիրողը (Westermann, էջ 2):

Ռուսական ցիգանների լեզվում կա մի տեսակ ձայնավոր, որ ուսումնասիրողը (Сергиевский, 10) նկարագրում է այսպես. «Սա մի տեսակ e է, սովորական e-ից տարբեր, հնչվում է բերնի խորքում և նման է ուսական Ե-ին»: Անշուշտ պետք է հասկանալ թ ը:

Գերմաներենը ունի մի տեսակ թ, որ բառավերջի անշեշտ e տառի հնչումն է (ինչպես Gabe, alle) և մոտենում է մեր ը ձայնավորին: Անգլերենը ունի երեք աստիճան ը. այն է 1. բաց ը, որ գտնվում է շեշտյալ վանկի մեջ, 2. բաղաձայնից առաջ (օրինակ՝ sir, bird). 2. միջակ ը, որ գտնվում է անշեշտ վանկում. ինչպես better, murmur և այլն. 3. փակ ը՛, որ գրեթե նույնն է ուսական Ե ձայնի հետ. ինչպես pretty, pity բառերի վերջնաձայն y: Հիպերբորյան գիլիակ լեզվի մեջ կա մի տեսակ թ, որ նման է ուսերեն Ե-ին, բայց արտասանվում է բերանն ավելի բաց, ծրնոտն առաջ և ստորին շրթունքը իջեցնելով:

Կորսակովը (էջ 5) նիմիլան կամ կորյակ լեզվի մեջ գտնում է երկու տեսակ Ե, մեկը նման ուսական Ե-ին. իսկ մյուսը սրանից ավելի բաց, որ «բռնում է a-ի և Ե-ի միջին տեղը» (ուրեմն նման Չիլիի բարբառին):

Թվում է, թե նույն ը ձայնը (գուցե տարբեր երանգով և երկար), գտնվում է նաև չուքչի լեզվում, որ Բոգորազը (տե՛ս Boas, II, 643) գրում է ձ ձևով և նկարագրում է այսպես. «Երկար և խուլ ձայնավոր, երբ բերանալին խոռոչի բոլոր միանները հանգիստ գրություն մեջ են, քթի հետևի ծակերը փակ, առամներն ու շրթունքները թեթևակի բացված»: Նույնը կարճ և փակ, ուսական Ե ձայնի նման, գրում է ü (տե՛ս անդ):

Ճավայերենը ունի մի տեսակ թ, որ հաճախ շփոթվում է

a ձայնավորի հետ և հավանաբար Չիլիի բարբառի ը ձայնին է համապատասխանում (Bohatta, Gramm. jav, 13): Չինարենում կա երկու տեսակ թ, որ տառագարծում են ք, ք (նշանը երկարություն համար չէ):

Համ Վիտենիլի (Ind. Gram., § 21,) սանսկրիտի կարճ a ձայնըն էլ ունի ը հնչումը Հնդկաստանում, որ սակայն եվրոպացի ուսումնականները չեն ընդունած: Դրավիդյան տալու լեզուն ունի ը (Brigel, 1):

Մոնղոլների մեջ էլ կա շատ թ. շատ դեպքեր կան, որ գրական մոնղոլերենը ունի e, o կամ a, իսկ ժողովրդական լեզուն գործեր է թ հատկապես անշեշտ լինելու դեպքում կամ արագ արտասանություն ժամանակ:

Մեր հարևան լեզուներից վրացերենը չունի ը: Մյուս լեզուները, քրդերեն, թուրքերեն, ինչպես նաև Կովկասյան զանազան լեզուները ունեն առատորեն ը ձայնը. կան բառեր, որոնց բոլոր վանկերը թ ձայնավորից են կազմված, ինչպես Արմավիրի չերքեզերենով mæpɾæðæp «թանաքաման» կարարդիներենով səhatlækt-xətɪ «վավերաթուղթ», թուրքերենով qərdərdəqəməzə «մեր կոարել ավածը», qəzələyəqən qərməzələqənə qəzərdə «հոնի կարմրությունը սաստկացրեց» և այլն:

Օսեթերենում այս ձայնը գրվում է i:

Հայերենի ը ձայնի առանձնահատկությունն այն է, որ նա բնավ չի՝ կարող շեշտ ստանալ. այսպես էր գոնե հին հայերենի մեջ, որի հետևանքով նաև արդի գրական հայերենում. օրինակ՝ հացեր, հացերի՛, բայց հացե՛րը: Սակայն բարբառները շատ դեպքում ունեն շեշտյալ ը՛. ինչպես՝ Պոլսի բարբառով բացասականների մեջ՝ չը՛ կրեհար, չը՛ տանի, չը՛ պիտի տանիմ, սաստկականների մեջ՝ կը՛ս-կըլօր: Ուրիշ բարբառներում կան նաև արմատական ձևեր, ինչպես Շամախու բարբառով՝ Մըզըկը՛քը շըռըռ-քըռը՛որ բսկըսվեց (11 ը իրար ետևից, երկուսը շեշտյալ):

Կան լեզուներ, որոնք զիտեն խառն ձայնավորի կլոր ձևերը, որոնց արտասանության ժամանակ լեզուն պահում է վերև նկարագրված դիրքը, բայց միևնույն ժամանակ շրթունքներն էլ կլորակ ձև են ստանում: Այսպես անգլերենի մեջ կան բաց թ ձայնավորի և փակ թ ձայնավորի շրթնալին ձևերը. առաջինը պատահում է շեշտյալ վանկի մեջ b, p, m բաղաձայններից հետո (ինչպես bird բառի մեջ, գոնե ոմանց արտասանությամբ), երկրորդը՝ անշեշտ

վանկի մեջ: Ինչպես July, value բառերի u ասոր: նույնը կա նաև շվեդերենի մեջ: Ինչպես՝ hus "տուն" բառի մեջ: Գերմաներենի մեջ էլ շրթնային ձայնավորներից հետո միջակ Ձ արտասանվում է կրոր շրթունքներով, ինչպես schule, kohle:

Եռանկյան վերջին գիծը ներկայացնում է կատկային ձայնավորների շարքը: Այս ձայնավորները բնականաբար կարող էին արտասանվել թե՛ բաց և թե՛ կլորակ շրթունքներով, ինչպես բմայինները: Բայց բոլոր լեզուների մեջ էլ առհասարակ կատկային ձայնավորները լինում են միայն կլորակ ձևով:

Սկսելով a գաղաթից, առաջին աստիճանը ներկայացնում է ä, որ a-ի և բաց ò ձայնավորի միջին աստիճանն է. այս ձայնը գտնում ենք հատկապես անգլերենի մեջ, ինչպես call, caught Lord և այլն բառերում: Շվեդերենում կա և գրվում է ä: նույնը կա նաև դանիերենում, որ գրվում է aa կամ ä (հին կամ նոր ուղղագրությամբ): Հունգարերենի մեջ էլ կարճ a ձայնը հնչվում է իբր ä: Բավական առատորեն գտնվում է ջավայերենում և այլն: Հինդուստանի լեզվի մեջ վանկի վերջի a առհասարակ արտասանվում է իբր ä (Bonnerjia, Gramm. hindi, 2):

Հայերենը այսպիսի ձայնավոր չունի. բայց Վանի բարբառը գործ է ածում շատ անգամ, որ գրեթե ամեն շեշտյալ a և թե՛ չի վերածված ä-ի, հնչվում է իբր ä: Կարելի է գտնել նաև այս ձայնավորի ավելի բաց և ավելի փակ աստիճանները. այսպես ավելի բաց աստիճանը գտնում ենք ֆրանսերենի մեջ, իսկ ավելի փակ աստիճանը անգլերեն dog, not, top և այլն բառերի մեջ, որոնց միջին ձայնավորը ներկայացնում են յ ձևով (կիսատ օ):

Ավելի վերև գտնում ենք օ ձայնը, որ ունի երեք աստիճան. բաց ò, միջակ օ և փակ ó. բաց ò գտնում ենք ֆրանսերենում շեշտի տակ՝ r բաղաձայնից առաջ, ինչպես՝ nord, porte և այլն բառերի մեջ. միջակ օ գտնում ենք ֆրանսերենի և գերմաներենի մեջ, ինչպես ֆրանսերեն choc, homme, police, գերմաներեն Gott, Sommer, Sonne և այլն. փակ ó գտնում ենք նույնպես ֆրանսերենի և գերմաներենի մեջ, ինչպես՝ ֆրանսերեն Beau, Figaro, գերմաներեն Sohn, Kohle և այլն:

Աֆրիկյան դահոմե կամ ֆոնգհե լեզուն ունի այնքան փակ ó, որ գրեթե u է լսվում (Butavand, 6):

Կան լեզուներ, որոնք չունեն օ ձայնավորը. այսպես է արաբերենը, որ գիտև միայն երեք ձայնավոր՝ a, i, u. ըստ իս լսալիսների լեզուն էլ չունի օ, այլ միայն u. ինչպես փորձել եմ ա-

պացուցել իմ մի հոդվածում, ստված "Հանդէս ամսօրեայ", 1907, էջ 93—94 ("Պալդերենը օ ունե՞ր"): Այսօր էլ առսերենը թեև գիտի շեշտի տակ օ, բայց շեշտից առաջ գտնված բոլոր օ-երը հնչում են a, իսկ շեշտից հետո եղած օ-երն էլ թույլ հնչումով, իբր ò. այսպես օ՝ КОЛО, МЫЛО, лаборатория և այլն:

Բանուու լեզուների մեջ կա մի տեսակ օ, որ այնքան փակ է, որ լսողը դժվարանում է որոշել օ՞ է լսում թե u: Գրեթե նույն բանն է նաև շվեդերենի, դանիերենի և առհասարակ հյուսիսային լեզուների փակ օ ձայնը (Poestion, Dän, 12, Schwed, 10):

Հայերենը չունի օ ձայնավորի զանազան աստիճաններ. թե՛ գրաբարի, թե՛ աշխարհաբարի և թե՛ բարբառների մեջ կա միայն մի տեսակ օ, որ անշուշտ վերոգրյալներից համապատասխանում է միջակին: Եթե միջին դարի հայերենում ունեինք երկու տեսակ օ (n և o), տառի տարբերությունը պետք չէ շփոթեցնե մեզ, դրանցից առաջինը այն ժամանակի արտասանությամբ երկբարբառային uօ էր, իսկ երկրորդը միայն օ, որ և համապատասխանում էր եվրոպական օ-ին: Եթե n տառը հնչված լիներ օ, հայերը պետք չպիտի ունենային եվրոպական այբուբենից օ տառը փոխ առնելու:

Իմ «Հայոց լեզվի պատմության» Բ հատորում (240) խոսված է հին հայոց n և ա ձայների մասին, որոնց համար շատերը սխալ կարծիք ունեն: Մեսրոպյան շրջանում n հնչվում էր միշտ և ամեն տեղ օ, իսկ ա հնչվում էր au (երկբարբառ) և ոչ բնավ օ: Ժամանակ անցնելով, գրաբարի n-ն դարձավ uօ (երկբարբառ), իսկ ա դարձավ օ. ուստի հայերն ստիպվեցին պահել n=uօ, իսկ օ-ի համար փոխ առնել հունական օ տառը՝ նույն հնչումով:

Օ ձայնը պակասում է սումերերենի, արաբերենի և ասորերենի մեջ:

Աֆրիկյան նիամ-նիամ լեզուն, բացի օ, u և ü ձայնավորներից, ունի նաև մի ուրիշ ձայն, որ գտնվում է օ-ի և u-ի միջև (Lagae, 70):

Օ հնչյունից վերև գտնում ենք u, որի համար ունենք նույնպես երեք աստիճան. բաց ü, միջակ u և փակ ü. առաջինը գրանում ենք գերմաներենի և անգլերենի մեջ, ինչպես գերմաներեն Hund, Kuss, անգլերեն put, foot և այլն. ֆրանսերենի մեջ չկա: Միջակ u գտնում ենք ֆրանսերենում, անշեշտ վանկերի մեջ. ինչպես couper, sourire և այլն. փակ ü գտնում ենք ֆրանսերենի և գերմաներենի մեջ, շեշտյալ վանկերում, ինչպես ֆրանսերեն loup, poule, գերմաներեն du, gut, Huhn և այլն: Կատկային ձայ-

նավորների ամենափակ աստիճանն է, որի ժամանակ լեզուն բռնում է ամենաբարձր դիրքը և քաշված է բոլորովին հետ, շրթթունքները նետված են դեպի առաջ և ձեացնում են ամենափոքրիկ բացվածքը, իսկ լեզվի և շրթունքների մկանները գտնվում են ամենալարված աստիճանում:

Հայերենի մեջ, ինչպես օ, նույնպես և u ունի միայն մի աստիճան, թե՛ գրաբարի, թե՛ աշխարհաբարի և թե՛ բարբառների մեջ, որ համապատասխանում է վերոհիշյալներից միջակ u աստիճանին:

Ասացինք, թե կատկային ձայնավորները բնականաբար կարող էին հնչվել թե՛ կլորացած և թե՛ շրթունքներով, բայց թե առհասարակ լեզուների մեջ ընդունված է միայն շրթնային ձևը: Սակայն անգլերենում պատահում է և հորիզոնական ձևը. այսպես nut, tub, come բառերի մեջ ձայնավորը հնչվում է միջին օ ձևով, բայց առանց շրթունքները կլորացնելու, որով թողնում է a ձայնավորի տպավորությունը: Ամերիկայում dog, not, top և այլն բառերի օ ձայնավորը շատերն արտասանում են նույնպես առանց շրթունքները կլորացնելու, որով ստացվում է դարձյալ a-ի մոտիկ տպավորություն, Ավստրալիայի Կամիլարոյ լեզվում a հնչումը շփոթվում է u հնչման հետ (Ridley, 4): Ճապոներեն լեզվի մեջ u արտասանվում է առանց շրթունքները կլորացնելու, պահելով միայն մի նեղ ձեղքվածք (Les langues du monde, 249):

Այս բոլոր նկարագրություններից կարելի է հետևյալն ալն, որ մարդկային խոսողությունից մեջ ձայնավորները ներկայացնում են երանգների մի հարափոփոխ զանազանություն. ինչպես ջութակի մի թելի մի ծալրից սկսած մինչև մյուս ծալրը յուրաքանչյուր կետ տեսականորեն մի առանձին ձայն է, նույնպես և՛ եռանկյան գծերի յուրաքանչյուր կետը: Բեկ ձայնաբանը նկարագրել է 90 ձայնավոր և ասում է, թե այս թվով դեռ ձայնավորների քանակը սպառած չէ¹: Բայց ինչպես որ մարդկային ականջը երաժշտության համար այդ թելի ամբողջ երկարության մեջ որոշ կետեր միայն ընդունել է իբրև անջատ նոտա (ընդամենը 2 ութնյակ կամ առ առավելն 3 ութնյակ=21 ձայն), նույնպես և խոսողության և արտասանության մեջ ընդունել է միայն որոշ կետեր, իբրև անջատ հնչյուն: Ամենից աղքատը արաբերենն է, որ զիտի միայն երեք ձայնավոր՝ a, i, u. այսինքն՝ յուրաքանչյուր գծից

մի ձայն (կան և սրանց երկարները): Տարբերությունը նրանում է որ մարդկային ականջը երաժշտության համար ամեն տեղ էլ գրեթե նույն նոտաներն է ընտրել, իսկ արտասանության համար հնչյունները լեզվից լեզու, նույնիսկ բարբառից բարբառ տարբերվում են: Այս տեսակետով նայելով հարցին, եռանկյան կողերի վրա մեր նշանակած կետերը և նրանց մասին մեր տված նկարագրությունը կատարյալ չեն և չեն կարող լինել. օրինակի համար, ասացինք, որ փակ u գտնվում է թե՛ ֆրանսերենի և թե՛ գերմաներենի մեջ, բայց այդ երկու լեզուները բոլորովին միևնույն ձևով չեն հնչում այդ ձայնը. ֆրանսերենի մեջ u հնչման ժամանակ շրթունքները ավելի առաջ են ընկած, քան գերմաներենի մեջ. նույնպես բաց u գտնվում է թե՛ գերմաներենի և թե՛ անգլերենի մեջ, բայց անգլերեն u նվազ շրթնային է քան գերմանականը. -միջակ օ գտնվում է թե՛ ֆրանսերենի և թե՛ գերմաներենի մեջ, բայց գերմանականը մի քիչ ավելի փակ է քան ֆրանսականը. և այսպես մյուս ձայնավորներն էլ: Նույնպես կան ձայնավորներ, որոնք ներկայացնում են միջին դիրք. չուվաշերենի մեջ (Ашма-рнн. Матер. 10) կա մի տեսակ i, որի միջին մասը ավելի «կարծր» հնչյուն ունի. տառադարձվում է ուսերեն u³ (i³), ուրեմն բռնում է i և ə ձայների մեջտեղը. կա մի տեսակ e, որ բռնում է e և օ ձայների միջին տեղը (անդ, էջ 2):

Շատ կարևոր է այն հանգամանքը, թե մարդիկ խոսակցության ժամանակ բերանը բաց և շարժումները ազա՞տ են խոսում, թե ընդհակառակը, բերանը կիսափակ, շարժումները թույլ ու տրկար: Առաջին դեպքում ձայնավորները պահում են իրենց բնականոն վիճակը և պարզորոշ լավում են. երկրորդ դեպքում նրանք խուլ են, անորոշ, և անվարժ մարդը դժվար կարող է որոշել, թե խուլ են, անորոշ, և անվարժ մարդը դժվար կարող է որոշել, թե հնչված ձայնը օ՞ է թե u, կամ e՞ թե i: Այսպես են, օրինակ, անգլիացիք, բայց նկարագրությունից երևում է, որ Ամերիկայի հնդիկները այս կետում գերազանցում են: Գողարզն հուպա լեզվի ուսումնասիրության մեջ ասում է, թե հուպան խոսում է բերանը կիսովին փակած. և իբր դրա արդյունք՝ ձայները բաց ու որոշ չեն, այլ «muffled (էջ 97)»: Բոսսը ամերիկյան լեզուների ընդհանուր ուսումնասիրության մեջ ավելացնում է (էջ 78), թե հատակ տարբերություն օ և u ձայների, ինչպես և e և i ձայների մեջ՝ չկա: Բառավերջում ձայնավորների արտասանության ժամանակ բերանը միայն արտասանության դիրքն է վերցնում, բայց չի արտասանում. և այսպիսով բառավերջի ձայնավորները կտրվում են: Այս-

¹ Panconcelli-Calzia, Experimentelle Phonetik, 98.

պես նաև 1, m, n բաղաձայնները, որոնք ձևավորվում են՝ առանց սակայն արտասանվելու: Վերջապես ունդային ձայնավորները լրավում են ո՛չ թե, օրինակ՝ uⁿ, այլ u^m:

Նույն նկատողությունը նաև ամերիկյան ալգոնկներեն լեզվի համար. լեզուն թողնում է անհոգություն տպավորություն. շքրթունքները անտարբեր են ու կրավորական. շքրթունքների բացումը, առաջացումը և կտրացումը չափազանց տկար են. խոսակցության միջոցին շնչի արտաբերությունը անորոշ է. բառերն սկսվում են փոքր ինչ ջանք ցուցաբերելով, հետո ուժը թուլանում է և վերջապես մարում անկենդան շնչի մեջ. այսպիսով բառի վերջին ձայնավորներն անլսելի են մնում և ձայնի ելեկշը ոչ հստակ և ոչ էլ սուր (Boas, Handbook, I, 741):

Իրենտոնը (էջ 22) խիվարո լեզվի մասին խոսելով, ասում է թե «ինչպես շատ ամերիկյան լեզուների մեջ, նաև խիվարո լեզվում ձայնավորները հնչվում են շատ անորոշ ձևով. օ շփոթվում է u-ի հետ, e շփոթվում է i-ի հետ. e շփոթվում է ö-ի հետ. հատկապես դժվար է pöung «կրակ» բառի հնչումը»:

Հնդկական սինդհի լեզվի մեջ, ուր ամեն բառ ձայնավորով է վերջանում, երբ այս ձայնավորը կարճ է, այնքան տկար է հընչվում, որ եվրոպացիք հազիվ են լսում: Սրանք գրվում են մանրատառ (Grierson, հատ. 8, մաս 1, էջ 8):

Նուբիերեն լեզվում կան չորս անորոշ ձայնավորներ, որոնք ուսումնասիրողը (Kauczor, 1) նշանակում է ֆ, օ, օ, օ. առաջին երկուսը գտնվում են e և i ձայների միջև, մյուս երկուսն էլ օ և u ձայների միջև. սրանց համար ասում է, թե անորոշ ձայներ են և լավ չեն լսվում:

Ձայնավորների տեսակների նկարագրությունը վերջացնելու համար, մնում է մեզ խոսել ունդային ձայնավորների մասին: Այն բոլոր ձայնավորները, որ նկարագրեցինք վերևում, արտասանվում են միմիայն բերանի հնչարանով, այսինքն երբ կատիկը բարձրացած է և քթային անցքը փակ: Սակայն երբ կատիկը իջած և քթային անցքը բաց է, հնչարանը դառնում է երկու, օդի հոսանքը անցնում է միաժամանակ թե՛ բերանի և թե՛ քթի միջով և այն ժամանակ բոլոր ձայնավորները դառնում են ունդային:

Եռանկյան մեջ մենք ունդային ձայնավորների համար ո՛չ մի պիժ չենք դժել, բայց տեսականորեն ըմբռնելի է, որ ամեն մի ձայնավոր կարող է ունենալ իր համապատասխան ունդայինը:

Ունդային ձայնավորները ծագում են հետևյալ ձևով. երբ որևէ

ձայնավորի հաջորդում է և կամ մ ունդականը, այդ բաղաձայնի արտասանության ժամանակ կատիկը պետք է որ ցած իջնի. եթե այդ էջքը կատարվի մի քիչ ավելի շուտ, երբ դեռ գործարանները ձայնավոր արտասանելու դիրքի մեջ են, բնականաբար կատարվի այդ ձայնավորի ունդայնացումը: Որքան ավելի առաջ լինի այդ կանխումը, այնքան էլ ավելի երկար կլինի ձայնավորի ունդայնությունը և ընդհակառակը:

Քննությունները ցույց են տալիս երկու փաստ.

ա) Ամեն լեզվի մեջ, ամեն մի ձայնավոր, որին հաջորդում է որևէ ունդական բաղաձայն, անշուշտ թեկուզ փոքր չափով ունդայնացած է լինում. այսպես, օրինակ, անվանակամ, բավականաճալ բառերի մեջ շեղատառ ա-երը մասամբ ունդային են:

բ) Յածր ձայնավորները (a, ö, è) ավելի շուտ են ենթարկվում ունդայնության, քան բարձր ձայնավորները (i, é, ü, ó, ù). սրա պատճառն այն է, որ կատիկի բարձրացումը ուղիղ հարթբական է լեզվի բարձրացման, այսինքն որքան ավելի բարձր է լեզուն, այնքան էլ ավելի բարձր է կատիկը, և որքան ավելի ցածր է լեզուն, այնքան էլ ավելի ցածր է կատիկը. ուրիշ խոսքով, առաջին դեպքում քթի անցքը ավելի է փակ, քան երկրորդ դեպքում, հետևաբար և e ավելի ընդունակ է ունդայնության, քան i և a ավելի ընդունակ է քան e և այլն: Այսպես, օրինակ, ֆրանսերենում կա ունդային ֆ, բայց չկա i, կա ունդային ö, բայց չկա u: Հին սլավերենում կան և առանձին տառերով նշանակվում են ֆ, օ ունդայինները, բայց չկա ուրիշ ունդային ձայնավոր: Լեհերենում կան և առանձին տառերով նշանակվում են ֆ (որ հնչվում է ֆ) և ֆ, բայց չկա ուրիշ ունդային: Աֆրիկյան մանդինգ լեզվի մեջ բոլոր 5 ձայնավորներն ունեն ունդային ձև (a, ֆ, օ, i, u) միայն ü չունի ունդային (Delafosse, 56):

Այս իրողություններից հետևում է այն, որ ամեն լեզվի մեջ էլ ունդային ձայնավորներ կան, բայց դրանք առհասարակ լինելով մասնական, առանձին ուղարկություն չեն գրավում: Երբ կատիկի էջքը այնքան կանխում է, որ սկսում է ձայնավորի արտասանության հենց սկզբից, այդ պարագային ձայնավորը իր ամբողջ տևողություն մեջ լինում է ունդային և կոչվում է ունդային ձայնավոր:

Քիչ լեզու կա, որ ունենա ունդային ձայնավորներ և այն էլ ձայնավորների բոլոր երանգները: Այս կողմից ամենահարուստներն են պորտուգալերենը, ղպտիերենը և ամերիկյան տուպի լեզուն. հետո գալիս են ֆրանսերենն ու լեհերենը: Պորտուգալերենը

և դպրոցները ունեն 5 տեսակ *անգալին* ձայնավոր, այն է *ա օ օ օ օ* և *օ*: *ձիշտ* այսպես է նաև ամերիկյան սիտան լեզուն (Boas, Handbook, I, 880): Ֆրանսերենն ունի չորս *անգալին*, այն է *ա օ օ օ*, բոլորն էլ առնասարակ բաց աստիճանով. բարբառներն ունեն նաև *օ*, *օ*, *օ*, *օ* *անգալինները*: Այսպես, օրինակ, *օ* գոյություն չունի ֆրանսերենում, բայց կա պրովանսալում: Ռնգալին ձայնավոր ունի նաև սանսկրիտը, որի շարունակությունն է հինդուստանին և կոչվում է *anuswāra* կամ *anunāsika* (Bannesjia, Gramm. hindi, 2): Ռնգալին ձայնավորներով հարուստ է և չեչեներենը, որ ունի *օ*, *օ*, *օ* և *այլն* (Dirr, Einführung, 36):

Ֆրանսերենի և պորտուգալերենի *անգալինների* տարբերությունն այն է, որ առաջինները համասեռ են, այսինքն արտասանության սկզբից մինչև վերջը ներկայացնում են միևնույն հնչյունը, իսկ երկրորդների մեջ այդ հնչյունից հետո սկսվում է մի անգական բաղաձայն *ո*, որի արտասանության ժամանակ բերանն այլևս չի գործում և շունչը դուրս է գալիս միմիայն քթից:

Կա նաև *անգալին* ձայնավորների մի ուրիշ տեսակը, որ կարելի է կոչել կիսաանգալին. այսպիսի ձայնավորներ ունի մոնղոլերենը, արտասանության ժամանակ կատիկը թեթև իջնում է ցած և շունչը միաժամանակ անցնում է թե՛ քթից և թե՛ բերանից (սե՛ս Владмирицов, Справ. грамм., 56):

Ըստ Լ. Աղամի (էջ 6), ամերիկյան աուպի լեզուն ունի բոլոր ձայնավորների *անգականը*, նույնիսկ կոկորդական *օ* ձայնի, որի նկարագրությունը կտեսնենք քիչ հետո:

Մեքսիկացի օթումի լեզվով ձայնավորները արտասանվում են 3 ձևով. առաջին ձևը կոչվում է պարզ. սրանք են *ա*, *օ*, *օ*, *օ* և իրենց սովորական հնչյունով.—երկրորդ ձևը *անգալինն* է. այսպես են *ա*, *օ*, *օ*, *օ*. բայց չկա *անգալին օ*.—երրորդ ձևը կոչվում է *creux* “փոս”. սա մի գարմանալի հնչյուն է, որ ունեն *ա* և *օ* ձայնավորները: Փոս *ա* արտասանվում է բերանը լավ բաց արած և ուժեղացնելով ձայնը, ինչպես մեկը, որ հորանջում է. իսկ փոս *օ* ձայնը հնչվում է նույնպես լավ բանալով բերանը և դուրս բերելով ձայնը՝ տալով նրան ոչխարի մալունի նմանություն. գրա համար էլ այս ձայնը կոչվում է “մալուն”:

Սրանցից դուրս կա նաև երկու տեսակ կոկորդալին հնչյուն՝ *օ* և *օ*. կոկորդալին *օ* արտասանվում է առամների վերի շարքը ցածրի շարքին սեղմած և արտաբերելով ձայնը մի քիչ բռնի (forcée) կերպով կոկորդից: Սրա նման է նաև կոկորդալին *օ* ձայնը, որ հնչվում է նույնպես առամները սեղմած և կոկորդի ներ-

սից դուրս բերելով ձայնը, ավելի աղոտ (obscur) քան նախորդ *օ* ձայնն է:

Բաղաձայններից պակասում են *լ*, *ր*, *ս*. վերջինիս փոխարեն հնում են *շ*. բայց կա *է* և *Տ*. չկա նաև *ֆ* և նրա փոխարեն գրվում է *ph* (այն է *p' = ֆ*) (X. Elements):

Վերջապես կա *անգալին* ձայնավորների մի երրորդ տեսակ, որ գոյություն ունի ամերիկյան հնդկացիների մոտ և արգյունքն է նրանց բերանափակ արտասանության: Ռնգալին ձայնավորի արտասանության միջոցին շրթունքները փակվում են, և այն ժամանակ փոխանակ արտաբերվելու *ո* ձայնը, լսվում է *ո*. այսպես *օ*՝ փոխանակ *օ*՝ (Boas, Handbook, I, 78):

Աֆրիկյան դագոմբա (բանտո) լեզուն ունի *օ*, *օ*, *օ*, *օ* և ձայնավորների *անգալին* շարքը: նաև ունի 3 երկբարբառ, որոնց մի կեսը *անգալին*, մյուս կեսը պարզ է. այսպես են *օօ*, *օօ*, *օօ* (Fisch. 3):

Աֆրիկյան դահոմե կամ ֆոնգհե լեզուն ունի *օ*, *օ*, *օ*, *օ* և ձայնավորների *անգալինները* (Butavand, 6):

Սուգանական շիլլով լեզվում *լ*, *մ*, *ն*, *ր* ձայները կարող են ստանալ տոն և կազմել վանի. ուստի ուսումնասիրողը (Westermann, 6) համարում է նրանք ձայնավոր: նմանապես աֆրիկյան գանդ լեզվով *անգալին* բաղաձայնները և *լ* կարող են տոն ստանալ, ուստի ձայնավոր համարելի են (Westermann, 153):

Հայերենը իսկական *անգալին* ձայնավորներ չունի. բայց կան բարբառներում. այսպես՝ Պոլսի բարբառում մանր, ծանր, խանգրիլ բառերը արտասանվում են *maṙə*, *jaṙə*, *xəṙil* և այլն: Ավելի հարուստ է Ասլանբեգի ենթաբարբառը:

Հայերենը ունի նաև *ը* ձայնի *անգալին* ձևը, որ գտնվում է միմիայն իր դրական ու հարցական ձայնարկության մեջ. այս ձայնարկությունները կարելի է արտասանել երկու ձևով. նախ բերանը բոլորովին փակ, և շունչը և *անգալին* ձայնը միմիայն քթից դուրս տալով. այս պարագային բնականաբար ձայնավոր չկա. երկրորդ՝ բերանը բաց և կատիկը ցած. այս ժամանակ լեզուն ավելի ցած է լինում քան սովորական *ը* արտասանության մեջ և *անգալին* շունչը դուրս է գալիս քթից. ստացվում է *ի* ձևը:

Այն բոլոր ձայնավորները, որոնք նկարագրեցինք վերևում, կարող են ունենալ նաև իրենց երկարները: Երկար ձայնավորներ ունեն հատկապես հին լեզուները, ինչպես կամիսերենը, սանսկրիտը, զենդերենը, հունարենը, լատիներենը, հին իուլանդերենը, գոթերենը, եբրայերենը, ասորերենը և այլն: Հին զենդերենում (գաթա) բոլոր բառավերջիկ ձայնավորները երկար են (Tackson, 8):

Սանսկրիտը գիտի զանազանել կարճ ու երկար a, ā, i, ī, u, ū, նաև ձայնավոր ɾ, ɿ, իսկ ձայնավոր l ունի միայն կարճ ձևը (երկարը գործածված չէ): Գալով e և o ձայներին, սրանք թեև սանսկրիտ քերականության մեջ համարվում են երկարաբառ, բայց հնչման մեջ սովորական փակ ձայնավորներ են (V. Henry, Elem. Sans., 2) և երկար ձևեր չունեն: Դրավիդյան լեզուների մեջ կան սրանց երկայնները, ինչպես տելուգու լեզվում կան առանձին-առանձին o և o (Lakshminarasayya, 5—7): Հունարենը վաղուց գիտեր e (γ) և o (ω), որոնք ε և ο ձայնավորների երկար ձևերն են:

Դրավիդյան տուլու լեզուն էլ ունի ձայնավոր ɾ, ī, l: Այս լեզուն ունի միշտ 4 շարք բաղաձայն b, bh, p, ph և միշտ մի ռնգային, ճիշտ նման սանսկրիտի (Brigel, 1):

Ըստ Դեյլիչի (Klein Sumerische Sprachlehre, 5), սումերերենն էլ ուներ երկար ու կարճ ձայնավորներ, սակայն գրություն սիստեմը անբավարար լինելով, չի կարողացել հաշվառարեել այդ երկար ձայնավորների գոյությունը ապացույց է այն, որ հաճախ արձանագրությունն մեջ a և e ձայնավորները երկու անգամ են զբրվել:

Նոր լեզուներից շատերը գուրկ են երկար ձայնավորներից բայց շատերն էլ ունեն. այսպես՝ ֆրանսերենը, գերմաներենը, բրետոներենը, սերբերենը, արաբերենը, ճապոներենը, շվեդերենը, գանիերենը ունեն կարճ և երկար ձայնավորներ: Հնդկական սինհալի լեզուն ունի բոլոր ձայնավորների երկար ձևերը, նաև ā երկար (Gieger, 11): Հիպերբորյան լուկադի լեզուն ունի իր հինգ ձայնավորների կարճ ու երկար ձևերը (Jochelson, 100): Մլովալերենն ու չեխերենը ունեն a, e, i, o, u, y ձայնավորների երկար ձևերն էլ: Դանիերենը ձայնավորների բոլոր տեսակների մինչև անգամ բաց և փակ օ ձայների, ինչպես նաև ā ձայնավորի համար ունի կարճ ու երկար ձևեր: Զարմանալի է, որ աֆրիկյան նիամ-նիամ լեզուն, որ գիտի ā, e, ə, i, o, u և ū ձայնավորները, սրանց երկարներից միայն երկուսը գիտի (a և o), բայց երբեմն վերջնաձայն ձայնավորները շատ են երկարում (Lagae, 70): Յակուտերենն էլ ունի օ և ū ձայնավորների երկարները, ինչպես են գերմաներեն führen, öhn և այլն: Օստյակերենը ունի բոլոր ձայնավորների կարճ ու երկար ձևերը, նրանց մեջ նաև երկար օ և ū (Castren, 1):

Թնդալին ձայնավորներն էլ կարող են ունենալ երկար ձևեր,

այսպես, հոտենդոսյան նամա լեզվի մեջ ռնգային ձայնավորները միշտ երկար են (Seidel, Hspx, 1): Կան նաև սրանցից զուրս կարճագույն ձայնավորներ, որոնք նշանակվում են a, e, i, o, u, այս ձայնավորները գտնվում են ɾ, n, m նայներից առաջ (Seidel, Hspr., 1): Աֆրիկյան աշանան լեզվում բոլոր ձայնավորները (a, e, i, o, u), ինչպես նաև նրանց համապատասխան երկարները կարող են լինել ռնգային, ինչպես ǃ, ǂ, ǃ, ǃ և այլն (Christaller, 2): Աֆրիկյան ազանդե կամ նիամ-նիամ լեզուն (որ տարբեր է նախորդից), ունի ռնգային ǃ, ǃ, ǃ, ǃ, իսկ նրանց երկարներից միայն ē, ī, ǃ (Langae., 70): Մոնղոլերենում էլ բոլոր ձայնավորները՝ կարճ ու երկար, ունեն իրենց ռնգային ձևը (ǃ, ǃ, ī, ǃ, ǃ և ǃ, ǃ, ī, ǃ, ǃ):

Մեկանեզյան ֆիու լեզվով շատ սովորական է ձայնավորի կրկնությունը, ինչպես taa "վատ", tee "մեկ", bii "սկսել", foouua "նավ", ruruu "սիրտ" և այլն (Ray, 498):

Աֆրիկյան էլի լեզվով բոլոր ձայնավորները, թե՛ կարճ և թե՛ երկար, կարող են դառնալ ռնգային. այսպես ā, ā, e, ē, ū, ū և այլն (Westermann, 2):

Այսպես նաև աֆրիկյան դալա լեզվում բոլոր ձայնավորները, թե՛ կարճ և թե՛ երկար ունեն իրենց ռնգական ձևը (Westermann, 5):

Ընդհանրապես երկար ձայնավոր ասելով հասկանում ենք կարճի կրկին տեղաթույնը. բայց լեզուները կարող են այս կողմից էլ զանազանվել իրարից. այսպես, հունգարերենի երկար ձայնավորները (ā, օ, օ, ū, ū, ī) ավելի երկար են, քան հնդկավրուպական լեզուներինը:

Հայերենը երկար ձայնավորներ չունի. այսպես նաև վրացերենը և այլ կովկասյան լեզուներ, ինչպես և թուրքերենը, բասկերենը:

Ինչպես կան լեզուների մեջ երկար ձայնավորներ, որոնք մլուսների կրկին տեղաթույնն ունեն, նույնպես կան կարճագույն ձայնավորներ, որոնք սովորական ձայնավորի կարճ ու խոսափուկ արտասանությունն ունեն. այսպես է Աֆրիկայի հոտենդոսների նամա լեզվի մեջ. ուր կան թե՛ սովորական աստիճանի և թե՛ երկար ձայնավորներ:

Երկար ձայնավորների արտասանության մի այլ ձև է ներկայացնում ամերիկյան ցիմշիան լեզուն, ուր ամեն մի երկար ձայնավորից հետո ձևանում է նաև մակարույծ թուլլ արտասանված

մի կարճ ձայնավոր՝ նույն երանգի. այսպես ôu, âô, am, âé, êé, ù (ըստ Boas, Handbook, 289):

Երկար ձայնավորների արտասանության մի այլ ձև էլ ներկայացնում է մոնղոլերենը, ուր ձայնավորը երկարաձգվում է, իբր իրար միացած երկու նույնանման կարճ ձայնավոր և միաժամանակ լսվում է կոկորդալին շունչ. այսպես a գտնում է agxa, e գտնում է egxe և այլն (Клюкин, Ключ монг., 13—14): Մրա համար է, որ ժողովրդական մոնղոլերենի մեջ հնչվում է bator, xarul, որոնք գրական մոնղոլերենում գրվում են bagator, xaragul, և փոխառությունը անցնելով ռուսերենին, գտնում են бoгa-тырь, карауль:

Չայնավորների անսովոր մի ձև է այն, որ գտնում ենք կովկասյան լեզուների մեջ. a, e, i և այլն ձայնավորները արտասանվում են խոշակի սեղմումով. Դիուր (Einführung, 33) այս ձայնավորը կոչում է gespannte Vokale և տառադարձում a, e, u և այլն: Ուտիացի Քուշմանյանից լսելով այս ձայները, կրում եմ ^oa, ^ee, ⁱi ձայների տպավորությունը, բայց ինքը գիտակցում է, որ այդպես չէ. տարբեր են ^oa և a. առաջինի մեջ ^o միայն ձայնավորի սկզբին է գտնվում, երկրորդը ձայնավորի ամբողջ տեղություն մեջ: Այս կարգի մի i գտնում է Լ. Ագամբ ամերիկյան տուպե լեզվում (էջ 4). այս ձայնավորը, որ ինքը գրում է y, ըստ հեղինակի բացատրության, հնչվում է կոկորդի խորքը սեղմելով (restrigiendo el fundo de la garganta) և նրա հետևից գալիս է մի տեսակ աղմուկ, որ գրում է g (իբր yg): Այս ձայնը ունի նաև իր սնգալին ձևը (էջ 6): Կոկորդալին ձայնավորները գոյություն ունեն նաև Մալթա կղզու լեզվով, ուր գրում են â, ê, î, ô, ù ձևով (Roudanovsky, 6):

Նույնպիսի մի երևույթ գտնում ենք նաև ամերիկյան կիրիբի լեզվում. այստեղ ձայնավորները, բացի սովորական հնչումից, ունեն նաև կոկորդալին թանձր հնչում, փակ շրթունքներով: Գարե-լենցը (էջ 6) այս ձայնավորները նշանակում է â, i և այլն և ներկայացրում է այսպես "mit einem gutturalen Ton in der Kehle, oder mit dem dicken Ton mit geschlossenen Lippen ausgesprochen Werden":

Ամերիկյան լուրիկ լեզվում ընդհակառակը ձայնավորները ունեն անորոշ մի հնչում. i հնչվում է այնպես որ հաճախ լսվում է e.-o հնչվում է այնպես, որ լսվում է a, իսկ o գրեթե անզլերեն aw. մյուս ձայնավորներն էլ ըստ այսմ (Kroeber, 415).

Ուղի լեզվի մեջ, ըստ Շնելկերի (էջ 84—85), ձայնավորները, բացի կարճ ու երկար ձևերից, ունեն նաև 3 ուրիշ տարբեր ձևեր. այն է ընդմիջված (մի տեսակ) և շնչեղ ընդմիջված (երկու տեսակ) ձայնավորներ: Ընդմիջված ձայնավորները նրանք են, երբ արտասանության ժամանակ կոկորդը սեղմվում է, ձայնավորը դադարում է, անմիջապես հետո շարունակվելու համար. այսպես a—a 0—0, i—i, o—o և այլն: Շնչեղ ընդմիջված ձայնավորն այն է, երբ այդ ընդմիջումից հետո, ձայնավորի երկրորդ մասը սկսվելու ժամանակ լսվում է մի տկար h այդ. h շունչը կարող է գրվել ընդմիջումից հետո, ձայնավորի երկրորդ մասի սկզբը իբր a—ha (առաջին տեսակ) և կամ ձայնավորի առաջին մասից հետո, ընդմիջումից առաջ՝ ah-a (երկրորդ տեսակ): Այսպես նաև o—ho, oh-o, u—hu, uh-u և այլն: Հեղինակը զգուշացնում է սակայն, թե պետք չէ այս բոլորը երկվանկ համարել:

Բառի կեսին դադար տալու երևույթը ունի նաև նիմիլան (կորչակ) լեզուն, ինչպես բազաձայնից, այնպես և ձայնավորից հետո, ըստ Կորսակովի (էջ 9). ինչպես at-an «շուն», yun-av «ճրջմարիա», loc-uk «տեսնել»: Դժբախտաբար հեղինակը չի տալիս երևույթի մանրամասն նկարագիրը, ինչպես նախորդն է:

Մինչև այստեղ մենք խոսեցինք ձայնավորների բնախոսական հորինվածության մասին. այժմ պետք է քննենք, թե ի՞նչ է նրանց էությունը բնագիտական և լսողական տեսակետով: Նշանավոր ձայնաբան և բնագետ Հելմհոլցը, հնչարանի միջոցով քննելով ձայնավորները, գտնում է, որ.

ա) Միևնույն ձայնավորի հնչական տարբերությունը զանազան մարդկանց մոտ՝ առաջ է գալիս ձայնավորին ընկերացող հարմոնիաների անհավասարությունից, ճիշտ այնպես, ինչպես միևնույն ձայնը տարբեր նվագարանների վրա.

բ) Ձայնավորների իրենց տարբերությունը առաջանում է տարբեր նոտաների բաղադրությունից. այսպես՝

a	ā	é	i	o	ö	n
si ⁴ b	sol ⁵	fa ³	fa ²	si ³ b	do ⁴ #	fa ²
	re ⁴	si ⁵ b	re ⁶		fa ³	sol ⁵

Ըստ այսմ, երգեցողության մեջ եթե որևէ ձայնավորի նոտան երգահանը գրել է այնպես, որ համապատասխանում է հիշյալներին, երգիչը կարող է լինում իր երգի մեջ նույն ձայնավորը շատ

պայծառ դուրս բերել, ապա թե ոչ ձայնավորը վատ է լավում կամ երգիչը ստիպված է լինում նրա փոխարեն մի ուրիշ ձայնավոր դնել:

Մենք դիտենք, որ յուրաքանչյուր մարմնի հնչման մեջ կա մի հիմնական ձայն, որ սակայն ընկերացած է լինում զանազան հարմոնիաներով: Այսպես է նաև, ըստ Հելմհոլցի, խոշակը, որ արտադրում է զանազան ձայների մի խառնուրդ, որի մեջ մեկը հիմնականն է ու տիրողը, և ամբողջ ձայնի բարձրությունը կախված է այդ հիմնական ձայնից: Գիտենք նաև, որ հնչարանները, համաձայն իրենց ձևի, ընդունակ են ուժեղացնելու այս կամ այն ձայնը: Արդ, բերանի խոռոչը, ստանալով այս կամ այն ձևը, ձևացնում է տարբեր հնչարաններ և հետևարար ընդունակ է խոշակից եկած ձայնական խառնուրդի մեջ այս կամ այն հարմոնիան միայն ուժեղացնել: Որոշ ձայնավորների արտաբերության ժամանակ բերանը կազմում է միայն մի հնչարան, ուրիշների համար կազմում է երկու հնչարան, մեկը բերանի առաջակողմում, մյուսը հետևում: Այսպիսով առաջանում է ձայնավորների տարբերությունը (որ է երանգը):

Մեծ հնչարանները ուժեղացնում են երկար թրթռումները, իսկ փոքրիկ հնչարանները՝ կարճ թրթռումները: Այսպես և բերանի մեջ: Երբ արտասանում ենք ու, շրթունքները առաջ են ձգվում, լեզուն հետ բաշվում, իսկ խոշակը որքան կարելի է ցած է իջնում, որով ստեղծվում է ամենից լայն հնչարանը, ինչ որ հարմար է ու ձայնին: Ի արտասանելու համար լեզուն առաջ է գալիս և վեր բարձրանում դեպի ջիմբը, խոշակն էլ վեր է բարձրանում, որով հնչարանը շատ փոքրանում է և հարմար է լինում ուժեղացնելու ի ձայնի կարճ թրթռումները: Այս երկուսի մեջտեղն են դանվում \bar{u} , o , a , e ձայները, որոնց հնչման ժամանակ բերանի հնչարանը աստիճանաբար փոքրանում է:

Հելմհոլցի այս տեսության հակառակ է Հերման գիտնականը, որ ձայնավորների կազմության համար տալիս է նոր բացատրություն:

Ըստ իրեն ամեն մի ձայնավոր արտադրվում է բերանի մեջ և ինչ էլ լինի իր բարձրության աստիճանը, միշտ միևնույնն է և կազմված է հետևյալ ձևով.

$u - do^2$ և re^2 նոտաների միջև
 $o - re^2$ և mi^2 " " "
 $a - mi^2$ և soi^2 " " "

$e - si^3$ և do^4 " " "
 $i - re^4$ և soi^4 " " "

Երբ ձայնավորները գործում են, բերանը իբր հնչարան լեցվում է, ուստի և այնտեղ արտադրված ձայնավորը խանգարվում է. մի բուպե նա հնչում է, հետո նվազում, նույնիսկ լռում, հետո նորից սկսում և այլն. այս ընդհատումները վայրկենական, բայց կանոնավոր են և այդ ընդհատումներով էլ բնորոշվում է ձայնավորը:

Հերմանի այս տեսությունը ընդունված չէ:

Կան ուրիշ գիտնականներ, որ առաջարկում են ուրիշ բացատրություններ. բայց ինչպես Հելմհոլցի բացատրությունը, նույնպես և մյուս գիտնականներից և ոչ մեկինը ընդհանուր ընդունված չէ: Այնուամենայնիվ ստույգ է մնում այն, որ մարդկային ձայնի, հատկապես ձայնավորների երանգը կախնում է զանազան հարմոնիաների բաղադատության մեջ:

Ձայնավորների էությունը որոշելու համար, բացի հնչարաններից, օգտագործվել է նաև խուլների լսողությունը: Եթե խուլի ականջի մոտ հնչեցնենք մի շարք կամերտոններ (բնականաբար տարբեր կազմությամբ), նրանցից մի քանիսը խուլի լսողության վրա ո՛չ մի ազդեցություն չեն գործում, մի քանիսը գործում են մի անորոշ տպավորություն, իսկ ուրիշները որոշ կերպով լսելի են դառնում: Նույնպես ձայնավորները ունեն խուլերի լսողության վրա տարբեր-տարբեր ազդեցություն. օրինակի համար, այսինչ խուլը որոշ շափով լսում է a , i ձայները, հազիվ է լսում o , e , \bar{o} ձայները և բնավ չի լսում u և \bar{u} ձայները: Փորձը ցույց է տվել, որ կամերտոնի նոտայի լսողության և ձայնավորների երանգի լսողության մեջ կա որոշ կապ: Այն խուլը, որ չի կարողանում լսել 1 800 թրթռումով մի կամերտոն, չի կարողանում լսել նաև e ձայնավորը. և նա, որ չի լսում 450 թրթռումով մի կամերտոն, չի լսում նաև o ձայնավորը և այլն: Սրանից հետևում է, որ o ձայնավորը համապատասխանում է 450 թրթռում ունեցող նոտային կամ որ նույն է, ներկայացնում է 450 թրթռում, e ձայնավորը համապատասխանում է 1 800 թրթռում ունեցող նոտային կամ որ նույն է, ներկայացնում է 1 800 թրթռում և այլն: Փորձեր կատարելով բազմաթիվ խուլերի-վրա, 16-ից մինչև 18,000 թրթռում ունեցող կամերտոններից մի կատարյալ շարքով, Ռուալո ձայնարանը ֆրանսերենի ձայնավորների համար տալիս է հետևյալ պատկերը¹:

¹ Rousselot, Principes, II, 747 շաբ.

Ուրեմն կիսաձայն է կոչվում այն ձայնը, որի արտաբերության ժամանակ գործարանների փակումով ձևացած անցքը ավելի նեղ է, քան պետք է ամենափակ ձայնավորների համար և ավելի լայն, քան պետք է բաղաձայնների համար. այնպես որ արտաբերության միջոցին ականջը լսում է ձայնավորի երանգը և միևնույն ժամանակ անցքի պատերին շփվող օդի աղմուկը, որ հատուկ է բաղաձայններին: Կիսաձայնը ձայնավորի և բաղաձայնի միջին աստիճանն է:

Այսպիսով, եթե ուրեմն կիսաձայնը ամենափակ ձայնավորի շարունակությունն է, հետևաբար պետք է ունենանք այնքան կիսաձայն, որքան ունենք ազդիտի ձայնավորներ: Ձայնավորների եռանկյան մեջ մենք տեսանք, որ գրանց թիվը 4 է, ի, ն, ջ, ս. եթե այս ձայնավորները արտաբերենք լեզուն մի քիչ էլ ավելի բարձրացնելով և ծնոտը ավելի սեղմելով, կստանանք 4 համապատասխան կիսաձայններ: Բայց որովհետև փակ ձայնավորներից ամենասովորականները ի և ն ձայնավորներն են, ուստի և լեզուների մեջ ամենասովորական կիսաձայններն էլ գրանց համապատասխաններն են, այն է ի և u (w).—մյուսները քիչ լեզուների մեջ են գտնվում: Այսպես մենք պետք է խոսենք գրանցից լուրաքանչյուրի մասին:

1. Կիսաձայն ի, պատկանում է քմային ձայնավորների ոչ-ըթնային խմբին. առատությունը գտնվում է ֆրանսերենի մեջ, ինչպես pied, vieux, rien, bien, նաև բառակցքում, ինչպես yeux hier և այլն: Գրեթե նույնն է նաև անգլերեն opinion, union բառերի վերջնավանկի կիսաձայնը: Եթե լեզուն բարձրանա մի քիչ էլ ավելի, ստացվում է իսկական բաղաձայն y, որ ներկայացնում է ի կիսաձայնի թավ հնչյունը: Այս ձայնը, որ երբայական ալբուրների անվանակոչության համաձայն կոչվում է yod, առատությունը գտնվում է ամեն լեզվի մեջ էլ, հատկապես ուսերենում և թուրքերենում:

Հին լեզուներից հունարենն ու լատիներենը ունենին այս կիսաձայնը, ինչպես ιατρος «բժիշկ» և լատիներենը ieiunus «ծոմ». պատմական շրջանում այդ ձայնները ավելի թավանալով դարձան բաղաձայն: Արդի հայերենում կիսաձայն ի չկա. բոլոր եզրաները զուտ բաղաձայն y են: Կիսաձայնը գտնում ենք բարբառների մեջ ալսպես մեր, բեր և այլն բառերը Մուշի, Վանի, Կարինի և ուրիշ բարբառներում արտասանվում են mter, bier ձևով, որոնց մեջ բաղաձայնի և ձայնավորի միջև ներմուծվում է կիսաձայն ի:

Սմեն լեզվի մեջ էլ թե՛ կիսաձայն ի և թե՛ նրա բաղաձայն y ձևը թրթռուն են, այսինքն արտաբերվում են ձայնալարերի թրթռացումով: Բայց նույն ձայնը զանազան լեզուների մեջ կարող է ներկայանալ նաև առանց թրթռումների: Այսպես՝ դանիերենում կա խուլ y և գրվում է hj, գերմաներեն ich, Reich, Bücher բառերի մեջ ch ներկայացնում է առանց թրթռումների y բաղաձայնը. ֆրանսերեն pied, feuilletter բառերի մեջ կիսաձայնը առանց թրթռումների է, անգլերեն human, pure բառերի մեջ h և p բաղաձայնների և u ձայնավորի միջև լաված կիսաձայնը առանց թրթռումների է: Աննամերենի մեջ ևս կա այս ձայնը և սառադարձությունը գրվում է x (Dirr, Gramm. Annam., 4): Չինարենում կա նույն ձայնը և գրվում է hs (Seidel, Chin. Gramm., 13) նույն ձայնն է ուղում նկարագրել Մորիսը (Carr. lang, I, 4) ամերիկյան կարրիեր լեզվի մեջ և գրում է q ձևով, միևնույն ժամանակ ասում է, որ ֆրանսական կանադայում ալսպես է հնչվում caur, curé, viciaire բառերի մեջ c ձայնը: նույն ձայնը գտնվում է սկոպտերեն loch բառի մեջ և կա նաև աֆրիկյան աշանտե լեզվի մեջ, գրված hy ձևով (Christaller, 5):

Այս հնչյունը չկա մեր գրական լեզվի մեջ, բայց գտնվում է Վանա և Ղարաբաղի բարբառներում, ինչպես Վանի բարբառում այնխոր «աքլոր», Ղարաբաղի բարբառում ըրիյննակ «արեգակ»:

2. ու (կամ w) կիսաձայնը պատկանում է քմային ձայնավորների ըթնային խմբին. եթե լեզուն մի փոքրիկ չափով ավելի բարձրանա և ըթնաքներն ավելի փակվեն քան ու ձայնավորի արտաբերության մեջ, կստանանք ու:

Քիչ լեզու կա, որ ունենա այս կիսաձայնը: Այն լեզուները, որոնք չունեն ըթնային ու ձայնավորը, բնականաբար չպիտի ունենան նաև համապատասխան ու կիսաձայնը: Բայց նույնիսկ այնպիսի լեզուներ, որոնք ունեն ու ձայնավորները, զուրկ են համապատասխան կիսաձայնից, այսպես են գերմաներենը և թուրքերենը:

Այս կիսաձայնին ամենից ավելի պատահում ենք ֆրանսերենի մեջ, ուր նա ներկայանում է թե՛ թրթռուն ձևով և թե՛ առանց թրթռումների. այսպես թրթռուն է huit, lui բառերի մեջ, անթրթիո է tuile բառի մեջ:

Հայերեն լեզվի մեջ այս ձայնը չկա ո՛չ գրականում և ո՛չ էլ բարբառներում:

3. Ինչպես որ մյուս փակ ձայնավորները ավելի փակ հնչվելով տալիս են կիսաձայն, նույնպես պիտի լիներ նաև ջ ձայնավորը:

բը: Բայց որովհետև Յ ձայնավորը արդեն հազվագլուտ է լեզուների մեջ, ավելի ևս նրա կիսաձայնը: Հայերեն և թուրքերեն լեզուներում, ուր շատ առատ է ը ձայնը, չկա նրա համապատասխան կիսաձայնը: Այսպես նաև ուսերենի մեջ, թեև այստեղ ունենք եւ ձայնավորը, որ մեր ը ձայնավորի փափուկ ձևն է: Այդ կիսաձայնը գուցե գտնվի որեէ կիսավայրենի լեզվի մեջ, որ մեզ առայժմ անծանոթ է:

4. Ս (գրվում է նաև w) կիսաձայնը պատկանում է կատկաին ձայնավորների շրթնային խմբին: Արտասանության մեջ լեզուն մի քիչ ավելի բարձր է և շրթունքը ավելի փակ, քան u ձայնավորի արտասանության ժամանակ:

Առատության գտնվում է ֆրանսերենի, իտալերենի, իսպաներենի, դանիերենի, սլովեներենի և մանավանդ անգլերենի մեջ ինչպես ֆրանսերեն oui, puis, ouest, անգլերեն water, well, իտալերեն uovo, buono, իսպաներեն cuerpo, bueno, սլովեներեն vino գինի, lov ալյուծ (կարգա uino, loj) և այլն: Աֆղաներենում v հնչվում է իբր անգլերեն w (Darmesteter, Chant pop. էջ XXXII): Մեր շրջակա ազգերի լեզուների մեջ այս ձայնը բուլղոփին պակասում է. այսպես թուրքերենում, վրացերենում, ուսերենում. բայց շատ առատ է քրդերենում և արաբերենում. սլաներենում ընդհակառակը կա միայն w և չկա բնավ v (Lafan BSL հտ. 30, № 90, էջ 153):

w կիսաձայնը e, i ձայնավորների մոտ դառնում է wy աֆրիկյան աշանտե լեզվի մեջ, ըստ Պրիստալլերի (էջ 5), որ նույն ձայնը արձանագրում է w ձևով:

Հին լեզուներից հունարենը և լատիներենը ունենին այս ձայնը, Վիտենյը (Inb. Gramm., § 57) ասում է, թե սանսկրիտի մեջ ուր որ v ձայնին նախորդում է մի բաղաձայն, v հնչվում է իբր w, որ սակայն եվրոպացի ուսումնականները իբր v են հնչում: Հունարենում զանակվում էր F տառով, իսկ լատիներենում՝ պարզապես u ձայնավորով: Պատմական շրջանում երկուսն էլ ջնջվեցին. հունարեն F բուլղոփին ջնջվեց, իսկ լատիներեն u կիսաձայնը վերածվեց v-ի: Այսպես՝ լատիներեն uenit, որ հնապես հնչվում էր wenit, հետո հնչվում էր venit:

Հին հայերենը առատորեն ուներ այս կիսաձայնը, որ ներկայանում էր u տառով, և որի մեկ ուրիշ զանազանությունն էր բաղաձայն ու-ն, ինչպես Դունալ (= Դինա), Արուանդ (= Երվանդ) և այլն: Ինչպես լատիներենում, այնպես և հայերենում սույն կի-

սաձայնը ավելի հետո վերածվեց բաղաձայն վ-ի և այսօր մեր գրական լեզուն իսպառ անընդունակ է արտաբերելու նույն ձայնը:

Սակայն եթե գրական հայերենը չունի կիսաձայն u, ընդհակառակը բարբառները գիտեն արտասանել այն: Մուշի, Վանի, Կիկոսակը բարբառները գիտեն արտասանել այն: Մուշի, Վանի, Կիկոսակը թուրքերենում և այլ բարբառներում բառամիջի ո ձայնավորը լիկիալի, Սիրիալի և այլ բարբառներում բառամիջի ո ձայնավորը իրենից սուաջ ստանում է միշտ u կիսաձայնը, ինչպես փոր, գորս իրենից սուաջ ստանում է միշտ u կիսաձայնը, ինչպես փոր, գորս (իմա՝ p'yor, gyort և այլն): Սուազավայի հայոց բարբառում հաճախ գտնում ենք ձայնավորից հետո, ինչպես ցաւ, հաւ և այլն: Տիգրանակերտի բարբառում գոյություն ունի նախաձայն u, ինչպես լըրեհ "վրա", լըր "որ", մինչև իսկ օտար փոխառյալ բառերի մեջ ինչպես լախա "ժամանակ" (արաբերեն vaqt):

Կիսաձայն u (w, y) բոլոր լեզուների մեջ էլ սովորաբար արտասանվում է թրթռուն ձևով, բայց երբեմն հարեան խուլ բաղաձայնի ազդեցությամբ կարող է արտասանվել առանց թրթռումների: Այսպես՝ խուլ է անգլերեն բառակցի wh կիսաձայնը, ինչպես what, which. նույնպես և խուլ է ֆրանսերենի poids, point բառերի մեջ լաված y կիսաձայնը: Խուլ w ունի լապպերենը (wiklund, 6 գրված lv): Խուլ w ունեն նաև մոնղոլերենը, ամերիկյան հուպա լեզուն, ամերիկյան տակելիմա լեզուն (Boas, հտ. 2, 31, 35) և այլն:

Կիսաձայնները առհասարակ կազմում են երկբարբառներ:

Երկբարբառ կոչվում է մի կիսաձայնից և մի ձայնավորից կամ երկու ձայնավորից կազմված մի ձայնախումբ, որ արտաբերվում է մի անգամից:

Երկբարբառները լինում են երկու տեսակ՝ աճուն և նվազուն: Աճուն երկբարբառները կազմված են մի կիսաձայնից կամ մի կարճ ու տկար ձայնավորից, որին հաջորդում է մի ամբողջ ձայնավոր, ինչպես ուա, ւա: Այս պարագային աճուն է կոչվում երկբարբառը, որովհետև առաջին տկար ձայնից բարձրանում ենք երկրորդ ուժեղ ձայնավորին: Երբ երկբարբառը կազմված է հակառակ դիրքով, այսինքն առաջին տարբը մի ամբողջ ձայնավոր է, որին հաջորդում է մի կիսաձայն կամ մի տկար ձայնավոր, այդ պարագային երկբարբառը կոչվում է նվազուն, ըստ որում ուժեղից իջնում ենք դեպի ավելի թույլը: Օրինակ, աու, աւ, էա, իա: Թե՛ աճուն և թե՛ նվազուն երկբարբառները ստորաբաժանվում են նույնպես և երկու տեսակի. առաջինները կազմված են լինում կիսաձայն ձայնավոր կամ ձայնավոր կիսաձայն, ինչպես ւա կամ աւ, իսկ երկրորդները՝ երկու ձայնավորից, ինչպես աու, ուա:

Այս սահմանումները մեզ միջոց են տալիս կազմելու նախօրոք ցուցակն այն բոլոր երկրաբառների, որոնք կարող են գոյություն ունենալ մարգկային լեզվի մեջ: Ամեն մի կիսաձայն (i, ü, y) կարող է միանալ ձայնավորների բոլոր աստիճանների հետ և կազմել աճուն կամ նվազուն երկրաբառներ: Հաշվելով միայն այն 18 ձայնավորները, որոնք նշանակված են ձայնավորների եռանկյան մեջ, մենք կունենանք 54 աճուն և 54 նվազուն, գումարը՝ 108 երկրաբառ: Նույնիսկ եթե առենք այդ ձայնավորներից 8 ամենագլխավորները (a, e, i, ö, ü, ə, o, u), կունենանք դարձյալ 24 աճուն և 24 նվազուն, գումարը՝ 48 երկրաբառ: Իսկ եթե հաշվենք երկու ձայնավորով կազմված երկրաբառները, առնելով 18 ձայնավոր, կունենանք 306 երկրաբառ, իսկ առնելով միայն 8 գլխավոր ձայնավորները, դարձյալ կունենանք 56 երկրաբառ: Երկու խմբերը միասին 414 երկրաբառ, կամ զոնե գլխավորները՝ 104 երկրաբառ: Բայց կարելի է նաև կազմել երկար ձայնավորով երկրաբառները. այսպես, օրինակ, հին իտալացիները զանազանում է au, eu, iu կարճ և āu, ēu, iū երկար ձայնավորները:

Բայց աշխարհի մեջ չկա մի լեզու, որ այսքան երկրաբառ ունենա: Հենց միայն այն պատճառով, որ շատ լեզուներ զուրկ են ö, ü, e ձայնավորներից և ù կիսաձայնից, երկրաբառների կարելի թիվը իջնում է 40: Ուրիշ հանգամանքներ, օրինակ, կիսաձայնի թավ հնչումը, զույգ ձայնավորների ի մի ձուլումը և այլ նման ձայնաբանական երևույթներ պատճառ են դառնում ավելի ևս կրճատելու երկրաբառների թիվը և երբեմն իսպառ ջնջելու նրանք լեզվի միջոց: Այսպես, օրինակ, թուրքերենը ո՛չ մի երկրաբառ չունի, որովհետև այդ լեզվի մեջ բոլոր կիսաձայնները թավանալով, դարձել են բաղաձայն, հետևաբար և բոլոր երկրաբառները դարձել են մի ձայնավորից և մի բաղաձայնից կազմված ձայնախմբեր: Ամերիկյան կվիչե լեզուն երկրաբառ չունի (Lewy, 934): Այսպես են նաև ասուրերենը և նոր լեզուներից նոր հունարենը:

Երկրաբառ չունի և շվեդերենը, ուր նույնիսկ Europa, August հնչվում են իրարից հետո՝ E-uropa, A-ugust (Poestion 1, Lehrb. Swed, 4):

Երկրաբառ չունի հունդարերենը, յ ձայնը, ամեն անգամ որ գտնվի ձայնավորից հետո, բաղաձայն է, ինչպես báj, fej և այլն (տե՛ս Ney, Ungarische sprachlehre, Pest, 1862, էջ XVIII):

Երկրաբառ չունի լեհերենը, ուր ամեն անգամ երբ երկու ձայնավոր պատահեն իրար, հնչվում են առանձին, ինչպես na-u-

ka. նույնիսկ E-u-ro-pa. և երբ ածանցման մեջ ձայնավորի վրա մի ձայնավոր էլ ավելանա, մեջտեղը կորոհի յ կամ w (Joe, 5)

Երկրաբառ չունի վրացերենը և, օրինակ, չալ բառը հնչվում է այստեղ երկու անգամ ձայնավորով, իբր չա-i (Dirr., Gramm. georg., 1):

Երկրաբառ չունի բասկերենը:

Չեխերենը ունի միայն մի երկրաբառ, որ է ou:

Խախտ գրություն մեջ է օսերենը, ուր կան ai, äi, au, äu, ei, eu, ui, üi, oi, iu, ̣i երկրաբառները, որոնք մերթ հնչվում են իբր գուտ երկրաբառ, մերթ իբր երկու անգամ ձայնավոր և մերթ միջանկյալ բաղաձայնով (իբր ävu, ayi և այլն) (Miller, Die Sprachlehre d'os., 12):

Դանիերենը, որ ունի 15 երկրաբառ (au, ey, äy, iy, ou, üy, öu, ðu, uy, ai, il, oi, ði, ði) գրական լեզվի մեջ հնչում է իբր երկրաբառ, ժողովրդական լեզվի մեջ՝ իբրև ձայնավոր բաղաձայն. սրա համար էլ նույնները գրվում են av, ev, aj, ej, eg, ek, ig և այլն (Poestion, 37—39):

Ամերիկյան կիրիրի լեզուն չունի երկրաբառ և ուր որ երկու ձայնավոր պատահեն, պետք է հնչել իբրև առանձին վանկեր (Gabelentz, 5): Աֆրիկյան սեսուտո (բանտու) լեզուն չունի երկրաբառ (Beyer, 3):

Լապպերեն լեզուն ունի շատ երկրաբառներ, ինչպես՝ oa, ei, ai, el, äi, oi, ui, uə, uo, au, eu, äu, iu, ou, ua, նաև եռաբառաբառներ uəi, uel, iuo, uəu (Wiklund, 2—3):

Հին լեզուներից հունարենն ու լատիներենը, հատկապես առաջինը հարուստ էին ամեն տեսակ երկրաբառներով: Միջին բարձր գերմաներենը ուներ ei, iu, ie, ou, ðu, uo, üe երկրաբառները Սանսկրիտը ունի միայն երկու երկրաբառ, այն է ai, au: Հին հայերենը ուներ նույնպես բաղաձայն երկրաբառներ, որոնց վրա մանրամասն կխոսենք ժ գլխում:

Նոր լեզուներից երկրաբառներով հարուստ են ֆրանսերենը, գերմաներենը և անգլերենը: Պորտուգալերենն ունի 7 երկրաբառ, ֆիններենը ունի 15 երկրաբառ, ղանիերենը նույնպես 15 երկրաբառ: Արդի լեզուներից երկրաբառներով շատ հարուստ է անամերենը, ուր կա 22 երկրաբառ, որոնք են, ըստ գիտական տառամերենը, ուր կա 22 երկրաբառ, որոնք են, ըստ գիտական տառամերենը՝ ai, äi, au, äu, äo, eo, éu, ie, iu, oa, öi, ói, öi, ðü, üa, üä, üè, üé, üö, üi, üä, üö (Dirr, Gramm. annam. 1—3):

Չինարենն ունի հետևյալ երկրաբառները (գիտական տառա-

Այս սահմանումները մեզ միջոց են տալիս կազմելու նախօրոք ցուցակն այն բոլոր երկբարբառների, որոնք կարող են գոյություն ունենալ մարգկային լեզվի մեջ: Ամեն մի կիսաձայն (i, ū, y) կարող է միանալ ձայնավորների բոլոր աստիճանների հետ և կազմել աճուն կամ նվազուն երկբարբառներ: Հաշվելով միայն այն 18 ձայնավորները, որոնք նշանակված են ձայնավորների եռանկյան մեջ, մենք կունենանք 54 աճուն և 54 նվազուն, գումարը՝ 108 երկբարբառ: Նույնիսկ եթե առենք այդ ձայնավորներից 8 ամենագլխավորները (a, e, i, ɔ, ū, ə, o, u), կունենանք դարձյալ 24 աճուն և 24 նվազուն, գումարը՝ 48 երկբարբառ: Իսկ եթե հաշվենք երկու ձայնավորով կազմված երկբարբառները, առնելով 18 ձայնավոր, կունենանք 306 երկբարբառ, իսկ առնելով միայն 8 գլխավոր ձայնավորները, դարձյալ կունենանք 56 երկբարբառ: Երկու խմբերը միասին 414 երկբարբառ, կամ գոնե զլխավորները՝ 104 երկբարբառ: Բայց կարելի է նաև կազմել երկար ձայնավորով երկբարբառները, այսպես, օրինակ, հին իուլանդերենը զանազանում է au, eu, iu կարճ և āu, ēu, iū երկար ձայնավորները:

Բայց աշխարհի մեջ չկա մի լեզու, որ այսքան երկբարբառ ունենա: Հենց միայն այն պատճառով, որ շատ լեզուներ զուրկ են ɔ, ū, e ձայնավորներից և ū կիսաձայնից, երկբարբառների կարելի թիվը իջնում է 40: Ուրիշ հանգամանքներ, օրինակ, կիսաձայնի թավ հնչումը, զույգ ձայնավորների ի մի ձուլումը և այլ նման ձայնաբանական երևույթներ պատճառ են դառնում ավելի ևս կրճատելու երկբարբառների թիվը և երբեմն իսպառ ջնջելու նրանք լեզվի միջոց: Այսպես, օրինակ, թուրքերենը ո՛չ մի երկբարբառ չունի, որովհետև այդ լեզվի մեջ բոլոր կիսաձայնները թավանալով, դարձել են բաղաձայն, հետևաբար և բոլոր երկբարբառները դարձել են մի ձայնավորից և մի բաղաձայնից կազմված ձայնախմբեր: Ամերիկյան կվիչե լեզուն երկբարբառ չունի (Lewy, 934): Այսպես են նաև ասուրերենը և նոր լեզուներից նոր հունարենը:

Երկբարբառ չունի և շվեդերենը, ուր նույնիսկ Europa, August հնչվում են իրարից հետո՝ E-uropa, A-ugust (Poestion 1, Lehrb. Swed, 4):

Երկբարբառ չունի հունդարերենը,] ձայնը, ամեն անգամ որ գտնվի ձայնավորից հետո, բաղաձայն է, ինչպես báj, fej և այլն (տե՛ս Ney, Ungarische sprachlehre, Pest, 1862, էջ XVIII):

Երկբարբառ չունի լեհերենը, ուր ամեն անգամ երբ երկու ձայնավոր պատահեն իրար, հնչվում են առանձին, ինչպես na-u-

ka. նույնիսկ E-u-ro-pa. և երբ ածանցման մեջ ձայնավորի վրա մի ձայնավոր էլ ավելանա, մեջտեղը կորոհի] կամ w (Joe, 5)

Երկբարբառ չունի վրացերենը և, օրինակ, չաբ բառը հնչվում է այստեղ երկու անշատ ձայնավորով, իբր չa-i (Dirr., Gramm. georg., 1):

Երկբարբառ չունի բասկերենը:

Զեխերենը ունի միայն մի երկբարբառ, որ է ou:

Խախուտ դրուխան մեջ է օտերենը, ուր կան ai, ai., au, āu, ei, eu, ui, ūi, oi, iu, ! երկբարբառները, որոնք մերթ հնչվում են իբր զուտ երկբարբառ, մերթ իբր երկու անշատ ձայնավոր և մերթ միջանկյալ բաղաձայնով (իբր auu, ayi և այլն) (Miller, Die Sprachlehre d'os., 12):

Դանիերենը, որ ունի 15 երկբարբառ (au, eu, āu, iu, ou, ūu, ōu, ōu, uu, ai, il, oi, ōi, ōi) գրական լեզվի մեջ հնչում է իբր երկբարբառ, ժողովրդական լեզվի մեջ՝ իբրև ձայնավոր բաղաձայն. սրա համար էլ նույնները գրվում են av, ev, aj, ej, eg, ek, ig և այլն (Poestion, 37—39):

Ամերիկյան Կիրիբի լեզուն չունի երկբարբառ և ուր որ երկու ձայնավոր պատահեն, պետք է հնչել իբրև առանձին վանկեր (Gabelentz, 5): Աֆրիկյան սեսուտո (բանտու) լեզուն չունի երկբարբառ (Beyer, 3):

Լապպերեն լեզուն ունի շատ երկբարբառներ, ինչպես՝ oa, ei, ai, ei, ai, oi, ui, uə, uo, au, eu, āu, iu, ou, ua, նաև եռաբարբառներ uəi, uei, iuo, uəu (Wiklund, 2—3):

Հին լեզուներից հունարենն ու լատիներենը, հատկապես առաջինը հարուստ էին ամեն տեսակ երկբարբառներով: Միջին բարձր գերմաներենը ուներ ei, iu, ie, ou, ōu, uo, ūe երկբարբառները Սանսկրիտը ունի միայն երկու երկբարբառ, այն է ai, au: Հին հայերենը ուներ նույնպես բազմաթիվ երկբարբառներ, որոնց վրա մանրամասն կխոսենք ժ գլխում:

Նոր լեզուներից երկբարբառներով հարուստ են ֆրանսերենը, գերմաներենը և անգլերենը: Պորտուգալերենն ունի 7 երկբարբառ, ֆիններենը ունի 15 երկբարբառ, դանիերենը նույնպես 15 երկբարբառ: Արդի լեզուներից երկբարբառներով շատ հարուստ է անամերենը, ուր կա 22 երկբարբառ, որոնք են, ըստ գիտական տառամերենը, ուր կա 22 երկբարբառ, որոնք են, ըստ գիտական տառամերենը՝ ai, ai, au, āu, āo, eo, éu, ie, iu, oa, ōi, o'í, ōi, ōü. ūa, ūā, ūē, ūé, ūð, ūi, ūa, ūö (Dirr, Gramm. annam. 1—3):

Զինարենն ունի հետևյալ երկբարբառները (գիտական տառա-

գարձությամբ). əo, éi, ai, āu, ao, óu, ùi, úē, óē, ia, ie, io, iu, ua, uo, ūa, ūe, (Seidel, Chin, gramm., 15):

Յակուտերենն ունի 15 երկբարբառ, որոնք են. ai, āi, oi, õi, õi, ii, ui, ūi, ie, əa, iā, uo, ūō (Radloff, Die jakut. sprachlehre, 3, Ястремский 6), նաև երկար ձայնավորներով ūi, āi. Թունգուսերենն ունի 13 երկբարբառ (Adam, Gram. tong., 12):

Բուրյաթերենն ունի 10 երկբարբառ, որոնք են ai, āi, ei, oi, ei, ea, oa, ee, ie, eo (Castrén, 1):

Մինչև անգամ այնպիսի լեզուներ, ինչպես հոսենդոտյան նամա լեզուն, հարուստ է զանազան երկբարբառներով (Seidel, Hspr. 1):

Ամերիկյան տակելմա լեզուն ունի բաշմաթիվ կարճ երկբարբառներ (ai, au, ei, oi և այլն) և բազմաթիվ երկար երկբարբառներ (āi, āu, õi, õu և այլն (Boas, II, 11): Ամերիկյան սիուալավան լեզվի մեջ կան բազմաթիվ երկբարբառներ, որոնց ինչպես առաջին, նույնպես և երկրորդ կզրը կարող է լինել երկար ձայնավոր. այսպես ունենք āi, āu, ūi, ai, aū (Boas, II, 444):

Ամերիկյան գոսիսիբա լեզուն ունի 13 երկբարբառ, որոնք են ai, au, ei, eu, ia, ie, oi, ou, õi, ua, ue, ui, uo և 6 եռաբարբառ, որոնք են iai, iau, iei, ieu, uai, uei (R. Caledon, 2—3):

Ամերիկյան կոգգարա լեզուն ունի նույնպես 13 երկբարբառ (ai, au, ei, eu, ia, ie, iu, ou, õi, ua, ue, ui, ūi) և 4 եռաբարբառ՝ iai, iei, uai, uei (Caledon, 2):

Օվկիանիայի տահիթի լեզուն ունի 15 երկբարբառ. ae, ai, ao, au, ei, eo, eu, ia, ie, iu, oe, õi, ou, ue, ui (X, 8 և Senac, 17):

Օվկիանյան սամոա լեզուն թեև շատ ունի ձայնավորների խմբեր, բայց ոչ մի երկբարբառ չունի. բոլոր ձայնավորները առանձին են արտասանվում և մինչև իսկ գրության մեջ զրվում է մի մակակետ՝ զույգ ձայնավորները իրարից բաժանելու համար (Funk, 1): Մալայերեն լեզուն էլ երկբարբառ չունի և, օրինակ, ai և նման ձայնական խմբերը կարգում է առանձին-առանձին՝ ai և այլն (Seidel, 5):

Աֆրիկյան նգոնե (զուլու) լեզուն չունի երկբարբառ, բնենց որ երկու ձայնավոր պատահեցին իրար, հնչվում են առանձին-առանձին վանկերով. եթե արագ խոսակցության մեջ լսենք որևէ երկբարբառ, երբ լավ ուշադրություն դարձնենք, կտեսնենք, որ երկու ձայնավորի միջև y կամ w ձայնավորը կա» (Elmslie, 1): Այսպես է նաև քաֆիր լեզվում, ուր gaula, laula և նման բառեր զրվում են երբեմն gawula, lawula (Laren, 3):

Աֆրիկյան ակասելե լեզուն չունի երկբարբառ. ei, ai, eo

հնչվում են առանձին-առանձին և նրանց պետք է համարել զույգ ձայնավորներ (Westermann, 61):

Օսալայերեն լեզուն ունի 21 երկբարբառ, որոնք գասավորում ենք հետևյալ ձևով.

ai,	ei,	oi,	ui,	ūi		iu,	ou,	ea
āi,	ēi,	oi				īu,	ōu,	ue
au,	eu					ie,	oe	
āu,	ēu							
ae								

(Castren, 1):

Աֆրիկյան էվե լեզուն գրեթե բոլոր ձայնավորներով կարող է երկբարբառ կազմել. ինչպես, ae, ao, au, ea, ee, eo, eu, ia, ie, ii, io և այլն. երկբարբառները կարող են լինել բարձրացող (ինչպես ֆրանսերեն roï), բայց կարող են լինել նաև իջնող (ինչպես գերմաներեն äuge). բայց այս լեզվի մեջ շեշտը, այլև տոնը կազմում է զանազան երկբարբառներ, ինչպես âè (բարձր-ցած), âè (միջին-ցած), áè (բարձր-միջակ): Բայց երկբարբառներում տոները կարող են նաև հավասար լինել. ինչպես âè (երկուսն էլ բարձր), àè (երկուսն էլ ցածր), áé (երկուսն էլ միջակ) Westermann 2—3):

Ունի նաև եռաբարբառներ, ինչպես eae, iae, uie և այլն (անդ):

Լատուերենը, որ սիամերենի նման մի լեզու է, ամենահարուստն է այս կողմից, նա ունի 37 երկբարբառ, որոնց ստապարձությունը հետևյալն է.


ai,	ao,	āy,	āo,				
ēo,	ēu,	ēo,	ēu,				
ia,	ie,	iu,	iē,				
īa,	īe,	īo,	īu,	iō,	iō		
òi,	ôy,	ôy,					
ua,	ue,	ui,					
ūa,	ūe,	ūo,	ūu,	ūl,	ūō,		
ūā,	ūē,	ūō,					
ūā,	ūē,	ūō,	ūō.				

(Hospitalier, 57—82):


Արդի գրական հայերենը ջնջած լինելով կիսաձայնները, չունի նաև երկբարբառ. բայց բարբառների մեջ կան: Երկբարբառներով առանձնապես հարուստ են Մարաղայի, Սիրիայի, Անտիոքի, Սվեդիայի—Մուսա լեռան և Ավստրոհունգարիայի բարբառները: Այս բոլորի մասին կխոսենք ժ գլխում:

Երկրաբաբառներն ունեն երեք էական հատկություն.

ա) Երկրաբաբառը կազմող երկու ձայնավորներից մեկից մյուսին անցումը կատարվում է աստիճանաբար. գործարանները նախ ստանում են այն դիրքը, որ կարևոր է երկրաբաբառների առաջին տարրը արտաբերելու համար և հետո իրար հետևից շարունակ և աստիճանաբար անցնելով բոլոր միջին դիրքերից (առանց սակայն նրանցից որևէ մեկի վրա առանձնապես կանգ առնելու), հասնում են վերջապես երկրաբառի երկրորդ տարրին: Այսպես, օրինակ, *ai* երկրաբաբառը արտասանելու ժամանակ լեզուն և շրթունքները նախ ստանում են *a* ձայնավորի դիրքը, հետո անցնում են ձայնավորների այն ամբողջ շարքով, որ գտնվում են մինչև *i*. այն է *ä, è, e, é, i* և բոլոր սրանց միջին աստիճանները. բայց նրանցից և *o'z* մեկի վրա կանգ չեն առնում, այնպես որ ականջը չի լսում այդ ձայները, այլ միայն զանազանում է սկիզբը և վախճանը:



բ) Բոլոր երկրաբաբառների մեջ կա միշտ մի գլխավոր տարր, որի վրա արտասանության ժամանակ միշտ մյուսներից ավելի ենք կանգնում. առուն երկրաբաբառների մեջ այդ է երկրաբառի երկրորդ մասը, իսկ նվազուն երկրաբաբառների մեջ՝ նրա առաջին մասը: Եթե երկրաբաբառը ստանա շեշտ, միշտ այդ տարրն է որ կրում է շեշտը. ինչպես *ái*, բայց *uá* և այլն:



Երկրաբաբառների արտասանության ժամանակ կատարված գործողությունը կարելի է ներկայացնել հետևյալ պատկերի մեջ, որ *ai* երկրաբառի պատկերն է.

Պատկերն ավելի պարզ կլինի, եթե ներկայացնենք նաև *o'z* երկրաբաբառային *a—i* ձայնախմբի պատկերը.

Առաջինի մեջ սկզբնական դադարից հետո թեքումը դանդաղ և աստիճանական է, իսկ երկրորդի մեջ՝ հանկարծական:

գ) Երկրաբառի երկու տարրերը արտաբերվում են մեկ ան-

գամից (իմա՝ մեկ շնչով), մինչդեռ ձայնավորների հաջորդության մեջ արտաբերությունը լինում է երկու անգամից:

Ինչպես ձայնավորները, նույնպես, և ավելի ևս, երկրաբաբառները արտասանության կողմից լեզվից լեզու և բարբառից բարբառ տարբերվում են. օրինակ, կարիք չկա կարծելու, թե միևնույն *au* երկրաբաբառը ամեն լեզվի մեջ միևնույն ձևով է հնչվում. ոչ— Մի տեղ *a* ձայնը քմային է, մի ուրիշ տեղ կատկային, մի այլ տեղ *ü* բաց է լինում, մի ուրիշ տեղ փակ *ü* և այլն:

Երկրաբաբառների դասավորությունը ամեն լեզվի մեջ էլ պարտադիր և սիմետրիկ (համադիր կամ համաշափ) չէ. օրինակ, գրաբարի մեջ *y* կիսաձայնով կազմված երկրաբաբառներից ունենք *այ* և *ոյ*, բայց պակասում են *իյ*, *ըյ*, *էյ*, *եյ*, *ույ* ձևով երկրաբաբառներ: նույնպես և կիսաձայնով ունենք *աւ*, *եւ*, *իւ*, բայց պակասում են *էւ*, *ու* (*ու*), *ըւ* երկրաբաբառներ: Այս բանը ավելի մեծ շափերով գտնվում է մեր բարբառների մեջ, ինչպես մի թեթև համեմատությունից էլ կարելի է տեսնել:

Երկրաբաբառների համար, ինչպես ասացինք, ընդունված է այն սկզբունքը, որ նրանք ներկայացնում են առաջին եզրից մինչև երկրորդ եզրը եղած բոլոր ձայնական աստիճանները. օրինակ, *ai* ներկայացնում է *a—ä—è—i* ամբողջ շարքը: Բայց այս անցումները այնքան արագ և խուսափուկ են, որ ականջը չի կարողանում որոշել նրանք և լսում է միայն առաջին և վերջին եզրերը՝ *a* և *i*: Ուղեյ լեզվի մեջ, ըստ Շենյոգերի (էջ 84), երկրաբաբառները երկու կարգի են բաժանվում. մի կարգը այնպես է, որ իրոք միջին կամ անցման մասերը չեն լսվում և միայն երկու ծայրերն են լսվում, իսկ մյուս կարգը այնպես է (այսինքն այնպես դանդաղ է), որ բոլոր անցման աստիճանները իրար հետևից շարունակաբար լսելի են ականջին:

Բացի մաքուր ձայնավորներից, երկրաբաբառների կազմության մեջ մտնում են նաև ռեզալին ձայնավորներ: Ռեզալին ձայնավորներ ունի պորտուգալերենը. դրանք թվով երեք են և պորտուգալերենի այբուբենով գրվում են *ãe, ão, oe*. իսկ իրապես՝ լեզվաբանական այբուբենով պետք է նշանակել *æ', â', ó', e'*, կամ, ավելի ճիշտ, ըստ Անշտետի (էջ 4) *ai, æ, oi*, երեքն էլ նվազուն այսինքն՝ առաջին ռեզալին ձայնավորը ավելի ուժեղ և ավելի երկար քան երկրորդ ռեզալին ձայնավորը:

Աֆրիկյան աշանտե լեզվում կան 5 տեսակ երկրաբաբառներ. այն է՝ ա) երկու ձայնավորից կազմված երկրաբաբառներ, որոնք

Խրիստոսը (այս լեզվի քերականության հեղինակը, էջ 3) կոչում է ո՛չ թե երկարառ, այլ բաղադրյալ ձայնավոր, ինչպես՝ ai, au, ea, ee, ei, oa, oe, oo, ua, ue, ui, uo, ia, ie, io:

բ) Մի ձայնավորից և մի կիսաձայնից կազմված երկարառներ, ինչպես՝ aw, ew, ow, uw, iw:

գ) Մի ռեզային ձայնավորից և մի պարզ ձայնավորից բաղկացած երկարառներ, ինչպես՝ ae, ea, ee, oa, oe, ua, ui:

դ) Մի ռեզային ձայնավորից և մի կիսաձայնից բաղկացած երկարառ, որ է՝ aw:

Սրանցից դուրս, նույն հեղինակը հիշում է առանձին խմբով, ե) երկարառներ, որոնց առաջին ձայնավորը շատ կարճ է՝ -ia, iā, eā, eā, ua, uā, uā, uō:

Մոնղոլերենն ունի aē, oē, ui երկարառները, որոնց երկրորդ մասը ռեզային է (Владимирцев, Справ. грам., 56):

Ուրիշ լեզուների մեջ ռեզային երկարառներ չկան. նույնիսկ ֆրանսերենը, որ ունի ռեզային ձայնավորներ, երբ երևան է հանում մի այնպիսի երկարառ, որի երկրորդ մասը ռեզային ձայնավոր է, առաջինը պահում է մաքուր ձայնավորի վիճակում, ինչպես coin, այսինքն kwā և ոչ թե kūā և այլն:

Հայերենը չունենալով ռեզային ձայնավորներ, բնականաբար չունի նաև ռեզային երկարառներ:

Յուրաքանչյուր երկարառ կարող է աճել մի երկրորդ կիսաձայնով, և այն ժամանակ երկարառը դառնում է եռարառ: Աճոն երկարառները կիսաձայնը ավելացնում են վերջում, իսկ նվազոն երկարառները նույն կիսաձայնը ավելացնում են սկիզբը. այսպես՝ ŷa աճոն երկարառից կարելի է կազմել ŷai եռարառը կամ au նվազոն երկարառից iaŷ եռարառը:

Եռարառները բավական սովորական են իտալերենի և իսպաներենի մեջ, ինչպես՝ իտալերեն miel «խմոնք», tuoi «քոնոնք», buoi «եղներ», guai «վալ», buio «մութ, խավար», և նույնիսկ guáio «գոթախառնություն»: Այսպես է նաև իսպանական Uru-guai երկրանունը:

Իտալերենին և իսպաներենին մերձավոր լեզու է լանգդոկը, որ ունի օ եռարառ, որոնք են՝

- iau—օրինակ՝ siau (սիաու) «հանդարտ».
- ieu—օրինակ՝ ieu (իեու) «ես».
- iei—օրինակ՝ sièis (սիեիս) «վեց».

uei—օրինակ՝ uèit (իւէիթ = լուեիթ) «ուիթ».
iou—օրինակ՝ biou (բիու) «կղ»

(Salvatori, Gramm. occitane, 5):

Արևելյան լեզուներից լակտերենն ունի 4 եռարառ. այն է՝ əai, uoi, iai, üöi, (Radloff, Die jakut. spr., 4, Ястремский, 6):

Չինարենն ունի 5 եռարառ: iai, iau, iāo, uai, uēi (Seidel, Chin. Gramm., 16):

Աննամերենում կա 7 եռարառ, այն է՝ iou, oai, üöi, üöi, öüi, üöü, öüu (Dirr, Gramm. annam. 3):

Լաոսերենում կա 11 եռարառ. iao, iau, ieo, ieu, ŷao, ŷau, ŷeo, ŷeu, uah, ŷey, (Hospitalier, 57—82):

Աֆրիկյան աշանտե լեզվի մեջ կա 12 եռարառ, որոնցից մեկը ռեզային ձայնավորով. eae, eew, iae, iaw, iei, oae, oaw, oee. uae, uaw, uae, uei (Christaller, 3):

Առհասարակ հետամոնաց ցեղերի լեզուները հարուստ են ձայնավորներով և նրանց հետ նաև երկարառներով, եռարառաներով, նույնիսկ քառարառներով. օրինակ՝ Hawaï կամ Սանդվիչյան կղզիների խմբում գտնված կղզիների անուններն են՝ Oahu, Hawaï, Mauï, Kuaï, Miihau, Molokai, Lanai, Kahilau:

Օվկիանյան տահիթի լեզվում ո՛չ միայն ամեն բառ ձայնավորով է վերջանում, այլև բառամիջում երկու բաղաձայն կողք-կողքի չկա երբեք: Լեզուն լիքն է ձայնավորներով. օրինակ՝ մի նախադասություն՝ hoe a maitai to te ia ota e te ia ama «ձուկը հում նույնքան լավ է, որքան եփածը» (ուր 8 բաղաձայնի դեմ կա 19 ձայնավոր) (Sénac, 17, 36):

Ամերիկյան կահիտա լեզվով eriaua «սիրվել» (Buelna, 7):
Հին հայերենում եղած եռարառներն են.

1. յ կիսաձայնով կազմված՝ եայ, էայ, տայ, ուայ.
2. ՚ կիսաձայնով կազմված՝ եաւ, էիւ, ուաւ.

Սրանց մասին ավելի երկար կխոսենք Ժ գլխում:

Գրական լեզուն չունի եռարառ, քանի որ չունի նույնիսկ երկարառ. բայց բարբառներում կարելի է գտնել:

Երկարառների համար ունենք նկատելի երկու հանգամանք.

1. Երբ կիսաձայնը այնպես թավ է, որ այլևս դարձել է բաղաձայն, նրա միացումը որևէ ձայնավորի հետ՝ չի կարող կազմել երկարառ: Այսպես գերմաներեն ja, jung, անգլերեն yard, yes, հայերեն այո, ճայ, նայո և այլն բառերի մեջ ya, ye, yo, ay ձայնախմբերը երկարառ չեն, այլ մի ձայնավորից և մի բաղաձայնից կազմված վանկեր, ճիշտ ինչպես վա, վե, ալ և այլն:

2. Երկու հաջորդական ձայնավորներ անպատճառ երկբարբառ չեն կազմում: Երկբարբառ լինելու համար նրանք պետք է որ արտասանվեն մեկ անգամից, իսկ եթե արտասանվում են ազատորեն (երկու անգամից), ուրեմն կազմում են երկու վանկ, ինչպես ձիաճ, ձիով և այլն:

Այս նկատողությունները արժեն նաև եռաբարբառների համար:

Երկբարբառների մի առանձին ձև ունի մոնղոլերենը, որ զբաղաբարբառն ընդհանրապես շատ դժվար է. երկբարբառը սկսվում է մի որոշ ձայնավորից և աստիճանաբար անցնելով միջին ձայնավորների բոլոր աստիճաններից, հասնում է մինչև մի որոշ ձայնավորի: Այս կարգի երկբարբառները կարելի է կոչել բազմաբարբառ (polyphthongue). այսպես են ae, oe, ui, իմա՝ ãe, øe, uí (Владимирцев, Справ. грамм., 56):

Գ Լ Ո Ւ Պ Յ

Բ Ա Ղ Ա Ջ Ա Յ Ն Ե Ր

Ա) ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ասացինք, որ բաղաձայն է կոչվում այն ձայնը, որի արտաբերության ժամանակ զործարանները կամ շափազանց մոտեցած են իրար և կամ բոլորովին փակ են. այնպես որ թոքերը բարձրացած օդի հոսանքը դուրս է գալիս բերանից կա՛մ լայնորեն շոշափելով զործարանների պատերը և կամ նույնիսկ պայթյունով:

Այս սահմանից երևում է, որ բաղաձայնները բնախոսորեն երկու տեսակ են.


1. Նրանք, որոնք ձևանում են զործարանների անձուկ մերձեցումով. այս պարագային, որովհետև զործարանները կազմում են մի նեղ անցք, որ ամբողջ ժամանակ բաց է մնում, ուստի օդի հոսանքը դուրս է գալիս շարունակ, առանց զազարի, տևականորեն. խոսողը կարող է ըստ կամս երկարել այս կարգի բաղաձայնների արտաբերությունը, ինչպես՝ բ, յ, վ, ֆ, ս, ժ, շ և այլն: Այսպիսի բաղաձայնները կոչվում են սեղմ (constrictive) կամ տևական (continue):

2. Նրանք, որոնք ձևանում են զործարանների ամբողջական փակումով. բնականաբար փակումը լինում է վայրկենական, որից հետո հանկարծ բացվում է և օդի՝ արգելքով պահված հոսանքը դուրս է պոսթիկում. խոսողը, հակառակ իր ջանքերի, անկարող է երկարել ըստ կամս այս բաղաձայնների արտաբերությունը, ինչպես բ, պ, փ, ք և այլն: Այս կարգի բաղաձայնները կոչվում են

պայթական (occlusive, explosive) կամ վայրկեցական (momentané):

3. Կա և բաղաձայների մի երրորդ տեսակ, որ բոլորում է նախորդ երկուսի միջին տեղը. այսպես են *ճ, չ, ջ, ծ, ձ*, որոնք զժվարավ կարող է մարդ երկարել և երկարելու դեպքում էլ երկրորդ մասը լսվում է իբր *ս, զ, ժ, շ*, որ և իրական պատճառ է դառնում նույն ձայների տեղափոխումը երկարելու: Այս կարգի բաղաձայնները կոչում են կիսապայթական (semi-occlusive, affriquée կամ miocclusive):

Ինչպես ձայնավորների, նույնպես և բաղաձայնների արտաբերության ժամանակ կա երեք մոմենտ. լարում, կացք և էջք: Այս երեք մոմենտները առանձնապես կարևոր են պայթական բաղաձայնների համար և այս պատճառով էլ ստացել են առանձին անուն. պայթուցում (implosion), խցում (occlusion) և պայթյուն (explosion). — Պայթուցումը այն բույնն է, երբ գործարանները սկսում են փակվել. խցումն այն բույնն է, երբ գործարանները մնում են փակված, իսկ պայթյունն այն բույնն է, երբ գործարանները բացվում են: Հայելու առաջ դանդաղությամբ արտասանելով *սքա* կամ մանավանդ *սքա* ձայնախումբը, դուրսովյամբ կարելի է տեսնել այս երեք մոմենտները, որոնք հաջորդում են իրար: Ավելի ճիշտ քննություն կարելի է կատարել ձայնարանական մեքենայի վրա. մի փոքրիկ առաձիգ փամփուշտ դնելով շրթունքների միջև, դառնի վրա ստանում ենք հետևյալ *abcd* կոր գիծը.



Այս կորուսյան մեջ *ab* ներկայացնում է պայթուցումը, *bc* խցումը և *cd* պայթյունը: Որովհետև դառնը պատվում է միօրինակ արագությամբ, ուստի և գծերի երկարությունը համեմատական է յուրաքանչյուր մոմենտի արտասանության տեղափոխման հետ: Քննությունները ցույց են տալիս, որ պայթուցումն ու պայթյունը տեղում են հավասար ժամանակ, յուրաքանչյուրը միջին հաշվով $3/400$ վայրկյան, իսկ խցումը երեք անգամ ավելի, մոտավորապես

$10/100$ կամ $1/10$ վայրկյան: Խցումը տեղում է երկու անգամ ավելի, երբ բաղաձայնը կրկնակ է: Էսպես կրկնակ բաղաձայն չէս, այլ կա միայն խցումը բաղաձայնի կարճատև (մի բաղաձայն), և խցում ավելի երկար տեղափոխումը (երկու բաղաձայն):

Երեք մոմենտներից ամենակարևորը խցումն է. պայթուցումը կամ պայթյունը լարող են պակասել. այսպես, երբ պայթող բաղաձայնը հաջորդում է մի ուրիշ պայթողի, կամ շրթնային պայթականը բառի սկիզբն է, այսինքն երբ գործարանները արդեն փակ են և նոր փակելու կարիք չկա, բնականաբար պայթուցումը պակասում է և բաղաձայնը սկսում է խցումից: Նույնպես երբ պայթականը գտնվում է բառի վերջում (ինչպես *ap, ab, am, au* և այլն), բնականաբար պայթյունը կարող է պակասել և խցումի հետ գործարաններն էլ կմնան փակ: Այսպես, *օրինակ, atka* խմբի արտասանության մեջ է ունի միայն պայթուցում և *k* միայն պայթյուն. իսկ *akta* խմբի արտասանության մեջ բնագահառակը: Այնուամենայնիվ երկու դեպքումն էլ ականջը լսում է պայթող ձայնը, որից հետևում է, թե նրա անհրաժեշտ մասը խցումն է: Այսպիսի պարագաներից կարելի է զանազանել միևնույն բաղաձայնի երկու զանազանությունը՝ պայթուցիկ (implosif), որ ունի միայն պայթուցում և պայթական (explosif), որ ունի միայն պայթյուն:

Մունդա և մոն-բմեր լեզուների մեջ կան կիսաբաղաձայն կոչված ձայներ, որոնք չեն ներկայացնում բաղաձայնի ամբողջ հնչումը, այլ նրա մի մասը միայն. մոտավորապես այնպես, ինչպես հայերեն *գձնել* բառի մեջ առաջին *ն*-ի արտասանությունն է:

Այս բոլորից հետևում է, թե միևնույն լեզվի մեջ նույնիսկ միևնույն բաղաձայնը, նայած իր դիրքին, ներկայացնում է իրարից տարբեր ձևեր. տարբեր է, օրինակ, *ք* ձայնը, երբ բառի սկիզբն է, տարբեր է երբ բառի վերջն է, տարբեր է երբ բառամիջին է զբաղնրվում, երկու ձայնավորի միջև, թե մի ուրիշ բաղաձայնից առաջ և թե այդ բաղաձայնը ինչպիսի բաղաձայն է: Լեզվի բարեշրջության մեջ ձայնները, նայած իրենց դիրքին (բառասկզբում թե բառավերջում և այլն), ստանում են տարբեր ձայնափոխություն: Մեր այբուբենները մեզ շատ խաբուսիկ պատկեր են տալիս ձայնի մասին, բոլորն էլ ներկայացնելով մի տառաձևով:

Բոլոր բաղաձայնները (սեղմ, պայթական կամ կիսապայթական) արտասանության կողմից երկու տեսակ են լինում՝ թրթռում կամ խուլ: Բաղաձայնը իրապես կազմվում է խոշակից վեր՝ կոկորդից մինչև շրթունքները եղած որևէ մասում. եթե այս միջոցին

ձայնալարերը մնան բուրբուրվին բաց, ազատ ու հանգիստ, այնպես որ բաղաձայնի արտաբերության մեջ ոչնչով մասնակցություն չունենան և թորերից դուրս եկած օդի հոսանքը ազատորեն անցնի խոչակից, այն ժամանակ բաղաձայնը կոչվում է խուլ: Իսկ եթե այդ միջոցին ձայնալարերը փակված լինեն և օդի հոսանքը ճնշելով բաց անի նրանք և թրթռացնելով բարձրանա ավելի վեր, մտնելու համար բերանում կազմված անցքի մեջ, այդ պարագային բաղաձայնը կոչվում է քրքռուն: Գրեթե ամեն լեզվի մեջ էլ բաղաձայնները կազմում են զույգ-զույգ խմբակներ, ինչպես պ—բ, ա—դ, կ—գ, ծ—ձ, ց—չ, որոնցից առաջինները խուլ են և երկրորդները թրթռուն:

Բայց թրթռումը և խուլությունը կարող են ունենալ բազմաթիվ աստիճաններ: Նախ, ըստ որում ձայնարանը կարող է շատ կամ քիչ փակված լինել, թրթռումներն էլ կարող են ավելի կամ պակաս լիութուն ունենալ: Երկրորդ՝ բաղաձայնը ունենալով որոշ տևողություն, թրթռումներն էլ կարող են սկսել և դադարել ավելի շուտ կամ ավելի ուշ: Այս վերջին տեսակետով բաղաձայնները կարող են ներկայացնել բազմաթիվ զանազանություններ. բայց դրանցից զլսավորները հետևյալներն են.

1. Խոչակի թրթռումները սկսում են բաղաձայնի պայթուցման հետ միաժամանակ, շարունակվում են անընդհատ խցման և պայթյունի ժամանակ և վերջանում են բաղաձայնի հետ: Այսպիսի արտասանությունը իսկական քրքռուն ձև է, ինչպես են ումանական և սլավական լեզուների թրթռուն բաղաձայնները:

2. Խոչակի թրթռումները սկսում են բաղաձայնի խցման պայթյունի ժամանակ և շարունակում են մինչև վերջ. թրթռումների լիութունն էլ լինում է փոքր, այնպես որ հեշտությամբ կարելի է շփոթել խուլի հետ. այս կարգի արտասանությունը կոչվում է կիսաքրքռուն: Գերմաներենի թրթռուն բաղաձայնների սովորական ձևն է: Այնպես որ Ֆրանսիացիք երբ լսում են գերմանացու b ձայնը, հասկանում են p. օրինակ՝ Börne անունը լսում են Pörne (F. Engels, Der Frankische Dialect, Մոսկվա, 1935, էջ 82): Այսպես են նաև դանիերենի b, d, g բաղաձայնները և հաճախ շվեդերենի: Նույնիսկ վրացերենի համար Ֆոգտը (էջ 11) ասում է, թե b, d բառակցքում խուլ են և հեշտությամբ կարելի է շփոթել խուլների հետ, որոնցից տարբերվում են միայն տկարություն: Նույնպես (էջ 12) ասում է, թե ց և ջ հեշտությամբ շփոթվում են իրար հետ:

3. Խոչակի թրթռումները սկսում են պայթուցման հետ միա-

ժամանակ, բայց դադարում են խցման միջոցին, նախքան պայթյունը. այնպես որ բաղաձայնի պայթսկան մասը լինում է խուլ: Այսպիսի արտասանությունը կոչվում է խլացած քրքռուն (sonore assourdie): Երբ մի թրթռուն բաղաձայնի հաջորդում է մի խուլ բաղաձայն, այս վերջինի ազդեցությամբ հաճախ առաջինն էլ դառնում է խլացած թրթռուն: Անգլերենի մեջ բառավերջի թրթռուն պայթսկանները այս կարգին են պատկանում. ինչպես՝ bad, dog. Նույնը շատ անգամ նաև Ֆրանսերենում, ինչպես robe, longue:

4. Խոչակի թրթռումներն սկսում են պայթուցման հետ: Խրցման միջոցին դադարում են, բայց քիչ հետո նորից են սկսվում: Այսպիսի արտասանությունը կոչվում է միջախուլ (medio-sourde)

5. Երբ բաղաձայնի ամբողջ տևողության մեջ թրթռումները բացակայում են, բաղաձայնը կոչվում է խուլ կամ պարզ խուլ. ինչպես Ֆրանսերեն p, ուսերեն π և այլն:

6. Երբ մինչև ժամանակ բաղաձայնին ընկերանում է նաև մի թեթե շունչ (գրեթե ի ձայնին նման), բաղաձայնը կոչվում է շնչեղ խուլ: Այսպես են հայերենի փ p, ք, ց, չ բաղաձայնները, այսպես են սանսկրիտ kh, ճh, լh, th, ph բաղաձայնները. ալսպես են նաև գերմաներենի, շվեդերենի, անգլերենի, թուրքերենի p, k, t, ճ ձայնները: Դանիերենի մեջ ո՛չ միայն բաղաձայնն է ուժգնապես շնչեղ, այլև նրա շունչը շարունակվում է դեռ հաջորդ ձայնավորի արտասանության ժամանակ:

Պարզ խուլ բաղաձայնները շատ հեշտ է զանազանել իրենց շնչեղից. երբ մոմի բոցի մոտ արտասանենք երկու խմբերը, պիտի տեսնենք, որ առաջինների ժամանակ բոցը չի շարժվում, իսկ երկրորդների ժամանակ ո՛չ միայն շարժվում, այլև մինչև իսկ հանգչում է:

7. Նույն շունչը կարող է ընկերանալ նաև թրթռուն բաղաձայնների հետ և այն ժամանակ բաղաձայնը կոչվում է շնչեղ քրքռուն: Քիչ լեզու կա, որ այսպիսի բաղաձայններ ունենա. ալսպես՝ սանսկրիտ լեզուն, ինչպես և արդի հինդուստանին և դրավիդյան լեզուները, ունեն շնչեղ թրթռուն բաղաձայններ, որ լեզվաբանները տառադարձում են bh, gh, dh, dh̄, jh ձևով: Արդի տեւուգու լեզուն գիտի զանազանել բոլոր 4 տեսակները, ինչպես՝ b, bh, p, ph j̄, jh, ճ, ճh և այլն (Lakṣminarasayya, 5—7): Աննամերենը գարմանալի կերպով ունի միայն gh (պակասում են իրեն dh, bh և այլն) (Dirr, Gramm. annam., 3): Հայերենի մեջ էլ

շատ տեղ գտնում ենք շնչեղ թրթռուն բաղաձայնների 5 ձևերը որ նշանակում ենք բ', գ', դ', ձ', ջ', տառերով: Այսպես են հնչվում սովորական բ, գ, դ, ձ, ջ տառերը բառակզրում բուն երեվանի, Կարինի, Մուշի, Սարբերդի, Սերաստիալի, Կիլիկիալի և այլ բարբառներում:

Թրթռուման սատիճանները ազդից ազդ զանազանվում են. այսպես՝ ռոմանական և բալթիկ-սլավոնական լեզուների թրթռուն բաղաձայնները ներկայացնում են ամենից նորմալ ձևերը. գերմանական թրթռունները կիսովին միայն թրթռուն են: Կան լեզուներ էլ որ չունեն թրթռուն ձայններ. այսպես՝ Հրո երկրի օնա-շեղկնամ լեզվում չկան b, g, d, յ թրթռուն բաղաձայնները, այլ միայն p, k t, շ, որոնք հնչվում են թավ (ուրեմն \bar{p} , \bar{k} , \bar{t} , $\bar{\epsilon}$). Կան n, m, ny l, r, y, v, w, ինչպես նաև s, š, x, β (կրկնաշրթնալին խուլ), բայց չկան z, ž, γ, í ձայնները (Tenelli, Gramm. e glossario della lingua degli Ona-Selknam della Terra del Fuoco, 18, 20):

Ամերիկյան գոսիտիա լեզուն էլ ունի p, t, k, բայց չունի b, g, d, ինչպես նաև l, v, z, f (կան սակայն gua, gue, guo և այլն) (Caledon Gramm, goajira, 9):

Ամերիկյան չիկիտա լեզուն չունի d, j, ինչպես և ž, l, v, f. Իսկ b հնչվում է շատ տկար (L. Adam—V. Henry, 2—4):

Պերուի ուուա սիմի կամ կեչուա լեզուն չունի d, g, b, f, v, w, r ձայնները, բայց ունի p, p', k, k', t, t' շ, շ' ձայնները (Middendorf, 39):

Մելանեզյան նոգուդու լեզվի մեջ (ըստ Ray-ի, 284) k, p, t բաղաձայնները հնչվում են g և k, b և p, d և t ձայների միջև. այդ նշանակում է, թե նրանք գտնվում են թրթռունի և խուլի միջև կամ խլացած թրթռուն են:

Էտրուսկերենը չունի թրթռուն պալթականներ (b, d, g), բայց ունի թավ բաղաձայններ (ֆ, ք, ք), որով իրենց ձայնական գրությունը նման էր արդի գերմանական հնչման (Meillet, Ling. hist., II, 109):

Այսօր էլ նույն գրության մեջ է գտնվում Ավստրալիայի կամիլարոյ լեզուն, ուր b-p, g-k, d-t այնպիսի անորոշ հնչում ունեն, որ չես իմանում, թե ի՞նչ են (Ridley, 4): Ամերիկյան մակուչի լեզվում հաճախ չի կարելի զանազանել b-p, g-k ձայնները (Williams, 48): Այնու լեզվում b, g, d, յ թրթռունները երբեք չեն կարող գտնվել նախադասության սկիզբը, իսկ p, k, t, շ կարող են որևէ բառից հետո գառնալ b, g, d, յ (Batchelor, 33, 36):

Ըստ L. Թգամի (Gramm. de la langue mandchou, Paris, 1873, 13) մանջուրերենում պալթական բաղաձայնների հնչումը խախտա և անորոշ է. միևնույն տառերը բառակզրում հնչվում են k, p, t, իսկ բառամիջում և բառավերջում՝ g, b, d:

Այնու լեզուն թեև ունի k, շ, t, p բաղաձայնները, բայց չգիտես b, d, g, z, յ թրթռունները, բայց ունի գարինյան լեզուն) չգիտես b, d, g, z, յ թրթռունները, բայց ունի խուլ p, t, k, ծ, ճ, ինչպես և շնչեղ p', t', k', g, չ ձայնները: Սուամերերեն արձանագրությանց մեջ g-k, d-t, b-p բաղաձայնները շարունակ իրար տեղ են գործածվում, որից հետևում է, թե ո՛չ կատարյալ թրթռուն են, ոչ կատարյալ խուլ (Bertin, 1): Ամերիկյան մալա լեզուն էլ չունի թրթռուն բաղաձայններ, այլ միայն պարզ խուլ և թավ. k, t, t', ծ, g, ճ, չ, p, p', կա նաև b, բայց կարելի չէ զանազանել p-ից. իրարից չեն զանազանվում նաև k և k' (կ, ք) (Tozzer, 18): Ամերիկյան սիուսլավան լեզվում պալթականների շարքում չկա թրթռուն բաղաձայն, բացի d-ից (Boas, II, 444):

Նույնպիսի անորոշ գրություն է տիրում նաև ամերիկյան տակելմա լեզվի մեջ, որի համար քննիչը (Sapir, The takelma language, Boas, II, 32—33)ասում է, թե թեև բաղաձայնները ունեն 3 աստիճան (b, p, p'), սակայն նրանց հնչումը շատ չի համապատասխանում անգլիական և ֆրանսիական հնչման: Սեպիրը գրում է այդ բաղաձայնների երեք աստիճանների փոխարեն b, p', p! և երկարորեն բացատրում է, թե ինչպես նրանք փոխարինում են հաճախ իրար այդ լեզվի մեջ: Այս բոլորը ցույց է տալիս, որ կան առանց թրթռումի b, g, d և այլն ձայններ, ինչպես և նվազ շնչեղ p', k', t' և այլն:

Ավստրալիայի բնիկների լեզվով էլ b-p, d-t, g-k շփոթվում են իրար հետ, ինչ որ ցույց է տալիս խուլ և թրթռուն հնչման անհաստատ վիճակը (Teichelmann, 3, Threikeld, 1—2):

Ավստրալիայի ավաբակալ լեզուն ունի 4 աստիճան բաղաձայն (b, bh, p, ph—g, gh, k, kh—d, dh, t, th,) բայց ճշականը երկու աստիճան է՝ j և շ. չունեն շh, jh (Threikeld, 8):

Տիբեթերենն ունի 3 աստիճան բաղաձայն. b, p, p', d, d, th, k, g, k', j, շ, չ և հայերենի նման ծ, ձ, g (Foucaux, 1):

Պարզ և շնչեղ զանազանությունը գլխավորապես շնչի առատության մեջ է: Պարզ խուլն էլ շունչ ունի, բայց քիչ: Առնենք, օրինակ, pa վանկը. երբ ֆրանսիացին մոմի կամ լուցկու առաջ հնչի pa, բոցը կտատանվի միայն. իսկ երբ գերմանացին հնչի, կհանգի:

Նույն փորձը կարելի է կատարել ձեռքի երեսին գրված թղթի մի փոքրիկ գնդակի վրա. երբ ֆրանսիացին հնչի pa, գնդակը հազիվ կշարժվի, իսկ երբ գերմանացին հնչի, գնդակը կընկնի: Գծագիրների մեջ էլ ֆրանսերեն pa կազմում է փոքր ոստյուն, իսկ գերմաներեն pa բավական մեծ: Երբ մի ֆրանսիացի և մի գերմանացի ուժեղ ներշնչելուց հետո միաժամանակ սկսեն անդադար արտասանել pa մինչև շնչի սպառումը, գերմանացին շուտ կդադարի, որովհետև ամեն մի արտասանության շատ օդ կսպառի, իսկ ֆրանսիացին ավելի երկար կշարունակի, որովհետև յուրաքանչյուր արտասանության շատ ավելի քիչ օդ կսպառի: Ըստ այսմ ֆրանսիական խուլ (occlusive) բաղաձայնների պայթյունը համարյա թե թրթռուն է, շատ քիչ ժամանակ միայն նա խուլ է (ամենաշատը 2 կամ 3 հարյուրերորդական վայրկյան). սրա փոխարեն խցումը ուժեղ է: Իսկ գերմանական լեզուներում պայթյունը խուլ է և շնչով, հետևաբար և՛ խցումը ավելի տկար (Rousselot, Principes, II, 1122):

Նմանօրինակ մի փորձ կատարեցի իմ վրա. լիաթոք շնչելուց և ամբողջ շունչս պահելուց հետո, սկսեցի արտասանել իրար ետևից ba, ba, ba... ապա երկրորդ փորձը կատարեցի՝ արտասանելով pa, pa, pa... (կովկասյան և ոչ՝ պոլսական արտասանություններ). վերջապես երրորդ փորձը կատարեցի արտասանելով p'a, p'a, p'a, նույն փորձերը կրկնեցի նաև g, k, k' և d, t, t' պայթականների վրա: Արդյունքն այն եղավ, որ b կամ p, d կամ t, g կամ k մինչև շնչի սպառումը կարելի եղավ արտասանել մոտ 70 անգամ, իսկ p', t', k' միայն 40 անգամ: Արտասանության արագությունը նշանակություն չունի, որովհետև ամեն մի անգամ նույն շափով օդ պիտի սպառվեր, որով և գումարը կլիներ նույն: Նշանակություն ունի միայն «բարձր» ձայնով (այսինքն՝ ուժգին) արտասանությունը, որով յուրաքանչյուր վանկի վրա ավելի ուժ = օդ վատնվելով՝ վանկերի քանակը կպակասի համեմատական շափով: Ես փորձը կատարեցի ձայնի սովորական բարձրությամբ (= ուժգնությամբ) և բոլորը միշտ միատեսակ: Շնչեղ թրթռուն bha, dha, gha շարքն էլ նույնն էր, ինչ որ p' k' t' (1948 թ. ապրիլի 11—12):

Ինչ էլ որ լինի բաղաձայնների տեսակը, անհրաժեշտ է, որ երկու շարժուն գործարան, կամ ավելի ճիշտ մեկ շարժուն և մեկ անշարժ գործարան մոտենան կամ կպեն միմյանց, որպեսզի ձևացնեն սեղմ բաղաձայնների համար մի նեղ անցք, իսկ պայթականների համար ամբողջական փակումը: Այս գործողությունը կատարվում է հետևյալ ձևով.

1. Ծրթունքներից մեկը կպում է մյուս շրթունքին կամ ատամներին և կամ լեզվին. այսպիսով առաջանում են զանազան արտաբերություններ.

ա) Երկու շրթունքները հպվելով՝ p, m և դրանց կրկնաշրթնային շփականները, որոնք նշանակվում են p և t առերթով՝ միջից ավելացրած մի դժիկ:

բ) Մտորին շրթունքը մոտենալով վերի ատամներին՝ f, v. կամ բուրբուկին կպելով՝ մի տեսակ f, որ լսվում է գերմաներեն pferd, kampf, անգլերեն comfort, nymph բառերի մեջ:

գ) Վերին շրթունքը մոտենալով կամ կպելով ստորին ատամներին, ձևացնում են սեղմ կամ պայթական բաղաձայններ, որոնք սովորական լեզվի մեջ չկան, բայց գործածական են այն մարդկանց մոտ, որոնց ստորին ծնոտը դուրս է երկարած (prognathe). այսպես են հատկապես սևամորթ ցեղերը:

դ) Վերին շրթունքը և լեզուն մոտենալով կամ կպելով իրար, առաջ են բերում սեղմ բաղաձայններ, ինչպես մի տեսակ ծ և մի տեսակ պայթական p—t, b—d ձայների միջև:

Բոլոր այս չորս տեսակի ձայները արտաբերվում են բերանի խոռոչից դուրս և մի շրթունքի անհրաժեշտ մասնակցությամբ. այս պատճառով էլ կոչվում են շրթնային (labiale) կամ արտաբերանային (extrabuccale):

2. Լեզվի այս կամ այն մասը հպվում է քիմքի այս կամ այն կետին. այսպիսով կարելի է արտաբերել անսահման քանակությամբ հնչյուններ: Լեզվի ծայրը կամ պսակը կարող է մասամբ կամ ամբողջապես հպվել քիմքի բոլոր կետերին՝ սկսած ատամների ծայրից մինչև քիմքի վերջին սահմանը.— բոլոր նույն հպումները կարելի է անել նաև լեզվի միջին մասով.— վերջապես լեզվի հետևի մասը կամ արմատը կարող է մասամբ կամ ամբողջապես հպվել քիմքի զանազան մասերին և կամ նույնիսկ կոկորդին:

Այս զանազան ձևերով արտաբերված հնչյունները՝ համաձայն քիմքի վրա իրենց հպման կետի, կոչվում են ատամնային (dentale), կապնային (alvéolaire), քմական (palatale), կատկային (vélaire):

Նորագույն ձայնաբանները իրր հիմնական ընդունելով ո՛չ թե քիմքը, այլ լեզուն, սրա համեմատ էլ անվանում են այդ բաղաձայնները: Այսպես, լեզվի ծայրով կարելի է արտաբերել բաղաձայնական պայթականներ. բայց ո՛րտեղ էլ որ դիպչի լեզվի ծայրը (ատամներին, ատամնակապիճներին (alvéole), քիմքի այս կամ այն կողմին), միշտ էլ լսվում է t, d ձայնը. ուստի բոլոր այս կարգի բաղաձայնները կոչվում են ծայրալեզվային (antéro-linguale, a-

picale, coronale) — Լեզվի միջին մասը կարող է հպվել կարծր քիմքի զանազան կետերին, մինչև անգամ, թեև դժվարությամբ, կատիկին. այս կարգի պայթական բաղաձայնները կոչվում են **փափուկ** (mouillée) կամ **քմային** (palatale). Ինչպես, օրինակ, Վանա բարբառով իզի «այգի» բառի մեջ գ, ձայնը: Բայց այս կոչումները ճիշտ չեն, որովհետև եթե լեզվի միջին մասը կատիկին կամ կապիճներին էլ հպվի, կստացվի նույն տեսակի մի ձայն, որ պետք է քմային կոչվեր, առանց սակայն քիմքի հետ որևէ գործ ունենալու: Նոր ձայնաբանները այս կարգի պայթականները կոչում են **միջնալեզվային** (medio-linguale, dorsale): — Վերջապես լեզվի հետևի մասով կարելի է արտաբերել զանազան պայթականներ. բայց ո՛րտեղ էլ դիպչի լեզվի հետևի մասը (կատիկին թե կարծր քիմքի զանազան մասերին), միշտ էլ լսվում է k—g ձայնը. ուստի բոլորն էլ կոչվում են **հետնալեզվային** (postéro-linguale, radicale):

Բոլոր այս երեք տեսակի ձայները (ծայրալեզվային, միջնալեզվային և հետնալեզվային) արտաբերվում են բերանի խոռոչի ներսում, ուստի կրում են ներբերանային (intra-buccale ընդհանուր անունը):

3. Բերանի բոլորովին հետևի մասը, խոշակը և ըմպանը կարող են շոշափվել լեզվի արմատի և կատիկի հետ. այն ժամանակ արտաբերվում են տեսակ-տեսակ կոկորդային ձայններ, որոնք բոլորը միասին կոչվում են **հետբերանային** (post-buccale) կամ **կոկորդային ընդհանուր անունով**:

Այս բոլորից դուրս ունենք նաև ռնգային ձայններ. բայց որովհետև քթային խոռոչը անշարժ է և չի կարող բերանի պես զանազան դիրքեր ու ձևեր ստանալ, այս պատճառով էլ նրա կազմած ձայնները շատ քիչ են:

Քանի որ բոլոր բաղաձայնների համար էլ երկու գործարանների մասնական կամ ամբողջական հպումն անհրաժեշտ է, ուստի պետք է նկատենք երկու հանգամանք. 1. Հպվող շարժական գործարանի ճնշումը կարող է լինել ուժգին կամ տկար: 2. Հպման կետը կարող է լինել փոքր կամ ընդարձակ: Երբ հպվող շարժական գործարանի մկանային ձգտումը ուժգին է և գործարանները ավելի պինդ են կպում իրար, բաղաձայնը կոչվում է **ուժեղ** (forte). և երբ այդ ձգտումը թույլ կամ տկար է, բաղաձայնը կոչվում է **մեղմ** (douce): Կա ընդհանուր մի կապ բաղաձայնների ուժգնության և խոշակի թրթուրման միջև. թույլ բաղաձայնները ուժեղ են լինում, իսկ թրթուրմանը՝ մեղմ, պարզ խուլերը ավելի ուժեղ են, քան

շնչեղ խուլերը: Այսպես, ալ արտասանելու համար շրթունքները ավելի ճիգ են գործ դնում, քան բ: Երբ մկանային աշխատանքը գործում է նաև խոշակի մեջ, մյուս գործարանները իրենց ուժից մի քան կորցնում են: Այսպես, օրինակ, t, d, n բաղաձայնները արտասանվում են միևնույն հոգավորմամբ, բայց t ուժեղ է, d մեղմ, n ավելի մեղմ, որովհետև լեզվի մկանները ավելի քիչ են լարված: Նույնիսկ եթե ուղեման բառին սաստկություն տալ, բաղաձայնը կուժեղացնեն, ինչպես դմբո՞ բառի մեջ դ ավելի ուժգին է, քան սովորական մի բառի մեջ: Այսպես են հունարենում և ֆրանսերենում: Ուրիշ լեզուներ հակառակ սովորություն ունեն. օրինակ, գերմաներեն b, d, g թրթուրմանը ուժեղ են, իսկ p, t, k խուլերը թույլ: Ինչ որ ֆրանսիացու ականջին b ցույց է տալիս p, p ցույց է տալիս b և այլն: Էտրուսկերեն լեզուն, ըստ Բարենտոնի, շուներ b, g, d բաղաձայնները և հնչում էր գրանք p, k, t. բայց ուներ նրանց թավաստիճանները՝ p', k', t' (φ, χ, ν): Հնդկական լահնդա լեզվի մեջ բառասկզբում b, j, d, g բաղաձայնները արտասանվում են ուժգնությամբ, իբր թե ջանք գործ դրվեր արտասանելու կրկնակ bb, jj, dd, gg (Grierson, հատ. 8, մաս 1, էջ 250):

Երբ լեզվի մկանները լարված են և հպման կետը քիմքի վրա փոքր է, բաղաձայնը կոչվում է կոշտ (dure). իսկ եթե լեզվի մկանները թույլ են և հպման կետը քիմքի վրա ավելի փուլած է, բաղաձայնը կոչվում է փափուկ (mouillée): Այս պարագային, ինչպես ասացինք, լեզվի միջին մասն է, որ (կոնակը) հպում է քիմքին. և որովհետև լեզվի այս մասը ջղերից զուրկ է, ուստի և հպումը լինում է միշտ թույլ ու տկար: Լեզվով արտասանված բոլոր բաղաձայնները կարող են ուրեմն ունենալ իրենց փափուկ ձևը և հպման կետը կարող է տարածվել թե՛ դեպի լեզվի երկու կողերը և թե՛ դեպի առաջ կամ հետև:

Պետք չէ շփոթել փափուկ բաղաձայնները այն ձայնախմբերի հետ, որոնք կազմված են բաղաձայնից + y: Փորձառական ձայնաբանության բազմաթիվ փորձերը ցույց են տալիս, որ այդ երկուսը տարբեր բաներ են. առաջինը արտասանվում է մեկ անգամից և քիմքի վրա բռնում է ավելի լայն տարածություն, մինչդեռ երկրորդը արտասանվում է երկու անգամից և քիմքի վրա բռնում է ավելի փոքր տարածություն:

Չուվաշերենի մեջ (Амшарин, Матер., 2—5, 18 և 346!) բաղաձայնների փափուկությունն էլ երեք աստիճան ունի. բոլորովին փափուկ, կիսափափուկ և աննշան շափով փափուկացած բաղաձայն-

ներ. կան բաղաձայններ, որոնք Յ աստիճաններն էլ ունեն. այսպես են ր, s, t, d, l, n, z, իսկ h, x, k, փ, ց, յ ունեն միայն ա և բ աստիճանները, շ, Տ, v, m, p, b միայն երկրորդ աստիճանը:

Յակուտերենում կան մի խումբ քմայնացած (փափուկ) բաղաձայններ. այսպես ր^ʷ, ս^ʷ, շ^ʷ, յ^ʷ, յ^ʷ, որոնցից ոմանք բառամիջում գտնված ժամանակ կրկնվում են, ինչպես бәл^ʷр^ʷан^ʷп^ʷәк (Ястрем-ский, 14):

Չուբչի լեզվի մեջ, բացի l, d, s, յ, n ձայներից, կան նրանց ուժեղ քմայնացած ձևերը, ինչպես նաև շ^ʷ = շ^ʷ (Bogoras, 645):

Բ) Սեղձ ԿԱՄ ՏեՎԱԿԱՆ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐ

Սեղմ բաղաձայնները ըստ իրենց ձևի բաժանվում են 4 տեսակի. կիսաձայն, շփական (fricative, spirante), ցնցուն (vibrante) և կողմնական (latérale): Կիսաձայնների մասին արդեն պետք եղած չափով խոսել ենք նախորդ գլխում: Շփականները ներկայացնում են նախորդներից ավելի նեղ մի անցք, որ ձևացած է բերանի միայն մի որոշ կետում և որի միջով օդի հոսանքը կարծես շփվելով անցնում է՝ թողնելով մեր վրա փշելու կամ սուլելու տպավորություն, ինչպես ֆ, վ, ս, զ, շ, ժ. ցնցուն բաղաձայնները առաջանում են մի որևէ առաձգական գործարանի հաշորդական մի քանի արագ ցնցումներով կամ թրթռումներով, որոնց միջոցին օդի հոսանքը շարունակ և փոփոխակի բացվում ու փակվում է, ինչպես ու: Վերջապես կողմնական բաղաձայնները ներկայացնում են արտասանության այնպիսի մի ձև, երբ լեզուն, կպելով քիմքի միջին մի կետում, արգելում է այստեղ օդի հոսանքը, բայց միևնույն ժամանակ կողքերից թողնելով մի-մի նեղ անցք, միջոց է տալիս օդի հոսանքին՝ նրանց միջով դուրս հոսելու, ինչպես ր:

Շփական բաղաձայնների համար կա երկու անհրաժեշտ պայման. նախ որ ձայնական անցքը ավելի նեղ պիտի լինի քան ձայնավորների համար և երկրորդ, որ դուրս եկած շունչը ավելի ուժեղ պիտի լինի նրանցից: Եթե ձայնական անցքը բավարար չափով նեղ չլինի, շփականի տեղ կլսվի ձայնավոր, կիսաձայն կամ ի. իսկ եթե շունչը բավական տկար լինի, շփականը կլքանա: Այս բանը կարելի է փորձել շատ հասարակ ձևով. սկսենք նախ արտասանել s ձայնը և առանց բերանի դիրքը փոխելու, տկարացնենք մեր շունչը. պիտի տեսնենք, որ այլևս s ձայնը անհետացած է: Եթե նույն փոր-

ձը կրկնենք z ձայնի վրա, պիտի լսենք միայն խոշակի թրթռումները:

Շփական բաղաձայնները բաժանվում են 3 կարգի. արտաբերանային կամ շրթնային, ներբերանային և հետբերանային կամ կոկորդային:

Շրթնային շփական բաղաձայնները հետևյալներն են.

1. v և f. առաջինը՝ թրթռուն, երկրորդը՝ իր համապատասխան խուլ ձևը. այս ձայների արտաբերության ժամանակ ստորին ծնոտը մի քիչ ներս է քաշվում և վերի ատամները մոտենում են ստորին շրթունքին՝ հենվելով նրա ներքին եզրքի վրա, զրեթե կծելու պես և կազմելով մի շատ նեղ հորիզոնական ճեղք: Արտասանության այս ձևի պատճառով կոչվում են շրթնատամնային: Շատ լեզուների մեջ կան այս ձայնները: Մելանեզյան մոտա լեզվում v ձայնը հնչվում է b-ի նման (ըստ Codrington-ի, էջ XII): v ձայնը զարմանալի կերպով պակասում է հին հունարենի մեջ, ուր դառնում է ու: Աֆրիկյան գանգ լեզուն էլ չունի v (Kitching, 13): Ֆ պակասում է այժմ էլ աֆղաներենում, բասկերենում և ֆիններենում, ուր փոխարինվում է v ձայնով: Այժմ էլ չինարենում չկա v ձայնը. այլ միայն w: Մոնղոլերենում ո՛չ v կա և ո՛չ f. միայն հնդկերենից, տիբեթերենից, չինարենից և ուսերենից փոխառյալ բառերի մեջ կա v (Клюкин, 56): Յակուտերենն էլ չունի ոչ f և ոչ v: Այսպես և սերբերենում տեղ-տեղ պակասում է f, ուր փոխանակում են v-ով (Meillet, Gramm. serbe. 14): Սանսկրիտ լեզուն էլ չունի ֆ:

Ամեն լեզու, որ չունի ֆ, փոխառության ժամանակ վերածում է ֆ-ի և փոխադարձաբար. օրինակ, արաբերենը չունի ֆ, և երբ հարկ լինի, գրում է ف, ամերիկյան յուրակարի լեզուն չունի ֆ, ուստի իսպանական f-ն դարձնում է p (La Cuova, 3):

Արդի աֆղաներենն էլ չունի ֆ և պարսկերեն փոխառությանց մեջ f-ն դարձնում է p (Darmestater, Chants pop., էջ V):

V բաղաձայնի փափուկ ձևը v^ʷ կա սերբերենում, ինչպես և հիպերբորյան գիլիակ լեզվի մեջ: v ընդհանրապես թրթռուն է, բայց երևի v ձայնի խուլ ձևն էր ներկայացնում Ի (Braune, 30): Ճապոներենում ֆ-ն այնպես թույլ է, որ ֆ-ի և ֆ-ի մեջտեղն է լսվում: Աֆրիկյան յաունդե (բանտու) լեզվում f հնչվում է երկու շրթունքներով և լսվում է իբր գերմաներեն pi (Mekeš, 7):

Աֆրիկյան լալա, ինչպես և վիսա լեզվում կա մի նոր տեսակի w, որ քննիչը (Madan, 10) գրում է w ձևով և հնչմամբ մոտ է գտնում bw կամ vw ձայնին:

Աֆրիկյան շագգա լեզվում կան կրկնաշրթնային *v*, *f* և սրանցից տարբեր արտասանութամբ՝ ատամնաշրթնային *v*, *f*. ուրիշ լեզուներում նման երևույթ չկա. կա՛մ միին է լինում, կամ մյուսը, իսկ այս լեզվի մեջ երկուսը միաժամանակ զոյություն ունեն (Ramus, 33):

Հին հայերենի մեջ վ կար միայն բառասկզբում, իսկ բառամիջում և բառավերջում գրվում էր միայն *v* ձայնավորից հետո. կարիք լինելու դեպքում վերածվում էր կիսաձայն *v*-ի կամ ձայնավոր ու-ի, ինչպես աւագան, պատուանդան, հաւ և այլն: Բոլորովին պակասում էր ֆ ձայնը, որ փոխանակվում էր վ-ով: Արդի գրական հայերենը և բարբառները գիտեն արտաբերել երկու բաղաձայններն էլ: Միայն Ղարաբաղի բարբառն է, որ ֆ ձայնը շունի և հին հայերենի պես շարունակում է կարիք եղած դեպքում ներկայացնել ֆ ձևով, ինչպես փաս, փարբիկ, փայտոն և այլն:

2. *b* (ոմանք գրում են *β* ձևով) և *p*. առաջինը թրթռուն, երկրորդը խուլ. երկուսն էլ արտասանվում են երկու շրթունքները մոտեցնելով իրար և մեջտեղը մի նեղ ճեղք թողնելով. այս պատճառով էլ կոչվում են կրկնաշրթնային կամ երկշրթնային (bilabiale): Քիչ լեզու կա, որ այսպիսի բաղաձայններ ունենա. հայերենում, ինչպես և ֆրանսերենում, անգլերենում չկա: Նրանց պատահում ենք գերմանական բարբառներում և իսպաներենում, որոնց մեջ սովորական *b* պայթականը երկու ձայնավորի միջև դառնում է *b*:

3. *S* և *Z* առաջինը խուլ և երկրորդը թրթռուն. արտասանվում են լեզուն հարկում վերի շրթունքին: Այս ձայները թեև զոյուրութամբ կարելի է արտաբերել, սովորական չեն ծանոթ լեզուների մեջ, բայց առաջինը զործածական է Հյուսիսային Ամերիկայի վայրենիների լեզվում, երկրորդն անծանոթ է:

4. Մի տեսակ *v* և *f*, որ արտաբերվում է վերին շրթունքը մոտեցնելով ստորին ատամներին:

5. Արխագերենում կա մի տեսակ ձայն, որ բռնում է *h*-ի և *f*-ի մեջտեղը, որ զիոը (Einf. 33) կոչում է շրթնայնացած *h* և նկարագրում է այսպես. ստորին շրթունքը մի քիչ առաջանում է և մի ուժեղ *h* շունչ դուրս է վաարվում վերև՝ դեպի քթի ծայրը. մենք նման մի ձայն արձակում ենք երբ շատ շոգում ենք: Դիոը նշանակել է *f* :

Ներբերանային շփական բաղաձայնները հետևյալներն են.

1. *θ* և *δ* (*þ*, *d*) առաջինը խուլ, երկրորդը թրթռուն: Այս ձայները արտաբերվում են լեզվի ծայրը մոտեցնելով առջևի ատամների վերին շարքին, այնպես որ լեզուն ատամների ստորին եզրը

րից շանցնի: Այս միջոցին ձևանում է մի շատ նեղ անցք, որի միջոցով օդը հոսում և անցնում է բաց շրթունքների միջով: Քննությունները ցույց են տալիս, որ այս ձայների գլխավոր հատկանիշը լեզվի և ատամների միջև ձևացած երկարավուն ճեղքն է. եթե այդ ճեղքը վերածենք զլանաձև մի անցքի, այն ժամանակ կլավի մի տեսակ *s* և *z*: Կարելի է լեզուն ավելի առաջ մղել և կամ ավելի ետ բաշել. այն ժամանակ կստանանք *θ* և *δ* ձայների զանազան նրբբություններ: Օրինակ, բիրմաներենում կա մի հնչյուն, որ շատ նման է այս *θ* հնչման, բայց ավելի նուրբ է և մոտենում է *s*-ի (Latter, 13):

Այս ձայները, իրենց կազմության ձևի պատճառով, կոչվում են լեզվատամնային (lingo-dentale):

Ձանազան լեզուներ ունեն այս ձայները: Հաճախ պատահում ենք անգլերենում, ուր երկուսն էլ գրվում են միևնույն *th* ձևով: Նույնը սովորական է նաև իսլանդերենում և դանիերենում: Հին հունարենի *θ* և *δ* տառերը նոր հունարենում հնչվում են այս ձևով: *θ* և *δ* գտնվում են նաև հին լեզուներից ղենդերենում, հին պարսկերենում և գոթերենում: Գոթերենում գրվում է *þ*: Իսպաներենի մեջ կա խուլ *θ*, բայց *δ* թրթռունը պակասում է: Ռոմանական շատ բարբառներ գիտեն թե՛ *θ* և թե՛ *δ* ձայները, բայց ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն և սուսերեն լեզուներում չկան: *θ* կա նաև աֆրիկյան խասու լեզվում (Kotz, 21): Մեր շրջակա ազգերից ո՛չ մեկի մոտ չկա ո՛չ *θ* և ոչ *δ*. այսպես թուրքերեն, պարսկերեն, բրգերեն և վրացերեն. միայն արաբերենն է, որ ունի հիշյալ կրկին ձայները: Բաշկիր լեզվում կա *θ* և *þ*, որ ուրիշ թրթռական լեզուներում չկա (Şakir ef., 66): Հայերենը իր բոլոր բարբառներով զուրկ է նույն ձայներից, և մի հայ, որ անծանոթ է նրանց, այդ ձայները լսած ժամանակ *u*, *q*, *v*, *l* է կարծում:

2. *S* և *z*. առաջինը խուլ, երկրորդը թրթռուն: Այս ձայները արտաբերվում են լեզվի ծայրը հենելով ատամներին կամ ատամնակապիճներին, և լեզվի մեջքի և վերին ատամների միջև ձևացնելով զլանաձև մի շատ նեղ անցք: Այս պատճառով էլ կոչվում են ատամնակապեային (lingue-alvéolaire): Այս ձայների արտաբերության մեջ հատկանշական մասն է անցքի ձևը և ո՛չ թե այն կետը, ուր հենվում է լեզուն: Լեզուն կարող է հետզհետե ավելի հետ բաշվել, ինչպես գերմաներենի և անգլերենի մեջ:

Գրեթե ամեն լեզվի մեջ այս երկու ձայներն էլ կան. մոնղոլերենը, լատսերենը, ֆիններենը, դանիերենը, շվեդերենը, նորվեգե-

րենը շունեն շ. դանիերենում օտար բառերի շ ձայնն անգամ, թեև գրվում է, բայց հնչվում է *s*. շկա նույնպես Հարավային Գերմանիայի բարբառներում, ուր շ ձայնի տեղ գործածվում է մեղմ *s*. բասկերենն ունի խուլ *z*, որ տարբեր է *s*-ից (Lingua, I, № 1, էջ 64): Հին լեզուներից սանսկրիտը շունի *z*, բայց զենդերենն ունի: Արաբերենը, բացի սովորական *s*, *z*-ից, ունի նաև նրանց մի զորեղ տեսակը՝ *ض*, *ص*, որ գրվում են *z*. Լեհերենն էլ ունի երկու տեսակ *s* և *z*, որոնք այբուբենի մեջ զանազանվում են մի շեշտով, *s*, *z*, *z*

(Joel, 2—3): Աֆրիկյան գանգ լեզուն ոչ *s* ունի և ոչ *z*. օրինակ, սուլթան բառը գրում և ասում են *šulutan* (Kitching, 13): Ավրաստրալիայի կամիլարոյ լեզուն էլ շունի ոչ *s* և ոչ *z*: Ավստրալիայի ավարակալ լեզուն շունի ոչ *s* և ոչ *z* շական (*z*, *ϕ*, *ϑ*, *ս*):

S և *Z* ձայները հաճախ կոչվում են սուլող (*sifflante*): Գոթերենի *Z* տառն ուներ ֆրանսերեն *Z* (*զ*) հնչյունը և ո՛չ թևարդի գերմանական *g* հնչյունը (Braune, 1928, էջ 48):

Ամերիկյան յուրով լեզվի մեջ բառավերջի *m* հնչվում է խուլ (Kroeber, 417):

Չիլիի բնիկները շունեն ոչ *s* և ոչ *z*. բայց Արգենտինայի բնիկները Չիլիի *d* ձայնը արտասանում են *z*. ցեղերից ոմանք էլ նույնը հնչում են *z* կամ *j* (Febres, 2):

Սանսկրիտն ուներ *s*, *ç*, և *š*. այս երեքի փոխարեն պալի լեզուն ունի միայն *s*:

Ըստ Յունոսի (էջ 31, 34), աֆրիկյան ոտնգա (բանաու) լեզուն ունի մի տեսակ շրթնային *s*, որ հեղինակը նշանակում է *š* ձևով. սա մի քիչ նման է *ps* միախառն հնչումին. կարծես թե շրթունքները պատրաստված են փշելու բանալու ծակի կամ սրնգի մեջ: Սրա թրթռունն է *z*, որ մոտ է *bz* միախառն հնչումին: «Սևերի շրթունքները հաստ լինելով, ավելի բնզունակ են արտաբերելու այս ձայները»: Երևի նույն են նաև այս երկու հնչյունները (*s* և *z*), որ գտնվում են նաև բանաու ցվա լեզվի մեջ (Person, 17) և բանաու շոնա լեզվի մեջ (O' Neil, 4), ուր այս երկու ձայները գրված են (*s*, *z*): Նույն են նաև կարանգա (բանաու) լեզվի յուրահատուկ *s*, *z*, ձայները, որ հեղինակը (Marconnès, 7) տառադարձում է *sv*, *zv*:

3. Որոշ լեզուներ ունեն մի տեսակ *s*, որ իր հնչմամբ բռնում է *s* և *š* ձայների միջին տեղը. այսպես են եվրոպական լեզուներից շվեդերենն ու նորվեգերենը, որոնք ամեն անգամ երբ *s* հաջորդում է *r* բաղաձայնին, արտասանում են այս ձևով: Նույն ձայնը գտնում ենք նաև կարարդիներենի մեջ (*s'*). վերջինս գիտե նաև նույնի թըր-

թուն ձևը, այսինքն՝ մի տեսակ *z*, որ բռնում է *z* և *z* ձայների միջև: Օսերենն էլ ունի այս *s'* և *z* ձայները, որոնք գտնվում են *s* և *š*, *z* և *z* ձայների միջև (Miller, Die Spr. d'Oss, 13): Ամերիկյան տակելմա լեզուն էլ ունի մի տեսակ *s*, որ բռնում է *s* և *š* ձայների միջին տեղը (Boas, II, 31, 35):

Հայերենը իր բարբառներով զուրկ է այս ձայներից:

4. *š* և *z* առաջինը խուլ, երկրորդը թրթռուն. այս ձայները արտասանվում են լեզուն քաշելով մի քիչ հետև, ծայրը թեթևով դեպի քիմբը, երկու կողերից սեղմելով սեղանատամներին և շրթունքները առաջ ցցված: Այս պարագային ձևանում է երեք հնչաբան, մեկը ատամների անմիջապես հետևում, երկրորդը լեզվի և քիմբի միջև, երրորդը ատամների և շրթունքների միջև: Այս երեքից կարևորագույնը առաջինն է. այնպես որ անհրաժեշտ է, որ օդի հոսանքը դուրս հոսի երկու ատամնաշարքերի միջից: Մյուս պայմանները երկրորդական են և լեզվից լեզու կարող են տարբերվել: Այսպես, լեզուն կարող է ավելի հետ քաշված և ծայրը ցած հակված լինել. նույնպես, շրթունքները հանդարտ կարող են մնալ և կամ շատ ավելի առաջ ցցվել: Այս մասին գյուրուլյամբ կարելի է համոզվել, եթե փորձենք նույն ձայները արտասանել շրթունքները հետ քաշված, սովորական և հետզհետե դեպի դուրս ձգած դիրքով: Ամեն դեպքում էլ միշտ լսվում է *š* և *z*:

š և *z* ձայները հաճախ կոչվում են շշական (*chuintante*):

Ամեն լեզվի մեջ շեն գտնվում *š* և *z* ձայները. կան լեզուներ էլ, որ գիտեն *š*, բայց զուրկ են *z* ձայնից. օրինակ, հին լեզուներից հունարենն ու լատիներենը զուրկ են երկուսից էլ. սանսկրիտը շունի *z*, բայց ունի երկու տեսակ *š*, մեկը մեր սովորական ձևով, մյուսը՝ լեզուն վեր ուղարած և քիմբի վերին մասին կպած (*cerebral*): Դրավիդյան տուլու լեզուն էլ ունի երկու տեսակ *š*, բայց տելուգու լեզուն թեև ունի երկու տեսակ *s*, բայց միայն մի *š* (Lakshmina rasya, 5—7):

Արաբերենը ունի *š*, բայց չգիտե *z*: նոր լեզուներից ֆրանսերենը և ռուսերենը երկու ձայներն էլ ունեն մեծ բանակուլյամբ: Անգլերենը և գերմաներենը ունեն շատ *s*, բայց *z* ձայնը հազվագեպ է: Իտալերենը ունի *z*, բայց չգիտե *š*:

Շվեդերենը ունի մի տեսակ առանձնահատուկ *š*, որ բռնում է *š* և *ç* (*sch* և գերմաներեն *ich*) ձայների մեջտեղը (Poestion, Lehrb. Schwedl., 26): Միևնույնը կա նաև աֆղաներենի և Պա-

միրի իրանյան շիղնի բարբառի մեջ, որոնք ունեն նաև համապատասխան թրթռուն չ ձայնը. այս երկուսը աֆղաներեն այբուբենով գրվում են چڼڼ և տառադարձությամբ չ չ (Gram. iran. phil., I, 292): Ըստ Գարմասեաների (Chants popul էջ XXXII), աֆղաներենն էլ ունի երկու տեսակ չ:

Մեր հարևան լեզուներից վրացերենը, պարսկերենը և բրդերենը ունեն առատորեն չ և չ. թուրքերենը ունի չ, բայց չզիտի չ: Նոր հունարենը ո՛չ մեկն ունի և ոչ էլ մյուսը: Սանսկրիտը ունեւ երկու տեսակ չ, բայց արդի հնդկական սինհալի լեզուն կորցրել է երկուսն էլ (Gieger, 11): Լատներեն լեզուն չունի ոչ մեկը և ոչ էլ մյուսը: Ավստրալիայի կամիլարոյ լեզուն ինչպես չզիտի s, z, նույնպես չզիտի չ. չ (Ridley, 3):

Հայերենը կարող է արտասանել թե՛ մեկը և թե՛ մյուսը, բայց ժ ձայնով բառերը քիչ թիվ են կազմում:

5. խ, զ (x, γ). առաջինը խուլ, երկրորդը թրթռուն. այս ձայների արտասանության ժամանակ լեզվի արմատը բարձրանալով վերև, հպվում է քիմքին, այնպես որ օդի հոսանքը անցնում է նրանց մեջտեղով: Որքան բարձրացած և պինդ կպած է լեզուն քիմքին, արտաբերված ձայնն էլ այնքան ուժեղ է և որքան ցած է ու թույլ, արտաբերված ձայնն էլ այնքան թույլ է:

Չանազան լեզուներ ունեն այս ձայները, այսպես՝ զենդերենը, պարսկերենը, վրացերենը և այլն: Կան էլ, որ նախորդի նման, թեև ունեն խուլ աստիճանը, բայց զուրկ են թրթռումից: Այսպես՝ հին հունարենը գիտեր x ձայնը, բայց չունեւր զ: Նույնպես են նաև լեխերենը, ումիներենը և լեհերենը: Հին եգիպտերենը ունեւ երկու տեսակ ի, մինը մյուսից ուժեղ, բայց չունեւր զ: Նոր լեզուներից գերմաներենը, դանիերենը, բրետոներենը, ռուսերենը, իսպաներենը, թուրքերենը, մոնղոլերենը, արաբերենը, պարսկերենը, բրդերենը, վրացերենը, օսերենը ունեն թե՛ x և թե՛ զ: Չափազանց առատ է x ձայնը ասորերենի մեջ: Ֆրանսերենը, անգլերենը և իտալերենը զուրկ են թե՛ մեկից և թե՛ մյուսից: Ռուսական ցիզաներեն լեզուն ունի զ (Сергиевский, 13):

Հին հայերենը ունեւ միայն խ և չզիտեր զ, ճիշտ ինչպես հին հունարենը. նոր հայերենը և բարբառները գիտեն թե՛ միներ և թե՛ մյուսը՝ ճիշտ ինչպես նոր հունարենը: Թե՛ միներ և թե՛ մյուսը հայերենի մեջ բավական թավ են, ավելի թավ քան ռուսերենում և գերմաներենում, բայց ավելի մեղմ քան արաբական համապատասխան ձայները: Արաբերենի չ ձայնը ամենաուժեղն է, որ կա նաև

կովկասյան լեզուներում. այսպես կաբարդին լեզվի մեջ՝ իբր խորդյուն. օրինակ՝ ахо «հովիվ», теха «տանակապ» (Лопатинский, 9): Շատ ավելի մեղմ ու փափուկ են նոր հունարենի խ և զ (χ, γ) ձայները: Հունարենը գիտի երեք աստիճանի x, մինը մյուսից ավելի ուժեղ (Mirambel, BSL, 37, № 109, p. 43): Իսկ սերբերենում այնքան տկար է, որ համարյա չի զանազանվում հ-ից և հաճախ էլ չի գրվում (Беленький, 5):

Հայերենի մեջ էլ, Սուչավայի բարբառը, բացի սովորական խ-ից, գիտի արտասանել ավելի կակուղ մի տեսակ խ, որ նման է հունարեն χ ձայնին, ինչպես վախ, աւախ բառերի մեջ:

Բոլոր ներբերանային շփական բաղաձայնները կարող են արտասանվել ավելի փափուկ (mouillé) ձևով, այսինքն լեզվի միջին մասով: Զանազան լեզուներ ունեն այդպիսի ձայներ. այսպես ունենր s և z բաղաձայնների փափուկ ձևերը, ֆրանսիական բարբառների, ումիներենի, սերբերենի, լեհերենի, ռուսերենի մեջ (լեհերենում գրվում է ś, ź).— միևնույն լեզուները գիտեն նաև չ և չ բաղաձայնների փափուկ ձևերը.— կաբարդիներենի մեջ գտնում ենք s և չ ձայների միջին s բաղաձայնի փափուկ ձևը (s'), ինչպես և նրա համապատասխան թրթռունը (z) (անս Лопатинский, 3):

⊕—) ինչպես և խ—զ ձայների փափուկ ձևերը անսովոր են լեզուների մեջ. միայն դանիերենի չ ձայնը մի քիչ փափուկ է, իբր ծ^y. այս պատճառով էլ երբեմն դառնում է y. իսկ x՝ ձայնը առատ է բուրյաթերենում (Поппе, Аларский говор, 1930, стр. 8): Այս ձայնը կա նաև ալբաներենում (չ'), ունենր նաև կաբարդին լեզվի մեջ (Aunam, 9):

Հայերենը իր բարբառներով հանդերձ չզիտի ներբերանային շփականների փափուկները: Այսպես նաև շրջակա լեզուները: Երբ մի հայի մոտ արտասանվեն այս կարգի բաղաձայններ, կկարծի լսել բաղաձայն + y:

Նաբեբաւեային կամ կոկոզային շփական բաղաձայնները հետևյալներն են.

1. հ. այս բաղաձայնը արտասանվում է խոշակից. ձայնալարերը բացված են և շունչը բավական ուժեղ կերպով հոսում է դուրս՝ առանց թրթռացնելու նրանց: Բայց ըստ որում ձայնալարերը կարող են շատ կամ քիչ բացված լինել և օդի հոսանքը ավելի կամ նվազ ուժգին լինել, ըստ այնմ էլ զանազան տեսակի հ կա, մեկը մյուսից ավելի կամ պակաս ուժգին: Ամենից ավելի ուժեղ է կաբարդիներեն-

նի մեջ, ինչպես իս «շուև» (Лопатинский, 5): նույն ձայնը գտնվում է զանազան կովկասյան լեզուների մեջ: նույնչափ ուժեղ է և արաբերենն շ հ, որի արտասանությունը ժամանակ լեզվի արմատն էլ մասամբ մոտենում է կատիկին, գրեթե նման իս ձայնին: Արաբերենը ունի նաև տկար հ, որ գրությունում տարբեր է մյուսից. այսպես նաև եթովպական դալլա լեզուն, որ ունի հ և օ (Hodson, 11): Ամերիկյան մայա լեզուն ունի թե՛ սովորական հ և թե՛ շատ ուժեղ հ (Tozzer, 18): Տկար են գերմանական, դանիական, անգլիական, իսպանական, հունգարական, պարսիկ և թուրքական հ-երը: — Անգլերենից ավելի ուժեղ է շխերեն հ. սլովերեն լեզվի մեջ թեև գրվում է հ, բայց հնչվում է x (Pečnik, 9): Վրացերենի մեջ կա երկու տեսակ հ, որոնք այսօր իրարից զանազանություն չունեն, բայց անշուշտ հին ժամանակ մին մյուսից որևէ բանով տարբեր էր: Ռուսերենի և իտալերենի մեջ հ ձայնը գոյություն չունի. ֆրանսերենում և պորտուգալերենում գրեթե չնշվել է, պահպանվել միայն գրությունում մեջ կամ զանազան բարբառներում:

Հին լեզուներից սանսկրիտը (visarga), ղենդերենը, հին պարսկերենը, հունարենն ու լատիներենը ունենին այս ձայնը, բայց թե՛ հունարենի և թե՛ լատիներենի մեջ ավելի հետո չնշվեց: Եգիպտերենը ունի երկու տեսակ հ, ինչպես և երկու տեսակ x, որոնց բոլորի համար կան առանձին տառեր (Rueder, Ägyptisch, 14):

Հունարենում հին արձանագրությունց մեջ հ գրվում էր ր ձևով, ապա վերացավ և հույները նրա փոխարեն բառակցքի ձայնավորի կողքին սկսեցին գրել թավ նշանը (·), որ կոչվում է լատիներեն բառով Spiritus asper (կոշտ շունչ): Ամեն մի բառ, որ հունարենում սկսում է ձայնավորով, անպատճառ պիտի ունենա կամ այս նշանը (· հ), և կամ նրա հակադարձը (·spiritus lenis) որ նշանակում է թե հ չկա: Միայն ս ձայնավորն է, որ ù է հընչվում միշտ: Այսօր էլ հույները գրությունում մեջ ավանդաբար պահում են այդ նշանները, թեև ոչ մի հնչական արժեք չունի: Այսպես է նաև ր՝ ձայնը, որ հնչվել է միշտ հո:

Ռուսերենն էլ չունի հ, և ուրիշ լեզուների հ հնչումը արձանագրում է ր (q, g) տառով: Իհարկե հ և g (հ և q) բոլորովին նման չեն. բայց ռուսերենը դիմել է այդ միջոցին, որովհետև ուրախներենում ր հնչվում է յ, որ հ բաղաձայնի թրթռումն է:

Հնդկական բանասիրական լեզվում հ բաղաձայնը բառակցում և կամ շեշտված վանկի սկզբում ստանում է մի ուժեղ կոկորդալին հնչում՝ նման արաբերեն ջ-ի: նմանապես շնչեղ թրթռուն gh, jh,

dh, dh, bh, nh, mh, րh, wh և այլն բաղաձայնների մեջ հ հնչվում է ջ ձևով. բայց այդպես չէ շնչեղ խուլների մեջ kh, ծh, th, փh, ph). օրինակ bhra «եղբայր» >br'a, ghuma (հողի չափ է) >g'umā և այլն (Grierson, VIII, մաս 1, էջ 251): [Հնդկականի ասածից չի հասկացվում, թե այստեղ հ՝ ձևով մի նոր ձայն ունենա, թե հ ձայնափոխվելով դառնում է զուտ ']:

Աֆրիկյան լատուգե (բանտու) լեզվում հ արտասանվում է շրթունքների արմատի անորոշ կամ անտարբեր դիրքով, որ կարծես k է լսվում (Nekes, 8):

Աֆրիկյան կինյամվեզի (բանտու) լեզվով կա անգալին հ (Velton, 2), որ մեր մեջ հա «այո» ասելու բացականչությունն է:

Ինչպես սանսկրիտում, նույնպես և պալի լեզվում հ բաղաձայնը թրթռուն է (V. Henry, 4):

Ուկրաիններենում ր բաղաձայնը հնչվում է հ, բայց այդ հ-ն թրթռուն է և ո՛չ խուլ, ինչպես ryba=hūba «շրթունք», ropa=horá «լեռ» (Smal-Stocky, 25): Դ տառի այս հնչումն է, որ պատճառ է դարձել ռուսերենի մեջ ր-ով տառադարձելու ուրիշ ազդերի հ ձայնը: նույն հեղինակը (անդ, 56—57) գրում է, թե քանի որ մի շատ ընդարձակ տարածության վրա (չեխ, սերբ, բելուս, ուկրաինացի և այլն) սլավական g դարձել է հ, ուրեմն նախավոր սլավական g վերածվել է նախ ղ (γ), ապա անցել հ ձայնին: Եվ եթե այս ղ ձայնի համար տառ չհնարվեց, այդ այն պատճառով է, որ հունական այբուբենումն էլ նշան չկար այդ հնչման համար: Այսպես և գերմանացիք tag, wagen բառերի ղ-ի համար նշան չհնարեցին, որովհետև լատին այբուբենումն էլ չկար:

Գոթերենն ունի հ ձայնը, որ հատուկ է միայն իրեն. թվում է, թե մի միակ ամբողջական բաղաձայն է հնչում. կա՛մ շրթնալին հ էր և կամ խուլ w (ինչպես անգլերեն wh). ուրիշներ կարծում են, թե h+ խուլ w ձայնների կապակցությունն էր (Braune, 1928, 40):

Աֆրիկյան դագոմբա (բանտու) լեզվում կա մի տեսակ հ, որ ուսումնասիրողը (R. Fisch, 1) նման է գտնում g=ղ ձայնին, բայց ավելի փափուկ և թրթռուն (ըստ իս պետք է հասկանալ թրթռուն հ, որ է յ):

Պերուի ռունա սիմի կամ կեչուա լեզվում կա երկու տեսակ հ, մեկը տկար և մյուսը ուժեղ (Middendorf, 39):

Աֆրիկյան էվե լեզվումն էլ կա թրթռուն հ, որ է յ (Westermann, 15):

Կան լեզուներ, որ ունեն երկու տեսակի *h* (սովորական և ուժեղ). այսպես են, օրինակ, տիբեթերեն և *h'* (Foucaux, 1):

Հայերենը հնուց ի վեր ունի մի տեսակի *h*, որ անշուշտ շատ զորեղ չէր և չէ, քանի որ վրացիք, որոնք ունեն երկու տեսակի *h*, հայերեն բառերի տառագարձութիւն մեջ շատ անգամ *h* ձայնը հազարավում են: Հին հայերենի *h* ձայնի տիրութիւնն ապացուց է նաև այն, որ մի քանի բառեր, որոնք սկսում են *h* ձայնով և ունեն նրան հաջորդող *h*, հոլովման կամ ածանցման մեջ այնպես են վարվում, որ կարծես թե *h* չլիներ. օրինակ հիմն—հիման, հինդ—հնդի, բայց հինդերորդ:

Ի ձայնը ունի և իր թրթռուն համապատասխան ձևը, այսպիսի թրթռուն *h* կա նաև հինդուստանի, սանսկրիտի, արաբերենի և մուղերի բերբերական լեզուների մեջ: Սովորական *h* ձայնը, ըստ բնիկ քերականների, թրթռուն էր, բայց կար նաև խուլ *h*: Ըստ Օ'նեյլի (էջ 4), Աֆրիկյան շոնա լեզուն չգիտի սովորական խուլ *h*, այլ միայն թրթռուն *h*: Ըստ Մարկոնեսի (էջ 9), գուլու լեզուն ունի *h* խուլ և *h* թրթռուն, մինչդեռ կարանգա լեզուն գիտի միայն վերջինը: Օվկիանիայի տահիթի լեզվում *h* այնպես է հնչվում, որ երբեմն շփոթվում է *f*-ի հետ (Senac, 17):

Հայերեն բարբառների մեջ բառակցքում հաճախ գտնում ենք թրթռուն *h*, որ համապատասխանում է գրաբարի *h* ձայնին. այսպես Յակոբ, Յարութ, Յովակիմ և այլն: Թրթռուն *h* ձայնը գտնում ենք Գարինի, Մուշի, Շարին-Գարահիսարի, Արաբկիրի, Սեբաստիայի բարբառներում:

2. *g*, որ արտասանվում է լեզվի արմատը հպելով ըմպանին արարերենի *g* կոկորդական ձայնն է, որ գտնվում է նաև կարարգիներենի մեջ (Лопатинск., 4): Ավելի ուժեղ է քան սովորական *g*: Ինչպես շատ լեզուների, նույնպես և հայերենի մեջ պակասում է:

Յնցուն բաղաձայնները առաջանում են մի որևէ առաձգական գործարանի հաջորդական ցնցումներով, այսինքն կարճատև ու արագ պայթումներով ու փակումներով: Այդպիսի ցնցումներ կարող են առաջ բերել շրթունքները, լեզուն և կատիկը: Ըստ այսմ ցնցուն բաղաձայնները հետևյալներն են.

1. Շրթնային ցնցուն.—Այս բաղաձայնի արտասանութիւնն ժամանակ երկու շրթունքները թրթռում են, օդի հոսանքը ընդհատումներով հոսում է նրանց միջով. խոշակը կարող է միևնույն ժամանակ թրթռալ կամ ոչ: Այս ձայնը իբրև սովորական ձայնական երևույթ գործածական չէ լեզուների մեջ. բայց ձայնարկու-

թիւնը մեջ կա. այսպես ցրտից դողալու և մանավանդ ձին կանգնեցնելու համար արտաբերված ձայնարկութիւնը: Իբրև առանձին հնչյուն գոյություն ունի արևազերենում. ինչպես սը «գաշտ»:

2. Լեզվային ցնցուն (*r*)—Լեզվի ծայրը բարձրանում է դեպի առամնակապիճները և կամ էլ ավելի բարձր և այս դիրքի մեջ սկսում է թրթռալ: Լսվում է ու ձայնը, որ սովորական է շատ լեզուների մեջ, ինչպես հունարենի, լատիներենի, սոմանական լեզուների, սուսերենի մեջ և այլն: Ըստ Գրամոնի (Traité pratique de prononciation française, 67), Ֆրանսերենում բառակցքի *r*-ի համար թրթռումների թիվը 3-ից պետք չէ անցնի (տե՛ս Bruneau, Manuel de phonétique, 40): Շվեդերենում և նորվեգերենում կա մի տեսակի նորր *r*, որ արտասանվում է լեզվի ծայրը մոտեցնելով լինդին, իսկ եթե նրանից հետո հաջորդեն *t*, *d*, *n*, *s* բաղաձայնները, երկուսը միանալով տալիս են յուրահատուկ հնչումներ, որոնք շվեդացիք նշանակում են *rt*, *rd*, *rn*, *rs* (Poestion, Schwed, 2, 25): Հինդուստանի լեզվում կա բացի սովորականից նաև ուրիշ երկու տեսակի *r*, որոնց արտասանութիւնն ժամանակ լեզուն հպվում է քիմքի ավելի բարձր կետին և այս պատճառով էլ կոչվում են գանդալին (գրվում են *r*, *rh*). հնչումը ուժեղ *n*-ի նման է (Bonnerjea, Gramm. hindi, 2): Դրավիդյան կուրուի լեզուն ունի 3 տեսակի *r*. առաջինը սովորական, մյուսները գանդալին *r* և շնչեղ գանդալին *rh* (Haho, 4): Աֆրիկյան սոնգա (բանու) լեզուն էլ ունի գանդալին *r*, որ շատ ցնցուն է (Junod, 31):

Աֆրաներենն էլ ունի գանդալին *r*, որ գրում են *r*: Արևմուտյան սլավական լեզուները ունեն մի տեսակի *r* (լեհերեն *rz*, չեխերեն *r*), որ առաջանում է լեզվի ուժեղ թրթռացումով և ուժ ձայնախմբի արտասանութիւնն տպավորութիւնն է թողնում (Hantich, Gramm. tchèque, 8): Օրինակ, Գրիգոր անունը լեհերենում լինում է Grzegorz:

Դրավիդյան լեզուների մեջ կա երեք տեսակի *r*. բացի սովորականից, կա մի տեսակի *r*, որ շատ թուլ է հնչվում, այնպես որ շատ տեղեր դարձել է *l* կամ *y* և կամ շնչվել է: Անգլիացիք այս ձայնը տառագարձում են *zh* կամ *rzh* ձևով.—մի ուրիշ տեսակի ուժեղ *r*, որի կրկնակը, *rr*, արտասանվում է իբր *ttr* (Caldwell, Dravid, 144—145): Աֆրիկյան նախա լեզվի մեջ *r* հնչվում է *l*-ի մոտիկ մի հնչյունով (Welman, A preliminary study of the nzima, 17): Ամերիկյան արավակ լեզվում կա մի ձայն, որ բռնում է *l*-ի և *r*-ի միջին տեղը. ոմանք գրում են այս ձայնը $\frac{l}{r}$ ձևով, ու-

րիշներ պարզապես 1, իսկ ուրիշներ էլ 1. շատ դժվար արտասանելի մի հնչյուն է (Crevaux-Sadot-Adam, 167): Պորտուգալերենը ունի երկու տեսակ 1, մին ուժեղ և մյուսը տկար, նման հայերենի (Anstett, 5): Շատ մեղմ է նաև օվկիանյան տահիթի լեզվի 1 և 2-ը (Senac, 17):

3. Կատկայից ցնցուն (r).—Լեզուն բարձրանում է և կատկի տակ ձևացնում է մի անցք, որի միջով հոսում է օդը՝ թրթրոսացնելով լեզվակը կամ նաև կատկը: Այս ձայնը սովորական է արդի ֆրանսերենի և գերմաներենի մեջ, որ լեզվային ցնցուն 1 և 2-ը գրեթե բացակայում է: Այս ձայնը, որ հաճախ կոչվում է r parisien (փարիզյան r) չկա ուրիշ լեզուների մեջ, բայց պատահում է նվորպալի զանազան երկրներում, իբր գավառական արտասանությամբ կամ անձնական թերություն (այսպես Նորանդիա, Շվեդիա, Նորվեգիա, Պորտուգալիա և Անգլիա): Ֆրանսերենում և գերմաներենում սկսել է թուլանալ տասնութերորդ դարում և սկզբում համարվում էր թերություն, հիմա ընդհանրաճանաչվելով սովորական դարձալ: Հայերենի մեջ էլ չկա այս ձայնը, բայց ինձ պատահել են անձինք, որ արտասանում էին այսպես: Եվ հայր, երբ լսում է այս ձայնը, կարծում է լսել ղ: Շատեր մերոնցից ցանկանալով նմանվել զուտ ֆրանսիական արտասանության, բոլոր լեզվային ցնցուն 1-երը հնչում են ղ. բայց դա հայտնապես սխալ է, որովհետև նախ ղ շփական է, մինչդեռ ֆրանսիական հիշյալ բաղաձայնը ցնցուն է. երկրորդ՝ ֆրանսիացիների մոտ էլ կա լեզվային 1 արտասանությունը և մանավանդ որ հոնտորները, գերասաններն ու երգիչները գործ են ածում բեմի վրա հասարակության առջ միայն այս ձևի 1՝ կոկորդին նվազ հոգնություն տալու և ավելի ներդաշնակության համար (Bruneau, Manuel de phonétique, 41):

4. Գանգայից ցնցուն (r).—Գտնվում է դրավիդյան բրահուի լեզվի մեջ՝ ըստ Բրեյլին (էջ 28): Լեզվի ծայրը դիպցնում են քիմֆի շատ հետեր, համարյա փափուկ քիմֆին հասած. սրա տրեկար մի ձև է հինդուստանի 1, որի հնչման ժամանակ լեզվի ծայրը դիպչում է քիմֆի շատ ավելի առաջակողմը:

5. Ըմպանայից ցնցուն (r).—Լեզվի արմատը մոտենում է ըմպանին, կատկի հետևի մասը թրթրում է և արտաբերում է մի տեսակ 1, որ սովորական է դանիերենի մեջ:

Այս բոլոր ցնցունները կարող են արտասանվել նաև ուրիշ ձևով. գործարանները ստանում են վերոհիշյալ դիրքերը, բայց

բայց մնում են անփոփոխ, այսինքն առանց ցնցվելու. այն ժամանակ օգի հոսանքը դուրս է գալիս առանց ընդհատվելու և առաջանում է մի տեսակ ձայն, որ բռնում է ցնցուն բաղաձայնի և շփականի միջին տեղը: Կարելի է կոչել դրանք կիսացնցուն: Այսպես՝ անգլերենում սովորական է լեզվային ցնցուն բաղաձայնի այս տեսակը, որ կարելի է նշանակել 1 (շրջված 1) ձևով և որ անսովորական էր տալիս է 2 կամ 3 ձայնի տպավորությունը: Անհամերենում թեև կա ուժեղ 1, բայց 1-ից հետո այնչափ նուրբ է հնչվում, որ անվարժ ականջը չի նկատում նրա գոյությունը (Dirr, Gramm. annam., 4): Հայերենում այս ձայնին համապատասխանում է ր, որ մի քիչ ավելի ցնցուն է քան անգլիական 1 և շատ ավելի պակաս ցնցուն քան ր, որ համապատասխանում է վերի լեզվային ցնցունին: Նույն ր ձայնը գտնում ենք նաև վրացերենի, թուրքերենի, պարսկերենի, ուսիերենի և բասկերենի մեջ: Զուքի լեզուն էլ ունի բարակ 1 (Bogoras, 645): Ուղեացին, օրինակ, անընդունակ է հնչելու ր և ր-ով սկսվող բառերը, ինչպես րուս, դարձնում է ուրուգ: Ժայռներենում 1 ձայնը զանազան բարբառներում այնպես նման է 1-ին, որ բռնում է այս երկուսի միջին տեղը (ըստ Plaut-ի, էջ 3), այնպես որ ոմանք մինչև անգամ օտարազգի 1-ով բառերը գրում են 1 տառով: Մի ուրիշ գավառում էլ համարյա թե դարձել է d. այնպես որ London բառի փոխարեն հնչում են Dondon (Plaut, 3):

Բասկերենում կա թեև ր (ուժեղ 1) և թեև ր, որ անվարժ ականջը լսում է իբր 1. Նուրբ 1 գտնվում է երկու ձայնավորի միջև, իսկ ուժեղ ր՝ գտնվում է վանկի վերջում՝ հաջորդ բաղաձայնի մոտ. ինչպես՝ erdi «կես», erbal «տկար». երկու 1 միասին հնչվում են ուժեղ ր. ինչպես lurra «երկիր»: Հայերենի նման այս երկուսը բոլորովին տարբեր ձայներ են. ինչպես ura «ջուր», urra «կաղին»: 1-ի այս փափուկ հնչումը այնքան նման է d-ի, որ երբեմն միևնույն բառը երկու ձևով էլ գտնում ենք. ինչպես՝ erastea կամ edastea «խոսել» (Van Rys, 6,8):

Հասոսերենում չկա 1. չինարենում էլ չկա 1. բայց բառավերջում պատահում է մի հնչյուն, որ բաղկացած է 1 և երկար 1 ձայներից. տառագարձության մեջ գրվում է rhj (Seidel, Chin. gramm., 13):

Կատկային ցնցուն 1 ևս կարող է արտասանվել առանց ցնցունների և այն ժամանակ շատ է մոտենում ղ ձայնին: Այս ձայնը, որ նախորդի ոճով կարելի է ներկայացնել շրջված 1 ձևով,

գտնվում է արդի Ֆրանսերենի և գերմաներենի մեջ: Գերմանա-
ցիք շատ անգամ շփոթում են wagen, waren ձևով բառերը, ըս-
տովում թե՛ g և թե՛ r համարյա դարձել են դ:

Այս բոլոր տեսակի ցնցումները սովորաբար թրթռուն են,
բայց կարող են դառնալ խուլ, հատկապես բառավերջում: Էսկիմո-
սերենը ունի կարճ ու երկար խուլ r (Boas, I, 979), մոնղոլերենը
ունի երկու տեսակի r՝ թրթռուն և խուլ. դանիերեն կա խուլ r իս-
լանդերենում էլ կա խուլ r, որ գրվում է hr ձևով: Ամերիկյան
լուրով լեզվում բառավերջի r խուլ է (Kroeber, 417): Մեզ մոտ,
Կարսի և Լենինականի բարբառում, բառավերջի r հնչվում է խուլ,
ուստի շ ձայնի սպավորությունն է գործում. ինչպես բեր, տար,
տուր (բայց հենց որ այս r բառի մեջ է մտնում, հնչվում է սո-
վորական ձևով թրթռուն r. ինչպես բերի, տարի): r կարող է նաև
հնչվել փափկացած ձևով, այսինքն լեզվի միջին մասով. այս կար-
գի ձայներից հայտնի է հատկապես ուսերենի փափկացած r՝
ձայնը: Լեթթերենն էլ ունի փափուկ r, որ գրում է r. (տակին
ստորակետ): Մոնղոլերենը, որ ունի երկու տեսակի r, ունի նաև
նրանց քմային ձևերը r՝ թրթռուն և r՝ խուլ (Владимирцев, 359):
Պոլինեզյան լեզուների մեջ կա մի տեսակի r, ատամների միջև ար-
տասանված, այնպես որ հաճախ լսողը թեթե ձ է կարծում: Այս-
պես նաև Նոր-Ջեյլանդիայի մասրք լեզվում, ուր չկա ո՛չ d և ո՛չ l,
այլ այնպիսի մի r, որ բռնում է այս երկու ձայների տեղը. երբ
հարկ է լինում տառադարձել անգլերեն d, դնում են r. այսպես
David > Raviri. նմանությունը այնքան է, որ ուրիշ ճամփորդներ
նույնը գրել են d ձայնով (Passy, 140): Ֆիլիպինյան տագալոգ
լեզվում կա մի տեսակի r, որ գտնվում է r-ի և d-ի միջև, բայց
ավելի մոտ է r-ին. հաճախ նա առաջանում է երկու ձայնավորի
միջև գտնված d-ից (Blake, 6):

Նույնպիսի մի շատ տկար r կա նաև ամերիկյան պալնե լեզ-
վի մեջ, որ անվարժ մարդը մերթ լսում է l, մերթ r, մերթ n և
մերթ d. այս ձայնը արտաբերվում է լեզվի ծալրով՝ r, որ դիպ-
չում է կարող ատամներից մի քիչ հետև գտնված մի կետում.
երբ լեզվի ծալրը թրթռում է՝ լսվում է l և երբ լեզուն թողնում է
հանկարծ քիմքը՝ լսվում է d, իսկ n ձայնի սպավորությունը նրա-
նից է, որ արտասանության ժամանակ շունչը դուրս է գալիս քը-
թից (F. Boas, Handbook of american indian language, I, 17):
Մեկանեզյան մոտա լեզվի մեջ, ըստ Գոդրինգտոնի (էջ XIII),

կա երկու տեսակի r, որոնցից մեկը n-ից հետո անպատճառ դառ-
նում է ndr, իսկ l-ից հետո՝ ldr:

Աֆրիկյան բասա լեզվում r նման չէ մեր լեզուների n ձայ-
նին, այլ գտնվում է l-ի և d-ի միջև (Schürle, 1):

Ամերիկյան մալա լեզվի մեջ կա շատ տկար մի r, որ հազվի
լսելի է և շատեր չեն գրում, ինչպես tin bortik կամ tin bootik,
lerti կամ leeti (Tozzer, 18):

Չիլիի բնիկների լեզուն ունի մի տեսակի տկար r, որ կարելի
է համեմատել անգլերեն բառամիջի փափուկ r ձայնին (la r sue-
namas suave que en castellano; podría compararse su sonido
al de la r en medio de dicción del ingles (Febres, 1):

Այս նկարագրությամբ այդ ձայնը կմոտենա կամ թերևս կնույ-
նանա մեր r ձայնի հետ: Նույնպես պիտի լինի նաև սուդանական
շիլուկ լեզվի r ձայնը, որ նկարագրում է Վեստերմանը (էջ 5)

Միկրոնեզիայի մարշալ լեզվում կա մի տեսակի r, որ ուսում-
նասիրողը տառադարձում է r և նկարագրում է այսպես, —լեզվի
ծալրը մոտենում է լինդին և նրա կազմած նեղ անցքի միջոցով
վտարվելով օդը տալիս է այդ հնչյունը (Erdland, 197)

Ամերիկյան լուրով լեզվում կա մի տեսակի r, որ նման է անգ-
լերեն r-ին և կարծես ձայնավոր է. ուստի ուսումնասիրողը գրում
է er (Kroeber, 416):

Կողմնական բաղաձայնները, ինչպես գիտենք, առաջանում
են օդի այն հոսանքով, որ անցնում է լեզվի երկու կողքերին թո-
ղած բացվածքով: Ուրեմն, համաձայն լեզվի հենման կետի և այդ
բացվածքների մեծությունների, կարող են լինել զանազան տեսակի
կողմնականներ, որոնք բոլորը լսվում են իբր l: Մենք այստեղ կը-
հիշենք նրանցից գլխավորները.

1. Լեզվային l. — Այս բաղաձայնի արտասանության ժամա-
նակ լեզուն ստանում է հարթ ձև, ծալրը դիպչում է առաջի ատամ-
ներին, իսկ արմատը երկու կողմից դիպչում է վերջին սեղանա-
տամներին. շրթունքները բաց են. խոչակը առհասարակ թրթռում
է, որովհետև լեզվային l-ը սովորաբար թրթռուն է: Ամերիկյան
մալա լեզուն թեև չունի թրթռուն բաղաձայններ, բայց նրա մեջ
l շատ ուժեղ թրթռուն է (Tozzer, 18):

2. Կապնային l. — Այսպիսի արտասանության մեջ լեզվի ծալ-
րը հենվում է ատամնակապիճներին, կամ մի քիչ էլ սվելի վերև՝
քիմքին, այնպես որ լեզուն ստանում է գդալի ձև, իսկ արմատը
բարձրանալով՝ դիպչում է կատիկի երկու եզերքներին: Այս է անգ-

լիական արտասանությամբ 1: Սրա մի ուրիշ տեսակն է այն 1 ձայնը, որը նկարագրում է Մորիստ (Carr. lang., I, 4) ամերիկյան կարբիեր լեզվի մեջ, և որ կոչում է lingual-sibilant 1, որ մի սուլող ձայն է և ստացվում է լեզուն վեր դարձրած ճնշելով քիմֆի աջ կողմը:

3. Կատկայից 1.—Լեզվի հետևի մասը բարձրանալով կպում է քիմֆի վերջնամասին կամ կատիկին, թողնելով երկու կողմից մի բացվածք, որով հոսում է օդը: Այսպիսի 1 սովորական է այժմ սլավոնական լեզուների, ի միջի այլոց ուսերենի մեջ: Լեհերենում գրվում է հենց 1 ձևով: Նույնը կա և բասկերենում, օսերենում: Նույն հնչումն ունի նաև հին լատինական 1 տառը և հին ֆրանսերեն 1, որ հետո ձայնավորի վերածվեց: Հին հայերենի ղ տառը, որ համապատասխանում է եվրոպական 1-ին, անշուշտ կատկային 1 էր, որ հետո ձայնավորվելով դարձավ կոկորդական հնչյուն:

4. Փափուկ 1.—Երբ լեզվի մկանները ափելի թուլ են և հենման կետը ափելի փոփած, լսվում է մի տեսակ 1^y, (լ^y), որ ազգից ազգ տարբերվում է: Այսպիսի արտասանություն գտնում ենք ֆրանսերենի, իտալերենի, իսպաներենի, պորտուգալերենի (գրվում է lh), լեթթերենի մեջ (գրվում է l), հուգարերենի մեջ և այլն: Հայերենի մեջ չկա այս ձայնը, բայց նրան հանդիպում ենք Նոր-Ջուզայի բարբառում (ինչպես բոլոր), Յդնայի գավառականում (ինչպես ր' սել) և Սվեդիայի (Մուսա լեռան) բարբառում (ինչպես ր' իղինիլ < նեղանալ «ձանձրանալ»):

5. Խուլ 1.—Առհասարակ 1 ձայնը թրթռուն է. բայց բառավերջում խուլ բաղաձայնի ազդեցությամբ կարող է դառնալ խուլ այս պարագային անվարժ ականջը կարծում է լսել hl. Ինչպես ֆրանսերեն le tas, plat, elle, peuple, pluie բառերի մեջ: Խուլ 1 կա նաև մոնղոլերենում, դանիերենում և իսլանդերենի մեջ: Վերջինում գրվում է hl ձևով: Լապպերեն լեզուն էլ ունի խուլ 1 (Wiklund, 7): Գալլերեն լեզվում կա նույնիսկ փափուկ 1-ի խուլ աստիճանը, որ գրվում է ll ձևով. ինչպես Llewellyn. Նույնպես է նաև մոնղոլերենը, ուր ունենք 4 տեսակ 1.—թրթռուն, խուլ և սրանց քմայնացածները (Владимирцов, 60): Ըստ Փոգաի (էջ 14) վրացերենում էլ, երբ 1 գտնվի երկու խուլ բաղաձայնների միջև, հնչվում է խուլ, ինչպես սախլի «տանը»:

6. Այս բոլորից դուրս կա մի տեսակ 1, որ հատուկ է միայն շվեդերեն և նորվեգերեն ժողովրդական լեզվին և շվեդերենում կոչվում է թավ 1. ուրիշ տեղ գոյություն չունի. կազմվում է լեզվի ծայրը մոտեցնելով միջին քիմֆին և հանկարծ սանելով քիմֆի

առաջամասը. լսվում է ինչ-որ 1-ի և ր-ի խառնուրդ (Poestion, Schmid., 23): Անշուշտ նույն է նաև այն 1 ձայնը, որ նկարագրում է Կոլդիլը (Drav, 145) կոչում է ծանր կամ գանգային 1 և համարում է 1 և ր ձայնների մի խառնուրդ: Գանգային 1 ունի գրավիդյան տելուգու լեզուն, գրվում է 1 ձևով (Lakshminarasayya, 5-7): Գանգային 1 ունի նաև վեդայական հնդկերենը, որ տառագրվում են 1 և որի համար Վ. Հենրին ասում է, թե գտնվում է d և 1 ձայնների միջև և հատուկ է ր բաղաձայնը թվյատ արտասանող անձանց. կա նաև այս բաղաձայնի շնչեղ աստիճանը, որ գրվում է lh և հատուկ է վեդայական հնդկերենին (Manuel de sans. véd., 6):

Ավելորդ է ասել, թե այս բոլոր տեսակի 1-երը չեն գտնվում մի անգամից մի լեզվի մեջ:

1 ձայնի կողմից առանձնապես հարուստ է ամերիկյան կոոս լեզուն, որ ըստ Ֆրախտենբերգի (տե՛ս Boas, II, 307) ունի 6 տեսակ 1, որոնք հեղինակը նշանակում է հետևյալ ձևով. L, L, L!, l, l, բայց սրանց արժեքը չի նշանակում. մեզ հայտնի են 1 սովորական, 1 (կրկնակ 1) և 1 (լեհական հետնալեզվային): L (խուլ) և L (թրթռուն) գտնվում են նաև չուքչի լեզվի մեջ, որ քննիչը (Bogoras, տես Boas, II, 645) նկարագրում է հետևյալ ձևով. L (խուլ) արտասանվում է լեզվի ծայրը դիպցնելով վերին ատամնաշարին, լեզվի հետը սեղմելով կարծր քիմֆը և հանկարծ թողնելով կողքից՝ թեթե սեղմումից հետո: Այս L ձայնը խուլ է, իսկ նրա թրթռունն է L: Անհայտ է մնում Ֆրախտենբերգի նշանակած L! ձայնը: Նույն հեղինակը ամերիկյան սիուլավյան լեզվի մեջ գտնում է 5 տեսակ 1, որոնց մեջ նոր տեսակ է բոլորովին 1; որ կոչում է palatal latéral և որի համար ասում է, թե ոչ մի լեզվի մեջ գոյություն չունի. այս 1 ձայնի հնչումը նմանեցնում է անգլերեն lüre բառի նախաձայնի հնչման (Boas, II, 444):

Բոլորովին նոր տեսակ է ամերիկյան նձիմա լեզվի մի ձայնը, որ 1 և n ձայնների խառնուրդն է. գրվում է nl և է ոնգային 1 կամ կողմնական (lateralisé) n (տես Welman, Preliminary study of the nzima, 16):

Ըստ Գրասերիի (էջ 12), Չիլիի աուկա լեզուն ունի երկու տեսակ 1. առաջինը սովորականն է, ուր լեզուն հենվում է քիմֆի վերևում, իսկ երկրորդի հնչման ժամանակ լեզուն հենվում է ատամներին:

Ամերիկյան ազանդե կամ նիամ-նիամ լեզուն, բացի սովորա-

կան 1-ից, ունի նաև մի տեսակ 1, որ գտնվում է 1 և 1 ձայների միջև (Lagae, 69): Աֆրիկյան կատե լեզվում էլ 1 արտասանվում է ինչ-որ 1-ի նման (Pillhofer, 15):

Ալպյան և եթովպական սահո լեզուն ունի մի տեսակ 1, որ գտնվում է 1 և 1 ձայների միջև (Reinisch, 415):

Ալլասկայի (նախկին Ռուսական Ամերիկա) բնիկները (Kolloch) ունեն մի տեսակ 1, որ միացած է g-ի և k-ի հետ (մին թըրթուռն և մյուսը խուլ), օրինակել կամ նկարագրել այս հնչյունը շատ դժվար է. ըստ Բուշմանի (էջ 381), այս ձայնը հնչվում է „avec un roulement qui ne peut être rendu par aucun signe de l'écriture française“.

Հիպերբորյան լուկայիր լեզվում, ըստ Յոնեսլանի (էջ 100), կա երեք տեսակ 1. մին բարակ, մին հաստ և երրորդը, որ գրվում է 1°, ըստ իր նկարագրության շնչեղ 1h:

Գրավիդյան բրասուհի լեզուն ունի մի տեսակ գանգալին շնչեղ 1, որ ուսումնասիրողը (Bray, 27) տառադարձում է 1h և համարում է չափազանց դժվար արտասանելի մի ձայն. ձևանում է լեզվի ծալը հետ ոլորելով և դիպցնելով քիմքի առաստաղի ծալքին և լեզվի հետևի մասը թողնելով ասամների արմատի պատի դեմ. այս դիրքի մեջ արտաբերվում է ձայնը որոշ ուժով բերանի երկու անկյուններում:

Աֆրիկայի կպելլե լեզուն էլ ունի գանգալին 1, որ արտասանվում է լեզվի ծալը հետ ոլորելով, բայց միևնույն ժամանակ ունի մի ուրիշ տեսակ 1, որ միաժամանակ գանգալին է և ոնգալին (Westermann, 2):

Հնդկական լահնդա լեզվում սովորական է գանգալին 1 (ըստ Grierson-ի, հտ. VIII, մաս 1, էջ 251): Գանգալին 1 ունի նաև Բամբան աֆար լեզուն (Colizza, 1): Ըստ Շտայնենի (էջ XVI) ամերիկյան Բակաիրի լեզուն ունի մի տեսակ 1, որ հեղինակը շատ դժվար ձայն» (sehr schwieriger Laut) է կոչում. նման է գանգալին 1-ին և հաճախ վանկ է կազմում, ինչպես 1 ձայնը: Աֆրիկյան կպելլե լեզուն էլ ունի գանգալին 1 և մի ուրիշ 1, որ միաժամանակ գանգալին և ոնգական է (Westermann, 2):

Հնդկական պալե լեզուն չունի ձայնավոր 1, 1. ունի սակայն բաղաձայն 1 (լեզվալին), բացի սովորական 1-ից (Henry, 3):

Աֆրիկյան կինդա լեզվում (բանտու) կա մի տեսակ 1, որ մենք d կամ 1 պիտի լսեինք (Wolff, 3):

Ամերիկյան լուրոկ լեզուն ունի 3 տեսակ 1. առաջինը մեր

սովորականն է. երկրորդը ոչ սովորական խուլ, երրորդը „sund affricative“ (Kroeber, 417):

Ալլասկայի (նախկին Ռուսական Ամերիկա) բնիկները (Kolloch-ներ) ունեն մի քանի կոկորդային խժալուր ձայներ, որոնք ուսումնասիրողը (Buschman, 383) գրում է Xhch, Xhhch, օրինակ՝ Xhchau „կրակ“, Xhhchath „կղզի“, chhachuchh „կանչել“, Xhchachtuch „կոկորդը մաքրել, թքել, spucken“, Xhhešh'chh „կաշաղակ“:

Աֆրիկյան կպելլե լեզուն ունի մի տեսակ 1 (ղ), որ ոնգալին է (Westermann, 2):

Այս 6 տեսակ 1-ից հայերենի մեջ գոյություն ունի միայն լեզվալինը, գալստականում մասամբ նաև փափուկ 1. թվում է թե Ալաշկերտի գավառականում կա նաև խուլ 1, որ գործ է ածվում միայն քրդերենից փոխառված բառերի մեջ. իսկ մյուս տեսակ 1-երը իսպառ պակասում են հայերենում: Կան լեզուներ, որոնք ո՛չ մի տեսակ 1 չունեն, այսպես են զենդերենը, հոտենտտյան նամա լեզուն, ճապոներենը, հին պարսկերենը, ամերիկյան տակահա լեզուն (Brinton, 11), որոնք օտարների 1 ձայնը դարձնում են 1. ամերիկյան սանտե լեզուն էլ չունի ո՛չ մի 1 և նրա տեղ դնում է d կամ n (Boas, Handbook, I, 881): Ընդհակառակը, օսերենն ունի 3 տեսակ 1, այն է՝ լեզվալին, կատկալին և փափուկ 1, և ամերիկյան հալդա լեզուն գիտի 4 տեսակ 1 (Boas, I, 210):

գ) Պայթական բաղաձայններ

Պայթական բաղաձայնները ըստ իրենց ձևի բաժանվում են 5 տեսակի. շրթնային, ծայրալեզվային, միջալեզվային, հետնալեզվային և հետքերանային կամ կոկորդային:

Շրթնային պայթականները հետևյալներն են.

1. b, p, bh, ph (p, պ, p°, փ).—Այս ձայները արտաբերվում են երկու շրթունքների փակումով, այս պատճառով էլ կոչվում են կրկնաշրթնային: Շրթունքները կարող են առնել մի քանի դիրքեր, որոնք շատ նուրբ տարբերություն միայն ունեն և առաջանում են հաջորդ ձայնի ազդեցությամբ: Այս մասին կարելի է գաղափար կազմել հայերև առաջ արտասանելով հաջորդաբար upu, apa, ipi ձայնախմբերը:

Այս ձայներից առաջինը՝ b գրեթե ամեն լեզվի մեջ էլ կա,

զարմանալի բացառությունն է կազմում ֆիններենը, որ զուրկ է b ձայնից և անհրաժեշտությունը դեպքում փոխանակում է p ձայնով, ինչպես Biblia = Piplia: p գտնվում է արևմտյան եվրոպական լեզուների մեջ, ինչպես ֆրանսերենի, իտալերենի, իսպաներենի, ինչպես և ուսերենի, հունարենի, լատիներենի, հնդկերենի, նաև հայերենի մեջ: Մեկանկյան մոտա լեզվում, ըստ Կոդերինգտոնի (էջ XII), p ունի v-ի մոտ մի հնչում: Գերմաներենը, անգլերենը, թուրքերենը զուրկ են այս p ձայնից, որ դարձնում են փ.—bh գտնվում է սանսկրիտի և արդի հալ բարբառների մեջ.—փ գտնվում է հայերենի, հնդկերենի, թուրքերենի, հին հունարենի, արդի գերմաներենի, անգլերենի, դանիերենի մեջ. պակասում է ուսերենի, ֆրանսերենի, իտալերենի, իսպաներենի, արդի հունարենի մեջ. արարերենում ամեն փ դառնում է ֆ (ف), ինչպես եղած է հին հունարենում, հակառակ հին հայերենի, որ ֆ դառնում է փ:

Զիլիի բնիկների լեզվում b և f գոյություն չունեն, և երբ հարկ լինի գործածել այդ երկու ձայնը, արտաբերում են v, որ հնչում են ավելի ուժեղ սովորականից, մոտ գերմանականին, „se pronuncia mas fuerte que en castellano, casi como en aleman“ (Febres, 1):

Աֆրիկյան սոնգա լեզվի մեջ b հնչվում է այնպես, որ մոտենում է v-ին, բայց տարբեր է w-ից, այս հնչումը ներկայացնում են v առումով (lunod, 35):

2. Երթնատամնային պայթական, որ արտաբերվում է վերին ատամների և ստորին շրթունքի հպումով. առաջանում է այն դեպքերում, երբ շրթնային բաղաձայնին հաջորդում է շրթնատամնային շփական, ինչպես՝ գերմաներեն Apfel բառի մեջ p ձայնը:

3. Երթնալեզվային պայթական, որ առաջանում է լեզվի ծալը լսվելով վերին շրթունքին. լավում է p—t, b—d ձայների միջև մի հնչյուն: Այս պայթականները գլուրությունը կարելի է արտաբերել, բայց սովորական գործածություն չունեն լեզուների մեջ: Կարծվում է, որ գոյություն ունեցել է հնագույն հունարենի մեջ և այդ ձայնն է, որ ներկայացված է π գրչությունը, ինչպես հոմերական πτόλις, πτόλειος բառերի մեջ: Այսօր այդ ձայնը կա կովկասյան ուրիշ լեզվի մեջ, ինչպես tuk «վիզ»:

4. Երթնալեզվակային պայթական (b). արտասանվում է սովորական շրթնայինի պես, բայց ընկերակցությունը լեզվակի թըրթուրների. անսովոր հնչում է. գտնվում է աֆրիկյան փոլ լեզվի մեջ:

Վերջապես ամերիկյան չինուկ լեզվի մեջ կա մի տեսակ b, որ լավում է իբր b, m կամ w. արտասանության ժամանակ շրթունքները շատ թեթև մոտենում են իրար, սուսգերբ բաց են մընում և շունչը թեթևակի անցնում է թե քթի և թե բերանի խոռոչով, միևնույն ժամանակ թրթուրում է խոչակը: Լավում է b, որովհետև շրթունքները հավում են իրար, w՝ որովհետև հպումը շատ թեթև է և m՝ որովհետև քթից է անցնում շունչը (F. Boas, Handbook of american indian language, 17):

Աթաբասկյան հուպա լեզվի մեջ ո՛չ մի շրթնային բաղաձայն չկա, ո՛չ p և ո՛չ b. այն դեպքում, ուր իր ցեղակից լեզուներն ունեն b, այս լեզվի մեջ գտնում ենք m (Boas, Handbook, 1, 93):

Նմանապես ամերիկյան ալինգիա լեզվում ո՛չ մի շրթնային չկա (ոչ b, ո՛չ p և ո՛չ ph և ոչ իսկ m). իսկ ամերիկյան չիկիտա լեզվում b ձայնը այնպես տկար է հնչվում, որ եթե չհնչեն էլ, սխալ չի համարվի (L. Adam—V. Henry, 2, 4):

Մեկանկյան (Նոր-Հիբրիդյան) էրոմանգա լեզվի մեջ շատ քիչ է պատահում b ձայնը. երբեմն հնչվում է p, երբեմն v (Ray 177):

Հիպերբուրյան լուկազիր լեզվի մեջ չկան v և f. բայց կա մի շնչեղ b, որ գտնվում է b-ի և v-ի միջև. նմանապես կա մի շնչեղ p, որ գտնվում է p-ի և f-ի միջև (Iochelson, 100):

Աֆրիկյան սեսուտո (բանտու) լեզվում b հնչվում է երկու շրթունքներով և լավում է իբրև փայտիկ v (Beyer, 1): Նույն լեզուն ունի նաև by հնչումը, որ նույն ձայնն է միացած քմականով, որով նմանվում է անգլիերեն view բառին (անդ):

Աֆրիկյան բոնգու լեզուն ունի մի տեսակ b, որի հետևից լավում է նաև w հնչումը, իբր b^w (Hanke, 12):

Չուլու լեզվում կա մի տեսակ կրկնաշրթնային պայթական b, որ ուսումնասիրողը (Doke, 11) b-ից բուրբուրի սարբեր է համարում և նրա համար հորինում է մի նոր առ՝ 6 (չուլու տված 9):

Ծայրալեզվային պայթականները հետևյալներն են.

1. d, t, dh, th (դ, տ, դ', թ). արտասանվում են լեզվի ծալրը կպցնելով վերի ատամների հետևի երեսին. այսպես է հայերենի և ֆրանսերենի մեջ. գերմաներենում շոշափման կետը ավելի վերեն է, իսկ անգլիերենում էլ ավելի վերև, այն է քիմքի առաջամասում: Առհասարակ ամեն լեզվի մեջ էլ d ձայնը կա, բացառությունը Նոր-Զելանդիայի մասրի լեզվի, որտեղ նա պակասում է

(Passi, 146). dh գտնվում է միայն սանսկրիտում և հայերենի բարբառներում. t ունեն Եվրոպայի արևմտյան լեզուները (ֆրանսերեն, իտալերեն և այլն), ուսերենը, հունարենը, ինչպես նաև արաբերենը, ասորերենը, արևելյան թուրքերենը: ք ձայնն ունեն հայերենը, սանսկրիտը, թուրքերենը, ասորերենը, արաբերենը, աննամերենը, քրդերենը, վրացերենը, գերմաներենը, անգլերենը և գանիերենը. մյուս եվրոպական լեզուների մեջ, ինչպես ուսերենը, ֆրանսերենը, իտալերենը, ինչպես և նոր հունարենը, պակասում է: Արաբերենը դիտի ո՛չ միայն d, t, այլև սրանց մի սաստկական տեսակը ڤ, ٬, որ գրում են ڤ, ٬:

2. ڤ, ٬, dh, th—արտասանում են լեզվի ծայրը կպցնելով քիմքի բարձրագույն կետին. այս միջոցին լավում է մի թլվաա ձայն. հատուկ են սանսկրիտի, հիդուստանիի, գրավիլյան լեզվալամբին և աֆղաներենին, ճավայերենին, կան նաև քամյան աֆար լեզվում, ոտնգա (բանտու) լեզուն էլ ունի գանգային ڤ, ڤ (Junod, 30), ինչպես և եթովպական գալլա լեզուն (ڤ)՝ սովորական d-ից բացի (Hadson, 11). եթովպական սահա լեզուն ունի գանգային d (Reinisch, 415): Հնդկ քերականությունում մեջ կոչված են ուղեղային (cerébrale): Թեև ուրիշ լեզուների մեջ այս ձայները չկան, բայց անգլերենի d, th ձայները նրանց շատ մոտիկ են հնչում, այնքան որ հնդկները, որ ունեն թե d, t և ڤ, ٬ ձայները, անգլերենի d, t ձայները տառադարձելու համար գործ են ածում իրենց այբուբենի ڤ, ٬ տառերը և ոչ թե d, t: Որոշ բառերի մեջ շվեդերենն ու արևելյան նորվեգերենն էլ ունեն գաղաթային d, t ինչպես և n, s (Jespersen, Lang., 197):

3. Կա նաև d ձայնի մի ուրիշ տեսակը, որ ընկերանում են նաև լեզվակի թրթռումները. այս ձայնը շատ հազվագյուտ է. զբաղվում է աֆրիկյան փոլլ լեզվի մեջ:

4. Ամերիկյան տականա լեզվում կա մի տեսակ ձայն, որ բռնում է t, d և r ձայների միջին տեղը. օրինակ, dudu «եղբայր» tata «հայր» (Britton, 11):

Ամերիկյան կիրիբի լեզվի մեջ d այնքան թուլ է, որ հազիվ է լավում. ինչպես ide «մայր» (Gabelentr, 5):

Հիպերբորյան լուկադիլ լեզվում կա մի տեսակ d, որ հնչվում է իբրև dr (lochelson, 101):

Աֆրիկյան սեսուտո (բանտու) լեզվում կա մի առանձին հընչյուն, որ ձևանում է լեզվի ծայրը պինդ սեղմելով ցածրի աստամ-

ներին. մոտ է ty հնչման, ինչպես անգլերեն tube բառի մեջ (Boyer, 1, որ գրում է c ձևով):

Աֆրիկյան ջոնգ (բանտու) լեզվում բառամիջի d հնչվում է այնպես, որ լավում է իբր r (r). (Nekes, 6):

Աֆրիկյան սեչուանա (բանտու) լեզվում d հնչվում է իբրև «մի փափուկ ձայն l-ի և r-ի միջև» (Wooking, 12):

Մելանեզյան տանդոա լեզվում չկա d. գտնվում է միայն օտար բառերի մեջ (Ray, 357): Այս լեզվում սակայն կա մի ձայն, որ ուսումնասիրողը (Ray, 357) գնում է t-ի և p-ի միջև, որի արտասանությունը ժամանակ լեզվի ծայրը աստամների միջով դիպչում է վերի շրթունքին (ըստ իս այս p՝ ձայնն է):

Բացի d, t, dh, th շարքից, ուրիշ գանգային բաղաձայններ էլ կան: Այսպես, հնդկական շինա լեզուն ունի գանգային ճ, ch, j, r, ձ, ճ ձայները (Bailey, 9—11):

Աֆրիկյան տորոտ լեզվում կան գանգային r, l ձայները (Westermann, 38):

Աֆրիկյան շագգա լեզվով կան գանգային r և ڤ (Raum, 33):

Հետևաբանվալին պայթականները հետևյալներն են.

1. g, k, gh, kh (q, h, q', p). արտասանվում են լեզվի արմատը կպցնելով քիմքի հետևի մեկ կետին. այս կետը գանգանվում է համաձայն հաջորդ ձայնավորի: Այսպես, կատկային ձայնավորի մոտ հպման կետը կատկն է, gu, ku և այլն. երբ ձայնավորն ավելի առաջ է, ինչպես a, բաղաձայնն էլ մոտավորապես հասնում է կատկի և կարմիր քիմքի սահմանին. իսկ երբ ձայնավորը քմային է, ինչպես i, բաղաձայնի հպման կետը գալիս է ավելի առաջ՝ կարծր քիմքի հետևի մասը:

Այս բաղաձայնների հիշյալ նրբությունները նշանակելու համար այբուբենները առհասարակ ուշադրություն չեն դարձնում և բոլորն էլ մեկ անունով կոչում են կոկորդական (gutturale), բայց լեզվաբանությունում մեջ շատ կարևոր է դրանք տարբերել. նրանց միջոցով են բացատրվում գանգան ձայնական փոփոխություններ: Միայն լատիններն են, որ այս բաղաձայնի գոնե խուլ ձևի նըրբությունները նշանակելու համար հնարել են երեք տառ, այն է q, k, c. առաջինը u, երկրորդը a և երրորդը e, i ձայնավորների մոտ: Լեթթերենն էլ գանգանում է g, ց և k, ք տառաձևերը:

Գրեթե ամեն լեզվի մեջ էլ այս կարգի բաղաձայններ կան. թամիլ և մալայալամ լեզուների, ինչպես և իտալերենի մեջ, այնպես փափուկ է, որ մոտենում է h ձայնին. և դրա համար էլ օտար

լեզուների հ ձայնը տառադարձում է g, ինչպես սանսկրիտ mahā «մեծ» գրվում է թամիլերեն magā (Caldwell, 140): Այսպես է նաև ուկրաիներենում, որի համար ուսերենում էլ հ տառադարձվում է իբր g:

g ձայնը դարձանալի կերպով պակասում է արարերենի մեջ, ուր փոխանակվում է j ձայնով, սակայն սուղաներենում հնչվում է իբր g, բացի սրանից, արարերեն Յ դարձել է այտեղ g (Worsley, 4): Լատներենում էլ չկա g ձայնը: k գտնվում է արևմտյան եվրոպական լեզուների, ուսերենի, հունարենի, հայերենի, քրդերենի և արևելյան թուրքերենի մեջ, մինչդեռ տաճկերենը չունի: gh գտնվում է միայն սանսկրիտի, հինդուստանի, աննամերենի և հայերենի մեջ, kh կա հայերենի, հնդկերենի, աննամերենի, անգլերենի, գերմաներենի, թուրքերենի, արարերենի, պարսկերենի և քրդերենի մեջ: պակասում է ուսերենի և արևմտյան եվրոպական լեզուների մեջ, ինչպես ֆրանսերենի, իտալերենի, նաև հունարենի մեջ և այլն:

Ամերիկյան կոոս լեզուն, ըստ Ֆրախտենբերգի (տես Boas, II, 307), ունի 4 տեսակ կոկորդական, որոնք հեղինակը նշանակում է g', k', k', x' ձևերով, բայց նրանց արժեքը չի տալիս (միայն էջ 444-ում կոչում է anterior palatal series):

Մեկանգլյան մոտոս լեզվում, ըստ կոդերինգտոնի g հնչվում է այնպես, որ երբեմն k-ին է մոտենում (ուրեմն խուլ է) և երբեմն էլ r-ին!

Հեարեբրանային կամ կոկորդային պայթական անունը կրում է այն ձայնը, որ համապատասխանում է հեարեբրանային շփականին (h)՝ կազմվում է խոչակի մեջ և դրա համար էլ կարելի է նաև կոչել խոչակային պայթական: Ձայնալարերը ամուր կպչում են իրար այնպես որ օդի հոսանքը բոլորովին արգելվում է՝ հետո հանկարծակի ձայնալարերը բացվում են և այն ժամանակ լսվում է վերոհիշյալ պայթականը: Այս ձայնը հաճախ պատահում է սեմական լեզուների մեջ, սկսած ասուրերենից, եբրայերենի բաղաձայն փ տառն է և արարերենում նշանակվում է առանձին տառով (փ): Գտնվում է նույնպես անգլերենի և հյուսիսային գերմաներենի մեջ՝ ձայնավորով սկսվող բառերի սկիզբը (attaque dure, fester Einsatz, glottal catch, կամ glottal stop) կամ երկու ձայնավորի միջև, ինչպես beachten, Er-innerung կամ դանիերենի և լեթթերենի մեջ՝ ձայնավորից հետո կամ բառամիջում: Երբեմն ձայնը կա նաև ճափայերենի մեջ, ուր ունի առանձին տառ և գրվում

է գրեթե առանց բացառության բոլոր ձայնավորով սկսվող բառերի սկիզբը.—ճափայերենում ո՛չ մի բառ ձայնավորով չի սկսվում (Bohatta, Gramm. Jav. Spr., 8): Ըստ գիտի (vulg. arab., 4), արարական համգան էլ ժողովրդական լեզվի մեջ երկու տեսակ է, սուր և թեթև, որոնց տարբերությունը ուժի սաստկության մեջ է:

Հայերենի, ուսմանական լեզուների, ինչպես և ուրիշ շատ լեզուների մեջ այսպիսի հնչյուն չկա, բայց կարելի է լսել փափսոցի ժամանակ կամ տքալու միջոցին և կամ չոր ձևով «հա», «այո» բառերը արտասանելու պարագային: Կարծում եմ սրա (կամ ավելի լավ՝ հաջորդի) հետ պետք է նույն համարել նաև այն հնչյունը, որ հաճախ պատահում ենք Ասլանբեգի բարբառում բառավերջի բաղաձայնների անկման միջոցին և որ նշանակում ենք * նշանով, օրինակ՝ շա* մարթ փա* զա* «շատ մարդ, փալտ կա» արտասանվում է ձայնավորը, հանկարծ դադարում է, սեղմվում է կոկորդը և արգելվում թուքերից դուրս մեկնող օդի հոսանքը¹, որից հետո իսկույն անցնում են հաջորդ բաղաձայնին:

Այս հնչման ավելի ուժեղ տեսակն է թվում այն հնչյունը, որ ստանում է ճափայերենի k ձայնը՝ բառավերջում գտնված ժամանակ (տես Bohatta, Gramm. Savan., 9):

Արարերենի յ-ից տարբեր է չ ձայնը, որ է կոկորդային ուժեղ խուլ պայթական և գտնվում է նաև կարբարդին լեզվի մեջ (Лепатинский, 5) և եթովպական գալլա լեզվում (Hodson, 11):

Պայթականների շարքին են պատկանում նաև այն տարբերակ բաղաձայնները, որոնք հատուկ են հարավ-աֆրիկյան վայրերի լեզուներին և կազմվում են լեզվի շառաչումով (կառափել): Բուշմենների լեզուն գիտի ալգայիսի 7 ձայն (Rieckers, 142): Հոտենտոտյան նամա լեզուն ունի 4 ձայն, որոնք տառադարձության մեջ դանակվում են I, II, ! և † նշաններով, առաջինը կազմվում է լեզուն շաչեցնելով առջևի ատամների վրա (ատամնային), երկրորդը՝ աջ կողմնական ատամներին (կողմնական), երրորդը քիմքի միջին մասին (գանգային) և չորրորդը քիմքի առաջամասին (քմային): Շաչելուց անմիջապես հետո, լեզուն արագությունը հետ են քաշում նախկին դիրքին և այդ միջոցին օդը ներս է խուժում: Այս բաղաձայնները գտնվում են միայն ձայնավորից կամ g, h, k, k', n բաղաձայններից առաջ: Մեզ համար դժվար չէ արտաբերել այդպիսի շառաչումներ, բայց կապել դրանք հաջորդ ձայնավորի

¹ Ահառյան, Քննություն Ասլանբեգի բարբառի, էջ 10:

կամ մանավանդ բաղաձայնի հետ, ահա ինչ որ մեզ համար անկարելի է (Seidel, Haupts. Spr., 2—3): Զուլուսերենն էլ ունի նման ձայներ: Սալմերը, փորձառական միջոցներով քննութիւն անելով մի զուլուս հովվի (Blessing Dahle) արտասանութիւնը, որ մանկութիւնից խոսում էր զուլու լեզվով, հրատարակեց Օսլոյի ակադեմիայի տեղեկագրի շարքում (1933 թ):

Թվում է, թե նման ձայներ ունի նաև ամերիկյան կարրիեր լեզուն, ինչպես երևում է Մորիսի (Carr. lang., I, 5) թույլ նկարագրութիւնից. այս ձայները 4 են և նշանակված են այնտեղ t, k, q, l:

Ըստ Կլիկի (A short survey of Bushman language, 59), բուշմաններն ունեն 5 տեսակ ալսպիսի շառաչ (click), որոնք տառադարձվում են եվրոպացիների մոտ հետևյալ ձևով. \neq | || || ⊙:

Մրանցից առաջինը \neq կոչվում է alveolar click և կազմվում է լեզվի առաջամասը սեղմելով ալվեոլներին և արագորեն հետ քաշելով:

/ կոչվում է «քմային շառաչ» կազմվում է լեզվի ծայրը ճնշելով քիմքին կամ քիմքի և ալվեոլի միացման տեղը:

|| կոչվում է «կողմնական շառաչ». կազմվում է լեզվի ծայրը տարածելով ալվեոլին կամ քիմքին և մեղմիկ հետ քաշելով, թողնելով օդը կողքից՝ ծծելու ձայնով (with a sucking sound).

||| կոչվում է «retroflex կողմնական շառաչ». նման է նախորդին (||), բայց արտասանվում է լեզուն հետ դարձած (ալսինքն ծայրը հետ ոլորած):

⊙ կոչվում է «շրթնային շառաչ». կազմվում է շրթունքները իրար դեմ սեղմելով և ապա բաց թողնելով համբուլրի ձայնի նըման:

Այս բոլոր շառաչները գործածվում են վանկի սկզբում և ընդհանրապես բառերի սկզբում, շատ անգամ իրենց ետևից ունենալով n (ն) ձայնը, իսկ ⊙ իր հետևից ունենում է p, b, m ձայնները:

Ելմսլեր (էջ 2), խոսելով ազոնի (զուլու) լեզվի շառաչների մասին, գտնում է միայն երեքը, որոնք արձանագրում է հետևյալ ձևով.

1. տառամնական շառաչ—C

2. քմական շառաչ—q

3. կողմնական շառաչ—x

Ավելացնում է նաև, թե այս շառաչները հները միայն գիտեն

գործածել. նորերը իրար են խառնել, պահել են միայն առաջինը C, որ ամենից հեշտ է, մլուսները ջնջել են:

Վ. Բեննին (A grammar of xhosa, 19) խոսում է նույնպես այս շառաչների մասին և կաֆրերի լեզվում գտնում է նմանապես երեք կարգ շառաչներ՝ տառամնական, քմական և կողմնական: Ատառամնականը կազմվում է լեզուն շառաչեցնելով առջևի տառամների վերի մասի դեմ, քմականը՝ լեզվի ծայրը շառաչեցնելով քիմքի առջևի մասի դեմ, իսկ կողմնականը՝ լեզուն շառաչեցնելով քիմքի մի կողմից: Շառաչները լինում են պարզ, շնչեղ կամ թրթռուն, այն է.

1. c, q, x

2. ch, qh, xh

3. gc, gq, gx

Մրանք կարող են գտնվել n-ից հետո, բայց իրենք էլ կարող են լինել անգային, այն է.

4. nc, nq, nx

5. nch, nqh, nxh

Այս նույն ձայների մասին (քաֆիր լեզվում) խոսում է նաև Լարենը (էջ 7), բայց շատ ավելի հասարակ ձևով. այդ ձայները համարում է նա բաղաձայնի ավելի սեղմած մի ձևը, իսկ x ձայնի համար ասում է, թե լեզուն պետք է սեղմել կողքի տառամներին:

Շառաչի նման ձայներ մենք գործածում ենք՝ 1. անհոգավոր ձևով, լեզվի հարվածով «ո՛չ» ասելու ժամանակ. 2. փոսոսանքի կամ զարմանքի ժամանակ, երբ իրար հետևից կրկնում ենք ցք, ցք, ցք. 3. լեզվի ծայրը կուցնելով և քիմքին կպցնելով՝ էշ կամ ձի քշելու ձայներ հանելիս. 4. նույն է, երբ ձին սալահատակի վրա ամբակներով կոխելով ջրից անցնում է. 5. սրա պատկերացումը լեզվով՝ լայն փռած բերնի մեջ՝ չլո՛մպ, չլո՛մպ...:

Զուլու լեզվի «շառաչ»-ների (click consonants) մասին է խոսում նաև Դոքը (էջ 18—20). նա գտնում է այս լեզվում 12 ալսպիսի ձայն, որոնք բաժանում է 3 խմբի.

	1. տառամնական	2. palatalo-alveolar	3. կողմնական
արձատական շնչեղ թրթռուն անգային	c ch gc nc	q qh gq nq	x xh gh nx

1. Ատամնայինների արտասանութեան ժամանակ լեզվի կրոնակը բարձրանում է կակուզ քիմքին դիպչելու համար և լեզվի ծայրը կամաց դիպչում է վերին ճակատի ատամներին և լինդերին, լեզվի կենտրոնը սեղմվում է և ապա լեզվի ծայրը դեպի հետ է քաշվում. նման է անգլիական annoyance click-ին, որ գրվում է tut-tut ձևով:

2. Palatal alveolar-ը նման է շիշի բերանից մի խցան հանելուն:

3. Կողմնականը նման է այն ձայնին, որ անում է մի կառավար, երբ խիստանում է իր ձիերին (a cabby when urging his horses):

Արմատական է կոչվում այն ձևը, որ ոչ շունչ ունի և ոչ անգալնացում:

Այն բոլոր պլոթականները, որ նկարագրեցինք մինչև այստեղ, կամ նույնիսկ բոլոր բաղաձայնները, կարող են ունենալ իրենց համապատասխան անգալինը, եթե գործարանները պահեն նույն գիրքը, ինչ որ սովորական արտասանութեան ժամանակ, միայն թե միևնույն ժամանակ կատիկը իջած լինի հենց բաղաձայնի պլոթուցման սկզբից, այնպես որ օդը դուրս հոսի քթի խոռոչներով:

Չանազան լեզուների մեջ կա անգալին v, անգալին l, անգալին r, որ մենք էլ կարող ենք դյուրութեամբ արտասանել: Էսկիմոսներն կա անգալին r, q, w (Boas, I, 979): Հարավ-աֆրիկյան օթլիհերերո լեզվի մեջ չկան b, d, g պլոթականները, այլ սրանց անգականները, որ տառադարձութեամբ գրում են mb, nd, ng (Seidel, Hspr., 63): Հյուսիսային ճապոնեցիներում g ձայնը արտաբերվում է իբր յg (Plaut, 3): Հին իտալացիներն ունի անգալին b, որ գրվում է m: Բայց սրանք անսովոր ձայներ են:

Ահա լեզուների մեջ սովորական ուղղակիները.

1. Շրթնային ուղղակի m (մ), որ իր համապատասխան b ձայնի նման կրկնաշրթնային է. գտնվում է ամեն լեզվի մեջ. ընդհանրապես թրթռուն է, բայց կարող է նաև դառնալ խուլ, ինչպես ֆրանսերեն prisme, m'sieu կամ շվեդերեն rytm բառերի մեջ: Դանիերենն ունի խուլ m: Ըստ Ֆոգտի (էջ 13), վրացիներն էլ ունի խուլ m, մանավանդ բառասկզբում խուլ բաղաձայնից առաջ. այսինքն m հաճախ կրճատվում է, ինչպես մնուդի կամ մուդի «լազուր»: Մելանեզյան մոտա լեզվում, ըստ Կոդրինգտոնի (էջ XII), կա երկու տեսակ m, որոնցից մեկը սովորական, մյուսն ավելի անգալին է:

2. Շրթնատամնային ուղղակի n կարելի է լսել, երբ իրեն հաջորդում է i ձայնը, ինչպես անգլերեն nymph, pamphlet, շվեդերեն triumf և այլն բառերի մեջ:

3. Ծայրալեզվային ուղղակի p, որ համապատասխանում է d պլոթականին և սրա նման լեզվից լեզու փոխում է հենման կետը: Ամեն լեզվի մեջ էլ սովորական է այս ձայնը և առհասարակ թրթռուն է. բայց խուլ բաղաձայնի մոտ, ինչպես և բառավերջում, կարող է դառնալ խուլ, ինչպես՝ բանասերու, ֆրանսերեն il donne և այլն: Ամերիկյան լուրով լեզվում բառավերջի n խուլ է (Kroeger 417): Դանիերենն ունի խուլ n: Հայտնի է իտալացիներն էլ մեջ խուլ n, որ գրվում է hn ձևով: Հիպերբորյան գիլիակ լեզվում կա նույնիսկ շնչեղ n (n^c), նույնը նաև բասկերենում, ուր գրվում է nh (Lingua, I, № 9, 63):

4. Գազաթային կամ գանգային ուղղակի p, որ համապատասխանում է d պլոթականին, գտնվում է սանսկրիտի, զրավիդյան լեզուների, ճավայերենի, աֆղաներենի, նաև Քամյան աֆար լեզվի մեջ (Colizza, 1), մոտավորապես նաև անգլերենի մեջ:

5. Հետնալեզվային ուղղակի t, որ համապատասխանում է g պլոթականին և սրա նման փոխում է իր հենման կետը քիմքի վրա՝ համաձայն իրեն հաջորդող ձայնավորին: Շատ սովորական է թուրքերենի մեջ, ուր նշանակվում է առանձին տառով (ت):

Մյուս լեզուներից հունարենը, անգլերենը, գերմաներենը, շվեդերենը, դանիերենը, իտալերենը, ճավայերենը, աննամերենը, չինարենը և այլն ունեն նույնպես այս ձայնը և ներկայացնում են գրութեան մեջ կամ կրկին g-ով (այսպես՝ հունարեն γ) և կամ պարզապես ng, nk, ինչպես գերմաներեն lang, dunkel, անգլերեն finger, link, իտալերեն longo, banco և այլն: Չինարենի մեջ n հաջորդ k-ի մոտ դառնում է γ: Սովորաբար սրանց վանկի վերջում է գտնվում այս ձայնը, բայց աննամերենում և չինարենում կարող է լինել նաև բառասկզբում՝ ձայնավորից առաջ և այն ժամանակ չինարենում հետնալեզվային տարրը ավելի թուլ է լինում (Seidelchin, gramm., 14): Օ՛նեյը (էջ 3) գտնելով նույն ձայնը շոնա լեզվի մեջ, նկատում է, որ անգլերեն singing բառի մեջ նույն ձայնից երկու հատ կա, բայց բառի միջումն են ու վերջում և չեն կարող բնավ գտնվել բառասկզբում, իսկ բանառ լեզուներում նա սովորական է նաև բառասկզբում:

Հայերենի մեջ նույն ձայնը գտնվում է անկյալ, անգամ և այլ նման բառերի մեջ, ուր ն ձայնին հաջորդում է q, k, p: Այս

ձանը սովորաբար թրթռուն է, բայց կարող է դառնալ նաև խուլ, ինչպես անգլերեն length բառի մեջ:

Նույնիսկ հետաքրքիր պայթականը կարող է ունենալ իր համապատասխան անգլերենը, բայց ո՛չ մի լեզվի մեջ էլ չի գործածվում իբր տառ: Երբ հիվանդը իր անքոցը արտաբերի բաց բերանով, լաված ձայնը հետքերանալին պայթականն է, իսկ երբ նույն անքոցը արտաբերի փակ բերանով, հավաքված օդը զուրս գալով քթից՝ դառնում է հետքերանալին անգլերեն: Այս զանազանությունը նկատելով է թերևս, որ հայերենի մեջ ունենք ազալ և անքալ ձևերը:

Այս բոլորի մեջ միակ հիմնական ու անկախ հնչյուններն են n և m, որոնք սովորական են ամեն լեզվի մեջ էլ. անգլերենների կողմից առանձնապես հարուստ է սանսկրիտը, որ գիտի անգլա-ների 5 աստիճան՝ n, ñ, ñ̄, ñ̅, m, այն է կոկորդալին, քմալին, ատամնական, զանգալին և շրթնալին անգլերեն: Միևնույնն են նաև դրավիդյան լեզուները (Coldwell, 132):

Վերևում ասացինք, որ անգլերենի զանազան տեսակները կարող են արտասանվել խուլ ձևով: Այսպիսի խուլեր ներկայացնում է հնդկական նեվարի լեզուն, որի այբուբենի մեջ Յուրգենսենը (էջ 10) գնում է hn, hn', hn, hm, ինչպես և hy, hl ձայնե-րը: Հնդկական սրանց համար որևէ բացատրություն չի տալիս. ինձ թվում է թե պետք է սրանք հասկանալ խուլ ñ (կոկորդական) խուլ ñ̄ (քմական), խուլ n (ատամնական), խուլ m և խուլ j, խուլ l:

Հնդկական բրաջ լեզվում ևս կան բացի պարզ l, m, n, r ձայններից, նաև lh, mh, nh, rh և r̄h, որոնք ուսումնասիրողը (Dh. Verma, 49) չի նկարագրում: Ըստ իս պետք է լինեին համապատասխան խուլերը: Հնդկական սինհալի լեզվում, բացի սովորական n, m ձայներից կան նաև կարճ ñ, m, ըստ Գալգարի (էջ 11):

Չիլիի աուկա լեզվում, ըստ Գրասսերիի (էջ 12), կա երեք տեսակ n. առաջինը մեր սովորականն է, ուր լեզուն հենվում է քիմքին, երկրորդն է ñ (նլ), իսկ երրորդը արտասանվում է լեզուն հենելով ատամներին:

Պայթական բաղաձայնները ներկայանում են մեզ նաև իրենց փափուկ ձևի տակ, այսպես կան շրթնալին b, p ձայների փափուկ-ները, ինչպես ռուսերեն скорбь «վիշտ», степь «տափաստան»: Ավելի առատ են d—t, g—k խմբերի փափուկ ձևերը իբր d^y, t^y, g^y, k^y. առաջինները հաղվադեպ են հայերենի մեջ, բայց այնուամենայնիվ կարելի է նկատել, ինչպես Յոզնալի զավառականով՝ ա՛ն էլ

«դնել». շատ սովորական է ռուսերենի մեջ, ինչպես лошадь «ձի», ломать «կտրել», мать «մայր» և այլն: Ռուսերենի մեջ այն բո-լոր դեպքերում, երբ d, t գտնվում են e, i ձայնավորներից առաջ, արտասանվում են փափուկ ձևով, այնպես որ անվարժ ականջը ստանում է ձե, ցե ձայների տպավորությունը, ինչպես где և այլն: Ռուսական կրթությամբ հայերը ձայնական այս երևույթը մտցրել են նույնիսկ հայերենի մեջ և արտասանում են իմաստութուևն, մեծութուևն, ինչ որ անվարժ ականջին դարձյալ տալիս է y ձայնի տպավորությունը: Ռուսերենի նման է չեխերենը, որ գիտի փա-փուկ d, t, որոնք նշանակում է d', t' ձևերով. բայց ě, i ձայնա-վորներից առաջ այնպես սովորական է այդ հնչումը, որ ավելորդ է համարվում նշանակել: Լեհերենի մեջ փափուկ t արդեն դարձել է c և այս ձևով էլ գրվում է. օրինակ, ռուսերեն тѣтя = լեհերեն ciocia: Կա նաև ատամնալեզվական d-ի փափուկ ձևը (d^y), որ հատուկ է աֆրիկյան փոլլ լեզվին. արտասանվում է սովորական d-ի պես, ընկերակցությամբ լեզվակի թրթռումների և քմալնաց-ման: Լեհերենը գիտի փափուկ b, f, g, k, m, n, p, w, որոնց հա-մար այբուբենում էլ կա առանձին թավ (b', f' և այլն): Նույնպես տունգուսերենում կան k, g, x, b, v, m, n, d, s, l, չ ձայների փափուկ ձևերը (Adam, Gram. tong., 13). բուրյաթերեն լեզվում k, t, d, ինչպես և x, l, r, n ունեն իրենց քմալին ձևը (Castren, 1):

Հայերենի բարբառներում (Ղարաբաղ, Վան, Մարաղա, Խար-բերդ և այլն) շատ սովորական է հետնալեզվային պայթականների փափակացումը, ինչպես Վան՝ քաղաք՝ «քաղաք», Ղարաբաղ՝ կ'ոռժ «գործ», Ագուլիս՝ կնակ՝ և այլն:

Փափուկ պայթականների մեջ ամենից հետաքրքրական ձևեր են նրանք, որ արտաբերվում են լեզվի միջին մասը կպցնելով քիմքին, մինչդեռ ձայրն ու արմատը ազատ են ու չեն զիպչում քիմքին: Այս կարգի բաղաձայնները կոչվում են միջնալեզվային: Դրանք անվարժ ականջը մերթ լսում է t^y, d^y և մերթ k^y, g^y. այսինքն մերթ հենման կետը բերելով ավելի առաջ և մերթ տա-նելով ավելի հետ. թեև իրապես ո՛չ մին է և ոչ մյուսը, այլ նրանց միջին կետը: Այս ձայներից կարելի է գտնել զանազան լեզուներում. այսպես հունգարերեն ty, gy միջնալեզվային են. նույնպես ֆրանսական ժողովրդական արտասանությամբ pitié, cinquième, gai բառերի մեջ t և q, g միջնալեզվային են: Շվեդերենում գրվում

է ւյ կամ k ձևով, *ինչպես* tjāna, kanna (Poestion, Lehrb. de Schwed, 2,28):

Հայերենի մեջ այս ձայնը գտնուում ենք միայն Վանի բարբառում, *ինչպես* իկի «այգի» բառի մեջ:

Կարելի է այս ձայները նշանակել j^y, c^y ձևերով, առաջինը թրթռուն, երկրորդը խուլ ձևի համար:

Ռնգական բաղաձայններն էլ կարող են ունենալ իրենց համապատասխան փափուկ ձևերը. այսպես ունենք շրթնային ռնգական փափուկ m^y (*ինչպես* ուսերեն cemb), ծայրալեզվային ռնգական փափուկ n^y, որ գտնուում ենք ուսերենի, չեխերենի, լեհերենի, ֆրանսերենի, իտալերենի, իսպաներենի, պորտուգալերենի (գրվում է nh), իսլանդերենի, շվեդերենի, աննամերենի, սանսկրիտի, ճավայերենի և ուրիշ լեզուների մեջ (հմմտ. ուսերեն теңб «ստվեր», ֆրանսերեն vigne «այգի», իտալերեն bisogno «պետք», իսպաներեն senor, España) և վերջապես հետնալեզվային ու միջնալեզվային ռնգական փափուկ n, որ գտնուում ենք ֆրանսիական ժողովրդական արտասանության մեջ: Հարավ-աֆրիկյան օթիհերերո լեզվի մեջ կա ռնգալին d ձայնի փափուկ ձևը, որ գրում են ndy (Seidel, Hspr., 63):

Նոր լեզուներից լատիշերենն ունի քմային բաղաձայններից ց (որ հնչվում է d^y), կ (որ հնչվում է l^y), l^y, n^y, r^y (Паэглэ, 11): Մորզվիներենն ունի քմային ձայների մեծ խումբ. այն է՝ b, p, m, v, f, d, t, s, j (հայերեն ձ), c (հայերեն ց), n, r, ž, š, ĭ, č, l, g, k, x, η և մինչև անգամ y (Ebcebæb, 17): Վեպերեն կամ չուգ լեզուն, որ պատկանում է ֆիննական ընտանիքին, ունի b, d, g, k, l, m, n, p, r, s, t բաղաձայնների քմային (կակղած) ձևը, որ գրվում է b' d' և այլն (Ujfalvy, 16): Օ՛նեկը (էջ 4) աֆրիկյան շոնա (բանտու) լեզվի մեջ գտնուում է ty և dy առանձին ձայները, որոնց նկարագիրը դժվարանում է տալ. մոտավորապես դնում է čka, ĭga:

Հայերենի մեջ ռնգականների փափուկ ձևերը չեն պատահում:

դ) ԿԻՍԱՊԱՅԹԱԿԱՆ ԲԱՂԱՋԱՅՆՆԵՐ

Կիսապայթական բաղաձայնների սահմանը տալու ժամանակ մենք ասացինք, որ նրանք բռնում են սեղմերի և պայթականների միջին տեղը: Այժմ, քանի որ բաղաձայնների ներքին կազմության

ավելի ևս ծանոթացել ենք, կարող ենք ավելի պարզել և ավելի ևս ճշտել այս անորոշ սահմանը:

Կիսապայթական բաղաձայնները, որոնք ձայնաբանության մեջ ծանոթ են նաև շախան (affricatae, ֆր. fricative) անունով, ներկայացնում են մի այնպիսի արտասանություն, որի մեջ բաղաձայնի լարումը պայթական է, իսկ էջքը՝ շփական. խցումը, որ լարումից մինչև էջքը եղած շրջանն է, ոչ թե կատարվում է հանկարծակի, այլ աստիճանաբար և առանց ընդհատման: Լարման և էջքի այս տարբերությունն է պատճառ, որ կիսապայթական բաղաձայնները անվարժ ականջների վրա ts, dr, dž, tš և խմբակների ազդեցությունն են գործում: Բայց իրոք այդպես չեն, որովհետև ամեն մի կիսապայթականի երկու մասերը առաջանում են միևնույն գործարանների գործունեությամբ և միևնույն կետում, մինչդեռ ts, dr և այլն առաջանում են երկու տարբեր տեղերում: Դարձյալ լարման և էջքի տարբերությունն է պատճառ, որ կիսապայթականը երկարելու ժամանակ լսվում է միայն մի որևէ շփական, *ինչպես* u, շ, q, ժ:

Կան լեզվաբաններ, որ կիսապայթականները համարում են կրկնակ բաղաձայն. սրանց հակառակ են, բացի խոսողների դիտակցությունից, զանազան լեզվաբանական հանգամանքներ. օրինակ, հայերենի մեջ վանկի սկզբում երկու բաղաձայն ընդունելի չէ և նրանց միջև անշուշտ մտնում է մի ը. արդ, եթե ց, ծ, ձ, ճ և այլն կրկնակ են, ու՞ր է նրանց միջին ը-ն: Արաբերեն բառակազմում կրկնակ բաղաձայններն ստանում են a հենարանը (*ինչպես* Platon—Aflaton), բայց ĭ, š տառերով սկսվող բառերն այսպիսի հենարան չունեն:

Կիսապայթական բաղաձայնները հետևյալներն են.

ա) Շրթնային pf, b^v. առաջինը, որ խուլ հնչյունն է, սովորական է գերմաներենի մեջ (*ինչպես* Pferd, Pfennig և այլն). երկրորդը, որ նրա թրթռուն ձևն է և կարող է հեշտությամբ արտաբերվել, ծանոթ լեզուների մեջ գոյություն չունի. գտնում եմ միայն բանտու կարանդա լեզվի մեջ, ուր կա pf և bv (Marconnès, 12): P^f կարելի է արտասանել երկու տեսակ. կրկնաշրթնային կամ շրթնատամնային. նախնական ձևը առաջինն է, որ հետո ձևափոխվելով անցել է երկրորդին: Նրանք, որ անվարժ են այս արտասանության, նույն բաղաձայնը լսում և հնչում են իբրև երկու անշատ բաղաձայն pf, ճիշտ *ինչպես* ուրիշներ չ ձայնը լսում են ու գրում թշ (tch):

բ) Մայրալեզվային. այս կարգի կիսապալթականները ներկայացնում են բազմաթիվ տեսակներ, ըստ որում լեզվի ծայրը կարող է բազմաթիվ կետերում հենվել քիմքի վրա: Գլխավորները հետևյալներն են.

1. Միջնատամնային 'բ, ^ժժ. առաջինը խուլ, երկրորդը թրթրուուն. արտասանվում են այն սճով, ինչպես բ, Շժ շփականները: Կարելի է դուրսբերված արտասանել այս ձայները, բայց ծանոթ լեզուների մեջ սովորական չեն. թվում է, թե գոյություն ունեն արարներնի մեջ:

2. Հետնատամնային ձ, ձ' ծ, ց: (Այս խումբը հայերեն կարելի էր կոչել ծեքական, որի առաջին տառը հենց ծ է): Առաջինը թրթրուն, երկրորդը թրթրուն շնչավոր, երրորդը պարզ խուլ և չորրորդը խուլ շնչավոր: Արտասանվում են լեզվի ծայրը կայցնելով առամների վերևը: Շատ լեզուների մեջ կան այս ձայները: Ամենասովորականն է ց, որ գտնում ենք ուսերենում, գերմաներենում, իտալերենում, անգլերենում, մի քանի ֆրանսիական բարբառներում և սեմական լեզուներում (երբայերեն, ասորերեն, արարերեն և այլն): Այլի հազվադեպ է թրթրուն ձ, որ գտնվում է իտալերենում և ումանական բարբառներում: Կար նաև հին սլավերենում, ուր ուներ նաև հատուկ նշան s ձևով. արդի սլավական լեզուներից շատերի մեջ շնչվել է. օրինակ, ուսերենը չունի ձ, բայց լեհերենն ու բուլղարերենը գիտեն (Щепкинъ, 21): Հին լեզուներից սանսկրիտը, լատիներենը և հունարենը զուրկ են այս ձայներից, թեև նոր հունարենը, ինչպես և զանազան նորալատին լեզուներ ու բարբառներ ունեն ց ձայնը: Նոր հունարենը գիտի շձ ձ և Կձ (օրինակ φιλῶνι ֆիլձանի Κοριτσι կորիցի): Մեր շրջակա ազգերից ու լեզուներից միայն վրացերենն ու մյուս կովկասյան լեզուներն են, որ ճանաչում են այս ձայների երեք աստիճանները (ձ, ծ, ց). մյուսները՝ թուրքերենը, քրդերենն ու պարսկերենը իսպառ զուրկ են ամեն մի աստիճանից: Աֆղաներենն ունի ձ, ց ձայները, ինչպես նաև յ, ճ, բայց պարսկերեն փոխառությունց մեջ յ, ճ դարձվում են ձ, ց (թեև կարող են պահվել նաև անփոփոխ). օրինակ. պարսկերեն «چ» շրհոր» > աֆղաներեն ցահ, «چ» «հոգի» > աֆղաներեն ձան (Darmesteter, Chants populaires, 6): Ամենքին հայտնի է, թե ինչպես թուրքերը հայերեն բառերը արտասանելու ժամանակ ձ դարձնում են գ, ց դարձնում են ս և այլն. այս ձևով են առաջացել մեր երկրի զանազան անունների ձևափոխությունները, ինչպես Չագածոր > Չանգեզուր, Օձուն > Ուզունլար, Յուլա-

կերտ > Սուլակ, Արագած > Արագյազ և այլն: Թուրքերենի հետ Փոքր-Ասիայի թրքախոս հայերն էլ ստացել են այս հատկությունը, այնպես որ նույնիսկ մեր այրուբները սովորելու ժամանակ գ, ձ, ծ տառերը որոշելու համար անվանում են Եչգա, հոգա, խեղա: Բոլոր լեզուներից այլիի հայերենն է, որ հարուստ է այս ձայներով. նա ոչ միայն հնուց ի վեր ունի նույն բաղաձայնների երեք աստիճանները (ծ, ձ, ց), այլև բարբառային արտասանության մեջ շատ տեղ այլեւացրել է և չորրորդը, այն է շնչեղ թրթրուն ձ' Ասիական լեզուներից չինարենն ու ճապոներենը ունեն այս ձայները, իսկ տիրեթերենը, ինչպես մյուս բաղաձայնների մեջ, նույնպես և այստեղ ունի ծ, ձ, ց երեք աստիճանները:

3. Նախաքմային ջ, ջ', ճ, չ, կոչվում են chuintante (ճչական), (այս խումբը հայերեն մի բառով կարելի էր կոչել ճչական, որի առաջին երկու տառերը հենց ճչ են): Առաջինը թրթրուն, երկրորդը շնչեղ թրթրուն, երրորդը խուլ և չորրորդը շնչեղ խուլ: Արտասանվում են լեզվի ծայրը կայցնելով նախորդներից այլիի վեր՝ քիմքի առաջամասին: Թե հետնատամնային և թե նախաքմային կիսապալթականների հենման կետը կարող է լեզվից լեզու տարբեր լինել, այսինքն՝ մի քիչ այլիի վերև կամ մի քիչ այլիի ցած: Նախաքմային կիսապալթականներն էլ բավական սովորական են ծանոթ լեզուների մեջ. այսպես չ ձայնը կա ուսերենի, գերմաներենի, իտալերենի, անգլերենի, իսպաներենի և զանազան ումանական բարբառների մեջ: Չ ձայնը գտնվում է իտալերենի, անգլերենի, բուլղարերենի, սերբերենի և ումանական բարբառների մեջ. մյուսները չունեն. ուսերենը թեև գիտի չ, բայց չգիտի ջ: Հին լեզուներից սանսկրիտը և գենդերենը ունեն այս ձայները, իսկ հունարենն ու լատիներենը զուրկ են: Սանսկրիտը գիտի նույն բաղաձայնների ամբողջ չորս աստիճանները: Մեր շրջակա լեզուներից վրացերենն ու մյուս կովկասյան լեզուները ճանաչում են միայն երեք աստիճան (ջ, ճ, չ): Թուրքերենը, քրդերենն ու պարսկերենը, որ զուրկ են հետնատամնային խմբից, ունեն սակայն նախաքմային ջ, չ: Ընդհակառակը, սեմական լեզուները, որ ունեն հետնատամնային կիսապալթական ց, չունեն նախաքմայինները. միայն արարերենն է, որ ունի ջ ձայնը (բայց չկա չ): Օսերենն ունի մի տեսակ ճ, յ, որոնք բռնում են չ և ց, ջ և ծ ձայների միջին տեղը (Miller, Die Spr. d'Oss., 13):

Հայերենը, հին ժամանակից սկսած, գիտի նույն բաղաձայնների երեք աստիճանները (ջ, ճ, չ), որոնց վրա նոր բարբառները

ավելացրել են շնչեղ թրթռուն ջ', որով հայերենը հասել է ճիշտ սանսկրիտի հարստության:

Բոլոր ձայնալեզվային պայթականները կարող են հնչվել փափուկ ձևով, բայց դրանք լեզուների մեջ սովորական չեն: Մերբերները, բացի չ-ից, դիտի ջ և երկու տեսակ ուրիշ ձայն, որոնցից առաջինը համարվում է շատ փափուկ ջ, մյուսը իբր ց (tš) (Бчлень-кин, 4): Լեհերենն ունի փափուկ ց, որ գրվում է ց' և փափուկ ձ, որ գրվում է ձ': Հիպերբորյան գիլիակ լեզվում կան ց և ջ ձայները: Չուվաշերենում կա մի տեսակ չ և ջ, որոնք մյուսներից ավելի կոշտ են. արտասանվում են լեզուն ավելի հեռ քաշելով. ունեն նաև իրենց փափուկ ձևը (Ащмаринч., Матер., 346): Աֆրիկյան նձիմա լեզուն, բացի սովորական ճ-ից և յ-ից, ունի նաև ճ^w և յ^w ձայները, որոնք նույն ճ և յ ձայներն են, միայն թե նրանց վերջում ավելացել է շրթունքների կտրացում՝ իբր թե սուլելու պես: Հնդկական մարաթի լեզուն էլ ունի ձ, ձ', ծ, ց ձայները, բայց դրանք ներկայացնելու համար առանձին տառեր չէ հնարած և հընդ-կական ճ, ճh, յ, յh տառերի վրա մի կետ դնելով բավարարվում է (Stevenson, 10): Լատիշերենն ունի dz (ձ), c (ց), ինչպես և dž (ջ), ճ ձայները: Պրովանսալ քաղցրահնչուն լեզուն ունի ց (որ միշտ գրում է ch) և ձ, որ գրում է ց և յ տառերով. ց ստանում է ձ հնչյունը e, i ձայնավորներից առաջ, իսկ յ կարգացվում է ձ՝ a, ē, i, o, u ձայնավորներից առաջ (Savinian, 6):

դ) Միջնալեզվային կիսապայթական 'չ և յ^y. առաջինը խուլ, երկրորդը թրթռուն. արտասանվում են լեզվի միջին մասով, ուստի և միշտ փափուկ են, և այս պատճառով դժվար կարող են դանազանվել յ^y, ց^y պայթականներից:

դ) Հետնալեզվային կիսապայթական *x, *ǰ առաջինը խուլ, երկրորդը թրթռուն. արտասանվում են արմատի և կատիկի միջև. այս ձայները լսվում են հարավային գերմանական բարբառների մեջ, ուրիշ լեզուներում անսովոր են: *x հնչյունը ունի նաև մոնղոլերենը, բայց նրա թրթռունը չգիտի (Владимирцов, 62): Ըստ Շտաֆենի (էջ XV), ամերիկյան բակաիրի լեզուն ունի ուժեղ x-ի հետ նաև kx հնչյունը:

ե) Կոկորդային կիսապայթական դ', որ արտասանվում է կոկորդի խորքում, ճիշտ ինչպես արաբական շ և շ ձայները. գոլությունն ունի վրացերենում, որի դասական օրինակն է՝ Բաղ'աղ'ի ծղ'ալըի դ'իղ'ինեբս՝ Պորսը ջրում կոկում է»:

Նույն ձայնը կա նաև հայերենի մի քանի բարբառներում, ինչպես Տիգրիսի բարբառում, Ա'ազար, դ'ալա «սուրճ». Ազարի բարբառում. անվարժ պիանջը լսում է և հնչում իբր կղ: դ' ներկայացնում է թրթռուն ձևը, նրա խուլը անսովոր է. զանվում է ուտիերենի մեջ, ինչպես u^{ok}x «վեց»: Սվեդիայի (Մուսա-լուսան) բարբառի թե հայ և թե արաբերենից փոխառյալ բառերի մեջ կա նույն ձայնը. ինչպես՝ դ'արթուլ «արծիվ», բուջուղ՝ «անկյուն», բայրուղ՝ «գրողակ», ամանոլ՝ «օրորոց», ունի այլ «ընկուլզ», առքուտուղ՝ «տաստաղ» և այլն: Երեկ կիսապայթական խմբի մեջ պետք է դնել աննամերենի tch և dch ձայները, որոնց ճիշտ արտասանությունն է ասամնականին հաջորդող խուլ կիսաձայն յ, իբր tç և dç (Dirr, Gramm. annam, 3):

ե) ԿՈՂՄՆԱՊԱՅԹԱԿԱՆ ԵՎ ՌՆԳԱՊԱՅԹԱԿԱՆ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐ

Բացի կիսապայթականներից, զանազան լեզուների մեջ զբաղում են նաև կողմնապայթական և ռեզապայթական (explosive latérale, explosive nasale) կոչված բաղաձայններ, որոնք նախորդների պես բռնում են սեղմերի և պայթականների միջին տեղը նրանով, որ իրենց առաջին մասը պայթական է, իսկ երկրորդ մասը սեղմ կամ ռեզային տեսական բաղաձայն: Կողմնապայթական բաղաձայնները նրանք են, որոնց լարումը պայթական է, իսկ էջքը կողմնական, բայց երկուսն էլ առաջացած միևնույն գործարանների գործողությունից և միևնույն կետի վրա: Լեզվի այս կամ այն մասը կպում է քիմքի այս կամ այն կետին և արգելում մի վայրկյան օդի հոսանքը, ճիշտ ինչպես t, ց^y, ց բաղաձայնների համար: Հանկարծ, առանց լեզուն իր դիրքը փոխելու, երկու եզրքները քիմքից բաժանվում են և երկու կողմից ձևացնելով մի-մի անցք, թույլ են տալիս, որ բանտարկված օդը նրանց միջով դուրս հոսի: Անվարժ պիանջը այս ձայները լսում է իբր tl, dl, kl և այլն (պայթական + կողմնական l), բայց ըստ որում նրանք միաժամանակ կատարված գործողություններ են, պետք է համարվեն իբրև պարզ ձայն, ճիշտ ինչպես ձ, ջ, ց և այլն ձայները:

Կողմնապայթական բաղաձայնները հետևյալներն են.

1. Մայրալեզվային t^l, d^l, որոնք սովորական են ամերիկյան լեզուների մեջ. կարելի է գտնել նաև անգլերենի և գերմաներենի մեջ, ինչպես՝ Kettle, bridle, Kttel, Tabel, որոնք արտասանվում են Ke^l, ki^l, ta^l և այլն: Ըստ Յոխելսոնի (էջ 101), հիպերբոր-

յան լուկազիր լեզվում կա մի ձայն, որ գումարն է t-ի և l-ի (ինչ-պես ինքն է ասում):

2. Միջնալեզվային ^ol, ^ll, որոնք միեւնույն ժամանակ փափուկ են. առաջինը, որ խուլ ձևն է, գտնվում է գերմաներեն glau-ben բառի սաքսոնական ^olaum արտասանության մեջ:

3. Հեռնալեզվային ^hl ^gt, որոնք թեև կարելի է դուրսբերել արտասանել, բայց ծանոթ լեզուների մեջ գոյություն չունեն:

l-երի զանազան տեսակներով հարուստ են հյուսիսային կովկասյան լեզուները: Տրուբեցկուր (BSL 23, 187—188) հիշում է մի քանի այս կարգի ձայներ. այն է (իր տառադարձությունը)

l spirante sonore latérale

λ spirante sourde latérale (Dirr t^o)

l affriquée sonore latérale (Dirr K^o)

λ affriquée sourde latérale

λ' spirante sourde latérale aspirée (Dirr l^o)

λλ spirante sourde latérale longue (gémignée).

Դիրը (Einführung, 29—30) այս կարգի ձայները նշանակում է l^o, t^o, k^o և նկարագրում է հետևյալ ձևով. երբ մեկը լեզվին տա l արտասանելու գիրքը և թեքվի դեպի ich ձայնը, կտացվի l^o—նույնպես երբ t, k արտասանելու ձևն առնի և թեքվի դեպի l, կտացվի t^o, k^o, որ անվարժ ականջը պիտի լսի ^hl, ^kl: Լոպատինսկին (էջ 5) այսպես է նկարագրում ^hl ձայնը. լեզվի ծալը կպչում է վերին առամներին, շունչը դուրս է գալիս ետևի առամների և լեզվի կողերի միջև կազմված անցքից, ինչպես p'liə «չորս». այսպիսով ստացվում է t+փափուկ l-ի խառնուրդը:

Չանազան l-ի տեսակներ ունեն նաև Թաղաղականի հյուսիսային եզերքների ամերիկյան լեզուները, որոնք նմանվում են մեր tl, cl, gl ձայներին (F. Boas, Handbook of american indian languages, I, 18):

Կաստրենը (էջ 6,) օսթյակերեն լեզվում գտնում է շնչեղ dhl և համապատասխան խուլ thl ձայները. ինչպես ädhla η «առավոտ» Kathl «օր». նման ձայներ չկան ֆինն և լապոն լեզուներում, ինչպես նկատում է նա. կան նույնիսկ այս երկու ձայների քմալինները՝ dhly և thly (անդ, էջ 7):

Աֆրիկյան ոտնոց (բանտու) լեզվի մեջ կան dl, tl, hl, tlh ձայները, որոնք քննիչը (Junod, 36) կոչում է latéral (կողմնական), որովհետև արտասանվում են բերանի երկու կողմերով: Աֆրիկյան լեզվի մեջ էլ կան hl, tl, dl ձայները (Laren, 6):

Ռեզապայթական բաղաձայնները նրանք են, կրք պայթական բաղաձայնի խցման ժամանակ կատիկը ցած է իջնում և բանտարկված օդը սկսում է դուրս հոսել քթի միջով. այսպիսով բաղաձայնի խցումը լինում է բերանային, իսկ պայթումը ուղեղային: Այս բաղաձայնները կարելի է նշանակել p^m, b^m, t^m, d^m, k^m, g^m ձևերով: Հաճախ կարելի է լսել անդլերենի և գերմաներենի մեջ, ինչպես mutton, ridden, bleiben, leden, knacken, որոնք հնչվում են motⁿ, ridⁿ, blaib^m, ladⁿ, knakⁿ և այլն: Կա և այս բաղաձայնների մի ուրիշ տեսակը, որ անդակաճը պլեյի առաջ է քան բուն պայթականը. այսպես են ñk, ñg, mp, mb, nt, nd, nč, nj ձայնները Մադագասկարի և Մելանեզիայի լեզուների մեջ: Ըստ Յոսելսոնի (էջ 101) հիպերորյան լուկազիր լեզուն ունի մի ձայն, որ t-ի և n-ի գումարն է (այսինքն tⁿ): Աֆրիկյան շամբալա լեզվի մեջ էլ կան մի խումբ անդակին բաղաձայններ, որոնք ուսումնասիրողը (Rösler, 1) գրում է mb, nd, ng, nk, mp, nt ձևով, բայց պաշարացնում է, որ պետք չէ սրանք հնչել բաժան-բաժան, այլ անդակին ու պայթական բաղաձայնը միասին:

Շրթնակալային (labiovélaire) պայթականները այն բաղաձայններն են, որ արտասանվում են լեզվի արմատը կպցնելով կատիկին և միեւնույն ժամանակ շրթունքներին տալով կլորակ մի բացվածք: Այս կարգի բաղաձայնների կազմությունը ճիշտ կարելի է համեմատել փափուկ բաղաձայնների հետ: Ինչպես որ մի որևէ պայթական բաղաձայն j կիսաձայնի հետ միասնաբար կազմում է փափուկ պայթական ձևեր (k^y, d^y, n^y և այլն), այստեղ էլ նմանապես կասկային բաղաձայնը u կիսաձայնի հետ կազմում է մի անբաժան միություն: Եվ ինչպես որ անվարժ ականջը փափուկների փոխարեն լսում է պայթական +y ձայնախմբեր, նույնպես և շրթնակալային բաղաձայնի փոխարեն անշատաբար պիտի լսի կատկային +w խմբեր:

Շրթնակատկային բաղաձայնները հայտնագործված չեն արդի լեզուների մեջ, բայց լեզվաբանների ենթադրությամբ գոյություն են ունեցել հնդեվրոպական նախալեզվի մեջ և թվով չորսն են՝ q^w, g^w, q^wh, g^wh: Միայն աֆրիկյան մի քանի լեզուների մեջ (սուդաներեն, Կամերուն, Togo-land) գտնվել են մի թրթուռ և մի խուլ բաղաձայն, որոնց արտասանության ժամանակ լեզուն բռնում է k, g ձայների գիրքը և միեւնույն ժամանակ շրթունքները առնում են p, b ձայների գիրքը (Pederson, Mélanges, 59):

Կովկասյան լեզուներն ունեն շրթնալնացած (labialisé) բաղա-

ձայնների մի շարք, որ Դիուր տառադարձում է z^s, s^s, j^s, č^s, որոնց հետ կա նաև ծ^s (իմա՝ ձ^s), ց^s (իմա՝ ծ^s), ց^s (իմա՝ ց^s)։ սրանց նկարագրությունը տալիս է նա (Ainführung, 32), բայց դժվար է հասկանալ։ մոտավոր իմաստն այն է, որ հիշյալ բաղաձայններից հետո պետք է զննել մի կարճ վ ձայն։

Բայց այս կարգի բաղաձայնների մի ավելի մեծ խումբ գրում է համարակարգում կան ձայնները, որ նկարագրել է Սեպիր անուն ուսումնականը։ Այս լեզվի մեջ գտնում ենք 9 այս կարգի ձայն, որոնք են p^w, v^w, f^w, m^w, k^w, q^w, ɣ^w, x^w, n^w (Sapir, 45)։

Աֆրիկյան կենյան (բանտու) լեզվի մեջ կան այսպիսի անսովոր ձայներ. kp, nk, nt, mp, mkp, gb, ng, nd, mb, ns, mf, ngw, nč (Itmann, 6)։ Այս gb, kp ձայները կան նաև աֆրիկյան իրո լեզվի մեջ, հենց լեզվի անունը բաղաձայնով է, որով ոմանք գրում են Igbo ուրիշներ lbo. վերջինը ավելի է տարածված (Ward, 6)։

Մեկանգղյան լարեմ լեզվի մեջ կան հետևյալ խառն ձայները. gw, kw, mb, nd, ns, ng, ngw (Dempwolff, 5)։

Մալգաշերեն լեզվում կան dr, dz, mb, mp, nd, ng, nt, nk, tr, ts, ndr, ntr, nts միախառն սուանձին հնչյունները (Montagne, 9)։

Աֆրիկյան կարանգա լեզվում կան սնգալին mb, nd, ng, mv, nz, nr ձայները (Marconnès, 13)։

Հոտենտոտյան կարանա բարբառում կան kx', նաև /kx', ≠kx' և //kx' ձայները, որոնք սակայն չկան նամա լեզվի մեջ (Meinhof, 21)։

Աֆրիկյան սեսուտո (բանտու) լեզվում կան kg, thl, tl, h խառնուրդ ձայները (Beyer, 2,3)։

Աֆրիկյան ջոնգ (բանտու) լեզվի մեջ կան kp, gb միախառն ձայները (Nekes, 8), որոնք գտնվում են նաև պապուազիան ճյուղի կատե լեզվում (Pillhofer, 15) և աֆրիկյան (ոչ-բանտու) լեզվի մեջ (Spencer, 7), ինչպես և աֆրիկյան կալելե լեզվի մեջ (Westermann, 2)։ Սրանք բոլորը p, b ձայներն են, միայն սկզբից k հարվածով։

Արևմտյան և կենտրոնական Աֆրիկայի շատ լեզուներում կան այս երկու ձայները, որոնց նկարագրելը տալիս է Վեստերմանը՝ էվե լեզվի քննությունից (էջ 15)։ Նախ կատարվում կազմվում է մի նեղ անցք, երբ այդ անցքը բացվում է, նույն միջոցին շարժվում են լորձերի միջոցով կազմվում է մի նոր փակվածք, այնպես որ կատարի նեղացմամբ պահված օդը մինչև շրթունքներն է փակվում, ուր նորից պահվելով, այդտեղից էլ շրթունքների միջով դուրս է հոսում։ Ուրիշ խոսքով սա մի տեսակ p կամ b է, որի սկզբին

կա կատակային մի հարված, օրինակ, Paris քաղաքի անունը հնչում էն Krall։

Աֆրիկյան ջոնգ (բանտու) լեզվի մեջ կա երկու պայթական բաղաձայն, որ արձանագրում է b↓, d↓ ձևերով և որոնց նկարագրելը տալիս է Օ.Նեյլը (էջ 2) հետևյալ ձևով. „In implosives, air, on the release of the momentary stop, enters the mouth. This effect is produced by lowering the larynx or voice-box after the closure has been made, and thus slightly rarefying the air in the voice chamber so that on its opening air rushes in instead of out“։ Սրանք չեն կարող միանալ ուրիշ բաղաձայնի հետ, ուստի գտնվում են միայն ձայնավորների կողքին։

Աֆրիկյան սեսուտո (բանտու) լեզվում կան միախառն bJ, pJ, fš, tl, tlh, hl. այս վերջինը գերմաներեն ich+I (Jacottet, 9)։

Միամերենն ունի 9 ձայնավոր՝ a, ä, å, e, ə, i, o, ö, u, լուրջանչյուրն ունենալով 3 աստիճան (կարճ, շատ կարճ, երկար)։ Ընդամենը լինում է 27 ձայնավոր։ Բաղաձայններն են՝ b, d, f, h, k, k', l, m, n, ñ, p, p', r, s, t, t' w, y, dx, tx, ուրեմն չունեն g, ž, z և շշականները (Wershoven, 1)։

Նոր-Հիբրիդյան տանգոա լեզվում կա մի տեսակ p, որ գրվում է նաև pw, mpw և որ ըստ նկարագրության նման է մոմ փչելու ձայնին (Macdonald, 1)։

Նույն լեզվում կա մի տեսակ t, որ t-ի և p-ի միջին տեղն է բռնում։ հնչվում է լեզուն դնելով աստամների միջև, որոնք դիպչում են վերին շրթունքներին. նման է թքելու pt ձայնին (Macdonald, 1)։

Աֆրիկյան բո կամ բանկոն լեզվում կա մի ձայն, որ գրում են gb և որ ուսումնասիրողը այսպես է նկարագրում. „echte Velarlabialen, bei dener am Velum und an den Lippen gleichzeitig ein Verschluss gebildet und geöffnet wird“։

Կա նաև սրա սնգալանը (m), որ ուսումնասիրողը նկարագրում է այսպես. „eine Art Saugbewegung an den Lippen, eine Art labialen Schnalzes“ (Spellenberg, 16)։

Աֆրիկյան աճլոն լեզվում կան kp, gb ձայները (տես Westermann, 6)։

Սուգանի բարգու լեզվում կան pf, kp, gb ձայները (Westermann, 128)։

Ա մ փ ո փ ու մ

Բաղաձայնների այս բոլոր տեսակները, որ ըստ կարելիության մանրամասն նկարագրեցինք վերևում, հավաքում ենք այստեղ մի աղյուսակի մեջ (տես էջ 208):

Մրանցից դուրս կան և կգտնվեն անշուշտ դեռ այնպիսի ձայներ, որոնք այս բոլորից որոշ չափով տարբերվում են արտասանության եղանակով, բայց էապես նույն են: Այդ բոլորն առանձնապես նկարագրել ավելորդ համարեցինք: Այսպես՝ հիպերբորյան գիլիակ լեզվի մեջ կան, բացի սովորական ձևերից, նաև մի տեսակ նակ լեզվի ծայրը շուտ գալով, տակի մակերեսը հպվում է վերին ատամներին, և մի երրորդ տեսակ k, x, որոնց արտասանության ժամանակ լեզվի ծայրի երեսի կողմը հպվում է ստորին ատամներին:

Մելանեզյան մոտա լեզվում, ըստ Կոդրինգտոնի (էջ XII), կա մի հնչյուն, որ հեղինակը արձանագրել է q ձևով, բայց այստեղ լավում են k, p, w հնչյունները:

Ամերիկյան բակաիրի լեզվով kx հնչման հետ կա նաև tx հնչումը (միահար) (Steinen, XV):

Այս և նման ձևեր չենք գրել աղյուսակում:

Աղուսակի մեջ ունենք 128 ձայն, որոնցից 60 հատը թրթրուուն է, 55 հատը խուլ և 13 հատը ոնգային:

Այս բոլորը ցույց է տալիս մարդկային ձայնի բոլոր ձևակերպությունները. բայց ավելացնենք իսկույն, որ չկա մի լեզու, որ կարենա այսքան ձայն միանգամից ներկայացնել. աշխարհիս ամենահարուստ լեզուներն էլ պտտվում են միայն 30 ձայնի շուրջը: Այսպես՝ սանսկրիտը, որ ունի շատ ճոխ այբուբեն, գիտի միայն 35 բաղաձայն. սեմական լեզուներից եբրայերենը ունի 23 բաղաձայն, արաբերենը՝ 27 բաղաձայն, թուրքերենը՝ 22 բաղաձայն, լատիներենը՝ 17 բաղաձայն, հունարենը՝ միայն 15 բաղաձայն, իսկ Չայրագույն Արևելքի այնու լեզուն ունի միայն 11 բաղաձայն (այն է k, շ, t, p, r, n, m, h, շ, s, w): Հայերենը հին ժամանակ ուներ միայն 29 բաղաձայն, իսկ եթե նկատի առնենք արդի բոլոր բարբառները, բաղաձայնների թիվը կհասնի 48-ի:

Բաղաձայնների կողմից չափազանց հարուստ են կովկասյան լեզուները. ըստ Դրոնի նկարագրության (Einführung, 29—37), սրանք ունեն բաղաձայնների երեք աստիճաններ (15 հատ).

բ պ փ

գ կ ք կան և պ, կ, տ, ծ, ֆ խոչակի սեղմումով (գտնվում են նաև հայերենի մեջ) ըստ Միլլերի (Die Spr. d'Oss, 13—14):

ջ ճ չ

—3 տեսակ l, որոնց մասին արդեն խոսել ենք.

—6 կոկորդային ձայն, որոնք են ղ, ր, ֆ, (ուժեղ ֆ), խ (գերմաներեն ch ձայնը, ինչպես ich բառի մեջ), խ (ուժեղ արաբական չ).

—կ-ի տեսակներից 6 հատ. կ (կոկորդի սեղմումով), ք, ^kx, q=Յ սրա մի ուրիշ տեսակը (k).

—6 սուրող ձայներ՝ s, շ, z, չ և սրանց մեջտեղում ճ, չ.

—5 v, ֆ, w (կրկնաշրթնային), փ (կրկնաշրթնային), ջ (շրթնային հ-ի նման մի ձայն).

—5 y, c (=չ), r, m, n.

—3 β, π, π', կրկնաշրթնային ցնցուն ձայներ, ձի քշելու պես, իրր tpr.

—7 z^s, s^s, j^s, շ^s, ծ^s ձ^s g^s (նկարագրությունը տե՛ս վերը).

Գումարը՝ 64 բաղաձայն, չհաշվելով քմայինները՝ d^y, t^y և այլն:

Կովկասյան տարասարան լեզուն, ըստ Ժիրկովի (էջ 35), ունի 3 տեսակ խ, 3 գ, 4 կ, 3 ծ, 4 չ 2 շ. բայց հեղինակը այս ձայների որակը կամ տարբերությունը չի բացատրում:

Կովկասյան ճամալալ լեզուն, ըստ Բոկարյովի (էջ 12), ունի 58 ձայն, որից 41 բաղաձայն, 17 ձայնավոր. ձայնավորների մեջ կան 4 ա, 4 ի, 4 ու, 3 e (ձայնավորներն ունեն կարճ ու երկար ձևեր). բաղաձայնների մեջ կան 4 խ, 5 կ, 4 լ և այլն:

Չեչեներենն ունի 40 ձայն, որոնցից ձայնավորներն են a, ä, e, c', o, ö, ü, (8 հատ), բաղաձայններն են՝ b, c (ծ), d, x, g, h, k, l, m, n, ղ, p, r, s, t, q, v, x, x (ուժեղ x), y, z, c' (y), ճ, չ, ղ, k' p', t', q, s, չ, c (ե), (32 ձայն) (Мацнев 12):

Կովկասյան լեզվի լեզուն ունի 41 բաղաձայն, որոնց մեջ կան 4k, 3g, 3x և այլն (Жирков, 11—12): Չայնավորների մեջ չկա o, այլ միայն u, բայց օտար բառերի մեջ, ինչպես ռուսերենից և թուրքերենից փոխառյալ բառերում գտնում ենք o, ինչպես՝ oidas «ընկեր» (անդ. 24):

Շատ հարուստ այբուբեն է ունեցել այժմ շնչված աղվաներեն լեզուն: Աղվանները կովկասյան ժողովուրդ էին. նրանց երկիր-

Բ ա ղ ա ձ ա յ ց ց ե ր

		Քրթուուն	Պուլ	Ռնգային
Կիսաձայն		y	ç	
Շփական	Շրթնային	vʰsv	fʰpʒf	
	Ներքերանային	szʒzʒj	ʃsʒsʒxx'	
Սեղմ	Կոկորդային	vʏzʏzʏy	sʏsʏsʏy	
	Քուլն ցնցուն	jg	hh	
Ցնցուն	Կիսացնցուն	bʀrʀr	pʀ	
		ry		
Կողմնա- կան		A		
		l t	l	
Պայթական	Շրթնային	bʰbh	pp ^c p ^f	mm ^f m
	Մայրակողմային	bʏ	pʏ	mʏ
Պայթական	Գաղաթնային	ddh	tt'	nn
	Հետնակողմային	dʏ	tʏ	nʏ
Կողմնակողմային	Միջնակողմային	dɔh	tt'	n
	Կոկորդային	ggʰ	kk'	ʔʔ'
Կողմնակողմային	Միջնակողմային	gʏ	kʏkʏy	ʔʏ'
	Կոկորդային	jʏ	cʏ	nʏ
Կիսապայթական	Շրթնային	bʏ	pʃ	
	Միջնատամ.	dʏb	tQ	
Կիսապայթական	Շրթնային	ɔɔ'	ɔɔ'	
	Միջնակողմային	j	ç	
Կողմնակողմային	Միջնակողմային	y	kx	
	Կոկորդային	ɔy	kx	
Կողմնակողմային	Միջնակողմային	dʏ	tʃ	
	Կոկորդային	jʃ	cʃ	
Ռնգապայթական		b ^m d ⁿ g ⁿ	p ^m t ⁿ k ⁿ	
	Շրթնակատկային	g ^w g ^w h	q ^w q ^w h	

ըր նախապես տարածվում էր Բաքվից մինչև Դերբենդ: Նրանք ունենին առանձին լեզու: Մենքուպ Մաշտոցը հնարեց նրանց համար առանձին այբուբեն, որով թարգմանեցին Աստվածաշունչը: Այդ այբուբենը գործածություն մեջ էր դեռ 1305 թվականին, այնուհետև շնչվեց: Այսօր ոչ ազգան ազգն է մնում, ոչ լեզուն և ոչ էլ որևէ հետք իր գրականությունից: Այբուբենն էլ կորած էր: Վրացի երիտասարդ մի գիտնական, Ի. Աբուլաձե, էջմիածնի (այժմ Երևանի Մաշտոցի անվան) ձեռագրատան մեջ գտավ մի ձեռագիր տասնհինգերորդ դարից, ուր 7 լեզվի այբուբենների շարքում կանակ ազգանից այբուբենը: Այս գրությունը վրացի գիտնականը իրեն

համար անմասնալի փառք ու պատիվ ստեղծեց: Իր ուսուցիչը՝ Շանիձե, մանրամասն ուսումնասիրեց այդ այբուբենը, որի մասին կա էլ գրեցի մի հոդված Արմֆանի տեղեկագրում (1941 թ., № 3—4, էջ 3—11): Համաձայն այդ ուսումնասիրության, ազգաներեն այբուբենն ունի 52 տառ, որոնք ներկայացնում են հետևյալ ձայնահան դրությունը.

- Ձ ա յ ց ա յ ը ր ց ե ր՝ 9 հատ.
 ա, մ, ի, ի', ե, է, օ, ու, իւ.
 Բ ա ղ ա ձ ա յ ց ց ե ր՝ 43 հատ.
 Շրթնային — բ, պ, փ, ֆ.
 Ատամնական — դ, տ, թ.
 Կատկային — գ, կ, ջ.
 Քմական — շ շ, շ ճ, շ չ.
 Մեքական — ձ, ծ, ց.
 Շչական — շ դ, շ ժ, շ շ, շ ս.
 Կիսաձայն — շ լ, վ, ու.
 Նալ — շ լ, բ, ու.
 Ռնգական — մ, ն.
 Կոկորդական — շ ի, շ հ, դ, դ'.

Մանրամասնությունները մեզ հայտնի չեն. օրինակ թե ինչ էր քմականների զույգ շարքի տարբերությունը, որոնք էին երկու տեսակի կիսաձայն յ-երը, ինչ տարբերություն ունեին ե ե ե ե այլն:

Վերաքննության կարոտ եմ համարում կովկասյան ազուլերեն լեզվի այբուբենը, որ կազմել է Ռ. Շահումյանը (Грамм. очерк агул., 15), ուր բաղաձայնների թիվն է ճիշտ 80. միայն t, v ձայնների համար կա 4 տեսակ t, 2 տեսակ p, 8 տեսակ q, 11 տեսակ k և այլն: Սա չափազանց է:

Ընդհակառակը, կան լեզուներ, որ շատ աղքատ են բաղաձայնների կողմից. օրինակ, օվկիանյան տահիթե լեզուն թեև ունի a, e, i, o, u ձայնավորները, բայց սրանց դեմ հանում է միայն 8 բաղաձայն, այնպես որ իր ամբողջ ձայնական դրությունը կազմված է 13 ձայնից, այն է a, e, f, h, i, m, n, o, p, r, t, u, v (Senac, 17): Ըստ այսմ չկան այս լեզվի մեջ b, g, d սովորական բաղաձայնները, թեև p, t կան, իսկ k նույնպես չկա:

Միկրոնեզյան տրուկ լեզուն, բացի a, e, i, o, u ձայնավորներից, ունի 13 բաղաձայն. b, d, f, g, k, l, m, n, p, r, s, t, w (ընդամենը 18 ձայն) (Bollig, 259):

Սուրումոն կղզիների օրոհա լեզուն ունի միայն սառը բաղա-
ձայն, որոնք են w, r, k, t, m, n, p, h, f, s (չկան b, g, d թըր-
թոռնները) (Iwens, 589):

Կորեական այբուբենը հետևյալն է a, ä, e, i, o, ö, ü, ü, y,
h, k, k', m, n, n', p, p', r, s, t, t', ts (ծ), ts (ց). օտար բա-
ւեր գրելու ժամանակ գործ են ածում նաև b, d, g, z (որից երե-
վում է, որ իրենք թրթուռն պայթական ձայներ չունեն): Չունեն
նաև l, որ միայն չինարենից փոխառյալ բառերի մեջ է գտնվում
(Rosny, 5):

Նենեցերենը (սամոյեզ) չունի ž, č, š բաղաձայնները, բայց
գիտի ամեն մի բաղաձայնի պարզ և քմային աստիճանները (Te-
рещенко, 22):

Ամերիկյան արևուտ լեզվի այբուբենը շատ փոքր է. ձայնա-
փորձերն են a, e, ə, i, ö, u, ü (7 հատ). բաղաձայններն են č,
d, g, k, l (hl), l', m, n, ñ, q, s, š, t, θ, x, y (16 հատ). չու-
նեն b, v, f, r, որոնցից սառչին երեքը լսելիս՝ կարծում են m,
խկ վերջինը՝ (r), լսում են l (Веняминов, 2):

Յոխելսոնը, որ նույնպես խոսում է այս լեզվի մասին, ասում
է, թե արևուտ լեզուն ունի 3 հատակ ձայնավոր՝ a, i, u և 2 ուրիշ
ձայնավորներ, որոնցից մեկը մոտ է e հնչման, մյուսը՝ o հնչ-
ման. մաքուր o չկա:

Բանտու լեզուները, ըստ Մայնհոֆի (Introduction to the
phon., Berlin, 1932), ունեն բազմաթիվ անսովոր ձայներ. ա) 4
կարգի t, t' կամ d, որոնք կոչում է կոզմնական, զանգային ատամ-
նախոռոչային (alveolar), ատամնական. բ) k + x-ի մի խառնուրդ
(գրում է kx). գ) p-ի զանազան խառնուրդներ՝ pf, px, ps, pš,
pv, pγ, pz, pž, դ) մի մեծ թիվ խառնուրդ անզական ձայների,
ինչպես. nk', nt', nd', nd, mp, mp', ng, mb, nh, mh, nkx, ntx,
ntš, nts, mpf, mpx, mps, mpš, ntž, mpž, mpγ, ndž, mbv, mbγ,
nx, ns, vž, nl, mv, nz և այսպիսի բազմաթիվ ձայներ:

Մեկանեզյան լեզուների մեջ կան մի խումբ անսովոր ձայներ.
օրինակ իալի լեզվում և ուրիշ ցեղակից լեզուներում կան շփական
hw, bw, hl, hm, hn, hny ձայները (Ray, 84).—Նգուես լեզվի
մեջ կա m̄, որ անզային ձայների մի տեսակ խառնուրդ է, իբր
ngm (Ray, 204). կա և մի ուրիշ ձայն, որ խառնուրդ է gbw ձայ-
ների և արձանագրվում է ̄p ձևով (Ray, 204).—Նույնպիսի մի
ձայն էլ կա մակուրա լեզվում, ներկայացնում է իբր ngbw ձայ-
նախումբը և նշանակվում զարձյալ p ձևով (Ray, 222).—տասի-

կա լեզվում կան նույն ̄p (=gbw) և m̄ (=ngm) ձայները (Ray,
236).—բակի լեզուն ունի bw և mw ձայները (Ray, 246).—աու-
լուա լեզվում կան nt, nd, mp, mb, nr, mv անզային ձայները
(Ray, 274).—մոն լեզվի մեջ կան nk, nd, nr, mh, mv, mbw
անզային ձայները (Ray, 293).—սինեոիպ լեզվում կան nr, nk,
tr, nd, mp, mb, mw, rs ձայները (որոնց նկարագրերը չի տալիս
Ray, 302).—տանգոա լեզվում կան kw, pw, mpw խառնուրդ ձայ-
ները (Ray, 356), նաև անզային t (անգ, 357).—նոգուգու լեզվում
կան mw, pw ձայները (Ray, 384).—մալու լեզվում կա մի ձայն,
որ արձանագրել են nggbv, հինգ տառ մի հնչյուն նշանակելու
համար (Ray, 498).—սոփանա լեզվում կա mb, որ է անզային b
(Ray, 543):

Աֆրիկյան դահոմե կամ ֆոնդե լեզվում կան gb, kp, kw
hl, hw, մինչև անգամ gbl, kpl եռյակ հնչյունները (Butavand,
6).—աֆրիկյան լուա լեզվում կան kp, gb (Westermann, 13):

Աֆրիկյան բամբարա և մանդե լեզուների մեջ կան mb, ng,
nk, nd, tl, dl ձայները (Butavand, 43):

Աֆրիկյան կինգա (բանտու) լեզվում կան nd, mb, ng, nz
ձայները (Wolff, 3):

Չուլու լեզվում կան mf և mv ձայները, որոնք m, f և v
ձայների խառնուրդ են (Doke, 13):

Չուքչի լեզուն չունի b, f, x, š ձայները, ուստի երբ ուսե-
րենից բառեր է փոխ առնում, դարձնում է δ>v, φ>p, g, x>k,
q, ш>č (Bogoras, 646):

Նենեցերենը (սամոյեզ) չունի ž, č, š բաղաձայնները:

Տունգուսական էվեն (լամուտ) լեզուն չունի f, z, ž, x, c բա-
ղաձայնները (Цинциус, 20):

Սիբիրի թուրքական խակաս լեզվում չկան v, f, ž, š, ɸ (g)
բաղաձայնները, բայց փոխ առնելով ուսերենից ալզ բաղաձայն-
ներն ունեցող զանազան բառեր, տիրացել են ալզ ձայներին, մի-
միայն ուսերեն բառերում (Дыренкова, 10):

Բաշկիր լեզուն չունի č և j ձայները. սրանք ուրիշ թուր-
քական լեզուների, ինչպես և պարսկերենի մեջ կան, արաբերենն
ունի j և ուսերենը r (չ). ուստի և բաշկիր լեզուն, երբ փոխ առ-
նի այս բաղաձայններով մի բառ, կհնչի նույն ձևով. այս պատճա-
ռով էլ նրանց համար էլ այբուբենի մեջ մտցրել են ɸ (j) և c (č)
(Şakirəfi, 67).

Մեկնեղյան լատի լեզուն ունի 5 ձայնավոր (a, e, i, o, u), 6 երկբարբառ (ae, ai, ao, au, ei, ou) և 15 բաղաձայն, որոնք են՝ b, d, f, g, gw, k, l, m, mw, n, ng, q, r, s, t. ըստ այսմ ունեն s, բայց չունեն ձ, z, չ. ունեն b, բայց չունեն p, p'c. ունեն f, բայց չունեն v, w. Թավ պայթական բնավ չունեն. ամեն բառ վերջանում է ձայնավորով: Ահա մի հատված այս խոճուկ լեզվից. Girigiri lifoa, lilikeli, lililu kali, Ilu inao fuagamu, ro si lio, lio tooa, alu te si lio, na ogule boso logi, lofo laongi, alo alamai, fatolo, fatolomai (Ivens, 7):

Կորյակ (Նիմիրյան) լեզուն շատ աղքատ այբուբեն ունի. բացի սովորական ձայնավորներից, ունի միայն հետևյալ 12 բաղաձայնները. ձ, h (թրթռուն h,) k, l^y, m, n, ñ, p, t, v (կրկու տեսակի), y. չունի b, d, z, չ, r, s, ձ, f, x և զ (g): Նոր այբուբենում ավելացրել են այս տառերը՝ ուղեներենից փոխառյալ բառերի համար (Корсаков, 6):

Պոլինեզյան լեզուների ձայնական դրուժյան մասին ահա թե ինչ ընդհանուր տեղեկություն է տալիս Դորգիյոնը (էջ 1—4):—Պոլինեզյան լեզուն ունի ընդամենը 15 ձայն, որից 5 ձայնավոր (a, e, i, o, u, բոլորն էլ կարճ կամ երկար) և 10 բաղաձայն. f, g, h, k, m, n, p, r, t, v: Նոր-Չեյլանդիան այս բոլոր բաղաձայնները լավ պահել է, իսկ մյուսները փոփոխել են. Մանգեբեկայի արշիպելագում ջնջել են f և h և նրանց փոխարեն դրվել է կոկորդի մի հարված. օրինակ fafa «բերան» և ahiahi «երեկո» դարձել են àà, aiaí. —Տահիթիում և Բնկերուժյան կղզիներում ջնջել են k և g, և նրանց տեղ դրել նույն հարվածը. օրինակ՝ tangata «մարդ» > ta-àta, kura «կարմիր» > ùra, նաև երբեմն f դառնում է h. —Սանդվիչ կղզում g (որ հնչվում է ng), դարձել է n կամ k, t. բաղաձայնները շարունակում են կրճատվել. r ջնջվում է. karoha «բարև» դարձել էր kaóha, այժմ էլ եղել է áóha. ջնջված ձայնի տեղ դրվում է կոկորդի հարվածը:

Օվկիանյան սամոա լեզուն ունի բացի a, e, i, o, u ձայնավորներից, 9 բաղաձայն, ընդամենը 14 ձայն. այդ բաղաձայններն են f, g, l, m, n, p, s, t, v (որոնցից g հնչվում է միշտ ng). սրանցից դուրս կան նաև r, k բաղաձայնները, բայց միայն օտար բառերի մեջ (Funk, 1):

Ավստրալիական նոր-պոմերանյան լեզուն (Բիսմարկ-արշիպելագ) ունի բացի 5 ձայնավորներից (a, e, i, o, u) 11 բաղա-

ձայն, որոնք են. b, d, g, p, t, k, l, m, n, r, w. սրանցից դուրս կա նաև ñ, իսկ օտար բառերի մեջ էլ s (Costantini, 1):

Սանտիերիտից ավելի հարուստ այբուբեն ունի բելուչերենը, որ գրտի ոչ միայն սանտիերիտին յուրահատուկ հնչյունները, այլև նորամուտ ձայններ: Ամբողջ այբուբենը պարունակում է 50 ձայն (ըստ-Gilbertson-ի). a, ā, au, ai, b, bh, č, čh, d, dh, đ, đh, ð, e, f, g, gh, ģ, h, i, i, j, Jh, k, kh, x, l, m, n, ñ, o, p, ph, r, r, s, š, t, th, t, th, ð, u, ū, v, w, wh (շնչեղ w), y, z, ž:

Սանտիերիտի պալթուցիկ բաղաձայնների ամբողջ խումբը՝ իր չորս աստիճաններով և ռնգալիներով, նաև գանգալին բաղաձայններով, մնում են պալի լեզվում (V. Henry, 4):

Եթովպական ամհարա լեզվի համար Սերրանոն (էջ 2—10) ասում է, թե ամենահարուստ այբուբենն ունի, որ բաղկացած է եթովպական այբուբենին ունի 33 տառ, բայց սրանց մեջ իրար հավասար են 3 h, 2 s, 2 p և 2 ð, որոնք ո՛չ միայն հնչմամբ տարբեր չեն իրարից, այլև դրուժյան մեջ կարող են իրար փոխանակել: Այսպիսով ջնջվում են 5 տառ և մնում է առանձին հնչմամբ 28 տառ: Սրանցից մեկը արաբերեն ^o (ձայնավորի սկզբին զարկ՝) ձայնն է. իսկ մի ուրիշը գանազան ձայնանիշներով ներկայացնում է 7 ձայնավորները: Այսպիսով, ավելացնելով 28-ի վրա 6 հնչյուն և կունենանք ընդամենը 34 հնչյուն, որոնց մեջ մի՛, 7 ձայնավոր և 26 առանձին բաղաձայն: Չայնավորներն են a, ā, e, i, o, u, օ. բաղաձայններն են b, č, d, f, g, h, j, k, l, m, n, ñ, p, q, r, s, š, t, t', ð, tci, w, x, y, z, ž: Սրանց մեջ անորոշ է մնում ալն, որ հեղինակը տառադարձում է tciā և նկարագրում հետևյալ ձևով. „ha il suono enfatico precedente (t'), ma raddolcito della e“ (նախորդ ուժեղ t' ձայնն է, բայց անուշցած e-ից) (ի՞նչ է այս c-ն):

Այս բոլորից երևում է, որ հեղինակի «ամենահարուստ» կոչած այբուբենը հայերենից առնվազն 5 տառ պակաս ունի:

Բաղաձայններն էլ կարող են ունենալ ռնգալին ձևեր. օրինակ, y կիսաձայնը աֆրիկյան էվե լեզվում ունի իր ռնգալին ձևը, որ պիտի գրվի y, որ և տարբեր է ñ = n^y ձայնից (Westermann, 15):

Աֆրիկյան վոլոֆ լեզվում k, g, x, t, d, t^y, d^y, p, b բաղաձայնները կարող են ռնգալին հնչվել իբր "k, "g, "x, և այլն, որոնք նոր հնչյուններ են (Rimbaud, 8):

Աֆրիկյան գալա լեզվում կա ռնգալին y և x. կան նաև nh, ալն է ռնգալին h (որի ժամանակ օղբ դուրս է մղվում թե բերա-

նից և թե քթից), և nhw (այն է անգլիական w), միաժամանակ բերանից ու քթից շունչը դուրս փչելով (Westermann, 12—14):

Ընդհանրապես կանխելով ասենք, որ սխալ կարծիք կազմած պիտի լինենք ձայների մասին, եթե մտածենք, թե միևնույն ձայնը բոլոր լեզուների մեջ էլ ճիշտ նույնն են: Ո՛չ: Միևնույն ձայնը, օրինակ լ, լեզվից լեզու տարբերվում է մերթ թրթուման աստիճանով, մերթ մկանային ուժգնությունը, մերթ շոշափման կետով, մերթ պայթուցման ձևով ու տեղում: Այնպես որ տեսականում չկա ձայն, որ մի լեզվից մյուսը բացարձակապես նույնը լինի:

Մի արիշ նկատելի կես էլ այն է, որ ինչպես ձայնավորներից, նույնպես և բաղաձայններից ոմանք ընդհանուր են բոլոր լեզուներին, արիշներ գտնվում են միայն մի քանի լեզուների մեջ, այսպես չկա լեզու, որ a ձայնավորը կամ s բաղաձայնը չունենա, բայց քիչ լեզու կա, որ ունենա x կամ γ ձայները: Սա անշուշտ կախված է նրանից, թե որչափ ձայնը լավ հարմար է մեր գործարաններին:

Պեսք չէ կարծել նույնպես, թե որևէ լեզվի մեջ ձայնական դրությունը մշտապես մնում է նույնը, կան ձայներ, որ նոր-նոր ավելանում են, ինչպես և կան ձայներ, որ հետզհետե կորչում են, բայց մեծամասնությունը առաջինի կողմն է: Այսպես, հին հայերենի մեջ կար դ լ ձայնը, որ այժմ կորել է, չկային դ, ֆ, ko, իւ, որոնք հիմա, մանավանդ բարբառներում, սովորական են, առաջացած մասամբ փոխառությունը, մասամբ էլ բնական ճանապարհով:

Կալմիկերենը չ ձայնը չունի, և երբ որևէ լեզվից փոխ առնի մի որևէ բառ, որ ունի չ, դարձնում է յ, ճիշտ ինչպես թուրքերեն Journal < Ֆրանսերեն žurnal, Jandarma < gendarme և այլն. այժմ սակայն կալմիկերենի այբուբենի մեջ մտցրել են չ տառը ուսուցիչների բառերի համար, որ ժողովուրդը չգիտի (Санжеев, 17):

Կալմիկերեն լեզուն չունի փափուկ բաղաձայն, ուստի երբ ուսուցիչներից փոխ է առնում այնպիսի մի բառ, որ ունի փափուկ բաղաձայն, անշուշտ վերածում է կոշտ բաղաձայնի (Санжеев, 21):

Անժանոթ բաղաձայնների անգիտակից գոյություն լավ օրինակներ են ուսուցիչներում՝ птица «թռչուն» (п=փ), кто «ով» (к=ք), ткань «գործվածք» (т=թ), отец болен «հայրը հիվանդ է» (п=ձ), дочь больна «աղջիկը հիվանդ է» (ч=ջ), дух божий «աստուծո հոգին» (х=ղ):

Օտար հնչյունների փոխ առնելու և այդ տառերը տառադարձելու շատ լավ օրինակ է պոլինեզյան հավայերեն լեզուն, որ շատ աղքատ այբուբեն ունենալով, ստիպված է եղել շատ տառեր փոխ առնել օտար լեզուներից: Այսպես՝ չունի b, d, g, օտար բառերի տառադարձության մեջ թեև գրում են b, d, g, բայց իրենց բնիկ հնչյամբ հնչում են խուլ p, t, k:

Ի ձայնը չունեն. հնչում են p, բայց տառադարձությունը գրում են f:

Ե չունեն. նոր են վերցրել միայն օտար բառերի համար:

S չունեն. այժմ սկսել են գործածել օտար բառերի մեջ, իրենք S-ի փոխարեն հնչում են k!

V չունեն և նրա տեղ դնում են միշտ w:

Z չունեն, բայց օտար բառերի տառադարձության մեջ գործածում են z (Andrews, 13):

Հնդկական մարաթի լեզուն սանսկրիտի č, čh, ĵ, ĵh ձայները դարձրել է ծ, ց, ձ, ձ^c. բայց սանսկրիտ և արաբ փոխառությունց մեջ պահում է չ և ջ ձայները անփոփոխ (Seddon, 1—2):

Ռուսերենը ընդհանրապես չգիտի թավ բաղաձայններ, ուստի չգիտի նաև k' և t' բաղաձայնները. բայց ահա кто «ով» բառի արտասանության մեջ երկուսն էլ կան. հնչվում է pɣn և ոչ թե կառ:

Անգլերենը չունի ժ բաղաձայնը. բայց ահա pleasure (pléžər) «հաճույք» կամ Persia (P'ɔ'ɹzie) «Պարսկաստան» և այլն բառերի մեջ երևում է:

Մարդիկ չեն գիտակցում իրենց լեզվի այս խուսափուկ ձայները, այսինքն նրանց անկախ գոյության մասին գաղափար չունեն: Նույնիսկ հնդկությունը նախալեզվում չունին z ձայնը, թեև sed արմատի կրճատ ձևի մեջ (ni—zd) լսում էին: Երբ լեզվի մեջ այս խուսափուկ ձայները շատանան, և մանավանդ երբ անկախ գիրքի մեջ գտնվեն, խոսողները նոր միայն գիտակցության կհասնեն նրանց մասին և կմտցնեն իրենց լեզվի ձայնական դրության մեջ:

* * *

Նախնական մարդկությունը չէր կարող բոլոր հնչյունները միասին և միաժամանակ ստեղծած լինել: Լեզվի պատմական կյանքում նորանոր ձայների առաջացումը արդյունք է գլխավորապես բաղաձայնների հանդիպման: Այսպես՝ հայերենի մեջ ֆ առաջացել

է ւ-ի խլացումով. օրինակ, հաւք բառի մեջ ւ գտնվելով ք-ի մոտ, բնականորեն խլացել է, որով առաջացել է Փ:

Անգլերեն լեզուն չունի ց և ձ ձայները, բայց t—s և d—s ձայների հանդիպումից այժմ ստացել է այդ ձայները, ինչպես boot + հոգնակի boots (ts=g), suds (սրձ) «օճառաջուր»:

Ֆրանսերեն clou de giroflée հնչվում է ժողովրդական ձևով cloujirof—cloudgirof:

Վերջապես կան լեզուների մեջ պատահական և խուսափուկ ձայներ, որոնք արագ արտասանութիւն մեջ հատկապես երևան են գալիս և լեզվի բնական վիճակի մեջ չկան. այսպես է վերջին օրինակում յ. նաև ֆրանսերեն n (կոկորդալին և), որ կարող է երևալ և. օրինակ, langue maternelle ձևի արագ արտասանութիւն մեջ (BSL, № 103, էջ 127). կամ նաև Պոլսի բարբառում ա. ինչպես ժանրը, մանրը բառերի մեջ: Ուրիշ տեղ չկա:

* * *

Նոր և նորագույն լեզվաբանները (մանավանդ գերմանական դպրոցի) զանազանութիւն են մտցրել ընդհանուր բնութիւթ կրող ձայնի և նրա զանազան տարբերակների միջև: Առաջինը կոչում են phonème, իսկ երկրորդը՝ son: Մենք մեր այս աշխատութիւն մեջ, ինչպես վերևում տեսանք, խոսում ենք յուրաքանչյուր ձայնի մասին, հիշելով նաև նրա բոլոր տեսակները, զանազան լեզուների հնչման համաձայն: Բայց այդ տարբերակները առանձին անուններով չենք որոշում: Մեր լեզվաբաններից պրոֆ. է. Աղաջանն է, որ իր «Ընդհանուր լեզվաբանութիւն գասընթաց»-ի մեջ (Երևան, 1947 թ.), էջ 74—78, խոսում է այս երևութի մասին, կոչելով առաջինը հնչույթ (phonème), որ է ձայնի ընդհանուր հնչյունը, իսկ նրա տարբերակները՝ հնչյուն*: Օրինակ է բերում ռուսերենից революция և апрель բառերը, որոնց մեջ ռուսը չի զանազանում երկու ր-երի տարբերութիւնը, որով ր դառնում է հնչույթ, մինչդեռ հայը առաջինը նշանակելով ռ և երկրորդը ր, զանազանում է երկու հնչյունները: Ընդհակառակը, ռուսերեն шесть «վեց» և шест «ձող» բառերի մեջ ռուսը զանազանում է քմային կամ փափուկ ть և т հնչյունները, իսկ հայը անկարող լինելով զանազանել այդ երկուսը ընդունում է տ հնչույթը:

* Մեզանից առաջ հնչույթի և հնչյունի տարբերակման մասին հայ լեզվաբանութիւն մեջ գրել են Գ. Ղափանցյանը, ազա Գ. Սեակը.—է. Ա.:

Երկուսի տարբերացումը ըմբռնելի դարձնելու համար, նա տալիս է նաև մի հարմարավոր օրինակ, այն է ա տառի զրջութիւնը զանազան անձերի մոտ. «Մեկը՝ ավելի երկար կարող է անել ա-ի երեք գծերը, մյուսը՝ կարճ, մեկը գծերի միջի տարածութիւնը շատ լայն կարող է թողնել, մյուսը՝ նեղ, մեկը կարող է այդ գծերը թեքել դեպի ձախ, մյուսը դեպի աջ և այդպիսով կըստացվեն ա-ի տարբեր տեսակներ, բայց ոչ՝ տարբեր տառեր»:

	Խուլ	Թրթուուն	Խուլ շնչեղ	Թրթուուն շնչեղ
Շրթնային	p	b	bh	ph
Ատամնային	t	d	dh	kh
Քմական	k'	g'	gh	k'h
Կաակային	k ^w	g ^w	g ^w h	(k ^w h)

Գ Լ Ո Ի Խ Ժ

**ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԱԽԱԼԵԶՎԻ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ
ՉԱՅՆԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ**

Չայնական գրութուն ասելով հասկանում ենք մի որևէ լեզվի բովանդակած բոլոր ձայները միասին: Չենք ասում այբուբեն, որովհետև, նախ՝ այբուբենը ենթադրում է գրված տառ (մինչդեռ լեզուներից շատերը, ինչպես և հնդեվրոպական նախալեզուն, գիր կամ տառ չունեն): Երկրորդ՝ այբուբենը գրեթե միշտ չի ներկայացնում որևէ լեզվի ճիշտ ձայնական գրութունը, ըստ որում կան ձայներ, որոնք գրութուն ունեն այս կամ այն լեզվի մեջ, բայց պակասում են այբուբենում, կամ ընդհանրապես: Այսպես, գերմաներեն լեզվի մեջ կան շ, չ, դ (sch, tsch, g) ձայները, բայց սուանդին տառ չունեն. արդի հայերենի մեջ կան և և և տառերը, բայց չեն ներկայացնում երկու զանազան ձայներ. նրանցից մեկը ավելորդ է:

Չայների հորինվածութունը ընդհանրապես նկարագրելուց հետո, այս գլխով կարևոր ենք համարում առանձնապես խոսել հընդեվրոպական նախալեզվի, նրա ժառանգների և հատկապես հայերենի ձայնական գրութան մասին:

Հնդեվրոպական նախալեզուն պարունակում էր երեք տեսակ ձայն. 1. իսկական բաղաձայններ, 2. ձայնավորներ և 3. ձայնորդներ (sonante): Իսկական բաղաձայնները բաժանվում են 2 խմբի. պայթական և շփական: Պալթականները հնդեվրոպական նախալեզվի մեջ ներկայացնում են ձոխ ու կատարյալ մի ցուցակ, մինչդեռ շփական ձայների թիվը չափազանց աղքատ է:

Շփական բաղաձայններից կա միայն սուրղ s ձայնը, որ շատ հաճախ գործ է ածվում նախալեզվում: Այս բաղաձայնը զանվելով հաջորդական թրթուուն պալթական (բայց միայն պալթական) բաղաձայնի մոտ, դառնում էր z. օրինակ, հնդեվրոպական նախալեզվում *sed «նստել» արմատը ձայնավորի կորուստով դառնալով *sd, ձայնաբանական օրենքների համաձայն իսկույն վերածվում էր *zd-ի, որից էլ ու-նախամասնիկով ունենք հնդեվրոպական նախալեզվում *nisdus «նստավայր, նստոց»)>հնդ. niḍás, լիթ. lizdas, լատ. nidus «բալն»: Սակայն z ձայնը անկախ և ինքնուրույն գոյութուն չունի, այսինքն չկար ո՛չ բառակցքում ձայնավորի մոտ և ո՛չ բառամիջում՝ երկու ձայնավորի միջև: Ենթադրվում է նաև sh (իմա՝ š) և zh (իմա՝ ž) ձայների գոյութունը՝ նման հանդամանքներում. բայց լավ հաստատված չէ (Brugmann, Abrégé de gramm. comp., 1905, էջ 202): Այլևի խախտում են p, ph, d, dh բաղաձայնները (տե՛ս անդ, էջ 216): Ըստ այսմ հնդեվրոպական բաղաձայնների գրութունը ընդհանրապես բաղկացած էր պալթականներից, չունի շփական (ֆ և ալլն), չունի ճշական (ն, չ, ջ), ո՛չ էլ հ:

Չայնավորներն են. կարճ՝ e, o, a, ə, °, և սրանց համապատասխան երկարները՝ ē, ō, ā:

Այս բոլորից հնդեվրոպական նախալեզվում ամենաշատ գործածական էին e և o, որոնց փոխանակութան օրենքները կտեսնենք հետո (Չայնդարձ): Շատ ավելի սակավ գործածական էր a, որից քիչ տարբերվող հնչյուններ էին ə և ° (այս երկու ձայնավորների հնչման մասին կատարյալ գաղափար չունենք. վերջինը ոմանք գրում են °, ոմանք e (շատ փոքրիկ e) ձևով):

Հնդեվրոպական նախալեզվի ձայնական գրութան ամենից բնորոշ կողմը կազմում են ձայնորդները: Այսպես են կոչվում այն ձայները, որոնք միևնույն բառի զանազան ձևակերպութանց մեջ գործ են ածվում մերթ իբր բաղաձայն, մերթ իբր կիսաձայն (երկ-

բարբառի երկրորդ մասը) և մերթ իբր ձայնավոր, և այս վերջին ձևի տակ կարող են լինել սուղ կամ երկար, ստանալ շեշտ կամ մնալ անշեշտ:

Արդի լեզուների միջոցով դժվար է ճիշտ գաղափար կազմել ձայնորդների մեքենականություն մասին, բայց հայերենի մեջ, օրինակ, ու ձայնը կարող է բավական հավասարիմ գաղափար տալ: Այսպես, օրինակ, լու բառի մեջ ու գուտ ձայնավոր է. երբ առնենք սրտ սեռական ձևը՝ լուի (լվի), կարող ենք կարդալ լուի, լվի, լույի և կամ Ղարաբաղի բարբառի սճով՝ լուվի: Արդ, այս բոլորի մեջ ու մերթ ձայնավոր է, մերթ իսկական բաղաձայն և մերթ էլ կազմում է երկբարբառ:

Այսպես են նաև հնդեվրոպական նախալեզվի ձայնորդները:

Դրանք թվով 6 հատ են. y, w, r, l, m, n, որոնցից 2-ը կիսաձայն (y, w), 2-ը նալ (r, l), 2-ը սնգային (m, n):

Ձայնորդ համարվում է նաև ձ ձայնը, ըստ վերջին քննությունաց:

Ահա՛ ձայնորդների գործածություն տեղն ու եղանակը.

1. Իբրև բաղաձայն գործ են անում բառակազմում ձայնավորի կամ մի ուրիշ ձայնորդի մոտ, բառամիջում՝ երկու ձայնավորի միջև և կամ մի իսկական բաղաձայնի ու ձայնավորի միջև: Այս պարագային գրվում են y, w, r, l, m, n:

2. Իբրև ձայնավոր գործ են անում բառակազմում՝ բաղաձայնից առաջ և կամ բառամիջում՝ երկու բաղաձայնի միջև: Այս պարագային գրվում են i, u, r, l, m, n: Սրանք կարող են միանալ նաև հաջորդական ձ ձայնավորի հետ որոշ դեպքերում և սալ ի, u, r, l, m, n երկար ձայնավորները: Ըստ այսմ հնդեվրոպական նախալեզվի մեջ i և u անկախ ձայնավորներ չեն, ինչպես e, o և a, այլ y, w բաղաձայնների ձևափոխությունները: Նմանապես r, l, m, n բաղաձայն չեն, այլ գուտ ձայնավոր, ինչպես i և u, և կազմում են բառի մեջ առանձին վանկ:

Մանր.—Մի խումբ լեզվաբաններ փորձել են պարզել վերոհիշյալ r, l, m, n ձայնավորների հնչումը: Նրանք ենթադրում են, որ այս ձայնավորները չունեն նույն արժեքը՝ ինչ որ i և u, որոնք պարզ ու հոտակ ձայնավորներ են, այլ պետք է հնչված լինեն իբր գուտ բաղաձայն՝ մի շատ կարճ ձայնավորի հետ ընկենք իբր գուտ բաղաձայն՝ մի շատ կարճ ձայնավորի հետ ընկենք իսկությունաբ, իբր հայերեն ըր, ըւ, ըմ, ըն: Այս խնդիրը լեզվաբանների կողմից դեռ վճռված չէ: Բայց ձայնավոր r, l, m, n

հնչման իբր օրինակ կարող է ծառայել դերմաներեն և անգլերեն butter, mutton բառերի վերջին վանկերի արտասանությունը:

3. Իբրև կիսաձայն՝ ձայնորդները գործ են անում կազմելու երկբարբառների երկրորդ մասը:

Օրինակ առնելով հնդեվրոպական նախալեզվի pleu — «ծածանվել, ծփալ, նավել» արմատը, միևնույն w ձայնավորը ներկայացնում է մեզ.

1. իբր բաղաձայն՝ սանսկրիտ plávate.

2. իբր ձայնավոր՝ սանսկրիտ plutas.

3. իբր կիսաձայն՝ արիական *plaušyat, հունարեն πλεσσαι.

Ձայնորդները կարող են գործածվել նաև հաջորդական ձայնավորի հետ և համարվել ձայնավոր. բայց այս պարագային շուտով նրանք վերածվում են բաղաձայնի և իրենցից առաջ իբրև հենարան ստեղծում են մի կարճ ձայնավոր, ինչպես՝ ye > iye, we > uve և այլն:

Երկու ձայնորդ կարող են պատահել կողք-կողքի և այն ժամանակ կատանան հետևյալ 5 դիրքերն ու գործածությունը.

1. Երկու բաղաձայնի միջև եթե գտնվեն երկու ձայնորդ, առաջին ձայնորդը կհամարվի բաղաձայն, երկրորդը՝ ձայնավոր. ինչպես սանսկրիտ srutás «հոսած», çvābhis «շամբք» (շներով) < հնի. k'wəbhis, բայց ո՛չ çumbhis:

2. Բաղաձայնի ու ձայնավորի միջև՝ առաջին ձայնորդը կգտնա ձայնավոր, երկրորդը՝ բաղաձայն, ինչպես՝ սանսկրիտ çūnas = հունարեն κῆνος «շուն»:

3. Ձայնավորի ու բաղաձայնի միջև (կամ բառակերպում)՝ առաջին ձայնորդը դառնում է բաղաձայն, երկրորդը՝ ձայնավոր. ինչպես՝ հնի. néwq newqtis > սանս. nāva, navatis, հունարեն ἐνάα «ինն» և այլն:

4. Երկու ձայնավորի միջև առաջին ձայնորդը դառնում է կիսաձայն (նախորդ ձայնավորի հետ կազմելու համար երկբարբառ) և երկրորդը՝ բաղաձայն. ինչպես՝ հայր. aiva «մեկ», կիպր. oifos «մեկ», լատ. oinos (ūnus) «մեկ», գոթ. ains «մեկ»:

5. Բառակազմում ընդհանուր կանոն չկա. y միշտ ձայնավոր է բոլոր ձայնորդներից առաջ. w ձայնավոր է միայն n և m ձայնորդներից առաջ և կարող է լինել բաղաձայն y, r, l ձայնավորներից առաջ. նույնպես r, l, m, n կարող են լինել բաղաձայն՝ y ձայնորդից առաջ և այլն:

Երկբարբառները հնդեվրոպական նախալեզվի մեջ կազմվում են e, o, a ձայնավորներից՝ ավելացնելով սրանց վրա որևէ ձայ-

նորդ: Լեզվաբանները սովորաբար երկբարբառ են համարում միայն նրանք, որ կազմված են y, w ձայնորդներով, իսկ մյուս 4 ձայնորդներով (r, l, m, n) կազմվածները երկբարբառ չեն համարում: Այս մտածմունքը, որ հիմնված է միայն արդի լեզուների կազմութան վրա, ըստ այլ լեզվաբանների¹, արդարացի է հնդեվրոպական նախալեզվի համար, ուր y, w ձայնորդները էապես տարբեր չեն մյուս ձայնորդներից: Այս բանը հայտնի երևում է լիտվաներին լեզվից, ուր ar, al, an, am ձևերն էլ ընդունակ են ստանալու երկու տեսակ շեշտ (կոշտ ու փափուկ), ճիշտ ինչպես ai և au երկբարբառները, այսպես՝

- ái, áu, ár, ál, án, ám.
- aí, aũ, ar, aĩ, añ, añ.

Կա և մի ուրիշ անհետևողական կողմ.— այդ այն է, որ մինչդեռ y, w ձայնորդները երկբարբառ կազմած ժամանակ զբվում են իրենց ձայնավոր ձևով (i, u), ընդհակառակը r, l, m, n ձայնավորները երկբարբառի մեջ էլ մնում են բաղաձայն ձևով: Հետևողական լինելու համար պետք էր գրել կա՛մ ey, ew, er, el, em, en և կա՛մ ei, eu, er, el, em, en և այլն:

Հնդեվրոպական նախալեզվի երկբարբառներն են ուրեմն՝ յուրաքանչյուր ձայնավորի համար 6 ձայնորդով, ընդամենը 18 հատ.

- ei, eu, er, el, en, em.
- oi, ou, or, ol, on, om.
- ai, au, ar, al, an, am.
- Կային նաև սրանց համապատասխան երկար ձևերը, այն է՝
- eī, ēu, ēr, ēl, ēn, ēm.
- ōi, ōu, ōr, ōl, ōn, ōm.
- āi, āu, ār, āl, ān, ām.

Բայց այս ձևերը շատ գործածական չէին և նույնիսկ հնդեվրոպական շրջանին, կարճացնելով իրենց ձայնավորը, վերածվեցին նախորդներին: Այս մասին ավելի ընդարձակ կտեսնենք երկբարբառների ձայնափոխության մեջ:

Այն բոլոր ձայնները, որ ներկայացրինք այստեղ իբրև հընդվորոպական նախալեզվի հնչական հարստությունը, կարելի է ընդունել միայն ընդհանուր գծերով, իսկ ճշտել յուրաքանչյուր հընչման ճիշտ բնույթը՝ անհնար է: Օրինակ, w սովորական շրթնային շփական է, բայց զանազան լեզուների մեջ նա ունի զանազան

¹ Sh'a A. Meillet, Introduction, 5^e éd., p. 82.

հնչական ձևեր, մի տեղ կրկնաշրթնային է, մի ուրիշ տեղ ստանաշրթնային. մի տեղ զուտ թրթուռն է, մի ուրիշ տեղ խուլ: Արդ, ի՞նչպես էր հնդեվրոպական նախալեզվի այն ձայնը, որ մենք նըշանակեցինք W տառով: Ընդհանրապես լեզվաբանները ընդունում են նշանակված ձայնի գոյությունը՝ առանց այդ մանրամասնությունները ճշտել ուղելու: Կան նույնիսկ այնպիսի խիստ լեզվաբաններ, որ այդ տառերը համարում են միայն հանրահաշվական ֆորմուլաներ, այսինքն թե, օրինակ, հնդեվրոպական նախալեզվի օ ներկայացուցիչն է մի այնպիսի ձայնի, որ տվել է արիական օ, հայերեն օ, հունարեն օ, լատիներեն օ և այլն, և իրավունք չունենք նույնիսկ այդ տառը օ կարդալու կամ գոնե մեր իմացած սովորական ձևով օ հասկանալու: Անշուշտ այս խստությունը որոշ չափով իրավացի է օ, օ՝ տառերի համար, բայց ուրիշ ավելի հասարակ տառերի համար չափազանց է:

Կամիսերենի գլուխից հետո նորանոր ձայնաբանական քննություններ և համեմատություններ այլ արդյունք տվեցին հնդեվրոպական նախալեզվի ձայնական դրություն մասին: Դուրս եկավ, որ հնդեվրոպական նախալեզուն ուներ նաև h ձայնը, երբ մի արմատ, որ վերջանում էր ալս ձայնով, միանար բաղաձայնով սկսվող մի մասնիկի հետ, խճողումից խուսափելու համար կամ երկուսի միջև ավելանում էր օ ձայնավորը, կա՛մ կրճատվում էր h ձայնը և կա՛մ նրանից առաջ գտնված ձայնավորը երկարում էր: Ըստ այսմ, կալին հնդեվրոպականի մեջ երկու տեսակ երկար ձայնավորներ և երկբարբառներ. նրանք, որ ի բնե երկար էին և նրանք, որ այսպիսի h ձայնի կրճատմամբ էին առաջացել (BSL, № 110, էջ 114):

Ոչ մի ժառանգ լեզու չի պահել հնդեվրոպական նախալեզվի դրությունը. ոմանք զեղչել, ոմանք ավելացրել են նոր-նոր ձայններ. յուրաքանչյուրի ձայնական դրություն մասին կարելի է գոնե մոտավոր գաղափար կազմել այն այբուբեններից, որ դրինք վերը: Այժմ վերցնենք հայերենի ձայնական դրությունը:

Հին հայերենն ուներ 3 կարգի ձայներ. ձայնավոր, երկբարբառ և բաղաձայն:

Ձայնավորները հետևյալներն են (8 հատ).

- ա, ե, է, ը, ի, ո, ու:

Երկար ու ռնգային, ինչպես և կլոր քմային ձայնավորներ չգիտեր հին հայերենը:

Երկբարբառները կարող ենք վերածել 3 խմբի.

- 1. ալ, ոլ.

2. աւ, եւ, իւ.

3. եա, եի, էա, էի, էո, էու, իա, իի, իե, իո, իու, ուա, ուե, ուե, ուի, ուո, ուու, ընդամենը 22 հատ:

Ինչպես տեսնում ենք, հին հայերենը չունի էյ ձևով երկբարբառ, ոչ էլ իբր ձայնավորից ու բաղաձայնից ձևացած ձայնախումբ: Վերջինս մենք գտնում ենք արդի բարբառներում՝

ա) Թուրքերենից փոխառվալ բառերի մեջ, ինչպես՝ էլրէթի «խախուտ», էլլէնճէ «գրոսանք», բէլ «իշխան» և այլն:

բ) Ձայնարկութանց մեջ, ինչպես՝ է՛յ, հե՛յ, դե՛յ:

Արդի գրականը նույնպես զիտի այս ձայնարկութունները և մի միակ բառ էս, որ է բէյ (թեյ) «չալ», իր բոլոր բարդութուններով (ինչպես հին ուղղագրութիւնում՝ բէյաման, բէյարան, բէյասեղան, նույնիսկ բէյել):

Թէյ (թեյ) բոլորովին նոր ժամանակի բառ է. գործածութիւն հնագույն թվականը չգիտեմ. վերջում գրված յ բաղաձայնը, որ անսովոր երևույթ է հայերենում, գրված է անշուշտ տարբերելու համար թե (թե) շաղկապից: Արդ յ-ն ավելացված է կամ ազդեցութիւն չալ հոմանիշի և կամ հունարեն τῆτον հոմանիշի:

Նուրբարբառներն են.

1. յ կիսաձայնով կազմված՝ եայ, էայ, ւոյ, ուոյ.

2. լ կիսաձայնով կազմված՝ եալ, էիւ, ուալ.

(ընդամենը 7 հատ), որոնցից վեցը բաղկացած է երկու ձայնավորից և մեկ կիսաձայնից, իսկ մեկը միայն (ւոյ) երկու կիսաձայնից և մի ձայնավորից:

Բաղաձայնները հետևյալներն են.

	Թրթռուն	Խուլ	Շնչեղ խուլ
Շրթնային	բ, վ	պ	փ
Ատամնային	դ	տ	թ
Կատկային	զ	կ	ք
Ծեքական	ձ	ծ	ց
Ճշական	շ	ճ	չ
Սուրող	ղ	ւ	
Շչական	ժ	շ	
Կոկորդական		խ	հ
Կողմնական	լ, ր		
Ռնդային	մ, ն		
Կիսաձայն	ւ, չ		
Ցնցուն	ս, ր		

Ընդամենը 30 բաղաձայն, որ համեմատած եվրոպական լեզուների հետ, շատ հարուստ է և գրեթե հավասար է կանգնած կովկասյան լեզուների ճոխ այբուբենի հետ: Նկատելի է, որ բաղաձայնների առաջին հինգ կարգերը, իրար հետ լիակատար համապատասխանություն ունեն երեք աստիճանները (պարզ խուլ, շնչեղ խուլ և թրթռուն). սուրող, շչական և կոկորդական ձայնները միայն երկու աստիճան ունեն, իսկ մյուսները, թեև միայն թրթռուն աստիճանն ունեն, բայց յուրաքանչյուրը կրկին ձևի տակ:

Պակասում էին ֆ և ղ (յ) ձայնները, որ հիմա ունենք մեր այբուբենի մեջ:

Անցնենք քննել այս ձայների հնչյունը հին հայերենում:

Արդեն ասել ենք, որ լեզվի ձայնները մշտական փոփոխություն մեջ են դարերի ընթացքում. լեզվի այսինչ շրջանի ձայնները բացարձակորեն նույն չեն նրա ավելի հին շրջանի ձայների հետ, ամեն լեզվի մեջ էլ այբուբենները ներկայացնում են միայն իրենց հնարված ժամանակի ձայնական դրութիւն պատկերը, և սխալվում են հաջորդ սերունդները, որ կարծում են միշտ, թե հենքն էլ հնչել են այնպես, ինչպես իրենք են հնչում: Եվ լեզվաբանների գործն է եղել զանազան միջոցներով երևան հանել հնագույն հնչյունների պատկերը, տառերի հին արժեքը:

Այսպիսի աշխատանքները կատարված են հունարենի և լատիներենի վրա: Ինչպես հայտնի է, արդի հույները, որ իրենց հին լեզվի ժառանգն են, այբուբենի β տառը հնչում են v,—γ, υ, ε, ι, οi հնչում են հավասարապես i, γ, ε, θ, X տառերին տալիս են սեղմ բաղաձայնի հնչում և այլն: Նմանապես լատիներենի մի քանի տառերը, հատկապես c և g, զանազան ազդերի մոտ հնչվում են զանազան ձևով. միևնույն լատին Gicero բառը ֆրանսիացիք կարդում են Sisero, իտալացիք Cicerò, գերմանացիք Ցիցերո և սրանց հետևողութիւնում նաև սուսները և Կովկասի հայերը՝ Ցիցերո: Բայց անշուշտ լատիները մի հնչում միայն ունենին. և ո՞րն էր այդ հնչումը:

Քննությունները ցույց տվին, որ հունարեն η նախապես հընչվում էր ē,—υ հնչվում էր նախապես u, օգոստոսի դարուն արդեն դարձել էր ū, որ այժմ էլ դարձել է i¹. β, γ, δ, φ, χ, θ սեղմ չէին, այլ առաջինները հնչվում էին b, g, d, երկրորդները ուղղակի փ, p, p, որ շատ հետո դարձան ֆ, խ, p (դեռ Ա դարում հին

¹ V. Henry, Précis de Grammaire comparée du grec et du latin, 1894, p. 28.

միայն հայտնի չէ, թե այս թրթռման հետ նաև մի տկար շունչ ընկերանում էր թե չէ, ուրիշ խոսքով ճշտով b° էր, թե՞ bh° ...

լ և ղ ձայներից (որոնց երկուսն էլ ունեին 1 հնչումը), առաջինը պարզ լեզվային էր, ինչպես արդի եվրոպական 1, երկրորդը հետքմային (կատկային), իբր 1, և ոչ բնավ չ. այսպիսի հնչում ունեւր նաև հին ֆրանսերեն 1-ը. դրա համար էլ Կիլիկիայում միջին հայերեն տառադարձում էին ֆրանսերեն Renault անունը Ռընաղա (Ժ դարից առաջ).—հին լատինահայ բառացանկում (հրտ. Carrière, Paris, 1886) ղ տառադարձված է 1 կամ hl. այսպես՝ աղ—ahl. ապագայում 1 մնաց անսփոփոխ, իսկ ղ դարձավ կոկորդական:

լ = w (կիսաձայն ու-ի նման և ո՛չ բնավ v = վ):

յ = y (և ոչ բնավ h կամ անձայն):

Մյուս տառերը պահում են հին հնչումը:

Ըստ այսմ հայերենի ձայնական դրոթյունը բոլորովին նույն է կովկասյանների հետ. երկուսն էլ ունեն հինգ տեսակ բաղաձայն երեք կարգի. հին հայերենում պակասում է ղ ձայնը, որ զանազան աստիճաններով կա կովկասյան լեզուներում. հին հայերենը ունի ընդհակառակը երկու աստիճան 1 և երկու աստիճան ր, որոնք պակասում են կովկասյաններում. այս կետում հայերենը նման է բաակերենին, որ նույնպես ունի երկու 1 և երկու ր (Karst., Gesch. d'Arm. Phil., 11):

Առանձին նկատողության են արժանի ւ և ճ տառերը, որոնց և անցնում ենք:

ւ կիսաձայնի ճնչումը

Այս կիսաձայնի հնագույն հնչումն էր w, որ ու ձայնավորի նման մի բան էր: Ոչ վ (v) էր և ոչ ու (u), որովհետև եթե սրբանցից մեկն ու մեկը լիներ, Մեսրոպը նրա համար առանձին տառ չէր հնարի:

Ոմանք ընդունում են, թե այդ w կիսաձայնը երկու ձայնավորի միջև հնչվում էր v. ճիշտ չէ նաև այն, որովհետև Մեսրոպը աւագ, հաւատք բառերը այսպես չէր գրի այն դեպքում, այլ ալվագ, հավատք: Ուստի այս բառերն էլ հնչվում էին հնապես իբր հաուատք, աուագ: Այս հնչումը ես լսել եմ 1902—1904 թվականներին Շուշում, երբ ուսուցիչ էի թեմական դպրանոցում: Մեր հայտնի հայկաբաններից մեկը՝ Գարրիել վարժապետ Աուլիքիսյանը, որ Գանձակի գյուղերից էր, հնչում էր կանոնավորապես հաուատ (հավատ), հիուանդ (հիվանդ) և այլն: Երբ ես նրան հարցրի, թե դա

անհատական սովորություն է նրա մոտ, նա պատասխանեց, թե «Ոչ, դա մեր գյուղի հնչման սովորական ձևն է»:

ւ կիսաձայնի w հնչման իբր ապացույց կարող է ծառայել այն երևույթը, որ թեև գյուղ բառի հին ձևը (դեւղ) այժմ հնչում ենք գեվղ, բայց ոչ ոք չի հնչում գիւղ=գիվղ, այլ միշտ գիուղ կամ ցւղ. եթե այս բառի այս ձևի մեջ իւ ձայնավորի նման մի բան է, ինչու՞ հնագույն գեւղ ձևն էլ նույնը չպիտի լիներ:

Այսպես նաև ալիւր=ալևր, աղբիւր=աղբևր, հարիւր=հարևր և այլն:

Նաև այս կարգի բառերի հոլովման պատկերը նույն բանն է ապացուցում:

Սեռականի մեջ այդ բառերից ստանում ենք ալիւր—ալեր, աղբիւր—աղբեր, գիւղ—գեղջ և այլն. այս անկանոնությունը կարելի է բացատրել միայն հետևյալ ձևով. — ալիւր—հինը ալևր, որ համաձայն ր հոլովման (ոսկր—ոսկեր) պիտի լիներ ալևեր. սրա մեջ եւե զառնալով ե, ստացվեց ալեր:

Նույն ձևով նաև մյուսները, և հատկապես գիւղ=գեղ, սեռական *գեղ, որից *գեղ, որ բավարար չհամարելով, ստացավ նաև սեռականակերտ ջ մասնիկը (հմմտ. կից—կցոջ) և դարձավ գեղջ:

Եթե ւ երկու ձայնավորի միջև հնչվեր վ, կամ որ նույն է՝ ալևր կարգացվեր ալեվր, դժվար թե սեռականը դառնար ալեր:

ւ կիսաձայնի հնչումը ճշտելու միջոց կարող է ծառայել նաև հնագույն հայերենի եւ գրչությունը, որ հետո դարձավ իւ. այսպես բևր>բիւր, հարևր>հարիւր, ալևր>ալիւր, գեղ>գիւղ և այլն: Ոչ ոք չի մտածում այս երկրորդ ձևերի մեջ իւ կարգալ iv, այլ միայն iw կամ ü. կարելի չէ ասել, թե ev ապա դարձավ ձայնավոր ü. միայն երկբարբառն էր, որ կարող էր դառնալ հետո ձայնավոր, ինչպես որ աւ երկբարբառը դարձավ հետո օ:

Հայերը բառամիջում v բաղաձայնը չունեին, ինչպես չունեին նաև հույները, որոնք միջև իսկ բառասկզբում գրում էին Վաղարշապատ = Οὐάλαρσαπατ:

ն-ի ճնչումը

Հին հայոց մեջ ճ թույլ հնչում ունեւր. սրա ապացույցներն են՝ ա) Վրացերենի մեջ մտած այն բառերը, որոնք ունեն նախաձայն ճ, ջնջում են այդ ճ ձայնը. ինչպես՝ համբոյր>ամբորի, ցասակ>ասակի և այլն:

բ) Հայերենի մեջ բարդություն և ածանցման մեջ հաճախ ճ ջնջվում է. ինչպես՝ փողահար>փողար, ծխահալ>ծխան, ական-

ջանաա>ախանջատ, հայթ-հայթել>հայթայթել, հեծ-հեծել>հեծեծել, հեղ-հեղ>հեղեղ և այլն:

դ) Նույնիսկ հոլովման ժամանակ ի նախաձայնը արգելք է հանդիսանում ի ձայնավորի սղման. ինչպես՝ հիմն—սևո. հիման, և ոչ թե հման, ինչպես պիտի լիներ: Նույնիսկ հիմզ—բառի մեջ թեև ունենք սևո. հեզի, բայց դասականը լինում է հիմզերորդ և ոչ թե հեզերորդ. ինչպես սպասելի էր:

դ) Նույնիսկ հնդեվրոպականից հայերենի անցման շրջանում կան բառեր, որ առանց հ-ի անկման օրենքի, կարելի է բացատրել. ինչպես՝ swesōr «քոյր», որ դարձել է քեհուր, հ-ի ջնջումով քեուր, և որովհետև eu առկա է հայերեն ոյ (հմմտ. speut>փոյթ), ուստի և քեուր>քոյր:—Նմանապես հնի. west>գեհար, գահար, գար-ուց:—Հնի. est>եհար, եար, ար-իւց:

Հ-ի ջնջման շատ լավ օրինակ է երկերիւր «200», որ ծագում է երկի-հարիւր>երկի-արիւր>երկերիւր միջին ձևերով:

Ժամանակի ընթացքում հայերեն տառերը հետզհետե փոխեցին իրենց հնչումը. գիտենք որ արդի գրականի մեջ՝

1. Բաղաձայններից ե և է հավասար են, երկուսն էլ ունենալով միջին բացթիւն. բառասկզբում ե վերածվել է ye վանկին: Ժիշտ այսպես է նաև ումիներեն e, որ բառասկզբում կարգացվում է սովորաբար ye. օրինակ՝ ei este (կարդա՛ yel yeste) «նա է»:

ո ստացել է իրեն համազոր մի տառ ես (o), իսկ բառասկզբում ո դարձել է vo:

2. Երկրարբաններն ու եսարբանները ջնջվել են, բոլորն էլ վերածվելով բաղաձայնավոր վանկերի. այ=ay և ոչ ալ, եայ և ոչ èai և այլն:

3. Բաղաձայններից (խոսելով միայն գրական լեզվի մասին) շնչեղ խուլերը (փ, ք, ք, ց, չ) պահել են իրենց հին հնչումը, բայց խուլ պ, կ, ա, ծ, ց և թրթուռն ք, գ, դ, ձ, ջ խանդարվել են արեմտյան գրականում, առաջինները դարձել են ք, ց, ձ..., երկրորդները փ, ք, ք, ց, չ. արևելյան գրականում պ, կ, ա, ծ, ց մնում են խուլ (թերևս կորցրած շնչի մի մասը), իսկ ք, գ, դ, ձ, ջ հընչվում են ք, ց, ձ... (կամ նաև ըստ բարբառի bh, gh, dh...): Մյուս բաղաձայններից սուրղ (ս, զ), շչական (շ, ժ), կոկորդական (խ, հ), սնգային (մ, ն), ցնցուն (ն, ր) երկու բարբառներում էլ մնում են անփոփոխ հին հնչումով. այսպես նաև վ: Ի հավասարվել է վ ձայնի հետ և յ դարձել է բառասկզբում հ, բառավերջում անձայն

(բացի մի քանի միավանկ բառերից), և միայն բառամիջում պահել է յ=y ձայնը, այն էլ զուտ բաղաձայն և ոչ թե կիսաձայն: Վերջապես դ, որ հնապես լ էր, բոլորովին փոխվել և ստացել է կոկորդային չ ձայնը:

Հայերենի բաղաձայնները, ըստ իրենց թրթուման աստիճանների, ներկայացնում են հետևյալ կարգերը.

	բ	պ	փ
Երեք աստիճանով	գ	կ	ք
	դ	տ	թ
	ձ	ծ	ց
	շ	ժ	չ
Երկու աստիճանով	զ		ս
	ղ		շ
	ղ		խ
Մի աստիճանով	վ		
	մ		
	ն		
	լ		
	ն		
	ու		
Մի աստիճանով			հ
			ֆ

Այս բոլոր փոփոխությունների մասին գաղափար տալու համար բերենք մի փոքրիկ հատված գրաբար և աշխարհաբար:

1

ՍԱՂՄՈՍ ԴԱՌԹ ԴԵ

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. օրհնեցէք զՏէր ամենայն երկիր. աւետարանեցէք օր ըստ օրէ զփրկութիւն նորա: Պատմեցէք ի հեթանոսս զփառս նորա, լամենայն ժողովուրդս զսքանչե-

լիս նորա: Մեծ է Տէր և օրհնեալ է լոյժ. ահարկու է նա ի վերայ
ամենայն կոոց: Ամենայն կուռք հեթանոսաց դեք են... մատուցէք
Տեառն զփառս և զպատիւ... զփառս անուան նորա... ի գաւիթս
սրբութեան նորա. և խոովեսցի լեռնաց նորա ամենայն երկիր:...
Տէր թագաւորեաց... և դատի զժողովուրդս իւր ուղղութեամբ: Ուրախ
եղիցին երկինք և ցնծասցէ երկիր, զուարճասցի ծով լրիւ իւրով:...
Յերեսաց Տեառն զի գալ, և գալ նա ի դատել զերկիր:...

Լուաւ և ուրախ եղև Սիօն, և ցնծասցեն դատերք Յուդայ...
զի դու բարձրեալ ես ի վերայ ամենայն երկրի, լոյժ բարձրացաք
ի վերայ ամենայն կոոց: Ուք սիրէք զՏէր՝ ատեցէք զչարութիւն.
պահէ Տէր զանձինս սրբոց իւրոց, ի ձեռաց մեղաւորի փրկեսցէ
զնոսա: Լոյս ծագեաց արդարոց, ուղղոց սրտիւք եղև ուրախութիւն:
Ուրախ եղերուք, արդարք, ի Տէր, և խոստովան եղերուք յիշատա-
կի սրբութեան նորա:

2

ՍԱՂՄՈՍ ԳԱՌԹԻ ԴԵ

Ատրհնէցէ՛ք ըզՏէ՛ր հաւրհնութիւնն նոր. աւրհնէցէ՛ք ըզՏէր
ամենայն երկիր. առէտարանէցէ՛ք առ ըստ առբէ ըզփրկութիւնն
նորա: Պատմեցէք ի հեթանօսըս ըզփառըս նորա, համենայն ժօյօ-
վուրդըս զսքանչելիս նորա: Մէծ է Տէր էու աւրհնէալ է եօյժ.
ահարկու է նա ի վերայ ամենայն կոոց: Ամենայն կուռք հեթանօ-
սաց դէուք են... մատուցէք տէառն ըզփառըս էու ըզպատիւ...
ըզփառըս անուան նորա... ի գառիթըս սրբութեան նորա, էու խոօ-
վէսցի եկրէսաց նորա ամենայն էրկիր... Տէր թագաւորէաց... էու
դատի ըզժողովուրդըս իւր ուլլութեամբ: Ուրախ էլիցին էրկինք
էու ցնծասցէ՛ էրկիր, զուարճասցի ծով լրիւ իւրով:... Եկրէսաց
Տէառն զի գալ, էու գալ նա ի դատել զէրկիր:...

Լուաու էու ուրախ էլէու Սիօն, էու ցնծասցէն դատերք Եուդայ...
զի դու բարձրէալ էս ի վերայ ամենայն էրկրի, եօյժ բարձրացաք
ի վերայ ամենայն կոոց: Օլք սիրէք ըզՏէր՝ ատեցէք ըզչարութիւնն.
պահէ Տէր զանձինս սրբոց իւրոց, ի ձեռաց մէլաւորի փրկեսցէ
ըզնօսա: Լոյս ծագեաց արդարոց, ուլլոց սրտիւք էլէու ուրախու-
թիւնն: Ուրախ էլէրուք, արդարք, ի Տէր, էու խոստովան էլէրուք
եիշատակի սրբութեան նորա:

3

ՍԱՂՄՈՍ ԳԱՂԹԻ ԴԵ

Օրհնէցէք ըզՏէր հօրհնութիւնն նոր. օրհնէցէք ըզՏէր ամե-
նայն երկիր. ավետարանէցէք օր ըստ օրէ ըզփրկութիւնն նորա:
Պատմեցէք ի հեթանօսըս ըզփառըս նորա, համենայն ժօյօվուր-
թըս զըսքանչելիս նորա: Մէծ է Տէր ել օրհնեալ է հուլժ. ահար-
կու է նա ի վերայ ամենայն կոոց: Ամենայն կուռք հեթանօսաց
դէվք են... մատուցէք Տիառն ըզփառըս ել ըզպատիւ... ըզփառըս
անվան նորա... ի գալիթըս սրբութեան նորա, ել խոօվէսցի հե-
րէսաց նորա ամենայն երկիր:... Տէր թագաւորեաց... Ել դատի
ըզժօյօվուրթըս եուր ուղղութեամբ: Ուրախ եղիցին երկինք ել
ցնծասցէ երկիր, զըվարճասցի ծով լրիւ եուրով:... Հէրէսաց Տիառն
զի գա, ել գա նա ի դատել զէրկիր:...

Լըվալ ել ուրախ եղէլ Սիօն, ել ցնծասցէն դատերք Հուդա...
զի դու բարցրեալ ես ի վերայ ամենայն երկրի, հուլժ բարցրացաք
ի վերայ ամենայն կոոց: Վուլք սիրէք ըզՏէր՝ ատեցէք ըզչարու-
թեան. պահէ Տէր զանձինս սրբոց, եուրոց, ի ձեռաց մէղաւորի
փրկեսցէ ըզնօսա: Լույս ծագեաց արթարոց, ուղղոց սրտիւք եղէլ
ուրախութիւնն: Ուրախ եղէրուք, արթարք, ի Տէր, և խօստովան
եղէրուք հիշատակի սրբութեան նորա:

4

ՍԱՂՄՈՍ ԹԱՂԹԻ ԴԵ

Օրհնեցէք ըզՏէր հօրհնութիւնն նոր. օրհնէցէք ըզՏէր ամենայն
երկիր. ավետարանէցէք օր ըստ օրէ ըզփրկութիւնն նորա: Բատ-
մէցէք ի հեթանօսըս զփառըս նորա, համենայն ժօյօվուրթըս զըս-
քանչելիս նորա: Մէծ է Տէր ել օրհնեալ է հուլժ. ահարկու է նա
ի վերայ ամենայն զըոց: Ամենայն կուռք հեթանօսաց թէվք են...
մաղուցէք Դիլառն ըզփառըս ել ըզբաղիւ... ըզփառըս անվան նօ-
րա... ի քալիթըս սրբութեան նորա, ել խօսվէսցի հէրէսաց նորա
ամենայն երկիր:... Դէր թագաւորեաց... և թաղի ըզժօյօվուրթըս
եուր ուղղութեամբ: Ուրախ եղիցին երկինք և ցնծասցէ երկիր,
զըվարչասցի ծով լրիւ եուրով:... Հէրէսաց Դիլառն զի քա, և քա
նա ի թաղել զէրկիր:...

Լվալ եվ ուրախ եղել Սիլոն, եվ ցընծասցէն թըստերք Հութա...
 զի թու փարցեալ էս ի վէրա ամմէնայն երգրի, հույժ փարցըր-
 ցաք ի վէրա ամմէնայն դոց: Վուլք սիրէք ըզԴեր՝ աղէցէք ըզ-
 չարութեանն. բահէ Դէր զանցինըս սրփոց հուրոց, ի ձէւաց մէղա-
 վորի փրկեսցէ ըզնօսա: Լուլս ձաքեաց արթարոց, ուղղոց սըրգիւք
 եղել ուրախութեանն: Ուրախ եղէրուք, արթարք, ի Դէր, և խօս-
 տօվան եղէրուք հիշատաղի սրփութեանն նօրա:

Վերոհիշյալ 4 հատվածներից առաջինը գրաբարի զբնութիւնն է, որ ավանդված է մեզ թ՝ դարից (ավելի հին ձևագիր չկա): Երկրորդը՝ այդ հատվածի արտասանութիւնը և դարի հնչմամբ, բայց գրված այսօրվա մեր կովկասյան այբուբենի հնչման համա-
 ձայն. այնպես որ մեկը եթե այդ գրվածքը կարդա տառերի կով-
 կասյան այսօրվա հնչմամբ՝ կստացվի և դարի արտասանութիւնը:
 Երրորդը՝ թե ինչպես ենք կարդում մենք այսօր գրաբարը, մեր
 սխալ արտասանութիւնը: Չորրորդը՝ ինչպես է կարդում պոլսեցի
 գրագետը՝ ավելի սխալ արտասանութիւնը:

Տարբերութիւնը չափազանց մեծ է, մանավանդ պոլսական արտասանութիւնը, այնպես որ եթե մեր հայերից մեկը (և դա-
 րից) լսեր մեզ, ոչինչ չպիտի հասկանար: Այժմ ոչ ոք չի կարդում
 գրաբարը՝ հին հայոց հարազատ հնչմամբ: Միայն եվրոպացի հա-
 յագեաներն են, որ տառադարձում ու կարդում են այդ հարազատ
 հնչմամբ, որ և մեզ անհասկանալի է ընդհանրապես:

Բայց չպետք է կարծել, թե այս երևույթը հատուկ է միայն հայերենին: Այժմ Այն բոլոր ազգերը, որ ունեն իրենց հին լեզուն,
 որի հետ նաև իրենց նոր լեզուն, գտնվում են նույն դրութիւն մեջ:

Այս կողմից ամենից ավելի նման են մեզ հույները, որոնք
 ունեն իրենց հին հարուստ գրականութիւնը հին հունարենով, և
 մի նոր հունարեն՝ զանազան բարբառներով և տարբեր-տարբեր
 արտասանութիւնը: Նրանք էլ իրենց հին հունարենը կարդում են
 նորի արտասանութիւն համեմատ: Տալիս ենք այստեղ մի փոք-
 րիկ օրինակ հին հունարենից.

Ἐν ἀρχῇ ἐποίησεν ὁ Θεός τὸν οὐρανὸν καὶ τὴν γῆν. ἡ δὲ γῆ ἦν
 ἄορατος καὶ ἀκαταστεδαστος, καὶ σκότος ἐπᾶνω τῆς ἀβύσσου καὶ πνεῦμα
 Θεοῦ ἐπεφέρετο ἐπᾶνω τοῦ ὕδατος, καὶ εἶπεν ὁ Θεός· Եνδῆθη φῶς, καὶ
 ἐγένετο φῶς (Գիրք Ծննդոց, Ա. 1—3):

էն արխէ՛ էպսիլէսէն հո
 թէոս տոն ուանոն կալ տէն
 գէն. հէ զէ գէ էն աօրա-
 տոս կալ սկաուաստե՛ սս-
 տոս, կալ սկստոս էպանօ՛-
 տէս արխուսու: կալ պնե՛մա
 թէու էպէֆէ՛րէտո էպանօ՛-
 տու հիւդատոս կալ էլպէն հո
 թէոս. «Գենէթէտօ՛ ֆօ՛ս».
 լալ էգէ՛նէտո ֆօ՛ս:

էն արխի՛ էպի՛իսէն օ
 թէոս տոն ուանոն կե տին
 յին. ի գէ յի ին աօրատոս
 կե սկատաստե վաստոս, կե
 սկստոս էպանո տալ սվի՛ս-
 սու. կե պնեվմա թէու էպէ-
 ֆէ՛րէտո էպանօ տու իդա-
 տոս կե ի՛պէն օ թէոս. «Ենի-
 թիտօ ֆօս».
 կէ էյէնէտո ֆօս:

Հին հունարենի հնագույն հնչումը դեռ ավելի տարբեր է եղել.
 այսպես ֆ, խ բաղաձայնները հնչվել են փ, ք, երկու ձայնավորի
 միջև և հնչվել է զ, իսկ է զ հնչվել է ձ և այլն:

Նոր հունարենի հնչական տարբերութիւնը համեմատութիւնը
 հայերենի՝ շատ փոքր չէ, երբեմն նույնիսկ ավելի է: Այսպես՝ նոր
 հունարենում երկար ձայնավորներ այլևս գոյութիւն չունեն, η=ե
 և υ=իւ ձայնավորները հավասարապես դարձել են պարզ ի. նը-
 մանապես ει, օւ երկարբառները. այնպես որ նոր հունարենը է,
 η, υ, ει, օւ հավասարապես հնչում է ի (i): Բառասկզբի ձայնա-
 վորներից առաջ (h) հնչւումը իսպառ վերացված է: Բաղաձայն-
 ներից β=բ այժմ ամեն տեղ դարձել է վ.— γ=գ բաղաձայնը է
 և ի ձայնավորներից առաջ դառնում է միշտ կիսաձայն յ (y). այ-
 լուր γ=η (փափուկ). ժ=զ և ժ=ք հնչվում են անպիտան թվապա
 dh և th հնչմամբ:

Այս փոքրիկ հատվածի մեջ, որ վերևում մեջ բերեցինք, նոր
 հունարենը հնի համեմատութիւնը ներկայացնում է 41 տարբերու-
 թիւն:

Մրանից շատ տարբեր չէ նաև լատիներենը: Բայց այժմ լա-
 տիներեն խոսող Ժողովուրդ չկա (իսկական իմաստով): Կան մի-
 այն լատիներեն սովանական զանազան լեզուներ, որոնց հնչումը
 բնականաբար տարբեր է լատիներենից: Բայց ուր որ լատինա-
 կանը ուսման առարկա է, կարգացվում է լուրաքանչլուր ազգի
 մոտ իրեն հատուկ հնչումով: Օրինակ, լատիներեն Cicero հատուկ
 անունը իտալացիք կարդում են Չիչերո, ֆրանսիացիք՝ Սիսերո,
 գերմանացիք (սրանց հետևողութիւնը նաև սուսները)՝ Յիցերո,

խի իսպանացիք թվաա հնչումով՝ Thithero. մինչդեռ, ինչպես լեզվաբանները երևան են հանել, բառի հարադատ լատին հնչումն է Կիկերո, ինչպես ունենք և մենք (Կիկերոն): Հայերենը ունենալով ճոխ այբուբեն, կարող էր ներկայացնել կ, ա, ց ձայները իրենց բոլոր նրբութիւններով, եթե այբպիսի բան գտնվեր լատինների մոտ:

Ինչպես սասցինք, լեզվաբանները երևան են հանել թե՛ լատինների, թե՛ հայերենի հնագույն հարադատ հնչումը: Լատինների հարադատ հնչման գրեթե ոչ ոք չի հետևում. հունարենինը ընդունված է ամբողջ գիտական աշխարհից, միայն հուններն են, որ չեն ընդունում բնավ: Իսկ հայերենի հին հնչումը միայն կվոպացի հայագետներն են գործածում:

ՀԱՅԵՐԵՆԻ ԸՆԹԵՐՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ
(արևելահայ հին ուղղափոխություն)

ա ձայնավորը ամեն զիրքով կարգացվում է ա և ամենին հնչական տարբերություն չունի:

ե ձայնավորը բառակցքում բաղաձայնից առաջ թե՛ միավանկ և թե՛ բազմավանկ բառերի սկզբին հնչվում է ye=գերմաներեն j:

ե ձայնավորը բառակցքում ձայնավորից առաջ հնչվում է y=գերմաներեն j. և այսպիսով գտնում է բաղաձայն: Այսպիսի երևույթ չի պատահում հայերեն բառերի մեջ, բայց շատ սովորական է օտար բառերի համար. օրինակ՝ եադմուր «անձրև» (թուրքերեն), եարիուզ (Չեխովների մոտ մի գավառ), եափուցի թրք. «վերարկ», եոքոնամա, եոլուն-օլուք (Մոսա-լեռան գյուղերից), եոլուրթ թրք. «մածուց», ելլըն թրք. «գեղ», ելլըլթ թրք. «չրոնիճ», եուլուլի թրք. «բուռնցք», եուլաֆ թրք. «վարսակ», եեշիլըլաք (գետի անուն), եիբ անգլ. year «տարի», եիյսա անգլ. yeast «թթվածք»:

Ավելորդ է ասել, թե այս դեպքում եե=ye գոյություն չունի, որովհետև այդպիսի հնչյուն պատահելու դեպքում գրվում է եե. նույնիսկ այս վերջին ye հնչումը կարելի է գրել պարզապես ե. օրինակ՝ եշիլ և այլն:

Բառամիջում ե կարգացվում է միշտ և մաքուր e ձայնով. բոլոր ուրիշ անսակի նրբութիւններ գափառական են. գրական լեզուն այդպիսի բան չի ճանաչում: Բառավերջում ե չկա, այլ միայն ե:

ե, ի, օ բառերը ամեն դեպքում կարգացվում են e, i, o:

ու բառակցքում թե՛ միավանկ և թե՛ բազմավանկ բառերի մեջ կարգացվում է vo. միայն վ բաղաձայնից առաջ կարգացվում է միշտ o. օրինակ՝ ով=օվ, ովասիս=օվասիս, Ովր=Յվր (մարդու անուն), Ովրեսաես = Յվրեսաես (մարդու անուն), այսպես և Ովսաննա, ովկիալոս, ովան «ծովային գագան»:

ու կարգացվում է երկու բաղաձայնի միջև, կամ մի բաղաձայնից հետո (բառավերջում) միշտ u. օրինակ բուրգ, բքու—մի բաղաձայնի և մի ձայնավորի միջև ու կարգացվում է v. ինչպես՝ աղուես = aγves, աղուր = aγvor. երկու ձայնավորի միջև գոյություն չունի:

ը տառը գրվում է միայն բառակցքում և բառավերջում և կարգացվում է միշտ ը (ə): Բառամիջում ը չի գրվում, և սակայն հնչվում է բոլոր բաղաձայնների խճողման դեպքում: Գրվում է միայն այն դեպքում, երբ բառը բարդ է և երկրորդ կզրը սկսում է ը-ով. ինչպես՝ դաւընկեր, հաւընաիր և այլն: Օտար բառերի մեջ հաճախ ը չեն գրում, բայց լավ էր գրել, ինչպես՝ Գըզըմբը որ սառնց ը-երի պիտի գտնար քառասյին մի բան՝ Գըմբ:

Մանր.—Մի գերմանացի հայագետ! ? ծագելով հայերենը գտնում էր, թե նա չափազանց բաղաձայնաշատ է և իբր օրինակ մեջ էր բերում՝ tschmschtdnschenavor, մեր «չմշանջենաուր» բառն է եզնիկից: Գերմանացին մեր Յ ը ձայնավորները ջնջել է, պարզ բաղաձայնները գերմանական ձևով Յ կամ 4 բաղաձայններով է արտահայտել և այսպիսով մի վանկի վրա ստացվել է 14 բաղաձայն! Մինչդեռ պետք է գրել գիտական տառադարձությամբ՝ ՇՅ-məštənjenavor, ուր գտնում ենք մի բաղաձայնից հետո մի ձայնավոր:

Բաղաձայններից կարևոր է հիշել՝

1. յ բաղաձայնը, որ բառակցքում հնչվում է իբր լիակատար հ. օրինակ՝ յղի=հըղի: Որևէ փափկացում այս հ-ի հնչման մեջ (իբր Յ) գրական լեզվում ընդունելի չէ:—Բառամիջում, գտնըվելով երկու ձայնավորի միջև, կարգացվում է y. օրինակ՝ այո, հոյակապ, բայական, գոյութիւն, կոյուղի, խոյընքաց, բայիմաս, նայել, հայելի և այլն:—Երբ բառը բարդ է և երկրորդ կզրը սկսվում է յ բաղաձայնով, հնչվում է հ. անյոյս, անյիշատակ. բարեյիշատակ: Այս դեպքում նույնիսկ եթե յ պատահի երկու ձայնավորի միջև, դարձյալ հնչվում է հ. ինչպես՝ մրայոն «սև ունքերով», որ

շատեր անմտադրութեամբ կարգում են մրայօն, այսպէս նաև սեւայօն բառը:—Բառի մեջ, երկու բաղաձայնի միջև չի գտնվում և եթե ենթադրենք նույնիսկ անյղփական ձևով մի բառ, գարձալ կհնչվի: Ինչպէս՝ բայց, սակայն, յոյս, գոյն (այս դեպքում գրու- նը վում է միայն այ և ոյ երկրարբանների մեջ, որոնցից այ միշտ կարգացվում է այ, իսկ ոյ ունի երկու դեպք: Եթե ոյ երկրարբա- սից հետո եկող բաղաձայնը պատկանում է արմատին, այս դեպ- քում ոյ կարգացվում է ույ, իսկ եթե ոյ երկրարբանին հաջորդող բաղաձայնը արմատական չէ, այլ որևէ հարադիր մասնիկ, ոյ հնչվում է օյ: Ըստ այսմ գոյն եթե նշանակում է «երանդ», կար- գացվում է գուն, իսկ եթե նշանակում է «գոյացութունը», կար- գացվում է գոյն: Նաև հոյն եթե պողի անունն է (հուն), կարգաց- վում է հոյն, իսկ երբ նշանակում է սարսափը, կարգացվում է հօյն: Ինչպէս՝ Սկսաւ ահն և հոյն երբայ առաջի Յուդայ և եղ- բարցն (Ս. Մակար. Գ, 13):

Այսպէս նաև խոյս կարելի է կարգալ խոյս «խոյս տալ, խո- ստիկել» և կամ խօյս «խօյեր» (խոյս գոհել): Այսպէս է նաև հոյն բառը, որ գործածված է Փարպեցու թղթում (էջ 202) և ոմանք կարգում են հոյն (իբրև դերանուն սոյն, նոյն) և ոմանք էլ կար- գում են հոյն (նոյ անուն անձը): (Այս մասին տե՛ս Հայոց անձ- նանունների բառարան, Գ, 84): Թոյն բառը եթե սպանիչ զեղն է նշանակում, կարգացվում է թոյն, իսկ եթե թ տառի անունն է, կարգացվում է թօյն:

Բառավերջում յ գտնվում է միայն ա և ո ձայնավորներից հետո: Եթե ունենք թեյ բառը, զա բոլորովին նոր ձև է և ստացել է յ բաղաձայնը, չջրոթեիլու համար թե շաղկապի հետ: Իսկ հայ- հոյ և վոյ նորաձև բացականչութուններ են:

ա-ից հետո գտնված ժամանակ, եթե բառը միավանկ է և գոյական կամ ածական է, յ հնչվում է յ. այսպէս՝ ա՛յ, բայ (ver- be), կայ (կացարան), հայ, հայ (թուշունը), յայ (բացականչութուն), նայ (թաց), չայ (թեղ), պայ (ողի), աայ (գրողակ), վա՛յ: Իսկ եթե բայ է, վերջաձայն յ-ն չի հնչվում. այսպէս՝ բամ, բաս, բայ (ասում է), գամ, գաս, գայ (գալիս է) կամ, կաս, կայ (գանվում է), տամ, տաս, տայ (տալիս է):

Եթե բառը բազմավանկ է, բառավերջի յ-ն անձայն է մնում. ինչպէս՝ շղթայ, Ղուկայ, հսկայ և այլն: Այս դեպքում, եթե բառը

բարդ է և նրա երկրորդ եզրը միավանկ է, յ-ն հնչվում է բառ օրինի. ինչպէս՝ մակրայ (յ հնչված), ենթակայ (յ չի հնչվում):

ո ձայնավորից հետո յ ունեցող միավանկ բառերն են գոյ, խոյ, կոյ, հոյ, նոյ որոնց վերջաձայն յ-ն հնչվում է. իսկ եթե գոյ բայ է (գոյութուն ունի, կայ), հնչվում է գօ: Բազմավանկ բա- սերի վերջում յ անձայն է մնում, ինչպէս՝ ազգոյ, անգոյ և սե- սականի վերջում մարգոյ, լուսոյ, յուսոյ և այլն:

Ո (ոՎ) բառի հոլովական ձևերն են՝ եզ. սեռ. ոյբ, հոգ. ոզ. ոյբ, սեռ. ոյց, որոնք հնչվում են ույբ կամ վույբ (Վանի բարբա- ոսով վիր), ույբ կամ վույբ, ույց կամ վույց:

Թեև վերևում ասացինք, թե ոյ երկրարբանին հաջորդող բաղաձայնը արմատական չլինելու դեպքում ոյ կարգացվում է օյ, իսկ արմատական լինելու դեպքում ույ, սակայն ընդհակառակը բասավերջում բոլոր սեռական ոյ ձևերը հնչվում են հոգ ստանա- լու դեպքում ույ. ինչպէս՝ մարգոյն, հոգւոյս, լուսոյդ (մարգույն, հոգվույս, լուսույդ):

Քն բառը գրվում է թե՛ բո և թե՛ բոյ. երկուսն էլ հնչվում են բօ, սակայն երբ հոգ գրվի՝ ոյ հնչվում է ույ. այսպէս՝ բոյս, բոյդ, բոյն (բույս, բույդ, բույն): Նոր հայերենում այս բոլոր սեռականները ստացել են ու ձևը. մարգոյ=մարգու, բո դերանու- նը արևելյան հայերենում մնում է բօ, իսկ արևմտյան հայերենում՝ բու:

Չ. գ. ս. շ բաղաձայնները բառակզրում գտնվելու ժամա- նակ հնչվում են ըգ, ըս, ըշ կամ զը, սը, շը. սրանց համար բա- ցարձակ կանոն չկա: Այտրենան, Քննական քերականութիւն, էջ 367, ընդհանուր կանոնով ասում է, որ եթե այդ բաղաձայններից հետո գտնվի բ, պ, փ, գ, կ, ք, դ, տ, թ ձայներից մեկը (այսինքն պալ- թականների Յ աստիճաններից որևէ մեկը), այդ դեպքում գ, ս, շ բաղաձայններից առաջ գրվում է սուղ ը. ուրիշ դեպքում ը ձայ- նավորը մտնում է նույն բաղաձայններից հետո:

Այս ընդհանուր կանոնից հետո քննենք լուրաքանչլուրը ման- բաման:

ա) Այն դեպքում, երբ գ նախդիր է, անպատճառ հնչվում է ըգ. օրինակ՝ զնետ, զկնի (արմատը կինք), զգնալ, զգլխել, զըգեա- նել, զկծել, զմածիլ, և նմաններ: — Այս խմբին են պատ- կանում, ինչպէս հայտնի է, հայցական, պատմական և պարաու- կան հոլովները: Երբեք չի կարելի հնչել զըսեղան, զըկամս, զըբանս և այլն, թեև ձևագրերում այդպիսի սխալ գրչութուններ կան:

բ) Ամեն զեպքում երբ զ-ից հետո գտնվում է մի սղյալ ձայնավոր (ի կամ ու), անշուշտ հնչվում է զը. օրինակ՝ զըրկել (զուրկ), զըրկել (զուրկ), զըստափոկ (զիստ), զըրաթօս (զուր), զըսպել (զուսպ), զըղջալ (զիղջ) և այլն: Այս կարգի բառերը մեծ մասամբ իմացվում են, երբ նկատում ենք, որ զ-ից հետո կա երկու բաղաձայն:

գ) Այլընչյանի կանոնի համաձայն զ գտնվելով ր, պ, փ, Գ, կ, ք, դ, տ, ք բաղաձայններից առաջ, հնչվում է ըզ. այսպես են զբաղիլ, զբօսնուլ, զգալ, զգօն, զգածիլ, զգայո, զգեմուլ, զգեստ, զգոյջ:

դ) Ուրիշ բաղաձայնների առաջ զ հնչվում է զը. այսպես են զըննել, զընչիլ, զմրաղ, զմրբիլ, զմրուլ, զրոյց, զգուլի, զլանալ, զողալ, զըմելի(ն), զմուսել, զմրիլ, զմրուխտ, զնգալ, զնգան, զղեար, զմուս, զմոնիտեան, զոնի, զղջալ, զնից (զննել), զրաւ, զրեանգ, զրահ, զրահանք:

Գ ի ա ո ղ ու թ. 1.— Անստույգ է գլուխելի բառը, որ գործ է ածել մի անգամ Հովհաննես Գառն և որի դեմ մի այլ ձեռագիր ունի գլուխելիս. թե՛ իմաստը և թե՛ ընթերցման ձևը անհայտ է:

Գ ի ա ո ղ ու թ. 2.— Վերի գ) կանոնին հակառակ է զլեռ, որ կարդացվում է զըկեռ, ըստ Ղարաբաղի բարբառի զըկըռ, և որի հումանիշն է զղյար «մուշմուլա»:

Գ ի ա ո ղ ու թ. 3.— Վերի գ) կանոնին հակառակ է զմայլիլ, որ հնչվում է ըզմայլիլ, իբր թե արմատը լիներ մայլիլ և սաստկա-կանը՝ ըզմայլիլ:

ս նախաձայնի ընթերցման կանոններն են.

ա) զ նախդիրը խուլ բաղաձայնի մոտ դառնում է ս և այս դեպքում կարդացվում է ըս. օրինակ՝ սքափիլ, սքափառումն, սականջնեմ (սկանջով լսել), ստածել, սփածանել, ստեղել, սփա-րիլ և այլն:—Սփռել բառը թեև կազմված է զ>ս սաստկականով, բայց հնչում է սքափել: (Վեճ է հարուցված այն մասին, թե այս բառը պե՞տք է կարդալ ըսփռել, տե՛ս Արմատական բառարան, սփիռ բառի տակ).—Ղ մասնիկով կազմված ունենք նաև զմեղկիլ, որի երկրորդ ձևն է սմեղկիլ (թեև մ խուլ չէ):

բ) Երբ ս-ից հետո գտնվում է մի սղյալ ձայնավոր, հնչվում է սը, ինչպես՝ սգալ (սուգ), սկաթառն (սիկ), սղել, սղոց (սուղ), սրբել (սուրբ), սնամեջ (սին), սնանիլ (սուն), ստաթօս (սուտ) և այլն:

գ) Ըստ Այլընչյանի վերահիշյալ կանոնի, երեք պալթականների աստիճանները (ինը բաղաձայն), եթե հաջորդեն նախաձայն ս-ին, այս վերջինը կարդացվում է ըս. ինչպես՝ սկալինեան, սկահ, սկահակ, սկայ, սկաւ, սկաւառակ, սկել (նսկել), սկեսուր, սկետայ, սկիզրն, սկին, սկիթոն, սկիսլառս, սկիւղ, սկիւռ, սկնդիկ, սկունգ, սկուռ, սկուտղ, սպարաթ, սպայ, սպանանել, սպառել, սպիտակ, սպունգ, ստահակ, ստամբակ, ստամքս, ստանալ, ստեղծել, ստեղջ, ստիպել, ստույգ, ստուեր, սփոփել, սքանչանալ, սքեմ (ոմանք սխալ են կարգում՝ սքեմ), սքոզել (կարդացվում է ըսքոզել՝ նախ որովհետև ս նախդիր է, երկրորդ, որովհետև ք-ից առաջ է. ուստի շատ սխալ է ոմանց սքքոզել ընթերցումը), ստնանել, ստնգանք, ստրուկ, ստիք, ստնուռ, ստրջանալ և այլն (այս բառերի մի մասը հունարենից փոխառություն է և պահում է հունարենի հընչ-ման ձևը. այսօր էլ այդ կարգի բառերը հնչում ենք նույն ձևով. ինչպես՝ ստատուտ, սպիրտ, սկարլատին, ստերիլիզացիա, նուլնիսկ Ստամբուլ): Կան նաև պարսկերենից փոխառյալ բառեր, որոնք թեև պարսկերենում si հնչումն ունեն, բայց հայերենում դառնում են ըս. ինչպես՝ սպայ < sipāh, սկաւառակ < sikāre:

դ) Ըստ Այլընչյանի կանոնի, սույն ինը բաղաձայններից դուրս ուրիշ որևէ բաղաձայնի մոտ նախաձայն ս հնչվում է սը. ինչպես՝ սլանալ, սլաք, սլն, սխար=սղար, սխուր, սնակ (աշտարակ), սղանգն, սղոխ (բարակ քամի), 2. բարակ ստույց, սմա, սմին (սոյն բառից), սմնակ ամպատակ, սմկիլ, սնար, սնգիլ, սնգոյր, սըն-զընգուր, սնգիկ, սնգոն, սնգուս, սնգուկ, սնունգ սրահ, սրինգ, սրուակ, սրթալ, սրսկապան, սկռել, սխտար, սխրանք, սմրակ, սմրուլ:

ե) Այս կանոններին հակասում են հետևյալ բառերը. սքար «ձիու սփոռց», սքեր «վայրի նարդոս», սկել, սփռել (տես վերը), սպտուր, սպրդիլ, սպրկիկ:—Ստաշին երկուսը (սքար, սքեր) իսկապես հայտնի չէ, թե ինչպես պե՞տք է կարդալ. սփռել բառի մասին խոսեցինք վերը (արմատն է ըսփիւռ), վերջին երեքը թերևս ս-ից հետո երկու բաղաձայն ունենալու պատճառով.—ստացուցա-նել երկու տարբեր իմաստ ունի. եթե նշանակում է «ստանալ տալ», կարդացվում է ըստացուցանել, իսկ երբ նշանակում է «սուտ հա-նել», կարդացվում է սը-տացուցանել, սկել երբ նշանակում է «հըս-կել», կարդացվում է ըսկել, իսկ եթե նշանակում է «ջրի տակ գնալ», կարդացվում է սըկել:

2 նախաձայնի ընթերցման կանոններն են.

ա) Երբ շ-ից հետո ձայնավորի սղում կա, բնականորեն կարգացվում է շը և ոչ երբեք ըշ, նույնիսկ այն դեպքում, երբ շ-ից հետո պայթական բաղաձայն կա, ինչպես՝ շքեղ, (շուք), շլանալ (շիւ), շնալ (շուն), շնչել (շունչ), շրջել (շուքջ) և այլն:

բ) 2 նախաձայնից հետո չենք կարող գտնել ը, գ, դ պայթականները, որովհետև շ խուլ է, իսկ պայթականները թրթռուն:

գ) Այտընյանի օրենքի համաձայն, ա, կ, ա, փ, ք, ք, բաղաձայններից առաջ գտնվող շ-ն պետք է արտասանվեր ըշ, բայց այս բաղաձայններով ունենք միայն մի կողմից շկաւել, շկօթակ, շաւմբաձայնութիւն, շապել, շաեմարան, շոոգանեմ, որոնք կանոնավոր են, իսկ մյուս կողմից՝ շքքել, շկրիւ, շպար, շպետ, շպտիւ, շվանալ, շփոք, շքթանք, շքթել, շքողիւ, որոնք անկանոն են: Ձայնավորի ջնջման պատճառով կանոնավոր են համարվում շպարար (շիպ), շպեղ (շիպ), շփել (շուփ) և այլն: Ընթերցման կողմից անորոշ են շթուք, շքայլել: — Շպար բառը մենք արտասանում ենք ըշպար, բայց ավելի սովորական է ըշպար: Գուրյանի մի տողը՝ Որ կը շպարե դեմքը լուսնույն (տե՛ս տպ. Երևան, 1947, էջ 47), թեև ունի ըշպարել ձևը, բայց դա չափի համար է:

դ) Մնացյալ բաղաձայնները (լ, ղ, ն, մ, ց, չ, ո, ր) այս կամ այն պատճառով հնչվում են շք. ինչպես՝ շլան «մոխիր», շլմորիմ, շղարշ, շղթայ, շղիւ, շղուարարոյ, շղուականք Վերջիկ», շնել «քամի», շմալ «սիրտը խառնել», շմբոց «տոպրակ», շմորի «շփոթվել», շնթել «շողոքորթել», շնորն, շնչել, շշի ստուրբաք ծառը», շշունջ, շշուկ, շշել, շաալ, շաա «մեզը բռնված», շաինգ, շանչել, շանիւն, «չրաման», շանչանց, շքեշ, շքշիւն, շքոշակ «բերանակապ», շքշիւ, շքտուլ:

3. Երբ բաղաձայնը բառի սկզբում և միջում իր հնչումը զգալի կերպով պահում է, բայց բառավերջում ր բաղաձայնից հետո շատ տկար է հնչվում, այնպես որ տգետ գրիչները հաճախ չեն գրում, ինչպես աշխարհ, ցանապարհ և այլն:

4. Երբ բաղաձայնը ամեն տեղ իր ճիշտ հնչումը պահում է, բայց թավ բաղաձայններից առաջ հնչվում է խ: Ինչպես՝ քուլք, աղբատ, քաղցած, մինչև անգամ եղբայր, աղբյուր, որոնց մեջ ր թավ հնչվելով, նախորդ ղ ձայնը դառնում է խ:

5. Ընդհանրապես խոսելով, երբ ր-ից հետո գալիս են ր, գ, դ, ձ, շ թրթռուն բաղաձայնները, այս վերջինները հնչվում են թավ, ինչպես՝ երգ, երբ, բորբոքել, արդեն, երգիկ, որձ, որջ, ժողովուրդ և այլն: Կան մարդիկ, որ այս դեպքում պայթականի ճիշտ հնչումը

պահում են, օրինակ, հնչում են ժողովուրդ (d) և այլն: Այս անսովոր հնչման սկիզբը գրել է «Մշակ»-ի խմբագիր Գրիգոր Արծրունին, որ հայերեն չիմանալով և հայերենի խմբագիր գառնալուց հետո սխեղով սովորել, ուղղագրութունը ճիշտ պահելու համար, ստաջին դասից սխեղ էր հնչել վերի ձևով:

6. Երբ բաղաձայնը անկախ չէ, բառասկզբում չի գտնվում և եթե միջնադարյան բանաստեղծները սարքել են լիւք, լովիւ և նման բառեր, այդ նրա համար է, որ ոտանավորի մեջ և նախաձայնով տողեր ունենան: Բառամիջում և գտնվում է միշտ երկու ձայնավորի միջև և կարգացվում է վ. կարող է երբեմն գտնվել բաղաձայնի և ձայնավորի միջև, բայց դարձյալ կարգացվում է վ. ինչպես՝ աղւոր (արևմտահայ բարբառով), իսկ արեւելահայ բարբառով կրավորական բայերի մեջ հաճախ գրում էին հաւարել, երգել և այլն, փոխանակ գրելու ու. այսպես նաև Երևանգ, Ասուած և այլն: Բառավերջում ունենք միշտ ձայնավորից հետո, որ հնչվում է նույնպես վ. ինչպես՝ հաւ, ցաւ, եղաւ, թիւ, անիւ, հովիւ: Այս դեպքում իւ ձայնախումբը երկգիմի է. եթե նա գտնւում է մի բաղաձայնից առաջ, որ արմատին է պատկանում, հնչվում է ինչպես ֆրանսերեն և և գերմաներեն և. ինչպես՝ ձիւն, սիւն, արիւն, արգարութիւն, հիւր, բիւր, գիւղ, հիւղ և այլն: Իսկ եթե վերջին բաղաձայնը արմատական չէ, այն ժամանակ իւ կարգացվում է իվ. այսպես՝ թիվն (= թիվըն), արծիւս (= արծիվըս), անիւզ (= անիվըզ): Նկատելի է, որ այս վերջին պայմանում գործ կարող ենք ունենալ ա, գ, ց հոգերի կամ հոգնակի հայցական և վերջավորութւյան հետ: Այս հանգամանքը շփոթութիւն է առաջացնում ընթերցման մեջ և ընթերցողին է մնում իմաստի համաձայն որոշել ընթերցումը: Այսպես, թիւն եթե նշանակի «թիւն», պետք է կարգանք թնն, իսկ եթե թիւ (թիվ) բառի որոշյալն է, կարգում ենք թիվըն, տիւն եթե ա տառի անունն է, կարգացվում է անն, իսկ եթե տիւ (տիվ) թոր, ցերեկ» իմաստով է, կարգում են տիվըն: Այս շփոթութւյան պատճառով է, որ Ալիշանը իր Հայրուսական մի բառ մեկնել է «սէզ, կնիւն», մինչդեռ, ինչպես Նորայրը իր Հայրուսակի քննադատութւյան մեջ ցույց է տալիս, այս վերջին բառը պետք է կարգալ կնիւ-ն, որով հասկացվում է «ճանճը» և բույրը դառնում է ճանճ: Գրիգոր Մազիսարոսի «Մրգուզ փանաք» (Հանդէս ամսօրեայ, 1923, էջ 241—256) ոտանավորի մեջ 14-րդ տողում կարգում ենք. Իւղագործ կիւզ կածնական, որի կիւզ բառը երկար ժամանակ կարգում էի կնզ, և ամենևին իմաստ չէի ստա-

նում, բայց հիմա կարդալով կիւ-դ «խեժդ», ստացա իսկական իմաստը. իւղագործ կիւ ասելով հեղինակը հասկացել է «թանաք»:

7. Բառի վերջում գտնված ր, գ, դ, ձ, ջ թրթռուն բաղաձայնները այժմ գրական լեզվի մեջ հնչվում են թավ: Սրա հիմքը ժողովրդական բարբառներն են. արևմտյան գրականը արդեն նոր տառադարձության համաձայն այդպես էլ պիտի հնչեր, բայց արևելյան գրականն էլ մեծավ մասամբ նույն ձևով է կարդում. այսպես գ.— կարագ, մարագ, պատարագ, սարկաւագ, գոգ, հոգ (հոգս), շոգ...

- դ.—օդ,
- բ.— Յակոբ, Յոբ, Սերոբ, Քերոբ:
- ձ.—օձ,
- ջ.—աջ, առաջ, մեջ:

Թրթռուն հնչյունը պահվում է շատ հազվադեպ դեպքերում, և այն էլ հատկապես այն բառերի մեջ, որոնք ժողովրդի մեջ չեն մտած. մոգ, բագ, յոգ, քաջ, անհատ, անագ... Այս բառերի ընթերցումն էլ հաճախ տատանվում է: Այս բանը այնպես է զարգացել արևմտահայերի մեջ, որ մինչև անգամ հեգ, փափագ բառերը միշտ գրում են հեք, փափաք, ինչպես գտնում ենք նաև միջնադարյան ձևագրերում, ուր կա նաև արուգ = արուք:

8. Չայնափոխությունը բառավերջից սկսելուց հետո անցել է նաև բառամիջին. չկա մեկը, որ թագավոր բառը թաքավոր չհնչի. շան հաջել բառը չ հնչումով այնպես սովորական է դարձել, որ շատերը գրում են հաչել և հաջել գրություն մասին դադափար էլ չունեն. այսպես նաև խարել և խարերալ, որոնք հնչվում են խափել, խափեփա:

Դարձյալ ավելորդ է խոսել արևմտահայ գրականի մասին, ուր բոլոր բառերի գրության միջին բաղաձայնը մոտավորապես կարդացվում է թավ, ըստ արևմտյան տառադարձության:

* * *

Այժմ առնենք բարբառների ձայնական գրությունը: Այստեղ չենք կարող բնականաբար վերցնել լուրաքանչլուր բարբառ առանձին-առանձին և նկարագրել նրա ձայնական գրությունը: Դա ընդհանուր բարբառագիտության և մասնավոր ուսումնասիրությունց գործն է: Մենք այստեղ կհավաքենք և կդասավորենք այն բոլոր ձայները, որ այս կամ այն բարբառի մեջ գոյություն ունեն. ուրիշ

խոսքով կտանք բոլոր բարբառների ձայնական գրության համախապատկերը:

Չայնավորներ (17 հատ).

ա, ա̇, ա̈, ա̉, է', Ը, Ը', Ը, ԸԷ, ի, ի', օ, ու, իւ, էօ, էօ'.

Երկրաբառներ (21 հատ).

յ կիսաձայնով կազմված.

աճուն—իè (իէ' = է).

նվազուն—áí, éí, ə'í, ii, úí, óí (աէ, էէ, ԸԻ, իէ, ուէ, օէ).

ւ կիսաձայնով կազմված.

աճուն—uá, uè, úo, uð (ուա, ուէ, ո, ուէօ).

նվազուն áu, iu, úo, ð (աւ, իւ, օւ, էօու):

Երկու ձայնավորով կազմված.

աճուն ձé (ըէ').

նվազուն—áə, íə, ðə, úo, óə (ա, իւ, էօը, իւօ, օը).

Եռաբառներ (3 հատ).

iey (է), uoi (ուօ), ðuo (էօու).

Բաղաձայններ (49 հատ).

բ, բ', պ, փ.

գ, գ', կ, ք.

գ', գ'', կ', ք'.

դ, դ', տ, թ, տ'.

ձ, ձ', ծ, ց.

ջ, ջ', ճ, չ.

դ, ս, ժ, շ.

խ, դ, դ', հ, ի, հ, հ', '.

լ, ր, ո, ւ, ւ', ւ', ւ', ւ'.

վ, ֆ, մ, ն.

Մի քանի բացատրություններ այս ձայների մասին.

Չայնավորներից m (á) միջաձայն է a և e ձայնավորների.—

ա(á) միջաձայն է a և o ձայնավորների, որ գտնվում է Վանա բարբառում.— ա (a) ռեզալին a ձայնավորն է, որ գտնվում է հաճախ Ասլանբեգի ենթաբարբառում և Պոլսի բարբառում (մանր, ծանր, սանր).— է' = բաց é ձայնավորն է, գտնվում է Ասլանբեգում, Սեբաստիայում (օրինակ՝ չէ > չմ).— Ը' = բաց աստիճանն է ə ձայնավորի, որ գտնվում է Չեթունի գավառաբարբառում. Ը և ա ձայնավորների միջին աստիճանն է կազմում (բարբառագիտության մեջ, էջ 200, դրած եմ ը ձևով).— ր ներկայացնում է փակ ə, գրե-

թե ինչպես ուսերենն է. գտնվում է Մարագալի բարբառում.— ըէ Ղարբաղի բարբառին սովորական մի հնչյուն է. օրինակ՝ մըէս «միս», վըէզ «վիզ», կասկածում եմ, որ լինի ըէ երկբարբառ-ավելի ճիշտ ձայնավոր է (ուստի և տարբեր է ըէ՝ երկբարբառից).— ի՛ = ի (բաց ի) ձայնավորն է, որ հատուկ է Մարագալի բարբառին և ը և ի ձայների միջին աստիճանն է, որ անվարժ ականջը երբեմն ը է լսում և երբեմն ի.— էօ՛ = օ (բաց օ). հատուկ է Վանա բարբառին. արտասանվում է մոտավորապես էօը (օօ) խմբի նման և կարող է երկբարբառ էլ համարվել. նույն ձայնի ավելի բաց աստիճանն ունի Ասլանբեգի գավառականը, որ ավելի օա (էօա) հնչումն ունի:

Երկբարբառները գտնվում են գլխավորապես Այսարիայի, Մարագալի, Սիրիայի և Անտիոքի բարբառներում: Սրանց հնչումը նկարագրելու առանձին կարիք չկա, որովհետև գրութայն ձևից արդեն հասկացվում է: Ենթադրաբար գտնում ենք թեքս Անտիոքի գավառականում. հմմտ. բուօ՛յնն ի «բոնն է», յեօուօը (yōuoi'ə) «լոթը», եթե առաջինի մեջ յ բաղաձայն չէ և երկրորդը երկավանկ չէ: Հաստատ է սակայն եւ (լեւ) Սաչալայի բարբառի սև (sieu) բառի մեջ:

Բաղաձայններից բ, գ, գ', դ, ձ, ջ, պարզ թրթռուն են, բ', գ', գ', դ', ձ', ջ' շնչեղ թրթռուն. մյուսները պարզ խուլ և շնչեղ խուլ (թավ). շնչեղ թրթռուն ձայները գտնվում են հալ բարբառների ամենամեծ մասի մեջ. այսպես Երևանի, Նոր-Ջուղայի, Կարինի, Մուշի, Ողմիլի, Սարբերդ-Երզնկայի, Շապին-Գարահիսարի, Համշենի, Սոտրջուրի, Կիլիկիայի, Սվեդիայի (Մուսա-լեռան), Արաբկիրի, Ակնա, Սեբաստիայի, Նիկոմիդիայի, Սուչալայի բարբառներում: Կոկորդային բաղաձայնների քմայնացած ձևերն են ներկայացնում գ', գ', կ', ք', որոնք (ամբողջ շարքով կամ մասամբ) գտնվում են Ղարբաղի, Շամախի, Ագուլիսի, Վանա, Տիգրանակերտի, Անտիոքի, Մարագալի, Սուլի և Սալմաստի բարբառների մեջ:— ա, (ի՛) ձայնը պատահում է Յդնալի գավառականում (ինչպես՝ ա, նեյ «դնել»):

դ՛ կոկորդականը գտնվում է Թիֆլիսի, Աստրախանի, Ղզլարի, Տիգրանակերտի, Սվեդիայի բարբառներում, նաև Ողմիլի բարբառում, ընդհանրապես օտար բառերի մեջ, բայց նաև բնիկ հալ բառերում. ինչպես՝ Տիգրանակերտի բարբառով՝ աղ՛րաբ < արաբերեն՝ aqrab «կարիճ», դ՛ալը < արաբերեն՝ qalb «կեղծ», դ՛ուղ՛դ՛ու «կիռ», Տրփղիսի բարբառով՝ դ՛ափա < արաբերեն՝ qahva «սուրճ», վուրղ՛անց

«որտեղից», հաղ՛աց «այտեղից», Աստրախանի բարբառով՝ դ՛ուվաբ < թուրքերեն, արաբերեն՝ quvvat «ուժ», Ղզլարի բարբառով՝ Ղ՛զլար (հենց քաղաքի անունը), Ողմիլի բարբառով՝ լող՛անալ «լողանալ», բիւղ՛ «բողոք», Սվեդիայի բարբառով՝ դ՛ըրգիլա «գործելի, ածուխ», մեղ՛ «մեկ»:

յ թրթռունն հ ձայնն է, որ փոխանակում է հին հայերենի բառասկզբի յ ձայնը և գտնվում է գանազան բարբառների մեջ. այսպես՝ Նոր-Ջուղայի, Կարինի, Մուշի, Շապին-Գարահիսարի, Արաբկիրի, Սեբաստիայի բարբառներում: Նույնիսկ զրական լեզվով խոսելու ժամանակ, այս բարբառի մարդիկ սկզբնատու յ-ն արտասանում են յ, որ բոլորովին տարբեր է հ ձայնից և զրա համար էլ, ոչ միայն չեն շփոթում հ և յ իբրև հետ, այլև այս պատճառով հակառակ են ուղղագրական բարեփոխության մեջ նախաձայն յ վերածելու հ-ի:

հյ ձայնը, որ երբեմն գրում եմ յն կամ հյ ձևով, դերմաներեն լch ձայնի հնչյունն ունի, միայն նրանից ավելի նուրբ. զբաղվում է Ղարբաղի և Վանի բարբառներում (ինչպես Ղարբաղի բարբառով՝ բրիյննակ «արեգակ», Վանա բարբառով՝ այնիեօր «աքլոր»):

հօ և ՛ արաբերեն շ և չ ձայներն են, որ գիտի Տիգրանակերտի բարբառը արաբերենից փոխառյալ բառերի մեջ. ինչպես՝ աղ՛րաբ < արաբերեն՝ aqrab «կարիճ», Կօմր < արաբերեն՝ օմր «կյանք», գա՛րաբ < արաբերեն՝ sa'tar «ծոթրին», հ՛ալվա < արաբերեն՝ halva «հրուշակ», ուննաբ < արաբերեն՝ unna «հունար»:

լ ներկայացնում է խուլ լ, որ գտնվում է Ալաշկերտի ենթաբարբառում՝ քրդերենից փոխառյալ բառերի մեջ միայն:

լ՛ ներկայացնում է փափուկ կամ քմային լ՛, որ գտնվում է Նոր-Ջուղայի և Տիգրանակերտի բարբառներում. օրինակ՝ Նոր-Ջուղայի բարբառով՝ գ՛լ ուխ «գլուխ», բել՛ «թեկ», Տիգրանակերտի բարբառով՝ ուլ՛ «ուլ», բլ՛ ուխ «գլուխ», փուլ՛ք «բողբ», լ՛վմնղ լրվանալ» և այլն:

Ֆ միջին հայերենի և նոր բարբառների մեջ առաջացած մի ձայն է. հին հայերը չունեին այս ձայնը, և երբ կարիք էր լինում տառագրվել օտար ազգերի ֆ ձայնը, հնագույն ժամանակ դնում էին հ, խ. այսպես՝

պարսկերեն frasax > հրասախ (հետո՝ փարսախ).
» framānā > հրաման.

խուլ՝ խցումի ժամանակ, մյուս բարբառներում: Խլացումը տարածվում է մինչև անգամ Մուշի մի տիպարում գ, ձ, ջ ձայների պայթման վրա (explosion), ինչպես և Սեբաստիայի և Ասլանբեզի բոլոր թրթռուների վրա: Այսպիսով, թրթռուները ամբողջապես վերածվում են խուլի:

Փոխադարձաբար պ, կ, ա, ծ, և խուլերը լիովին խուլ են նուիրում, բայց Մուշում ունեն թրթռուն պայթյուն (բացի ծ, և-ից), Շուշում՝ բացի և-ից: Խցումն էլ թրթռուն է, գոնե մասամբ, Ասլանբեզում, իսկ Սեբաստիայում կատարելապես (բացի ծ, և-ից): Այսպիսով նկատում ենք, որ բաղաձայնների դանազան կարգերի մեջ ձայնափոխությունը տարբեր է:

Պոլսում, ուր գաղութը մշտապես նորոգվում է, թրթռուները հետզհետե դանում են խուլ:

Հայերենի թրթռուն բաղաձայնների նկարագիրը վերջին անգամ տալիս է Ռուսլոն (Principes, II, 887—890): Նա ընդհանրապես խոսելով՝ շնչեղ թրթռուն բաղաձայնների օրինակներ գտնում է նախ բանտու լեզուներից մեկի մեջ, որ ունի թե՛ շնչեղ և թե՛ պարզ թրթռուն բաղաձայններ, բայց ավելի լավ է իսլանդերենը, ուր թրթռուն բաղաձայնները իսկապես շնչեղ են: Նրանք միևնույն ժամանակ իսկապես թրթռուն են և նրանց թրթռումը շարունակվում է նաև խցման ժամանակ, նրանց պայթյունն էլ ուժեղ է և նմանապես թրթռուն, երկար տևողությամբ և հաջորդ ձայնավորից էլ տարբեր: Իսլանդերենն ունի նաև կատարյալ շնչեղ խուլ բաղաձայններ:

ՉԱՅՆՍԽՄԲԵՐ ԵՎ ՎԱՆԿ

Չափազանց քիչ են այն դեպքերը, երբ մի ձայն մի լեզվի մեջ առանձին ու անկախ գործածվի. ինչպես ա[~], օ[~], ու (և իմաստով), ի[~] (նոր նախիջևանի հայոց բարբառով նշանակում է «միթե, զարմանալի բան, ամենևին չէի սպասում»), ա[~]ա[~], շ[~]շ[~] «լուեցեք», խ[~]խ[~] (Վանա բարբառով «այն, հան»), ե[~] (Պոլսի հայոց բարբառով «բալական է, կօզան»): Ընդհանրապես առնվազն երկու ձայն (ինչպես ձի, իմ, քո, դու, լու, ձու, քի) և կամ էլ ավելի շատ ձայներ միանալով կազմում են բազմաստեակ ձայնախմբեր, որոնք ձևացնում են բառերը և նրանց միջոցով էլ պատկերացնում մեր մտածողությունը:

Ամեն մի ձայն արտադրիչ գործարանների բավական բարդ գործողությունների արդյունքն է. նույնիսկ ամենապարզ ձայնը կազմվում է գործարանների լարումով, կացքով ու էջքով: Երբ ձայնը առանձին ու անկախ է, այս երեք գործողությունները բնականաբար անխափան կատարվում են. իսկ երբ երկու ձայն հաջորդում են միմյանց, գործարանները ժամանակ չեն ունենում առաջին ձայնի էջքը և երկրորդի լարումը ամբողջովին կատարելու, այսինքն լիակատար հանգիստ առնելու կամ որ նույն է՝ իրենց անշարժ դիրքը վերստանալու, այլ բռնելով ամենակարճ ճանապարհը՝ առաջին էջքը խառնում են երկրորդի լարման: Գործողությունների այս անընդմիջումն է պատճառ, որ խոսակցության մեջ ձայները անշատ-անշատ չենք ըմբռնում, այլ բոլոր ձայնախմբերը ընդունում ենք իբրև որոշ ամբողջություն:

ինչպես՝ Բարիարարէք, Ձի մըուցիմ, Ասաեղ մարդոց և այլն: Միայն ի նախդիրն է, որ ձայնավորի մտա դառնում է յ ինչպես՝ *ի անուն > յանուն:

2. Կրճատում (elision).—Երբ ձայնավորով վերջացող մի բառ գտնվում է ձայնավորով սկսվող մի բառի մտա, առաջին ձայնավորը ջնջվում է: Այս երևույթը սովորական է հունարենի, լատիներենի և հատկապես արդի ֆրանսերենի մեջ. օրինակ, հունարեն ἀλλά ἤλαθον > ἀλλ' ἤλαθον, ֆրանսերեն la armée > l'armée, Jeanne de Arc > Jeanne d'Arc և այլն, ջնջվող ձայնավորի տեղ դնելով միջապաթարց կամ մակակեա (apostrophe):

Հայերենում կրճատումը տեղի է ունենում միայն երկրորդական բառերի մեջ և ավելի հաճախ բարբառներում. հմմտ. կու ասէ > կասէ, կը ուտեմ > կ'ուտեմ, մի՛ ըսեր > Պոլսի բարբառով մ'ը՛սեր, մի՛ ըներ > մ'ը՛ներ, մի՛ երթար > մ'ե՛րթար, մի՛ ուտեր > մ'ու՛տեր. չի՛ անում > Դ՛վ. չա՛նում, չի՛ ասում > Դ՛վ. չա՛սում. մեկ մը ալ > Պոլսի բարբառով մե՛յ մ'ալ, նոր նախիջևանի բարբառով՝ մե՛մալ, (պի)տի ասեմ > Մոկաց բարբառով տասըմ, թո՛ղ ասէ > Հաճի՛նի բարբառով թասէ՛, թո՛ղ երթայ > թօ երթա > Հաճի՛նի բարբառով թմշտօ:

Հին հայերենի և շատ անգամ արդի գրականի մեջ այս երևույթը չի նկատվում. ինչպես գրաբար մի՛ երկնչիք, մի՛ ուտիցեք, աշխարհաբար մի՛ ասեք, մի՛ ուտեք, պիտի ասեմ, պիտի անեմ, չի անում, չի ուտում, բայց կը մասնիկի համար կրճատումը ընդունված է ամեն տեղ:

Գրաբարի մեջ գտնված մյուս օրինակները պետք է ջնջել ինչպես՝

Բուզանդ, 143. Քանզ՛ ի մի օր եղեն ճակատին (Պատկանյան, 118, Քանզի ի մի օր).

Բուզանդ, 252. Սամոյր մ՛ և զգլխոյ պատիւ գարգմանակ.

Բուզանդ, 249. Սեպուհ մ՛ի Մամիկոնեան տոհմէն:

Շատ հաճախ գործածական ասութիանց մեջ անկախ բառի վերջին ձայնավորն էլ կարող է կրճատվել. ինչպես՝ բար՛ իրիկուն, բար՛ աչողում:

Պատահում է, որ երբեմն փոխանակ առաջինի, երկրորդ բառի նախաձայն ձայնավորն է կրճատվում. ինչպես՝ սանսկրիտ te abruvan > te 'bruvan, հունարեն ὦ γαθὲ փոխանակ ὦ ἀγαθὲ ցով սիրելի: Նույնպես ἔλα 'δω «արի այստեղ» փոխանակ ἔλα ἔδω: Այս պարագային կրճատումը կոչվում է aphérèse (հապավում):

3. Ներմուծում (épenthèse).—Երկու ձայնավորների միջև իբրև հավելված մտնում է մի նոր բաղաձայն: Ճավայերենի մեջ ներմուծվող բաղաձայններն են h, y, w (առաջինը a-ից հետո, երկրորդը e-ից հետո, երրորդը u-ից հետո) (տե՛ս Bohatta, Gramm. Javan., 16): Բայց կա նաև k և n ձայների ներմուծումը ձայնավորով վերջացող մի բառի և ձայնավորով սկսվող մասնիկի միջև (անդ. էջ 18): Գրավիդյան լեզուների մեջ հորանջը կանխելու համար զբվում են y, v, n բաղաձայնները. հատկապես v զբվում է a, o, u ձայնավորներից հետո, y զբվում է i, e ձայնավորներից հետո, նույնիսկ երկու անկախ բառեր, որոնք հաջորդում են իրար, հետևում են ներմուծման այս կանոնին, եթե առաջինը վերջանում է ձայնավորով և երկրորդը սկսվում է ձայնավորով (Caldwell, Drav., 174—180):

Ներմուծման երևույթը շատ սովորական է մեր մեջ, գոնև արդի լեզվով. այսպես, բոլոր զույգ ձայնավորների միջև մենք մուծում ենք մի կիսատ յ. ինչպես՝ եի > էլի, էակ > էլակ, միայն > միյայն. միոյ, միոջ, միում > միյօ, միյոջ, միյում, միւ > միյու. Փրանսիա հնչվում է Փրանսիյա, սեռական Փրանսիյայի: Ներգոյական Փրանսիյայում և այլն: Այս յ ձայնը գրութիան մեջ չի մտնում, ըստ որում հաճախ հնչումն էլ պարտադիր չէ, կամայական է. այսպես հնչում ենք ուտելու լե, երթալու լե, բայց ավելի՛ ուտելու է, երթալու է և այլն: Եղել են հեղինակներ, որոնք այս յ ձայնը գրութիամբ էլ նշանակել են. օրինակ՝ Լամարթիսի «Մաֆայել» վեպի մեջ (տպ. Չմյուռնիա, 1867)՝ գրված ենք գտնում՝ օտարուհիյին (58, 81, 87), սիրուհիյի (62), սիրուհիյիս (93), սևուհիյի (64), սևուհիյեն (65), տեսուհիյին (65), երիտասարդուհիյի (66), հոգիյին (66, 70, 102, 103), հոգիյիս (71), հոգիյի (72, 96, 97), հոգիյեն (77), հիւանդուհիյին (83, 85, 89), տիրուհիյին (87), սպասուհիյին (87), Շամպէրիյի (88): Բայց երևույթը ընդհանուր չէ, այնպես որ նույն գրքում տեսնում ենք նաև հիւանդուհիին (46, երկրես):

Նույն երևույթը կա նաև ֆրանսերենի մեջ, ինչպես՝ crié, prier, որ արտասանում ենք criyé, priyé և այլն:

Երբեմն ներմուծվում է վ բաղաձայնը և այդ պատահում է ու, իւ ձայնավորներից հետո. օրինակ, Դարբաղի բարբառով առվ ըս «գու ես», լիւվ ա «լու է», կա՛տուվ ա «կատու է»: Այսպես նաև ֆրանսերենի մեջ, ինչպես՝ clouer > kluwé:

Քիչ անգամ ներմուծվում է հ ինչպես ֆրանսերեն fléau, chaos, որոնք հնչվում են flého, kaho (Passy, 214):

Թե հին հայերենի մեջ էլ կան յ բաղաձայնի ներմուծման օրինքը, որ այնպես սովորական է արդի արտասանություն մեջ, անհայտ է. բայց պետք է կարծել, որ ոչ: Այն մարդիկ, որ գիտեին հունարեն $\alpha\gamma\theta$ բառը տառադարձել այն, կարող էին նաև միոյ և այլն բառերը գրել միոյ, եթե իրոք այդպես հնչեին:

Ըստ այսմ, հին հայոց մեջ նաասոն, Գաղաատ, Բոոս և նրմանները հնչվում էին առանց ներմուծման, աա, ոո հորանջով: Նմանապես իա, իե հնչվում էին առանց յ-ի ներմուծման. օրինակ՝ Գարրիել, Ուրիել, Ազարիա, Անանիա և այլն: Իսկ աե, աե, աի՝ ստանում էին անպատճառ յ ներմուծումը. ինչպես Իսրայել, Իսրայելի, Միքայել, Միքայելի, ջրային, երկնային, Ազոնայի և այլն: Առանց ներմուծման էին դարձվել եա, եու, իա, իու, էե, էի ձևերը. ինչպես եակ, եութիւն, միարան, միութիւն, քեաարոն, Յեու, մարգարէի, մարգարէե և այլն (Դուրյան, Ուսումնասիրությունք, Երուսաղեմ, 1935, էջ 315):

Ներմուծման օրինքին արտաքուստ նման, բայց իրապես տարբեր է այն երևույթը, որով զանազան լեզուների մեջ բառերը բաղաձայնի մոտ ստանում են ուրիշ ձև, որ նախորդից տարբերվում է մի բաղաձայնի հավելմամբ: Այսպես, լատիներեն a և ab, e և ex, հունարեն ω և $\omega\chi$, $\epsilon\nu$ և $\epsilon\zeta$: Նույնը նաև հունարեն ν , որ շատ զեպքերում ավելանում է ձայնավորի մոտ, ինչպես՝ $\pi\delta\sigma\iota$ և ϵ $\gamma\omega$ «ասում եմ բոլորին», բայց $\pi\delta\sigma\iota\nu$ $\epsilon\tau\pi\omega\nu$ «ասել եմ բոլորին»: Նույնն է նաև ֆրանսերենի կապակցության (liaison) ընդհանուր օրինքը, որի համեմատ բաղաձայնահանգ բառերի վերջին բաղաձայնը կարգացվում է այն ժամանակ, երբ հաջորդ բառը ձայնավորով է ըսկըսվում, և մնում է անձայն, երբ հաջորդ բառը բաղաձայնով է սկսվում, ինչպես՝ les portes, lesamis, trop grand, tropétroit և այլն:

Այս բոլորը չեն վերաբերում ներմուծման օրինքին, որովհետև այստեղ բաղաձայնի հավելում չկա, այլ, ընդհակառակը, անկում: Բառի իսկական ձևը բաղաձայնահանգ ձևն է, որ անաղարտ է մնում ձայնավորի մոտ, իսկ բաղաձայնից առաջ, խճողումից խուսափելու համար, կրճատվում է:

4. Նրկաբաբառացում (synérèse).— Նրկու ձայնավորներից մեկը կորցնում է իր ուժը և միանալով մյուսի հետ, կազմում է

երկբարբառ. ինչպես՝ զինի, հոգի, սեռական՝ զինւոյ, հոգւոյ, փոխանակ զինիոյ, հոգիոյ և այլն:

5. Ավելի ուշ կարող է առաջանալ բաղաձայնացումը, որ է երկբարբառի մի մասը ավելի թավ հնչելով վերածել զուտ բաղաձայնի, ինչպես՝ հոգւոյ > հոգվո, Աստուած > Ասաված և այլն: Նույնը լատիներեն voluo, saluos > volvo, salvos և այլն, կամ գոթերեն $uar\delta iiam$ > tra-wardjam և այլն: Նկատելի է, որ այս պարագային կրկին ձայնավորներից փակ ձայնավորն է, որ վերածվում է կիսաձայնի և հետո բաղաձայնի. այսպես՝ au, ay, av, ua, ua, va—ai, ai, ay—ia, ia, ya:

Վերևում ասացինք, որ շատ լեզուներ հակառակ չեն հորանջի, ուրիշներ աշխատում են խուսափել այս երևույթից: Սեմական լեզուների մեջ երկու ձայնավորի հանդիպումը անհնարին է (Brockelmann, Précis de ling. sémit., 30): Հնդկավրոպական լեզվի մեջ բառամիջում հորանջի երևույթը չկար. նույնիսկ բարդ բառերի մեջ, երբ ձայնավորով վերջացող մի բառ միանում էր ձայնավորով սկսվող մի բառի հետ, երևի հնդկավրոպացիք ջնջում էին հորանջը: Եվ եթե այս կարգի հորանջներ պատահում ենք վեդայական հնդկերենում բարդ բառերի մեջ (ինչպես yuktá—acva), դրանք երկրորդական երևույթներ են: Բայց երկու անկախ բառերի հանդիպման զեպքում հորանջը անխուսափելի էր: Բարդ բառերի մեջ էլ, եթե երկու բառերի անկախությունը զգալի էր, հորանջը մնում էր, եթե ոչ՝ ջնջվում: Այս կարգի հորանջներ շատ կան հին հնդկավրոպական լեզուների մեջ, հատկապես բայերի առաջ գրված նախամասնիկների զեպքում: Հորանջը արգելված էր հատկապես զեղեցկազիտական տեսակետով՝ նախ տաղաչափության, և նրա նմանություններ էլ խնամված արձակի մեջ (Meillet, BSL, № 19, (1916), № 62, էջ 38): Հորանջի այն բազմաթիվ օրինակները, որոնք գոյություն ունեին վեդայական հնդկերենում, հետագայում սրբագրված են դասական հնդկերենի (սանսկրիտի) մեջ (V. Henry, Manuel de sans. véd., 10—11):

Այս կողմից նշանավոր է հին հունարենը, որ խստիվ խուսափում էր հորանջից: Նույն սկզբունքին հետևում է նաև արդի լեզուներից ֆրանսերենը՝ տաղաչափության մեջ, ուր նույնիսկ պատահարը՝ ձայնավորով հանգող մի բառ չի կարող գտնվել ձայնավորով սկսվող մի բառի մոտ: Ծաշակը պահանջում է, թեև կարգ բառերի շարքը փոխելով, վերացնել հորանջը: Հին հայերենը թեև ունի հորանջից խուսափելու միջոցներ (ամփոփում, ներմուծում,

երկբարրաուսցում), բայց այդ միջոցները գործ է դնում միայն բա-
սի մեջ և այն էլ որոշ ձայնավորների միջև, իսկ ուրիշ ձայնավոր-
ների և հատկապես երկու տարբեր բառերի միջև հորանջը ընդուն-
ված է: Վերջին կետում ավելի աղատ է արդի հայերենը, որ չի
խորշում բնավ զգոյքներ առի՞ր, պիտի առնե՞ս, քանի՞ առիք, ասա
ու արի» և այլն դարձվածներից:

Նոր դրոշմներից ոմանք (հիշենք հատկապես Եղիա Տեմիրճի-
պաշյանը), հետևելով Ֆրանսիական ճաշակին, վերացրին իրենց
գրվածքներից հորանջը, մանավանդ տաղաչափության մեջ: Այս
նպատակին հասնելու համար, նրանք գործ էին դնում բոլոր հնա-
բավոր միջոցները. այսպես, պիտի ապանիի մասնիկը ձայնավոր-
ի մոտ դարձնում էին պիտ' (պիտ' առնե՞ս).— որոշյալը հոգը
ձայնավորի մոտ անպատճառ դարձնում էին ն (ցոյքնն առի՞ր).—
ու շաղկապի տեղ ձայնավորի մոտ գործ էին անում անպատճառ և
(այս և այն և ոչ թե այս ու այն).— Իսկ երբ ուրիշ միջոցներ
անկարելի էին, շուտ էին տալիս բառերի շարքը, ինչպես մայիսի
ուրիշ ասելու փոխարեն՝ ուր Մայիսին, կամ գինի ունի՞ս ասելու
փոխարեն՝ ունի՞ս գինի, և այլն:

Լեզվական այս դրուժյունը, բնականաբար, հաջողութուն չպիտի
ունենար և նույնիսկ նրա հեղինակները ստիպված էին ուշ թե՛շտ
հրաժարվել նրանից: Եվ այսօր գրական լեզվի մեջ էլ ազատորեն
կարելի է ասել՝

Այս ու այն կողմ.

Ու անոնք, հսկայաձև ռահվիրաները մարմարեղեն հուլիսին...

Գինիի, եկեղեցիի, Բաֆֆիի, Շամախիի.

Պիտի ըսեմ, պիտի ուզեմ, պիտի աղաչեմ.

Չի ուզում, չի ուղարկում.

Եթե ուզենանք, եթե ուշադրութուն դարձնենք.

Դու էիր իմ հույսը.

Բաֆֆիի ու այլ հեղինակների (4 ձայնավոր).

Շամախիի անա այս անվանի գինին.

Տեղի է ունեցել հետևյալ դեպքը.

Քանի՞ է այս ցորենը (4 ձայնավոր) և այլն:

Երբ մի խումբ բաղաձայն միացած է հաջորդ ձայնավորի հետ,
ներկայանում է երեք գլխավոր պարագա.

1. Եթե բաղաձայնը թրթռուն է, բնականաբար կոկորդի թրթ-
թռումները սկսում են շատ վաղ և անընդհատ շարունակվում են
մինչև ձայնավորի վերջը, որովհետև ամեն ձայնավոր թրթռուն է:

2. Եթե բաղաձայնը խուլ է, իր էջքը խառնվում է ձայնավոր-
ի լարման հետ, թրթռումներն սկսվում են ավելի շուտ, որով խուլ
բաղաձայնի պայթյունը լինում է թրթռուն: Սույ բաղաձայնների
այս հանգամանքն է պատճառը, որ զանազան լեզուների և բար-
բառների մեջ խուլերը դանում են թրթռուն (այսպես, օրինակ,
արեմտահայերի արտասանության մեջ): Այսպես են հնչում խուլ
բաղաձայնները նորալատին և սլավական լեզուների, մինչև անգամ
մի քանի գերմանական լեզուների մեջ, ինչպես լուլանդերենը: Օրի-
նակ, քա ձայնախմբի մեջ խուլակի թրթռումներն սկսվում են հենց
այն միջոցին, երբ շրթունքներն սկսում են հեռանալ իրարից:

3. Երբ բաղաձայնը շնչեղ խուլ է, ձայնավորի թրթռումն
սկսվում է պայթյունից հետո, որով և բաղաձայնը ամբողջապես
մնում է խուլ: Այս է պատճառը, որ զանազան բարբառներում
(ինչպես արևմտահայերի արտասանության մեջ) փ, ք, բ և այլն
պահում են իրենց հնչյունը, հակառակ պ, կ, ա ձայնների, որոնք
դառնում են բ, գ, դ:

Երբ մի բաղաձայն գտնվում է ձայնավորից հետո, նրա լա-
րումը խառնվում է ձայնավորի էջքի հետ, որով բաղաձայնի լա-
րումը ուժեղանում է, իսկ պայթյունը սկարանում. կարող է մին-
չև անգամ բոլորովին պակասել, երբ շունչը կամ ձայնը դադարի
գործարանների դադարից առաջ: Օրինակ, ap, am, ab արտա-
սանելու ժամանակ մարդիկ սովորաբար շրթունքները փակելուց
հետո նորից բաց են անում: Իսկ եթե շրթունքները չբանան, բա-
ղաձայնը կդառնա պայթուցիկ, այսինքն պայթյունը կլինի սկար
և կամ բոլորովին կվերջանա: Այս է պատճառը, որ շատ լեզուների
մեջ վերջին բաղաձայնը խլանում կամ ընկնում է:

Երբ մի բաղաձայն գտնվում է մի ուրիշ բաղաձայնի մոտ,
նկատելի են հետևյալ պարագաները.

1. Երկու բաղաձայնները նույն կամ կրկնակ են, ինչպես պպ,
փփ, նն և այլն. այս պարագային երկու բաղաձայնները ջոկ-ջոկ չեն
արտասանվում, այլ կատարվում է նախ առաջինի պայթուցումը,
հետո սովորականից երկար մի կացք և ապա երկրորդ բաղաձայնի
էջքը. այսպիսով առաջինի էջքը և երկրորդի լարումը ջնջվում են:
Ականջը լսում է պայթուցումը և պայթյունը որոշ կերպով, բայց կացքի
ժամանակ, եթե բաղաձայնը պայթական է, ոչինչ չի լսում, այլ միայն
բավական երկար լուրթյուն. իսկ եթե սեղմ է, ձայնը շարունակվում
է այլքան երկար տեղոթյամբ: Ուրիշ խոսքով, կրկնակ բաղա-

ձայնները սչ թե իրապես երկու առանձին բաղաձայններ են, այլ մեկ բաղաձայնի երկարումը, ճիշտ ինչպես երկար ա՛, օ՛ և այլն:

2. Երկու բաղաձայնները տարբեր են, բայց արտաբերվում են միևնույն կետում և իրենց տարբերությունը միայն ձայնալարերի կամ կատիկի գործողության մեջ է կախնում (ինչպես՝ ք, օ, օ—t, d, ո—k, ց, ղ)։ այս պարագային նախորդի նման կատարվում է մի պայթուցում, գործարանները կացքի ժամանակ անփոփոխ մնում են իրենց դիրքում, այդ միջոցին խոչակն ու կատիկը կատարում են պահանջված գործողությունները, որից հետո տեղի է ունենում պայթուցում: Յլսպիսով, երկուսի փոխարեն լինում է միայն մի պայթուցում, մի պայթուցում և մի երկար կացք. առաջին բաղաձայնը լինում է միայն պայթուցիկ, երկրորդը պայթուցիկ: Հաջորդական բաղաձայնների այս ձևը սովորական է հայերենի, գերմաներենի և անգլիերենի մեջ, իսկ ֆրանսերենում երկու բաղաձայններն էլ ունենում են իրենց պայթուցումը, մինչև անգամ ոմանք երկուսի միջև ներմուծում են մի փոքրիկ ը, ինչպես՝ lorsque > lorsəqə:

3. Երկու բաղաձայնները տարբեր են, բայց նրանցից երկրորդը պատկանում է կիսապայթականների խմբին, իսկ առաջինը նրա լրացուցիչ բաղաձայնի շարքից է. այսպես ap^pfa, ak^kxa, ab^bva, աղձա, աղճա, ածձա, ածճա, աքցա, աքչա և այլն: Այս պարագային էլ տեղի է ունենում ճիշտ այն ձայնական երևույթը, ինչ որ նախորդի մեջ. կատարվում է առաջին բաղաձայնի պայթուցումը, հետո բավական երկար խոցում, որին հաջորդում է անցումը: Այս պատճառով a^ppfa և ap^pfa, աձձա և աղձա, ածձա և ածճա, աքցա և աքցա, ածճա և ածճա, կամ նույնիսկ ածձա, աքձա և այլն խմբակները զույգ-զույգ միևնույն տպագրությունն են թողնում ականջի վրա:

4. Երկու բաղաձայնները կազմվում են երկու տարբեր կետերում, ինչպես kt, tk, pt, tp, քk, kք և այլն ձայնախմբի մեջ: Այս պարագային ֆրանսիական արտասանության մեջ երկու բաղաձայնները պահում են իրենց առանձին հնչումը. առաջինի պայթուցումը կատարվում է երկրորդի պայթուցման միջոցին, այնպես որ երկու պայթուցումները լսվում են իրար հետից: Իսկ հայկական, գերմանական և անգլիական արտասանության մեջ երկու բաղաձայնների խոցումը խառնվում է իրար հետ, որովհետև երկրորդի պայթուցումը սկսվում է այն միջոցին, երբ դեռ առաջինի խոցումը վերջացած է: Այս պատճառով կրկին բաղաձայններից առաջինը հազիվ է լրս-

վում, իսկ երբ բաղաձայնների թիվը լինի երկուսից ավելի, երկրորդը բնավ չի լսվում, ինչպես գերմաներեն Haupt-Kunststück:

Չանագան լեզուների արտասանության համեմատությունը ցույց է տալիս, որ բաղաձայնների խմբակցության համար կան տարբեր սովորություններ. որոշ ազգեր ընդունակություն ունեն բաղաձայնների խմբերը միաշունչ արտասանելու. այսպես վրացերենը (օրինակ, վրացերեն մամուլակի «հովիվ», վրդվիլիցավ «կարմրում եմ», վիրցվի «կծպում եմ», կրծքվիս «մեզ կրթում է»), որոնք ունեն 6 կամ 7 միաշունչ բաղաձայն (Vogt, 15): Նույնպես մյուս կովկասյան լեզուները, եվրոպական լեզուներից գերմաներենը, սրանց հետ նաև ուսերենը. հմմտ. встреча (4 բաղաձայն), взгляд «հայացք», стеклянка «սրվակ» (երկուսն էլ 5-ական բաղաձայն միասին), здравствовать «ստող լինել» և այլն: Ուրիշներ բռնում են միջին դիրք. այսպես, ֆրանսերենը, իտալերենը և նրանցից էլ ավելի պակաս չափով հայերենը, թուրքերենը և պարսկերենը:

Հայերենի մասին քիչ հետո կխոսենք առանձին:

Որոշ լեզուներ անընդունակ են բառակազմում կրկնակ բաղաձայնների խմբեր արտասանելու, և ավելացնում են մի նոր ձայնավոր. այսպես են առհասարակ բոլոր սեմական լեզուները (Brockelmann, Precis de ling. sémi., 62). օրինակ՝ արաբերենը ամեն անգամ, որ բառակազմին պատահի մի զույգ բաղաձայն, սկիզբը գնում է a ձայնը (արդի հնչմամբ e), ինչպես հունարեն Platon դառնում է ατλων Aflaton, սպաներ լինում է արաբերեն isfunj, Frank բառը դառնում է افرانج Afranj (efrenj) «եվրոպացի, ֆրանգ»: Այսպես է նաև ասորերենը, ուր ամեն մի վանկ սկսվում է միայն մի բաղաձայնով. եթե պատահի երկու բաղաձայն, նրանց միջև մտնում է մի ə կամ (բառակազմում) ավելանում է u կամ կրկնակ uu ձայնավորը (Nestle, Syr. gramm., 1888, էջ 18): Պարսկերենի մեջ երկու բաղաձայնով բառ չի կարող սկսվել. կամ սկզբից և կամ վերջից ստանում է մի ձայնավոր. օրինակ՝ šutur կամ uštur «ուղտ»: Այսպես է նաև տանկերենը կամ թուրքերենը. օրինակ՝ ստական > Խսիքա: Նույն սկզբունքի համաձայն է, որ հնդկավրոպական նախակիզի *stēr բառը հայերենի և հունարենի մեջ, ստանալով a հենարանը, դարձել է ասաղ = άστυρ. նման հավելումներ գտնում ենք նաև ուրիշ հին լեզուների մեջ. օրինակ՝ լատիներեն *stabilis, pōclom > stabilis, poculum, հունարեն *έβρι- > έβριος «լիթերորդ», սանսկրիտ harṣa, «ուրախություն» > պարսկերեն harisa, հին բարձր գերմաներեն besmo > besamo «ավել»:

Ուրալ-ալթայական լեզվախմբի մեջ բառասկզբում երկու բաղաձայն չի կարող պատահել, վանկի վերջում նմանապես երկու բաղաձայն հազվադեպ է և կարելի է միայն այն ժամանակ, երբ առաջինը է կամ 1 է: Ընդհանրապես ուրալ-ֆիննական լեզուներում չեն ընդունվում բաղաձայնների խմբեր: Ֆիններենի մեջ բառասկզբին կամ վանկի վերջում (բացի ա վանկից) չի կարող գտնվել երկու բաղաձայն. երբ ալթայիսի բաղաձայններ հավաքվեն, ֆիններենը մեկը կամ երկուսը ուղղակի ջնջում է և պահում միայն մեկը. օրինակ՝ շվեդերեն *spei* «խաղ» և *strand* «եզերք» դառնում է ֆիններեն *pele, ranta*:

Ռուսերենում *a* տառով սկսվող բառ չկա. եղածները բոլոր օտար են. ինչպես՝ *арбуз* «ձմերուկ», *абрикос* «ձիթան», *аѳа* «սեբիկի», *архитектор* «ճարտարապետ» և այլն:

Իերեր լեզվում բառերը ամենամեծ մասամբ սկսվում են *a* ձայնավորով, որ նշան է եզակի արական սեռի.—այն բառերը, որ սկսվում են *i*-ով, ընդհանրապես հոգնակի են.—բաղաձայնով սկսվող բառ չկա այս լեզվում. եղածները բոլորը արաբերենից են փոխառյալ (*Laoust, 1*):

Մեխանիկյան լեզվում կա մի բառ, որ բաղկացած է մի բաղաձայնից, որ է *m* «բանան» պտուղը (*Dempwolff, 5*):

Ամերիկյան միջով լեզվում ոչ մի բառ չի կարող սկսվել երկու բաղաձայնով, և ոչ էլ վերջանալ երկու բաղաձայնով. բառամիջումն էլ երկու բաղաձայնների հանդիպում կլինի միայն երկու բառի բարդության և կամ մի մասնիկի հավելման դեպքում (*Kroeber, 279*):

Տունգուսական էվեն (լամուտ) լեզվում բաղաձայնների կուտակում չկա. միայն բառամիջում կարելի է գտնել երկու բաղաձայն կողք-կողքի. ուստի ուսներենից փոխառյալ *сто, хлеб* և նման բառեր դառնում են *osto, kileb* և այլն: Բառասկզբում չկան *y, r, l, s* և այլն բաղաձայնները (*Цинциус, 40*):

Եթովպերենում ոչ մի բնիկ բառ կամ վանկ չի կարող սկսվել ձայնավորով, այլ միշտ բաղաձայնով, թեկուզ մի պարզ ջնջով: Ըստ այսմ, նույնիսկ այն օտար բառերը, որոնք մտնում են լեզվի մեջ, ստանում են իրենց օրինական շունչը: Օրինակ՝ *Ἀνατία* > եթովպերեն *Hanāntiā, ἄβρατος* > եթովպերեն *əbrāwi*: Ալթայան նաև բառամիջում, երբ երկու ձայնավոր իրար մոտ գան. օրինակ՝ *Theodora* եթովպերեն *Tâ'ôdëra* կամ *Têvôdôrâ*: Այս երևույթը այնքան

ընդհանուր է, որ նույնիսկ այբուբենը սկսվում է ոչ թե *a* տառով, այլ *h* (*Dilmann, 55*):

Բաղաձայնների խճուղումն էլ ընդունված չէ. օրինակ՝ լատիներեն *serinium* «արկղիկ» բառը դառնում է եթովպերեն *eskæren* (անգլ. 56):

Կան լեզուներ, որ բոլորովին անընդունակ են բաղաձայնների խմբեր արտասանելու մեջ. այսպես, Աֆրիկայում բանտու լեզվախումբը, Ասիայում չինարենը և ճապոներենը և այլն: Բանտու լեզուները ընդունակ են միայն բաղաձայն + ձայնավոր արտաբերելու (միայն բացառությամբ *m* և *n* տառերի, որոնք կարող են առանձին վանկ կազմել): Ճապոներենն ու չինարենը գիտեն միայն բաղաձայն + ձայնավոր ձայնավորներ կազմել և առ առավել կարող են վերջինը անգալնացել. այսպես՝ ճապոներեն *abuyayio* «ձանապարհ տուր, խաբարդար», *Թա-թե'ն-քուն* «Մեծն երկնային կայսրություն, Չինաստան», կամ երկրի հատակ անունները՝ *Yokohama, Nagasaki, Mikado, Թիեն, ցին, Վեյ-հայ-վեյ, Շան-հայ, Սուն-Չան-ցին* և այլն և այլն: Այս լեզուները այնքան անընդունակ են արտասանելու բաղաձայնավոր խմբակները, որ եթե հարկ լինի տառադարձել նման օտար բառեր, միջոցները լցնում են *i* ձայնավորով: Այսպես՝ չինարեն *Kilisitosi* և բանտու *Kirisiti* «Քրիստոս». չինարեն *po-la-sseu* «Պարսկաստան» և այլն: Նոր արաբերեն, եբրայերեն, արամեերեն և ասուրերեն լեզուներում բառավորչիկ ձայնավորներն էլ անընդունելի են և ներմուծում են մի ձայնավոր. ինչպես՝ արաբերեն *عالم* *milh* «աղ» > նոր արաբերեն *melaḥ, uzni* «ականջ» > եբրայերեն *ōzen*, ասուրերեն *uzun*: Աֆրիկյան քաֆիր լեզվով գերմաներեն *gold* դառնում է *igòlide*:

Ձայնավորների ալթայիսի ներմուծումը կոչվում է *anaptyxe* (լուվում):

Պոլինեզիայի լեզուները ոչ կարող են բաղաձայնների խմբեր ունենալ, ոչ էլ բառը բաղաձայնով վերջացնել: Դրավիդյան լեզուների մեջ ոչ բառասկզբում, ոչ բառամիջում և ոչ էլ բառավերջում չի կարելի ունենալ երկու բաղաձայն միասին. ներքի են միայն կրկնակ բաղաձայններ և *n* + բաղաձայն բառամիջում: Նույնիսկ սանսկրիտ *dya, dva, gya* և այլն դառնում են թամիլերեն *diya, diva, giya* և այլն. սանսկրիտ *Kriṣṇa* դառնում է *Kiruttina* (*Coldwell, 183*):

Պվկիանիայի, ավստրալիական, ամերիկյան լեզուներից շատերը, հակառակ մեր սխալ կարծիքի, չեն սիրում բաղաձայնների

հաճախությունը. ընդհակառակը սիրում են ձայնավորների խմբակցություններ և հորանջից չեն խորշում: Օրինակ, օվկիանյան սամոա լեզուն ոչ կրկնակ բաղաձայն գիաի, ոչ էլ զույգ բաղաձայն, այլ միշտ մի բաղաձայն երկու և ավելի ձայնավորների միջև. չկա բառ, որ բաղաձայնով վերջանա, այլ միշտ ձայնավորով (Funk, 1—2):

Ահա մի փոքրիկ հատված այս լեզվից.

Ou te fia maïmoa i le laueleele o Samoa ma o latou tagata («Ես ուզում եմ Սամոայի երկիրը և ժողովուրդը ճանաչել»):

Sau ia i le fale nei. sei e malolo ai («Արի տուն և հանգրստացիր») (Funk, 66):

Այս հատվածի հենց սկիզբը մի բաղաձայնից հետո հաջորդում են իրար հետից հինգ ձայնավոր: Ձայնավորների այսչափ առատությունը մանկուենակ սպավորություն է թողնում բոլոր այսպիսի լեզուների վրա:

Մարկիզյան կղզիների լեզուն էլ (Dordillon, 3—4) նույնպես է. երկու տեսակ վանկ կա այս լեզվով, կոճ մի ձայնավորից բաղկացած, կոճ մի բաղաձայնից + մի ձայնավորից. վանկի վերջում բաղաձայն չի լինում. և որովհետև այս լեզուն ունի միայն 5 ձայնավոր և 10 բաղաձայն, ուստի վանկերի բոլոր տեսակների դումարը լինում է ընդամենը 55, որոնց ցուցակը տալիս է հեղինակը (անդ. էջ 4): Ըստ այսմ, օտար բառերն էլ կրճատվում և վերածվում են իրենց վանկային գրություն. ինչպես՝ apôtre «առաքյալ» > apotoro «Հիսուս Քրիստոս» > Iietu Kirito, Paul «Պողոս» Pauro, «Նապոլեոն» Naporeone, Adam > Atamo, Andre > Aterea, Si-méon > Timeone (Dordillon, 14, 20):

Ամերիկյան պեուտ լեզվով գոյականները վերջանում են ընդհանրապես q, g, x, n բաղաձայններով (Веняминов, 9):

Աֆրիկյան ախասել լեզվում կրկնակ բաղաձայն չկա. միմիայն ունգական բաղաձայններն են, որ կարող են կրկնվել. ինչպես՝ mm, m nn, n ñn (Westermann, 64):

Իրավիզյան թամիլ լեզվի մեջ դանազան բաղաձայնակա կապակցություններ անկարելի են. օրինակ, չկան kl, kr, ks, tr, tl, ts, pr, pl, ps, st, sp, sk, pn, kn, dn և այլն. ըստ այսմ, շատ բառեր ձայնապես նման են իրար և դանազանելու համար մարդ մեծ զժվարություն է կրում. օրինակ՝ kaŋu «թույն», katu «գրտակ, սպի», kâŋu «անտառ», kâtu «սկանջ», kattu «բղավել», kâŋtu «ցուլից տալ», kaŋtu «կապել», kaŋi «հոտ», kaŋi «կոտր», kaŋi «խածվածք», katti «գանակ», kaŋai «գերջ», kaŋtai «փրփուր», kaŋai «խաչուն

ինչ», katai «պատմվածք», kaŋa «ալժ», kaŋal «ծով», kaŋan «պարտք» և այլն (Мерварт, Грам., 20)

Ձայնավորների քննության անբաժան մաս է կազմում վանկատարյունը: Բայց նախ տեսնենք, թե՞

Ի՞նչ է վանկը.—Վանկը ձայների մի այնպիսի բնական խմբակցություն է, որ ամենահասարակ մարդն անգամ կարող է ըմբռնել: Վանկի հասկացողությունը այնքան բնական է, որ գրություն անաշխ հնարիչները, նախքան տառերի գյուտը, վանկադիրն են հնարել: Հակառակ դրան, այնուամենայնիվ, բավական զժվար է որոշել, թե ի՞նչ է վանկը: Հին հույները վանկ էին կոչում ձայնական մի միություն, որ բաղկացած էր մի ձայնավորից կամ մի երկրորդաբառից՝ իրեն հարակից մի կամ մի քանի բաղաձայններով միասին: Այսպես էին ընդունում նաև բոլոր հին քերականները: Ըստ այսմ, վանկի հիմնական մասը ձայնավորն է և չկա վանկ առանց ձայնավորի: Սակայն այս սահմանը չի կարող ճիշտ լինել, որովհետև, օրինակ, անգլերեն mutton, people, գերմաներեն denken, handel և այլ նման բառերի երկրորդ մասը, չնայած որ միայն բաղաձայններից է բաղկացած, այնուամենայնիվ առանձին վանկ է: Հնդկները, որ ավելի լավ քերականագետներ էին, ընդունելով մի ձայնավոր = մի վանկ սկզբունքը, և սակայն տեսնելով, որ l և r ձայններն էլ հաճախ վանկեր են կազմում, փրկել էին գրությունը՝ հնարելով l և r ձայնավորներ:

Արդի ձայնարանները փորձել են դանազան ձևերով բացատրել վանկի էությունը: Կավագույն բացատրությունը հետևյալն է.

Գիտենք, որ մեր արտասանությունը կազմվում է օդի հոսանքի արտաշնչումով, որ առաջանում է ստոմանիի և կողային մկանների պրկման ու թուլացման հաջորդական գործողությամբ: Երբ արտաբերում ենք միմիայն մի ձայնավոր, ըստ կարելիության երկարելով նրա տևողությունը, նկատելի է, որ լանջքը սկսում է հետզհետե իջնել՝ նախ տակավ աճեցնելով իջման արագությունը և հետո հետզհետե տկարացնելով, մինչև շնչի լիակատար սպառումը, բայց ամբողջ այդ ընթացքը կատարվում է միօրինակ և աստիճանաբար, առանց հանկարծական փոփոխությունների: Ինչքան էլ որ երկարացնենք այդ ձայնավորի տևողությունը, մինչև շնչի լիակատար սպառումը, նա մեղ թվում է մի վանկ: Բայց հենց որ լանջքի իջման արագության կամ նրա հետևանքով օդի հոսանքի մեջ որևէ հանկարծակի փոփոխություն կատարվի, վանկը զգում ենք

վերջացած և ամեն մի ձայն, որ հաջորդելու է նրան, համարում ենք նոր վանկ:

Այդ, գիտենք, թե ե՞րբ են կատարվում այդ հանկարծական փոփոխությունները (կամ, մեկ բառով կոչելով՝ ուսայունները) լանջքի իջման արագության կամ օդի հոսանքի մեջ:

Ուսայունը կատարվում է հետևյալ պարագաներում.

1. Երբ արտասանենք մի ձայնավոր որոշ ուժգնությամբ և հանկարծ անցնենք մի ուրիշ ավելի կամ նվազ ուժգին աստիճանի: Մենք գիտենք, որ ձայնի ուժգնությունը առաջանում է օդի հոսանքի քանակությունից. որչափ մեծ է օդի հոսանքը, այնքան էլ ուժգին է ձայնը: Բայց օդի հոսանքն էլ առաջանում է ճնշման և քանակությունից. որչափ մեծ է ճնշումը, այնքան էլ մեծ է օդի հոսանքը: Ուրեմն ձայնի ուժգնության մեջ ուսայունը առաջանում է ճնշափողի մեջ օդի ճնշման հանկարծական փոփոխությամբ, որի հետևանքով էլ փոխվում է օդի հոսանքը: Եթե ձայնավորի ուժգնության փոփոխությունը աստիճանաբար կամ առանց ուսայունի լինի, ուրիշ խոսքով՝ օդի հոսանքը միապահպալ լինի, մենք կլսենք միայն մի վանկ:

2. Եթե արտասանենք մի ձայնավոր որոշ նոտով և հանկարծ անցնենք մի ուրիշ նոտի (ավելի բարձր կամ ավելի ցածր): Ձայնի բարձրությունը առաջանում է օդի հոսանքի ակարությունից, որ կախված է ձայնարանի բացվածքի մեծությունից: Ուրեմն և այս պարագային ուսայունը առաջանում է ձայնարանի (glotte) բացվածքի մեծության մեջ: Եթե նոտերը կանոնավոր կերպով հաջորդեն իրար, ինչպես, օրինակ, ջութակի լարի վրա մատը քսելով ծալրից ծալր և ոչ թե դաշնամուրի ստեղնաշարի վրալից անցնելով, այլ պարագային մենք լսում ենք մի վանկ:

3. Եթե արտասանությունը կատարենք ընդհատումներով, ինչպես, օրինակ, Բաֆֆիի իղձը, զպլոցե ելած, գարու ու ունաբի խառնուրդ, որոնց մեջ ի, է և ու ձայնավորները հաջորդում են իրար երեք անգամ ընդհատումներով: Փոփոխությունը առաջանում է այս պարագային ճնշափողի օդի ճնշման մեջ:

4. Եթե արտասանենք մի ձայնավոր և հանկարծ անցնենք մի ուրիշ ձայնավորի: Այս պարագային ուսայունը առաջանում է բերանի բացվածքի մեծության մեջ: Եթե ձայնավորից ձայնավոր անցքը կատարվի աստիճանաբար, այն ժամանակ առաջանում է երկրարբառ և մենք զգում ենք միայն մի վանկ:

5. Եթե արտասանենք մի ձայնավոր, որից հետո անցնենք բաղաձայնի Այս պարագային ուսայունը առաջանում է գործարանների գիրքի փոփոխությամբ և հետևաբար ճնշաուժի մեջ: Օրինակ, եթե a ձայնավորից հետո արտասանենք b, բերանը հանկարծ իր գիրքը պիտի փոխի և շրթունքները, որ առաջ բաց էին, հանկարծ պիտի փակվեն և ընդհատեն մի ակնթարթ արտաշնչվող օդի հոսանքը: Այս ձևով բաղաձայնը դառնում է վանկի սահմանագիծը:

Վանկի էությունը որոշելու համար, կարևոր է նաև ըմբռնել ձայնի հնչյալանությունը կամ լսելիությունը (perceptibilité, անգլերեն sonority, audibility, գերմաներեն sonrität, schallfülle, schallstärke): Երբ երկու հոգի խոսում են իրարից որոշ հեռավորության վրա, թեև խոսողը պահում է ձայնի միօրինակ ուժգնություն և լսողն էլ ունի նորմալ ականջ, այնուամենայնիվ որոշ ձայներ ավելի պարզ լսելի են լինում իրեն, ուրիշներ նվազ չափով: Ձայնի այս հատկությունը, որ կախված է ձայնի բնությունից և ոչ թե պարագաներից, կոչվում է հնչյալանություն կամ լսելիություն: Գիտությունը չէ գաած որևէ միջոց ձայնի հնչյալանությունը չափելու, բայց զանազան միջոցներով կարելի է գասակարգել ձայնները ըստ իրենց հնչյալանության: Այսպես, միևնույն ձայնով և հետզհետե ավելի մեծ հեռավորությունից խոսելով, կարող ենք հաստատել, որ

1. Ձայնավորները ավելի լսելի են, քան բաղաձայնները:
2. Բաց ձայնավորները ավելի լսելի են, քան փակ ձայնավորները:
3. Ուսակցություն մեջ ցնցուն, կողմնական և ուղղալին բաղաձայնները ավելի լսելի են, քան սեղմերը և սեղմերը ավելի լսելի են, քան պայթականները:
4. Թրթռուն բաղաձայնները ավելի լսելի են քան, խուլերը:
5. Ամեն պարագայի մեջ ձայնը, որքան ավելի ուժեղ է, այնքան ավելի լսելի է:

Ահա ձայների լսելիության համեմատական կարգը. — բաց ձայնավորներ — փակ ձայնավորներ — ցնցուն, կողմնական և ուղղալին բաղաձայններ — թրթռուն սեղմ բաղաձայններ — խուլ սեղմեր — թրթռուն պայթականներ — խուլ պայթականներ: Ամենալսելի ձայնը բաց ձայնավորն է, ամենաքիչ լսելին՝ խուլ պայթականը:

Այս համեմատությունից հենց երևում է հնչյալանության էությունը և պատճառը, որքան մեծ է բերանի բացվածքը՝ ձայնն էլ

վերջացած և ամեն մի ձայն, որ հաջորդելու է նրան, համարում ենք նոր վանկ:

Արդ, դիտենք, թե ե՞րբ են կատարվում այդ հանկարծական փոփոխությունները (կամ, մեկ բառով կոչելով՝ ուսուցանելը) լանջքի իջման արագության կամ օդի հոսանքի մեջ:

Ուսուցանելը կատարվում է հետևյալ պարագաներում.

1. Երբ արտասանենք մի ձայնավոր որոշ ուժգնությամբ և հանկարծ անցնենք մի արիշ ավելի կամ նվազ ուժգին աստիճանի: Մենք գիտենք, որ ձայնի ուժգնությունը առաջանում է օդի հոսանքի քանակությունից. որչափ մեծ է օդի հոսանքը, այնքան էլ ուժգին է ձայնը: Բայց օդի հոսանքն էլ առաջանում է ճնշման քանակությունից. որչափ մեծ է ճնշումը, այնքան էլ մեծ է օդի հոսանքը: Ուրեմն ձայնի ուժգնության մեջ ուսուցանելը առաջանում է շնչափողի մեջ օդի ճնշման հանկարծական փոփոխությունը, որի հետևանքով էլ փոխվում է օդի հոսանքը: Եթե ձայնավորի ուժգնության փոփոխությունը աստիճանաբար կամ առանց ուսուցանելի լինի, ուրիշ խոսքով՝ օդի հոսանքը միապահպալ լինի, մենք կլսենք միայն մի վանկ:

2. Եթե արտասանենք մի ձայնավոր որոշ նոտով և հանկարծ անցնենք մի արիշ նոտի (ավելի բարձր կամ ավելի ցածր): Ձայնի բարձրությունը առաջանում է օդի հոսանքի տևողությունից, որ կախված է ձայնարանի բացվածքի մեծությունից: Ուրեմն և այս պարագային ուսուցանելը առաջանում է ձայնարանի (glotte) բացվածքի մեծության մեջ: Եթե նոտերը կանոնավոր կերպով հաջորդեն իրար, ինչպես, օրինակ, ջութակի լարի վրա մասը քսելով ծալրից ծալր և ոչ թե դաշնամուրի ստեղնաշարի վրա ից անցնելով, այդ պարագային մենք լսում ենք մի վանկ:

3. Եթե արտասանությունը կատարենք ընդհատումներով, ինչպես, օրինակ, Բաֆֆի իլձը, դպրոցե Ելած, գարու ու ունաբի խառնուրդ, որոնց մեջ ի, Է և ու ձայնավորները հաջորդում են իրար երեք անգամ ընդհատումներով: Փոփոխությունը առաջանում է այս պարագային շնչափողի օդի ճնշման մեջ:

4. Եթե արտասանենք մի ձայնավոր և հանկարծ անցնենք մի արիշ ձայնավորի: Այս պարագային ուսուցանելը առաջանում է բերանի բացվածքի մեծության մեջ: Եթե ձայնավորից ձայնավոր անցքը կատարվի աստիճանաբար, այն ժամանակ առաջանում է երկրարբատ և մենք զգում ենք միայն մի վանկ:

5. Եթե արտասանենք մի ձայնավոր, որից հետո անցնենք բաղաձայնի: Այս պարագային ուսուցանելը առաջանում է գործարանների դիրքի փոփոխությունը և հետևաբար շնչառության մեջ: Օրինակ, եթե a ձայնավորից հետո արտասանենք b, բերանը հանկարծ իր դիրքը պիտի փոխի և շրթունքները, որ առաջ բաց էին, հանկարծ պիտի փակվեն և ընդհատեն մի ակնթարթ արտաշնչող օդի հոսանքը: Այս ձևով բաղաձայնը դառնում է վանկի սահմանագիծը:

Վանկի էությունը որոշելու համար, կարևոր է նաև ըմբռնել ձայնի հնչականությունը կամ լսելիությունը (perceptabilité, անգլերեն sonority, audibility, գերմաներեն sonrität, schallfülle, schallstärke): Երբ երկու հոգի խոսում են իրարից որոշ հեռավորության վրա, թեև խոսողը պահում է ձայնի միջինակ ուժգնություն և լսողն էլ ունի նորմալ ակնաշ, այնուամենայնիվ որոշ ձայներ ավելի պարզ լսելի են լինում իրեն, ուրիշներ նվազ չափով: Ձայնի այս հատկությունը, որ կախված է ձայնի բնությունից և ոչ թե պարագաներից, կոչվում է հնչականություն կամ լսելիություն: Գիտությունը չէ գտած որևէ միջոց ձայնի հնչականությունը չափելու, բայց զանազան միջոցներով կարելի է դասակարգել ձայները ըստ իրենց հնչականության: Այսպես, միևնույն ձայնով և հետզհետե ավելի մեծ հեռավորությունից խոսելով, կարող ենք հաստատել, որ

1. Ձայնավորները ավելի լսելի են, քան բաղաձայնները:

2. Բաց ձայնավորները ավելի լսելի են, քան փակ ձայնավորները:

3. Սոսակցության մեջ ցնցուն, կողմնական և ռնգային բաղաձայնները ավելի լսելի են, քան սեղմերը և սեղմերը ավելի լսելի են, քան պայթականները:

4. Թրթուռն բաղաձայնները ավելի լսելի են քան, խուլները:

5. Ամեն պարագայի մեջ ձայնը, որքան ավելի ուժեղ է, այնքան ավելի լսելի է և որքան ավելի բարձր է, այնքան ավելի լսելի է:

Ահա ձայների լսելիության համեմատական կարգը. — բաց ձայնավորներ — փակ ձայնավորներ — ցնցուն, կողմնական և ռնգային բաղաձայններ — թրթուռն սեղմ բաղաձայններ — խուլ սեղմեր — թրթուռն պայթականներ — խուլ պայթականներ: Ամենալսելի ձայնը բաց ձայնավորն է, ամենաքիչ լսելին՝ խուլ պայթականը:

Այս համեմատությունից հենց երևում է հնչականության էությունը և պատճառը. որքան մեծ է բերանի բացվածքը՝ ձայնն էլ

ալնքան լսելի է, և որովհետև որքան մեծ է բերանի բացվածքը՝ օդի հոսանքն էլ ալնքան տկար է, և որքան տկար է օդի հոսանքը՝ շնչափողի ճնշումն էլ ալնքան թուլ է, և որքան թուլ է շնչափողի ճնշումը՝ արտաբերության ճիգն էլ ալնքան թուլ է, արևմտյան և ձայնը ալնքան ավելի լսելի է, որքան արտաբերության ճիգը ավելի թուլ է: Եվ որովհետև ձայնավորը առավելագույն լսելի, իսկ բաղաձայնը նվազագույն լսելի ձայնն է, ուստի և ձայնավորը համապատասխանում է շնչափողի ճնշման և արտաբերության ճիգի միմյանմանին, իսկ բաղաձայնը՝ նրանց մաքսիմումին: Այսպիսով բաղաձայնը, որ վանկի սահմանագիծն է, լսելիության օրենքի միջոցով հասցնում է մեզ միևնույն արդյունքին, ինչ որ նախապես տեսել էինք, այն է ուսույուն շնչափողի ճնշման և արտաբերության ճիգի մաքսիմումի և միմյանմանի միջև:

Այս բոլորը միացնելով, մենք այժմ կարող ենք որոշել, թե ինչ է վանկը: Վանկը ձայնի ուժգնության, բարձրության և լսելիության հաշորդական փոփոխությունը կամ ընդհատումն է: Սոսկելով բնախոսական ու գիտական լեզվով՝ վանկը ձայնարանի ու բերանի բացվածքի և գործարանների գիքքի կամ որ նույնն է՝ օդի ճնշման, հոսանքի և արտաբերության ճիգի հանկարծական փոփոխությունն է:

Վանկի իբրև թանձրացյալ պատկեր արվում է հետևյալ օրինակը (Rondet, Elements de phonétique generale, 184):

Ենթադրենք մի ավազան, որի ջուրը որոշ բարձրությունից հոսում է մի ջրանցքի մեջ. ալնպես է հարմարեցված սակայն, որ ջուրը նախապես մի անցքից անցնելով, լցվում է մի խոռոչի մեջ և ալստեղից էլ մի ուրիշ անցքից անցնելով, հասնում է ջրանցքը: Եթե ջրի հոսանքի ուժը հավասար պահելով հանդերձ, փոխենք ավազանի բարձրությունը և առաջին կամ երկրորդ անցքի մեծությունը, կտանանք տարբեր-տարբեր ալիքներ: Վանկերը կարելի է համեմատել այս ալիքներին: Ավազանի բարձրությունը ձայնի ուժգնությունն է. առաջին անցքը ձայնի բարձրությունն է, երկրորդը՝ նրա երանգը (ձայնավոր, սեղմ կամ պայթական): Փոփոխելով ավազանի բարձրությունը և անցքերի մեծությունը, փոխում ենք ձայնի ուժգնությունը, բարձրությունն ու երանգը: Փակելով երկրորդ անցքը ընդհատում ենք և ձայնը:

Կարելի է ավելի մատչելի դարձնել այս փորձը կառուցելով մի գնդակավոր սիֆոնի միջոցով: Ամեն անգամ, որ սեղմենք խո-

ղովակը գնդակից վերև կամ ներքև և բարձրացնենք հոսման անցքը, կտեսնենք, որ կազմվում է մի տարբեր ալիք:

Վանկի տեսակները. — Որպեսզի մի ձայն կարողանա վանկ կազմել, պետք է ունենա հետևյալ պայմանները. 1. Ձայնը կարելի պետք է լինի երկարելի: 2. Մոտը գտնված մյուս ձայների համեմատությամբ պիտի ներկայացնի հողավորման և արտաշնչման նվազագույն ճիգը: 3. Նույն ձայնի համեմատությամբ պիտի լինի ամենից ավելի լսելին:

Այս երեք պայմանները ամբողջապես լրացնում են ձայնավորներն ու երկրաբբառները, ուստի և նրանք էլ ծառայում են կազմելու զանազան վանկեր:

Գալով բաղաձայններին, նրանց մեջ շատ քչերը կան, որ լրացնում են հիշյալ պայմանները, ուստի և քիչ անգամ կարող են գործածվել վանկեր կազմելու համար: Սույ պայթականները բոլորովին չեն կարող. բերանալին թրթռուն պայթականները մասամբ հարմար են. կարելի է, օրինակ, հնչել tb, kd, pg, բայց ծանոթ լեզուների մեջ այսպիսի վանկեր ընդունված չեն: Ավելի հարմար են շփական բաղաձայնները, բայց սրանք էլ սովորաբար մի քանի բացականչություններից այն կողմ չեն անցնում. ինչպես pst, št, pf, ps և այլն: Ամենահարմար բաղաձայններն են ռնգալիները (m, n, ŋ), կողմնական և ցնցուն բաղաձայնները (l, r), որոնք լրացնում են բոլոր պահանջված պայմանները: Հույն քերականները այս բաղաձայններից հատկապես չորսը (l, m, n, r) բաժանելով մյուսներից, կոչում էին նայ (liquide). և իրոք էլ զանազան լեզուների մեջ նրանք գործ են ածվում հաճախ վանկ կազմելու համար, ճիշտ իբրև ձայնավորներ. հմմտ. անգլերեն able (éible), mutton (mɔtn), գերմաներեն Tempel (templ), Atem (atm), geritten (geritn), Vater (fatr), խորվաթերեն trg «հրապարակ», vrt «պարսեղ», prst «մատ» և այլն: Այս կարգի բաղաձայնները լեզվաբանության մեջ տարբերվելով մյուսներից, կոչվում են ձայնորդ (sonante). հնդկները իրենց ալբուրների մեջ մտցրած էին l, r ձայնավոր, որ ձևով էլ տարբերում էին l, r բաղաձայններից. հնդկվրոպական լեզվաբանության մեջ, ինչպես տեսանք, ձայնորդ են կոչվում l, m, n, r նախքոք և y, w կիսաձայնները, որոնք ծառայում են մերթ իբրև ձայնավոր, և մերթ իբրև բաղաձայն:

Երբ մի բաղաձայն կազմում է առանձին վանկ, այսինքն դառնում է ձայնորդ, նա չի կարող ալլես միանալ ձայնավորի հետ և ոչ էլ ձայնավորը նրա հետ, որովհետև ինչ էլ լինի բաղաձայնի

տեսակը, ձայնավորը նրանից ավելի լսելի է և ներկայացնում է նվազագույն ճիգը: Վանկ կազմելու պաշտոնը այս պարագային անցնում է ձայնավորին: Երբ բաղաձայնը կազմում է վանկ, նրան կարող են ընկերանալ իրենից նվազ լսելի բաղաձայններ միայն:

Հայերենի մեջ մենք ունենալով ը ձայնավորը, հաճախ կարող ենք կարծել, որ բաղաձայնավոր վանկերի մեջ իրապես վանկ կազմողը ձայնորդը չէ, այլ ներմուծվող ը ձայնավորը. ինչպես փրսա, ֆըշա և այլն: Այս կարծիքը սխալ է, որում շուտով կարող ենք համոզվել, եթե վերցնենք նույն վանկերի երկար ձևերը: Արդարև, հիշույ՜ լալ վանկերի երկար ձևերն են փօ՛ւօ՛ւօ՛ւ, ֆշօ՛ւօ՛ւօ՛ւ և սօ՛ւթի փը՛ւօ՛ւ, ֆը՛ւօ՛ւ. այսինքն երկարող ձայներն են ս և շ և ոչ թե ը. ուստի և վանկ կազմող տարրը այդ բաղաձայններն են (ձայնորդ) և ոչ թե ը ձայնավորը:

Շատ լեզուներ կան, որոնք ճանաչում են միայն պարզ վանկեր, այսպես են չինարենը, ճապոներենը և այլն:

Աֆրիկյան օկեանի լեզվում վանկերը լինում են միշտ մի բաղաձայն + մի ձայնավոր. բացառություններ քիչ կան և եղածներն էլ համարվում են օտար փոխառություն (Westerman, 64):

Աֆրիկյան որոշ լեզվում իրար հաջորդող բաղաձայնների խմբեր չկան, այլ միայն մի ձայնավոր + մի բաղաձայն. բառավերջում կարող է բաղաձայն գտնվել. օտար բառերն էլ ձևավորում են այս ոճով. օրինակ՝ français > faranse, citrouille > suturui և այլն (Rimbaud, 9):

Վանկի ձայնակառուցումը հայերենում¹:

1. Արդի արտասանությամբ հայերենը բոլորովին անընդունակ է վանկի սկզբում ձայնավորից առաջ երկու բաղաձայն միասին հնչելու, լինի դա բառասկզբում, թե բառամիջի առանձին վանկերում. այսպես՝ գլուխ, կրակ, մարակ հնչվում են գլուխ, կրակ, մարակ: Մրա ապացույցն էլ այն է, որ այս կարգի բառերը հոգնակիում ստանում են -ներ մասնիկը, որ հատուկ է բազմավանկներին: Նմանապես բառի մեջ՝ Մկրտիչ—Մըկըրտիչ, պուսեի—պըռըսեի, կթիլթալ—կըթիլթալ և այլն: Եթե բառը սկսում է զր, գր, գմ, սկ, սպ, սք, սա, սք, շո ձայնախմբերով, ը ձայնավորը գրվում է կա՛մ շջականից առաջ և կա՛մ վերջը. ինչպես՝ ըշտապ, սըխալ, սըրըսկի և այլն: Ոմանք կարծում են, որ եթե սօ վերևի, գոնե այս վերջին կարգի բառերը միավանկ են (մաս-

ձևով կիրոպական լեզուների ոգով). բայց դա էլ սխալ է, որովհետև նույնպիսի բառերի հոգնակին լինում է ստակներ, սավերներ, ստորներ, սկիզբներ և այլն:—Սկսել բառը ետավանկ է: Այս է պատճառը, որ հալ մարդը ուսուցիչին վերի բառերը արտասանած ժամանակ՝ հնչում է բաղաձայնակա, բզբբբբբբբբբբ և այլն:

2. Բառամիջին վանկի վերջում, ձայնավորից հետո կարող է գալ միայն մի կամ երկու բաղաձայն, վերջինը միայն այն դեպքում, երբ ստաշին բաղաձայնն է նայ բ, ո, սնդաթին և, մ, տեական դ, թ, լ (վ), գ, ս, ժ, շ, և տառերը: Օրինակ՝ վարթ-ներ, անձնակա, ամպ-րոպ, գաղտ-նի, սաստ-կանալ, պաշտ-պան և այլն:

Այս հաջով էն նաև ալ, ոլ, որոնք հնչվում են իրր ձայնավոր + բաղաձայն:

3. Բառի վերջում, ինչպես և միավանկ բառերի մեջ, սովորաբար վանկը վերջանում է վերի ձևով. բայց կարող է նաև լինել որևէ բաղաձայն կամ ը հոգնակի բառ նշանը (օրինակ՝ մեջք, աչք, կապք, միտք), կամ նաև քս հանգը (մեռաքս, գուգս, մաքս).—Վերջապես կարող է լինել վերի ձևով երկու բաղաձայն + ք հոգնակի բառ նշանը (ինչպես պարտք, կուրծք, վարձք, առանցք, քըղանցք, հարքք, մարքք, ելրարքք):

Հստ ալսմ հայերենի մեջ վանկը ամենաշատ կարող է ունենալ 5 հնչյուն, որոնցից մի բաղաձայն սկզբում, հետո մի ձայնավոր և հետո երեք բաղաձայն (կուրծք, հարքք), որոնցից վերջինը միայն ք հոգնակի բառն է: Այսպիսի վանկեր կարող ենք գտնել բառավերջում կամ սակավաթիվ միավանկ բառերի մեջ: Բառի մեջ երեք բաղաձայն միասին վանկի վերջում անհնարին է, բացառությամբ առանցք-ներ, քղանցք-ներ, կուրծք-ներ, պարտք-ներ և այլն ձևերի: Ուր որ երեք բաղաձայն պատահի, մեկը պիտի անցնի հաջորդ վանկին. ինչպես վարձ-կան, պաշտ-պան: Բացի դրանից, վանկի վերջում, ինչպես նաև բառի վերջում, սօ մի բաղաձայնից հետո չի կարող պատահել և, բ, վ (ւ), շ: Գերմաներեն ernst կամ սուսերեն ყԿԵԵՎ վանկերի նման վանկեր անհնարին են հայերենում. դրանք հայը արտասանում է եսըսա, չուվըսաթվ: Նույնիսկ Մարքս անունը՝ կիրոպական հնչման անխարժ հայը արտասանում է Մարքբս:

Ամենից ավելի դժվար է որոշել, թե բառասկզբում կամ բառամիջում 2-ից ավելի բաղաձայնների խնդման դեպքում ո՞ր պետք է դնել ը ձայնավորը (հմմտ. Արեղյան, Տաղաչախություն, էջ 51—53): Այդ կարգի բառերի արտասանությունը մենք սովոր-

¹ Մ. Արեղյան, Տաղաչախություն, էջ 35—36:

բությամբ գիտենք, թեև մեկի արտասանությունը երբեմն չի համապատասխանում մյուսի արտասանության. օրինակ, ասում են բըրտ-նել և բըրտընել, ձեռընա և ձեռընա, փշըրվել և փշըրվել և այլն: Բայց մեկը, որ ծանոթ չէ արտասանության, ինչպես պետք է հնչի, քանի որ այդպիսի ը-երը չեն գրվում մեր հին, ինչպես և արդի ուղղագրությամբ¹:

Բառասկզբում, երբ ունենք 3 բաղաձայն միասին, երբորդը անցնում է հաջորդ ձայնավորին, իսկ առաջին երկուսը ստանում են ը. ինչպես՝ տրտո՛ւմ, ննջել, թշուառ (ու համարելով բաղաձայն), գտնել և այլն: Կան մի քանի բառեր, որոնք արտասանության մեջ տատանվում են. այսպես են մրրիկ=մըրըրիկ, մըրրիկ, փթթել=փըրըրել, փըթթել, զննել=զըննել, զընընել, քննել=քըննել, քընընել, կտրել=կըտրել, կըտըրել: Սրանցից ավելի սովորական են առաջինները, երկրորդները՝ անսովոր:

Բառասկզբում, երբ ունենք 4 բաղաձայն, վերջինն անպատճառ անցնում է հաջորդ ձայնավորին, իսկ առաջին երեքը կազմում են մի կամ երկու վանկ. այսպես սրսկել=սըրսկել, սըրըսկել, նաև սըրսըկել, մթնտել=մըթնտել, մըթնըտել, խրտուխլակ=խըրտուխլակ, խլրտիլ=խըլըրտիլ, կոկոռոց=կըռկըռոց և նմաններ. բըրտոնել=բըրտընել, բըրտանել, խնդրել=խընդըրել (բայց ոչ խընդըրել), քրտնաթոր=քըրտնաթոր (բայց ոչ քըրտընաթոր), հրճուանք=հըրճըվանք (բայց ոչ հըրճըվանք):—Կրավորական—ուել (վել) վերջավորությունը իրանից առաջ պահանջում է ը. ինչպես՝ զսպըռուել, զննուել, զրկուել, թըջուել, լկուել, խըմբուել, խոնուել, բոնուել, խցկուել, գտնուել, հնչուել, պննուել, բոնուել և այլն: Այս կարգին չեն պատկանում հրճուել, ցրուել, գրգուել և այլն բայերը որոնց մեջ ու արմատական է:

Երբ բառասկզբում ունենք 5 բաղաձայն, նմանապես վերջին բաղաձայնը անցնում է հաջորդ ձայնավորին, իսկ նախորդ չորս բաղաձայնները կազմում են 2 վանկ. ինչպես՝ մշտնջենաւոր, կընարնաոց, շշկուել, սրթսրթալ, խղւրտիւն, արտնշալ:

Այսպես նաև, երբ բառասկզբում ունենք 6 բաղաձայն միասին հավաքված. ինչպես սրթսրթալ, պլթպլթալ, վրթվրթալ, վնկվնկալ բըրթմնջյուն և այլն:

Բառասկզբում, եթե հավաքված են երեք բաղաձայն, մեկը անցնում է հաջորդ ձայնավորին, մյուս երկուսը ստանալով ը, կազմում են առանձին վանկ. ինչպես՝ վերըստիւն, կոտըրտել, կարմը-

րել, կամ միանում են նախորդ ձայնավորին, ինչպես՝ Աստված, վարձկան, արծվի:

Այս գեպքում կրավորականի -ուել (վել) վերջավորությունը պահանջում է իրանից առաջ ը. ինչպես՝ գըռշմըրվել, սարքըրվել, սեղմըրվել, առնըրվել, մոռցըրվել, ջարգըրվել, հարթըրվել, կազմըրվել, աեսըրվել, քարքըրվել, մառնըրվել, նեղըրվել, ծածկըրվել, հաղթըրվել, օգտըրվել, զարնըրվել, հաշարըրվել և այլն: Այս պարագային, երբ միջին բաղաձայնն է ը, ու, դ, լ, ձայնավորը արևելահայ գրականում գրվում է այս բաղաձայններից առաջ, մինչդեռ արևմտյան գրականում՝ սովորական ձևով. օրինակ՝ կոտրուել, մանրուել, պատուել, կերակրուել, գայթակղուել և այլն ըստ արևելահայերի լինում են կոտըրվել, մանըրվել և այլն, մինչդեռ ըստ արևմտահայերի սովորական կանոնով՝ կոտըրվիլ, մանըրվիլ և այլն:

Բառամիջում եթե հավաքված են 4 բաղաձայն միասին, վերջինը գնում է հաջորդ ձայնավորին, մյուս երեքը կազմում են երկու վանկ. ինչպես՝ յայտնվել, ընկնվել, պարտկվել և այլն:

Հարց է, թե հին հայերն էլ, արդի հայերի նման, բաղաձայնների խմբերն արտասանելիս ներմուծում էին ը ձայնավորը, թե ուսաց կամ ուրիշ եվրոպական լեզուների նման միաշունչ հընչյուն էին տալիս նրանց: Այս բանն իմանալու համար որևէ ուղղակի վկայություն չկա: Հայագետ Մելին մտածել է հետևյալ հնարագետ միջոցը:

Գիտենք, որ բայերի խոնարհման ժամանակ կատարչալի և ապտոնիի ձևերը, եթե միավանկ են, ստանում են ե հավելվածը, իսկ եթե բազմավանկ են՝ այդ հավելվածից զուրկ են մնում. օրինակ, եհար, եաու, ետուր, եկաց, եղից, բայց սիրեաց, բերի, ածի և այլն: Նմանապես ապտոնիում միաձայնիները ունեն ցց, իսկ բազմավանկները՝ սց. հմմտ. կացցես, սիրեսցես և այլն: Արդ, այն բայերը, որոնց սկիզբը գտնում ենք կրկին բաղաձայն, նույն ժամանակներում ե չեն ստանում. այսպես՝ գրեաց, խցի, լցեր, նմանապես գրեսցես, գնացցես և այլն: Նշանակում է, թե սրանք միավանկ բառեր չեն. գրեաց, խցի, լցեր գրչությունները չեն ներկայացնում ճիշտ արտասանությունը, որովհետև հին հայերն էլ կարգում էին գրեաց, խցցի, լցցեր և այլն, ճիշտ ինչպես հիմա: Այսպես նաև Մկրտչյան, «մշտնջենաւոր»¹ և այլն բառերը, որոնք ըստ երևութիւն բաղաձայնների անարտասանելի խճողումներ են:

¹ Մի հայագետ Եղնիկի «Հմշտնջենաւոր» բառը գերմանական տառադարձությամբ գրում էր հետևյալ ձևով. „tschmschintschenavor“. 14 բաղաձայն

¹ Մեր գրողներից Ս. Քամայանն առաջարկում է գրել անդիր ը-երը և իր ստորյա գրությունց մեջ էլ այսպես է գործածում:

Անորոշ են մնում ստ, սպ, սկ ձայնախմբերը բառի սկզբում, որովհետև մի կողմից ունենք եսպան, եստեղծ, որոնք ցույց են տալիս, որ այս բառերը միավանկ են (ուստի հնչելի սպա-նանի, ստեղ-ծել), իսկ մյուս կողմից ունենք ստապիս (և ոչ թե ֆստապ-ցիս), որ ցույց է տալիս, թե ստա-բազմավանկ է (այսինքն՝ հընչ-վում է ըստա-նալ և ոչ թե ստանալ):

Մեկին կարծում է, որ այս կարգի բառերը ըստ տեղվույն տարբեր են հնչվում. այսպես, ձայնավորից հետո ստա-, սպա- և ալլն, իսկ բաղաձայնից հետո ըստա-, ըսպա- և ալլն (նամակ 1929 թ. սեպտեմբեր):

Վանկատություն. — Որևէ բազմավանկ բառի մեջ անշատ վանկերի որոշումը կոչվում է վանկատություն (épellation): Վանկատության ժամանակ երկու հարց է ծագում. նախ թե ո՞րն է լուրաքանչյուր վանկի կենտրոնը կամ հիմնական տարրը և երկրորդ, թե ու՞ր է հասնում նրա սահմանը, այսինքն՝ թե ո՞ր ձայնները կապված են նրա հետ: Նախորդ քննություններից գիտենք արդեն, որ վանկ է կազմում այն ձայնը, որ միաժամանակ մաքսիմում լսելին է և միմիայնակ ճիգն է ներկայացնում, և թե այս կետում առաջին տեղն են բռնում ձայնավորներն ու երկրորդները, երկրորդ տեղում՝ l, m, n, r նայնրը, երրորդ տեղում՝ շփականները և հետո՝ պալթականները: Սրանից հետևում են հետևյալ երկու օրենքները. 1. Որևէ ձայն, որ կապված է մի վանկի կենտրոնի հետ, կարող է նրանից բաժանվել միմիայն այնպիսի ձայնի միջոցով, որ նրան հավասար կամ նրանից ավելի լսելի է և նրան հավասար կամ նրանից պակաս ճիգ է ներկայացնում: 2. Երբ երկու ձայն բաժանված են իրարից նվազ լսելի և ավելի մեծ ճիգ ներկայացնող մի ձայնով, առեմն կազմում են երկու տարբեր վանկեր: Այսպես, aio, nkm, idl ձայնախմբերի մեջ՝ a և o, n և m, i և l պատկանում են տարբեր վանկերի. ընդհակառակը, wai, tqk, dli ձայնախմբերի մեջ՝ w և i, t և k, d և l պատկանում են միևնույն վանկին՝ կենտրոն ունենալով a, u, i ձայնները:

Այս երկու օրենքները բացատրում են մեզ, թե 1. Ինչու՞ նալ + պալթական ձայնախմբերը (rt, lp, nk և ալլն) կարող են գտնվել վանկի վերջում (հմմտ. արա, ալք, աչք, ունք և ալլն),

մի ձայնավորի սկզբից! այժմ էլ մեր Մկրտչյան ազգանունը ուսուները գրում են Мкртчян և գտնում են, որ հայերենը անհնչելի բաղաձայնների մի խումբում է! մինչդեռ այս բառը հնչվում է իրոք Մըկըրաչյան:

բայց չեն կարող գտնվել վանկի սկզբում: 2. Թե ինչու՞, ընդհակառակը, պալթական + նալ ձայնախմբերը (tr, pl, kn և ալլն) կարող են գտնվել վանկի սկզբը և չեն կարող գտնվել վանկի վերջը՝ այն լեզուների մեջ, ուր ը ձայնավոր չլա, իսկ այն լեզուների մեջ, ուր արդ ձայնավորը կա՞ չեն կարող գտնվել վանկի ոչ սկզբը և ոչ վերջը (հմմտ. հայերեն թրել, դրած, ատր և ալլն): 3. Թե ինչու՞ միևնույն բառի մեջ բաղաձայնի տեղափոխությունը պատճառ է դառնում վանկերի թիվը փոխելու. ինչպես՝ կաք (մի վանկ), կաքն (երկու վանկ):

Վանկի կենտրոնը որոշելուց հետո մնում է որոշել, թե ո՞ւր է լուրաքանչյուրի սահմանը, որտեղ է վերջանում ալթինչ վանկը և սկսում հաջորդը: Այս հարցը վճռել շատ ավելի դժվար է: Ըստ Ռուսլոյի, միայն միավանկ բառերն են, որ ունեն բնախոսորեն ճիշտ գոյություն, իսկ բազմավանկների արտասանության մեջ գործարանների շարժումները շարունակվում են առանց ընդհատման: Ըստ Եսպերանտոյի բացատրության, «փնտրել երկու վանկերի սահմանը նման է փնտրելու, թե ո՞րն է ձորի միջի այն դիժը, որ բաժանում է իրարից երկու հարեան լեռները»: Ըստ Մեյլի (Introduction, V, 97), իսկապես բաղաձայնը պատկանում է միանգամայն երկու կողմի ձայնավորներին. պալթուցումը, որ ձայնավորի արտաբերությունից հետո բաղաձայնի փակման կամ սեղմումի պատրաստությունն է, պատկանում է առաջին ձայնավորին: Իսկ պալթուցը՝ որ փակումին կամ սեղմումին հաջորդող բացումն է, պատկանում է երկրորդ ձայնավորին: Մենք գիտենք, որ ձայնավորները ամենաբաց ձայններն են, իսկ բաղաձայնները՝ եթե սեղմ են, մի քիչ ավելի փակ են, իսկ եթե պալթական են, բոլորովին փակված են: Ուրեմն և վանկերի հաջորդությունը ներկայացնում է բացումների ու փակումների անընդհատ մի շարունակություն, որոնցից բացումները ներկայացնում են ձայնավորները, իսկ փակումները՝ բաղաձայնները:

Վանկատությունը լեզվի մեջ ունի գործնական նշանակություն, որովհետև տողադարձը հիմնվում է նրա վրա: Այս պատճառով անհրաժեշտ է որոշել վանկատության կանոնները:

Վանկատությունը շատ անգամ կախված է լուրաքանչյուր ազգի հնչական սովորությունից, բայց ընդհանրապես կարելի է տալ հետևյալ օրենքները, որոնք նաև տողադարձի օրենքներն են.

1. Երբ մի բաղաձայն գտնվում է երկու ձայնավորի միջև, անցնում է հաջորդ վանկին. ինչպես՝ Ա-պա-րա-նի, ծա-ռու-ղի,

դե-րա-սա-նու-նի-նե-րի, և այլն: Նույնիսկ եթե մի բառ վերջա-
նում է բաղաձայնով և հաջորդ բառը սկսվում է ձայնավորով, բա-
ռավերջի բաղաձայնը միանում է այդ ձայնավորին և վանկ կազ-
մում. օրինակ՝ ալ-ս է = ալ/սէ. գերմաներեն hat er es = ha-te-res:

Փրանսերենում հաճախ գրվում է երկու բաղաձայն, բայց
հնչվում է միայն մեկը. այս դեպքում մի բաղաձայնը մնում է մի
վանկին, երկրորդը՝ մյուս վանկին: Բայց առաջինը լուկ ձևական է,
և վանկատման մեջ երկրորդն է միայն հնչվում. ինչպես՝ arracher—
բաժանվում է ar-ra-cher, հնչվում է a-ra-cher: Թե ինչու՞ արդյոք
այդպես է, ինչու՞ արդյոք երկու ձայնավորի միջև գտնված մի բա-
ղաձայնը անցնում է երկրորդ վանկին և չի մնում առաջին վանկի
վրա, ըստ Գրոտի (BSL, XXVII, 1927 թ., № 81, էջ 24—25) այն
պատճառով է, որ բաղաձայնները բառասկզբում ավելի ուժեղ են
հնչվում, քան բառավերջում, որով և ավելի լսելի է a-ra-še, քան
ar-a-še. կամ առնելով հայերենից մի օրինակ՝ Ա-րա-րա-ար
քան Ար-ար-աա-ը:

Որոշ լեզուների մեջ կան դեպքեր, երբ նույն բաղաձայնը
մնում է առաջին վանկի վրա, այսպես, անգլերեն capacity: Մրա
պատճառը համարվում է այն, որ անգլերենում բաղաձայնի լարու-
մը ուժեղ է, անցումը տկար. դրա համար էլ կցվում է նախորդ
ձայնավորին:

2. Երկու բաղաձայն եթե գտնվում են երկու ձայնավորի մի-
ջև, դրանցից առաջինը անցնում է նախորդ վանկին, երկրորդը հա-
ջորդին. ինչպես՝ ար-բա, ալ-տակ, Ան-նա և այլն:

3. Այս պարագային, երբ երկրորդ բաղաձայնը 1 կամ 2 է,
առաջին բաղաձայնն էլ միանում է նրան և անցնում հաջորդ վան-
կին, պայմանով, որ առաջին բաղաձայնը նալ կամ սեղմ բաղա-
ձայն չլինի: Այս օրենքը ընդհանուր է բոլոր եվրոպական լեզուների,
ինչպես և ուսերենի մեջ. ինչպես ֆրանսերեն a-troce, é-craser,
բայց al-ler, ar-rêter և այլն:

4. Երբ բաղաձայնների թիվը երկուսից ավելի է, մի բաղա-
ձայն գնում է երկրորդ վանկին, մյուսները մնում են առաջին վան-
կին, բայց համեմատ նախորդ 3-րդ օրենքի. ինչպես՝ Ասա-ված,
կանգ-նել, հարց-մուճը և այլն, ֆրանսերեն ar-bre, am-ple և այլն:

Ասացինք, թե վանկատույնը շատ անգամ սովորույթյան
արդյունք է, հետևաբար շատ բան էլ կամայական. այսպես՝ լատի-
ներենում բաղաձայնների ամբողջ խումբը անցնում էր հաջորդ վան-
կին. հունարենի մեջ θ, φ, χ իրենց հաջորդ բաղաձայնի հետ միանում

են միշտ հաջորդ վանկին, ինչպես՝ ἐ-χθρός «թշնամի» և այլն:
Անգլերենում բառի արմատն ու մասնիկը մնում են առանձին.
ինչպես՝ symbol-ise, preced-ing. գերմաներենում նախամաս-
նիկները և բարդությունը մասերը բաժանվում են իրարից, բայց
վերջնամասնիկները կանոնավոր են. ինչպես՝ ver-sprechen, be-
stimmen, Nach-ahmung, lei-dend, Wör-tern: Հունգարերենում
ածանց բառերը հայերենի նման կանոնավոր վանկատույն
ունեն, իսկ բարդ բառերը՝ համաձայն ստուգաբանության,
օրինակ՝ i-rok և ոչ թե ir-ok, բայց megette և ոչ թե meg-
ette (Ney, Ungarische Sprachlehre, Pest 1862, էջ XV): Արաբերեն,
թուրքերեն, պարսկերեն և վերջապես այն բոլոր
լեզուների մեջ, ուր գրությունը արաբական տառերով է, վանկա-
բաժանում առհասարակ ընդունված չէ, որովհետև տողադարձի ժա-
մանակ բառերի գրությունը լուրահատուկ ձևը պիտի խանգարվեր:
Երբ բառը տողի ծայրին կիսատ է մնում, ավելի լավ են համա-
րում կամ վերջին տառերը իրար վրա խտացնել և կամ ամբողջը
անցկացնել հաջորդ տողը՝ բաց մնացած տեղում պարուրած և նշան
դնելով: Նույն լեզուները հիմա արդեն սկսել են դործածել տողա-
դարձը, բայց բառը կիսում են ոչ թե ըստ հնչման, այլ համաձայն
գրության լուրահատուկ պահանջներին: Ռուսերենի մեջ մի տառը,
հակառակ հնչական պահանջներին, չի կարող տողադարձվել: Հայե-
րենի մեջ հին ժամանակ տողադարձ չկար. ուր որ վերջանում էր
տողը, այնտեղ էլ կիսում էին բառը և թեկուզ մի բաղաձայն անց-
կացնում հաջորդ տողը. ինչպես՝ իմաստութեամբ, տեառն, արարի
և այլն: Արդի սովորույթյամբ ընդունված է տողադարձի հնչական
գրությունը, որ իր պարզությունը և ճշտությունը գերազանցում
է բոլորին.— բաղաձայնների բոլոր խմբերից միշտ մի բաղաձայն
անցնում է հաջորդ վանկին. օրինակ՝ ա-րի, պաա-կեր, հարս-նեք,
հանգ-նել, պարտք-ներս և այլն: Ժիշա այսպես է նաև չեխերենի
մեջ, ուր միայն ck, či, sk, st, št ձայնախմբերը ամենեին չեն
բաժանվում իրարից. ինչպես՝ če-cky՝ «հուլի», tu-re-čti «թուրքեր»
և այլն (Hantich, Gramm. tchèque, 11): Հայերենի այս պարզ ու
րենական կանոնը ոմանք սիրում են խճողել ավելորդ շեղումներով:
Այսպես, ոմանք սիրում են, համաձայն եվրոպական լեզուների
սկզբունքի, նալ տառերին կցել նախորդ բաղաձայնը. ինչպես՝ ա-
պրես, աճ-մըն, ա-քլոր և այլն: Այսպես են անում Մխիթարյան-
ները, գրաբարյանների մնացորդները և Կովկասի հայերից ոմանք՝
հետևելով ուսերենի: Ուրիշներ, երկրարբանների մեջ բաղաձայն

դարձած մասը իբրև ձայնավոր ընդունելով, ըստ այնմ փոխում են կանոնը. այսպես՝ Աս-տուած, դար-ձեալ, փոխանակ Աստ-ուած, դարձ-եալ, որոնք հնչվում են Աստ-ված, դարձ-յալ: Այս հիման վրա գրվում է մեծու-թիւն, սե-նեակ և այլն, մինչդեռ գուտ հըն-չական ձևով պիտի լիներ մեծութ-իւն, սեն-եակ: Վերջապես կան արեւմտեաններն էլ, որ պահանջում են բարդ բառերը տողադարձել ըստ իրենց արմատի՝ համաձայն գերմանական սովորութեան. ինչ-պես՝ ան-զգամ, ձեռն-աղաց, ձեռն-երեց և այլն, փոխանակ ձեռ-նաղաց, ձեռներեց: Այսպիսի տողադարձը շատ անմիտ է հենց նրա համար, որ պահանջում է նախապես ստուգաբանական գիտութիւն և մի բառ, որի ստուգաբանութիւնը հայտնի չէ, կարելի չպիտի լինի տողադարձել և կամ սխալ պիտի տողադարձվի: Օրինակ՝ աքա-ղաղ բառը նախապես ստուգաբանում էին այգ և աղաղակ բառերից կազմված, ուստի պիտի տողադարձեին աք-աղաղ, իսկ հիմա, որ այդ ստուգաբանութիւնը մերժված է և հայտնի չէ բառի ծագումը, ինչպե՞ս պետք է տողադարձել:

Հայերեն տողադարձի վերջին մի կարեւոր կեան էլ կազմում են այն բառերը, որոնք իրենց մեջ ունեն ը հնչյունը: Ըստ օրինի այս ը հնչյունը հաշվի է առնվում և երբ առաջին տողի վերջին վանկի կամ երկրորդ տողի առաջին վանկի մեջ է ընկնում, առող էլ գրվում է. ինչպես՝ զը-րել, երբե-մըն, ա-նըզգամ, ա-պըս-պը-րել և այլն: Ոմանք կարծում են, թե հնչված ը-երը գրելու այս սովորութիւնը կամ առնասարակ տողադարձը ավելորդ է և իրենք էլ չեն պահում այդ կանոնը: Ծիշտ չէ այդ: Տողադարձի ժամանակ հնչված ը-երը գրելու սովորութիւնը ընթերցման սխալներից խուսափելու համար է: Օրինակ, եթե գրեինք Մկր-տիչ, չէինք կարող իմանալ, թե պետք է կարդալ Մկըր-տիչ, թե Մկըբ-տիչ. ը-ի գործածութիւնը փրկում է մեզ այս շփոթութիւնից: Իհարկե Մկըբ-տիչ, բառ չկա և ամեն մարդ էլ կկարդա Մկըբ-տիչ, բայց անշուշտ նախապես երկրորդ տողի -տիչ վանկը նկատելուց հետո միայն:

Վանկերի ճիշտ բաժանումն էլ անհրաժեշտ է մեր մեջ, հա-կառակ պարագային հնարավոր են դարձել սխալ ընթերցումներ: Օրինակ, Պատկանչանի անփութ հրատարակութիւններից մեկում (ՎՄԽԻՄար Ալբիվանեցու Պատմութիւն, Պետերբուրգ, 1867 թ.), էջ 6—7 անցման ժամանակ, կարդում ենք բա-զմաշխատ: Ընթեր-ցողը նախ պիտի կարդա բա-զբմաշխատ և հետո նկատելով, որ այդպիսի բառ չկա, պիտի ողղի բազ-մաշխատ: Կամ, եթե հայե-

րեն քիչ գիտի, պիտի մտածի, թե ինչ կարող է լինել բա-զբմաշ-խատ:

Ընթերցման այս հնարավոր շփոթութիւնը ավելի հայտնի դարձնելու համար կարելի է հիշել բազմակնութիւն, բազմախը-տութիւն, բազմամտութիւն և այլն բառերը, որոնք կարելի է և՛ կարդալ բազմ-կնութիւն (շատ կին ունենալը), բազմ-խտու-թիւն (շատ խիտ լինելը), բազմ-մտութիւն (շատ միտ ունենա-լը), և բազմակ-նութիւն (շատ աչք ունենալը), բազմախ-տութիւն (շատ ախտեր ունենալը), բազմամ-տութիւն (շատ ամիսներ անց-նելը): Տողադարձի ճիշտ գործածութիւնը՝ վանկերի ճիշտ բաժա-նումով և կամ ը-ի գործածութիւնն է, որ ազատում է մեզ շը-փոթութիւնից՝ այս և նման բառերի ընթերցման ժամա՛ակ:

Երբ բառը բարդ է և երեան է գալիս այսպիսի անգիր ը, տողադարձի մեջ ախրում է շփոթութիւն: Այսպես, օրինակ, հա-մալսարան, տրամադրել, արձանագրել, գերբնական բառերը կա-րելի է գրել՝

1. Համալ-սարան, տրամադ-րել, արձանագ-րել, գերբ-նական.
2. Համա-լսարան, տրամա-դրել, արձանագ-րել, գեր-բնական.
3. Համա-լըսարան, տրամա-դրել, արձանագ-րել, գեր-բը-նական:

Առաջինը դուռ հնչական ձևն է և համաձայն հայերենի սո-ղադարձութեան պարզ սկզբունքին: Երկրորդը ստուգաբանական, որի անտեղութիւնը պարզել ենք քիչ առաջ: Երրորդը ստուգաբա-նական և անգիր ը-երը գրելու օրենքին համեմատ, բայց հայերենի արդի հնչման անհամապատասխան, որովհետև այսօր մենք չենք հնչում համալըսարան և այլն: Ըստ մեզ, լավագույնը այս երեքից առաջինն է:

Տողադարձի համար մեր մեջ ընդունված ընդհանուր կանոն-ներից մեկն էլ այն է, որ երբ մի բարդ բառի երկրորդ մասը ըն-կընում է երկրորդ տողի սկիզբը, այլևս ը ձայնավորը չի գրվում: Օրինակ՝ ան-մտութիւն, արև-մայան, ան-տրամադիր և այլն, և ոչ թե ան-մըտութիւն, արև-մըայան, ան-տըբամադիր և այլն:

Ծանոթ. — Իմ անհատական կարծիքով երկրորդ տողի առա-ջին վանկում ը դնելը ընդհանրապես ավելորդ է. եթե առաջին տո-ղի ծայրին գրված ը-ն անհրաժեշտ է ընթերցման շփոթութիւնից խուսափելու համար, երկրորդ տողի սկիզբը ավելորդ է, որովհետև չի կարող ոչ մի շփոթութիւն ծագել: Օրինակ, եթե տողադարձեինք Մկր-տիչ, չէինք կարող իմանալ, թե պետք է կարդալ Մկը՞ր թե

մկրք. ուստի Մկրք գրեւ անհրաժեշտ է. բայց երբ տողադարձում ենք Մը-կըրտիչ, երկրորդը ը ավելորդ է, որովհետեւ Մը-կըրտիչ գրելու ժամանակ էլ, միայն Մը-կըրտիչ կարելի է կարգաւ և ոչ բնավ մի ուրիշ ձևով:

Իսկ ը ձայնավորը գրել տողադարձից երկու վանկ առաջ՝ բոլորովին ավելորդ է. օրինակ, Տոլստոյի «Աննա Կարենինա», Բ, Երևան, 1936, էջ 49, տող 6 տակից՝ նըկար-չ: ն, էջ 52, տող 3 տակից՝ նըկար-չ: ն, էջ 60, տող 8 տակից՝ նըկար-բելու:

Երբ բառը բաղկացած է երեք և ավելի վանկերից և տողի վերջում ընկնում է ը, ոմանք այդ ը-ն չեն նշանակում. օրինակ, «... ասաց կարմ-բելով Սուսաննան (Պատկանեան, «Ընտիր երկասիրութիւնք», 1893, Բ, էջ 134).—ուղղել կարմը-բելով:

Երբ բառը բարդ է և երկրորդ եզրը սկսում է ը նախաձայնով, տողադարձի ժամանակ բնականաբար պահում է իր ը ձայնավորը. բայց այս դեպքում կարիք չկա գերմանական տողադարձութիւն օրինքով արմատները բաժանել. օրինակ, դա-սըն-կեր և ոչ թե դա-սըն-կեր, նո-րընձա և ոչ թե նո-րընձա, կամ նաև դա-սըն-կեր, նորըն-ձա և այլն:

Լսել եմ, որ անգլիացիք (ոմանք) հատկապես տողադարձի ժամանակ գրաշարական զժվարութիւնները նկատի ունենալով, սկսել են ապազրութիւն մեջ իսպառ վերացնել տողադարձը: Լսել եմ, բայց դեռ չեմ տեսել նման մի հրատարակութիւն: Տեսել եմ սակայն հայերեն նմանօրինակ մի գիրք, որ է Հ. Շեքերջյան, «Թըղթակցական կուրս» (հիպոտիզա և այլն սովորեցնելու համար, երկրորդ հրատարակութիւն, Թիֆլիս, 1913): Այս գրքում ոչ մի տողադարձ չկա. բառերը ամբողջապես մնում են տողի վերջում կամ ամբողջովին անցնում են հաջորդ տողի սկիզբը: Այս դրութիւնը անհարմար չէ անգլիերենին, ուր ընդհանրապես բառերը շատ կարճ են. բայց հայերենի համար, ուր երկար բառեր շատ կան, կարծում եմ, որ ոչ մի օգուտ չկա:

Հետաքրքրութիւն համար դնում եմ այստեղ մի քանի գրքերից հավաքած զանազան տողադարձական սխալներ, որոնք անշուշտ գրաշարների և սրբագրիչների անուշադրութիւնով սպրդած վրիպակներ են.

Ֆենելոնի «Տելեմաք»-ի արեւտահայերեն թարգմանութիւնից, տպված Փարիզ, 1860 թ.—կորսն-ցընել (էջ 62), փնտ-ռելու (էջ 53), խորի-րդաւոր (էջ 73), բաժնու-իլդ (էջ 80), պատ-աբանելով (էջ 83), հարցմունք-քներ (էջ 126):

Ծերենցի «Թորոս Լեոնի» վեպի Տիգրիսի 1881 թվականի հրատարակութիւնից.—վըստա-հուրիւնը (էջ 46), ըզգու-շութիւնները (էջ 173), անմըտու-քեան (էջ 176), զըծրաղ-ղաբար (էջ 183), խըստա-ցաւ (էջ 195), անըզգա-մութիւնը (էջ 233):

Հ. Ղ. Ալիշանի «Յուշիկք հայրենեաց Հայոց»-ի Ա հատորից, Վենետիկ, 1869 թ.—Պարըսկաստան (էջ 334):

Գալեմքեարեանի «Նորագոյն աղբերք եղնկալ» աշխատութիւնից, Վիեննա, 1919 թ.—թար-գմանութիւնները, թար-գմանիչն (Հավելված, էջ 38 և 39):

Ը ձայնավորի տողադարձութիւն համար մի տրիշ շփոթութիւն էլ կա. գանվել, բանվել, ուղղվել և այլ նման ձևի բառեր, ուր մի քանի բաղաձայն իրար են հաջորդում, ոմանք տողադարձում են գանը-վել, բանը-վել, ուղղը-վել, իսկ ուրիշներ՝ գանը-վել, բանը-վել, ուղղը-վել: Այս տարբերութիւնը առաջանում է բնականաբար արտասանութիւն ձևից ու թեև կանոնի իրախում չկա, բայց նախընտրելի է առաջին ձևը:

Բաց և փակ վանկեր.—Լեզվաբանական քննութիւնից մեջ հաճախ պետք է նկատի առնել այն հանգամանքը, թե վանկը ինչպիսի ձայնով է վերջանում, ձայնավոր, թե բաղաձայն, կամ որ նույնն է՝ որոշել, թե վանկի ձայնավորը վերջնաձայն է, թե միջնաձայն:

Այս բոլորը կարեւոր են նրանով, որ ձայնական փոփոխութիւնից մեջ ենթարկվում են տարբեր օրենքների:

Երբ մի վանկ վերջանում է ձայնավորով, կոչվում է բաց, երբ վերջանում է բաղաձայնով, կոչվում է փակ, այսպես՝ բա-րի, զի-նի, հո-լո-վի-ցի բառերի մեջ բոլոր վանկերն էլ բաց են. տարբեր, դեր-ձակ-ներ, պատ-շահ, բաղ-նիք բառերի մեջ բոլոր վանկերն էլ փակ են. իսկ Ար-տա-շատ, վար-դա-պետ, մըղ-ձա-վանջ բառերի մեջ առաջին և վերջին վանկերը փակ, միջին վանկերը բաց են: Սրա համեմատ էլ բաց վանկի ձայնավորը կոչվում է ազատ, իսկ փակ վանկի ձայնավորը՝ կապյալ (entravée). այսպես բա-րի բառի ձայնավորները ազատ են, իսկ բաղ-նիք բառի ձայնավորները՝ կապյալ:

Այս բոլորի մեջ բնականաբար պետք է նկատի ունենալ լուրաքանչլուր լեզվի իրական և ժամանակակից հնչումը և ոչ թե գրութիւն ձևը կամ ուղղագրական պայմանները: Այսպես, հայերեն ավրի բառի մեջ աւ վանկը փակ է և ա ձայնավորը կապյալ, միջնադեռ համահնչլուն ֆրանսերեն avril բառի մեջ a վանկը բաց է և կաղմում է ազատ ձայնավոր: Նույնպես աղուես (աղվես) բառի

առաջին վանկը գրտբարի մեջ բաց, և ձայնավորը ազատ է, մինչ-
դեռ աշխարհարարի մեջ փակ և ձայնավորը կապյալ է, ըստ որում
գրաբարի մեջ ըստ հնչման վանկատում ենք a-lyes, աշխարհաբա-
րի մեջ aγ-ves:

Վանկերը զանազանվում են իրարից նաև տեղությամբ. կան
կարն վանկեր և երկար վանկեր, ինչպես և շատ կարն և շատ եր-
կար վանկեր: Թեև վանկերի տեղությունը առանձնապես կարևոր
է տաղաչափության մեջ, որը մեր ներկա աշխատության սահման-
ներից դուրս է, բայց նա հաճախ անհրաժեշտ է նաև զուտ լեզվա-
բանական հարցերի մեջ: Ուստի մենք կնվիրենք նրան մի առանձին
գլուխ, այն է՝ «Չայնի տեղությունը» (գլուխ ԺԴ):

Գ Լ Ո Ւ Խ Ժ Բ

ՉԱՅՆԻ ԲԱՐՉՐՈՒԹՅՈՒՆԸ

Մի բառի կամ մանավանդ մի նախադասության բոլոր ձայ-
ները միևնույն երաժշտական բարձրությամբ չեն արտաբերվում,
երբեմն ձայնը բարձրանում է, երբեմն իջնում. ձայնի բարձրու-
թյան այս զանազանությունը կոչվում է ինտոնացիա կամ ելեէջ
(intonation):

Չայնի ելեէջի պատճառներն ու տեսակները երեք են.

1. Մոտոդի ներքին անհատական զգացմունքը տալիս է նա-
խադասության որոշ ելեէջ. այսպես, օրինակ, միևնույն աուեր բա-
ռը կարելի է արտասանել խնդրական, հորդորական, բարկացած,
արհամարհական, համոզիչ, հարգական և այլ ձևերով: Այսպես նաև
մի որևէ կոչական. Այ՛ աղա, Կա՛րապետ, Կարապետ... կամ խիստ՝
Կա՛րապետ...: Այս ելեէջը կոչվում է զգայական (emotionnelle):

2. Մինչև իսկ այնպիսի նախադասություններ, որոնք զուրկ
են որևէ զգայական գծից, օրինակ՝ մաթեմատիկական մի տեսու-
թյան բացատրությունը, ունեն այնուամենայնիվ լուրահատուկ որոշ
ելեէջներ, որոնք ցույց են տալիս մտածմունքների ընդհանուր ըն-
թացքը: Այսպիսի ելեէջը կոչվում է արամբարանական:

3. Լեզուների մեջ բառերն ունեն ձայնի այնպիսի ելեէջներ,
որոնք ոչ զգացմունքների հետ են կապված և ոչ էլ նախադասու-
թյան արամբարանական ընթացքի, այլ հենց բառի անբաժան մասն
են կազմում: Օրինակ, հն. νέφος բառի մեջ νε վանկի արտասանու-
թյան ժամանակ ձայնը բարձրանում է, իսկ φος վանկի մեջ իջնում:
Միավանկային լեզուների մեջ (օրինակ, չինարենում կամ աննամե-
րենում, ինչպես նաև սուղանական լեզուներում) բառերը ունեն

զանազան նշանակություններ և լուրաքանչյուրը արտասանվում է տարրեր ելեէջով: Այսպիսի ելեէջը, որ կարելի է կոչել լեզվական, սովորաբար կոչվում է տոն կամ բարձրության շեշտ (ton, accent de hauteur):

Ականջը լսում և զանազանում է ձայնի ելեէջն ու զանազան բարձրությունները: Մենք ճանաչում ենք բարկացած տոնը, վախեցողի ձայնը, աղաչական ձայնը և այլն, նույնիսկ այն ժամանակ, երբ խոսողը ցանկանում է թաքցնել իր զգացմունքները: Այդ բոլորը մենք սովորել ենք թե՛ ուրիշների վրա և թե՛ անձնական փորձառությամբ: Այս ելեէջները այնքան ընդհանուր են մարդկության, որ նույնիսկ եթե լսենք այնպիսի մարդկանց մի խոսակցություն, որոնց լեզուն չգիտենք, դարձյալ հասկանում ենք անմիջապես նրանց խոսակցության բնույթը. որքա՞ն տարբերություն, օրինակ, ժպտազեմ մարդու շոգոմիջ լեզվի և գայլացած մարդու հայհոբարան լեզվի միջև... այս տարբերությունը այնքան խոշոր է, որ նույնիսկ անասունները հասկանում են. շունը մոտենում է մեզ պոչը շարժելով՝ երբ փաղաքաբար իրեն ենք կանչում և փախչում, հեռանում է, երբ սպառնալի ձայնով բղավում ենք վրան:

Բայց այդ նորությունները կատարյալ մանրամասնություններ իմանալու և հաշվելու համար պետք է դիմենք արձանագրիչ զըլանին: Երբ մի ամբողջ նախադասություն ձագարի միջոցով արձանագրենք զլանի վրա, կատանանք թրթումների մի երկար շարք: Մենք գիտենք, որ լուրաքանչյուր ալիքի խարիսխի երկարությունը (կամ լայնքը) ցույց է տալիս թրթուման տեղությունը կամ որ նույնն է՝ արագությունը: Եթե ուղեհամար ճշտությունը չափել այս արագությունը, զլանի վրա պետք է անենք մի հաստատուն ձայնորդի թրթումները: Կան, օրինակի համար, այնպիսի ճիշտ ձայնորդներ (diapason), որոնք մի վայրկյանում ունենում են 200 կամ 500, կամ 1000 թրթում: Ձայնորդի թրթումների գիծը մենք կարող ենք գործածել իբրև չափ կամ մասշտաբ: Եթե ձայնորդը մի վայրկյանում թրթում է 200 անգամ, ուրեմն նրա մի ալիքը սեռում է $\frac{1}{200}$ վայրկյան: Այժմ նախադասության թրթումների լուրաքանչյուր ալիքի խարիսխը համեմատելով կամ չափելով ձայնորդի ալիքների հետ, որոնց լուրաքանչյուրը գիտենք, թե $\frac{1}{200}$ վայրկյան տեղություն ունի, կարող ենք իմանալ նախադասության ալիքների տեղությունը: Ենթադրենք, թե նախադասության մի ալիքը $\frac{1}{207}$ վայրկյան տեղություն ունեցավ, ուրեմն մի վայրկյանում պիտի լիներ 207 թրթում. և որովհետև գիտենք, թե

re³ ունի 292 թրթում, ուրեմն նախադասության այդ ալիքը ունի re³ աստիճանի բարձրություն: Այսպես չափելով նախադասության թրթումների լուրաքանչյուր ալիքը, մենք պիտի նկատենք, որ՝

1. Ո՛չ մի ալիքի խարիսխը հավասար չէ հարևան ալիքի հետ. ուրիշ խոսքով՝ նախադասության մեջ նույնիսկ մի ձայնի բարձրությունը շարունակ փոխվում է:

2. Ձայնի ստացված բարձրությունը հաճախ չի համապատասխանում երաժշտական ձայների բարձրության. օրինակ, 292 թրթումը re³ ձայնն է և 324 թրթումը mi³. Բայց ինչ ձայներ են ներկայացնում 297, 299, 300 և այլն թրթումները. հայտնի է, որ դրանք երաժշտության մեջ ընդունված բարձրություններ չեն:

3. Ձայնի տեղությունը այնքան կարճ է, որ չի համապատասխանում երաժշտական չափերին, ուր, ինչպես հայտնի է, ամենափոքր չափն է 64 (≡≡≡) մի բախման մեջ:


Այս արդյունքները մեզ միջոց են տալիս ավելի լավ ճշտելու հոգավոր ձայնի և երգչի նի տարբերությունը, որի մասին արդեն խոսել ենք (գլուխ Բ):

1. Երգը ներկայացնում է մի կանոնավոր ռիթմ, որ կախված է որոշ օրենքներից. մինչդեռ խոսքի ռիթմը անկանոն է և հարափոփոխ:

2. Երգը գիտի միայն և միայն որոշ բարձրությամբ ձայներ, do, re, mi և այլն, և չի ճանաչում նրանց միջին աստիճանները. ձայնը, ընդհակառակը, ունի նրա միջին հարյուրավոր աստիճանները:

3. Երգը լուրաքանչյուր նոտայի համար ընդունում է մի նըփազգույն չափ, որից ավելի կարճ տեղությունը ականջի համար անընդունելի է:

4. Երգը նոտայից նոտա անցնում է ուսույուններով, և ինչքան էլ երաժշտական միացումներ լինեն (portamento) նրանց միջև, դարձյալ ուսույունը զգալի է: Իսկ հոգավոր ձայնը ուսույուններ չունի և սահում-անցնում է նոտայից նոտա եղած բոլոր միջին աստիճանները՝ ականջի համար զգալի տեղություններով: Օրինակի համար «տեսմը» բառը երաժշտության մեջ պիտի դրենք



որ դարձյալ պիտի լիներ շատ մոտավոր պատկեր:

Նկատված երևույթ է, որ կրտսեղազաքակիրթ և կրտսեղազաքակիրթ ժողովուրդները իրենց լեզվի մեջ զնույն են ավելի զանազանյալ ելևէջ, քան քաղաքակիրթ ժողովուրդները. այսպես, նվ լսել է մեր հարևան պարսիկների լեզուն կամ շամախեցի հայոց բարբառը՝ զիտի, թե ինչքան երգեցողական են դրանք: Սպենսերը, Վազները, Վոնդար և Եսպերսը կարծում են, որ նախնական մարդկության լեզուն էլ մի տեսակ երգ էր. ըստ Վազների, այն հնագույն դարերում, երբ բանականությունն ու բնագրը խառնվում էին իրար հետ, լեզուն ու երգն էլ միացած էին իրար նախնական երաժշտության մեջ: Ապագայում, բարեշրջության (évolution) օրենքով, ինչպես որ բանականությունը հետզհետե բաժանվեց բնագրից, նույնպես և լեզուն հետզհետե դարձավ նվազ երաժշտական և միևնույն ժամանակ հետզհետե ավելի վերացական: Ավելի հետո կտեսնենք իրոք, թե ինչպես հին լեզուները ունեին երաժշտական շեշտը, որ հետզհետե տեղի տալով, այսօր գրեթե իսպառ վերացել է:

Տրամաբանական ելևէջը նախադասության բնույթի արդյունքն է. նախադասությունը կարող է լինել պարզ նկարագրական, հարցական, բացականչական կամ հրամայական. չորս դեպքում էլ հազմունքը ունի իր դերը: Պարզ նկարագրական մի հատվածի մեջ պատմողը տալիս է բնականաբար եղածի պատկերը, որ կարող է լինել շատ սովորական մի բան, բայց հաճախ նա նրա մեջ զնույն է իր զգացմունքը, ըստ որում զեպքին հավատում է կամ ոչ, հաստատում է կամ ժխտում, հավանում է կամ դատապարտում: Հարցական նախադասության մեջ կա հարցնողի հետաքրքրությունը և նրա սպասողական դիրքը: Ավելորդ է խոսել հրամայական և բացականչական նախադասությունների մասին, որոնց մեջ խոսողը իր ամբողջ հուզմունքն է ի հայտ բերում: Ըստ այսմ, ամեն տեսակի արամարանական ելևէջ իրապես զգալական է և հետևաբար նույնքան զժվար է որոշել նրա օրենքները, որքան և զգալական ելևէջի օրենքները: Այնուամենայնիվ կարելի է նկատել հետևյալ օրենքները.

1. Նկարագրական նախադասության վերջում ձայնը իջնում է, մինչդեռ նրանից առաջ գտնված բառի կամ բառերի մեջ ավելի բարձր է. օրինակ՝ Արագած սարը գտնվում է Շիրակի դաշտի մեջ տեղում:

Երբ նախադասությունը բարդ է, նրա կազմիչ մասերից յուրաքանչյուրը վերջին վանկում ստանում է ձայնի բարձրացում կամ էջք, բայց այդ էջքը ավելի փոքր է, քան նախադասության վերջում:

Օրինակ՝ Արագած սարը, որ կոչվում է նաև Ալագյազ.—և դա բուրբակի ձևն է,—գտնվում է Շիրակի դաշտի մեջտեղում:

Թվումների մեջ վերջընթեր բառը (լինի դա կապված շաղկապով կամ ոչ) ստանում է ձայնի առանձին բարձրացում. օրինակ՝ Հայկ, Արամ, Տիգրան, Վարդան ու Աշոտ:

Համակարգ նախադասությանց յուրաքանչյուրը վերջին վանկում ստանում է ձայնի էջք, իսկ պարբերության ամենավերջին վանկը ամենացած վանկն է. օրինակ. Հոս ջուրը ծիծաղ մ'ուցի', օղբ ծիծաղ մ'ուցի', երկինք ծիծաղ մ'ուցի':

2. Հարցական նախադասությունները երկու տեսակ են լինում. առաջին՝ երբ հարցնողը իրողությունը ծանոթ չէ և ուզում է իմանալ երկրորդից, որ և պիտի պատասխանի այն՝ կամ ոչ. ինչպես. Այսօր համալսարան գնացի՞ր: Այս գիրքը կարգացել էս: Հա՞յրդ է: Երկրորդ՝ երբ հարցնողը գիտի, որ զեպքը կատարված է, բայց անծանոթ է այս կամ այն հանգամանքին, որ և ուզում է իմանալ. ինչպես. Համալսարան ե՞րբ գնացի: Փանի՞ գիրք ես կարգացել: Ու՞ր է հայրդ: Երկու պարագային էլ հարցականը զբրվում է այն բառի վրա, որի պատասխանը պահանջվում է. այսպես, վերի վեց հարցումների պատասխաններն են, օրինակ՝ Գնացի (կամ Զգնացի), Կարգացել եմ (կամ Զեմ կարգացել), Հայրս է (կամ Հայրս չէ), Սրեկ, Վեց, Սրեւնում, և հարցականներն էլ դրված են սրանց համապատասխան բառերի վրա:

Պատահում է շատ անգամ, որ միևնույն նախադասության մեջ պահանջված պատասխանները տարբեր-տարբեր լինեն, այդ պարագային հարցականն էլ իր տեղը փոխում է: Այսպես, վերևի առաջին հարցումը կարող է ունենալ հետևյալ ձևերը.

Այսօր համալսարան գնացի՞ր (թե չէ).

Համալսարան այսօ՞ր գնացի (թե երեկ).

Այսօր համալսարան գնացի (թե ինստիտուտ):

Հարցման ձևերը կիոխվեն, եթե ուրիշ նորանոր բառեր էլ ավելացնենք նույն նախադասության վրա. ինչպես.

Այսօր համալսարան մե՞նակ գնացի (թե երրորդ հետ).

Այսօր համալսարան մե՞նակ ուղք՞ով գնացի (թե կառքով):

Հարցականի այսպիսի փոփոխություններ կարող են պատահել միայն առաջին տեսակի մեջ. իսկ երկրորդ տեսակի նախադասությունների մեջ հարցականի տեղը անփոփոխ է և միշտ զբրվում է հարցական ածականի կամ մակբայի վրա (Երբ, ո՞վ, քանի՞, ո՞ւր և այլն):

Ամեն դեպքում էլ հարցականը արտահայտվում է խոսակցության մեջ ձայնի այնպիսի բարձրացումով, որ ավելի մեծ է, քան նկարագրական նախադասությունների ամենաբարձր աստիճանը. տարբերությունը հայտնի կտեսնենք, երբ համեմատենք մի նկարագրական նախադասություն իր հարցականի հետ. ինչպես.

Ես գնացի դպրոց — Ես գնացի՞ դպրոց:

Սրա համեմատ, հարցական նախադասության վերջին վանկի էջքն էլ ավելի բարձր է, քան նկարագրական նախադասության մեջ. այնպես որ ինչ ձայնաստիճան որ կա նկարագրական նախադասության բարձր վանկի և վերջավանկի էջքի մեջ, նույնքան էլ կա հարցական նախադասության պարուկի և վերջավանկի էջքի մեջ: Նույնպես, եթե հարցական բառերը մեկից ավելի են, միայն ստաջինն է, որ կրում է ձայնի բարձրացում. ինչպես. Համալսարան՞ն քե տուն Ես գնում: Հա՞յրդ և, մայրդ, քե եղբայրդ և կամ քույրդ: Ըստ Պ. Պաստիի, հարցականը վեց աստիճան բարձր է լինում. օրինակ. Քրանսերեն Viens-tu? «Գալի՞ս ես» ներկայացնում է la fa նոտաները (V. Henry, Gramm. comp. angl., 127):

3. Բացականչական նախադասությունը, լինի դա գրական թե բացասական, ինչպես հիացմունք կամ դարձանք, զարմացում կամ զգվանք, ուրախություն կամ տխրություն, մաղթանք կամ անեծք, արտահայտվում է միշտ միևնույն ձևով. այն է՝ ձայնի բարձրացումը, որի հետ ընկերանում է նաև երկարացումը: Բարձրացումը ավելի է, քան նկարագրական նախադասության մեջ և տևար է, քան հարցական նախադասության մեջ, ինչպես կտեսնենք գլուխում: Եթե իրար հետ համեմատենք միևնույն գնաց բառը երեք ձևի տակ.

գնաց (նկարագրական) — գնա՛ց (բացականչական) — գնա՞ց (հարցական):

Երբ ասում ենք «ինչ արժե», առանց զգայական նշանի ոչինչ չի նշանակում. բայց երբ դնում ենք ինչ բառի վրա հարցական նշանը (ի՞նչ արժե), այն ժամանակ նշանակում է, թե այս առարկայի գինը ի՞նչքան է. իսկ երբ ինչ բառի վրա դնենք երկար բացականչական նշանը, այն ժամանակ «ինչ արժե» խոսքը նշանակում է «որքան լավ է, որքան հաճելի է»:

4. Հրամայական նախադասությունը ստանում է նույն աստիճանի բարձր շեշտ՝ որքան բացականչական նախադասության մեջ. տարբերությունը միայն այն է, որ այստեղ պակասում է ձայ-

նի երկարացումը. հրամանը լինում է միշտ կարճ ու կարուկ. — Գնա՛ ասա՛ թող երթա՛:

Բայց պետք է ավելացնել, թե հրամայականը այնպիսի մի ձև է, որ կարող է արտաբերվել բազմատեսակ զգայական շեշտերով. օրինակ, կարելի է տալ կարուկ մի հրաման, բայց կարելի է նաև նույնը խնդրելով, աղաչելով կամ հորդորելով ասել. համատառ՝ հրամայականը հետևյալ նախադասությունների մեջ.

Տու՛ր քե չե կապանեմ (խիստ հրաման).

Տու՛ր էլի, ինչու՞ չես տալիս (խնդրական).

Խնդրում եմ, քեզ մատաղ, տու՛ր, էլի՛ (աղաչական).

Տուր երթա, շատ է գլուխ ցավացնում (հորդորական):

Ձայնի ելևէջք կարող է ազդից ազգ կամ լեզվից լեզու և բարբառից բարբառ տարբեր լինել: Ինչ որ նկարագրեցինք մինչև այստեղ՝ դա գրական հայերենի մեջ սովորական դարձած ձևն է: Ելևէջքի տարբերության մասին զազափար կարելի է կազմել հենց մեր գանազան բարբառի մարդկանց լսելով. տարբեր ելևէջ ունեն կարնեցին, տարբեր շամախեցին, տարբեր թիֆլիսեցին, տարբեր պոլսեցին և այլն:

Լեզվական շեշտը այն է, որ ունի բառը ինքնին, անկախ նախադասության մեջ իր ստացած դիրքից և անկախ այն հոգեբանական վիճակից, որով մարդ արտասանում է այդ բառը: Սովորական բացատրության մեջ մենք շեշտ բառը դործ ենք ածում անխտիր ձայնի թե՛ բարձրության և թե՛ ուժգնության համար, առանց ուշադրություն դարձնելու նաև այն հանգամանքի վրա, թե նա պատկանում է բառին, թե արդյունք է հուզմունքի: Գիտական լեզվի մեջ սակայն պետք է զանազանել այս բոլորը իրարից. — տոն (accent tonique, chromatique, musical) ասելով հասկանում ենք ձայնի բարձրացումը, բայց ոչ թե ուժգնությունը. իսկ շեշտ (accent d'intensité, accent expiratoire կամ accent) ասելով հասկանում ենք ձայնի ուժգնությունը և ոչ բարձրացումը:

Եթե մեկը նվազի երգեհոնի վրա և մի անգամ խփի do, նրա հետևից էլ fa, այդ երկուսը իրար հետ կունենան երաժշտական շեշտի (տոնի) հարաբերությունը, այսինքն՝ երկրորդը առաջինից կլինի 4 աստիճան բարձր, առանց սակայն նրանից ավելի ուժգին լինելու: Հայտնի է, որ երգեհոնի ստեղծները ինչքան էլ ուժգին խփվեն, զարծյալ միևնույն ուժգնությամբ կարտաբերվի ձայնը: Իսկ եթե նույն փորձը կատարենք դաշնամուրի վրա և fa-ին տանք

մատի ավելի ուժեղ հարված, կտտանանք ոչ միայն բարձր, այլև ուժգին ձայն: Արդ, ալդպես են նաև տոն ունեցող լեզուները. այստեղ ձայնը կունենար բարձրություն և տեղություն, բայց ոչ ուժգնություն. իսկ շեշտ ունեցող լեզուները ունեն նաև ուժգնություն: Այլ բացատրություններ, շեշտ ունեցող լեզուն ճշում, բղավում է (crier), իսկ տոն ունեցող լեզուն երգում է ավելի բարձր տոնով, որ է tierce կամ առ առավելն quinte (V. Henry, Gramm. comp. du gr. et du lat., 98):

Առհասարակ մեզ, ինչպես և զանազան եվրոպական ժողովուրդների և հատկապես անգլիացիների ու գերմանացիների համար տոնի բնույթը շատ դժվար է, որովհետև այս բոլոր լեզուների մեջ հիմա տոն գոյություն չունի, այլ կա միայն շեշտ: Այս պատճառով գերմանական դպրոցը չի կարողանում ընդունել տոն առանց ուժգնության (Meillet): Այս կարգի լեզուների, ինչպես և հայերենի մեջ եթե կա տոն, դա զգայական է կամ տրամաբանական:

Քիչ առաջ տեսանք, որ եթե արձանագրիչ զլանի վրա արձանագրենք խոսքի թրթռումները, կտեսնենք, որ նրա ամեն մի վանկը ունենում է մի տարբեր տոն, որ նույնիսկ չի համապատասխանում երաժշտության մեջ ընդունված նոտաներին: Մրանից հետևում է, որ տոների տեսակները շատ բազմաթիվ են: Բայց մարդկային ականջը անկարող է զանազանել այս բազմատեսակ տոները. ընդունված են միայն հետևյալ 4 ձևերը.

1. Հավասար կամ միավար տոն (ton uniforme), երբ վանկը իր ամբողջ տեղություն մեջ պահում է նույն բարձրությունը. հավասար տոնը կոչվում է սուր (aigu), եթե ձայնի սովորական վիճակից բարձր է, և ծանր, եթե նույնից ցածր է: Հավասար տոնը ներկայացնում են — նշանով:

2. Բարձրացող տոն (ton ascendant), երբ վանկի սկզբից մինչև վերջը ձայնը հետզհետե բարձրանում է. այս տոնը ներկայացնում են / նշանով:

3. Իջնող տոն (ton descendant), երբ ընդհակառակը, վանկի սկզբից մինչև վերջը ձայնը հետզհետե իջնում է. այս տոնը ներկայացնում են \ նշանով:

4. Բարդ տոն (ton complexe), երբ մի վանկի մեջ միասին գտնվում են վերոգրյալ տոներից երկուսը կամ ավելին. օրինակ, վանկի առաջին կեսը հնչվում է սուր տոնով, երկրորդ կեսը՝ բարձրացող տոնով: Երկու տոնով կազմված խառնուրդները կարող են ներկայացնել հետևյալ ձևերը.

սուր-իջնող տոն / ծանր-բարձրացող /
բարձրացող-սուր / բարձրացող-իջնող \

իջնող-ծանր \ իջնող-բարձրացող /
կարելի է նաև գտնել երեք տոնի խառնուրդ, ինչպես՝
բարձրացող-սուր-իջնող / սուր-իջնող-ծանր \

Այսպիսի բարդ տոները գտնվում են բնականաբար միայն երկար և շատ երկար վանկերի մեջ:

Ոմանք չինարենի և այլ լեզուների տոնը նմանեցնում են անասունների ձայնի տոնին և նրանից ծագած են դնում: Միայն է. անասունները հողավոր ձայներ չունեն, այլ միայն մի ձայն՝ զանազան երանգներով: Իսկ չինարենը և մյուս լեզուներն ունեն բազմաթիվ հողավոր ձայներով հարյուրավոր արմատներ՝ մի քանի տոններով: Եթե այս լեզուների տոնը պիտի դնենք անասունների տոնից, մեր խ, դ, ֆ, չ, ս, շ և այլն ձայներն էլ ավելի իրավամբ պետք է դնենք խոզերի, շան, օձի, գորտի և այլն ձայներից, ինչ որ չենք անում:

Տոնի էություն մասին մի լավ օրինակ է տալիս Վեստերմանը (էջ 36), աֆրիկյան էվե լեզվի ուսումնասիրության մեջ:

Մեր մեջ էլ տոն կա, և մենք մեր խոսակցության մեջ կարող ենք միևնույն բառը զանազան տոներով արտաբերել. բայց այդ բոլոր տոներով էլ բառը մնում է նույնը և միայն խոսքի երանգն է փոխվում, իսկ տոն ունեցող լեզուների մեջ ալդպես չէ. տոնի փոփոխության հետ բառի իմաստն էլ է փոխվում նրանց մոտ: Մենք կարող ենք թւրախ կամ տխուր, հանգիստ կամ բարկացած տրամադրության տակ ասել «հն» (ալն), և այդ բոլորի մեջ «ալո»-ն «ալո» է: Բայց տոն ունեցող լեզուների մեջ ինչ տրամադրության տակ էլ լինի մարդ, պարտավոր է միշտ բառի տոնը պահել իր բնական վիճակում ամեն տեսակ նախադասության մեջ, ապա թե ոչ տոնի փոփոխությամբ բառի իմաստն էլ կփոխվի կամ անհասկանալի կմնա. օրինակ՝

Ենթադրենք, թե մեկը հարցրեց էվեին. «Երեքին էլ տեսար». էվեն պատասխանում է. «Ոչ, միայն երկուսին տեսա».

ó, vé kò mèkrò.

Այստեղ Krò «տեսա» բառն է, որ ունի բարձր տոն և ուժեղ շեշտ. և ալդպես էլ պիտի մնա. մինչդեռ մենք պիտի շեշտեինք «երկուսին, ve» բառը և պիտի ասեինք.

ó, vé kó mèkpo, որ բոլորովին անխմաստ է: (Westermann¹ 36, 38):

Այժմ քննենք տոնի զանազան տեսակները նոր և հին մի քանի լեզուների մեջ:

Տոն ունեցող նոր լեզուների մեջ առաջին տեղն են բռնում անջատական կամ միավանկային լեզուները: Վանկերի թիվը անբավարար դուրս զալով զաղափարների բացատրության համար կամ որ նույնն է, զանազան զաղափարների համար¹ միևնույն վանկը գործածելով², մարգիկ մտածել են օգտագործել տոնը իբրև օժանդակ միջոց և տոնի փոփոխությունը բառին տալիս են բոլորովին նոր իմաստ: Օրինակ, չինարեն li վանկը եթե արտասանվում է նոր իմաստ: Օրինակ, չինարեն li վանկը եթե արտասանվում է երկրորդ տոնով, նշանակում է «տանձ», երրորդ տոնով՝ «սալոր», չորրորդ տոնով՝ «շագանակ» (Seidel, Chin. gramm., 22):

Տոնի միջոցով բառը կարող է բոլորովին հակառակ իմաստ ստանալ, այսպես չինարեն fu¹ նշանակում է «սալոր, mann», fu² «կինը, weib»:

Առաջին ակնարկով շատ զարմանալի պիտի թվա ընթերցողին չինարենի այս հատկությունը, որ միևնույն վանկը (բառը) այսքան տարբեր նշանակություններ ունենա: Բայց նույնը չէ նաև եվրոպայի ամենազարգացած լեզուներից մեկը՝ ֆրանսերենը, որ ունի նույն li վանկի համար՝ lit «անկողին», lis! «կարգա», lie «ղիր ա մբուր», lie «խնջուկ»:

Պիտի առարկվի, թե սրանք զբաղվածքում տարբեր են. բայց տարբեր են նաև չինարեն բառերը, որովհետև չինարեն այբուբենը պատկերագիր լինելով, ամեն բառ, ինչ էլ լինի նրա հնչումը, ծագումը կամ տոնը, գրվում է ըստ իմաստի տարբեր գրությունը կամ պատկերով: Այսպիսով, չինարենի առավելությունը ֆրանսերենից այն է, որ հնչմամբ նույն, բայց իմաստով տարբեր բառերը ոչ միայն տարբեր են գրությունում, այլև տոնով:

¹ Չինարեն լեզուն ընդամենը 431 միավանկ բառ-արմատ ունի. բայց պետք է ավելացնել, որ բոլոր կարելի միավանկները չեն գտնվում լեզվի մեջ. եթե հաշվենք նույնիսկ չինարեն լեզվի ձայնական զրույթում, բոլոր կարելի միավանկների թիվը պիտի լինի ընդամենը 910 հատ (Seidel, Chin. gram., 20):

² Պեկինի բարբառում կա մի բառ, որ 70 տարբեր նշանակություն ունեն (Seidel, Chin. gramm., 11):

Լատսերենում, որ նույնպես միավանկային լեզու է և նման սիամերենի, կան բազմաթիվ համանուն բառեր, որոնք միայն տոնով են տարբերվում. ինչպես՝ nā «արտ», nā «կրտսեր մորաքույր», nā «նետ-աղեղ», nā «երես», nā «կրտսեր մորեղբայր» (Hospitalier, 25):

Շեշտի (տոնի) տարբերությամբ ստացված համանուն բառերի մի ուրիշ օրինակ տալիս ենք աֆրիկյան (ոչ բանտու) իբո լեզվից. òkú «կրակ», òkú «ծխամորճ», òkú «հարստություն, ինչք» (Spenser, 8—9): Ռուսերը (էջ 38—40) տալիս է մի ցանկ աֆրիկյան շագագ լեզվի այն կարգի բառերի, որոնք միայն տոնով են տարբերվում. օրինակ, Ruwa «Աստված արեգակ» (հայերեն արև!), և zuwa «ճահիճ», soka «կացին և աղբյուր»:

Սուգանի բոլոր լեզուները ունեն տոնի գործածությունը. օրինակ, սուգանական շիլուկ լեզուն ունի 3 տեսակ տոն. բարձր, ցածր և միջակ. կան նաև սրանց խառնուրդները՝ բարձր ու ցածր, ցածր ու բարձր. մի վանկի ձայնավորը կարող է ունենալ 3 տոն միասին: Կան շատ բառեր, որոնք տոնը փոխելով՝ իմաստն էլ են փոխում. բառեր էլ կան, որոնք տոնի փոփոխությամբ քերականական արժեքն էլ են փոխում. օրինակ՝ wàn (ցած) «տարի», wàn (բարձր) «աչք», dóc (բարձր) «երան», dóc (ցածր) հոգնակի է (Westermann, 18):

Աֆրիկյան ահլոն լեզվով տոնի տարբերությամբ ձևացած բառեր. ìka «անասուն», ikà «ձուռք», ìlì «շարժվել», ìlìf «սովորել», ùnú «արջա», ùnú «օդ» (Westermann, 7):

Աֆրիկյան տարրտո լեզվով տոնի տարբերությամբ ձևացած բառեր են kà «նստել», ká «տեսնել», nè «միասին», né «վիզ» (Westermann, 40):

Միամերեն լեզուն էլ ունի տոն, որ ò ձև ունի՝ հավասար, ցածր, բարձրացող, ընկնող և երկարածիք,—տոնի տարբերությամբ կազմված բառերից հիշենք ma «գալ», շշուն, ձի» (Wershoven, 9):

Աֆրիկյան էվե լեզուն ունի ò տոն. / բարձր, / ցածր, | միջակ, ^ բարձր-ցածր, v ցածր-բարձր:

Բացի այս հինգից, կա ևս 3 տոն, որոնք են՝ ավելի ցածր, ավելի միջակ, ավելի բարձր:

Տոնի աստիճանի, ինչպես նաև ձայնավորի տեղությունից փոփոխությամբ այստեղ էլ ստացվում են զանազան համանուն բառեր, ինչպես. to „dickilüssig sein“, tó «ասել» tò «ականջ», tó «խոտոջ», tQ «սեփականություն», tò (միջակ տոն) «չրեր», tó «սե-

ժականատեր»։ Կամ մի ուրիշ օրինակ՝ mi «կլանել», mi «մենք», mi «կղկղանք» (Westermann, 2, 36, 39)։

Այս երևույթը մեզ զարմանալի է թվում, բայց նույնը կա նաև բոլոր լեզուների մեջ։ Այսպես, մեզ ծանոթ բոլոր լեզուների մեջ էլ հարցականը դրականից զանազանվում է տոնով։ Բացականչությունները մեծադույն մասամբ ինքնին աննշանակ ձայներ են և գրեթե միեւնույն ձևն ունեն իրարից շատ տարբեր իմաստների համար և զանազանվում են միայն տոնով (ճիշտ չինարենի պես)։

ա՛ն—զարմանք հայտնող, ա՛ն—ցավ հայտնող, ա՛ն—սպասանալիք հայտնող և այլն։

Կամ նույնիսկ բառաձև ձայնարկություններ, ինչպես.

բա՛—իհարկե, բա՛—հապա ի՛նչ, բա՛—զարմանալի է։

յա՛—զարմանալի բան (երևան)։

յա՛—հապա ի՛նչ կարծեցիր.

յա՛—է՛յ. յա շիտուս.

յա՛—չէ՞ որ. բերի՛ յա, ըսինք յա։

հա—«այո» հաստատական սովորական ձև.

հա՛—«իհարկե, այո».—գրամը տվե՛լ ես.—հա՛.

հա՛—գրամը տվիր, հա՛.

հա՛—գրամը տաս, հա՛.

հա՛—միթե՞, ալդպե՛ս է, չգիտեի. N

հա՛—հիվանդ ես.—հա, և՛՞այլն։

Մեր և միավանկային լեզուների տարբերությունը այն է միայն, որ մեր մեջ սրանք բացառիկ երևույթներ են և հատուկ միայն բացականչությունների, իսկ միավանկային լեզուների մեջ դա ըսկըգբունքն է, որ հատուկ է բոլոր բառերին։

Նախադասություն մեջ տոնի տարբերությունը շատ ավելի լավ է որոշվում. օրինակ.

—Այժմ ձկան ի՞նչ ժամանակն է (հարցական ձևով նախադասություն, որ ցույց է տալիս, թե այժմ բնավ ձուկ չկա։

—Այժմ ձկան ի՞նչ ժամանակն է (բացականչական նախադասություն, որ ցույց է տալիս, թե այժմ ընդհակառակը շատ ու շատ ձուկ կա)

Սրանց նման՝

—Իրեն չըսե՛ս (հրամայական ձևով. նշանակում է նրան մի՛ ախի)։

—Իրեն չըսե՛ս (կիսահարցական ձևով. ինչո՞ւ ինձ ես ասում, նրա՛ն ասա)։

Չինարենում կա 5 տոն. բայց բարձր չինարենը ունի միայն 4 տոն։ Եթե մեկի սովորական ձայնը \equiv աստիճանի է, ա՛ տոնը նրանից 3 ձայն վեր է լինում և միահար ալդ տոնի վրա կանգնում է. բ տոնը բարձրանում է նույն աստիճանին, բայց շատով 2 ձայն ևս է բարձրանում. գ տոնը սովորականից մի ձայն իջնում է և իսկույն ա՛ տոնի աստիճանին է բարձրանում. դ տոնը սովորականից 2 ձայն բարձրանում է և իսկույն իջնում է սովորականից մի նոսա ցածր։

Ահա բոլորի պատկերը.



(Seidel, Chin. Gram., 22)։

Լաոսերեն լեզուն էլ ունի 5 տոն, որոնք են՝ բարձրացող կամ հարցական (!), իջնող կամ ծանր (!), շեշտալ, inflichè (եջնող-իջնող-եջնող N), իջնող և բարձրացող (V). բառեր էլ կան, որ սչ մի տոն չունեն (սես Hospitalier, էջ 12, և ավելի երկար՝ էջ 86—90)

Աննամերենը ունի 6 տոն, որոնք են.

- | | |
|---|---|
| 1. հավասար (egal կամ moyen, gleiche ton) | a |
| 2. բարձր կամ սուր (supérieur կամ aigu, hohe ton) | à |
| 3. ցածր կամ ծանր (inférieur կամ grave, trefe ton) | â |
| 4. իջնող (descendant, fallende ton) | á |
| 5. հարցական (interrogatif, Frage ton) | ? |
| 6. բարձրացող (remontant, steigende ton) | a |
| | â |

Հավասարն այն է, որով մարդ առհասարակ խոսում է։

Բարձր տոնը պիտի առնել մի անգամից բարձր նոսալով։

Ցածր տոնը պիտի առնել մի անգամից ցածր նոսալով։

Իջնող տոնն սկսվում է հավասարով և իջնում ցածրին։

Հարցականը նման է մեր հարցականին։

Բարձրացող տոնն սկսում է միջինից, հետո ցածր, հետո բարձր։

Տառադարձությունը նշանները վերի ձևով են։

Չեւքի շարժումներով կարելի է, ըստ Արենդտի, նկարել հետևյալ պատկերը.

	1	2	3	4	5	6
	→	→	→	→	↶	↶
Օրինակ՝	ma ¹	նշանակում է	«սատանա», 2.	«կանեի» (բույր)։		
	ma ²	»	«խաղող, այտ»։			
	ma ³	»	«բրնձի արտ»։			
	ma ⁴	»	«բայց, համար, որպեսզի»։			
	ma ⁵	»	«զերեզման»։			
	ma ⁶	»	«ձի»։ (Dirr, Gramm. annam, 4—6)։			

Աննամերենում կան տոնի ավելի շատ տեսակներ, այսպես co վանկը արտասանվում է 15 տարբեր տոնով՝ ամեն մեկը առանձին նշանակությամբ (Vendryès, Le langage, 35)։ Եվ այնքան կարևոր են տոնի այս նրբությունները, որ եթե սխալ գրվի, աննամցին չի հասկանա։

Տոնը նույն նպատակով գործածվում է նաև Աֆրիկայում, սուգանական լեզուների մեջ, այսպես՝ հոտենդոտյան նամա լեզուն գիտի երեք տեսակ տոն (բարձր, միջակ և ցածր)։—Միջակ տոնը այն է, որով մարդ սովորաբար խոսում է, բարձր տոնը այն է, երբ մարդ այսինչ վանկը միջակ տոնով արտասանելու միջոցին հանկարծ 3 կամ 5 նոտա բարձրացնում է, իսկ ցածր տոնն այն է, երբ միջակից ընդհակառակը հանկարծ 3 կամ 5 նոտա ցածր է իջնում (Seidel, Hspr., 2)։

Արևմտյան Աֆրիկայի էֆիկ լեզուն ունի 5 տոն (բարձր, միջակ, ցածր, բարձրացող, իջնող)։

Աֆրիկյան իրո լեզուն (ոչ բանտու) ունի 5 գլխավոր տոն, բարձր, ցածր, միջին, ընկնող, բարձրացող, որ ներկայացնում ենք հետևյալ ձևով.

Բացի այս գլխավոր տոներից, կան նաև շատ ուրիշ տոներ էլ, որոնք գործածվում են լեզվում, հատկապես բառի մի տոնից մյուսը անցնելու ժամանակ։

Ի. Ուորդը An introduction to the Ibo language, (Cambridge, 1935), գտնում է, որ տոնը խախուտ երևույթ չէ. նա քրնոթյան աննելով իրո լեզվի 10 բառ, գտել է, որ քերականական և բառարանային ձևերը ավելի անհավասար կամ փոփոխական են, իսկ տոնը անփոփոխ է։

Բառի տոնը նախադասության մեջ մի ուրիշ բառի հետ կապվելու ժամանակ կարող է աղբյուրի նրա տոնից և փոխվել (tone assimilation կոչվում է այս երևույթը)։ Այս փոփոխությունների համար ահազին թվով կան կանոններ, որոնց ուսումնասիրությանն է նվիրված ամբողջ գիրքը (Ward, 12—15)։

Եվրոպական լեզուները, ինչպես ասացինք, սովորաբար դուրկ են տոնից, այնուամենայնիվ ոմանք ներկայացնում են տեսակ-տեսակ տոներ, այսպես՝ սերբերենը, լիտվաներենը, բայց ամենից ավելի շվեդերենն ու նորվեգերենը։

Սերբերենն ունի 4 տեսակ տոն, որոնք զանակվում են հետևյալ ձևով.


1. իջնող երկար (/ \).
2. բարձրացող երկար (/ /).
3. իջնող կարճ (\).
4. բարձրացող կարճ (/).

(Кульбакинч, Серб Јлз., 23, 29)։

Շեշտված վանկը արտասանվում է միաժամանակ ավելի բարձր նոտայով և ավելի ուժգնությամբ, քան անշեշտ վանկը. բայց ուժգնությունը սովորաբար սերբերենում տկար է, և միայն տալիս է շեշտյալ վանկին մի քիչ ավելի ցայտուն զիրք, քան մյուսները. նոտայի բարձրությունը ավելի գերակշիռ է քան ուժգնությունը, որով սերբերեն բառն ստանում է երաժշտական երևույթ։ Երբ տոնը բարձրացող տեսակն է, ձայնն սկսում է հետզհետե բարձրանալ մինչև հաջորդ վանկի սկիզբը, իսկ այդ հաջորդ վանկի ձայնավորն էլ պահում է նույն այդ վանկի բարձրությունը. օրինակ, planina «լեռ» բառի մեջ, pla ցածր է, ձայնը հետզհետե բարձրանում է i-ի վրա և այդ աստիճանը մնում է na-ի վրա, այսպես՝ pla-ni / i-na. իսկ եթե իջնող տոնն է (այդ միայն առաջին վանկում կարող է պատահել), ձայնը չի բարձրանում, պահվում է նույն աստիճանին, հետո հանկարծ ցածրանում է և այդ ցածր աստիճանը մնում է նաև հաջորդ վանկի վրա. օրինակ, sèla «գյուղ» բառը արտասանվում է՝ se e-la (Meillet, Gramm. serbe, 23)։

Շվեդերենի մեջ շեշտը երկու է. պարզ (որ գրեթե նույնն է մեր շեշտի հետ), բարդ (որ հատուկ է շվեդերենին և նորվեգերենին)։

Պարզ շեշտը հավասար սուր տոնն է, որ մյուս վանկերից մոտ երկու աստիճան բարձր է. ինչպես.



Նա կոչվում է Հալ մար

Այստեղ Hjal-վանկը ստացել է պարզ շեշտ:

Բարդ շեշտը սովորական աստիճանից մեկ աստիճան բարձրանում է, հետո մեկ աստիճան իջնում և հաջորդ վանկի մեջ էլ երկու աստիճան բարձրանում է. ինչպես.



Նե կոչվում է Ան — նա

Այստեղ An վանկը ստացել է բարդ շեշտ:

Շվեդերենի և նորվեգերենի մեջ էլ շեշտի տարբերությամբ փոխվում է բառի իմաստը, օրինակ.

շվեդերեն haven (պարզ) «ծովեր», haven (բարդ) «ունեք».
նորվեգերեն boenner (պարզ) «գյուղացիք», boenner (բարդ) «լորիններ».

(Poestion, Lehrb. schwed., 33):

Կամ նույնիսկ ամբողջ նախադասությամբ և հակառակ իմաստով.

նորվեգերեն vil du bli (բարդ) med Kammeräten din.

«պիտի գնա՞ս ընկերներիդ հետ».

նորվեգերեն vil du bli' (պարզ) med Kammeräten din.

«պիտի մնա՞ս ընկերներիդ հետ այստեղ»:

(Mélanges, Pedersen, 315):

Տոնը գործածվում է նաև քերականական կարգերը որոշելու համար. այսպես՝ չինարենում՝ ներգործականը դառնում է անցողական, օրինակ՝ yin³ «խմել», yin⁴ «խմցնել». գոյականը դառնում է բայ, օրինակ՝ yi¹ «շոր», y⁴ «հագնվել». ածականից կազմվում է բայ, օրինակ՝ čar² «երկար», čag³ «աճել» (Seidel, Chin. gramm. 26):

Աֆրիկյան փոլլ լեզվի մեջ տոնը որոշում է բայի զրականը, բացասականն ու կրավորականը. ինչպես՝ mi piya «խփում եմ»,

mi piyà չեմ խփում, mi piyà «խփում եմ» (Homburger, MSL, 23, 154):

Աֆրիկյան էֆիկ լեզվի մեջ տոնը, որ 5 տեսակ է, ծառայում է նշ միայն հոմանունների տարբերությունը որոշելու, այլև քերականական ձևերը: Նկատելի է, որ այս լեզուն միավանկային չէ. բառերը կարող են ունենալ 1, 2, 3 վանկ և այդ վանկերը, համաձայն որոշ կանոնների, ստանում են այս ու այն տոները: Իգա Ուորդը ուսումնասիրել է այս տոները և ձայնապնակների վրա առնելով հրատարակել է (Kambridge, 1933):

Տոնը օգտագործվում է նաև ճապոներենում՝ իբրև միջոց քերականական ձևերը որոշելու:

Չափազանց զժվար է քննել և երևան հանել հին լեզուների տոնը, ինչպես և շեշտն ու տեղաթյունը, մանավանդ երևան հանել նրանց կրած փոփոխությունները ժամանակի ընթացքում: Եթե տառը, որ այնուամենայնիվ տալիս է բառի հնչական պատկերը, այնքան թերակատար է, ինչ պետք է լինեին տոնը, շեշտը և տեղաթյունը, որոնք շատ ու շատ լեզուների մեջ ամենևին չեն էլ նշանակվում, կամ եթե ոմանց մեջ էլ նշանակվում են՝ շատ թերի ձևով: Այս կետերի քննությունը մենք պիտի վարենք ուրեմն զանազան զիտական միջոցներով, հետևյալ եղանակով.

1. Մի քանի լեզուներ, այսպես՝ վեդայական սանսկրիտը, հին հունարենը (սկսած այլքսանդրյան շրջանից), հին բարձր գերմաներենը թողել են շեշտադրյալ բնագրեր. թեև սրանց մեջ էլ նշ թե շեշտի տեսակը, այլ նրա տեղն է միայն նշանակված:

Այսպես, վեդաների մեջ ամեն մի բառի չորսաքանչյուր վանկի վրա կա մի նշան (◌), որ ցույց է տալիս, թե մյուսներից այլևի բարձր պետք է արտասանել այդ վանկի ձայնավորը: Վանկից մեկը միայն կարող է լինել մյուսներից այլևի բարձր և կոչվում է սանսկրիտ քերականության մեջ udatta «բարձր»: Այսպես, օրինակ, bhārati «բերում է» բառի մեջ բարձր է առաջին վանկը, մյուսները ցածր են:

2. Այն լեզուների մեջ, ուր տաղաչափությունը քանակական է, ինչպես հունարենն ու լատիներենը, տաղաչափյալ գրվածները զալիս են սալու մեզ զանազան լուսաբանություններ:

3. Այն լեզուների մեջ, ուր տաղաչափությունը շեշտական է, ինչպես գերմանական լեզուներում, նույնպես տաղաչափությունը նպաստում է մեզ զանազան կետերում:

4. Հին քերականները տվել են մեզ զանազան նկարագրություններ՝ շեշտի կամ տոնի մասին: Նույնիսկ կան երաժշտական

տվալներ. որոշ երաժիշտներ բառի անտոն վանկը տոնավոր վանկից ավելի բարձր չէին երգում (Meillet, traité, 120):

5. Ամենից ավելի նպաստում են մեզ փորձնական քննությունները. եթե մի կողմից մի լեզվի մեջ՝ որի տոնը, շեշտը և տեղությունը մեզ ծանոթ են, գտնենք ձայնական դանազան երևույթներ և հաստատենք, որ դրանք արդյունք են տոնի, շեշտի և տեղությունից, մյուս կողմից, եթե մի արիշ լեզվի մեջ գտնենք նման ձայնական երևույթներ, կարող ենք ճանաչել նրա տոնը, շեշտը և տեղությունը, որ անծանոթ էին: Նույն արդյունքները նույն պատճառներն են ենթադրում:

Այս բոլոր դեպքերի վերլուծման մեջ բնականաբար բնախոսությունը պիտի մեզ հետ ընթանա ձեռք-ձեռքի:

Ահա արդպիսի քննություններից իմանում ենք, որ հունարենը ունեցել է 3 տեսակ շեշտ accent—, այն է սուր (aigu) շեշտ (´), ծանր (grave) շեշտ (˘), և պարույկ circonflexe (ˆ): Սուր շեշտը, ըստ Դիոնիսիոս Հալիկաոնացու բացատրության, մյուս վանկերից 3/2 ան քաղված էր, այն է՝ մի կլիկոտա. ուրեմն և հավանաբար պիտի լիներ հավասար սուր տոն: Ծանր շեշտը թվում է, թե անշեշտ վանկն էր, այն է, նորմալ տոնը, առանց բարձրացման և առանց իջեցման: Պարույկը դրվում էր միայն երկար վանկերի վրա. ուրեմն բարձր տոն էր, որի առաջին կեսը սուր էր, երկրորդ կեսը ծանր, այն է սուր-իջնող \curvearrowright : Կային նաև երկար վանկեր, թերևս ծանր-բարձրացող տոնով \curvearrowleft : Ուրիշ խոսքով, հունարենում սուր շեշտը (´) գտնվում է բառի վերջին երեք վանկերի վրա, պարույկը (ˆ) վերջին երկու վանկի վրա, իսկ բուխ շեշտը (˘), միայն վերջին վանկի վրա: Ավելի հետո, այն է մեր թվականի սկզբում, հունարենի տոնը վերածվեց շեշտի, ինչպես է արդի հունարենում:

Սանսկրիտն էլ ունի երեք տեսակ շեշտ. սուր, ծանր, պարույկ (վերջինս սուր և ծանր երկու շեշտ միասին է մի վանկի վրա) (whitney, ind. gramm., § 81):

Լատիներենը, իր հնագույն շրջանում, ուներ ուժգնության շեշտ, որ գտնվում էր բառի առաջին վանկի վրա. գրական շրջանից առաջ այս շեշտը արդեն վերջացել էր և նրան հաջորդել էր տոնը (բարձրություն շեշտ), որ գտնվում էր բառի վերջընթեք կամ նախ-վերջընթեք վանկի վրա: Ավելի հետո, դեպի մեր թվարկությունից առաջ չորրորդ դարը, այս տոնը վերածվեց նորից շեշտի, բայց միևնույն ժամանակ բառի նախավանկի վրա ձևացավ մի երկրորդական շեշտ:

Այժմ քննենք այն հարցը, թե տոնը որ վանկի վրա պետք է գտնվի: Այս հարցը միավանկային լեզուների համար ավելորդ է, որովհետև նրանց մեջ բառերը միավանկ լինելով, հենց նույն վանկն էլ ստանում է տոնը: Բայց նույնը չէ բազմավանկ բառեր ունեցող լեզուների համար: Սրանց մեջ սովորաբար մի վանկն է. որ գերազանցում է բոլորից և ունենում է ավելի բարձր տոն: Տոն կրող վանկը կոչվում է տոնավոր (tonique), իսկ մյուսները անտոն (atone): Անտոն վանկերը բոլորն էլ չեն ներկայացնում միևնույն ելևէջը, բայց տոնավոր վանկը իր բարձրությունը ամենից գերացանցն է:

Շատ կարևոր է ճշտել, թե որն է բառի տոնավոր վանկը: Այս կողմից լեզուները բաժանվում են երկու խմբի. ոմանց մեջ տոնը շարժակալն է, ալսինքն՝ կարող է գտնվել բառի բոլոր վանկերի վրա անխտիր, ուրիշների մեջ սակայն հաստատուն է, ալսինքն՝ անպատճառ գտնվում է այս կամ այնչյա վանկի վրա, համաձայն որոշ պայմանների: Այսպես, օրինակ, սանսկրիտի մեջ, ինչքան էլ երկար լինի բառը, տոնը կարող է գտնվել սկսած առաջինից մինչև վերջին վանկը, որե՛տեղ, արմատի, մասնիկի թե վերջավորության վրա անխտիր, առանց որե՛տեղ պատճառաբանության. նրա տեղը որոշված է համաձայն ավանդական սովորության, որ կարելի է իմանալ բառաբանների միջոցով: Օրինակ, agnīnam բառը շեշտվում է վերջին վանկի վրա, իսկ hiraṇyavacīmattama բառի մեջ շեշտը առաջին վանկի վրա է (Whitney, Ind. gramm., § 95), որ է վերջից հաշված ութերորդը: Ընդհակառակը, հին հունարենում տոնը կախված է վանկերի թվից և նրանց տեղությունից: Ծանր տոնը կարող է դրվել միայն վերջին վանկի վրա (լինի այդ վանկը կարճ թե երկար): Եթե բառի վերջնավանկը սուղ է, սուր տոնը նախավերջընթեք (antipinultième) վանկից այն կողմ չի կարող անցնել (ալսինքն՝ կարող է դրվել վերջից հաշված 1, 2, 3-րդ վանկերի վրա, բայց ոչ չորրորդ և այլն). իսկ եթե վերջնավանկը երկար է, տոնը չի կարող անցնել վերջընթեք (pinultième) վանկից. ինչ որ նշանակում է, թե տոնը ամեն դեպքում էլ գտնվում է 3-րդ վանկի վրա (քանի որ մի երկար վանկը հավասար է երկու սուղ վանկի): Պարույկը կամ ոլորակը (circonflexe,) որ գտնվում է միայն երկար վանկի վրա, չի կարող անցնել վերջընթեք վանկից, եթե վերջնավանկը սուղ է և վերջին վանկից, եթե նա երկար է: Բոլոր դեպքերում էլ ուրեմն տոնը խաղում է բառի վերջին երեք վանկերի մեջ և նրա դրությունը կախված է վերջին վանկից. վերջընթեք վանկի երկարությունը կամ կարճությունը արժեք չունի: Բայց

նրա ճիշտ տեղը նույնպես որոշ չէ և իմացվում է միայն համա-
ձայն ավանդություն, բառարանների միջոցով:—Լատիներենում, ընդ-
հակառակը, տոնի տեղը բոլորովին որոշված է. նա կախված է
վերջընթեր վանկից. եթե բառի վերջընթեր վանկը երկար է, տո-
նը գտնվում է նրա վրա (amāre), իսկ եթե կարճ է, նախավերջըն-
թեր վանկի վրա (rigidus). ինչպես՝ legēmus, բայց légimus, po-
téstās, բայց nōvitās:

Հունարենում եթե սուր տոնը գտնվում է վերջին վանկի վրա,
բառը կոչվում է oxyton (շեշտուղոր), եթե վերջընթեր վանկի վրա
է, կոչվում է paroxyton (հարաշեշտ), իսկ եթե նախավերջընթեր
վանկի վրա է, կոչվում է proparoxyton (հարաշեշտուղոր): Եթե
պարուկը վերջին վանկի վրա է, բառը կոչվում է périspomène
(պարուկ), իսկ եթե վերջընթեր վանկի վրա է՝ propérispomène
(հարապարուկ): Եթե ծանր շեշտ ունի բառը, կոչվում է baryton
(շեշտուղոր): Սրանց մեջ, ինչպես տեսնվում է, շեշտը շփոթված է
տոնի հետ, համաձայն հին քերականների սովորություն¹:

Նախադասություն մեջ ամեն մի բառ նույն կարևորությունը
չունի. կան բառեր, որոնք երկրորդական արժեք ունեն և ծառայում
են մյուսների այսինչ կամ այնինչ դերը որոշելու, այսպես են
հոգը, նախդիրները, անորոշ դերանունները, օժանդակ բայերը և
այլն: Այս կարգի բառերը արտասանվում են շատ թույլ տոնով կամ
տոնն իսպառ կորցնում են: Սա հոգեբանական մի շատ հասարակ
երևույթ է: Տոնի կորուստով նրանք հարազրվում և միանում են
այն բառին, որի իմաստի լրացման են ծառայում: Այս կարգի բա-
ռերը կոչվում են վերջահար (enclétique), եթե կցվում են գլխա-
վոր բառին՝ վերջից, և կամ նախահար (proclétique), եթե կցվում
են նրան սկզբից: Արևմտյան հայերենով հաց մը, մարդ մը ձևե-
րի մեջ մը վերջահար է. իսկ զրարար ի տան, ի տանե, կամ Ֆրանսի-
ական le pain, la maison ձևերի մեջ p, le, la նախահար են: Վեր-
ջահար և նախահար բառիկները գլխավոր բառի հետ միասին մի
զաղափար են կազմում, արտասանության մեջ նրանք երևում են
իրրև մի բառ և լեզուների մեջ ընդունված ուղղագրության քմա-
հաճույքն է միայն, որ ստիպում է գրել այդ բառերը մերթ միա-
սին և մերթ անշատ: Այսպես, հին պարսկական բեհազրությունց
մեջ, ուր բառերը բաժանվում են իրարից թեք սեպով ('), վերջա-

¹ Փակագծերում արված հայերեն տերմինները արված են լատ. թրակա-
ցու թարգմանության (H. ADONC, էջ 38—39)—Է. Ա.

հարները չեն ստանում այդ նշանը և համարվում են նախորդ բա-
ռի շարունակությունը: Հունարեն տե «և» վերջահարը գրվում է
տաննձին, մինչդեռ լատիներեն que և սանսկրիտ ճա վերջահարները,
որոնք ծագմամբ, նշանակությամբ և գործածությամբ նույն են նրա
հետ, գրվում են կցված. այսպես՝ լատիներեն senatus populusque,
սանսկրիտ Mitram Vāruṇamcha «Միտրան և Վարունան», հունարեն
πατήρ ἀνδρῶν τε θεῶν τε «հայր մարդկան և աստուծոյ»: Հայերեն
մը անորոշ հոգը, իրրև վերջահար, ժժ դարի սկզբում միասին էր
գրվում (այսպես՝ աղամը, ցամը, քիչմը.) Իտալի Քիզանդեան,
Վենետիկ, 1814, № 16, էջ 146), իսկ այժմ գրվում է աղայ մը,
ցավ մը, քիչ մը: Էական բայը, որ շատ լեզուների մեջ վերջահար
է, ոմանց մեջ գրվում է նախորդ բառի հետ միացած, երբեմն
առանձին. այսպես, թուրքերեն թե՛ արարական տառերով և թե՛
լատինական գրվում է միացյալ. ինչպես՝ dolydyr «լիքն է». ma-
şındyr «մեքենա է». 3 manatdyr «3 ոտրի է». այսպես է նաև
վրացերեն. ինչպես՝ կորգիա «լավ է», դեզաս է, «մայրս է»:

Բայց հայերենի մեջ գրում ենք առանձին. ինչպես՝ հայ է,
բարի է, ոմանք ձեռագրի մեջ գրում են ասումե, բերումե, բայց
տպագրի մեջ միշտ ասում է, բերում է: (Կար ժամանակ, երբ
տպագրումն էլ գրում էին ասումե, բերումե. այժմ այս սովորու-
թյունը խափանված է):

Լեզվի բարեշրջության ընթացքում տոնը կրում է երեք տե-
սակ փոփոխություն. 1. տեղի փոփոխություն, 2. աստիճանի փո-
փոխություն, 3. բնույթի փոփոխություն, որով տոնը շնչվելով վե-
րածվում է ուժգնության շեշտի:

1. Տեղի փոփոխություն.— Լեզվարանական քննությունները
ցույց են տալիս, որ տոնի տեղը լեզուների մեջ կարող է մնալ շատ
երկար դարեր անփոփոխ. այսպես է եղել հունարենի ամբողջ պատ-
մական շրջանում: Սանսկրիտը պահել է միշտ հնգեվրոպական նա-
խալեզվի տոնը անփոփոխ նույն տեղում: Նույնիսկ այն լեզուները,
որոնք տոնը շնչվելով վերածել են շեշտի, դարձյալ այդ շեշտը պա-
հել են նախկին տեղում: Այսպես՝ հունարենում և լատիներենում,
բացի մասնավոր դեպքերից, շեշտը գտնվում է միշտ նախկին տո-
նի տեղը:

Բայց տոնի տեղը անփոփոխելի չէ. կան լեզուներ, որոնք,
նախորդներին հակառակ, փոխել են տոնը մի վանկից մի ուրիշը:
Այսպես, եթե հին հունարենը տոնը հաստատել էր բառի վերջին
երեք վանկերի վրա, ուրեմն և հավատարիմ չէր հնգեվրոպական

նախալեզվական շրջանին, ուր շեշտը բոլորովին անհաստատ էր և կարող էր վերջից հաշված չորրորդ վանկի վրա էլ գտնվել: Ըստ այսմ սանսկրիտ bhāramārah ձևի դեմ ունենք հունարեն φερόμενος: Բայց այս մասնավոր հանդամանքից դուրս, այն է՝ մինչև 3 վանկ ունեցող բառերի մեջ, հունարենի տոնը համապատասխանում է սանսկրիտին, որով և միջոց է տալիս վերականգնելու հնգեվրոպական տոնը (Meillet, Traité, 121):

Տոնի փոփոխությունը առաջանում է և մի քանի պատճառներով: Նախ՝ ձայնաբանական պատճառով. օրինակ, լատիներենում, երբ բառը ունի զանազան երանգի ձայնավորներ, ժողովրդական լեզվի մեջ տոնը փոխելով իր տեղը, անցնում է ամենից ավելի բաց ձայնավորի վրա. այսպես, parietem > parietem, filliolum > filiolum, magistrum > magistrum, traditor > traditor: Երկրորդ՝ հոգեբանական պատճառով. այսպես, զգայական կամ տրամաբանական տոնի հետևանքով: Երրորդ՝ մի ուրիշ բառի համանմանությունով:

2. Աստիճանի փոփոխություն.— Այն երաժշտական աստիճանը (կամ նոտան), որ կա տոնավոր վանկի և անտոն վանկերի միջև, կարող է ավելի բարձրանալ կամ ցածրանալ. և հետևաբար բառի երաժշտական պատկերը փոխվել: Այս մասին սակայն ոչ մի պատմական հաստատուն տվյալ չունենք. կարող ենք միայն նըշմարել, որ ալգպիսի մի փոփոխություն առաջացրած պիտի լինի կամ տոնի տեղափոխություն և կամ տոնի բնույթի փոփոխություն:

3. Տոնի բնույթի փոփոխություն.— Լեզուների պատմությունը ցույց է տալիս, որ տոնը հաճախ իր բնույթը փոխելով վերածվել է շեշտի: Այսպես, հին հունարենը առաջ ունեւր երաժշտական շեշտ, որ քրիստոնեական թվականի սկզբից արդեն ժողովրդական լեզվի մեջ վերածվել էր ուժգնության շեշտի և այդպես էլ մնում է նոր հունարենում: Նույնպես լատիներենը դասական շրջանում ունեւր երաժշտական շեշտ, որ նախքան մեր թվարկությունը Դ դարից առաջ վերածվեց ուժի շեշտի և դա մնաց ուղմանական լեզուներում: Այսպես նաև ուրիշ լեզուներում, այնպես որ այժմ ընդոր հնգեվրոպական լեզուներում ուժի շեշտն է, որ տիրապետում է:

Այժմ պետք է քննել, թե ինչպե՞ս կատարվեց այս փոփոխությունը, որով վերջապես տոնը շնջվեց և նրան հաջորդեց շեշտը:

Այս բանում մեզ լավ ուղեցույց է սերբերենը, որ թեև ունի երաժշտական շեշտ, բայց այդ շեշտը հետզհետե մեր աչքի առաջ վերածվում է ուժգնության շեշտի: Այսպես, մալրաքաղաք Բելգրա-

գում լավ արտասանության մեջ (թաարոնի լեզու) տոնը իր բոլոր չորս տեսակներով մնում է, իսկ խոսակցության սովորական լեզվի մեջ փոփոխությունն սկսվել է արդեն: Շեշտը ավելի ուժգին է դարձել, որով գոնե կարճ վանկերում վերացվում են երաժշտական նըբությունները, բարձրացող և իջնող կարճ շեշտերը լավ չեն որոշվում. երկար վանկերը կարճանում են, անշեշտ երկարները բոլորն էլ կարճացել են, վերջնականի երկար ձայնավորը բոլորովին վերացել է. շեշտյալ երկար վանկերը դարձել են կես երկար. խոսողները գիտեն, որ շեշտը երկար է կամ կարճ, երգային կամ ոչ, բայց ուշադրություն չեն դարձնում դրա վրա (Meillet, Gramm. serbe, 28):

Այսպես է եղել նաև տոնի ձևափոխությունը հին լեզուների մեջ:

Նախ ձայնավորների տեղափոխության տարբերությունը սկսեց ջընջվել, այսինքն՝ e, ē — a, ā — o, ō և այլն ձայնավորների տարբերությունը վերացավ, և դրա փոխարեն տոն ունեցող ձայնավորները սկսեցին երկարել, իսկ տոն չունեցողները կարճանալ. սրա հետևանքով տոն ունեցողները սկսեցին ուժգին արտասանվել, որով ձևացավ շեշտը, որի էությունն է ավելի ուժգին հնչում, համեմատաբար ավելի երկարություն, քան մյուս վանկերում (Meillet, traité, 124):

Կարելի է նաև երևույթը բացատրել բնախոսական օրենքներիով: Գիտենք, որ արտասանության ժամանակ վատնված օգի քանակը ուղիղ համեմատական է ուժգնության հետ և խոտոր համեմատական բարձրության հետ: Ուրեմն միևնույն քանակությամբ օգի համար մի ձայն այնքան ուժգին պետք է լինի, որքան որ բարձր է. և եթե տարբեր բարձրությամբ ձայների համար մենք ուզենանք պահել միևնույն ուժգնությունը, մեր գործարանները պետք է մատակարարեն այնքան պակաս քանակի օդ, որքան որ բարձր է ձայնը: Այս երևույթը միևնույն է երգեհոնի պատմության հետ: Երգեհոնի ամբողջ ստեղծարարը միևնույն ուժգնությունն ունի և դրա համար նրա փուքը այնպես է շինված, որ միևնույն ժամանակի անողության մեջ, տարբեր խողովակներին տալիս է տարբեր քանակությամբ օդ, որ համեմատական է նրա երկարությանը, այսինքն՝ խոտոր համեմատական է ձայնի բարձրությանը: Այսպես է նաև մարդկային կողորդը: Մեր բնական կազմությունը այնպես է, որ շնչառական գործարանները ուզում են պահել ըստ կարելիության միօրինակ արագություն և օգի քանակի միօրինակ սպառում: Սա

ոխիթմի ընդհանուր օրենքն է, որ բոլորին պահում է կանոնավորություն մեջ: Երաժշտական տոն ունեցող լեզուների մեջ, ուր ձայնը երբեմն բարձր էր, երբեմն ցածր, բնականաբար չէր կարելի պահել այս միօրինակությունը և օգի սպառումը շարունակ փոփոխվում էր: Եկավ ժամանակ, երբ ոխիթմի միօրինակության պահանջով, օգի սպառման քանակը վերածվեց միօրինակության, հետևաբար և բարձրը ձայնը ստացավ ուժգնություն, տոնը վերածվեց շեշտի:

Այս բոլորի վրա ավելացնենք և այն, որ տոնի ջնջումը կամ շեշտի վերածումը հետևանք է տոնի տեղի հաստատման: Այսպես, օրինակ, հնդեվրոպական նախալեզվի մեջ տոնի տեղը կապված էր իմաստի հետ. այսինչ վանկի վրա գտնվելը նշան էր այսինչ հոլովի կամ այսինչ բայաձևի, իսկ մի ուրիշ վանկի վրա գտնվելը նշան էր մի ուրիշ հոլովի կամ բայաձևի: Տոնը շարժվում էր ըստ հոլովի և բայաձևի: Բայց այն ժամանակ, երբ տոնը ստացավ մի հաստատուն տեղ, նա չէր կարող այլևս ծառայել իբրև իմաստի կամ ձևի որոշիչ, հետևաբար գրկվում էր գոյություն իրավունքից և ուշ կամ կանուխ կամ պիտի ջնջվեր և կամ բնույթը պիտի փոխեր (Meillet):

Այժմ մասնավորենք մեր խոսքը հնդեվրոպական լեզվախումբի և նրա նախամոր մասին:

Լեզվաբանները, համեմատելով վեդայական և հունական բաները, գտել են, որ երկուսի տոնը համապատասխան է միմյանց, և այն, ոչ թե պատահաբար, այլ կանոնավորապես: Օրինակ, es/os հանգող չեզոք բուների մեջ տոնը արմատական ձայնավորի վրա է ինչպես՝ սանսկրիտ nābhas = հունարեն. νέφος «ամպ», սանսկրիտ sādās = հունարեն ἄδος «ստարան».— Ընդհակառակը, իգականի մեջ տոնը գնում է մասնիկի վրա. ինչպես՝ սանսկրիտ uṣāś = հունարեն ἴως «այգ»: Նմանապես օ հանգող բուների մեջ վերացական բաների տոնը ընկնում է արմատի վրա, իսկ ածականների և գործիչ ցույց տվող բառերինը օ վերջավորության վրա. ինչպես.

հունարեն τῶμος «կորվածք», τῶμός «կարող».

սանսկրիտ vāras «ընտրություն», varās «ընտրելի».

հունարեն πλῆψος «նավարկություն».

սանսկրիտ plavās «նավ»:

Այսպիսի համեմատություններից լեզվաբանները հետևցնում են, թե հնդեվրոպական նախալեզուն էլ ուներ երաժշտական տոն և որոշում են տոն ընդունող վանկը բառի մեջ:

Հնդեվրոպական նախալեզվի տոնը պահել են միայն հնդկերենն ու հունարենը, բայց անշուշտ կար նաև բալթիկ, սլավ և գերմանական լեզուների հնագույն շրջանում: Ինչպես տեսանք և ավելի հետո էլ պիտի տեսնենք, երաժշտական տոնը ապագայում դառնում է ուժի շեշտ, որ խփվում է ճիշտ այն կետում, ուր էր երաժշտական տոնը. այսպես, հին հունարենի տոնի տեղ այսօր նոր հունարենում գտնում ենք ուժի շեշտ: Այսպես էլ արդի լիտվաներենի, սլոնակերենի, սերբերենի և այլնի ուժի շեշտը առաջացել է բալթիկ-սլավական հնագույն լեզվի տոնից, և համապատասխանում է հունարենի և սանսկրիտի տոնին, օրինակ՝ սլոնակերեն νεβο, սերբերեն nēbo «երկինք» շեշտվում են ճիշտ ինչպես հունարեն νέφος և սանսկրիտ nābhas:

Հնդեվրոպական նախալեզվի տոնը պահված է եղել նաև հին գերմանական նախալեզվում, որի հետքերը երևում են միայն ձայնարանական մի հետաքրքրական երևույթի մեջ.— հնդեվրոպական նախալեզվի շնորհ և խուլ ձայնները գերմանականում դառնում են թրթռուն՝ եթե տոնից առաջ են, բայց մնում են խուլ՝ եթե տոնից հետո են¹. ինչպես.

հնի. k

հրգ. swehur «կեսրայր» — սանս. çvāçuras, ուու. svēkor.

բայց՝ swigar «կեսուր» — սանս. çvaçrūs ոուու. svekrón

հնի. t

հ. անդլ. weorþe «լինում եմ» — սանս. vārtate «դառնում է»
wearþ «եղա» սանս. vavārta «դարձա».

գերմ. bruder «եղբայր» (θ) սանս. bhrātā

բայց՝ wurdon «եղանք» սանս. vavṛtmā «դարձանք»

vunden «եղած» սանս. vṛttās «դարձած»

vater «հայր» (ð) սանս. pitār

հնի. s

գոթ. amsa — «ուս» սանս. āmsa—

գոթ. mimza — «միս» սանս. māṃsā—

Այսպիսով, ուրեմն բալթիկ-սլավական ու գերմանական լեզուներն էլ օգնության են հասնում հնդկերենին և հունարենին, որոնց համեմատությամբ վերականգնվում է հնդեվրոպական նախալեզվի տոնը:

Այնուամենայնիվ պետք է կարծել, որ այս լեզուների համեմատությամբ ստացված արդյունքը բացարձակապես ճիշտ է,

¹ Այս երևույթն առաջին նկատույթի անունով կոչվում է վեոների օրենք:

կամ թե կարելի է՞ հնդեվրոպական նախալեզվի տոնի պայմանները ստույգ կերպով և իրենց բոլոր մանրամասնությունները երևան հանել: Հնդեվրոպական նախալեզվի մեջ տոնի կանոնը այնպես բարդ էր, որ մեր կարողությունից վեր է այժմ երևան հանել այն: Վեդայական հնդկերենը, հանարենը, լիավաներենն ու սլավերենը, յուրաքանչյուրը իրեն համար, այնպես են բարեփոխել տոնի օրենքները, որ նույնիսկ այն պարագային, երբ այդ բոլորի մեջ կա կատարյալ համաձայնություն, մենք իրավունք ունենք կասկածելու, որ դա հետին ձևափոխության և պատահական զուգադիպություն արդյունք է: Այս դեռ համաձայնության դեպքում: Իսկ երբ, ինչպես շատ անգամ է պատահում, այդ լեզուների համաձայնությունը վերիվերո է և տարբերությունները մեծ, իհարկե անհնարին է ճիշտ եզրակացության հասնել (հմմտ. այս առթիվ՝ Meillet, Sur l'accentuation des noms en indo-européen, MSL, № 19, 1916, էջ 65—84, հատկապես էջ 78—79):

Քննությունները հնդեվրոպական նախալեզվի տոնի մասին տալիս են հետևյալ ընդհանուր եզրակացությունները.

1. Հնդեվրոպական նախալեզվում ամեն մի բառ ունի մի տոն. թերևս երկար բառերը ունենալին երկու տոն, բայց օրինակներով այդ բանը դեռ հաստատված չէ:

2. Տոնը շարժական է, այսինքն՝ կարող է գտնվել ամեն մի վանկի վրա, լինի արմատի, մասնիկի և կամ բաղական ու հոլովական վերջավորությունների վրա. եթե հունարենում նա սահմանափակված է վերջին երեք վանկերի մեջ, դա հունական նորմություն է. հմմտ. վեդայական հնդկերենի bhāramānas «կրող, բերող», մինչդեռ հունարենն է φερονέλη.

3. Հնդեվրոպական տոնը ներկայացնում էր ձայնի պարզ բարձրացում, առանց նկատելի ուժգնության և առանց երբեք երկարելու ձայնավորը. նա չէր կարող ցույց տալ այս կամ այն բառի կարևորությունը նախադասության մեջ, ինչպես, օրինակ, հայերեն Ծ'ս եմ ասում, Ես ասում եմ և այլն, այսպիսով շեշտալու վանկ և անշեշտ վանկ հնդեվրոպական նախալեզվում հավասար արժեք ունեին. ահա այս պատճառով էլ տոնը երբեք ոչ մի փոփոխություն առաջ չի բերել ձայնավորների վրա՝ բոլոր հին հնդեվրոպական լեզուներում, հատկապես վեդայական հնդկերենի մեջ, հունարենի և բալթիկ-սլավական ու գերմանական նախամայր լեզվի մեջ: Սրա հակառակը տեսնում ենք նորայաթին, կելտական, գերմանական, սլավոնական և այլ լեզուների մեջ, ուր շեշտը ուժեղ և երկար լինե-

լով՝ նրա ազդեցության տակ ձայնավորները փոխվել են, և նույնիսկ ամանք ջնջվել (եթե շեշտից հետո են):

Տոնը կա անշեշտ նաև հայերենի մեջ, իբրև ժառանգորդ հնդեվրոպական նախալեզվի, բայց նրա հետքը իսպառ կորել է և որևէ կերպ վերականգնել անկարելի է: Միայն հետևյալով այն բանից, որ նա շատ ուժեղ չէ և չի ազդում իրենից առաջ գտնված բոլոր ձայնավորների վրա, կարելի է ասել, թե պարզապես ուժգնության շեշտ չէր, այլ ունի նաև տոնի բնույթ, նման լատիներենի, ուր շեշտը տոնի վրա ավելացած է առանց նրան բոլորովին ջնջելու (ըստ Meillet-ի BSL, 30, № 91, էջ 44):

ՁԱՅՆԻ ՈՒԺԳՆՈՒԹՅՈՒՆԸ

Ձայնի ուժգնությունն ասելով հասկանում ենք ձայնը ավելի հեռու հասցնելու կարողությունը, որ արդյունք է թոքերից վտարված օդի քանակության և նրա հետ ուղիղ համեմատական:

Մենք կարող ենք խոսել զանազան աստիճանի ուժգնությամբ. գլուղացիք սարից սար բարձրաձայն դռնելով իրար խոսք են հասցրնում: Մենք էլ մեր առօրյա կյանքում ստիպված ենք այնքան ավելի ուժգին կանչել, որքան հեռու է մեր խոսակիցը կամ թե ուզում ենք ազմկալից մի վայրում մեր ձայնը լսելի դարձնել ուրիշներին: Կարող ենք նաև մեր կողքի ընկերոջ ականջին փսփսալ՝ մի շատ սկար շշուկով: Առաջինից մինչև երկրորդը կան բազմաթիվ աստիճաններ:

Բայց լեզվաբանության գործը չէ զբաղվել ձայնի կամ խոսքի այս բացարձակ ուժգնությամբ, այլ նրա կազմիչ մասերի ու վանկերի հարաբերական ուժգնությամբ:


Ինչպես որ մի նախադասության կամ մի բառի բոլոր վանկերը հավասար բարձրություն չունեն, նույնպես և չունեն հավասար ուժգնություն, այսինչ վանկը տկար է հնչվում, մյուսը՝ ավելի ուժեղ:

Ձայնի ուժգնության տեսակներն ու պատճառները նույնն են, ինչ որ ձայնի բարձրության համար. այստեղ էլ կարող ենք զանազանել զգայական, տրամաբանական և լեզվական:

Դժվար չէ զանազանել ձայնի ուժգնությունը, երբ երկու ձայն ունեն հավասար բարձրություն և նույն երանգը, բայց տարբեր են ուժգնությամբ, ականջն իսկույն կարող է որոշել նրանց տարբերությունը: Նույնպես, եթե երկու ձայն ունեն միևնույն երանգը, բայց տարբեր բարձրություն, ականջը հեշտությամբ կարող է զգալ նրանց ուժգնության տարբերությունը, այսպես, օրինակ, երբ ջութակի վրա անում են, հեշտությամբ կարողանում ենք զանազանել ուժգնության այն աստիճանները, որ երաժիշտները կոչում են pianissimo, piano, mezzoforte, forte, fortissimo, crescendo և decrescendo: Նույնիսկ այն դեպքում, երբ երկու ձայն ունեն տարբեր երանգ և տարբեր բարձրություն, ականջը կարող է, թեև այս անգամ ավելի դժվարությամբ, որոշել նրանց ուժգնության տարբերությունը. օրինակ, շեփորի այսինչ նոտան ավելի ուժեղ է, քան սրինգի այնինչ նոտան: Դժվարությունն էլ ավելի է մեծանում, երբ հարկ է լինում որոշել ազմուկների ուժգնությունը: Բայց այս դեպքում էլ շատ անգամ ականջը կարող է զանազանել, օրինակ, թե հրացանի պայթյունը ավելի ուժեղն է, քան դռան ճռուցը: Սոսակցության մեջ զանազան հնչյուններ, տարբեր երանգով և տարբեր բարձրությամբ, խառնվում են ազմուկների հետ, դրանով առաջանում են զանազան խառնուրդներ. բայց ականջը մեծ մասամբ կարող է զանազանել մի բառի կամ մի նախադասության զանազան վանկերի ուժգնությունների տարբերությունը:

Ձայնաբանները զանազան փորձեր ու քննություններ են կատարել՝ որոշելու համար ձայնի ուժգնության պայմաններն ու օրենքները: Այս օրենքներից կարող ենք հիշել հետևյալները.

1. Ձայնը համարում ենք այնքան ավելի ուժեղ, որքան ավելի կարող է հասնել հեռու և լսելի դառնալ ականջին. լուրաքանչյուր բարձրության համար ուժգնության կամ լսելիության աստիճանը տարբերվում է: Եթե վերցնենք զանազան ձայնորդներ (diapason) և միևնույն ուժով հնչեցնելով ստանանք do^{-2} (16 զույգ թրթիռ) մինչև do^9 (16, 384 զույգ թրթիռ) ձայները, կնկատենք, որ լսելիության աստիճանը կամաց-կամաց աճում է մինչև do^2 , հետո արագությամբ մինչև do^5 , հետո մի քիչ դանդաղում է մինչև do^7 , այս կետում հասնում է լսելիության բարձրագույն աստիճանին, իսկ do^7 -ից արագությամբ իջնելով հասնում է մինչև լսելիության վերջին սահմանը, որ do^9 -ին մոտիկ է: (Դնում ենք այստեղ հետևյալ տախտակը).



16 32 64 128 256 512 1024 2048 4096 8192 16384
 2^0 2^1 2^2 2^3 2^4 2^5 2^6 2^7 2^8 2^9

Երբ զանազան մարդիկ տարբեր բարձրություններ են արտաբերում, նկատելի է, որ ամենից ավելի լսելի են չորաքանջուր անձի medium նոտաները:

3. Ամեն մի ձայնավորի լսելիության աստիճանը տարբեր է. այսպես՝ բաց ձայնավորները ավելի լսելի են, քան փակ ձայնավորները և ոչ կլոր ձայնավորները ավելի լսելի են, քան կլոր ձայնավորները: Ահա ձայնավորների լսելիության շարքը. a, o, e, ö, i, u, ü. ամենից ավելի լսելի է a, ամենաքիչը՝ ü:

4. Բաղաձայնների հարցը ավելի բարդ է, որովհետև նրանց լսելիությունը կախված է ոչ միայն իրենց բնությունից, այլև նրանց ընկերակցող ձայնավոր ու բաղաձայն ձայների բնությունից: Հաճախ մի բաղաձայն, որ համեմատությամբ մի ուրիշի ավելի հեռվից է լսելի և հետևաբար պետք է համարել ուժգին, ականջի մոտ արտասանվելու ժամանակ նրանից թույլ է ելևում. այսպես, երբ արտասանենք հալասար ճիգով sa և za, առաջինը երկրորդից ավելի լսելի է լինում հեռվից, բայց երբ արտասանենք ականջի մոտիկ, երկրորդը առաջինից ավելի ուժեղ է ելևում:

Ձայնի ուժգնությունը կախված է արտասանության ժամանակ վտարված օդի քանակությունից. եթե a ձայնը արտասանենք այսինչ բարձրությամբ և x քանակությամբ օդով և հետո նույնը 2x քանակությամբ օդով, երկրորդը բնականաբար ավելի ուժեղ կլինի: Բայց այս չի նշանակում, թե որևէ ձայն, որ արտասանվում է 2x քանակությամբ օդով, անպատճառ կրկնակի ուժգին է մի որևէ ուրիշ ձայնից, որ արտասանվում է x քանակությամբ օդով: Իրա պատճառն այն է, որ ամեն մի ձայնի արտասանության համար

անհրաժեշտ օդի քանակը տարբեր է և կախված է նրա բարձրությունից, և բերանի ու խոչակի բացվածքից, այնքան մեծ է վտարված օդի քանակը, որքան մեծ է խոչակի բացվածքը և փոքր է բերանի բացվածքը: Վտարված օդի քանակը ուղիղ համեմատական է ձայնի ուժգնությանը և խոսոր համեմատական է նրա բարձրությանը: Եթե օդի պաշարը նույնը պահելով հանդերձ, ձայնը ավելի բարձրացնենք, բնականաբար նա կլինի ավելի ուժեղ: Այս պատճառով է, որ ձայնի բարձրություն և ուժգնություն գաղափարները հաճախ շփոթում են իրար հետ. բարձր խոսել նշանակում է ուժեղ ձայնով խոսել: Սրանից է նաև, որ լեզուների բարեշքություն մեջ բարձրության շեշտը (տոնը) գտնում է հետո ուժի շեշտ:

Երբ միևնույն ուժգնությամբ և միևնույն բարձրությամբ արտասանենք տարբեր ձայնավորներ, օդի պաշարը կլինի այնքան ավելի մեծ, որքան ավելի փակ է ձայնավորը: Նշանակում է, օդի միևնույն քանակով արտաբերված փակ ձայնավորը պակաս ուժեղ է, քան բաց ձայնավորը: Ահա թե ինչու՞ զանազան լեզուների մեջ ձայնավորները շեշտի ասակ կրում են ուրիշ ձայնափոխություն և ստանց շեշտի՝ ուրիշ:

Ինչ վերաբերում է բաղաձայններին, նկատելի է, որ միևնույն ուժգնությամբ արտասանված զանազան բաղաձայնների մեջ ձայնական գործարանների սեղմումը և օդի պաշարը աճում են հետևյալ շարքով. թրթռուն սեղմ, խուլ սեղմ, թրթռուն պայթական, խուլ պայթական: Հնչեղ պայթականներն էլ ավելի թույլ են, քան ոչ-հնչեղ պայթականները: Ըստ այսմ արվում է հետևյալ շարքը. — նախ ձայնավորներ, ապա l, r, n, m, z, ž, v, γ, s, š, f, x, b, d, g, p, t, k:

Օդի ամենափոքր պաշարը գործածում ենք սեղմ թրթռուն բաղաձայնների համար և ամենամեծ պաշարը՝ խուլ պայթական բաղաձայնների համար:

Ինչպես այս գլխի սկզբում ասացինք, ձայնի ուժգնությունը կարող է առաջանալ զգալական, արամբրանական և լեզվական պատճառներից: Զգալական շեշտը մարդու հուզմունքի արդյունքն է, լինի դա առաջացած նախադասության բովանդակությունից, թե մարդու բնավորությունից, կամ քիչ և սովորությունից: Զգացմունքների թափը աճեցնում է շնչաուժությունը, լարում է ձայնալարերը, որով և ձայնին տալիս բարձրություն և ուժգնություն: Այստեղ էլ օրենքները և պայմանները նույնն են, ինչ որ տեսնք նախորդ գլխում. եռանդազին հուզմունքները ավելացնում են ձայնի ուժգնությունը,

իսկ լքող հուզմունքները պակասեցնում են: Բայց ծալրահեղ աստիճանում թե՛ հասնողագին հուզմունքները և թե՛ լքող հուզմունքները տալիս են միևնույն արդյունքը. ձայնը լինում է ավելի ուժգին, բայց անկանոն, ընդհատ և բացահանչական:

Ռուսլոն (Principes, II, 1014 — 1018) նկարագրում է այն բազմատեսակ փորձերը, որ կատարել է որոշելու համար ձայների լսելիության աստիճանը: Այդ փորձերը տեղի են մի քանի տարի, փորձել է զանազան ժամանակներ՝ անտառում, հրապարակում, մեծ փողոցում և այլն. փորձերը կատարել է զանազան տղամարդկանց ու կանանց վրա, ձայնի զանազան տեսակներով, օժտված վարիչ և ճիշտ գործիքներով, բայց միևնույն ժամանակ չի հասել վճռական արդյունքի, ինչպես խոստովանում է ինքը: Եվ ի վերջո, բազմատեսակ ազդեցություններ, ցուցակներ, համազրական տախտակներ տալուց հետո, վերջնական եզրակացությունը թողնում է ընթերցողին:

Տրամաբանական շեշտը չի բաժանվում զգալական շեշտից: Խոսողը իր դատողությունների ընթացքում ավելի կարեւորություն է տալիս այսինչ կամ այնինչ բառին, որի վրա և պետք է հրավիրել լսողի ուշադրությունը. այս պատճառով էլ արտասանությունն է աստիճանական կամ հակասական շեշտ (accent oratoire ou emphatique): Իբր օրինակ կարող ենք ասել էջ 333-ում տրված նախադասությունը. այսպես՝ Այսօր համալսարան գնացի՛. Այսօր համալսարան՝ գնացի (ոչ թե արի՛շ տեղ). Համալսարան այսօ՛ր գնացի (ոչ երեկ). այսօր համալսարան մե՛նա՛յ գնացի (ոչ թե Արուսյակի հետ) և այլն:

Լեզվական շեշտը անկախ է զգալական և տրամաբանական պատճառներից և լեզվի պատմական կյանքի արդյունք է: Բառի այսինչ վանկը արտասանվում է ավելի ուժգին, քան մյուս վանկերը: Այս շեշտը կոչվում է ուժգնության շեշտ (accent d'intensité, accent de force, accent dynamique, accent expiratoire) կամ պարզապես շեշտ, զանազանելու համար բարձրության շեշտից (accent de hauteur), որ և պարզապես կոչվում է առն:

Ինչպես նախորդ գլխում տեսանք, տոնը ունի բազմաթիվ տեսակներ և զանազանություններ. բայց այսպես չէ շեշտը: Այստեղ զանազանվում են իրարից միայն 1) ուժեղ շեշտ (fort), 2) միջակ շեշտ (mi fort) և 3) անշեշտ (faible): Բառը բացի իր գլխավոր շեշտից (accent principal), որ մյուսներից ավելի ուժեղ է

համարվում, կարող է ունենալ նաև ավելի տկար մի շեշտ, որ կոչվում է երկրորդական շեշտ (accent secondaire, Nebenakzent). այսպես, օրինակ, անգլերեն congrégation բառը ունի երկու շեշտ. մի գլխավոր շեշտ վերջնական վանկի վրա և մի երկրորդական շեշտ առաջին վանկի վրա: Այսպես նաև ֆրանսերեն pèlerine բառի մեջ i ձայնավորի վրա կա մի գլխավոր շեշտ, իսկ առաջին pè վանկի վրա մի երկրորդական շեշտ (Clédat, Nouvelle gramm. hist. de franc., 4 ième éd., 28): Բայց կարող է բառը ունենալ նաև երկու երկրորդական, շեշտ. այսպես, ֆրանսերենում ամեն բառ, որ կազմված է մի որևէ նախամասնիկով, ունենում է մի երկրորդական շեշտ նախամասնիկի վրա, մի երկրորդական շեշտ նրան հաջորդող վանկի վրա և մի գլխավոր շեշտ. օրինակ՝ pardonnerai (անդ, էջ 29):

Կինդսելը կարծում է, թե որքան վանկ ունի բառը, այնքան էլ շեշտ ունի՝ մին մյուսից ավելի տկար: Այսպես, գերմաներեն Untergebener և անգլերեն unimprovable բառերի մեջ, որոնք ունեն հավասարապես 5 վանկ, կա հինգ տարբեր շեշտ, որոնցից ամենաուժեղը նշանակում ենք 5 թվանշանով, երկրորդական շեշտը 4 թվանշանով, մյուս հետզհետե տկարացող շեշտերը 3, 2 և 1, որ ամենից թույլ վանկն է.

üntergébener	unimprovable
4 2 5 1 3	4 2 5 1 3

Վունդըտ (Volkerps. I, 2-րդ մաս, էջ 396) չի ընդունում այս կարծիքը, ասելով, որ ուժաչափ գործիքը միայն կարող է վճռել այս գիտողությունը. իսկ ականջը զգում է միայն 4 և 5 շեշտերը, մյուս երեքը անընդունակ են զգալու:

Բացի սրանից, շեշտի ուժգնության տարբերությունը զգալի է նաև լեզվից լեզու, օրինակ, անգլերենի, գերմաներենի, ռուսերենի շեշտը ավելի ուժեղ է, քան հայերենի և ֆրանսերենի: Տարբերությունը հայտնի կերպով զգացվում է, երբ ամենքին հասարակաց դարձած մի բառ արտասանվի վերոհիշյալ յուրաքանչյուր լեզվով. օրինակ՝ machine՝ «մեքենա»: Շեշտը հասնում է իր մաքսիմումին այն լեզուների մեջ, ուր շեշտից հետո մի քանի վանկեր կան. նա հասնում է իր մինիմումին այն լեզուների մեջ, ուր շեշտը վերջնավանկումն է: Այսպես՝ վրացերեն և հունգարերեն լեզուների մեջ, ուր շեշտը առաջին վանկումն է, շատ ուժգին է հնչվում, իսկ ֆրանսերենի ու հայերենի մեջ, ուր շեշտը վերջնավանկումն է, շատ մեղմ

է լսվում: Ընտանիքները շեշտ չունի և բառի բոլոր վանկերը հա-
վասար են. միայն հարցականը շեշտ է ստանում (Plaut, 4):

Պատահում են երբեմն վանկեր, որ ունենան երկու շեշտ, մին
մյուսից ավելի ուժեղ. ինչպես գերմաներեն so (zó—ó) կամ հա-
լերեն հա (հա—ա'). սրանք կոչվում են երկու գագաթանի վան-
կեր (syllabes à deux sommets, zweigipfige silben). բայց սրանք
էական երկու տարբեր վանկեր են:

Ինչպես տոնի, նույնպես և շեշտի տեղը բառի մեջ լինում է
շարժական կամ հաստատուն. օրինակ, ուսուցիչներում շեշտը շար-
ժական է և կարող է առաջին վանկից սկսած մինչև վերջինը խա-
ղալ շարունակ, առանց որևէ կանոնի, ինչպես՝ прогуживающийся
«ման եկող»: Գանիերենի, ինչպես և նորալատին լեզուներից խա-
լերենի, իսպաներենի և պորտուգալերենի մեջ շեշտը խաղում է
բառի վերջին երեք վանկերի վրա. օրինակ, իտալերեն ancóra «խա-
րխա», ancóra «գեռ». բայց գանիերենում կարող է էլ ավելի առաջ
գնալ, ինչպես՝ by'gningerne «շենքեր»: Սերբերենում կարող է
մինչև 6 վանկ առաջանալ. օրինակ՝ ùmilostiviti:

Շեշտը շարժական է նաև ուսուցիչների հարադատ ընկեր ուղար-
ներենի մեջ և նրա տեղը որոշելու համար ոչ մի կանոն չկա: Նույ-
նիսկ բառերի իմաստը կամ քերականական ձևը շեշտի տարբերու-
թյամբ է իմացվում. օրինակ. doróga «ճամփա», dorogà «թանկ»
му'ка «չարչարանք», мука «ալյուր», máла «ուներ», малà «փոք-
րիկ», плачу «լալիս եմ», плачу' «վճարում եմ», вóды «ջրեր»,
вody «ջրի» (Smal-Stockyj, 36):

Իսպաներենում, երբ բառը վերջանում է ձայնավորով կամ n,
s բաղաձայններով, շեշտը վերջընթեր վանկի վրա է, ուրիշ բա-
ղաձայնով կամ երկարբառով վերջացած ժամանակ շեշտը դրվում
է վերջին վանկի վրա. ինչպես՝ cadena «շղթա», estoy «եմ». բայց
կան ուրիշներ, երբ շեշտը անցնում է նախավերջընթեր վանկին,
ինչպես՝ elhómbre «տղամարդ», la mujér «կին»: Ուրիշ լեզուներ
ի մեջ շեշտի տեղը որոշ է և կախված է վանկերի թվից կամ այլ
ձայնական պայմաններից: Այսպես, բոլոր ուղրո-ֆրինական լեզու-
ներում (ֆրիներեն, հունգարերեն, լատիներեն, վոզուլերեն և այլն)
ինչպես նաև մոնղոլերենում (Владимирцов, Справ. 97), գրավիդ-
յան լեզուներում (Caldwell, 189) շեշտը գտնվում է նախավանկի
վրա: Այսպես է նաև չեխերենում, սլովակերենում և հին իտալիերե-
նում: Չեխերենում և սլովակերենում մինչև անգամ երբ միավանկ
մի նախադրություն գտնվի մի բառի մաս, նրա հետ իբր մի բառ

համարվելով, շեշտը իր վրա կթաշի. ինչպես՝ p'rad pracī «նախքան
աշխատանքը», no pracī «աշխատանքից հետո»: Լեհերենում և մա-
լայերենում շեշտը վերջընթեր վանկի վրա է միշտ: Այսպես նաև
ասուրերենում, բայց երբ վերջընթեր վանկը կարճ է, շեշտը անց-
նում է նախավերջընթեր վանկին (Bertin, 29): Հայերենում, թուր-
քերենում, պարսկերենում, ֆրանսերենում, բասկերենում և այլն
շեշտը դրվում է վերջնավանկի վրա: Երբայերենում և արամերե-
նում ևս, բառավերջի ձայնավորը ընկնելով, շեշտը մնաց վերջնա-
վանկի վրա: Արարերենում, ընդհակառակը, շեշտը չի կարող զբա-
նրվել վերջնավանկի վրա, այլ վերջնավանկից առաջ՝ առաջին պա-
տահող երկար ձայնավորի կամ փակ վանկի վրա. իսկ եթե չկա,
առաջին վանկի վրա. ինչպես՝ Kitâbun, yâktubu, Katâbna, yaqû-
lu, xayyâtûna, ijtamâ'nâ, axbarnâkum, kâtaba, mâšvaratun, ta-
jânnabatâ և այլն: Չուվաշերենում, եթե բառի բոլոր ձայնավորները
կարճ են, շեշտը գտնվում է վերջին վանկի վրա, իսկ եթե բառի
մեջ կա մի որևէ երկար վանկ, շեշտը ընկնում է նրա վրա, մինչև
իսկ եթե նա լինի վերջից հաջված 5-րդ, 6-րդ կամ 7-րդ վանկի
վրա. ինչպես՝ pâratamart'y'e., sâvanatamart'y'e և այլն (Ашма-
ринъ, Матер, 19): Յակուտերենում բառը ունի երկու շեշտ. առա-
ջին վանկը ունի կիսաշեշտ կամ թույլ շեշտ, վերջին վանկը՝ միշտ
ուժեղ շեշտ. միջին վանկերը անշեշտ են. այսպես, օրինակ, at-tar-
bât-âp-an բառը շեշտվում է 'ս ս ս' (Астремский, 13): Ապտերե-
նում շեշտը վերջին կամ նախավերջին վանկի վրա է լինում:

Գերմանական լեզուներում ընդհանուր ձգտում կա շեշտը
զցելու առաջին վանկի վրա. բայց այս կանոնը խանգարում են օտար
փոխառյալ բառերը և մի խումբ նախամասնիկներ, որոնք չեն կա-
րող իրենց վրա շեշտ վերցնել. ինչպես՝ գերմաներեն verzeihen,
gegessen, übersetzen և übersetzen և այլն: Վրացերենում շեշտը
գտնվում է միշտ վերջից հաջված երրորդ (նախավերջընթեր) վան-
կի վրա. ըստ ալամ երկավանկ և եռավանկ բառերի շեշտը առաջին
վանկի վրա է լինում, իսկ բազմավանկ բառերի շեշտը հոլովման
ժամանակ տեղափոխվում է. այսպես՝ կա'ցի, աո'փելի, օհա'վարի,
մու'րարա, սևուկան մուրա'րիսա, ի'քմենբա, բայց իքմեն'բոգա
(Dirr, Gramm. georg., 3—4):

Ինչպես քիչ առաջ տեսցինք, բառը կարող է ունենալ երկու
շեշտ. այսպես են գերմաներենի և գանիերենի մեջ բարդ և ածանց
բառերը. օրինակ, գերմաներեն Nôchachtungsvöll, Sônnenblûme
«արևածաղիկ» գանիերեն, Kéjserdömmе «կայսրություն» բառերի

մեջ կա մի գլխավոր շեշտ (') և մի երկրորդական շեշտ (^): Հունգարերենում, ուր շեշտը միշտ առաջին վանկի վրա է, նույնիսկ երբ բառը որևէ նախամասնիկով է կազմված, բարդ բառերի երկու եզրերը կարող են առանձին-առանձին շեշտվել (Ney, Ungarische Sprachlehre, Pest, 1862, էջ XVI). այսպես լատիներենում բարդ բառն ունի երկու շեշտ. ինչպես՝ pènnipoténtes «թռչուններ», ուր գլխավոր շեշտը դրված է երկրորդ բառի վրա, իսկ երկրորդական շեշտը՝ առաջին բառի վրա, ճիշտ հակառակ գերմանականի (V. Henry, Gramm. comp. gr., 98): Բացի սրանից, լատիներենում կար կրկնակի կոչված ժողովրդական շեշտը, որ գլխավոր շեշտից զեպի վեր կամ զեպի վար ամեն մի երկրորդ վանկի վրա դրված մի երկրորդական շեշտ էր. օրինակ, sànguinis, occídímùs, impèrátor, impèratórem, intercídímùs և այլն (անդ, էջ 103):

Սոգդերենում, ինչպես և մյուս միջին իրանական լեզուներում, բառը ունի երկու շեշտ. առաջին՝ մի ուժգնության գլխավոր շեշտ, որ գտնվում էր բառի վերջընթեր վանկի վրա, եթե այդ վերջընթեր վանկը երկար էր, կամ նախավերջընթեր վանկի վրա, եթե վերջընթեր վանկը կարճ էր: Երկրորդ՝ մի երկրորդական շեշտ, որ ընկնում էր զույգ վանկերի վրա՝ հաշվելով ուժեղ շեշտով վանկից և բարձրանալով զեպի բառի սկիզբը (Gauthiot, Essai de gramm. sogd., 1914—1923, էջ 38):

Ինչպես հին լեզուների մեջ զանազան երկրորդական բառեր նախադասության մեջ կորցնում են իրենց տոնը և միանալով զբլխավոր բառին՝ դառնում են նախադասար կամ վերջահար, այսպես նաև նոր լեզուների մեջ այդ կարգի բառերը արժանանալով նվազ ուշադրության, կամ թուլացնում են իրենց շեշտը և կամ իսպառ կորցնում, իբր նախահար կամ վերջահար: Այսպես՝ անգլերեն a man «մի մարդ», I have not (I haven't) «չունեմ», գերմաներեն der Mann «մարդը», Ֆրանսերեն dis-je! «ասու՞մ եմ», la maison, une maison, cette maison, ma maison «տունը, մի տուն, այս տունը, իմ տունը» ձևերի մեջ ստորագծյալ բառիկները անշեշտ և վերջահար կամ նախահար են:

Հաճախ բառերը, նալած իրենց կարևորության, ունենում են շեշտ կամ կորցնում են այն. հմմտ. լա՛վ մարդ է. լավ մարդ շա՛տ կա. առաջին նախադասության մեջ լավ ստացել է ուժեղ շեշտ, մինչդեռ երկրորդ նախադասության մեջ զուրկ է շեշտից: Հայերենի մեջ շեշտի այս փոփոխությունը շատ մեծ դեր ունի. հմմտ.

Ն'ա եմ շատ աշխատում.

Ես շա՛տ եմ աշխատում.

Ես շատ աշխատու՛մ եմ, բայց...

Նույնը նաև գերմաներեն հետևյալ նախադասության մեջ. Er hat das Buch, որի մեջ ամեն մի բառի վրա շեշտ դնելով ստացվում է տարբեր իմաստ: Սեմական լեզուների մեջ շեշտը ըստ բառի տեսակի զանազանվում է. երբայերենում գոյականները ավելի ուժեղ շեշտ ունեն, քան բայերը. թե՛ երբայերենում և թե՛ արաբերենում նախադասության վերջը, այն է դադարի ժամանակ (pause) դրվում է ավելի ուժեղ շեշտ (Brockelm, Précis, 69):

Շեշտի տեղափոխություն կարող է տեղի ունենալ նույնիսկ մի բառի մեջ, երբ կարիք կա հատկապես այսինչ կամ այնինչ վանկը ավելի զգալի դարձնելու. ինչպես՝

Նե՛րածուլություն և ո՛չ թե արածուլություն.

Նե՛րշնչում և ո՛չ թե արաշնչում.

Ո՛չ թե քերարտադրություն է տեղի ունեցել, այլ զե՛րարտադրություն:

Սրանց մեջ հակադրությունը և ուշադրության կենտրոնը ներ և արա (ներս և դուրս), քեր և զեր (պակաս և ավելի) բառերի վրա է, իբր թե ասինք «ներս է շնչում և ո՛չ թե դուրս»:

Նույն երևույթը գտնում ենք նաև ուրիշ լեզուներում. հմմտ. ֆրանսերեն il faut se soumettre ou se démètre. «պետք է ենթարկվել կամ հրաժարվել», գերմաներեն gegangen nicht vergangen, անգլերեն not subjective but objective, not oppose [but sùppose, If on the one hand speech gives expression to ideas, on the other hand it receives impression from them.

Հայերենի մեջ այս երևույթը հասնում է մինչև տառերի կամ ձայների վրա ուշադրություն դարձնելու աստիճանին. օրինակ՝

Ա՛պարան թե՞ կա՛պարան.

Աբա՛րան չէ Ապա՛րան.

Առաջինի մեջ ինդիքը ա թե կա արտասանելու մասին է, ուստի այդ վանկերն են շեշտված, երկրորդի մեջ բա թե պա արտասանելու մասին, ուստի և այդ վանկերն են շեշտված:

Այսպիսի ուշադրության առարկա կարող են լինել նաև առանձին մասնիկներ ու բառիկներ և առաջ բերել շեշտի զանազան փոփոխություններ: Այսպես՝ լեզվի մեջ կարող է շեշտը հաստատված լինել վերջնավանկի վրա, բայց ինչ-ինչ երկրորդական պատճառներ

կարող են խանգարել այն և մինչև բառի առաջին վանկի վրա փոխադրել. օրինակ, պարսկերենի շեշտը վերջնավանկի վրա է միշտ. բայց որովհետև ներկայի մի նախամասնիկը և ապառնիի bi նախամասնիկը իրար չափազանց նման բաներ են, ուստի ժամանակի տարբերությունը զգալի դարձնելու համար լեզուն ստիպվել է դիմել մի ուրիշ միջոցի, այն է՝ շեշտը դնել նրանց վրա. ասվում է *mí xorem* «ուսում եմ», *bí xorem* «պիտի ուտեմ, կուտեմ». այսպիսով շեշտը փոխադրվեց առաջին վանկի վրա:

Նմանապես հարադիր մասնիկները չունենալով շեշտ, շեշտը փոխադրում են նախորդ վանկի վրա, որով ունենում ենք այսպիսի բառեր. *dihānet* «քո բերանը», *bustānem* «իմ պարտեզը» և այլն: Նույնպես որոշյալ հայցականով՝ *dihān-ra* «դերբանն», *bustān-ra* «զպարտեզն», և երկու մասնիկ միասին՝ *dihān-es-ra* «նրա բերանը», *bustān-et-ra* «քո այդ պարտեզը»: Իսկ երբ բառը պատահաբար միավանկ լինի, այս երկու հարադիր մասնիկները պատճառ պիտի դառնան, որ շեշտը փոխադրվի բառի առաջին վանկի վրա. այսպես՝ *ééšm-es-rā* «նրա աչքը», *dérd-es-rā* «նրա վիշտը» և այլն:

Հայերենի մեջ էլ կան նման դեպքեր. օրինակ, գրաբարում՝ ո՛չ կամիմ, ո՛չ ուսուցանեմ, ո՛չ եթե, ո՛չ այլ ոք. աշխարհաբարում՝ շորեր-ըս, իմ շորերը, չպիտի տայի, ո՛չ մեկն էլ, ճա՛ց մըն ալ. նույնիսկ պոլսահայերեն չը՛ բերեր կոր, ուր շեշտը դրված է և ձայնավորի վրա, որ առհասարակ շեշտ չի՛ ընդունում:

Երբ մի քանի այս կարգի բառեր պատահաբար իրար մոտ պատահեն, տեսե՛ք թե ինչ պատկեր կստացվի:

Պարսկերեն *mégu ki déšm-es-ra mí-binem yā né-mí-binem* «մի ասի, թե նրա աչքը տեսնում եմ կամ չեմ տեսնում»: Պոլսի բարբառով՝ Մ՛ըսեր օր մարդ մըն ալ չի պիտի գա:


Ընդհանուր կանոն է, որ նախադասության մեջ ստորադաս կամ երկրորդական արժեք ունեցող բառերը ավելի թույլ են շեշտվում, քան իրենց գերադաս, այսինքն՝ ավելի կարևոր բառերը: Այսպես, ածականը իր գոյականից ստորադաս է, սեռականը իր հոտկացյալից ստորադաս է, մակբայ, շողկապ, նախադրություն ավելի ստորադաս են, քան մյուս բառերը և այլն: Օրինակ՝ կարմի՛ր մատի՛տ, անտառի՛ պտո՛ւղ, երբո՛ր գա՛, մինչև՛ տու՛ն, քան թե նա՛, ի՛սկ ես չգիտեի՛, առվի մե՛ջ ձու՛կ կա: Այսպես նաև մասնիկի յարժեք ունեցող բառերը, ինչպես՝ պիտի գա՛, թող գա՛: Հրամայականը ուժեղ շեշտ է ստանում. արի՛, գնա՛, տե՛ս, տե՛ս թե քանի՞ հոգի է եկել. իսկ երբ հրամայականի վրա ավելանա պարապայական

մի բառ, շեշտը նրա վրա է փոխադրվում. ինչպես՝ դու՛րս եկ, գե՛ն գնա, վրա՛ տուր, վրա՛ն հեծիր, շու՛ա ասա, կամա՛ց շարվիր և այլն:

Երբ նախադասությունը բարդ է, նա կազմում է ստորադաս և գերադաս բառերի զանազան խմբակներ, որոնք իրար հետ միանալով, վերջապես հանդում են մի կարևոր և ընդհանուր իմաստի: Յուրաքանչյուր խմբակ ունենում է իր մեջ մի թույլ և մի ավելի ուժեղ շեշտ, իսկ այդ ուժեղ շեշտերն էլ ունենում են իրենց մեջ ուժի փոքրիկ տարբերություններ, որ հաճախ չենք կարողանում տարբերել, բայց խոսակցության կամ ընթերցանության մեջ զգում ենք: Յուրաքանչյուր խոսող այդ շեշտերին տեր է և գործածում է ուղիղ ձևով. ավելի զժվար է ընթերցանությունը, և հենց որ ընթերցողը անվարժ է, այսինքն՝ չի կարողանում մտնել ճիշտ խոսողի կամ պատմողի գերում, իսկույն ունկնդիրը նկատում է թույլ և ուժեղ շեշտերի աստիճանավորման սխալը:

Շեշտադրության այս պայմանները անշուշտ լեզվից լեզու տարբերվում են. այն, ինչ որ նկարագրեցինք վերևում, հատկապես հայերենի համար է, որի հետ կարող են նույնանալ նաև այլ լեզուներ, ինչպես Ֆրանսերեն կամ թուրքերեն:

Լեզվից լեզու շեշտի տարբերության լավագույն ապացույցը տեսնում ենք հաճախ մեր մեջ, երբ ուսսական կրթություն ստացած մի հայ, խոսելիս հայերեն գնուտ է իր լեզվի մեջ ուսսական առողանության շեշտեր. Օրինակ մինչ գուա հայ առողանությունը պիտի տեսինք՝



ուսսական կրթություն ստացած օտարածայն մի հայ աղջիկ ալեծածան շեշտերով պիտի տեսր.



ուր ոչ միայն նա՛ և բա՛ն վանկերը ավելի բարձր շեշտ են ստացած, այլ որ կարևորն է, վերջավորությունը՝ աեսալ, փոխանակ

սկսելու ցածրից (անս), բարձրանում է վերև, հետո իջնում է համարյա այն աստիճանին (սավ), ուր էր հայկական արտասանություն մեջ ան: Եվ մինչդեռ հայկական արտասանություն մեջ վերջնավանկը վերջանում է կարճ ու կտրուկ, ուսական արտասանություն մեջ բավական երկար տևողություն ունի:

Պետք է կարծել, թե լեզվի բովանդակ կյանքում շեշտը մնում է նույն վիճակում և նույն դիրքում անփոփոխ. տոնի նման նա էլ ենթարկվում է փոփոխությունների. այդ փոփոխությունները վերաբերում են շեշտի տեղին, աստիճանին և բնույթին: Շատ լեզուների պատմության մեջ նկատված երևույթ է, որ շեշտը նախապես եղել է անհաստատ, հետո դարձել է հաստատուն, կամ թե այսինչ վանկից փոխադրվել է մի ուրիշ վանկ: Կան նույնպես լեզուներ, որոնց զանազան բարբառներում շեշտադրությունը տարբեր ձև ունի: Այսպես՝ թեև այժմ ուզրոֆիննական բոլոր լեզուներումն էլ շեշտը նախավանկի վրա է, բայց հնագույն ժամանակ, այն է ուզրոֆիննական նախալեզվյան շրջանում, ըստ քննությանց Սետալա լեզվաբանի, շեշտը գտնվում էր բառի մերթ առաջին և մերթ երկրորդ վանկի վրա. այլևի հետո է, որ հավաքվեց ու հաստատվեց առաջին վանկի վրա (Szinyei, Finn. ugr. spr., 52), իսկ վոտյակերենում հաստատվեց վերջնավանկի վրա (Емельянов, Грам. вост. яз., 10, 24): Գերմանական ընտանիքի նախամոր մեջ շեշտը անհաստատ էր՝ իբրև համապատասխան հնդեվրոպական տոնին, հետո նույն ընտանիքի ժառանգ լեզուների մեջ հաստատվեց առաջին վանկում, որ սակայն այժմ էլ սկսել է փոփոխվել զանազան պատճառներով: Շեքսպիրի ժամանակ անգլերեն acceptable, refutable, respectable և այլն բառերի մեջ շեշտը առաջին վանկի վրա էր, այժմ երկրորդ վանկի վրա է (Jespersen, Phil., 28): Հին իռլանդերենի մեջ շեշտը նախավանկի վրա է, բայց կան բարբառներ որոնք նախավանկից տեղափոխվել են բառի երկար վանկի վրա: Հին սլավերենում շեշտը անհաստատ էր, ինչ որ շարունակվում է այժմ էլ ռուսերենի մեջ, բայց լեհերենը հաստատել է այն վերջնից վանկի վրա. հմմտ. ռուսերեն ру'кописъ «ձեռագիր», որ լեհացին արտասանում է рукописъ: Սերբերենը մեծ մասամբ շեշտում է առաջին վանկի վրա (Миленкий, 3), իսկ բուլղարերենը որոշ բարբառներում (Մակեդոնիա) հաստատել է նախավերջնից վանկի վրա, ուրիշ բարբառներում՝ վերջնից վանկի վրա և նույնիսկ որոշ բարբառներում՝ վերջին վանկի վրա (Щепкинъ, 6):—Սրանց

հակառակ նկատելի է, որ լատիներենի շեշտը անփոփոխ մնում է ուսական լեզուների մեջ. այսպես՝

լատիներեն pauperem >	իտալերեն povero, ֆրանսերեն pauvre, իսպաներեն pobre.
լատիներեն ferrum >	իտալերեն ferro,
լատիներեն felicissimum >	իտալերեն felicissimo, իսպաներեն felicísimo և այլն:

Բայց ֆրանսերենում, ուր շեշտը գտնվում է վերջնավանկի վրա զանազան պատճառներ գալիս են խանգարելու այն և շարժում են դեպի առաջին վանկերը, ինչ որ նշան է թերևս ապագա նոր բարեշրջություն:

Սևմական նախալեզվի մեջ շեշտը ազատ էր և բառի նշանակության համեմատ կարող էր անցնել այս կամ այն վանկի վրա. այլևի հետո հյուսիսային սեմականում հաստատվեց բառի վերջին երկու վանկի վրա: Սրա հետևանքով ասորերենում վերջին անշեշտ վանկի ձայնավորը ընկավ և շեշտը հաստատվեց վերջնավանկի վրա. այսպես է ասորերենի դասական գրականության շրջանում: Դեպի 700 թվականը շեշտը անցավ վերջնից վանկի վրա, ինչպես պահում են մինչև այժմ մարոնիները և մանավանդ նեստորականները (Broc., Syr. gramm., 18, 20, 21):

Սանսկրիտ լեզվում շեշտը անկանոն էր. արդի հնդկական սինհալի լեզվում շեշտը հաստատվել է բառի առաջին վանկի վրա (Geiger, 13):

Շեշտի լատիտման կամ տեղափոխության պատճառները նույնն են, ինչ որ տոնի համար. այն է՝ ձայնական պատճառներ, այսինքրն՝ ձայնավորի երանգի կամ տեղություն ազդեցությունը, ուրիշ մի ազդեցությունը, հոգեբանական պատճառներ, այն է՝ զգայական և տրամաբանական ուժգնության ազդեցությունը և վերջապես համանմանությունը (analogie): Շեշտի տեղի փոփոխությունն էլ հանկարծական շարժման արդյունք է, այլ պետք ունի երկարժամանակյա տատանումների և պատրաստություն, մինչև վերջնական վիճակի հասնելը:

Շեշտի աստիճանն էլ կարող է փոխվել, այսինքն՝ անշեշտ վանկերի նկատմամբ նրա ունեցած ուժգնության թափը մեծանալ կամ փոքրանալ: Այս բանը սակայն դժվար է հաստատել: Օրինակ, երբ համեմատենք լատիներենից ծագած զանազան ուսական լեզուները, կնկատենք, որ այսօր էլ նրանց մեջ ֆրանսերենը ամենաթույլ շեշտն ունի, մյուս բոլորը նրանից ուժեղ են: Սրանից

հետեցնում են, որ ուրեմն ֆրանսերենն էլ միջին դարում ուներ մյուսներին համասար շեշտ, որ արդի ֆրանսերեն շեշտից ավելի ուժեղ էր: Մակալն այս տարբերությունը ավելի լավ է վերագրել վերջնավանկին, քանի որ վերջնավանկում գտնված շեշտը ավելի թույլ է լինում, քան մյուս վանկերինը:

Շեշտը կարող է նաև իր բնույթը փոխել և վերածվել տոնի: Հիմնովելով ձայնագարձ կոչված երևույթի վրա, կարծում են, թե հնդեվրոպական նախալեզուն սկզբում ուներ ուժի շեշտ, որ հետո նույնիսկ նախալեզվում վերածվեց տոնի: Լատիներենը սկզբում ուժի շեշտ ուներ, որ պատմական շրջանի սկզբում վերածվեց տոնի, որ հետո նորից շեշտ դարձավ: Այս դեպքում, այսինքն՝ երբ շեշտը վերածվում է տոնի, եթե նա չի փոխում սկզբնական տեղը, երևույթը կարելի է բացատրել ճիշտ այնպես, ինչպես բացատրեցինք հակառակ երևույթը: Բայց այս բացատրությունը բավարար չէ այն դեպքում, երբ շեշտը դառնում է տոն, փոխելով միաժամանակ իր տեղը, ինչպես եղավ լատիներենում: Այս դեպքում երևույթը բացատրվում է օտար ազդեցությամբ, զգալիական կամ տրամաբանական շեշտով կամ ձայնական ազդեցություններով, ինչպես է, օրինակ, ձայնավորի տեղությունը: Նկատելի է, որ շեշտ չունեցող լեզուների մեջ, ինչպես է, օրինակ, ֆրանսերենը, շատ նախադասությունց մեջ, ձայնը բարձրանում է վերջընթեր վանկերից մեկում: Եվ երևի, թե ա՛յս է, որ հաստատվելով բառերի մեջ, դարձել է մշտական տոն:

Չանաղան լեզուների մեջ նկատելի է այն երևույթը, որ շեշտալու վանկերը արտասանվում են ավելի մաքուր կամ ամբողջական, իսկ անշեշտ վանկերը՝ ավելի թույլ կամ խուլ: Այսպես՝ անգլերեն միևնույն ձայնավորը, միևնույն դիրքի մեջ, շեշտի տակ պահում է իր հնչյունը, առանց շեշտի հնչվում է իբր օ, օրինակ, the հնչվում է di կամ də, a «մեկ, մի» հնչվում է ei կամ ə, an «մի» հնչվում է an կամ ən, not հնչվում է nɒt կամ nɒt և այլն: Ռուսերենի մեջ օ ձայնավորը շեշտի տակ օ է, շեշտից առաջ a, շեշտից հետո ə, ինչպես՝ ХОРОШО, МЫЛО: Դանիերենում բոլոր բառավերջիկ ձայնավորները հնչվում են անորոշ մի հնչումով: Ֆրանսերենի մեջ ձայնավորները շեշտի տակ բաց են հնչվում, առանց շեշտի՝ փակ են կամ միջակ. ինչպես՝ j'aime, nous aimons (žèm, nuzemɔ), frère, confrérie, il lève, nous levons: Ուղղոֆիննական լեզուների մեջ շեշտի պատճառով առաջ է գալիս բաղաձայնների ուժեղացում կամ տկարացում. ինչպես՝ ֆիններեն kukka «ծաղիկ» — սեռ. ku-

kan, luke «կարգալ», — luen «կարգում եմ», tapa «սովորություն», հոգն. tavat, anta «աալ» — annan «աալիս եմ» (Szinnyei. Finnugr. spr. 31):

Երբ մի բառ մի լեզվից անցնում է մի ուրիշ լեզվի, որի շեշտադրության օրենքները տարբեր են, փոխառյալ բառը հարմարվում է վերջինիս օրենքներին. օրինակ, իտալերեն gazzetta «լրագիր», որի շեշտը վերջընթեր վանկի վրա է, դարձել է սուսերեն՝ gazéta, ֆրանսերեն՝ gazéte, թուրքերեն՝ gazetá, սամկական հայերեն՝ իազեթա՝ «լրագիր»:

Երբ բառը բարդվում է, շեշտը կրում է որոշ փոփոխություն. այն լեզուների մեջ, ուր շեշտը վերջնավանկումն է, բարդությունը կազմող առաջին բառերը զրկվում են շեշտից և միայն վերջինն է շեշտվում, որով ընդհանուր օրենքը չի խախտվում: Իսկ այն լեզուների մեջ, ուր շեշտը շարժական է, ինչպես անգլերենում և գերմաներենում, բարդության ժամանակ հիմնական բառը վերցնում է ուժեղագույն շեշտը, մյուս բառերը երկրորդական, այսինքն՝ տկար շեշտ: Օրինակ, գերմաներեն Kindergärten «մանկապարտեզ» բառի մեջ, որ կազմված է Kinder «մանուկներ» և gärten «պարտեզ» բառերից, երկու շեշտ կա, բայց առաջինը ավելի ուժեղ է, քան երկրորդը: Նմանապես գերմաներեն Städtverordnetenversammlung, óberbürgermeister բառերի մեջ, որ բաղկացած են 3 բառից, 3 տարբեր շեշտ կա:

Այս կարգի լեզուների մեջ պատահում է երբեմն, որ բարդ բառի կազմիչ մասերը տարբեր շեշտեր ստանալով, տարբեր իմաստ ստանան. օրինակ, գերմաներեն blütarm «սակավարուն», blütärm «շատ աղքատ», steinreich «շատ հարուստ», steinrèich «քարով հարուստ, քարաշատ» (Wundt, Völkerps., I, 2-րդ մաս, 394):

Ձիլիի բնիկների լեզվում երբ բառը վերջանում է ձայնավորով, շեշտը մեծագույն մասամբ նախավերջին վանկի վրա է լինում, իսկ երբ բաղաձայնով և նույնպես երկրորդականով է վերջանում, շեշտը դրվում է վերջնավանկի վրա (Febre, 2):

Մուսուլման խմբից կոհլ լեզվում շեշտը գտնվում է առաջին վանկի վրա, նույնիսկ եթե բառը քառավանկ լինի, իսկ եթե բառը վերջանա երկրորդականով, շեշտը դրվում է վերջից հաշված երրորդ վանկի վրա (Nottrott, 6):

Հիպերբորյան չուքչի, կորյակ և կամչադալ լեզուների մեջ շեշտը միշտ գտնվում է բառի առաջին վանկի վրա, նույնիսկ եթե

բառը հնգաձևի է: Բայց երբ ուղեկան բառը շեշտել (ուժեղացնել), շեշտը բերում են վերջին վանկի վրա (Bogoras, 680):

Կովկասյան լեզվի լեզվում շեշտը գրվում է բառի երկրորդ վանկի վրա՝ սկզբից հաշված (Жирков, էջ 27):

Երբ շեշտը բառի առաջին վանկի վրա է, շունչը գեո առաջ լինելով, առոգանությունն էլ ուժեղ կլինի: Հաջորդ վանկերի վրա շունչը հետգեոտե սպառվելով, վերջին վանկերը թույլ կլինեն: Իսկ եթե շեշտը վերջին վանկի վրա է, շունչը արդեն նախորդ վանկերի վրա վատնված լինելով, վերջին վանկի վրա գրված շեշտը թույլ կլինի: Սրա համար է, որ առաջին վանկի վրա շեշտ ունեցող լեզուները ուժեղ են հնչում, իսկ վերջին վանկի վրա շեշտ ունեցողները՝ ալիքի մեղմ:

Շեշտ և տոն անկախ երևույթներ են, օրինակ՝ լապպերենը, որ ունի 4 տեսակ երաժշտական շեշտ (տոն), ունի նաև 4 տեսակ շեշտ, ուժեղ, սկար, սկարագույն, ամենատկար (Wiklund, 10, 12):

ՇԵՇՏԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՄԵՁ

Հայերենը, իբրև հնդեվրոպական լեզու, իր ամենաառաջին շրջանում ժառանգել էր հնդեվրոպական շեշտը, այսինքն՝ ունեւր երաժշտական շարժական տոն, թեև ոչ ուղղակի և ոչ անուղղակի որևէ ազդեցությւն չենք գտնում նույնը ապացուցելու համար: Ալիքի ուշ այս տոնը կորցրեց իր շարժականութունը, վերածվեց ուժեղութւյն շեշտի և եկավ հաստատվեց վերջընթեր վանկի վրա: Սա մի սովորական երևույթ է շատ ուրիշ լեզուների համար էլ. հաստատուն շեշտի տեղը վերջընթեր վանկն է առհասարակ:

Թե շեշտը գտնվում էր նախահայերենի վերջընթեր վանկի վրա, կարելի է ապացուցել հետևյալ լեզվաբանական երևույթով:

Երբ հայերեն մի բառ համեմատում ենք համապատասխան հնդեվրոպական ձևի հետ, նկատում ենք, որ սրա վերջին վանկը սղված է հայերենի մեջ. այսինքն՝ եթե հնդեվրոպական բառի վերջնավանկը ձայնավորով է վերջանում, այդ ձայնավորը (նույնիսկ եթե լինի a) ամբողջապես ընկել է, իսկ եթե բաղաձայնով կամ ձայնորդով է վերջանում, նույնիսկ եթե այդ բաղաձայնը կամ ձայնորդը պահված է, նրա նախորդ ձայնավորը կրճատված է, օրինակ՝

հնիս. penk^we > սանս. pánča = հուն. πέντε հինգ.

հնիս. ebheret > սանս. ábharat = հուն. ἑβερε = երեք.

հնիս. edhēt > սանս. ádhāt = եղ.

հնիս. եղ. ուղ. swópnoš > սանս. svápnah լա. somnus

հնիս. եղ. հյգ. swópnom > սանս. svápnam լա. somnum } = քուն.

հնիս. եղ. ներգ. swopnoi > սանս. svápne հուն. ὕπνοι

հնիս. հոգ. հյգ. swopnos > = քուն.

հնիս. pətēr > հուն. πατήρ = լա. pater = հայր

հնիս. podn > հուն. πῶδα = *ուսան > = ոտն.

Երբ բառը միավանկ է, բնականաբար այդպիսի երևույթ տեղի չի ունենում. օրինակ, հնդեվրոպական նախալեզվի trins > գոթերեն θrins = հայերեն երիս (բառիս մեջ և հայկական հավելված է, ուստի բուն ձևն է *րիս < trins):

Ալիքի զարմանալի է նկատել, որ վերջնահանգ ձայնավորը կորցնող մի բառ եթե պատահամար բառի մեջ գտնվի, ձայնավորը պահում է. այսպես՝

հնիս. penk^we > հինգ, բայց հնգեաւսան.

հնիս. podn > ոտն, բայց ուսանաւոր:

Այս ձայնարանական երևույթից հետևում է, որ Ե գարից բավական առաջ հնդեվրոպական շեշտը հաստատվել էր հայերեն բառի վերջընթեր վանկի վրա: Այդ շեշտը չէր կարող լինել երաժշտական, այլ միայն ուժեղութւյն շեշտ էր և բավական ուժեղ, որպեսզի կարողանար վերջնավանկը կրճատել: Շեշտի այս ուժեղութւյն արդյունքն է նաև հայերենի նույն ընդհանուր ձայնարանական երևույթը, որով որոշ ձայնավորներ և երկարբառներ ընկնում կամ փոփոխվում են, եթե շեշտից առաջ գտնվին (երաժշտական շեշտը նման փոփոխություններ չի առաջացնում). այսպես՝

ի ընկնում է. օրինակ՝ սիրա, մարմին, քիրտն. սեռականում լինում են *սիրաի, *մարմինոյ, *քիրտան, և հետո անկմամբ՝ սրաի, մարմնոյ, քրտան, բարդութւյամբ և ածանցմամբ՝ սրամաիլ, մարմնաւոր, քրտնաթոր:—Հին բառից բաղադրյալ *հինագոյն > *հնագոյն:

ու ընկնում է. օրինակ՝ ցուլ, անձուկ, սուլք. սեռականում լինում են նախ *ցուլու, *անձուկոյ, *սուլքոյ, հետո անկմամբ ցլու, անձկոյ, սրքոյ:—սուրբ բառը ածանցմամբ ապլիս է նախ *սուլքիլ, *սուլքուլթուց, որից հետո անկմամբ՝ սրիլ, սրքուլթուց:—մուտ արմատից եմուտ, բայց մաի, մաանեմ.— տրկ. որում, մերում, բցս. յորմե, ի մերմե, որ է հնապես *յորումե, *ի մերումե.

ոյ գտնում է ու. օրինակ՝ յոյս, սեռական *յոյսոյ, բայլը *յոյսալ, հետո յուսոյ, յուսալ: Իջոյց—իջուցի, իջուցանեմ, այն է հնաձև *իջոյցի, *իջոյցանեմ:

ևս դառնում է և. օրինակ՝ առաքել, սեռական *առաքելայոյ ածանցը առաքելական, հետո առաքելոյ, առաքելական.—կատարյալի մեջ ունենք եզակի Գ դեմք գործեաց, բայց Ա և Բ դեմքերը՝ գործեցի, գործեցեր, որոնք առաջանում են *գործեացի, *գործեացեր ձևերից: Թագաւորութիւն, ի թագաւորութեանէ (<*ի թագաւորութեանէ):

Եւս դառնում է և. օրինակ՝ կեամ բայից ստորագասական *կեայցեմ > կեցեմ.—հրեայ, սեռական *հրեայի, հետո հրեի որ հիմա գրվում է հրեի): Քրիստոնեայ—քրիստոնեի. իայ > ե.—միայն, մեկանոց, որ է *միայնանոց:

Է (որ ներկայացնում է հին ey երկրորդադր) դառնում է ի. օրինակ սեր, սեռական *սերոյ, բայը *սերել, դառնում են սիրոյ, սիրել.—եշ, իշի, իշանեմ <*եշի, *եշանեմ: Միայն ղև, ղիւի, ղիւահար:

Իւ դառնում է ու. օրինակ՝ պատիւ, սեռական *պատիւոյ, բայը *պատիւել, ածանցը *պատիւական, դառնում են պատուոյ, պատուել, պատուական.—վաղիւ, որից վաղուեան:

Կա նաև եւ > իւ ձայնափոխութիւնը, որ նկատվում է հին ձեռագրերի մեջ. այսպես եւղ, սեռական իւղոյ, թևր, բայը թիւրել. այսպես նաև բևր, աղրևր, հարևր: Բայց եւթն մնում է եւթներորդ, եւթանասուն:

Մեր քննիչները սակայն այս ձայնափոխութիւնը հաշվի չեն առնում, ըստ որում նույն բառերի արմատական ձևն էլ հետո վերածված է իւ. բիւր, թիւր, իւղ, աղբիւր և այլն (Meillet, Altarm... 18):

Այս ձայնական օրենքները գործում են ոչ միայն հայերեն բառերի ածանցման ժամանակ, այլև հնդեվրոպականից հայերենի անցման միջոցին. այսպես՝ հնիւ. wik'rti > զենդ. vīsaiti, լատ. vīginti սալիս է հայերեն զիսան, որից գսան և հետո քսան:—հնիւ. rug'—> հուն. ρυγή = լատ. ērūgō = լիթ. rūgiu սալիս է հայերեն *որուծալ, հետո ու-ի անկմամբ ործալ:—Հնիւ. voinio > հուն. ψῆνος = լատ. vinum սալիս է նախ հայերեն *գեցի, հետո Է ձայնի փոփոխմամբ գիցի:—հնիւ. louk'eno ձևից նախ *լոյսին, հետո ոյ-ի փոփոխմամբ լուսին:

Կարելի է որոշել, թե հայերենի մեջ երբ տեղի ունեցավ հիշյալ ձայնաբանական երևույթը: Մրա համար իբր կազան են ծառայում փոխառյալ բառերը:

Այն բառերի մեջ, որ հայերենը զանազան ժամանակ փոխ է առել պահլավերենից, ասորերենից, հունարենից և արարերենից, օրենքը երկու գործադրություն ունի.—պահլավերենից փոխառյալ բառերի, ինչպես և հին ասորական փոխառությունց մեջ օրենքը գործադրվում է, իսկ հունարենից և արարերենից, ինչպես և ավելի ուշ եղած փոխառությունց մեջ չի գործադրվում: Օրինակ՝

պհլ. nišān > նշան, dusrav > դսրավ, spētak > սպիտակ, pat-mōčan > *պատմոջան > պատմուճան:

ասոր. Nsiwin > Մծրին, ihūdaya > հրեայ.

ասոր. kunukku > կնիք.

հուն. χριστός > Քրիստոս, ἐπισκοπος > եպիսկոպոս, καρπολαριος > քարասղար.

արար. abūzinnata > ապուզնալ, zurāfa > գորավէ, xumār > խումար, surinjān > սարինջան և այլն:

Որովհետև հունարեն բառերը քրիստոնեությունից միջոցով մտած են Հայաստան, իսկ քրիստոնեությունից մտաքը Հայաստան Գ դարի վերջում կամ ամենաշուար 250-ական թվականներին է, սրանով էլ որոշվում է հիշյալ ձայնական օրենքի ժամանակը: Այդ է Արշակունիների զահակալությունից հետո և սասանյանների տիրապետությունից առաջ: Հայերենի պահլավական փոխառությունները հին արշակունյան ժամանակի լեզվից են: Ամեն մի օրենք բնականաբար ներգործում է միայն այն բառերի վրա, որոնք այդ օրենքի ժագման ժամանակ գոյություն ունեն, իսկ իրանից հետո գալիք բառերի վրա չի կարող ազդել: Հայերենի պահլավական փոխառությունները, ինչպես և հին ասորական փոխառությունները վերոհիշյալ շրջանից առաջ կատարված լինելով՝ հպատակվում են օրենքին, իսկ ասորական նոր փոխառությունները և հունական բոլոր փոխառությունները նույն շրջանից հետո լինելով, չեն հպատակվում: Կարևոր է դիտել նաև այն հանգամանքը, որ իրանյան հին փոխառությունները հայերենի մեջ իրենց բունը պահում են. այսպես՝ հայերեն ախտ, ղև, խրատ բառերը, որոնք փոխառյալ են պահլավերեն axi, dev, xrat ձևերից, հոգնակի սեռականի մեջ լինում են ախտից, ղիւաց, խրատուց, որոնք համապատասխանում են հին իրանական axti, daēvo, xratu ձևերին: Մրանից հետևում է, որ այն ժամանակ, երբ հայերը այս բառերը փոխ առան պահլավերենից, նրանք ղևո պահլավերենի մեջ իրենց վերջնաձայնը կորցրած չէին, ուստի և հիշյալ բառերը հայերենի մեջ էլ ունեին ուղ. *ախտի, *ղևա, *խրատու ձևերը, որոնք հետո շեշտի ազդեցությամբ

վերջնաձայնը կորցնելով դարձան ախա, դե, խրաա: Թե հայերենի և թե պահլավերենի մեջ վերջնաձայների կորուստը գրեթե միևնույն ժամանակ է տեղի ունեցել, բայց երկուսն իրարից անկախ և միայն դուրսհեռ (Meillet, Esquisse 5, Esq. 1, էջ 23):

Բառավերջի անշեշտ ձայնավորի կորուստով հայերեն բառերը դարձան վերջնաշեշտ, ինչպես գտնում ենք արդեն և դարում և նրանից էլ առաջ: Սա մի տիեզերական երևույթ է, որ նկատելի է շատ ուրիշ լեզուների կյանքում էլ: Այսպես է եղել նաև եբրայերեն և արամեերեն լեզուների մեջ, ուր շեշտի ազդեցությամբ վերջին ձայնավորը ընկնելով բառերը դարձան վերջնաշեշտ. ինչպես՝ *qatála > qatál, dahái, > daháb «ոսկի» և այլն (Brockelm, Précis, 67): Այս օրենքի վրա է հիմնված նաև լատիներենից ֆրանսերենի անցումը և այլն:

Առնենք հին ֆրանսերենը:

Այս լեզվի մեջ այն բոլոր զեպքերում, ուր շեշտը գտնվում էր վերջընթեր վանկի վրա, հաջորդ (այսինքն՝ վերջին) վանկի ձայնավորը ընկավ (բացի a ձայնավորից), նմանապես շեշտի նախորդ վանկի ամեն ձայնավոր (բացի a-ից), եթե այդ վանկը բառի առաջին վանկը չէր կազմում:

Ի՞նչ է այս երևույթի պատճառը և հատկապես ինչու՞ համար ի, ու ձայնավորները ընկնում են, իսկ մյուսները մնում են:

Պատճառ ուժի շեշտն է, վերջընթեր վանկում ուժը սպառելով հաջորդ վանկի մեջ, ձայնավորը թուլանում է, ուստի և ընկնում է: Իսկ նախորդ վանկերում, թեև հարվածը հասնում է բոլոր ձայնավորներին, բայց ի, ու լինելով ամենափակ, հեռեւորար և ամենաթույլ ձայնավորները, ընկնում են, իսկ մյուսները դեռ կարողանում են դիմանալ (M. Grammont, MSL, 20, էջ 220):

Թե շեշտը հայերենի այս շրջանում արդեն վերջնավանկի վրա էր, դրա մասին ոչ մի կասկած չկա: Նրանք, որ կասկածում են այս մասին, կարող են աչքի առաջ բերել, օրինակ, իջեմբ բալի կատարելի խոնարհումը՝ իջի, իջեք, եջ. վերջին ձևը լինելով միավանկ, շեշտի տեղի մասին կասկածից դուրս է. մյուս երկուսը, լինելով երկավանկ, շեշտ պիտի ունենային կամ առաջին և կամ վերջին վանկի վրա: Առաջինի վրա չէր կարող լինել շեշտը, որովհետև այս պարագային պիտի ունենային *եջի, *եջեք (ինչպես էր նախնական հայերենում), ուստի մնում է ընդունել իջի, իջեք:

Բացի լեզվաբանական ազայությունից, գործնական ապացույց կամ փաստ ծառայում է Ազաթանգեղոսի հունարեն թարգմանու-

թյունը, ուր հայերենից վերցրած հատուկ անունները (տեղական կամ անձնական), ինչպես և հասարակ անունները շեշտված են վերջին վանկի վրա: Այսպես՝ Οὐλαροσαπάτ = Վաղարշապատ, Ἀραράτ = Արարատ, Μασίς = Մասիս, Σαοσί = Սահմի, Ιανί = յԱնի, Ναπάτ = Նրպատ, Ἀτραπαταχάν = Ատրպատական, ἀσπίς = սպիս, Ἀσικίγγη = Աշիկեն, Ἐρασαία = Երասիս, Θορδάν = Թորդան, Βαγαρίτ = Բագարյառիճ, Μαναάρχ = Մանալարք, Θοργώρ = Թորգոմ: Նույն և նաև այն աշխարհագրական անունները, որ հին հույն պատմիչները հայերենից տառադարձելով հասցրել են մեզ. ինչպես՝ Νιφάτης = Նրպատ, Δεσλγγγη = Դեբշան, Τάροριτης = Տմորիք, Καρδοῦχοι = Կորդուք, Οὐίτια = Ուաի և այլն:

Հունարենը, ունենալով մի քանի տեսակ շեշտ, որոնք շարժական էին, այսինքն՝ կարող էին բառի երբեմն այս և երբեմն այն վանկի վրա դրվել, հունարեն Ազաթանգեղոսի այսպիսի շեշտադրությունը հարցի մասին այլևս ոչ մի կասկած չի կարող թողնել¹:

Ի, ու ձայնավորներից և ոյ, իւ, եա, եայ, է (= ey) երկբարբառներից դուրս մյուս ձայնավորներն ու երկբարբառները շեշտի ազդեցությամբ չեն փոփոխված, օրինակ.

ե—մեծ, մեծի, մեծատուն, մեծանալ.

ո—գործ, գործոյ, գործաւոր, գործել.

այ—երկայն, երկայնել, երկայնամիտ.

աւ—յաւզ, յաւզի, յաւզել:

Երբ ի և ու գտնվում են բառավերջում (ի միավանկ բառերի վերջում, իսկ ու թե միավանկ և թե բազմավանկ բառերի վերջում), հոլովման կամ ածանցման ժամանակ, անշեշտ դիրքում, ձայնավորից առաջ պահվում են. ինչպես՝ միոյ, միում, միարան, ձիոյ, ձիաւոր, լուոյ, մեղուի, զարգուէ, լեզուի, ձուոյ, ձուով: Բազմավանկ բառերի մեջ իա շեշտից առաջ տալիս է *եա > ե. ինչպես՝ *բարիարար > բարերար, *գինիարբու > գինեբրու, *այգիապան > այգեպան, *միակուսի > մեկուսի, *միակից > մեկից, երկի-ամ > երկեամ > երկեմեան, *օթիավան, օթեվան, օթեանի (բայց նաև *միատասան > մետասան). իսկ շեշտի տակ՝ ա-ից առաջ՝ եա (ինչպես տեղի—տեղեաւ, եկեղեցի—եկեղեցեաց), իսկ ո-ից առաջ՝ ւո (անշուշտ անցնելով *իոյ *իւո ձևերից), ինչպես տեղւոյ, բարւոց, բարւոք, հոգւով:

Ու վերջացած բառերը արդի լեզվում ածանցման ժամանակ ու-ն պահում են վ հնչմամբ և կամ ջնչում. ինչպես՝ ազդու, ազ-

¹ Հ. Հ. Տաշեան, Ազաթանգեղոս, էջ 71, ծան.:

գուուրիւն, կծու, կծուութիւն, բքու, բքուութիւն, աղու, աղուար, աղուաշ, աղուամագ. բայց՝ ախրացու, ախրացութիւն, բեկնածու, բեկնածութիւն, նուագածու, նուագածութիւն:

Սակաջն սրանք նոր երևույթներ են. հին հայերենը պահում էր անշուշտ ու վերջնաձայնը, որ հաջորդ ձայնավորի հետ կազմում էր երկբարբառ:

Ըստ այսմ հայերենի մեջ ոչ-վերջնականում չի կարող պատահել է, ոյ, եա.—հակառակից գատեւով, որ որ ունենք ի, ու, Օ, նախածեր պետք է ենթադրենք է, ոյ, ի կամ ու. ինչպես գիւնի, գիշեր ծագում են *գեւնի, *գեշեր ձեւերից. ջութակ ծագում է *ջոյ-բակ ձեւից. բնչել, մնչել ծագում են բինչ, մինչ կամ բունչ, մունչ ձեւերից:

Անշեշտ վանկում կարելի է գտնել է՝ հորանջի ժամանակ ինչպես՝ քրիստոնէի, Հրեաստան, փոխանակ հնագույն քրիստոնէի, Հրեաստան ձեւերի, իսկ ավելի հետո սովորական է դարձել ասելի, բերելի ձեւը, որի դեմ հին ձեռագրերն ունեն ասելի, բերելի:

Անշեշտ վանկում ի, ու գտնում ենք հետևյալ դեպքերում.

1. Բառասկզբում մի հաջորդական բաղաձայնից առաջ. ինչպես՝ իծ, իծի, իծակորիւն. իլ—իլոյ, իմ—իմոյ, ուս—ուսոյ, ի՞մ—իմե՞. որից զմե՞, իմն—յիմեմնե, ինն—ինունք, իր—իրաց—իրաւ:

2. Բառասկզբում կամ բառամիջում ն + կոկորդաձայնից կամ ղ + բաղաձայնից առաջ. ինչպես՝ ունկն—ունկան, ինքն—ինքեան, հինգ—հինգերորդ, ուղա—ուղաու, ուղիք—ուղիսից:

3. Մի խումբ բառերի մեջ, որոնց պատճառը պարզ չէ, հիմն—հիման, նիրհ—նիրհել, հիւսիս—հիւսիսոյ, քուն—քունել (բայց քնոյ, քնով), շուրջ—շուրջանակի (բայց շրջել):

Ծանոթ.—Հիման, հինգերորդ և հման բառերի մեջ ի ձայնավորի չսովորել բացատրվում է ն բաղաձայնի տկար հնչումով:

Մի խումբ միավանկ բառեր, որոնք ուրիշ բառերի իբրև օժանդակ են գործածվում, շեշտ չունեն և մինչև անգամ զարկ են կամ կարող են զրկվել իրենց ձայնավորից. այսպես են՝

ոչ. բայերի հետ ունի ուժեղ շեշտ (ոչ կամիմ), նույնպես և իբրև ժխտական մակերայ (ոչ). բայց ոչինչ, որից կրճատված զինչ, չնչին, չնչիկ, նաև չէ:

մի. իբրև անորոշ անական շեշտ չունի (ա՛յր մի և կի՛ն մի), որից էլ կրճատվելով մ (մարդ մը, մէյ մ՛ալ):

իմն, ոմն, իբրև անորոշ անական նույնպես շեշտ չունեն (ա՛յր ոմն, բո՛յս իմն), որոնցից նախաձայնը կրճատվելով հափա-

սարապես աշխարհարար մըն (մարդ մըն է, բար մըն է). նմանապես ինչ (իբր անորոշ), բոյս ինչ:

Էական բայերի միավանկ ձեւերը (եմ, ես, է և այլն) շեշտ չունեն և արտասանվում են նախորդ բառի հետ միացած (ե՛ս եմ, մե՛ծ եմ, հայ է): Մրա համեմատ նաև արեւելյան գրականում ասու՛մ եմ, ասու՛մ ես, ասու՛մ է, նստել էր և այլն:

Ընդ նախդիր, առաջանում է հնդեվրոպական նախադիպի anti ձեւից, որ ավել է հայերեն *անդ, որից սղված ընդ:

Ըստ նախդիր, առաջանում է հնդեվրոպական նախադիպի posti ձեւից, որ ավել է նախ հայերեն *ոսա, կրճատմամբ դարձել է քսա:

Այսպես նաև առ, ի, ց, գ. վերջին երկուսը նույնիսկ ձայնավորից զրկված, իսկ ի վերածված բաղաձայնի, յանուն, յամէ:

Երբ բառը բարդ է և նրա առաջին մասը մի ցուցական է կամ հարցական (որ, ինչ) և կամ սոյն, դոյն, նոյն, ո՛չ, անա մակերայը, շեշտը անցնում է առաջին մասի վրա. ինչպես՝ ո՛րպես ի՛նչպես, յա՛յնժամ, ո՛չինչ, ա՛յսպես, ա՛յդպես, այնպես, որպիսի, ի՛նչպիսի, անա՛ւասիկ, անա՛ւաղիկ, անա՛ւանիկ, նո՛յնպես, սո՛յնպես, նո՛յնպիսի, այսպես նաև այս, այդ, այն բառերի հոլովման մեջ. ա՛յնորիկ, ա՛յնմիկ, ա՛յսորիկ, յա՛յսմանէ (բայց գործիական ասվում է այնու՛, այնու՛իկ, ինչպես ցույց են տալիս նաև այնու՛ ամենայնիւ, այսու՛ ամենայնիւ):

Սղման հակառակ դեպքեր են.

աէր, բացառական ի տեանէ. նախապես՝ ի տեանէ.

վրէժխնդիր.

Նախդիրները բարդութեան մեջ չեն սղվում. ինչպես՝ արիտուր, յափսիքերս, խառնիխուռն:

Բարդութեան մեջ մտած ու շարկապը չի սղվում. այրուձի, ուրուտան, պարտուպատշան, անցուղարձ:

Այս վիճակը արդի հայերենի ընդունված ձեւն է, բայց պետք է կարծել, որ այդպես էր նաև հին հայերենում, որի ապացույցն է այժմ բառը, համառոտված ա՛յսժամ ձեւից: Եթե շեշտը առաջի վանկի վրա չլիներ, վերջին ձայնավորը չպիտի ընկներ:

Ինչպես էլ լինի, շեշտադրութեան այս ձեւը ոչ թե դուռ լեզվական է, այլ տրամաբանական, այնպես որ վերի ձեւերը ըմբռնված են իբրև երկու առանձին բառ. այսպես՝ յայն ժամ, ո՞ր պես, նոյն պես.— (անաւասիկ, անաւաղիկ, անաւանիկ ձեւերի հնագույնն է անա՛ւասիկ, անա՛ւաղիկ, անա՛ւանիկ, որոնք նույնպես ս

գործածական էին հին հայերենում): Մրա պարզ ապացույցն այն է, որ միևնույն բառերը կարելի է շեշտել նաև ըստ սովորականին՝ վերջնականում, ինչպես՝ ալսպե՛ս, ալսպիսի՛, որպիսի՛, յայնժա՛մ, անաւասի՛կ և այլն:—Այսօր բառը հնչւում է ա՛յսօր կամ ալսօ՛ր:—

Ոչինչ բառը արևելահայոց մեջ հնչւում է ո՛չինչ, արևմտահայոց մեջ ոչի՛նչ:

Մեր աշակերտական շրջանից ավանդաբար հասել է մեզ այն օրենքը, թե այս, այդ, այն բառերի հոլովման ժամանակ պետք է շեշտենք նշ միայն ա՛յսը, ա՛յդը, ա՛յնը և ա՛յսմ, ա՛յդմ, ա՛յնմ, այլև ա՛յսորիկ, ա՛յդորիկ, ա՛յնորիկ, ա՛յսմիկ, ա՛յդմիկ, ա՛յնմիկ և այլն: Սակայն Մելին, քննելով շեշտադրյալ Ավետարանի մի քանի հին ձեռագրեր, գտնում է, որ նրանց մեջ էլ այս բառերը շեշտադրված են առաջին վանկի վրա:

Տրամարանական երևույթը հաստատվում է նաև նրանով, որ երբ բառերի շեշտը փոխվում է, շեշտն էլ անդափոխվում է. օրինակ՝ Ա՛յդ եմ ուզում, Այդ չե՛մ ուզում, Ձե՛մ ուզում այդ, Ա՛յդ գիրքը ուզում եմ ես, Ուզու՛մ եմ ես այդ գիրքը:

Արդի գրական հայերենում առաջին վանկի վրա շեշտված բառեր են նաև՝ ա՛րդեն, գու՛ցե, բե՛ն, բե՛պետ, բե՛պեակ, սա՛կայն, գո՛նե, գրե՛թե, հի՛մա, ա՛րդյոք, դա՛րձյալ, նա՛ն, մա՛նավանդ, նա՛մանավանդ, նույնպես դասական թվականների մեջ՝ ե՛րկրորդ ե՛րրորդ, չո՛րրորդ... և այլն:

Կոչականների մեջ, օրինակ, շեշտվում են՝ ո՛րդեակ, հա՛յրիկ, մա՛յրիկ, բո՛յրիկ, գրաբար՝ Պե՛տրե, Ղա՛զարե, Պա՛ղոս, աշխարհաբար՝ Պե՛տրոս, Ղա՛զար, Պո՛ղոս, Սե՛րոբ, Գրի՛գոր, Հռի՛փսիկ:

Այժմ պետք է քննել, թե հին հայերենի վերջընթեք շեշտը ի՛նչ եղանակով է առաջացել: Դրա համար կարելի է ենթադրել, թե հնագույն հայերենի վերջընթեք վանկի շեշտը առաջացել է Հայաստանի նախաքնիկների (խալդյանների) և կամ կովկասյան ժողովուրդների լեզվի ազդեցությամբ, ենթադրելով, թե այդ ժողովուրդները շեշտում էին վերջընթեք վանկի վրա և հայերի հետ ձուլվելիս իրենց հետ բերին նաև իրենց հին լեզվի այդ հատկությունը:

Ենթադրվում է, թե միջին հայերենում, բացի վերջնավանկի շեշտից, ձևացել էր նաև մի երկրորդական շեշտ բառի առաջին վանկի վրա (Meillet, Esq. 2^{iem}éd., 20), որի ապացույցը և արդյունքն այն է, որ մինչդեռ բառամիջի ա ձայնը շնչվում է, ընդհակառակը, նախավանկի մեջ պահվում է: Օրինակ՝ հաւատամ>մի-

ջին հայերեն աւամ (իրբ հàv atàm ձևից). *վաճառականար > միջին հայերեն վա՛նակնե՛ր¹:

Բայց այս ենթադրությունը թվում է, թե հաստատ չէ. հընդ-կարողական տոնը, ինչպես ուրիշ լեզուների, նույնպես նաև հայերենի մեջ կարող էր անկախորեն վերածվել ուժի շեշտի, հաստատվեր վերջընթեք վանկի վրա, հետո էլ վերջնավանկի անկումով ստանար հանգաշեշտ, ինչպես և այսօր ֆրանսերենը, պարսկերենը, քրդերենը և այլն:

Արդի հայերեն բարբառներում շեշտը մի քանի տեսակ է.

1. կը ճլուղի բարբառների մեծ մասը շեշտում է վերջնավանկի վրա, ինչպես և դարի հայերենումն էր, որից անցել է նաև արդի գրական հայերենին: Հաճախ նկատված երևույթ է, որ երբ շեշտը ընկնում է վերջնավանկի վրա, հետզհետե թուլանում է. հմտ. ֆրանսերենի վերջնավանկի թուլ շեշտը և գերմաներենի ու անգլերենի նախավանկային ուժեղ շեշտը: Այսպես և հայերենի մեջ, ուր վերջընթեք վանկի հնագույն ուժեղ շեշտի փոխարեն այժմ տնկնք թուլ շեշտ:

2. ում ճլուղի բարբառների մեծ մասը շեշտում է վերջընթեք վանկի վրա. ե՛րազ, ա՛շխարհ և այլն. իսկ երբ վերջընթեք վանկն տնի ը ձայնավորը, շեշտը անցնում է վերջին վանկին. ինչպես՝ կոաղբան՛լ, երկն քի՛ց, գեու՛մ եմ: Այս դեպքում հոգը հաշվի չի առնվում. ինչպես՝ հարաւ՛նիքը, ե՛րկիցքը, ինչպես նաև էական բայը. ասում ես, ասում է և այլն (Արեղյան, Տաղաչափություն, էջ 21—22): Սակայն գրական լեզուն չի ընդունած այս շեշտը և արևմտյան հայերենի նման նա էլ շեշտում է վերջնավանկում:

Այս ընդհանուր կանոնից բացառություն են կազմում և տարբեր վանկի վրա շեշտ ունեն՝

1. դ, ն, ր վերջացող բառեր, որոնց նախորդում է մի ուրիշ բաղաձայն. ինչպես՝ ասող, ոսող, արկղ, տարր, մեղր, կարծր, մանր, փոքր, քանձր, ծանր, ոսկր, գառն, խառն, բուռն, վեհանձրն, մեծանձն, լիանձն, ուրեմն և այլն: (Այս բոլորը հնչվում են ա՛սարղ, ո՛սարղ, ա՛րկրղ և այլն):

2. Որոշյալ և ստացական հոգերը. հացս, հացդ, հացը:

3. Մի քանի անկախ բառեր, ինչպես գրե՛թե, մի՛թե, գու՛ցե, բա՛ցի, դե՛պի, նա՛ն, մա՛նաւանդ, նո՛մանավանդ, ե՛րրոր, դա՛րձեալ,

¹ Նույն շեշտը արդի աշխարհաբարում գրում է նաև Արեղյանը, Տաղաչափություն, 21, ինչպես հարսանիք, դադարել, պատրասել, կտորրուել և այլն:

յա՛նկարծ, յա՛նկարծակի, ա՛նմիջապես, իս՛կոյն, որոնք շեշտվում են առաջին վանկի վրա:

4. Դասական թվականները շեշտվում են առաջին վանկի վրա, ե՛րկրորդ, ե՛րրորդ, չո՛րրորդ, աա՛սնեքորդ և այլն:

5. Հարցական և ցուցական սծականներով կազմված բառերը, օրինակ, ա՛յսպէս, ա՛յդպէս, ա՛յնպէս, ա՛յսպիսի, ա՛յդպիսի, ա՛յնպիսի, սա՛պէս, դա՛պէս, նա՛պէս, սո՛յնպէս, դո՛յնպէս, նո՛յնպէս, սո՛յնպիսի, դո՛յնպիսի, նո՛յնպիսի, ի՛նչպէս, ի՛նչպիսի, ո՛րպէս, ո՛րպիսի, ա՛յսքան, ա՛յդքան, ա՛յնքան, ո՛րքան, ի՛նչքան, ա՛յսչափ, ա՛յդչափ, ա՛յնչափ, ա՛յսօր, ո՛րչափ, ի՛նչչափ, ո՛րաեղ, ի՛նչաեղ և այլն:

6. Կոչականները շեշտվում են առաջին կամ երկրորդ վանկի վրա. Կա՛րապետ, Կա՛րապետ, բայց նաև պարզապես Կա՛րապետ (հմմտ. հունարեն $\Sigma\omega\chi\rho\acute{\alpha}\tau\eta\rho\varsigma$, որ կոչականում դառնում է $\Sigma\omega\chi\rho\alpha\tau\epsilon\varsigma$):

7. Աշխարհագրական հատուկ անունները շեշտվում են վերջընթեր կամ նախավերջընթեր վանկի վրա. օրինակ՝ Կա՛րին, Բա՛րբրդ կամ Բա՛յրուրդ, Ալա՛շխերա, Ենի՛շենիք, Գիա՛րբեքի կամ Տիգրա՛նա՛կերա, Է՛րզրում, Էրզի՛նկեան (մինչև իսկ Երզը՛նկա), ինչպես նաև Փա՛րիզ, Լո՛նդոն, Բե՛ռլին, հոլովման ժամանակ էլ Ենի՛շենիքի, Բե՛ռլինի և այլն:

8. -արար, -ապէս (-ապես), -օրէն (-օրեն) վերջավորութեամբ մակբայները շեշտվում են նախավերջընթեր վանկի վրա. օրինակ մեծապէս, անմիջապէս, խրոխտաբար, հսկայաբար, հաշկաբար, համարձակաբար, մեղմօրէն և այլն: Երբ բառը այնպես է, որ մակբայ լինելը չի իմացվում, բառը շեշտվում է վերջնավանկի վրա. ինչպես՝ գրաբար, աշխարհաբար, ռամկօրէն:— Այս շեշտն էլ հատուկ է արեւմտահայերէն և չկա արեւելյան գրականում: Արեւմտահայերը այսպես են շեշտում նաև ֆրանսերեն gravement, fortement և այլն մակբայները: Այսպիսի շեշտ ունի նաև տաճկերենը. եվկեյնէ, կիւզեյնէ (եվկեյնջե, գյուզեյնջե) և այլն:

9. Արգելականը, ինչպես նաև չ բացասականով կազմված ձևերը շեշտը ստանում են նախավանկի վրա. ինչպես՝ մի՛ գնա(ր), մի՛ գա, մի՛ տա, չե՛մ ուզում = չե՛մ ուզեք, չե՛մ ուզեք կոք, չպի՛տի երթամ, չե՛մ երգեք, չե՛ս երգեք և սրա համեմատ չե՛րգեք, որ է չի՛ երգեք, ինչպես է արեւելյան բարբառում (չեմ երգի, չես երգի, չի երգի): Մրանց մեջ շեշտը կրողը էական բա՛ն է, այնպես որ էականը պակասում է, շեշտը մնում է վերջնավանկում. ինչպես՝ չսիրեցի՛, չտաի՛, չխօսի՛ս և այլն: Նույնպես ապառնիլի մեջ չպիտի՛

երթամ և այլն: Երկուսի տարբերութունը զգալու համար հմմտ. չե՛րթար «նա չի գնում», չերթա՛ր «երանի թե նա չգնար», կամ չերթա՛ր, «աղիկ էր, ավելի լավ է որ նա չերթար»:

Հայերենի մեջ բոլոր ձայնավորները կարող են ստանալ շեշտ, բացի ը ձայնավորից, որ միշտ գորկ է շեշտից: Այսպես է նաև ճավաղերենը, ուր ը ը (ə) միշտ անշեշտ է, բացի, իհարկե, այն բառերից, ուր բոլոր ձայնավորներն էլ ը են. ինչպես՝ tótəp, pət-pət և այլն (Bohatta, Prak. Gramm. de jav. spr., 20): Հայերենի մեջ էլ, եթե բառը բաղկացած է միայն ը ձայնավորներից, բնականաբար շեշտը գտնվում է վերջին ը վանկի վրա. այսպես՝ Ծամախա բարբառով ծըւըկըք շըռըւ-թըռթըւ «անձրևի կաթիլք»: Ուրիշ պարագաներում, եթե ը պահանջում է ստոգանութեան ուժեղ շեշտ, կարող է ազատորեն ստանալ. ինչպես՝ Պոլսի բարբառով չը՛պիտի երթամ, չը՛սեր «չի ասում», մը՛սեր, մի՛ ասեր, Երզը՛նկա և այլն:

ԶԱՅՆԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ամեն մի ձայնի արտաբերությունը համար գործարանները կատարում են որոշ շարժումներ, որոնց համար պահանջվում է ժամանակի միջնորդում, որ կախված է անշուշտ նույն ձայնի բնույթից: Սովորաբար այդ միջնորդումը չենք պահում: Երբ մեկը իր խոսակցությունը միջոցին գործ է դնում այնքան ժամանակ, որ մոտենում է միջնորդումին, ասում ենք, թե նա արագ է խոսում, իսկ երբ անցնում է միջնորդումից՝ դանդաղ է խոսում: Խոսակցության այս թափը նման է երաժշտական տեմպին (tempo), ուր ունենք andante, allegro, allegretto և այլ աստիճաններ: Այս աստիճանները ավելի լավ է որոշում միտրոնում (mitronome) կոչված գործիքը, որ մի բուպեում ապրիս է այսքան հարված:

Խոսքի արագությունը կախված է զանազան պայմաններից:

1. Խոսողի բնախոսական վիճակից. երիտասարդը ավելի արագ է խոսում, քան ծերունին. աշխույժ նկարագրով անձինք ավելի արագ են խոսում, քան ծանրաշարժները և այլն:

2. Ցնդական հատկություններից. ազգեր կան, որ արագախոս են, ազգեր էլ կան, որ ընդհանրապես դանդաղ են խոսում. Եվրոպայում անգլիացիք ամենադանդաղախոս ժողովուրդն են (այդ է երևի հյուսիսային ժողովուրդների տեմպը). քանի իջնում ենք հարավ, տեմպը արագանում է. ֆրանսիացիք ավելի արագախոս են, քան անգլիացիք. իտալացիք ավելի արագախոս են, քան ֆրանսիացիք. հույները ավելի արագախոս են, քան իտալացիք: Տաճկաստանում նշանավոր են լազերը իբրև արագախոս:

Բայց միևնույն ժողովրդի մեջ էլ կա անձից անձ տարբերություն խոսելու տեմպի մեջ: Գիտենք, որ հայոց մեջ շամախեցիք և ախալցխացիք ընդհանրապես ծանրախոս են, պոլսեցիք և նորնախիջևանցիք արագախոս:

Անձից անձ տեմպի տարբերությունը ամենքս գիտենք փորձառություններ. արագախոսները երբեմն բառի միջին վանկը ուտում են. այժմ երևանում որոշ մարդիկ արտասանում են աշտանք, փոխանակ ասելու աշխատանք, բայց իհարկե առանց գիտակցելու մտքում ունեն աշխատանք և եթե վանկերով ասել տանք, կասեն աշխատանք, բայց սովորական խոսակցություն մեջ կասեն աշտանք:

Ավելի սովորական է որակ, փոխանակ ասելու որովհետև. 6 տարեկան մի ազգիկ, բարեկիրթ ընտանիքի զավակ, որ դրական լեզվով էր խոսում, արտասանում էր որակ, և երբ վանկերով հեգել տվի, էլի ասաց որ-ակ:

Շատերի մեջ երևանում ընդհանուր է դարձել որպիսի, փոխանակ ասելու որպեսզի. բայց դա նչ թե իբրև շփոթության արդյունք, այլ արագախոսության:

3. Հուզմունքներից. որոշ հուզմունքներ, ինչպես ուրախությունն ու բարկությունը, արագացնում են խոսքի թափը, ուրիշներ, ինչպես տխրությունը, դանդաղեցնում:

4. Սովորությունից և կամեցողությունից. մարդ մայրենի լեզուն ավելի արագ է խոսում, քան մի օտար լեզու. ընտանեկան ու մտերմական խոսակցությունը ավելի արագ է, քան հասարակական, բեմական և այլն խոսակցությունը. մարդ իր խոսքի թափը դանդաղեցնում է, երբ ուզում է ավելի լավ հասկացնել իրան և այլն:

Այս պատճառներով ահա խոսակցության արագությունը կարող է լինել շատ ու շատ տարբեր. ֆրանսիական պառլամենտի սղագիրները հաշվել են, որ ատենաբաններից ոմանք մի բուպեում գործ են ածում 155 վանկ, ուրիշներ դնում են մինչև 300: Ընտանեկան խոսակցության, մի որևէ զրվածքի արագ ընթերցանության կամ անգիր մի հատվածի արտասանության ժամանակ, այս թիվը ավելի է բարձրանում: Նման մի փորձ կատարելով ինձ վրա, դաս, որ շատ արագ ընթերցանության ժամանակ, մի բուպեում արտասանում եմ 570 վանկ (մի ամբողջ էջ), մինչպես աչքով կարգալու ժամանակ նույնքան վանկի համար ապրիս եմ 40 վալրկյան:

Վանկերի և ձաշների այս արագութիւնը, որ խոսակցութեան արագութիւնից է կախված, կոչվում է բացարձակ ակնողութիւն, որ ձաշնախոսութեան համար երկրորդական արժեք ունի: Ինչ որ կարևոր է ձաշնախոսութեան համար, դա ձաշների հարաբերական ակնողութիւնն է, այսինքն՝ յորաքանչյուր ձաշի ակնողութիւնը համեմատած մշուս ձաշների հետ: Այսպես է նաև երաժշտութեան մեջ, ուր նոտաների հարաբերական ակնողութիւնը (սպիտակ նոտաներ, սև նոտաներ, croche-ներ և այլն) շատ ավելի կարևոր է, քան նրանց բացարձակ ակնողութիւնը. առաջինը կազմում է բան իսկ եղանակը, երկրորդը եղանակի միայն տեմպն է փոխում: Թե երաժշտութեան և թե խոսակցութեան մեջ ձաշների բացարձակ ակնողութիւնը կարող է փոփոխվել և փոփոխվում է, բայց նրանց հարաբերական ակնողութիւնը գրեթե անփոփոխ է մնում: Օրինակի համար, Ֆրանսերեն morose բառի առաջին և երկրորդ օ-երի միջև կա գրեթե 1:2 հարաբերութիւնը, և այս հարաբերութիւնը կմնա անփոփոխ, նույն բառի ինչպես արագ, նույնպես և դանդաղ արտասանութեան ժամանակ:

Ահա ձաշների այս հարաբերական ակնողութիւնն է, որ քերականութեան մեջ կոչվում է քանակութիւն (quantité) (մենք ավելի հարմար ենք համարում ակնողութիւն բառը) և բառի կարևոր պայմաններից մեկն է, ճիշտ ինչպես երանդը, բարձրութիւնը և ուժգնութիւնը: Փոխել բառի ակնողութիւնը, նշանակում է փոխել բառը և կամ գնել մի բառ, որ չկա լեզվի մեջ: Օրինակ, լատիններեն rosa (երկար ā-ով) նշանակում է «վարդից», rosa (կարճ ä) նշանակում է «վարդ», իսկ rosa (երկար օ-ով) գոյութիւնն չունի: Մոնղոլական մի բարբառում, որ խոսվում է Միջին Ասիայում, շատ բառեր իրարից ձաշնավորների երկարութեամբ են տարբերվում. ինչպես՝ yara «վերք» — yāra «շտապիր», dara «սեղմիր» — dāra «мерзні!», em «գեղ» — ěm «ուսուկր», t'os «լուդ» — t'ōs «փոշի», uia «կրունկ» — ūia «սար», us «մազ» — ūs «ցարասի կեղև» և այլն (Поппе, Амарский говор, 54):

Կարելի է չափել վանկերի և ձաշների ակնողութիւնը մի շատ հասարակ միջոցով.— Կարգում ենք մի էջ գրութիւն, ժամացույցի վրա որոշում, թե քանի՞ վայրկյան տևեց այդ էջի ընթերցումը, հետո հաշվում ենք վանկերը կամ ձաշները և բաժանելով վայրկյանների թվի վրա, ստանում ենք յորաքանչյուրի ակնողութիւնը (իհարկե հանելով ամբողջից կետերի և վերջակետերի գաղարները):

Բայց այս հաշիվը շատ վերիվերո է և անողոտ՝ ձաշնաբանական քննութիւնների համար:

Փորձառական մեթոդը տալիս է մեզ շատ ավելի ճիշտ արդունքներ: Արձանագրում ենք մեքենայի վրա մեր ցանկացած խոսքերը, և միևնույն ժամանակ մի ձաշնորդի թրթռումները, որ մի վայրկյանում տալիս է 100 թրթիւ: Մի թրթիւը տևում է ուրեմն $\frac{1}{100}$ վայրկյան: Այժմ որոշելով մեր ուղած ձաշի սկիզբն ու վերջը՝ նույն արձանագրութեան մեջ, և չափելով ձաշնորդի թրթիւներով, իմանում ենք յորաքանչյուրի ամենամանր չափը:

Քննութիւնները ցույց են տալիս, որ թե ձաշնավորները և թե բաղաձաշները կարող են ունենալ երկար և կարճ ակնողութիւն: Թե ձաշնավորների և թե բաղաձաշների համար գործնականում բավական է համարվում զանազանել այս երկուսը: Սակայն ձաշնավորների համար երբեմն հարկավոր է լինում զանազանել նաև շատ կարճ (ultra brève), կես երկար (milongue), շատ երկար (ultra-longue) աստիճանները: Կարելի է նաև պետք եղած դեպքում նշանակել երկարութիւնը այսքան հարյուրավոր վայրկյանով:

Լատիններենը ունի գերկարճ ձաշնավորներ, որոնք ընկան սովորական լեզուներում: Մանսկրիտ քերականները գնում են բաղաձաշի ակնողութիւնը կես ձաշնավորի հավասար, երկար ձաշնավորը կարճ ձաշնավորի կրկինն են համարում. բայց պատահում են երբեմն ավելի երկար ձաշնավորներ, որոնք կարճ ձաշնավորների երեք ակնողութիւնն ունեն և կոչվում են pluta, որոնք նշանակում են ձաշնավորի մոտ 3 թվանշանով. օրինակ՝ ā 3 (Whitney, ind. gramm., § 78): Ամերիկյան սլոնոկին լեզվի մեջ բառավերջին ձաշնավորները շատ կարճ լինելով, ուսումնասիրողը գրում է փոքրը աստով, սողավերեւում. օրինակ inⁱ, pyāg^u և այլն (Boas, Handbook, I, 748): Լատներեն լեզուն էլ այսօր գիտե զանազանել երկար, կարճ և շատ կարճ ձաշնավորներ: Օրինակ, ըստ Ռ. Ֆիշի (էջ 3), աֆրիկյան դագոմբու (բանտու) լեզուն ունի a, e, i, o, u ձաշնավորների շատ կարճ աստիճանը, ապա՝ միջակը և երկարը:

Մալայերեն լեզուն ունի կարճ, երկար և կես երկար ձաշնավորներ. փակ վանկում գտնված ձաշնավորները ընդհանրապես կարճ են, բաց վանկում գտնված ձաշնավորները եթե շեշտվալ են, միշտ երկար են, իսկ եթե անշեշտ են՝ կես-երկար են (Seidel, 5):

Բաղաձաշների մեջ սեղմերի խումբը կարելի է արտասանել ըստ կարելիւն երկար. «լուր» իմաստով ասում ենք շատ երկար

ա՛ կամ շ՛: Այս պատճառով էլ այս կարգի բաղաձայնները կոչվում են տեղական (continue): Կարճ սեղմ բաղաձայնի տեղափոխումը սովորական տեղավով խոսակցության մեջ 6-10 հարյուրերորդ վայրկյան է. երկարը նրա կրկինն է: Պայթական բաղաձայնների մեջ պայթուցումը գրեթե միշտ $\frac{3}{100}$ վայրկյան է. բայց խցումը տևում է շատ ավելի երկար. կարճ պայթականի տեղափոխումը միջակ խոսակցության մեջ $8-12\frac{1}{100}$ վայրկյան է, երկրորդը սրա կրկինը:

Բաղաձայնները (սեղմ և պայթական) ընդհանրապես կարճ են լինում. նրանք դառնում են երկար, երբ կրկնվում են (ինչպես՝ ուղղակի, ամմեմ, Աննա և այլն), կամ երբ ուզում ենք բառին սաստկական իմաստ տալ. ինչպես՝ հիմմար, ա՛րիկա, շա՛ն որդի, ի՛նքնք, ի՛ն:

Աֆրիկյան սիրտ կամ գա լեզվում որոշ բաղաձայններ և հատկապես m, n, ñ աղնային երկար են հնչվում երբեմն, որ այդ լեզուն քննող հեղինակը (Zimmermann, 5-6) կարծու է համարել դեռ նրանց վրա երկարության նշան. ինչպես՝ din, han և կոչում է կիսաձայնավոր: Մրանք գտնվում են միայն բառավերջում, այն էլ միշտ ձայնավորից հետո: Նույն երևույթը նկատել է Թրիտաալիերը աֆրիկյան աշանտ լեզվի մեջ m և n բաղաձայնների համար, դարձյալ բառավերջում, ձայնավորից հետո, միայն մի քանի բառի մեջ: Հեղինակը (էջ 4) գրում է կրկնակ բաղաձայնով, որ միևնույն է (demm, kōmm, haññ):

Երկար բաղաձայններ ունի նաև լապպերենը. այսպես են b, d, g, որոնց աակին մի գիծ է քաշում ուսումնասիրողը (Wiklund, էջ 6):

Ձայնավորները բաղաձայններից ավելի ընդունակ են երկարացման. միջին արտադրվածք մի նախադասության մեջ կարճ ձայնավորի տեղափոխումն է $6-12\frac{1}{100}$ վայրկյան, երկար ձայնավորինը՝ $12-30\frac{1}{100}$ վայրկյան: Վազներ գերմանացին իր բարբառի վրա քննություն կատարելով, գտել է, որ երկար ձայնավորի տեղափոխումն է 0,3 վայրկյան, շատ երկարինը 0,6, կարճինը 0,2, շատ կարճինը 0,1 (Schuijnen, Einl., 198): Ըստ այսմ երկար ձայնավորները կարճերի համեմատությամբ 2 կամ 3 անգամ ավելի են տևում:

Ձայնավորների տեղափոխումը միայն իրենց բնույթից չէ: Հաճախ տեղափոխումը սառչանում է ձայնավորի՝ 1. երանգից, 2.

կողքի ձայներից, 3. շեշտից, 4. ձայնախմբի երկարությունից և 5. սիլմից:

1. Երանգը փոխում է հաճախ ձայնավորի տեղափոխումը. ընդհանրապես որքան փակ է ձայնավորը, այնքան էլ կարճ է, և որքան բաց, այնքան էլ երկար. այսպես i և u ամենակարճ են, e և o միջակ, a ամենից երկարն է. ըստ այսմ հին հունարենում կարճ e և o փակ էին, երկար η և ω բաց էին. Ֆրանսերենում միջակ բացությունը ձայնավորները կարճ են, բաց և փակ (sici) ձայնավորները, ինչպես և սնդալիները, երկար են. դերմաներենում փակ ձայնավորները երկար են, միջակներն ու բացերը՝ կարճ. հմմտ. biete (փակ i) և bitte (բաց i), Sohne և sonne և այլն: Անգլերենում որքան ավելի փակ է ձայնավորը, տեղափոխումն էլ այնքան ավելի կարճ է:

Կարող է մի լեզվի մի բարբառը չունենալ ձայնավորների կարճ ու երկար ձևերը, իսկ մի արիշ բարբառը ունենալ. օրինակ, տաճկերենը և արևելյան թուրքերենը չունեն կարճ ու երկար ձայնավորներ, իսկ թուրքմեներենը ունի և նրա միջոցով զանազանում է մի խումբ համանուն բառեր. օրինակ՝ ai «անուն», at «ծի», ot «կրակ», ot «խոտ», iut «թուփ», tut «բանիբ», yāz «դարան», yāz «գորիբ», vār «կա», var «գնա»: Այս կանոնը ազդել է նաև հուլովման վրա և a վերջացող բառերը արականում ձայնավորներն են միայն երկարում. ինչպես՝ čaγa «եղիսա», čaγā «եղիսային» (чайлиев, 5, 18):

2. Ձայնավորի կողքին գտնված բաղաձայնները ազդում են նրա տեղափոխման վրա. հին քերականները ասում էին, որ բնապես կարճ ձայնավորը (voyelle courte par nature) գտնվելով երկար բաղաձայնի մոտ, դառնում է դիրքով երկար (voyelle longue par position). ինչպես՝ լատիներեն cāpio, բայց cāptus, կամ rēgere բայց rēxi. սակայն այստեղ ավելի վանկն էր երկարում, քան թե ձայնավորը: Ֆրանսերենում թրթռուն շփական բաղաձայնները ինչպես են r բաղաձայնը, երկարում են նախորդ ձայնավորի տեղափոխումը. օրինակ՝ rose, gueuse, vive, louve և այլն: Գերմաներենում ձայնավորը կարճ է, եթե նրան հաջորդում է բաղաձայնների մի խումբ. անգլերենում ձայնավորը երկար է թրթռուն բաղաձայնից առաջ, բայց ավելի կարճ է խուլ բաղաձայնից առաջ: Մեծական լեզուների մեջ երբ վանկը փակ է, ձայնավորը չի կարող երկար լինել. այս դեպքում մինչև իսկ երկարբարանները վերածվում են սլարդ ձայնավորի. օրինակ՝ *qayamta > *qamta > կրրայերեն

qamtä «իանդնեցիր»․ արարերեն *baʿiʿiftu > *baʿiʿitu > biʿitu «վախեցա» (Brockelm. Precis. 63): Բաղաձայնների այս ազդեցությունը նախորդ ձայնավորի վրա՝ բացատրվում է սակալն նրանով, որ բաղաձայնը փոխում է նախ ձայնավորի կրանգը, որից էլ առաջանում է ձայնավորի սեռողական մեջ փոփոխություն: Այսպես՝ Փրանսերենում թրթռուն շփականները նախորդ ձայնավորը դարձնում են փակ, և որովհետև Փրանսերենում փակ ձայնավորը երկար է, առաջի սյտեղ էլ երկարում է: Այսպիսով բաղաձայնավորների ազդեցությունը ձայնավորի վրա բացատրվում է երանգով և 1. և 2. պայմանները միանում են:

3. Ձայնավորից հետո երբ հաջորդում է մի արիշ ձայնավոր, ստաջինը կարճանում է, օրինակ՝ լատիներեն docēre «ուսուցանել», docēo «ուսուցանում եմ», իսկ երկար ձայնավորը վերջնաձայն բաղաձայնից առաջ կարճանում է. ինչպես՝ լատիներեն legāre, legāt, միայն s-ից առաջ լինում է երկար. ինչպես՝ legās:

4. Շեշտը կամ տեղանությունը առանձին նշանակություն ունի ձայնավորի սեռողական համար. Փրանսերենում ամեն շեշտյալ վանկ ավելի երկար է. je traite, nous traitons ձևերից առաջինի մեջ je մեկ և կես անգամ ավելի երկար է քան երկրորդի մեջ: Երբ արտասանենք un homme grand, ա երկար է և o կարճ. իսկ երբ արտասանենք un grand homme, ընդհակառակը o երկար է և a կարճ, որովհետև շեշտը տեղափոխված է: Օսերենի մեջ a, o, e շեշտի աակ լինում են երկար ā, ē, ō, իսկ առանց շեշտի կարճ են (Miller, Die Spr. d'Oss., 12):

Շփեղացի Ռոզենդերեն գիտնականը կատարել է հետևյալ փորձը. ֆոնոգրաֆի գլանի վրա արձանագրել է sórragis, áttigas և նման բառեր, որոնց մեջ շեշտը գտնվում է առաջին վանկի վրա և որ ունեն 2-ական բաղաձայն: Այժմ շուտ ապրով գլանը հակառակ ազդություն է լսում է sigárros, sagitta, շեշտը երկրորդ վանկի վրա: Այնուհետև արձանագրել է ó simoló—simuló, որտեղ շեշտյալ ձայնավորը երկար է և իրանից հետո մի բաղաձայն միայն ունի: Այժմ շուտ ապրով գլանը հակառակ ազդություն է լսում է ólumis—ólomis ó, առանց շեշտի տարբերություն: Մրանից հետեցրնում է գիտնականը, որ շեշտ ու սեռողական միևնույն բանն է, և մի ձայնավոր որքան երկար է, այնքան ավելի տեղ է թվում մեր ականջին:

Ուրիշ գիտնականներ էլ կրկնել են նման փորձեր իրենց լեզվի վրա, բայց նույն արդյունքը չեն հաստատում:

5. Ձայնավորի երկարությունը ազդում է նույնպես վանկերի սեռողական վրա, որքան երկար է արտասանելի լսումը, այնքան էլ կարճ է վանկը: Գրեկուարը փորձեր կատարելով արձանագրող մեքենայի վրա, գտել է, որ, օրինակ, pa վանկը փոխում է իր սեռողականը զանազան երկարություն արձանագրելի մեջ, հետևյալ ձևով.

pâte բասի մեջ pa	27/100	վայրկյան.
pâté	20/100	»
pâtisserie	14/100	»
pâtisserie St.—Germain 12/100 վայրկյան:		

6. Ռիթմն էլ է ազդում ձայնավորների երկարության վրա: Փորձը ցույց է տալիս, որ նախադասության մեջ չի կարելի արտասանել միմյանց հակից իրար նման վանկեր՝ բոլորովին նույն սեռողական. սիթմի օրենքը պահանջում է փոփոխակի արտասանել նրանք երկար ու կարճ: Այս օրենքների մասին մենք կըխոսենք հաջորդ գլխում:

Ահա այն պայմանները, որոնք ազդում են ձայնավորների սեռողական վրա: Այդ պայմանները հաճախ խաչաձևում են իրար և լուրաքանչյուր լեզվի մեջ առաջ են բերում զանազան արդյունքներ:

Վանկի սեռողությունը բնականաբար գոմարն է նրա բաղադրիչ բոլոր ձայների սեռողությունների: Ըստ այսմ, օրինակ, բե = p + b, բեր = p + b + r, բերդ = p + b + r + d, բերդք = p + b + r + d + p, յուրաքանչյուրը իր նախորդից մի բան երկար է: Միջակ լուսակցության մեջ վանկի սեռողությունը երկարում է ¹³/₁₀₀ վայրկյանից մինչև ⁵⁰/₁₀₀ վայրկյան, որոշ վանկեր կարող են մինչև 1 վայրկյանի հասնել:

Ինչպես տոնը և շեշտը, նույնպես և սեռողությունը կարող է ենթարկվել փոփոխության, լեզվի ապագա զարգացման ընթացքում: Տեղություն փոփոխությունը բնականաբար մի կողմ միայն կարող է ունենալ, այն է՝ ավելի երկարել կամ ավելի կարճանալ: Այսպիսի օրինակներ շատ կան լեզուների պատմության մեջ: Մրա պատճառներն են շեշտը, երանգը, մոտակա ձայների ազդեցությունը, ինչպես նաև ձայնավորի կամ մոտակա ձայների ազդեցությամ կրամ փոփոխությունները: Օրինակ, երբ մի երկարբառ վերածվում է ձայնավորի, այդ ձայնավորը լինում է երկար. ինչպես՝ ai > é, au > o և այլն: Երբ երկու ձայնավոր միանալով կազմում են մի ձայնավոր, այդ ձայնավորը երկար է, ինչպես լատիներեն audī—

mus > audimus. սանսկրիտ na asti > nāsti «չէ»: նախպես, երբ
ձայնավորին հաջորդող բաղաձայնների խմբից մեկը ընկնում է,
ձայնավորը երկարում է, ինչպես՝ լատիներեն eqvōns > eqvōs,
dominōd > dominō, հնդկվրոպական նախալեզվում՝ nizdos > սանս-
կրիտ niḍās, լատիներեն nidus «բույն»: Հունարեն γίνωμαι >
«ծնվում եմ» γίνωμαι.

Ալյուպիտի երկարումը կոչվում է փոխհատուցական երկարացում
(allongement compensatoire, Ersatsdehnung):

Ճավայերենում կա ձայնավորների տեղաթվան համաչափու-
թյուն. երբ մի բառ պարունակում է միայն մի տեսակի ձայնա-
վորներ, նրանք բոլորը կա՛մ կարճ են լինում և կա՛մ երկար. օրի-
նակ՝ hānā, rōrō, rūngū, kūdū, nīlī, dēnē (բոլորը երկար), բայց
čāčah, sučun, wārūk (բոլորը կարճ) (Bohattia, Prak. grāmm.
Jav. Spr., 20):

Ամփոփելով վերոհիշյալ տեղեկությունները վանկերի տեսողու-
թյան մասին, կոնսոնենք, թե վանկը ունի զլիավորապես երկու
տեսակ՝ կարճ ու երկար:

Կարճ է կոչվում այն վանկը, որի ձայնավորը (կամ իբր այն
ծառայող ձայնորդը) կարճ է, առանց հաջորդական բաղաձայնի և
կամ միայն մի բաղաձայնով. այսպես՝ սանսկրիտ i—mās «գնում
ենք», pr—thūs «լայն» բառերի վանկերը կարճ են (th = p մի բա-
ղաձայն է):

Երկար է կոչվում այն վանկը, որ 1. կազմված է երկար ձայ-
նավորով, երկար ձայնորդով և կամ երկարաբառով, որ միշտ հա-
մարվում է երկար. այսպես սանսկրիտ bhrāta, հունարեն φράτερ,
հին իռլանդերեն brāthir «եղբայր» բառերի առաջին վանկը երկար
է, որովհետև ā ձայնավորը երկար է. նույնպես սանսկրիտ véda,
հունարեն φείδα, լատիներեն vāe, hei, գոթերեն wait «գիտեմ»
բառերի առաջին վանկը երկար է, սրովհետև կազմված է երկարա-
բառով:

Եթե երկարաբառը կազմված է երկար ձայնավորով, բնակա-
նաբար երկարաբառի տեղաթվանը կավելանա. այսպես, եթե ձայ-
նավորի տեղաթվանը գնենք մի չափ, երկար ձայնավորը կամ
կարճ երկարաբառը կլինի երկու չափ, իսկ երկար երկարաբառը
կլինի երեք չափ:

2. Երբ ձայնավորին կամ ձայնորդին հաջորդող բաղաձայն-
ների թիվը մեկից ավելի է, վանկը համարվում է երկար, նույնիսկ
եթե ձայնավորը կարճ լինի. այսպես՝ սանսկրիտ sapṭā = հունարեն

ἑπτὰ = լատիներեն septem «յոթը», սանսկրիտ pitré «հոր» = հու-
նարեն πατρώ «հայրերի» բառերի առաջին վանկը:

Այս բոլոր պարագաների մեջ էլ ձայնավորից առաջ գրված
բաղաձայնը՝ մի հատ լինի թե մեկից ավելի, գոյություն ունենա
կամ ոչ, բնավ նշանակութլան չունի վանկի տեղաթվան տեսակե-
տից: Օրինակ, հունարեն ἕφῃ, νέφος և στέφω բառերի մեջ օ հավա-
սարապես կարճ է, թեև նրանից առաջ գտնված բաղաձայնները
թվով տարբեր են:

Հայերենի մեջ ձայնի տեղաթվան վերաբերմամբ ոչ մի աշ-
խատանք կամ չափում չէ կատարված (հմմտ. Արեղյան, Տաղաչա-
փություն, 37—39): Արդի հայերենում ձայնավորների կամ վան-
կերի տեղաթվան մեջ մենք առանձին գանադանութլուն, ինչպես
գերմաներենի կամ նույնիսկ ֆրանսերենի մեջ, չենք տեսնում:
Համաձայն վերոհիշյալ ձայնաբանական ընդհանուր օրենքների,
կարելի է ընդունել, որ 1. հայերենի մեջ էլ շեշտված վանկը մի
քիչ ավելի երկար է, քան անշեշտը, 2. վանկի ընդհանուր
տեղաթվանը կախված է կազմիչ հնչյունների քանակից, հետևա-
բար և ավելի կարճ է, քան ամ, ամ ավելի կարճ է, քան ամպ և
ամպ ավելի կարճ է, քան ամպը, 3. որքան երկար է բառը,
այսինքն որքան հեռու է ձայնավորը շեշտից, այնքան էլ ավելի
կարճ է. այսպես հայերեն փառք բառից կազմված սեռական
փառքի, և փառաւոր, փառաւորել, փառաւորութիւն բառերի մեջ
վանկերի արագութլունը հեռոհետև փոխված և և ձայնավորը
հեռոհետև ավելի կարճ է (Արեղյան, Տաղաչափութլուն, 110—111):

Մեզ համար ամենից ավելի զգալի է զգալական շեշտը,
որի համար էլ ունենք հատկապես երկար (˘) նշանը: Այս նշանը
գրվում է մի բառի մի վանկի վրա, բայց սովորաբար զգալական
արտասանութլան ժամանակ նախադասութլան կամ սահասարակ
գրվածքի բոլոր վանկերն էլ ստանում են երկար շեշտ: Օրինակ՝
Անցա՛ն գնացի՛ն երկա՛ր երկա՛ր տարիներ՛ր և այլն և այլն, ուր
ոչ միայն շեշտված վանկերը երկար են (շատ երկար), այլև ան-
շեշտ վանկերը:

Ձայնի տեղաթվան մասին այս դիտողութլունները վերա-
բերում են ինարկե արդի հայերենին. բայց հին հայերենն էլ սրա-
նից տարբերութլուն չպետք է ունենար:

ՌԻԹՄ ԵՎ ԴԱԴԱՐ

Նրա տարբեր երևույթներ հաջորդում են իրար կանոնավոր կերպով և նրանցից գոնե մեկը կրկնվում է միշտ որոշ ժամանակից հետո, կոչվում է ռիթմ (եղիշե արքեպիսկոպոս Դուրյանը թարգմանել էր կշռույթ):

Ռիթմը ուրեմն զանազան երևույթների պարբերական հաջորդությունն է:

Ռիթմի օրենքը տիրում է բոլոր կենդանի էակների վրա. կլանքի գործառնությունները, ինչպես սրտի բախյունները, շնչառության շարժումները և այլն ռիթմային են: Նույնիսկ կամավոր շարժումները, որ կատարում է մարդը, եթե կրկնվում են իրար հետևից, վերածվում են ռիթմի: Սրա ամենահասարակ օրինակը մարդու քայլվածքն է և կամ ընդհանրապես բոլոր կենդանիների շարժումները: Նրեխան, որ նոր է ոտք հչնում, գեռ չունի ռիթմ, բայց հետզհետե վարժվելով՝ վերածվում է ռիթմի, այսինքն այդ շարժումները կատարում է մկանային միենուլն ճիգով, միենուլն տեղում թլամբ և միենուլն ժամանակամիջոցներով:

Այսպիսի ռիթմը կոչվում է միօրինակ ռիթմ (rythme uniforme) և բոլոր տեսակի ռիթմերի մեջ ամենապարզն է: Ժամացույցի թիքթաքը կանոնավոր ռիթմ է:

Ռիթմը կոչվում է բարդ (rythme complexe), երբ տարբեր տեսակի շարժումներ վճռվում են նույն պարբերականությամբ: Օրինակ, երբ սալի վրա իջեցնելով իրար հետևից կանոնավոր հարվածներ, բայց այնպես, որ մի ուժեղ հարվածին հաջորդի

միշտ մի տկար հարված, կամ մի տկար հարվածին հաջորդի միշտ մի ուժեղ հարված, ռիթմը կլինի բարդ: Այսպես, ուժեղ հարվածը զանակելով 2, իսկ տկար հարվածը 1 թվանշանով, կունենանք հետևյալ պատկերը.

$$2-1/2-1/2-1/2-1/2-1\dots \text{ կամ}$$
$$1-2/1-2/1-2/1-2/1-2\dots$$

Բայց կարելի է նաև կազմել ուրիշ պարբերականություն ռիթմեր, ինչպես.

$$2-1-1/2-1-1/2-1-1/2-1-1\dots$$
$$1-1-2/1-1-2/1-1-2/1-1-2\dots$$
$$2-1-1-2/2-1-1-2/2-1-1-2/2-1-1-2\dots \text{ և}$$

այլն: Վերի օրինակների մեջ հարվածները հաջորդում են իրար շարունակ, բայց կարելի է նաև տալ տեսակ-տեսակ դադարներ, միենուլն պարբերականությամբ, հետևյալ ձևով.

$$21 \ 21 \ 21 \ 21 \ 21 \dots$$
$$12 \ 12 \ 12 \ 12 \ 12 \dots$$
$$211 \ 211 \ 211 \ 211 \dots$$
$$112 \ 112 \ 112 \ 112 \dots$$

և այսպես բազմապիսի ու բազմատեսակ ձևերով:

Այս բոլորը կոչվում է բարդ ռիթմ:

Վերոհիշյալ օրինակներում կանի հարվածների ռիթմը հարվածող դարբնի համար շարժիչ (moteur) է և զգայական (sensitif), որովհետև իր մկաններն են գործում այդտեղ և իր տկանըն է լսում միանշանակ. իսկ մի մարդու համար, որ լսում է այդ հարվածները, ռիթմը միայն լսողական (auditif) է: Բայց թե դարբնի և թե լսողի համար ռիթմը առարկայական (objectif) է, որովհետև երևույթների իրական տարբերության վրա է հիմնված:

Փորձը ցույց է տալիս, որ եթե մեկը լսի կարճատև միջոցներով միօրինակ մի ռիթմ, շուտով իր երեսակալության մեջ այդ միօրինակ ռիթմը կվերածի բարդ ռիթմի: Այսպես, եթե լսենք մի մետրոնոմի (métronome) հարվածները, որ բախում է մի վայրկյանում 4 հարված, կանոնավոր կերպով և հավասար ուժգնությամբ, շուտով մենք կկարծենք լսել 2 կամ 3 հարվածների լրամբակցություններ, որոնցից մեկը իրբ թե այլիլ ուժեղ է. այսպես՝

$$21 \ 21 \ 21 \dots \text{ կամ}$$
$$12 \ 12 \ 12 \dots \text{ կամ}$$

211 211 211... կամ
112 112 112... և այլն:

Այս պարագային *սիթմը*, որ չի համապատասխանում երևույթ-
ների իրական վիճակին, կոչվում է ենթակայական (subjectif)

Ռիթմը կարող է լինել նաև գիտակից (conscient) կամ ան-
գիտակից (inconscient): Երբ նույն դարբինը իր հարվածներից
մեկը ուժեղ խփի, մյուսը թույլ խփի իր ցանկության համաձայն,
սիթմը կլինի գիտակից. իսկ երբ նա հարվածները խփի միօրինակ
սիթմով, իսկ մեկը շարունակ լսելով այն՝ վերածենք մեր երևա-
կալույթյան մեջ բարդ սիթմի, դա կլինի անգիտակից:

Ռիթմի այս բոլոր տեսակները, որ նկարագրեցինք, դանդում
են նաև մարդկային լեզվի մեջ: Երբ մեր լսողությունը խաբուս է
մեզ ձայների տեղություն և ուժգնություն մեջ, դա ենթակայա-
կան սիթմի արդյունքն է: Բայց ավելի կարևոր է առարկայական
անգիտակից սիթմը, որի արդյունքներն են՝

1. Կրկնական բառեր, հատկապես բնածայն բառեր, մանկա-
կան բառեր, ժողովրդական բառեր. ինչպես՝ Ֆշֆշալ, խշխշալ,
բռբռալ, գլգլալ կամ շրախի-շրուխի, թիթ-թաթ, չաթ-չուր, պան-
պան, չաչայ, տատիս, ախտիկ, պապա, մամա...

Այս բոլորի մեջ, ինչպես տեսնում ենք, միևնույն ձայները
կրկնվում են.—միևնույն բաղաձայնի սիթմային կրկնությունը կոչ-
վում է բաղաձայնով հանգիտություն (allitération). այսպես, օրի-
նակ, հայերեն տուն ու տեղ, ցիրուցան, շենք-շնորհք, ծափ-ծի-
ծաղ, ձյուն-ձմեռ, քն-քիկունք: Միևնույն ձայնավորի սիթմային
կրկնությունը կոչվում է ձայնավորով հանգիտություն (assonan-
ce), ինչպես. բուք ու մուք, լուռ ու մուք, ծեծ
ու փեռ, առ ու փախ. իսկ ձայնավորների ու բաղաձայնների միա-
հաղույն սիթմային կրկնությունը չունի առանձին անուն. ինչպես՝
կոշա ու կոպիտ, կուշա ու կուռ, խաղբ-խայտառակ, բար ու
բացախ և այլն:

2. Շեշտի տեղավորություն, սիթմային համաչափություն:
Այսպիսի սիթմ գործածում ենք մեր խոսակցության մեջ, երբ մեր
խոսակիցը մեր մի քանի անգամ արած հարտարարության ուշա-
դույթունը դարձրած չի լինում, և մենք ստիպված ենք լինում մի
վերջին անգամ նույնը կրկնելու կարական կերպով. օրինակ՝

Ե՛ս / Երա՛ն / ոչ մի / գումա՛ր / պարտք չե՛մ / և՛ / ոչ
մի՛ / գումա՛ր / տալու՛ / չե՛մ:

Այս նախադասությանց մեջ կազմված են երկու վանկից բաղ-

կացած և նման շեշտադրությամբ սիթմեր, իսկ միավանկները եր-
կար են արտասանվում, իբր հասնելու համար միավանկ խմբերին:
Մինչդեռ նույն հասվածը, եթե խոսեինք սովորական ձևով, պիտի
լիներ՝

Ես երան ո՛չ մի գումար պարտք չե՛մ / և ո՛չ մի գումար
տալու չե՛մ.

Գիտակից սիթմը գործածվում է բանաստեղծական գրվածք-
ների, հատկապես տաղաչափության մեջ: Այս դեպքում սիթմը
կոչվում է չափ (mètre), որ սիթմի մասնավոր մի պարագան է
(Meillet): Ձանազան ազգերի բանավոր գրականությունից սկսած
մինչև գրավոր գրականության ամենաբարձր տեսակը, կան բազ-
մաթիվ տաղաչափական սխեմաներ: Հին հույների և վեղալական
հնդիկների տաղաչափությունը հիմնված էր երկար ու կարճ վան-
կերի հաջորդականության վրա, որին հետևեցին հետո նաև լատին-
ները. անգլիական, գերմանական և ռուսական տաղաչափությունը
հիմնված է շեշտայլ և անշեշտ վանկերի հաջորդականության վրա.
Քրանսիական կամ արդի հայկական տաղաչափությունը՝ հիմնված
է վանկերի թվի համաչափության և շեշտի վրա. բացի սրանից
պահանջվում է տաղաչափության մեջ նույն հանգերի կրկնությու-
նը սողից սող կամ այլ ձևով: Կան նաև ուրիշ զանազան տեսակի
չափեր: Բայց այս բոլորի մեջ մի բան կա ընդհանուր, այն է, զի-
տակից սիթմեր (զիտավորյալ և կանոնավոր կրկնությունը այս կամ
այն պայմանի՝ վանկի բարձրության, ուժգնության, տեղության,
կամ ձայների երանգի ու հնչման):

Դադար ասելով հասկանում ենք այն կարճատև ընդհատումը
(կամ հանգիստը), որ դնում է մարդ իր խոսակցության մեջ, ան-
միջապես հետո շարունակելու համար այն:

Դադարը կատարվում է երեք պատճառով.

1. Բնախոսական պատճառ. — Բանի որ խոսակցությունը վա-
րելու համար պետք ունենք ներշնչելու հարկավոր քանակությամբ
օդ, ուստի հաճախ պարտավոր ենք ընդհատել մեր խոսքը, ներ-
շնչմամբ հավաքելու համար օդի պաշարը, որ նորից խոսակցու-
թյան միջոցին կամաց-կամաց դուրս ենք տալիս՝ մինչև սպառու-
մը, և այսպես շարունակաբար: Լուծված միջոցին մարդ մի բու-
պեին կատարում է 16—24 շնչառություն, համաձայն տարիքի և
բնավորության: Չափահաս մարդու շնչառության միջին թիվն է

¹ Տաղաչափության տեսից նոր և մանրամասն աշխատությունն է Մ.
Արեղյան, Տաղաչափություն, Երևան, 1933:

16, որ սակայն խոսակցութեան մեջ մի քիչ ավելի արագանալով՝ դառնում է մի բոպեում 17—19: Ըստ այսմ շնչառական շրջանի տեղութիւնը խոսակցութեան մեջ միջին հաշվով լինում է $3\frac{1}{2}$ վայրկյան. ուստի ամեն մի $3\frac{1}{2}$ վայրկյանին դադարը անհրաժեշտ է: Լուսթեան միջոցին մի շնչառութեան տեւում է $1\frac{1}{2}$ վայրկյան, իսկ խոսելու միջոցին ավելի արագ, մոտ 1 վայրկյան:

2. Հոգեբանական պատճառ.—Ամեն մի խոսող, նախքան իր խոսելը, պետք ունի մտածելու և այնուհետեւ, լուրաքանչլուր նախադասութիւնը արտասանելուց հետո, պետք ունի որոշ մտաւոր գործողութեան՝ կապելու համար նախկին մտքերը հաշորդին և այսպէս շարունակ: Այս խորհողութեան համար հարկավոր է որոշ ժամանակ, այն է դադար, Այդ խորհողութեան համար պահանջված ժամանակը անշուշտ կախված է նախ՝ մարդուց և երկրորդ՝ նյութից: Կան մարդիկ, որոնք մտածում են շատ արագ, կան էլ, որ մտածում են շատ դանդաղ: Սկզբից պատրաստված մի նյութ պետք չունի երկար մտածողութեան կամ դադարի. հանդատրաստից արտարելով մի ճառ ընդհակառակը: Նմանապէս ծանր փիլիսոփայական մի նյութ պահանջում է շատ ավելի երկար մտածողութիւն և դադարներ, քան հասարակ խոսակցութիւնը: Վունդտ փիլիսոփան, կատարելով այս մասին զանազան քննութիւններ, գրում է, որ ամենապարզ մի գաղափարի զուգորդութեան միջին տեղութիւնը $\frac{85}{100}$ վայրկյան է, որով ամենապարզ դեպքերում մի զուգորդութեան տեղութիւնը կլինի 1,7 վայրկյան: Բայց հաճախ մարդ այդ մտածողութեան գործողութիւնը կատարում է հենց խոսակցելու միջոցին և ավելի հաճախ շնչառութեան միջոցին, որով և մտածողութեան պահանջած դադարը ավելի է փոքրանում:

3. Տրամաբանական պատճառ.—Ինչպէս խոսողը պետք ունի որոշ ժամանակի՝ ամփոփելու համար իր մտքերը, նմանապէս լսողը պետք ունի ժամանակի՝ ըմբռնելու և դասավորելու համար խոսողի մտքերը: Խոսողը կարող է զեւ չխոսած մտածել, իսկ լսողը չունի այդ հարմարութիւնը և պետք է միշտ սպասի խոսող անձի հայտնած մտքերի վերջավորութեան, որպեսզի կատարի իր մտաւոր գործողութիւնը: Խոսողը գիտակցելով ունկնդրի այս վիճակը, բնականաբար ստիպված է, նրան բավարարելու համար, տալ որոշ դադար և հաճախ սպասել, որ ունկնդիրը կատարի այդ գործողութիւնը: Սրա համար է, որ խոսողը հաճախ տալիս է «այնպէս չէ», «հասկանու՞մ եք» և այլ՝ ավելորդ հարցեր: Այս

ըմբռնողութեան գործողութիւնը, սակայն, որքան որ կարեւոր է ունկնդրի համար, կարելի է անտես տանվել խոսողի կողմից, մանավանդ բոլորովին հասարակ խոսակցութեան միջոցին և փոխանցվել նույնիսկ խոսողի շնչառական դադարին:

4. Գեղարվեստական պատճառ.—Ամեն մի նախադասութիւն իր վերջավորութեան ժամանակ մի դադար ունի: Նմանապէս միևնույն նախադասութեան մեջ իրար հետ անձուկ կերպով կապված մի քանի բառ միասին կազմում են մի խմբակ, որ բաժանվում է մյուսներից մի ուժեղ շեշտով և մի փոքր դադարով, առանց որի մտքերը կարող են խանգարվել և իմաստի շփոթութիւն առաջացնել: Առակի կարգ անցած հանրածանոթ երկրի մի նախադասութիւններ են հետևյալները.

Կախել, պետք չէ՝ ներել:

Մարդ եղիք հորդ պես. էշ մի՛ լինիր.

կամ՝

Կախել պետք չէ՝. ներել:

Մարդ եղիք. հորդ պես էշ մի՛ լինիր:

Ահա մի ավելի երկար պարբերութիւն, ուր հարակից բառերի խմբակները բաժանված են իրարից գծիկներով.

Քիչ մ'անդին / կը տեսնե՛ս, / որ անագին ապառա՛ժ մը / երկնից գե՛մ կը ցցուի / ու կարծես շա՛նքը կ'արհամարհէ: / Իր լօռու՛տ կողերուն / վայրի՛ կանաչին վրայէ՛ն / կարի՛լ կարիլ / ջուր՝ մը կը մզի վնիա, / փայլփլու՛ն, / զովագի՛ն / և այն կարիլը հեղե՛ղ կ'լլայ / որ զմայրի՛ս կը խորտակէ / ու անհուն հովի՛տ մը կը փորէ / իր համբու՛ն վրայ: //

Այս հասվածի մեջ նախ գտնում ենք հարակից բառերի խմբակներ, որոնք իրարից անբաժան են և ունեն մի շեշտ. սրանք բաժանված են իրարից մի կամ երկու ուղղահայաց գծիկով: Սրանք պահանջում են նաև մի-մի դադար: Սակայն ավելի արագ ընթերցանութեան (կամ խոսակցութեան) մեջ, կարելի է ավելի կրճատել դադարները. այս դեպքում կվերանան մի ուղղահայաց գծիկով նշանակվածները, բայց կմնան շեշտներն ու երկգիծ դադարները:

Ահա այն 4 գլխավոր պատճառները, որոնցով առաջանում է դադարը մեր խոսակցութեան մեջ: Այս պատճառներից ոմանք հեշտութեամբ կարող են չհզոքանալ, փոխանցվելով մի ուրիշին. այսպէս արամտրանական պատճառը կարելի է անտես տանել, ինչպէս ասացինք. քերականական դադարներից ոմանք կարող են նույնպէս կրճատվել. հոգեբանական դադարները կարելի է կատարել

խոսակցութեան կամ շնչառութեան միջոցին, և վերջ ի վերջո իբր անհրաժեշտ մնում են շնչառութեան և քերականական մեծ դադարները: Շնչառութեանը անշուշտ դադար էլ է, բայց դադարը անշուշտ շնչառութեան չէ: Սնայտղութեան օրենքով հաճախ ուրեմն միանում են այս երկուսը: Ուր որ նախադասութեանը կամ քերականական հատվածը ունի $3^{1/2}$ վայրկյանից պակաս տևողութեան, նրա դադարը կիսխանցվի շնչառութեան դադարին, որ արդեն $3^{1/2}$ վայրկյանը մեկ տեղի պիտի ունենար: Նույնիսկ կարող են լինել մի քանի շատ կարճ նախադասութեաններ, 1 կամ 2 վայրկյան տևողությամբ. դրանք դադար ունենում են, բայց այդ միջոցին շնչառութեան տեղի չի ունենում: Երբ նախադասութեանը շատ երկար է, այնքան որ $3^{1/2}$ վայրկյանից էլ ավելի պիտի տևի, մենք վերածում ենք այն քերականական մասերի, որոնցից մի քանիսը միանգամայն լինում են շնչառական: Այսպիսով, քերականական և շնչառական դադարները միանում են: Չի կարող պատահել բառ, որ շնչառական դադարը տեղի ունենա բառի կեսին կամ նույնիսկ քերականական միաշեշտ խմբակների մեջտեղում: Սոսակցութեան մեջ բնականորեն չի գործադրվում այդ, իսկ եթե ընթերցանութեան մեջ մեկը գործ դնի մի այդպիսի բան, կհամարվի վատ ընթերցող:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Զ

Կ Ե Տ Ա Դ Բ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Սոսքի մեջ գտնված դադարները, ինչպես նաև տոնն ու շեշտը գրավորապես նշանակելու արվեստը կոչվում է կետադրութեան:

Հին լեզուները չեն ունեցել կետադրութեան, կամ եթե ունեցել են, եղել է շատ թերի: Այսպես, հին հունարենը, լատիներենը, նույնպես և սանսկրիտը, հայերենը, արաբերենը (և սրա հետևողությամբ պարսկերենը և թուրքերենը մինչև վերջերս) չունեն կետադրութեան: Արաբերենի համար իբրև կետադրութեան նշան է ծառայում ʾ fa «և» շաղկապը, որով սկսվում է ամեն նոր նախադասութեան և որ տարբեր է ʾ va «և» շաղկապից, որ միացնում է երկու բառ¹: Կետադրութեան հնարումը վերագրում են Արիստոփան Բյուզանդացուն (մեր թվարկութեանից առաջ Բ դար), բայց ընդհանուր գործածություն չի ունեցել. կետադրութեանն իր զարգացումը պարտական է նոր եվրոպական լեզուներին, որոնցից անցել է նաև մեզ:

Դադարի նշանները չորս են. բուք ('), ստորակետ (,), միջակետ (.) և վերջակետ (:):—Միջակետը երբեմն կոչվում է նաև պարզապես կետ, իսկ ստորակետը՝ ստոր:

Քերականությունները տալիս են նրանց գործածութեան համար այլևայլ կանոններ. հաճախ սակայն այս նշանների գործածությունը տարբերվում է հեղինակից հեղինակ և արևմտյան գրա-

¹ Սեմական լեզուների այս հատկությունն է, որ թարգմանաբար անցնելով հունարենի և հայերենի, ավել է ս. Գրքի մեջ անհուն անհամար և:

կանից արեւելյան գրականը: Գլխավոր տարբերությունը կայանում է բուժի և ստորակետի գործածություն մեջ, որոնք հաճախ իրար տեղ են դրվում: Ավելի սակավ կարող է պատահել ստորակետի շփոթությունը միջակետի հետ և միջակետի շփոթությունը վերջակետի հետ:

Այս նշանները որոշելու լավագույն և ամենահեշտ միջոցն է հետևել ձայնի ելևէջին: Խոսող անձը երբեք սխալ չի անում առողջանություն մեջ. վատ ընթացողն է միայն, որ չկարողանալով մտնել խոսողի դերի մեջ, անում է այդպիսի սխալներ:

Բուրբը գրվում է այնտեղ, ուր ձայնը վեր է բարձրանում և հանկարծ դադար առնում: Այս երևույթը պատահում է հետևյալ դեպքերում:

1. Երբ մի բառ կամ մի կարճ բառախումբ որ հարաբերականով բաժանված է գլխավոր նախադասությունից. *ինչպես՝* Քարը՝ որ անարգեցին, նա՛ եղավ գուլի անկյան: Դու՛ որ մինչև երկինք էիր բարձրանում, մինչև գետին պիտի խոնարհվես: Եղբորդ որդիքը՝ որոնց հետ նոր ծանոթացա, ինձ մոտ էին:

2. Երբ մի բառ չի պատկանում հաջորդին, այլ մի ուրիշ բառի, որ ավելի հետո պիտի հիշվի. *ինչպես*. Գու՛ թշնամյացդ ձեռքն կրած վշտերդ: Հայերի՛ շրջակա ազգերից փոխ առած բառերը անցնում են հազարից: (Այս օրինակների մեջ պետք է հասկանալ քու վշտերդ, հայերի բառերը. առանց բուժ նշանով բաժանելու, պիտի հասկանալինք քու թշնամյացդ, հայերի շրջակա ազգերից):

3. Երբ մի բառ զեղչված է և զորությունը պետք է կրկնել. *ինչպես՝* Աֆրիկան շատ քիչ անգամ ձյուն է տեսնում, իսկ Եվրոպան՝ շատ հաճախ: Քսակները գրամով լեցուն էին, բաժակները՝ զինիով, սրտերը՝ ցնծությամբ: (Առաջինի մեջ բուժը գրված է «է տեսնում», երկրորդի մեջ՝ «լեցուն էին» բառերի փոխարեն):

4. Երբ մի գլխավոր նախադասությունից հետո պիտի սկսի մի կարճ թվում. *ինչպես՝* Հայաստանի գլխավոր գետերն են՝ Կուր, Երասխ, Եփրատ, Տիգրիս և Զորոխ: Այստեղ բուժը «հետևյալները» իմաստն ունի: Բայց երբ թվումը շատ է, գրվում է միջակետ:

5. Դերբայական—ով ձևից հետո, երբ հաջորդում է մի զիմավոր բայ. *ինչպես՝* Այս բոլորը տեսնելով՝ ասաց: (Փոխելով դերբայի տեղը, կամ եթե դեռևս մեջտեղում մի այլ երկրորդական նախադասություն, բուժը վերածվում է ստորակետի. այսպես՝ Տեսնելով այս բոլորը, ասաց: Այս բոլորը տեսնելով, նա բարձրացրեց իր ձեռքը և ասաց):

6. Երբ մի շատ կարճ գլխավոր նախադասությունից հետո ունենք որ կամ բն շողկապով սկսվող մի այլ լրացուցիչ նախադասություն. *ինչպես՝* Ասաց՝ բն կգա. Ուզում էի՝ որ դու էլ ներկա լինեիր:

7. Երբ մի բառ խառնվելով հաջորդ բառի հետ՝ կարող է շփոթություն տեղիք տալ. *ինչպես՝* Ոչ այլ ինչ են, եթե ոչ՝ մի խոստովանություն — առանց բուժի պիտի դուրս գար «եթե ոչ մի...: Մուշկան՝ Վասակի խորհրդով ամեն կողմ կապատակե.— առանց բուժի՝ Մուշկան Վասակ մի մարդ կարող է հասկացվել: Թող ներվի աշակերտական հպարտությամբ՝ մեջ բերել հետևյալ հատվածը. առանց բուժի պիտի նշանակեք՝ հպարտությամբ մեջ՝ բերել:— Եւ անուանեաց զանուն նորա՝ Մովսես՝ Գերմամ (Ելից, Բ 22).— Եթե բուժը չլիներ, անունը պիտի հասկացվեր Մովսես— Գերսամ. մինչդեռ Մովսէս անվանողն է (հայրը, ննթական), իսկ Գերսամ՝ անվանածը) (հայցական, որդին):

Ահա մի քանի օրինակ, որոնց մեջ բուժը մոռացվելով՝ իմաստի սխալ է առաջանում.

Սմբատ ունեցած է վաղամեռիկ որդի մը՝ Աշոտ Երկաթ անուն իր կնոջմեհ, որ Կարուց Աբաս քաղաւորին զաշիկն էր (Ե. Դուրեան, Ազգային պատմություն, 377):— Պետք է բուժ գրվեր «անուն» բառի վրա, առանց որի Աշոտ Երկաթը դառնում է Սրմբատի կնոջ անունը: (Թող թե ավելորդ է այստեղ «իր կնոջմէն», որովհետև ամեն մարդ իր որդին իր կնոջից է ունենում):

Եւ ինքն յառէ և յաւարէ պատերազմին՝ զմեհեանն Բելայ և զայլն ամենայն առատութեամբ զարդարեր (Եւսեբիոս, Քրոնիկոն, 67): Բուժ չլինելու պատճառով չի հասկացվում, թե «ամենայն» պատկանում է «առատութեամբ» բառին (ամենայն առատութեամբ), թե՞ «զայլն» բառին (զայլն ամենայն):

Սրանք ցույց են տալիս միայն՝ բն մարդկությունը ծագել է մի արմատից: (Եթե բուժը չգրվի, դուրս կգա «միայն թե», որ բոլորովին այլ բան է նշանակում):

Շատ բնորոշ է անցյալ դերբայի գործածությունը հաջորդ գոյականի հետ. այս պարագային եթե գրվի բուժ, գերբայը կմնա գերբայ, իսկ եթե բուժը վերացվի, կդառնա ածական. *ինչպես*.

Հաքերի զորությունից վախեցած՝ Ասորեստանը և Բաբելոնը դաշն կապեցին Եգիպտոսի հետ (այստեղ վախեցած դերբայ է և նշանակում է վախեցնելով). իսկ երբ ասենք՝

Հաթերի զորութիւնից վախեցած Ասորեստանը...— ալստեղ
վախեցած անկան է:

Յովսէփ գեղեցիկ տան մը զբան զանգակը ձայնեց (իմա՝
հնչեցրեց)։ (Հաճահան, Բերալի զիշերներ, Պոլիս, 1885, էջ 426)։
բուժ չդրվելով կարծում ենք, թե խոսքը Հովսէփի գեղեցիկի մա-
սին է, գեղեցիկ տան անկանն է:

Մահը ոչ գիտակցած մահ է, մահը գիտակցած անմահու-
թիւն (Դեմիրճյան, Վարդանանք, Ա, 225)։ անհրաժեշտ է ալս-
տեղ դնել բուժ նշանը երկու անգամ, մանավանդ որ անկանը
անսովոր ձևով գոյականից հետո գրվելով՝ հեշտութեամբ կարելի է
հաջորդ բառի անկանը հասկանալ.— ողորկ՝ Մահը ոչ գիտակ-
ցած՝ մահ է, մահը գիտակցած՝ անմահութիւն.— կամ՝ Ոչ գի-
տակցած մահը՝ մահ, գիտակցած մահը՝ անմահութիւն:

Եվրոպական լեզուները չունեն բուժ նշանը, ուստի նրա փո-
խարեն կան դնում են ստորակետ և կամ ոչինչ. օրինակ (ան՝ս
վերևում 3-րդ կետը) On a toujours raison; le destin, toujours
tort. Թվումների ժամանակ էլ (ան՝ս վերևում 4-րդ կետը) դնում են
երկկետ (:) , որ մեր մեջ այլ գործածութիւն ունի (իր վերջակետ)։
Եվրոպական լեզուներով սնված հայերն էլ հաճախ թերանում են
բուժի գործածութեան մեջ: Վերոհիշյալ կանոններն ավելի պահ-
պանվում են արևմտահայերի մեջ: Արևելահայերը ավելի քիչ են
գործածում բուժ նշանը: Այսպես, վերևի № 1, 3, 6 դեպքերում
ոմանք հապավում են բուժը. № 4 և № 5 դեպքերում դնում են
ստորակետ. № 2 դեպքը հաճախ անուշադիր են թողնում: Միան-
գամ ընդմիջտ պետք է նկատել, որ կետադրութիւնը մարդու առո-
գանութեան պատկերը լինելով, մեծ չափով կախված է մարդկա-
յին բնավորութիւնից: Այն մարդիկ, որ արագ առոգանութիւն
ունեն, բնականաբար մանր դադարների վրայով անցնում են և
հետեւաբար արդ դադարների պահանջած կետերը չեն նշանակում
գրութեան մեջ. ընդհակառակը նրանք, որ ունեն ծանր ու դանդաղ
առոգանութիւն, հաճախ ամեն մի երկրորդական բառի առաջ կանգ-
նում են, հետեւաբար և կետադրութեան մեջ ավելացնում են ստո-
րակետերի թիւը: Օրինակ՝ Ես անշուշտ, երեկ, երեկոյան դեմ, քեզ
պիտի կանչելի և, ինարկե, բարեկամաբար, պետք եղածը պիտի
ասելի: Այս նախադասութեան մեջ գործածված 7 ստորակետերն էլ
ավելորդ են արագ առոգանութիւն ունեցող մարդկանց համար¹:

¹ Այս կարգից նաև ես, որ հիշյալ 7 կետերն էլ պիտի հապավելի:

Ստորակետը դրվում է, երբ ձայնը կամաց-կամաց բարձրա-
նում է, բայց ոչ բուժի չափ, և մի տեսակ քարշ է գալիս, երկա-
րում: Այս երևույթը պատահում է հետևյալ դեպքերում:

1. Ամեն տեսակի թվումների ժամանակ. այսպես, երբ իրար
ետեից հաջորդում են մի քանի ենթակա, կամ մի քանի լրացու-
ցիչ, կամ մի քանի վերադիր, կամ մի քանի մակբայ կամ նախա-
դասութիւն, և կամ վերջապես մի քանի բայեր, որոնք մեկ են-
թակալի են պատկանում. օրինակ՝ Յորենը, գարին, հաճարը և
վարսակը հացահատիկներ են: Տեսա Գրիգորին, Լեոնին, Մեսրո-
պին և Տիգրանին: Երվանդը քաշ, աշխատասեր, եռանդուն և առա-
քինի մի պատանի է: Գնացքը երեք անգամ է գալիս. առավոտը,
կեսօրին, երեկոյին: Եկա, տեսա, հաղթեցի: Որոնեցին իրերի առ-
կը, վրան, մեջը, շուրջը:

Հնրը այս դեպքում դնում էին բուժ. օրինակ, Մերենց, «Թո-
րոս Լեոնի» (Տիգրիս, 1881, էջ 96)։ Շրջագայեցաւ քայլ առ քայլ
գրեթէ նշանելով մարքին մեջ ծառ՝ թուփ՝ ժայռ՝ բլուր՝ լեռ՝ բերդ՝
աւան՝ գիւղ և աւերակ: ... Ամեն ազգ, հայ՝ ասորի՝ յոյն՝ արար
և թիրքքմէն իր շուքը կը պտըտէին:

Հորք՝ ոչխար՝ այծ և հաւ կը մորթուէին՝ կը խորուէին՝ կրակ-
ներու մուխը երկինք կը բարձրանար՝ զինույ կարասներ կը պար-
պուէին՝ դաս դաս հայ զինուորը բերդին զլիսէն Կիլիկիոյ գաշ-
տին ընդարձակութեան հանգիստեսս այսօր և վաղը տեր,
կ'ուտեր՝ էր խմեր՝ կ'երգեր՝ կը զուարեանար: Անդ, էջ 107:

Բայց նույնիսկ Ե. Դուրյանի մոտ գտնում ենք նման օրինակ-
ներ. Կարգալով թռչուններու՝ եղնիկներու՝ նպուռներու կամ գոր-
տերու մասին պատմութեանը (Ուսումնասիրութիւնք, 497):

Առձեռն պատրաստ կռուան մը կ'ընծայէ մեզ սոճոյն՝ մի-
օրինակ՝ դարաւոր այն մատենագրութիւնը (Ուսումնասիրութիւնք,
546):

Քար մը՝ արմատ մը՝ աման մը՝ փետուր մը՝ խեցի մը՝
նկարէն պատատո մը՝ կենդանիի մը ակուան, օսի խորի մը՝ առօր
մը՝ հին ու ժանգոտ սուր մը՝ ի մի բան՝ ամէն ինչ կրնայ ֆետիշ
մը լինել յայս խափշիկին (Ե. Դուրյան, Կրօններու պատմութիւն,
Երուսաղէմ, 1935, էջ 26):

Այս ձևը այժմ խոտելի է. բայց բտարանների մեջ երբեմն
կարիք է զգացվում թվումների ժամանակ բուժ գործածելու. օրի-
նակ՝ գիտութիւնների ակադեմիայի հրատարակչական քառատար

առու-հալերեն բառարանի Ա հատորի 156-րդ էջում. Ветреник... թեթեամբ՝ թեթեասլի՛ վերվերի (աղամարդ):

Այգպես արվում է ցույց տալու համար, որ բոլոր բառերը առանձին-առանձին վերարերում են վերջինին, այլ կերպ պետք է լիներ՝ թեթեամբ (աղամարդ), թեթեասլի (աղամարդ), վերվերի (աղամարդ)¹:

2. Երբ միևնույն պարբերության մեջ մի քանի գլխավոր նախադասություններ իրար են ամբողջացնում. *ինչպես՝* Ձմեռն անցավ, ձյունը հալեցավ, անձրևները դադարեցան, փչեց զով քամին, խոտերը կանաչեցան, ծառերը ծաղկեցան:

3. Երբ մի միջանկյալ կամ հարաբերական նախադասություն ընդհատում է գլխավոր նախադասությունը. օրինակ՝ Մենք, թեև փոքրիկ ածու ենք, ինչպես ասում է Խորենացին, բայց մատուցել ենք մարդկության կարևոր ծառայություններ: Ամեն ասեմ Ձեզ, զի իցեն ոմանք ի սոցանէ, որք ասա կան, որք ոչ ճաշակեցեն զման, մինչև անցեն զՈրդի մարդոյ Եկեալ արքայութեամբ իւրով: Դու՛ ես անաւասիկ, կը համարձակիմ ըսելու, այս ամէն արեւներու միակ պատեառք. կեանքը, ասացին փիլիսոփաները, մի երազ է միայն:

4. Այսպես նաև, երբ մի քանի բառից բաղկացած բացահայտիչներ հաջորդում են մի որևէ բառի. *ինչպես՝* Մեքոպ, հայ գրականության հիմնադիրը, Վարդան անուն մարդու որդին էր: Նվարդ, փոքրիկ աշխատասեր մի աղջիկ, սաացավ առաջին մըրցանակը: Տեսք անա, սուր և նիզակ, արյունահեղության գործիքներ, այս սրբավայրի մեջ:

5. Կոչականի մոտ, նախադասության թե սկիզբը, թե մեջը և թե վերջը. օրինակ՝ Որդյա՛կ, լսի՛ր հորդ խրատները: Այսուհետև ցնծացեք, անզգամներ՝, վասնզի հասաք վերջապես ձեր բաղձանքին: Լսի՛ր աղաչանքս, ո՛վ Տեր:

6. Բացականչություններից և ձայնարկություններից հետո. *ինչպես՝* է՛հ, մեաք բարով, Ասաված և արև: Դե՛հ, բաշեցեք, սիրուն եզներ: Ափսո՛ս, որքան գեղեցի՛կ էր:

Ստորակետը զանց է առնվում, երբ բառերը կապված են իրար հետ և, կամ շաղկապներով. *ինչպես՝* Եփրատ և Տիգրիս Հայաստանի երկու մեծագույն գետերն են: Հարուստ կամ աղքատ, զի-

¹ Օրինակը և բացատրությունը մերն է (ձեռագրում տեղը բաց է թողնելով): Է. Ա.

առև կամ ագեա հավասար են օրենքի առաջ: (*Ֆրանսերենում նաև ո՛չ շաղկապը այս կարգից է. ինչպես՝* Il n'est ni bon ni mauvais; ni le roi ni la reine; ce n'est point ni un ennemi ni un étranger. Բայց հայերենում չի կարելի տեսլ «ոչ ես ոչ դու», այլ միայն «ոչ ես, ոչ դու»):

Ստորակետը զանց է առնվում դարձյալ, երբ երկու համադիր նախադասություն կապված են իրար հետ և կամ շաղկապներով. *ինչպես՝* Ես իմ աշխատությունները ցույց տվի նրան և իմ ազագա ծրագրերը պարզեցի: (Նախադասությունները համադիր են, որովհետև ունեն միևնույն ենթակա՛ն, միաձայն բայ և միատեսակ լրացուցիչ. իբր թե ասեինք՝ «ցույց տվի և պարզեցի»): — Իսկ երբ նախադասությունները համադիր չեն, այսինքն՝ տարբեր ենթակա և կամ տարբեր ձևի լրացուցիչներ ունեն, գրվում է ստորակետ. *ինչպես՝* Ես գովեցի նրա աշխատությունները, և ծնողների անհոգությունը դատապարտեցի: Աղքատները հարուստների, և հիմարները իմաստունների գործիքն են կոչած:

Ստորակետը զանց է առնվում նաև ֆրանսերենում այն հարաբերական նախադասության մեջ, որ որոշիչ է (déterminatif) գլխավորի. *ինչպես՝* Tous les objets (,) qui avaient frappé ma vue (,) ne me paraissaient que des points lumineux. Բայց երբ նախադասությունը որոշիչ չէ, այլ միայն բացատրիչ (explicatif), ստորակետները մնում են. *ինչպես՝* Un chat, qui faisait le modeste, était entré dans une garenne. (Առաջինի մեջ, ի՞թե հարաբերական նախադասությունը շնչեինք, գլխավոր նախադասությունը այլևս նույն իմաստը չէր ունենա. իսկ երկրորդի մեջ, հարաբերական նախադասությունը ամբողջապես կարելի է հանել և գրանոյ ոչինչ չի փոխվի): Այսպես է նաև անգլերենի մեջ, որ մինչև անգամ որ հարաբերականն էլ է շնջվում, իսկ գերմաներենը պահում է ստորակետները՝ հայերենի պես:

Երբ երկու բառ կապված են բայց, թե շաղկապներով, կարելի է հապաքել ստորակետը, կամ փոխարինել բովով. *ինչպես՝* Հարուստ, բայց ազան մեկը (Հարուստ բայց ազան մեկը. Հարուստ՝ բայց ազան մեկը). Հարուստ թե աղքատ՝ միևնույն է ինձ համար:

Հայերենի մեջ ստորակետ չենք դնում նաև այն դեպքում, երբ մի միջանկյալ բացատրական բառ կամ անձական ընդհատում է իրար հետ անմիջապես կապված երկու եզր, որոնցից առաջինի

հետ ինքն էլ համազիր և համարժեք է. օրինակ՝ Գրանք գործածական են հնդեվրոպական, ինչպես նաև սեմական ընտանիքում. անգլերենի մեջ նույն նախադասությունը պիտի դառնար (ստորակետով բաժանված). They are used in the Indo-European, as in the Semitic, family.

Վերջերս Գերմանիայում, փիլիսոփայական, մանավանդ բնափիլիսոփայական (.) սխառմաները տասնյակներով սունկի պես բուսնում են.—*ժակագծած ստորակետը գերմաներենում սովորական, հայերենի մեջ ավելորդ է:*

Գրաբարի մեջ, երբ իրար հետեից շարված են մի խումբ հոմանիշ կամ մերձանիշ բառեր, որոնք իրար են զորացնում, ստորակետ չի դրվում. ինչպես՝ Եկեալ միաբանեաց զգօրս Պարսից, որք լրին խոսեցին մերժեցին անարգեցին գաերուքիւնն Պարթևաց (Ագաթանգեղոս):

Միջակեպը դրվում է այնտեղ, ուր ձայնը իջնում է անմիջապես ցած և հանկարծ դադարում: Այդ պատահում է հետևյալ դեպքերում.

1. Ուր որ վերջանում են պարբերությունը կազմող առանձին գլխավոր նախադասությունները, որոնք մի-մի ամբողջական միտք են արտահայտում: Օրինակ՝ Մշուշ չունի երկինքը. կապոյա կը տեսնես ցերեկը. ասադունք կը տեսնես գիշերը. ամպերն ալ, երբ ամպեր պատեն, զովագին են և թափանցիկ՝ արևին լուսովը:

2. Երբ մեջ է բերվում մի ուրիշի խոսքը կամ վկայությունը, որ չակերտում է սկսում. ինչպես՝ Եւ ասաց Ասաուած. «Եղիցի լոյս». և եղև լոյս:

3. Երբ սկսվելու է մի երկար թվում. ինչպես՝ Հայաստանի 15 նահանգները հետևյալներն են. Բարձր Հայք, Չորրորդ Հայք և այլն: (Հայտնի է, թե կարճ թվումների ժամանակ բուժ նշան է դրվում):

Միջակետի տեղ եվրոպական լեզուները գործ են ածում կեսստոր (;) և երկկետ (:): Վերի դեպքերից առաջինում դրվում է ; երկրորդում և երրորդում : է դրվում: (Հունարենում եվրոպական ;-ի տեղ դրվում է վերև դրված կետ (·), մինչդեռ ցած դրված կետը (.) վերջակետ է:

Վերջակետը տարբերություն չունի միջակետից՝ ըստ առողանությունից: Գործածվում է, երբ պարբերությունը բոլորովին վերջանում է, ինչ որ հաճախ կախված է զրոյի բնավորությունից: Կան

զրոյներ, որոնք միջակետի տեղ էլ վերջակետ են դնում, կամ ընդհակառակը՝ վերջակետի տեղ միջակետ:

Երբեմն վերջակետից հետո դնում են —, մանավանդ երբ նրանից հետո նոր տող է սկսվում:

Եվրոպական լեզուների սովորությունը վերջակետը միայն մի կետ է (.)։ Հունարենի մեջ զանազանվում են ցած դրված կետ (.), որ վերջակետ է, և բարձր դրված կետ (·), որ ;-ի արժեք ունի:

Վերջակետից վերջակետ եղած միջոցը, որ սովորաբար պարբերություն է կոչվում, կարող է հեղինակի ցանկություն համեմատ երկար կամ կարճ լինել: Նա կարող է պարունակել զանազան գըլխավոր և երկրորդական նախադասություններ, որոնք առաջինների միտքը լրացնում են: Բայց ընդհանրապես շատ երկար պարբերությունները ձանձրալի են և բուն և գլխավոր իմաստը մթագնում են: Այսպես, օրինակ, Ալիշանի՝ «Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան» գործի մեջ, էջ 199, կա մի պարբերություն, որ բրունում է 25 տող, ունի մի գլխավոր նախադասություն, 12 երկրորդական նախադասություն և 3 էլ դերբայական հավելված: Եվ, սակայն, այս բոլորի մեջ գլխավոր միտքը դրված է առաջին նախադասության մեջ, որ պարունակում է միայն 5 տող:

Կետերի փոխանակության համար դնում եմ հետևյալ կտորը. Գնացիք ծովափ: Մարդ չկար: Դեռ շատ շուտ էր: Բիչ-բիչ հավաքվեցին: Ծովափը լցվեց բազմաթյամբ:

Գնացիք ծովափ, ուր մարդ չկար, որովհետև դեռ շատ շուտ էր. բայց քիչ-քիչ հավաքվեցին և ծովափը բազմաթյամբ լցվեց:

Առաջին հատվածի մեջ 5 վերջակետ կա, որոնցից միայն մեկն է մնում երկրորդում, իսկ մնացյալ չորսից երկուսը վերածվել են ստորակետի, մեկը միջակետի, մյուսն էլ ջնջվել է:

Ահա մտածողությունը արտահայտելու երկու տարբեր ձևեր՝ որոնց հետևում է նաև կետադրությունը:

Ընդհանրապես քերականները բուժի, ստորակետի, միջակետի և վերջակետի տարբերությունը դադարի տևողության մեջ են դնում: Ուշադիր քննությունը սակայն ցույց է տալիս, որ տևողությունը երկրորդական նշանակություն ունի, որովհետև բոլորն էլ գրեթե միևնույն չափն ունեն. հիմնական տարբերությունը այդ դադարից անմիջապես առաջ ձայնի ստացած ելևէջի մեջ է, ինչպես բացատրեցինք վերը: Այստեղ դնում ենք ձայնագրական պատկերը, համեմատած նա բառի՝ հետևյալ նախադասությունների մեջ.

1. Նա՝ որ եկավ...

2. նա, դու, ես, բոլորս էլ.

3. Եկա՛վ նա.



Ուրեմն բութից մինչև միջակեալ մի ութնյակ տարբերութիւն կա:

Նկատելի է այն, որ կարելի է իրար տեղ գործածել բութը ստորակետի հետ, ստորակեալ միջակետի հետ, միջակեալ վերջակետի հետ, բայց շատ սխալ կլինի բութի տեղ վերջակետ կամ վերջակետի տեղ ստորակետ դնել:

Միջակետի և վերջակետի գործածութեան սխալներ.

Նախաման, Արաօսր Հայաստանի, Պոլիս (թվական չկա),

էջ 31.

Նոյն հոլտին դեմ առ դեմ երկու լեքանց ստորադասերը այգիներով և պարտեզներով զարդարուած է, (sic) Եփրատ կամ մեղրիկ գետը, Մշոյ դաշտերէն գալով՝ նոյն զարդարեալ հոլտին մէջէն լոխի ու մննիկ սրանալով՝ Բալուայ արևմտեան գետեզրը՝ ինքնաբոյս փոքրիկ ժայռի մը կը զարնէ, որ ցցուած է, (sic) երբ շիբի այն՝ քաղաքը մեծամեծ վնասներ կը կրէ գետի յորդաբեան ատեն. (sic) քաղաքի առաջ խարխուլ վիճակի մէջ փայտաշէն կամուրջ մը կայ բաւական երկայն...

Անդ, էջ 33.

Զմեռը անձրևէն կամ ձիւնէն խիստ անհանգիստ կը լինին բնակիչք. ալ չենք գիտեր հողին գեշութենէն է քէ ոչ, (sic) և հայք այս քաղաքի մէջ ունին չորս եկեղեցի...

Բացի այս չորս նշաններից, որոնք դադարի համար են, կետադրութեան մեջ գործածվում են նաև հետևյալ 14 նշանները, որոնցից երեքը (շեշտ, երկար և պարույկ) առողջանութեան նշաններ են, իսկ մյուսները բառերի կամ խոսքերի բացահայտութեան համար են միայն.

՝ ապաթարց կամ մակակետ.

- ենթաման.

«» չակերտ.

() փակագիծ.

- միութեան գիծ.

— անջատման գիծ կամ գիծ.

... կախում կամ կախման կետեր.

՝ շեշտ.

— պարույկ.

'' երկշեշտ

° պարույկ կամ հարցական նշան.

˘ երկար կամ դարձացական նշան.

? կասկածական նշան.

! ծաղրական նշան.

Ապաթարցը կամ մակակետը գործածվում է զեղչված մի ձայն (կամ տառ) ցույց տալու համար. ինչպես՝ Անգամ մ'ալ (փոխանակ՝ մը ալ), պիտ'որ լսեմ (փոխանակ՝ պիտի որ լսեմ), ա'երթամ (պիտի երթամ), ք'երթայ (թող երթայ), երկ'երկու (փոխանակ՝ երկու-երկու), մ'երթար (մի՛ երթար) չ'երթար (փոխանակ՝ չի երթար) և այլն: Այս բոլորի մեջ ամենից ավելի գործածականներն են «անգամ մ'ալ, կ'երթար, չ'երթար» ձևերը, որոնք էլ սովորական են արևմտահայ գրականին: Մյուսները բարբառային ձևեր են և գործածական են ավելի լեզվաբանական գրվածքների մեջ: Արևելահայերը, թեև ունեն կ'երթայ և այլն բայական ձևերը, բայց այժմ սովորութիւն են դարձրել գրել առանց ապաթարցի:

Ապաթարցը ամենից ավելի գործածական է տաղաչափութեան մեջ, ուր բանաստեղծները թույլ են տալիս իրենց՝ ուզած ժամանակ յառ ու այն ձայնավորը հապավելու, չափի համար: Այսպես՝ ունենք Դուրլանից, օրինակ, հետևյալ տողերը.

Աստղ մ'ալ ես կ'երթամ յաւելուլ երկնից...

Երբ տոգոյն մահու հրեշտակ

Անհուն ժպտով մ'իջնէ իմ դեմ...

Ապաթարցի սխալներ շատ սովորական են մեր գրողների մոտ. սովորութիւն է դարձել, ուր որ և կամ կ'մասնիկը կա, անպատճառ ապաթարց դնել. այսպես՝ չ'եմ, չ'ես, չ'է, չ'գիտեմ, չ'գիտել, չ'երթար, կ'ուզայ, կ'ուտայ, կ'գտնէ և այլն: Այսպիսի սխալներ են, օրինակ, Ա. Տիւմալ (Որդի), Կնոջ մը վէպը, Զմիւռնիս, 1881, Ա, 52՝ Կ'ուզան գիրքնք մտիկ ընողներուն. 58՝ Մին պատերազմական դեմք մը ցոյց կ'ուտար: Այս բոլորի մեջ ապաթարցի կարիք չկա, որովհետև կրճատված տառ չկա: Ուշադրութեան արժանի է հատկապես չ'երթար ձևը, որ արևմտահայ բարբառի մեջ երկու տարբեր բան է ներկայացնում. մեկը ներկայի եզակի երրորդ դեմքը (չեմ երթար, չես երթար, չ'երթար),

մյուսը անկատարի եզակի երրորդ դեմքը (չեքթայի, չեքթայիր, չեքթար): Առաջին դեպքում ապաթարցը անհրաժեշտ է, որովհետև չ'եքթար > չե եքթար կամ չի եքթար, իսկ երկրորդ դեպքում՝ բոլորովին ավելորդ:

Շատ անգամ ապաթարցը գրվում է գրաբարի ի նախդիրի վրա. 'ի տուն, 'ի քաղաք, վեր 'ի վերոյ, ձմեռն'ի բուն: Մրա նմանությունը նաև յ, զ, ց նախդիրների վրա. ինչպես՝ զ'տուն, ց'տեսութիւն, յ'տառնէ: Ոմանք այս կարգի ապաթարցը զանազանելով նախորդից, կոչում են մականեա (Ալտնեան, Քննական քերականութիւն, 354): Չանազանությունը եթե ոչ ձևի, գոնե գործածություն մեջ է և կայանում է նրանում, որ մինչդեռ ապաթարցը մի կրճատված տառի փոխարեն է գրվում, այստեղ ոչ մի կրճատում չկա, այլ նշանը գրվում է, որպեսզի նախդիրը սլաւալամար հաջորդ բառի մասը չկարծվի. օրինակ՝ 'ի սկզբանէ և ոչ թե իսկ զբանէ: Մականեաի այս գործածությունը սովորական էր հետին դարերի ձեռագրերի մեջ, ուր բառերը անհրաժեշտ և միանար զըրված էին լինում. իսկ այժմ, երբ ապագրություն մեջ բառերը և նախդիրները արդեն անջատ են ապվում և նման շփոթություն երկուսը չկա, մականեաի գործածությունն էլ վերացվում է: Վիեննայի Մխիթարյանների միաբանությունը իսպառ ջնջել է, բայց Վենետիկի Մխիթարյանները, իբրև ավելի պահպանողական, դեռ շարունակում են գործածել:

Ենթամեան տողադարձի նշանն է: Երկու ձև ունի. կիսարտուր (-) և ուղղագիծ (-). առաջինը հայերեն ապագրությունների սովորական ձևն էր, երկրորդը եվրոպական ապագրությունների, որ հիմա սովորական է նաև մեր մեջ: Լավագույն էր անշուշտ առաջինը, չճիտվելու համար միություն գծի հետ:

Հները զանազանում էին երկու տեսակ ենթամեան. մեծ կամ կատարյալ ենթամեան կոչվում էր այն նշանը, որ գործածվում էր բարդ բառերի կազմից մասերը բաժանելու համար իրարից. ինչպես՝ բարձ-ընտիր, նոր-ընծայ և այլն: Իսկ կես կամ փոքրիկ ենթամեան (կիսաենթամեան) կոչվում էր այն նշանը, որ արդի սովորական ենթամեան է և գործածվում է վանկերը բաժանելու համար տողադարձի ժամանակ. ինչպես՝ ա-աավոտ, առ-նել, ա-սել, ե-ղավ, ճա-ճապարհ և այլն: Այսպես, Երզնկացու և Նչեցու քերականությունների մեջ կարգում ենք. «Կիսանթամեանայ զտառսն ի հեզսն կցէ, որպէս կատարեալ ենթամեանայ զկատարեալ բառսն. ի

վերջո տողին պարտ է կիսանթամեանայ դնել ի ներքոյ» (տես ՆՀԲ, կիսաենթամեանայ բառի տակ):

Արդի գործածության մեջ այսպիսի խտրություն չկա:

Չակերտը գործածվում է մի ուրիշի խոսքը կամ վկայությունը մեջ բերելու համար: Չակերտից առաջ գրվում է միջակեա, հետո չակերտը բաց են անում («, «, կամ » և այլն), որից հետո սկսում են գլխատառ: Խոսքը վերջանալուց հետո չակերտը փակում են («, » կամ « և այլն): Սովորաբար չակերտը գրվում է խոսքի սկիզբը կամ վերջը մի անգամ. իսկ երկար կոչումների կամ մեջբերումների (ցիտատների) ժամանակ, ինչպես և ոտանավորի մեջ, չակերտ կարելի է բանալ լուրաքանչլուր տողի սկիզբը, իսկ փակել միմիայն վերջում, մի անգամ: Այժմ այս վերջին գործածությունից դուրս է եկած: Չակերտով բերված նախադասությունն իր մեջ ունենում է բնականաբար կետադրություն. վերջին կետը (միջակեա կամ վերջակեա) ոմանք դնում են չակերտից ներս, ոմանք դուրս: Վերջինը լավագույնն է: Օրինակ՝ Եւ աւաց Աստուած. «Եղիցի լոյս». և եղև լոյս:

Չակերտի մեջ կարելի է դնել նաև մի բառ, որ հեղինակինը չէ, այլ պատկանում է մի ուրիշի. այս դեպքում իհարկե գլխատառ չի գրվում: Օրինակ, Ենթադրվում է, թե «հարեթական» լեզուները աւարածվում են միևնչև Միջին Ասիա: Չակերտի այսպիսի գործածությունը սովորական դարձավ վերջերս, «չլուրահնար, ինքնակոչ, այսպես ասած» իմաստով. օրինակ՝ Աշխատավարձի ձախ» հավասարեցումը: Մրա համար էլ հնարվել է չակերտավոր բառը՝ ինքնակոչ իմաստով:

Փակագիծը գործ են ածում երկրորդական մի տեղեկություն կամ ծանոթություն, իբրև միջանկյալ հիշելու համար, լինի դա մի ամբողջ նախադասություն, թե միայն մի բառ: Օրինակ՝ Ավեստան (այսպես է կոչվում ճին իրանյանների սրբագան մատյանը) վերագրվում է Զրադաշտին (Զերդյուշտ):—Կարելի է նաև գործածել կրկին փակագիծ, երբ հարկ է լինում ծանոթության մեջ մի նոր բացատրություն էլ դնել: Այս դեպքում գրվում է անկյունավոր փակագիծ [], չճիտվելու համար նախորդի հետ: Օրինակ՝ Ամեն կողմից հուսահատ (որովհետև նույնիսկ մայրաքաղաքը [Հռոմ] վտանգի տակ էր), որոշեցին ամրանալ Ռավեննա:

Երբ միջանկյալ ծանոթությունն սկսվում է, փակագիծը բաց են անում [(], և երբ վերջանում է, փակում են [)]:

Փակագծյալ մասը միշտ միջանկյալ և երկրորդական լինելով, պետք չէ լինի տրված այնպես, որ եթե վերացվի, խոսքի ընդհա-

նուր կազմը և ընթացքը խանգարվի: Օրինակ, սխալ է փակագիծը հետևյալ հատվածում. Ավետան (այսպես էին կոչում հին իրանյանները) իրենց ս. Գիրքը, վերագրվում է Զրազաշտին:— Նմանապես պետք չկա զնեղ կետեր փակագծից անմիջապես դուրս, եթե խոսքի մնացյալ մասը չի պահանջվում: Օրինակ, սխալ է գրել՝ Օգոստոս (հռովմայեցոց կայսրը), ընդհանուր աշխարհագիր արավ:— Ստորակետը անտեղի է:

1860-ական թվականներին փակագիծը գործածվում էր նաև իբր չակերտ. օրինակ՝ Հայիռիի բնակիչները կը հաւատային քե հոգիներն՝ որոնց իրենք (Զեմե) անուն կու տային, ապագայ բաներու գուշակ են. ամէն մարդ, կ'ըսէին, իւր առանձին (Զեմէն) ունի (Այսնեան, Քրեականութիւն, § 945):— Այս սխալ գործածությունը հետո վերացվեց:

Ոմանք փակագծի փոխարեն գծիկներ էին դնում — — ձևով:

Միութեան գիծը գործածվում է երկու կամ ավելի անջատ բառեր միացնելու և բարդություն ձև տալու համար. ինչպես՝ հայպարսկական հաքարերություններ, չին-նապոնական պատերազմ. Միհր-Ներսես. Վեհ-Միհր-Շապուհ: Հաճախ միություն գիծը բուլղոսի մակերդ և սխալ է. ինչպես՝ մարա-պարսկական, էլեկտրա-բուլժություն, փոխանակ ասելու մար-պարսկական կամ պարզապես հողակապով՝ մարապարսկական, էլեկտրաբուլժություն:

Կովկասում, նոր սերնդի գրողները այս երևույթը չափազանցություն հասցրին. ուր որ երկու կրկնված բառ կա, կամ բացառականով միացած ուղղական, կամ բալի երկու ձև, որոնք միևնույն ժամանակը, թիվն ու դեմքն ունեն, և նման զանազան դեպքեր, երբ մենք ստորակետով կամ առանց կետի ենք որոշում, սկսեցին գործածել — նշանը: Այսպես, օրինակ՝

Նկել—գաել էր Մուշեղի (Միրաս, Զգրված օրենք, 92):

Անցնում էր պուրակից—պուրակ, քմբից—թումբ ու մեկիկ—մեկիկ հոտոտում վարդենիները (անդ, էջ 6):

Մի գլուղում երկու եղբայր են լինում, օր գառող—օր ուտող մարդիկ: Ինչքան շատ են բանում—գառում, էլի չեն կարողանում ծայրը—ծայրին հասցնել (Մկրտիչ Կորյուն, Հեքիաթներ, Երևան, 1941, էջ 55):

Անջատման գիծ (կամ պարզապես գիծ) գործածվում է զանազան դեպքերում.

1. Երբ բազմաթիվ երկրորդական նախադասություններ ստորակետներով բաժանված հաջորդում են իրար, վերջին անգամ գլխա-

վոր նախադասության անդնելուց անմիջապես առաջ գրվում է ստորակետից հետո գիծ (,—):

2. Վերջակետից հետո, մանավանդ երբ պետք է նոր տող սկսի, գրվում է երբեմն զիծ, իբր թե ցույց տալու համար կատարյալ վերջակետ:

3. Միջանկյալ նախադասությունների համար՝ փակագծի փոխարեն:

4. Պատմվածքների մեջ զանազան անձերի խոսակցությունը մեջ բերելու համար, չակերտի կամ «ասաց, ասում է» բառերի փոխարեն: Այսպիսի գիծը հաճախ նոր տողի սկիզբն են դնում. բայց խնայողության համար կարելի է նաև տողի մեջ, հատկապես ոտանավորի մեջ:

5. Գրեթե սրան նման՝ բացատրական մի նախադասություն, որ իբր թե առաջինի պատասխանն է. Օրինակ՝ Ի՞նչ էր հայոց պահանջը.—կյանքի և զույլի ապահովություն և ուրիշ ոչինչ:

6. Թվականների և թվանշանների միջև՝ «Մինչև» նշանակությամբ. օրինակ՝ 1876—1933 կամ 1876—1888, Ա.—Ժ, 1—10:

Կախման կետեր (...) գործածվում են՝

1. Երբ հոգմունքից ալլես բառ չունի տեղի և ընդհատում է մի վարկյան իր խոսքը. օրինակ՝

Եւ այս աշխարհն ալ անձպիտ

Գոցեցին իմ առջև յաւէ՛տ...:

2. Երբ մի որեէ վկայության մեջ բաց թողած տեղեր կան:

3. Նույն սեռով «և ալլե» ասելու փոխարեն. ինչպես՝ ճինգերորդ, վեցերորդ... մինչև տասներորդ: Այսպես է նաև եվրոպացիների մեջ. օրինակ, Ֆրանսիական մի լավ հրատարակության մեջ (MSL, 22, էջ 175) սպված է վեց անգամ... և ալլե իմաստով:

Շեշտը ձայնի բարձրացման նշանն է: Հայերենի մեջ անհրաժեշտ է նրա գործածությունը այն դեպքում, երբ իմաստի տարբերություն է առաջանում. օրինակ՝ եւ կուզեմ, բայց ե՛ս կուզեմ (որ արեւլյան գրականում բառաշարքի տարբերությամբ լինում է՝ եւ ուզում եմ, ե՛ս եմ ուզում). Կարապետը այսօր գնաց, Կարապետը այսօր գնա՛ց, Կարապետը այսօր գնա՛ց. այս երեքը իրարից տարբեր իմաստ ունեն. առաջինը շեշտում է այն, թե Կարապետը զնաց և ո՛չ ուրիշը, երկրորդը՝ թե այսօր զնաց և ո՛չ երեկ, երրորդը՝ պատմում է սովորական դեպքը: Այս վերջին դեպքում շեշտ չի գրվում: Եվրոպական լեզուները ուրիշ ձևեր ունեն այս շեշտերի փոխարեն. օրինակ, ֆրանսերենում առաջին դեպքում՝

C'est Karapet qui est parti, երկրորդ դեպքում՝ C'est aujourd'hui, que Karapet est parti:

2. Շեշտը գրվում է նաև հրամայականի վրա. ինչպես՝ արի՛, գնա՛, իմա՛, բե՛ր և այլն:

3. Մի՛ արգելականի վրա, զանազանելու համար մի թվականից:

4. Երբ շեշտը վերջին վանկի վրա չէ և մենք ուզում ենք գրավորապես ցույց տալ այդ. ինչպես՝ ա՛յսպես, սա՛պես, մա՛նավանդ և այլն:

5. Սաստիկություն ցույց տալու համար. ինչպես՝ երբե՛ք, բնա՛վ, շու՛տ, ահա՛ և այլն:

6. Բացականչությունների վրա. ինչպես՝ դե՛հ, է՛հ, հ՛ե:

7. Այո՛, ո՛չ մակրայների վրա և բայերի զանազան բացասական ձևերի վրա. ինչպես՝ չե՛մ ուզում, չպիտի՛ երթամ, չե՛րթար:

8. Հրամայական թո՛ղ ձևի վրա. ինչպես՝ թող երթա, թող գա (թեև հնչվում է թող երթա՛, թող գա՛):

9. Անուղղակի հարցման միջոցին. կուզեի իմանալ, թե ո՛վ, ե՛րբ և ու՛ր պիտի գա:

Պատիվը (—) գործածական էր հին հայոց մեջ իբրև նշան համառոտագրության, բայց միայն մի քանի բառերի համար. այսպես՝ Յս, Բս, Ած, Տր, Եմ, Իեկ (Յիսուս, Բրիստոս, Աստուած, Տէր, Երուսաղեմ, Իսրայել) և այլն. գրվում էր միայն բառի առաջին և վերջին տառը. զրա համար սրանց հոլովյալ ձևերն էլ լինում էին՝ Այ, Յի, Բի, Ավ, Տն (Աստուծոյ, Յիսուսի, Բրիստոսի, Աստուծով, Տեառն) և այլն: Ավելի ուշ պատիվը դարձավ սովորական համառոտագրության նշան և սկսավ գործածվել ամեն բառի համար. օրինակ՝ քղք, ստնյ (քաղաք, սատանայ) և այլն: Նոր ժամանակներս սպագրության դյուրության համար պատիվը վերացվեց և նրա փոխարեն սկսեց գործածվել պարզ միջակետ. ինչպես՝ պատմ., քաղ., սր. (պատմություն, քաղաքական, սուրբ): Կա նաև երկշեշտ, որ վերջին դարերի ձեռագրերից է. ինչպես՝ սեպտ՛՛ գեկտ՛՛ (սեպտեմբեր, դեկտեմբեր):

Պատիվը իբրև համառոտագրության նշան հնագույն ժամանակ գործածական էր միմիայն սրբազան բառերի համար: Սրանից էլ ծագում է պատիվ բառը: Շատ ավելի ուշ սովորական դարձավ նաև հասարակ բառերի համար: Սրա ամենահին գործածությունը

գտնում ենք 867 թվականի մի արձանագրության մեջ, որ հրատարակված է Շողակաթ, 177:

Յիշխանութե՛ն Աշոտայ և ի տէրութե՛ն Սմբատայ... (հրատ. Գ. Հովսեփյան):

Արձանագրություններից շատ ավելի ուշ մտնում է ձեռագրերի մեջ և մեծ տարածում ստանում (ավելի մանրամասն տես ստորև «Համառոտագրություն»):

Պարույկը կամ հարցական նշանը հարցում արտահայտող նշանն է և դրվում է ճիշտ այն վանկի վրա, ուր կատարվում է հարցման հատուկ ձայնի բարձրացումը: Եվրոպացիք գործ են ածում հարցականի համար ? նշանը, որի ծագումը հետևյալն է: Հույները հարցականի համար գործ էին ածում կեա-ստոր. (;). լատիները փոխ առնելով հույներից այդ նշանը, զանազանելու համար կեա ստորից (;), մի քիչ ձևափոխեցին և ստորակետը վերև դնելով՝ ունեցան մի նոր նշան (?). այս նշանն է, որ դարձավ հետո ?: Ոմանք ուզում են և փորձեր էլ արել են նույն նշանը հայերենի մեջ էլ գործածել պարույկի փոխարեն: Բայց դա շատ անտեղի և վնասակար մի նորմոտություն է: Եվրոպական հարցականը, ինչպես հայտնի է, գրվում է միայն նախադասության, նույնիսկ պարբերության վերջում, և թեև նույնը գործադրեինք նաև հայերենի մեջ, անկարելի պիտի լիներ իմանալ, թե նախադասության մեջ գործածված բազմաթիվ բառերից որին պետք է տալ այդ նշանը. օրինակ. Դու՞ այսօր համալսարան գնացիր, թե՞ դու այսօր համալսարան գնացիր, թե՞ Դու այսօր համալսարան գնացիր? Այս բոլորը եվրոպական ձևով պիտի լիներ՝ Դու այսօր համալսարան գնացիր? որ ոչ մի բան չի նշանակում: Եվրոպացիք ուրիշ միջոցներ ունեն սրա առաջըր առնելու համար. այսպես՝ Ֆրանսերեն c'est կամ est—ce que, որ հայերեն պիտի լիներ Արդյոք դու՞ այսօր համալսարան գնացիր, կամ Արդյոք այսօր՞ դու համալսարան գնացիր, կամ Արդյոք համալսարան՞ դու այսօր գնացիր և այլն: Իսպանացիք հնարել են մի այլ ձև. հարցականը դնում են նախադասության թե սկիզբը (գլխիվայր դարձած) և թե վերջը, այսպես.

?Habla Usted español?

Ոոսնւմ եք Դուք իսպաներեն:

Սրանով հարցականի սահմանը իբր թե որոշվում է, բայց միայն մինչև մեկ նախադասություն և ոչ թե մինչև մի բառ, որ հայերենի համար անհրաժեշտ է:

երբ հարցու՞մը կատարվում է անուղղակի ձևով (interrogation indirecte), պարուկի տեղ զբոլում է շեշտ, իսկ եվրոպական լեզուներում հարցական չի զբոլում:

Կուզեի իմանալ ո՞վ է այդ մարդը:

Je demande quel est cet homme.

Սակայն այս միջոցները հաճախ անբավարար են և եվրոպական հարցական նշանը մնում է մի անիմաստ բան. օրինակ, հետևյալ ֆրանսերեն հատվածի մեջ.

Que conclure de toutes ces remarques, sinon que le système élaboré par M^{lle} Hamburger, pour ingénieux qu'il soit dans son principe, pour logique qu'il soit dans son application, paraît se heurter à beaucoup d'objections? (BSL, 36, № 106, էջ 88):

«Ինչ հետևյալն է այս բոլոր նկատողություններից, եթե ոչ ա՛յն, թե օրիորդ Հոմբուրգի մշակած դրուքյունը, ինչքան էլ որ հնարիմաց լինի սկզբունքով, ինչքան էլ որ արամարանական լինի իր գործադրության մեջ, թվում է, թե բախում է շատ առարկությունը?»:

Երկար կամ վարձացական նշանը զբոլում է 1. ձայնարկությունների վրա, ինչպես՝ ան, օխ, բարե, ախոս. 2. հուզումով արտասանելի բառերի կամ նախադասությունների վրա. ինչպես.

«Խօսինք» ըսավ. — ո՞ն, իոսի՛լ,

Հաանի՛լ է լոկ ինձ համար:

Եվրոպական լեզուների մեջ վարձացական նշանն է !, որ զբոլում է ձայնարկությունների կողքին և նախադասությունների վերևը՝ նման հարցական նշանի. O ma patrie!

Կասկածական նշանը եվրոպացիների հարցական նշանն է, որ փոխ ենք առել մենք և գործածում ենք երկրայություն, կասկած կամ անստուգություն ցույց տալու համար. օրինակ՝ Լոսբենացին (է դար.?) կազմել է առաջին ամբողջական Հայոց պատմությունը: Հոմմայեցի մի կայսր (Անտոնիոս Պիոս?) ղեկավարեց Ռոմայի զորքերը:—Նախապես սրա փոխարեն գործածում էին կետով պարուկ (°), որ հիմա խափանված է:

Մաղրական նշանը եվրոպացիների վարձացական նշանն է, որ նույնպես փոխ ենք առել մենք և գործածում ենք ծաղր կամ հեզմանք ցույց տալու համար. օրինակ. Ե դարում հայերը վ չունենին, ասում է Ղ. Աղայանը!

Նախապես ծաղրական նշանի համար գործածում էին կետով երկար (˘), որ հիմա խափանված է նույնպես:

Ոմանք կասկածը կամ ծաղրը ուժեղացնելու համար նշանը մինչև երեք անգամ կրկնում են, այսպես՝ ???, !!! Կամ նաև սրանց խառնուրդը՝ ?!! և այլն:

* * *

Ձանազան լեզուների կետադրության կանոնների համեմատությունից կարող ենք հետևել, թե այդ արվեստը բացարձակ ճշտության չէ հասած:

Ձխտելով արարելիքի և արարական այրուքնով զբոլող լեզուների մասին (պարսկերեն և այլն), նաև երբայրեն, ստորերեն և այլն, որոնք բնավ կետադրություն չունեն, եվրոպական լեզուներն էլ շատ տեղ անճշտ են: Օրինակ, ուսանողներում անհանդուրժելի սխալ է ԿՏՕ «որ» ից առաջ ստորակետ չդնելը, մինչդեռ ֆրանսերենում qui-ից և que-ից առաջ ստորակետը դնելը պարտադիր չէ և նրա մասին արված կանոնները պնդում են, որ իրենք իրենց կասկածելի են դարձնում. իսկ անգլերենում ոչ միայն ստորակետը, այլև հարաբերականն էլ չեն դնում. օրինակ՝

The man I saw «մարդը, որին տեսա»:

The letter I write «նամակը, որ գրում եմ»:

Հայերենի մեջ էլ որ հարաբերականից առաջ ստորակետ դնելու հարցը պարտադիր որոշումների կարգն են դնում ոմանք, իսկ ուրիշներ էլ բարեմիտ վերաբերմունք են ցույց տալիս: Այս վերջինները ըստ իս ավելի իրավացի են. օրինակ՝ Դու որ գնացիր, տեսա՞ր:—Այստեղ որ-ից առաջ ստորակետ դնելը ոչ թե պարտադիր, այլ բոլորովին ավելորդ կամ համարում: Այսպես նաև հետևյալ օրինակի մեջ. նա չգիտեր(,) որ ես էի:

Երբեմն էլ կանոնը կամ սովորությունը պահանջում է ինչ որ կետ, որ սակայն հնչմամբ տարբեր կետ է լինում: Օրինակ, ամեն լեզվի մեջ էլ կոչականից հետո դնում են ստորակետ, մինչդեռ իրականում հնչում ենք միջակետ. այսպես՝ Կա՛րապետ, արի՛: Այստեղ Կարապետ կոչականից հետո թեև գրում ենք ստորակետ, բայց հնչում ենք միջակետ: Հնչման մեջ գուցե առաջին վանկի վրա զբոլած շեշտը շփոթեցնի մեզ և կարծել տա, թե իրոք ստորակետ է: Բայց մենք կարող ենք առնել մի վանկանի մի կոչական, որով պիտի զգանք, որ այդպես չէ. օրինակ՝ Վարդ, արի՛:

Ինձ այս բոլորը ցույց են տալիս, որ կեսադրուժյունը իր ճշմասիտ գործածութիւնն չի հասել և առողջանութիւնը զրկած կանոններին տարրեր է:

Առողջանութիւնը սովելի բնական է և ճիշտ՝ ամեն լեզվի համար:

Կեսադրուժյան կարևորութիւնը ցույց տալու համար երկու առակ կա.

1. Մի փաշա ուսուցիչ է վարձում դաստիարակելու համար իր շփացած և անուսումնասեր որդուն: Ուսուցիչը գանգատվում է միշտ փաշային, թե որդին ուսման սեր չունի և չի սովորում, որդին էլ դանդաղում է հոր մոտ, թե ուսուցիչը նույնիսկ փաշային է անարգում, և մի օր էլ ասում է.

— Ուսուցիչը քեզ էջ կոչեց:

— Ինչպե՞ս թե:

— Ուսուցիչը ասաց. Ա՛յ տղա, մարդ եղիր, մարդ եղիր հորդ պես էջ մի լինիր:

Փաշան բարկացած կանչում է ուսուցչին և բացատրութիւն է պահանջում: Ուսուցիչն ասում է.

— Բա ես քեզ չեմ ասում, որ որդիդ ոչինչ չգիտես, ոչինչ չի հասկանում. ես ասել եմ. «Ա՛յ տղա, մարդ եղիր, մարդ եղիր հորդ պես. — էջ մի լինիր»:

2. Մեծահարուստ մի իշխան, ինչ որ հանցանքի համար, կախադանի է դատապարտվում: Իշխանը աղերսագրով դիմում է կալսեր և խնդրում է ներել: Կալսբը մերժում է և աղերսագրի տակ գրում.

— Կախել, պետք չէ ներել:

Երբ կալսեր սենեկապանը հայտնում է իշխանին այս վճիռը, իշխանը հուսահատված, խոստանում է մի միլիոն պարգևել նրան, ով վճիռը կփոխեր:

Սենեկապանը հանձն է առնում փոխել կալսերական վճիռը և «պետք չէ» բառի մոտ մի կետ է գնում, լինում է՝

— Կախել պետք չէ. ներել:

Անգրագետ կալսբը կետադրել չէր իմանում*:

Շատերին հայտնի է Ավետարանի մի հատվածը (Մատթ. Իե 21), որ հետեւյալն է.

* Լսել եմ, թե Վատեոլոյի ճակատամարտում Նապոլեոնի պարտութիւնը և նրա կալսբութիւն կործանումը նույնպէս մի ստորակետի պատճառով է եղել:

Ազնիւ ծառայ բարի և հաւատարիմ:

Այս հատվածը միշտ էլ կարդում և հասկանում էին՝ «Ազնիւ և բարի և հաւատարիմ ծառայ», ազնիւ բառը աւնելով իբր ածական ծառայ բառի: Սակայն հունարեն բնագրի համեմատութիւնը ցույց տվեց, թե բառն է ազնիւ, հունարեն εὖγος, որ նշանակում է «կեցցես, bravo, մալաղեց, մաշալլահ», որ է ձախարկութիւն և ոչ թե ածական: — Պետք է ստորակետով բաժանել:

Հ Ա Մ Ա Ռ Ո Տ Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հները թղթի խնայողության համար նշ միայն սիրում էին հաճախ համառոտագրութուններ գործածել, նշ միայն ա ձայնափորը սղում էին բառերի միջից կամ միայն մի շեշտով նշանակում, այլև հնարել էին ամբողջ բառերի համար նշանագրեր, որոնցից մի քանիսը շատ ուշ ժամանակ զեռ շարունակում էին իրենց գոյութունը: Բայց քանի թղթի արդյունաբերութունը զարգացավ, արդ բաները վերացան: Եվ այսօր անընդունելի են հնարի համար շատ սովորական համառոտագրութունները: Համառոտագրութունները գործածվում են այսօր բառարաններում, որոշ գիտական ուսումնասիրութունների և նման զրքերի մեջ, և այն՝ նշ թե թղթի խնայողության համար, այլ աչքի, որպեսզի հիմնական բառը ավելի ցայտուն լինի: Այսպես, օրինակ, երբ բառարանում տեսնում ենք՝

- հաց գ.
- բարի, ած.
- ուտել, բ.

այսինքն «հաց», գոյական, «բարի», ածական, «ուտել», բայ և այլն, դա շատ լավ և ընդունելի ձև է: Բայց երբ, օրինակ, մի հասարակ ուղեգրութուն մեջ կարդում ենք՝

«Դեպի արևմուտք հեռույալ լըրը. Սողանլու լ-ին միացած են Աղմեզրե... և վավուկ լշ-ները: Այս լշ-ները օձապտույտ արգված են» (Արպետ, ձորոխի առաջանը, Վիեննա, 1929, էջ 71):

Մի քիչ հետո՝

«Կուրդ առ. ձախից ընդունում է Ջանգալար առ-ը... Կալա առ-ը, որ իջնում է Կոփ լ-ից» (Անդ, էջ 83):

Սա նշ միայն խանգարում է արագ ընթերցումը, այլև հաճախ ընթերցողը չի էլ հասկանում, թե ինչ է նշանակում լշ-լշ, առ-առ, ձևերը: Քանի հոգի կարող է գուշակել, թե այս լշ նշանակում է լեռնաշղթա, առ՝ առու, իսկ լ երևի՛ լեռ, երբ մանավանդ որևէ տեղ ծանոթագրութվածը նշանակված չէ գրանց բացատրութլունը:

Ցավալի է, որ այսպիսի մի անհեթեթ բան կատարված է Մխիթարյանների պատվական ապարանում, ուր մինչև անգամ և փակագիր գրչութունը գոյութուն չունի:

Հասարակ կյանքի մեջ ընդունված են միայն որոշ համառոտագրութլուններ, որոնց մի համառոտ ցանկը տալիս ենք ստորև.

	Ա		Բ
առ.	— առագ	բշ.	— երկուշարթի
արժ.	— արժանապատիւ	Բ. Գուռ.	— Բարձրագույն գուռ
աշխ.	— աշխարհաբար	բժ.	— բժիշկ
ապր.	— ապրիլ	բն.	— բնակիչ
ազգ.	— ազգային		
արք.	— արքեպիսկոպոս		

	Գ		Դ
Գր.	— Գրիգոր	ղշ.	— չորեքշաբթի
ղշ.	— երեքշաբթի	ղկ.	— գոկտոր
գ.	— գիւղ	ղեկ.	— գեկտեմբեր
գ.	— գետ	ղեկա	
գրծ.	— գործնական		
գրբ.	— գրաբար		
գլ.	— գլուխ		

	Ե		Է
եշ.	— հինգշաբթի	է.	— Աստուած
եպս.	— եպիսկոպոս	էֆ.	— էֆէնդի
եպ.	— եպարքոս		
զօր.	— զօրավար		
եկեղ.	— եկեղեցական		
եղբ.	— եղբայր		
եր.	— երեկոյ		

	Ը		Թ
ընդ.	— ընդարձակ	թգ.	— թագաւոր
ընկ.	— ընկեր	թ.	— թիւ, թուական

ժ. — ժամ

լ. — լեռ

ծ. — ծով

ծ. — ծալրագոյն

ծան. } — ծանօթութիւն

ծանօթ. } — ծանօթութիւն

ծն. — ծնված է

հմ. — համառօտ

հոկ. } — հոկտեմբեր

հոկտ. } — հոկտեմբեր

հ. — հարց

մեծ. — մեծապատիւ

մբտ. — մարտ

մալ. — մալիս

նոլ. — նոյեմբեր

նշ. — նշանակում է

նշ. — նշանաւոր

ուր. — ուրբաթ

ո. — որդի

լըխ. — լըխան

խմբ. — խմբագիր

կեր. — կերակր

կթ. } — կաթողիկոս

կթղ. } — կաթողիկոս

կրոն. — կրոնական

կմ. — կամ

Ձ. — ձեռագիր

ՁՁ. — ձեռագրեր

Յհ. } — Յովհաննէս

Յովհ. } — Յովհաննէս

լնվ. — լուսնվար

լուն. — լուսնիս

լուլ. — լուլիս

շբ. — շաբաթ

շնորհ. — շնորհունակ

պտմ. — պատմութիւն

պատ. — պատուելի

պատ. — պատուական

պատ. — պատրիարք

պր.¹ — պարոն

¹ Հոգնակիւմ գրվում է պր. պր. (պարոններ կամ պարոնայք), ընկ. ընկ. (ընկերներ) և այլն: Միծաղելի է այս ձևերը կարգալ «պարոն պարոն» կամ «ընկեր ընկեր»:

պրնք. — պարոնալք
պետ. — պետական
պրոֆ. — պրոֆեսոր
պատ. — պատասխան

Ստ. — Ստեփան

ս. } — սուրբ

սրբ. } — սրբազան

սլթ. — սուլթան

սեպ(տ). — սեպտեմբեր

Տ. — Տէր

տիկ. — տիկին

տես. — տեսական

փետր. — Փետրվար

օր. — օրիորդ

օդ. } — օգոստոս

Անձնական անունները համառոտագրութիւն ժամանակ պահում են միայն նախատառը. ինչպես՝ Գ. Արծրունի, Հ. Անառյան, Պ. Դուրյան և այլն: Քիչ անգամ պատահում է անունը համառոտելու ժամանակ պահել երկու կամ երեք տառ. ինչպես՝ Գր=Գրիգոր, Ստ.=Ստեփան, Հր=Հրանա, Աշ.=Աշոտ:

Ավելի քիչ դեպքեր կան, երբ անունից պահեն երեք տառ. ինչպես՝ Արշ. = Արշավիր: — Չորս տառով՝ Յովն. = Յովնանես (Հովն. = Հովնանես):

Մեր մեջ սովորական է զնել միայն անուն և ազգանուն, առաջինը համառոտագրութիւմբ, երկրորդը՝ ամբողջութիւմբ: Ռուսա-

կան սովորութիւնը պահանջում է զննել անվան և հայրանվան սկզբնատուները, որին սկսել են հետեւել նաև Կովկասի հայերը: Բայց վաղուց ի վեր արեմտահայոց մեջ էլ սովորութիւն կար զննել ազգանունից առաջ երեք սկզբնատու. այսպէս՝ Ս. Պ. Պ. Փափազեանց (Ստեփան Պերն Պողոս Փափազեանց, Բեռլինի վեհաժողովի հայ պատվիրակութիւնի քարտուղար). Չ. Տ. Ս. Փափազեան (հեղինակ հայ-անգլ. բառարանի, տպ. Պոլիս, 1905):

* * *

Այս գլուխը վերջացնելու համար մնում է մեզ խոսել վերնազրեբի և խորազրեբի մասին:

Ընդհանուր ընդունված սովորութիւն համաձայն, զրքերի խորազրեբը և գլուխների վերնազրեբը միջակեա կամ վերջակեա չեն ստանում. օրինակ.

Քննական
Ֆերականութիւն
աշխարհարար
կամ
Արդի հայերեն լեզուի
հանդերձ
ներածութեամբ և լուսելուածով
յօրինեաց
Հ. Արսէն վ. Ալտընեան
ի Մխիթ. ուխտէն
Վիեննա
Մխիթարեան տպարան
1866. ՌՅԺԵ.

Սրանից 68 տարի հետո, Փարիզում տպուած մի ֆրանսերեն գիտական զրքի խորազրեբը՝ բազմաթիւ տիտղոսներով, բայց և ոչ մի միջակեա կամ վերջակեա.

A. Meillet.
membre de l'institut
professeur au collège de France
Directeur d'études à l'école des hautes études
Introduction à l'étude comparative
des

Langues Indo-Européennes
Septième édition refondue
Librairie Hachette
79, Boulevard Saint-Germain, Paris
1934

Ահա և մի անգլիական հրատարակութիւն Քեմբրիջի համալսարանից, նույնպէս առանց կեանքի.

Memorial edition
Greek lexicon
of the
Roman and Byzantine
Periods
(From B. C. 146 to A. D. 1100)
By E. A. Sophocles
Late University Professor of Ancient, Byzantine, and Modern
Greek
in Harvard University
Cambridge
Harvard University Press
London: Humphrey Milford
Oxford University Press
1914

Բոլորի մեջ էլ կետեր միայն կան համառոտագրութիւնների համար և բառերի ներքին բաժանման համար:

Գերմանացիք սակայն սիրում են զննել զրքերի խորազրեբ տեղ-տեղ կետեր (որ նրանց վերջակեան է).

Armenische
Grammatik
von
H. Hübschmann.
I. Theil.
Armenische Etymologie.
Leipzig

Druck und Verlag von Breitkopf u. Härtel.
1897.

Գլուխների վերնազրեբը նույնպէս պետք չունեն կետագրութիւն. բայց այստեղ սկսվում է կամայականութիւնը: Օրինակ, Մե-

լի վերոգրյալ աշխատութեան մեջ, գլուխների խոշոր վերնագրերը կետ չունեն, իսկ մանր վերնագրերը ունեն: Այսպես, էջ 82՝

Chapitre III

Phonétique

I.—Les Phonèmes.

1. Occlusives et sifflantes

Occlusives.

Այս կետում էլ գերմանացիք կետադրութունը հասցրել են ծայրահեղութեան:

Մեզ համար ավելի կարևոր է վերնագրերի և խորագրերի բառերի խմբավորման և անջատման հարցը: Բառերը պետք է դասավորել այնպես, որ յուրաքանչյուր տող կազմի մի միութուն և հաջորդ տողի հետ անմիջական կապ չունենա: Հակառակը շատ անախորժ է և կարող է նույնիսկ սխալ իմաստ տալ: Օրինակ, 1884 թվականին Թիֆլիսում տպված մի գրքի խորագիրն է՝

Փայտաշէն խրճիթից

մինչև

Սպիտակ առևը

Այս դասավորութունը շատ ճիշտ է, ինչպես նաև նախկին վերնագրերի և խորագրերի դասավորութունը: Այժմ մեզ մոտ սակայն ուշագիւր չեն լինում այս կետին. օրինակ, 1937 թվականին Երևանում տպված մի գրքի խորագիրն է՝

Գ. Հովնան

Կյանքը փակ

նամակներում

Այս դասավորութունը շատ անճիշտ է. փակ բառը պատկանում է նամակներին, ուստի անկարելի է բաժանել նրանից և կցել կյանքին. ճիշտը պիտի լիներ՝

Կյանքը

փակ նամակներում

Դնելով ներկա ձևով, կարելի է կարծել, թե կյանքն է փակ, որ գտնվում է նամակներում:

«Սովետական Հայաստան» թերթում, Երևան, 1945 թ., № 146, հուլիս 21, էջ 4, սլունակ 4—5՝

Օտարերկրյա թղթակիցները Հունաստանում

տիրող գրութեան մասին

Հասկացվում է, որ Հունաստանում գտնված օտար թղթակիցները խոսում են տիրող գրութեան մասին: Բայց գրողի նպատակը այդ չէ, այլ

Օտարերկրյա թղթակիցները

Հունաստանում տիրող գրութեան մասին

Ուրիշ օրինակներ.

Հալֆիլհարմոնիայի արտիստները բերքահավաքի օրերին

(Սովետական Հայաստան, 1945, հուլիս 25, էջ 1)

ՍՍՀՄ մեծ թատրոնի մենապարուհի Սուլամիֆ

Մեսսերերը Երևանում

(Անդ)

Բամբակի դաշտերը լավ

բերք են խոստանում

(Անդ, հուլիս 28, էջ 3)

Գյուղտուկախի նախագահ, թե հրշեջ

խմբի պետ

(Անդ, օգոստոսի 1, էջ բ)

Հանքահատ Կոխանովի աչքի

ընկնող հաշոգութունը

(Անդ, 1947, դեկտեմբեր 9,

№ 286, էջ ա, սլունակ 6-րդ)

Մրցանակները հաղթող

հրձիգներին

(Անդ, 1950 թ., 25 օգոստոսի, № 201)

Սովետական մարզիկ անձնվիրաբար աշխատում են ի

բարօրութուն հայրենիքի

(Անդ, 1950 թ. օգոստոսի 26,

№ 202, էջ ա):

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԳ

ՉԱՅՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ՉԱՅՆԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՉԱՅՆԱԿԱՆ ՕՐԵՆԻՔ

Երբ մի լեզվի երկու հաջորդական շրջաններ (հին և նոր) համեմատենք իրար հետ, շատ անգամ տեսնում ենք, որ միևնույն բառի այս կամ այն հնչյունը փոխանակված է մի ուրիշով. այսպես՝ հին հայերենի երբ, արտասուք բառերը հիմա հնչում ենք յերփ, արցունք, որոնց մեջ ե դարձած է յի, բ դարձած փ, ա ջնջված, և ավելացված, աս դարձաց ց: Նույնը կգտնենք նաև, երբ միևնույն լեզվի երկու ժամանակակից բարբառներ համեմատենք իրար հետ. օրինակ՝ հաց և Վանի բարբառով խաց, որի մեջ և դարձել է խ:

Այսպիսի տարբերությունները կոչվում են ձայնական փոփոխություններ կամ մեկ բառով՝ ձայնափոխություններ: Սրանք են, որ դարերի ընթացքում գործելով զանազան երկրների մեջ ու զանազան լեզուների վրա, առաջացրել են լեզուների մեջ այնպիսի փոփոխություններ, որ իսպառ անճանաչելի են դարձրել:

Ձայնափոխությունները բաժանվում են երեք տեսակի. 1. առաջատվական, 2. անմիջական, 3. նմանողական: Առաջատվական ձայնափոխությունները արդյունք են բաղմամթիվ աննկատելի հաջորդական փոփոխությունների, որոնք դարեր ամբողջ գործելուց հետո, հասել են մի որեէ վախճանական ձևի (վախճանական անշուշտ սրված լուպեում, որովհետև լեզվի բարեշրջություն մեջ ոչինչ չկա վախճանական և նույն ձևափոխությունները պիտի շարունակեն իրենց ընթացքը ապագային էլ): Այսպես, երբ լատիներեն centum > ֆրանսերեն cent բառի մեջ k հնչյունը դարձել է s, անցել է գոնե

հետևյալ շրջաններից. $k > ky > ty > tsy > ts > s$: նույնպես երբ լատիներեն *cantare* ֆրանսերեն *chanter* բառի մեջ $k > k̄ > t̄ > t̄ > s̄$:
ձև է ξ , անցել է հետևյալ շրջաններից. $k > ky > ty > \check{y} > \check{c} > \xi$:

Անմիջական փոփոխությունները այսպիսի հաջորդական շարժաններ չունեն և փոխանցումը կատարվում է անմիջապես ու բուսական: Մտավոր զուգորդությունները հանկարծական, անմիջական են: Այսպես, երբ ուսուցիչ բառը արտասանում են ուշուշիչ, ուսուշիչ, կամ ուշուշիչ, փոփոխությունը վայրենական է և նախնական դարերի պատրաստություն ենթադրելու պետք չկա: Այսպես և՛ երբ գրաբար աչից դարձել է Վանի բարբառում աչիչ, չկամեղանդում մի ուրիշ ձև. մարդիկ գործ են անել կրթման մի ձևը, կրթման մյուս ձևը, մինչև որ ժամանակը ընդհանրացրել է աչիչ ձևը:

Նույն կարգին են պատկանում նաև նմանողական ձայնափոխությունները, որոնք առաջանում են իմաստով իրար հետ կապակցություն (անալոգիա) ունեցող երկու տարբեր բառերի շփոթմամբ: Այսպես՝ արծաթ և երկաթ. երկուսն էլ մետաղներ են և երկուսն էլ ձևով որոշ նմանություն ունեն: Վարարողի բարբառում այդ նմանությունը ավելի մեծ է, քանի որ հնչվում են արծաթ, արկաթ: Նրանք, որ սովորում են գրական լեզուն, արկաթ ձևը դարձնում են երկաթ, բայց նախաձայնը շփոթելով, երկրորդն էլ դարձնում են երծաթ: Բուլանըլի գավառականով ունենք նախըրթող «նախիրը տուն տանելու ժամանակը», որի նմանությամբ հորթըրթող «հորթերը տուն տանելու ժամանակը», այլուր՝ հորթարթող:

Այս կարգի ձայնափոխություններ ավելի սովորական են քերականության մեջ. օրինակ՝ հին հայերեն այր բառի հոգնակի սեռականն է արանց, որի մեջ ն բանավոր է, քանի որ պատկանում է արան բունին (հմմտ. գրծ. արամբ, սեռ. առն). կին բառի հոգնակի սեռական ձևն է կանաց, որ գործածական է նաև եղնիկի մեջ. բայց ավելի սովորական է կանանց, որի մեջ ն ավելորդ է և առաջացել է արանց բառի նմանողությամբ. արանց և կանանց դարձվածի հաճախակի գործածությունը պատճառ է դարձել այս ձայնափոխության:

Առաջատվական, անմիջական և նմանողական ձայնափոխությունների զանազանությունը կախնում է հետևյալ հանգամանքների մեջ.

ա. Առաջատվական ձայնափոխությունները արդյունք են դարերի պատրաստության տեղական աշխատանքի, մինչդեռ մյուսները բովանդակի արդյունք են, ինչպես ստացինք:

բ. Առաջատվական ձայնափոխություններն առաջանում են ձայնական գործարանների գործունեության փոփոխությամբ և իրեն բնության գործ, բոլորովին անկախ են մարդկային կամքից. իսկ անմիջական և նմանողական ձայնափոխությունները առաջանում են հոգեբանական պատճառներից և մյուսների համեմատությամբ կարող են կոչվել լեզվի սխալներ (*lapsus linguae*):

գ. Առաջատվական ձայնափոխությունները լեզվի մեջ ընդհանուր երևույթներ են, որոնց հպատակվում են լեզվի միևնույն շարժանի բոլոր բառերը առանց բացառության, իսկ անմիջական և նմանողական ձայնափոխությունները պատահական բնույթ ունեն կամ մասնակի դեպքեր են, որոնց հպատակվում են այս կամ այն բառերը միայն: Առաջինները բխում են մեկ ընդհանուր օրենքից, մյուսները չունեն այսպիսի օրենք և արդյունքը լինում է զանազան կամ բնավ. լատիներեն *venenum* «թույն» տալիս է ֆրանսերեն *venin*, իտալերեն *veleno*, պորտուգալերեն *veren*:

դ. Անմիջական և նմանողական ձայնափոխությունները լեզվի ձայնական գրություն մեջ որևէ փոփոխություն չեն մտցնում. մի ձայն կորչում է կամ ավելանում, և կամ փոխանակվում է մի ուրիշով, բայց այդ բոլորը կատարվում են լեզվի արդեն ունեցած ձայների միջև և ոչ մի նոր ձայն չի պակասում կամ չի ավելանում լեզվի մեջ, ընդհակառակը, առաջատվական ձայնափոխությունների ժամանակ հենց ձայներն իրենք են փոխվում և վերածվում ուրիշ ձայների, որոնցից ոմանք նախորդների նորը զանազանություններն են թերևս, բայց ոմանք էլ բոլորովին նոր ձայներ են, որոնք կամաց-կամաց ձևանում են լեզվի մեջ. այսպես՝ գրաբար *հալք*, Ալեքսանդր զառնալով *հաֆք*, Ալեքսանդր, առաջ է բերել *ֆ*, դ ձայները, որ առաջ գոյություն չունեին լեզվի մեջ:

Եթե ի մի հավաքենք վերոհիշյալ բոլոր տեսակի ձայնափոխությունները, կտեսնենք, որ դրանք պատկանում են ձայնի երանգին: Բայց մենք տեսանք, որ ձայնի բարձրությունը, ուժգնությունը և տևողությունը նմանապես անփոփոխ չեն մնում, այլ ժամանակի ընթացքում կրում են զանազան փոփոխություններ: Ուրեմն ձայնափոխությունները վերաբերում են ձայնի բոլոր չորս հատկությանը: Եվ հաճախ շեշտն ու տևողությունը ավելի մեծ զանազանություն ունեն և իրենք են, որ որոշում են երանգի փոփոխությունը:

Եթե վերլուծենք այս բոլոր տեսակի փոփոխությունները ըստ իրենց էություն, կտեսնենք, որ նրանք լինում են.

1. ըստ տեղի. այն է հոգավորման կետի փոփոխությունը. օրինակ, հետալեզվալին մի ձայն զառնում է ծալալեզվալին

($k > i$). — կամ արտադրիչ գործարանների սեղմումը, որով օրինակ պայթեցողի անցում է շփականի ($p > f$), և կամ այս երկու երևույթները միասին, ինչպես $k > s$:

2. ըստ ժամանակի. ձայնի արտաբերության համար արված շարժումը ավելի ուշ կամ ավելի շուտ է սկսում. կամ վերջանում. բոլոր տեսակի ասիմիլյացիաները պատկանում են այս կարգին: Եվ կամ թե շարժումների տեղումը է ձեռնարկում, առանց սինթրոնիզմը ալլայելու. այս կարգին են պատկանում տեղումից փոփոխությունները, երկարում կամ սղում:

3. ըստ ուժի, այն է մկանային կծկման ուժի փոփոխությունը. այս կարգին են պատկանում բարձրության և ուժգնության փոփոխությունները:

Ավելորդ է ասել, թե որևէ ձայնափոխություն կարող է պատկանել միաժամանակ սրանցից մի երկուսին:



Ձայնափոխությունները կարող են լինել անկախ (indépendant, spontané) կամ պայմանական (conditionné): Իսկապես խոսելով անկախ ձայնափոխություն չկա, որովհետև ամեն մի ձայն պետք է որ լինի շեշտված կամ անշեշտ, բառի սկզբում, միջում կամ վերջում, երկար կամ կարճ, թրթռուն կամ խուլ, առանձին կամ երկու ձայնավորի միջև, և այլն և այլն, և այս բոլորը պայմաններ են, որոնցից էլ կախված է ձայնի այս կամ այն փոփոխությունը: Ուստի հաճախ լեզվաբանները սահմանափակելով բառի իմաստը, պայմանական ասելով հասկանում են, երբ ձայնափոխությունը կատարվում է հաջորդ կամ նախորդ ձայների ազդեցությամբ, որի հակառակը լինում է անկախ:

Այս բոլոր ձայնափոխությունները, որոնք օրինակներով հաստատված և փորձնական ճանապարհով ճշտված են, կոչվում են ձայնական օրենք (loiphonétique):

Լեզվաբանությունը ձայնական օրենքների դիտությունն է:

Ձայնական օրենքներն ինքնին ապացույց չունեն. նրանք նման չեն ոչ երկրաչափության օրենքներին, ոչ էլ Ֆիզիկայի կամ քիմիայի օրենքներին: Երկրաչափության մեջ տեսությունները հավիտենական ճշմարտություններ են, ամենուրեք նույնն են և դուրսով ապացուցելի: Օրինակ, եռանկյան 3 անկյունների գումարը հավասար է 2 ուղիղ անկյան, որ է 180° և այս այսպես է ամբողջ տիեզերքում, աստղերի, լուսնի կամ արեգակի վրա: Եվ այդ ապացուցելու համար բավական է խարսխի ուղիղ գիծը երկարել և անկյան ոտքից եռանկյան մի կողմն մի գուգահեռական քաշել: Նոր կազմը

ված 2 անկյունները իրեն խաչողի հավասար են նախորդ երկու անկյուններին, որով մի ուղիղ գծի վրա ունենում ենք 180° , որ է 2 ուղիղ անկյուն:



Ֆիզիկոսն ու քիմիկոսը կարող են քաշվել իրենց աշխատանքը (չարորատորիա) և արևոկ, իրենց գործիքների վրա, պետք եղած փորձերը կատարել: Քիմիկոսը կարող է իր փորձանակին (épreuve) դնել երկու ջրածին և մի թթվածին և նրանց միացումից ստանալ ջուրը:

Բայց լեզվական օրենքները ոչ այսպիսի ապացույցներ ունեն և ոչ էլ այս կարգի փորձեր: Այստեղ մեր ապացույցներն են փաստերի գումարը: Երբ ասում ենք թե հայերենում հնգվորոպական նախալեզվի նախաձայնը p տալիս է հ, օրինակ՝ pater > հայր, այդ հաստատվում է նրանով, որ դրա համար ունենք շուրջ 30 օրինակ: Եվ մանավանդ չունենք օրինակ, որ արել ըստ ցույց տա:

Մեր երկրորդ ապացույցը ձայնական օրենքների գոյության, ինչպես և նրանց ճշտության և հաստատության՝ բարբառներն են: Բոլոր բարբառները միատեսակ չեն, բայց ունեն իրենց հատուկ և իրենց մեջ հաստատուն ու միօրինակ ձայնական օրենքներ:

Օրինակ առնենք Վանի բարբառը:

Այստեղ օրենք է, որ հ գառնա խ. օրինակ՝ հաց > խաց, և այդ այդպես է լեզվի բոլոր բառերի համար:

Լեզվաբանությունն ոչ մասնապես մարդիկ ծագրով կամ ծիծաղով են վերաբերվում մեզ, երբ ասում ենք, թե p գառնում է հ, օ գառնում է ու, օ գառնում է ի և այլն, մանավանդ (ինչ որ միշտ պատահում է), երբ միևնույն բառի մեջ մի քանի օրենքներ թվում ենք իրար ետևից, բայց այդ հայտնի կերպով տեսնում ենք ամեն բոլոր, երբ քննության առնենք որևէ բարբառ:

Դարձյալ օրինակ առնենք Վանի բարբառից մի բառ:

Գրաբար հիլևն գառնում է Վանի բարբառում խուս:—Սա հոանհակառակելի ճշմարտություն է:

Եթե այս, ուրեմն գրաբար հ գառնում է խ, իւ գառնում է ու բառավերջի և հանգը ընկնում կամ կորչում է:

Ահա մի փոքրիկ բառ, որ բաղկացած է 4 ձայնից և ունի 3 ձայնական օրենք, միայն և մնում է անփոփոխ, բայց դա էլ կադմում է իրեն հատուկ մի օրենք, որովհետև անփոփոխ մնալն էլ օրենք է:

Չորս ձայնական օրենքն էլ կարելի է հաստատել բազմաթիվ այլ օրինակներով, որ ներկայացնում է նույն բարբառը:

Հ>>Խ ձայնափոխությունը արդեն տեսանք. ժողովրդի մեջ տարածված է կատակով տակ:

Իմ խօր խարսնիսին խինգ խավ խատավ «Իմ հոր հարսանիքին հինգ հավ սաակից», որ ցույց է տալիս, թե ժողովուրդն էլ զիտի խ-ով խոսելու այս հատկությունը:

Այսինքն իր «Քննական քերականություն» մեջ պատմում է, թե Ավստրիայի կայսրը Վենետիկում ցանկացել էր տեսնել շուգալեցի հայ վաճառականներին: Կանչում են երկու հայ կայսրը խընդրում է, որ նրանք խոսեն իրենց լեզվով: Ջուղայեցին ասում է իր ընկերոջ.

Սոջա Խաչո, խլոնքլար խրամեց խախրեն խոսանք:

Մի նախադասություն, ուր բոլոր բառերը սկսվում են խ ձայնով, որ 3 բառի մեջ բնական է, 3 բառի մեջ ծագում է ն-ից:

Խ>ու ձայնափոխություն համար Վանի բարբառից կարող ենք հիշել, իբր օրինակ՝

արիւն>արուն, հերիւն>խիրուն, սիւն>սուն, շիւղ>շուղ, հիւր>խոր և այլն:

Ձայնական օրենքների մեջ ինչ որ ամենից կարևոր է, դա է նրանց բացարձակություներ և համաչափություներ: Միևնույն հասարակության մեջ, միևնույն ձայնը, միևնույն դիրքի մեջ, առանց բացառության, ենթարկվում է միշտ միևնույն ձայնափոխության: Այսպես, եթե Ղարաբաղի բարբառում հայերեն բառերի սկզբում գտնված բ ձայնը դառնում է պ, այդպես են լինում բոլոր բառերը, առանց բացառության:

Այս է ձայնական օրենքների բացարձակությունը:

Մրա պատճառն այն է, որ նույն շրջանի բոլոր մարդկանց մոտ գտնվելով նույն պայմանների մեջ, հավասարապես պիտի ենթարկվին նույն ձևափոխության և նույն շրջանի բոլոր մանակներն էլ պիտի սովորեն նույն ձևով: Մրա հետևանքն այն է, որ միևնույն ձայնից չի կարող առաջանալ երկու տարբեր բան, միևնույն ձայնը չի կարող ենթարկվել երկու տարբեր ձայնափոխության:

Երե մի որևիցե ձայն ենթարկվում է որոշ ձայնական օրենքի, նույն միջոցին, նույն ձայնին համազիր նույն ձայներն էլ պիտի ենթարկվեն նման ձայնական օրենքներին: Այսպես, եթե Ղարաբաղում հայերեն բառերի նախածայն բ-ն դարձել է պ, որովհետև բ պատկանում է թրթռուն պայթուցիկների կարգին, ուստի բոլոր թրթռուն պայթուցիկներն էլ պիտի կրեն նման փոփոխություն, այն է զ պիտի դառնա կ, դ>տ, ւ>ձ, շ>ն:

Այս է ձայնական օրենքների համապատասխանությունը:

Մրա պատճառն այն է, որ եթե ձայնի արտադրիչ գործարարը փոխված է, փոխված պիտի լինի և ամբողջ նրա գործունեությունը սխառմը և ոչ թե այդ գործունեության այս կամ այն մասը միայն:

Ձայնական օրենքների բացարձակության, կամ ինչպես խիստ բառով ասում են լեզվաբանները, նրանց կարևորության սպացույց է այն, որ օրենքը գործում է նախնական հակառակ հանգամանքներում. օրինակ, հայերենի պազ, պահք և պուկ բառերը ձայնական օրենքների ազդեցությամբ Սվեդիայի (Մուսա լեռան) բարբառում հավասարապես դառնում են բիւք (բլուք), այնպես որ Սվեդիայի բարբառում բիւք նշանակում է «1. համբուլ, 2. պահք, պաս, 3. սոխի ծիլ կամ գոխ»: Անպատեհ երևույթ է անշուշտ այն, որ մի լեզվի մեջ միևնույն բառը երեք այսքան տարբեր իմաստներ տեսնա. բայց ձայնական օրենքները բացարձակ են և կույր, և կարիք չի զգացվել այդ անպատեհությունը վերացնելու համար ձայնական օրենքները եղծել:

Ավելի տարօրինակ է այն երևույթը, երբ բառերն ստանում են բոլորովին տարբեր իմաստ:

Որովհետև բարբառներում այ գտնում է Է, ուստի վայր գտնում է վեր «ցած, վար», բայց, այսպիսով վեր շփոթվում է վեր բառի հետ, որ բոլորովին հակառակ իմաստ ունի: Արեւմտյան հայր ծիծաղով է լսում երեանցու խոսակցությունը՝ բարբ վեր ընկավ, որ հասկանում է «զեպի վեր՝ ընկավ»: Սակայն ձայնական օրենքը կույր է. նա չի ազդում այդպիսի դժվարություններից կամ անպատեհություններից և ավելի լավ է համարում վերացնել խանգարիչ հանգամանքը, քան շեղվել օրենքից: Այսպես, վերի դեպքում երեանցին վեր ասելու փոխարեն ասում է վերի (նմանողությամբ ներքև բառի) և ամեն ինչ հարթվում է: Ղարաբաղի բարբառում ու գտնում է օ, ուստի շուք լինում է շօք «տավեր, հով տեղ», բայց այսպիսով բառը նախանում է շոգ «տաք» բառի հետ, որ բոլորու-

վին հակառակն է: Այլ պարագային բարբառը ավելի լավ է համարել ջնջել շոգ խանգարիչ բառը և իր ձայնական օրենքը պահել է անաղարտ:

Ջելթունի բարբառում ջնջված է մեր ամենասովորական հայր բառը և նրա տեղ զբված է պապ > բոբ կամ նույնիսկ թուրքերեն դեղե բառը: Ինչու:—Ջելթունի բարբառի ձայնական օրենքներով այ գտնում է ու, իսկ ր գտնում է յ. ըստ այսմ հայր պիտի տար Ջելթունի բարբառով *հոյ. բայց այս ձևի տակ բառը նշանակում է հայ (ազգը). օրինակ՝ ես հայր եմ և ես հայ եմ երկու դեպքում էլ պիտի լինեին իս հոյ իմ: Այս շփոթությունից ազատվելու համար բարբառը ի՞նչ է արել. ջնջել է կամ փոխել ձայնական օրենքը. ոչ. ջնջել է հայր բառը և նրա տեղը զբել է պապ կամ թուրքերեն դեղե, քանի որ անհնարին էր ջնջել հայ ազգային անունը:

Ավելի դարձանալի է Սվեդիայի բարբառը. այս բարբառում ա գտնում է ու. ինչպես հաց > հուց, մարգ > մուռդ. ըստ այսմ բաց «ouvert, բացված, ոչ փակ» բառն էլ գտնում է բուց. բայց որովհետև անպատշաճ էր այդպիսի մի բառ գործածել սովորական լեզվի մեջ, ուստի անպատեհությունը վերացնելու համար համանուն «vulva» բառը հանեցին լեզվից և նրա տեղ զբին վրա բառը, որի իմաստն էլ փոխեցին և զբին «իգական անդամ». բայց այս անգամ էլ զբված եղան ու բառից, ուստի պակասը լրացնելու համար՝ զբին իզիվ «հետույք, նստատեղի», բայց այս անգամ էլ զբվեցին ետև նախադրությունից, ուստի սրա տեղն էլ զբին իզբ դեն «լետի դին»: Այսպես է հայերեն բառ քանդվեց կամ փոխվեց՝ ձայնական օրենքը անշարժ պահելու համար:

Իրավիզյան լեզուների մեջ բացասական նշանն է a, որ միանալով արմատի վերջին ձայնավորի հետ գտնում է ä. բայց հաստատականի ձևն էլ է ä, որով հաստատական և բացասական բոլորովին նույնանում են իրար հետ. օրինակ՝ rāka «գալուստ, a coming» նույն է rāka «չգալը, առանց գալու, not or without coming» բառի հետ, և լեզուն տանում է այս բացարձակ հակասությունը՝ չչեղվելու համար ձայնական կույր օրենքներից (Coldwell, Comp. gram. drav, 473):

Այս բոլորից հետևում է, որ ձայնական օրենքը անկախ է բառի իմաստից:

Հին լեզուներից նոր լեզուներին և նոր լեզուներից բարբառներին անցնելու ժամանակ չափազանց շատ են այն դեպքերը, երբ ձայնական օրենքներն ստեղծում են այնպիսի անկանոնություններ,

որոնց հետ որամարանությունը երբեք չպիտի հաշտվեր: Օրենքները մեր շրջապատից առնելու համար հիշենք Ագուլիսի, Ջելթունի և Սվեդիայի բարբառները: Ըստ ձայնական օրենքների, վերջավանկի ա ձայնը գտնում է առաջին երկուսի մեջ o, վերջինի մեջ ու. այսպես՝ հաց Ագուլիսի և Ջելթունի բարբառում՝ հոց, Սվեդիայի բարբառում՝ հուց: Բայց եթե ա ձայնը վերջին վանկում չէ, մնում է անփոփոխ. ըստ այսմ միևնույն բառերը սեռական հոլովում տալիս են Ագուլիսի բարբառում հացի, Ջելթունի բարբառում՝ հացը՝, Սվեդիայի բարբառում՝ հացէն, հացը՝: Տրամարանության համար բացարձակապես անմիտ և անկանոն է ունենալ ուղղական հոց, սեռական հացի, բայց ձայնական օրենքները կույր են և գործադրվում են ճշտիվ ուր որ պետք են:

Մրանցից տարբեր չեն նաև զբարբառի սղման և ամփոփման օրենքները, որով մի կողմից ունենք ուղղական ջուր, լոյս, քիթ, սենեակ, մյուս կողմից սեռական ջրոյ, լուսոյ, քթի, սենեկի և այլն:

Այն լեզուների մեջ, ուր բառի վերջին վանկերն ու վերջին բաղաձայնները ջնջվում են, բնականաբար շուտով առաջանում են միավանկ բառեր, որոնք ստանում են իրար նման ձևեր. այսպես են, օրինակ, ֆրանսերենը, անգլերենը, քրդերենը: Օրինակ, ֆրանսերեն san ձայնը նշանակում է «հարյուր» (cent, լատ. centum), «արլուն» (sang լատ. san. guis), «առանց» (sans), «իմաստ, նշանակություն» (sens լատ. sensus), կամ ver ձայնը նշանակում է «որդ» (ver), «կանաչ» (vert լատ. viridis), «դեպի» (vers), «բաժակ, ապակի» (verre—լատ. vitrum) և այլն: Սա անշուշտ լեզվի համար շատ անախորժ մի երևույթ է և պատճառ շփոթություն, բայց ձայնական օրենքն իր բացարձակությամբ չի խրոչում սրանից և շարունակում է իր գործը:

Երբ բառերը կրճատվելով-կրճատվելով այնքան փոքրանան, որ այլևս կորչելու վտանգին ենթարկվեն, ձայնական օրենքը նորից չի փոխում իր ընթացքը. լեզուն գտնում է միջոց վտանգը դարձանելու. ավելացնում է նրանց վրա նոր մասնիկներ, որով միավանկները նորից երկարում են և կորչելու կամ անտեսանելի դառնալու վտանգից ազատվում են:

Սակայն երբ ասում ենք, թե օրենքը բացարձակ է և չունի բացառություն, պետք է ճշտել նաև օրենքի բոլոր պայմանները: Այսպես, բավական չէ ասել միայն, թե հնդեվրոպական նախալեզվի e-ն հայերենի մեջ գտնում է ե, որովհետև նույն ձայնը եթե

գտնվի ռնդականից առաջ, այն ժամանակ գառնում է ի: Բավական չէ ասել, թե գրաբարի դ-ն գառնում է նոր բարբառների մեջ ա, որովհետև ր-ից հետո գառնում է միշտ ք: Բավական չէ ասել միայն, թե հայերենի ա-ն գառնում է զոկերենում օ, որովհետև եթե ա ձայնը գտնվի վերջին վանկից առաջ, ռնդականի և լ կամ ղ ձայների մոտ, այդ փոփոխության չի ենթարկվում:

Վերի օրինակների մեջ երկրորդ օրենքը առերևույթն առաջինին հակառակ է, բայց իրապես ոչ, որովհետև ինքն առանձին կազմում է մի նոր օրենք: Նրանք, որոնք չէին կարողանում ճշտել այս երկրորդական օրենքները և գիտեին միայն առաջինները, համարում էին, թե երկրորդ կարգի բառերը առաջինների բացառություններն են, և սրանից էլ այն ոչ գիտական բացատրությունը, թե «չկա օրենք առանց բացառության»: Արդի լեզվաբանությունը չի ընդունում օրենք հանդերձ բացառությամբ, որովհետև «ուր որ բացառություն կա, այնտեղ օրենք չկա, այլ քմահաճույք»: «Ընդունել կամայական և պատահական շեղումներ, որոնք կարելի չէ համակարգել, նշանակում է էապես, թե ուսումնասիրության առարկան, այն է լեզուն, դիտության մատչելի չէ» (Leskien, 1876): «Ամեն ձայնական փոփոխություն, իբրև մեքենաբար առաջացած բան, կատարվում է համաձայն օրենքների՝ առանց բացառության, այսինքն թե ձայնափոխության ուղղությունը միշտ միևնույնն է՝ միևնույն լեզվական հասարակության բոլոր անդամների մեջ» (Osthoff և Brugmann, 1878): Իսկ եթե գտնվեն իրոք այնպիսի ձևեր, որոնք համապատասխան չեն մեր ունեցած օրենքին, պետք է իմանանք, որ օրենքը լրիվ չէ, և գտնվում ենք մենք մի այնպիսի երկրորդական, երրորդական կամ չորրորդական օրենքի առաջ, որ մեզ դեռ ծանոթ չէ: Մեր ծանոթ չլինելը մի առարկայի կամ մի երևույթի, այլևի ևս մի օրենքի, չի նշանակում, թե նա չկա: Հայի նահապետը ռադիոլի ինչ լինելը չգիտեր. մենք էլ նրանից 4 000 տարի հետո ճանաչեցինք:

Այսպես, օրինակ, Հաճինի ենթաբարբառում ր գառնում է յ. բացառություն է միայն պախրէ > քախրէ: «եզ» բառը: Մակայն բացառությունը կվերանա, եթե նկատի առնենք նաև Զեյթունի ենթաբարբառը, որ նույն բառը հնչվում է քախրէ: Սրանից հետևում է, որ Կիլիկիայի բարբառում այդ բառի ձևն էր պախրէ և որովհետև Հաճինում ա գառնում է ր, ուստի պախրէ ձևն էլ պիտի տարբերվի:

Դարձյալ Հաճինի ենթաբարբառում հայերենի դ-ն գառնում է դ՛ և ոչ բնավ ր. բացառություն է միայն բուռնչ. սակայն բացառությունը կվերանա, երբ նկատենք, որ բառն ազգլած է բուռնչ և նրա նմանությունը դ՛ վերածած ք-ի:

Այս օրինակներից երկուսն է, որ օրենքն արձանագրելու ժամանակ պետք է ճշտել նրա բոլոր պայմանները և հիմնական օրենքի հետ պետք է գտնել ու դնել նաև մյուս երկրորդական օրենքները: Այսպես, Ագուլիսի բարբառի մեջ ա > օ ձայնափոխության համար պետք է ասել, որ «եթե ա ձայնավորը շեշտյալ է և բառի վերջին վանկն է կազմում, գառնում է օ, միայն թե ռնդականի մոտ լինում է ա, լ ձայնի մոտ օյ, իսկ դ-ից առաջ անփոփոխ է մնում» և այլն:

Կարող է պատահել, որ երկրորդական օրենքները մի բառի մեջ մի քանիսը լինեն կամ լինի ձայների մի այնպիսի համախմբություն, որ ուրիշ դեպքում կարելի չէր ճարել. այս պարագային օրինակը կլինի միակ և կարելի չի լինի ճշտել օրենքը զանազան օրինակներով: Բայց պետք չէ ասել այս պատճառով, թե նա օրենքի բացառությունն է: Օրինակը տես մի քիչ հետո:

«Շատ պիտի սխալվեինք անշուշտ, եթե փորձեինք բացարձակ կանոններ գտնել լատիներեն բառերի ներկայացրած այն աստիճանի բարդ ձայնական բոլոր դեպքերի համար: Կան մասնավոր պարագաներ, որոնց մեջ այնքան տարբեր պայմաններ են միացած լինում, որ այդ պայմանների տակ միայն մի բառ կարելի է գտնել» (Meillet, BSL, 19 (1916), № 63, էջ 184):

Այս բոլորից հետևում է, որ ձայնական օրենքները անկախ չեն, այլ կապված որոշ հանդամանքների հետ, և առանց այդ հանդամանքների պարզաբանություն, օրենքը ճշտված չէ:

Ձայնական օրենքների քննության ժամանակ պետք է մի կողմ դնել այնպիսի ձայնափոխությունները, որոնք բնախոսականից այլևի հոգեբանական են և կամ կամավոր և անհատական գործունեության արդյունք: Այս կարգին են պատկանում գիտնականների ձեռքով կազմված նորակերտ բառերը, օտար լեզուներից վերցրած փոխառությունները, կամայական սղումներն ու կրճատումները, նմանողություններ կամ ժողովրդական ստադաբանություններ առաջացած բառերը, վերջապես գրություն նմանությունից առաջացած սխալ ձևերը, որոնք թյուրիմացություններ մտել են լեզվի մեջ: Սրանք պետք է ուսումնասիրենք առանձին գլխով:

գտնվի ռնգականից առաջ, այն ժամանակ դառնում է ի: Բավական չէ ասել, թե գրաբարի դ-ն դառնում է նոր բարբառների մեջ ա, որովհետև ր-ից հետո դառնում է միշտ ք: Բավական չէ ասել միայն, թե հայերենի ա-ն դառնում է զոկերենում օ, որովհետև եթե ա ձայնը գտնվի վերջին վանկից առաջ, ռնգականի և լ կամ ղ ձայների մոտ, այդ փոփոխությունն չի ենթարկվում:

Վերի օրինակների մեջ երկրորդ օրենքը առերևույթ առաջինին հակառակ է, բայց իրապես ոչ, որովհետև ինքն առանձին կազմում է մի նոր օրենք: Նրանք, որոնք չէին կարողանում ճշտակալապես երկրորդական օրենքները և գիտեին միայն առաջինները, համարում էին, թե երկրորդ կարգի բառերը առաջինների բացառություններն են, և սրանից էլ այն ոչ գիտական բացատրությունը, թե «չկա օրենք առանց բացառության»: Արդի լեզվաբանությունը չի ընդունում օրենք հանդերձ բացառությամբ, որովհետև «ուր որ բացառություն կա, այնտեղ օրենք չկա, այլ քմահաճույք»: «Ընդունել կամայական և պատահական շեղումներ, որոնք կարելի չէ համակարգել, նշանակում է էսպես, թե ուսումնասիրության առարկան, այն է լեզուն, գիտության մատչելի չէ» (Leskien, 1876): «Ամեն ձայնական փոփոխություն, իբրև մեքենաբար առաջացած բան, կատարվում է համաձայն օրենքների՝ առանց բացառության, այսինքն թե ձայնափոխության ուղղությունը միշտ միևնույնն է՝ միևնույն լեզվական հասարակության բոլոր անդամների մեջ» (Osthoff և Brugmann, 1878): Իսկ եթե գտնվեն իրօք այնպիսի ձևեր, որոնք համապատասխան չեն մեր ունեցած օրենքին, պետք է իմանանք, որ օրենքը լրիվ չէ, և գտնվում ենք մենք մի այնպիսի երկրորդական, երրորդական կամ չորրորդական օրենքի առաջ, որ մեզ դեռ ծանոթ չէ: Մեր ծանոթ չլինելը մի առարկայի կամ մի երևույթի, ավելի ևս մի օրենքի, չի նշանակում, թե նա չկա: Հայն հաճապետը ռադիոլի ինչ լինելը չգիտեր. մենք էլ նրանից 4 000 տարի հետո ճանաչեցինք:

Այսպես, օրինակ, Հանիսի ենթաբարբառում ք դառնում է յ. բացառություն է միայն պախրէ > բախրէ «եզ» բառը: Սակայն բացառությունը կվերանա, եթե նկատի առնենք նաև Զելթունի ենթաբարբառը, որ նույն բառը հնչվում է բախրէ: Սրանից հետևում է, որ Կիլիկիայի բարբառում այդ բառի ձևն էր պախրէ և որովհետև Հանիսում ա դառնում է ք, ուստի պախրէ ձևն էլ պիտի ասեր բախրէ:

Գարձյալ Հանիսի ենթաբարբառում հայերենի դ-ն դառնում է դ: և ոչ բնավ ք. բացառություն է միայն բուլնչ. սակայն բացառությունը կվերանա, երբ նկատենք, որ բառն ազգված է քուլ ձևից և նրա նմանությունը դ՛ վերածած ք-ի:

Այս օրինակներից երկուսն է, որ օրենքն արձանագրելու ժամանակ պետք է ճշտել նրա բոլոր պայմանները և հիմնական օրենքի հետ պետք է գտնել ու դնել նաև մյուս երկրորդական օրենքները: Այսպես, Ազուլիսի բարբառի մեջ ա > օ ձայնափոխության համար պետք է ասել, որ «եթե ա ձայնավորը շեշտյալ է և բառի վերջին վանկն է կազմում, գառնում է օ, միայն թե ռնգականի մոտ լինում է ու, լ ձայնի մոտ օյ, իսկ դ-ից առաջ անփոփոխ է մնում» և այլն:

Կարող է պատահել, որ երկրորդական օրենքները մի բառի մեջ մի քանիսը լինեն կամ լինի ձայների մի այնպիսի համախմբություն, որ ուրիշ դեպքում կարելի չէր ճարել. այս պարագային օրինակը կլինի միակ և կարելի չի լինի ճշտել օրենքը զանազան օրինակներով: Բայց պետք չէ ասել այս պատճառով, թե նա օրենքի բացառությունն է: Օրինակը տես մի քիչ հետո:

«Շատ պիտի սխալվեինք անշուշտ, եթե փորձեինք բացարձակ կանոններ գտնել լատիներեն բառերի ներկայացրած այն առարկանի բարդ ձայնական բոլոր դեպքերի համար: Կան մասնավոր պարագաներ, որոնց մեջ այնքան տարբեր պայմաններ են միացած լինում, որ այդ պայմանների տակ միայն մի բառ կարելի է գտնել» (Meillet, BSL, 19 (1916), № 63, էջ 184):

Այս բոլորից հետևում է, որ ձայնական օրենքները անկախ չեն, այլ կապված որոշ հանգամանքների հետ, և առանց այդ հանգամանքների պարզաբանություն, օրենքը ճշտված չէ:

Ձայնական օրենքների քննության ժամանակ պետք է մի կողմ դնել այնպիսի ձայնափոխությունները, որոնք բնախոսականից ավելի հոգեբանական են և կամ կամավոր և անհատական գործունեության արդյունք: Այս կարգին են պատկանում գիտնականների ձեռքով կազմված նորակերտ բառերը, օտար լեզուներից վերցրած փոխառությունները, կամայական սղումներն ու կրճատումները, նմանողություններ կամ ժողովրդական ստուգաբանություններ առաջացած բառերը, վերջապես զրույթյան նմանությունից առաջացած սխալ ձևերը, որոնք թյուրիմացությամբ մտել են լեզվի մեջ: Սրանք պետք է ուսումնասիրենք առանձին գլխով:

Չախնական օրենքները քննելու ժամանակ լավ կլինի, եթե ուշադրություն դարձվի ընդհանուր համապատասխանությունները երևան հանելու: Իսկ ընդհանուր համապատասխանությունները երևան հանելով մի քալլ ավելի մոտեցած կլինենք լուրաքանչյուր օրենքի պատճառի բացատրության: Կարևոր չէ միայն երևույթները անջատարար նկատել, օրինակ, ասել, թե ՚ր գառնում է պ, դ գառնում է ա և այլն, այլ պետք է նրանց ընդհանուր սկզբունքը բացատրել: Այսպես՝ ասել, թե թրթռուները գառնում են խուլ կամ ավելի բնախոսորեն խոսելով թրթռուն բաղաձայնների արտաբերության ժամանակ խոչակը ավելի ուշ է գործունեության դիմում քան բերանը: — Այս բացատրությունը գուցե ավելի մոթ է, բայց ավելի ընդհանուր է և բացատրիչ, նա տալիս է իսկույն ձայնական երևույթի առաջացման պատճառը:

Լինում են դեպքեր, երբ ձայնական փոփոխությունները իրար համապատասխան չեն դուրս գալիս, այսպես՝ հայերենում հնդեվրոպական նախալեզվի *k*, *t* գառնում են *p*, *ph*, իսկ *p* գառնում է *h*: Այս բանը համապատասխանության օրենքին հակառակ է. կամ հնդեվրոպական նախալեզվի *p* պիտի գառնար *ph* և կամ *k*, *t* պիտի գառնալին *h*-ի համապատասխան մի բան: Սակայն անկանոնությունը առերևույթ է և առաջանում է ավելի բնական պատճառներից: *p* ձայնի արտաբերության տեղը շրթունքներն են, ուր գործողությունը կատարվում է ավելի թեթև, քան ատամների և կատիկի շրջանում, ուստի ձայնափոխության առաջին հարվածը պիտի հասներ իհարկե թուլին, մինչդեռ ուժեղը կարող էր գեղիմադրել, այս պատճառով ահա հնդեվրոպական նախալեզվի *p* դարձել է (անցնելով *ph*-ից) *h*, իսկ մյուսները մնացել են անփոփոխ: Միևնույն երևույթը տեսնում ենք նաև կելտականում, ուր հնդեվրոպական նախալեզվի *p* կորած է, իսկ *k* և *t* մնում են անփոփոխ (Vendryès, Mélanges Meillet, 117): Ինչ որ անկանոնություն էր նկատվում, ձայնական օրենքների ավելի լավ քննությունը բացատրելով է:

Չախնական փոփոխությունները ավելի լավ բացատրելու և ըստ կարելիության նրանց հիմնական պատճառը գտնելու համար կարևոր է միշտ երևան հանել ձայնափոխությունների ընթացքը, որով անցել է նա՝ սկզբից մինչև վերջ: Այս բանը շատ հեշտանում է այն դեպքում, երբ քննելի լեզուն հասած է մեզ այնպիսի գրական մնացորդներով, որոնք կարողանալին մեզ արտացոլել լեզվի դարուց դար կրած ձևափոխությունների պատկերը: Այն ժամանակ շատ

անգամ հարցը լուծվում է անփիճակի կերպով: Դժբախտարար քիչ լեզուներ կան, որոնք օժտված լինեն այնպիսի հարմարություններով: Այսպես են, օրինակ, նորալատին լեզուները, ֆրանսերեն և այլն: Օրինակ, ֆրանսերեն *âme* «հոգի» այսօրվա վիճակն է. XIII դարում ուներ *anme* ձևը, XI դարում *aneme*, X դարում *anime*, որ անմիջապես կապվում է լատիներեն *anima* ձևին (Brachet, Gramm. hist., 42 տպ. էջ 5):

Իսկ երբ պակասում են մեզ միջոցներ, ինչպես է իրոք հաճախ, մենք ստիպված ենք նախ պարզապես ճանաչել իրողությունն իբրև փաստ, որից հետո տեսականորեն հետ-հետ երթալով բացատրել ձայնափոխության կարգի ընթացքը:

Այս խոսքերից հասկացվում է, որ երբ մի որևէ բառի հին վիճակը համեմատում ենք նրա նոր վիճակի հետ, իրավունք չունենք անմիջապես ընդունելու, որ փոխանցումը կատարվել է ուղղակի: Ամենամեծ մասամբ այդ փոխանցումը կատարվում է գանազան միջնորդներով: Օրինակ, սառլին լատիներենի *o* դարձել է շեշտի տակ ֆրանսերեն *ö*, ինչպես *novem* > *neuf*, *cor* > *cœur*, այստեղ տեսնում ենք, որ մի պարզ ձայնավոր վերածվել է մի ուրիշ պարզ ձայնավորի, այսինքն՝ փոխել է միայն երանգը: Բայց լեզվի պատմությունը ցույց է տալիս, որ այդ ձայնափոխությունը ուղղակի ճամբով եղած չէ. նախ լատիներեն *o* դարձել է երկբարբառ *wo*, որ XI դարում դարձել է *we* կամ *we* երկբարբառին, իսկ XII դարում այս *we* կրճատվել է *ö* պարզ ձայնավորին: Ուրեմն փոփոխությունների շարքը եղել է ձայնավորից երկբարբառ, երկբարբառից երկբարբառ և երկբարբառից ձայնավոր:

Կարող է երբեմն պատահել, որ երկու ձայնական օրենք միասին զուգադիպեն. այդ երկուսը կարող են իրար հակառակ լինել կամ ոչ. եթե հակառակ չեն, մեկը մյուսի հետևից գործում է. բայց երկու օրենքների պահանջներին էլ ենթարկվում է, իսկ եթե նրանք իրար հակառակ են, լեզվի մեջ առաջանում են երկու ձևեր (ամեն մի օրենք իր պահանջը կատարում է, որոնք կարող են միաժամանակ գոյություն ունենալ, բայց կարող է մեկը գոյություն կալի մեջ տեղի տալ):

Չախնական օրենքները կամ փոփոխություններն ինքնին վերջբարձ անըմբռնելի և անհավատարի են. ոչ մի բացատրություն չի կարող համոզել մեզ, թե հնդեվրոպական նախալեզվի *p* բառասկզբում գառնում է հայերեն *h*, և դրա համար է, որ գրսից դիտողները հաճախ անհավատալի կամ նույնիսկ ծաղրով են վերաբերվում լեզվաբանների ձայնական օրենքներին:

Չայնական օրենքների ճշմարտության միակ ապացույցը փաստի զուտ թյուրն է, այսինքն՝ միևնույն երևույթի կրկնությունն է առանց բացատրության: Իրրե ճշմարիտ ենք ընդունում, թե հնդեվրոպական նախալեզվի ք դառնում է հայերենի մեջ բառակազմում հ, որովհետև այդպես ենք տեսնում բոլոր հետևյալ բառերի մեջ. հեռու, հալը, հերիւն, հեա, հալել, հարց, հարսն, հարկանել, հեղուլ, հերու, հին, հինգ, հոգի, հուն և այլն:

Իրրե ճշմարիտ ենք ընդունում այն, թե հնդեվրոպական նախալեզվի v ձայնը հայերենի մեջ դառնում է գ, որովհետև այդպես ենք դառնում բոլոր հետևյալ բառերի մեջ. գինի, գող, գաղա, գարուն, գիշեր, (գ)գեսա, գեա, գեա, գին, գիր, գաղջ, գորտ, գործ և այլն:

Երբ փաստերը ազդեցական են միաձայն, կասկածները տարապարտ են:

Լինում են երբևէն այնպիսի բարդ ձայնախմբեր, որոնք հենց նույնիսկ իրենց բարդության պատճառով, քիչ օրինակներ են ունենում. այդպիսի դեպքում տարբեր հանդամանքներ դալիս են օրինակների պակասը լրացնելու և փաստականությունը զորացնելու: Այսպես, օրինակ, հնդեվրոպական նախալեզվի dw ձայնախումբը հայերեն դառնում է երկ.—սա մի այնպիսի տարօրինակ ձայնախումբն է, որ ոչ ոք, նույնիսկ լեզվաբանը, չպիտի հավատար: Գծրախառնար իրրե փաստ ունենք այս օրենքի համար միայն երեք օրինակ. 1. երկու=լու. duo, սանս. dvā, 2. երկուդ, երկընչել=հուն. dwéyos, զնդ. dvaēḍa, 3. երկար=հուն. dwārón.

Բայց փաստերի այս տկար թվին իրրե օգնական դալիս են հետևյալ հանգամանքները.

1. Հայերենի թվականները ընդհանրապես նույնն են հնդեվրոպական համապատասխան լեզուների թվականների հետ. այսպես՝ մի, հինգ, յոթն, ութ, ինն, տասն և այլն համապատասխանում են հունարեն mia, հունարեն pente=լու. quinque, հունարեն heptà, óktō, ennéa, déka, ռուսերեն десять և այլն բառերին. Ինչ պատճառով հանկարծ երկու բառը բացառություն պիտի կազմեր և չբարձր նույն լիներ սանսկրիտ dvā, հունարեն dyo և այլն ձևերի հետ:

2. Երկու բառը անհնգման մեջ ստանում է նաև երկի և երկու ձևերը (ինչպես՝ երկամ, երկերիւր, երկոտասան, երկօքին). այս ձևերը, որ կարելի չէ մեկնել հայերենով, բացառվում են հնդեվ-

րոպական ցեղակիցներով, որոնց մեջ նույնպես դառնում ենք ի, ո վերջավորությունները. հունարենում բարդությունների սկիզբը գրանում ենք dwi—այսպես և երկո ձևի դեմ ունենք լատիններեն duo decim, հունարեն dyu-kai-deka և այլն:

3. Հնդեվրոպական նախալեզվի մեջ մի միայն կզակի էր, երկու երկակի, երեք, չորս՝ հոգնակի. հայերենի մեջ էլ մի կզակի է, երեք, չորս՝ հոգնակի, երկու բառն իր ու վերջավորությամբ շարունակությունն էր երկակի:

Այս շատ մանր հանգամանքներից երևում է, որ երկու բառը իրոք նույնն է dwā ձևի հետ և հետևաբար ճիշտ է նաև այն ձայնական օրենքը, որ ասում է, թե dv ձայնախումբը դառնում է հայերենում երկ: Ուրիշ լեզուների մեջ նման օրինակները, մասնավորապես այս ձայնախումբի ընթացքի բացատրությունը ավելի պիտի հաստատեն այդ: Այնուամենայնիվ տարակուս չկա, որ եթե հայերենի հնդեվրոպականությունը ալլասա և ավելի ակնհիշ օրինակներով ապացուցված չլիներ, dv > երկ ձայնախումբի համար մեջ բերված հիշյալ 3 օրինակները անբավարար պիտի համարվեին:

Եթե ձայնական օրենքներն առաջանում են բնախոսական պայմաններից, իսկ այդ պայմանները հայիտենական չեն, ուստի և ձայնական օրենքներն էլ հայիտենական չեն, և հենց որ փոխվեցին պայմանները, փոխվում են նաև օրենքները: Այսպիսով ձայնական օրենքները անմիջաբար կապվում են ժամանակի հետ: Յուրաքանչյուր ձայնական օրենք գործում է միայն այն բառերի վրա, որոնք օրենքի ուժի ժամանակ գոյություն ունեին, իսկ այն բառերը, որոնք հետո մտել են լեզվի մեջ նոր բառակերտությունների կամ փոխառությունների միջոցով, գերծ են նախորդ օրենքի ազդեցությունից: Այսպես՝ Ազուլիսի բարբառում շեշտյալ ա դառնում է օ ինչպես՝ հոց > հոց. բայց այդ դառնում ենք միայն հայերեն և հին պարսկերեն բառերում, իսկ թուրքերեն և ռուսերեն բառերն ազատ են այդ ձևափոխությունից, ինչպես՝ բրախ ալ «թողնել», սալդաթ «գինյոր», լամի «ճրագ» և այլն: Հնդեվրոպական նախալեզվի ք դառնում է հայերեն հ, ինչպես՝ pāter > հայր, բայց պարսկերեն կամ հունարեն ք չեն դառնում հ, ինչպես՝ պատգամ, պատրիարք և այլն, և այսօր էլ չենք ասում՝ Հետրոգրադ, Հարիզ (Pétrograd, Paris): Օրենքների այս տարբերությունը շատ անգամ միջոց է տալիս փոխառյալ բառերի միջոցով դանելու օրենքների գործունեության ժամանակազրությունը, երբ հայանի է, թե կը

է փոխ անձակ աշխնչ բառը: Ի հակառակին դատելով, երբ ծանօթ է ձայնական օրենքի ժամանակը, կարելի է տեսլ, թե այս ինչ փոխառյալ բառը երբ է փոխառնված:

Ամեն մի ձայնական օրենք ունի իր ժամանակը, երբ նա գործում է, և եթե որեւէ օրենք, որ գործում էր այս ինչ ժամանակ, մենք կիրառենք մի տարբեր ժամանակ, դուրս կգա ժամանակավրիպութիւն (անախրոնիզմ), որով կհասնենք լեզվաբանական արտօրգի: Ահա այս պատճառով է, որ լեզվաբանական քրնոլոգիան ժամանակ լեզվի բառերը բաժանվում են միշտ երկու տեսակի՝ բնիկ բառեր և փոխառյալ բառեր. բնիկ են այն բառերը, որ կղել են լեզվի սկսած օրից և անցել են այն բոլոր շրջաններից, որով անցել է լեզուն. փոխառյալ բառերը մտել են լեզվի մեջ ավելի ուշ և զանազան ժամանակներ, առաջինները ներկայացնում են լեզվի ոչ միայն իրական և իսկական, այլև հնագույն ու նախնական խավը, որից կառուցված է հենց լեզուն. իսկ երկրորդները ներկայացնում են ոչ միայն երկրորդական և եկամտա տարր, այլև նրանից ավելի և երբեմն շատ ավելի նոր են: Առաջինները ենթարկվում են այլ ժամանակի օրենքների, երկրորդները՝ այլ ժամանակի:

Ասել, թե ձայնական օրենքները կապված են ժամանակի հետ, չի նշանակում, թե նրանք կապված են նաև ժամանակի տեղագրութիւն հետ: Լեզվի բարեշրջութիւն մասին խոսելիս տեսանք, թե ինչպես նրա արագութիւնը զանազանվում է ոչ միայն լեզվից լեզու և բարբառից բարբառ, այլև միեւնոյն բարբառի մեջ երևույթից երևույթ: Տեսանք նույնպես լեզուներ, որոնց մեջ բարեշրջութիւն ընթացքը այս ինչ շրջանում ավելի արագ էր, այն ինչ շրջանում ավելի դանդաղ. Ջելթունի և Համշենի բարբառներում ա ձայնը սնդականի մոտ դառնում է օ, այս ձայնափոխութիւնը առաջացած պիտի լինի ամենաշուտը XII դարից հետո, այսինքն՝ ամենաշուտ վերջին 800 տարվա ընթացքում. բայց այդ ա ձայնը առաջանում է հնդկփրոպական նախալեզվի a ձայնից. նշանակում է a ձայնը մի քանի հազար տարի մնացել է անփոփոխ և միայն 800 տարվա միջոցին է, որ հանկարծ սկսել է փոփոխվել, մինչդեռ ուրիշ հալ բարբառների մեջ այդպիսի փոփոխութիւն չկաղև: Սրանից հետևում է, որ ձայնական փոփոխութիւնները թեև արդյունք են ժամանակի, բայց այդ ժամանակը ամեն տեղ և ամեն վայրում միօրինակ չէ. հետևարար և կարելի չէ տեսլ, օրինակ,

թե այս ինչ ձայնական փոփոխութիւնը ստանալու համար հարկավոր է այսքան ժամանակ և կամ թե այսքան ժամանակի մեջ կարելի է սպասել այսքան և այսպիսի ձայնական փոփոխութիւնների: Վերի օրինակում մենք չկարողացանք որոշել, թե ա > օ ձայնափոխութիւնը քանի՞ տարուց տեղի ունեցավ. բայց շատ ավելի ճշտութեամբ կարելի է որոշել լատիներեն a > ֆրանսերեն e ձայնափոխութիւն ժամանակը: Այս ձայնափոխութիւնն սկսվեց Հյուսիսային Ֆրանսիայում IV դարից, բայց դեռ IX դարի կեսին զբղվում է a.—հիսուն տարի հետո ձայնափոխութիւնը վերջացավ և բոլոր բնագիւղները այլևս գրում են e. ուրեմն բարեշրջութիւն արագութիւնը վերջին 50 տարում շատ ավելի արագ էր, քան նախորդ 400 տարում:

Երբեմն միեւնոյն ձայնը զանազան վայրերում սկսում է ընդունել միատեսակ ձայնափոխութիւն, բայց տարբեր արագութեամբ, այնպես որ մի տեղ ձայնափոխութիւնը վերջացած է լինում, մի ուրիշ տեղ դեռ նախնական աստիճանի վրա: Այսպես, լատիներեն k ձայնը e և i ձայնավորներից առաջ սկսել է ձայնափոխվել բոլոր նորալատին լեզուների մեջ, նախ դարձել է քմային, հետո կիսապայթական, հետո շիրական. այս ձայնափոխութիւնն արդեն վերջացած է ֆրանսերենում և իտալներենում, իսկ իտալներենում դանդաղ է դեռ կիսապայթական աստիճանի վրա: Հայերեն ա ձայնի օ դառնալը մի երևույթ է, որ երևում է զանազան բարբառներում, ինչպես Աղուլիս, Համշեն, Ջելթուն, Հաճին, Աղուլիսում, Ջելթունում և Հաճինում զրեթե վերջացած երևույթ է, Ակնում և Համշենում տեղի է ունենում միայն սնդականի առաջ, իսկ Սվեդիայում օ-ից էլ անցնելով, հասել է ու-ի, մինչդեռ Աղուլիսում միայն սնդականի մոտ է, որ հասել է ու-ի աստիճանին:

Երբեմն մի ձայնափոխական երևույթ սկսում է, բայց մի որեւէ աստիճանի վրա կանգնում է, երբեմն էլ սկսված ձայնափոխութիւնը հետ է դառնում և նույն ճանապարհից անցնելով դառնում իր սկզբնական ձևին:

Եթե ձայնական օրենքները կապված են հանգամանքների և ժամանակի հետ, ուրեմն նրանք առանձնահատուկ չեն այս կամ այն ցեղին ու տեղին, այլ ամեն տեղ, ուր որ երեացին նման հանգամանքներ, ստացվում է և նման արդյունք: Օրինակ, հնդկփրոպական լեզուների մեջ ր բառասկզբում դառնում է և, նույնը նկատում ենք նաև ավարերեն լեզվի օնցուքուլ կոչված բարբառում

նույնիսկ այսօր, օրինակ ուսուցիչներն пристав, полковник բառերը գտնուում են նրիսրավ, հուլիսի*:

Այսպիսով, ձայնական օրենքները կապվում են նաև տեղի հետ. քիչ առաջ իբր օրինակ բերված ա > օ ձայնափոխությունը գտնվում է Ագուլիսի, Համշենի, Ակնի և Կիլիկիայի բարբառում՝ մասամբ կամ ամբողջությամբ. ուրիշ տեղեր փնարել իդուր է: Եմանապես հ > ի ձայնափոխությունը գտնում ենք Բուլանըլս, Վան, Մարագա, Խոլ, Բայազետ, բայց ոչ նաև այս գծից դուրս: Հաճախ քարտեզի վրա կարելի է լինում գծել այն սահմանը, ուր որեիցե ձայնական օրենք գործում է: Այսպիսի սահմանագծերով ամփոփված շրջանները կոչվում են զուգաձայն (isoglosse):

Կարելի է նաև գծել զանազան ձայնական երևույթների զուգաձայնները և այն ժամանակ պիտի տեսնենք, որ առհասարակ այդ զուգաձայնները իրար չեն պատշաճում: Այն գավառամասը, որ իր բոլոր զուգաձայններով միանում է մի ուրիշի հետ, շատ փոքր մի տեղ պիտի լինի, բազմապատ հազիվ մի երկու գյուղից: Այս բանը ցույց է տալիս, թե իրականության մեջ խիստ սահմաններով որոշված բարբառներ չկան, այլ կան միայն ձայնական զանազան երևույթներ, որոնք սկսելով մի տեղից գնում են զանազան ուղղությամբ, երբեմն խաչաձևում են իրար և ընդհանրապես իրար հետ զուգահեռ չեն:

Այսպես ուրեմն, ձայնական օրենքները կապված են հանդամանքի, ժամանակի և տեղի հետ. այս պարագաների առկա, ձայնական օրենքները թեև բացարձակ, բայց տինգերական չեն, ինչպես բնագիտության և քիմիայի օրենքները: Մի քար, որ ձգվում է վերևից, ամեն տեղ և ամեն ժամանակ էլ ցած պիտի ընկնի: Այս է Ֆիզիկայի օրենքը: Երկու ջրածնի և մեկ թթվածնի խառնուրդը ամեն տեղ և ամեն ժամանակ էլ տալիս է ջուր: Այս է քիմիայի օրենքը: Բայց օ ձայնը ամեն տեղ և ամեն ժամանակ օ չի տալիս: Ձայնական

* Մառ, ВИАИ 1917, էջ 323:

Այսպիսի երևույթներից հետևյալի, թե ուրեմն այդ լեզուները ցեղակից են, գիտականորեն ճիշտ մտածմունք չէ, թեկուզ հենց այն պատճառով, որ օրենքներն ըստ ժամանակի փոփոխական լինելով՝ ստիպված պիտի լինենք ասել, թե երկու լեզուների ցեղակցությունը փոփոխական է ըստ ժամանակի: Հենց նույն հ ձայնափոխությունը գոյություն ունի անշուշտ կամ թե ապագային պիտի ունենա աֆրիկյան կամ ամերիկյան բանի-բանի անձանոթ բարբառներում. բայց դրա համար կարելի չէ ասել, թե այդ բարբառները հայերենի ցեղակից են կամ թե, թեև այժմ չեն, բայց ապագային ցեղակից են լինելու:

օրենքները չի կարելի համեմատել նաև իրավաբանական օրենքների հետ, որովհետև իրավաբանական օրենքը որոշում է, թե ինչ պիտի անենք և ինչ չպիտի անենք, իսկ ձայնական օրենքները ցույց են տալիս միայն, թե այս ինչ ձայնը այս ինչ տեղում այս ինչ ժամանակ ինչ է դարձել:

Ձայնական օրենքները կարելիություններ են և ոչ թե անհրաժեշտություն. եթե մի քար բաց թողնենք, անպատճառ պիտի ընկնի և չի կարող չընկնել. բայց ձայնական օրենքները այդպես չեն: Ձայնական օրենք է, որ երկու ձայնափոխի միջև գտնվող բաղաձայնը թուլանում է և հետո էլ ընկնում. այսպես է հնդկփրոպական նախալեզվի mater, որ տալիս է հայերեն մալր և ֆրանսերեն mère. բայց միևնույն բառը ունենք սանսկրիտ māta, հունարեն μάτηρ, լատիներեն mater, և այսօր էլ նոր հունարենում ավում է μάτηρ, լիթվաներեն mote, սուսերեն мать, սերբերեն mati, որոնց մեջ ի ունի 4000 տարաց ավելի կյանք և ոչ մի նշան չկա դեռ, թե նա ընկնելու է մտ ժամանակում:

Սոսևյով փիլիսոփայական լեզվով, մենք կարող ենք ասել, թե ձայնական օրենքները հարաբերական են ժամանակի և տարածության հետ: Այս երկու պայմանները սակայն չեն նվազեցնում օրենքի ուժը, որովհետև ամեն գիտության մեջ էլ օրենքի գերը սահմանափակվում է միջավայրի և զանազան ազդեցությունց պայմանավորմամբ (Danzat, La phil, 290): Զուրը ետում է 100 սատիճանին, բայց ծովի մակերևույթի վրա. հենց որ ավելի բարձրանանք և օդի ճնշումը նվազի, ետման սատիճանն էլ կնվազի: Այսպես՝ Երևանում ջուրը ետում է 96 սատիճանին, Արագածի գագաթին ավելի շուտ, Մասիսի գագաթին էլ ավելի շուտ և այլն:

Բացարձակ տրամաբանություն հետևորդները ձայնական օրենքի բացարձակությունը չեն ընդունում, որովհետև նրանք գավանում են, որ երկու երևույթների մեջ, որոնց առաջինը նախորդն է և մյուսը հաջորդը, նախորդը պիտի լինի անփոփոխ և անպայման. ուրիշ խոսքով, միևնույն արդյունքը ծնվելու է միևնույն պատճառից և միևնույն պատճառը ծնելու է միշտ միևնույն արդյունքը: Արդ, ձայնաբանության մեջ այսպես չէ. նախորդը անպայման է, բայց ոչ անփոփոխ. միևնույն պատճառը լեզվաբանության մեջ էլ տալիս է միևնույն արդյունքը, բայց միևնույն արդյունքը կարող է առաջանալ տարբեր պատճառներից. այսպես, հնդկփրոպական նախալեզվի ի գտնում է հայերենում ի, բայց օ նույնպես գտնում է ի՝ ուղղականից առաջ: Լատիներենի մեջ նախաձայն ի կարող է

նախնիակ այսօր, օրինակ բուսերեն пристав, полковник բառերը գտնուում են հրիսթավ, հուրովհիկ*:

Այսպիսով, ձայնական օրենքները կապվում են նաև տեղի հետ. քիչ առաջ իբր օրինակ բերված ա > օ ձայնափոխությունը գտնվում է Ագուլիսի, Համշենի, Ակնի և Կիլիկիայի բարբառում՝ մասամբ կամ ամբողջությամբ. որիչ տեղեր փնտրել իդուր է: Նմանապես հ > ի ձայնափոխությունը գտնում ենք Բուլանլի, Վան, Մարաղա, Սուլ, Բայազետ, բայց ոչ նաև այս գծից դուրս: Հաճախ քարտեզի վրա կարելի է լինում գծել այն սահմանը, որ որևիցե ձայնական օրենք գործում է: Այսպիսի սահմանագծերով ամփոփված շրջանները կոչվում են գուլգաձայն (isoglosse):

Կարելի է նաև գծել զանազան ձայնական երևույթների գուլգաձայնները և այն ժամանակ պիտի տեսնենք, որ առնաստիակ այդ գուլգաձայնները իրար չեն պատշաճում: Այն գավառամասը, որ իր բոլոր գուլգաձայններով միանում է մի ուրիշի հետ, շատ փոքր մի տեղ պիտի լինի, բաղկացած հազիվ մի երկու գյուղից: Այս բանը ցույց է տալիս, թե իրականության մեջ խիստ սահմաններով որոշված բարբառներ չկան, այլ կան միայն ձայնական գանազան երևույթներ, որոնք սկսելով մի տեղից գնում են զանազան ուղղությամբ, երբեմն խաչաձևում են իրար և ընդհանրապես իրար հետ զուգահեռ չեն:

Այսպես արեմն, ձայնական օրենքները կապված են հանդամանքի, ժամանակի և տեղի հետ. այս սլարազաների տակ, ձայնական օրենքները թեև բացարձակ, բայց տիեզերական չեն, ինչպես բնագիտության և քիմիայի օրենքները: Մի քար, որ ձգվում է վերևից, ամեն տեղ և ամեն ժամանակ էլ ցած պիտի ընկնի: Այս է ֆիզիկայի օրենքը: Երկու ջրածնի և մեկ թթվածնի խառնուրդը ամեն տեղ և ամեն ժամանակ էլ տալիս է ջուր: Այս է քիմիայի օրենքը: Բայց օ ձայնը ամեն տեղ և ամեն ժամանակ օ չի տալիս: Ձայնական

* Մոս, ИВАН 1917, էջ 323:

Այսպիսի երևույթներից հետևյալն է. թե որեմն այդ լեզուները ցեղակից են, գիտականորեն ճիշտ մտածում ենք չէ, թեկուզ հենց այն պատճառով, որ օրենքներն ըստ ժամանակի փոփոխական լինելով՝ ստիպված պիտի լինենք ասել, թե երկու լեզուների ցեղակցությունը փոփոխական է ըստ ժամանակի: Հենց նույն և ձայնափոխությունը գոյություն ունի անշուշտ կամ թե ապագային պիտի ունենա աֆրիկյան կամ ամերիկյան քանի-քանի անձանկ բարբառներում. բայց դրա համար կարելի չէ ասել, թե այդ բարբառները հայերենի ցեղակից են կամ թե, թեև այժմ չեն, բայց ապագային ցեղակից են լինելու:

օրենքները չի կարելի համեմատել նաև իրավաբանական օրենքների հետ, որովհետև իրավաբանական օրենքը որոշում է, թե ինչ պիտի անենք և ինչ չպիտի անենք, իսկ ձայնական օրենքները ցույց են տալիս միայն, թե այս ինչ ձայնը այս ինչ տեղում այս ինչ ժամանակ ինչ է դարձել:

Ձայնական օրենքները կարելիություններ են և ոչ թե անհրաժեշտություն. եթե մի քար բաց թողնենք, անպատճառ պիտի ընկնի և չի կարող չընկնել. բայց ձայնական օրենքները այդպես չեն: Ձայնական օրենք է, որ երկու ձայնավորի միջև գտնվող բաղաձայնը թուլանում է և հետո էլ ընկնում. այսպես է հնդկվրոպական նախալեզվի mater, որ տալիս է հայերեն մայր և ֆրանսերեն mère, բայց միևնույն բառը ունենք սանսկրիտ māta, հունարեն μάτηρ, լատիներեն mater, և այսօր էլ նոր հունարենում ավում է μάτηρ, լիթվաներեն motė, սուսերեն мать, սերբերեն mati, որոնց մեջ է ունի 4000 տարուց ավելի կյանք և ոչ մի նշան չկա գեռ, թե նա ընկնելու է մտ ժամանակում:

Սուսելով փիլիսոփայական լեզվով, մենք կարող ենք ասել, թե ձայնական օրենքները հարաբերական են ժամանակի և տարածության հետ: Այս երկու պայմանները սակայն չեն նվազեցնում օրենքի ուժը, որովհետև ամեն գիտության մեջ էլ օրենքի գերը սահմանափակվում է միջավայրի և զանազան աղեցությունց պայմանավորմամբ (Danzat, La phil, 290): Չուրը ետում է 100 աստիճանին, բայց ծովի մակերևույթի վրա. հենց որ ավելի բարձրանանք և օդի ճնշումը նվազի, ետման աստիճանն էլ կնվազի: Այսպես՝ Երևանում ջուրը ետում է 96 աստիճանին, Արագածի գագաթին ավելի շուտ, Մասիսի գագաթին էլ ավելի շուտ և այլն:

Բացարձակ տրամաբանության հետևորդները ձայնական օրենքի բացարձակությունը չեն ընդունում, որովհետև նրանք գավանում են, որ երկու երևույթների մեջ, որոնց առաջինը նախորդն է և մյուսը հաջորդը, նախորդը պիտի լինի անփոփոխ և անպայման. որիչ խոսքով, միևնույն արդյունքը ծնվելու է միևնույն պատճառից և միևնույն պատճառը ծնելու է միշտ միևնույն արդյունքը: Արդ, ձայնարանության մեջ այսպես չէ. նախորդը անպայման է, բայց ոչ անփոփոխ. միևնույն պատճառը լեզվաբանության մեջ էլ տալիս է միևնույն արդյունքը, բայց միևնույն արդյունքը կարող է առաջանալ տարբեր պատճառներից. այսպես, հնդկվրոպական նախալեզվի ի դանում է հայերենում ի, բայց օ նույնպես դանում է ի՝ ընդհանրից առաջ: Լատիներենի մեջ նախաձայն ի կարող է

տառանալ հնդեվրոպական նախալեզվի bh, dh, g^h, dhw, dhw
և այլն ձայներից (Ernout, Meillet, 304):

Այս երևույթը պետք չէ արտա գլխի ձայնական օրենքի բացարձակության վրա, որովհետև „l'inconditionnalité étant l'essence même du rapport de causalité.—Ոչ պայմանականությունը հարաբերության էությունն է» (Danzat, idem, 292):

Նույնիսկ ամենաճշգրիտ գիտություն մեզ, որ է մաթեմատիկան, միևնույն արդյունքը կարելի է ստանալ հազարավոր պատճառներից: Այսպես՝ 10 թիվը արդյունքն է 2×5 , $5 + 5$, $40 - 30$, $30 : 3$, $\sqrt{100}$ և այլ անթիվ գործողությունների:

Չայնական օրենքների բացարձակության դեմ իբրև երկրորդ առարկություն փիլիսոփաները գնում են այն, որ նմանողությունը (անալոգիա), օտար լեզուներից փոխառյալ բառերը, գիտական նորակերտ բառերը և նման այլ պատճառներ շատ անգամ խանգարում են որևէ ձայնական օրենքի ազատ գործունեությունը: Բայց այստեղ օրենքը հանցալոր կամ սխալ չի կարելի համարել, որովհետև խանգարիչ ուժը գալիս է արտաքուստ, ճիշտ ինչպես, որ մեքենայի մեջ որևէ արտաքին պատճառ կարող էր խանգարում տալ մեքենայի (Danzat, idem, 293): Ապագային, երբ իմաստագիտությունն էլ կունենա իր բացարձակ օրենքները, կարելի կլինի թերևս նաև նմանողությունը տառապատ երևույթներն էլ օրենքի տակ դնել: Քաջով փոխառյալ և նորակերտ բառերին, առաջինները պետք է համարել իբրև մի համայնքի մեջ առաջացած նոր համայնք, որ ունի իր սեփական օրենքները, իսկ երկրորդները՝ գումար տարրեր ժամանակի օրենքների, իբրև մի տեսակ անալոգիանիզմ. առաջին դեպքում խախտում տեղի պայմանի, երկրորդ դեպքում ժամանակի պայմանի, որոնք ձայնական օրենքների անհրաժեշտ պայմաններն են:

Չայնական օրենքների բացարձակության դեմ խոսելով Շուխարդար (տես Jespersen, Lang., 267) ասում է, որ, օրինակ, մի բառ կամ մի ձայն կարող է կրկնվելու 10 000 անգամ, որպեսզի վերածվի մի արիշ ձևի, եթե մի ուրիշ բառ, որ նվազ գործածական է, նույնքան ժամանակում կրկնվելու է 8 000 անգամ, բնականաբար և պիտի ստանա հետամնաց ձև:

Այս կարծիքը բացարձակ սխալ է. ձայների փոփոխությունը հաճախակի գործածությունից չէ. այսպես, հնդեվրոպական նախալեզվի ք հազարավոր պարձի է հախերեն և թե հայր և հերիւն

բառերի մեջ. առաջինը չափից գործ գործածական և ծանոթ ամեն մի մարդու, երկրորդը միայն կոշկակարներին!

Ահա այն կետերը, որոնցով ձայնական օրենքները զանազանվում են դրական գիտությունների օրենքներից: Ներածության մեջ արդեն ասել ենք, որ շատերը (այդաներն ու սկեպտիկները) լեզվաբանությունը գիտություն չեն համարում: Ընդհակառակը Սուլուրը՝ նշանավոր լեզվաբան, երկրորդական կետերը կողմնակի երևույթներ համարելով, ընդունում է լեզվի մեջ ձայնական օրենքները այն իմաստով, ինչ իմաստով որ հասկացվում են դրական գիտությունների օրենքները: Սակայն այսօրվա ոչ բոլոր լեզվաբանները գիտակցում են այդ բայց չգիտակցելով հանդերձ, վարվում են ձայնական օրենքների հետ այնպես, ինչպես թե դրական գիտությունների բացարձակ օրենքները լինեին (Lingua, I, № 1, p. 28):

Այստեղ հարց է ծագում, թե ինչ է առաջադասական ձայնափոխությունների նախնական պատճառը կամ զրգապատճառը (causa remota): Ինչու՞ համար միևնույն ձայնը մի տեղ այսպես, մի տեղ այնպես է փոփոխվում. ինչու՞, օրինակ, լատիներենի Ci դառնում է իտալերենի Ci, պիլիպպերենի si, ֆրանսերենի si, իսպաներենի Qi, և այլն. ինչու՞ ձայնափոխությունները մեկ լեզվի մեջ այս ինչ ուղղությամբ, մի ուրիշի մեջ հակառակ ուղղությամբ են գնում: Արդարև, հաստատել մի որևէ երևույթի բացարձակությունը և կանոնավորությունը՝ համոզիչ է, բայց այդ դեռ չի նշանակում բացատրել երևույթը: Մաթեմատիկական գիտությունը մեջ օրենքի ապացույցն ու բացատրությունը միանում են իրար, եթե մի տեսություն ապացույցից, ուրեմն և բացատրվից: Բայց այսպես չէ փորձառական գիտությունների մեջ, և պետք կա փորձերով հաստատված օրենքներն իրար կապել և բացատրել: Այսպես պիտի լինի նաև լեզվաբանությունը: Ամեն երևույթ մի պատճառ ունի:

Նախ ասենք, թե բացարձակապես սխալ են նրանք, որոնք կործում են, թե լեզվի մեջ առաջացած ձայնափոխությունները անհասանելի գործունեության արդյունք են: Իբր թե մի նշանավոր անձնավորություն իր քմահաճույքի համար այս ինչ բան արտասանում է այս ինչ ձևով, զա ազդում է սամիկ ժողովրդի մեծամասնության վրա, ամենքը հետևում են և ի վերջո երևույթը ընդհանուր է դառնում: Այսպիսի կարծիք անընդունելի է արդե գիտություն մեջ*, որովհետև եթե այդ կարծիքը ճշմարիտ էլ լինի,

* Այսպես է գործառարար մինչև անգամ Մանուկ Աբեղյանի մոտ:

ալս կամ այն բառի վրա միայն պիտի ազդեր և ոչ թե լեզվի բու-
լոր բառերի վրա, մինչդեռ մենք գիտենք, որ ձայնական երևույթ-
ները ընդհանուր են լեզվի մեջ:

Ձայնական երևույթների բացատրության համար գիտնական-
ները մեջ են բերում զանազան պատճառներ:

ա. Նախապես կարծում են, թե ձայնական փոփոխություն-
ների հիմնական պատճառը գեղեցկագիտական պահանջն է և մար-
դիկ կամավորապես փոխել են լեզուն՝ աշխարհի գեղեցիկ ձևեր ստա-
նալու համար: Բայց մենք գիտենք, որ լեզվի գեղեցկությունը մի
անորոշ բառ է միայն և իրական նշանակություն չունի: Գեղեցիկ
է այն արտասանությունը, որին որ մարդ վարժված է: Եվ որով-
հետև մարդ բնականորեն իր խոսած լեզվին է վարժված, ուստի
միշտ էլ նա իրեն համար գեղեցիկ է, և ավելի գեղեցիկ քան այն
ապագա անծանոթը, որին պիտի հասնի զանազան ձայնափոխու-
թյուններով: Այս ոք կարող չէ անշուշտ ընդունել, որ եթե հայերեն
հինգ հազվ գարձել է Վանի բարբառում կամ Նոր Բալագիտի բար-
բառում իրիկ խավ, ավելի «ներդաշնակ» մի ձև սակզմելու նըպա-
տակով կզամ լինի: Կան զանազան լեզուներ, որոնց հին վիճակը
ավելի ներդաշնակ է քան նորը, ալապես, հին գերմաներենը ավե-
լի ներդաշնակ էր քան արդի գերմաներենը: Գուցե սմանք ճիշտ
չգտնեն, եթե ասենք, թե նաև հին հայերենը ավելի ներդաշնակ է
քան նոր հայերենը, բայց այդ մասին անշուշտ ոչ ոք չպիտի կաս-
կածի գոնե խաղաղ, խաղող և նման ժանրահնչյուն բառերի հա-
մար, որոնց հին հնչումն էր, ինչպես հայտնի է, խալալ, խալոլ և
այլն:

բ. Ոմանք կարծում են, թե այս ձայնական փոփոխություն-
ները կլիմայական պայմանների արդյունք են: Բնական է համար-
վում որ ասք, չոր ու մաքուր կլիմայի սակ ձայնալարերը ավելի
լավ թրթռան, քան ցուրտ, խոնավ ու փոշոտ մի տեղ: Օրինակի
համար ասում են, թե գեղեցիկ իտալերենը Իտալիայի գեղեցիկ
երկրների արդյունքն է:—Անգլիացիների կիսափակ արտասանու-
թյունը մշտը կուլ չաալու նպատակով է (ըստ որում Անգլիան հավի-
տենապես մշտըով ծածկված մի երկիր է):—Արաբերենի կոկորդա-
լին հնչյունները, որոնք գոյանում են բերանի հետևի մասում, բե-
րանը քիչ բանալու և անապատի փոշուց քիչ կուլ տալու նըպա-
տակով է:—Հյուսիսային ժողովուրդների երկար-երկար բառերը օդի
առատության և շնչի ազատության պատճառով է, իսկ սեմական

լեզուների կարճ բառերը օդի անսուրբության և շնչի կարճության
պատճառով:

Կարելի է ընդունել, որ իրոք կլիման և ընդհանրապես մի-
ջավայրը ազդած լինեն լեզվի կազմության վրա. բայց դրանց ազ-
դեցությունները առ առավելն պիտի երևալին լեզվի առաջին ծագ-
ման ժամանակ և չպիտի կարողանալին բացատրել միևնույն երկ-
րում խոսված միևնույն լեզվի մեջ դարուց դար առաջացած ձա-
նափոխությունները:

Ինչու ենք այստեղ The Gospel in many tongues (Ավետա-
բանը բազմաթիվ լեզուներով) (1921) ցուցակից երեք հասված
միևնույն բովանդակությամբ.

1. Չուլու լեզվով.

Noba unkulunkula wa wa tanda umhlaba Kangaka, naño-
ba wa pa nendodana yake ayizalayo e yodwa, ukaba wonke
o kolwa iyo a na bubi, a be nokupila okumiyo njalo.

2. Հավայան կամ Մանգվիչ կղզու լեզվով.

No Ka mea, ua aloha nui mai ke Akua i ko ke ao nei,
nolaila, ua haawi mai oia i Kana Keiki hiwahiwa, i ole e ma-
ke ka mea manaioia ia ia, a ka, e loaa ia ia ke ola mau loa.

3. Այնու լեզվով.

Inambe gusu n yakun, Kamut anak ne Koro šinen ne
poho koropare pakno moširi omap ruwe ne, nen ne yakká nei
Poho eišokoro yaru obitta aisamha šomoki no nei pakno ne
yakká išu ramat koro Kuni ne Kore nisa ruve ne.

Առաջինը այրեցյալ գոտու սակ խոսվող լեզու է, երկրորդը
լալնույթյան 20°-ի վրա օվկիանոսի մեջ թաղված մի կղզում, եր-
րորդը՝ սառցալին երկրում, բայց բոլորն էլ ձայնափոխների լիա-
կատար առատությամբ:

գ. Ոմանք էլ ձայնական փոփոխությունները վերագրում են
ցեղաբանական պատճառների. սրան ապացույց են համարում այն
երևույթը, որ երբ մի ժողովուրդ վերցնում է մի ուրիշ ժողովուր-
դի լեզու, չի պահում անփոփոխ, այլ հարմարեցնում է այն հրե-
չական պայմաններին, որոնք կազմված են կղզի իր մեջ: Այս բա-
ցատրությունը և արված օրինակը ճիշտ չեն, որովհետև ալապեղ
լեզուն է հարմարվում լեզվին և ոչ թե լեզուն ցեղին: Փրանսիա-
ցի հրեան խոսում է ֆրանսերենը, ճիշտ ինչպես մի ֆրանսիացի,
և անգլիացի հրեան խոսում է անգլերենը, ճիշտ ինչպես մի բնիկ
անգլիացի, թեև երկուսն էլ հրեա (այսինքն ուրիշ ցեղի մարդիկ)

են, և հավասարապես պիտի դժվարանան, եթե ֆրանսիացի հրեան անգլիերեն խոսի կամ անգլիացի հրեան ֆրանսերեն խոսի. բայց դժվարությունը շատ ավելի մեծ պիտի լինի երկուսի համար էլ, եթե հանկարծ երբայրեն (իրենց բնիկ լեզուն) պարտավորված լինեն խոսել:—Եթե ցեղն ընդունենք ձայնական փոփոխությունների պատճառ, այն ժամանակ ինչպես պիտի բացատրենք այն երևույթը, որ միևնույն ժողովրդի զանազան հատվածների մեջ ստաշանում են տարբեր-տարբեր ձայնական փոփոխություններ, կամ նույնիսկ միևնույն ժողովրդի միևնույն հատվածում տարբեր ժամանակ՝ տարբեր ձայնական փոփոխություններ:

դ. Կան լեզվաբաններ, որոնք ձայնական փոփոխությունների իրրե պատճառ դնում են ազգի քաղաքական հեղաշրջումները.— ալյապես, լատիներենը քաղքալից և ծնավ նորալատին լեզուները՝ հենց հոռմեական պետություն քաղքալման հետեանքով: Մեարտվյան հայերենը ազգավալից Արշակունյանց պետության անկման պատճառով: Նոր հայերեն բարբառները և աշխարհաբարը երեան եկան Բագրատունյաց պետության կործանումից հետո և այլն: Այս բացատրությունը բավարար չէ նախ այն պատճառով, որ չկա լեզվի մեջ մի բույն, երբ բարեշրջությունը կանգ առած լինի. լեզուն մշտական ու հարատե փոփոխություն մեջ է. երկրորդ՝ ինչպես պիտի բացատրենք այս դեպքում զանազան բարբառներում տեղի ունեցած տարբեր ձայնական փոփոխությունները միևնույն երկրում, միևնույն ժամանակ, միևնույն պետության քաղքալումից հետո: Եվ վերջապես ցույց տալու համար, թե քաղաքական և ընկերային հեղաշրջումը արժեք չունեն լեզվի ձայնական փոփոխությունաց մեջ, հիշենք Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը, որ աակնուվրա արավ հին կարգերը, բայց սուսերեն լեզվի մեջ ոչ մի ձայնափոխություն չառաջացրեց:

և. Լեզվաբաններից սմանք ձայնական փոփոխությունների պատճառ են դնում հենց ձայնական գործարանները: Կարծում են, որ մարդու ձայնական գործարանները ժամանակի ընթացքում փոխում են իրենց կազմությունը կամ ձևը և հետևարար արտադրում են նոր ձևի ձայներ: Գերմանացու արտասանությունը տարբեր է ֆրանսիացուց և հայկականը անգլիականից, որովհետև հենց նրանց բերանի և կոկորդի կազմությունն է տարբեր: Այս գաղափարը գուցե տարբերակ թվա, բայց պետք է մտածել մի բույն, թե ինչքան զանազանություն կա մարդուց մարդ տրիշ գործարանների վերաբերմամբ: Օրինակ, որքան տարբեր է հայի արծվեսունգն քիթը

սուսի քիթից, առատ ու փարթամ մորուքը թաթարի լերկ ծնոտից, թավ հոնքերը և սև ու երկար թարթիչները հրեայի անմաղ կուպերից և այլն: Կամ թե որքան տարբեր են նեղրի սև մաշկը շվեդացու սպիտակ երեսից, թաթարի կլոր երեսը եվրոպացու ձվածիր գեմքից, էսկիմոսի կարճիկ հասակը անգլիացու երկար հասակից: Եթե մարդկային այլ գործարաններում այսքան ակնհայտ տարբերություններ կան, ինչու՞ է զարմանալի, որ քիմքի, լեզվի, կոկորդի այն փոքրիկ շրջանակում էլ լինեն շատ նուրբ տարբերություններ, որոնք սակայն պիտի տան ձայնի հնչման և երանգի այլապլ զանազանություններ:

Այս բացատրությունն էլ ուղիղ չէ, որովհետև եթե նույնիսկ ընդունենք գործարանների կազմության տարբերություն, դա անշուշտ չպիտի անդրադառնար գործարանների գործունեության վրա: Եթե հայի քիթը արծվեսունգն է, իսկ սուսինը ոչ, դա չի նշանակում, թե մեկի հոտառությունը այլ է, մյուսինը՝ այլ: Անկարելի է ասել, թե որեիցե ժամանակ, որեիցե տեղ, որեիցե համայնքի մեջ, բոլոր անհատների գործարաններն էլ բոլորովին նույն կազմությունն ունենան, այլ, ինչպես որ մեկի հասակը երկար, մյուսինը կարճ է, մեկի մազերը թուխ, մյուսինը շեկ են (միևնույն համայնքի մեջ), ձայնական գործարաններն էլ պետք է որ զանազան լինեն: Այդ դեպքում ինչու՞ ուրեմն ձայնական փոփոխությունները նույն համայնքի մեջ միևնույն արդյունքն են տալիս: Ուրեմն ճիշտ չէ նույնպես ձայնափոխությունների պատճառը որոնել գործարանների ձևափոխության մեջ, քանի որ այդ գործարանները բավական ընդունակ են զանազան դիրքեր ընդունելու և պահանջված ձայնական երևույթներին հարմարվելու:

Մի շատ հասարակ փորձ բավական է համոզելու մեզ վերջին կետի նկատմամբ:

Գիտենք, որ անգլիացին կամ ամերիկացին մի լուրհաստուկ արտասանություն ունեն, այնպես որ նույնիսկ հայերեն խոսելու ժամանակ անգլիերենի նման մի բան է դուրս գալիս: Արդ, մենք կարող ենք փոքր վարժություններ կեղծել այդ ձայնը: Քաշեցեք լեզուներդ մի քիչ հեռ, կորացրեք ձայրը մի քիչ վերև, այնպես որ նա դեպի քիմքի մի քիչ ներսի մասին և ահա այս դիրքի մեջ խոսված հայերենը կլինի անգլիական արտասանություն: Այս փորձով մենք մեր կոկորդի կազմությունը չփոխեցինք, այլ ավինք նրան տարբեր դիրք, որիշ խոսքով հարմարեցրինք տարբեր ձայնական երևույթի:

դ. Կան լեզվաբաններ էլ, որ ձայնական փոփոխությունները բացատրում են «նվազագույն ճիգ»-ի սկզբունքով, իբր թե գործարանները խնայելով իրենց աշխատանքը, պարզում, հեշտացնում են գործը: Այս բացատրությունը ճիշտ է շատ կետերում, օրինակ, ձայնավորի սղումը (ընթացի > ընթի), բաղաձայնների անկումը, կամ դուգակից բաղաձայնների անկումը, կամ դուգակից բաղաձայնների նմանեցումը (խ > իռ), ձայնավորի ներդաշնակության օրենքը և այլն. բայց չի կարող բացատրել բոլոր ձայնական փոփոխությունները, որովհետև կան և սրանց բոլորովին հակառակ երևույթներ. ինչպես ձայնավորի կամ բաղաձայնի նոր հավելում, ձայնավորը վերածված երկբարբառի, տարանմանություն և այլն: Եթե վանեցին հա ասելու փոխարեն ասում է իա, համեմատյալ կարևոր ավելի դժվար աշխատանք է գործադրում:

Այս բոլորից հետևում է ուրեմն, որ ձայնական փոփոխությունների պատճառը պետք է փնտրել ձայնական գործարանների գործունեության եղանակի մեջ և ոչ թե նրանց կազմության, ճիշտ ինչպես որ անգլիական արտասանությունը կեղծելու օրինակի մեջ տեսանք: Ճշմարիտ է, որ այդ ձևով խոսելիս մենք կրում ենք մեծ հոգնություն, որովհետև կատարում ենք մեզ համար անբնական մի բան, որին չենք վարժված, ճիշտ ինչպես եթե փորձեր անեինք ձախ ձևերով գրելու: Բայց անգլիացին ոչ միայն չի հոգնում, այլև նրա համար բնական է այդ արտասանությունը, որովհետև իր ձայնական գործարանների գործունեության եղանակը այն ձևին է վարժված:

Երբ մանուկը մորից ստանում է լեզուն, աշխատում է անշուշտ ըստ կարելիության նմանվել նրան, բայց այդ նմանությունը բացարձակ ճշտության չի հասնում, որի առաջին պատճառը լսողության ոչ-բացարձակ ճշտությունն է, երկրորդը՝ ձայնական իր գործարանների ոչ-կատարյալ վարժությունը: Հետևաբար արդյունքն էլ լինում է ոչ կատարելապես ճիշտ: Բայց մանուկը կարծում է, թե ինքը ճիշտ է խոսում այնպես, ինչպես իր մայրն է խոսում, ուստի չի նկատում տարբերությունը և չի աշխատում ուղղել այս տարբերությունը: Այս տարբերությունը մնում է մանկան լեզվի մեջ մինչև վերջ, որ և դառնում է ապագա սերնդի սեփականությունը, նույնպես նոր փոփոխության ենթարկվելու պայմանով:

Այս երևույթի հետ զուգընթաց են հետևյալ հանդամանքները.

1. Ձայնական գործարանների գործունեության ձևի փոփոխության երևույթը մի է և ընդհանուր նույն ժամանակում, նույն

միջավայրի ժողովրդի բոլոր երևեսներին, ապա թե ոչ միևնույն ժամանակ պիտի ծագեն բազմաթիվ ձայնափոխություններ և բազմաթիվ բարբառներ, կամ նոր սերնդի մի մասի մեջ միայն պիտի փոխվեր լեզուն, իսկ մյուս մասը պիտի շարունակեր հին լեզուն:

2. Մանուկ սերնդի երևան հանած տարբերությունները պետք է որ լինեն այնքան չնչին, որ շրջապատը չնկատի նրանք և չուղղի. խոշոր տարբերությունները համարվում են սխալ և ծիծաղելի, որոնք շարունակ ուղղվում են մեծերի կողմից և հասցվում են նվազագույնի (մինիմումի). այս մինիմումն է, որ կազմում է նոր լեզվի հիմքը:

3. Փոփոխությունները երևան են դալիս միմիայն մանուկ սերնդի մեջ. չափահասներն ու ծերերը ազատ են նրանցից, երևեսները մեծանալով կազմում են չափահաս սերունդը, իսկ ծերերը մահանում են. այնպես նոր ձևերը մի ժամանակ գոյություն ունենալով հին ձևերի հետ միասին, ապագայում ընդհանուր տարածվում են և դառնում միակը:

4. Երևույթն սկսում է ոչ թե մի երկրի ամբողջ տարածություն վրա, այլ շատ սահմանափակ մի վայրից, տարածվում է հետզհետև, չկասեցնելով իր ընթացքը գավառների ու նահանգների վարչական բաժանմունքների առաջ, այնպես տարածվելով ամեն կողմ և մոտիկից մոտիկ առաջանալով վերջապես հասնում է հեռավոր ծայրերը: Ֆրանսերենի լեզվաբանական քարտեզը ցույց է տալիս, որ ձայնափոխությունների շարժումը չի հետևում ոչ մեծ գետերի ընթացքին և ոչ էլ կասեցնում է իր արշավանքը բնական սահմանների առաջ, ինչպես լեռնաշղթաներն են ու ծովերը, այլ միևնույն երևույթը դառնում ենք Ալպյան լեռների և այս կողմը և այն կողմը, ծովի այս կամ այն երեսում, մայր ցամաքում թե կղզիների վրա*:

Այս է ձայնական փոփոխությունների վերջին բացատրությունը, որի հեղինակներն են Սիլիբսը և Պատուլը, և որ ընդունված է բազմաթիվ սկանավոր լեզվաբանների կողմից: Բացատրությունը սակայն բոլորովին բավական չէ: Նախ որովհետև այդ բացատրությունը ոչ թե սրվում է ձայնափոխությունների բուն պատ-

* Ձայնական փոփոխությունների ծագման ու տարածման մասին կան զանազան աշխատություններ, որոնց մեջ հիշատակելի է գլխավորապես Roussetot, Les modifications phonétiques du langage étudiées dans le patois d'une famille de Cellerouin.

ճատը, այլ նրանց միջոցը կամ եղանակը (ինչպես և ոչ թե ինչու)։ Երկրորդ՝ ինչու՞ համար միևնույն ժամանակ ծնվող երեխաները բոլորն էլ միասեռակ պիտի փոփոխեին լեզուն և ոչ զանազան ձևով և երրորդ՝ ինչու՞ լեզուները դարձնել շարունակ մնում են առանց ձևափոխության և մեկ էլ հանկարծ սկսում են արագ-արագ ձևափոխվել։

Ընդունելով, որ ձայնական փոփոխությունները ձայնական գործարանների գործունեության ձևի փոփոխության արդյունքն են, մենք կարող ենք առաջաց գտնել որևէ ձայնի ապագայի կրելիք փոփոխությունների շարքը։ Օրինակ, ինչ կարող է դառնալ S ձայնը։ Այս հնչումը արտաբերելու համար լեզուն պետք է բարձրանա առամների մոտ, և օդը հոսի առաջ եկած անցքի միջով։ Արդ, եթե լեզուն պետք եղած չափով բարձրացած չլինի, անցքը կլայնանա և օդը չկարողանալով շփել լեզուն ու առամները, ազատ կհոսի դուրս, որով սալոցը կդադարի և կառաջանա մի պարզ շունչ (h)։ Եթե ընդհակառակը՝ լեզուն պետք եղած չափից ավելի բարձրանա, կառաջանա մ (անգլիերեն the) ձայնը կամ նույնիսկ է։ Եթե այժմ սրանց վրա ավելանա կոկորդի թրթռումը և համեմատաբար տկարանա շունչը, առաջ կգան z, f, d ձայները։ Ուրիշ հանդամանքներում նույն S ձայնը կարող է դառնալ s, որի թրթռումն է չի։ Եվ ահա S ձայնի կրելիք բոլոր փոփոխությունները։

Բայց սրանք զեռ S ձայնի ընդհանրապես կրելիք փոփոխություններն են, անկախ տեղից և ժամանակից։ Իսկ եթե նկատի առնենք տեղն ու ժամանակը, կարող ենք փորձի վրա հիմնվելով ասել, թե, օրինակ, հնդկվրոսպական նախալեզվի S ձայնը հայերենի մեջ մինչև V դար տալիս է h կամ ջնջվում է, ձայնի հետ միանալով տալիս է u և այլն։

Հաճախ գիտնականները կրկնում են այն միտքը, թե լեզուն իր բնավայրում մնում է ըստ կարելիության անադարտ, և այնքան հեռանում է իր նախնական ձևից, որքան հեռանում է իր բնավայրից։ Սրանով ձայնափոխությունները, հետևաբար և լեզուն կապվում են հայրենիքի հետ և որովհետև ազգն էլ է կապվում հայրենիքի հետ, ուրեմն վերջին հաջվով ազգ և լեզու նույնանում են։ Զիտոսենք վերջին անհեթեթության մասին, որովհետև վերը արդեն պարզել ենք, թե ազգ և լեզու, ինչպես նաև ցեղ և լեզու ոչ մի կապ չունեն իրար հետ։ Ազգ ու ցեղ կարող են ընդունել որևէ լեզու, և միշտ պատրաստ են փոխելու իրենց խոսած լեզուն և լուրացնելու մի ուրիշ (նախնիսկ բոլորովին օտար) լեզու, եթե մի-

ջավալը կամ հանդամանքներն այդպես տնօրինեն։ Բայց լեզու և հայրենիք նույնպես չունեն որևէ կապ իրար հետ։ Նախ լեզուների մեծ մասի ծագումը չգիտենք, կամ եթե ծագման մասին որևէ բան գիտենք, նրանց հայրենիքի և մանավանդ նախահայրենիքի մասին ոչինչ չգիտենք։ Ուրեմն ինչպես կարող ենք խոսել ձայնական փոփոխությունների հարաբերության մասին՝ հայրենիքի հետ։

Երկրորդ, որքան լեզուներ փոխադրվել են տեղից-տեղ, երկրից-երկիր, նույնիսկ կիսազնդից-կիսազունդ (այսպես անգլիերենը, իսպաներենը, պորտուգալերենը և այլն) և զեռ շարունակում են իրենց գոյությունը միևնույն ձևի տակ։

Գիտնականները իրական օրինակներ են բերում հենց այս վերջին կետում և ուզում են հաստատել իրենց տեսությունը։ Դրժբախտաբար հաճախ երևույթները ճիշտ հակառակն են ապացուցում։

Օրինակ առնենք հայերենը։— Գրաբարն ուներ հայցականի համար զ նախդիրը և բացառականի ու ներդրականի համար ի նախդիրը։ Սրանք աջնախի հատկանշական տարրեր են, որ անկարելի է ենթադրել զրաբար առանց զ-ի և ի-ի։ Նոր բարբառներում սրանք նման տեղ ջնջված են։ Հայաստան երկրում միայն Մուշը գիտի զ նախդիրը, մյուս վայրերից Վանը, Կարինը, Երզնկան, նույնիսկ Հայաստանի արդի մայրաքաղաք Երևանը կամ ընդհանրապես Արարատյան բարբառը ոչ զ գիտեն և ոչ մանավանդ ի։ Իսկ Հայաստանից հեռու Սվեդիայի (Մուսա լեռան) բարբառը, ինչպես և Ավստրիայի հայոց (Մուշավայի) բարբառը կանոնավոր կերպով պահել են մինչև այժմ հայցականի զ նախդիրը, Սվեդիան նաև ի նախդիրը։

Հայաստանի սիրտը կազմող Երևանի բարբառը հնչում է լիս, քիթ, մինչդեռ Հայաստանից հազարավոր կիլոմետրեր հեռու՝ Պոլսի բարբառը զրաբարին շատ ավելի հավատարիմ ձևով հնչում է լուս, քուր։ Անձնական դերանվան առաջին դեմքը գրաբարում ունի հայցական զիս, բացառական յիևեև ձևերը, սրանց զեռ Երևանի բարբառը ներկայացնում է այսօր հայցական ինձ, բացառական ինձից, իսկ հեռավոր Պոլսի բարբառը՝ հայցական իս, բացառական իևե, որոնք ուղղակի հարազատ պատկերն են գրաբարի։

Հիշենք վերջապես Ազուլիսի բարբառը (հին վիպասանների հայրենիք Գողթն գավառում, Մեծ Հայաստանի կենտրոնում), որ այնքան է ձևափոխված, որ հազիվ կարելի է հայերեն կոչել, մինչդեռ Հայաստանից շատ հեռու՝ Պոլսի, Զմյուռնիայի, Նիկամիդիայի, Ռոստոմիայի և այլ վայրերի բարբառները տասնապատիկ ավելի հա-

րազատ են, քան Ազուլիսի բարբառը: Նույն բանը կարելի է ասել նաև, թեև նվազ համեմատությամբ, Ոզմիի, Մոկքի, Սալմաստի, Ուրմիալի և այլ բարբառների համար, որոնք բոլորը գտնվում են Մեծ Հայոց սահմանների մեջ:

Այժմ առնենք մի ուրիշ օրինակ մեր դրացի թուրքերենից:

Թուրքերենը մի լեզու է, որ խոսվում է Միջին Ասիայից սկսած մինչև Բալկաններն ու Ադրիականը: Երկու Ատրպատականներում (Կովկաս և Պարսկաստան) խոսված լեզուն էլ պատկանում է նույնին: Այս վերջին երկուսը նախավոր հայերենիքին շատ մոտիկ են: Չնայած դրան, Անատոլյուի և Պոլսի թուրքերենը հաճախ ավելի հարազատ ձև է ներկայացնում քան Ազերին: Օրինակ.

«Ես» դերանունը ազերի լեզվով ունի mən ձևը, Պոլսում ben: Այս երկուսը միևնույն բաներն են: Ո՞րն է սրանցից նախնականը: Որովհետև երկրորդ դեմքի դերանունն է ազերի sən, Պոլսի sen «դու», որի հոգնակին է հավասարապես sız «դուք», ուստի առաջին դեմքի էլ նախնականն է ben, քանի որ հոգնակին երկուսի մեջ էլ լինում է biz «մենք»: Մեր ասածը վերջի վերջո հաստատում է bi ձևը, որ տունգուսերեն և մոնղոլերեն նշանակում է «ես» (Яс-трем. 76):

«Ես» դերանվան Պոլսի թուրքերեն ben և ազերի լեզվով mən ձևերի նախնականը կարող է լինել ben, որ համանմանությամբ վերջին ռնգականի դարձել է mən, կարող է լինել նաև mən, որ տարանմանությամբ դարձել է ben: Երևույթը նույնն է, ինչպես.

Պոլսի bin «հազար» ադրբեջաներեն min

Պոլսի burun «քիթ» կիրգիզերեն murun (Bygarob, I, 277)

Պոլսի miyān «մասուտակ» ադրբեջաներեն biyān

Պոլսի mahana «պատրվակ» պարսկերեն bahāne, բայց նույնիսկ օտար փոխառյալ մի բառ՝ կվրոպական terebenthine դարձել է տանկերեն tirementi «բեկկնի լուղ»:

Մեր քննած հարցի համար հետաքրքրական է թուրքմեներենը, որ ուղղակիանում (այսինքն անկախ դիրքում) ասում է bu «այս», բայց հենց որ հորովում է սեռական munən «սրա», տրական muna, ներգոյական munda, բացառական mundan «սրանից», որոնց մեջ b դարձել է m՝ հաջորդ n-ի պատճառով (тайлнев, 43):

Նմանապես կարաչալ լեզվով ասվում է bu «այս», բայց հորովման մեջ սեռական munu, ներգոյական mənda, բացառական mənnan «սրանից» (Алиев, 72):

Ուլդուր լեզվով էլ ասվում է ուղղական bu «այս», սեռական munin, հայցական muni, տրական muñğa և այլն (торовков, 74):

Նոդայերեն լինում է bu «այս», սեռական երկու ձևով bunun և munun (такаков, 77), կումուխերեն՝ bu «այս», բայց հայցական mupu (զայս) (Дмитриев 78):

Նույնիսկ պարսկերենից փոխառյալ մի բառ, որի ստուգաբանությունը շատ պարզ է, ներկայացնում է b>m ձայնափոխությունը. այն է պարսկերեն bāy-bān «այգեգործ», որ նորից սասնալով թուրքերեն ըմ մասնիկը, դարձել է baymanči, դարձյալ n-ի ազդեցությամբ:

«Եղյամ» բառը Պոլսի թուրքերենում ունի qəgəgə ձևը, Ատրպատականում կըրով: Ո՞րն է սրանցից նախնականը: Հարցը վճռում է բառի ստուգաբանությունը, որ շատ պարզ է Պոլսի թուրքերենում. այն է՝ qəg «գաշտ» + օրգ «սպիտակություն»: Ըստ այսմ եղյամն է գաշտի սպիտակությունը: Ատրպատականը թեև գիտի qəg «գաշտ» և aḡ «սպիտակ», բայց նրանց բարդությունը այնպես է ձևափոխվել, որ ոչինչ չի հասկացվում: Այստեղ էլ ուրեմն նախնականը ներկայացնում է Պոլսի և սչ թեև Ատրպատականը:

Այստեղ իրավունք ունենք հիշատակելու նաև փոխառյալ բաների հարցը: Լեզու լեզվից շատ բառ է փոխ առնում, բայց հաճախ պատահում է, որ փոխ առնված բառը փոխառու լեզվի մեջ ավելի լավ պահպանված է լինում, քան փոխառու լեզվի մեջ: Այսպես, հայերեն պատկեր, նիզակ, վատ, վատքար, վնաս և այլն բառերը, որոնք փոխ են առնված իրանականից, ավելի մոտիկ են պահպանվերեն patkar, nēzak, vat, vattar, vinās ձևերին, քան նրանց հարազատ ներկայացուցիչ պարսկերեն peyker, nize, bed, bedter, gunah բառերը. ուրեմն հեռավոր հայերը ավելի լավ են պահել այդ բառերը, քան մոտավոր ու հարազատ պարսիկները: Չեմ խոսում նախ<պհլ. naxv, վասն<հպրս. vasma, վին<պհլ. vīn, վինակ<պհլ. vāičak և այլն նման բառերի մասին, որոնք բոլորովին ջրնջված են պարսկերենում, իսկ հայերենում ոմանք պահվել են, ոմանք էլ դեռ պահվում են:

Սրան հակառակ հայերեն պարան բառը, որ թուրքերենը փոխ է առել հայերենից, ավելի լավ է պահված թուրքերենում (Ակն, Ազանա և ուրիշ տեղեր), քան, օրինակ, Հաճինի հայոց բարբառում, որ ստացել է բայոն ձևը, և Սվեդիալի հայոց բարբառում, որ ստացել է գարուն ձևը:

Ղարազադում հայերը «փերակ» իմաստով գործածում են թուրքերեն զovan բառը, իսկ թուրքերը՝ հայերեն petek բառը!

Իրանում մահմեդականության տարածմամբ շնչվեցին բոլոր հին իրանական անունները (Սուրեն, Արշակ, Շավարշ, Տիգրան և այլն և այլն), մինչդեռ զրանք շարունակում են ապրել մեր մեջ:

Լատիններեն Augustus բառը Հռոմից հազարավոր կիլոմետր հեռու Հայաստանում գործածվում է այսօր Օդոստոս ձևով, մինչդեռ Հռոմի քթի աակ ֆրանսերենում հնչվում է միմիայն օ (գրքվում է août):

Այսպես տրեմն, լեզվի պահպանման համար հայրենիքը կամ հայրենիքի մերձավորությունը նշանակություն չունեցող մի հանգամանք է:

Ի՞նչ էլ լինի ձայնական փոփոխություն պատճառը և ինչ ձևով էլ որ առաջացած լինի այն, մի անգամ, որ երևան եկավ և դորձագրվեց, այլևս ոչ մի կերպ կարող չէ հետ դառնալ: Ինչպես որ մեռած կամ կորած մի լեզու անհնարին է վերականգնել, նույնպես և անհնարին է որևէ կատարված ձայնափոխություն հետ դարձնել: Որքան միջոցներ գործադրվեցին, որքան փորձեր կատարվեցին արևմտահայ տառագարծությունը կա դարձնելու և հնին վերածելու համար, ազարդյուն եղավ բոլորը: Եթե արևելահայը զարմանում է, որ արևմտահայը սխալ է հնչում բարի, գուցե բառերը և կամ սխալ է գրում Պերլին, Կոկոլ բառերը (փոխանակ Բեռլին, Գոգոլ), թող հիշի, որ ինքն էլ սխալ է հնչում բոլոր դ-ով բառերը՝ խաղող, ուղիղ, ուղեղ, որոնք V դարում և մինչև IX դարը հնչվում էին խալոլ, ուլլիլ, ուլել: Իսկ եթե Անգղիա, Ղուկուղղուս, Սիղղա, Եւղղիա և նման հատուկ անուններ այսօր վերափոխվել և դարձել են Անգլիա, Լուկուլլուս, Սիլլա, Եվոլլիա, դա ոչ թե ձայնական օրենքի վերագարծն է, այլ նոր փոխառություն: Ճիշտ նախ երևալի է նաև, երբ կիլիկեցի մի թրքախոս հայ կամ ուսմիճախոս մի ուսմիճահայ սովորի որևէ ձևով հայերեն լեզուն և նորից հայխոս դառնա: Նրանց խոսած հայերենը այլևս կիլիկիայի կամ Ռումիլիայի նախկին հայ բարբառը չէ, այլ այն տեղի բարբառը, որ նորից սովորեցին հայ լեզուն:

2. ՉԱՅՆԱՐԱՆԱԿԱՆ ՈՍՏՈՒՄՆԵՐ

Գիտություն մեջ, մեր աչքի առաջ ունենալով լեզվի հին ու նոր ձևեր, մի անգամից եզրակացնում ենք, թե այս ինչ ձայնը վի-

բածված է այն ինչ ձայնի: Թեև գիտենք, թե անշուշտ հնից մինչև նորը ձայնափոխության մեջ անցումներ տեղի ունեցած պիտի լինեն, բայց մենք այդ անցումները նկատի չենք ունենում և ասում ենք միայն. օրինակ, հայերենի մեջ նախածայն օ դառնում է հ:

Նրանք, որ մանուկների բարբառն են քննել, աչքի առաջ են ունենում անցումների այնպիսի մի շարք, որ մի բառով կոչում ենք ուսում: Այդ գիտնականները նկատել են ուսումը և նկատել են նաև, թե այդ ուսումը կատարվում է բուպեապես: Ուրիշ խոսքով, նրանք բոլորը իրար հետից հաջորդաբար կատարվում են մանկան ուղեղի մեջ, իսկ մանուկը արասանում է միայն վերջին արդյունքը:

Օրինակ, երևանում ուկրաինացի սուսախոս մի աղջիկ, երեք տարեկան հասակում, սուսերեն ԾУМАГА բառն արտասանում էր մուեգագա: Անմիջապես հասկացվում է, որ այս վերջինը ազավազամն է առաջինի և որ առաջինը մինչև վերջինը հասնելը միջին բազմաթիվ ձևերից է անցել, բայց այդ ձևերը երբեք ձայնով կենդանացած չեն:

Առնենք մեծերի լեզվից մի օրինակ: Պուլսահայ բարբառում «հրեա» բառի իմաստով գործածվում է յավուդի (yavudi), այս բառը բնականաբար առաջացել է թուրքերեն yahudi բառից, ուստի մենք պիտի հետևենք, թե հ դարձել է վ: Բայց դա սխալ է. հ ձայնը չէր կարող դառնալ վ. հաց բառը չէր կարող ոչ մի տեղ դառնալ վաց: Յահուդի ձևից մինչև յավուդի ունենք նախ հ-ի անկումով՝ յաուդի և ա և ու ձայնավորների մեջտեղ վ-ի հավելումով՝ յավուդի:

3. ԲԱՅԱՌՈՒԹՅՈՒՆ

Նախկին քերականները բացառություններն ընդունում էին իրրե պարտադիր և սովորական երևույթ և ամեն մի կանոնի անբաժանելի հավելված: Ասում էին, թե չկա կանոն առանց բացառություն:

Արդի քերականները, նախորդներին ճիշտ հակառակը, չեն ընդունում բացառության գոյությունը և ասում են, թե այն կանոնը, որ ունի բացառություն, տրեմն կանոն չէ:

Արդի քերականները նայում են բացառությամբ վրա իբրև կանոնի կողքին մի ուրիշ երկրորդական կանոնի արդյունք, մի երևույթ, որ դեռ իր բացատրությունը չի գտել և սպասում է բացատրության:

Արդի քերականները շատ բան, որ բացառություն էր համարվում, բացատրել են գիտական նորանոր լուսարանություններով:

Հիշենք գրանցից մի քանիսը:

Հայր, մայր բառերի սեռական հօր, մօր ձևերը բացառություն էին, հին քերականների համար անմեկնելի: Բայց այժմ այս ձևերը բացատրվում են հնդեվրոպական ձայնաբանության լուսի տակ, շատ զեղեցիկ ձևով:

Հայր, մայր բառերի նախածանն է patēr, māter, որոնց մեջ է գանվելով երկու ձայնավորի միջև, դառնում է j և ապա վերջավանդի ձայնավորի անկումով ստացվում է հայր, մայր:

Սեռականում հնդեվրոպական նախածանն է patros, mātros, որոնց մեջ է գանվելով ր-ից առաջ, դառնում է ըստ օրինի հայերեն ւ (հմմտ. *nutro* > մուր, *alatrios* > աղաւրի, աղաւրիք, աղօրիք): Ըստ այսմ patros, mātros կանոնավոր ձևով դառնում են հաւր, մաւր, որ է հօր, մօր:

Շատ անկանոն է քոյր բառի սեռական քեռ ձևը, բայց հիանալի կերպով բացատրվում է հնդեվրոպական նախալեզվի *swesor* «քոյր» բառի սեռական *swesros* ձևով, որ *sw* տալիս է ըստ օրինի հայերեն ք և *sr* > ո:

Բացառությունները շատ կարեւոր են հատկապես հին ու կորած երևույթները երեւան հանելու համար: Ի՞նչ կա այնտեղ անկանոն, քան առնել բայի կատարյալ անցյալ արարի ձևը, բայց այս հրեշք մի հրաշալիք է մեզ համար, որովհետեւ նա է ցույց տալիս, որ հայերենն էլ ունեցել է արմատի կրկնությունը կազմված կատարյալ ձևը: Նա միակ և վերջին մնացորդն է այս օրենքի, որ այժմ աշխարհարարում բոլորովին ջնջվել է և կենդանի է մնում դեռ միմիայն Նոր-Ջուզայի բարբառում:

Հիմն բառը հոլովման և անանցման ժամանակ պահում է իր ի ձայնավորը և չի սղվում (սեռական հիման, գործիական հիմամբ, անանցման հիմնավոր, բալ հիմնարկել): սա բացառություն է ընդհանուր կանոնի դեմ. սպեղը անուշադրության է մատնում այդ երևույթը. բայց ընդհակառակը դա մի զեղեցիկ ապացույց է այն մասին, թե հին հայոց մեջ ինչպիսիք թույլ հնչում ունի և կարող

էր ուրեմն պահել իրեն հաջորդող ձայնավորը: Իսկ երբ նկատենք, որ մի կողմից ունենք հինգերորդ (ի չսղված) և մյուս կողմից հընգետաւան (ի սղված), այդ նշանակում է երկուսի տատանյալ դրությունը:

Այսպիսով բացառությունները ծառայում են մեզ իբրև հրեւարագրու մի միջոց անձանոթ գաղանթները երեւան հանելու համար:

4. ՉԱՅՆԱՓՈՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԳԱՐՁ

Եթե ձայները մշտապես փոփոխելի են, ուրեմն կարող են իրենց ձայնափոխության շրջանում մեկից մյուսը անցնելով նորից գալ հասնել նախկին վիճակին: Այսպիսի երևույթի շատ հետաքրքրական պատկեր են ներկայացնում հայերենի պալթականները: Գիտենք, որ հնդեվրոպական նախալեզվի *b*, *g*¹, *g*², *d* թրթուռները *V* դարում (և այնպիսի շուտ) դարձել էին խուլ *պ*, *ծ*, *կ*, *ա*: Միջին հայերենում, Կիլիկյան բարբառի մեջ այդ խուլները դարձան թրթուռներ (հնչյում էին *b*, *g*, *d*, *j*), հետևաբար հասել, վերագարձել էին հնդեվրոպական նախկին վիճակին:

Ոմանք կարող էին կարծել, թե արեւմտահայերը, որոնք ալսօր էլ այդ հնչումը (թրթուռն) պահում են, շարունակում են հնագույն հայերենի (նախքան *V* դարը) հնդեվրոպական վիճակը: Բայց դա ճիշտ չէ. նախ՝ որովհետեւ միջին (Կիլիկյան) հայերենի *պ*, *կ*, *ա*, *ծ*, ինչպես ձայնավորները հաստատ է. երկրորդ՝ որովհետեւ եթե արեւմտահայերը պահած լինեին նախքան *V* դարի հնչումը (այն է հնդեվրոպական նախալեզվի *dōm* «տուն» > ուսերեն *дом*, Պոլսի բարբառով *դուն*), այդ պիտի երևար նաև օտար փոխառյալ բառերի մեջ: Այսպես, *V* դարից առաջ, հայերը փոխ էին առել պահլավերենից *patkar*, *karmir* և այլն ձևով բառեր, որոնք գրվում են պատկեր, կարմիր (*p*=*պ*, *k*=*կ*): Եթե արեւմտահայերը *V* դարում կամ այնպիսի առաջ հնչած լինեին *պ* > *բ*, *կ* > *գ* և այլն, այս հիշյալ բառերն էլ այժմ պիտի հնչեին *ո՛չ* թե *badger*, *garmir* (ինչպես հնչում են այժմ), այլ *patker*, *karmir* կամ *փաթքեր*, *քարմիր*:

Սրանից երևում է, որ ձայնաշրջությունը կատարված է երկու անգամ և երկրորդը վերագարձ է առաջինին*:

* Տես Հր. Անադյան, Հայոց լեզվի պատմություն, 2 հատ., էջ 379—380.

Հնդեվրոպական բառերի մեջ վերջաձայն *m* գտնում է հայերեն *m*. ալթայե *m* *nom* > *m* *nom*, *dom* > *m* *nom*, լատիներեն *quam* > *m* *nom*. այս կարգի բառերի մեջ հաճախ վերջաձայն *m* բարբառների մեջ գտնում է նորից *m*. ինչպես՝ *m* *nom*, *m* *nom*, *m* *nom*, *m* *nom*, *m* *nom*:

Իրանական *xš* ձայնախումբը տալիս է հաճախ շրջամբ *խշ-* փոխարեն *չի*. ալթայե *խշ* < *xš*, ալթայե *խշ* < *xš* պարսկերեն *xšaθra*. մեր նոր բարբառներում սրանց գեմ գտնում ենք տեղական *իխշել*, ալթայե *իսի* հայերեն *իաշիել* բառի տեղ գաղափարական *իաշիել* ձևը նոր պարսկերենից է փոխ առնված:

Գրաբար խառն բառի գեմ սխառ *մեր*, որ առաջացել է սոխ բառի նմանությունից, վերափոխվել է այն շարքը, որ ունի հայն *մեր*՝ *skorodon*:

Հնդեվրոպական նախալեզվի *rt* գտնում է հայերենում *րդ*, ալթայե *rt* գտնում է *ր-*ից հետո *rt*. ինչպես՝ *rt* > *rt* *rt*: Միջին և նոր հայերենում *ր-*ին հաջորդող *դ* հնչվելով *ր*, նախկին վիճակը վերականգնված է լինում:

Ալթայե բարբառում *հայր*, *մայր*, *փայր* բառերը մնում են անփոփոխ, մինչդեռ մյուս բարբառներում գտնում են *իեր*, *մեր*, *փեա* կամ *իար*, *մար*, *փաա*. Ընդհանրապես քննիչները կարծում են, որ այս կարգի բառերի մեջ գրաբար *այ* մնում է անփոփոխ: Ես արդեն չեմ կարծում: Ենթադրում եմ, որ սրանք էլ հղել են նախապես *իեր*, *մեր*, *փեա*, ապա է գարծել է *այ* (ինչպես որ *ի* գտնում է *այ*), որով նախկին *մեր* վերադարձել է:

Հունգարահալ բարբառում գրաբար *չեմք*, որ աշխարհաբարում ամեն տեղ գարծել է *չեմք*, ստացել է *չիմք* ձևը: Սրանով նախկին *մեր* վերադարձել է:

Չայնական փոփոխություններն ունեն իրենց մեջ որոշ հաջորդականություն, այնպես որ շատ անգամ կարելի է որոշել, թե որ օրենքը որ օրենքից առաջ է կամ հետո: Ալթայե, օրինակ՝ Հաճիսի բարբառով *քեհիլիլ* «սաթ», որ ծագում է պարսկերեն *kah-ribār*, թուրքերեն *kehribar* բառից, ներկայացնում է երկու ձայնափոխություն. *rt* > *rt*, *rt* > *rt*, չհաջվելով *a* > *o* ձայնափոխությունը: Այս երկուսից հնագույնը անշուշտ առաջինն է, որովհետև երկու հաջորդական *rt*-երից մեկը *l* գտնալը սովորական ասարանմանություն օրենքն է, իսկ *rt* > *rt* ձայնների միջև ալթայե ձայնափոխություն սովորական չէ:

5. ՉԱՅՆԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Քանի որ ձայնական օրենքները մշտական չեն և ժամանակի ընթացքում փոփոխական են, կարելի է որոշել, թե ալթայե օրենքը երբ կար և երբ անհետացավ:

Չայնական օրենքների ժամանակագրությունը որոշելու համար իբրև զխափոր միջոց ծառայում են լեզվից լեզու փոխառությունները, որոնք պատմական հանգամանքների հետ կապված լինելով, միջոց են տալիս մեզ ձայնական օրենքների ժամանակն էլ որոշելու:

Այս կարգի մի զեղեցիկ աշխատություն ունի Hübmann, որ «Sprachwissenschaftliche Abhandlungen» հանդեսի մեջ (1, էջ 129—172) ընդարձակ մի հոդվածում որոշում է հայերենի *ի* և *ու* ձայնավորների անկման օրենքի ժամանակը, որի հետ զուգընթաց է նաև *ոյ* > *ու*, *ե* > *ի*, *ևա* > *ե* ամփոփման օրենքը:

Հյուբմանի հետևողությունը կարելի է նմանօրինակ հենթադրություններ էլ անել հետևյալ ձևով.

1. Հնդեվրոպականից հայերենին անցնելու ժամանակ *s* գտնում է *հ*. ինչպես՝ *seno* > *հին*, փոխառությունում կա *satilla* «սալլ», Չ Մեծ Արշի համաստեղությունը», որից փոխառվել է հայերեն սալլ իր երկու իմաստներով: Եթե հայերեն սալլ փոխառությունից է, արեմն այն ժամանակ, երբ հայերը փոխառությունների հետ հարաբերություն մեջ էին, նախաձայն *s* > *հ* օրենքը վերացել էր: Փոխառական արձանագրությունները գնում են մեր թվարկությունից առաջ XII դարից մինչև 1000 թվականը, ուստի նույն ձայնական օրենքի վերացումն էլ այդ շրջանից պիտի լինի: Այդպես է նաև հայերեն սրիևգ բառը, որ նույնպես փոխառական փոխառություն է (տես Արմատական բառարան):

2. Հնդեվրոպական նախալեզվի նախաձայն *v* գտնում է հայերեն *գ*. ինչպես՝ *worg* > *գործ*. ալթայե է նաև *qih*, որ Միջերկրյան փոխառություն է հայերենում. հայերենից էլ փոխառվել է վրաց *ղվիլի*, *ղվիլե* «ղինի», որի նախաձայնը (*ղվ*) ցույց է տալիս, թե այն միջոցին, երբ հայերը վրաց հետ հարեանություն մասն, դեռ հայերենի նախաձայն *q* լիովին *q* չէր, այլ *v*-ից *q* անցնելու շրջանումն էր: Այդ ժամանակ էր մեր թվարկությունից առաջ IV դարը:

3. Հնդեվրոպական նախալեզվի *g* տալիս է հայերեն *կ*. ինչպես՝ *gov* > *կով*, *ger* > *կեր* և այլն:

Հայերենի մեջ ունենք մի խումբ ասորեստանյան փոխառութիւններ, որոնց մասին խոսված է իմ Հայոց լեզվի պատմութեան մեջ (էջ 195—200): Սրանց մեջ $g >$ կ' ձայնափոխութիւնն են ներկայացնում հետևյալ բառերը.

կիր < արամերեն, եբրայերեն $g\bar{i}r$,

կղզի < ասուրերեն $g\bar{a}zar-t\bar{a}$.

կմախք, կմախիք < ասուրերեն $gimaxx$.

կշիռ < ասուրերեն $gišrinnu$.

Այս բոլորը համաձայն են հնդեվրոպական նախալեզու > հայերեն հնագույն ձայնափոխութեան օրենքին:

Բայց որոնց հետ կան նաև մի քանի անհամապատասխան կետեր. օրինակ.

1. Բառերից ոմանք թե g և թե k հնչումով են. ինչպես կմախք < ասուրերեն $gimaxxu$ կամ $kimaxxu$:

2. Կա բառ, որ մեր կ-ի գեմ ցույց է տալիս պարզապես k . ինչպես՝ կնիք < $kun\bar{u}kku$:

3. Կան բառեր էլ, որ տարբեր համապատասխանութիւններ են ներկայացնում. ինչպես՝

անագ < ասուրերեն $an\bar{a}kku$, սումերերեն $n\bar{a}gga$, հին սումերերեն $anag$.

բերդ < ասուրերեն $birtu$.

բուռ «ծիփ» < բարելերեն $bulu$, ասուրերեն $p\bar{u}lu$.

գագաթն < բարելերեն $gagadu$, ասուրերեն $kakkadu$.

ուղտ < ասուրերեն $uldu$.

ուրագ < ասուրերեն $urraku$.

տամալի < ասուրերեն $taml\bar{u}$.

նահանգ < ասուրերեն $naanga$.

տարածել < ասուրերեն $tara\bar{s}u$:

Այս անհամապատասխանութիւնները արգելում են որևէ եզրակացութիւն հանել ձայնական օրենքների մասին հալ և ասորեստանյան բառերի միջև, մանավանդ երբ նկատի ունենք հետևյալ կարևոր հանգամանքները:

Ասորեստանյան պատմութիւնը կործանվեց 608 թվականին, երբ դեռ հայերը Հայաստան չէին մտել և բնակվում էին Փոքր-Հայքում: Ասորեստանյան բառերը չէին կարող ուղղակի հարարելութեամբ փոխանցվել հայերենի, որովհետև հայերի և ասորեստանյանների միջև կապ չկար: Ուստի փոխառութիւնը պիտի լիներ անուղղակի, այսինքն մի ուրիշ ազգի, այն է՝ խաղիների միջոցով,

որոնք գտնվում էին այս երկու ազգերի միջև: Սաղերենն անշուշտ հայերենի համար հալթայթեց զանազան փոխառութիւններ, որոնց մեջ կարող էին գտնվել նաև ասորեստանյան բառեր:

Ասորեստանյանների, բարելացիների և սումերների լեզուներն էլ ունենին բարբառային տարբերութիւններ. նրանց մեջ էլ $g-k$, $d-t$, $b-p$ խառնվում էին իրար հետ՝ անորոշ հնչման հետևանքով, ուստի կարող էին մերթ ալս և մերթ այն ձևով հասնել հայերին:

4. Փոխառութիւնների միջոցով ձայնական օրենքների ժամանակը որոշելու նվիրված է Հայոց լեզվի պատմութեան 2-րդ հատորի Իէ գլուխը (էջ 362—439), ուր բազմաթիվ օրինակներով և մանրամասն քննութեամբ ցույց է տրված հալ բարբառների ծագման ժամանակը:

Սկզբունքը հետևյալն է.

Երբ մի ձայնական օրենք ձևանում է մի լեզվի մեջ, այն ժամանակ գտնված բոլոր բառերը (անկախ իրենց ծագումից) հպատակվում են նույն օրենքին: Երբ ձայնական օրենքը վերանում է (այլևս չի գործում), որևէ լեզվից մտած նոր փոխառութիւն չի երթարկվում արդեն այդ օրենքին, որովհետև օրենքը վերացել էր: Ռուսերենը շատ նոր լինելով զերծ է մնում հին հայոց այն բոլոր տեսակի ձայնական օրենքներից, որոնք այլևս չեն գործում: Երևանի բարբառախոս ժողովուրդն ասում է այժմ էլ արամվա, որոշյալը՝ արամվեն, սուպ (суп, սեռականը՝ սըպի,) ինչպես և կավուչուկի գործարան: Առաջինը նրա համար, որ բարբառում գործում է զեռ այ կրկնաբար բաղաձայնի մոտ է դարձնելու օրենքը: Երկրորդ նրա համար, որ հոլովման մեջ սղման օրենքը զեռ կա: Եվ երրորդն էլ նրա համար, որ ձայնափոխների հորանջը (hiatus) հարգի չէ: Իսկ գրական լեզվով խոսող անձինք չեն պահում այդ օրենքները, ուստի ասում են արամվայը, սուպի, կաուչուկի:

Թուրքերենը Հայաստան մտած լինելով XI դարից սկսած, կարող է լավ կովան ծառայել բարբառների ձայնական օրենքների ժամանակը, հետևաբար և իրենց ծագման ժամանակը որոշելու համար. օրինակ՝

Ղարաբաղի բարբառում ու ձայնավորը թրթուռն բաղաձայնից հետո դառնում է իւ. ինչպես՝

ձու > ծիւ, ձուկն > ծիւկնը, զու > զիւ, զուռն > աիւռնը, ջուր > ֆիւր և այլն:

Իսկ խուլ բաղաձայնից հետո դառնում է օ. ինչպես՝

սուա > uoa, շուն > շոն, տուն > տոն, ժուս > ժոս, տուր > տո՛, բուն > բոն, թուգ > բոզնր և այլն:

Թուրք բառը ենթարկվում է այս օրենքին և, լինում է բորք. իսկ ռուս բառը մնում է ռուս (ոչ թե ռոս կամ ռիւս): Արանով էլ որոշվում է օրենքի ժամանակը, որ է XI դար:

Ղարաբաղի բարբառում թրթաուն բաղաձայն պայթականները բառակցում դառնում են պարզ խուլ, իսկ Երևանի բարբառում՝ շնչեղ թրթաուն. ինչպես՝

բան	Երևան բան	Ղարաբաղ պեն
բերան	» ր՛էրան	» պէրան
գիր	» գ՛իր	» կ՛իր
դու	» դ՛ու	» զիւ
ձայն	» ձ՛էն	» ծէն
ջուր	» ջ՛ուր	» ջիւր և այլն:

Այս երևույթը հասուկ է միայն հայերեն բառերին, իսկ թուրքերեն բառերը պահում են իրենց նախաձայն պարզ թրթաուն բաղաձայնները թե Երևանի և թե Ղարաբաղի բարբառում. ինչպես՝

Թուրքերեն	buğa	«ցուլ»	Երևանի և Ղարաբաղի բուղա
	güzel	«գեղեցիկ»	» » գյոզալ
	dana	«հորթ»	» » դանա
	jam	«թաս»	» » ջամ

Այն հանգամանքը, որ երկու բարբառներում էլ թուրքերեն բառերը չեն ենթարկվում բաղաձայնների փոփոխման այս օրենքին, ցույց է տալիս, թե օրենքն սկսել էր գործել և վերջացել է այն ժամանակ, երբ դեռ թուրքերեն բառերը մտաք չէին գործել հայերենի մեջ, այն է՝ XII դար և ավելի ուշ:

Հայերենի փոխառյալ բառերն էլ կարող են պարսկերեն լեզվի ձայնավորների փոփոխման ժամանակը որոշել:

Գիտեք, որ պարսկերեն լեզուն այժմ ունի երեք տեսակ արտասանություն. 1. գիտական, որ գիտական գրականություն մեջ ընդունված առաջարձությունն է, 2. պարսիկ ժողովրդական, որ Պարսկաստանի մեծ մասում տարածված և պարսիկ պաշտոնական լեզվի մեջ էլ ընդունված ձևն է, 3. թուրքական, որ Արաբաստանում և Տանկաստանում ընդունված ձևն է: Օրինակ՝ «վարզ» բառը գիտական արտասանությամբ լինում է gul, ժողովրդական gol, թուրքական gül:

Իսրա հանելով վերջինը, որ անշուշտ բնիկ և հարազատ չէ, առաջին երկուսից հնազույնը գիտականն է, ինչ որ ապացուցվում

է հենց նրանով, որ արաբերենից վերցրած սովորական բառերն էլ ենթարկված են նույն ձայնափոխության: Այսպես՝ արաբերեն ilj-sān, iftixār, Muhammad գտնում են պարսկերեն ehsān, eftexār, Mohammād:

Հայերենի ձայնական օրենքների համաձայն գիտենք, որ անշեշտ ի և ու ջնջվում են, իսկ ե և ո պահվում են: Արգ, եթե տեսնում ենք, որ հայերենի մեջ պարսկերենից առնված բառերը կորցնում են իրենց ի, ու ձայնավորը, արևմն իրոք գրանք ի և ու են կղել պարսկերենում և ոչ թե ե, ո, որոնք անշուշտ պիտի մնային, եթե պարսկերենում այդպես հնչված լինեին:

Ձայնական օրենքներն ունեն նաև իրենց հարաբերական ժամանակը, ճիշտ երկրարանական ժամանակաշրջանների նման: Հայանի է, որ երկրարանները հաճախ չեն կարողանում որոշել հողի շերտի կամ խավի ժամանակը, բայց կարող են ասել, թե այսինչ խավը այնինչ խավից հետո է կամ առաջ: Այդպես և լեզվաբանները:

Երբ ասում ենք, թե swesör դարձել է բոյր, այստեղ ունենք երեք ձայնական օրենք.

1. SW դարձած է ք.
2. s նախ դարձած է հ, ապա բնկած.
3. eö դարձած է ոյ!

Առաջին երկուսը այլուստ հայանի և հաստատված օրենքներ են, բայց երրորդը անհայտ է կամ անսովոր:

Բացառելու համար պետք է ասել, որ նախ օ դարձել է հայերեն ու, ինչ որ նույնպես սովորական օրենք է, ապա eu երկրարառը դարձել է ոյ, ինչ որ նույնպես հայանի օրենք է:

Բայց այս վերջինը ասելու համար, պետք է ընդունել նախ, որ s-ի հ գառնալու և ապա ընկնելու օրենքը ավելի հին է կամ առաջ, քան օ-ի ու գառնալը, ապա թե ոչ swesör ձևից չէր առաջանա բոյր, այլ* քեհուր, ինչ որ գույություն չունի:

Մեր աված ձայնական օրենքների ցուցակների մեջ նման օրինակներ չառ կան:

Երբեմն էլ հարաբերական ժամանակը կապվում է ճիշտ ժամանակի հետ և դրանով իր ժամանակն էլ որոշվում է:

Օրինակ, հենց վերի փոլոզական satilla բառի մեջ s-ի հետ կապված է Լ-ի օրենքը: Գիտենք, որ Լ երկու ձայնավորի մեջ գառնում է յ, և այս ձայնական օրենքը գտնում ենք ոչ միայն հնագույն հնգեկրոպական եղբայր, հայր, մայր բառերի մեջ, այլև կա-

թիւ-կայլակ բառի մեջ, որ նրա նվազականն է (փոխանակ կար-լակ-ի):—Սայլ բառը ցույց է տալիս, որ t-ի այդ օրենքը դեռ անփոփոխ էր մնում, երբ s>հ-ի օրենքը վերացել էր:

Եղբայր բառն առաջանում է հնդեվրոպական նախալեզվի bhrātēr ձևից: Այստեղ նկատում ենք հետևյալ ձայնափոխութունները. bh>բ, r>ր, a>ա, ուստի bhrātēr դառնում է բրա Եր. մնում է պարզել վերջին երկու ձայների փոփոխութունը. t երկու ձայնավորի միջև դառնում է ըստ օրինի յ. ē ձայնավորը, գտնը-վելով վերջին վանկում, ընկնում է: Այս երկու ձայնափոխութուններից ո՞րն է նախորդել մյուսին: Եթե ընդունենք, թե նախ ձայնավորն է ընկել, այն ժամանակ t չպիտի գտնվեր երկու ձայնավորների միջև և չպիտի դառնար յ, մանավանդ որ t պիտի զբա-նրվեր ր-ի մոտ, և ըստ օրինի պիտի դառնար ռ. օրինակ՝ patēr>հայր, իսկ սեռական patros>հայր=հօր, matēr>մայր, իսկ սեռա-կան matros>մայր=մօր. սանսկրիտ mitra>մուր. հնդեվրոպա-կան նախալեզու aratro>արար=արօր, հնդեվրոպական նախալե-զու alatria>աղարի=աղօրիք:

Այս զեպքում bhrātēr պիտի դառնար հայերեն բրար և ոչ թե բրայր:

Ըստ այսմ եղբայր բառի փոխադրութունների շարքը հետե-լալն է.

1. բրայր.
2. բղայր (որովհետև երբ մի բառի մեջ գտնվի երկու ր, մե-կը՝ տարանմանութամբ դառնում է ղ).
3. դրայր տեղափոխութամբ բղ>դր:
4. եղբայր (որովհետև ղ-ից առաջ գրվում է միշտ և կամ ա հենարանը):

Հարաբերական ժամանակի համար լավ օրինակ է հայերեն սեռական Աստուծոյ բառը:

Մեյն հայաղեօի քննութամբ հայտնի դարձավ, որ այս բառի հնագույն ձևն էր *Աստուածոյ, որ միջին հայերենում միջին ա ձայնավորի կորուստով դարձավ Աստուծոյ. այս ձևն էլ ոյ>ու ձևափոխութամբ դարձավ հետո Աստուծու: Մրանից հետո ունենք բարբառային Ասծուծու, Ասծու ձևերը, որոնցից առաջինը առաջացավ ա և ծ՝ բաղաձայնների համանմանութան օրենքով, իսկ վերջինը կրճատման (հապլոլոգիայի) օրենքով:

Այսպիսով ձայնափոխութունների շարքն է Աստուածոյ, Աստուծոյ, Աստուծու, Ասծուծու, Ասծու. շարքը այնպես է հաստա-

տուն, որ անհնար է փոփոխել կամ տեղափոխել. լուրաքանչյուրի ժամանակը՝ հարաբերաբար նախորդի և հաջորդի, անշարժ է:

Ոյ տալիս է ու: Այս երևույթը տեսնում ենք նախ գրաբարում, սղման օրենքի ժամանակ (ինչպես՝ լոյս—լուսոյ, բոյս—բուսա-կեր), ապա միջին հայերենում և բազմաթիվ բարբառներում, իբրև սովորական ձայնափոխութուն (լոյս>լուս, բոյր>բուր): Նույնը նաև հոլովման ժամանակ, ինչպես՝ մարգ, մարգոյ>մարգու:

Պետք չկա կարծելու, թե վերջին կարգի բառերը հոլովման ձևն են փոխած և ոյ հոլովումից անցել են ու հոլովման (ծով—ծովու), որովհետև ու հոլովումը սահմանափակ շրջան ուներ հին հայերենում:

ոյ>ու ձայնափոխութունը կարելի է բացատրել հետևյալ ձևով. երբ վերցնում ենք ձայնավորների եռանկյունը՝ $\begin{matrix} \text{u} \\ \text{u} \end{matrix}$, տես-

նում ենք, որ o=n գտնվում է եռանկյան ձախ կողի վրա, ա-ից քիչ վերև, իսկ յ գտնվում է եռանկյան հիմքի աջ ծայրին: Լեզուն ո-ից մինչև յ բարձրանալու համար շատ ճանապարհ ունի անցնե-լու: Նվազագույն ճիգի օրենքով ու կետը ափելի մոտ է յ-ին, ուստի գրավել է այդ կետը:

Նույնիսկ Պոլսի բարբառով աևօթի>աևութի բառը o ձայնա-վորը դարձրել է ու, որով դեմ առ դեմ է գուրս գալիս հաջորդ ի ձայնավորին:

Գիտողություն 1.—Մեր բացատրութունից երևաց, որ ոյ երկբարբառը հասնելու համար ու-ին՝ նախ անցած պիտի լինի ույ ձևի միջոցով. դրա համար էլ ունենք միջին ույ ձևը, որից ապա ընկնելով յ կիսաձայնը (ինչպես՝ հայր>հար), ստացվել է ու. այսպես՝ բոյր>բուր>բուր, լոյս>լուս>լուս: Ըստ այսմ բառա-վերջի ոյ ձևն էլ ենթադրում է նախավոր ույ հնչումը:

Գիտողություն 2.—Պոլսի աևօթի>աևութի նույն բարբառում մի բուրբուրով անսովոր ձև է և ուրիշ օրինակ չունի:

Գիտողություն 3.—Նույն ձևով կարելի է բացատրել նաև երեկոյ բառը, որ այժմ դարձել է իրիգուև և մինչև անգամ նախադասութամբ Պոլսի բարբառով՝ իրիևգուև:—Նախապես երեկոյ բառը ստացել է որոշիչ հոդ և դարձել երեկոյն, ինչպես ունի «Գիրք աղօթից զղջականաց՝ Գրիգորի իմաստասէր վարդապետ Մաշկուորք և ապա յերեկոյն Կաղանկատուացի», հրատարակութուն Շահնա-զարյանց, էջ 168, սրանից՝ երեկուև, Վեցօրէք, էջ 65, Ոսկեբերան, մատք, էջ 471, Եղիշէ, Ը, էջ 115), ապա երիկուև (Ղևտացիք, 2

20, Ոսկերեան, մ. ր. 10) և վերջապես՝ նախաձայնը ազգավերջ միջաձայնից՝ իրիկունն (Միջին ձևերը համարձակվել են նույնիսկ մտնել Ոսկեդարյան գրվածքների մեջ):

Դիտողություն 4.—Մեր արդի բարբառներից Պոլսի, նոր Նախիջևանի բարբառները ստորական նույնքեր ամասնունը դարձրել են նույնմփեր. թեև մյուս ամասնուններից հունրվար, փեարրվար, սեկանբեր, դեկանբեր իրար նմանություն մեծափոփոված են, բայց նույնմփեր այդպես չէ. նրա մեջ էլ ոչ դարձել է ույ՝ միմիայն վերի օրենքին համաձայն:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Թ

ՉԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՉԱՅՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Չայնավորների փոփոխությունն ընդհանրապես կապված է սոնի կամ շեշտի, տևողության, դիրքի և մոտակա ձայների հետ:

Տոնը թվում է, թե նշանակություն չունի ձայնավորների փոփոխության հարցում. հնդկվրոպական նախալիզվից ժառանգ լեզուներին անցնելու ժամանակ ձայնավորները տոնավոր թե անտոն միևնույն ձայնափոխության են ենթարկված. հունարենում էլ տոնը նչ մի ազդեցություն չի ունեցել ձայնավորների վրա, միչև այն ժամանակ, երբ տոնը վերածվել է շեշտի:

Չայնավորների տևողությունը մեծ նշանակություն ունի նրանց ձայնափոխության նկատմամբ. գրեթե ամեն լեզվի մեջ էլ նկատում ենք, որ կարճ ձայնավորը արիշ ձայնափոխություն է ներկայացնում, երկար ձայնավորը՝ արիշ: Այսպես՝ հնդկվրոպական նախալիզվի e և o տալիս են հայերեն ե, ո, բայց սրանց երկարները՝ ē և ō դառնում են հայերեն ի, ու: Ասորերեն a հնչվում է a թե արևելյան և թե արևմտյան բարբառներում, բայց ā, որ արևելյան բարբառներում մնում է ā, արևմտյան բարբառներում դառնում է o (Nestle, Syr. Gramm., 1889, 9): Հին հունարեն ε նոր հունարենում մնում է e, բայց η (ē) դարձել է i:

Այս երևույթը սակայն բացատրվում է ո՛չ թե ձայնի երկարության ազդակի ազդեցությամբ, այլ որովհետև երկար ձայնավորներն արտասանվում են ավելի փակ: Այսպես՝ լատիներենն ուներ երկար և կարճ e և o, ստորին լատիներենում տևողության տարբերությունը վերացել էր և միայն կարճ e, o արտասանվում էին փակ. ուստի սոմանական լեզուներում լատիներեն e և ē, o և ō հասան տարբեր ձայնափոխության:

Ճեշտը ամենամեծ նշանակություն ունի ձայնավորների փոփոխության հարցում. ամեն մի ձայնավոր, եթե շեշտյալ է, ենթարկվում է ուրիշ ձայնափոխության, եթե անշեշտ է՝ ուրիշ: Այդ կերպ լեզվաբանը ուսումնասիրում է ձայնավորի ձայնափոխության օրենքները, ստիպված է երկու դիրքերը առանձին քննության ենթարկել: Ռոմանական լեզուների և հատկապես ֆրանսերենի մեջ այս երևույթը շատ լավ է նկատվում. օրինակ, լատիներեն me, te, se՝ դառնում են ֆրանսերեն me, te, se՝ եթե անշեշտ են, և moi, toi, soi՝ եթե շեշտյալ են: Լատիներեն lavare «լվանալ» բայի խոնարհման ժամանակ, a մերթ շեշտյալ է, մերթ անշեշտ. ուր որ շեշտյալ է, դառնում է միջին ֆրանսերեն e, ուր որ անշեշտ է՝ մնում է a. այսպես.

լատիներեն	միջին ֆրանսերեն
lavo	je lef
lavas.	tu lèves
lavat	il lèvet
lavamus	nous lavons
lavatis	vous lavez
lavant	ils lèvent

Հայերեն բարբառների մեջ այս օրենքի համաձայն ունենք՝
 զրարար Ագուլիս Զեյբուև Սվեդիա

Ուղղ.	հայ	հօց	հօց	հօւց
Սեռ.	հացի	հացի	հացը՝	հացը՝

որոնց մեջ զրարար ա շեշտի տակ դասել է օ, ու, առանց շեշտի՝ մնացել է ա:

Նույնիսկ շեշտի աստիճանը նշանակություն ունի այս հարցում. երբայնքանում գոյականի շեշտը ավելի ուժեղ է քան բայինը, դրա համար էլ գոյականների շեշտյալ ձայնավորը երկար է, բայինը կարճ. ինչպես՝ zāhāb «ոսկի», qātāl «սպանել» (Brockelm, Précis, 69):

Մոտակա ձայները նույնպես մեծ ազդեցություն ունեն ձայնավորների փոփոխության վրա. մի դեպքում առաջանում են նմանողություններ ձայնափոխություններ (օրինակ Մարաշի բարբառով Իւսիւս Քիւրիւստիւս, փոխանակ Հիսուս Քրիստոս), մի ուրիշ դեպքում ավելի անկախ ձայնափոխություններ. այսպես՝ ռոմանական լեզուներում միևնույն ձայնավորը փակ վանկի մեջ (հաջորդական բաղաձայնով) առհասարակ անփոփոխ է մնում, իսկ բաց վանկի մեջ ձևափոխվում է: Ուրիշ դեպքերում բաղաձայնի ներկայությունը ձայնավորը վերածում է երկրարբառի:

Դիրքը նույնպես շատ մեծ նշանակություն ունի ձայնավորների ձայնափոխության համար. միևնույն ձայնավորը առաջին վանկում, միջին թե վերջին վանկում կրում է տարբեր ձայնափոխություն. ինչպես ճարսանիք>Պոլիս ճարսանիք, Ղարաբաղ ճըրսանիք: Բայց այս ազդեցությունն էլ համարվում է անուղղակի, որովհետև այս դեպքում ոչ թե իրապես դիրքն է, որ պատճառ է դառնում ձայնափոխության, այլ շեշտը, որ ըստ դիրքի տարբեր է լինում:

Չայնավորների բացման աստիճանն էլ նշանակություն ունի ձայնավորների փոփոխության վրա: Երբ ձայնավորը բաց է, բնականաբար նա ձգտում է մոտենալ և ի վերջո հասնել իր նախորդ աստիճանին և ընդհակառակը, եթե փակ է, ձգտում է մոտենալ և հասնել իր հաջորդ աստիճանին (տես ձայնավորների եռանկյունը): Միայն միջին բացվածք ունեցող ձայնավորներն են, որ ավելի երկար կարող են մնալ իրենց դիրքում: Այսպես՝ բրբառներնում e ունի բաց ու փակ աստիճաններ. բաց e մնում է անփոփոխ բոլոր բարբառներում, իսկ փակ e հեռահեռ անպես է փակվել, որ Vannes գավառում արգեն համարյա հնչվում է i (Guillome, Gramm. fr.—bret., 6):

Համաձայն այս բոլոր պայմանների, ձայնավորը կարող է կրել բաղաձայնական փոփոխություններ, բայց այդ բոլորը կարելի է պարփակել հետևյալ կարգերի մեջ.

1. Չայնավորը կարող է փոխել իր երանգը. —այսպես՝ կառկայինը (vélaire) դառնում է քմալին կամ խառն և կամ հակառակը. —անդալին է դառնում կամ կորցնում է իր անգախությունը. —կլորանում է (s'arrondir) կամ կորցնում իր կլորությունը. —բացվում կամ փակվում. —մինչև անգամ իր փակման աստիճանը կարող է անջան բարձրանալ, որ վերածվի կիսաձայնի կամ սեղմի (constrictive):

2. Չայնավորը կարող է վերածվել երկրարբառի. —ռոմանական լեզուների մեջ այս երևույթը շատ սովորական է. հալ բարբառներում շատ սովորական երևույթ է ե և n պարզ ձայնավորների երկրարբառացումը ie և uo ձևով: Այսպիսով առաջացած երկրարբառը կարող է իր հերթին նորից դառնալ պարզ ձայնավոր, բայց սկզբնականից տարբեր: Հին անգլերենի ձայնական երևույթներից մեկն է այս, որ կոչվում է brechung «բեկում». —պարզ մի ձայնավոր իրեն հաջորդող բաղաձայնների ազդեցությամբ վերած-

վում է երկրորդաօրի, այսինքն՝ բաժանվում է երկու ձայնավորի: Այսպես՝

գերմանական կարճ a > ea
կարճ ē
i > éo, ío
öe > éa

օրինակներ.

mark > mear
arm > earm
alt > eald
wallen > weallen
acht > eahta
wachsen > weaxan
nacht > neaht և այլն:

(Sievers, 5, 8):

Երկրորդաօրյան երեւոյթը կա նաև լատպերենում, ուր a > uə, e > ei, ē > ie և այլն (Wiklund, 55):

3. Զայնավորը կարող է ընկնել, այսինքն ամբողջապես անհետանալ. այսպես է մեր արդի բաղձաթիվ բարբառների մեջ. օրինակ, Պոլիս Ռարոնիք, Ղարարաղ ղօնեզ՝ < աղավնի: Այսպես նաև Ֆրանսերենում, ուր լատիներենի անշեշտ ձայնավորները ընկել են: Անկումը կարող է լինել բառակցում (հապավում), միջում (սղում) կամ վերջում (կրճատում):

4. Ի հակառակին՝ կարող է բուրբոլին մի նոր ձայնավոր երևան գալ մի օրեք բառի մեջ. օրինակ, պարսկերեն rasan = հայերեն առասան: Հավելումը կարող է լինել բառակցում, բառամիջում և բառավերջում, և ըստ այսմ կոչվում է prothèse նախահավելում, épenthèse միջահավելում, épithèse հետահավելում:

1. Զայնավորի երանգի փոփոխութուն.—Այս կարգի փոփոխութունները շատ բաղձաթիվ են ու բաղձատեսակ, բայց մենք կարող ենք վերածել դրանք հետևյալ կարգերի.

ա. Ուղղայնացում և ապառնգայնացում.—Երբ ձայնավորից հետո կա մի անդալին (ն, մ) ձայն, կարող է ձայնավորը անդալին դառնալ. պատճառն այն է, որ կատիկը, որը անդալին բաղձալինի համար արդեն պիտի ցած իջներ, այդ գործողությունը կատարում է մի քիչ առաջ: Կարող է լինել նաև, որ անդալին բաղձալինը սզդի հաջորդ ձայնավորի վրա, այսինքն՝ կատիկը, որ անդալին բաղձալինի համար արդեն իջել էր, աշանա բարձրանալու: Երկու

գեպքումն էլ մենք ներկա ենք համանմանություն (ասիմիլյացիա) երևույթին, առաջինում կտրված, երկրորդում առաջընթաց: Այսպես, լատիներեն շատ բառեր, որոնք սենեին ձայնավոր + անդալին, հետզհետե անդալնացրին իրենց ձայնավորը ֆրանսերենում, բայց պահելով հանդերձ անդալին բաղձալինը: Իսկ երբ ձայնավորը արդեն բուրբոլին անդալին դարձավ, այն ժամանակ սենդալին բաղձալինը շնչվեց (XIV—XVI դդ.). i և ü ձայնավորները անդալնանալիս ավելի ցածրանալով, բացվեցին և դարձան e և ö:

Սրա հակառակ երևույթն է ապառնգայնացումը. ֆրանսերենի մեջ այս երևույթը տեղի է տնեցել XVII դարում, երբ année, honneur, femme բառերը, որոնք հնչվում էին ané, onör, fam, դարձան ané, onör, fam:

բ. Կլորացում և ապակլորացում շրթնային բացվածքի.—Կլորացումը կոչվում է նաև շրթնայնացում. լեզուների մեջ սովորական երևույթ է. որ լեզվի մեջ գտնում ենք կլորացած քմային ձայնավորներ (ö, ü), դրանք առաջացած են լինում կամ ոչ-կլոր քմային ձայնավորների շրթնայնացումից (e, i) և կամ ավելի հաճախ կատակալին ձայնավորների քմայնացումից (տես հաջորդը):

Ապակլորացումը, որ ավելի սակավազուտ երևույթ է, կախնում է կլոր քմայինները պարզ քմայինի վերածելու մեջ. այսպես՝ ö > e, ü > i, o > e. Ինչպես՝ ֆրանսերեն բարբառային une cuvette > in Kivet, un meunier > o menie, Գերմանիայի հարավային բարբառներում schön, güte, könnem > šēn, gūte, kenən, հին հունարեն ο և իուլանդերեն ü այժմ դարձել են i:

գ. Քմայնացում և կատկայնացում.—Քմայնացում ասելով հասկանում ենք կատկային ձայնավորների քմային դառնալը, որ առաջ է գալիս հողավորման կետը բերանի հետևից գեպի առաջ շարժելով: Հաճախ այս ձայնափոխությունը անկախ է, ինչպես լատիներեն u, որ դարձել է ֆրանսերեն ü. նույնպես նաև մեր բարբառների մեջ, ինչպես ջուր > Ղարարաղ նիւք, կամ պարսկերեն gul > թուրքերեն gül: Բայց շատ անգամ քմայնացումը առաջանում է մտապահ ձայնների ազդեցությամբ. այսպես է գերմաներենում umlaut (ֆրանսերեն métaphonie) կոչված երևույթը, որով o, u, a ձայնավորները դառնում են ö, ü, ä, եթե հաջորդ վանկի մեջ կա i ձայնավորը: Այս պարագային կատկային o, u, որոնք իրեն կլոր ձայնավորներ են, առաջ շարժվելով, պահել են իրենց կլորությունը և հետևաբար դարձել ö, ü, իսկ a, որ կլոր է, հողավորման կետը առաջ շարժվելով, դարձել է è. օրինակ, mann > männlich, erde-irdisch, gott-göttlich, kunst-künstlich:


Կառկայնացումը նույն երևույթի հակառակն է. երբ հոգավորման կեսը առաջից հետև շարժվի, քմային ձայնավորները կը գտնան կատկային: Այս երևույթը շատ ավելի սակավագեպ է, քան նախորդը. իբրև օրինակ պետք է հիշել հատկապես անգլերեն $a > \hat{a}$, all, tall և այլն բառերի մեջ:

Այս երևույթի արդյունքն է ձայնավորների ներգաղնակություն օրենքը, որ հատուկ է գլխավորապես ողորո-ֆիննական, ալթայական, մալայերեն և պոլինեզյան զանազան լեզուներին: Այս օրենքի համեմատ, եթե բառի առաջին վանկի ձայնավորը կատկային է, մյուս բոլոր ձայնավորներն էլ կատկային են գտնում, իսկ եթե քմային է, բոլորն էլ քմային են գտնում:

Ձայնավորների ներգաղնակության օրենքը կա նաև գերմանական խմբի լեզուներում:

Երևույթի հիմնական բացատրությունն այն է, որ բառի անշեշտ վանկերի ձայնավորները ազդվելով շեշտյալ վանկի ձայնավորից, փոխում են իրենց երանգը և մոտենում նրան: Այսպիսով մասնիկները հարմարվում են արմատի ձայնավորին:

Թուրքերենի մեջ ձայնավորները բաժանվում են երկու խմբի՝ ժանր և թեթև. ժանրերն են՝ a, ə, o, u. թեթևներն են՝ e(ä), i, ö, ü, երբ բառի առաջին ձայնավորը ժանր է, մյուս բոլոր ձայնավորներն էլ վերածվում են համապատասխան ժանրի, իսկ եթե առաջին ձայնավորը թեթև է, մյուսներն էլ լինում են թեթև: Մրա համեմատ թուրքերենի բոլոր մասնիկներն ու վերջավորություններն էլ լինում են երկու ձևով՝ ժանր ու թեթև. օրինակ, «-աթլուն» մասնիկն է leq կամ lik, բացառական հոլովի վերջավորությունն է dan, den, ապառնիի վերջավորությունն է jağam, legim և այլն:



Ծանր ու թեթև ձայնավորների որոշման մեջ ինչ որ հետաքրքրականն է, այն է, թե ձայնավորների եռանկյան մեջ ժանրերն ամբողջությամբ գտնվում են եռանկյան ձախ կողմը (հետև առնելով նաև գազաթը՝ a), իսկ թեթևները գտնվում են աջ կողմը, գրավելով ամբողջ երկու գիծ, բացառությամբ գազաթի a-ի:

Ձայնավորների ներգաղնակության օրենքից տարբեր է ձայնավորների հավասարակշռության (equilibre vocalique) օրենքը, որ գտնում ենք սկանդինավյան լեզուների մեջ: Բառավերջի i, u, a ձայնավորները պահում են իրենց երանգը, երբ կիսաերկար են, սպա թե նչ գտնում են e, o, œ, հատկապես բաց վանկում: Վերջածայն ձայնավորի տեղաթյունը կախված է արմատական վանկի տեղաթյունից. եթե անաջին վանկը կարճ է, երկրորդը կիսաերկար է և կրում է համեմատաբար ուժեղ շեշտ. եթե առաջին վանկը երկար է, երկրորդը ունի շատ սկար շեշտ և տեղաթյունն էլ կարճ է: Այսպիսով ստացվում է լեզվի մեջ gata: gāta ձևերի գեմ՝ gata: gātœ և gatu: gāto (BSL № 69, էջ 247):

Մանջուրերեն լեզվի մեջ ձայնավորների ներգաղնակության օրենքը արտահայտվում է հետևյալ ձևով. երբ արմատն ունի միայն a ձայնավորը, մասնիկներն էլ գտնում են a, երբ արմատն ունի միայն o, մասնիկներն էլ գտնում են o, երբ արմատն ունի միայն e, մասնիկներն էլ գտնում են e, իսկ երբ ձայնավորները զանազան տեսակի են, մասնիկներն էլ զանազան ձայնավորներ են ստանում: Երբ մի բառի ծայրին իրար հանկից պիլանան մի քանի մասնիկներ, առաջին մասնիկի ձայնավորը գերիշխող դեր է կատարում և մյուս բոլոր մասնիկների ձայնավորները վերածվում են նրան (L. Adam, 18):

Վոգուլերեն լեզվի մեջ ձայնավորների ներգաղնակության օրենքը տարբերվում է ըստ բարբառների, մեկի մեջ ավելի, մյուսի մեջ պակաս չափով (Ahlqvist, 143):

Աֆրիկյան իրո (ոչ-բանտու) լեզվի մեջ ձայնավորների ներգաղնակության օրենքը գործում է հետևյալ ձևով: Լեզուն ունի 8 ձայնավոր, որոնք բաժանվում են 4 տեսակի՝ փակ, կիսափակ, բաց, կիսաբաց, լուրաքանչյուր տեսակից 2 աստիճան. որ ուսումնասիրողը ներկայացնում է հետևյալ ձևով.

	առջևի	հետևի	
1.	i	u	փակ
2.	e	θ	կիսափակ
3.	ɛ	o	կիսաբաց
4.	a	ɔ	բաց

Ներգաղնակությունը պահվում է հետևյալ ձևով.

i, ɛ, u, o փակ ու կիսաբաց,

կամ

e, a, θ, ɔ բաց ու կիսափակ:

Բառի բոլոր մասնիկները և զանազան վերջավորությունները հետևում են բառի արմատի ձայնավորի երանգին (Ward, 1—2):

Հնդկական սանտալի լեզվումն էլ կա ձայնավորների ներգաշ-նակություն օրենքը, որ կոչվում է harmonic sequence և որ շատ ավելի բարդ ձև տնի քան արիշ լեզուներում (Grierson, IV, 37):

Ձայնավորների ներգաշնակության օրենքը կա նաև հրպեր-բորլան չուքչի լեզվի մեջ. ձայնավորները բաժանվում են երեք կարգի՝ ծանր, թեթև և չեզոք. ամեն մի բառ պիտի ունենա միայն ծանր կամ միայն թեթև ձայնավոր, իսկ չեզոքները ընդհանուր են: Նույն օրենքին ենթարկվում են նաև մասնիկները, որոնք տնեն երկու ձև՝ ծանր և թեթև: Ռուսերենից փոխառյալ բառերն էլ ձևափոխվելով ենթարկվում են նույն օրենքին (Bogoras, 647):

դ. Բացում և փակում.—Բացումն առաջանում է ստորին ծը-նուար և մանավանդ լեզուն իջեցնելուց: Երբ քմալին ձայնավորը հեռոճհեռ ավելի բաց է դառնում, լեզուն էլ առաջից զեպի հետ է քաշվում, իսկ եթե կաակալին ձայնավորն է ավելի բացվում, լե-զուն ընդհակառակը հետեից առաջ է գալիս: Ֆրանսերենում և անգլ-լերենում Դ ձայնը իրանից առաջ գտնվող ձայնավորը ավելի բաց է դարձնում. լատիներեն *lacrima*, որ ավել է հին ֆրանսերեն *lerme*, հիմա եղել է *larme*, «արցունք». անգլերեն *door* «դուռ», *dark* «մութ», որոնք ըստ օրինի պիտի հնչվեին *dur*, *därk*, հնչվում են Դ-ի պատճառով ավելի բացվելով՝ *dör*, *dark*: Պարսկերենի մեջ *u* ավժմ դարձել է *o*, ինչպես՝ *türk* > *tork*, *gul* > *gol*: Արաբերենի *u* ձայնը Ասորիքում հնչվում է *ö* (*Belot*, 5), սրան համապատաս-խան պարսկերեն *i* դարձել է ավժմ *e* և արաբերեն *i* հնչվում է Ասորիքում *e* (անդ):

Փակումը սրա հակառակ երևույթն է:

Ֆրանսերենում անշեշտ ձայնավորներն ավելի են փակվում, այսպես նաև բաց վանկի մեջ գտնվող ձայնավորները. հմմտ. *œuf*, հոգնակի *œufs* (հնչել *öf*, *ö*). լատիներենում հաճախ առաջին վան-կի *a* ձայնավորը ընկնելով բառի մեջ, ավելի է փակվում, ինչպես՝ *facio*—*efficio*, *pater*—*Jupiter*, *taberna*—*contubernalis*. այս փո-փոխությունը շեշտի կորստի պատճառով է. ձայնավորը շեշտը կորց-նելով (այսինքն՝ ավելի տկարանալով) փակվել է:

Շեշտի պակասությունը միշտ պատճառ չի դառնում ձայնա-վորի փակման. շատ լեզուների մեջ նկատելի է, ընդհակառակը, որ թեև բաց և թե փակ, թե առաջակողմյան և թե հետակողմյան ձայ-նավորներ շեշտի կորուստով վերածվում են մի տեսակ խալ ձայ-

նի, որ կարող ենք նշանակել իբր *ö* (*ը*). այսպես է ֆրանսերենում համր *e* ձայնը, որ առաջ է գալիս անշեշտ *a*, *e*, *o* ձայնավորնե-րից. նույնը կա նաև անգլերենում և գերմաներենում. սուսերենում ամեն ձայնավոր, որ ընկնում է շեշտից հետո, արատանվում է թույլ. օրինակ, *ОКОЛО*, *МЫЛО* և այլն. այսպես և հայերեն մի քա-նի բարբառներում շեշտից առաջ գտնված ձայնավորները վերած-վում են *ը*-ի:

Երբ ամենափակ ձայնավորները՝ *ü*, *ü*, *i* ավելի ևս փակվին, կդառնան կիսաձայն (*w*, *w̄*, *y*), իսկ սրանք էլ փակվելով, կվերած-վին բաղաձայնի: Այսպիսով ձայնավորը կհասնի բաղաձայնի աս-տիճանին:

2. Երկրարբառացում և երկրարբառների վերածում.—Երկ-րարբառներն առաջանում են երկու ձայնավորի կամ մի ձայնավո-րի և մի կիսաձայնի հանդիպումից: Այս հանդիպումն էլ կարող է առաջանալ լեզվի մեջ սովորական մի անձանցման պատճառով և կամ որեէ բառի ձայնափոխությունով. այսպես, լատիներեն *faktum* բառի մեջ *c* վերածվելով կիսաձայն *y*, և ընկնելով *a* ձայնավորի մտ, առաջացել է *ai* երկրարբառ, որով հին ֆրանսերեն *fait* (նոր ֆրանսերեն հնչված *fè*):

Երկրարբառացում կարող է առաջանալ նաև ձայնավորի քմալ-նացմամբ (*palatalisation*) և շրթնայնացմամբ (*labialisation*), առա-ջինն առաջանում է հաջորդական մի վանկի *i* ձայնավորի ազդե-ցությամբ, երկրորդը՝ *u* ձայնավորի. այսպես՝

հուն. *φαρι* «տակ» > լիտ. *φάρι*,

**φανι* > *φαινω*

**felu* > անգլ. *feolu* «շատ»

**miluk* > անգլ. *mioluk* «կաթ»

equa > պորտ. *euga* (Brugmann, *Abrégé*, 235)

Բոլորովին սարբեր է, երբ ձայնավորն ինքը վերածվում է երկրարբառի: Այս երևույթը շատ սովորական է զանազան լեզուներ-ում, հատկապես նորալատին լեզուների մեջ, որ լատիներեն շեշտա-լալ *e*, *o* վերածվել են հաճախ երկրարբառի. օրինակ.

լտ. *bonus* — իտալ. *buono* իսպ. *bueno*

gloriam — ֆր. *gloire*

petra — իտալ. *pietra*, ֆրանս. *Pierre*

aqua — ժող. պորտ. *augua* «ջուր»

Այսպես նաև անգլերեն և գերմաներեն *au*, *ai* երկրարբառ-ները առաջացել են *ü*, *i* ձայնավորներից. այսօր Հարավային Անգ-

լիալում ամեն փակ ձայնավոր վերածվում է երկարբառի: Լոն-
գոնում ē, ō, ī, ū, հնչվում են ei, ou, iy, uy:

Սլովակերենում օ հնչվում է o, իսկ երկար օ հնչվում է uo,
ինչպես pōda (կարգա puóda) «հասակ»:

Նույնը գտնում ենք նաև հայերենում, ար և և ո ձայնավոր-
ները դարձել են երկարբառ:

Այս երեալիքը, որ ինչպես տեսնում ենք, շատ տարածված է
լեզուների մեջ, առաջանում է հետևյալ ձևով.—Ձայնավորն իր ամ-
բողջ անողության մեջ ծայրից ծայր նույն չէ. նրա իսկական երան-
դը կացքի միջոցին է, երբ գործարանները և հատկապես լեզուն
պահում են մի հաստատուն դիրք: Իսկ լարման և էջքի միջոցին
գործարանները շարժման մեջ են և անցնում են դիրքից դիրք,
մինչև հասնեն կացքը կամ հանդիսար: Այս դիրքից-դիրք անցնե-
լա միջոցին անշուշտ ընդունում են նաև այն վիճակը, որ պետք
է մյուս ձայնավորների արտաբերության համար, և իրոք արտա-
սանվում են այդ ձայնավորները իրար հետից, բայց սրովհետև
նրանց անողությանը չափազանց կարճ է, մեր լսողության համար
ըմբռնելի է գտնում միայն կացքը, իրրև մի պարզ ձայնավոր:
Եթե գործարանները իրենց այս դիրքից անցնելու ընթացքում սրեւ
տեղ մի փոքր հապավում ցույց տան, այլանդ արդեն լսելի կլինի
մի արիշ երկրորդական ձայնավոր էլ, որ և միանալով մյուսի հետ,
կլինի երկարբառ: Շեշտյալ ձայնավորը անշեշտ ձայնավորից մի
քիչ ավելի երկար լինելով, իսկ երկար ձայնավորը արդեն ի բնե
երկար լինելով, ավելի ժամանակ են արամադրում դիրքից դիրք
անցնելու միջոցին հապավում կատարելու և հետևաբար ավելի հեշ-
տությամբ են երկարբառ գտնում: Այսպես, օրինակ, մեր բար-
բառներում և և ո գտնում են երկարբառ՝ շեշտի տակ, իսկ շեշ-
տից զրկվելիս գտնում են պարզ ձայնավոր:

Երկարբառն իր հերթին կարող է ապագային կրել նոր ձև-
փոխություններ, որոնք են.

1. կարող է տարրալուծվել երկու անկախ ձայնավորների (dié-
rèse), որոնց մեջ հետո կարող է ներմուծվել մի բաղաձայն.
2. աճան երկարբառը կարող է գտնալ նվազան.
3. նվազան երկարբառը կարող է գտնալ աճան.
4. երկարբառը կարող է գտնալ մի արիշ երկարբառ.
5. երկարբառը կարող է գտնալ պարզ ձայնավոր.
6. երկարբառի մի մասը բաղաձայնի վերածվելով, գտնալ
բաղաձայնից ո ձայնավորից բաղկացած մի վանկ:

Այսպես, օրինակ, լատիներեն օ եղել է ֆրանսերեն uo (երկ-
արբառ), որ հետո դարձել է üe, այժմ էլ ö (պարզ ձայնավոր):
Նախախա լատիներեն ē դարձել է ֆրանսերեն ei, oe, oa, ua, ya.
հին հունարեն εi, oi, vi երկարբառները դարձել են այսօր i, ai
դարձել է é, իսկ ω, ω, γω երկարբառների մեջ ω գտնալով v
կամ i (համաձայն հաջորդ բաղաձայնի թրթուսն կամ խուլ լինե-
լուն)՝ այդ երկարբառները հնչվում են av—af, ev—ef, iv—if:
Արարերեն ai, և au ժողովրդական լեզվում դարձել են é, ó, ինչ-
պես خاير>xēr «բարիք» (հայերեն՝ խիր), ۶۹۷. yaum>yóm
«օր» (Dirr, 3):

Կալմիկերենում երկարբառները հետագայում վերածվում են
երկար ձայնավորի. այսպես ai>ā, oi>ō, ui>ū (Сонжеев, 13):

3. Ձայնավորի անկում.—Սովորաբար անշեշտ ձայնավորներն
են ընկնում. լատիներենի վերջնիթեր վանկի անշեշտ ձայնավորը
ստորին լատիներենում միշտ ընկել էր, ինչպես՝ frigidus, calidus,
digitus, tabula, angulus դարձել են frigidus, calidus, digitus, tá-
bla, ánglus, իսկ սրանցից էլ ֆրանսերենի վերածելիս այն լուրջ
անշեշտ ձայնավորները, որ գտնվում էին լատիներենի վերջնիթեր
կամ երկրորդ և կամ վերջին վանկում, ինչպես նաև այն անշեշտ
ձայնավորները, որոնք գտնվում էին շեշտից նամիջապես առաջ,
ընկան, միայն թ վերածվեց համբ e-ի. օրինակ՝ այդ նույն բառե-
րը եղան froid, chaud, table, angle. այսպես նաև sanitatem>
santé, dormitorium>dortoir, asinum>âne, simulare>sembler,
caballos>chevaus և այլն. նաև առաջին վանկում, ինչպես՝ ablá-
tum>blé, oryza>riz, adamantem>diamant.

Այսպես նաև գերմաներեն և անգլերեն, որոնց մեջ անշեշտ
ձայնավորներն ընկել են. օրինակ, լատիներեն monasterium>գեր-
մաներեն münster, անգլերեն minster, անգլոսաքսոն. hlaf-dige
«հաց թխող կին»>անգլերեն lady և այլն:

Սեմական նախալեզվի մեջ շեշտից անմիջապես հետո եկող
կարճ ձայնավորները ընկան. ինչպես qatala «սպանել» բառից *ná-
qatala>náqtala, *iánaqatilu>iánqatilu, *iáqutul>iáqtul. իսկ
վերջավանկի անշեշտ երկար ձայնավորները վերածվեցին կարճի
(Brockelm, Précis de ling. sémi, 66):

Հայերենի մեջ էլ անենք հարսանիք>հարսնիք, հրսանիք
համաձայն շեշտի տեղի:

Մոնղոլերենում գրվում է yábaxo «երթալ», բայց հնչվում է
yabx, շեշտից հետո եկող ձայնավորները ջնջվում են (Клюкин, 17):

Այժմ էլ ամեն լեզվի մեջ անշեշտ ձայնավորները խոսակցության մեջ շնչվում են, ինչպես Ֆրանսերեն un chekal > ũ šval, գերմաներեն ich habe > ič hap, անգլերեն sufficient > sfišnt:

Հաճախ մի ձայնավոր միանալով հաջորդ մի ձայնի հետ, ջրնչվում է. օրինակ, Ֆրանսերեն meaille > maille, beneir > venir, marchéand > marchand. — հմմտ. նաև լատիներեն lineam > ligne, filiam > fille, որոնց մեջ e և i վերածվել են նախ y-ի և միանալով հաջորդ բաղաձայնի հետ, ստեղծել է mouilleé բաղաձայն:

4. Չայնավորի հավելում. — Մի որևէ ձայնավոր կարող է երկվան գալ մի որևէ բառի մեջ. առանց սննհնալու իր նախորդը. անա մի քանի պարագա.

ա. Իբրև հենարան կարող է առաջ գալ մի բաղաձայնի կամ բաղաձայնների մի խմբի առաջ. օրինակ, լատիներեն ալն բառերը, որոնք սկսվում են s-ով և սրանից հետո կա մի պալթական, Ֆրանսերենի անցնելիս ստացել են e, որից հետո s ձայնը ընկել է. ինչպես՝ spatha > épée, scala > échelle, stabulum > étable և այլն: Հայերենի մեջ n և p ձայներով սկսվող բառերը ստանում են ա, և հենարանը: Գալառակաձայնում ունենք նաև ու, ինչպես՝ ուռուս, ուռում. հունարեն՝ ερῶ(ρῶ), այսպես նաև հունարեն՝ «կարմիր» εἶ(εῖ)ερῶ:

բ. Հաճախ l, r, m, n ձայնորդները կարող են ստանալ իրենց առաջից կամ հետևից մի նոր ձայնավոր. ինչպես՝ հնդկարոպական նախալեզու ք, որ ավել է or, ar, ra. հմմտ. լատիներեն cor, cordis, հունարեն καρδία համերական καρδία, հուլանդերեն wolk «ամպ», melk «կաթ» բառերը հնչվում են volək, melək: Երբ հավելյալ ձայնավորը ձայնորդից հետո է, երևույթը կոչվում է սանսկրիտ բառով svāra-bhakti:

գ. Երկու և ավելի բաղաձայնների միջև, հնչման հեշտության և բաղաձայնների գոյութունը զգալի դարձնելու համար, ավելացվում է մի նոր ձայնավոր. Bagdad > bagədad, vingt—trois > գալառական ventətrua: Այսպիսի ձայնավորներ կարող են հետո անկախ գառնալ. ինչպես knīf > Ֆրանսերեն canif. լատիներեն *stabilom, *famlom > stabilum, famulum, իսկ լատիներեն *stabilis, familia > stabilis, familia և այլն (Passy, 210 և շար.):

Այս բոլոր հավելումները գուտ ձայնարանական են, բայց կա նաև քերականական հավելում, ինչպիսին է հաջորդ կետում հիշվածը:

դ. Չուվաշերեն լեզվի մեջ որոշ բառեր, եթև հարկավոր է ավելի ուշագրութուն դարձնել նրանց վրա, ստանում են վերջում մի կարճ ձայնավոր. օրինակ, ut t'opat' «ձին վազում է». բայց «շուտ առաջ վազիր, որովհետև ձիդ վազում է» խոսքի մեջ, ուր կարևոր է շեշտել ձիու վազել-փախչելը, բայց գառնում է ut t'opate (Ашмаранч, Матер., 35—36):

Չափազանց կարճացած բառերի երկարացման լավ օրինակներ են՝

պարսկերեն یا, ya, یاخود, yāxūd «կամ թե».

» دى دى, dī, دیروز, dīrūz «երեկ».

» پار پارسال, pā, پارسال pārsāl «հերոս»:

ԿՐՄԱԶԱՅՆՆԵՐԻ ԵՎ ԲԱՂԱԶԱՅՆՆԵՐԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես ձայնավորներն, նույնպես և բաղաձայնների ձայնափոխությունը կարող է լինել անկախ, բայց մեծ մասամբ պայմանական է: Այս պայմանները նույնն են, ինչ որ ձայնավորների համար. այն է՝ տոն կամ շեշտ, տեղություն, մերձավոր ձայների աղդեցությունը, բաղաձայնի դիրքը բառի կամ ձայնախմբի մեջ: Բաղաձայնները տոն կամ շեշտ չունեն, ուստի այս բառերով հասկանում ենք այն ձայնավորի տոնն ու շեշտը, որի հետ կապված է բաղաձայնը: Իսկ տեղություն ասելով հասկանում ենք պարզ կամ կրկնակ բաղաձայնները. պարզ բաղաձայնը համարվում է կարճ, կրկնակ բաղաձայնը համարվում է երկար: Այսպիսով բաղաձայնների փոփոխության համար եղած պայմանները վերածվում են երեքի, որոնք են.

1. Բաղաձայնի դիրքը տոնի կամ շեշտի համեմատ. այն է՝ բաղաձայնը գտնվում է տոնից կամ շեշտից առաջ, թե հետո:
 2. Բաղաձայնի դիրքը իր մտակա ձայների համեմատ, այն է՝ բաղաձայնը գտնվում է ձայնավորի՞, թե այս կամ այն բաղաձայնի մոտ:
 3. Բաղաձայնի դիրքը բառի մեջ, այսինքն՝ բաղաձայնը զբաղեցնում է բառի սկզբում, միջին, թե վերջին վանկում:
- Այսպիսով բոլոր պայմանները վերածվում են մի բառով՝ բաղաձայնների դիրքին, որի համեմատ էլ լինում են բաղաձայնների բոլոր անսակի ձայնափոխությունները:

Բաղաձայնների ձայնափոխությունները վերածվում են հետևյալ երեք կարգերի.

1. Երանդի փոփոխություն
2. Անկում
3. Հավելում

ԵՐԱՆԳԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Առաջանում են բաղաձայնի արտադրության մասնակցող գործարանների շարժման ձևափոխությունից. այսպես.

ա. Խոչալի ձևափոխություն.— Բաղաձայնի համար ընդունված թրթուռների ժամանակը կարող է խախտվել ձայնական լարերի գործունեության փոփոխությամբ. եթե բաղաձայնը թրթուռն է, ձայնալարերը կարող են ուշանալ թրթուռու և կամ բոլորովին չթրթուռլ. այդ դեպքում թրթուռը կդառնա կիսախուլ կամ խուլ: Հակառակ պարագային խուլը կդառնա թրթուռն և այլն:

բ. Ռեգային ձևափոխություն.— Կատիկը կարող է ժամանակից շուտ կամ ուշ բարձրանալ. այս դեպքում կառաջանա ռեգային բաղաձայն կամ եթե կար՝ կջնջվի:

գ. Կակղացում և կարծրացում.— Լեզվի հպման կետը քիմքին կարող է փոքրանալ կամ մեծանալ, միևնույն ժամանակ լեզվի մկանների ձգումը փոփոխվել, որով և կառաջանան կակղ և կարծր բաղաձայններ:

դ. Հոգավորման եղանակի փոփոխություն.— Որոշ մի կարգի բաղաձայն վերածվում է մի ուրիշ կարգի (մինչև իսկ հասնում է ձայնավորի), բայց հոգավորված միևնույն տեղում. օրինակ, պալթականը վերածվում է կիսապալթականի կամ շփականի:

ե. Հոգավորման տեղի փոփոխություն.— Կատակին բաղաձայնը դառնում է ատամնական կամ շրթնային և այլն:

ՀԱՎԵԼՈՒՄ ԵՎ ԱՆԿՈՒՄ

Հավելում կոչում ենք այն պարագան, երբ մի որևէ բաղաձայն ինքնաբերաբար երևան է գալիս մի ձայնախմբի մեջ, առանց շարունակությունը լինելու նախապես գոյություն ունեցող մի որևէ ձայնի: Այսպես, օրինակ, ծանցը, ուսա (փոխանակ ծանք, ուս) բառերի մեջ, ուր ունենք դ, ա ձայների հավելումը: Այսպես նաև հունարեն *αγαθη*, ուսերեն *правъ* > ժողովրդական *ndrav*: Այս դեպք-

քերում լեզվի ծայրը մոտենում է կապիճներին, առանց թրթռալու և այդ միջոցին դուրս է գալիս ա. ալիլի հաճախ է այս երևույթը sr խմբի մեջ, որ դառնում է str. նման օրինակներ են. namn>հին շվեդերենն namn «անուն», սանսկրիտ tāmra>tambra «մութ կարմիր», numerus>ֆրանսերեն nombre «թիվ», միջին բարձր գերմաներեն nemeich>namblich «հանվանք», գերմաներեն eigenlich>cigentlich «հատկապես», գոթերեն swistr, հին սլավոներեն sestra «քույր»=սանսկրիտ svāstr և այլն. հայերեն ցօսր>Տփղիս, Շամախի ցօսր, ինչպես ռուսերեն ноз-д-ри «ոնգունք» (փոխանակ носри), ժողովրդական ռուսերեն страм, стражение փոխանակ срам «ամոթ», сражение «պատերազմ», нрав «նկարագիր»>ժողովրդական ռուսերեն нравъ:

Այսպես էլ հավելումը կարող է լինել ըստ դիրքի՝ նախահավելում, միջահավելում, հետահավելում:

Սրա հակառակ երևույթն է անկումը, երբ նախապես գոյություն ունեցող մի բաղաձայն, գործարանների ալիլի թույլ ճիգի պատճառով, հետզհետե տկարանում և ի վերջո անհետանում է: Ֆրանսերենում չափազանց շատ են այն դեպքերը, երբ մի բաղաձայն լատիներենից ֆրանսերենի անցնելիս, ջնջվել է. այսպես՝ d, g երկու ձայնավորի միջև, կամ զանազան բաղաձայններ բտավերջում, օրինակ, լատիներեն ligare>lier «կապել», replicare>replier «նորից ծալել», confidentia>confiance «վստահություն» և այլն:

Բաղաձայնի անկում (մասնակի կամ ամբողջական), տեղի է ունենում հատկապես բաղաձայնների խմբակների մեջ, այսպես, օրինակ, ռուսերեն склянка>այժմ склянка. լատիներեն *quatslos>*quaslos>quālus, *scandsla>*scasla>scaia, *loucsmen lūmen և այլն: Այս դեպքում կան հետևյալ պարագաները.

1. Չայնավորացում.— Չայնախմբի մի անցումը աստիճանաբար փոփոխվելով կարող է վերածվել ձայնավորի. այսպես, լատիներեն factum բառը kt>ct>yt աստիճաններից անցնելով տվել է վերջապես ֆրանսերեն fait «դեպք, իրողություն». լատիներեն flos, floris «ծաղիկ» անցնելով fl, fl^v ձևից, տվել է իտալերեն fiore:

2. Զուլում.— Երկու տարբեր բաղաձայններ աստիճանաբար փոփոխվելով հասնում են մեկի. օրինակ, ֆրանսերենում լատիներեն tk անցնելով tç>t^v>tš ձևերից դարձել է š, կամ լատիներեն dk անցնելով dk>d^v>dž ձևերից՝ դարձել է ž:

3. Համահմանություն.— Երկու տարբեր բաղաձայններից մեկը նմանվում է մյուսին. սովորաբար երկուսից առաջինն է, որ նմանվում է մյուսին, որովհետև լինելով պայթական, արտասանվում է ալիլի թույլ և ականջի վրա թողնում է ալիլի տկար արպավորություն. օրինակ, լատիներեն factum>իտալերեն fatto բառի մեջ et խումբը դարձել է ti:

4. Անկում.— Համահմանության վերջին աստիճանն է, երբ երկու տարբեր բաղաձայն նմանվելով նախապես իրար, կացքի անողությունը կրճատվում է, որով երկուսը վերածվում են մեկի: Այսպիսի անկումը տարբեր է նրանից, որ նկարագրելիք քիչ առաջ, և որ չի ենթադրում բաղաձայնի նախավոր համահմանություն:

Այսպիսի անկման բազմաթիվ օրինակներից հիշենք լատիներեն hoc>hocc>hocθ-ce «այս», saccus «պարկ»>sacellus «քսակ», paulum, paullulum>paulum, paululum «քիչ, քչիկ», *ters>terr>ter «երիցս», հին բարձր գերմաներեն fallan «ընկնել»—fallun «ընկանք», գոթերեն *immi>im «եմ», հունարեն αἶλος «այլ, ուրիշ», γλῶσσα «լեզու»>նոր հունարեն αλος, glōsa, հունարեն εσσι=լատիներեն ess, es, բայց=սանսկրիտ ási=հայերեն (զու) ես:

Մինչև այժմ մենք ցույց տվինք, թե բաղաձայնները ինչ տիպի փոփոխություններ կարող են կրել: Բայց ափելացնենք իսկույն, որ մի բաղաձայն այսինչ տիպի փոփոխությունների շարքը բունուց հետո, կարող է մտնել մի ուրիշ տիպի մեջ և շարունակել այս երկրորդ ընթացքը և այսպես շարունակ: Սրանից հետևում է, որ բաղաձայնների ձայնափոխությունները անհուն են թվով և մենք այժմ ուրիշ բան չենք կարող անել, եթե ոչ վերցնել բաղաձայնները կարգ-կարգ և թվել նրանց գլխավոր ձայնափոխությունները միևնույն ուղղությամբ:

1. ԿԻՍԱԶԱՅՆՆԵՐԻ ԶԱՅՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Կիսաձայնների ձայնափոխությունը առաջանում է բերանալին բացվածքի հաջորդական փոփոխությամբ. բացվածքը կարող է մեծանալ կամ փոքրանալ, այսինքն՝ ալիլի բացվել կամ մի քիչ փակվել: Երբ ալիլի բացվի, բնականաբար կիսաձայնը կդառնա ձայնավոր, այսպես՝ w>u, w>u, y>i:

Երբ բացվածքը ալիլի փակվի, լուրաքանչյուր կիսաձայն կտա նորանոր բաղաձայններ, հետևյալ ձևով:


Y—այս կիսաձայնի արտասանութիւնն ժամանակ լեզուն կը պըտնուի քիմքին՝ երկու եզերքից և ձևացնում է մի նեղ անցք: Եթե այս անցքը մի քիչ էլ նեղանա, բայց առանց փակվելու, կիսաձայնը կվերածվի գերմաներեն շփական y ձայնին, որ եթե խլանա կդառնա չ: Եթե լեզուն կարծր քիմքին մոտենալիս գիպչի նրան առանցքից, այնպես որ անցքը փակի, այն ժամանակ արտադրված ձայնը ոչ կիսաձայն կլինի, ոչ էլ շփական, այլ միջնաշեղվալին պատկան փափուկ յ^y: Եթե այս արտաբերութիւնը հետեից առաջ շարժվի, կլինի մ^y: Եթե այս ձայնը կարծրանա, կդառնա լ: Բայց ավելի հաճախ դառնում է կիսապայթական յ, կամ եթե արտաբերութիւնը ավելի առաջանա՝ ձ և կամ նույնիսկ միջնատամնային կիսապայթական ժ, ճ: Եթե ձայնափոխութիւնը ավելի առաջ տարվի, այս կիսապայթականները կդառնան պարզ շփական չ, շ, ճ: Իսկ եթե յ^y արտաբերութիւնը գեպի հետ քաշվի, այն ժամանակ կառաջանա փափուկ ց^y, որ էլ ետ քաշվելով և քիմքին ավելի քիչ հպելով, կդառնա կարծր ց, իսկ սա էլ ուժը կորցնելով, կդառնա ց: Այս բոլոր ձայնափոխութիւնների միջոցին, թրթռումը պակասելով, բաղաձայնը կարող է դառնալ խուլ: այսպես՝ վերջին աստիճանին հասած ց կարող է խլանալով տալ x, որ արտասանվելով ավելի լայն բացվածքով, կդառնա հ:

Կիսաձայն y-ի այս բոլոր ձայնափոխութիւնները կարելի է նկատել նորալատին լեզուների մեջ և կարելի է միշտ դառնել որևէ բարբառ, որի մեջ լատիներեն y-ի ձայնափոխութիւնը կանգնած լինի այս կամ այն աստիճանի վրա: Իսպաներենում լատիներեն յ դարձել է x, իտալերեն յ, ֆրանսերեն չ և այլն:

Երբ կիսաձայն y գտնվում է մի ուրիշ բաղաձայնի հետ, երկուսի՝ ձուլմամբ կառաջանա մի նոր բաղաձայն:

W—Այս կիսաձայնի արտաբերութիւնն ժամանակ բերանային անցքը սեղմված է լինում երկու կետի վրա. մեկը՝ շրթունքների միջև, մյուսը՝ լեզվի արմատի և կատիկի միջև: Եթե այս երկու սեղմված կետերից մեկը կամ մյուսը սեղմվի, կառաջանան նոր բաղաձայններ հետևյալ ձևով. եթե շրթունքները ավելի սեղմվեն, w կդառնա b, որից էլ կառաջանա v կամ f, իսկ սրանց խլացումով p կամ k. եթե լեզվի արմատը և կատիկը ավելի սեղմվի, կիսաձայն w կդառնա gw, որից կառաջանա g, սա էլ խլանալով՝ k:

Ահա սրանց պատկերը.



Նորալատին լեզուները ներկայացնում են նույնպես այս ձայնափոխութիւնների բոլոր աստիճանները. օրինակ, ֆրանսերենում կա լատիներեն vermen > ver, navem > nef, vespa > guêpe. կիսական խմբի մեջ ունենք լատիներեն verus ձևին համապատասխան գալլերեն gwir, բրբանտներեն guir, իտալերեն fir:

W—Այս կիսաձայնը քիչ է պատահում լեզուների մեջ. օրինակ, կա ֆրանսերենում, ուր երբեմն վերածվում է ձայնավոր u-ի կամ ընկնում է, բայց բաղաձայնի վերածված ձևեր չունի:

2. ՁԱՅՆՈՐԳՆԵՐԻ ՁԱՅՆԱՓՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

Ձայնորգները 4 են (չհաշվելով կիսաձայնները).
 կողմնական — 1
 ցնցուն — r
 սնդալին — n, m
 Լեզուների պատմութիւնն մեջ նկատվում է, որ այս ձայնները հաճախ իրար են փոխանակում. ինչպես l > r, r > l, l > n, n > l, n > r, r > n:

Այս փոխանցումները բացատրվում են հետևյալ ձևով.—l, r, n ձայների արտաբերութիւնն ժամանակ լեզվի ծայրը հպում է քիմքի կապճալին մասին. բայց b-ի ժամանակ լեզվի երկու եզերքներն իջնում են օդի հոսանքին ազատ անցք տալու համար, մինչդեռ n-ի ժամանակ բարձրանում են, այնպես որ բերանային անցքը բոլորովին փակվում է, մինչև միևնույն ժամանակ կատիկն իջնում է ցած՝ օդի հոսանքին ազատ անցք տալու համար, քիմքի միջով: r-ի ժամանակ լեզուն ունի միևնույն դիրքը, միայն թե իր ծայրը թրթռում է: Այս նկարագրութիւնից երևում է, որ մի չընչին փոփոխութիւնն բավական է մի ձայնից մյուսը անցնելու համար:

Ձայնորգների ձայնափոխութիւնները հետևյալներն են.
 ա. կողմնականներ. — Սրանց մեջ նկատելի են՝

1. Փոխանակութիւն կողմնականների զանազան տեսակների միջև, ինչպես լեզվային l դարձած կապճալին կամ կատկային և այլն. այս փոխանակութիւններն ընդհանրապես առաջանում են համապատասխան բարբառներում, լատիներենում, կատկային ձայնավորից առաջ, կամ մի բաղաձայնից առաջ և կամ բառավերջում l միշտ

կատիային է: Ռոմանական լեզուներում 1 զանուս է փափուկ 1^o, կիսաձայն y-ի ազդեցությամբ, քմային ձայնավորների ազդեցությամբ և կամ զանազան ձայնավորների մեջ, ինչպես cl, gl, pl, fl. օրինակ՝ oc'lum > ֆրանսերեն œil «աչք»: Վերջին պարագային, 1-ի փափկացումից հետո, նախորդ բաղաձայնը կարող է ընկնել, և կամ երկու բաղաձայնները միանալով տալիս են մի նոր բաղաձայն. ինչպես լատիներեն clamare տվել է իսպաներեն llamar (կարգւմ l'amar) և պորտուգալերեն chamar (կարգւմ šamar):

2. Փոխանցում ձայնավորի կամ կիսաձայնի. — թե կատիային, թե լեզվային և թե կապճային 1 կարող են վերածվել u ձայնավորի. այսպիսի գեպքեր շատ ունենք ֆրանսերենում. օրինակ, լատիներեն collum > cou «պարանոց», calvum > chauve «ճաղատ»: Նույնը կա սլավոնական լեզուների մեջ, ինչպես սլավոներեն volk «գալլ», volna «բուրդ» > պոլարերեն vâuk, vâuna. սիկիլիականում outra փոխանակ խաղերեն altro «մյուս», հոլանդերեն oud, koud, goud փոխանակ գերմաներեն alt «հին», kalte «ցուրտ», gold «ոսկի», սկոտերեն owd, cowl, gowd (նույն բառերն են): Իտալերենում ունենք l > y կամ i ինչպես լատիներեն plenum, blancum, clarum > pieno, bianco, chiaro, ֆրանսերեն դավառական pye, bye, kyër: Այս ձայնափոխությունը բացատրվում է հետևյալ ձևով. կողմընականների արտաբերության ժամանակ լեզվի արմատը աջից ու ձախից մեղմորեն հարում է քիմքին, եթե այժմ լեզվի ծայրը կապիճներից մի քիչ հեռանա, ձայնափոխությունը պատրաստ է: — Փափուկ 1^o հեշտությամբ զանում է y, որի համար բավական է, որ լեզվի միջին մասը քիմքից հեռանա: Այսպես՝ ֆրանսերենը ունի 1^o (գրված ill). այժմ այդ ձայնը դարձել է պարզապես y (օրինակ fille «աղջիկ», bouillon «արգանակ, մսաջուր»): Նույնը նկատվում է նաև Հարավային Ամերիկայի իսպաներենում: Շվեդերեն 1j հնչվում է y, ինչպես՝ ljus «լույս» (կարգա yūs):

3. Փոխանցում 1-ից r. — Մեծ մասամբ այս փոխանցումը բացատրվում է իբրև տարանմանություն, բայց հաճախ անկախ և կանոնավոր երևույթ է սոմանական բարբառներում, որ լատիներեն միջաձայն 1 զանում է կանոնավորապես r. օրինակ՝ ultimum > ֆրանսերեն orme «կնձնի»: Հնդեվրոպական նախալեզվի 1 ձայնի դեմ արիականները զնում են հաճախ r: Ճապոներենում, որ չկա l, ամեն օտար բառ որ ունի l, վերածվում է r-ի:

4. Փոխանցում 1-ից d. — Հազվագյուտ երևույթ է. գտնվում է սիկիլիական բարբառում, ինչպես՝ bello, cavallo > սիկիլիական bed-

du «գեղեցիկ», cavađdu «ձի». հմմտ. նաև լատիներեն adeps, որ գալիս է հունարեն ἀλάτω-ից (Passy, Chang., 145):

5. Անկում. — Այս երևույթը, որիչ բաղաձայնների անկման նման, արդյունք է գործարանների և շնչառության թուլ գործունեության. պորտուգալերենում 1 երկու ձայնավորի միջև ընկնում է հաճախ: Նույնը մեր բարբառներում, ինչպես չեմ տեսել > չեմ տես, ալ > ա:

բ. Յնցուններ. — Սրանց մեջ նկատելի են.

1. Փոխանակություն ցնցունների տեսակների միջև. — Ծանոթ երևույթ է, որ զանազան եվրոպական լեզուներում, հատկապես ֆրանսերենում, լեզվային r զանում է կոկորդային (r): Հին լեզուներում եթե կար նման երևույթ, չի կարելի հաստատել՝ գրության թերություն պատճառով:

2. Փոխանցում r-ից z. — Երբ լեզվային 1-ի արտաբերության ժամանակ լեզվի թրթուսները վերանան, կյսվի շփական z. հայերենի մեջ ր ձայնը, որ համեմատությամբ ու-ից թուլ է թրթուսում, անվարժ ակնջները լսում են իբր չ, ֆրանսերենում r > z ձայնափոխությունը եղել է XIV դարում, բայց ընդհանուր չի տարածվել. սրա արդյունքն են chaire > chaise և նման բառեր:

3. Փոխանցում r-ից l. — Հաճախ հարանմանության արդյունք է. կան բարբառներ, որոնց մեջ սովորական երևույթ է. չինարենը չունենալով r, օտար բառերի մեջ ամեն r վերածում է l-ի:

4. Անկում. — Յնցումը իր թրթուսները կորցնելուց հետո, օյի ճնշման ուժն էլ եթե պակասի, կծուլի նախորդ կամ հաջորդ ձայնավորի հետ և կջնջվի. այս երևույթը նկատելի է հարավային անգլերենում. ինչպես dear, pure, forty. — Նույնը նաև Հյուսիսային Գերմանիայում, ինչպես der Berliner, որ երգիծական թերթերում գրվում է da Balina, Ֆրանսիայում նորաձևություն էր Դիրեկտորիայի ժամանակ. ինչպես՝ Ma pa'ole d'honneur e'est incroyable (Ma parole d'honneur c'est incroyable «Ազնիվ խոսք, անհավատալի է»):

գ. Ուղղանցներ. — Սրանց մեջ նկատելի են.

1. Փոխանակություն ուղղանցների տեսակների միջև. — Շատ սովորական է սանսկրիտում, որ ուղղանցի զանազան տեսակները փոխանակում են իրար՝ համաձայն հաջորդ բաղաձայնի տեսակի. հայերենում ունենք ան-բիծ > ամ-բիծ, ան-պարիշտ > ամ-բարիշտ և այլն ձևերը, որոնց մեջ ատամնական ն վերածվել է շրթնայինի՝ հաջորդ շրթնային բաղաձայնի պատճառով: Այս երևույթը գտնում ենք շատ լեզուների մեջ:

2. Ապառնգայնացում.—Երբ *անգային* բաղաձայնին հաջորդում է *ուրիշ ոչ-անգային* բաղաձայն, բնականաբար կատիկը նախ իջնում է ցած *անգային* բաղաձայնի արտաբերության համար, որից հետո իսկույն բարձրանում է հաջորդ *ոչ-անգային* բաղաձայնի արտաբերության համար: Եթե սակայն այս բարձրացումը կատարվի ժամանակից մի քիչ ափելի շուտ, բնականաբար *անգային* բաղաձայնի վերջին մասը կկորցնի իր *անգայնությունը* և կլինի *ոչ-անգային*, այսինքն՝ կապառնգայնանա և կդառնա բերանային. *m* որն-գայինի ապառնգային ձևն է *b* և *n* *անգայինի* ապառնգայինն է *d*. այսպիսով *m* և *n* ձայներից հետո կառաջանան *b*, *d* ձայները. հմմտ. բմբիլ, ծակդր. հունարեն **αγο* > *ἀγορ*, լատիներեն *cinere* > *cendre*, *camera* > *chambre*, *humilem* > *humble*, *veneris dies* > *vendredi*. բարելերենում ձայնավորից հետո *m* դառնում է *v* և սա էլ կիսաձայն *v*, այս պատճառով է, որ *Kislīmu*, *Simānu* ամսանունները գրված են իբր *Kislēu*, *sīuān* (Brock., Précts, 74):

3. Փոխանցում *n*-ից *r*.—Տեղի է տեսնում կանոնավոր կերպով դանազան սովանական բարբառների մեջ. բացառվում է նրանով, որ լեզուն երկուսի համար էլ նույն դիրքն ունի, և *n*-ից *r* անցնելու համար պետք ունի միայն ծավրը թրթռացնելու և կատիկը բարձրացնելու: Այսպես են առաջանում նաև ֆրանսերեն *London* > *Londres*, «Լոնդոն», *tympanum* > *timbre* «գորշմ», «հնչյուն», *cophinum* > *coffre* «արկղ», *diaconum* > *diacre* սարկավազ և այլն բառերը:

4. Փոխանցում *n*^y ձայնից.—Երբ *n* *անգայինին* հաջորդում է *y* կիսաձայնը կամ քմային մի ձայնավոր, *n* կարող է փակել և դառնալ *n*^y: Այս երևույթը նկատելի է գրեթե բոլոր սովանական բարբառներում. սովաներենում նաև *m* կարող է վերածվել *n*^y:

5. Անկում.—Սովորական երևույթ է դանազան լեզուների մեջ. կարող է տեղի տեսնալ 1) նախորդ ձայնավորը *անգային* դարձնելուց հետո, ինչպես՝ լատիներեն *cantare* > ֆրանսերեն *chanter* «երգել» (հնչել *šaté*.—2) երկու ձայնավորի միջև. ինչպես լատիներեն *luna* > պորտուգալերեն *lua*.—3) բաղաձայնների խմբի մեջ, ինչպես՝ ֆրանսերեն *tu dors* փոխանակ *tu dorms* «քնում ես».—4) բառավերջում թույլ արտասանության պատճառով. այսպես՝ լատիներեն *m*, *n* բառավերջում հնչվում էին շատ թույլ, և *-ns* խմբի արտասանության մեջ *n* ամբողջապես ընկել էր: Ֆրանսերեն *mon*, *cent*, *fin* «իմ, հարյուր, վերջ» հնչվում են առանց *n*-ի. նույնպես և այժմ գերմաներեն *mein* և այլն դառնում է *maç* (առանց *n*-ի):

Անկման երևույթը նկատում ենք հատկապես շատ գործածական բառերի մեջ, որոնք եթե բավական երկար են, մի կամ երկու վանկ կորցնում են: Այսպես, օրինակ, թվականները հին և նոր հունարենի մեջ.

հին	նոր
30 τριάκοντα	τριάνα
40 τετρακκοντα	σαράνα
50 πεντάκοντα	πενήνα
60 ἑξήκοντα	
70 ἑβδομήκοντα	
80 ὀγδοήκοντα	
90 ἔννεμήκοντα	

Բառավերջի *n* հանդը ընկնելու և *u* ձայնը անփոփոխ մնալու օրինքները այնպես հայտնի բաներ են, որ օրինակ բերել ավելորդ է:

3. ՊԱՅԹԱԿԱՆՆԵՐԻ ՉԱՅՆԱՓՈՒՑՈՒԹՅՈՒՆԸ

Պայթականները վերածվում են հետևյալ կարգերի.

1. Փոխանցում խուլից բրթուն կամ բրթունից խուլ.— Գիտենք, որ պայթականներն ունեն թրթռուն, կիսաթրթռուն, շքնչեղ թրթռուն, խուլ և շնչեղ խուլ աստիճանները, որոնք կախված են խոչակի թրթռումներից. չորաքանչյուր պայթականի համար կա մի որոշ կապ խոչակի թրթռումների և պայթման սկզբնավորության ժամանակի միջև. եթե խոչակը այս ժամանակից կանխի կամ ուշանա, բնականաբար կառաջանան պայթականների դանազան կարգերը. խուլը կդառնա թրթռուն, թրթռունը խուլ և այլն: Այս փոփոխությունները կարող են առաջանալ համամանություն օրինքով, ինչպես նաև բոլորովին անկախաբար, ինչպես է մեր շատ բարբառներում: Սանսկրիտի մեջ ընդհանուր օրինք է, որ բառավերջում գտնված ամեն տեսակ թրթռուն և շնչեղ խուլ բաղաձայնները վերածվեն պարզ խուլի. այսպես *d*, *dh*, *th* դառնում են *t*, *g*, *gh*, *kh* դառնում են *k*, *b*, *bh*, *ph* դառնում են *p* և այլն:

Նենեց լեզվով ոչ մի բառ չի կարող սկսվել թրթռուն բաղաձայնով, այլ՝ միայն խուլով. ուստի եթե մի որե՛ք լեզվից փոխ առնեն մի բառ, որ սկսվում է բաղաձայնով, իրենք վերածում են խուլի (Терещенко, 25):

2. Փոխանցում բերանային պայթականից ուղղային պայթականի.—Այս երևույթը առաջանում է միշտ համամանությունով.

օրինակ, լատիներեն *adnuo* > *annuo*. հայերեն մտնել > Կարաբայ մըննել:

3. Փոխանցում կարծր պայթականից փափուկի կամ ընդհակառակը.—Պալթականը փափկանում է քմալին ձայնավորների ազդեցությամբ. սրքան ձայնավորը առաջակողմյան է և փակ, այնքան ավելի ընդունակ է փափկացնելու նախորդ բաղաձայնը: Նոր հունարենի մեջ *ka*, *ko* խմբերում պահում է իր սովորական ձայնը, բայց *ka*, *ko*, *ka*, *ko* հնչվում են *kʰe*, *kʰi* և այլն. *e* և *i* ձայնավորների մոտ քմալնացումը այնքան սովորական մի երևույթ է, որ սլավոններնում, ուր կա փափուկ նշան (*ʹ*), *te*, *ti*, *de*, *di*, *ne*, *ni* թեև հնչվում են փափուկ, բայց չեն սասնում փափուկ նշան (*Macht*, I, 10): Լատիներեն *ka*, *ko*, *ku* չեն փոխվում, բայց *ke*, *ki* դարձել են (VI դարի մոտերը) *kʰe*, *kʰi*, հետո *če*, *či*, նույնպես *ga*, *go* չեն փոխվել, բայց *ge*, *gi* > *gʰe*, *gʰi*, հետո *je*, *ji*, *že*, *ži* և այլն:

Սրտ արդյունքն է, որ, օրինակ, լատիներեն *cera*,* որ է հունարեն *κίρα* «մեղրամոմ», տալիս է իտալերեն *cera* (չերա) և ֆրանսերեն *cire*, լատիներեն *civitas* «քաղաք» իտալերեն *citta*, ֆրանսերեն *cité*, լատիներեն *gens* «ազգ» իտալերեն *gente* ֆրանսերեն *gens*, այսպես նաև սլավոններին *c*, *g* հնչվում են *e*, *i* ձայներից առաջ *č*, *ǰ*, օրինակ՝ *cinci* «հինգ», *general* «գորավար»:

Հին պարսկերեն *k* և *g* *i*-ի մոտ դառնում են *č*, *ǰ*, այսպես, նոր պարսկերեն *ki*, *gi* ձայնախումբը չկա, և բևեռադիր այբուբենը՝ որ ունի բաղաձայնների համար առանձին առանձին *a*-ից, *i*-ից և *u*-ից առաջ, չունի *i*-ի մոտ *k* և *g*-ի համար առանձին (*Meillet*, *Gramm. du v. p.*, 39). այսպես նաև չկա տաճածև առանձնապես *u*-ից առաջ (անդ):

Լատիներեն *c* (որ է *k*) և *g* դարձել էին (ոմանց կարծիքով III դարում, ուրիշների կարծիքով V կամ VI դարում) *e* և *i* ձայնավորների մոտ *g*, *ǰ* (*č*, *ǰ*): Առաջ հնչվում էին միշտ և ամեն զեպքում *k*, *g*. օրինակ, լատիներեն *Cicero* բառի մեջ այսօր հընչում են ֆրանսերեն *s*, բուն լատիներենում հնչվում էր *k*-ով. այդ հայանի է հունարեն *Κικέρων* տասադարձությունից (*Kühner*, 40), նույնը հաստատում է նաև հայերեն Կիկերոն գրչաթվանը:

Այս օրենքի համեմատ է, որ սլավոնական լեզուների մեջ *e*-ից, *i*-ից առաջ *k* դառնում է *č*, *g* դառնում է *ǰ* և այլն. ինչպես՝ սուսերեն *пророкъ* «մարգարե», *пророчить* «մարգարեանալ», *про-*

рочица «մարգարեուհի», Бог «Աստված», կոչական боже «Աստված իմ», և այլն (*Лескинъ*, *Грамм. древн.*, 87):

Հակառակ դործողությամբ փափուկ պալթականները կարող են գառնալ կարծր: Սովորաբար վերածվում են կիսապալթականի ինչպես վերի օրինակներում:

4. Փոխանցում պայթականից կիսապայթականի և ավելի ճեռտ՝ շփականի.—Եթե կարծր պալթականի արտաբերվածյան մեջ ճնշումը պահասի և օդի հոսանքը ավելանա, կդառնա կիսապալթական: Անշուշտ այսպես է ստաշացել բարձր գերմաներենում «երկրորդ ձայնաշրջությունը». *p* դարձել է *pʰ*, և *t* > *tʰ*, որ է *g*. *k* > *kʰ*: Այս ձայնափոխությունը կատարվում է կամ ողղակի և կամ փափուկ պալթականից անցնելով. այսպես, ֆրանսերենում *k* > *kʰ* > *tʰ* > *č* > *ǰ*. օրինակ *caballum* > *cheval* «ձի», *librum* > *livre* «զերք»:

Ճապոներենում *tu* դառնում է միշտ *tu*, և *ti* միշտ *či*. այնպես որ այս լեզվում *tu* և *ti* վանկեր չկան (*Plaut* 11): նմանապես լատիներեն *ti* առաջ հնչվում էր միշտ *ti*, ապա դարձավ (չորրջ III կամ V դար) *gi*, ինչպես բնագույնում է հիմա էլ լատիներենի արտասանության մեջ, որ սխալ է (*Kühner*, 41): նույնը գառնում ենք նաև սուսերենում *me*, *mu* վանկերի մեջ, որ և անցել է հայաց (ոմանց արտասանությամբ):

Հունարեն *β*, *δ*, *γ* > *v*, *s*, *g*, ավելի հին *ph*, *th*, *kh* > *φ*, *θ*, *χ*. այսպես նաև գանիերեն *b*, *d*, *g* երկու ձայնավորի միջև շփական են, հոլանդերեն *g* և գերմաներեն *g* երբեմն գառնում են *γ*. ինչպես՝ *wagen*, *tag*, հին իտալերեն *k*, *t* > *χ*, *θ*. այս երևույթը ավելի հաճախ տեղի է անենում երկու ձայնավորի մեջ և թրթռուն կամ շնչեղ խալ բաղաձայնների համար, իսկ բառասկզբում և պարզ խալերի համար քիչ է սովորական. այսպես՝ հունարեն *p*, *t*, *k*, գանիերեն *p*, *t*, *k*, հոլանդերեն և գերմաներեն *k* չեն փոխված, մինչդեռ իրենց համապատասխան թրթռունները փոխված են: Արաբերենում ընդհանրապես սեմական *g* > *ǰ*, որ սրա դեմ *k* չի դարձած *č* (*k* > *č* երբեմն է միայն բեշվին, Ալմիրյան և Իրաքի մի քանի բարբառներում). Սուղանի արաբերենում *ç* արտասանվում է իբր *g*: բայց ավելի *gy* հնչումն ունի, որ և նման է *dy* հնչման (*Worsley*, 4):

Պալթականից շփականի (spirante) անցնելու երևույթը շատ սովորական է սեմական լեզուների մեջ. այսպես՝ եբրայերեն և սուսերեն պալթական *b*, *p*, *d*, *t*, *g*, *k* ձայները երկու ձայնավորների միջև վերածվում են *b* կամ *w*, *f*, *δ*, *θ*, *g*, *x*. այս երկու լե-

դուների մեջ օրենք է, որ այդ բաղաձայնները գրվում են այդպես և հնչվում են այսպես, առանձին տառաձև չունենալու պատճառով: Եվ պարսկերենի և՛ զենդերենի մեջ ph, th, kh պալթականների զեմ ձայնական որոշ դիրքերում գտնում ենք կանոնավորապես ֆ, փ, x և բառամիջի b, d, g վերածվել են շփականի, իբր ֆ, փ, ք հայերեն փոխառությունների մեջ այս ֆ տալիս է ր. նոր պարսկերենի մեջ b, d, g բառամիջում երկու ձայնավորի միջև տալիս են v, y, y: Հին հունարեն ֆ, փ, ք... հնչվում են այժմ v, փ, ք և նոր հունարենի մեջ b, d, g ձայնները տալու համար հնարել են μ, π, γ գրչությունները. օրինակ, ֆրանսերեն débiter «սկսնակ լինել» գտնում է հունարեն ὑπερπαιζέω (թատրոնի):

5. Փոխանցում պայթականից մի ուրիշ տեսակի պայթականի.—Այսպես, օրինակ, կատկալինը կարող է գտնալ առամնական, կամ շրթնալին: Այս բոլորը սովորական երևույթներ են: Առաջինը կարելի է բացատրել շարժումը լեզվի հետևից առաջ բերելով, անցնելով հաճախ միջնալեզվային դիրքից, որ տալիս է միշտ փափուկ պալթական. այսպես՝ ֆրանսերեն k > kʷ > tʷ > t և կամ հակառակը:—Ավելի բարդ է կատկալինից շրթնալինի փոխանցումը: Այստեղ նախ կատկալին պալթականը արտաբերվում է շրթնալինների կլորացումով, այսինքն՝ շրթնալինացմամբ. այս վիճակում պալթականը կոչվում է շրթնակատկալին: Շրթնակատկալին պալթականները իրենց բարեբաղձից մեջ երեք տարբեր ճանապարհ տան. 1. կորցնելով շրթնալին մասը, գտնալ պարզ կատկալին. 2. լեզվալին հոգավորումը տեղափոխվելով, գտնալ առամնալին. 3. լեզվալին հոգավորումը թուլանալով, գտնալ շրթնալին: Ահա այսպես է, որ հնդեվրոպական նախալեզվի k^w դարձել է դանազան ժամանակ լեզուների մեջ k, t, p: Նույնպես կարելի է ընդունել, որ շրթնալին պալթականը արտաբերվի կատկալին հոգավորմամբ, այսինքն՝ կատկալինացմամբ. այսպիսով p կդառնա p^w, որ հետո շրթնալին մասի թուլացմամբ և կատկալին մասի ուժեղացմամբ, կարող է գտնալ շրթնակատկալին և կրել այն բոլոր ձայնափոխությունները, որ տեսանք այժմ: Երբեմն շրթնալինից կատկալինի փոխանցումը կատարվում է ուրիշ ճանապարհով.—շրթնալին բաղաձայնը քմալնանում է, այսինքն՝ արտաբերվում է փափուկ, հետո մի կողմից շրթնալինը տկարանալով և քմալին մասը զորանալով, առաջանում է փափուկ լեզվալին պալթական: Այսպես, սոմերերենում p և b քմալին ձայնավորից առաջ դարձել են k^v, g^v, օրինակ՝ pinum > k^vin, bene > g^vine.

6. Փոխանցում առամնականից կողմնականի կամ ցնցունի.—Պատահում է երբեմն, որ առամնականը գտնա կողմնական 1, ինչպես՝ հունարեն Ὀδυσσεύς, այլ բարբառներով Ὀλύσσεύς և լատիներեն ulisses, լատիներեն dacruma > lacrima, odor «հոտ» և oleo «նուսել», զնչուերեն լուի «երկու» և լաս, լասը «տասը», որոնք համապատասխանում են հնդեվրոպական նախալեզվի dwōu, dékʷap ձևերին: Այս փոխանցման համար հոգավորման տեղի փոփոխություն չկա, լեզվի ծայրը մնում է նույն տեղը, ինչ որ առամնականում և միայն երկու կողմերից մի քիչ իջնում է, որով օդի հոսանքը անցնում է կողերով: Առամնականից ցնցունի անցնելու համար նույնպես չկա տեղի փոփոխություն, այլ լեզվի ծայրը հաստատուն կանգնելու փոխարեն սկսում է թրթռալ, անգլիական ձ ձայնը, որ առամնական է, անվարժ հալ ականջը լսում է իբրև ր: Կուպենհագենում ժողովրդական լեզվով náda «զոր օրինակ», kandu «կարս՝ գ կա» հրնչվում են nora karu (Passy, 146): Հայերենի մեջ առամնականից ցնցուն փոխանցման օրինակ է ա՛յ աղա > առա > Գարարաղ ա՛րա: 7. Փոխանցում շնչեղից պարզի.—Այս երևույթը նկատում ենք հատկապես հնդկական սինհալի լեզվի մեջ, որ սանսկրիտի բոլոր շնչեղ ձայնները իրենց շունջը կորցնելով վերածվել են պարզի: Այսպես՝ ph, kh, th, լի դարձել են p, k, g, t, փ և bh, gh, dh, զի դարձել են b, g, d, փ: Այսպիսով, սանսկրիտի այս երկու շարք բաղաձայնները շնչված են այս լեզվում և բաղաձայնների շորս կարգը վերածված է երկուսի (Geiger W, 39):

8. Անկում.—Այս երևույթը կատարվում է սովորաբար բաղաձայնների խմբակներում. ինչպես՝ anakts > հունարեն ἀνάξ, լատիներեն nox > nokts, իտալերեն ostinato, հին ֆրանսերեն ostiné < լատիներեն obstinatum, scribere > eseire > écrire. ֆրանսերեն quatre, peuple, poudre, tablo > qat, pöp, pud, tab. անգամ լինում է նաև երկու ձայնավորի միջև. ֆրանսերեն cruel < crudelem. պալթականը մի ուրիշ բաղաձայնի մոտ կամ շնչվում է կամ համանմանվում: Բառակերջի պալթականի անկումը առաջացել է նախ հաջորդ բաղաձայնով սկսող բառի մոտ և հետո ընդհանրացել է. այսպես՝ ֆրանսերեն tout, coup, trop և այլն: Երկու ձայնավորի միջև կատկալինն ու առամնականը ընկնում են, իսկ շրթնալինը գտնում է շփական:

Բառակերջում բաղաձայնի անկումը քիչ է պատահում, բայց կա ձայնախմբերի մեջ, ինչպես՝ անգլերեն knee, knife, write և այլն:

Առանձին բաղաձայնի անկում ցույց է տալիս հատկապես *p*, որ կարող է անցնել նախ *h* ձևից, օրինակ, լատիներեն *porcus* > իտալերեն *orc*, *pater* > *athir*, այսպես և՛ հայերեն: Դրավիդյան լեզվախմբից կանարա լեզվի մեջ ամեն նախաձայն *p* դառնում է *h*: *ինչպես՝ սանսկրիտ paṇa «գրամ»* > *an hana*, նման երևույթ կա նաև հնդկական մարաթի լեզվի մեջ, որ կանարալի հարեանն է (Caldwell, 157): Ճապոներենում էլ շինական նախաձայն *p*, անցնելով *i*-ից, դառնում է *h* (անդ): Մոնղոլերեն *p* XIII և XIV դարերում դարձել էր *h*, այժմ բոլոր բարբառներում էլ ջնջված է (Поппе, Алар. говор., 15):

4. ԿԻՍԱՊԱՅԹԱԿԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Կիսապայթականների գլխավոր փոփոխությունը շփականի վերածվելն է. գիտենք, որ կիսապայթականը գումարն է պայթականի և շփականի, առաջին պայթական մասը արդեն թուլլ լինելով, ընդունակ է հեշտությունը անհետանալու. այս դեպքում առաջանում է պարզ շփական: Այսպես, գերմաներեն կիսապայթական *ʰf* շատ տեղ այժմ դարձել է *f* (*ինչպես ʰferd* > *fert*). Նին ֆրանսերենի *g*, *ā*, *č*, *ǰ* կիսապայթականները դարձել են ֆրանսերեն *s*, *z*, *š*, *ž*. այն ազդերը, որոնք չունեն կիսապայթական այս կամ այն ձայնը, վերածում են շփականի. այսպես՝ թուրքերեն *u*, *q* փոխանակ *g*, *ā*, գերմաներեն *k* > *x* > *x*:

5. ՇՓԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՅՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Առհասարակ զուգրնթաց են պայթականների ձայնափոխություններին:

1. Փոխանցում բրբռունից խուլի և խուլից բրբռունի:

2. Փոխանցում կարծրից փափուկի և փափուկից կարծրի: Այս երկուսը կատարվում են նույն ձևով, ինչ որ պայթականների մեջ:

3. Փոխանցում շփականից պայթականի.— Այս երևույթը առաջանում է բերանալին անցքի աստիճանական փակումով և շատ ավելի քիչ է պատահում քան հակառակ երևույթը: Ամենից ավելի ծանոթ է հին գերմաներեն *θ*, *ð*, որոնք դարձել են *t*, *d*. օրինակ, հին գերմաներեն *ping* աալիս է շվեդերեն, նորվեգերեն, գանիերեն

ting, գերմաներեն և հոլանդերեն *ding*, հնյուս. *ð* դառնում է գանիերեն *d*:

4. Փոխանցում շփականից ձայնավորի.— Այս երևույթն առաջանում է բերանալին անցքի աստիճանական բացումով. այսպես է, որ ստանում ենք *i* ձայնավորը *y* կամ *s* կիսաձայնից, իսկ սրանք էլ առաջանում են *g*, *gʸ* և *k*, *kʸ* ձայններից, ինչպես՝ լատիներեն *factum* > ֆրանսերեն *fait*, միևնույն ձևով *u* առաջանում է *w* կիսաձայնից և այս էլ *v* կամ *b* ձայնից:

mundyo	>	մունջ	skodoro	>	խստոր, սխտոր
nedo	>	նեռ	sqand	>	սանդուղ ?
neid	>	անէծք	smerd	>	մեղծ
nizdo	>	նիստ	swidro	>	քիրտն
ozdo	>	ոտ	stund	>	թունդ
ozd	>	ոտին (չոր)	vedo	>	զեռ
ōd	>	ուտել	weid	>	զէտ, զիտան
oid	>	այտ (թուշ)	weid, woid	>	զիտ, գտանել
oid	>	այտնուլ «ուշիլ»	wordo	>	զորտ
od	>	ատել			

Գիտողություն 1.—Երեք տեղ (թունդ, խանդ, սանդուղ ? բաների մեջ) ա-ի փոխարեն գտնում ենք դ, որ նախորդ սնգականի պատճառով է. մյուս օրինակներում չկա նախորդող ն, բացի մունջ բառից, որի մասին տես քիչ հետո:

Գիտողություն 2.—Ինք տեղ (աղծ «աղ», աղծ «կեղտ», հեծանել, մեղծ, անիծ, անեծք, խածանել խայծ, կայծ) d գտնում է ծ. այս ձայնափոխության պայմանները ճշտված չեն գեռ. նկատելի է սակայն, որ նրանցից երեքը դ-ից հետո են և դ-ից հետո ուրիշ օրինակ չկա: Նկատելի է նաև այն, որ Յ տեղ միևնույն բառը ստանում է թե՛ ա-ով և թե՛ ծ-ով ձև. այսպես են աղտ—աղծ (երկու իմաստով), խայտ—խայծ, որոնց պետք է կցել նաև խանդ—խանձ, խազ:

Գիտողություն 3.—Հնդեվրոպական նախալեզվի rod > որոնալ բառի d-ի դեմ գտնում ենք ն, եթե այս համեմատությունը ստույգ է:

Գիտողություն 4.—Երկու դեպքում d ընկած է. ալոպես են աղ և լորց, առաջինը նաև ուրիշ շատ լեզուների մեջ՝ բացի գերմանականից, որից հետևում է, թե կարող էր նաև հնդեվրոպական նախալեզվի մեջ էլ ալոպես լինել. երկրորդը (lord—sk'o) բաղաձայնների խճողման պատճառով է:

Գիտողություն 5.—Առանձին ուշադրություն արժանի են medyo > մեջ և mundyo > մունջ, որոնցից հետևում է, թե dy > ջ. այս ճիշտ է, բայց երբ նկատենք, որ y կիսաձայնը ուրիշ տեղեր էլ գտնում է ջ, կարող ենք հետևել, թե վերի երկու օրինակում ո՛չ թե dy միախառնվելով դարձել են ջ, այլ d ընկել է և նրան հաջորդող y դարձել է ըստ օրինի ջ:

Այս բոլորից դուրս պետք է հիշել dw ձայնափոխմբը, որ հայերենում պատահում է միայն երեք անգամ և տալիս է րկ. սրանք են dwō>երկու, կրկին. dwi>երկնչել, երկն, երկ-իւղ և dwa>երկ-այլն, երկ-ար: Այս անսովոր ձայնափոխությունը գեռ իր պատշաճ և համողիչ բացատրությունը չէ գտած:

g¹

Հնդեվրոպական նախալեզվի g¹ գտնում է սանսկրիտ ḡ, գենդերեն z, հին սլավերեն z, լիթվաներեն ž, հունարեն ζ, լատիներեն, իտալերեն g, գոթերեն k. օրինակ՝

Հնդեվրոպական նախալեզու՝ *g¹en- «ծնիլ»>սանսկրիտ jāna-ti, գենդերեն zizanāḡ, հունարեն γίγνηται, լատիներեն gigno, գոթերեն kuni, իտալերեն gein:

Հնդեվրոպական նախալեզու՝ *g¹nē- «ճանաչել»>սանսկրիտ jñā, գենդերեն za i, հունարեն γνώστω, լատիներեն gnōsco, գոթերեն kunnan, հին իտալերեն gninim, լիթվաներեն žinaū, հին սլավերեն znati և այլն:

Հայերենի մեջ g¹ գտնում է ծ. ալոպես են՝

Բառակազմում՝

g'en	>	ծնանիլ	g'mbh	>	ծամել ?
g'en	>	ծնօտ	g'ḡ	>	ծան-հալ, ծանոթ.
g'ōnwi	>	ծունց, ծունք		>	ճանաչել (փոխանակ
g'uro	>	ծուս		>	*ծանաչել)
g'ār	>	ծիծառն (կրկնված)	g'rsō	>	ծաս
g'l	>	ծաղր, ծի-ծաղ (կրկնված)	g'eg'	>	ծեծ, ծեծել
			g'er	>	ծեք

Բառի մեջ կամ վերջում՝

ag'o	> ածել, լսածել	mag	> մածնալ, մածուն
sig	> ալծ	méga	> մեծ
arg'	> արծնել, արծ-արծել	oug'	> ոլծ, ածանալ, (պաղ, պաղիլ)
arg'ato	> արծաթ		
bhug'	> բուծանել, բուծ = բուս, բանել	reug'	> առեծ
		rg'ipyo	> արծուի, արծիւ
bhug'o	> բուծ, (ալծի ձագ)	rug'	> ործկալ
bñrug	> երբուծ	serg'	> գ-երծ, գ-երծանիլ
g²ag'	> կած-ան	træg'	> արածիլ
g²rg'	> կարծր	worg'	> գործ, գործել
g²urg'	> կուրծ, կրծել	wræg'	> երգիծանել
leug', loug'	> լուծ, լուծանել	yug'o	> լուծ

Առանձին զխոսքում թվան արժանի են՝

- eg'o > ես (նախապես եղել է եծ, որի վերջաձայնը բաղաձայնի մոտ դարձել է ս, ապա ընդհանրացել):
 g'əldu > առլ «ամուսնու քույրը» (նախապես *ծալ, որ առլգր բառի նմանութիւամբ կամ մի ուրիշ ազդեցութիւամբ դարձել է առլ):
 ag' > ասել (նախապես եղել է *ածել).
 ag'ro > արա (նախապես եղել է *արծ, ապա ծ=ա լծորդութիւամբ դարձել է արա, ալդ մասին տես ստորև):

g^w

Հնդեվրոպական նախալիզդի g^w դասում է սանսկրիտ, զենդերեն, հին սլավերեն և լիթվաներեն g, հունարեն β, լատիներեն u, gu, իռլանդերեն b, գոթերեն q, ավելացնենք և ալն, որ հնդեվրոպական նախալիզդի e, i ձայների առաջ հնդեվրոպական նախալիզդի g^w առլիս է սանսկրիտ և զենդերեն ḡ, հին սլավերեն ž, dz, իսկ հունարեն շատ բարբառների մեջ ε և γ ձայներից առաջ ð, օրինակ՝

Հնդեվրոպական նախալիզդի g^wiv- «կեալ, ապրիլ» > սանսկրիտ gāya-, ḡivá-, զենդերեն gayō, ḡivō, հին սլավերեն živŭ, լիթվաներեն g'yvas, հունարեն βίος, լատիներեն vīos, հին իռլանդերեն beo, գոթերեն qius:

Իխաղություն.— Քերականներից ոմանք ալս ձայնը նշանակում են g^w, ուրիշներ g², ուրիշներ պահում են պարզապես g, իսկ g¹ նշանակում են g' (շեշտով g):

Հայերենի մեջ հնդեվրոպական նախալիզդի g^w դասում է կ նույնիսկ քմական ձայնավորից առաջ.

Բառատեղում՝

g²ā	> եկն, եկ	g²el	> կեղ
g²ad	> կատակ	g²en կամ g²ēn	> կին
g²ag¹	> կածան	g²er	> կեր, կերակուր
g²aid	> կայծ	g²iv	> կիւ (ծաման)
g²ag²rōdo	> կարկաս	g²iyā	> կեալ
g²alakt	> կաթն	g²l	> կաղաղ
g²ebhura	> կամուրջ	g²l	> կաղաւել
g²'leno	> կաղին	g²rdh	> կարգալ
g²og²rod	> կորկոտ?	g²reng'h	> կանչիլ, կանձիլ
g²ol	> կող, կողմն	g²rg'	> կարծր
g²ol	> կողր	g²ul	> ըն-կղմել
g²or	> կոկորդ	g²ul	> կուլ, կլանել
g²org²or	> որկոր ?	g²umb	> կամբ
g²ov	> կով	g²urg¹	> կուրծ, կրծել
g²ovio	> կոզի (կարպ)	g²urōng	> կուռնի
g²rāwanā	> երկան	g²ūto	> կու, կոլ
g²rbti	> կարթ	g²wəl	> կալ, կալալ

Բառամիջում և բառավերջում՝

olg²	> աղկ-աղկ	lug²	> եղուկ
ang	> անկիւն	neg²ro	> մերկ
bheg²bheng²	> բեկանել	perg²	> հերկել ?
bhog²	> բոկեղ	prg²	> հարկանել
dhag²	> զակու	reg²o	> երեկոլ
dig²	> տիկ	seng²	> ընկենալ
g'halg²	> ձաղկիլ	smug²ro	> մարկ, մրկիլ
lēg²	> լիկ	sg²	> անկանիլ
lerg²	> լերկ	(s)teig²no	> թեկն
līg²	> լիկ (ճահիճ)	təg²	> թակիլ
lorg²	> ողորկ	spheig²	> փեղկ

Երկու զեպրում ունենք g² կրճատված՝

- azg²dh > ազդր
 g²nid > անիծ

Երկու զեպրում էլ ունենք gy դարձած և. ալն է՝

- agyō > աճել և azgy > աճիւն, որոնց վրա ավելացնում եմ

līg²y > լիճ:
 Իսկ ng² > օժանել բառի մասին տես վերը:

Գ. ՇՆՉԵՂ ԹՐԹՌՌՈՒՆՆԵՐ

bh

Հնդեվրոպական նախալեզվի *bh դառնում է սանսկրիտ bh, գինդերեն, հին սլավերեն, լիթվաներեն, իռլանդերեն, գոթերեն՝ b, հունարեն և լատիներեն f.—սակալն երկու ձայնավորի միջև նա տալիս է լատիներեն b, գերմաներեն b (երկու ձայնավորի միջև b): Օրինակ՝

Հնդեվրոպական նախալեզու՝ *bhérō «բերեմ, կրեմ» > սանսկրիտ bhárāmi, գինդերեն barāmi, հին սլավերեն bero, իռլանդերեն—biur, գոթերեն, baira, հունարեն φέρω, լատիներեն fero:

Հնդեվրոպական նախալեզու՝ nébhos «ամպ» > սանսկրիտ nébhas, հունարեն νέφος, հին սլավերեն nebo, լատիներեն nebula, լիթվաներեն debesis, հին բարձր գերմաներեն nebul, հին սաքսոներեն nebal և այլն:

Հայերենի մեջ bh դառնում է բ. այսպես՝

Բառասկզբում՝

- bher > բերել
- bher-ano > բերան
- bhā > բամ, բաս, բալ, բան, բառ
- bhəl > բալ «մշուշ»
- bhrevf > աղբեր
- bhundho > *բունդ «հատակ», որից *անբունդ, ապա զարձած անգունդ.

- bher (իմն bhēr) > բիր, բրել, բահ
- bhrg'h > բարձ, բարձր, բերձ, բառնալ
- bheg, bheng > բեկանել
- bhernō > բեռն
- bhū > բու-ս, բուսանիլ
- bhor > բոս
- bho-u > բովել
- bhoro > բորենի
- bho-sk > բոց
- bhöl > բլուր (իմն *բուլ-ուր)
- bhoso > բոկ «բորիկ»
- bhog > բոկեղ
- bhug' > բոժանել
- bhug'o > բուժ (ալժի)
- bhug' > բուտ, բտել (բուլժ)
- bhōrdh > բուրդ, բրդել
- bhu > բուք
- bhrātēr > եղբայր

- bhut > բուխ (հաստ)
- bhol > բու-որ
- bhol > բող, բողի, բողբոջ
- bfiurug' > կրբուժ
- bhobhro > բորբ-ոք

Երկու ձայնավորի միջև bh տալիս է հայերեն ւ (վ), որի համար եղած օրինակներն են՝

- obhel > աւել, աւելել, (ավլել)
- obhel > սու-աւել, աւելի, լաւելուլ
- sabha > աւազ ?
- l...bh? > լաւ

Այստեղ է պատկանում նաև g²ebhura (> հունարեն γέφυρα) > կամուրջ, որ տարուի ենթարկվելով՝ այսպես ձեւափոխվել է:

Բայց լավագույն օրինակն է գործիականի վերջավորաթյունը, որ աւել սանսկրիտ -bhīh, հունարեն -φει ձեւը և հայերենում դառնում է ւ, վ. օրինակ՝ բանիւ, ամաւ, քնով:

Սակայն bh բառամիջում և բառավերջում սնդականի կամ նախ բաղաձայնի հետ զարձյալ տալիս է բ. օրինակներն են՝

- kubhrō > սուրբ
- olbh > ողբ
- orbho > որբ
- dhmbh > զամբան
- dhabhro > զարբին
- snōbhri > նուրբ
- g'ṛmbh > ծամել ? (բ ընկած)
- ambho > ամբ-ողջ
- ṛmbho > ամպ (ամբ)
- ṛbhro > ամպրոպ
- sṛbh > արբ(ենալ)
- arbh > արբ-անեակ
- bhobhro > բորբ-ոք

Ըստ այսմ միևնույն գործիականի մասնիկը, որ ձայնավորի մոտ տալիս էր ւ, վ (ամաւ, բանիւ, գործով), սնդականից և բ-ից հետո դառնում է բ. ինչպես՝ ամբ, գառամբ, ձեռամբ, հարբ:

dh

Հնդեվրոպական նախալեզվի dh դառնում է սանսկրիտ dh, գինդերեն, հին սլավերեն, լիթվաներեն, իռլանդերեն և գոթերեն d, հունարեն θ, լատիներեն f.—լատիներենի մեջ երկու ձայնավորի միջև լինում է d, իսկ ռ բաղաձայնից առաջ կամ հետո՝ դառնում է b.—նույնպես գերմանականում երկու ձայնավորի միջև դառնում է ð. օրինակ՝

Հնդեվրոպական նախալեզու՝ *dhūmós «ծուխ» > սանսկրիտ dhūmās, լատիներեն fumus, լիթվաներեն dūmai, հին սլավերեն dimū, հունարեն θύμος, իռլանդերեն dumacha, գոթերեն dauns և այլն:

Հնդեվրոպական նախալեզու՝ *rudhrós «կարմիր» > սանսկրիտ rudhirá հունարեն ἔρυθρος, լատիներեն ruber, հին սլավերեն rūd-

ru, գոթերեն raúda-, գերմաներեն roi. լիթվաներեն raúdas, իսլանդերեն rúad:

Հայերենի մեջ հնդեվրոպական նախալեզվի *dh դառնում է բառակազմում դ: Եղած օրինակները հետևյալներն են.

Բառակազմում՝

dhəl > գալ (կաթը)	dher > դեռ
dh > գալար, գալակն	dheig'h > դէզ
dhag² > գաղու	dhuī > դի, դիակ
dh > գաղձն	dhē, dhī > դիել
dhp̄bh > գամբան	dhēs > դիք (աստվածներ)
dhabh̄ro > գարբին	dhē > դիր, դեկ
dhr > գարել, գաղար	dhon > գոն (հացը)
dhr̄g'h > գարձ	dhul > գուլ (գաղար)
dheu > գեղելի	dhur > գուռն
dhel > գեղ, գեղբ, գեղին, գեղձ, գեղձան	dhuktēr > գոսար
	dhrōgh > գորգն

Բառամիջում և բառավերջում՝

au-dh > ւօդ	bendh > (իմա bhendh) > պինդ, պնդել
aw-dho > օդ (հավա)	
azgdh > ազգը (ց կրճատ-ված)	g²rdh > կարգալ
	gherdh > գերդաստան
bhundho > *բունդ «հասակ», որից *ան-բունդ, ապա դարձած ան-դունդ:	eu-dh > օդ (կռշիկ)
	khendh > խինդ, խնդալ
	lendh > լինդ
bhōrdh > բուրդ, բրդել	wendhā > գինդ

Մի քանի տեղ դառնում ենք dh > ւ, այսպես՝

lqdh > աղանձ
 bñdh, որ առիտ է bendh ձևի տակ պինդ, նաև լինում է պապանձիլ (բերանը կապվել).
 khendh, որ առիտ է խինդ, խնդալ, նաև լինում է խնձիլ (իմա խնձիլ).
 wendhā, որ առիտ է գինդ, նաև լինում է գինձ (իլ կլորակ ձևի պատճառով).

dhy առիտ է ջ. այսպես են՝

sādhyo > աջ և g²hoidhyo > գեջ, որոնց համար ունենք նույն նկատողութունը, ինչ որ վերը՝ dy > ջ-ի մասին:

Հնդեվրոպական նախալեզվի g'h դառնում է սանսկրիտ h, գենդերեն և հին սլավերեն z, լիթվաներեն ž, հունարեն χ, լատիներեն h, իսլանդերեն և գոթերեն g (գերմանականում երկու ձևով՝ միջև հնչվում է շփական շ).—օրինակ՝

Հնդեվրոպական նախալեզու՝ *g'hejtem, g'hijōm «ձիւն» > սանսկրիտ himá-, գենդերեն zyā, zima, հունարեն χιών, χείμα, լատիներեն hiems, հին սլավերեն zima, լիթվաներեն žemà, հին իսլանդերեն gam և այլն

Հնդեվրոպական նախալեզու՝ *veg'h «կառքով երթալ, կառք վարել» > սանսկրիտ váhati, գենդերեն varaiti, հին սլավերեն vèzetū, լիթվաներեն veža, լատիներեն veho, գոթերեն -wigan, հունարեն ὄχος:

Հայերենի մեջ բառակազմում g'h դառնում է ւ. այսպես՝

g'hāg²h > ձագ	g'hēyo > ձի
g'haig² > ձագիկ, ձագիկել	g'hijōm > ձիւն
g'hedo > ձեռ (սուչ)	g'hol > ձող
g'hejtem > ձմեռ-ան	g'hřs > ձառ
g'her, g'hers > ձեռն	g'h > ձագիկ
g'hērs > ձիր	g'hu > ձու-կն
g'heulo > ձուլ, ձուլել	g'hu > ձոն (<ձուան)
g'heu > ձև	

Բառամիջում և բառավերջում՝

ang'hen > անձն, անձին	g²reng'h > կանձիլ (մի ան-գամ դրված է կունչիլ)
ang'hu > անձակ	
bhr̄g'h > բարձ, բարձր, բերձ, բառնալ	meg'hri > մերձ
dhr̄g'h > գարձ, գառնալ	org'hi > որձ
eng'həti > բնձալ (որ և ըն-նալ)	sing'ha > ինձ (գաղանդ)
	tjg'hú > թանձր, թանձու
g²helg'ha > գեղձ (խուլ)	

Չախավորից հետո կամ երկու ձայնավորի միջև առիտ է գ.

dheig'h > դէզ, դիգել
dig'h > արդ
eg'h > եղն
eg'h > եղր
leig'h > լէզ, լիգել

meig'h > մէզ, միզել
og'hinio > ոզնի

Այսպես նաև zg'h ձայնավորմամբ, որ z ջնջվելով, g'h տալիս է զ.

mozg'ho > մոզի
ozg'ho > ոզոր (ճլուզ)
ozg'h > ազ-ազ-ել, ազ-ազ-ուն

Իխառըսքուն 1.—Ինչպես վերի օրինակներից երևաց, g'h մնում է ձ' սնդակներից ու նաչերից հետո. ըստ այսմ ինձ գերանունը ծագում է հնդեվրոպական նախալեզվի emg'hi ձևից (հմմտ. սանսկրիտ máhyam, լատիներեն mihi). նրա հետևաթլամբ էլ կազմված են մեզ, քեզ, ձեզ, որոնց մեջ զ դրված է ձ-ի փոխարեն, ձայնավորից հետո գտնվելու պատճառով:

Իխառըսքուն 2.— Հնդեվրոպական նախալեզվի g'ho նախդիրը գտնում է հայերեն զ, որ ձայնավորից հետո եկող ձևն է. ուստի կարելի է բացատրել նրանով, որ նախապես «աւե, բերե, ածե, ունի, աւնի...» ձայնավորով հանգող ձևերի հետ է գործածվել, ապա ընդհանրացել:

g^wh

Հնդեվրոպական նախալեզվի g^wh գտնում է սանսկրիտ gh, գենդերեն, հին սլավերեն, լիթվաներեն և իռլանդերեն g, հունարեն φ, լատիներեն f.—ավելացնենք սակայն, որ հնդեվրոպական նախալեզվի e և i ձայներից առաջ g^wh տալիս է սանսկրիտ h, գենդերեն ħ, հին սլավերեն ž, նույնպես ε, γ ձայնավորից առաջ հունարենում տալիս է θ, լատիներենում երկու ձայնավորի միջև գտնում է v, գոթականում նույն դիրքում w, իսկ բառակերպում գոթականի ձայնավորութլունը անձանոթ է. օրինակ՝

Հնդեվրոպական նախալեզու՝ *g^when «զարնել, սպանել» > սանսկրիտ hánti, ghnánti, գենդերեն ħainti, հունարեն θείνω, εἴπε-φρον, φόνος, հին իռլանդերեն gonim, հին սլավերեն žena, լիթվաներեն ganyti, լատիներեն of-fendo:

Հնդեվրոպական նախալեզու՝ *sneig^wh «ձիւնել» > գենդերեն snaēžaiti (= snaēĭaiti), լիթվաներեն snėgas, հին սլավերեն sněyŭ, հունարեն νίφα, լատիներեն nivem, գոթերեն snaiws:

Հայերենի մեջ հնդեվրոպական նախալեզվի g^wh բառակերպում ոչ-քմական ձայնավորներից առաջ տալիս է զ. օրինակներն են՝

g²həni > գան, գանել (ձեծել)
g²hərzda > գարի ?

g²hfs > գարշ, գարշիլ
g²hoidhyo > գէջ (թաց)
g²homo > գոմ (փարախ)

Քմական ձայնավորներից (e, i) *առաջ բառակերպում տալիս է ջ. օրինակներն են՝

g²her > ջեր
g²hermo > ջերմ
g²hisla > ջիղ, ջիլ
g²hen > ջին (գովազան), ջնել
g²henye > ջինջ, ջնջել

Իսկ այս ջ-ն երկու ձայնավորի միջև գտնում է ծ, ինչպես ցույց է տալիս՝

ēg²hi > իծ

Բառամիջում և բառակերպում g²h գարձլալ լինում է գ. այսպես են՝

dhrōg²h > տուրզն
g²hāg²h > ձագ
k'eig²h > սէզ
knig²h > նիզ
neig²h > մէզ
nog²hlo > եղունդն
srung²h > սունդն
wog²h > գոգ, գոզցես «ասել»

Նկատելի երեւոյթ է, որ կոկորդական բաղաձայնների բոլոր ստորիճանները՝ արեւելյան լեզուների մեջ, քմային ձայնավորներից (e, i) առաջ փոխվելով գտնում են կիսապայթական (ձ, ֆ և այլն), իսկ հայերենում միայն ջնջեղ թրթռունն է, որ ենթարկվում է այսպիսի ձայնափոխութլան. իսկ և պարզ թրթռունն աստիճանները անփոփոխ են մնում:

Մելեն (MSL 13, p. 243—245) գտնում է մի նոր ձայնական օրենք, որ հետևալն է. բառակերպի նախաձայն քմականը փոխանակվում է կոկորդականով, եթե բառի մեջ կա որևէ շչական ձայն. օրինակ՝ լիտվաներեն žąsis ձևին համապատասխանում է հին սլավերեն gąsī «սաղ».—հին սլավերեն dzvězda «աստղ» ձևին = լեհերեն gwiazda, լիտվաներեն žvaigsdė, հին պրուսերեն swaigstan: Նույն օրենքը ավելի լավ են հաստատում սեմական լեզուները: Հայտնի է, որ սեմական հասարակաց g ձայնը արարական շատ բարբառներում դարձել է j և այլա ջ:

Այս ձայնափոխությունը պատահում է հասկացիս մադրերյան բարբառներում: Բայց մարոկկոյերենում, երբ բառը պարանալում է որևէ շշական ձայն, այս ձայնափոխությունը անզի չի օժնենում. օրինակ՝ մարոկկոյերեն *gūz* «ընկուզ», փոխանակ $\text{g} \rightarrow \text{j} \rightarrow \text{jūz}$. — մարոկկոյերեն *gens «սես»* — $\text{g} \rightarrow \text{j} \rightarrow \text{jens}$ և այլն: Հայերենում էլ թեև հնդեվրոպական նախալեզվի g^2h ձայնը ե և ի քմականների մոտ դառնում է ջ (ջեք ջեքմ, ջիղ), բայց բացառաբար հնդեվրոպական նախալեզվի $\text{g}^2\text{helg}^2\text{ha}$ > $\text{qeb}^2\text{á}$ (խուլլ)՝ ներքին Δ ձայնի պատճառով: Մեկի ալս նոր օրենքին ի հաստատություն ավելացրել եմ մեր բարբառներից հետևյալ օրինակները («Հանդէս ամսօրեայ», 1905, էջ 254, 1906, էջ 129, MSL 14, էջ 288).

1. Հայերեն ջրաղացք բառը ր ձայնից զրկվելով դարձել է ջաղացք և զրկթե այս ձևով մնում է համարյա բոլոր բարբառներում. օրինակ՝ Տփղիս, Աղուլիս ջաղաց, Սարբերդ ջաղարջ՝ ջաղարց (սես. ջախջի, բցո. ջախջեհն, Տիգրանակերտ ջաղարց, Ջելթան նաղոյցք, ջաղորցք, Հաճին ջաղոյցք, Երեան, Ջուղա ջաղաց, Գորիս, Շամախի նաղաց, Ախալցխա, Կարին ջաղացք (հոգն. ջաղջրնեք), Համշեն նաղացք (սես. նաղցուց), Մոկք, Վան նաղաց, Սվեդիս ջաղուցք, Ալաշկերտ ջաղաջ՝ Մուշ ջաղան, Նոր-Նախիջևան ջաղացք, Մարաղա, Սալմաստ նաղաչ, Սերաստիս ջաղազգ, Սուչախ ջեղացք, Դարբասղ մեղաց. — բայց այս բոլորի դեմ Ասլանբեգի ենթաբարբառը հանում է քաղաչք. — կարելի էր կարծել, թե նախաձայնը վերջաձայնի նմանությունը դարձել է ք: բայց այժմ այս մեկնությունը սխալ է դուրս գալիս. ըստ վերոհիշյալ օրենքի, քմական չ տարանմանությունը իր աստիճանի կոկորդականին է վերածված՝ ազդեցությունը բառամիջի շ ձայնի:

2. Զորեքչաբբի բառը Վանի բարբառում սաացել է՝ չեօրեօչաբ, չեօրեօքչապթ և քեօրեօչապթ, քեօրեօքչապթ — ձևերը, որոնցից առաջին երկուսը դեռ պահում են չ ձայնը, մյուս երկուսը վերածել են ք՝, ըստ վերի կանոնի:

3. Սրանց ավելացնում եմ՝ Վանի բարբառով շրջօնք «թարս» բառը դարձել է շրբկոնք, բայց շրկոնքել «շրջել, շուռ տալ» (տես Ե. Լալայան, Վասպուրական, 1912, էջ 169):

Այժմ ավելացնում եմ մի նոր օրինակ ևս՝

4. Հնդեվրոպական նախալեզվի g^2herdh > $\text{qeb}^2\text{qawawán}$ բառը, որի նախաձայնի բացատրության համար անհաջող որոնումներ էի կատարում Արմատական բառարանի հատոր է, էջ 113-ում. — բա-

ցատրությունն այն է, որ նախաձայն g^2h չէ փոխվել ջ-ի և մընացել է զ՝ հաջորդ ա-ի պատճառով:

Վերոհիշյալ բոլոր համեմատություններից դուրս մնում են՝ g^2hel > qeb^2qeb^2 ? (որի նախաձայնը անբացատրելի է մնում).

$\text{In}^2\text{g}^2\text{hi}$ > ran^2 ? (որի վերջաձայնը նույնպես կարող է լուսարանություն).

Իսկ ang^2hi > ang^2hi > od բառի մասին տես վերը՝ n-ի տակ (Դիտողություն 2):

Հնդեվրոպական g^2h > հայ ջ փոփոխությունը արդյունք է քմայնացման:

Քմայնացումն առաջանում է նրանից, որ լեզուն ավելի մեղմ կերպով կպչում է քիմքին և հետևաբար ավելի լայնորեն է տարածվում նրա վրա: Կեզվի ճնշումը ավելի թուլ է ց, ցհ ձայների հնչման ժամանակ, քան k, kh, երբ ճնշումը թուլանա, ց ձայնը կդառնա հազագային, մինչդեռ մյուս բաղաձայնները (b, d) կմնան պայթական: Այսպես, չեխերենում և ուկրաիներենում b և d մնում են պայթական, իսկ ց դարձել է հազագային (զրվում է h): Երբ լեզուն ավելի լայն տարածվի, կտացվի քմայնացումը: Արարերենում ց ձայնի տարածումը ավելի լայն է եղել, ուստի անցնելով gy ձևից, դարձել է ջ, իսկ k մնացել է անփոփոխ: Հայերենում էլ հնայես ցհ դարձել է ջ, բայց մյուսները մնում են. նոր բարբառներում էլ, ուր որ կեզվի տարածումը լայն է եղել, սաացվել է քմային բաղաձայն, իսկ ուր որ քիչ է եղել այդ տարածումը՝ բաղաձայնը մնում է պայթական:

Գ. Շ Ն Չ Ե Ղ Խ Ո Ւ Ի Լ Ե Ր

Շնչեղ խուլերի գործածությունը շատ սահմանափակ է հնդեվրոպական նախալեզվի, ավելի ևս ժառանգ լեզուների մեջ: Սանսկրիտը զիտի զանազանել ph, th, kh, որոնց համապատասխանում են զենդերեն f , θ , x : Այս ստույգ համապատասխանությունը գեմ ունենք հայերեն փ , ք , խ , հունարեն φ , θ , χ և հին սլավերեն p , t , x . բայց հունարեն φ , նաև հնդեվրոպական նախալեզվի bh և g^2h ձայների ներկայացուցիչն է, τ հնդեվրոպական նախալեզվի t և χ հնդեվրոպական նախալեզվի gh ձայնի ներկայացուցիչն է. նույնպես հին սլավերենի p, t համապատասխանում են նաև հնդեվրոպական նախալեզվի p, t ձայներին և x փնձական է: Վերջապես մյուս լեզուների մեջ ph, kh, th և p, t, k իրար են խառնված և նրանց միջև որոշ սարբերություն զնել զժվար է:

Այնուամենայնիվ եղած սակավաթիվ օրինակներն էլ ապացուցում են շնչեղ խուլերի զուլումբյունը հնդեվրոպական նախալեզվում՝ բացի kh ձայնից, որ բնավ գործածական չէր նախալեզվում: Այս հարցում ամենից ավելի նպաստավոր հանդամանք է ներկայացնում հայերենը, որ հնդեվրոպական նախալեզվի շնչեղ խուլերը անշփոթ պահել է և որի միջոցով կարելի է իսկույն զանազանել շնչեղ խուլերը պարզ խուլերից:

Դնում եմ այստեղ մի քանի օրինակ.

1. Սանսկրիտ kakhati (փոխանակ *khakhati), հունարեն $\chi\acute{\alpha}\chi\omega$ (փոխանակ * $\chi\alpha\chi\acute{\alpha}\omega$), հայերեն խախանք, հին սլավերեն $\chi\acute{o}\chi\acute{o}\ddot{u}$, հին բարձր գերմաներեն huoh, լատիներեն cachinnus, բուլոն էլ «քահ-քահ, բարձրաձայն ծիծաղ կամ ծաղր» իմաստով:

2. Սանսկրիտ phut-, հայերեն փուք, հունարեն $\varphi\acute{\upsilon}\sigma\alpha$, լիթվաներեն pūsti «փչել»:

3. Սանսկրիտ pṛthukas, հայերեն որք (հորթ), հունարեն $\pi\acute{o}\rho\tau\acute{\iota}\varsigma$ (հայերենի մեջ p ցույց է տալիս հնդեվրոպական նախալեզվի th, որովհետև հնդեվրոպական նախալեզվի t տալիս է p ձայնից հետո q և ոչ թե p):

4. Սանսկրիտ skhalāmi, հայերեն սլալիմ:

Առաջինք, որ շնչեղ խուլերը տալիս են հայերեն փ, ք, խ: Որովհետև հնդեվրոպական նախալեզվի p տալիս է հայերեն փ և ոչ բնավ փ, ուստի ph > փ համապատասխանությունը բոլորովին վստահելի է և չի կարող շփոթություն տեղիք տալ: Շփոթ է միայն p, որ կարող է առաջանալ նաև t-ից, միայն այն տարբերությամբ, որ մինչդեռ t դառնում է p-ից հետո q, th մնում է այս պարագային էլ p: Գալով kh-ին ըստ որում կոկորդականները առամականներից ավելի թույլ արտասանություն ունեն և պայթական բնույթը կորցնելու ավելի հակամեա են, ուստի և դարձել է հայերեն խ: Կարելի չէ այլ ձայնը շփոթել k-ի հետ, որ տալիս է միշտ p: Եղած օրինակները հեռուալիներն են.

th > p.

- arth > արթուն, զարթնուլ
- er-th > երթալ
- senth > ընթանալ
- prth > հարթնուլ (վախից վեր ցատկել)
- m|th > մաղթել (աղոթել)

- meuthi > մութ
- porthu > որթ (հորթ), բայց և Չ. խաղողի որթ
- ph > փ
- aph > ափ (ձևաքի)
- werph > գերփել
- sephs > եփել
- tupho > թուփ
- laph > լափել
- doph > տոփել
- phamph > փամփ (որ բարգվելով բուշա բառի հետ, տալիս է փամբուշա).
- phor > փորձ (ուր և աճական է).
- phōl > փուլ, փլանիլ
- phu > փուչ, փչել, փուք
- phuku > *փուքու, տարանմանությունը զարձած փուքու, փոքր.
- phēr-s > *փիւ, որից փուել, սփուել, սփիւռ, սփիւռք.
- phēr > *փիւր, կրկնությունը *փիւր-փուր, որից փըր-փուր.
- sphel, phel, որ զանազան ձայնադարձներով տալիս է փայլ, փա-ղփաղ-իլ, փող-փող-իլ).

Վերջին օրինակը ցույց է տալիս, որ երբ բառն սկսվում է sph ձայնախմբով, s ընկնում է և ph տալիս է հայերեն փ. այսպես են նաև՝

- spher > փեռեկել, փերթ
- sphṇ > փան-աքի
- sphino > փին (կղկղանք)
- sphēn > փին-ատ (աղքատ)
- sphr > փարել
- sphelg² > փեղկ

kh > խ

(որ և գրվում է k²h, q²h կամ gh)

- khād > խածանել
- khait > խալթել
- khaid > խալտ, խալծ, խալտալ
- khṇd > խանդ, խանձ, խաղ
- khāty > խաչ, խեչ, խոչ
- khendh > խինդ, խնծիդ

- kheul > խոլլ (ուռուցք)
- sk'ə-kho > ցախ
- smuqh > մուխ «ծուխ»
- muqh > մուխ, մխել
- sk²hal > սխալ
- sk²hal > սխալակիլ «հարբիլ»

Մանրություն.— Հնդեվրոպական նախալեզվում շնչեղ խու-
լերը գործածվում էին ավելի շատ ժողովրդական լեզվի մեջ՝ իմաս-
տին սաստկություն տալու համար: Այս դեպքում նրանք առաջա-
նում են պարզ խուլերից: Այսպիսի ձայնափոխության արդյունք
են հայերենում՝

փռել, սփռել, սփիւռ < phēr-s, որ սաստկականն
է per արմատի.

- փամփուշտ < phamph + բուշտ
- փոր-ձ < phor-(բուն արմատը per).
- փոքր < phuku-(բուն արմատը pou, pu).

(Հայերենի շնչեղ խուլերի մասին առանձին հոդված ունի
Մեյլեն, BSL 36, № 107, p. 109—120):

Հ ա մ հ մ ա ա կ ա ն տ ա խ ա ա կ
պայթուցիկների ձայնափոխության

	հնի.	սանս.	գնդ.	հուհ.	լատ.	գոթ.	հուլ.	լիթ.	լուլ.	հուլ.
Խուլ	p	p	p	π	p	f, b	p	p	—	հ, ւ, յ, ռ
	t	t	t	τ	t	p, d	t	t	t	թ
	k'	ϕ	ϕ	κ	c	h, g	s	š	c	ս
	k ^w	k, c	k, č	κ(=)	qu	hw, w	k, č, č	k	c	ք
Թրթուուն	b	b	b	β	b	p	b	b	b	պ
	d	d	d	δ	d	t	d	d	d	տ
	g'	ǰ	z	γ	g	k	z	z	g	ծ
Թրթուուն շնչեղ	g ^w	g, ǰ	g, ǰ	β(δ)	u, gu	q	g(z, dz)	b	b	կ
	bh	bh	b	φ	f, b	b	b	b	b	բ(ւ, վ)
	dh	dh	d	σ	f, d	d	d	d	d	դ
Շնչեղ խուլ	gh	h	z	χ	h	g	z	g	g	ձ(զ)
	q ^w h	gh, h	g, ǰ	φ(θ)	f, u	?	g(z, dz)	g	g	զ, ձ(զ)
	ph	ph	f	φ			p			փ
	th	th	θ	τ			t			թ
	k ² h	kh	x	χ			x			խ

Երբ մի ընդհանուր հալացք ձգենք այս համեմատական տախ-
տակի վրա, անմիջապես կերևա այն դարմանալի համաչափություն-
ներ, որ տիրում է յուրաքանչյուր լեզվի համապատասխանություն-
ների մեջ: Այսպես, երբ հնդեվրոպական նախալեզվի թրթուուն b
տալիս է սանսկրիտ b, նրա համապատասխան թրթուուն d տալիս
է սանսկրիտ d (երկուսն էլ թրթուուն), իսկ երբ նույն հնդեվրո-
պական նախալեզվի b դառնում է հայերենի մեջ պ, իր համապա-
տասխան d ձայնն էլ դառնում է ա, որովհետև երկուսն էլ խուլ են:

Համաչափությունը նկատելի է նույնիսկ ավելի մանր ման-
րամանությունների մեջ. օրինակ՝ երբ հնդեվրոպական նախալեզ-
վի bh դառնում է գոթականի մեջ բառակցում b և երկու ձայ-
նավորի միջև b, նրա համապատասխան dh, g^wh ձայներն էլ տա-
լիս են բառակցում d, g, երկու ձայնավորի միջև ձ, γ (այսինքն
բոլոր շնչեղ թրթուուն ձայները դառնում են բառակցում պարզ
թրթուուն, ձայնավորների միջև շփական):

Այսպես են բոլոր լեզուների բոլոր խմբակցությունները:

Համաչափության այս օրենքը միջոց է տալիս մեզ իրերը
իրարով հաստատելու. թերուլթները երևան հանելու և շատ անգամ
էլ իրերի հնագույն վիճակը գուշակելու: Այսպես, հայերենի մեջ
(ինչպես նաև մյուս լեզուներում), հնդեվրոպական նախալեզվի b
ձայնի համապատասխանությունների բավականաչափ օրինակներ
պակասում են. բայց ըստ որում հնդեվրոպական նախալեզվի d, g'
g^w տալիս են հայերեն ա, ծ, կ, ուստի և նրանց համապա-
տասխան b ձայնն էլ պիտի տա սրանց համապատասխան
պ:— Եթե հնդեվրոպական նախալեզվի bh, dh, g^wh երկու
ձայնավորների միջև տալիս են լատիներեն b, d, v և գոթերեն β,
δ, w, իսկ բառակցում գոթերեն b, d, v, բայց լատիներենում
միշտ f, կարելի է գուշակել, որ հնագույն շրջանում իտալական
խմբի մեջ հնդեվրոպական նախալեզվի bh, dh, g^wh բառակցում
տալիս էին f (կրկնաշրթնալին), θ, f, որոնք բոլորը հետո դարձան
f:— Եթե հնդեվրոպական նախալեզվի t, k^w տալիս են հայերեն p,
q, իսկ *p տալիս է բառակցում h, ձայնավորից հետո ւ, պետք
է եզրակացնել, որ հնագույն շրջանում նույն *p ձայնն էլ տալիս
էր բառակցում փ, որ հետո հասավ h-ի: Եթե հնդեվրոպական
նախալեզվի պարզ խուլերը տալիս են հայերեն շնչեղ, ուստի k'
ևս պիտի սար գ, իսկ եթե տալիս է ս, ուրեմն անցել է g-ից
և սրա թուլության պատճառով վերածվել է ս-ի, ինչպես փ եղել
է h:

Մի քանի խոսք էլ պետք է տեսնք հնդեվրոպական նախալեզվի պայթականների վերակազմության համար:—Պարզ խուլ և պարզ թրթուռն խմբերի վերակազմությունը կասկածից զուրս է, ըստ որում հիմնված է քույր լեզուների (և մանավանդ հնագույնների) ամենամեծ մասի միաձայն վկայություն վրա, այն է արիական, հույն, լատին, բալթիկ-սլավական, կելտական, (ինչպես նաև ալբանական) լեզուների: Հնդեվրոպական նախալեզվում *b*, *d*, *g* հնչվում էին կատարյալ թրթուռն ձևով (այսինքն կոկորդի թրթրոսմաները սկսվում էին պայթման ժամանակ), իսկ *p*, *t*, *k* հրնչման ժամանակ կոկորդը փակ էր և ոչ միայն թրթուռն չկար, այլև ոչ մի շունչ չէր մասնակցում արտաբերության մեջ: Ուրիշ խոսքով՝ այս երկու կարգի պայթականների հնչումը նույնն էր, ինչ որ այժմ ուսներենի և ֆրանսերենի մեջ: Այս բաղաձայնների փոփոխության մեջ տարբեր են միայն գերմանականն ու հայկականը, որոնք ձևաք-ձևաքի աված մի շավղով են գնում և իրար բացատրում: Այսպես՝ հայերենում հնդեվրոպական նախալեզվի *bh*, *dh*, *g'h*, *g'h* դառնում են *p*, *q*, *á*, *q*,—*b*, *d*, *g*¹, *g*² դառնում *պ*, *ա*, *ծ*, *կ*, հնդեվրոպական նախալեզվի *p*, *t*, *k'*, *k*² դառնում են հայերեն *ն*, *ք*, *ւ*, *ք*, գերմանականում էլ սրա նման ըստ Փրիմի օրենքի *p*, *t*, *k'*, *k*² դառնում են *í*, *θ*, *h*, *hw*, *bh*, *dh*, *g'h*, *g'h* դառնում են *b*, *d*, *g*, *ɣ* (որոնք երկու ձայնավորի միջև հնչվում են *b*, *d*, *ɣ*), և *b*, *d*, *g*¹, *g*² դառնում են *p*, *t*, *k*, *q*:

Ավելի գովար է երրորդ խմբի բաղաձայնների վերակազմության խնդիրը, քանի որ գանազան լեզուներ գանազան ձևեր են ներկայացնում: Դրանց մեջ իրանականը, սլավականը, բալթյանը, կելտականն ու ալբանականը տեսն թրթուռն բաղաձայններ, ուստի պետք է ընդունել, որ հնդեվրոպական նախալեզվի համապատասխան ձայներն էլ թրթուռն էին: Բայց թրթուռն ձայների խումբը արդեն հաստատված էր ավելի զորավոր փաստերով և լեզուների գրեթե միաձայն վկայությամբ, ուստի պետք է ընդունել, որ հնդեվրոպական նախալեզվի այս երրորդ թրթուռն խումբը ոչ թե պարզ, այլ շնչեղ թրթուռն էր: Սրան համաձայն է գալիս այն երևույթը, որ սանսկրիտը, որ բաղաձայնների անաղարտ պահպանության շատ նախանձամոլոր է, ճշտվել այդ ձայների դեմ ունի շնչեղ թրթուռն ձայներ: Միևնույն ժամանակ հույնն ու լատինը երևան են հանում շնչեղ խուլ բաղաձայններ, որոնք իրոք էլ ձայնաբանորեն թրթուռն շնչավորների ապագա զարգացումն են. հմմտ.

հայերեն *p*, *q*, *q*, հետո դարձան գավաստական *bh*, *gh*, *dh*, Պոլսի գրական բարբառով եղան վերջապես *փ*, *ք*, *ք*:

Ամենից գովարը շնչեղ խուլերի վերակազմության խնդիրն է, որ, ինչպես տեսանք, գլխավորապես հիմնված է սանսկրիտի և գենդերենի վրա. մյուս լեզուները մեծապես մասամբ այդ խումբը խառնում են մյուսների հետ:

Իբրև կրակապայթույթուն ամբողջ հնդեվրոպական ձայնավորությանը, կարող ենք գնել հետևյալ կանոնները.

1. Հնդեվրոպական նախալեզվի խուլ բաղաձայնները ժառանգ լեզուների մեջ մնում են անփոփոխ, հայերենն ու գերմանականը ավելացնում են մի շունչ, այսինքն խուլերը դառնում են շնչեղ խուլ, ապագայում **փ* հայերենում դառնում է *ն*, իսկ գերմանականը, մի քալ ևս առաջ տանելով ձայնավորությունը, նույն շնչեղ խուլերը վերածում է շփականի (*spirante*):

2. Հնդեվրոպական նախալեզվի թրթուռն բաղաձայնները ժառանգ լեզուների մեջ մնում են անփոփոխ, հայերենը, ամեն գիրքի մեջ էլ, նրանք վերածում է մեղմ խուլերի, իսկ գերմանականը, դարձյալ մի քալլ առաջ գնալով, վերածում է ուժեղ խուլերի:

3. Շնչեղ թրթուռները անփոփոխ մնում են միայն սանսկրիտի մեջ. մյուս լեզուներից մեծապես մասի, մինչև իսկ հայերենի և գերմանականի մեջ, դառնում են պարզ թրթուռն, հունարենի մեջ շնչեղ խուլ, իսկ հին իտալական խմբի մեջ շփական (*spirante*):

4. Շնչեղ խուլերը մնում են միայն սանսկրիտի և գենդերենի մեջ, շատ անգամ նաև հայերենի մեջ, մյուսները սովորաբար շփվում են:

5. Այդ բաղաձայնները առհասարակ հայերենում բառամիջին, երկու ձայնավորի միջև գանված ժամանակ, ձգտում են կորցնելու իրենց պայթական մասը, միայն անգականից ու նախից հետո անփոփոխ են մնում:

6. Այսպիսով հնդեվրոպականի բոլոր չորս աստիճանները գանազան լեզուների մեջ պահված են 3 գույնի և 2 ձևի տակ (*b*, *p*). միայն թոխարերենն է, որ բոլոր չորսն էլ վերածել է պարզ խուլի. *t*, *th*, *d*, *dh* հավասարապես դառնում են *t* (Meillet, Les nouvelles langues, p. 11):

Հայերենում թրթուռններն սկսեցին պայթման հետ միասին, և որովհետև հայերենը շունչի ժամանակ թրթուռն չէր կարող գնել, ուստի շունչը շնչվեց և նրա թրթուռացումն անցավ պայթականին. այսպիսով ստացվեց *p*, *q*, *q*:

Նախալեզվի ph, th, kh անփոփոխ մնացին, որովհետև ար-
զեն հայերենի մեջ սովորական հնչյուններ էին:

Բայց թեև p, t, k և ph, th, kh հայերենի մեջ հավասարա-
պես դարձան փ p, ք, սակայն չխառնվեցին իրար. ըստ այնմ, որ
մինչդեռ նախաձայն p > փ դարձավ հ, ph > փ մնաց անփոփոխ. և
մինչդեռ նախորդ k > ք մնաց անփոփոխ, kh > ք դարձավ թ (M.
Grammont, MSL 20, p. 230—232):

Այստեղ պիտի բացատրենք, թե ինչ բնախոսական գործո-
ղովթուն է կատարվել, որ առաջացրել է հայերենի մեջ այս ձայ-
նափոխությունը:

Հնդեվրոպական նախալեզվում p, t, k պայթականները հնչ-
վում էին փակ խոչակով և հաջորդ ձայնավորի թրթռումները
սկսվում էին պայթականի պայթումից անմիջապես հետո: Հայերե-
նում այդ բաղաձայնները հնչվեցին բաց խոչակով և թրթռումներն
սկսեցին պայթումից մի քիչ հետո. այդ միջոցը լցված էր խուլ
շնչով. արդյունքը եղավ փ, p, ք (տևար occlusion-ով՝ փակու-
մով):

Նախալեզվում b, d, g հնչվում էին նույն ձևով, թրթռում-
ներն սկսում էին հենց փակման կամ հպման սկզբից. հայերենում
թրթռումները մի քիչ ուշացան և սկսեցին պայթման հետ միա-
սին. արդյունքը եղավ խուլ (պարզ խուլ):

Նախալեզվում bh, dh, gh հնչվում էին թրթռուն շնչի մաս-
նակցությամբ:

Կարելի է մինչև իսկ որոշել հայերենի այս ձայնաշրջություն
ժամանակը. — Գիտենք, որ հայերենի ամենահին փոխառություն-
ները իրանական լեզուներից են և ընկնում են հատկապես Արշա-
կունիների գահակալությունից հետո ու Սասանյանների տիրապե-
տությունից (224) առաջ, ուրեմն առառավելն մեր թվարկության 2-րդ
դարին: Արդ, այդ փոխառությունների մեջ պահված է ձայնաշրջ-
ությունների օրենքը և հայերեն բ համապատասխանում է պահլավի-
րեն b-ին, հայերեն պ = պահլավերեն p-ին. օրինակ՝ հայերեն
բղեաշխ < պահլավերեն bitaxš, բամբիշն < պահլավերեն bānbīšn,
պատկեր < պահլավերեն patkar: Նշանակում է, թե հնդեվրոպա-
կան ձայնաշրջությունը հայերենի մեջ ավելի հին է քան 2-րդ
դարը:

Հույն աշխարհագիրներից ամենահինը՝ Ստրաբոնը, որ մեռել
է I դարի առաջին քառորդին, իր աշխարհագրության մեջ տալիս է
մի խումբ հայերեն աշխարհագրական անունների տառադարձու-

թյունը. այս բոլորը նույնպես ձայնաշրջված ձևով են. ինչպես՝
Ταρωνίτις < Տարոն, 'Ωτηγή < Ուտի, 'Αξιλοσγηγή < Ակիլոսայ և այլն:
Սրանով ձայնաշրջությունը կհասնի I դարը. բայց իհարկե երևույ-
թի նրանից շատ ավելի հին է:

Իերմանականում առաջին ձայնաշրջությունը գրվում է հա-
վանարար մեր թվարկությունից առաջ, վերջին հազարամյակի երկ-
րորդ կեսում, իսկ երկրորդ ձայնաշրջությունը մեր թվարկությու-
նից հետո VI դարում:

* * *

Հնդեվրոպական նախալեզվի ձայնափոխությունների օրենք-
ները սովորելուց հետո, զուրությամբ կարող ենք ուսումնասի-
րել կոկորդակաճնրի խնդիրը, որ լեզվաբանների մեջ վեճի ու
տարաձայնությունների առարկա է դարձած:

Երբ զանազան լեզուներ համեմատենք իրար հետ, կգտնենք
հետևյալ համապատասխանությունները.

1. Սանսկրիտ c = գենդերեն s = հունարեն χ = լատիներեն c,
գոթերեն h, g, = հին սլավերեն s = լիթվաներեն š = իռլանդերեն
ç = հայերեն ա:

2. Սանսկրիտ k, c = գենդերեն k, č = հունարեն π(τ) = լատի-
ներեն qu = գոթերեն hw, w = հին սլավերեն k, č, c = լիթվաներեն
k = իռլանդերեն c = հայերեն ք:

Կամ, երկար ֆորմուլաներ չգործածելու համար՝

1. Սանսկրիտ ç = լատիներեն c:

2. Սանսկրիտ k(c) = լատիներեն qu:

Առաջինից ենթադրվում է հնդեվրոպական նախալեզվի k',
երկրորդից k^w (միասին հասկանալով նաև ամբողջ g', g'h, k'h
խումբը և g^w, g^wh, k^wh խումբը):

Առաջին և երկրորդ խմբերն առաջ զանազանում էին k' կամ
k, և k² կամ k₂ և այլն ձևերով. հետո՝ k' և k^w. հիմա շատերը
առաջին զեպքում ոչ մի նշան չեն գնում:

Առաջին հավասարությունը կազմող լեզուները կարելի է բա-
ժանել երկու խմբի. ա) նրանք, որ ունեն զանազան կոկորդային
ձայներ (հունարեն χ, լատիներեն c, գոթերեն h, g, իռլանդերեն
c և p) նրանք, որ ունեն զանազան կիսապայթական, շչական ու
սուլոց ձայներ (սանսկրիտ ç, գենդերեն s, հին սլավերեն s, լիթ-
վաներեն š, հայերեն ա և ալբաներեն ?): Առաջին խմբին պատ-

կանոց լեզուները գտնվում են հնդեվրոպական աշխարհի արեւմտյան մասում, իսկ երկրորդ խմբին պատկանող լեզուները՝ արեւելյան մասում*, որոնց հետ է նաև հայերենը: Սրա համար լեզվաբանները երկու խմբերը զանազանում էին արեւելյան և արեւմտյան անուններով: Երբ երևան եկան թոխարերենն ու հաթերենը, տեսան որ սրանք էլ թեև ըստ աշխարհագրական դիրքի արեւելյան, բայց ունեն արեւմտյան լեզուների ձևը, ուստի այլևս անհիշյալ դարձավ այդ անվանակոչությունը:

Երկրորդ համաարություն մեջ արեւելյան լեզուները երևան են հանում պարզ կոկորդական հնչյուններ (k, p, հետո դարձած ճ, c), իսկ արեւմտյան լեզուները ներկայացնում են շրթնային ձայներ (ինչպես լատիներեն qu, գոթերեն hw, w, ոսկ-ուժբերեն ք, հունարեն π, գալլերեն p):

Սրանով էլ բնորոշվում է հնդեվրոպական նախալեզվի k', k² ձայների բնույթը.— k' նախաքմային էր, իսկ k² հեաքմային, միաժամանակ ունենալով շրթնակառուցված արտաբերություն: Տեսնելով է նաև, որ այս բաղաձայնների ձայնափոխություն մեջ արեւմտյան լեզուները (միասին առնելով թոխարերենն ու հաթերենը), ավելի ավանդապահ են և ավելի ճիշտ կերպով պահում են նրանց բնույթը, քան արեւելյան լեզուները:

Զի պատահում էր, որ սանսկրիտ c ձայնի դեմ համապատասխաններ լատիներեն qu. բայց կան օրինակներ, երբ գտնում ենք սանսկրիտ k (c) = լատիներեն c, կամ, ավելի ընդարձակ բռնելով, սանսկրիտ k (c) = հին սլավերեն k, չ = լիտվաներեն k = հայերեն p = լատիներեն c = գալլերեն c = գերմաներեն h = հունարեն χ, ուրիշ խոսքով՝ արեւելյան k^w = արեւմտյան k': Այսպես օրինակ՝

Սանսկրիտ kravī «միտ», հին սլավերեն krūvi «արիւն», լիտվաներեն kraūjas «արիւն» ձևերի դեմ հունարեն κρῆς «միտ», լատիներեն cruor, գալլերեն crau «արիւն», հին սլավերեն hrāc «հում»:

Սանսկրիտ rōcate, ղենդերեն raōah-, լիտվաներեն laūkas, հին սլավերեն lučī ձևերի դեմ հունարեն λουχος, լատիներեն lux, գոթերեն liuhaθ «լուս»

* Լեզվաբաններն իր օրգար տանելով «ճարիր» բառը, շատ անգամ արեւմտյան լեզուները կոչում են centum (լատիներեն) խումբ, իսկ արեւելյան լեզուները՝ satəm (ղենդերեն) խումբ: Հայերենը պատկանում է satəm խմբին:

Լեզվաբաններից շատերը (հատկապես գերմանական լեզվաբանները) հետեցնում են սրանից երրորդ տեսակի հնդեվրոպական նախալեզվի k, g, gh, kh, որոնք լսվում էին մյուս երկուսի միջին տեղը և կոչում են «միջաքմային, առանց շրթնային արտաբերություն»: Այս կարգի ձայները նշանակում են q, qh, ...: Ուրիշներ (հատկապես ֆրանսիական լեզվաբանները) գտնում են, որ այս ենթադրությունը ճիշտ չէ. որովհետև ոչ մի լեզվի մեջ միաժամանակ այդ երեք բաղաձայնների շարքը ավանդված չէ*, որ եղած օրինակները մասնավոր պարագաների արդյունք են և թե արեւելյան խումբը սովորություն ունի որոշ ղեպերում հնդեվրոպական նախալեզվի k', g', gh. k'h ձայները դարձնել k^w և այլն, ինչպես վերջին օրինակում սանսկրիտ rōcate «փալում է» ձևի հետ ունենք միաժամանակ սանսկրիտ ruçant «փալում» և հայերեն լոյս ձևերը (առաջինը k^w, վերջին երկուսը՝ k'): Այսպես էլ արեւմտյան խմբի լեզուները պահել են հարազատ արտասանությունը:

Ե. ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ՇՆՁԵՂ ԹՐԹՈՒՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Երբ քննում ենք հնդեվրոպական պայթականների ձայնափոխությունը հայերենում, տեսնում ենք հետևյալ պատկերը.

Գլուբություն և ավելի պարզության համար առնենք ատանականների շարքը՝ d > w, dh > q, t > p, th > p, այսինքն՝ պարզ թրթոունը դառնում է պարզ խուլ, շնչեղ թրթոունը դառնում է պարզ թրթոուն, պարզ խուլը դառնում է շնչեղ խուլ և շնչեղ խուլը մնում է պարձյալ շնչեղ խուլ:

Վերջին երկու ձայնափոխության (t > p, th > p) սկզբունքն է. ավելացնել շունչը՝ եթե չկա և պահել շունչը՝ եթե կա:

Իմ «Հայոց գիրք» աշխատության մեջ (այս. Վիեննա, 1928), էջ 344, հարց եմ հարուցել այն մասին, թե V դարում հայերեն ք բաղաձայնը պարզ թրթոուն էր, թե՞ շնչեղ թրթոուն: Սակայն հարցս մնացել է առանց պատասխանի, որևէ պատճառարանություն չգտնվելու պատճառով:

* Տե՛ս սակայն Padersen, kz 36, էջ 292 շար., որ ուղում է հաստատել, թե այլաբանները պահում է կոկորդականների երեք ասիճանները:

Բոլոր այն միջոցները, որոնք նպաստում են մեր տառերի հնչական արժեքը որոշելու համար (օտար լեզուներից հայերեն և հայերենից օտար լեզուներով տառադարձություն, Գիտնխիտո Թրակացու քերականության ցուցմունքները, հույն այբուբենի շարքի համեմատությունը հայ այբուբենի շարքի հետ), անզոր են այս մասին որևէ բան ասելու: Վրացի, ասորի, պահլավ և հույն այբուբենները չճանաչելով շնչեղ կամ պարզ թրթռուն բաղաձայնի գանազանությունը, չպիտի կարողանալին որևէ բան ասել մեր բ, գ, դ, ձ, ջ թրթռուն բաղաձայնների բնույթի մասին:

Այժմ, երբ կարողացանք մի կովան ձևը բերել խուլ բաղաձայնների միջոցով (այն է՝ ավելացնել շունչը՝ եթե չկա և պահել շունչը՝ եթե կա), իրավունք չունենք այդ սկզբունքը կիրառել նաև թրթռուն բաղաձայնների վրա և ասել.— Հնդեվրոպական շնչեղ թրթռուն բաղաձայնների շունչը պահված է նաև հայերենում, այսինքն bh > բ, dh > դ և այլն հնչվում էին հայերենում բ' (բհ), դ' (դհ) և այլն:

Այս ենթադրությունը հաստատելու իրր միջոց ծառայում են նաև արդի բարբառները:— Հայություն մեծագույն մասը, հյուսիսից սկսած մինչև կենտրոնը և կենտրոնից մինչև արևմուտք և ծայրագույն արևմուտք, մեր թրթռուն բաղաձայնները հնչում են շնչեղ թրթռուն: Այսպես են Ախալցխա, Ախալքալաք, Լենինական, Երևան, Կարս, Կարին, Ալաշկերտ, Մուշ, Բուլանըխ, Երզնիկ, Խարբերդ, Շապին-Գարահիսար, Սերաստիա, Ակն, Արարկիր, Զեյթուն, Հաճն, Սվեզիա (Մուսա-լեռ), Նիկոմիդիա, Նոր Նախիջևան (մասամբ), Մուշավա և Նոր-Զուղա:— Երևանի համար նախապես սխալ կարծիք էի կազմած. Երևանի հին սերունդը, միասին առնելով շրջակա մեծ գյուղերը (Քանաքեռ, Վաղարշապատ, Աշտարակ, Օշական) հնչում է բ', գ', դ', ձ', ջ', միայն Կոնդի թաղն է, որ այս շնչեղ թրթռունների փոխարեն դնում է պարզ խուլեր (պ, կ, ա, ծ, ճ):

Հայաստանի արևելյան մասը (Ագուլիս, Մեղրի, Ղարաբաղ, Զանգեզուր, Վան, Պարսկահալք և այլն) չգիտեն շնչեղ թրթռուն բաղաձայն և նրանց տեղ դնում են կամ պարզ թրթռուն և կամ պարզ խուլ: Այսպես, Ագուլիսի բարբառը հնչում է լիովին թրթռուն՝ բ, գ, դ, ձ, ջ, ինչպես է նաև Տիգրիսը, և այս հնչումն է, որ տարածվում է նաև Երևանի նոր սերնդի մեջ:

Հաստատելով, որ հայության մեծագույն մասը թրթռունները հնչում է շնչեղ և հայտնապես Երևանը իր շրջակալքով, մենք

ստանում ենք զորեղ երաշխիք, որ V դարի արտասանությունը էլ թրթռունները շնչեղ էին:

Նույնիսկ այն բարբառները, որոնք թրթռունները դարձրել են թավ, այն է բ, գ, դ, ձ, ջ > փ, ք, ք', ց, չ (այսպես են Տիգրանականի, Մալաթիայի, Օրդուի և Ռոստոթոյի բարբառները, ինչպես և Պոլսի գրական հնչումը), կարող են ծառայել այն բանի, թե պարզ թրթռունները նախապես շնչեղ էին: Արդարև պարզ թրթռունը (բ) չէր կարող անմիջապես անցնել թավի (փ). անհրաժեշտ էր միջին շնչեղ թրթռուն (բ') ձևը: Եվ այդ ձևն է, որ ունի Մուշի բարբառը, որից հետո գալիս են Մալաթիայի և Տիգրանականի բարբառները՝ իրենց թավ (փ) արտասանությունը:

Նույնիսկ բարբառների այն մեծ խումբը, որ թրթռունները վերածում է խուլի (բ > պ), կարող է ավելի հեշտություն գտնել իր բացատրությունը՝ մտածելով որ բհ հնչման մեջ խուլ հ շունչը ազդելով բ-ի վրա, դարձրել է այն խուլ:

Մրանով մեր բոլոր 4 տեսակի արտասանությունները բխում են մեկից, որ է շնչեղ թրթռունը: Ուստի Մեսրոպյան շրջանում գրարարչան բ, գ, դ, ձ, ջ հնչվում էին բ' գ' դ' ձ' ջ':

5. ՇՓԱԿԱՆ

Ա. ՍՈՒԼՈՂ Տ.

Այս բաղաձայնի ձայնափոխության օրենքները շատ բարդ են. հիշենք մի քանի կարևորները.

Բառասկզբում s գտնում է սանսկրիտ, հին սլավական, բալթյան, գերմանական, գալլերեն, գաելական և իտալական լեզուների մեջ s, իրանյան, հույն, բրեթոնական լեզուների մեջ h. այրանականի մեջ հայտնի չէ. օրինակ՝

Հնդեվրոպական նախալեզու՝ *sen- «հին» > սանսկրիտ śana-, լիթվաներեն sėnas, գոթերեն sinistra, հին իուլանդերեն sen, գալլերեն seno-, լատիներեն senex, գերմաներեն hanō, հունարեն ἔγρη, բրեթոններեն hen «հին, ծեր», հայերեն հին:

Որոշ դեպքերում, հասկապես արևելյան խմբում, բոլոր լեզուների մեջ էլ մնում է s. ինչպես՝ հնդեվրոպական նախալեզու vest- «զգեհուլ, հագնիլ» > սանսկրիտ vāste, գերմաներեն vaste, հունարեն ψῆστα, լատիներեն vestis, հայերեն զգեստ:

k, r, l, u ձայններից հետո արևելյան խմբի լեզուների մեջ s առիթ է շշտիան ձայններ. այսպես՝ սանսկրիտ և զինգերեն ճ, լիտվաներեն ճ, հին սլավերեն x, օրինակ՝ հնդեվրոպական նախալեզու *trs «թառամել, չորանալ» արմատից սանսկրիտ ʽr̥ṣyati, լիտվաներեն tīr̥šlas, բայց հունարեն τερσσαι, հին բարձր գերմաներեն durst:

Երկու ձայնավորի միջև գտնված s՝ գտնում է իրանականում h, հունարենում ջնջվում է, իտալականում գտնում է z, որ լատիներենի մեջ վերածվում է r-ի. ինչպես՝ հնդեվրոպական նախալեզու *gʷénesas «ցնեղ» (սև) > սանսկրիտ lanasas, հունարեն γένεος, լատիներեն generis և այլն:

Կամիսերենում s առիթ է ճ. օրինակ՝ esmi > éšmi, esti > ešzi, nebbes-es > nebišaš «երկնքի», kʷis > կամիսերեն kuiš և այլն:

s > h ձայնափոխությունը շատ սովորական էրևելք է լեզուների մեջ. օրինակ՝ մոնղոլերեն s գտնում է h՝ բարբաթ և լակուս լեզուների մեջ, իսկ բառակազմում ջնջվում է. օրինակ՝ մոնղոլերեն saxal = թարգերեն saqal «մորուք» > ալարերեն haxul (Поппе, Алар. говор., стр. 22—23): Յակուտերենի մեջ բառակազմում գրեթե չկա h, երբ մի բառ սկսում է s-ով, եթե նա գրանցվի ձայնավորով վերջացող բառից հետո, այդ s-ը գտնում է h. նույնպես մի բառ եթե վերջանում է s-ով, այն վեպքում, երբ նա գտնվի ձայնավորով սկսող բառից առաջ, այդ s-ը վերածվում h-ի. նմանապես բառամիջում, երկու ձայնավորի միջև գտնում ենք միշտ s-ի տեղ h. այսպիսով տրեմն լակուտերենում h անկախ ձայն չէ և ծագում է s-ից (Ястремский, 15):

Հայերենի մեջ, բառակազմում, ձայնավորից առաջ հնդեվրոպական նախալեզվի s գտնում է h, ինչպես նաև իրանականի և հունականի մեջ. այնուհետև այս h ձայնը կարող է ջնջվել և ձայնավորը մնալ լերկ:

Գնում ենք այստեղ այս երկու կարգի բառերի ցուցակը.

s դարձած h (կամ j)

- sed > հեծանել
- selq > հեղգ
- seno > հին
- sipto > հիւթ
- sub > հուպ

- sāw > լագ(ենալ)
- sers > լնուլ

Այստեղ է պատկանում նաև հնդեվրոպական նախալեզվի su «լաւ», որ իբրև մասնիկ պահել են՝ գալլերեն su-, իտալներեն su հին բրբառներեն hu, ինչպես և հայերեն հ- որ կցված ենք գտնում մի քանի հայերեն բառերի սկիզբը. այսպես՝ հզօր, հուժկու, հսկայ, հմուտ, հլու, հպարտ: Այս բոլորի մեջ h (փոխանակ հու-ի) զորացուցիչ մասնիկ է: Շատերն այս h համարում են փոխառյալ իրանական hu ձևից, որ նույնպես զորացուցիչ մասնիկ է և բավական ճոխ գործածություն ունի իրանյան լեզուների մեջ: Բայց որպեսզի h մասնիկն իրանականից փոխառյալ լիներ, պետք էր, որ նախապես հայերենում գտնվեինք մի խումբ իրանյան բառեր՝ նույն մասնիկով կազմված: Ընդհակառակը, վերը հիշատակված բառերից միայն հզօր ձևն է իրանյան փոխառություն, մեկ էլ հուժկու, որ կազմված է -լու հայերեն մասնիկով, ինչպես յաղթիլու. մյուսները դուռ հայկական կազմություն ունեն. ինչպես՝ հլու և հմուտ: Սրանից հետեցնում եմ, որ h (լու) բնիկ հալ ձև է:

s ընկած

- | | |
|---------------------|------------------------|
| sabha > աւագ | sewe > լւր |
| sābhio > աջ | səd > առ-հան |
| sāid > աղ, ազդ, աղծ | šma-r > ամառն |
| sāma > ամ | špmo > ամէն, ամենայն |
| sedlo > հաղ, տեղի | šp-uk' > ամուսին |
| seng > ընկենալ | šng > անկանել |
| senth > ընթանալ | sing'ha > ինձ (զագանը) |
| sephs > կփել | šrbh > արբ-ենալ |
| septm > եւթն | suk'ter > ուսար |
| serg' > դ-երծ | |

Մենք (Esquisse II, 38) կասկածում է, որ այս երկու ձևերից առաջինի մեջ h նչ թե հնդեվրոպական s-ի շարունակությունը լինի, այլ հետին հավելված, ինչպես ունենք նախաձայն ձայնավորի վրա՝ հոււ, հոա, հաւ (թռչուն), հաւ (պապ), հաւ (տատ):— Բոնֆանտեն ևս (Mélanges, Pedersen, 21), մտածում է, թե հնդեվրոպական նախալեզվի s-ի h գտնուլը Հերոդոտից ավելի հին է, քանի որ Ալիս գետի անունը, որ կապվում է աղ բառի հետ, Հերոդոտ 1, 72 գրում է Ἁλύς (Halys) ձևով: Բայց այս վերջին համե-

մատթյունը հիմք չունի, որովհետև նախ հայերեն աղ բառը հ չունի, երկրորդ Հերոզոտը այդ գեաի անունը կարող էր հունարեն ἄλξ բառի հետ կապել, և երրորդ՝ հատուկ անունների ստուգաբանությունը առհասարակ կասկածելի է:

Նկատենք, որ հզորացուցիչ մասնիկն իր գոյությունը հաստատում է, որ հնդեվրոպական նախալեզվի s-ը հայերենի մեջ իրոք դառնում էր հ, ապա թե ոչ պիտի ունենալինք լոկ ու:

Բառամիջում, երկու ձայնավորի միջև և բառավերջում, ձայնավորից հետո s-ը կորչում է, անշուշտ հ-ից անցնելուց հետո: Այսպես են՝

- rn, որի վրա ավելացնելով կ մասնիկը՝ բոկ (բարգավթյամբ բոկոտն) և սրա վրա էլ ավելացնելով ի կ մասնիկը՝ բոկիկ, որից գաժառական բոբիկ, բոպիկ, բոպլիկ և այլն:
- wos > գոլ
 - tres > եր-եր-ալ
 - wes > գ-գե-նուլ (թեև westi > գ-գեստ)
 - snuso > նու
 - pluso > լու
 - mūs > մուկն (կենդանին)
 - mūs > մուկն, մկանունք (նախորդի հետ երկուսն էլ աճած կ մասնիկով).
 - swesōr > քոյր, ուր esō դարձել է նախ ehu, ապա h շնչի շնչումով eu, որ ըստ օրինի դարձել է nj:

Վերջին օրինակը ցույց է տալիս, որ հ ձայնի անկման երևույթը չափազանց հին է հայերենում, ավելի հին քան վերջաձայն ձայնավորների անկման օրենքը, և եթե ոչ ավելի հին, գոնե ժամանակակից է հնդեվրոպական նախալեզվի eu երկրարբառի nj դառնալու շրջանին:

Հնդեվրոպական նախալեզվի s-ի դեմ հայերենն ս գտնում ենք շատ հազվագյուտ դեպքերում. այսպես՝

1. Հնդեվրոպական նախալեզվի ss տալիս է հայերենն ս. ինչպես՝ էական բալի եզակի 2-րդ դեպքում essi > հայերենն ես:
2. Հնդեվրոպական նախալեզվի st խմբի մեջ. օրինակները տես վերը:
3. Հնդեվրոպական նախալեզվի sk²h խմբի մեջ, ուր ավելացնել նաև հնդեվրոպական նախալեզվի sk²and (sqand) > սանգուղ ?:
4. Հնդեվրոպական նախալեզվի sp խմբի մեջ, ինչպես են՝

- spel > սոա-սպել
- spr > սպանալ

Իսկ sph խումբը s-ի անկումով տալիս է փ (օրինակները տես վերը). այսպես նաև speut > փոյր:

5. Հնդեվրոպական նախալեզվի ns խմբի մեջ, ինչպես և ms, անգականը կորչում է և s դառնում կամ մնում է ս. այսպես՝

- menso > ամիս
- omso > ուս
- mēmso > միս
- trins > երիս (երեք թվականի անորոշ հայցականը).

Այս ձայնափոխությունը գտնում ենք նաև ստորին լատիներենի մեջ, ուր կա լատիներեն mensem > ստորին լատիներեն mese:

6. Հնդեվրոպական նախալեզվի ps խմբի մեջ, ուր p կորչում է և s մնում է ս. այսպես են՝

- psudo > սուս
- prepsā > երես

Ընդհակառակը, phs խմբի մեջ ph մնում է և s կորչում. այսպես է՝

- sephs > եփել

Բառակցում sl, sm, sn, sr ձայնախմբերը կորցնում են s-ը և մնում են միայն l, m, n, r. վերջինը գառնալով n, կարող է ստանալ նաև իր հենարանը. այսպես՝

- slibr > լիրբ, լպիրծ, լպիրշ
- smakru > մորուք
- smē > մի-նչ
- smerd > մեղծ
- smio > մի (մեկ)
- smōl > մուլ (ծուխ)
- smugro > մուրկ, մրկել
- smuqh > մախ «ծուխ»
- snērq > ներգեիլ
- snēwrt > նեարդ
- snət > նալ (թաց)
- snōbhri > նուրբ
- snusu > նու
- srung²h > սունդն ?
- srov > սառս, ստոգանել

Բառամիջում նույն sl, sm, sn, sr խմբերը կորցնում են նույնպես s և մնում է l, m, n, r. այսպես՝

- g²hīsla > ջիղ, ջիլ
- esmi > եմ
- wos-mi > գոմ «կամ»
- osmōi > -մ մասնիկ տրա-
- կանի, ինչպես՝ k²osmōi ām (որի՞ն).
- musno > մուն «ճանճ»
- wesno > գին, գնել

k'rusni	>	սրունք	esr	>	արին
usn	>	ուն-ին	vesr	>	գարուն
k'lusr	>	լուս			

(Վերջին երկու ձևերը կարող են բացատրվում. esr դառնում է ըստ օրինի եմար, զեղչմամբ կամ ճ-ի սովորական անկումով եար, ապա՝ ար, որի վրա ավելանում են -իւն, -ուն մասնիկները):

Հնդեվրոպական նախալեզվի swesōr > քոյր ձևը բացատրել ենք վերը, իսկ նրա սեռական-տրականի ձևն է հնդեվրոպական նախալեզվի swesrós, որ տալիս է հայերեն քեռ (սանսկրիտ տր. svastre):

Մանթուրյուն.— Հունարեն, ալբաներեն և լատիներեն լեզուների մեջ էլ հնդեվրոպական նախալեզվի sm տալիս է m:

Հնդեվրոպական նախալեզվի rs խումբը դառնում է հայերենի մեջ բառակցում ա, բառամիջում ո կամ րը, առանց որոշ կանոնի. այսպես՝

rsen	>	սոն «խոյ», սեռական առին	g'hrs	>	ձառ (որից ձառաղեմ)
g²hrs	>	գարշ, գարշիլ	g'hefs	>	ձեռն
ers	>	հալ	ṛfs	>	մաշել (հինը մարշել)
tfs	>	թառիլ	mors	>	մոռանալ
tfs	>	թառամ, թարշամ	sers	>	խառլ
ptērs	>	թիւ, թուշել	orso	>	ոս
g'rsō	>	ձառ	derso	>	տեռ (քող, կաշի)
ers	>	հեռ			

Առաջին ձայնափոխությունը (rs դարձած rš) գտնում ենք նաև արիական և բալթիկ-սլավական լեզուներում:

Հայերենի մեջ rs > րը կամ ո դանազանությունը բացատրելու համար Պեդերսենը (kz 39, 413) ենթադրում է, որ rs դառնում է միշտ ո, իսկ րը առաջանում է rsy ձևից: Մ. Գրամոնը հավանություն է տալիս նրան, բայց միևնույն ժամանակ ենթադրում է, թե գուցե հայերեն և արտասանվում էր ճչական (chuintant) ձևով, ինչպես է այժմ սլավական զանազան լեզուների մեջ և քոչինչիներենում. և այս ի հնչյունն է, որ մերթ գրվել է ո և մերթ րը: (Վերջին կարծիքը անընդունելի էմ համարում. եթե հայերեն ո հնչյուն էր ի, միշտ էլ պիտի գրվեր ո և հնչվեր րը. իսկ եթե

գրվել է մերթ ո և մերթ րը, որեմն երկու տարբեր հնչյուններ են, որոնց համար Մեդերսենը անպատճառ երկու տարբեր տառեր հնարած պիտի լիներ):

Pedersen-ի կարծիքը շատ ուշադրավ է ալն պատճառով, որ ուրիշ զեպքերում էլ y փոխում է նախորդ բաղաձայնի արժեքը՝ ինչպես տեսանք վերը (g² > Կ, g²y > ճ):

Հնդեվրոպական նախալեզվի sk, և sk'h թեև բառակցում և թեև բառավերջում տալիս են հայերեն ց, ահա օրինակները.

sk'ə-kho	>	ցախ	ais-sk'ha	>	ալց
sk'at	>	ցալահլ, ցալթիլ	bhosk'	>	բոց
sk'el	>	ցելուլ, ցեղ	preisk'hu	>	երէց
sk'id	>	ցիտ, ցակ	lcrd-sk'o	>	լորցք
sk'er	>	ցեր, ցրել	prk'-sk'	>	հարցանել
sk'ēwo	>	ցիւ, բալց նաև քիւ	ask'hlo	>	հացն (ծառը)
			bulsk'	>	*պուղց (ապա ղ ընկած)
skeusk'	>	ցոլց, ցոցանել			
skulu	>	ցուլ	ad-sk'	>	ց (նախադիրը)

sq կամ sk² ձայնափոխումը, ինչպես և sk²h տալիս են նաև հայերեն թ, ք, շ. ահա օրինակները.

skodoro	>	խստոր, սխտոր
sqel, qel	>	խեղ, բալց և շեղ, շաղիլ և շիլ.
sk²rp	>	քարը (օձը)
sk²hal	>	սխալ, սխալակիլ:

Բոնֆանտեն (Mélanges Pedersen, 26) ենթադրում է, թե sk²h դառնում է e, i ձայնավորներից առաջ ց, իսկ a-ից առաջ՝ սխ. որոնց համար օրինակ է բերում հենց sk²+1 > ցելուլ և sk² hal > սխալ: Այս բացատրությունը սակայն ճիշտ չէ, որովհետև նույն sk²hal > սխալ բառը այլ տառադարձով տալիս է խեղ, շեղ, շիլ, շաղեղ, որոնցից երևում է, որ ե, ի, ա ձայնավորները արժեք չունեն այստեղ: Ես կարծում եմ, որ դարձյալ գործ ունենք Պեդերսենի հիշած քմայնացման հետ, ալն է՝ sky, skhu, որ սակայն օրինակների սակավություն պատճառով ո՛չ կարելի է ճշտել և ո՛չ էլ հաստատել: Գալով sk²rp > քարը ձևին, այստեղ էլ կարող ենք գործ ունենալ շարժուն s-ի հետ, որի մասին կխոսենք քիչ հետո: Նույնն է նաև st, որ մերթ տալիս է սա, մերթ ք և մերթ ա:

Հնդեվրոպական նախալեզվի sk' ձայնափոխի հակառակ դիրքը, որ է k's, նույնպես տալիս է ց, ահա օրինակները.

- louk's > լույց, լուցանել
- (k')sweks > վեց
- k'sino > կամ k'yino ցին (թռչունը)

Հնդեվրոպական նախալեզվի sw բառակազմում առկա է ք.

- swesör > քոյր
- swopno > քուն
- swidro > քիզան
- svengo > քենի
- sw|dsk > քաղ-ց

Հնդեվրոպական նախալեզվի stv ձայնախմբի մասին անսովորական վերջ:

Մի քանի խոսք էլ բառակազմի s-ի մասին:

Բառակազմի s-ն, իբրև նշան եզակի ուղղականի, ջնջվում է հայերենում. այսպես՝ m|tos > մարդ. բայց երբ s հոգնակիի նշանն է, հայերենում գտնվում է ք, և այս՝ ոչ թե միայն գոլականի հոլովման մեջ, այլև անականների, դերանվան և բայերի մեջ. օրինակ՝

- treyes > երեք
- k²etwores > չորք
- swesores > քորք, «քույրեր»
- mes > մեք

Բայերի հոգնակի 1-ին և 2-րդ գեղերը՝ բերեմ-ք, բերե-ք և այլն:

Այս հատվածի վերջին խոսքը նվիրում ենք Շ-ին:

Հնդեվրոպական նախալեզուն ուներ շ ձայնը: Այդ բաղաձայնը գոյանում էր միայն այն դեպքում, երբ s բաղաձայնը հետանալով ձայնավորից և խուլ բաղաձայնից, ընկնում էր թրթռուն բաղաձայնի մոտ: Նույն ձայնական երևույթը կա նաև հայերենում, որովհետև ունենք մի կողմից սկսանիս և մյուս կողմից սկիզբն: Ըստ այսմ հնդեվրոպական նախալեզվի շ ձայնը պետք էր որ մնար հայերենում զ՝ հնդեվրոպական նախալեզվի շնչեղ թրթռուն բաղաձայններից առաջ (bh, gh, dh), որովհետև նրանք հայերենի մեջ գտնվում են պարզ թրթռուն (p, q, r): Բայց այս կարգի օրինակներ պակասում են հայերենում: Ընդհակառակը, երբ հնդեվրոպական նախալեզվի շ գտնվում է պարզ թրթռուն բաղաձայնից առաջ, որովհետև պարզ թրթռունը վերածվում է հայերենում խուլի, ուստի թրթռուն շ ձայնն էլ նրա հետ վերածվում է ս-ի. այսպես են՝

- nizdo նիսա
- ozdo սաս
- ozd սասին «չոր»
- lazdā լասա

Բ. ՇԱՐԺՈՒՆ S

(s mobile)

Հնդեվրոպական նախալեզվի ձայնական երևույթներից մեկն է շարժուն s-ը. մի խումբ արմատներ, որոնք սկսում են պայթուցիկ բաղաձայնով, կարող են ստանալ նաև նախաձայն s.

Երբ արմատն սկսվում է շնչեղ թրթռուն բաղաձայնով (bh, dh, gh...), շարժուն s-ի մոտ այդ շնչեղ թրթռուն բաղաձայնը գտնվում է շնչեղ խուլ (այսպես sbh > sph, sdh > sth և այլն). օրինակ՝ bhendh «կապել» արմատից շարժուն s-ով ստանում ենք sphend և այլն:

6. ԿՐԿՆԱԿ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐ

(Consonnes geminées)

Արդեն խոսել ենք կրկնակ բաղաձայնների էություն և նրանց արտասանության եղանակի մասին: Կրկնակ բաղաձայնները (պպ, փփ, տտ, նն և այլն) ուրիշ բան չեն, եթե ոչ երկար բաղաձայններ, որոնց մեջ կա մի պայթուցում և մի պայթյուն, իսկ կացքի ժամանակ կամ լուծյուն և կամ ձայնի երկարում:

Կան լեզուներ, որոնք սիրում են բաղաձայնների կրկնությունը, ուրիշներ հակառակ են դրան: Բաղաձայնների կրկնության երևույթը ավելի աչքի է ընկնում բառակազմում. օրինակ՝ Կովկասյան կարբոլին լեզվով ունենք sse=ես, dde=դու, ffe=գուք և այլն: Նմանապես քրդերենի մեջ ունենք ddu=երկու, sse=երեք:

Կրկնակ բաղաձայններ չհանդուրժող լեզուների մեջ հիշատակելի է հին իտալերենը, ուր նույնիսկ եթե բառի մեջ զանազան պատճառներով առաջացած լինեն կրկնակ բաղաձայններ, հնչվում է միայն մեկը. այս պատճառով էլ գրություն մեջ պատահում է թե՛ մեկը և թե՛ մյուսը, ինչպես՝ ardd կամ ard «բարձր», eccnae կամ ecnae «բումասություն» (Pokorny, Altir. gr, § 9 և 97):

Հին պարսկերենի մեջ էլ կրկնակ բաղաձայն գոյություն չու-
նի:

Բաղաձայնների կրկնությունն ընդունված չէ նաև ուսուցիչ-
ների մեջ. միայն օտար բաների մեջ կարելի է հանդիպել բաղաձայն-
ների կրկնության, այն էլ ոմանք գրում են մի բաղաձայնով. այս-
պես՝ грамматика կամ граматика «քերականություն», արդեն սրա
ածանցները՝ ор. грамотный «գրաճանաչ», գրվում են միշտ մի
m-ով: Մինչև անգամ երբ կրկնակ բաղաձայններից առաջինը
պատկանի արմատին, իսկ երկրորդը վերջավորության, հին ուսու-
ցիչներում գրվում էր միայն մեկը. օրինակ՝ русский (այժմ русский),
искусство «արվեստ», еси «դու ես» (փոխանակ еси՝ արմատը
ес+վերջավորությունը су): Բացառիկ ձև է итти «երթալ», որ
առաջացել է итти ձևից՝ համանմանությունով: Այսպես է նաև սեր-
բերենը, որ եթե բառի մեջ երկու բաղաձայն միասին պատահեն,
մեկը ջնջվում է. օրինակ՝ без «առանց» և зуб «առամ» բառերից
ստանում ենք бѣзуб «անառամ» (Meillet, Gramm. serbe, 17):

Այսպես է նաև նոր հունարենը, որ հին հունարենի կրկնակ
բաղաձայնները վերածել է մեկի. օրինակ՝ ἀλλά, βάλω, γάρμα, κάπ-
πα հնչվում են այժմ ala, vâlo, gama, kâpa և այլն:

Ընդհակառակը, կատալան լեզվում կրկնակ b, g այնքան սո-
վորական են, որ մի հատ են գրում և կրկնակ կարգում. օրինակ՝
doble «կրկնակ» (կարգա՝ dobble), regla «կանոն» (կարգա՝ reg-
gla): (Huber, 11, 13):

Բաղաձայնների կրկնությունն առաջ է դալիս երեք պատճա-
ռից. 1. որոշ ձայնարանական պայմաններից, 2. միջանկյալ ձայ-
նավորի սղումից՝ իմաստին սաստկություն տալու համար, 3. նույն
բաղաձայնով վերջացող և նույն բաղաձայնով սկսվող երկու տար-
բեր բառերի բարդությունով:

Տեղը չէ մանրամասն խոսել կրկնության ձայնաբանական
պայմանների մասին. տանք միայն մի քանի օրինակներ զանա-
զան լեզուներից.—լատիներենում երկար և շեշտվալ ձայնավորից
հետո բաղաձայնը կրկնվում է, որին դուզընթացարար ձայնավորը
կարճանում է. օրինակ՝ gnarus>narus, litera>littera, cupa>cup-
pa և այլն:

Հունարենում երբ s կամ z գոնվում էր բաղաձայնից առաջ,
բոլոր բարբառներում էլ կրկնվում էր. ինչպես ἀριστος լավագույն>
ἀρισστος, Λέσβος (կարգա՝ Λεῖβος)>Λέσσβος և այլն: Գերմանակա-
նում խուլ բաղաձայնները r, l ձայններից առաջ կրկնվում են. ինչ-

պես՝ հին բարձր գերմաներեն bittar «դասն», achar, abber, «արտ»,
applul «խնձոր» և այլն: Նման օրինակներ կան սանսկրիտի հա-
մար. ինչպես՝ agni-, putrâ-, sarpâ-, sârvâ>agnni- «կրակ», put-
trâ- «արգի», sarppâ- «օձ», sârvva «բուլբուլ» և այլն (Brugmann,
Abrégé, 231—233):

Միջանկյալ ձայնավորի սղումով առաջացած կրկնության հա-
մար լավագույն օրինակները տալիս է հայերենը, որ ի և ու ձայ-
նավորի անկումով ստանում ենք շատ հաճախ կրկնակ բաղաձայն-
ներ. ինչպես՝ ուղիղ—ուղղակի, ուղղական ուղղափառ. գձուձ—
գձձիմ, գձձակերպ, գձձագոյն. կծիծ—կծծի, կծծուբյուռ և այլն:

Նույն բաղաձայնով վերջացող և նոր բաղաձայնով սկսող
տարբեր բառերի բարդության համար առատ օրինակներ տալիս է
գերմաներենը, որ ունենք betttuch «սավան» (bett «անկողին»,
tuch «կտավ» բառերից), essiggurke «վարանդի թխտ» (essig
«քացախ» և gurke «վարանդ» բառերից), fabellehre «գրիցարանու-
թյուն» (fabel «առակ» և lehre «առամ» բառերից) և նման բաղ-
մաթիվ բառեր: Հայերենը չի կարող նման օրինակներ տալ, որով-
հետև նման զեպքերում ներմտմամ է ա՛հպակապը. ինչպես՝
սրաաարոփ, մեծածախս, լայնանիստ և այլն: Այնուամենայնիվ
ունենք ան- մասնիկով անկպատա, անկերող, նախնիակ անկնջելի
(երեք ն-ով): Արևմտյան ուղիարհարարում և բարբառներում հո-
գակապի բացակայությունով՝ պատտակ, լայննալ, երկննալ, լճննալ,
նիննալ և այլն:

Լեզուների մեջ ամենից այլիլի սովորականն է սաստկական
կրկնությունը: Արաբերենի մեջ ամեն եռատառ բառ երկրորդ արմա-
տականի կրկնությունով գառնում է սաստկական. օրինակ՝ qatala «սպա-
նեց», kasara «կտրեց», իսկ qattala «բոլորովին սպանեց», kassara
«կտրե-կտրե արավ»: Արհեստ կամ զբաղմունք նշանակող բառերը
կազմվում են նույնպես միջին արմատականի կրկնությամբ («միշտ
նույն բանն անող»). ինչպես՝ Jarrâh «վերարտել», baqqâl «նպա-
րավաճառ», qaşşâb «մսադործ», hammâl «բեռնակիր», dabbâḡ
«կաշեգործ», Jallâd «դահիճ», xubbâz «հացագործ», şarrâf «սեղա-
նավոր» և այլն: Լատիներենում պակասություն ցույց տվող բառե-
րը կրկնում են միջին բաղաձայնը. ինչպես՝ flaccus «ականջները
կախ», broccus «բերանը դուրս ցցված», lippus «ճագրոտ», բըլզակն»,
gibber «կուզ», gibbus նույն նշանակությամբ, maccus «խոշոր
մուտ աճեցող» և այլն: Ֆրանսերենում բառին սաստկություն տա-
լու համար հնչում են բաղաձայնի երկարությունով՝ formidable

«սարսափելի» կամ ձախափորի երկարությունը՝ la footeine «ձե»։
Նման կրկնություններ շատ գործածական են գերմանական լեզու-
ներում։

Հայերենի մեջ շատ բարբառներ տալիս են սաստկական կրկ-
նություն զանազան օրինակներ. ինչպես՝

Պարաբաղ մատաղ «սիրելիս» իմաստով արտասանվում է
կրկնակ ա-ով (մինչդեռ մատաղ «գոհ» գոյականը մի ա-ով է, բայց
որում անընդունակ է սաստկության արտահայտելու)։

Հիտակ «աղիլ, ճշմարիտ» բառը Ակն, Պարտիզակ արտասա-
նում են շիտակ՝ սաստկության համար։

Վազել բառը Պարտիզակ գարձել է վազվել՝ «արագ վազել»
շատ վաղել իմաստով։

Ինը, տասը, քսան, քառասուն, հազար թվականները տեղ-
տեղ արտասանվում են իննը, տասը, քստան, քառասուն, հազ-
զար ձևով, բոլորն էլ սաստկության ցույց տալու համար։ (Այս
բառերը ինքնին սաստկական չեն, բայց ըստ պարագային կարող
են դառնալ. օրինակ՝ եթե սահնք, թե մի ձևը շարք քսան սուր-
լի արժե, այտեղ քսան չի կարող սաստկական լինել. բայց երբ
ասենք՝ «քսան անգամ ասացի», անշուշտ քսան սաստկական է։
Նմանապես՝ «այս տունը հազար սուրլի արժե» և հազզար մարդ
եկավ հարցրեց»։ Այսպիսի սաստկական ձևերն են, որոնք հետո
ընդհանրանալով, անցել են լեզվին)։

Ապու՛շ, հիմա՛ր և նման բառեր սաստկության համար գրա-
կան լեզվի մեջ էլ հաճախ արտասանում ենք ապպու՛շ, հիմմա՛ր։

Բայց ամենից ավելի սովորական է ամեն բառը, որ թե՛ ժամե-
նայն, բոլոր՝ և թե՛ «եղիցի» նշանակությամբ սաստկություն ցույց
տալու համար արտասանվում է ամմեն։

Թվում է, թե նույնպիսի սաստկության համար են կրկնված
նաև -զնին, -քնին բառերը (սխալ ճնչումով -զննին, -քննին, ինչ-
պես մանրաքնին, մանրազնին, հեաաքնին), եթե պարզապես քնն-
նել, զննել բառերի նմանությունով և թլուրիմացությամբ առաջա-
ցած սխալ ձևեր չեն։

Հին հայերենի մեջ էլ անշուշտ կար նույն երևույթը, թեև
գրա համար օրինակներ չունենք։ «Գործք առաքելոց»-ում միշտ
գրված է գուցե (փոխանակ գուցե՝ ձեի). օրինակ՝ էջ 197, 556 և
այլն։

Երևանի բարբառում սովորական է ուռոացնել (կրկնակ ա-ով)
«մի փոքր բան մեծացնել» իմաստով։

Հնդեվրոպական նման լեզվի մեջ կրկնակ բառեր են հայերենը չկա-
լին. եթե պատաներ, ապա պատանաչար բաղաձայնով վերջացող մի
արմատ բաղաձայնով սխալ մի մասնիկի հետ միանալու և գրանով
կրկնակ բաղաձայնի առաջանալ (այդ միայն տասնութներ կարող
էր լինել), այդ դեպքում ձևափոխվում էր. Ա գրանում է իրանա-
կան, սլավոնական նույն լեզուներում st, գերմանական և իտալո-կել-
տական լեզուներում ss. օրինակ՝ հնդեվրոպական նախալեզվի sed-
tos>settos, իսկ է իրանական hasta, լատինական sessus։

Բայց հնդեվրոպական մտղավրդական լեզուն, բառին սաստկա-
թյուն տալու համար, ուներ շատ կրկնակ բաղաձայնով բառեր. ինչ-
պես՝ հնդեվրոպական նախալեզու pappā, attā «հայր», և սա մնում
է բոլոր լեզուների մեջ. հմմտ. լատիներեն attā, գոթերեն attā
(ուլավականը չգիտի երբևք կրկնակ բաղաձայն, որով նույն բառը
եղած է otici). լատինը, մանավանդ մտղավրդական լեզուն, ուներ
այսպիսի շատ բառեր՝ կրկնակ բաղաձայնով, որոնցից շատերը
գրականության չեն անցած. օրինակ՝ իտալերեն tutto, ֆրանսերեն
tout, toute ենթադրում են մտղավրդական լատիներեն tuttus, բայց
արգելիս բառ չկա. կա միայն tōtus։

Ընդհանրապես հայերենում կրկնակ բաղաձայն չկա. կրկնակ
բաղաձայնի դեպքերը հետախոյններն են.

1. Բաղաձայնով վերջացող և նույն բաղաձայնով սկսվող բա-
ռերով կազմված բարդություններ. ինչպես՝ մինչև և, վառտոհմակ։

2. Օտար մոխառչալ բառեր։

3. Նայն ձևով անոնցներ. ինչպես՝ աններելի, աննման (այս
դեպքում կարելի է մինչև իսկ գտնել 3 ն, ինչպես՝ անննչելի)։

4. Նման բաղաձայնների հանդիպումներ, որոնք արդյունք
են սղման. ինչպես՝ ուղղական, զճճուրյուն։

5. Սրանցից գուրս կրկնակ բաղաձայններ պատահում են բա-
սակցրում և բասավերջում, ինչպես՝ շշուկ, առուն, կկոց, ժժմակ,
կրր, աարր, լուսանն և այլն։ Այս կարգի բառերի մի մասը կարող
է նույնպես սղմամբ առաջացած լինել, բայց այդ հաստատել ան-
կարելի է. օրինակ՝ աղու, կծու, ազգու և այլն բառերի կազմու-
թյանից գիտենք որ անականակերտ մասնիկն է ու. ուստի կարող
ենք մտածել, թե թթու բառն էլ կազմված լինի ու մասնիկով.
բայց թիք կամ րուք արմատ չէ ավանդված։

Այն բառերը, որոնք վերջանում են ս, դ, ն բաղաձայնով,
եթե ստանան գիմորոշ ս, դ, ն հոգերը, այդ դեպքում կոտայվի
նույնպես կրկնակ բաղաձայն բասավերջում. ինչպես՝ բոյսս (այս

թուխը), բուրդ (այդ բուրդը), տունն, անկնն (այդ տունը, այդ անկը), և վերջացող բառերը հոգնակի հայցականում կունենան երկու և (զբոյսս, գյոյսս «բույսերը, հույսերը»), որոնք եթե և գիմորոշ հոգ էլ ստանան, կունենան եւյակ և. ինչպես՝ զմիսսս «այս մսերը», զբոյսսս «այս բույսերը»:

Ահա հայերեն այն բառերը, որոնք ունեն կրկնակ բաղաձայններ.

արբալ	երբ	կկեմ	պպլուկ
արբաս	երբեակ	կկոց	պբբի
ամատաարա	երբորդ	կկզիլ	սարբի
այբբեն	եօթներբեակ	կկու	սարբունի
անակնկալի	զզուել	կկչեմ	ստղա
անդորբ	զննել	կտտել	սիրիզդա
անկալի	ընդդէմ	շէլլեն	սիլլարա
աննման	թթենի	հիւսսի	սիզզորալ
անննջելի	թթու	հծծեմ	աննդարար
Ատտիկե	թթակիչ	ճճի	աննիկոն
արգելի	ժժակ	ճճուել	վատտոճմիկ
ափփով	ժժան	Մաննալ	վտտիլ
ափփուսովթ	ժժմակ	մինչչե	տարբ
բաթթիկենի	ժժմանք	մզզակ	տզզամ
բարբական	իննեբորդ	մմկիլ	տորբ
բարբանք	իննսուն	մբբախան	տտիւլ
բբիւն	իպպէ	մբբիկ	տտուն
բբջել	լլկեմ	ննջեմ	տտքանք
բբբբի	լուսան	շաղղակեր	ցցել
բզզամ	խանձարբեմ	շշի (ստիւրակս)	փաղղական
բժժանք	խինջել	շշուկ	փաղղոս
բջջանք	խտտիչ	շշունջ	փեննա
գալլոս	խրատտու	Ովսաննալ	փթթել
գզուել	ծարբաքար	որրան	քաննակ
գեգգար	ծծեմ	ութթեկան	քարաննուխ
գձձեմ	ծծումք	ուղղել	քթթել
գդջալ	ծննդական	չորբորդ	քննել
գդնչումն	կապպաթալ	պաղատտիկ	քննիկոն
գզուաղել	կապպար	պանդորբութիւն	քսսեմ
գզում	կասսիոպե	Պիննոս	քքուեմ
	կծծի	Պիննալ	քքուիմ

7. ԲԱՂԱԶԱՅՆՆԵՐԻ ԽՄԲԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ՝

Հայերենը բաղաձայնների խմբեր չի ճանաչում: Արդեն տեսանք, որ հնդեվրոպական նախալեզվի ks, kt, pl, k'l, sk^w և այլ նման ձայնախմբերը հայերենի մեջ վերածվում են մի բաղաձայնի: Նույնիսկ հայերենի մեջ երբ բաղաձայնների խճողումներ են ձևանում, պարզվում են ափելի թանձր բաղաձայնի անկումով. ինչպես՝ բառնամ, դառնամ, որոնք գալիս են *բարանամ, *գարանամ՝ ձևերից (ինչպես ձուլց են տալիս բարձր և կատարյալ բարձի). բնի ձայնախումբը վերածվել է նախ և-ի անկմամբ բն-ի, հետո ոն-ի. նմանապես կատարյալ բարձի, դարձայ գալիս են *բարձցի, *գարձցայ ձևերից, որոնց մեջ նախ և ջնջված է և հետո *բարցի, *գարցայ գարձել են բարձի, գարձայ, ըստ որում բ-ից հետո գալիս է և և ոչ թե ց: Ընդ նախդիրը, միանալով որևէ բառի հետ, պահվում է ամբողջութամբ, երբ ձայնավորի մոտ է ընկնում, բայց կորցնում է իր դ բաղաձայնը, երբ բաղաձայնով սկսվող բառի հետ է միանում. ինչպես՝ ընդունիմ, կատարյալ ընկալայ, բռնել > ընդբռնել > ըմբռնել և այլն:

Հայերենը թույլ է տալիս միայն սուլող (sifflante) և նալ ձայներով սկսվող բաղաձայններ. ինչպես՝ արուեստ, զգեստ, մարդ, շունչ և այլն: Այս պատճառով է, որ հնդեվրոպական նախալեզվի բաղաձայն k, t խմբերը շրջված են հայերենի մեջ, որով բ սիկդբրն է անցած և սրանով էլ բաղաձայնի գույլթյունը ապահովված է. այսպես, նախկին սուբբո—, քիարան ձևերը, որոնք անկարելի էին հայերենի մեջ, գարձան սուբբո—, քիարան, որոնցից էլ սուբբ և քիարն:

Եվ այսպես, հայերենը չունի բաղաձայնախմբեր: Նրա բաղաձայնախմբերը երեան են գալիս ափելի ուշ, անշեշտ ի և ու ձայնավորների անկման հետևանքով. ինչպես՝ գիր—գրել, ջուր—ջրնեղել, աղիչ—աղջիկ և այլն: Եվ այս խմբակցութուններն էլ, ինչպես արդեն տեսանք, գոնե բառակցում, հնչվում էին ը-ով, այսինքն՝ պահում էին կորած ձայնավորի հետքը. ինչպես՝ գրբել և ոչ թե գրել:

Եթե մի լեզու չի հանդուրժում բաղաձայնախմբեր, չի սիրում նաև կրկնակ բաղաձայններ: Այսպես է նաև հայերենը: Հնդեվրոպական նախալեզվի ժողովրդական այն բառերը, որոնք ունեն ին կրկնակ բաղաձայն, հայերենի մեջ վերածվեցին մեկի. օրինակ ակն = հունարեն ὄκλον «աչք» (ըստ Մեյլի, MSL 36, № 106, էջ

107), կամ տարրեր տեսակի ձայնափոխությունը վերածվեցին մեկի. ինչպես՝ հնդկերոսական նախալեզվի *stewwā* (այսինքն *stewwā*) > սառյգ (Meillet, MSL 22, 61), որ ձայնավորներից մեկը հարվել է երկրորդի մեջ, երկրորդը վերածվել գ բաղաձայնի:

Հայերենի կրկնակ բաղաձայնները, ինչպես սառյգը, կամ արդյունք են հետագա փոխառությունից (ինչպես՝ վաթար, սիւղ-դորայ) կամ առաջացել են դարձյալ ի, ու ձայնավորների անկումով. ինչպես՝ ուղիղ — ուղղական, կացից — կացցես < կացիցես, երիբ — երրորդ. և կամ պատահաբար բառավերջին բաղաձայնին նման մի մասնիկի հավելումով. ինչպես՝ բոյսս, միսս, բերդդ, բուքք, ձօնն, մինչև անգամ զմիսսս, զբոյսսս և այլն:

Չունենալով բաղաձայնախմբեր և կրկնակ բաղաձայններ, հայերենը չունի որևէ միակ վանկեր, նրա բոլոր վանկերը բաց էին, ճիշտ այնպես, ինչպես հին սլավերենի մեջ:

8. ԲԱՌԱՎԵՐՁ

Որովհետև մարդկային միտքը ավելի սառչ է քան լեզուն, ուստի արասասանություն ժամանակ միայն այն գիտակցությունը, թե բառը շտապ պիտի վերջանա, թուլացնում է ջղերի լարումը և մարդը վերջավանկը չի արասասանում այն ուշադրությամբ կամ լարվածությամբ, ինչպես առաջին վանկերը: Սրանից ստաջանում է անա այն երևույթը, որ ամեն լեզվի մեջ էլ բառավերջը ենթարկվում է տարրեր ձայնափոխությունից, քան բառամեջը, և նրա մեջ տեղի ունեցած ձայնափոխությունները ավելի մեծ են, քան բառամիջում. վերջավանկը նույնիսկ հաճախ բարդավիճակ կորչում է: Պորտուգալերենի մեջ վերջավանի անշեղ ա հնչվում է ձ-ի նման մի հնչյունով, e վերջում իսկի չի հնչվում. իսկ o դարձել է բառավերջում u (Anstett, 1—2); ինչպես՝ *vérga* «խորտ» > *vergã*, *estive* «էի» > *štiv*, *nérvo* «ջիգ» > *nérvu*.—մանդարինում բառավերջի անշեղ ա-ն գրվում է, բայց չի հնչվում. ինչպես՝ *baga saba*, *կարդան bag sab* (Клюкин, 12):

Ամերիկայի հնդկացիների արասասանություն մեջ բառի վերջին ձայնը (ձայնավոր թե բաղաձայն) ողողակի անլսելի է մնում. լեզուն առնում է այն գիրքը, որ պետք էր նույն ձայնը արասասանելու համար, բայց անցնում է ստանց արասասանելու: Տարրերնակն այն է, որ խոսողը գիտակից է իր այս վիճակին, և երբ ուն-

կընդերը կամ գրողը պնդում է, կամ պահանջում, այն ժամանակ արասասանում է ամբողջությամբ (Boas, Handbook, I, 78):

Չանաղան լեզուների օրինակից հետևում է որևէն, որ բառավերջի թուլ արասասանությունը ընդհանուր մի ձգտում է բոլոր լեզուների, նրանց հետ նաև հնդեվրոպական լեզուների մեջ: Այսպես, հունարենում կարող չէ դանդիլ նչ մի պայթական բառավերջում. նախավոր *γῆμα գառնում է γῆα «կաթ» և սեռական միայն γῆματος. լատիններենում պայթականներ խմբից միայն վերջինն է ընկնում. ինչպես՝ *lact > lac, սեռական lactos:

Մինչև իսկ լիավաներենը, որ չափազանց վաղնջական լեզու է և իր վաղնջականությամբ հիացմունք է պատճառում լեզվաբաններին, բառավերջում կրում է ձայն կորուստներ: Հնդեվրոպական այն բառերը, որ ժառանգությամբ հասել են Ֆրանսերենին, բառավերջում այնքան են ձևափոխված, որ կթև պահպանողական ողողադրությունը չլինի, ոչ մի հետք մնացած չլիտի լինի. օրինակ՝ *esti* դարձել է *ֆրանսերեն* *é* (գրվում է *est*), հնդեվրոպական նախալեզվի *oinām* «զմի» դարձել է *ün* (գրվում է *une*), լատիններեն *corpus* դարձել է *cor* (գրվում է *corps*) և այլն: Սանսկրիտի մեջ բառավերջում միայն մի բաղաձայն կարող է դուրսվել ունենալ. կթև բառը վերջանում է երկու կամ ավելի բաղաձայնով. վերջինները բոլորը կընկնեն, մինչև որ մեկը միայն մնա. օրինակ՝ *tudants* դառնում է *tudant*, այս էլ *tudan*.—*udañēs* դառնում է *udānk*, հետո *udān*.—*ačhāntst* վերածվում է *ačhān* ձևին (Whitney, Ind. Gr., § 150):

Հայերենի մեջ բառավերջի ձայնափոխությունների մասին արդեն խոսել ենք շեշտի մասին խոսելիս.—հնդեվրոպական նախալեզվի բաղաձայնի բառերի վերջավանկի ձայնավորն ընկնում է հայերենում, մինչդեռ մյուս վանկերի ձայնավորները մնում են, բացի անշեղ ի, ու ձայնավորներից, որոնք նույնպես ընկնում են: Հնդեվրոպական նախալեզվի երկրորդականներն էլ բառավերջում ընկնում են, ինչպես պարզ ձայնավորները: Այնպես որ, օրինակ, եզակի ներդրական -oi, հայցական -oia և կոչական -e տալիս են միևնույն արդյունքը, որ է զրո: Փռն ներկայացնում է հավասարապես հնդեվրոպական նախալեզվի ողողական svópnos, հայցական svópnom, ներդրական svópnol և կոչական svópnei: Բացառություն են կազմում միայն -r, -l ձայնորդներով երկրորդականները, որոնք թեև կորցնում են իրենց ձայնավորը, բայց պահում են ձայնորդը. օրինակ՝ հայր <հնդեվրոպական նախալեզու pətēr > հուռ:

πατήρ, լատիներեն pater.— դուսար < հնդեվրոպական նախալեզու dhuk'tēr, հունարեն πατήρ.— ասաղ < հնդեվրոպական նախալեզու stēr, լատիներեն stella < *stelnā:

Միավանկ բառերի ծայրին, ինչպես ձայնավորը, նույնպես և ձայնորդը մնում է. ինչպես՝ մի՛ (արդելական) < հնդեվրոպական նախալեզու mē, քան < հնդեվրոպական նախալեզու kʷan (լատիներեն quam):

Հնդեվրոպական նախալեզվի դ-ը, որ հայերենի մեջ առհասարակ տալիս է ան, բառավերջում պահում է միայն սնգականը, իսկ ձայնավորի փոխարեն լսվում է անշեշտ ք, որ չի գրվում. ինչպես՝

- հւթն < septm, տասն < dek'm
- ոտն < pod, լատիներեն հայցական pedem, հունարեն ποδά.
- մն (վերացականների ծայրին)— հունարեն -μα, լատիներեն -men.

Թեև բառավերջում ձայնավորը ընկնում է, բայց նրանից առաջ գտնված բաղաձայնը մնում է, ինչպես երևաց օրինակներից. հմմա. esmi > եմ, bheremes > բերեմք: Սակայն այստեղ էլ գրաթյունը երկզիմի է, զեպք կա երբ մնում է, զեպք էլ կա երբ ջընջվում է: Այս մասին զեւ սրտ զանոն գտնված չէ: Օրինակ՝ -nt + ձայնավոր խմբի մեջ t > դ մնում է անդ «այնտեղ», դր-անդ (= լատիներեն antae), հիւանդ և այլն բառերի մեջ: Սակայն ընկել է նուև < pont-, երեսուև, քառասուև, քսան (< vīk'nti և այլն), բերեմ < bherenti և այլ ձևերի մեջ:

Երբ բաղաձայնը գտնվում է բառավերջում, առանց հաջորդ բաղաձայնի, տեսնում ենք հետևյալ երեսութները.

Բառավերջին պալթուցիկ բաղաձայնները ընկնում են. ինչպես՝ եբեր < ebheret, եդ < edhēt.

Այսպես նաև բառավերջի s ձայնը. ինչպես՝

ուղղ. քուև < հնիւ. svópnos.

Սակայն այս s ձայնը պահվում է ուից հետո. ինչպես՝

հողնակի հայցական -ns > հայերեն -u (= կրետական vs, գոթերեն -ns). օրինակ՝ զեսս (-ons), բանս (-ins), և այլն:

-nt վերջավորությունից մեջ սնգականը մնում է. ինչպես՝

եկն < հնդեվրոպական նախալեզու égent (= սանսկրիտ egan):

Այս բոլորից տեսնվում է, որ բառավերջի բաղաձայնները առհասարակ ընկնում են հայերենում և շատ քիչ անդամ մի հետք մնում է նրանցից:

Վերջավանկի ձայնավորների անկմամբ հայերենի բոլոր բառերը զարձան բաղաձայնահանգ. այսպես՝ եզակի ողջական, հայցական, ներդոյական քուև՝ հանդում է ն-ով, սեռական, սրական, բացառական քնոյ՝ հանդում է յ բաղաձայնով (հնում հնչված), գործիական քնով՝ հանդում է վ բաղաձայնով, իսկ հողնակի հոլովներն ունեն միշտ ք, ս, ց բաղաձայնները*: Եթե հայերեն որեւէ բառ (բացի միավանկներից) վերջանում է ձայնավորով, այդ նշան է, թե բառավերջի բաղաձայնի անկում է սեղի ունեցել և կամ թե այդ բաղաձայնը միացել է նախորդ ձայնավորի հետ: Երկու երկվուլթներն էլ հայերենի հետագա շրջանի ձևափոխություններից են: Այսպես, բացառականի -ե հանգը, ինչպես և բաբերի եզակի Յ-րդ դեմքի -ե հանգը առաջանում են նախավոր -եյ ձևից. բերե < բերեյ, ինչպես ունենք աղայ: Մրանց մեջ հանգն է յ, որ միացել է նախորդ և ձայնավորի հետ: Նույն յ հանգը ընկնում է ի և ու ձայնավորներից հետո. այսպես՝ բերի, հեղու, հերու ներկայացնում են նախավոր բերիյ, հեղույ, հերույ, ի- ձայնավորից հետո յ-ի անկում տեսնում ենք նաև ավելի հին շրջանից. ինչպես՝ հնդեվրոպական նախալեզու -iyos, iyā մասնիկից՝ հայերեն ի, օրինակ՝ արի (քաջ), ու ձայնավորից հետո վ բաղաձայնն էլ է ընկնում. ինչպես՝ զգեսս, գործիական զգեսսու, փոխանակ զգեսսուվ: Բաղաձայնի անկում կա դարձյալ հրամայականների մեջ. այսպես՝ ց-ի անկում գտնում ենք հրամայականում, ուր սիրեա՛, ասա՛ հասո՛, արա՛, յարո՛ առաջանում են նախավոր սիրեա՛ց, ասա՛ց հասո՛յց, արա՛ք, յարո՛յց ձևերից: Խօսիմ բայի հրամայականը կարող է լինել խօսեա՛ց կամ խօսեա՛: Վերջապես յ բաղաձայնի անկում կա նորա, նմա և նման ձևերի մեջ (հմմա. լիտվաներեն tas-ai «սա»), որ երևան է գայիս հոգի առաջ նորայն, նմայն:

Միավանկ բառերի վերջում բաղաձայնն առհասարակ հաստատուն է. ինչպես լի՛ց, բե՛ք և այլն, բայց այստեղ էլ գտնում ենք կա՛ (կալ բայի հրամայականը), որ գրված է վերջաձայն լից:

* Այսպեսով հայերենի մեջ ամեն տեսակ բաղաձայն կարող է գտնվել բառավերջում, հակառակ ուրիշ հին հնդեվրոպական լեզուների, ուր բառը կարող է վերջանալ միմիայն որոշ բաղաձայններով. այսպես հունարեն γ, ρ, σ, լատիներեն s, r, m, հին պարսկերեն m, š, r, սանսկրիտ k, t, p, t, m, n, h, r:

Հնդեվրոպական լեզուների ճանափոխությունների վրա եթե մի ընդհանուր հայացք ձգենք, կտեսնենք հետևյալ 3 հիմնական փոփոխությունները:

1. Վերջավանդներն առնասարակ փոփոխվում են.—վերջավանդ պայթական բաղաձայնները պահված են միայն արիական և իտալական ճյուղերում. ինչպես՝ սանսկրիտ ábharat, զենդերեն barat «բերէր», հին լատիներեն fēced «արար», մլուսներից համեմատիչ հունարեն ἔφερε «երեր», հին սլավերեն pade «ընկա»: Վերջավանդի ճանափոխի երկարությունն էլ թուլանում է և երանդը փոխվում. այսպես, օրինակ՝ լատիներենը վերջավանդի գրեթե բոլոր ճանափոխները փոխել է. հունարեն $\sigma\zeta$, $\sigma\nu$ վերջավանդների դեմ ունենք լատիներեն us, am: Արիչ ալեյի նոր լեզուներ վերջին ճանափոխի հետ բառի ամբողջ վերջավորությունը ջնջում են. այսպես սանսկրիտ aśvas = հունարեն hippos = լատիներեն equus «ծի» բառի դեմ ունենք հին իտալերեն ech, թախարերեն yuk, հայերեն էշ, որոնք բոլորովին զտրկ են -os հանդից. նմանապես սանսկրիտ aśtā = հունարեն okto = լատիներեն octo «ութ» լինում է հին իտալերեն ocht, քուչերեն okt, հայերեն ութ: Հայերենը վերջավանդի թե՛ բաղաձայնը և թե՛ ճանափոխը ջնջում է (երբեմն միայն ճանափոխը). սանսկրիտ ábharat և հունարեն ἔφερε ձևերի դեմ ունենք հայերեն երեր, և սանսկրիտ ádhāt ձևի դեմ հայերեն եղ, միշտ մի վանկ պահաս: Վերջավանդի այլ թուլացումը կամ կորուստը մեծ նշանակություն ունեցավ ժառանգ լեզուների ձևաբանություն վրա, որովհետև վերջավանդն է հենց, որ պարունակում է թեքման նշանները:

2. Չափորդների ամբողջ կազմը քայքայվեց նախնիսկ պատմական շրջանի սկզբից սկսած. երկարբառները պարզվում և վերածվում են ճանափորի. հնդեվրոպական նախալեզվի ei, oi զատնում են արիականի մեջ ai, իսկ oi, ou զատնում են au, որոնք արդեն սանսկրիտի մեջ լինում են e, o. միայն հնադուրն լատին ընադրերն են, որ ունեն ei, ou: Գարձյալ ճանորդների ճանափոր ձևերը վերացվում են. i, u անցնում են սովորական ճանափորների շարքը, ք և l շարունակում են միայն սանսկրիտում, ք, ք ջնջվում են ամեն տեղ (արիականում և հունարենում ք, ք զատնում են a, գերմանականում ք, l, ք, ք զատնում են երկարբառ ur, ul, un, um, իսկ լատինականում or, ul, en, em և այլն): Միև-

նախն ժամանակ ճանափորների բաղաձայնային ձևերը դառնում են զուտ բաղաձայն, ինչպես՝ w, որ հայերենի մեջ դառնում է գ, պարսկերեն b և այլն: Այս ձևով քայքայվելով ճանորդների ամբողջ սխտեմը, ջնջվում է ճանդարձի սխտեմը, որ հնդեվրոպական նախալեզվի ամենակարևոր երևույթներից մեկն էր: Այսպես, օրինակ, հայերենի մեջ swópnos «քուն» բառից ստանում ենք հայերեն ողջական swópnos > քուն հայցական swopnom > քուն, ներգոյական swopne > ի քուն, նախ և կոչականը:

3. Տոնը, որ հնդեվրոպական նախալեզվում ճայնի պարզ բարձրացումն էր, կամ անհետացավ և կամ վերածվեց ուժղնաթյան: Սրա հետևանքով հնդեվրոպական բառի սիթմը, որ զուտ քանակական էր, այլափոխվեց կամ բոլորովին անհետացավ, ինչպես հունարենում, լատիներենում և հայերենում: Արդի լեզուներից գրեթե միայն լեթթո-լիտվաներենն ու պարսկերենն են, որ պահել են հնդեվրոպականի երկար ու կարճ վանդերի հակադրությունը, այն էլ միայն բառամիջում, իսկ վերջին վանդում համարյա թե՛ չունեն: Այսպիսով, բառի ներքին կազմը փոխվում է. ստեղծվում է բառի մեջ մի ուժեղագույն վանկ, որի ազդեցությունը պետի սկսեն կերպարանափոխվել մնացյալ վանկերը:

Այս երեք ճանապարհներն փոփոխություններն այնքան մեծ էին և հիմնական, որ չէին կարող իրեն հետևանք չբերել իրենց հետ արմատական փոփոխություն ամբողջ ձևաբանություն մեջ, ինչպես պետի տեսնենք իր տեղում:

9. ԶԱՅՆԱՎՈՐԻ ԱՆԿՈՒՄԸ ՎԵՐՁԱՎԱՆԿՈՒՄ

Հնդեվրոպականից հայերենին անցնելու ժամանակ վերջավանդի ճանափորը կրճատվում է: Այդ այնպիսի ընդհանուր մի օրենք է, որ բոլոր օրինակները հիշել երկար և ավելորդ կլինեին. ուստի բավական ենք համարում զննել հետևյալ օրինակները.

plios >	ալիք (կռակ)	olqo >	աղքատ
plios >	ալիք (մաղ)	alatrio >	աղաւթի «աղորիք»
aleuro >	ալեր	sama >	ամ (տարի)
okno >	ակն, okl > աչք (երկակի)	awei >	հաւ (թաշուն)
alōpekú >	աղուէս	bhrevr >	աղբեր (նշ թե աղբկար)

daivēr > տալգր	bhrātēr > եղբայր
g'əlōu > տալ, տալոջ	pātēr > հայր
penk ² e > հինգ (բայց հնգև-տասան)	mātēr > մայր
ātēr > ավրել	māter > մայր-ի (ծառը)
ʃsen > առն (խոյ)	ostwer > ոսկր (բայց սեռական ոսկեր)
stel > աստղ (բայց սեռական աստեղ)	ōlen > ուլն (գիղ)
vārēn > գառն (բայց սեռական գառին)	suk'ter > ուստր (բայց սեռական ուստեր)
dhuk'tēr > դուստր (սեռական դասեր)	k ² etwores > չորք (բայց չորեք-տասան)

Օրինակները ցույց տվին, որ նշ միայն բառավերջի ձայնափոխը (թև կարճ և թև երկար) ենթակա են կորուսման օրենքին:

10. ԲԱՂԱԶԱՅՆՆԵՐԻ ԱՆԿՈՒՄ

Բաղաձայնների անկման օրինակները գնում ենք այստեղ ալբուբենական կարգով: Յուրաքանչյուր օրինակի մոտ, փակագծում դրված է պակասած կամ ընկած բաղաձայնը — նշանով:

ար-իւն < esr (—s)	երի < pri (—p)
արջ < r̄ktho (—k)	երկան < g ² rāwanā (—w)
աւազ < sabha (—s)	եփել < sephs (—s)
բոկ < bhoso (—s)	եօթն, եւթն < septm (—s)
գար-ուն < vesʃ (—s)	զ-զե-նուլ < wes (—s)
զին < wesno (—s)	զ-երծ < serg' (—s)
կղ-անիլ < qwel (—qw)	ընթանալ < senth (—s)
կմ < esmi (—s)	ընկենուլ < seng (—s)
կրա(խալրի) < pra (—p)	ըստ < posti (—p)
կրաստ-ան < p̄rk'to (—p)	թեր, թերի, թերթ < pter (—p)
կրես < prepsā (—2p)	թի < ptio (—p)
կրեսուն < trīk'omtā (—t, t)	թիթեղն(թիթեռն) < ptel (—p)
կր-եր < tres (—t, s)	թիռ, թռչել < pters (—p)
կրելի < prep (—p)	թմբիլ < tumb (—t)
կրեք < tréyes (—t)	թուք, թքանել < styu (—s)
կրէց < preisk'hu (—p)	իք, իր, ինչ < k ² i (—k ²)

ի (նախդիր) < in, en (—n)	ներ «տաղերակին» < enéteri (—t)
ինձ (զոլական) < singha (—s)	ներդիլ < snerq (—s)
ինն < enw̄ (—w)	նիգ < knig ² h (—k)
իւր < sewe (—s)	նոր < nevros, novros (—v)
լալ, լաց < pla (—p)	նու < snuso (—2s)
լայն < plātno (—p)	նուբր < snōbhri (—s)
լար < wəro (—w)	ո, ով, ոք, որ < k ² o (—k ²)
լեւուլ < qlek' (—q)	ողոր «ճյուղ» < ozg'ho (—z)
լի, լնուլ < plē yo (—p)	ողողել < pol (—p)
լիրբ < slibr (—s)	ուսն < pod (—p)
լորց < lord-sk'o (—d)	որդի < portiyo (—p, y)
լու < pluso (—p, s)	որթ (հորթ) < porthu (—p)
լուանալ < plu (—p)	որկոր < g ² or-g ² or (—g ²)
լուս < k'lus-r (—k')	որովայն < qrop-այն (—q)
լսել, լուր, հլու < k'lu-s (—k', s)	որս ? < pork'o (—p)
ծամել ? < g'mbh (—bh)	ութսուն < ok'tok'onta (—t)
կաթն < g ² alakt (—l, k)	ուլ < polo (—p)
կալ, կալուլ < g ² w—əl (—w)	ունկն < ōsn, usn-կն (—s)
կարթ < g ² ṛbti (—b)	ուս < omso (—m)
հարցանել < p̄rk'—sk' (—k)	ուստր < sukter (—s)
հուն < pont (—t)	ուր < k ² u-r (—k ²)
մաշիլ < mʃs (—ʃ)	ըիլ, ջիլ < g ² hisla (—s)
մեղծ < smerd (—s)	սունդն < srung (—s)
մէջ < médyo (—d)	սան < ps̄ (—p)
մի (մեկ) < smio (—s)	սանդ-ուղք ? < sqand (—s)
մինչ < sme-նչ (—s)	սոր < k'ovro (—p)
միս < mēmso (—m)	սուս < pseudo (—p)
մողի < mozg'ho (—z)	ստինք < psten (—p)
մուլ «ծուխ» < smōl (—s)	սրունք < k'rūsni (—s)
մուխ, միսալ < smuqh (—s)	վեց < k'swek's (—k's)
մուկն «մուկ» < mūs (—s)	անդ, հտղ < sedlo (—s)
մուկն, մկան < mūs (—s)	անասնել < derk' (—r)
մուն «ճանճ» < musno (—s)	տիլ, տիլ < stīl (—s)
մորուք < smakru (—s, k)	տոկալ < dovə ko (—w)
լիսուն < penk ² ēk'omt (—enk ² , t)	տող-ուք < stol (—s)
նալ «թաց» < snə—t (—s)	տտիպ < stib (—s)
արդ < snēwrt (—s, w)	

արամ «պինդ» < dru-ra-mo	փուլթ	< speut (-s)
(-ru)	քաղց	< sw d-sk' (-d)
փանա-քի < sphn (-s)	քարք	< skɾp (-s)
փարեւ < sphr (-s)	քերեւ	< sqer (-s)
փեղկ < sphelg (-s)	քորեւ	< sqor (-s)
փեռ-եկ-եւ < spher (-s)	քիւ	< skēwo (-s)
փերթ < spher (-s)	քոլր	< swésōr (-s)
փին < spino (-s)	քսան	< wīk'ḡti (-t)
փինաս «աղքատ» < sphēn (-s)		

11. ՀԱՎԵԼՈՒՄ

(Մասնիկ կամ անական)

Այստեղ զնում եմ այբուբենական ցուցակը այն բոլոր բառերի, որոնց մեջ հնդեվրոպականից հայերենին անցնելու ժամանակ կատարված է մի որևէ հավելում (մասնիկ, ածական կամ կրկնականի վերջին տարր): Այս բոլորը բաժանված են բուն արմատից գծիկով):

ար-իւն < esr	գաղ-ձն < v
արմ-ուկն < arm	գաղ-ջ < w
արտօսր, արտասր < drak'ru	դար-ոււն < visɾ
աւա-ղ < sabha	գեղ-ձ «բաղնի» < vel
ա-քաղ-աղ < k ²	գեղ-ձ «փափաղ» < vel
բեր-ան < bher	դեր-ծ-ոււլ < wer-s
բլ-ուր < bhōl	դիւ, գլ-որ < wēl
բոլ-որ < bhol	դոլ-դաղ-ջ < wol, v
բո-կ (բորիկ) < bhosó	դալ-ար < dh
բոկ-եղ < bhōg ² , bhog ²	դալ-ուկն < dh
բող, բող-բոջ, բող-կ < bhol	դաղ-ձն < eh
բոլ-ս < bhewə, bhū	դամբ-ան < dhṃbh
բորբ-ոք < bho-bhr-o	դարբ-ին < dhabhro
բոր-ենի < bhero, bhor	դեղ, դեղ-բ < dhel
բո-ց < bho-sk	դեղ-ին < dhel
բու-ք < bhu	դեղ-ձ < dhel
բր-էտ (բոս) < bhor	դեղ-ձ-ան < dhel
գալ-ար < v	դի-ակն < dhuī

եղ-բ < eg'h	լպիր-շ < slibr
ե-դբայր < bhrātēr	խալծ-աղ < khaid
եղե-ին < elew	խար-շեւ < qɾ
ե-դուկ < lug ²	խոր-ով-եւ < qor
ե-դանդ-ն < noghlo	խնծ-իղ < khendh
երա (խալրիք) < pra	ծաղ-բ < g'ɫ
ե-բասա-անք < Pɾk'to	ծն-օս < g'en
ե-բբուծ < bhrug'	ծոււ-բ < g'onwi
ե-բգիծ-անեւ < wrēg'	կած-ան < g ² āg'
ե-բեկոլ < rég ² os	կաղ-աղ < g ² ɫ
ե-բես < prepsā	կաղ-աւ-եւ < g ² ɫ
ե-բեսուն < trīk'omtə	կատ-ակ < g ² ad
եր-եր-ալ < tres	կարծ-բ < g ² ɾg'
ե-բե-իւ < prep	կո-կոր-դ < g ² or
ե-բեք < tréyes	կող-բ < g ² ol
ե-բէց < preisk'hu	հ-ան «տատ» < an
ե-բի < pri	հ-աս-անեւ < ḡk'
եր-իւր-եւ < er	հաստ, հաստ-ատ < pasta
երկ-ալն < dwā	հ-ացի < ask'hio
երկ-ար < dwā	հ-աւ (թռչուն) < awel
երկան < g ² rāwanā	հ-աւ (պապ) < awo
երկ-նչեւ < dwi	հ-եռ < ers
երկ-իւղ < dwi	հեր-իւն < per
երկու < dwō	հոլ-անի < pol
դ-երծ < serg'	հոլ-ով-եւ < q ² ol
ըն-կղ-մեւ < g ² ul	հ-ողմ < onəmo
թան-չք < tā, tāt	հ-ովիւ < owipā
թան-ձր < tɾg'hú	հ-օտ < od
թան-ամ < tars, tɾs	հ-ուժ < ʔmo
թարշ-ամ < tars, tɾs	հ-ուպ < ub
թա-բախ ? < tər	հօտ = հաւ-ւտ < pā
թեր-թ < pter	հօրան = հաւր-ան < pā-tro
թում-բ < tum	ձու-կն < g'hu
թուք < styu	ձօն = ձոււն < g'hn (հմմտ. pōfi)
թր-իք < tēr	
լուկ < lēl	մա-նչ < mas
լուս-ան < louk'	ման-բ < mənū
լպիր-ծ < slibr	մատղ-աշ < mɫd

մեղ-ի	< mel	պղ-պ-ջ-ակ	< bui
մեղ-մ	< mel	պղ-ով-ել	< lob
մեղ-բ	< mel	պ-պղ-ուկ «ծիլ»	< bul
մի-նչ	< smē	պտ-ակ	< bud
մլ-ուկ	< mōl	ջա-նք	< yə
մոլ-ի, մոլ-որ, մոլ-ար	< mōl	սանդ-ուղք	< sqand
մու-կն (կրկու նշ.)	< mūs	սեր-մն	< k'er
մու-ս (լուս)	< mu (հմմտ. մունջ)	սլ-աք	< k'ul
մուր-ն (մաթ)	< mutro	ստեղ-ծ-ել	< stel
մուր, մր-ար, մր-րիկ	< mutro	ստեր-ջ	< ster
լատ-ակ	< pəd	տամ-ուկ	< dā-mo
լար-ել	< ar	տա-տա-կ	< dək'
լար-մար	< arn (=ar—m)	տարգա-լ	< dɣwa
լու-ով	< pol	տիղ-մ (տիլ)	< stēl
լոզ = լուզ	< au-dh	տո-կ-ալ	< dowə-ko
ներգ-ե-իլ	< snərq	տրամ «պինդ»	< dru-ra-mo
նք-ովք	< nik ²	տրտ-ունջ	< dōrd
ոզո-ր	< ozg'ho	փան-աքի	< sphg
ոզորկ	< lozg ²	փես-եկ-ել	< spher
ոզոք-ել	< lok ²	փեր-թ	< spher
ոս-նալ	< rū	փին-ատ «աղքատ»	< (s) phēn
ոստ-ին «չար»	< ozd	փոր-ծ	< phor
ործ-կալ	< rug'	փու-չ, փ-չել	< phu
որոճ-ալ	< rod	փու-ք	< phu
որով-ալն	< qrop	փոք-ր	< phuku
ուղ-ուկ	< ōl	քակ-որ	< kakka
ուն-ալն	< ous, un	քամ-ակ	< kam
ուն-կն	< ōsn, ősñ	քեր-թել, քեր-ծել	< (s) qer
ս-ր	< k ² u	քու-ք «ողք»	< kū
սալ-ար	< b	օգ-նել, օգ-ուտ	< auw

Հայերենի չմեկնված կամ լավ չմեկնված բառերի շարքում իբրև հավելման օրինակ ունենք հետևյալ գարմանալի բառերը. զիւտ, որի բայական ձևն է գտանել, զուտ արմատը պիտի լինի զիւտ, և հավելում է:

մօտ = մաւտ, նույն է մաաչիլ, մատուցանել արմատի հետ. ուտի և հավելում է: նույն հավելումը գտնում ենք նաև արածել — արօտ = արաւտ բառի մեջ:

մոյծ, որից բայական ձևով ունենք մուծանել (մացնել), պատճառական ձևն է մաանել բալի, որի պարզ արմատն է մուտ, ուտի ոչ հավելում է:

Ճիշտ նույնը գտնում ենք նաև բուծանել «սնուցանել» բալի մեջ, որի արմատն է բոյծ, իսկ պարզ արմատը բուտ, որից բանլ սնուցանել:

12. Տեղ. Ա. Փոստի Թ. Յոնի

Հնդեվրոպականից հայերենին սնցնելու ժամանակ անդամաբանական զեպքերը ամենամեծ մասամբ < > բ բաղաձայնի պատճառով են: Մյուս համար ունենք հետևյալ օրինակները.

աղբեր < bhrevɟ, որ դարձել է նախ բրևար, բրեր, կրկին բ-երից առաջինը տարանմանաթլամբ բլեր, շրջված լրեր > ղբեր և ա հավելվածով աղբեր:

արաասուք < drak'ru > rdak'ru, կրկնորդ բ-ի անկումով rdak'u > արաասուք (ա հավելվածով):

բորբոք (արմատը բորբ) < bho-bhro: դարբին < dhabhro > դարբ > դարբ, ին մասնիկի հավելումով: եղբայր < bhrātēr, որ ապիս է նախ բրայր, շրջմամբ բրայր:

կրկու բ-երի տարանմանաթլամբ լրայր > ղրայր և և կամ ա ձայնավորի հավելումով եղբայր, աղբայր:

կրկու < bhruḡ, որ ապիս է նախ բրուծ, շրջմամբ բրուծ, և-ի հավելումով կրկուծ:

կրկու < wrēg', որ ապիս է նախ գրիծ, շրջմամբ կրկուծ, և-ի հավելումով կրկիծ:

կրկան < g²rāwanā, միջին փոստի կրճատումով g²rānā, շրջմամբ rg²ānā > կրկան, և և-ի հավելումով կրկան:

կրկու < dwā, որի բացատրությունը սույ շատ դժվար է. բայց կրկու ձագում է ու < ō կրկակի մասնիկով և և ձայնավորի հավելումով րկ արմատից, որ գտնում ենք կր-կին բառի մեջ:

կիրք < slibr, որ պիտի սար լիպր, շրջմամբ լիրպ, սպա դարձած բ-ի պատճառով լիրք. նույնը պահում են լպիրծ, լպիրջ անձանքը:

կարկուտ < g²ag²rodo, որ սվել է նախ կակրուտ, շրջմամբ կարկուտ:

կորկոս < g²og²rod, որ տվել է նախ կորկոս, ապա շրջմամբ կորկոս:

մերկ < neg²-ro, հայերենի մեջ դարձած է նախ մեկր, ապա շրջմամբ մերկ:

մերձ < meg²hri, որ տվել է նախ մեձր, ապա շրջմամբ մերձ: մուրկ, մրկել < smug²-ro, որ տվել է նախ մուկը, ապա շրջմամբ մուրկ:

նուրբ < snōbhri, որ տվել է նախ նուրբ, ապա շրջմամբ նուրբ:

սուրբ < k'ubhro, որ տալիս է նախ սուրբ, ապա շրջմամբ սուրբ:

տարամ, որ ծագում է մյժ արմատից, կրկնությամբ դասնում է da-մյժ > տատարմ և շրջմամբ տարամ:

արաում, արմատն է drom, որ տալիս է արում (օ սնդակահի մոտ ու), կրկնությամբ աուարում, ու-ի սզմամբ և ր-ի շրջումով արաում:

քիրան < swidro, որ տալիս է քիար, ապա շրջմամբ քիրա:

Հայերենում սովորական է այն երևույթը, որ արմատի միջին սնդակահը դուրս գալով, կազմում է երկրորդ ախարի բախր, ինչպես՝

լքանել, արմատը լիք < liq, liq:

բեկանել, արմատը բեկ < bheg, bheng:

հասանել, արմատը հաս < hk անս.

Լ կամ ղ ձայնի անդափոխությունն օրինակներ են՝

եզունգն < noghlo.

մաաղ, մաղաղ < m|d.

պլոկել, պլոկել < lob, որ է լոպկել:

Անսովոր է sk > սխ, իս՝ skodoro > խստոր բառի մեջ, որ ապա նորից պիտի դառնար սխտոր՝ սոխ բառի նմանությունը:

13. ՀԱՅԵՐԵՆ ՁԱՅՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ
ՀՆԳԵՎՐՈՊԱԿԱՆՈՒՄ

Թեև ընդհանուր ցուցակների մեջ նշանակված են լուրաքանչյուր հնդեվրոպական հնչյունն զեմ հայերեն համապատասխանը, բայց ընթերցողների դյուրութիւն համար դնում ենք նույնը նաև ալթայեզ, հայերենի պլուրենական կարգով:

Ձայնավորների համապատասխանները

- ա < a, ā, ə, o
- ե < e
- է < ei, oi (շեշտյալ)
- ը
- ի < i, ē, e (սնդակահի մոտ), ē, ui (անշեշտ)
- ու < o
- ու < u, u, ō (սնդակահի մոտ), op, ō, ōp, ou.

Երկրարբանների համապատասխանները

- այ < ai, oi (բառակիրում)
- աւ (օ) < au, eu
- ոյ < eu, ou
- ևւ, իւ < eu
- ով (ոզ) < ou

Բաղաձայնների համապատասխանները

- | | |
|---|---|
| բ < bh | շ < k'w, rz < rs |
| գ < g ² h, բզ < rk ² , նզ < nk ² ,
զզ < lk ² | չ < k ² y, ty, tw |
| դ < dh, բզ < rt, նզ < nt, nd | պ < b |
| զ < g ² h (ձայնավորից հետո), zgh | ը < y, dhy, g ² h (ե-ից, ի-ից,
առաջ) |
| թ < t, pt, th | ս < r, sr, rs |
| ժ < g ² h (երկու ձայնավորի միջև) | ս < k', ss, ps, ns, ms, սպ < sp,
սա < st, zd, սկ < stw, k'w,
սխ < sk ² h |
| լ < l, ալ < l, լ < k'l, sl | վ |
| խ < q (k ² h), (kh = k ² h, q ² h, qh) | ա < d, st |
| ծ < g', d | բ < r, աբ < r, ար < tr, արբ < rp,
բկ < dw |
| կ < g ² , բկ < dw | ց < sk', sk'h, k's |
| հ < p (բառակիրում), s | ւ < t (r-ի մոտ), w, v, p, bh
(երկու ձայնավորի միջև) |
| ձ < g'h, (dh) | փ < ph, sph, phs |
| ղ < l, աղ < l | ք < k ² , sw |
| ճ < g ² y | |
| մ < m, sm, մմ < m | |
| ն < sy, p (բառակիրում), t
(երկու ձայնավորի միջև), s | |
| ն < n, m, ան < v, ն < sn | |

14. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ
ԸՆԴԵՎՐՈՊԱԿԱՆԻՑ ՀԱՅՅԵՐԵՆ ՁԱՅՆԱՓՈՆՈՒԹՅԱՆ

1. Ձայնավորների տեղադրությունը.—Բոլոր լեզուների ընթացքում տեսնված երևույթ է, որ ձայնավորների տեղադրության տարբերությունը վերանում է և երկար ձայնավորները կարճանում են: Այսպես, հին հունարենը և հին պարսկերենը երկար ու կարճ ձայնավորներ ունեին. այսօր այդպիսի զանազանություն չկա: Հունարենն ա և ա, օ և օ, օ և օ միևնույն բաներն են այսօր. օրինակ՝ ὄπις հրնչվում է պարզապես ὄπος, իսկ η դառնալով ι, վերացված է e, ē ձայնավորների տարբերությունը: Լատիներենը գիտեր նույնպես երկար ու կարճ ձայնավորներ. ավելի ուշ այդ տարբերությունը փրացավ, և e և ī, o և ū սկսեցին շփոթվել իրար հետ. այն ժամանակ ստեղծվեց ուժգնություն շեշտը. այս բոլորը հարմիր չէ, թե երբ եղավ, բայց մեր թվարկության չորրորդ դարում արդեն վերջացել էր: Այսօր ուսմանական լեզուների մեջ եթե կան կամ պատահում են երկար ձայնավորներ, դրանք չունեն բնավ այն արժեքը, ինչ որ էր լատինականում:

Ձայնավորների տեղադրության կրճատումը, այսինքն երկար ձայնավորների վերացումը, տեղի է ունենում այսօր հանդարեանի մեջ: Հունգարերենը ճանաչում է 7 ձայնավոր՝ a, e, i, o, ö, u, ü կարճ, որոնց համապատասխան երկարներն են á, é, í, ó, ö, ú, ü (այսպես գրված հունգարերենում, շեշտը փոխանակ երկար նշանի): Արգ, այսօր թեև երկար ձայնավորները պես բոլորովին չեն ջնջված, բայց հետզհետե վերացվում են, ինչպես որ մտրդ պիտի տեսնե համեմատելով այսօրվա տպագրված գործերը միմիայն 50 տարի առաջ տպվածների հետ! (Sauvageot, BSL 34, № 102, էջ 121):

Լեզուների կյանքում սովորական այս երևույթը տեղի ունեցավ, անա. հայերենի մեջ շատ վաղ ժամանակներում, և երկար ու կարճ ձայնավորների տարբերությունը վերացավ: Եվ V դարում, երբ առաջին անգամ ավանդված է հայերենը, իզուր է սրտնել որևէ հետք այս երևույթի մասին:

2. Թրքաուենների խուլ գառնալը.—Հնդեվրոպական պայթականների ձայնափոխություն մեջ ամենից զարմանալին ու կարեորը այս է, որ և տեղի է տվել զանազան հակընդդեմ կարծիքների:

Վերը տրված տախտակից երևում է, որ մինչդեռ ժառանգ լեզուներից լոթը պարզ թրթուուն բազաձայններն անփոփոխ պա-

հում են, երկու լեզու՝ գերմաներենն ու հայերենը վերածում են պարզ խուլի:

Լեզվաբաններից ոմանք (նույնիսկ գերմանացի լեզվաբաններից) այս զարմանալի երևույթը գերմաներենում բացատրում են ցեղական տարբերությամբ:—Իբրև թե գերմանացիք հարազատ հնդեվրոպացի չեն, այլ օտարացի մի ժողովուրդ, որ նվաճվել է հնդեվրոպացիներից և իր բնիկ լեզուն փոխելով, ստացել է հնդեվրոպացի տիրոջների լեզուն:

Այս բացատրությունը բացարձակապես հակառակ է այն ենթադրության, որ անում են արիշ (հատկապես գերմանացի) լեզվաբաններ, որ իբրև թե հնդեվրոպացիների նախահայրենիքը Գերմանիան է, ուրեմն և գերմանացիք հենց հնդեվրոպացիքն են:

Այս վերջին ենթադրությունն իհարկե բոլորովին ձրի է և միայն գերմանական ազգաբնամուրթյան մտածման կերպ:

Առաջին կարծիքը հերքելու համար էլ գերմանացի լեզվաբանները պինդ կառչում են հայերենին և պատասպարված հայ լեզվի թեքերի առկա, ասում են. եթե գերմաներենում թրթուուն խուլ ձայնափոխությունը արդյունք է անհարազատ ծագման, հապա ինչո՞ւ հայերենն էլ ունի նույն երևույթը: Միթե հայերն էլ անհարազատ հնդեվրոպացի են:

Բանն այն է, որ հայերենի համար էլ կա նույն կարծիքը: Լեզվաբաններից ոմանք, հենց այս և արիշ նման ձայնաբանական ու քերականական երևույթների վրա հիմնվելով, պնդում են, թե հայերը հնդեվրոպացի չեն, այլ մի օտար ժողովուրդ (կովկասյան կամ խաղջյան, կամ թերևս ասիական կամ ալլն), որ նվաճելով սակավաթիվ հնդեվրոպացի տիրոջներից, փոխեց իր բնիկ լեզուն և ստացավ նորեկ հնդեվրոպացիների լեզուն, որ ազավաղվեց ու ալլափոխվեց իր բնիկ լեզվի ձայնական դրություն և քերականություն համաձայն:

Հալոց լեզվի պատմության մեջ (հատ. 1, էջ 186—187) խոսել եմ արդեն այս հարցի մասին. բնթերցողը կարող է գիմել այնտեղ: Այստեղ ուզում եմ խոսել հատկապես հայերենի թրթուուն խուլ ձայնափոխության մասին:

Եթե լեզվաբանները հայերենի թրթուուն խուլ ձայնափոխությունն ի նկատի ունենալով հայերենի համարում են նշ-հարազատ, հապա ինչո՞ւ նկատի չեն առնում հնդեվրոպական շնչեղ և խուլ պայթականների ձայնափոխությունը: Միայն հնդերենն է, որ այս ձայներն անփոփոխ է պահել, մյուսները բոլորն էլ փոխել են:

Ձևնդերենը, լիտվաներենը, սլավերենը, իտալերենը, ինչպես և գերմաներենն ու հայերենը bh, dh ձայները դարձրել են b, d (բ, դ), մինչպես հունարենը դարձրել է դրանք ph, th (ֆ, թ)։ Ի՞նչ տարբերություն կա b, d > պ, ա (բ, տ) դարձնելու մեջ (ինչպես անում են հայերն ու գերմանացիք) և bh, dh > ph, th (ֆ, թ) դարձնելու մեջ (ինչպես անում են հույները)։ Երկուսն էլ միևնույն բաներն են, երկուսն էլ թրթռուներ դարձնում են խուլ և կթե հայերն ու գերմանացիք սրա համար հարազատ չեն համարվում, հույներն էլ հարազատ չպիտի համարվեն։ Գալով շնչեղ խուլ պալթականներին, ալյասեղ էլ հայերենը շատ հավատարիմ է, գրեթե այնքան, ինչքան հնդկերենը, ավելի քան հունարենը և շատ ավելի քան սլավոնները։

Կա նաև ավելի դժվար բացատրելի մի հանգամանք։ Գիտենք, որ արդի հայերեն բարբառները պալթականների հնչման կողմից շատ զանազան են։ Մինչդեռ արևելյան կոչված բարբառները հավատարմությունը պահում են մեսրոպյան հայերենի թրթռուներն ու խուլերը (բ, պ, գ, կ, դ, ա և այլն), արևմտյան կոչված բարբառները խուլերը վերածում են թրթռուների (պ > բ և այլն), իսկ թրթռուները՝ շնչեղ թրթռուների կամ նույնիսկ թավի (բ > բ', փ)։ Այս ձայնափոխությունը հայտնապես գոյություն ունի գեա XI դարում և թերևս ավելի հին էլ էր։

Հատ ալյա, օրինակ, հնդեվրոպական dōm բառը, որ հին հայերենում և արդի արևելյան հայ բարբառներում հնչվում է tun, արևմտյան հայ բարբառներում հնչվում է dun։ Պեսք է անել երկու ենթադրություն. 1. կամ այն, որ արևմտահայերը շարունակում են հնդեվրոպական հարազատ հնչումը, ուստի նրանք են միայն հարազատ հայ, իսկ Մեսրոպյան շրջանի հայերը և արդի արևելահայերը հայ չեն, 2. կամ թե արևմտահայերը չեն պահել հայերենի հին հնչումը, շուտ են ավել նոր ձայնափոխությունը։

Առաջին ենթադրությունն ուղիղ չէ. արևմտահայերը չեն պահել հնդեվրոպական հարազատ հնչումը, ինչպես և չեն պահել Մեսրոպյան շրջանի հարազատ հնչումը, որովհետև, եթե գրանք պահած լինեին, պահած պիտի լինեին նաև մեսրոպյան շրջանում փոխանված պահլավերեն, ասորերեն և հունարեն բառերի էլ հնչումը։ Մինչդեռ տեսնում ենք, որ այդպես չէ։ Օրինակ՝ պահլավերեն ka-pōt, ասորերեն [alyā և հունարեն Κορυαί բառերը, որոնք հին հայոց և արդի արևելահայերի մեջ հնչվում են կապոյա, աղայ, կիրակի (կիրակի) (=կապույա, աղա, կիրակի), արդի արևմտահայ

երի մեջ հնչվում են գաբուդ, գըղա, գիրագի (gabud, dāga, giragi)։ Մրանից հետևում է, թե արևմտահայերը փոխել են V դարի հնչումը, խուլերը դարձրել են թրթռու, թրթռուները դարձրել են խուլ կամ թավ և այլն։

Մրանից հետևում է նաև այն, որ արևմտահայերը, որոնք մինչև XII դարը հարազատ հայ էին, XII դարից հետո դարձան անհարազատ հայ !!! Արտուրդ!

Այս անհետեթե կերակրություն հասանք քննելով հարցը վերև ակնարկված լեզվաբանների դատողությունները։ Բայց ի՞նչ պիտի ասենք, երբ նկատենք նաև, թե միևնույն բարբառում միաժամանակ երկու հնչումն էլ կա։ Օրինակ՝ Վնոր-նախիջևնի հնչումը տատանվում է է թրթռուների և խուլի միջև, ճիշտ ինչպես Պոլսում։ Չախական նրբությունը վարժ ականջը շարունակ կարող է նկատել, թե ինչպես՝ օրինակ, բան բառը մեկ անգամ բան, հաջորդ անգամ պան հնչումն է ստանում միևնույն անձի խոսակցության մեջ» (Քննություն Նոր-նախիջևնի բարբառի, էջ 29)։

Այսպես նաև Պոլսի գրագիտը տանը հնչում է գուռը բա՛ց, իսկ դպրոցում՝ բուռը փա՛ց։

Պետք է որեմն ենթադրել, թե այս հայերը մի բույն հարազատ են, հաջորդ բույնին անհարազատ։ Ո՛չ։ Պեսք է փոխել արեմըն դատողության եղանակը։ Բաղաձայնների աստիճանի փոփոխությունը անպատճառ նշան չէ ցեղի հարազատության կամ անհարազատության։ Դա մի երևույթ է, որ մասնում է ձայնաբանության սովորական երևույթների շարքը։

Սրա համար մի փոքրիկ ակնարկ էլ պցենք արիշ լեզուների վրա։

Թրթռուների խուլ դառնալը մի շատ տարածված երևույթ է լեզուների կլանքի մեջ. ուգրո-ֆիննական լեզուները թրթռուն պալթական բաղաձայն չունեն. այսպես են նաև չինարենը, այնու լեզուն և այլն։ Կան լեզուներ էլ, որոնք թեև ունեն թրթռուն բաղաձայններ, բայց նրանց թրթռումն այնքան տկար է, որ հավասար է խուլի, այսպես է սամերերենի մեջ և գերմաներենում։ Վերջապես կան լեզուներ էլ, որոնց մեջ թրթռուն պալթականների թըրթռումները այնքան ուշ են սկսում, որ այլևս խուլ համարվելու համար ոչինչ չի մնում։ Ամերիկյան կարբիեր լեզվի մեջ b-p, d-t, g-k միևնույն բաներն են և չեն զանազանվում իրարից (Morice, Carr. lang., I, 5)։ Նույնիսկ հնդեվրոպական լեզուների մեջ, ուր պարզ թրթռուն պալթականներ կան, նրանց գոյությունը վարանտ

վիճակի մեջ է. Ե ձայնը հաղիվ գրությունն ունի. մի արմատ, որ պարզ թրթռուսով է սկսում, չի կարող վերջանալ պարզ թրթռուսով (ded կարելի չէ): s բաղաձայնի դեմ չկա անկախ z թրթռուսը (Meillet, BSL 34, № 102, p. 1V): նվ ալս շատ բնական մի երևույթ է. կոկորդի լարերին մի աշխատանք պակաս առը նվազագույն ճիգի հասարակ կիրառումն է:

Բնական այս երևույթի արդյունքն է ահա, որ նկատում ենք հնդեվրոպական դանազան լեզուների մեջ. աշխարհիս ամենահին հնդեվրոպական լեզվի՝ կամիսերենի մեջ հաճախ k, p, և շրթավում են իրար հետ (Barton, A hittite manuel, 8): Նախ երևույթի արդյունքն է նաև, որ նկատում ենք հնդեվրոպականից հայերենի անցնելիս, ինչպես որ նույնը գտնում ենք նաև գերմանականում և թուրքերենում:

Պարսկերենն էլ մտնում է այս շարքի մեջ. հնդեվրոպական նախալեզվի pāter ձևը սանսկրիտ և հին պարսկերեն լեզուներում պահպանում է patar ձևով. բայց նոր պարսկերենում լինում է padar, որի նախաձայնը (p) խառնակ է մեզ համար: Արդի պարսիկները չեն հնչում պաղար, այլ փաղար, որից հետևում է, թե հին պարսկերենի պարզ խուլ հնչումը դարձել է թավ, իսկ միջաձայն. պարզ խուլ t այժմ դարձել է d, իսկ արդի լեզուների մեջ էլ y (pāyār):

Գրաբարում ունենք պաշապան և փուշափան բառերը, որոնք իրանական փոխառությունն են: Հին ձևից է պաշապան, որ նախաձայնն պ և վերջափանիկն պ ցույց են առելու, որ հին ձևը (prštipāna) ունեւ պարզ խուլ p, իսկ փուշափանն ձևն էլ ցույց է առելու, որ ստանյան շրջանում նախաձայնն պարզ խուլ p դարձավ թավ փ, և այսօր էլ պարսիկն ուսում է փուշափան: Մրանից երևում է, որ նոր պարսիկը ոչ միայն բառակազմի պարզ խուլը դարձրել է թավ փ, այլև երկու ձայնավորի միջև գտնված պարզ խուլ պ դարձրել է թրթռուն (p):

Օրինակ կարելի է տանել նաև ցրագ բառը, որի պարսիկ ձևն է ڄراغ (čiray): Այս բառի մեջ ըստ օրինի ի ձայնավորը ջնջված է հայերենում. վերջաձայնն ր դարձել է հայերեն ր, կամ սրովհետև հայերենը չունի կոկորդական ղ այն ժամանակ, և կամ սրովհետև պարսկերենը հնչվում էր ց: Այս վերջինիս ապացույց է արաբերեն ڄراغ (sira) «ճրագ», որ փոխ է առնված պարսկերենից և ցույց է առելու, որ պարսկերենի վերջաձայնը ց էր, որ դարձավ արաբերեն ր, իսկ եթե պարսիկներն արառանամ լինելին ր, արաբերենը կարող էր առաջարձել ڄ-ր:

Պարսկերեն նույն բառն այսօր եթե մի հալ լսի, կառադարձի չիրաղ, որից հայտնի է, որ պարսիկ նախաձայնն և դարձել է չ (պարզ խուլը՝ թավ):

Պարսկերենի օրինակը ցույց է առելու, որ միևնույն լեզվի մեջ բաղաձայնները իրենց աստիճանը կարող են փոխել, պարզ խուլը կարող է դառնալ թավ, պարզ խուլը կարող է դառնալ թրթռուն և այլն:

Ուրեմն հետևյալն է, թե պարսիկները, որ առաջ դուռ հնդեվրոպական էին, ստանյան շրջանից հետո հանկարծ ոչ հնդեվրոպական դարձան: Այս եզրակացությունը անհեթեթ պիտի լինի:

Մեզ համար առանձնապես խրատական է չինարենի ձայնափոխությունը: Հ. Մասպերոն ցույց տվեց, որ հին չինարենն ուներ մաքուր թրթռուն բաղաձայններ. VII-VIII դարերի միջև այս պարզ թրթռուն բաղաձայնները դարձան շնչեղ թրթռուն: Բայց այս ձայնափոխությունը միայն սկիզբն էր գործի, որ հետագայում ավելի զարգանալով, հասավ այսօրվա վիճակին: Նախկին թրթռուները դարձան պարզ խուլ կամ շնչեղ խուլ (թավ) համաձայն տանի (BSL, № 69, p. 289): Այս բոլորն ամբողջությամբ նույնն է, ինչ որ հայերենում, իսկ մասամբ էլ (շնչեղ թրթռուն բաղաձայնների համար) նույնն է, ինչ որ հունարենում (bh > φ):

Յեղի հարադատություն կամ անհարադատության մասին իր հեղինակավոր և անկողմնակալ կարծիքն է հայտնում նշանավոր մասնագետ Մեյլեն (BSL, № 66, p. 98) հետևյալ ձևով. «Այն վարկածը, թե գերմանական լեզուն հնդեվրոպական մի բարբառ է, որ ընդունել են ուրիշ լեզվով խոսող ժողովուրդներ, որոնց լեզվաբանական սովորությունները ձևափոխել են հնդեվրոպական լեզուն՝ ճշտիվ ապացուցանելի չէ: Բայց, ինչ էլ որ լինի, սառույց իրողություն է այն, որ հնդեվրոպականի և գերմանականի ձայնաբանական և ձևաբանական դրությունների միջև արմատական տարբերություններ կան»:

Ըստ այսմ, նույնիսկ գերմանացիների ալլաջեղ ժողովուրդ լինելու գաղափարը ոչ միայն չի ապացուցված, այլև ալստհետե էլ չի կարելի ապացուցել: Մնում է այն իրողությունը, թե երկու լեզուների հնչական դրությունը տարբեր է, որի համար մենք ավինք մեր բացատրությունը չինարենի օրինակով, որոնք միևնույն ժողովուրդն էին և են, թեև ցուցաբերում են մեր էլ ձայնաշրջություն հարազատ պատկերը:

Մի խումբ նշանավոր լեզվաբաններ գտնում են, որ դանիերենում կատարվում է երբորդ ձայնաշրջաթյունը: Այս լեզվի մեջ b, d, g կորցրել են իրենց թրթռումը և հնչվում են խուլ. մյուս կողմից p, t, k հնչվում են աժեղ շնչով, բայց զեռ շփական չեն (Lingua I, № 1, p. 79):

3. Հնդեվրոպական խուլ պայթականները հայերենի մեջ վերածվում են շնչեղի. այսպես k > p, t > p. բացառություն է միայն p, որ դառնում է հ: Ենթադրում ենք, որ այս հ-ն առաջացած պիտի լինի i ձևից, այսինքն թե հնդեվրոպական նախալեզվի p նախ դարձել է i, ինչպես ցույց են տալիս նույն ձայնի բառամիջիկ ձևափոխումները (ւ, վ): Այն երևույթը, որ պայթականների պարզ խուլերը վերածվեն շնչեղի, և միայն p վերածվի f-ի, անսովոր երևույթ չէ, այլ նկատվում է աշխարհի զանազան լեզուների մեջ, անկախ լեզվախմբերից: Այսպես, սեմական լեզուների t, k, արաբերենի և եթովպերենի մեջ մնում են, բայց p դառնում է f.—Իրաներեն p օսս. դառնում է f. ինչպես՝ panj > օսս. fonj «հինգ», հին պարսկերեն puθra > օսս. furt «որդի».—մոն-քմեր խմբի մեջ p՝ նիկորարերեն դառնում է f. օրինակ՝ մոն pan = քմեր. puθn = նիկորար fōan «չորս», թեև k մնում է (ինչպես՝ մոն. kon = քմեր. kūn = նիկորար kōan «երեխա»):—Ալգո-ֆիննական լեզվախմբի մեջ p դառնում է հունդարերեն f. ինչպես՝ ֆիններեն pau = փոսլակ pu = գիրլ. pu = հունդարերեն fa «ծառ»:—Այսպես առաջացած f-ի հաջորդ աստիճանն է h.—այսպես, ճապոներենում բնիկ բառերի մեջ ամեն p վերածվել է h-ի (անցնելով f-ից) և այլոթերի մեջ այս ձայնը (h) բռնում է p-ի տեղը!—Չայնափոխության վերջին աստիճանն է այս h-ի սղումը, որով նախավոր p բոլորովին ջնջված է լինում. այսպես է կելտականում, ուր ունենք օրինակ՝ հնդեվրոպական նախալեզվի pāthēr > հին իուլանդերեն athir:

Երբ f պատահի t-ի մոտ, կարող է վերածվել խ-ի. այսպես՝ հնդեվրոպական նախալեզվի septm «եօթն» դառնում է հին իուլանդերեն secht.—իրաներեն Hazāraft հատուկ անունը դառնում է հայերեն հազարաւուխա, և իրաներեն* zaru + ufta տալիս է հայերեն զառնաւուխա «ոսկեհիւս». ճիշտ այսպես նաև hōpfi < haurfi > զավառական օխար, oá < աւá > զրբ. օ՛խժը.—Նոր-Նախիջևանում ճանաչում էի մի երեխա, որ ավտոմոբիլ բառն արտասանում էր ախտոմոբիլ:

ՀԱՅԵՐԵՆԻ ՉԱՅՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. ՉԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ*

Չայնափոխների փոփոխության հիմնական պատճառը շեշտն է: Շեշտի ազդեցության տակ անշեշտ ձայնավորների կրած փոփոխությունները կարող ենք բաժանել երկու կարգի.

ա. Բոլոր անշեշտ ձայնավորները, անկախ իրենց բաց կամ փակ լինելու աստիճանից, անխտիր փոփոխվում են:

բ. Անշեշտ ձայնավորները ենթարկվում են փոփոխության՝ համաձայն իրենց բաց կամ փակ լինելու աստիճանին:

Եթե որեէ լեզվի մեջ շեշտը շատ ուժեղ է, իր ուժգնությամբ գերազանցում է բոլոր մյուս անշեշտ ձայնավորները, որոնք ոչ միայն կարճանում են, այլև կորցնում են իրենց երանգը և վերածվում չեղոք ձայնավորի: Այսպես են գերմաներենը, անգլերենը, ռուսերենը: Չայնափոխների փոփոխության առաջին տեսակն է այս, որի լավագույն օրինակը տալիս է գերմաներենը, ուր անշեշտ ձայնավորները հասնում են Յ աստիճանին:

Իսկ եթե մի որեէ լեզվի մեջ շեշտի ուժը շատ փոքր է, ձայնավորները փոփոխվում են իրենց բաց կամ փակ լինելու աստիճանի համեմատ: Սրա տիպական օրինակը տալիս են նոր հունարենի հյուսիսալին բարբառները, որոնց մեջ a դառնում է ā, e,

* Հմմտ. Meillet, L'accent quantitatif et les altérations des voyelles, MSL 21, p. 108-111.

դատում է 1, 0 դատում է 11, իսկ 1 և 11 կրճատում են: Այս էլ ձայնավորների փոփոխության երկրորդ տեսակն է:

1. Եթե ըմբռնելու համար այս երկու կարգի փոփոխությունների հիմնական շարժառիթը, պետք է նկատի ունենալ հետևյալ ձայնարանական օրենքները.

1. Նույն պարամների տակ, որքան որ փակ 1 մի ձայնավորը, այնքան ուրեմն կարճ է: Մի որեէ լեզվի մեջ 1 ավելի կարճ է քան e, և e ավելի կարճ է քան a: Եթե մի լեզվի մեջ կան կարճ ու երկար ձայնավորներ, կարող է պատահել, որ երկար 1 ձայնավորը կարճ a-ից երկար չլինի. որպեսզի 1 երկար համարվի, բավական է որ կարճ 1-ից երկար լինի:

2. Որոշ ժամանակամիջոցում մի ձայնավոր որքան ավելի փակ լինի, այնքան ավելի շունչ է կլանում:

Ըստ այսմ, եթե մի որեէ լեզվի մեջ ձայնափոխության ժամանակ ձայնավորը կարճանում է, նա միևնույն ժամանակ փակվում է, որպեսզի պահի իր մաքրությունը. իսկ եթե ձայնավորը շատ փակ է, բոլորովին ջնջվում է:

Այսպես, օրինակ՝ սլավական լեզուներում, ուր ընդհանրապես ձայնավորները կարճանում են, երկար ձայնավորները դարձել են կարճ, իսկ կարճ ու փակ ձայնավորները դարձել են Ե, Ե:

Երբ նոր հունարենի հյուսիսային բարբառներում անշեշտ ձայնավորները փոխվում են իրենց փակման աստիճանի համեմատ, պատճառն այն է, որ շեշտյալ ձայնավորները երկար են և անշեշտները կարճ: Փոփոխության բուն պատճառը ուրեմն ուժգնությունն է, ալ ձայնավորների կարճությունը:

Վերի օրինակները միջոց են տալիս բացատրելու նաև հայերենի ձայնավորների փոփոխությունը:

Եթե հայերեն բառի մեջ բոլոր անշեշտ ձայնավորները չեն ընկնում, ուրեմն շեշտը այնպես ուժեղ չէ, ինչպես գերմաներենում: Եվ եթե ալ ձայնավորները նոր հունարենի հյուսիսային բարբառների նման աստիճանական փոփոխության են ենթարկվում (ե > ի, ոյ > ու, եա > ե), իսկ ի և ու ընկնում են, ուրեմն շեշտն էլ նրանց նման տկար է: Արդի հայերենում շեշտը ուժգին չէ արվեն, և պատճառ չկա հին հայերենի մեջ էլ մի ուժգին շեշտ ենթադրելու:

Բայց հին հայերենի մեջ հնգերրորդական ձայնավորների երկար ու կարճ տեղադրությունը վերացված էր և մնում էր միայն շեշտյալ և անշեշտ ձայնավորների տարբերությունը: Ամեն ինչ

պիտի բացատրվի ուրեմն, եթե ընդունենք, որ հնագույն հայերենում շեշտյալ ձայնավորը մի քիչ ավելի երկար էր, քան անշեշտ ձայնավորը: Այս կետում հայերենը նմանվում է ֆրանսերենին, ուր, ինչպես այժմ, նույնպես և առաջ, շեշտը գերմանականի պես ուժեղ չէր, շեշտյալ ձայնավորն ավելի երկար էր, քան անշեշտը, ուստի և բոլոր ձայնավորները չեն կրած շեշտի հարվածը, ինչպես գերմաներենում և անգլերենում:

Հին հայերենում ձայնավորների փոփոխության հարցում կարևոր է նաև նկատել, որ մինչդեռ ի և ու անշեշտ մնալու զեպքում կրճատվում են, սակայն բառակազմում բաց վանկի մեջ մնում են. ինչպես՝ իծ, սեռական իծի, ութ, սեռական ութի:

Նմանապես միջին հայերենում թեև ա ձայնավորը միջավանկում ջնջվում է, բայց բառակազմում և առաջին վանկում մնում է. ինչպես՝ քաղաք, սեռական քաղքի:

Լատիներենում էլ 1 և 11 ձայնավորները հաճախ ընկնում են որոշ պարամների տակ. բայց անկումը տեղի է ունենում բառի միջում և վերջում. իսկ բառակազմում մնում են, ինչպես՝ solidus > soldus, calidus > caldus, aridus > arduus, aridere > ardere (այս նյութի մասին մանրամասն քննություն ունի Juret, MSL 21, p. 93—107)

Նախաձայնի այս առանձնահատկությունը բացատրվում է նրանով, որ երբ վերջնավանկի ձայնավորը թույլ հնչվելով տկարանում է, ընդհակառակը առաջին վանկը ստանում է ավելի երկար տեղադրություն, քան միջին վանկերը:

Մի քանի նոր բարբառներում (Ղարաբաղ, Ագուլիս և այլն), որոնց մեջ շեշտը տեղափոխված է վերջնից վանկի վրա, ոչ միայն վերջնավանկի ձայնավորը մնում է, այլև նախաշեշտ վանկում դանդաղ բոլոր անշեշտ ձայնավորները (նաև առաջին վանկի) անխտիր ընկնում են:

Այս նշանակում է, թե շեշտին հաջորդող վերջնավանկը թույլ արտասանություն ունի, բայց միևնույն ժամանակ վերջնից վանկի շեշտը ուժեղ շեշտ է, որի առաջ ընկել են բոլոր վանկերի ձայնավորները, նաև առաջին վանկի:

Երբ նկատում ենք այժմ հնդեվրոպական բառերի փոփոխության ընդհանուր պատկերը հայերենում, և տեսնում ենք, որ վերջին վանկը միշտ կրճատված է հայերենում, եզրակացնում ենք, որ

1. Հնագույն հայերենում շեշտը տեղափոխվել էր վերջնից վանկի վրա, որով այդ վանկն ստացավ հատկապես ավելի երկարություն, քան մյուս վանկերը:

2. Վերջնավանկը բնականաբար հնչվում էր ավելի թույլ, որի հետևանքով էլ այդ վանկն ավելի կարճ էր:

Այսպես ուրեմն, թեև փոփոխություն առաջ բերող պատճառը շեշտն է, բայց այդ շեշտը իր ազդեցությունը գործում է նրանով, որ շեշտյալ ու անշեշտ վանկերի մեջ առաջացնում է տեղություն տարբերություն:

2. ՉԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՉԱՅՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

ա

ա ձայնավորը հայերենի մի քանի բարբառներում դառնում է a, բայց ու-ի մոտ այդ փոփոխությունը չի կատարվում. նույնն է նաև անդլերենում, ուր a շարունակ հնչվում է ā, բայց r-ից առաջ (փակ վանկում) մնում է a. Ինչպես՝ dark, darling, dart, darn, darvinism, part, parsley և այլն:

ա ձայնավորը (a) ամենաշատ գործածված ձայնավորն է. այսպես և սանսկրիտում, ուր ունենք բազմաթիվ բառեր, որոնց բոլոր ձայնավորները a են. Ինչպես՝ Ātapathabrāhmaṇa, Մանավադարմաշաստրա, Մանաբարադա, Ռամայանա, Պանչատանտրա և այլն:

ա + և

ա ձայնավորը ռեզականի մոտ փոխում է իր երանգը: Լիթվականերենի արևելյան բարբառներում ֆ (ռեզակին a) դառնում է u, իսկ an > un:

Լեհերենում գրվում է ֆ, բայց հնչվում է օ:

Պարսկերենում, Թեհրանի բարբառով, an > un, ինչպես nān > nun:

այ

այ դառնում է մերթ ա, մերթ ե, մերթ երկուսը միասին.

1. ա և ե. Հաճընի բարբառով՝ qawj > qaw, qel. այծ > աձ, հձ և այլն:

ai

Շատ լեզուների մեջ ai երկբարբառը դառնում է e. Ինչպես՝ հին պարսկերեն ai ձևի դեմ ունենք սանսկրիտ ē:

Սանսկրիտում և շավայերենում երբ a ձայնը որևէ ձևով (բարդությամբ կամ ածանցմամբ) պատահի i ձայնին, երկուսի միացմամբ առաջանում է e. Ինչպես շավայերեն kâ+hindal (ուր h անձայն է) = kendəl (Bohatta, Gr. jav. 16):

au > u

Արշաիր > Արշարունիք.

մօտ > մաաչիլ.

հօտ > հատանել:

au > o

Շատ լեզուների մեջ au երկբարբառը տալիս է o. Ինչպես՝ հին պարսկերեն au ձևի դեմ ունենք սանսկրիտ ō:

Սանսկրիտում և շավայերենում, ամեն անգամ, երբ a և u իրար են պատահում (բարդությամբ կամ ածանցմամբ), երկուսի դումարից առաջանում է o. Ինչպես՝ շավայերեն kâ+hundur (ուր h անձայն է) = kondur (Bohatta, Gr. jav. 16):

ե

բե

e > i, ե > i ձայնափոխությունը գտնում ենք նաև հունական բարբառներում. Ինչպես՝ κεφαί. > κεφαί. և այլն և այլն (BSL 34, № 102, p. 146):

e դարձած ei գտնում ենք ռոմանական լեզուներում, իռլանդերենում, ֆիններենում, լեթթերենում և այլն (BSL 67, p. 163):

ե բառակցում > ye. գտնում ենք բացի ռոսերենից, նաև կարարգին լեզվում. Ինչպես՝ yefendə «էֆենդի», yermelə «էրմենի, հալ»:

Բոլոր դրավիդյան լեզուների մեջ e > ye (տես այս մասին ո ստառի սակ):

ե > jե ձայնափոխությունը հատուկ է միայն բառակցքին (եյը և արևեյը) և ոչ բառամիջին. այնպես որ մի կողմից ունենք եփել, բայց ներկան կեփեմ և ոչ թե կը յեփեմ, ոմանք, սխալմամբ, անորոշի և կատարյալի ձևն ընդհանրացնելով, այժմ սկսել են ասել կը երգեմ, կը երթամ, կամ նաև արևեյը և այլն. ավելի առաջ տանելով այս երևույթը, պատահում ենք մինչև անգամ հինգ-

յերորդ (փոխանակ հինգերորդ). այսպես է գրված, օրինակ, Սիրասի «Զգրված օրենք»-ի 395-րդ էջում՝ «գիրք հինգյերորդ»!:

Դրավիդյան tu|u լեզվում բառակազմում e, ē, o, ō հնչվում են ye, yē, yo, yō (Brigel, 2):

Այն մասին, թե բառակազմում ե չէր հնչվում V դարում յե (ye), իբրև ազատույց են ծառայում նաև յ նախդիրով գրչաթյունները: օրինակ՝ յեգիպտոս, յերագի և այլն: Ինչպես էին կարգացվում այս բառերը, յյե^o, ինչ որ հնչել անկարելի է, թե յե, սկզբում յ լինելով բաղաձայն, չէ^o որ յ նախդիրը պիտի դառնար ի. ինչպես՝ ի Յակոբ, ի յղեաց և այլն: (Այս սրամիտ նկատողությունն անում է Քարաաշյան (Վեմյան), «Նորհրդային Հայաստանի նոր ուղղագրութունը», Բելյուսթ, 1926, էջ 12):

Երբ ե ձայնավորով սկսվող մի բառ մտնում է բարդութան կամ անանցման մեջ, նախաձայն ե այլևս չի հնչվում ye, այլ ե, օրինակ՝

երգ — համերգ, պարերգ, սիրերգ.

երջանիկ — ապերջանիկ.

եփել — անեփ.

և — արգարև.

ևս — թերևս:

Իսկ ձայնավորների հանդիպման դեպքում ավելանում է y, ինչպես՝ քեև, ցաև:

ե և ե

Ընդհանուր կանոնով բառամիջում ե գտնում ենք բառակերջից սկսած երկրորդ հնչումից (տառից) հետո: Երբ ե և ե տառերը նույն հնչումն ստացան, այս երկուսն սկսեցին փոխանակվել իրար հետ, այնպես որ հավասարապես գտնում ենք գրված ամենամեծ և ամենամեծ: նույնիսկ իա ձայնախումբը, որ գտնում է ե (օրինակ բարեկամ, բարեբար), գրվում է նաև ե-ով ինչպես՝ ագեաակ = ագեաակ, ալեգեա = ալեգեա, ալեխառն = ալեխառն, ալեկոծ = ալեկոծ և այլն:

Կան բառեր, որոնք ըստ օրինի գրվում են ե-ով, բայց բարդութան ժամանակ ե ձայնավորը միջաձայն դառնալով գրվում են ե-ով, բայց որովհետև ե և ե նույնաձայն են դարձել, ուստի գրվում են նաև ե-ով, մինչդեռ ըստ օրինի ե պիտի դառնա ի. ինչպես՝ եղեգն—եղեգնիկ, այգրեկ—այգրեկաժին, նույնիսկ հայերեն ե-ով

և հայերենագեա, հայերենախոս՝ ե-ով: Աղեն բառն էլ գրվում է ե-ով, որի տարբերակն է Աղին. ուստի բարդութան մեջ ունենք թե աղենարուխ և թե աղինարուխ:

Հնդեվրոպական նախալեզվի alopek'os բառը օրենքով տալիս է հալերեն աղուես. բայց որովհետև բառակերջի ա-ից առաջ ե գտնում է ե, ուստի աղուես՝ հին ձևը աղուես. բայց հույժման մեջ առաջին ձևը պահված մնաց. այսպես սեռական աղուեսուց և ոչ թե աղուեսուց, ե-ով և ոչ իսկ աղուիսուց, ինչպես պահանջվում էր:

Ե վերջացող բառերը ա հոդակապով կապվելու ժամանակ պահում են ե ձայնը. օրինակ՝ մարգարէածին, մարգարէազէս, մարգարէական:

ե > ի

Այս օրենքը մտնում է առանց գործադրութան:

Երիգ<երեգ բառն ըստ իս (MSL 20, p. 160) ճիշտ չէ. նշված ավանդում է այս ձևով. բայց այս ձևն ավանդված չէ: Դրա արմատական ձևը հին մատենագրութան մեջ ավանդված չէ. ունենք միայն անանցները երիգապինգ, երիգապնդեալ և այլն, և մեկ անգամ էլ գրծ. երիգովք ձևը. բնական է որ հալերենի ձայնափոխութան օրենքների համաձայն՝ սրանցից պետք էր ենթադրել *երեգ ուղղականը, ինչպես ունի Ջր. բայց նշված անուշադրութամբ գրած է *երիգ, և այս սխալը բառարանների միջոցով ամեն տեղ տարածված է:

ե և ո, ե և օ

Մեր գաղտնականներում ե և ո բառամիջում ստացել են իե և ուօ հնչումները, իսկ ե և օ մնում են անփոփոխ. սրա նման է նաև եթովպական հարար լեզուն, որ ունի e և o, որոնք հնչվում են ie, uo, և ē և ō, որոնք հնչվում են սովորական ձևով e և o (Cerulli, 57):

e և o լատիներենում անգականից առաջ (որոշ պայմաններում) դառնում են i, u. ինչպես՝ nimbus<*nembhos, imber<*embris, humus<*homos, umerus<*omeros (MSL 20, p. 202—203):

Երբ բառակզբում ը ձայնավորը կա, բարդված կամ ածանցված ժամանակ մնում է. օրինակ, կարելի է ասել՝

«Հողմնքաց յառաջ սլացաւ» (Հոմերի «Իլիական», թրգմ. Փ. Վարդանեան, Թիֆլիս, 1886, 135):

Ը ձայնավորն անդիւր թողնելով երբեմն ընթերցումը կաղում է. օրինակ, Լեոյի «Անի» գիրքը կարդալիս, էջ 118-ում հասա հետեւիւ տողին. «Կարելի չէր չարմամարնել պ ա ա ն մ ա ն գ ա ո ի վ ա յ ը».—ես մտածեցի, թե ինչ որ պատահում «պատանքի մեջ դնել» բառի սեռականն է, որովհետե նյութն էլ շարունակ գերեզմաններից էր խոսում: Բայց մի քիչ առաջ տանելով ընթերցումը, հասկացա, որ պետք է լինի պաա-ա-նման «պատի պես»:

Հայերեն ը-ին (ավելի ճիշտ Զելթունի ը-ին) մոտիկ մի ձայնավոր ունի և ջավայերենը, որ հաճախ ա-ի է փոխվում, շատ հաճախ իրրե տառ չի գրվում և չի էլ հնչվում, ինչպես՝ wolas, kəlayan կամ wlas, klayan (Bohatta, Gr. jav., 18):

Ճիշտ հայերենի պես այս ձայնը շեշտ չի ստանում, բացի բացառիկ դեպքերից, ինչպես և հայերենում (անդ, էջ 20):

ի, ի

Գանդերենում կարճ i հնչվում է իրրե e. օրինակ՝ ting «բան», կարդա՛ theng (Poestion, Lehrb., 11), ճիշտ ինչպես Ղարաբաղի բարբառում սիրա>սերա:

ի + ա, i + a

ի + ա հայերենի մեջ միավանկներում տալիս է իա կամ ե, իսկ բազմավանկներում միշտ ե. ինչպես՝ մեաաաան, միաւոր, գինեպան. այսպես և ջավայերեն ուր որ i և a իրար պատահեն (բարդութիւնը կամ ածանցմամբ), առաջանում է e. ինչպես՝ karl + han (ուր h անձայն է) = karèn (Bohatta, Gr. jav., 16)

ի և u

Այս ձայնավորների սղման գեղեցիկ մի օրինակ է ներկայացնում պարսկերենի մինջանի բարբառը (Հինգուքուշ): Այս բարբառում

ունւմ i և u սղվելով այնպիսի մի վիճակի են հասել, որ լսողը դժվարացել է որոշել նրա երանգը. մերթ գրել է շատ կարճ i, u, մերթ գրել է շրջված ձևով կամ տողից վերև և մերթ թ: Այսպես են kən «անել» (պարսկերեն kun), kətyā «կարճ» (պարսկերեն katah), ləydā «աղջիկ» (պարսկերեն duxtār), ləwār «դուռ» (*duwar), lə' «երկու» (*duwa), lə'm «պուշ» (պարսկերեն dum), sə'rx «կարմիր» (պարսկերեն surx) և այլն (տես Gauthiot, MSL 19, p. 142): Այս անորոշ ու տարտամ ձայնավորը մեր ը հնչյունն է:

n և o, o > vo

n > ու ձայնափոխութիւնը գտնում ենք նաև հույն բարբառներում (BSL 34, № 102, p. 146—147). օրինակ ὄλος > ὄβλος:

Բառակզբում n գտնում է vo. այս v ձայնի հավելման երևույթը ավելի ընդարձակ չափով գտնում ենք չուվաշերենի մեջ, ուր u, ü, o, ö սկսող բառերը իրենց վրա ավելացնում են v. օրինակ՝

թաթարերեն	urəš	urman	öč	üt
թուրքերեն	urus	orman	üč	öd
չուվաշերեն	vəras	varman	vis ^y s ^y e	vat
	«ուս»	«անառ»	«երեք»	«լեզի»

(Ашмаринъ, Матер., 78):

Բոլոր գրավիդյան լեզուների մեջ ընդհանուր ձգտում կա o հնչելու vo, թեև հաճախ գրվում է միայն o. ինչպես որ e հնչվում է ye. ինչպես՝ ondu «մեկ», eradu «երկու». կարդա՛ vondu, yeradu (Caldwell, Comp. gr. drav., 122):

Սլավական դանազան լեզուներում բառակզբում o գտնում է vo և նույնիսկ հին սլավերեն մի Ավետարանի ձեռագրում ОТЪ նախդիրը գրված է ВОТЬ (BSL, № 64, p. 87):

Մոնղոլերենում o հաճախ հնչվում է uo, իսկ u > ou. օրինակ՝ usón «ջուր» հնչվում է uoson (Клюкин, 12):

Լեթթերենում o տառն արտասանվում է uōa. չկա բնավ մաքուր o. (Brentano, 2):

1355 թվականին գրված մի ճառընտիրում կատարվալի եղակի 3-րդ դեմքով եցոյց, կացոյց և այլն ձևերը գրված են եցույց, կացույց և այլն (ըստ Մարգիսեան, Անանիա թրգմ., էջ 19 ժան). ևս կարծում եմ, թե սա n > ուo արտասանութիւն պատկերն է:

Այն մասին, թե բառակազմում V դարում ոչ չէր հնչվում վօ (VO), այլ օ, ապացույց է ծառայում նաև այն, որ այս ձայնավորով սկսվող բառերը ստանում են յ նախդիրը և ոչ ի. այսպես, օրինակ՝ յորդի, յոսկւոյ, որոնք կարելի չէ կարդալ յվորդի, յվօսկւոյ: Եթե ո բառակազմում հնչված լինելու VO, բնականաբար պիտի ստանար յ-ի տեղ ի նախդիրը, իբր ի որդի, ի ոսկւոյ և այլն:

ո տառի հնչումը բառակազմում թեև VO է, բայց բառամիջում երբեք չի կարելի հնչել VO, այլ միայն օ. ինչպես՝ չորքոռանի (ոչ թե չորքվոռանի), անողորմ (ոչ թե անվողորմ), քեռորդի (ոչ թե քեռվորդի), անորոշ (ոչ թե անվորոշ), անողորկ (ոչ թե անվողորկ):

Թամկական արտասանություն և գոհճիկ ձևեր են անվողջ, անվողջուքիւն, վաավորակ, լավվորակ և այլն: Բուրբուլին սխալ և ավելորդ ձև է, օրինակ, բարձրավորակ, որ գտնում ենք Ղափանցյան, «Գիտական աշխատություններ պետական համալսարանի», XIV, 9: Պետք է ասել բարձրորակ, ինչպես ասում ենք լավորակ, վատորակ և այլն:

Լեթթերենում օ դարձել է օ, օա, օա, օօ (այս մասին մամուկազրական մի առումնասիրություն ունի Mokenzie, BSL, № 67, p. 161). նույն է նաև ֆիննական լեզուների մեջ (անդ, էջ 163):

Լատիշերենում օ տառը ձայնավոր է միայն եվրոպական բառերի մեջ, ինչպես՝ polikika, Olga, իսկ բնիկ բառերի մեջ համարվում է երկբարբառ և հնչվում է օօ (Паэглэ, 7):

ո, ով

Հունարեն օ ձայնի դեմ հայերեն գտնում ենք ով. բայց այս ձայնախմբի մեջ վ ձայնը մերթ ընկնում է, մերթ մնում արդի լեզվի մեջ. օրինակ՝ ասում ենք Ովսանեա, ովկիանոս, Յովակիմ, բայց Յոբ, Յակոբ (Յվսանեա, օվկիանոս, Հովակիմ, Հոբ, Հակոբ) և այլն (փոխանակ Յովբ, Յակովբ). վ կորչում է, եթե վանկի մեջ է, իսկ երբ վանկի վերջածային է կազմում (ովկիանոս) և կամ նախածային է (Յովակիմ), մնում է. այնպես որ սխալ է գրել ոասիս, ոկիանոս և այլն:

ո > մօ

Նոր-Ջուղայի բարբառում բառակազմի ո տալիս է մի քանի դեպքերում մօ (տես Քեննաթյուն Նոր-Ջուղայի բարբառի, էջ 72):

Այս երևույթը ծագում է շրթնականի և սնգալինի պատահական հանդիպումից, ինչ որ հաճախ է պատահում տանկերենում և տալիս է b. օրինակ՝

biyan	بیان	«մատուտակ»	>	miyan.
behane	بهانه	«պատրվակ»	>	mahana.
bin	بین	«հազար»	>	min
նույնիսկ՝				
ben	بن	«ես»	>	men.
Թեև սրա հոգնակին է՝				
biz	بیز	«մենք»	>	biz

ով > ավ

Ղարաբաղի բարբառում ով > ավ. այսպես լինում է նաև երբեմն լատիշերենում. ինչպես՝ *low > lavere, *Kowos > cavus և այլն:

օ

Շատ աշ ժամանակի ձևազերբում օ դարձել էր արդեն փակագիր՝ փոխանակ գրելու ալ. այնպես որ նույնիսկ ձայնավորի մոտ, երբ av հնչումը շատ սրտ էր, ոմանք գրում էին դարձյալ օ: Այսպես, օրինակ՝ Երեմիա գպրի 1682 թվականին գրած մի Սաղմոսարանում գտնում ենք Դօիթ = Դաւիթ, բազաօր = բազաւոր, ամբարտօան = ամբարաւան, փառօրեմք = փառաւորեմք և այլն (տես «Բանասէր», 1899, էջ 166): Սրանք ոչ մի արժեք չունեն հնչական տեսակետից:

3. ՉԱՅՆԱՎՈՐԻ ԱՆԿՈՒՄ

Նոր հունարեն բարբառներում i և u ջնջվում են (տես BSL 34, № 102, p. 146). վերջածային ձայնավորները, ինչպես և շեշտից առաջ եղած ձայնավորներն ընկնում են. օրինակ՝ κεφάλι > κεφάλι, άνθρωποι > άνθρωπι, κλέφτι > κλέφτε, ψυχico > ψυχico, ευνος > ενός, στεγμόνι > στερον, δικος < θκος, χαμηλος > χαμλος և այլն (անդ, ծան.):

Նոր հունարենի հյուսիսային բարբառներում անշեշտ կարճ i ջնջվում է. և այս երևույթը նկատվում է արդեն մեր թվարկություն-

նից առաջ 3-րդ դարից թեսալական արձանագրությունների մեջ (BSL 37, № 109, p. 15—16):

Մենք գիտենք, որ ձայնավորն ըստ ինքյան որքան փակ է, այնքան կարճ է. ամենափակ ձայնավորները i և u, նաև ամենակարճերն են. a ամենաբացն է և ամենից երկարը. սրա համար է որ ձայնափոխության մեջ ամենից առաջ i և u ընկնում են, e և o անցնում են (այսինքն կարճանալով) i և u ձայներին, միայն a պահում է իր գույնը (Meillet, Aperçu... gr., 317):

Բարբառների մեջ շեշտից առաջ ձայնավորներն ընկնելով, երբ երկու նման բաղաձայն իրար կողքի գտնվեն, մեկը ջնջվում է, օրինակ՝ Ղարբաղի բարբառով սուսամբար > սամբար:

Մոնղոլերենի մեջ էլ հաճախ ձայնավորի անշեշտ լինելու կամ վերջնավանդում գտնվելու դեպքում ընկնում է կամ վերածվում Ձ-ի. այսպես ահա այստեղ դնում եմ գրական մոնղոլերեն և ժողովրդական մոնղոլերեն մի հատված դեմ առ դեմ.

գր. čerig nere tey niġen nuxur mini

ժղ. čəṙəng nər tə nəġn nuxər mini

գր. arban tabun šara üṙgütü bagxan

ժղ. arbən tabən šar uṙgətə bagxən

գր. samor übürtülečü xuxetdu irebe.

ժղ. samər ubərtəlči xuxətdə irbe.

(Клюкин, 57).

Միջին ա-ի կորուստը

Թեև բառամիջի ա-ի կորուստը հատուկ է միջին հայերենին, բայց կան այնպիսի օրինակներ նույնիսկ V դարի առաջին կեսից ավանդված, այսպես՝

ապասամբ, որ այս ձևի տակ տիրացեալում է մեր ամբողջ գրականության մեջ. սակայն Եզնիկի նորագլուխ ձևագրում գրված է միշտ ապասամբ, որից էլ ապասամբութիւն, ապասամբիմ՝ Սակայն ոչ միայն Եզնիկի մեջ, այլև իրեն ժամանակակից մի երկի մեջ գտնում ենք նույն ձևը. ինչպես՝ Իրենիտսի Հերձուածք, ապասամբ, ապասամբեալ, ապասամբութիւն, ապասամբաղան. նաև Վարբ և վկայաբանութիւն, Ա, էջ 646, ապասամբութիւն. նույնիսկ ուշ ժամանակից Յալամաւորք, լույիս 17, անի ապասամբ. սեպտեմբեր 27՝ ապասամբել: Ավելի ուշ, միջին հայերենի շրջանում, այս բառը դարձավ ապսամբ և գործածա-

կան է միջին այժմ (այս մասին ընդարձակ տես Արմատական բառարան, Ա, 465):

Բագրատունի նախարարության անունն այս ձևի տակ գործածված է մեր մատենագրության ամենահին շրջանից մինչև այժմ, բայց այս բառի արմատն է Բագրատ, որ հին պարսկերեն Bāga-dāta=Barādād ձևից է: Պարզ է, որ Բագրատունի ձևն էլ պիտի լիներ հին ժամանակ *Բագրատունի, բայց այսպիսի ձև երբեք չի ավանդված: Սովորական է միայն կրճատ Բագրատունի ձևը, որից էլ ավելի կրճատ ձևով կազմված են համարում Բրգելի գլուղի անունը (Սերաստիայի մոտ):

Աստուած բառը հոլովման մեջ սեռականում լինում է Ասաուծոյ, իսկ հոգնակի սեռական՝ ասաուածոց. մեր քերականությունների մեջ ավանդաբար գրվում է, թե այս բառը կթե նշանակում է քրիստոնյաների Աստվածը, սեռական լինում է Ասաուծոյ ձևով, իսկ կապաշտների աստվածը լինում է ասաուածոց ձևով: Իրականությունն այն է, որ մեր հայերեն ձևագրերում Ասաուած, Ասաուծոյ ձևերը երբեք ամբողջությամբ չեն գրված, այլ միշտ պատկով —), համառոտված ձևով՝ Ած Ալ: Մեկ հայագետը ի նկատի ունենալով այս վերջին կետը, հայտնաբերեց, թե հին հայերենը լինում էր *Ասաուածոյ, որ ապա միջին հայերենում, միջին և ձայնավորի կորուստով դարձավ Ասաուծոյ, և այս ձևը այնուհետև անցավ գրականության:

Այս բոլորից երևում է, որ, ինչպես բոլոր բառերի, նույնպես և վերի երեք բացառիկ բառերի մեջ էլ ա-ի կորուստը ուշ ժամանակի արդյունք է, իսկ հնագույն շրջանում միջին և պահպանվում էր:

Միջին ա-ի կորուստով աշխարհաբարն ստեղծել է նոր բառեր, որոնք գրաբարի հետ կրկնակ են կազմում. օրինակ՝

անցաւոր — անցւոր

բանաւոր — բանւոր

վերանալ — վերնալ

շատանալ — շատնալ

աշակերտ — աշկերտ

վերացնել — վերցնել

Միջին ձայնավորների անկման այս օրինակներից չպետք է հետեցնել, թե ձայնավորների մեջ ամենախախուար և ձայնավորն է, ըստ որում ընկնող ձայնավորներից ամենաշատը նրան է պատկա-

նում: Քանակի այդ շատությունը նրանից է, որ ա ձայնավորն էլ մյուս բոլոր ձայնավորներից ավելի շատ է գործածվում, և քանակի այդ շատությունը պիտի համապատասխաներ նաև ընկնող ձայնավորների քանակին:

Միջին ա-ի սղումը բարբառներում

Այս օրենքին հպատակվում են ընդհանուր կերպով կը ճյուղի բարբառները, ում ճյուղի բարբառները չունեն այդ երևույթը, բայց զարմանալի կերպով նույնը գտնում ենք մի խումբ բառերի մեջ. օրինակ՝ գրաբար տեսանել բալը, որ կը ճյուղի բարբառներում գտնում է տեսնել, նույն ձևով ներկայանում է նաև ում ճյուղի բարբառներում (ինչպես Երեան, Ղարաբաղ, Մեղրի):

Այս երևույթը նկատվում է մի խումբ բայերի մեջ միայն, որոնք բոլորն էլ պատկանում են առաջին և երկրորդ լծորդություն 2-րդ տիպարին:

Մեյի հայագետը ունի մի ընդարձակ մատենախոսական իմ Ղարաբաղի բարբառի քննություն մասին, հրատարակված Journal asiatique-ի 1902 թվականի 561—571 էջերում, ուր խոսելով ում ճյուղի բարբառների այս երևույթի մասին, այն կարծիքն է հայտնում, թե մի դեպքում ա-ի պահպանումը և մյուս դեպքում ա-ի կորուստը ցույց է տալիս, թե հնագույն հայերենում երկու տեսակ ա կար. ինքը չի ասում, թե ինչ տարբերություն կար այդ երկու ա-երի միջև. տեղություն (երկար ու կարճ), թե՛ երանգի (բաց թե փակ): Սակայն իրողությունը հարմար կերպով ցուցադրում է:

Շատ երկար ժամանակ մտածել եմ Մեյի այս կարծիքի մասին: Թեև հենց սկզբից (a priori) այս կարծիքը չեմ ընդունել, բայց Մեյի պես նշանավոր մի հայագետի, այն էլ ձայնաբանի կարծիքը ստանց այլևայլի մերժել անհնարին էր: Անհրաժեշտ էր գտնել մի զորեղ պատճառաբանություն: Ամենատեղի պատճառաբանությունն այն պիտի լիներ, որ կարողանայինք գտնել, թե ինչու մի տեղ ա մնում է և մի քանի տեղ էլ ողվում է:

Ճիշտ 50 տարի հետո (1952 թ. նոյեմբերի 24), գտա. կարծում եմ, կորուստի պատճառը:

Իբր օրինակ առնենք այն բայերը, որոնց մեջ տեղի է ունեցել միջին ա-ի սղումը.

գրաբար	Երևանի բարբառ	գրական արևելահայերեն
տեսանել	տեսնել	տեսնում եմ
հասանել	հասնել	հասնում եմ
անցանել	անցնել	անցնում եմ
հատանել	հատնել	հատնում եմ
մեռանել	մեռնել	մեռնում եմ
մտանել	մտնել	մտնում եմ
գտանել	գտնել	գտնում եմ
բուսանիլ	բուսնել	բուսնում եմ

Այս բայերի կատարյալը լինում է տեսայ (տեսի), հասայ, անցայ, մեռայ, մտայ, հատայ, բուսայ, գտայ:

Սրանք բոլորը շեշտվում են առաջին վանկի վրա, ուրիշ խոսքով արմատի վրա, քանի որ բոլորն էլ երկվանդ են և ահա այս շեշտն է, որ նամանդություն (անալոգիայի) օրենքով անցել է բալի անորոշի և ներկայի կամ անկատարի վրա տեսնել, տեսնում եմ: Երևույթի բուն պատճառն այն է, որ առաջին և երկրորդ լծորդության 2-րդ տիպարի բայերը -եց- միջամասնիկը չունենալով, այլ միայն ի կամ ա վերջավորությունը, վերածվել են երկվանդի և բնականաբար շեշտն ընկել է առաջին վանկի վրա:

Կը ճյուղի բարբառները շեշտի տեղափոխություն չունենալով, այսպիսի բացառություն չեն ճանաչում և օրենքը նրանց մեջ ընդհանուր է:

ում ճյուղի բարբառների մեջ մնացյալ բոլոր դեպքերում շեշտը փոխադրված լինելով արմատից հետո, պահվում է ա ձայնավորը. մեծանալ, մեծացայ, մեծանում եմ, հաստանալ, հաստացայ, հաստանում եմ, կործանել, կործանեցի, կործանում եմ. խոստովանիլ, խոստովանեցայ, խոստովանում եմ. բաժանել, բաժանեցի, բաժանում եմ:

Այսպես նաև պատճառական բայերի մեջ. օրինակ՝ մեծացուցանել, մեծացնել, մեծացրի, մեծացնում եմ:

4. ՉԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՆԵՐՎԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Ռիվոլյալի բառագրքում (էջ 392) գտնում ենք սեռական բոլոչ (փոխանակ բրոչ), Մուժամբարի բարբառում՝ սեռական առբոչ (փոխանակ տիրոչ, տերոչ):

Չափնավորների ներդաշնակութունն կա մասամբ բանառ լեզուներում: Այս ներդաշնակութունը կա նաև մոնղոլերենում, ուր a, o, u ծանր են (իրենք կոչում են արական), e, ö, ü թեթև (=իզական) (տես Клюкин, 12):

Չափնավորների ներդաշնակության օրինքը կա նաև նորվեգերենում, ուր բառավերջի i, u և e, o փոխանակվում են բառի արմատական ձայնավորի համեմատ:

Ուզբո-ֆիննական լեզուների մեջ ձայնավորները երկու շարքի են բաժանվում.

նախաքմային՝ e, i, ä, ö, ü.

հետքմային՝ a, ä, o, ö, u, ü.

Ո՛ր շարքին որ պատկանի արմատի ձայնավորը, բառի մնացյալ բոլոր ձայնավորներն էլ նույն շարքից պիտի լինեն. մասնիկներն էլ ունեն երկու ձև:

Չափնավորների ներդաշնակութունը հատկապես գործադրվում է հունգարերենում, ուր մինչև անգամ օտար փոխառյալ բառերն են հպատակվում:

Նույնը կա ուրալ-ալթայական լեզուներում:

Շատ լավ օրինակ է լակուտերենից՝ agalar «հայրեր», äsalär «արջեր», ogolor «տղաներ», dörolör «գունչեր, մուլթներ», թուրքերենից՝ aldəm, verdim, gördüm «առա, տվի, տեսա»:

Հունգարերենում և չեխեմիսերենում կա նաև ձայնավորի շրթնային նմանեցում. օրինակ՝ մասնիկը ունի o ձայնավորը, e կամ ö. Եթե բառի վերջին ձայնավորը շրթնային է, կառնի ö ձայնավորով մասնիկ, թե ոչ՝ e ձայնավորով. ինչպես՝ հունգարերեն hārom-sor «երիցս», öt-sör «հնգիցս», hēt-ser «լոթնիցս» (Szinyei, Finn-ugr. Spr., 50):

Չափնավորների ներդաշնակության վերջին աստիճանն է նույնացումը, որով բառի բոլոր ձայնավորները դարձել են միատեսակ. այսպես, օրինակ, չուվաշերենում իրար հաջորդող կարճ ձայնավորները դառնում են միատեսակ, այն է o կամ ö, ə կամ e. ինչպես՝ komol, sʹörö, sʹöröʹʹö, yeləxrəm և այլն (Ашмиринъ, 31):

5. ՉԱՅՆԱՎՈՐԻ ՀԱՎԵԼՈՒՄ

Բաղաձայնների խմբի մեջ, հեշտ արտասանության համար, երբեմն մտնում է մի ձայնավոր, որ կոչվում է anaptyxe. օրինակ՝

Հին պարսկերեն dru-նախաձայն դառնում է duru-. ինչպես գեհզերեն drva-, սանսկրիտ dhrava-—հին պարսկերեն duruvā:

Նախաձայն dri- հին սլավերեն պիտի լինի *diri-, բայց օրինակ չկա (Meillet, Gramm. du vieu persan, 86):

Այս երևույթը շարունակվում է պարսկերենում, ուր ունենք միշտ բաղաձայնների խմբի մեջ ներմուծված մի կարճ ձայնավոր, ինչպես՝ birādār, farmān և այլն:

Երբեմն ձայնավորն ավելանում է բառի սկզբում (հմմտ. ասաղ):

Բառակցքի այս ձայնավորի հավելումը կա հատկապես ֆրանսերենում s-ով սկզբող բառերի մեջ, ինչպես՝ stélla > étoile, scala > échelle, stomachum > estomac:

Սրա պատճառն այն է, որ միջաձայն ձայնավորները հնչվում են ավելի կարճ քան նախաձայնները. մինչև իսկ կարող է միջին ձայնավորն ընկնել (կոչվում է syncope). ինչպես՝ regō, surgō, porgō:

Այսպես նաև վերջին ձայնավորը. ինչպես՝ *eti (հունարեն éti «տես») դառնում է et (թեև etiam), eme «գնիր», բայց em «առ»:

Լատիներենի ultra-brève (գերկարճ) ձայնավորներն ընկան առմանական լեզուների մեջ:

6. ԵՐԿԱՐ ՉԱՅՆԱՎՈՐՆԵՐ

Երկար ձայնավորները ձգտում են հետզհետ փակվելու: Լատիներենում ē և ö ավելի փակ են քան ē և ö: Օսկերենում և ումբրերենում ē և ö այնքան փակ էին, որ հասնում էին ī և ū ձայներին: Կելտականում ē դառնում է ī: Գոթականում e և o (իմն ē և ö) շատ փակ են: Լիթվաներենում è և o (իմն ē և ö) նույնպես փակ են: Հայերենում հնգվորոպական նախալիզվի ē և ö դառնում են ի և ու, մինչդեռ e և o մնում են: Հունարենում η որ առաջ e ձայնն ուներ, այսօր հնչվում է i:

Արդի հունական մի բարբառի մեջ e և o անշեշտ՝ դառնում են i և u (BSL 26, № 80, p. 92):

Դանիերենի մեջ երկար e գրեթե i հնչումն ունի (Poestion, Lehrbuch der Dänischen Sprache, 8):

Հին սլավերենի մեջ էլ բոլոր նախավոր երկբարբառները վերածվել են մի ձայնավորի. օրինակ՝ ei, ēi > i, ī, eu, ēu > u. oi, ōi, āi > ē. ou, au > u (Лескинъ, Грамм. древн., 89):

Երկար ձայնավորներն իրենց երկարութիւն պատճառով անփոփոխ են մնում, միայն վերջին վանկում գտնված ժամանակ իրենց երկարութիւնից մի բան կորցնում են: Իսկ կարճ ձայնավորները տարբեր են. ըստ այնմ, թե սկզբնաձայն են միջաձայն, թե վերջնավանկում: Կարճ ձայնավորներն սկզբնաձայն լինելու դեպքում անփոփոխ են մնում սովորաբար, բայց ընկնելով բառի ներքո, շեշտի ազդեցութիւն տակ փոխվում են, իսկ այդ փոփոխութիւնը լինում է համաձայն շրջապատի մլուս ձայնավորների, ինչպես, օրինակ՝ capio, որից ac-cipio, occipio և oc-cupare, amicus-inimicus

7. ԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՁԱՅՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Հայերենի երկբարբառների մի մասն առաջանում է հնդեվրոպական նախալեզվի երկբարբառներից. այսպես՝

այ < ai, աւ < au, ոյ > eu, ou, esō:

Մլուսներն առնաստիակ առաջանում են զանազան ձայնափոխութիւններից և նշ մեկը չի համապատասխանում հնդեվրոպական նախալեզվի երկբարբառի. օրինակ՝

կեամ բառի մեջ եւ < iyā. հմմտ. հունարեն βίωαι, ուր ունենք iyō.

ձեան սեռականի մեջ եւ < iy^o. հմմտ. հունարեն χίονος, ուր ունենք -iyon-.

եւթն, և < *septm բառից և < ep.՝

ձիւն բառի մեջ իւ < iyō կամ iyo. հմմտ. հունարեն χίών, χίονα, ուր ունենք iyo iyō.

միւս բառի մեջ իւ < իեւ ձեից, իբր մի ևս.

իւր բառի մեջ իւ < seve- ձեից:

8. ԵՐԿԲԱՐԲԱՌԱՅՈՒՄ

Երբ մի պարսիկ արտասանում է, օրինակ, մի երկար ձայնավոր, ձայնավորի առաջին մասը թեև ճիշտ, բայց երկրորդ մասը

սը փոխվում է. ā լավում է a—o. բնական ալս երկուլթից հետևում է, որ երկար ձայնավորները ձգտում ունեն երկբարբառի վերածվելու:

Այսպես եզով ստորին լատիներենում, որից անցավ նորալատին լեզուներին. օրինակ՝ լատիներեն focum, pedem ձեռքից առաջ եկան իտալերեն fuoco, piede և ֆրանսերեն feu, pied «կրակ, ոտք». լատիներեն me > հին ֆրանսերեն mei > ֆրանսերեն moi «ես». լատիներեն coda > հին ֆրանսերեն quoue > ֆրանսերեն qu-eue «պոչ»:

Պարսիկներից թուրքերեն կարճ i մնում է i, իսկ ī դառնում է iy. ինչպես՝ ձچ čilla > čille «քառասունք», čim «լոտ», բայց بید bīd > biyā «ուռի», bīx > biyx «արմատ» և այլն:

9. ԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՁԱՅՆԱՎՈՐԱՅՈՒՄ

(Monophtongaison)

Երկբարբառների միաձայնացումը մի երկուլթ է, որ գոյություն ունի բոլոր հնդեվրոպական լեզուներում:

Երկբարբառները սրոջ լեզուներում ձգտում ունեն միաձայն ձայնավորների վերածվելու. այսպես, հին դերմանական ai, au, eu, uo, ie երկբարբառները դարձել են հուլանդերեն ē, ō, ī, ū, ī (տես J. Mansion, BSL 26, p. 94):

Այսպես է նաև հայերենը:

Հայերենի մեջ ձայնավորացումն սկսել է շատ վաղ. այսպես, հնագույն հայերենում եյ (ey) դարձել է ե և V դարում այլևս եյ գոյություն չուներ: Միջին դարում էր, որ աւ դարձավ օ, իսկ այժմ բարբառներում բոլոր երկբարբառները ձայնավոր դարձան:

եւ (նաև եայ, եաւ)

Ենթադրում եմ, թե եւ երկբարբառը ծագում է հնագույն իւ ձեից, ինչպես որ իւ երկբարբառն էլ ծագում է հնագույն իու ձեից: Ըստ այսմ ձիւն բառը ծագում է *ձիւն ձեից, որ իրոք ճիշտ ու ճիշտ համապատասխանում է հնդեվրոպական նախալեզվի g'hīyōm ձեին, որ և հունարեն χίών.—(g'h տալիս է ձ, i տալիս է ի, ō տալիս է ու, բառավերջի մ հայերենում դառնում է ն):

Նմանապես սիւն < սիւն < k'ion, k'iyon, որ է հունարեն xiv:

Այսպես նաև բոլոր իւն վերջավորված բառերը (արիւն, մեծութիւն և այլն): Սեռականում բոլոր այս կարգի բառերն ստանում են եան, որ կարելի է մեկնել հետևյալ ձևով.

Ուղղական իուն սեռականում ն-ի պատճառով ստանալով ան, ամբողջը լինում է իուան, որից ու ըստ օրինի ընկնելով (հմմտ. շուն—շուան—շան, աուն—աուան—տան, աաուն—աաուան—աաան), ստացվում է իան, իսկ իա դառնալով եա, ամբողջը լինում է եան: Այս իա հնչումը մնում է այժմ էլ. տեառն, լեառն հնչվում են ոչ թե տեառն, լեառն, այլ տիառն, լիառն: Նմանապես լեալ հնչվում է ոչ թե լեալ, այլ լիալ, լիյալ, որի հետքը մնում է նույնիսկ Ավետարանում, Ղուկաս Ը 43, «Որում ոչ էր լիեալ հնար լումեքէ բժշկել», ինչպես նաև Ղուկաս ԻԳ 8, «Ակն ունէր նշան ինչ լիեալ տեսանել ի նմանէ»:

Եա երկրաբար (ինչպես նաև եայ ետարաբար), սկզբունքով գտնվում են միայն վերջավանկում: Բառամիջում եա դառնում է ե, իսկ եայ դառնում է ե, որ ե+յ գումարն է:

Եա գտնվում է բառամիջում միմիայն առաջին լծորդութիւնն հրամալականի ծալրին. այսպես՝ սիրեա՛, ողորմեա՛, արածեա՛ և այլն (սովորութիւնն է այս կարգի բառերի վրա դնել շեշտ): Աշխարհաբարում այս եա երկրաբար դառնում է արեւմտյան գրականում ե, արեւելյան գրականում՝ իր. այսպես՝ սիրե՛—սիրի՛ր, ողորմե՛—ողորմի՛ր, արածե՛—արածի՛ր և այլն:

Չորս բառ միայն կա, որոնք թեև հին հայերենի հրամայական ձևերն են, բայց աշխարհաբարում դարձել են իբր առանձին կամ անկախ բառ. սրանք են՝ գոնեա՛, գրեա՛ թե, համարեա՛ թե, ողորմեա՛:

Առաջինը սխալմամբ գրված է նաև գոնեայ. արեւելյան գրականում գործածվում է գոնե և գոնեա՛ ձևով («գեթ» նշանակութեամբ), իսկ արեւմտյան գրականում կա միայն գոնե:

Երկրորդը թե արեւելյան և թե արեւմտյան գրականում դարձել է գրեթե (գրեթե), գործ է ածվում իբր մակբալ («մոտավորապես» նշանակութեամբ), որի նախնական ծագումն այլևս բնավ չի գիտակցվում:

Երրորդը անփոփոխ համարեա՛ թե (համարյա թե) ձևով գործածական է միայն արեւելյան գրականում («գրեթե» նշանակութեամբ): Արեւմտյան գրականում բնավ գործածական չէ. ուստի բա-

նով կարելի է ասել նրա փոխարեն սեպե՛ թե, որ մինչուրև նշանակութիւնն ունի. օրինակ՝ «Սեպէ թէ ահադ էլաւ» (Պարոնյան):

Չորրորդը՝ ողորմեա՛ գործածական է նախ Տե՛ր ողորմեա ստացվածի մեջ (թե՛ արեւելյան և թե՛ արեւմտյան գրականում) և երկրորդ՝ աերողորմեա (աերողորմյա) «համբիջ» նշանակութեամբ՝ միմիայն արեւելյան գրականում:

Եա երկրաբար վերջավանկում մեծագույն մասամբ գտնվում է փակ վանկի մեջ, այն էլ սովորաբար լ, մ, ն, ր նայ բաղաձայններով:

Լ բաղաձայնով ունենք միայն անցյալ դերբայի -եալ (-յալ) վերջավորութիւնը, որ կարող է ստանալ անխափր ամեն բայ: Այս վերջավորութիւնն աշխարհաբարում դարձել է արեւելյան գրականում -ել, արեւմտյան գրականում եր. բայց կան մի քանի բառեր, որոնք իբրև քարացած ձև, պահում են իրենց -եալ (-յալ) վերջավորութիւնը: Այսպես են՝ կատարեալ, անցեալ, մեռեալ, դարձեալ, երեւեալ, հեծեալ, օրհնեալ, որոշեալ, սովեալ, աուեալ և այլն (կատարյալ, անցյալ, մեռյալ, դարձյալ, երեւեալ, հեծյալ, օրհնյալ, որոշյալ, սովյալ, տվյալ):

Մ բաղաձայնով վերջանում են՝

1. -եամ վերջավորութեամբ մի քանի բայ, որոնք են՝ առեամ, անխայեամ, կեամ, գրգեամ, ննջեամ, տեղեամ: Մրանք խոնարհվում են սովորական ձևով և եա երկրաբարացից հետո ստանում են զանազան բաղաձայններ. այսպես՝ կեամ, կեաս, կեայ, կեամք, կեայք, կեան:

Նույնիսկ գրաբարում -եամ լծորդութիւնը ջնջված է և այս բոլոր բայերը վերացված են գործածութիւնից. բացի միավանկ կեամ բայից: Նրանց տեղ գրված են առեմ, անխայեմ, գրգեմ, ննջեմ, տեղեմ

2. Մի քանի սակավաթիվ բառեր, որոնք վերջավորվում են եամ կամ եամն: Այսպես են՝ այծեամն, եղեամն, կեամ «խոտե կապ», շեամ կամ սեամ, ջայլեամն և վեամ: Մրանցից մի քանիսը նույնիսկ գրաբարում կան նաև առանց եա երկրաբարացի. այսպես՝ ջայլամն, վեամ կամ վսամ, կեմ, շեմ: Արդի հայերենում ընդունված ձևերն են այծեամ, եղեամ, (այծյամ, եղյամ), կեմ, շեմք (արեւմտյան գրականում սեամ), ջայլամ, վսեմ:—Ըստ Առձեռն բառարանի, գալառական ձև է եղեմ. ծանոթ է ինձ հոմանիշ եղիմ:

3. Ամ «տարի» բառով բարդված ձևեր են երկեամ «երկու տարվա», երեամ «երեք տարվա», քառեամ «չորս տարի» և այլն:

Այս բառերը արդի հայերենում չեն գործածվում. ասում ենք միայն երկամեակ, եռամեակ, քառամեակ (երկամյակ, եռամյակ, քառամյակ) և այլն:

4. -թիւն (թյուն) վերջավորված բառերի գործիականը՝ եամբ, եամբք, որոնք շատ մեծ թիվ են կազմում:

ն բաղաձայնով վերջանում են՝

1. -եան (հոգնակի եանք, եանց) մասնիկով կազմված մի խումբ բառեր, որոնք չափազանց բազմաթիվ են և ցույց են տալիս ա) վերաբերական անվաններ, ինչպես՝ արևելեան, արևմտեան, վաղորդեան, հնգազլիտեան, հինգարանեան և այլն. բ) ազգանուններ, ինչպես՝ Հայկազնեան, Մամիկոնեան, Մեսրոպեան և այլն. գ) -ուրիւն վերջավորված բառերի սեռականը, ինչպես՝ մեծուքեան, նեղուքեան և այլն. դ) ուրիշ վերջավորությամբ բառերի սեռականը, ինչպես՝ սննդեան, եռանդեան, ժողովրդեան, արեան, ձեան, սեան. ե) անձներական թվականներ, ինչպես՝ երկուքեան, երեքեան, ամենեքեան, բոլորեքեան, չորեքեան և այլն:

2. Հոգնակիի -եան մասնիկով կազմված մի խումբ բառեր, ընդհանրապես միավանի, որոնք գործածական էին միջին հայերենի վաղ շրջանում. ինչպես՝ գողեան, գործեան, բուլեան, բերդեան, գրեան, թղթեան, խոզեան, խոյեանք, խորդեան «կուսակներ», կովեան, հեզեան, նանեան, մորթեան, ջորեան, սրեան (սրեր, թրեր), փողեան, կապեանք, որեանք. բազմավանկներից էլ՝ նոխազեան, շարքեան, արեղեան:

3. Մի խումբ անկախ բառեր, որոնք վերջավորվում են -եան մասնիկով. այսպես են՝ բորեան, ատեան, մատեան, ցորեան, գեմեան, մեմեան, պատեան, զեան, վզեան, վայրեան, փանեան, պատեան, սեպեան, սիկարեան:

Սրանցից սեպեան և սիկարեան փոխառյալ են հունարեն σήπια և σικάριος (<լատիներեն sicarius) ձևերից, որից երևում է, որ -եան վերջավորությունը հայկական հավելված է:— փասեան բառը գրվում է նաև փասիան. իսկ պատեան ավելի գործածական է պատեան ձևով: Արդի լեզվում սովորական են բորենի, ցորեն, գեմեն, իսկ զեան, վզեան ջնջված են (հետնաբար գրված զեն, վզեն):

4. Սրանցից դուրս ունենք միմեանք, իւրեան, մշտնջեան, տունջեան ձևերը, որոնցից իւրեան աշխարհարարում դարձել է իրեն կամ իրան, վերջին երկուսը (մշտնջեան, տունջեան) ջնջված են, իսկ միմեանց կենդանի է զեռ արեւելյան գրականում:

բ բաղաձայնով վերջանում են՝

1. հոգնակիւս -եար մասնիկը, որով ունենք մի քանի հետաքրքրական ձևեր՝ նույնիսկ V դարից. ինչպես՝ որեար, բանեար, իրեար, հայեար, վանեար, վարժեար, խցկեանք, նաւկեանք, քաղաքկեանք, նանեար: Այս մասնիկն ավելի ուշ գործաւ -եք, որ և շարունակում է իր փոխությունը արդի հայերենում -եք, -ներ ձևերով: Առձեռն բառարանը ուշ ժամանակի հայերենից նշանակում է արդեն մրգեր, պրներ, վաներ, շինականներ, տափեր ձևերը:

2. -եար վերջավորությամբ մի քանի ուրիշ բառեր, որոնք են աղօրկեար «աղոթավոր», տեարք «տերեր», զղեար (պտուղը): Առաջինը կա նաև աղօրկեր ձևով, որով իմացվում է, որ -կեար (կամ -կեր) մասնիկն է՝ «գործող, -արար» իմաստով, տեարք կազմված է աի «մեծ» արք բառից, որ այլ բառի անկանոն հոգնակին է, իսկ զղեար (զղլար) այժմ կենդանի է զկեռ ձևով:

Բացի ւ, մ, ն, ր նայիրից, եա երկարբառը կարող է վերջանալ նաև կ, գ, հ, խ, շ, ու, ց հնչյուններով:

Սրանց մեջ ամենամեծ թիվն է կազմում կ հանգը, որով ունենում ենք -եակ վերջավորությունը:

Այս վերջավորությամբ կազմված են՝

1. -ի վերջացող բազմավանկ բառերի փաղաքշական ձևը (կազմված -ակ մասնիկով): Բավական մեծ է այս կարգի բառերի թիվը. հիշենք նրանցից մի քանի օրինակ. ինչպես՝ պատանեակ, որդեակ, կղզեակ, գերեակ, գինեակ, աղաւնեակ, ալեակ, երանեակ, լուսնեակ, խածեակ, խշտեակ, գրգեակ (գրգլի բառից) և այլն:

2. Բառեր, որոնք կազմված են նույնպես -եակ մասնիկով, բայց որոնց մեջ այս -եակ մասնիկը փաղաքշական իմաստ չունի. ինչպես՝ բոլորեակ «երկնագունդը, տիեզերք», երկեակ, երեակ, քառեակ, հնգեակ, տասնեակ, հարիւրեակ, հազարեակ, բիւրեակ, նաև երեսներեակ, երեսներեակ, երկուորեակ (երկուորեակ), եօրներեակ, օրեակ (օր արմատից), դմնեակ, նայեակ:

3. Բառեր, որոնց մեջ -եակ մասնիկը ենթադրաբար ենք իմանում. ինչպես՝ բարձուեանեակ (ժողիկը), տեղեակ (հմուտ), արբանեակ, խաչեանեակ (չորքոտանին), խաւեակ (սափոր), կլայեակ (<արաբերեն qalači), վառեակ (վրացերեն վարիա):

4. Բառեր, որոնց մեջ -եակ հանգը արմատական է. այսպես են՝ անեակ, ջորեակ (մորեխ), կորեակ, սենեակ, արուսեակ, զղեակ, զայեակ, մանեակ, լուռեակ, սարեակ (այս բառերից մի քանիսը պարսկերենից են, մեկը հունարենից, մյուսների ծագումն անծանոթ):

-եակ հանգող այս բառերի մի մասը գրված կա նաև -ել, -ակ, ձևով. *ինչպես՝* վառեակ—վառել, կլայեակ—կլայել, օքեակ—օքել, կորեակ—կորել, սեճեակ—սեճել, խաչեճեակ—խաչեճել, քայեակ—քայել, սարեակ—սարել, դեճեակ—դեճել և այլն:— Պաեկ «*փոքրիկ փարչ*» բառը իհարկե պաեակ ձևից է և կապ ունի պոյակ, պուաուկ բառերի հետ (տես Արմատական բառարան, Ե, 1107):—*Կա նաև հակադարձ ձգտում իրապես -ել հանգող բառերը -եակ ձևով գրելու. այսպես՝* դեկ—դեակ (<ասորերեն lēqā), երեկ «*եղբեկո*»—երեակ, ցերեկ—ցերեակ: Մրանք կեղծ գիտական գրչութուններ են՝ սխալ ստուգաբանություն արդյունք:

կ-ից դուրս մյուս բաղաձայնները շատ հազվապես են. այսպես՝

ն.—գրեան (գրան, գրեհ, գրեալ, գրալ) <պահլավերեն zrañ, zreñ, zraī ձևերից. ուստի գրեան կեղծ գրչութուն է.—գրեան կեղծ գրչութուն է փոխանակ գոեհ-ի (հմմտ. վրացերեն զլելի):

զ.—կա միայն ազ արմատը՝ «գիշերել» նշանակությամբ, որ բարդվելով օք (բունը՝ օքի), արմատի հետ, տալիս է օքեագ, և սրանից էլ բացօքեագ, վայրօքեագ և այլն:

խ.—կա միայն շեախ «քաջահատ», ibis թռչունը», որ մի անգամ գործածել է Լուծմունք Փիլոսոփի (տես Փիլոսոփ, Բ, 117):

շ.—բղեաշխ, խարեաշ, լեաշկ.—սրանցից առաջինն առաջանում է հին պարսկերեն *patiaxša ձևից և այնլի սոսորական է բղեշխ ձևով.—երկրորդը գործ է ածվում նաև խարեաշ, խարեաշ ձևերով, իսկ բարդությունների մեջ լինում է խարախշա...—երրորդը գրվում է նաև լեշկ, լաշկ:

ռ.—Ամենից այնքան կարևոր է այս բաղաձայնը, որով ունենք լեառն և տեառն բառերը: Երկուսն էլ առաջանում են լեար և տեար ձևերից, որոնց մեջ բ գարձել է ո՛ հաջորդ ն-ի պատճառով (հմմտ. գործիական լեարմբ, տեարմբ): Բացառականում սղմամբ լինում է ի լեռնե, բացի ի տեառնե. վերջինը անկանոն ձև է և կարող է բացատրություն:—Սխալ գրչություն է քեառ փոխանակ քայռ-ի «մանրակ»:

Այստեղ կարելի է հիշել նաև լեարդ և ցեարդ, որոնցից առաջինը գրված է նաև լերդ, երկրորդը՝ նիարդ, ցեարդ, ցարդ, ցերա, Վերջապես հիշենք տեանդ բառը, որ տեանդ բառի այլ գրչությունն է: Եվ որովհետև բառի ծագումը հայտնի չէ, ուստի հարանի չէ նաև, թե ո՞րն է ստույգ գրչությունը. տեա՞նդ, որ շատ անսովոր է, թե տեանդ, որ այժմ միակ ընդունվածն է:

յ.—Չափազանց շատ գործածական է խոնարհման և հուովման մեջ. *ինչպես՝* սիրեաց, գրեաց, կեաց, հրամայական խոսեա՛ց: չարեաց, բարեաց, եկեղեցեաց, իրեհ բալանուն՝ հացեիեաց և այլն: *Կիսանկախ գրչություն ունի արեացք «ոտքը սրունքով մխտին» (տես Ամովս, Գ 13):*

Այս հատվածի սկզբում ասացինք, որ եա գտնվում է միայն վերջավանդում, իսկ մյուս վանկերում եա գտնում է ե: Այս բանն ապացուցվում է բառակազմության, բառերի հուովման ու խոնարհման տասնյակ հազարավոր օրինակներով:

Բայց կան մի խումբ բառեր, որոնք այս ընդհանուր օրենքի մեջ բացառություն են կազմում՝ ներկայացնելով բառամիջում եա:

Հավաքում են այստեղ Առձեան բառարանում գտնված բոլոր օրինակները.

դայեակորդի. կա նաև սովորական ձևով դայելորդի. մյուս բոլոր դեպքերում ունենք սղմամբ դայելեմ, դայելարար և այլն: ղժնեառեսակ. գալիս է ղժնեայ բառից, որից ծագած մյուս բառերն են՝ ղժնեմ, ղժնեարար, ղժնեադոյն, ղժնեառեսիլ կամ ղժնեառեսիլ ղժնեհոտարիւն կամ ղժնեհոտարիւն, ղժնեուքիւն, ղժնեվարք: Որովհետև եայ ածանցման մեջ տալիս է է, ուստի բառ օրինի սպասելի է ղժնեառեսակ և այլն (հմմտ. քրիստոնեական) բայց որովհետև բառամիջում չի գրվում ե, այլ է, ուստի ղժնեառեսակ դարձել է ղժնեառեսակ. հորանցից խուսափելու համար էլ պետք էր ասել ղժնեառեսակ, որ է լավագույն հայերեն ձևը: Այստեղ երեք ձայնական օրենքներ ընդհարվել են իրար, որով և առաջացել են տարբեր գրչություններ:

Դիեացիկ, որի հետ ունենք նաև դիացիկ և դիեցիկ գրչությունները.—ի վերջացող միավանկ բառերը ա ձայնավորի մոտ պահում են իրենց ի ձայնը. *ինչպես՝* ձիավոր, միասին, դիակապուտ, քիաուր, ճիանալ և այլն. ուստի սխալ է դիեացիկ, որ առաջացել է ի և ա ձայնավորների միջև զգացվող սուղ յ կիսաձայնի պատճառով:

Դիեակապարիսպ, սխալ ձև փոխանակ դիեակապարիսպ-ի, *ինչպես* ունենք սեռական դիեկի, բարդությունը՝ դիեկան:

Լեառն բառը բարդություն և ածանցման մեջ ստանում է թե սղված լեռնա... և թե ամբողջական լեառնա... ձևը: Այսպես միաժամանակ ունենք՝

լեառնարնակ — լեռնարնակ
լեառնադազաթ

լեռնադաշտ — լեռնադաշտ

լեռնագէտ

լեռնական — լեռնական

լեռնակիաց — լեռնակիաց

լեռնակերպ

լեռնակողմն — լեռնակողմն

լեռնահալիաց

լեռնահանգէտ — լեռնահանգէտ

լեռնածէ — լեռնածէ

լեռնալին — լեռնալին

լեռնանամ — լեռնանամ

լեռնացալտ — լեռնացալտ

Սրանցից դուրս կան նաև ուրիշ 29 բառեր, որոնք բոլորը սզված ձևով են: Այնուամենայնիվ չսզված ձևի հարցը կարող է քննութիւն, ինչպես ցույց է տալիս նաև տեառն բառի համեմատութիւնը:

կայեանաւոր «կենտրոն տեղ, կայուն, հաստատուն», ունի միայն Առձեռն բառարանը, հետևաբար առանց վկայութիւն. կա նաև կայանավոր, բայց սա առաջանում է կայան բառից, մինչդեռ առաջինը՝ կայեան բառից, այս դեպքում պիտի լիներ կայեանաւոր, ինչպես կա կայեանական:

կատարեալապէս, գիտի միայն Առձեռնը, ուղիղ ձևն է կատարելապէս, որ հաստատված է բազմաթիվ օրինակներով:

կեամատարագ, ունի մի անգամ Մագիստրոս, ուղղել կեամատարագ, ինչպես կա կեմեղեն Վարք հարանցում:

կեանաբեր, կեանագգեաց, կեանոււտոյց, երեքն էլ սխալ ձևեր են, ուղիղն է կեանաբեր, կեանագգեաց (ինչպես ունենք էլ), կեանոււտոյց, որոնք հաստատվում են երեք տասնյակ այլ բառերով, որոնք ունեն միշտ կեան- ձևը:

կեանայարկ «քարաշեն», ունի մի անգամ Անան, եկեղ, ուղղելի կեանայարկ (իբր կեանայ ածականից), իսկ եթե զնենք կուր բառից, պետք է ուղղել կեանայարկ:

համածեանալախողխող «եղբայրասպան», չունի ՆՀԲ, ով գիտի ո՛ր ճամարտակ հեղինակի սարքած բառն է:

մատեանագրել, մատեանագրութիւն գործ են ածվել Ազգաթանգեղոսի առաջարկանում, ձեռագրական սխալներ են, որոնք ուղղվում են մի տասնյակ ուրիշ բառերի համաձայն, որոնք ունեն մատեանա...

միմեանանկութիւն, զմիմեանասէր, զմիմեանագրութիւն, զմիմեանակալութիւն, զմիմեանուցակութիւն, զմիմեանապանութիւն, ընդմիմեանահարութիւն, իմիմեանայար, միմեանցասէր. — սրանք շարահյուսական բարդութիւններ են և օրենքի առաջ սխալ չեն համարվում:

նախատեղեակութիւն, որի ուղիղ ձևն է նախատեղեակութիւն. գործ է ածված Լամբրոսագու առնարանութիւն մեջ:

նեարգապատ, նեարգատեսակ, որոնց դեմ կա ներգեայ:

նոնեայօմառ «նոնու փաշտով շինած», ունի միայն Առձեռն բառարանը, նույն բառը հիշում է ՆՀԲ նոնեայ բառի տակ և գրում է իբրև երկու բառ՝ նոնեայ օմառ (Նարեկացի, ճառ խաչի), կարելի է համարել նույնպես շարահյուսական բարդութիւն:

չարեացապարտ, ինչպես ունենք նաև բարեացապարտ, երկուսն էլ շարահյուսական բարդութիւններ են:

սարկեաւառ, կասկածելի բառ է, հավանաբար ստույգ ձևն է արկեառ (տես Արմատական բառարան, 2):

սեաւական, սեաւամղձութիւն, այս երկու բառերը գիտի ՆՀԲ և առաջինի համար էլ տալիս է մի բնախր վկայութիւն (Ոսկերբան, Փիլիպեոյց). բայց ինչքան հարազատ է արդյոք ձեռագիրը: Ուրիշ դեպքերում սեաւ բառը ածանցման մեջ դառնում է միշտ սեա. ՆՀԲ ունի այսպիսի 30 բառ, որոնց վրա ԱԲ ավելացնում է ևս 3 բառ:

տեառն, սեռականն է ակբ բառի, որ բարդութիւն և ածանցման մեջ մանուկ է տեր, տեր և աիր. ձևերով: Հայերենում սեռականով բարդութիւն ձևեր անսովոր չեն, դրանցից է նաև ակբ բառը: ՆՀԲ ունի 15 բառ՝ տեառն- ձևով, ինչպես՝ տեառնարարբառ (Կորիւն), տեառնագալուսա (Ազգաթանգեղոս), տեառնակողմն կոյս (Մ. Գիրք), տեառնանման (Ազգաթանգեղոս), տեառնորդի (Սերբեր, Եփրեմ Ծննդ): Սրանք սխալ ձևեր չեն, այլ միայն շարահյուսական բարդութիւն:

տեղեկագոյն, գիտի միայն ԱԲ, չունի ՆՀԲ, որ նրա տեղ դնում է միայն տեղեկագոյն՝ երկու բնախր վկայութիւնով:

քրիստոնեայասէր, մի անգամ հիշում է ՆՀԲ՝ Մաղաք ար. վկայութիւնով, «2ի էր դանն այն լույս քրիստոնեալատէր և բարեսէր»: Շատ ուշ ժամանակի վկայութիւն է, ավելի հինն է քրիստոնեասէր:

Անսովոր դրչութիւն է գեղեարդն, որ հիշում է ՆՀԲ երկու վկայութիւնով, որոնց դեմ այլուր գտնում ենք միշտ գեղարդն:

ևա> և ձայնափոխութիւնն հետ զուղղութեաց ունենք նաև ևա> | ձայնափոխութիւնը, որ սակայն ո՛չ թէ միջին կամ նոր հայերենի շրջանին է պատկանում, այլ շատ ավելի հին հայերենի շրջանին: Ոսկեդարի հայերենից ունենք մենք անձներական թվականների -եան մասնիկը, որ սպաս կերպով կարող է վերածվել -ին ձևին, Այսպես՝ երկրքեան կամ երկրքին, երեքեան կամ երեքին, չորեքեան կամ չորեքին, ամենեքեան կամ ամենեքին, բոլորեքեան կամ բոլորեքին և այլն: Եվ որովհետև արդի հայերենում չունենք կենդանի պահված այս ձևերից որևէ մեկը, ուստի ճշտով չենք կարող ստել, թե սրանցից որն է հին և որն է հետին: Միայն մյուս ղեպքերից և օրինակներից կարող ենք հետևել, թե հնագույն է եան, որ ապա դարձել է ին, նույնիսկ V դարում:

Ամփոփելով այս բոլորը, տեսնում ենք, որ ինչպես վերջավանդի եա բառամիջում դառնում է ե, նախպես և վերջավանդի եա միջին և նոր հայերենի՝ շրջանում հետզհետե վերանում է և ձգտում է վերածվել ե-ի: Այս է տրեմն հայերենի եա երկրարատի վտխճանը: Ինչպես միջին հայերենում, նույնպես և նոր հայերենում որքան որ գտնում ենք վերջավանդում եա, դա հնութիւն անկեղծ մնացորդ է: Անցեալ (անցյալ) բառը, որ այսօր դործածում ենք մեր լեզվի մեջ, նույնիսկ միջին հայերենում անցել «բացի» ձևն ունի:

Խնդիրն այսպես դնելուց հետո, հարց է ծագում, թե նրբան հարազատ են այն ձևերը, որոնք ավանդված են մեզ և ձայնափոխով վերջավանդում:

Այսօր մենք գրում ենք ցորեն, իրեն, զենեն, որոնց մեջ և ձայնափոխն էլ անկանոն է՝ փոխանակ ե-ի. բայց դիտենք, որ նրանց մեջ ե առաջանում է եա երկրարատից, որովհետև գրաբարում ավանդված ունենք ցորեան, իւրեան, զեմեան ձևերը: Իսկ եթե հանկարծ այս ձևերը պատահամբ պահված չլինեին, ի՞նչ գրավական պիտի ունենայինք նրանց հարադատութիւն:

Այսպես նաև այն բառերը, որոնք վերջավանդում ունեն ե և ստուգաբանութիւնում անհայտ են. ինչպես՝ մերթ, սերտ, վերա, շերտ, ներկ և այլն:

Մեր ասածը հաշմանի կերպով երևում է անեղ բառից, որի ծագումը նույնպես անհայտ է: Այս բառը Ս. Գրքում գործածված է մի անգամ, Մարկոս, Ա 31, Միմոն Պետրոսի գոքանչի պատմութիւն մեջ. «Եթող զնա տեղն»: Այս նույն պատմութիւն մյուս տարբերակներում ստված է շերմն. այսպես՝ Մատթէոս Ը 15. «Եթող

զնա շերմն». Դուկաս Դ 40. «Սաստեաց շերմանն և եթող զնա»: Մի քանի արիշ ոսկեդարյան գրվածքներում էլ կա անեղ բառը. բայց դրանց մեջ առանձին կարեորութիւն ունի Ոսկերեարանի Ա թեազդինիկեցոց էջ 439, ուր գտնում ենք անեղ գրչութիւնը:

Եթե եա երկրարատը վերջից սահմանափակված է նալ ձայներով, սկզբից ազատ է ընդունելու ամեն տեսակ բազաձայն: Ճալիս ենք այստեղ մի քանի օրինակ բոլոր բազաձայններից.

բ.— արբեալ, սրբեալ, կմբեալ.

գ.— կազեալ, քրձազգեաց, անազեալ, կարգեալ, հնզեալ.

դ.— ազգեալ, անզեալ, ազամանզեալ, աւանզեալ, աննզեան, վաղարգեան, բղեաշի.

զ.— վազեալ, համոզեալ, զեան, բեհեզեալ.

բ.— ութեան, -թեամբ, բացօթեալ.

ժ.— շարժեալ, վարժեալ, դանդարժեալ.

լ.— լեալ, ելեալ, այլալեալ, արեկեալ, արեկեալ.

խ.— բղխեալ, աղխամաղխեալ, հնզաղխեան.

ձ.— սուխլձեալ, ալձեամն, դորձեաց, մածեալ, հեծեալ, կարծեալ.

կ.— կեալ, կեանք, կիեալ, ոսկեալ, վալլեկեան.

ն.— մեհեան, դեհեան, հինգորտեհեան, խորհեալ.

ձ.— հերձեալ, մերձեալ, պղնձեան, դարձեալ, ձեան.

ղ.— դեակ (դեկ), բիւրեղեալ, հեղեալ, տեղեակ, արեղեան (արեղաներ), եղեամն.

ն.— աճեալ, հաճեալ, կաճեալ, կճեալ=կճալ, նոճեալ, պաճուճեալ.

մ.— ալժմեան, երկեմեան, մլմեանց.

ն.— անձեալ, լալտեալ, օրհնեալ, գործտեալ, արբանեակ.

շ.— մաշեալ, քարշեալ, կաշեալ, որոշեալ.

չ.— հրաշեալ, սուտշեալ, սոհաւաւտշեալ, չամշեալ.

պ.— թուպեալ, կապեալ, այլակերպեալ.

ջ.— աջեալ, աջեակ, առաջեալ, աղջամղջեալ, մշտնջեան, դեղջեալ.

ռ.— մեռեալ, վառեալ.

ս.— խօսեանց, տեսեալ, սեան, արուսեակ.

վ.— դովեալ, սովեալ, խորովեան.

տ.— աշտեալ, մատեան, ոստեալ, ոստեար, ոստեալ, լաւտեան:

ր.— բարեաց, բարեան, հրեալ, հարեալ, առօրեալ, կատարեալ.

ց.—կեցեալ, կացեալ, կացուցեալ, ընկեցեալ, անցեամ, բնացեալ.

փ.—հացեփեաց, կոփեալ, ամփոփեալ, չափեալ, թափեալ, կարմրեփեան.

ք.—ամենքեան, բոլորքեան, երեքեան, չորեքեար, կնքեալ, գուղնաքեալ:

Գալով ձայնավորներին և երկրորդականներին, այստեղ բնականաբար զործ չունեն և, և, ը ձայնավորները.—ի ձայնավորով կա միայն լիեալ, որ լեալ ձևի տարբեր գրչութիւնն է (թերևս լինիմ բայի լի արմատից թելազգրված).—ու, աւ, և ձայնի հետ ունենք բազմաթիւ օրինակներ. ինչպես՝

ու.—ասուեալ, վաղուեան, պրտուեալ, լուեալ տուեալ, պատուեալ.

աւ.—քաւեալ, աւեալ, բաւեալ.

և.—բազմաթեան:

Իսկ ա և ո երկրորդական առաջ անպատճառ ստանում են յ կիսաձայնը, որով միանում կամ նույնանում են այ, ոյ երկրորդականների հետ: Ահա սրանց օրինակները.

Ազամայեան (Ազամ անուան սեռականից, Ազամին պատկանող).

ախոյեան (գրված նաև ախոյան, որից էլ կազմված են զանազան բառեր).

անխայեամ, որ և անխայեմ «խնայեմ, խղճամ».

արքայեան «արքայական».

դայեակ

եսայեան «եսայի մարդարեին պատկանած».

եսայեան «եսայի մարդարեի տեսածը».

երեկոյեան (չունի ԱԲ).

եսայեանք «եսայի աղջիկները».

ընծայեալ

խոյեանք «խոյեր» (խոյ բառի հոգնակին).

կայեան, որ և կայան.

կեփայեան «Պետրոսի վիմական».

կմայեակ կամ կմայեկ «հմայանք».

հմայեակ «հմայանք, 2. հմուտ, 3. հատուկ անուն».

հայեացք, որ և հայեցք.

մշտակայեալ

երևակայեալ

Սարայեան «Սարային պատկանող».

կայեաց «նայվածք»:

ա և ո ձայնավորներից հետո և եա երկրորդականից յ կիսաձայնի ներմուծումը անքան սովորական էր, որ աշխարհաբարի մեջ էլ ազգանունները գրվում էին նույն ձևով. ինչպես՝ Աղաչեան, Կանաչեան, Սարոչեան և այլն:

Գրաբար եա երկրորդականը նոր բարբառներում գտնում է ե, օրինակ՝ բերեալ եմ>բերել եմ, գործեաց>գործեց, սիրեալ>սիրե (որովհետև վերջաձայն և չկա հին ուղղագրութլամբ), ատեան>ատեն, ցորեան>ցորեն, լեան>լեռ և այլն:

Գրաբար այն բառերը, որոնք բարբառներում գոյութլուն չունեն, սակայն գրական նոր լեզվի մեջ գործածական են, բարբառներում պահում են գրաբար ուղղագրութլունը. ինչպես՝ յաւիտեան, սենեակ, մանեակ և այլն:

Լեարդ բառը վեճի նյութ է դարձել այժմ. ժողովուրդն ասում է լերդ, բայց հասկանում է ոչ թե «լեարդ» (ջիգլար), այլ լերդացած արջուն: Ուստի պետք է գրել լեարդ (լյարդ), ճիշտ ինչպես գրում են նեարդ (նյարդ), որովհետև բարբառն այժմ չունի ներդ:

Մինչև այստեղ խոսեցինք եա երկրորդականի մասին, միացնելով նաև եայ, եաւ եռաբարբառները: Մնացել տեղեկութլունները այս երկու եռաբարբառների մասին տալիս ենք հաջորդ սուղերով:

եայ եռաբարբառը, ինչպես վերևում ասացինք, գտնվում է միմիայն բառի վերջավանդում, շեշտի տակ, բառամիջում դառնում է Է:

Ընդհանրապես -եայ մասնիկ է և կազմում է ածական. ինչպես՝ աղեայ, քարեայ, փայտեայ, աղամանդեայ, փղոսկրեայ, քրիստոնեայ, քաղեայ, քաղդեայ և այլն:

Անկախ կամ արմատական բառեր են հրեայ, ափսեայ (=ափսէ), աշտեայ, բուեայ «քվե», բողեայ «թեի զարդ», օղեայք «ոչխարներ»:

Գարձեալ -եայ մասնիկով են անդեղեայ «դեղթափ», կրեայ (կենդանին), և ն-ի հավելումով՝ մակբայաբար գործածված լսելայն:

Բառարանում նշանակվում է նաև զրեայ «կուռնկ», որ գործածել է մի անգամ սեռական գրեից ձևով, որով հայտնի չէ: Թե ուղղականը ինչպես է, գրե՞ թե գրեայ. բառարանները նշանակում են երկուսն էլ:

Անհատարակ վերջավանդի հայ խախուտ գրություն ունի. հետին գարեբում գրվում է հաճախ այ, իսկ հայք>այք գտնում է ապա էք:

Ահա օրինակներ այս կարգի գրություն.

արեկելալք—արեկելալք.

աղիսեայ աղիսայ

կճեայ—կճայ

քուեայ, քուայ, քուէ

քողեալք, քողէք

օղեալք, օղիք «ոչխարներ»

միջերկրեայ, միջերկրայ

անդեղեայ, անդեղայ

ափսեայ, ափսէ

լուելեայ, լուելան

Այս շփոթությունն արդյունքն է կրեայ բառը, որ ըստ իս ծագում է կուր «դաշտ» բառից՝ -հայ մասնիկով, ուրեմն բուն ձևն է կրեայ «տաշտէ». լինելով ժողովրդական սովորական բառ, վաղուց առարկա է դարձել վերոհիշյալ ձայնափոխությունն և գրվել է գանազան ձևերով՝ կրիայ, կրայ. իսկ վանանակրեայ բարդությունն մեջ (որ գրված է ըստ ԱԲ վանակրեայ, վանանակրիայ ձևերով) ավելի լավ է պահել -եայ վերջավորությունը:

-եայ, -այ, -իայ ձևերի շփոթությունն ուրիշ օրինակներ են.

կարկուրեայ, կարկուրայ «նառակ»

կեռեայ, կեռայ, կիւռիայ «կալմ»

արտորայ, արտորեայ «արտեր»

գրահ, գրեայ, գրայ

խարեբայ, խարեբեայ,

շափիւզայ, շափիւզեայ

(-եայ, -այ և այլն ձևերի այս վիճակագրությունը կատարեց

Արարատ Ղարիբջանը, տես Արմատական բառարան, է, 156)

Հին հայերը գանազանում էին իրարից իա, իայ և եա, եայ. ստաջինները գտնում ենք օտար բառերի մեջ, երկրորդները հայերեն բառերի մեջ: Օրինակ հայ է աղեայ «աղից շինած», բայց օտար է աղիայ «աղուս» (թեև այս բառը անասուլք է առաժմ):

Ստույգ գրություններից կարող ենք հիշել ցիլիկազաւան, լիւրիախաւան, Մարիամածիւն, որոնք օտար են: Իսկ եթե ունենք սրանց հետ նաև գալիլեագուարն և Սալեաւան, սրանք համարվում են հայրաձև սեռական Գալիլեայ, Սալեայ ձևերից:

եա երկրարբառի նման եա եռարարբառն էլ գտնվում է միայն վերջավանդում: Մի բառ միայն կա, որի մեջ եա գտնվում է բառակցում (այն է եալքն=եօքն): Բայց այս բառը միավանդ լինելով, նախավանդ նաև վերջավանդ է:

Բացի եալքն բառից, ունենք ևս երկու արմատական բառ, ուր կա եա եռարարբառը. այն է սեա և գեալ: Սրանցից դուրս -եա գտնվում է բառերի վերջում, միայն իբրև եզակի գործիականի վերջավորություն. օրինակ՝ կղգեա, եկեղեցեա, տեղեա և այլն:

Կան մի քանի բառեր էլ, որոնք գործ են անվում իբրև մակբայ և կարելի է կիսանկախ համարել: Սրանք են՝ բարեա, գառաջեա, զգուշեա, հաւաստեա, հեշտեա, ստորեա:

Եզակի գործիական եա ձևի հոգնակին է եալք. ինչպես՝ կղգեալք, եկեղեցեալք, տեղեալք և այլն:

Ինչպես եա գտնում է ե, նմանապես եա գտնում է եւ, որ ապա գտնում է դ-ից առաջ իւ, հետո ե: Միևնույն -եալք ձևից էլ ստացվում է -եօք: Այսպիսով ունենում ենք.

բարեալ>ժողովրդական բարե, բարեալք>բարեօք

առաջեալ>ժողովրդական առջև

ստորեալ>ստորև

հաւաստեալք>հաւաստեօք

չարեալք>չարեօք

արղեալք>արղեօք

գեալ>գեօղ, գեղ, գիւղ>ժողովրդական գեղ

սեալ>ժողովրդական սև

Կան մի խումբ բարդ բառեր գեալ և եալքն բառերից կազմված. ինչպես՝ գեօղապեա, գեօղաստանք (գիւղապեա, գեղաստանեայք), եօքնեակ, եօքներոյգ (եւրներոյգ), աւանագեօղ կամ աւանագեղ, գիւղաւան և այլն:

Բառամիջում գտնված եա եռարարբառի համար տես նախորդ եա բաժնում (սարկեաւառ և սեաւա...):

իա>ե

Սրա սովորական օրինակն է ի վերջացող բազմավանդ բառերի անանցման օրենքը, երբ միանալով ա հոդակապի հետ գտնում է ե. ինչպես՝ բարի-ա-գործ>բարեգործ, այգի-ա-պան>այգեպան:

Միավանկ բառերը, որոնք հանգում են ի, ազատ են այս ձայնափոխությունից, ինչպես՝ ձիաւոր, լիապարզ, լիամազիլ և այլն: Բայց ամենահին շրջանում միավանկներն էլ հպատակվում էին այս օրենքին, ինչպես ցույց է տալիս մետասան բառը:

իա>ե ձայնափոխության շատ լավ օրինակ է երկերիւր (=200), որ առաջացել է երկի + հարիւր բառերի համադրությունից: Նախ ջնջվել է հ ձայնը, ապա ի և ա միանալով տվել են ե:

իւ

իւ երկբարբառը բաղաձայնից առաջ դառնում է՝

1. ի այսպես Հաճինի բարբառով՝ ձիւր>ձիւր, հերիւն>հի-
յին, ձիւն>ձին, սիւն>սին, եղջիւր>եյջիւր, ալիւր>ալիւր:

2. Դանիերենում կարճ ü (գրվում է y) հնչվում կամ կար-
գացվում է ö. օրինակ՝ ynde (կարգա՝ önde) «սիրել»։ գրա համար
էլ գրվում են երկու ձևով. ինչպես՝ Fyrste կամ fôrste «իշխան»
(Poestion, 14—15):

ոյ

ոյ երկբարբառը բառի մեջ դառնում է՝

1. ի. այսպես Հաճինի բարբառով՝ լոյս>լիս, բոյր>բիւր,
հոյն>հին:

2. ու. այսպես Պոլսի բարբառում, ինչպես՝ լոյս>լուս,
բոյր>բուր:

ոյ երկբարբառը դառնում է ույ. ինչպես տեսանք երկբար-
բառի երկու կազմիչ մասերի մեջ հավասարություն ստեղծվելով,
o ձայնն էլ բարձրացել է և դարձել u, որով oi>ui (Աբեղյան,
Ուղղագրության սեֆորմը, 57): Սրանով ստանում ենք լոյս>լույս,
հետոյ-ի անկումով լուս (ինչպես հայր>հար): Նույնն է նաև
բառակերպում՝ մարդոյ>*մարդույ>մարդու: Բայց բառամիջում չի
կատարված այդ, որովհետև այստեղ երկբարբառ չկա, զո-յա-կան:

Գրաբարի ոյ երկբարբառը բարբառներում դառնում է ու.
օրինակ՝ բոյր>բուր: Գրական լեզուն այս փոփոխությունները չի
ընդունում և շարունակում է գրել ոյ, որ և կարգում է ույ. օրի-
նակ՝ բոյր=բույր, բայց ոչ բուր:

Շատ քիչ բառ կա, որ բարբառային ձևով մտել է գրական
լեզվի մեջ. այսպես են Անուշ (փոխանակ Անուշ), ուժ (փոխանակ
ոյժ), երբեմն նաև ակնարում, վիրաբում, որոնք սխալ են և պետք

է գրել ակնարոյժ, վիրաբոյժ: Քնքոյժ նույնպես սխալ է, պետք է
գրել քնքուշ, ինչպես է գրաբարում, որից և քնքանք:

Գրաբար ոյր, ոյց, ոյր հնչվում են միշտ ույր, ույց, ույր.
առաջինը ոմանք հնչում են նաև վույր, իսկ վերջինը՝ վանի բար-
բառով լինում է վի՞ր:

ու

Դանիերեն կարճ u կարգացվում է միշտ o (օրինակ՝ smuk
«զեղեցիկ»—հնչիր smok) (Poestion, Lehrb. 13—14). հմմտ. Ղա-
րաբարի բարբառով բուրք>բորք, պարսկերեն پور pur>پور:
Այս պատճառով էլ հաճախ երկու ձևով էլ գրում են. ինչպես՝ Kunst
կամ Konst «արվեստ»:

Լատիներենում ույ (ui) երկբարբառ չկար, և երբ ձայնական
օրենքները պահանջեին այդպիսի մի ձև, գրվում էր oi:

ու ձայնավորից հետոյ կիսաձայն գոյություն չունի հայե-
րենի մեջ. երկու անգամ դառնում են Օրբելյանի մոտ (այս. Թիֆ-
լիս, 1911), էջ 208 և 210 Ույծայ, որ սակայն էջ 48 դառնում է
Ոյծ, սևոական Ոյծեցվոյ (ստանց ամփոփման). ցանկում էլ (էջ
600) գրված է միայն Ոյծ, Ոյծեցիք և չկա Ույծ:

10. ԲԱՂԱԶԱՅՆՆԵՐԻ ԶԱՅՆԱՓՈՒՑՈՒԹՅՈՒՆԸ

Լեզվաբաններն այն արդյունքին են հասել, որ բաղաձայն-
ները բառասկզբում ավելի են դիմադրում ձայնափոխության, քան
թե բառավերջում. մենք ավելացնում ենք նաև բառամիջում: Սա
ցույց է տալիս ամենից առավել, որ այդ երկու դեպքում (բառա-
սկզբում և բառավերջում) բաղաձայնները տարբեր կերպով են
հնչվում և երկրորդ, թե բառասկզբում հնչվում են ավելի ուժեղ
քան բառավերջում (Groot, BSL 27 (1927), № 81, էջ 3):

Հայերեն բարբառներն էլ ենթարկվել են այս օրենքին և
իրենց գործնական օրինակներով ցույց են տալիս օրենքի ճշտու-
թյունը:

Այսպես, Երևանի բարբառում բառասկզբում ք, գ, դ, ձ, շ
շատ կանոնավոր կերպով պահում են իրենց թրթռումը, բայց բա-
ռամիջում և բառավերջում հաճախ դառնում են թավ:

Համընդիմ բարբառում փ, ք, ք, ց, չ թավերը բառասկզբում

մնում են անփոփոխ, իսկ բառամիջում և բառավերջում գտնում են պարզ խուլ:

Նման երևույթներ գտնում ենք նաև ուրիշ շատ բարբառներում:

բ, գ, դ, ձ, ջ

Բաղաձայնների հնչական այն վիճակում, որ ներկայացնում են մեր բարբառները միասին վերցրած, նույն է չինարենի հետ: Արդի չինարենում միևնույն բաղաձայնները հնչվում են որոշ բարբառներում փ, ֆ, ֆ, ուրիշ բարբառներում բ, գ, դ, իսկ մանդարինների լեզվում փ, ֆ, ֆ կամ պ, ա, կ ըստ իրենց տոնի: Չինարենի հին լեզվի մասին տվյալներ չկան. թեև դրականությունը չափազանց հին, բայց գրված լինելով գաղափարազրով, ոչինչ չի տալիս հնչման մասին: Հնչական արժեք ունեցող հնագույն գործերն են VI դարում կազմված այն բառարանները, որոնք բառերը զաստփորում են բառի նախաձայնի և վերջաձայնի համեմատ (ինչպես է Կամուսի արաբերեն բառարանը): Չինացիտ Կալգրենը համեմատելով հին չինարենի այս տվյալները արդի չինական բարբառների հնչման հետ, եզրակացնում է, որ հին չինարենում այդ բաղաձայնները հնչվել են bh, dh, gh (չնչեղ թրթուռն), որոնցից մի կողմից առաջացել են բ, գ, դ, մյուս կողմից փ, ֆ, ֆ և երրորդ կողմից պ, ա, կ կամ փ, ֆ, ֆ (BSL № 64, p. 111):

Միևնույն եզրակացությունը ուզում եմ հանել ես էլ հայերենի համար V դարում բ, գ, դ, ձ, ջ հնչվել են bh, gh, dh..., ինչպես հնչում է հայ ժողովրդի մեծագույն մասը. ապա բարբառների մի մասի մեջ նրանք դարձել են փ, ֆ, ֆ, մի մասի մեջ բ, գ, դ, մի երրորդ մասի մեջ պ, ա, կ իսկ Պոլսում աամիկ արտասանության մեջ բ, գ, դ կամ պ, կ, ա, զրական արտասանության մեջ փ, ֆ, ֆ (այս էլ մանդարինների լեզուն է):

Ռուսոն իր մանրամասն ուսումնասիրության մեջ՝ Principes de phonétique expérimentale, I, p. 507) գծագիր նկարներով ցույց է տալիս, որ խտական արդի բարբառներում էլ կա թրթուռն և խուլ ձայնափոխությունը՝ այն էլ նույնիսկ բառասկզբում:

բ

մ-ից հետո բ ընկնում է, ինչպես Կիլիկիայի բարբառում ձեռամբ > ձեռոմ և այլն. այսպես և հույն բարբառներում՝ mb > m

(տես BSL 34, № 102, էջ 149 և 157). նկատելի է, որ այս ձայնափոխությունը հունարենում էլ տեղի ունի Կապադովկիայի բարբառում: Միրամբելը կապադովկյան mb > m տարօրինակ գտնելով կասկածում է, որ դա մի օտար ազդեցություն արդյունք չէ՞:

բ > մ ազդեցությունը մի ուրիշ ունգականի. օրինակ՝ կարար-դիներեն mayram «բայրամ, տոն»:

դ

դ դառնալով նախ մ, տալիս է բ. այսպես է Ղարաբաղի բարբառով աղա > աբա «ծո, տո»:

Հին հայերենում ստվորական էր պարսկերեն և ասորերեն փոխառությունների մեջ մ > ր ձայնափոխությունը. ինչպես՝ ասպար, ծարիր,...

d > r ձայնափոխությունը կա նաև թաթարերենի մեջ (տես Minorsky, Encyclopédie de l'Islam, tāt բառի տակ): Սովորական երևույթ է գրավիզյան լեզուների մեջ դառնալին d > r ձայնափոխությունը (Caldwell, Dravid., p. 53): Նույնը նաև ասամ-նական d > r երկու ձայնափոխի միջև (անդ, 154—155):

Թաթարերեն d > r, ինչպես պարսկերեն د > dāren «տալ», دیر > dīren «տեսնել», زار > zaran «զարնել», māre-gā «կով» (ماگه), vār «քամի» (=), dūrā «ծուխ» (دور) (Gr. Iran phil. I, 355):

t = p

Դանիերենում t ձայնը (որ հնչվում է p) ձայնափոխից, հատկապես i-ից առաջ հնչվում է իբրև հայերեն ց. այսպես է և մեր ուսասիրտների -ութիւն-ը:

pu > g. Գեքսեմանի > Կեցամնի (մատուռ երեսնում):

ժ — շ

Այս երկու ձայները բառասկզբում և բառամիջում կարող են գտնվել ամեն տեսակ ձայնափոխից առաջ. ինչպես՝

ժ.— ժամ, ժառանգ, հրածեշա, ախաժեա, ժիա, ժիր, նաժիշա, ժողով, ժանաժուա...

շ.— շաղաղել, շեղ, շերեփ, շիւ, շեկ, շինել, շուն, շող, շոգի, շուրջ, տաշեղ, ուշիմ, յիշել, գիշեր...

Նույնպես է նաև երկրորդականներից առաջ, թեև այստեղ օրինակների թիվը պատահաբար մեծ չէ. ինչպես՝

ժ.—ժայթքել, ժայռ, ժոյժ, ժողատ, նժոյգ, թոժիւն...

շ.—շաւառն, շաւիղ, շուայտ, շօշափել, շօք, շոյտ, գաշոյն, խերշտանք, խօշիւն, վաշեակ...

Բառամիջում կարող են ծ և շ գտնվել ամեն տեսակ ձայնավորից հետո. ինչպես՝

ժ.—գաժան, խաժակն, բաժին, վիժել, կոժաքեր, երիժնակ, բուժել, խուժան, դրուժան, հուժկու, խոժռո, թոժիւն...

շ.—տաշել, աշակերտ, մաշել, խաշել, խաշար, փեշաւոր, քեշակարկատ, քերքեշել, գրագեշական, ատրուշան, գուշակել, մուշկ, յանգուշն, շուշան, իշայծեամն, գիշեր, մանուշակ, յիշել, վիշապ, մոշի, մոշայ, խոշոշել, խոշոտ, կոշել, փոշի, խեշերանք, խեշակ, բգեշիս...

Երկրորդականներից հետո.

ժ.—յօժար, օժիտ, օժանդակ...

շ.—դրօշակ, դրօշել, գաւշան, կօշիկ, կօշել, գօշել, կօշարայ, թօշնիլ, խօշիւն, ուշան, յօշաանել, շօշիլ, շօշափել, շօշանք, քօշել, օշակ, օշարակ, օշինգր, օշնայ, օշնան, գօշաքաղ, գօշոտել, լօշտակ, բգեշիս...

Բառավերջում երկուսն էլ կարող են գտնվել ամեն ձայնավորից հետո, բացի ե-ից.

ժ.—խաժ, բաժ, ապառաժ, բէժ, վէժ, գետավէժ, խէժ, հարէժ, յաւէժ, բիժ, բժիժ, իժ, պատիժ, քաղիժ, բժոժ, դուժ, գրուժ, բուժ, բժուժ, խաժամուժ, խառնախուժ, խժգուժ, խուժ, խոռվախուժ, կուժ:

շ.—աղուշ, մաշ, հաշ, հարակաշ, հաշ, հաշ, շամբաշ, տաշ, հակարաշ, վաշ, վաւաշ, քաշ, գառքաշ, գաղիշ, քմբիշ, աղիշ, իշ, կաաիշ, դակիշ, նեմիշ, փուրսիշ, գեշ, գոմեշ, էշ, խերուէշ, խեմեշ, հրեշ, ուղեշ, պատնեշ, քերքեշ, քեշ, գոշ, թորթոշ, մարգանգոշ, մուշ, մոմոշ, փոզոշ, որոշ, ուշ, գուշ, թուշ, յուշ, հուշ, շամբուշ, շարփուշ, արուշ, վուշ, փաղաքուշ, փուշ, քնքուշ, նիշ, շիշ, որիշ, ուրիշ, պիշ, փոշիշ...

Բառավերջում երկրորդականներից հետո.

ժ.—բոժ, գոժ, ժոյժ, յոյժ, աշխոյժ, անսպոյժ, իւժ «ժ», ոյժ, աոյժ...

շ.—անոյշ, գոյշ, զգոյշ, մեղոյշ, կոյշ, դրօշ, գարօշ, թեղօշ,

թօշ, փօշ, յօշ, բօշ, օ՞շ թէ, զօշ (որ և զոշ), լօշ, ապարօշ, նշօշ, խարտեաշ...

Բազմաձայնների հետ հանդիպումն ընդհանրապես կանոնավոր է. թրթուռների հետ՝ ժ, խուլերի հետ՝ շ:

Առաջին հերթին հիշենք շի—ժգ կապակցութունը. շի ձայնախմբի համար կա 32 օրինակ. ինչպես՝ բժիշկ, գշկուր, քաշկինակ, կաշկանդել, քաշկեն և այլն. իսկ ժգ ձայնախմբի համար 5 օրինակ. որոնք են պժգալ, ուժգին, աժգին, աժգոն, աժգոյն: Օրենքի հակառակ ձևեր են՝ բուժկութիւն, գուժկան, ժուժկալ, հուժկու, պատշգամ, նշգրիտ: Առաջին չորսը ստուգաբանական պատճառով է, վերջին երկուսը պահանջում են առանձին բացատրութիւն:

Պատշգամ բառն ավանդված է մեզ վեց տարրեր գրչութեամբ՝ պատշգամ, պատշկամ, պատշգամբ, պատշկամբ, պաշտգամ, պաշտկամբ: Այս բառը ծագում է պահլավերեն patškamբ ձևից, ուստի ուղիղ ձևն է պատշկամբ. մյուսներն առաջացել են վերջաձայն բ-ի անկումով, արեւմտյան տառադարձութեամբ և աշ—շա տեղափոխութեամբ: Արդի գրականում ընդունված ձևերն են՝ պատշգամ (արեւմտյան գրականում) և պատշգամբ (արեւելյան գրականում): Քիչ անգամ էլ գտնոււմ ենք պատշկամ (բ), որ անսովոր ձև է և նույնիսկ սխալ է համարվում: Բառարանում կա երկու ձևն էլ (պատշգամ և պատշկամբ), և որովհետեւ այսուրեւեղական կարգով բառարանում գրված է նախ պատշգամ, ուստի այդ ձևն էլ գործածական է դարձել:

Նշգրիտ բառը ունենք նաև նշգրտապես մակբայական ձևով (Տիմոթէոս Կուղ, Հակաճառութիւն, էջ 153): Բառի ծագումը հայտնի չէ, ուստի չգիտենք, թե ինչից է առաջանում շգ ձայնախմբը. հիշենք միայն, թե սրա նման անկանոն է նիշա բառը, որի մասին քիչ հետո:

շի—ժգ ձայնախմբերի հակադիր շարքն են ներկայացնում կշ—գժ, որոնց համար իբր օրինակ ունենք պակշիլ, պակշոտ, անգժատ: Պակշոտ գրված է նաև պագշոտ ձևով, որ ընդունված ձև չէ: Անգժատ փոխ է առնված պարսկերեն anguzad բառից. ուստի ճիշտ ձևն է անգուժատ, որից կրճատվել է, արեւմտյան տառադարձութեամբ գրված է նաև անկուժատ, անկժատ (Մխիթար, Բժշկարան, 126, Գիրք Վաստակոց և այլն): Անկանոն են կակիլիակ, վակիլոյժ. առաջինն է պահլավերեն *kākšīrak, երկրորդը՝ ծագումով անհայտ: Զանազան ձևեր է ստանում աւիշ բառը, որ անում է աւիշիլ աւիշա, աւիժք և աւիշք: Բառի ծագումը ան-

հայտ է. ենթադրում եմ, որ նախնականն է աւել, հոգնակին՝ աւելք. մնացյալը սխալ գրչութիւնն է:

ժ և շ ձայներով սխալող բառեր կարող են խառնված լինել ուրիշ բառերի հետ և այս միջոցով առաջ բերել կշ և նման կապակցութիւններ: Այսպես են՝ մակշողկապել, երեքծանի, երեքշաբաթի, չորեքծամեան, չորեքշաբաթի, հինգշաբաթի, սրանց մեջ մի մասը կանոնավոր է, մյուսը անկանոն, բայց ստուգաբանորեն ճիշտ:

Երկրորդ հերթին հիշում ենք շպ—ժբ կապակցութիւնները, որոնք չափազանց քիչ են: Առաջինով ունենք պաշտան «պալարուսուցք» և շուշպայ կամ շուշիայ «սկիհի ծածկոց»: Առաջինը սխալ գրչութիւնն է և պետք է ուղղել պաղպան կամ պաղպաշ: Երկրորդը փոխ է առնված ասորերենն ինքնաճիւղից, որի մեջ դույզ Բ-ի հայերեն համապատասխանն է փ, իսկ շուշպայ (շպ) առաջացել է հայ ձայնաբանութիւնն պահանջներով:—ժբ խմբի համար կա միայն մի բառ՝ ոժբիլ «շարդիլ» (Իրենացի, Յուլյ, 22). սրանից դուրս ուրիշ օրինակ չունենք, բացի դժբախտ և նման բառերից, որոնց մասին խոսելու ենք քիչ հետո, սառնածին:

Հակառակ դիրքով պշ (փշ, բշ) ավելի օրինակներ ունի հայերենի մեջ: Իմ կարծիքով հայերենի հարազատ ձևն է փշ, որի օրինակներն են՝ խափշիկ և յափշտակել: Վերջինիս ծագումը անհայտ է, իսկ խափշիկ փոխ է առնված պահլավերեն *xabāšik հոմանիշից, ուր միջին ա կորչելով ստացվել է նախ խաբշիկ, ինչպես որ գրված էլ է, և ապա բշ գարծել է փշ: Սրա նման է նաև ապուշ, որից ապշիլ, հետո էլ ափշիլ կամ յափշիլ:—պշ խումբը պահում են ապշուպ, շապշուպել, իսկ բշ ունեն արբշիտ, Բմբշամարտ, Բմբշապակ, շամբշիլ, որոնց մեջ բշ ստուգաբանութիւնն զիտակցութիւնն պատճառով է: Այսպես նաև՝ շափշփել, շփշփել բառերի մեջ:

Առանձնապես հետաքրքրական են շա և ժղ կապակցութիւնները: Առաջինի համար ունենք 88 բառ. այն է՝

ամբարիշտ, անշուշտ, անոշտ, աշտանակ, աշտարակ, աշտե, աշտիպ, աշտուհ, առաւուշտ, արեւիշուշտ, արեւուշտ, բաղափուշտ, բաղաշտակ, բուշտ, գիշտ, դաշտ, դաշտան, երածիշտ, երաշտ, երկածեշտ, գաւեշտ, Բմբշտական, իշտ, իշտրմուղ, լեպեշտի, լմբշտոց, լոշտակ, խիշտք, խշտիք, խշտաւոր, խշտեակ, խշտրել, խոշտակ, խոշտալ, խոշտանգել, խոշտար, կեշտ, կշտամբել, կշտապիկ, կոշտ, կուշտ, կապարիշտ, հաշտ, հաշտագրամ, հեշտ, հուշտ, հրածեշտ, հրեշտակ, հրշտել, մաշտել, միշտ, մշտիկ, մշտնջեան,

մոզպաշտե, մուշտ, մշտել, մուշտակ, յաշտ, յափշտակել, յշտոյ, նածիշտ, նշտիտ, նշտրակ, շամշտուրիւն, շեշտ, շուշտ, շուշտակ, որոշտալ, որոշտել, պաշտագական, պաշտել, պաշտպան, պարիեշտ, պարեւեշտ, ուիշտ, վաշտ, վաւաշտութիւն, վեշտասան, վիշտ, պաշտ, փամփուշտ, փղիշտ, փուշտապան, փոշտ, փոշտանկ, քաշտի, քշտել, բուշտընգիր:

Սրանցից 39-ը վերջածայն է, որով կարելի է նրանցից կազմել բազմաթիւ ածանցներ էլ:

Երկրորդի համար ունենք 6 բառ. այն է՝ ածղահակ, գծղմնիլ, խուծղուծ, խծղուրիւն, խուծղն, նծղեմ:

Այս բոլորի դեմ զարմանալի բացատրութիւն են կազմում հետևյալ բառերը.

շղ.—հիշղ (հշղել և ալլն), հշղարեմի (հշղար, հշղեմի), նըշղարեմի (նշղարի), ջըղաքար:

ժա.—բամառն, գժաիլ, օժտել:

Այս բառերի ծագումը ընդհանրապես հայտնի չէ.—հիշղ բառը արեւելահայերը գրում են միշտ հիշտ, հշտել և ալլն, բայց դա ըստ հնչման է: Մեր հին ձեռագրերը ավանդել են հիշղ և Մխիթարյանները պահպանում են այս ուղղագրութիւնը:—ձըղարեմի և նըշղարեմի ձևերը ձեռագրական տարբերակներ են և նրանցից մեկը սխալ է և ջնջելի:—Գալով ջըղաքար ձևին, այս էլ ձեռագրական սխալ է, որ պետք է ուղղել ջնղաքար (արեւմտահայերեն տառագարծաթլամբ ջնղաքար), այն է «հրեական քար, ֆրանսերեն pierre judaïque, լատիներեն lapis judaicus» (Հրեաստանում շատ գտնվելու պատճառով այսպես կոչված):

Երկրորդ խմբից բամառն բարդ բառ է՝ կազմված բամ «մարս»+առն բառերից: ՆձԲ չի հիշատակում այս բառը, որ զիտի միայն ԱԲ, առանց հետաբար վկայութիւն. բայց նա Ալասի մաքսատան պաշտոնական անունն էր և հաճախ հիշված է «Միստան»-ում: Լինելով բարդ բառ, նույնպես ունի ժա անկանոն ձայնախումբը, իբրև արդյունք ստուգաբանական զիտակցութիւն: Բայց մինչև ժամանակ այդ բառը լինելով կիլիկյան բարբառի բառերից, ըստ արեւմտյան տառագարծութիւնն հնչվում է -ձժ- և հետևաբար չի ներկայացնում հնչական անկանոնութիւնը:—Երրորդ բառը (օժտել) ածանց է, կազմված օժիտ արմատից և ցուլց է տալիս, որ գժաիլ բառն էլ կազմված է *գժիա (կամ *գժուա) արմատից, որ մեկ ալլուստ անձանոթ է:

շա—ծղ խմբի բառերի մեջ կան մի քանիսը, որոնք շառ լավ ներկայացնում են ուղղագրական փոփոխություն ընթացքը: Յաշա «գոհ» բառը գրված է նաև աշղ, ածղահալը դարձել է աշղահակ «վիշապածուկ», ուշա «աղահ» բառից ունենք ուշաուփուհ, իսկ նծղեն «պանդուխտ» (<պահլավերեն ուշdeh) գրված է նաև նշղեն ձևով: Այս բոլորի մեջ տեսնում ենք հին և նոր տառագրությունների՝ արեւելահայ և արեւմտահայ հնչման համաձայն: Այսօր էլ արեւմտահայերը, և հատկապես պոլսեցիք, թեև գրում են հին ձևով ածղահակ, բայց հնչում են աշղահակ, ուր դ գառնալով ք, ստիպել է անդիտակից կերպով ժ թրթուռն բաղաձայնն էլ վերածել շ-ի: Նույնը հասկանալ նաև մլրաների համար:

Նախորդների հակադիր ձևն են ներկայացնում աշ և ղծ ձայնախմբերը: Առաջինից ունենք հինգ օրինակ, որոնք են պաաշան, պաաշգամբ, պաաշեկ, պաաշիբ և բարդություններ էլ վաաշուեր: Այս բոլորը ձայնական տեսակետով շատ կանոնավոր են:

Բառամիջում ղծ ձայնախումբը չի պատահում: Կա միայն բառակցում, որի մասին քիչ հետո: Ընդհակառակը, բառամիջում կա ած ձայնախումբը, որի համար ունենք ընդամենը երեք օրինակ (պաաժել, պաաժանակ և պաաժախ): Երեքն էլ անկանոն են ձայնապես: Առաջինը արդարանում է իբրև պաաժ բառից ածանց. երկրորդը՝ պաաժանակ «բաժակ» անհայտ է ծագումով, երրորդը՝ պաաժախ «սուտակ քարը» պարսկերենից փոխառյալ նոր ձև է (badaxš) և իհարկե հնչվում էր բաղձախ:

Ղի կապակցություն համար ունենք 25 օրինակ, որոնք են՝ աշխոյժ, աշխախլ, աշխարել, աշխարաւանգ, աշխարհ, աշխարհաւանգ, (իկ), աշխեա, ապաշխարել, բաշխել, բարաշխ, բղղշխ (կամ բղղաշխ), բմբոշխնել, գաշխուրան, գշխոյ, երաշխ «աշխեա» շ. գրաւ», երաշխեպ, բմբոշխնել, իշխան, իշխել, խաշխաշ, նշխար, պարաբաշխի, սաաշխն, վաշխ, աաշխ:

Այս բոլորի ղեժ ապօրինի բացառություններ են կազմում՝ ածխոյժ, գծխեմ, վրեժխնդիր բառերը: Սրանցից վերջինը բարդված է վրեժ և խնդիր բառերից և հնագույն հայերեն ձևով ընդդրանելով ա հոդակապը, երկու արմատները անփոփոխ պահել է, որով և առաջացել է ժ—խ հանդիպումը: Նույնն է նաև ղծխեմ, որ փոխ է առնված պարսկերեն dušxim, պահլավերեն dušxēm, պաղենպերեն dušxim ձևից: Սրանք կազմված են duš «չար» + xēm «բարձր» բառերից (հմտ. պահլավերեն vat-xēm «վատաբար»)։ Պահլավերենում թեև հետևել են հնչական ճշտության (šx), բայց պարս-

կերենում պահվել է ստուգաբանական ճշտությունը: Հայերենում կա թե ղծխեմ և թե ղշխեմ գրչությունը, որոնցից վերջինը թեև համաձայն է պահլավականին և պահում է հնչական ճշտությունը, բայց մեր գրական լեզվում ընդունված է ղծխեմ, որ համաձայն պարսիկ ձևին, պահում է ստուգաբանական ճշտությունը.— մասնիկն է ղծ-: Գալով ածխոյժ ձևին, սրա մասին հմտ. հաջորդ տողերը:

աշխ- սկզբնավորությունը ունենք հայերենում 7 բառ, որոնց վրա պետք է ավելացնել Աշխաղար, Աշխեն անունները, ընդամենը 9 բառ: Սրանք բոլորը պարսկերեն են: Ծագմամբ հայտնի են մեզ՝

աշխարհ < հին պարսկերեն xšaθra, պարսկերեն šahr.

աշխեա < զենդերեն xšaēta, պահլավերեն *xšēt, պարսկերեն šēd.

աշխա < պահլավերեն axsat.

Աշխաղար < իրաներեն 'Ašaxar, պարսկերեն Askudār.

Աշխեն < կամ պահլավերեն axšēn, պարսկերեն xašīn, զենդերեն axšaēna «թխաղուն», կամ պահլավերեն *xašēn, զենդերեն xšōiθni «իշխանուհի» = օստերեն āxsīn «տիրուհի»:

Մնացյալ չորսի ծագումը հայտնի չէ, բայց անշուշտ նույնպես պարսկերեն են, ինչպես ցույց է տալիս գոնև երկուսի համար՝ ւանգ (պարսկերեն band «կապ») մասը:

Երբ այս բառերը համեմատում ենք իրանական մայր ձևերի հետ, տեսնում ենք, որ աշխ- նախադասիկն համապատասխանում է մերթ xš- և մերթ էլ axš-: Հայերենի մեջ ընդունենք, որ խշգարձել է Ղի: իսկ ա հավելվածը հայկական է, թե՛ ծագում է պահլավական ալն բարբառից, որից փոխ են առնված հայ բառերը: Արդ, հայերենում թեև կա խշ- սկզբնավորություն մի քանի բառ (խըշաւուր, խշկիլ, խշխբել, խշաիք, խշարել), բայց Ղի- սկզբնավորություններ (ինչպես և բառամիջում) ոչ մի բառ չկա: Շատ ուշ ժամանակի բառ է երևում Ղիքայ «տանջանքի գործիքը», որ արաբերեն šaxr բառից է (ըստ Արմատական բառարանի, Ե, 372): Աւերմըն՝ հավելումը հայկական է: Սրա լավագույն ապացույցն է իշխել բառը՝ ինչպես ս, ր բաղաձայններից առաջ ա-ի փոխարեն կարող է գրվել ք, նույնպես և ալտեղ. *շխել գարձել է եշխել, բայց շ-ից առաջ կարելի չէ գանել ք, առաի *եշխել > եշխել, ապա՝ ք > ի ձայնափոխություններ՝ իշխել (Աճառյան, MSL, 15, 243): Ընդհակառակը թեև ժի սկզբնավորություն մի քանի բառ կա (ժխոր,

միտանի), բայց խծ- սկզբնավորութիւնք բառ չկա (խծական, խրժ- դուժ ծագում են խուժ բառից): Այս հանգամանքներում վճիռը անորոշ է, նրա հետ նաև աշխոյժ բառի ծագումը և գրչութեան ստույգ ձևը:

Բառամիջում չկա խծ կամ խշ, բացի ախծիք «գիրտ» բառից, որ շատ հետին է:

Ի բաղաձայնի հետ ժ և շ ձայների կապակցութիւնը բավա- կան հաճախակի է: Ի՞նչ խմբով ունենք 49 բառ, թժ խմբով՝ 17 բառ: Այս բոլորը չենք հիշում, այլ տալիս ենք միայն մի քանի օրինակ. ինչպես՝

թժ.—արծել, ախորժ, դրծել, հանդուրծել, յորժամ, շարծել, վարժ և այլն:

ըշ.—արշալոյս, բուրշի, գուրշի, վարշամակ, արշաւել, գար- շապար, խորշակ, խորշոմ, կարշենդ և այլն:

Այս կարգի բառերի մեջ շատ անգամ ը կարող է ընկնել. ինչպես՝ կարժ>կամ, շարժ>ժամ, քարշել>քաշել, խարշել>խա- շել, տեղ-տեղ էլ ավելանում է մակարույժ և ինչպես՝ գաշոյն կամ դարշոյն, դաման կամ դարժան և այլն:

Այս երեսօթի մասին ավելի ընդարձակ պիտի խոսենք ը ձայնի մեջ:

Ի բաղաձայնի ուժեղ աստիճանի (այն է ո-ի) հետ կապակ- ցութիւններ չկան: Այս մասին եղած բացատրիկ օրինակներն են՝

առժամեայ, առշեղ, բռշոպ, խռշոփիլ, կապռշենի:

Մրանցից ստաշին երկուսը առ նախդիրով կազմված բառեր են և նշանակութեան չունեն.—կապռշենի ձևացել է սղմամբ՝ կապ- րաշ բառից.—բռշոպ «խառնակ, շփոթ», թեև հին է, բայց դորժ է անվանում միայն մի անգամ (Բազանդ, է 39), իսկ խռշոփիլ «թա- սամիլ» ու ժամանակի բառ է (Գիրք Վաստակոյ):

Հակադիր ձևով (շր, շռ) եղած օրինակներն են՝ կշուել (կշիւ բառից), կշրայել, պշիլ, պշրակ (պրշակ բառից շուս սոված), փշրել (փշուր բառից), փարշման (փոխանակ փաշաման), ապրշում, արբշուրթիւն (արբշիւ բառից): ժռ, ժր ձայնախմբով բառեր չկան հայերենում:

Ժ և շ բաղաձայնները կարող են գտնվել միևնույն բառի մեջ, բայց իրար վրա ընդհանրապես չեն ազդում. ալսպես են՝ երաժիշտ, նաժիշտ, բժիշկ, երկաժեշտ, հրաժեշտ:

Նույնիսկ կարող են ժ և շ հանդիպել իրար սղման զեպքում և գարձլալ մնում են անփոփոխ. ինչպես՝ բժշկել, երաժշտական,

նաժապար: Մրանց մեջ ժշ անփոփոխ օրհնին անշուշտ արդյունք է նախ ստուգաբանութեան դիտակցութեան և երկրորդ՝ անգիր ը ձայնավորի, որ երկու բաղաձայնները բաժանում է իրարից:

Ժժ և շշ կրկնակների մասին տես առանձին հատվածում:

Մենք մինչև այժմ խոսեցինք թրթուս և պարզ խուլ բա- ղաձայնների կապակցութեան վրա: Այժմ անցնենք թավերին:

Դժբախտաբար թավերի թիվը մեծ չէ. եղած օրինակների էլ մի մասը կրկնավոր է. ինչպես՝ շափշփել, շիշիել (արմատն է շուփ), մի մասը անանց է, ինչպես՝ քնքշալ, փաղաքշել (արմատը՝ քնքուշ, փաղաքուշ). մի մասը կազմված է հոգնակիի ը մասնի- կով (ինչպես՝ բուժք, շիշք). մի մասը բարդութեամբ է սուսջացած (ինչպես՝ երեքշարքի, չորեքշարքի) և մի մասն էլ ստար կամ հե- տին փոխառութեան է (ինչպես՝ շուշփայ<ասորերեն šūšēppā, մուշ- քարի «Լուսնիմազ»<արաբերեն مشترى muštari (գրված նաև մուշ- տարի): Մնում են քոշքիլ (սրա հաճախականն է քոշքուաի «ճապ- կրախլ»), բարեքաշքապես «լավ կերպով», շքքել «ձեռքով ջուրը շարժել», շքքիլ «լիտիլ, լրբանալ»: Մրանցից անստույգ է բարե- քաշքապես, որի ավելի հարազատ ընթերցվածն է բարեքաշկապես (տես քաշկ «ձե, եղանակ», Արմատական բառարան). շքքել և շքքիլ բառերն էլ ունեն ժքքել, շքքել, շկքիլ տարբերակները: Այս- պիսով մնաց միայն քոշկիլ բառը:

Ունենք սակայն երեք լավ օրինակ (խափշիկ, ափշիլ, յափքշ- տակիլ), որոնց վրա խոսել ենք վերը: Մրանց վրա կարելի է ավե- րացնել քշուառ, քշեամի, քշեամանել, որոնք պարսկերեն քշ>ղշ ձևից առաջանալով հանդերձ, նախաձայնը վերածել են քշ-ի: Ավե- րացնենք գարձլալ փշուր, քշել, քշտել բառերը, որով կարող ենք եզրակացնել, թե հայերենի նախատիրած ձևն է փշ, քշ, քշ. —ղշ, շշ (ինչպես նաև ժշ, ձժ, ջժ) ձայնախմբերը չեն ընդունված հայերենի մեջ:

Մնացյալ բաղաձայնների մասին ունենք հետևյալ օրինակ- ները.

շն.—անկոշենել, աշնան, դաշնակ, քշեամի, քշեամանել, քոշ- նիլ, կարշենդ, ճշնել, շշջիլ, պշնուլ, ոջնա, ուշնուրթիւն, քուշ- նայ, օշնայ, օշնան:

ժն.—բաժնակից, երիժնակ.

նշ.—անշուշտ, լայնշի, կաղանշան, նշել, մնշել.

նժ.—անժամ և այլն, յայնժամ, նոյնժամայն.

զմ.—այբբմեղէն, կաշմբուն, հաշմիլ, նեշմակապաշա, նըշմարիա, նշմարել, շուշմայ, չաշմակել, փարշման:

ժմ.—այծմ... և այլն (տես բառակերչում), ժամուկք, ժմակ, ժժմուկք, շարժակք:

մշ.—լմշտոց, կամշանալ, կամշոտիլ, համշիրակ, շամշիլ, շիմշիր:

մծ.—չկա

լշ.—բլշակ «ժածկոց», բբշանալ, բլշակելի:

լժ, շլ ձայնախմբեր չկան բառաձևերում:

ժլ.—շարժել:

ղշ.—աղշկորել, բաղշակ, շաղշափել, շղղղղիլ:

ժղ.—մծղուկ:

ղժ.—վաղժամանակեան:

Մրանցից դուրս եղած կապակցութիւնները պատահական ընտլթ են կրում և արդունք են սակավազեպ բարդութիւնների կամ կրկնութիւնների: Այսպես են՝ կարեմամանակեայ, յառաջըլար-ժուրիւն, շքշքիւն:

Ընդհանուր եզրակացութիւնն այն է, որ բառաձևերում ժ և շ կարող են կապակցութիւններ կազմել միայն պ, կ, ա պայթականների երեք աստիճանների, չորս աստակ նախերի (լ, մ, ն, բ ինչպես և ո, դ) և միայն խ բաղաձայնի հետ:

Բառակցում բաղաձայնների հանդիպումը ժ և շ բաղաձայնների հետ կապված չէ միշտ ձայնական օրենքների հետ, որովհետև այսակ մեծ դեր ունի սղման օրենքը:—գ, դ, խ, կ, մ, ն, պ, ո կարող են միանալ թե՛ ժ և թե՛ շ բաղաձայնների հետ, որոնցից մի մասը ձայնապես կանոնավոր է, մի մասն էլ անկանոն. օրինակ՝ գ բաղաձայնը հաջորդ ժ-ի հետ տալիս է գժաա, գժգմիլ, գժիո, գժաիլ բառերը, որոնց մեջ գժ օրինական է. բայց շ-ի հետ տալիս է գշկուր, որ օրինական չէ: Բայց բոլորն էլ ընդունված են լեզվի մեջ, որովհետև բաժանված են ք անդիր ձայնավորով: Այսպես նաև մլուսները: Կան բառեր, որոնց մեջ երեք բաղաձայն կողք-կողքի են շարված և ժ կամ շ գտնվելով երկու տարբեր աստիճանի միջև՝ երկրորդի վիճակի մեջ են: Օրինակ՝ գժաիլ բառի մեջ ժ գտնվելով թրթռուն գ-ի և խուլ ա-ի միջև, կամ մեկին պիտի հետևեր կամ մլուսին: Հետևել է նախաձայնին, ուստի անկանոն է ա-ի համար: Սակայն վանկաբաժանումը ներելի է դարձնում այս անկանոնութիւնը (գրժ-աիլ): Նմանապես զշխոյ բառի մեջ, շ գտնվելով թրթռուն գ-ի և խուլ խ-ի միջև, հետևել է խուլին, ուստի անկանոն

է նախաձայնի համար: Բայց ներելի է և այս, որովհետև դ և շ բաժանված են ք ձայնավորով: Ռիշտ Եագահ, Ժլատ բառից ունենք ոշաուրյուն և ոժղուրիւն, որոնցից առաջինի մեջ ունենք մի թրթռուն և երկու խուլ, իսկ երկրորդի մեջ հախասարապես երեք թրթռուն:

Մյուս բաղաձայններից նախաձայն բ, ժ, հ, չ, ա միանում են միայն ժ թրթռունի հետ (ուստի առաջին երկուսը ձայնապես կանոնավոր են, մլուսները անկանոն), իսկ ք, ն, յ, շ, վ, փ և ք նախաձայնները միանում են միայն շ խուլ բաղաձայնի հետ (ուստի բոլորը ձայնապես կանոնավոր են, բացի յշ և վշ խմբերից):

Մյուս բաղաձայնները (ձ, ծ, ց, ա, գ, լ, դ, ջ) նախաձայն լինելու դեպքում սչ կարող են միանալ ժ-ի հետ և ոչ էլ շ-ի հետ: Նախաձայն բաղաձայնների միացման մեջ կան մի քանի հետաքրքրական կետեր.—

դժ—բացասական մասնիկը, որ ծագում է պարսկերեն ժաշ ձևից, կցվում է ամեն տեսակ բառի հետ: Եթե կցված բառն սկսում է ձայնավորով կամ թրթռուն բաղաձայնով, սչ մի անպատահութիւն չի ծագում: Սակայն երբ կցված բառը սկսում է խուլ բաղաձայնով (ինչպես՝ դժկամակ, դժկերպ, դժպիլ, դժպատեհ), առաջ են գալիս թրթռուն—խուլ խմբեր: Հայերեն լեզուն մարսում է այս անպատահութիւնը, որովհետև դժ- կազմում է առանձին վանկ և չի միանում հաջորդ բաղաձայնի հետ: Ավելի ուշ, երբ առաջացավ նոր ձայնաշրջութիւնը և ա հնչվեց ժ, դժ- մասնիկն էլ գրիչներն սկսեցին երբեմն գրել աժ-: Այսպես առաջացան աժգիւն, աժգոն, աժգոյն ձևերը, որոնք մինչև իսկ հին երկերի մեջ մուծվեցին: Այսօր էլ արեւմտահայեր թեև գրում են դժբախտ, դժուար և այլն ձևերը, բայց միևնույն ժամանակ ունեն աժգոյն և այլն. օրինակ՝

Եթե աժգոյն մահու հրեշտակ
Անհուն ժպտով մ'իջնե իմ դեմ... (Պ. Դուրյան):

ԲՇ ձայնախումբը դառնում է բառակցում չ՝ միայն մի բառի մեջ. այն է բշուառ > չուառ: Ուրիշ տեղ նման փոփոխութիւն չի գտնվում հայերենի մեջ:

(Երեք բառ ունենք (թշվառ, թշնամի և թշնամանել), որոնց մեջ իրաներեն ժաշ- մասնիկը հայերեն դժ դառնալուց հետո, դ ազդվելով հաջորդ շ-ից, վերածվել է ք-ի):

Բառակերչում ժ և շ կարող են գտնվել միայն ձայնավորից և երկրորդաբայից հետո: Բաղաձայններից հետո բառակերչում ժ և

2 գործընթացն չունի, բացի ր-ից, որի համար ունենք հետևյալները, րծ.—ախործ, ...մերծ, յաւերծ, շարծ, վարծ, կարծ, տուրծ (իմա՛ւ առյծ):

րշ.—բարշ (բաշ), շղարշ, գարշ, գորշ, գուրշ, լպիրշ, խարշ, խորշ, կարշն, քարշ

Սրանցից մի քանիսն արդեն կարող են գրկվել նաև ր-ից (ինչպես յաւեծ, կած, տուծ, բաշ, շղաշ, գոշ, խաշ, քաշ):

Զվարճալի է հանդուրժել բառի բացասականը, որ ոչ միայն տալիս է անհանդուրժել և ր-ի անկումով անհանդուրժ, այլև տառափխալով անհանգոյժ «հոգնած»

Գալով այն դեպքերին, որ բառավերջի ժ կամ շ ձայներին հաջորդում է մի բաղաձայն կս, այստեղ ունենք միայն նախերեց մ, ն, շփական խ և պայթականներից էլ պ, կ, ա: Ուրիշ բաղաձայն չկա: Ահա սրանց օրինակները.

մ.—այժմ, աշմ «հասպիս», գրոշմ, հաշմ, քաշմ.

ն.—բամբիշն, դաշն, խաշն, կարշն, յանգուշն.

պ.—գուշպ.

կ.—բեշկ, բժիշկ, լեշկ, մաշկ, մուշկ, չմուշկ.

տ.—խիշտ, խուժոց, կոշտ, կուշտ, հրածեշտ, ուիշտ (ոինդ) և այլն (մյուսները տես վերը շա ձայնախմբի մեջ):

խ.—բաշխ, բարաշխ, բղեշխ, երաշխ, (ս) տաշխ, վաշխ.

Մի քանի դեպքեր կան, երբ ժ և շ փոխանակում են իրար կամ նաև զ, և բաղաձայններով: Բայց որովհետև այս կարգի բառերի մեծ մասը անհայտ է ստուգաբանությամբ, ուստի հայտնի չէ նաև, թե ո՞ր ձևն է նախնականը և ո՞րն է ամանցականը:

ժ=շ, զ.—1. լածուարդ, լաշուարդ, լանվարդ, լազվարդ (բոլորն էլ պարսկերեն և արաբերեն համապատասխան ձևերից առնված):

2. շրեշ (շրեծ, շրեզ). բուն ձևն է պարսկերեն širēš, բայց կա արաբերեն s և քրդերեն z վերջավորությունը, որոնցից ազդվել է նաև հայերենը: Արդի բարբառներում մեծ մասամբ շ, շտ վերջածայնով, իսկ Մշ. Տիգ. -զ:

ժ=զ.—խեծ (խեզ), կռեծ (կռեզ).

շ=ժ.—աւիշ (աւիժ).

շ=ս.—սոնիճ, սոնիզ (առաջինը պահլավերեն *sōnīč > պարսկերեն sōnīz ձևից, երկրորդը արաբերեն šūnīz ձևից):

3. շականջել, սականջենի լրսել».

4. խոշտար, խոտար, «ախտ» (երկուսն էլ պետք է ուղղել խոտակ > պահլավերեն xvāstak).

5. բարշիշ, բարսիս «մի տեսակ ազնիվ քար». առաջինը ասորերեն taršīš, երկրորդը հունարեն θαρσίς ձևից.

6. շափիւզայ, սափիբայ «մի տեսակ ազնիվ քար». առաջինը ասորերեն sapilā! ձևից, երկրորդը հունարեն θαπφειρος.

7. սոնի (շոնի), ասափնան (աշափնան), աստուն (աշտուն). սրանց մասին տես ս տառը:

8. տատասկ, տատաշկ, տատաշ (վերջին երկուսը ժողովրդական ձև):

շ=ժ ձայնափոխության երկու հետաքրքրական օրինակ էլ ունենք, սրանց վրա արժի կանգ առնել:

Առաջինն է շարծ > ժած. սրա հնագույն ձևն է շարծ. ալիլի ուշ ր կորչելով դարձավ շած, վերջածայնը ազդելով նախածայնի վրա՝ ժած. սրա համեմատ էլ շարծք > ժածք, շարծիլ > ժածիլ:

Երկրորդն է շարծիլ: Սրա հնագույն և հարագատ ձևն է շարշիլ «պատաստել, ծվտանել», որ երկու անգամ գործածված է Մարկոս Թ 19, Դուկաս Թ 42 = հունարեն σπαράττω համանիշի զեմ: Այս ընթերցվածն ունեն էջմիածնի հնագույն Ավետարանը (Ձ 363) և Մոսկվայի Լազարյան ձեռագրանի Ավետարանը: Ավիլի ուշ շարշիլ բառը կորչելով, գրիչները հասկացան շարծիլ «ցնցել», որ իմաստով էլ շատ հարմար էր տեղին, և սկսեցին բոլոր ձեռագիրների մեջ էլ մտցնել սույն անգո ձևը: (Այս մեկնությունը տալիս է Meillet, JAs., 1903 (2), p. 505):

Այս բոլորից հետո հիշենք, որ ժ և շ ձայների փոփոխություններ և տարբերություններ առաջանում են երբեմն տառաձևերի շփոթության պատճառով. այսպես՝

կակծիրակ, գրված է նաև կակծիրակ. սխալ ձև, որ առաջանում է բոլորդիր կամ շղազիր ժ—ժ տառերի նմանությունից. երկաթազիր գրչություն մեջ ժ և ժ նման սխալ շպիտի առաջացնելին:

կառածուղ «մժեղ». գրված է նաև կառածուղ ձևով. և հայտնի չէ, թե սրանցից ո՞րն է ստույգ ձևը, ո՞րը վրիպակ:

Գզշուռ կամ գզշուռ «շատախոս» ընտիր բառ է (Ոսկերեբան, Ա Տիմոթէոս, 92), բայց ձեռագրի գրչությունն անորոշ լինելով, նույնիսկ բառի ստույգ ձևը հայտնի չէ:

Կարշովից «արմատով միասին», որ կա գրված նաև կարնովից, բայց պետք է ուղղել կարնովից. արմատն է կարնից զբուսի արմատս:

մերուզան կամ մերուշան «մի տեսակ ծաղիկ» (Երզնկացի, Քերականութիւն) երկու ձևերից մեկը սխալ է. բայց որովհետև Համամ, Քերականութիւն (էջ 258, Ազոնցի հրատ.) գրված է միայն մերուշան, ուստի ստույգ ձևը ա՛յս պետք է դնել:

Վօտաշոււա. սխալ գրչութիւն (Գ Մակարայեցիք, Ե 4), փոխանակ Վօտալոււա, որ ծանոթ է այլուստ:

Չիշք «ծոծրակ», որի սխալ գրչութիւնն է Չիւք և իբրև առանձին բառ մտել է բառարանի մեջ:

շոն, չոնի «սոճի ծառը», սխալ գրված չօծ, որ իբրև առանձին բառ հիշում են ՆՀԲ և ԱԲ:

ջաշանք. անստույգ բառ, որ ունի նաև ջալհանք ընթերցվածը. հայտնի չէ, թե ո՞րն է ուղիղ:

ջոշիք, սխալ գրված նաև ջոխիք, ուղիղ ձևն է ջօշիք, որ է արաբերեն jāvšīr «մի տեսակ ծառ և նրա խեժը» (տես Արմատական բառարանում՝ ճօշիք):

սարաշուն «կնգուղ, վեղար», ունի միայն ԱԲ. սխալ գրչութիւն, որ պետք է ուղղել սարաղուն, իբր պարսկերեն sarāγū (ափելին տես Արմատական բառարանում):

ի > ղ

Երևանի և մի քանի այլ բարբառների մեջ սխալ դարձել է սղալ, և այս ձևը գտնում ենք նաև միջին հայերենում: Պատճառը հայտնի չէ. և տարօրինակն այն է, որ փոխանակ խուլի՝ խուլի հետ թրթուուն է գրվել, որի պատճառով էլ ոմանք հնչում են զղալ:

ի > ս

Այս երևույթը ցույց են տալիս միայն մի քանի բառ, այն է՝ գրախոս > գրասա, տախտակ > տաստակ, բարբախտ > բարբաաստիկ.

Գալստական մատասեղ «մեծ ասեղ» (Մալաթիա, Միլլրի-հիտար) իմ Գալստական բառարանում մեկնում եմ մասա «հասա, մեծ» բառից. ստուգելի է սակայն, թե մասա առանձին գոյութիւն ունի՞. երևի այդ բառը պետք է մեկնել մախթասեղ, մախարասեղ, ինչպես ունի Ղարաբաղի բարբառը (տես Գալստական բառարան):— Մի քանի մալաթիացիների գիմելով ստուգեցի, որ մասա առանձին չունի գոյութիւն (21 հունվարի 1951 թ.):

ի > ս գտնում ենք նաև խարիսխ բառի մեջ, որի հետին հայերեն գալստական ձև է սարիսխ (տես Արմատական բառարանում խարիսխ բառի տակ):

կ, գ > յ

Այս ձայնափոխութիւնը, որ գտնում ենք Պոլսի բարբառում (անկանիլ > իյնալ և այլն), Վանի բարբառում (խից > խիյ) և այլն, գտնում ենք նաև ֆրանսերենում, ինչպես՝ agnus > agneau (անյո) dignus > digne (դինյը) և լայն չափերով թուրքերենում, ուր գրւվում է ց և հնչվում ց. ինչպես՝ > deger > deyer «արժի», > degnek > deynek «գավազան» (արեկլան թուրքերեն daganak):

ն

ն միանալով նախորդ բաղաձայնի հետ, տալիս է շնչեղ խուլ) ինչպես՝ ընդձանուր > ընթանուր, սեպհական > սեփական, ամպնովանի > ամփովանի:

Երկրորդը մինչև անգամ անցել է գրավորի մեջ, մյուսները հնչվում են այնպես, բայց սովորութիւն չէ հղած գրել:

Գալստական ձևեր են՝ ախալ, էխալ, փոխանակ իւղհալ, եղհալ «մեջը լուղ հալեցնելու փոքր տապակ» (իւղ կամ եղ + հալ բառերից):

ախացք «մեծ պաս», առաջացած աղուհաց, կրճատ աղհաց բառից:

Այս երկուսի մեջ էլ ն միանալով նախորդ դ-ի հետ՝ դարձն է իս:

բ բաղաձայնից հետո, մանավանդ ք-ից առաջ, ն չի հնչվում. օրինակ՝ շնորհք > շնօրք, աշխարհք > աշխարք, արհամարհել > արհամարել, օրհնել > օրքնել:

Բառակցքում ն գտնվում է հետևյալ բաղաձայններից առաջ.

- դ.— հղնի.
- զ.— հզօր.
- (ժ.— հժկու).
- լ.— հլու.
- ծ.— հծծել.
- մ.— հմայել, հմտութիւն, հմուտ.

ն.—հնանալ, հնազանդ, հնար, հնգեակ, հնդիկ, հնձան, հըն-
ձել, հնոց, հնչել.

պ.—հպիլ, հպատակ, հպարտ, հպտանք.

ռ.—հռասափ, հռետոր, հռիգայտղ, հռնչել, հռոզ, հռչակ.

ս.—հսկայ, հսկել.

տ.—հապիտ.

բ.—հրաման, հրապոյր, հրաւեր...

Պակասում են ուրեմն բ, գ (ժ), խ, կ, հ, ձ, ղ, ճ, յ, շ, չ, ջ, շ, վ, ց, լ, փ, ք:

Ինչպես կանանք, յ-ից հետո գալիս են միայն ղ և ս բա-
ղաձայնները. և իրոք հ+ղ չկա. բայց կարևոր է դիտել նաև, թե
հ+ս գտնվում է միայն հսկայ և հսկել բառերի մեջ, որոնք կան
նաև սկայ և սկել ձևով, որով հայտնի է լինում, թե սրանց մեջ հ
զորացուցիչ մասնիկ է, ինչպես հլու, հմուտ, հզօր, հպարտ, հուժ-
կու բառերի մեջ:

Յուցակից երևում է, որ խիստ քիչ են բ, գ, հ, մ, պ բաղա-
ձայնները յ-ից հետո. իսկ խ, հ, ձ, շ, վ, լ, փ բնավ չկան: —ք
գտնվում է հոգնակիի մեջ:

ղ = լ բաղաձայնի մասին տես լ—ղ:

ուտն և հետք, ողողել և հեղուլ բառերի համեմատությունից
հետևում է, որ հնդեվրոպական նախալեզվի ք բառակցում է ձալ-
նավորից առաջ գտնում է հ, իսկ ո ձայնավորից առաջ շնջվում է:

Այսպես չէ սակայն s, որ ամեն տեսակ ձայնավորից առաջ
էլ շնջվում է, ինչպես ցույց են տալիս ամ, աղ, եւքն, եփել:

Բայց հին բառի մեջ հնդեվրոպական նախալեզվի s-ի դեմ
ունենք հ. նմանապես հում բառի սկզբում կա մի ավելորդ հ, որ
չկա հնդեվրոպական նախալեզվի ḡmo-ձևի դեմ: Արդ, Մեյն հարա-
դեալ (MSL 21, p. 187) համեմատելով այս երկու բառերը իրա-
նական ձևերի հետ (զենդերեն hana, պահլավերեն han=հին պարս-
կերեն xām և բելուճերեն hāmag=հում), ենթադրում է, թե հա-
լերենը նախաձայն հ ավելացրել է նմանությունը իրանական ձևի,
ինչպես ֆրանսերենում լատիներեն altum>*aut գարձել է haut
«բարձր», գերմաներեն hoch բառի նմանությունը:

Հնդեվրոպական s բաղաձայնի դեմ հալերեն հ գտնում ենք
նաև հ նախամասնիկի մեջ (հլու, հմուտ), որի հետ նույն են
սանսկրիտ su-, իրաներեն hu-, հին իւլանդերեն so «լավ»: Թեև
հզօր ամբողջապես փոխ է առնված իրաներեն huzavr ձևից, բայց
կարելի է ենթադրել, թե հալերեն հմուտ, հլու բառերի մեջ էլ

հ նախամասնիկը փոխառյալ լինի իրանականից: Անշուշտ նա բնիկ
է, ինչպես հին իւլանդերեն so ցույց է տալիս և ինչպես կա հա-
լերեն ա- բացասական մասնիկը, նույնպես բնիկ հալ:

Այս դատողություններն անհրաժեշտ Մեյն ենթադրում է,
որ հնդեվրոպական նախալեզվի su ավել է հալերեն ու, որի վրա
ավելացել է հետո հ, համապատասխան իրաներեն hu- նախա-
մասնիկի ազդեցությամբ:

Հալերենի մեջ ունենք նաև ամ- մասնիկը, որի հետ կա նաև
համ.—այսպես համբառնամ և համբերեմ և ստալինի դեմ էլ ամ-
բառնամ: Դժվար է ասել, թե այնպիսի բնիկ հալ բալերի վրա,
ինչպես են բառնալ և բերել, կարելի եղած լինի կցել իրանակա-
նից փոխառյալ մի մասնիկ: Բացի սրանից ամ- մասնիկը ցույց է
տալիս սանսկրիտ su- և հին սլավերեն sŭ-մասնիկների դեմ ձալ-
նաբանորեն սպասելի ձևը: Մնում է ընդունել, թե ամ- մասնիկը
բնիկ հալ է, որ ապա իրանական ham- մասնիկի նմանությունը
դարձել է համ-:

Կան ուրիշ բառեր էլ, որոնց սկիզբը դրված է հ հավելվածը.
այսպես հանի, հաւ «պապ» և հաւ «թռչուն», հոտ, հացի, հողմ
և այլն: Այս հ-երից մի մասը սաստկություն համար է, մի մասը
իրար նմանությունը (հանիհաւ), մի մասն էլ թերևս իրանականի
նմանությունը:

հ ձայնը միավանկ բառերի մեջ, ո ձայնից առաջ գտնում է
Ֆ. ինչպես.

Հաճին. հոտ>ֆոդ, բայց հոտել>հիզել. հոդ>ֆոդ, հոր>ֆոյ:

Քզի. ֆոդ, ֆորք, փոխանակ հոդ, հորք:

Նախորդ խլի հետ տալիս է թավ, ինչպես՝ սեփական ըու-
թանան (սաստկության):

Երբ ո ձայնավորին հաջորդի վ, մնում է անփոփոխ. ինչպես՝

Հաճին. հով>հով:

հ գտնում է խ, երբ հետո կա ղ ձայնը. ինչպես՝

հող>Պոլիս խող, Համշեն խեղ.

հօրեղբորկին>Համշեն խողորգին:

Հին իւլանդերենում h ձայնը համար է և հաճախ իբր գարդ
դրվում է նախաձայն ձայնավորի վրա. ինչպես՝ ed-hed, in-hin
(Pokorny, Altir. Gramm. 13):

հ>խ. հմմտ. h ձայնը v-ից առաջ դարձած x պարսկերենում,
ինչպես՝ huška>պարսկերեն xušk «չոր», նաև > xarār և այլն:

Կազակ-կիրգիզ լեզվի մեջ և ձայնը չի հնչվում. ժողովուրդը չգիտի այն, ուսումնականներն են, որ հնչում են և. օրինակ՝ šahar, ուսումնականը՝ šahar, ժողովուրդը՝ šaar կամ šar (Лантев, Матер. по казак-киргиз яз; 1900, стр. 84):

ձ

Թյուրքինդների ձևադրերի ցուցակում (էջ 130, Ма XIII 93 թույլթ 269բ—270ա), գրչության թվականը անհայտ է, ձ-ի մասին կա հետևյալ հետաքրքրական նշումը.

Հարց.—Վասն է՞ր ի Հաւատամքն ձայ անուն գիր չկայ:

Պատասխանի.—Նիկիտ սուրբ ժողովն ՅԺԸ (318) հայրապետացն, որ զՀաւատամքն հաստատեցին... (գժբախտարար շարունակութունը չի գնում): Նույնը տես և Ձեռ. Վեներաբիլի, Բ, 1010, բայց պատասխանը չի գրել Սարգիսյանը:

Իրոք որ համեմատեցի ամբողջ Հաւատամքը, բայց ձ և ժ տառերը չկան:

լ — ղ

Հայերենի նման լատիներենն էլ ուներ երկու տեսակ 1.

1. l exilis (որ էր prépalata) = նախաքմային, նման Ֆրանսերեն 1-ի, և անշուշտ մի քիչ ավելի քմային, այն է՝ խառնված y-ով, երբ կրկնված էր ll, հնչվում էր ալդպես:

2. l pinguis (այն է l vélaire), որ նման էր ուտերեն, լեհերեն l-ին, և բաղաձայնի մոտ գտնվող անդլերեն l-ին. ալսպիսի l գտնվում է մեծ մասամբ բաղաձայնից առաջ l exilis էր i-ից առաջ և կրկնված գեպքում. իսկ pinguis էր a, o, u ձայնավորներից և բաղաձայններից առաջ:

Հաստ 1-ի ազդեցությունը o-ի վրա այնքան մեծ է, որ մինչև իսկ սկզբնական վանկում, oի- բաղաձայնի առաջ դառնում է ul. օրինակ colo > cultus (տես Meillet, Traité, 75):

Նույնն է հայերենում, ինչպես՝ Բարթուղ, Բարթող:

Լեհերենն էլ ունի երկու տեսակ l (փափուկ) և l (հաստ). օրինակ՝ lampa (կարգա՝ l'ampa) «ճրագ», lud (l'ud) «ժողովուրդ», lwica (l'wica) («էգ առյուծ»):

l ձայնը հայերեն նոր բարբառներում շեշտից հետո գրված ժամանակ ջնջվում է. օրինակ՝

Պոլիս, ես ալ > b'u ա, դու՛ն ա, ա՛ն ա, վե՛րն ա կա և այլն:

Կարին. տեսել եմ—չեմ տեսել, չեմ կերել, չեմ բերել:

Նման երևույթ կա նաև սերբերենում, ուր l ձայնը հաճախ ջնջվում է. բառավերջում ջնջվելով նա տալիս է o, որ հույժման կամ անանցման ժամանակ նորից դառնում է l. օրինակ՝ сò «աղ», սեռական соли. стол, սեռական стола «սեղանի» և այլն (Беленький, 7):

ղ

Ղ-ի հնչման ժամանակի մասին ուշագրավ է, որ Աթոսի վրացական Ս. Գրքի ձևագիրը, որ գրչագրված է 978 թվականին Երգ Երգոց Զ 12-ում, ունի uduřameli, որ առնված է հայերեն ողողմացի ընթերցվածից, փոխանակ Սոմնացի, որ սովորական է ուրիշների (Euringer, «Հանդէս ամսօրեայ», 1927, էջ 623):

Թամիլերենում բառակցքում ինչպես r, նույնպես և l ստանում է միջախորհ հենարան և ձայնավորը. օրինակ՝ սանսկրիտ lo-ka «աշխարհ» > թամիլերեն ulogam (Caldwell, 144):

Պեղերսերն (KZ 39, էջ 354) ցույց է տվել, որ հնդեվրոպական նախալեզվի ln դառնում է հայերեն ղն, որը հետո վերածվում է ղղ. և որովհետև հայերենը չի սիրում կրկնակ բաղաձայն, սասի ղղ դառնում է ղ: Ըստ այսմ Մելեն (MSL 19, p. 179) հայերեն նեղ-ում գնում է հնդեվրոպական նախալեզվի pelnu ձևից, որ առաջացել է pel- արմատից անբուն (athématique) ներկայի pelu-ձևից, որ ոչ մի տեղ պահված չէ. հայերենն էլ պահել է այն՝ միջամասնիկ -n- հավելումով:

ղ բաղաձայնը հնապես հնչվում էր թավ l և ամենեկին արդի ղ հնչումը չունենր: Սրա ապացույցն այն է, որ մի կողմից օտար բառերի l ձայնը հայերեն դառնում է ղ, ինչպես՝ Ղազար, Ղուկաս, սիղղոբայ, ողիմպիաղ, ողոգոմեան:

Մյուս կողմից, ուրիշ լեզուների ղ ձայնը չի դառնում հայերեն ղ, այլ գ. ինչպես՝ նրազ < պարսկերեն čirač, տէգ < պարսկերեն tič, մոզ < պարսկերեն muč, მოչ, պահլավերեն moč:

Մեր բարբառներում պատահում է երբեմն, որ երկու ա ձայնավորի միջև գտնված ղ այնպես թուլ է հնչվում, որ արդեն ջնջվում է: Այսպես, իսաղալ բառը Պոլսի բարբառում անփույթ արտասանության մեջ դառնում է իսաալ:—Ու՞ր կ'երթաս.—Պաալու: Հատկապես թուրքերեն աղա պատվանունը, չափազանց հաճախ գործածության և կոչականի շեշտից հետո գրվելու պատճառով, կորցնում է միջաձայն ղ և աղա դառնում է Պոլսի բարբառում աա.

կարապետ աա, Յակոբ աա: նույնը ավելի զարգացած է նոր նախնիքների բարբառում, որ այս աղա պատվանունը դառնում է միայն մի ա. կարապետ ա, Գիրքոր ա և այլն:

Միջաձայն ղ-ի այսպիսի ջնջման օրինակներ կան նաև որիշ լեզուներում, որոնց մեջ նույնիսկ ց անցնելով Կ-ից, ջնջվել է:

Այսպես, օրինակ, ἐγώ, ἐγών գերանունը բնովաական բարբառում շատ վաղուց դարձել է ió, ión, անշուշտ անցնելով Կ=Պ հնչյունից: նմանապես գորիական բարբառում ὄλιγος շատ տեղ դարձել է ὀλιγός, անցնելով oligos ձևից: Հին գերմաներեն hiutagu դարձել է hiutu = գերմաներեն heute «այսօր», անցնելով g > Կ արտասանությունից (Meillet, MSL 19, p. 117): Ալավականում էլ togo գերանունը անցել է toγo հնչման, ինչպես գտնում ենք ուրախներենում, չխներենում և սորաբերենում, իսկ սուսերենում Պ հնչյունը չգանվելու պատճառով դարձել է tavo. թուրքերենում էլ հին ձևն է toguq, ապա դարձել է tovuq, որոշ բարբառներում էլ toux, որ Կ ջնջվել է:

Բառավերջում երբ լսվում է լ (l) ձայնը և նրանից առաջ կա մի բաղաձայն (բացի յ-ից), գրվում է միշտ ղ. օրինակները հետևյալներն են. աևզղ, աևկղ, աստղ, արկղ, ետղ, եւղ, կոնղ, շիզղ, իզղ (կնիք), սիկղ (կշիռ), սիկկղ (կերբերոս, դժոխքի պահապան շունը), սիաղ (մետաղյա դուլ, լատիներեն situla, թուրքերեն սիթիլ), սկուաղ (սկուանդ, ափսե):

Այս օրենքը աֆրիկա հաստատուն է, որ նույնիսկ օտար հատուկ անունները հետևում են նրան. այնպես՝ Պրոկղ; Հերակղ. ավելի ուշ, XIII դարում, այս օրենքը վերացավ և նորմալ բառերը գրվեցին լ տառով, միջասանմանն է կազմում Սմբատ Գունդատաբլը (վախճանված 1276 թվականին), որի տիտղոսը գրված կա նաև Գունդատապղ ձևով:

Դիտելու արժանի է, որ Կորյուն պատմիչը վրաց գրերի մասին խոսելիս, հիշելով վրաց Աբշիլ թագավորին, նրա անունը գրում է Աբսիլ: Այստեղ չ-ի փոխարենն ձ անշուշտ առաջացած է երկաթագիրն ձ և չ տառերի նմանությունից, իսկ իլ դարձել է իւղ և ոչ թե իւլ, որովհետև հայերենում իւլ վերջավորությունը բառ չկա:

Բառակզրում հայերեն ղ չկա, այլ միայն լ. բառավերջում կա նաև ղ. երբ ղ գտնվի բառակզրում, կպահանջի ձայնավոր իր ը հենարան. այսպես են եղբայր, աղբիւր:

լ կարող է գտնվել միայն սկզբում, բառամիջում և բառավերջում ձայնավորի մոտ. բաղաձայնի մոտ գտնված ժամանակ վերածվում է ղ-ի. ինչպես՝ աիլ—աիղմ, գօլ—գաղջ:

Բայց ղ կարող է գտնվել նաև ձայնավորի մոտ. այս օրինակներից շատերը նմանություններ ընդհանրացրած ձևեր են. այսպես՝ եղն ձիշտ ունի ղ՝ բաղաձայնի մոտ. բայց սեռական պիտի լիներ *եիլն. նմանությունը դարձել է եղին և այլն:

Հյուսիսային կովկասյան լեզուների մի հատկությունն է կողքային բաղաձայնները վերածել լեզվերեսայինի (dorsal-ի. vélaire, ultra-vélaire, prépalatale և այլն). օրինակ՝

ավարերեն l°ab, գոգորերի l°abu, արճի l°iba, ուտիերեն xib, սուտուլերեն x'ibu, աղուլերեն x'ibu, որոնք բոլորն էլ նշանակում են «3».

ավարերեն mal°, անդի mul°a, լակերեն mix', ուտիերեն mux «եղունգ»:

Այս երևույթի վրա առանձին հոդված ունի Troubetzkoy, BSL 23, p. 188-204, որ ի վերջո երևույթը համեմատում է հայերեն ղ > Կ ձայնափոխության հետ: Այս ձայնափոխությունը չի կարող առաջացած լինել, ասում է նա, l > w > Կw > Կ ընթացքով, որովհետև միջին ընթացքը (Կw կամ w) պիտի գրված լիներ ձևապահում: Ուստի ենթադրում է, որ հայերեն l դարձել է Կ, անցնելով spirante latérale sonore l-ի միջոցով, ազդեցությունը կովկասյան մի լեզվի, թերևս աղվանից, որ ազդակից է Գաղստանի լեզուներին:

Բաղաձայնից առաջ պարզ l-ի վերածումը կատկային l-ի նկատելի երևույթ է նաև որիշ լեզուների մեջ. այսպես լատիներենում և հին կրեաական հունարենում:

Այս ղ կարող է ազդել նաև նախորդ ձայնավորի վրա. ի փոխվում է ե-ի. ինչպես՝ *ասիղն (սեռական աղան) > ասեղն. կամ իւ, ինչպես՝ իւղ (հունարեն ἔλαιον), աշխարհարար եղ ոչ *իղ):

յ կիսաձայնից հետո մնում է միշտ լ, թեև գրվում է նաև ղ. ինչպես՝ ալլ—ալղ, գալլ—գալղ. բայց որովհետև արդի բարբառներում ոչ մի տեղ չկա ալղ, գալղ հնչումը, ուստի այս բառերը հնչվում էին միշտ լ-ով:

Այս պարագային յ կարող է դառնալ ղ. ինչպես նշուլլ—նշող: իւ երկարաբառից հետո l ձայնը գրվում է միշտ ղ և ոչ բնավ լ. այսպես են՝ իւղ, զամբիւղ, գիւղ, լիւղ, անկիւղ, երկիւղ, հիւղ,

ընձիւղ, ճիւղ, շիւղ, քիւղ (այս բառերը հիշում է Ս. Փալֆայիանի Յանգարանը, էջ 224, իսկ -իւլ հանգով ոչ մի բառ չունի):

ւ > վ

ւ > վ Սարգեղի բարբառում. այսպես՝ թառուվառ «ցրված», նըվոթիկ «ճամփիկ»:

յ

յ կիսաձայնը երեք դիրք ունի. նախ գտնվում է բառասկզբում իբրև բաղաձայն, երկրորդ՝ ա ձայնավորից հետո, երրորդ՝ ո ձայնավորից հետո. վերջին երկուսը կազմում են երկբարբառ, որ կարող է գտնվել բառի թե՛ սկիզբը, թե՛ մեջը և թե՛ վերջը:

ե, է, ի, ը, ու, օ ձայնավորից հետո չի կարող յ գտնվել:— Նոր լեզվին հատուկ ձայնարկություն է է՛յ=նէ՛յ, և թէյ գոյականը, որ եվրոպական չէ՛ բառի վրայից է կազմված և ստացել է յ վերջածայնը՝ չչփոթվելու համար թէ (թե) շաղկապի հետ (թերևս ազդվելով չայ հոմանիշի վերջածայնից):

Բառասկզբում յ գտնվում է ընդհանրապես ձայնավորից առաջ. իսկ բաղաձայններից ունենք միայն դ, շ, ս, այսպես՝ յղանալ, յղել, յղի, յղիկ, յղփանալ, յշտող=յըշտող «լիրք»?, յստակ:

Մրանցից երկրորդը անստույգ բառ է. իբր սղված գրչություն ունենք նաև յաուր (փոխանակ յուռուր), որով մնում են միայն դ և ս:

Այս վերջին կեսն ունի ուղղագրական արժեք. այնպես որ, եթե լսենք բառասկզբում հի, հմ, հո, հր, հք և այլ այս կարգի ձայններ (բացի յղ և յս), պետք է ուրեմն գրել անպատճառ և բաղաձայնով:

Բառամիջում կամ բառավերջում, այ, ոյ երկբարբառներից հետո գտնում ենք միայն հետևյալ բաղաձայնները՝

բ.—այբ

գ.—այգ, գոյգ, առոյգ

դ.—այդ

զ.—յոյզ, ընկոյզ, ողկոյզ

թ.—ցայթել, հառագայթ, որոգայթ, փոյթ

ժ.—այժմ, յոյժ, ժոյժ, բոյժ

լ.—այլ, փայլ, յոյլ, բայլի

ծ.—այծ, ոյծ, բոյծ, լոյծ

կ.—բակոյկ, խարոյկ, մակոյկ, պարոյկ

ղ.—հայղ, լոյղ

ն.—կայն, պահոյն

մ.—կայմ

ն.—այն, ձայն, լայն, նոյն, գոյն, թոյն

շ.—զգոյշ, աճոյշ

պ.—այպն

ա.—գայա, քայա, ժայա

ս.—այս, հայս, յոյս, լոյս

տ.—այտ, փայտ, կոյտ, պտոյտ

ր.—այր, հայր, վայր, քոյր, յոյր, կոյր

ց.—այց, հայց, բայց, ոյց, ցոյց, հանգոյց

յ կիսաձայնի ձայնափոխությունը ընթացքը հայերենում կարելի է ամփոփել հետևյալ ձևով.

Ամենահին ժամանակներից սկսած, հայերենում ե, է, ի, ու (նաև ը) ձայնավորներին հաջորդող յ կիսաձայնը կորչում էր. հատկապես եյ ձայնախումբը գաճում էր է. որով ասեյ, բերեյ ձևերը գաճում էին ասէ, բերէ. ըստ այսմ այժմ հայերեն է վերջացած բառերի է ձայնը ներկայացնում է հին եյ:

ա և ո ձայնավորներից հետո յ մնում էր, որով ստացվում էին այ, ոյ երկբարբառները:

յ կիսաձայնի անկումը սկսվեց նախ բառավերջից. այնպես որ քահանայ, սատանայ, շրթայ և այլն շուտով դարձան քահանա, սատանա, շրթա: Այս անկումն արդեն գոյություն ունի IX դարում, ըստ որում Լաղարյան ճեմարանի Ավետարանում (887) գտնում ենք արդեն դրա օրինակները:

Բառամիջում յ կիսաձայնի անկումը շատ ավելի ուշ է. Կիրիկյան շրջանում, բայց միայն Արևմտյան Հայաստանում գտնում ենք հայր, մայր, քոյր > բույր ձևերի դեմ հար, մար, բուր, իսկ Արևելյան Հայաստանում այ երկբարբառը երկու տարբերի միացմամբ գաճում է է. հէր, մէր և այլն:

Բառասկզբի յ բաղաձայնի թուլացումը սկսվում է հենց V դարից (կամ ավելի շուտ). ըստ որում ունենք յոզոզոզ բառը, որ կրկնված է յոզ արմատից. և որի նախաձայնը կրկնություն ժամանակ ընկած է: Սակայն ընդհանրապես նախաձայն յ չեռ իր բուն հնչումը (y) պահում է, ինչպես ցույց է տալիս վրացերեն իաաակի «տախտակամած» (Հայերեն յաաակ ծագած լինելով հնդեվրոպական նախալեզվի բձձ- «ոտք» արմատից, հաստատ է, որ վրա-

Ձայնավորից հետո *п* կարող է միանալ և առաջին *ն*-ը պահպանել արտասանությունը. այսպես են լատիներենի բառերը ֆրանսերենում: Ապագային այս *ն*-ը պահպանելու ձայնավորն էլ կարող է կորցնել իր *ն*-ը պահպանությունը և դառնալ բերանային. այսպես՝ հին սլավոներենի վերջածայն *ն*-ը պահպանելու ձայնավորները նոր սլավոնական լեզուներում առհասարակ շնչված են, թեև տեղ-տեղ պահպանում են որոշ բարբառներում (այսպես, օրինակ, Մակեդոնիայի բուլղարական բարբառում):

Այն լեզուներում, ուր կան *п*-ի դանդաղան տեսակներ, այսպես, օրինակ, ճավայերենում և սանսկրիտում, *п* փոփոխվում է համաձայն հաջորդ կամ նախորդ բաղաձայնի. այսպես՝ ճավայերեն *п* դառնում է *м*՝ շրթնայիններից առաջ, *п* (*п'*)՝ քմակներից առաջ, *п'*՝ դանդաղներից առաջ, *пг*՝ կոկորդայիններից առաջ, և *п'*՝ առամիակներից առաջ. միևնույն *кап* տալիս է հաջորդ բառերի հետ միացման ժամանակ՝ *кап-čálá*, *кап-дар*, *кап-бабар*, *кап-кон* (Bohatta, Gramm. jav, 17):

п ձայնը բնկնում է ճավայերենում *w*, *y*, *r*, *l*, *s*, *h* բաղաձայններից առաջ (Bohatta, անդ):

Սերբերեն բարբառներում *m*, երբեմն էլ բառամիջի, դառնում է *n*. Ինչպես՝ *есмь* = *ya san* «եմ» (Кумбакинъ, Серб. яз. 40):

Այս դեպքում է *м*՝ *п*-ի մոտ. օրինակ՝ հունարեն *στίμ* *πολύ* կարգա *stim boli* (C. Capos, Gramm. gr, 4):

ն — դ

Ռնդակներից հետո թրթուռն աստիճանի գործածությունը այնքան սովորական է, որ նույնիսկ լեզվի մեջ հայտնի ողջագրություն ունեցող բառերը փոխում են իրենց ձևը և ենթարկվում են այս օրենքին: Այսպես, հին ձեռագրերում գտնում ենք անդառացի փոխանակ անառացիալ-ի (Ձեռ. Վենետ., Բ 749):

շ > ժ

Այս երևույթը գտնում ենք բարբառներում: Ամենալավ օրինակն է շարժ, որ դառնում է ամեն տեղ ժաժ. այսպես շարժ > ժաժ «երկրաշարժ», ժաժել «շարժել», Վանի բարբառում ժաժիկ «շուռ», որ ծագում է շարժիկ ձևից (խնոցու մեջ շարժիկուց). ժուռ գալ <

շուրջ գալ կամ շուռ գալ ձևից: Առաջինի մեջ շ գարծել է ժ վերջածայնի ազդեցությամբ, երկրորդի մեջ շ գարծել է ժ անշուշտ գալ (կատարյալը՝ եկալ) բայի ազդեցությամբ. հմմտ. գրագ գալ > ի գրաւ գալ, ուր *u* գարծել է *q* հաջորդ գալ բայի նախածայնի ազդեցությամբ:

Օսմաներեն շ կազակ-կիրգիզ լեզվի մեջ դառնում է *u*. Ինչպես՝ *baš* > *bas* «գլուխ», *beš* > *bes* «ծ» և այլն (Лаптев, Матер. по каз.-кирг. яз., 84):

չ

չ խառնվելով *q*-ի հետ, տալիս է *á*. այսպես, Ասորախանի բարբառով՝ *ի^ոնչ* գաղ > *ի^ոնáաղ* «ի^ոնչ բան»:

Կազակ-կիրգիզ լեզվում օսմաներեն չ դառնում է *š*. օրինակ՝ *č*, *ič* > *iš*, *üč* > *üš* «ծ» (Лаптев, Матер. по каз.-кирг. яз., стр. 84):

պ

պ միանալով *h*-ի հետ, տալիս է *ph*. Ինչպես՝ սեպհական — սեփական. այսպես նաև հունարենում, երբ կրճատման ժամանակ *χ*, *π*, *τ* պատահեն, * (*h*)-ի մոտ դառնում է *χ*: *φ*, *θ*, որ հնապես արժեքին *ch*, *ph*, *th*. օրինակ՝ *ὄπις ὀμῶν* > *οφ'ὀμῶν*, *κατα ἡμέραν* > *καθ' ἡμέραν*:

ջ > á

Սերբերի թաթարների մոտ *ջ* = *č* ձայնը հնչվում է *á*. օրինակ՝ *чак* *jan*, *áč* *նեկեթ*. Իսկ *č* հնչվում է *u*, օրինակ՝ *чак* *aras*. (Казем-бек, Грамм., стр. (7—8):

ր և ո (տես նաև ր)

Այս-ից առաջ *р* դառնում է *n*. օրինքը հայտնապես երևում է այն բառերի մեջ, որոնց հոլովման և ածանցման ժամանակ շփականը *н*-ի մոտ է գտնվում կամ հեռանում, ինչպես՝ գուռն — գրան, գուրք, գրացի. *á* *մեռն* — *á* *մերուկ*, *á* *մերայնոյ*. *յառնել* — *յարեայ*. *առնել* — *արարի*, *արա'*. *գառնալ* — *գարá*. *բառնալ* — *բարá*ի. *ընթեռնուլ* — *ընթերցայ*. *լեռն* — *լերին*, *ի* *լեռն*. *այր* — *առն*. *á* *մեռն* — *á* *մեր* — *րակալել*: Ըստ որում չկա հայերեն բառ, ուր գտնվի *րն* խումբը. բոլոր օտար բառերում էլ *րն* դառնում են *ռն*:

Այս օրենքը խախտում է միայն անալոգիայով. ինչպես՝ բեռն—բեռին, ջեռնում—ջեռայ, ձեռն—ձեռին, բայց ձեռքակալել. վերին—վերնոյ:

Հնդկականակեր, բառակազմում ր չկա. քիչ անգամ կա ու. ընդհանուր օրենքով ր-ով կամ ո-ով սկզբով ամեն բառ ստանում է և կամ ա հավելվածը (ալուպես է նաև բասկերենում, ըստ Karst, Gesch. d. Arm. Phil., 11):

Բաղաձայնից առաջ չկա ո, այլ ր. հմմտ. առիփ և աարփ. եղակի սեռական քեռ, հոգնակի քերք:

Այսպես նաև կրկնականի մեջ. սարսուռ, գրգիռ, բայց մըռ-մըռեմ:

Հունարենում էլ ր և երբեմն լ բառակազմում ստանում են մի ձայնավոր հավելում (ա և օ). ինչպես՝ ἐρυθρός=լատիներեն ruber, ἐλεός=լատիներեն liber, ἀλειφω «օծել» և մակրայ λιπα. ὀρέγω «ուղղել, ձգել»=լատիներեն rego և այլն. բայց կա օ, որի դեմ հայերենն էլ ունի հր-, ինչպես հրաման և այլն:

Բառակազմի ր-ից առաջ ձայնավոր հենարան են ստանում նաև թուրքերենը (օր. Rum>Urum), վոտյակերենը (օր. rum > urom քրիստոնյա), թամիլերենը (օր. սանսկրիտ raṣa > թամիլ. irāṣan) և այլն:

Բառակազմում բասկերենում և ճապոներենում ր չկա. այսպես նաև մոնղոլերենում, ուր բառակազմի ր ստանում է e, a, u հենարանը՝ ըստ հաջորդ ձայնավորի. օրինակ՝ ուսսերեն рама > մոնղոլերեն agama, рис > iris և այլն (Клюкин, 26):

Կորեերենում ր բառավերջում կամ ո-ի մոտ դառնում է ի:

Մանջուրերենում բառակազմում ր չկա (L. Adam, 20):

Ր-ից հետո չկա ց, չ, որոնք դառնում են ձ, ջ. օրինակ՝ դարձայ, բարձի փոխանակ դարցայ, բարցի:

Րհ, րշ խմբերի մեջ հաճախ ր ընկնում է. ինչպես՝ պարհել > պահել, մարհ > մահ, պարշտել > պաշտել, կապարիշա > կապաշտ:

Առհասարակ ր և ո ձայներն իրենց ինքնութուներ պահել են մեր բարբառներում. Տիգրիսի բարբառը ո վերածել է ր-ի (օրինակ՝ մեռնել > մերնել). այս երևույթը վրացիերենի ազդեցությամբ է ստաշացած, որովհետև վրացին չունի ո:

Հաճինի բարբառում ր դառնում է յ, իսկ ո դառնում է ր. այսպես՝ բայեվ (բարե), էլիյ (ալիւր), գայի (գարի), բոյրբոսել (բորբոսնել) բայց բոյրնել (բոսնել), բուր (բուռ, կուսի), բեր (բեռն), արնել (առնուլ), արոջ (առաջ):

Քղիի բարբառում ր դառնում է յ. օրինակ՝ մանյ, Մայիամ, բոնյին (մանր, Մարիամ, թոնրին):

Պարբերդի բարբառում ր դառնում է լ, ինչպես՝ նրագղիլ, կարժալ, մասուլ (ճրագղիլ, կարժար, մասուր):

Չահարմահալում տեղ-տեղ ր դառնում է յ, ինչպես Ա. Երեմյանի Չահարմահալի ժողովրդական բանահյուսությունից քաղած օրինակները ցույց են տալիս. ահայ (էջ 20, 21), վայրապես (20), մեյ «մեր» (22, 23), էյթանը «երթանք» (36), մոյթե «մորթիր» (61), հայս «հարս» (17), բույթ «բուրդ» (16). բայց շատ տեղ էլ մնում է անփոփոխ. ուստի պայմանը հայտնի չէ: Նույնպես և՛ բալուրի բարբառում, օրինակ՝ սուրս > սիյս (Նաթանյան, Արատուր, 58):

Բասկերենում ր այնքան բարակ է հնչվում, որ նման է մ-ի և երբեմն փոխանակում է նրան. օրինակ՝ erastea կամ edastea «խոսել» (Van Eys, 8):

Րս միասին դարձել են շ, ինչպես՝ հարսնիք > հաշնիք (էջ 12), սեռական հաշնի (էջ 50) (տես. Ա. Երեմյան, Չահարմահալի ժողովրդական բանահյուսությունը). բայց հարսն դառնում է հայս (անդ, 17):

Բերմաներենում հին ր դարձել է ց, այնպես որ այժմ թեև գրութայն մեջ դառնում ենք ր, բայց հնչվում է ց, միայն որոշ բարբառներում պահված է ր հնչումը (Latter, 12):

Բաղաձայն + ր խմբերը արտասանության հեշտության համար կարող են փոխել իրենց դիրքը. օրինակ՝

զենդերեն	çuxra «կարմիր»	>	պարսկերեն	surx
»	čaxra «անիվ»	>	»	čarx
»	vafra «ձյուն»	>	»	barf
»	vazra «լախտ»	>	»	gurz

(Darmsteter, Et. ir., I, 91—93):

Այսպես է նաև հայերեն սուրբ < subhra:

u = s

Կորեերենի մեջ բառավերջում s դառնում է t. սեամ > ջեմբ բառի մեջ շ առաջացել է այ խառնուրդից, ճիշտ ինչպես հին սլավոներեն s + y առլիս է ջ (Кульбакинъ, Серб. яз. стр. 34). օրինակ՝ հին սլավոներեն чесать-3-րդ դեմք ներկա *čes-jeti > чешеть.

носить—1-ին դեմք ներկա posjo>ношо (Лескинъ, Грамм. дре-
внб. яз., 84)

Բորբոսեելի>բորբոսեելի ձևի մեջ սն>շն. հիշատակացու է նաև
սերբերեն pliešnju (գործիականի pljesan ձևից). сну>šny (Куль-
бакинъ, Серб. яз., стр. 39)

Հունարենում ս հնչվում է z՝ β, γ, ζ, λ, δ, μ, ν, ρ բաղա-
ձայններից առաջ. ինչպես՝ βασιλεύς (vaziléfs); κοσμος (kozmos)
և այլն:

Բաշկիրերենում ս հնչվում է h. օրինակ՝ ھاب sevab>hevab
(Казем-бек, Грамм., стр. 11):

Մոնղոլերենը բնավ չի ճանաչում si ձայնախումբը, այլ միշտ
դարձնում է šի, թեև կա sa, so, su և այլն. օրինակ՝ Սիրիր հընչ-
վում է Šibir (Клюкин, стр. 41—45):

վ

վ>յ. օրինակ՝ Ղարաբաղի բարբառում վրայ>յըրա. հմմտ.
և թոխարերեն wānt (լատիներեն ventus «քամի») = քուչերեն yen-
te, թոխարերեն wāts «հաղար» = քուչերեն yāltse, թոխարերեն
wiki «20» = քուչերեն ikam:

ф = р

Գանիերենում s-ից առաջ p (կարգա փ) չի հնչվում. օրինակ՝
psalme, psychologie, psevdonym և այլն, սրանցից psalme զբը-
վում է նաև առանց p-ի՝ salme «սաղմոս»:

Պետք է հիշել, որ հնդեվրոպական նախալեզվի p դառնալով
պարսկերեն p, այժմ այս p-ն չի հնչվում սլավական կամ ֆրան-
սիական p-ի նման, այլ թավ է. այսինքն՝ շնչեղ խուլ: Իսկ բառա-
վերջի t դարձել է հիմա d. օրինակ՝ pātēr, mātēr դարձել են հի-
մա padar, mādar.

բ

Շվեդերենում հնչվում է չ՝ e, i, ä, ö ձայներից առաջ:
վ>մ. օրինակ, նոր Ջուդայի բարբառում ոչինչ>վոչինչ,
մոնչիչ. հմմտ. թուրքերեն biyan>miyan, ben>mān «ես» (հմմտ.
հոգնակի biz «մենք»), bahāna>mahana «պատրվակ»:

Ուրոր և կա նախորդ շրթնայինը մ է դառնում. օրինակ՝ բա-
ցուենեակ>գավառական բացմանուկ. հմմտ. պիտի>Ագուլիս մա-
ղալա, մաաամա. Պոլիս մանման<մանվան:

ուվ չկա հայերենում, բայց ունենք գրված Ռուվրեն փոխա-
նակ Ռուրեն-ի (Լուծմունք Կոչ., 50):

վ ձայնը կազակ-կիրգիզ լեզվի մեջ երբեք չի պատահում
(Лаптев, Матер. по каз.-кирг. яз., стр. 83):

Թուրքերեն burun «քիթ» — կիրգիզերեն ьурун murun (Бу-
даров, I, стр. 277в):

Թեև մի բաղաձայնի և մի ձայնավորի միջև գտնված վ ձայ-
նը գրվում է ու, բայց երբ այս վ ծագում է բառավերջի ի ձայ-
նավորից, գրվում է լ. այսպես կղզույ, հոգույ, հոգուվ, որդուց և
այլն: Սխալ է և կարելի չէ գրել կը հանուրուի (Շ. Բոլ աը Գօք,
Պարոն Շուպլան, թրգմ. Գեղամ (Պոլիս, 1885, էջ 133, Ա հատ.).
անճոռնի ձև է, փոխանակ կարելի է հանուիլ, կարելի է հանել:
Նույնիսկ սխալ է և կարելի չէ գրել որդուցը (ինչպես ունի Տե-
լեմաք, Փարիզ, 1860, էջ 56), այլ պետք է գրել որդուց. նմանա-
պես փոշուով (անդ, էջ 97), փոխանակ փոշուվ, արծուոյ (անդ,
էջ 97), փոխանակ արծույ:

վ > ֆ

վ միանալով և ձայնի հետ դառնում է ֆ. լավագույն օրինա-
կըն է հավաքել>ֆաքել, որի միջին ձևն է Ղարաբաղի բարբառով
վհաքել, հվաքել:

վ, լ, ու

վ բառամիջում պատահում է միայն ո-ից հետո և բարդու-
թյանց մեջ, ինչպես՝ իջավանք, օքևան. նույնիսկ այս դեպքում
դառնում է լ. ինչպես՝ հարևան, իջևան: Բաղաձայնից հետո լ կա
միայն որդույ, գինույ և այլն ձևերի մեջ:

ա

ա հաջորդ ոնգականի հետ գտնված ժամանակ դառնում է և.
այսպես, Հաճինի բարբառով՝ կարկտեել > գայգոնեելի, մաաանի,
մաաոնի>մաոնի, գիտնալ > գիոնոլ:

ար > յյ. օրինակ, Ակնի բարբառով՝ կըյյե՝ «կարէ»:

ան > նն. օրինակ՝ պատնառ, > պաննառ և այլն:

Այսպես և սանսկրիտ լեզվում է գտնվելով Ճ կամ Ճի ձայնից առաջ, գառնում է Ճ, և գտնվելով յ-ից առաջ՝ գառնում է յ (Whitney, Ind. gramm. § 202):

Ըմբիշ հանգիստում ենք սխալ ձևով՝ ըմբիշտ, ավերորդ ա-ով (տես Անիծեալն, թրգմ. Մ. Մամուրեան, Զմիռնիա, 1875, Բ, 52):



Ասվում է ընդհանրապես, որ հայերենը չունի ֆ ձայնը և թեև այդ ձայնը փոխ է առել օտար լեզուներից:

Երևույթը ճիշտ չի բացատրվել:

Ընդհանուր սկզբունքն այն է, որ մի լեզու կարող է մի ուրիշ լեզվից շատ ու շատ բառեր փոխ առնել, բայց նոր հնչյուն փոխ չի առնում: Փոխ առնված բառերը եթե պարունակում են մի այնպիսի հնչյուն, որ չկա փոխառու լեզվի մեջ, ձևափոխվում է մի այնպիսի մերձավոր հնչման, որ կա նույն լեզվի մեջ: Այսպես V դարում կամ էլ ավելի առաջ հայերը պարսկերենից, ասորերենից և հունարենից փոխ առան նոր բառեր, որոնց մեջ կար, օրինակ, ֆ ձայնը, որ հայերը չունեին: Հայերն այդ ֆ ձայնը վերածեցին փ-ի: Նույնը կատարում են այժմ էլ դարարադցիք:

Ղարաբաղցիք այնպես են վարժված իրենց փ արտասանության, որ մինչև անգամ ուսումնական մարդիկ գործ են ածում և գրում են փ: Օրինակի համար, Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսեսանը իր «Նկարագրութիւն հոգևոր վարուց Յովասափո» աշխատութիւն մեջ (տպ. Վաղարշապատ, 1897), Դ էջում երկու անգամ գրում է պրոֆեսոր փոխանակ պրոֆեսոր-ի: Շուշում մի ուսուցիչ Վերանիա ուղարկելիք մի նամակի ծրարի վրա ուսերեն տառերով գրել էր Пранция, մտածելով նախ իհարկե Փրանսիա և ապա ուսերենում փ չլինելու պատճառով գրել էր Пранция:

Մարաղացիք էլ նմանապես թուրքերեն և կամ ուսերեն բառեր փոխ առնելիս, ֆ-ի փոխարեն գործ են ածում փ. օրինակ՝ փարրիկ, փայթոն, փաս (տաճկերեն ֆես) և այլն:

Յակուտները չունենալով i ձայնը, երբ ուսերենից առնում են i ունեցող բառեր, վերածում են b, p, m ինչպես՝ Филипп > Silip, Федор > Süoder, фекла > Süöküle, Трофим > Dgorün, фунт > būnta, мүнта, фальшивый > baršəbay (Ястремекі w, 25):

Ֆ ձայնը կազակ-կիրգիզ լեզվի մեջ (ժողովրդական բարբառում) բնավ չի պատահում (Лаптаев, Матер. по каз.-кирг. яз.,

84—85), օտար բառերի ֆ գառնում է p կամ b, ինչպես fäid > payda, defter > tıpter, ferišta > berste և այլն:

Երբ գալիս ենք կիլիկյան շրջանին, տեսնում ենք, որ հայերը արաբերենից, հույներից և ֆրանկներից ոչ միայն փոխ են առնում ֆ ունեցող բառեր, այլև այդ բառերն արձանագրելու համար փոխ են առնում ֆ տառը: Եթե հայերը ֆ հնչումը նախապես չունենային, ոչ միայն չպիտի փոխ առնեին այդ տառը, այլև այն փոխառյալ բառերը պիտի գրեին փ տառով:

Լեզվական քննությունները ցույց են տալիս, որ մի լեզու կարող է չունենալ անշատ ու անկախ ֆ ձայնը, բայց վ ձայնի խլացումով ձեռք բերել այն: Այսպես, օրինակ, սերբերենը թեև ֆ չունի, բայց հետո ստացել է v-ի խլացմամբ, օրինակ՝ xvala դարձել է նախ xfalā, հետո էլ x-ի անկումով fala: Այսպիսով, ձեռք բերելով ֆ ձայնը, հնարավորություն է ստացել ճշտիվ փոխ առնելու թուրքերեն farman և այլն (BSL № 65, p. 196):

Նույն երևույթը տեսնում ենք նաև կիլիկյան հայերենում, ուր հաւաքել, հաւասար և նման բառերի մեջ միջին ա կորչելով և վ բաղաձայնը խլանալով ստացվեց հաֆքել, հաֆսար: Այսպես ձևացավ հայերենի մեջ բնիկ ֆ հնչյունը, որ հնարավորություն տվեց այնուհետև ճիշտ հնչյունով փոխ առնելու ֆուլա, ֆիլիպ և այլն ձևով բառերը և ստեղծելու նորահնար ֆ տառը:

Այժմ էլ հեք բառը, որ կազմված է հեւալ բայի հե արմատից ք գոյականակերտ հավելվածով (ինչպես՝ եոք, վազք, վարք) հնչվում է հեֆք:

11. ԲԱՂԱՋԱՅՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՉԱՅՆԱՎՈՐԻ

Մանջուրերենի մեջ i ձայնավորը մեծ ազդեցություն ունի նախորդ բաղաձայնների վրա. այսպես՝

k և ճ գառնում են i-ից առաջ c.

g և j » » j.

s գառնում է » » » Ճ.

ki, ճi > ցի, gi, ji > ձի, si > շի:

Բնալին բաղաձայնները արտասանվելու ժամանակ լեզվի մակերեսը կպչում է քիմքին, իսկ լեզուն գտնվում է այն տեղում, ուր պիտի գտնվի հաջորդ ձայնը արտաբերելու համար. ուստի e ձայ-

նի և մանավանդ i ձայնի համար առաջ պիտի ընկնի, իսկ o ձայնի և մանավանդ u ձայնի համար հետև պիտի ընկնի: Առաջին դեպքում բաղաձայնը կդառնա նախաքմային, երկրորդ դեպքում կդառնա հետքմային. առաջին դիրքում անհաստատ են և անցնում են g, չ ձայններին:

Այս երևույթն սկսել էր լատիներենում մեր թվարկությանից առաջ III դարում, բայց դեռ մինչև դասական շրջանում հնչում էին Cicero = Կիկերո, իսկ նորալատին լեզուների մեջ տվեց նոր ձայներ, այն է՝ ճ, յ, չ:

Չայնավորների ներդաշնակության ազդեցության իբր հետևանք, որոշ լեզուների մեջ երևում է և բաղաձայնների ներդաշնակությունը. այսպես է ուլրո-ֆիննական և ուրալ-ալթայական լեզուների մեջ. մեզ մոտիկ մի օրինակ բերելու համար, հիշենք թուրքերեն ՟ զ և Է k, որոնց առաջինը ծանր ձայնավորների հետ է գործածվում, մյուսը՝ թեթև:

12. ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՐՄԱՐՅՈՒՄ

Բաղաձայնները դառնում են խուլ կամ թրթուռն, համաձայն հաջորդ բաղաձայնի աստիճանին. օրինակ, հնդեվրոպական նախալեզվի yeug- «կցել, լծել, միացնել» արմատից -to մասնիկի հավելումով ունենք սանսկրիտ yuktás, գենդերեն yuxto, հունարեն ζευκτος, լատիներեն junctus, լիթվաներեն jūntas, կատարյալ՝ սանսկրիտ áyuksi «կցեցի», հունարեն ἔζευξα, լատիներեն junxi և այլն:

Սակայն ձայնորդների մոտ խուլ պայթականները, ինչպես և s ձայնը իրենց աստիճանը պահում են. օրինակ՝ սանսկրիտ táśya «սորս», սանսկրիտ čatvāras, լատիներեն quattuor, լիթվաներեն kelviŕtas, հին սլավերեն četvrŭti «4, 4-րդ», սանսկրիտ áçmā «քար» = հունարեն ἄγρω «սալ», լիթվաներեն akmŭ «քար», — սանսկրիտ svápnas, գենդերեն xvafnō, լիթվաներեն sápnas, հին իտալանդերեն suefn, հունարեն ὕπνος «քուն» և այլն:

13. ՀԱՅԵՐԵՆ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ԵՐԵՒ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

Հայերեն բաղաձայնների երեք աստիճանների ուժգնության փորձեր կատարել է Ռուսոն (Principes de phonétique expéri- 660

mentale, Paris, 1902, I, 596—600) Աճառյանի և կարսեցի Նահապետյանի վրա, թե՛ թմբուկով՝ լեզվի վրա և թե՛ արհեստական քիմքով: Արդյունքը երկուսիս վրա միևնույն է. ուժգնության աստիճանը տարբեր է բաղաձայնների զանազան տեսակների համար. այսպես՝

ամենից թույլ	ավելի ուժեղ	ամենից ուժեղ
թա	դա	տա
քա	դա	կա
բա	փա	պա
ջա	չա	ճա
ցա	ձա	ծա

14. ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԸ ԲԱՌԱՎԵՐՋՈՒՄ

Բաղաձայնները բառավերջում շատ լեզուներում ձգտում են դառնալ խուլ. այսպես՝

Ֆրանսերեն bref < brevem, բայց իդական brève «կարճ».
vif, բայց vive «ուժգին, բուռն».
neuf, բայց neuve «նոր».
անգլերեն bilif «հավատ», բայց believe «հավատալ».
grief «վիշտ», բայց grieve «վշտացնել».
wreath (թ) «պսակ», բայց wreathe (ծ) «հլուսել».

Սանսկրիտ լեզվում բառավերջում ամեն թրթուռն խուլ է: Հոլանդերենում վերջաձայն պայթական բաղաձայնները միշտ խուլ են:

Գերմաներենում նույնպես, սկսած միջին գերմաներենից: Իտալանդերենում նույնպես:

Կազակ-կերգիկ լեզվում, ինչպես և սուսերենում, բառավերջի d, b հնչվում են t, p (Лаптев, Матер. по каз.-кирг. яз., 83): Յակուտերենում բառավերջում դառնում ենք միշտ խուլ p, k, t, s (չկա թրթուռն) (Ястрем, 15):

Հնդկական պալշաչիս բարբառում, ինչպես և գնչուերենում, թրթուռն բաղաձայնները դառնում են խուլ կամ թավ, ինչպես՝ սանսկրիտ giriš «սար» > պալշերեն kiri.

gharma «ջերմ», > պալշերեն khamma, գնչուերեն kham.

bhrātā «եղբայր» > գնչուերեն phral:

Հասերեն լեզվում բառավերջի b հնչվում է p (Hospitalier, 29):

Ռուսերենում բառավերջում b > p	ինչպես голубь (golup') «աղավնի».
v > f	» островъ (ostrof) «կղզի».
d > f	» ледь (liot) «սառույց».
ž > š	» ножъ (noš) «դանակ».
z > s	» безъ (bes) «սառնց».

Ռուսերեն гриб, круг, лоб, глаз և այլն բառերը հնչվում են грир, крук, лоп, глас և այլն:

Մանջուրերենում բառակազմում բաղաձայնների խմբեր չկան (L. Adam, 20):

Վեպսերեն (կամ չուդ) լեզվում b, d, g բառավերջում կամ վանկի վերջում հնչվում են p, t, k (Ujfalvy, 17):

Հնդկական kamauni լեզվում ուժեղ ձգտում կա շնչեղ բաղաձայնը վերածել պարզի: հնդկերենի rh, lh, kh, dh ձայնները դառնում են r, l, k, d և այլն (Grierson, թ. մ. դ, 116):

Կազակ-կիրգիզ լեզվի մեջ օսմաներենի նախաձայն g, d դառնում են k, t. ինչպես՝ gel > kel, ժաγ > tau, ժեфтер > тiптер և այլն (Лантев, Матер. по каз.-кирг. яз., 84—85): ժöрт > töрт «4»:

Չեխերենում b, d, d', h, v, z, ž ձայնները բառի մեջ բաղաձայնի քոյ (բացի l, r) կամ բառի վերջում միշտ զորանում են և դառնում p, t, t', x, f, s, š, օրինակ lod'ka «նավակ», bfeh «եղերք» և այլն (Hantich, Gramm, tcheque, 9):

Չուվաշերեն խուլ k, p, x, t, š, s ձայնները բառի մեջ երկու ձայնավորի միջև և թրթռուն բաղաձայնից առաջ դառնում են թրթր-թրուան g, b, h, d, z, ž. և այս այնքան սովորական երևույթ է, որ մինչև իսկ գրվում են առաջին ձևով և հնչվում են երկրորդ ձևով:

Նալխայերեն (մոնղոլերեն) b, g, d, ž (ä), I արասանվում են անորոշ կերպով. մերթ թրթռուն են, մերթ խուլ և ունեն երկուսի միջին աստիճանը. երբ մոնղոլը հնչում է gobi «անապատ, տափաստան», սուր լսում է коби. այս բաղաձայնների հնչումը հաճախ կախված է հաջորդ բաղաձայնից (Владимирцов, Справ. грам. 384—386, 390): Մրա փոխարեն k, t, ç, č ունեն շատ ուժեղ հնչում, այսինքն բուրն էլ թավ են (անդ, 61—62):

Դրավիդյան լեզուների մեջ բառակազմում գտնում ենք միշտ k, t, t, p խուլերը, բառամիջում միայն g, d, d, b թրթռունները. կարելի չէ բառակազմում գտնել թրթռուն, բառամիջում էլ կարելի չէ գտնել խուլ, բացի կրկնակ խուլից: Այս պատճառով էլ այլուրեքների մեջ թրթռունների և խուլերի համար առանձին տառեր չկան, այլ միայն մի շարք (k, t, t, p), որ բառակազմում հնչվում է խուլ, բառամիջում թրթռուն: Այս օրենքը այնքան ուժեղ է, որ երբ մի օտար բառ փոխ է առնվում, իսկույն ձևափոխվում է զրավիդյան ձայնափոխությամբ. օրինակ՝ սանսկրիտ danta «ատամ» > թամիլերեն tandam: Նույնպես նաև բարդությունների մեջ. ինչպես՝ anna + tammulu «մեծ և փոքր եղբայրներ» դառնում է anna—dammulu (Caldwell, Dravid, 138):

Ուրալ-ալթայական լեզուների մեջ թրթռուն սեղմ ձայները չեն գտնվում բառակազմում. այսպես են v, n, ñ, z, ð, γ, r, l, m:

Միամերենում թրթռուն բաղաձայնները դարձել են արդի արտասանության մեջ խուլ շնչեղ. g > k' և այլն. (MSL 23, p. 321):

Հոլանդերեն g, ամեն տեղ, նույնիսկ բառակազմում դառնում է ǵ = γ (դ, չ) (J. Mansion, BSL, 26, 95):

Դանիերենում n-ից առաջ g հնչվում է j. ինչպես՝ dθgn «օր» (հնչվում է döyn):

d > r դարձած, ինչպես հայերեն աղաբանք, հրեայ և այլն, սովորական է բանկերենի բարբառներում. օրինակ՝ inquda > inqu-ra, ibduzki > iruzki «արեգակ», enada > enara «ծիծեռնակ» (BSL № 96, p. 133):

Հոլանդերենը շատ խիստ կերպով պահում է sandhi-ի օրենքը, այն է խուլ բաղաձայնից հետո ամեն թրթռուն շփական դառնում է խուլ. ինչպես՝

g (=ǵ) դառնում է x.

v » f.

z » s.

օրինակ՝ hij geeft (դ-ով)—ik geef (խ-ով).

de vader (v-ով)—'t is vader (ֆ-ով).

zout (z-ով)—het zout (s-ով).

(J. Mansion, BSL 26, 26):

Չինարենում (դրական լեզվի մեջ) չկա b, g, d, այլ p, p', k, k', t, t' (Seidel, 12):

Շվեդերենում b, g, d բաղաձայնները հաճախ հնչվում են b, d, g (խուլ)՝ բարձր լեզվի մեջ և կամ պարզապես p, t, k ժողովրդական լեզվի մեջ:

Շվեդերենում g հնչվում է g, բայց կակուղ բաղաձայններից առաջ, այն է e, i, ä, ö, y (կարդա՝ yu) կարդացվում է y (գերմաներեն j):

Ամերիկյան Մալդու լեզվի մեջ թրթռուն և խուլ բաղաձայնները այնպես են հնչվում, որ դժվար է զանազանել իրարից (Boas, Handbook, I, 684). այսպես նաև ամերիկյան ալգոնկին լեզվի մեջ (անդ, 741):

Հին իտալերենում n հանդուր բառին անմիջապես կցված մի ուրիշ բառի նախաձայնը ազդվում է նույն n-ից. o, t, p, f գառնում են թրթռուն, իսկ b, d, g գառնում են mb, nd, ng (Pokorny, Altrische gramm., 11):

Ֆիններենում n-ից հետո k գառնում է g. ինչպես՝ aurinko «արև», սեռական auringon և այլն:

Հունական բարբառներում n-ից հետո խուլ p, t, k գառնում են թրթռուն. ինչպես՝ ἐμπορος, πέντε, ἐγκαινιάζω > émboros, pénde, engainiázo (BSL 34, № 102, p, 148): եվ այս ձայնափոխությունը այնքան առաջ է գնում, որ մինչև անգամ v վերջացող հոգերը և ձեն բացասականը k, p, t ձայնը դարձնում են g, b, d. ինչպես՝

εἰς τὸν κῆπον (is tom gipon) «պարտեզում».

δὲν κατα στρέφουσι (den ga...).

(տես C. Capos, Nouv. gramm. gr., Paris, 1908, 4):

δὲν πειράζει (dem birázi).

τὸν πῖλον (tom bilon) (անդ, էջ 4):

τὸν δίτλον (ton ditlon) (անդ, էջ 5):

Այս երևույթի արդյունքն է, որ նոր հունարենի մեջ (ուր β, δ, γ ստացել են v, d, γ հնչյունները), պարզ թրթռուն b, d, g հնչյունները նշանակելու համար գրում են μπ, νι, γκ, ինչպես՝ γρεμίζω (gremizo), μπαίνω (beno), νιβάνα (divani) և այլն (անդ, էջ 5):

Շվեդերեն g հնչվում է e, i, y, ä, ö տառերից առաջ y. ինչպես՝ giva «առի», göra «անել» (հնչել yiva, yöra) և այլն և գրա համար էլ նոր ազդագրությունը գրվում է jiva, jöra և այլն (Poes-tion, Schwed., 20, 21):

Ղպտերենում nk գառնում է ng:

Ֆիններենում p ձայնավորից հետո գառնում է v. ինչպես՝ lepo «հանդիստ», սեռական levon:

Ջանագան սոմանական լեզուների մեջ նկատելի են mp > mb nt > nd, nk > ng (BSL № 89, էջ XXI). նույնը նաև նոր հունարենում և ալբաներենում. հունարենում սեննք νι, μπ և γκ > nd, mb, ng:

Ֆիննական լեզվախմբում nk, nt, mt, mp գառնում են ng, nd, md, mb և մինչև անգամ անգականը կորցնում են. ինչպես՝ ֆիններեն onke «հրեշտակ» = կարելական onge, սեռական onnen. ֆիններեն lintu «խուռն» = հունգարերեն lud «սաղ». oustj. amp «շուն» = հունգարերեն eb (օրինակները տես Szinnye, F'inn-ugr. Sp., 37-40):

Դանիերենում, ուր p, t, k շատ շնչեղ են, s բաղաձայնից հետո այնպես են հնչվում, որ կարծես խուլ b, g, d են. այսպես նաև կրկնակ pp, tt, kk հնչվում են իբրև պարզ խուլ, փոխանակ լինելու շատ շնչեղ (Poestion, 19):

Դանիերենում b, որ բառավերջում հնչվում է b, ժողովրդական լեզվում դարձել է v, ուրեմն ճամբան է b—b—v, այսպես եղած պիտի լինի և հունարենում:

ԹՐԹՈՒՆ ԲԱՂԱՉԱՅՆՆԵՐԻ ԽՂԱՅՈՒՄԸ

Բառավերջում գանված թրթռուն բաղաձայնները ձգտում են իլանալու. այսպես ուսերեն лоб (սեռական лба) «ճակատ» հնչվում է իբր лор.—ուկրաիններենում թրթռուն բաղաձայնները հնչվում են իբր խուլ. ինչպես՝ бід «լորի» > bip, ніж «գանակ» > niš, біз «սալլ» > vis:

Նմանապես r, որ ուկրաիններենում ընդհանրապես հնչվում է թրթռուն h (r), բառավերջում, ինչպես նաև խուլ բաղաձայններից առաջ, իլանում և գառնում է թեթե խուլ x. ինչպես՝ лур (=luh) «Au» (Smal—Stockyi, 25—29):

ԹՐԹՈՒՆ ԲԱՂԱՉԱՅՆՆԵՐԻ ԹԱՂԱՅՈՒՄԸ

Թուրքերենի ձայնական օրենքներից մեկն էլ այն է, որ երբ բառասկզբում կա մի թրթռուն բաղաձայն, որից քիչ հետո կա նաև մի թավ բաղաձայն, այս թավի ազդեցությամբ առաջին թրթռուն բաղաձայնն էլ գառնում է թավ. օրինակ՝

Ֆրանսերեն bottine «կոշիկ» > թուրքերեն փոքին.
 » boutonniere «կոճակամալը» > թուրքերեն փոքին-
 յարա «կոշիկի կոճակամալը».

Թուրքերեն bekmez «սուպ, մաթ» > ժողովրդական փեքմեզ.
 Ֆրանսերեն jaquette «բաճկոն» > թուրքերեն չաքեթ (ան-
 շուշտ անցնելով չաքեթ ձևից):

Իտալերեն bussola «կողմնացույց» > թուրքերեն փուսուլա.
 պարսկերեն destī «սափոր» > թուրքերեն desti, ժողովրդա-
 կան tesdi.

» دَستور destūr «հրաման» > թուրքերեն destur
 «ճամբա տվեք, խարտրդա», ժողովրդական թուրքերեն tesdur.

պարսկերեն دَستَره destere «սղոց», բուն desterre «ձեռնա-
 սղոց» > ժողովրդական թուրքերեն tesdere.

Թուրքերեն dörpü «քերիչ» > ժողովրդական tōrpü.
 պարսկերեն derzi > թուրքերեն terzi «ղերձակ»:

Այս բոլորը, ինչ որ ասացինք թուրքերենի համար, սլաոկա-
 նում է նաև մեր ժողովրդական բարբառներին, որոնք թուրքերե-
 նից փոխ են առել այս կարգի բաղմաթիվ բառեր:—Բայց հայ
 բարբառներն էլ իրենց մեջ ունեն այս կարգի ձայնափոխություն-
 ներ, որ սակայն թվով այնչի քիչ են. օրինակ՝

- աարանալ > Ղարարաղ բբանալ.
- զցել > Երևան բցել.
- ձգել > Պոլիս ցքել
- աարգալ > » բբալ, բբալ
- բուսանիլ > » փուսնիլ
- բոբրոսնել > Ղարարաղ փրփեշնիլ
- գիշեր > » բիշեր, բշեր
- կրիլ «ձնկները թուլանալ» > Մարաղա բիբեյ «հողնել»
- կրոց «կաթնաման, կողով» > բբոց
- կոթաւոր > Ղարարաղ բբավրէր «տապակ, թափա»:

«Գափառական բառարան»-ում աստանդիլ եմ կոթաւոր և
 բբաւոր նախաձևերի միջև. այժմ կարծում եմ, թե տապակի հա-
 մար լավագույնն է կոթաւոր:

ԹՐԹՈՌԻՆ ԵՎ ԹԱՎ ԲԱՂԱԶԱՅՆՆԵՐԻ ՇՓՈԹՈՒԹՅՈՒՆԸ

Գրական արտասանություն մեջ թրթուրները թավի վերած-
 ված լինելու պատճառով է, որ անդրադեռ մարդիկ միշտ այդ եր-

կուսը շփոթում են: Ասածիս իբրև օրինակ մեջ եմ բերում հետևյալ
 վրիպակները, որ քաղում եմ «Աքլոր եղբայր» անունով մի փոք-
 րիկ գրքից, տպված Պոլսում, Վեզիր խան, «ի տպարանի Յովհան-
 նէս Տէրոյինց», 1868: Այս գրքի նման վրիպակաշատ տպագրու-
 թյուն չեմ տեսած, նույնիսկ գրքի վերնագիրն է վրիպակ.

էջ 12 ցեղուն	էջ 68 դարցած
36 լանձանք	68 բարցր
36 դարցած	72 զուարդ
36 կ'աղաջեմ	78 աղզատանամ
39 ջրանձք	84 մորդես, մորդէ, մորդեց
51 դարցող	85 մորդէ
59 փորցած	88 աշքին
61 դարցաւ	93 աղաջելով

Այս գիրքն այնքան սխալաշատ է, որ այսպիսի վրիպակներ
 էլ կան, գրաշարի և սրբագրիչի մեղքով. ինչպես՝ էջ 92՝ ըսզլով
 իր մտքին մեջ (ըսելով իր մտքին մեջ). էջ 76՝ ետուի (գալով):

Նման սխալներ կան նաև՝ Ժորժ Օնէ, Դարբնոցապետն, Պո-
 լիս, էջ 174՝ Որչափ գաջ գիտէի. Անիծեալն, թրգմ. Մ. Մամու-
 բեան, Ջմիրուհիա, 1875, հատ. Ի, էջ 7՝ ցիբք (իմա ձիրք):

Շատ սխալաշատ մի գիրք է նաև Հանեան, Բերալի գիշեր-
 ները, Պոլիս, 1885, որ «Լոլս» հանդեսի մեջ հուպնեպ տպված մի
 վրիպասանություն արատապությունն է: Այս գիրքն էլ այնքան
 սխալաշատ է, որ մինչև անգամ պարունակում է այսպիսի մի
 չտեսնված վրիպակ.—գերացե, փոխանակ գացեր է (էջ 336):

էջ 283 զիթը (քիթը)
291, 292 ղիկնաթոռ
299 գտակահատը
304 թթում (զլում)
308 զովէն (քովէն)
311 գալլափոխ
311 գալլ (քալլ) երկիցս
313 կանղեզ
314 դաշկինակ
321 կոզ (կոթ)
324 ղերես (թերես)
327 բախեր է (փախեր է)
328, 364 գոյր (քոյր), նաև. 476, 566, 568 (երկիցս և այն էլ զլխատառ), 571, 575, 577.

352 գամի (քամի)

368 քէպի (զէպի)

410 Բիւցաղնական (նույնիակ գլխատան գրված վերնա-
գրում):

Նման սխալաշատ մի գիրք է նաև Նաթանեան, «Արատար
Հալաստանի», Պոլիս (Թվականը չկա):

էջ 19 իր խաղցած քերեքը

25 ընքարձակ դաշտ

36 գորավիք պիտի լինի

47 բողոց (փողոց)

62 ածխահանգ

63 Դարձոս

76 մեզի զէս քրքուլու մաօք

81 կ'ենդարկուի

81 ազտորեցինք

133 այս ձեզը (ցեզը), հրաձան կ'արձակեն

16. ՊԱՅԹԱԿԱՆ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պայթական բաղաձայնների կարգերի փոփոխության ընդհա-
նուր պայմանները ամփոփվում են հետևյալ ձևով:

1. Թրթուուն բաղաձայնների բնականոն ձևն այն է, որ խըռ-
չակն սկսում է թրթուալ նախքան պայթյունը, այսինքն փակվելու
միջոցին (այսպես են ոտմանական և սլավական լեզուները): Եթե
այս թրթուումները ուշանան, հետզհետե բաղաձայնը կգլխի գեպի
խուլը և երբ հասնի պայթյունի կետին, արդեն բոլորովին խուլ է.
այսպիսով բ կդառնա պ (b > p) և այլն:

2. Պուլ բաղաձայնների բնականոն ձևն այն է, որ խոչակը
թրթուալ է սկսում հենց պայթյունի միջոցին (այսպես են ոտմա-
նական և սլավական լեզուները): Եթե այս թրթուումներն ուշանան,
բաղաձայնի պայթյունի և հաջորդ ձայնավորի թրթուումների մի-
ջոցին դուրս կգա մի շունչ, որով պարզ խուլը կդառնա շնչեղ խուլ.
pe > phe և այլն. — բայց այս միջոցին բաղաձայնի ուժը կտկարա-
նա, որով և հետուսթյամբ կանցնի շփական հնչման՝ p > f և այլն:

Շնչեղ խուլերից շփականի անցնելու համար ամենից ավելի
պատրաստ է ք շրթնայինը, այսպես, արաբերենը ընդհանուր սե-
մական t, k ձայնները պահել է, բայց ք դարձրել է f. — կելտականի մեջ

հնդեվրոպական նախալեզվի t, k մնում են, բայց ք դառնում է h
և հետո ջնջվում. այսպես նաև հայերենում:

17. ԿԻՍՍ.ՊԱՅԹԱԿԱՆ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կիսապայթական բաղաձայնները շատ ավելի խախտա ձայ-
ներ են, քան պայթականները: Օրինակ, ֆրանսերեն ts, dz, tʃ, dʒ
կորցրել են իրենց պայթական մասը և դարձել են s, z, ʃ, ʒ, ինչ-
պես են cire, zèle, cheval, joue (M. Grammont, MSL 20, p.
240): Այն ազգերը, որոնք իրենց լեզվի մեջ չունեն ց, ծ, ձ հըն-
չունները, դրանք վերածում են u, q: Հին հայերենում էլ նման
ձայնափոխություններ ունենք՝ կսկիծ < *կիծկիծ, կոչկոնեկ < *կոնկո-
նեկ, սիրեսցես < *սիրեսցիցես, սիրեսցիք < *սիրեսցիչիք:

18. ԲԱՌԱՄԻՋԻԿ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Լեզուների մեջ ընդհանուր օրենք է, որ բաղաձայնները բա-
ռամիջում չեն հնչվում այնպես, ինչպես բառասկզբում. բառասը-
կըզբում ձայնավորից առաջ նրանք ուժեղ են և պահում են իրենց
ինքնությունը. բառամիջում, երկու ձայնավորի միջև հնչվում են
ավելի թուլ և այս թուլություն պատճառով նկատելի են շատ լե-
զուների բաղաձայնների սղման կամ փոփոխման օրենքներ: Բայց
որովհետև թրթուուն բաղաձայններն ավելի թուլ են, ուստի և
նրանք ավելի շուտ են ենթարկվում այս օրենքին, քան մյուս
կարգի բաղաձայնները. օրինակ՝ հնդեվրոպական նախալեզվի p >
հայերենում բառասկզբում և, բառամիջում լ. g²h > հայերենում
բառասկզբում տալիս է գ, բառամիջում ժ:

Սանսկրիտում ունի բառամիջում ամեն աստիճանի բաղաձայն-
ներ. պրակրիտ լեզուն մեր թվարկության առաջին դարում բառա-
միջում գլխի միայն թրթուուն բաղաձայններ, որոնք առաջանում
են թե նախկին թրթուուններից և թե խուլերից:

Բառավերջում բաղաձայններ շատ հաճախ դառնում են խուլ.
այսպես, օրինակ, սլավական լեզուները, որ ընդհանրապես լավ են
զանազանում խուլն ու թրթուունը, բառավերջում ունեն միայն
խուլ բաղաձայններ (BSL 35, № 104, p. XXI):

Լատիներենում բառի մեջ խուլը դառնում է կրքմն թրթը-
ուուն, ինչպես՝ vi-ginti, tri-ginta, ինչպես նաև quadru-pes, quad-

ra-ginta և այլն, ալս թրթուռները ալնպես թույլ էին, որ ոտմանական լեզուների մեջ ջնջվեցին. ինչպես՝ vinti, trientia, quaranta, որոնք ստորին լատիներենի ձևերն են և սրանցից էլ առաջանում են սոմանական ձևերը:

Երկու ձայնավորի միջև գտնված բաղաձայնն ավելի թույլ է, քան եթե նրանցից առաջ մի բաղաձայն կա. առաջինները կարող են ի վերջո ջնջվել, երկրորդը կմնա. այսպես, լատիներեն dotare եղավ ֆրանսերեն douer, բայց lactūca > laitue (Meillet, La méthode comp., 90):

19. ԲԱՂԱՋԱՑՆՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՑՈՒՄ

(Différentiation)

-մն դառնում է -ւն. օրինակ՝ պաշաւան, սեռական պաշաւան. մրջիւն, սեռական մրջման. բայց -ու ձայնավորից հետո մնում է անփոփոխ. ինչպես՝ շարժումն, ննջումն, փոխումն և այլն:

Նույն տարբերացումը տեղի չի ունենում նաև նալ ձայններից հետո, որովհետև նալերը լինելով տեղի հնչյուն, առանց պայթման, արդելում են մ-ին կորցնել իր պայթական մասը և դառնալ շփական. ինչպես՝ սեբմն—հունարեն σέβρα, գեղմն—գոթերեն wulla (M. Grammont, MSL 20, p. 242):

it և ft ձայնավորները կարող են փոխանակվել իրար հետ. այսպես՝ գենդերեն yuxta > iuft > պարսկերեն iuft (հայերեն ջուխ պահում է միջին ձևը). պարսկերեն suxta «կրոնավոր» > թուրքերեն softa պարսկերեն سخت bīdūxt «Արուսյակ մուրրակը», որ և bīdūft. (Darmesteter, Etim. Iran., I, 88).

Նույնպես և թուրքերեն xotos > fotoz, գավառական od > oğdər doktor > doxtur, եալքն > oխաք, Հագարավուխա, ձանանչաւուխա:

20. ՀԱՅԵՐԵՆԻ ՅՈՒՎԱՀԱՏՈՒԿ ՆԵՐՔԻՆ ՍՐԵՆՔՆԵՐԻՅ

Եթե վերջաձայնն է ճ, դ, խ, ւ, վերջավանկի մեջ գտնում ենք ե և ոչ է:

Սրա համար է, որ բառն է դև և ոչ *դեւ, թեև սեռական դիւի, գիւանար:

Կրկնակ վերջաձայնից առաջ գտնում ենք միշտ ե՝ ինչպես՝ մերք, բերդ, խենք, հեշտ:

Բառի ներսում միշտ գտնում ենք ե և ոչ կրքեք է. նրա պատճառով է, որ երբ է > ի ամփոփման օրենքը չի գործադրվում, է-ի տեղ գտնում ենք ե. օրինակ՝ աղուես—աղուեսու, աղեաք—աղետից, եղեզն—եղեզան, Մովսես—Մովսեսի, Ներսես—Ներսեսի, հայերեն—հայերենագետ:

միայն բառը իայ խմբի միացմամբ դարձել է մեն, բայց բարդության և անանցման մեջ գրում ենք մեն. ինչպես՝ մենակեաց (=միայնակեաց), մենաւոր, թեև ունենք միակեաց—միայնակ:

ի ձայնավորը դ-ից առաջ վերջավանկում գտնում է ե. այսպէս *ուղիղ—ուղեղ, հին ձևը երևում է նրանից, որ սեռականը լինում է ուղղոյ:

Այսպես նաև թիթեղն—թիթղունք, զեղջ—զղջանալ, խեղն—խղնի:

Թվում է, թե ու ձայնավորը ազդում է նախորդ վանկի ձայնավորի վրա և նրա երանդը փոխում է. այսպես ի դարձնում է ե. օրինակ՝ աք բառից ունենք ախքել, բայց տերութիւն, տերունի (հին ձևագրերում միշտ գրված տերութիւն, նորերն են որ դարձրել են աքրութիւն. —անօրէն, անօրինի, բայց անօրենութիւն. —հենուլ < pen բառի տեղ սպասելի էր *հինուլ, բայց ի դարձել է ե՝ հաջորդ վանկի ու-ի պատճառով (հետեւաբար ունենք հինուլ, հանուլ). —լիզել, լիզանել, բայց լեզուլ, որի հետևողութեամբ էլ լեզու. գավառական լիզու, որ ավանդված է մեզ X դարից հալ ձևագրերում և լատիներեն—հայերեն բառացանկում (հրտ. Carrière).—ու ձայնավորի ազդեցութեամբ երևում է հատկապես վեց—վաքսուն բառի մեջ, ուր ե-ի դեմ գտնում ենք ա: Այսպիսի մի բան կարելի է գտնել նաև կամուրջ բառի մեջ, որի համապատասխանն է հունարեն γέφυρα (Meillet, BSL № 68, p 18): Գավառականներում ունենք կիսուր, կիրակուր փոխանակ կեսուր, կերակուր:

Այս բոլորի հակառակ ունենք սակայն հերու «անցլալ տարի» և նման ձևեր, որոնց մեջ ու ազդեցութեան չենք կարողանում գտնել (Meillet, Esquise, 32):

Վերջավանկի մեջ ու ձայնավորի անկումը թվում է, թե պատճառ է դառնում նախորդ վանկի ա ձայնավորի երկրարբանացման. ինչպես՝ արասուր < drak'ru, բայց արասար. նաև աւր < աւմր < amōr, հմմտ. հունարեն ἄμαρ (Meillet, Esquise, 32):

ու ձայնավորից հետո վ կամ ռ չի կարող գտնվել. եղած դեպքում ջնջվում է. օրինակ՝ ու բունով բառերի գործիականը զարգու փոխանակ զարգուվ), փոքու (փոխանակ փոքուվ): Մրանով պետք է բացատրել նաև ձեղուն, ձեղուան անկանոնությունը, որ իրապես էր ձեղուան, ձեղուան:

ու ձայնավորից հետո չի կարող նաև յ գտնվել. եղած դեպքում ու բառամիջում գառնում է ո, իսկ բառավերջում յ ջնջվում է. ինչպես 4-րդ լծորդության բայերի անկատարը՝ հեղուի, հեղուիր, հեղույր—փոխանակ *հեղույր. հմմտ. աղայի, աղայիր, աղայր. ներկա հեղում, հեղուա, հեղու<հեղույ:

և գառնում է հետո իւ. ինչպես ալիւր>ալիւր, բեր>բիր, աղբեր>աղբիր, եղ>իւղ. բայց պահված է եւթն>եթոն, արգեք>արգեթ, մեք>մեթ ձևերի մեջ:

ա, ե, ո սովորաբար չեն գտնվում բառավերջում, բացի հրամայականից. ասա՛, սիրեա՛, ուսո՛, — նա հին ժամանակ ուներ *նայ ձևը, որից էլ հողով նայն:

ի-ից հետո յ թեև լինի կջնջվի. ինչպես՝ նստիմ, նստիս, նքստի<նստիյ, բայց աղամ, աղաս, աղայ:

ե+յ տալիս է հայերեն ե. ինչպես առաջին լծորդության ներկա բերեմ, բերես, բերեյ>բերե (հմմտ. աղամ, աղաս, աղայ). անկատար բերեք<*բերեյր և այլն: Ուստի հայերենում չկա եյ:

Մրա հետևանքով իայ գառնում է ե (որովհետև ի+ա>ե և եյ>ե). օրինակ՝ աի-այր>աեր. հնագույնը եղել է te-):

Բառավերջում ե չի կարող գտնվել. այս երևույթը ուշ ժամանակ է առաջացել. V դարից էլ ավելի ուշ գրված ձեռագրերում գտնում ենք բե, որի մեջ ե համապատասխանում է իրոք հնգեվրոպական նախալեզվի te ձևի e-ին: Ավելի հետո ե և ե շփոթվեցին և բառավերջում ընդհանրացավ ե ձևը:

Ռեզականից հետո հին հայերենի թե թրթռունները և թե պարզ խուլերը հավասարապես վերածվում են թրթռունի. այսպես՝ ծուկիւր — ծուկգր, բանա—բանգ, ընտանիք—ընդանիք:

Այս երևույթը շատ հին է հայերենի մեջ. ապահովապես նա արդեն կար IX դարում. Լազարյան ճեմարանի Ավետարանը, որ գրված է 887 թվականին, ունի անգանիմ փոխանակ անկանիմ (հնգեվրոպական նախալեզվի արմատն է sng^w, որ տալիս է հայերեն անկ): Այս պատճառով է ահա, որ այս կարգի բաղաձայն ունեցող բառերը ձեռագրերի մեջ, ինչպես և արդի գրական լեզվի մեջ, շարունակ գրվում են երկու ձևով. ինչպես՝ բանա—բանգ,

ըմպել—ըմբել, գանկ—գանգ, ընգեր—ընկեր, ընգանիք—ընտանիք, ժանա—ժանդ, ինն—իննի, նանն—նանջ և այլն:

Բայց նույնիսկ շատ ավելի հնից ունենք ռեզականի ազդեցությունը հաջորդ բաղաձայնի վրա. օրինակ՝ ականջք, որի հինն էր ականչք:

Ասուրերենում էլ m-ից հետո t գառնում է d. ինչպես՝ am-dahis փոխանակ amtahis (Bertin, 28):

21. ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՁԱՅՆԱՇՐՋՈՒԹՅՈՒՆԸ

Ձայնական այն դրությունը, որ կազմել էր հին հայերենը, անփոփոխ չմնաց. դարերի ընթացքում նա էլ փոփոխություն ենթարկվեց: Մենք այդ փոփոխություն ընթացքին չենք կարող հետևել քալլ առ քալլ, որովհետև գրությունը, որի պաշտոնն է ներկայացնել ձայնը կամ արտասանությունը, հավասարմությամբ չի կատարում այդ պաշտոնը: Ձայների փոփոխությունը այնքան է դանդաղ կատարվում, որ ոչ մի մարդկային սերունդ չի գգում այն: Զգում են միայն հետագա, շատ ուշ հասած սերունդները, երբ համեմատում են իրենց հնչումը նախկին դարերից մնացած գրություն հետ: Բախտավոր են այն ազգերը, որոնք ունեն շատ հին գրականություն. նրանք կարող են հետևել բազմաթիվ դարերի, հազարավոր տարիների ընթացքում տեղի ունեցած ձայնական փոփոխություններին: Իսկ այն ազգերը, որոնք զուրկ են գրականությունից կամ որոնք շատ ուշ ժամանակից սկսած գրականություն միայն ունեն, զուրկ են այս առավելությունից: Նրանք չեն կարող կազմել իրենց լեզվի պատմությունը:

Գրականությունն էլ դժբախտաբար այն պակասությունն ունի, որ հաճախ հետևում է ավանդական ուղղագրության. նա ներկայացնում է ոչ թե առօրյա կենդանի հնչումը, այլ այն ձևը, որով զրեկ են նախնիները: Այսօր էլ ամեն տեղ գրում ենք հայերեն մարդ, վարդ, թեև հնչում ենք առաստարակ մարք, վարք: Քիչ անդամ միայն ուղղագրությունը լինում է հնչական. այսպես, արեւելյան գրականում բարդի (գրված ինչպես հնչվում է այժմ Երևանում), թեև հայերենի հին ավանդական ձևն է բարաի, ինչպես գրում են արեւմտահայ գրողները:

Նին և միջին հալ գրականությունը ամբողջովին ավանդական ուղղագրությամբ է. ուստի կարելի չէ նրանցից որևէ օգուտ

քաղել հայերենի ձայնական փոփոխությունների պատմության համար: Օգուտ կարելի է քաղել միայն օտար բառերի տառագրաձևությունից, հայերեն բառերի օտար այբուբենով գրված ձևերից (որոնք շատ հազվադեպ են) և այն ուղղագրական սխալներից, որոնք սպրդել են գրչազրեհրի և արձանագրությունաց մեջ, գրիչների անուշազրույթի կամ ազիտություն պատճառով:

Միջին հայերենի ձայնափոխության մեջ ամենակարևորը երկրորդ ձայնաշրջությունն է:

Ահա թե ինչ է գրում այս առթիվ Մորիս Գրամոն ձայնաբանը (MSL 20, p. 253).

«Ինչպես հայտնի է, ընդհանուր դերմաներենը կրել է մի կատարյալ ձայնաշրջություն: Մի քանի գերմանական բարբառներ իրենց անհատական դարգացման ընթացքում ունեցել են մի նոր ձայնաշրջություն, որ մինչև իսկ չի հաջողել բաղաձայնները մի ընդհանուր վերջնական վիճակի հասցնել: Որոշ վայրերում այսօր էլ այդ բարբառները ձգտում են նորից ձևափոխվել: Պատճառն այն է, որ երբ մի կարգ ձայններ արդեն տեղի են ափել մի առաջին հարվածի, շատ քիչ է պատահում, որ կարողանան նրանք իրենց նախնական ամբողջությունը ձևաք բերել իսկույն. նրանք փոփոխվում են մինչև որ մի քիչ կայունություն ձևաք բերեն: Դա նման է մի մարդու, որ ծանրապես հիվանդացել է և թեև թվում է, թե լավ ապաքինվել է, այնուամենայնիվ մեկ արիշից ափելի ենթակա է նորանոր հիվանդությունների:»

Այսպես է եղել նաև հայերենը: Նախապատմական շրջանում նա կրեց առաջին ձայնաշրջությունը, որ բոլորովին նման է ընդհանուր գերմանականի ձայնաշրջության: Բայց հայերենը մինչև այսօր մասնակի կերպով միայն պահել է դասական հայերենի բաղաձայնների գրությունը: Արեմտյան բարբառները կրել են մի նոր ձայնաշրջություն, սակայն արեելյան բարբառներից մի մասն է միայն հարվածվել:

Որովհետև միջին հայերենը գրված է հին հայոց այբուբենով և ավանդական ուղղագրությամբ, ուստի նա չի կարող ճիշտ դադափար տալ մեզ միջին հայերենի հնչման մասին: Այս դեպքում պետք է օգնության կանչենք մեզ գլխավորապես օտար բառերի հայերեն տառագրությունը, որ պիտի լինի մեր լավագույն առաջնորդը: Առնենք, օրինակ, հետևյալ հին ֆրանսերեն բառերը.

canne, cane, գրված է գան.

temple » գամփլ.

emperour	գրված է	ըմբուր.
prince	»	բրինձ
passage	»	բասան
chaperon	»	շարոն
baron	»	պարոն
défendre	»	աբֆընդել
lige	»	լին
Josselin	»	ձուլին
légat	»	լիկաթ
double	»	տուպլ
bourgeois	»	բուրճես
Isabelle	»	Զապել

Այս օրինակներից երևում է, որ բ, գ, դ, ձ, ջ հնչվում էին իբրև հին ֆրանսերեն p, c, t, ç, ç, իսկ պ, կ, ա, ն հնչվում էին իբրև հին ֆրանսերեն b, g, d, j: Ուրիշ խոսքով՝ հին հայերենի թրթուռները դարձել էին խուլ, իսկ խուլերը՝ թրթուռ, թավերը մնացել էին թավ:

Քննելով միջին հայերենի ձայնական այս երևույթը, Մ. Գրամոնը եզրակացնում է հետևյալը.

Մինչդեռ հնդեվրոպականից հին հայերենի անցնելու համար պայթականների արտասանության մեջ առաջ էր եկել խոչակի թրթուռների ուղացում (համեմատությամբ ձայնի explosion-ի (պայթման), ինչպես էր նաև գերմանականում), միջին հայերենի ձայնաշրջության մեջ տեղի է տնեցել ոչ թե ուղացում, այլ տեղափոխություն մեկից մյուսին. թրթուռը դարձել է խուլ, խուլը դարձել է թրթուռ:

Սակայն միջին հայերենում կա նաև մի այլ տառագրաձևություն. օրինակ՝ ֆրանսերեն p, որ ընդհանրապես գրվում է p, երբեմն էլ գրվում է փ, ինչպես, օրինակ՝ դամփլ բառի մեջ: Այս տառագրաձևությունը թեև քիչ է պատահում, բայց այնուամենայնիվ կա:

Մ. Գրամոնը հետեցնում է սրանից, որ տրեմն միջին հայերենում պարզ խուլ և շնչեղ խուլ բաղաձայնների հնչական տարբերությունը գրեթե ոչինչ էր:

Ըստ իս, միջին հայերենը շատ լավ զանազանում էր հայերենի երեք շարք պայթականները (պ, բ, փ և այլն). պ ներկայացնում էր պարզ թրթուռն բաղաձայնը (b), բ ներկայացնում էր շնչեղ թրթուռն (bh), իսկ փ՝ շնչեղ խուլ (ph): Այսօր էլ հայտնի

մեծագույն մասը գոնե բառակցում ր հնչում է իբրև շնչեղ թըր-
թըրոտն բաղաձայն և հատկապես այս հնչյունը պահպանվում է Կի-
լիկիայի հայախոս վայրերում (Ջելթուն և Հաճին.—Մարաշի ճիշտ
հնչյունը չգիտեմ.—մյուս վայրերը թուրքախոս են):

Միջին հայերենը մի արիշ հատկանշական կողմ էլ ունի.—
ոնգականին հաջորդող պայթականը, եթե հին հայերենի թրթուռն
բաղաձայնն է, միջին հայերենում չի վերածվում պարզ խուլի
(ինչպես դառնում էին բոլոր թրթուռները), այլ մնում է թրթը-
րոտն: Ըստ այսմ հիևց բառը ոչ թե զրվում է հնի նման հիևց,
այլ հիևց, որ Կիլիկյան աբուրեհնով կարգացվում է hing:

Կիլիկյան ձայնաշարժության այս կետն էլ կենդանի է արդի
բարբառներում: Այսպիսով միջին հայերենը տեք է դառնում ոչ
թե պայթականների երեք աստիճանի, այլ չորս.—պարզ խուլ,
շնչեղ խուլ, պարզ թրթուռն և շնչեղ թրթուռն (ր, ր', պ, փ = b,
bh, p, ph և այլն):

Դրա համար է, որ Կիլիկիայի հայերը ֆրանսերենն p, t, c և
այլն պայթականները, եթե երբեմն նշանակել են փ, բ, ք և այլն,
մեծ մասամբ նշանակել են ր, գ, դ և այլն: Նրանք տատանվել են
իրավամբ այս երկու շարքի բաղաձայնների միջև, որովհետև տե-
սել են, որ ֆրանսերենի p, t, c պայթականները անչափ շնչեղ
չեն, ինչպես հայերեն փ, բ, ք, բայց նմանապես այնպես թրթուռն
չեն, ինչպես պ, կ, ա (ըստ Կիլիկյան արտասանության): Մնաց p,
գ, դ շարքը, որ ականջի համար ավելի մոտիկ տպավորություն էր
գործում: Այժմ էլ Լեհաստանի, Հունգարիայի և Սուչավայի հայե-
րը, որոնք ունեն պ, կ, ա (թրթուռն), փ, բ, ք (թավ) և ք', գ',
դ' (շնչեղ թրթուռն) բաղաձայնները, եվրոպական p, k, t ձայնե-
րը տառադարձում են ր, գ, դ, ավելի հարմար գտնելով այս շար-
քը: Նմանապես Փոքր-Ասիայի և Արևմտյան Հայաստանի դանա-
զան հալ բարբառները, ունենալով նույն երեք շարքի բաղաձայն-
ները, եվրոպական նույն բաղաձայնները, ավելի հարմար են գրու-
նում տառադարձել շնչեղ թրթուռն ր, գ, դ (այսպես Սեբաստիա,
Երզնկա, Պարբերդ, Կարին և այլն):

Վերջապես նույնիսկ Պոլսը, որ ունի միայն երկու շարք
բաղաձայն (թավ և պարզ թրթուռն), ավելի հարմար է գտնում
նույն տառադարձությունը: Գրում են Փարիզ կամ Բարիզ, որոնք
իրենց համար միևնույն հնչումն ունեն. բայց զգալով, որ ֆրան-
սերեն p այնքան ուժեղ չէ (շնչեղ) որչափ հայերեն փ, լավագույն

են համարում գրել ր (բայց ոչ երբեք պ-ով Պարիզ, ինչ որ պի-
տի հնչվեր Bariz):

Վերջապես ունենք այս առթիվ եվրոպացի ամենագիտակ մի
անձի ականջարար վկայությունը: Հայազես Մելն, ֆրանսիացի,
ունենալով պայթականների մաքուր հնչման գիտակցությունը և
ճանաչողությունը (ինչ որ պակասում է գերմանական և անգլիա-
կան ականջներին), ապրելով 3 շաբաթ Աշտարակում և գրի տանե-
լով ժողովրդական մի պատմություն, որ թեև պարզ էր նրան ան-
գրպես մի գլուզացի (1891 հուլիս): գրում է. «p, q, r բաղա-
ձայնները հնչվում են առանց թրթուռի» (տես իմ Les explosi-
ves, p. 16): Պոսքը բնականաբար շնչեղ թրթուռն ր, գ, դ... ձայ-
ների համար է, որոնք այսօր էլ այսպես են հնչվում թե Աշտա-
րակում և թե Երևանում:

Միայն մի կես կա, երբ կիլիկյան հայերենը պ, կ, ա բաղա-
ձայնները պահում է հին հնչման համաձայն, իբրև ֆրանսերեն p,
k, t. այդ է ս, շ բաղաձայններից հետո՝ բառակցում, բառամի-
ջում և բառավերջում: Օրինակ՝ սպանել, հասկնալ, հարուստ:
Մրան սպացայց են ֆրանսերեն chaste!, hospital բառերի տառա-
դարձությունը (գրված ջասանլ, օպիբալ): Այս տարբերությունը
բխում է ս, շ բաղաձայնների խլությունից և չի ներկայացնում
օրինքի համար բացառություն:

Այժմ պետք է բացատրել, թե ինչպես է առաջանում խուլ
բաղաձայնի թրթուռը լեզվի մեջ (Rousselot, Principes, II, 948):

Ընդհանուր ձայնաբանությունից հալանի է, որ սրա առաջին
պատճառը ձայնավորն է: Երբ խուլ բաղաձայնը գտնվի երկու ձայ-
նավորի միջև (օրինակ ара), այդ ձայնավորները երկու կողմից
պահում են խուլ բաղաձայնը բանտարկյալի նման: Բանտարկու-
թյունը կատարվում է ոչ թե լեզվի կամ շրթանքների միջոցով,
այլ խոչակի: Նախաձեռնությունն սկսում է լեզվից. սրա հողավոր-
ման ուժը պակասում է, բայց խոչակի թրթուռը, որ սկսել էր
նախորդ ձայնավորից և պիտի դադարեր խուլ բաղաձայնի միջո-
ցին, հետո նորից սկսելու համար, կարող է չդադարել և դեռ շա-
րունակվել, և եթե p-ի պայթյունն էլ կորցնի իր ուժը, ոչինչ չի
խանգարում, սրպեսզի խոչակի թրթուռները շարունակվեն անընդ-
հատ, մինչև երկրորդ ձայնավորը. այսպես խուլը կդառնա թրթը-
րոտն. p > b:

Հայերենի ձայնափոխությունների ընդհանուր քննությունը
զբաղվել է հասկապես Մորիս Գրամոնը մի ընդարձակ հոդվածի

մեջ, որ բանում է 47 էջ (MSL 20, p. 213—259): Քննելով թե հին հայերենի ձայնափոխությունները (մանրամասն) և թե միջին հայերենի ու բարբառների երևույթները (մասնակի) կզրակացնում է:

Հայերենի մեջ ձայնափոխությունները կատարված են իրար հետ շատ անհամապատասխան ձևով: Սակայն այս անհամապատասխանությունը ոչ թե պատահականության արդյունք է, այլ արդյունք է միշտ մասնավոր պայմանների, որոնց պարզարանությունը երևան է գալիս նրանց կատարյալ կանոնավորությունը: Այնպես որ ձայնական փոփոխությունների կանոնավորության մեծ օրենքը ոչ թե միայն չի խախտվում այստեղ, այլ գուրս է գալիս ավելի ցայտուն և ավելի հաստատուն կերպով:

22. ՆՈՐ ՀԱՅԵՐԵՆԻ ԶԱՅՆԱՓՈՒՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տեսանք նոր հայերենի ձայնափոխությունների օրենքները, այս օրենքները կարելի է ամփոփել հետևյալ ձևով.

1. Հին հայերենի շնչեղ խուլերը (փ, ք, բ, ց, չ) նոր հայերենի մեջ առհասարակ անփոփոխ են մնում, իբրև շնչեղ նրանց արտասանության ժամանակ գործարանների ճնշումը ուժեղ չէ, բայց և այնպես նրանք ոչ մի բարբառում չեն վերածվել շփականի (ինչպես հունարենում, գենդերենում և այլն):

2. Հին հայերենի պարզ խուլերը (պ, կ, ա, ծ, ճ) նոր բարբառների արևելյան բաժնում մնում են անփոփոխ, իսկ մյուսների մեջ դառնում են թրթռուն:

3. Հին հայերենի թրթռուն պայթականները (բ, գ, դ, ձ, ջ) շատ քիչ տեղ պահված են զուտ պարզ թրթռուն, շատ տեղ գործել են շնչեղ թրթռուն, մի քանի բարբառներում էլ դարձել են շնչեղ խուլ:

2-րդ երևույթից կարելի է հետևցնել, որ հին հայերենի խուլերը ուժեղ չէին, այսինքն պայթական գործարանների ճնշումը թույլ էր. ուրիշ խոսքով նման չէին նրանք այսօրվա ֆրանսիերեն ք, տ, կ ձայներին, որոնք թեև խուլ են, բայց արտասանվում են գործարանների ավելի ուժեղ ճնշմամբ:

3-րդ երևույթից կարելի է հետևցնել, թե հին հայերենի թրթռությունները կատարյալ թրթռուն չէին, այսինքն թրթռումների սկսում էին ոչ թե պայթման հենց սկզբից (ինչպես է այժմ ֆրանսիերեն ք, տ, ց ձայների հնչման մեջ), այլ կամ փակվելու միջոցին և կամ հենց պայթման հետ միաժամանակ (Meillet, Esquise, 6):

Գ Լ ՈՒ Խ Ի Գ

ԱՆՄԻՋԱԿԱՆ ԵՎ ՆՄԱՆՈՂԱԿԱՆ ԶԱՅՆԱՓՈՒՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջատվական ձայնափոխությունների և անմիջական անմանողական ձայնափոխությունների միջև կգտնվի հիմնական տարբերությունն այն է, որ առաջիններն ընդհանուր բնույթ ունեն և հատուկ են լեզվի մեջ միևնույն ժամանակ գտնված բոլոր բառերին, իսկ երկրորդները մասնավոր բնույթ ունեն և հատուկ են լեզվի միայն որոշ բառերին: Երկար ժամանակ այս վերջինները համարվում էին բացատրություն և խանդարում էին ձայնարանական օրենքների կանոնավորության և բացարձակության սկզբունքը. արդի գիտությունը անշատել է սրանք, առաջինների սկիզբը դնելով բնախոսական պատճառներ, երկրորդների սկիզբը՝ հոգեբանական:

Չպեաք է կարծել, թե անմիջական և անմանողական ձայնափոխությունները լեզվի բոլորովին անկարգ և անկանոն երևույթներ են: Ինչպես քննությունները ցույց են տալիս, սրանք էլ ունեն իրենց հատուկ օրենքները, սրանք հետզհետե մշակվում են ուսումնասիրողների կողմից:

Այս կարգի բոլոր երևույթները կարող ենք դասավորել հետևյալ ձևով.

1. Նմանաբանություն (analogie)
2. Համամանություն (assimilation)
3. Տարանմանություն (dissimilation)
4. Սաշաձևում (contamination, croisement)
5. Տեղափոխություն (métathèse)
6. Սղում և կրճատում (élision et raccourcissement)

7. Հարակցում կամ հավելում (agglutination)
8. Հարասութիւն (répétition)
9. Նախասութիւն (articulation anticipée)
10. Թուրմբոսում (malentendu)
11. Գրութիւն նմանութիւնից առաջացած ձևեր
12. Տաբու (tabou)
13. Անկանոն բառեր (mots irréguliers)
14. Ուսումնական բառեր (mots scientifiques)
15. Ընդլայնում (amplification)
16. Ժողովրդական ստուգաբանութիւն (étymologie populaire)
17. Գիտական ստուգաբանութիւն (étymologie scientifique)
18. Զայնափոխութիւն անորոշութիւն կամ շփոթ վիճակ:

1. ՆՄԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

(Analogie)

Կապես նմանարանութիւն ասելով հասկանում ենք մի որևէ լեզվական ձև, որ կազմված է նմանութիւն կամ կաղապարմամբ մի ուրիշ ձևի, որ արդեն գոյութիւն ունի լեզվի մեջ: Այսպես, երբ ասում ենք հացի, մարդի, փողոցի, սեղանի և այլն, այս բոլորը նմանողութիւններ են սեռականի ընդհանուր փայլ: Նույնպես, երբ ասում ենք սիրեցի, գործեցի, բողբոջեցի, գրեցի և այլն, այդ բոլորը նմանողութիւններ են կառարչայի ընդհանուր փայլ: Դարձել, երբ ասում ենք քաղաքային, փողոցային, աշխարհային, երկաթուղային և այլն, այդ բոլորը նմանողութիւններ են վերաբերական ածականի:

Նմանողութիւն գեղեցիկ օրինակ են ներկայացնում գերանունները, որոնք շարունակ նմանվում են իրար հետ բոլոր լեզուների մեջ. օրինակ՝ ֆրանսերեն nous, vous, հայերեն սորա, դորա, նորա, և այլն:

Ըստ այսմ, լեզվի մեջ ընդունված բոլոր թեքական և ածանցական ձևերը էապես նմանողութիւններ են: Քերականութիւն ամեն մի կանոն մի կաղապար է, որի վրա ձուլվում են բոլոր բառերը:

Բայց լեզվաբանութիւն մեջ նմանողութիւն ասելով հասկանում ենք նույն երևույթի մի ուրիշ պատկերը, որ հետևալն է:

Ամեն լեզվի մեջ էլ թեքական և ածանցական ձևերը կազմված են սովորաբար մի ընդհանուր կանոնի համաձայն: Բայց այդ ընդհանուր ձևերի կողքին կան նաև ուրիշ ավելի քիչ գործածված կամ մասնավոր ձևեր, որոնց հետևում են մի քանի սակավաթիվ բառեր: Սրանք համարվում են կամ երկրորդական ձևեր և կամ բացասութիւններ ու անկանոնութիւններ:—Նմանողութիւնը անալեզվի մեջ գտնված այդ անկանոն կամ մասնավոր ձևերի վերածումն է ավելի ընդհանուր և կանոնավոր ձևերի, կամ որ նույն է՝ բացասութիւնների ջնջումը և հպատակեցումը սովորական կանոնին:

Հայերենի մեջ սեռականի սովորական ձևն է հաց—հացի և լեզվի բառերի ամենամեծ մասը կազմվում է այս ձևով: Բայց այս ձևի կողքին կան մի քանի ուրիշ տեսակ սեռականներ: Օրինակ՝ մարդ և հայ բառերի սեռականը լինում է մարդու, հայու, իբրև կանոնավոր շարունակութիւն գրաբարի մարդոյ, հայոյ ձևերի: Այսպես է արեմտյան գրական հայերենում և զանազան բարբառներում: Արդ, եթե այս ձևերը հաց—հացի ձևի օրինակով զարձենք մարդի, հայի, ինչպես է արեւելյան գրականում, գործադրած կլինենք նմանողութիւն օրենքը:

Առաջին լծորութիւն մեջ կատարչայի եզակի առաջին դեմքի վերջավորութիւնն է -եցի ինչպես՝ սիրեցի, գրեցի, մարքեցի: Այս կանոնից բացասութիւն են կազմում գրաբարում ածեմ, բերեմ, հանեմ լայերը, որոնց կատարչայը լինում է ածի, բերի, հանի. գրաբարում ածեցի, բերեցի, հանեցի ծիծաղելի սխալներ են. այս սխալները ժամանակին գործել են անշուշտ մարդիկ. բայց սխալները հետ ընդհանուր են դարձել և այսօր ամեն տեղ այս լայերը նախկինների սճով խոսարճելով ասում են ածեցի, հանեցի. կանաև բերեցի, լայց գեա ընդհանուր տարածված չէ. կատարված է նմանողութիւն օրենքը:

Ըստ այսմ նմանողութիւնը մի միջոց է, որ գործում է մի-օրինակութիւն պահանջից դրդված. միևնույն բացատրութիւն կամ միևնույն կարգի համար բազմաթիվ ձևեր ունենալը մաքի համար ավելորդ ծանրութիւն է և բերանը նույնիսկ անգլխակցաբար վազում է միօրինակ ձևերի:

Վերի օրինակների մեջ միշտ մասնավոր դեպքեր են, որ հետևում են ընդհանուրին և այսպես է սովորաբար նմանողութիւն երևույթը: Բայց կան լեզուների մեջ շատ դեպքեր, երբ ընդհանուրը ձևափոխվում է մասնավորի կաղապարով, այսինքն՝ մեկ-երկու

բան բավական են իրենց հետեից քաշելու մի ամբողջ խումբ բան-
ուհի, կամ նույնիսկ առանց այդպիսի պայմանավորվածության, մի
բառ դադարեցնելի զուգորդությունը նմանեցվում է մի ուրիշ բա-
ռի հետ և այդ նմանությունն պատճառով նրա պարունակած ձա-
ներից մեկը կամ մյուսը ներմուծվում է այդ բառի մեջ:

Այս բացատրությունից գաշակելի է անշուշտ, որ նմանողու-
թյունը տեղի է ունենում երկու միատեսակ բառերի կամ ձևերի
միջև, ինչպես երկու գոյականի կամ երկու անվանի կամ երկու
բայի, երկու մասնիկի կամ երկու հորվական և կամ երկու բաղա-
կան ձևերի միջև և այլն:

Հայերեն ունենք ձաշոց, Մաշոց եկեղեցական գրքերի անուն-
ները. մյուս կողմից ունենք Սաղմոս, որ առաջանում է հունարեն
ψαλμός ձևից. առաջինների մեջ -ոց հոգնակի սեռականի վերջավոր-
ությունն է. վերջինի մեջ -ոս հունարեն -ός մասնիկի տառադար-
ձությունն է. արդ, այս բառը զուգորդելով առաջինների հետ (եր-
կուսն էլ իբրև եկեղեցական գրքեր), Սաղմոս բառն էլ զարձեղ է
նոր նախնիների բարբառում Սաղմոց: Մինչև անգամ Պատարա-
զամատոյց (=Պորհրդատեր) բառի տեղ նույն ոճով ունենք Պա-
տարազմատոց (նորսովիկ, 193—194, էրեք անգամ):

Մասկանի Կուսկետում Աստուած բառը դառնում է Ըստուց,
որն նմանողությամբ Քրիստոս ևս դառնում է Քրիստուց. երկու-
սը միասին առած են Ըստուց ու Քրիստուց (Աստուած ու Քրիս-
տոս) («Արևելք», 1898, նույնիսկ 19):

Յուևվար և սեպտեմբեր ամսանունների հունարենի համա-
պատասխան ձևեր են. բայց երկուսն էլ իրենց հաջորդ փեարվար
և հոկտեմբեր ամսանունների նմանողությամբ տեղ-տեղ զարձեղ
են հուևրվար, սեկտեմբեր:

Եօրն, ուր, ինն, տասն գրաբարի սովորական ձևերն են,
որոնք աշխարհարարի մեջ կանոնավորապես դառնում են յոթը,
ուր, ինը, տասը. սակայն ուր՝ նախորդ և հաջորդ ձևերի նմանո-
ղությամբ դառնում է ութը: Այս եղանակով նաև եօրանասուն, ուր-
սուն, իննսուն դառնում են զավառականում օյաանասուն, ուրա-
նասուն, իննանասուն: Միչև իսկ այժմ սկսել են գործածել Երե-
վանում հինգը, վեցը, չորսը, փոխանակ չորս, հինգ, վեց (երեքն
էլ միավանկ. դեռ չեն ազդել երկու, երեք, որովհետև երկավանկ
են):

Գրաբարում ակն բառն ունի անսովոր հոգնակի՝ աչք ձևը.
նույնի նմանությամբ ունկն—ակակնչք. առաջինի մեջ (ունկն)

կն նմանությամբ ակն բառի, երկրորդի մեջ ակակնչք (նախապես
*ակակնչք)՝ չք նմանությամբ աչք բառի:

Պարսկերենում گورس گورس gurisne կամ gurisne «քաղցած» ժողո-
վրդական լեզվի մեջ զարձեղ է gošne, որի մեջ is>š ձայնափո-
խությունը բարբառի անտեղի է: Պատճառն է گورس tašne «ծարա-
վի», որ գործածվելով նրա հետ, ձևի նմանության պատճառով s
զարձեղ է š. tašne-gurisne «ծարավի-քաղցած» զարձեղ է tašne-
gašne:

Տարի բառից կազմված է տարեկան, որի մեջ է ձայնափոխ-
իա երկրորդի սգումն է. նրա նմանողությամբ ամսական և
օրական բառերն էլ ժողովրդական լեզվով ձևափոխվելով՝ զարձեղ
են ամսեկան, օրեկան:

Ունենք եզնարած և գառնարած բառերը, որոնց մեջ և պատ-
կանում է եզն և գառն բառերին. Գանձակի բարբառով ասվում է
սակայն նաև հլնարած «ուլարած», որի մեջ և առաջացել է մյուս
երկուսի նմանողությամբ (հաջորդեց Ա. Տոնյան): Այսպես նաև՝
Պօլի բարբառում աղջիկուրիւն (նմանությամբ հարսուրիւն
բառի):

Գասական թվականներից երրորդ, չորրորդ ունեն երկու բ.
առաջինը արմատական է (երեք, չորք), երկրորդը՝ անանցական:
Սրանց նմանությամբ շատեր հնչում են, ոմանք էլ զրոմ են հին-
գերրորդ, վեցերրորդ և այլն, որոնց մեջ երկու բայերին և սխալ
է (փոխանակ հինգերրորդ վեցերրորդ և այլն):

Նմանաբանությունը այնպիսի մի երևույթ է, որ կարող է մի
չնչին կեանքի սկսելով, եթե այդ կեանք մի կարևոր հանդամանք է
ներկայացնում, տարածվել, վարակել շատերին և վերջ ի վերջո
ընդհանուր դառնալ:

Սրա լավագույն օրինակը արեևրահայ բարբառի հալցական
հալոզն է:

Այս երևույթը սկսվում է դերանուններից:

Գիտենք, որ դերանունների մեջ ունենք զեմ առ զեմ՝

արական մեզ, բեզ, ձեզ.

հալցական զմեզ, զբեզ, զձեզ.

Սրանք արտաքուստ իրար նման, բայց ներքուստ բարբառի
տարբեր հորիզոններ են: Հետագայում նախորդներն առհասարակ
ջնջվելով հայերենից, այս երկու ձևերը միացան և արական ու հալ-
ցական զարձան հավասարապես մեզ, բեզ, ձեզ:

Այսպիսով հիմք դրվեց մի նոր օրենքի՝ տրականի և հայցականի միացումը՝ նախապես միայն շնչավոր և բանական էակների համար: Քիչ-քիչ անասունների անուններն էլ ընկան նրանց շարքը՝ գավառական կովին սպանեցին, եզին մորթեցին: Եվ այժմ, նույնիսկ գրական լեզվի մեջ, սկսել է տարածվել մինչև անգամ անշունչ անասունների համար արական հոլով սեռի խնդրի (ուղիղ խնդրի) գործածությունը, որ թվում է թե վերջ ի վերջս ընդհանուր պիտի դառնա:

Նմանաբանությունը, ինչպես ասացինք, լայն չափով գործադրվում է քերականության մեջ և դա պատճառ է լինում մի կողմից ձայնարանական օրենքների մեջ անկանոնություններ մտցնելու, բայց մյուս կողմից էլ քերականական կանոնների մեջ միօրինակություն և կանոնավորություն մտցնելու:

Հին ֆրանսերենը հոլովում և խոնարհում էր հետևյալ ձևով՝ ուղղական sire, maire, ber.

հայցական seignor, maior, baron.

ներկա եզակի առաջին դեմք je trouve, je parole.

ներկա հոգնակի առաջին դեմք nous trouvons, nous parlons:

Այս յուրքը լատիներենից առաջացած կանոնավոր ձևեր են, ձայնական օրենքների կանոնավոր գործադրությունը: Բայց նրանք անհամապատասխան են իրար մեջ, ուստի նոր ֆրանսերենը կրկնակ ձևերից մեկը կամ մյուսը ընդհանրացնելով նմանողությունը հոլովում է ուղղական-հայցական seigneur, maire, baron և խոնարհում է je trouve, nous trouvons, je parle, nous parlons և այլն:

Հնգվորդական նախաբերվում էական բալի եզակի առաջին դեմքն է esmi, որ առաջ է հաչերեն կանոնավոր կերպով եմ, լատիներեն դարձրել է sum՝ հոգնակի առաջին դեմքի sumus ձևի օրինակով:

Գերմաներեն քերականության սովորական օրենքներից մեկն է ածանցման ժամանակ արմատի ձայնավորը «անուշցնել»՝ ալսպես rot, erröten—gott, göttin և այլն: Այժմ այս երևույթը վերացվել է և նորակերտ բառերը, արմատական ձևի նմանողությունը, պահում են առաջին ձայնավորը. ինչպես՝ Bahn—bahnen, Ton—vertonen և այլն:

Ֆրանսերենում արհեստավոր ցույց տալու համար դրվում է -ier մասնիկը. այսպես porte—portier, route—routier. սրանց մեջ է արմատական է. բայց ուրիշ բառեր, ինչպես clou, fer—blanc

և այլն, որոնց արմատի ձայրին է չկա, սրանց նմանողությունը դառնում են cloutier, ferblantier

Բերենք ուրիշ օրինակներ հայերենից.

Մի խումբ բարբառների մեջ կատարյալի եզակի առաջին դեմքը ստանում է մ վերջավորությունը, որ գրաբարի և ուրիշ բարբառների մեջ չկա. ինչպես՝ գնացիմ, տեսամ, կերամ (փոխանակ գնացի, տեսա, կերայ): Այս եկամուտ մ ձայնը ավելացել է նմանողությունը սահմանական ներկայի և ապառնիի եզակի առաջին դեմքի, որ ունենք միշտ մ ձայնը՝ իբր նշան առաջին դեմքի (տեսնում եմ, կտեսնեմ):

Աշխարհաբարի մեջ և վերջավորությունը հանգով բառերից ոմանք հոգնակիի մեջ պահում են այս և ձայնը, օրինակ՝ մատներ, ձեռներ, ոտներ. նմանապես եզներ, գառներ, գանձակի բարբառում վերջիններիս նմանողությունը սավում է հուլներ «ուլեր», որ և բոլորովին եկամուտ է (հաղորդեց Ա. Տոնոյան):

Չպետք է կարծել, թե նմանողությունը կատարվում է միշտ լեզվի մեջ տիրող ընդհանուր ձևերի կադապարամբ: Ոչ: Կան ձևեր, որոնք չեն ընկնում նմանողության օրենքից. դրանք լեզվի ամենասովորական բառերն են, որոնք իրենց հաճախակի գործածությունը պատճառով լավ սովորված են լինում և չեն փոխվում. այսպես, օրինակ՝ հօք, մօք, եղբօք, քրոջ: Այսպիսիները երբեմն նույնիսկ իրենք են ազդում ուրիշների վրա և քաշում իրենց. այնպես որ մի շատ երկրորդական ու հազվագյուտ ձև, որ լեզվի մեջ անկանոն ու բացառիկ էր, կարող է կազմել զանազան բառերի մի փոքր շրջանակ և մինչև իսկ գտնալ ընդհանուր տիրող: Կարևորը, ուրեմն, այս դեպքում թիվը կամ քանակը չէ, այլ այն, որ բառն ունենա մի շատ բնորոշ, աչքառու ու հարմարավոր ձև. օրինակ՝ գրաբարում միայն կին բառն է, որ սեռականը կազմում է -ոջ մասնիկով. այդ միակ ձևը սակայն աշխարհաբարի մեջ իրեն է քաշել բազմաթիվ բառեր, ինչպես բոյք, տեր, կեսուր, աներ, ընկեր և այլն: Դրաբարի մեջ մի քանի բառ միայն կա, որ -ուած գերբայական վերջավորությունն ունի, ինչպես՝ հաստուած. և ահա այդ բացառիկ ձևը այսօր աշխարհաբարի մեջ դարձել է կրավորականի ընդհանուր տիպ բոլոր բալերի և բալի բոլոր ձևերի համար:

Կան և նմանողության անհատական դեպքեր, որ ստեղծում են գրողները կամ խոսողները բոպի ազդեցություն տակ և հարկը պահանջված ժամանակ, դրանք կարող են մի օր անհատականից անցնել ընդհանուրի, այսինքն մանկ լեզվի մեջ, օրինակ՝

Այսպիսով հիմք դրվեց մի նոր օրենքի՝ տրականի և հայցականի միացումը՝ նախագես միայն շնչավոր և բանական էակաների համար: Քիչ-քիչ անասունների անուններն էլ ընկան նրանց շարքը: գավառական կովին սպանեցին, եզին մորթեցին: Եվ այժմ, նույնիսկ գրական լեզվի մեջ, սկսել է տարածվել մինչև անգամ անշունչ անասունների համար արական հոլով սեռի խնդրի (ուղիղ խնդրի) գործածությունը, որ թվում է թե վերջ ի վերջս ընդհանուր պիտի դառնա:

Նմանաբանությունը, ինչպես ասացինք, լայն չափով գործադրվում է քերականության մեջ և դա պատճառ է լինում մի կողմից ձայնարանական օրենքների մեջ անկանոնություններ մտցնելու, բայց մյուս կողմից էլ քերականական կանոնների մեջ միօրինակություն և կանոնավորություն մտցնելու:

Հին ֆրանսերենը հալվում և խոնարհում էր հետևյալ ձևով. տղղական sire, maire, ber.

հայցական seignor, maior, baron.

ներկա եզակի առաջին դեմք je trouve, je parole.

ներկա հոգնակի առաջին դեմք nous trouvons, nous parlons:

Այս ընթացքը լատիներենից առաջացած կանոնավոր ձևեր են, ձայնական օրենքների կանոնավոր գործադրությունը: Բայց նրանք անհամապատասխան են իրար մեջ, աստի նոր ֆրանսերենը կրկնակ ձևերից մեկը կամ մյուսը ընդհանրացնելով նմանողությունը հալվում է ազգական-հայցական seigneur, maire, baron և խոնարհում է je trouve, nous trouvons, je parle, nous parlons և այլն:

Հնդեվրոպական նախալեզվում էական բալի եզակի առաջին դեմքն է esmi, որ առաջ է հալերեն կանոնավոր կերպով եմ, լատիներեն գարծրել է sum՝ հոգնակի առաջին դեմքի sumus ձևի օրինակով:

Գերմաներեն քերականության սովորական օրենքներից մեկն է ածանցման ժամանակ արմատի ձայնավորը «անուշեցնել»՝ այսպես rot, erröten—gott, göttin և այլն: Այժմ այս երեսույթը վերացվել է և նորակերտ բառերը, արմատական ձևի նմանողությունը, պահում են առաջին ձայնավորը, ինչպես՝ Bahn—bahnen, Ton—vertönen և այլն:

Ֆրանսերենում արհեստավոր ցույց տալու համար գրվում է -ier մասնիկը, այսպես porte—portier, route—routier. սրանց մեջ է արմատական է. բայց ուրիշ բառեր, ինչպես clou, fer—blanc

և այլն, որոնց արմատի ձայրին է չկա, սրանց նմանողությունը գառնում են cloutier, ferblantier

Բերենք ուրիշ օրինակներ հայերենից.

Մի խումբ բարբառների մեջ կատարյալի եզակի առաջին դեմքը ստանում է մ վերջավորությունը, որ գրաբարի և ուրիշ բարբառների մեջ չկա. ինչպես՝ գնացիմ, տեսամ, կերամ (փոխանակ գնացի, տեսա, կերայ): Այս եկամուտ մ ձայնը ավելացել է նմանողությունը սահմանական ներկայի և ապառնի եզակի առաջին դեմքի, որ ունենք միշտ մ ձայնը՝ իբր նշան առաջին դեմքի (տեսնում եմ, կտեսնեմ):

Աշխարհաբարի մեջ և վերջավորությունը հանգով բառերից ոմանք հոգնակի մեջ պահում են այս և ձայնը. օրինակ՝ մառներ, ձեռներ, ոտներ. նմանապես եզներ, գառներ, գանձակի բարբառում վերջիններիս նմանողությունը ասվում է հուլներ «ուրեր», որ և բոլորովին եկամուտ է (հաղորդեց Ա. Տոնոյան):

Չպիտակ կարծել, թե նմանողությունը կատարվում է միշտ լեզվի մեջ տիրոջ ընդհանուր ձևերի կաղապարմամբ: Ոչ: Կան ձևեր, որոնք չեն ընկնում նմանողության օրենքից. դրանք լեզվի ամենատիրական բառերն են, որոնք իրենց հաճախակի գործածությունը պատճառով՝ լավ սովորված են լինում և չեն փոխվում. այսպես, օրինակ՝ հօր, մօր, եղօր, քրոջ: Այսպիսիները երբեմն նույնիսկ իրենք են ազդում ուրիշների վրա և քաշում իրենց. ահպես որ մի շատ երկրորդական ու հազվագյուտ ձև, որ լեզվի մեջ անկանոն ու բացառիկ էր, կարող է կազմել զանազան բառերի մի փոքր շրջանակ և մինչև իսկ դառնալ ընդհանուր տիրոջ: Կարևորը, ուրեմն, այս դեպքում թիվը կամ քանակը չէ, այլ այն, որ բառն ունենա մի շատ բնորոշ, աչքառու ու հարմարավոր ձև. օրինակ՝ գրաբարում միայն կից բառն է, որ սեռականը կազմում է -ոջ մասնիկով. այդ միակ ձևը սակայն աշխարհաբարի մեջ իրեն է քաշել բազմաթիվ բառեր, ինչպես բոյր, աեք, կեսուր, աներ, ընկեր և այլն: Գրաբարի մեջ մի քանի բառ միայն կա, որ -ուսը դերբայական վերջավորությունն ունի, ինչպես՝ հաստուսած. և ահա այդ բացառիկ ձևը այսօր աշխարհաբարի մեջ դարձել է կրավորական ընդհանուր տիպ բոլոր բայերի և բալի բոլոր ձևերի համար:

Կան և նմանողության անհատական դեպքեր, որ ստեղծում են գրողները կամ խոսողները բոպի ազգեցություն սակ և հարկը պահանջված ժամանակ, դրանք կարող են մի օր անհատականից անցնել ընդհանուրի, այսինքն մանկ լեզվի մեջ, օրինակ՝

«Վրթանես կարողիկոսեց յաւարս Խոսրով Կոսակի» (Դադ-բաշեան, Փափասոս Բիւզանդացի, Վիեննա, 1894, էջ 26). սովորական է սակ կարողիկոսութիւն վարեց, կարողիկոս նստալ):

շաքարն—թեւի մեջ շաքար գցել:

Նամանութիւն հետաքրքրական օրինակ է Սուչավայի բարբառով օգտուլ «արիշ», որ արեւելյան թուրքերենի oʒga բառից է փոխ առնված, բայց մեկալ համանիշի վերջավանկի (-կալ) նամանութիւն ստացել է նաև 1 ձայնը:

2. ՀԱՍՄԱՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ

(assimilation)

Երբ գործարանները իրար հետեից արտաբերելու են երկու ձայն, որոնցից մեկը մասամբ նման է արդեն մյուսին, կամ եթե մի գործարան առաջին ձայնը արտաբերելուց հետո իսկույն մի արիշ գիրք պիտի վերցնի հաջորդ ձայնն արտաբերելու համար, մասնակի նամանութիւնն ավելի են մեծացնում կամ փոխանակ տարրեր գիրքեր վերցնելու, երկուսի համար էլ միևնույն գիրքն են պահում, որով այդ երկու ձայների փոխարեն ստացվում են երկու ավելի նման կամ բոլորովին նույն ձայներ: Այս երևույթը կոչվում է համանամանութիւն: Օրինակ, բուլղ բառի մեջ, որ հնչվում է բուլթ, դ համանամանութիւնը դարձել է խ: Համանամանութիւն է բուլթ, դ համանամանութիւնը դարձել է խ: Համանամանութիւն օրինակ է, նամանակս, գրարար ի գրաւս գալ > գնվառական գրազ գալ, նախգիրը նախ ջնջվելով և լ ձայնը ընկնելով, ստացվել է նախ գրաս գալ, ապա ս ազդվելով նախորդ և հաջորդ թրթուռն գ-ից, ինքն էլ դարձել է թրթուռն:

Ամեն լեզվի մեջ համանամանութիւնը մեծ դեր ունի. հոլովման ու խոնարհման, բարդութիւն և ածանցման մեջ միշտ գործում է համանամանութիւն օրինքը: Սանսկրիտը լիքն է համանամանութիւն բազմաթիւ օրինակներով և սանսկրիտ քերականութիւնն ունի առանձին ընդարձակ բաժին՝ ուսումնասիրելու այս օրենքները, որ կոչվում է sandhi: Պակաս հարուստ չեն հունարենն ու լատիններենը այսպիսի օրենքներով, այնպես որ առանց այդ օրենքների բացատրութիւն, հունարեն քերականութիւնը անհասկանալի ու անըմբռնելի է:

Համանամանութիւնը լինում է երկու տեսակ. առաջադասական (progressive) և հետադարձ (regressive). եթե ձևափոխված ձայնը ավելի առաջ է քան ձևափոխողը, համանամանութիւնը կոչվում է

հետադարձ: հակառակ դեպքում կոչվում է առաջադասական. օրինակ՝ ֆրանսերեն absurde բառը, որ փոխ է առնված թե հայերեն և թե թուրքերեն, մեր մեջ տալիս է ափսուրդ, թուրքերենի մեջ abuzart. առաջին դեպքում b հարմարվելով հաջորդ s-ին դարձել է p (հետադարձ), երկրորդ դեպքում s հարմարվելով b-ին դարձել է z (առաջադասական): Լինում են դեպքեր, երբ համանամանութիւնը միաժամանակ լինում է թե առաջադասական, և թե հետադարձ. օրինակ՝ ֆրանսերեն maman բառի մեջ, որ հնչվում է ma-ma, a ձայնը զանգվելով երկու m-ի միջև, ազդվել է հալասարապես երկուսից էլ և վերածվել a-ի:

Համանամանութիւնը կարող է լինել փոխադարձ (réciproque). առաջինը հարմարվում է երկրորդին, երկրորդը հարմարվում է առաջինին և ստացվում է նույնը. այսպես, արաբերեն ծէ դառնում է dd. ասուրերեն zš և šš դառնում են ss. ինչպես՝ արաբերեն ištakara > iddakara «հիշեց», ասուրերեն izūššū > izūssu «բաժանեց այն», muraššu > murussū «իր հիվանդութիւնը» (Rochel., Précis, 90):

Համանամանութիւնը կարող է տեղի ունենալ երկու անմիջական հարակից ձայների միջև, ինչպես նաև իրարից հեռու գտնվող ձայների միջև. absurde բառի ձևափոխութիւնների մեջ հայերենը ներկայացնում է հարակից ձեր, թուրքերենը՝ հեռակա ձեր: Հեռակա ձեր օրինակ են հայերենի մեջ աչաց > աչից > աչիչ, ուսուցիչ > ուշուչիչ, Փրկիչ բոլորից > Փրկիչ բոլորիչ (Պոլիս):

Համանամանութիւնը կարող է նաև լինել ամբողջական (totale) կամ մասնակի (partielle). առաջին դեպքում նամանութիւնը կատարյալ է և վերածվում է նույնութիւն. երկրորդ դեպքում երկու ձայները նամանում են իրար, առանց նույնանալու: Այսպես absurde > ափսուրդ ձեր մեջ համանամանութիւնը մասնակի է, իսկ աչից > աչիչ ձեր մեջ՝ ամբողջական: Մասնակի համանամանութիւնը կոչվում է նաև հարմարեցում (accomodation):

Համանամանութիւնը կարող է լինել նաև 1. անգիտակից, երբ երևույթը առաջանում է դուռ գործարանական պահանջով, առանց ուշադրութիւն խոսողի կողմից, նույնիսկ հակառակ նրա կամքի, և 2. գիտակից, որ բառի այսնդարար մեղ հասած ձեր է, որ և մենք պարտավոր ենք սովորել: Առաջինները սովորաբար դրութիւն մեջ չեն նշանակվում, ըստ որում բնական են, երկրորդները անշուշտ նշանակվում են և բառի արմատական ձեր և կամ նրա մի արիշ ածանցի մեջ տարրեր ձև ունեն: Երկուսի համար

իրի օրինակ կարող ենք ասել սկիզբ բառը: Այս բառը արևմտահայոց մեջ արտասանվում է սկիսփ, որի մեջ զ համանմանությամբ դարձել է ս, հարմարվելու համար հաջորդ փ-ին. բայց ցալս հնչակա՞ն փոփոխությունը չի նշանակվում նաև գրով, որովհետև անգիտակից և ինքնին հասկանալի է և կարելի չէ արտասանել սկիզփ: Նույն բառը սակայն մեզ համար հին հայերենի համեմատությամբ գիտակից ձև է և ուրիշ դեպքերում գրվում է ս ձայնով, ինչպես՝ սկսել, սկսուածք:

Ռուսերենում рассмотреть «գտնել», расширение «լայնացում» և այլն բառերն առաջ գրվում էին թեև Յ-ով, բայց անգիտակից կերպով հնչվում էին Շ-ով. այժմ ակադեմիայի ուղղագրությունը դարձրել է рассмотреть, расширение:

Ֆրանսերենն passe par ici «անցիր այստեղով» ձևի մեջ sֆ հանդիպումը բնական և ճիշտ է. բայց երբ ասում ենք passe devant moi «անցիր իմ առջևից», իրար են հանդիպում sd և հնչվում zd, որ սակայն գրության մեջ չի նշանակվում:

Դժբախտ բառը արևելահայերի մեջ արտասանվում է ինչպես գրված է, ուրեմն ժ մնում է թրթռուն՝ երկու թրթռուն բաղաձայնների (գ, բ) միջև: Սակայն նույն բառը արևմտահայոց արտասանությամբ հնչվում է գ>ք և բ>փ ձևով, ուստի և ժ հնչվում է ինքնարերաբար շ, իր բշփախա: Բայց գրության մեջ միշտ էլ պահվում է հին պահպան ձևը՝ դժբախտ: Սրա համար է, որ անգրագետ մարդը գրում է սխալմամբ դշբախտ.—այսպես, օրինակ, Հ. Բ. Սարգիսեան, Քննադատութիւն Յովհան Մանգակունույ, Վենետիկ, 1895, էջ 212, տող 13՝ դշբաղղարար, էջ 243, տող 2՝ դշբախտօրէն:

Համանմանության զանազան դեպքերը կարելի է գաստվորել հետևյալ ձևով, համաձայն արտաբերող գործարանների.

1. Խոչակային համանմանություններ.—Թրթռուն բաղաձայնները խուլներից առաջ հնչվում են խուլ, իսկ խուլները թրթռուններից առաջ հնչվում են թրթռուն: Այս օրենքը կա գրեթե ամեն լեզվի մեջ, միայն սմանք նաև գրավորապես գործադրում են, սմանք ոչ, և կամ երբեմն գործադրում են և երբեմն ոչ: Այսպես, հունարենում օրենք է, որ երկու հարակից պայթեցականներ պետք է լինեն նույն աստիճանից, օրինակ՝ λέγω բալից՝ բալածական λέπτός, կրավորական—գերբալ λέξις.—լատիներենում scribo, scripsi, scriptum.—հնուվոր ազգեցությամբ հունարեն Δωροθεός անունը դարձել է Թարթ-

թեός.—Ֆրանսերեն s երկու ձայնավորի միջև հնչվում է 'z. 'ինչպես՝ oser, poser.—Թրթռացման և խլացման օրինակներ են՝ ֆրանսերեն rhumatisme (հնչիր ուլումառիզմ), observatoire (օպսերվատուար), je te croie (štəkrua).—անգլերեն finished (հնչի՛ր ֆինիշը) և այլն և այլն:

Հայերեն զղբգարուկ, Ատափագար «այսչափ», փոխանակ սը-ղգարուկ:

Բառավերջում թրթռուն բաղաձայնները դառնում են սովորաբար խուլ:

2. Ռեզային համանմանություն.—Առաջանում է կատիկի ուշ կամ պիկի շուտ կնիկ-իջնելով. եղած դեպքերը հետևյալներն են:

ա. Ռեզային բաղաձայնի ազգեցությամբ մտտիկ բաղաձայնը ռնգայնանում է. ինչպես՝ հունարեն τριβω, *τετριβμαι > τετριμμαί.—լատիներեն adnuo > annuo, submitto > summittito.—Ֆրանսերեն deux heures et demie > հնչված dōzōrenmi.—լատիներեն Agnes, Ignorant > հնչված an'nes, innocent.—անգլերեն comb «սանր» lamb «գառնուկ» բառերի մեջ վերջնաձայն b դառել է նախ m, հետո ջնջվել է. այնպես որ այդ բառերն այժմ հնչվում են pnd, լեմ.—օսմաներեն bin «1000», burun «քիթ» դառնում են կազակ-կիրգիզ լեզվով mən, murun, թուրքերեն biyān > տաճկերեն miyan «մատուտակ», պարսկերեն bahāna > ասակական մահալա «պատրվակ».—սարթերեն ٭ bu «այս» հոլովվելիս դառնում է սեռական موبون munəp, արալան ٭ munga և այլն (Наливкинъ, Руководство... сарт. яз., Ташкент, 1912, 23):

բ. Ռեզային բաղաձայնի ազգեցությամբ կարող է նախորդ ձայնավորը դառնալ ռնգային. այսպես են առաջացել ռնգային ձայնավորները ֆրանսերենում և ուրիշ այն լեզուներում, որոնք ունեն ռնգային ձայնավորներ: Բայց նույնիսկ այն լեզուներում, ուր չկան ռնգային ձայնավորներ, ռնգային բաղաձայնին նախորդող ձայնավորը գոնե մասամբ ռնգայնանում է, ինչպես՝ գերմաներեն ihn, kam, անգլերեն I don't, I can't:

գ. Ավելի քիչ են պատահում այնպիսի դեպքեր, երբ ռնգային բաղաձայնը, մտաի բերանային խուլ բաղաձայնի ազգեցությամբ, գոնե մասնակի կերպով ազատնգայնանում է. օրինակ՝ monsieur, հնչված msyö, հնչվում է երբեմն psyö. ցսանլ > Ջեյթանի բարբառով սսանլ. մեկվն օր > Պարբերգի բարբառով մեկտօր ձկնկուլ > Շլ. ծկլլլուլլի:

3. Լեզվային համանմանություններ. — Առաջանում են լեզվի շարժման փոփոխություններ, մտակա մի ձայնի ազդեցություն տակ ալապես՝

ա. Համանմանությունները աղաձայնների միջև. — Հին հունարենում ՚ ոնգականը γ, ζ, χ կատակիներին առաջ դառնում է η, որ գրվում է γ, ինչպես՝ συγκαλέω. փոխանակ συγκαλέω արձանագրությունների մեջ գտնում ենք մինչև անգամ συγκαλον. — Ես չն ձևով գերմաներեն angenehm, sagen հնչվում են angeném zagn'. — Իտալերեն un cane հնչվում է un kane և այլն: Ալապիսի օրինակներ հաղվադուտ են անգլերենում, իսկ ֆրանսերենում չկան: Ուրիշ կարգերից համանմանությունը գեպքեր շատ սովորական են իտալերենում. ինչպես՝ actum > atto, dictum > detto, ruptum > rotto, frigidum > freddo և այլն:

Ուրիշ կարգերից համանմանություն օրինակներ են.

Սանսկրիտ. च्वाचुरा < *svačura «սկեսոր», čmáçru < *smacru «բեղեր».

Հունարեն. μολοβδος «կապար» > ատտիկերեն βολοβδος.

Լատիներեն. quinque < penkve, coquo «հիկի» < *pek^uō, bibo «խմիկ» < *pibō:

Հայերենից ունենք զանազան օրինակներ. ինչպես՝

- նանաչել < ձանաչել
- աստիճան > աշտիճան
- աստուց > աշտուց
- սոնի > շոնի
- պաաշան > պասասան
- գոյժ > ժոյժ
- չբածիկ > Աղբ. ծրածիկ
- մաալոգել > Պարբերգ մաալոգել «մատով լիզել»
- շաա լաա > Կորբ. շալ լաա
- բրաաել > բլաաել (Երեան)
- բմբուլ > բլբուլ (Երեան)
- արևելեան > ալելան «արևածաղիկ» (Ախալցխա)
- գոռով ջուջով, փոխանակ՝ գոռով գուջով < թուրքերեն < guj
- գլոբ > գիւլիւլ (Երեան)
- շարժ > ժարժ
- ժարժ > ժաշք
- *շարժիկ > ժարժիկ
- ցրցամ < շրցան

- չրցկենլ > շրջեքել
- աչից > աչիչ
- Շամսագղին > Շամշաղին
- Զիաղին > Դիաղին
- ուսաշոբ > շաշոբ
- ջրձակ > ծոձակ
- սարփուշ > շարփուշ (միջին հայերեն) < sar-pūš (պարսկերեն «գլխարկ»)

ասնի > աշնի ?
Ասորերենում n հաջորդ բաղաձայնի հետ վերածվում է նրան՝ šantu > šattu, inbu > ibbu. հաճախ նաև r, ինչպես՝ arnu > annu, kursu > kussu:

Արաբերենի մեջ al հոգը t, θ, d, ð, r, z, s, š, ʃ, q, t, t, n ձայններից առաջ վերածվում են նույնի. այսպիսով հոգը շարունակ փոխվում է. օրինակ՝ Harūn-ar-Rūšīd, ar-rahīm, Ibān as-Suleymān.

Այս ձայնները կոչվում են արեգակնային (الشمسى aš-šemsī), որովհետև šems «արև, արեգակ» բառի վրա ավելանալիս al հոգի l ձայնը նմանեցվում է բառի առաջին սառի՝ š-ի հետ և դառնում aš, հակադրությամբ մնացած բաղաձայնների, որոնք չեն փոխվում և կոչվում են լուսնային տառեր, ինչպես al հոգը qamar լուսին բառի առաջ (القمر alqamar):

Ասորերենում t և š միասին դառնում են ss, ինչպես՝ mutsu > mussu (Bertin, 29):

Համանմանություն (ասիմիլացիայի) օրենքն այնքան ուժեղ է ալթայերեն լեզվի մեջ, որ արմատի կերպարանքն անգամ փոխվում է. օրինակ՝ čöb «աղբ» և taš «քար» ստանալով առաջին դեմքի m ստացական հոգը և երկրորդ դեմքի n ստացական հոգը, դառնում են čöpm «աղբս», čöpn «աղբդ», tašm «քարս», tašn «քարդ»: Նմանապես ma արգելականը, որ դարձել է ba, խուլ բաղաձայնի մոտ դառնում է pa. օրինակ՝

- bar-ba «մի գնա» (=var-ma).
- sat-pa «մի ծախիր».
- tut-pa «մի բռնիր».
- kes-pe «մի կարիր».

Հոգնակիի lar, ler մասնիկը մնում է միայն ձայնավորից և r-ից հետո, իսկ մյուս թրթռուն բաղաձայնների մոտ դառնում է

է d, խուլերի մտա t. օրինակ baka-lar, teke-ler, tov-lor, tōō-lōr, mal-dar, ton-dor, kōi-dōr, kelin-der, kuš-tar, torbok-tor, šōōk-tōr, որոնց մեջ ոչ միայն ներքին ձայնավորներն են փոխված, այլև արտաքին բաղաձայնները (Kanaeb, 16, 27, 35):

բ. Համանմանութուն ձայնավորի և բաղաձայնի միջև.— e և i ձայններից առաջ d, k, t դառնում են քմային: Թուրքական լեզուների մեջ q և γ կարող են դանդել միայն ծանր կոչված ձայնավորների մտա (a, o, u, ə), իսկ թեթև ձայնավորների մտա (e, i, ö, ü) նույն ձայները դառնում են k, g: Նույն օրենքը կա նաև մոնղոլերենում. այստեղ ծանր են x, γ, թեթև են k, g բաղաձայնները. սրանց վրա ավելանում է նաև l, որ ունի երկու տեսակ՝ ծանր l, թեթև l. օսմանյան ամենահին թուրքերեն արձանագրությունների մեջ էլ l ունի երկու տեսակ՝ ծանր և թեթև, որ հետո բոլոր թուրքական լեզուներից վերացվել է (Владимирцов, 125 և այլն):

գ. Համանմանութուն ձայնավորների միջև.— բառի այսինչ վանկի ձայնավորը ձևափոխվում է ազդեցությունից մի ուրիշ ձայնավորի, որից բաժանված է բաղաձայնով. ձևափոխությունը կարող է լինել մասնական կամ ամբողջական: Առաջերևնի մեջ a ձայնավորը, ազդեցությամբ հաջորդ վանկի և ձայնավորի, դառնում է e կամ i. գերմանականի մեջ e ձայնավորը, ազդեցությամբ և ձայնավորի, դառնում է i, և o ձայնավորը, ազդեցությամբ i ձայնավորի, դառնում է u: Սրանք բոլորը մասնակի համանմանություններ են. լեզուն աշխատում է բարձրանալ և հասնել այն աստիճանին, ուր գտնվում է ազդող ձայնավորը: Այս երկվույթը ավելի լավ կըմբռնենք, եթե դիտենք ձայնավորների եռանկյունը: Եթե գերմանականում e ձայնավորը (4-րդ աստիճան), ազդեցությամբ և ձայնավորի (6-րդ աստիճան), դառնում է i (6-րդ աստիճան) նշանակում է հասնում է նրա աստիճանին: Նույնպես, եթե և ձայնավորը (4-րդ աստիճան), ազդեցությամբ i ձայնավորի (6-րդ աստիճան) դառնում է u (6-րդ աստիճան): Այս օրենքի համեմատ ունենք ասուրերեն *imāru > imēru «էշ», šelabu > šelibu «աղուէս», հունարեն γέρυρα > γόρυρα «գնդան», հին բարձր գերմաներեն gastī > gesti և այլն (Brock., Précis, 93, Brugman Abrégé (246—247): Գերմաներենում շատ սովորական է այս երկվույթը, ուր ունենք մի կողմից հին բարձր գերմաներեն altisto, hohista, slussil = գերմաներեն alteste, höchste, Schlüssel և մյուս

կողմից գերմանական ավանցման մեջ alt, alter, vater, väterchen և այլն:

Համանմանությունն ամբողջական է, երբ լեզուն ոչ միայն բարձրանում է և հասնում ազդող ձայնավորի աստիճանին, այլև բանում է նրա գիծը, ուրիշ խոսքով նույնանում է նրա հետ. օրինակ՝ հունարեն λαχωνη > λαχωνη, ֆրանսերեն solennel, որ հնչվում է solonel «հանդիսավոր», արաբերեն *qāḏīhum > qāḏīhim «նրանց գատավոր», հայերեն երախայ > երիխայ, երաշխաւոր > երեշխաւոր, հին բարձր գերմաներեն ist = հունարեն ἴστυ «է» և այլն:

Առաջինը կոչվում է մայնգարն (mésaphonie), երկրորդը՝ մայնավորների ներգաշնակույթուց (harmonie vocalique):

Կան լեզուներ, որոնք ձայնավորների ներգաշնակույթյան օրենքը հասցրել են իր ծայրագույն աստիճանին և բառի բոլոր ձայնավորները ենթարկվել են առաջին ձայնավորի ազդեցության: Այսպես, օրինակ, թուրք-թաթարական լեզուների մեջ ձայնավորները բաժանվում են երկու կարգի՝ թեթև և ծանր. ծանր են՝ a, ə, o, u, սրանց համապատասխան թեթևներն են՝ e, i, ö, ü:

Երբ բառի առաջին վանկը ծանր ձայնավոր ունի, բառի մնացյալ բոլոր ձայնավորներն էլ պիտի լինեն ծանր. այսպես նաև բառին կցվող բոլոր մասնիկներն ու թեքական վերջավորությունները: Իսկ եթե առաջին վանկը ունի թեթև ձայնավոր, ապա բոլորը կլինեն թեթև. օրինակ՝

թուրքերեն qačərdəqlarəmə «փախցրածներս»
gečirdiklerimi «անցկացրածներս».

Կամ երկու նմանաձայն բառերից՝ այն է av «որս» և ev «տուն» բառերից ? մասնիկով՝ համապատասխան ծանր ու թեթև ձևով՝

av-İəγ-az-lar-əmə-əz-dan-da
ev-İiγ-ez-ler-im-iz-den-de

Ձայնավորների ներգաշնակույթյան օրենքը կա նաև մոնղոլերենի, ուզբո-ֆիննական լեզուների մեջ, և մեծ չափերով նաև ամերիկյան լեզուների մեջ (Boas, Handbook, I, 79)

Այս կարգի լեզուների մեջ քերականական բոլոր տեսակի վերջավորությունները, ինչպես նաև մասնիկներն ունեն միշտ երկու ձև՝ թեթև և ծանր. թեթև ձայնավոր ունեցող բառերն ստանում են թեթև վերջավորություն կամ մասնիկ, իսկ ծանրերն էլ՝ ծանր: Օրինակ, թուրքերեն հոգնակիի մասնիկն է lar (ler), կատարյալ առաջին գեմքի վերջավորությունն է dəm (dim), բացասական

մասնիկն է səz (siz), պարտավորականի նշանն է male (meli) և ալլն, ըստ որում՝

- at «*ձի*», հոգնակի atlar, et «*միս*», հոգնակի etler.
aldəm «*առի*», verdim «*ազի*».
atmalə «*պիտի նեակի*», görmeli «*պիտի տեսնել*».
bašsəz «*անդուլուի*», etsiz «*առանց մտի*».

Այս օրենքը ծայրահեղ չափերի է հասցնում լակուաները, ուր մասնիկը ոչ թե ձայնավորների նմանեցման, այլ նույնացման աստիճանին է հասած. ալսպես, օրինակ՝ հոգնակիի lar մասնիկը դառնում է՝ aṛa-lar «*հայրեր*», oṛo-lor «*երեխաներ*», iye-ler «*մայրեր*», bōṛō-lōr «*գալլեր*» (Ястремский, 9):

Դասական թվականների մասնիկը նույն լեզվի մեջ ստանում է əs, is, us, üs ձևերը՝ համաձայն թվականի ձայնավորի (անդ, 73): Թուրքերենում էլ կան նման երևույթներ. օրինակ, կատարլալի վերջավորությունը եզակի առաջին դեմքում dəm, dim, dum, düm. ինչպես՝

- aldəm «*առի*», yutdum «*կուլ տվի*».
verdim «*ազի*», yüzdüm «*լողացի*»:

Ներդաշնակություն օրենքը ճանաչող լեզուներից ոմանք էլ ձայնավորները բաժանում են երեք կարգի. ծանր, թեթև, միջակ. վերջին կարգի ձայնավորները խախուտ կամ երկչմի զիրք են բռնում: Ալսպես է, օրինակ, օտարակերներ (Castren, 7):

4. Շրթնային համաձայնություններ. — Առաջանում են շրթնային նային շարժումները և կամ շրթնային բացվածքի ձևը փոխելով. ալսպես՝

ա. Բաղաձայնների միջև. — ինչպես հունարեն ν շրթնային պայթականի մոտ դառնում է μ . օրինակ՝ $\sigma\mu\phi\acute{\epsilon}\rho\omega$ փոխանակ $\sigma\upsilon\nu\tau\phi\acute{\epsilon}\rho\omega$. արձանագրությունների մեջ՝ $\tau\chi\mu$ $\pi\acute{o}\lambda\iota\nu$. լատիներեն imperitus փոխանակ in-peritus, գերմաներեն bleiben հնչիր bleibm), unbillig (հնչիր umbilig), իտալերեն un poco (հնչիր um poko) և ալլն:

Հախերեն ունենք ամբարիշտ <փոխանակ անպարիշտ, նգոված> մգոված (Դարբաղ):

Բրբտոներենում բաղաձայնները, որոնք 19 հաս են, բաժանված են երկու մասի՝ անփոփոխ և փոփոխելի:

Անփոփոխելի բաղաձայններն են՝ f, h, j, l, n, r, s, v, x, z, Փոփոխելիներն են մնացյալ 9, որոնք էլ բաժանվում են 2 աստիճանի՝

հւժեղ	միջակ	մեղմ
c, k, q	g	h
p	b	f, v
t	d	z
	m	v

Համաձայն ձայնավորների և բաղաձայնների հանդիպումների, այս բաղաձայնները փոփոխվում են շարունակ ուժեղները վերածվում են միջակի և միջակներն էլ մեղմի: Այս երևույթը ոչ միայն բառի մեջ՝ երկու բաղաձայնների միջև, այլև նախադասության մեջ երկու անջատ բառերի միջև. օրինակ՝

- cárein «*սիրել*» բալից՝
me gâre սիրում եմ,
hui em hâre գուք ինձ սիրում եք.
quittat «*թողնել*» բալից՝
me quitta թողնում եմ,
hui em huitta գուք ինձ թողնում եք.
punissein «*պատժել*» բալից.
me bunisse պատժում եմ,
hui em funisse գուք ինձ պատժում եք.
torrein «*կտարել*» բալից՝
me dorre կտարում եմ,
hui em zorne գուք ինձ կտարում եք:

Բրբտոներենի ամենագեղար կողմն է ալս, որ շարունակ բառը ձևափոխվում է, նույնիսկ օտար հատուկ անունները. ինչպես՝

tad «*հայր*» — deu dad «*երկու հայրեր*».

mam «*մայր*» — diüe vam «*երկու մայրեր*».

Paris «*Փարիզ*» — e tan a Baris «*գալիս եմ Փարիզից*» (Guillome, VI, 127, 141—142):

բ. Ձայնավորների միջև. — Ոչ շրթնային ձայնավորներ կարող են վերածվել շրթնայինի. ինչպես՝ $g\alpha\rho\beta\epsilon\eta$ > $g\epsilon\alpha\rho\beta\epsilon\eta$ (Պոլիս), $\Phi\beta\rho\alpha\lambda\epsilon$ > $\Phi\epsilon\alpha\rho\lambda\epsilon$, $\Phi\beta\rho\alpha\lambda\epsilon$ > $\Phi\epsilon\alpha\rho\lambda\epsilon$:

գ. Բաղաձայնի և ձայնավորի միջև. — Ձայնավորը կտրանում է շրթնային բաղաձայնի մոտ. օրինակ՝ գափ > Ոգմ. գոֆ, Մշ. գուֆ և ալլն:

Ձայնավորների ներդաշնակության օրենքից ափելի ուժեղ է mätträ-ների օրենքը, որ գտնում ենք հնդկական քաջմիթի լեզվի մեջ:

Այս լեզվում կա 6 ձայնավոր, որոնք են a, e, i, u, ü, e. այս ձայնավորներից յուրաքանչյուրը աճի երեք աստիճան՝ կարճ, երկար և շատ կարճ: Առաջին երկուսը շատ սովորական են բազմաթիվ լեզուներում, բայց երրորդը հազվագյուտ է: Սովորություն է դարձել լատինական տառադարձության մեջ այս վերջինը գրել մանրատառ և տողավերևում: Կոչվում է հնգիկ բառով mātrā: Ընդամենը կա վեց mātā՝ հետևյալ ձևով. a, a, ^a, u, ü, ^u, ü, ü, ü և այլն:

Այս mātrā կոչվածները շատ տկար հնչում ունեն. չկան բառակերպում, բայց սովորական են բառամիջում և բառավերջում, ուր հաճախ չեն էլ լսվում:

Սակայն չնայած իրենց տկար հնչման, այս mātrā-ները շատ մեծ դեր ունեն և իրենք են, որ կառավարում են քերականությունը և ամբողջ լեզուն: Ամեն մի ձայնավոր գանվելով 6 mātrā-ներից որևէ մեկից հետո, ստանում է mātrā-ի երանգի համաձայն մի նոր ձև. օրինակի համար a ձայնավորը մի դեպքում մնում է a, մյուս դեպքում դառնում է o, մի ուրիշ դեպքում ü և այլն: Այսպես և մյուս ձայնավորները: Զայնավորների ձևափոխության այս օրենքները ըստ mātrā-ների ազդեցության, կանոնավորված են առանձին ցուցակով:

Բայց միայն ձայնավորները չեն, որ ենթարկվում են māt-rā-ների ազդեցության, այլ նաև բաղաձայնները: Բաղաձայններն էլ դանդաղվում այս կամ այն mātrā-ից հետո, նրա երանգի ազդեցությամբ փոխում են իրենց երանգը. օրինակ՝ k բաղաձայնը դառնում է č, d դառնում է z, h դառնում է š և այլն և այլն (Grierson, A manuel of the Kāšhmīrī language, 15):

Այժմ պետք է քննել, թե ինչից են առաջանում համանմանությունները:— Հետադարձ համանմանության մեջ, երբ, օրինակ, պիտի արտասանենք absurde, խոչալը, որ պիտի բացվեր s-ի արտասանության համար, բացվում է հենց պայթականի արտասանության սկզբից, այսինքն շարժումը կատարում է ավելի շուտ: Ընդհակառակը, առաջատվական համանմանության մեջ, խոչալը, որ պիտի բացվեր s-ի արտասանության ժամանակ, մնում է դեռ փակ և ձայնալարերը շարունակում են թրթռալ, այսինքն՝ շարժումը վերջանում է ավելի ուշ:

Երկու դեպքում էլ կա տրեմն միաժամանակության բացակայություն: Երբ շարժումը կատարվում է ավելի շուտ, դա արդյունքն է հոգեբանական այն օրենքի, որ կոչվում է idéo-dynamique և որ

հետևյալն է. «Ամեն մի շարժում, որ ներկայանում է գիտակցության մեջ, ձգտում է գործադրվել»: Երբ արտասանում ենք մի ձայն, արդեն հաջորդ ձայնի պատկերն աճնեք մեր գիտակցության մեջ և նրա բնորոշ շարժումներն սկսում ենք կատարել:

Երբ մի բնախոսական շարժում վերջանում է ավելի ուշ, դա արդյունքն է մի ուրիշ հոգեբանական օրենքի, որ կոչվում է իներցիալի օրենք և որ հետևյալն է. «Ամեն մի հոգեբանական փոփոխակ ձգտում է բնականորեն տեղ և ձևափոխվում է միայն իրենից տարբեր մի պատճառի ազդեցությամբ»: Ըստ այսմ, մի ձայնի համար արդեն սկսված շարժումները շարունակում են նաև հաջորդ ձայնի համար:

Այժմ մնում է քննել, թե ինչու՞ համանմանության օրենքը չի ազդում բոլոր բառերի վրա, և ինչու՞ մերթ մտաշատական համանմանությունն է գործում, մերթ հետադարձ:

Համանմանությունը չի ազդում բոլոր բառերի վրա, որովհետև խոսողի մեջ կա նաև այն գիտակցությունը, թե հիմնական ձևը այսինչն է. սրան նպաստում են ուսումը և ընթերցանությունը, սրանցով առաջանում է կամավոր ուշադրությունը, որ հետո վերածվում է սովորության: Այս պատճառով էլ հին լեզուների մեջ համանմանությունը շատ ավելի մեծ շարժերի էր հասած, քան ինչ որ է այժմ: Կարելի է նույնը բացատրել այլ ձևով և ասել, թե համանմանության արգելք է նմանարանությունը (անալոգիան). երբ անբիժ համանմանությամբ դառնում է ամբիժ, նմանարանությունը (այսինքն ան բացասականի հարչուրավոր այլ օրինակներ) պահանջում է անբիժ. անշուշտ ամբարիշտ բառն էլ կփոխվենք, եթե իմանալինք, թե ան մասնիկով է կազմված պարիշտ—պաշտել բառից:

Գալով այն հարցին, թե ինչու՞ մերթ մտաշատական համանմանությունն է գործում և մերթ հետադարձ, գրա պատճառն ընդհանրապես պետք է փնտրել համանմանության ենթարկող և ենթարկվող ձայների ուժի մեջ. կողք—կողքի գանված կրկին ձայներից նա, որ ավելի ուժեղ է, պարտադրում է մյուսին համանմանվել. եթե ուժեղ ձայնը ավելի առաջ է, համանմանությունը կլինի առաջատվական, իսկ եթե հետո է, համանմանությունը կլինի հետադարձ:

Լեզուների համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս հարցում մեծ նշանակություն աճի լեզվախոսմբը. հնդեվրոպական լեզուների մեջ համանմանությունը հետադարձ է, ուրբո—ֆիննական և այթայական լեզուների մեջ՝ առաջատվական:

3. ՏԱՐԱՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ

* (Dissimilation)

Տարանմանությունը համանմանության հակառակ երևույթն է: Երբ երկու բառի մեջ կան մասակա ձայներ, որոնք արտաբերելու համար լեզուն պիտի կատարի միևնույն շարժումները, խոսողը խուսափում է այդ շարժումների կրկնությունից և զեղչում է այդ շարժումը երկու ձայներից հենց նրա մեջ, որ ավելի թույլ կամ սկար է: Այս երևույթը կոչվում է տարանմանություն (գիտմիջյայտ): Ուրիշ խոսքով տարանմանությունը գործարանների նման շարժումներով հնչվող երկու ձայների միջև շարժումների տարբերացումն է: Այսպես, երբ կերակուր հնչվում է կերակուլ, ուր երկրորդը ր ձայնի տեղ զրված է ւ, լեզվի ծայրի թրթռումի փոխարեն, որ հասարակաց էր երկուսին, զրված է լեզվի կենտրոնական մասի փակումը և կողքերի բացումը:

Տարանմանությունը, ինչպես համանմանությունը, կարող է լինել առաջադական կամ հետադարձ, կարող է տեղի ունենալ հարակից կամ հեռակայ ձայների միջև: Հաճախ զանազաներով այս երկու դիրքերը, հարակից տարանմանությունը կոչում են տարբերացում (différenciation), իսկ հեռակայը՝ պարզապես տարանմանություն: Վերջապես տարանմանությունը կարող է լինել մասնակի կամ ամբողջական, սուսջին զեղչում երկու ձայներին հասարակաց շարժումներից միայն մի մասն է փոխված, երկրորդում՝ ամբողջը: Վերջինս կարող է հասնել մինչև բազաձայնի անկման:

Ամեն լեզվի մեջ էլ կան տարանմանության բազմաթիվ օրինակներ, հատկապես բառերի ածանցման ժամանակ: Նրանք, որ սովորությունը վավերացրել է, համարվում են կանոնավոր ձևեր, իսկ նրանք, որ ամենօրյա խոսակցության ժամանակ երևան են դալիս, համարվում են սխալ արատասանություններ և խոսելի:

Ահա մի քանի օրինակ օտար լեզուներից.
Հունարենում երբ երկու առամնական պայթուցիկ պատահան կողք-կողքի, առաջինը կվերածվի շփականի. այսպես՝
φείδω-ից *φείδω-θηραμαι > φεισθηραμαι.
πειθω-ից *πειθω-θεις > πεισθεις.
ἀνυσω-ից *ανυσω-τέος > ανυστέος.

Երբ երկու հաջորդական վանկեր սկսում են շնչեղ պայթականով, առաջինը վերածվում է պարզ խուլի. φιλέω բայից կրկնավոր կատարել լինում է πεφίληκα փոխանակ *φεφίληκα.

Կելտականում et ձայնախումբը դառնում է cht, փոխանակ դառնալու tt. այսպես էլ՝ հայերեն doctor > ափստուր:

Ֆրանսերեն número, cérébral ժողովրդական արտասանությամբ հնչվում են liméro, célebral.

Ֆրանսերեն frileux < *frtreux, orphelin < orphanium, pèlerin < peregrinum:

Թուրքերեն nemse > lemse «գերմանացի», Jahannam > Jahandam «գոհնք»

Լատիներեն arborem > ֆրանսերեն arbre, բայց իտալներեն arbol, պորտուգալերեն arvol, պրովանսալ albre, իտալերեն albero:

Ֆրանսերեն corridor > colidor, որ և սուսերենում հնչվում է կալիդոր:

Սեմական markabtu > ասուրերեն narkabtu «կառք» (m-b > n-b):

Սեմական sams > արաբերեն šams «արև»:

Ասուրերեն շշական ձայները մի ուրիշ շշականի կամ ստամնականի մոտ տարանմանությամբ դառնում է ւ, ինչպես՝ šalaštu > šalaltu «Յ», սրա համեմատ է հայերեն ուղա:

Լատիներեն *karkr- > cancer «խեցգետին».

Լատիներեն *melmelata < հունարեն μελιμηλάτον = ֆրանսերեն marmelade (խնձոր և մեղր).

Լատիներեն *medeie die > meridies «կեսօր, հարավ».

Լատիներեն ululare > ֆր. hurler, լատ. urlare, սլավոներեն urla:

Լատիներեն formica «մրջյուն» < հնդեվրոպական նախալիզու m նախաձայնով.

Նոր գերմաներեն franell < fianell.

Ռուսերեն verbljud «ուզա» = լեհերեն wielbład.

Լատիներեն mespila > ասորին լատիներեն nespula > ֆրանսերեն nèfle «զկիս».

Ֆերմաներեն parikmacher > ասուրեն արիկմախեր, ժողովրդական լեզվի մեջ դարձել է парикмахер:

Վրացերեն մարգալիախի < մարգարիա.

Խալվար «ցորենի չափ է» < պարսկերեն چارباغ xarbār, որ նշանակում է իշարեռ. երկու ր-ից առաջինը դարձել է ւ:
Հին հայերենի մեջ տարանմանության օրինակներ են՝ սաղաւարա < սարաւարա < իրաներեն *sāravrtī.
Եղբայր < երբայր (նույնիսկ պարսկերեն birādar անցնելով թուրքերենի, Պոլսում հնչվում էր bilader).

անդրիւր < արբիւր.

ողորմ < որորմ:

Թվում է, թե տարանմանութիւն զեպքում, երբ երկու ը պիտանան իրար, առաջինն է գառնում ղ (և ոչ լ), իսկ նոր հաշիբնում վերջինն էլ է գառնում լ (և ոչ ղ): Բայց այս հարցը զեռատուգելի է:

Նոր հաշիբնում և բարբառներում տարանմանութիւն օրինակներ են՝

նմանիլ > Պոլիս ըլմանիլ.

Արշաւիք > Արշաւիլ.

Ախալքալաք > Ախըրքելեք.

ձածկել > Դպին տածկել > տասկել.

կերակուր > կերակուլ.

շունչ > սունչ.

շրջան > սրջան.

շրջել > սրջել.

նիգ > *նիկգ > լիկգ.

նեղանալ > Ավեղիա լիղիկիլ «ձանձրանալ».

բարձր > բանձր.

մուռաւար, մուռաւրիլ > մունդուիլ.

Արարիլիք > Արարիլիք:

Տարանմանութիւնը պատճառ է գառնում երբեմն, որ սպասված որոշ ձայնական փոփոխութիւններ տեղի չունենան. այսպես, լատիներեն miser, caesariēs բառերի մեջ s = z պետք է ըստ սովորականին դարձած լիներ ռ, այս ձայնափոխութիւնը տեղի չի ունեցել հաջորդ վանիլի ր-ի պատճառով՝ տարանմանութիւնը (Brugmann, Abrégé, 253):

Տարանմանութիւն պատճառով կարող է նաև մի որևէ ձայն բոլորովին ջնջվել. օրինակ՝ լատիներեն quinquus «հինգ», որից ստորին լատիներեն cinque, որից էլ ֆրանսերեն cinq, իտալերեն cinque:

Հունարեն φρατρία > φατρία «եղբայրութիւն».

Լատիներեն cribrum > cībrum, իսպաներեն cribo.

Հունարեն διδάσκαλος > նոր հունարեն διδάσκαλος «ուսուցիչ».

Ֆրանսերեն arbre, ժողովրդական abre «ծառ».

Հին սլավերեն bratřija > bratija «եղբայրներ».

Հունարեն φλαῦρος > *φλανλος > φανλος «վառ»

Հունարեն σιατήρ > միջին հունարեն σατήρ «ղրամբ».

Հունարեն στρατός > աստիկերեն στρατός «բանակ».

(Brugne, Abrégé 253—255):

Ի՞նչ է տարանմանութիւն երևույթների բացատրութիւնը:

Ընդհանրապես տարանմանութիւնը համարվում էր մի անկանոն երևույթ և լեզվի մեջ առաջ եկած այդ կարգի բառերը զուտ բացատրութիւններ: Առաջին անգամ Գրամոնը (Dissimilation consonantique dans les langues indo-européennes, 1894 = Նույնաձայն տարանմանութիւն հնդեվրոպական լեզուների մեջ և Յ. Վան Գինեկենը (Principes de linguistique psychologique = Հոգեբանական լեզվաբանութիւն սկզբունքներ) մանրամասն քննելով այս հարցը, գտան, որ տարանմանութիւնն էլ կանոնավոր մի երևույթ է, որ առաջ է գալիս լեզվի որոշ վարկյանին և ենթարկվում է որոշ ընդհանուր օրենքների: Գրամոնը ձևակերպում է նաև մի խումբ այսպիսի օրենքներ, որոնք թեև ընդհանուր ընդունելութիւն չեն գտած, բայց մի խումբ լուրջ լեզվաբանների կողմից քննված ու վերահաստատված են (հմմտ. Meillet, BSL 30, № 90, p. 125—127): Այս կարգի օրենքներից հիշենք, օրինակ, լատին 1...1, որ հնագույն շրջանում գառնում է 1...1, սրան իրը ապացույց նկատելի են, որ՝

1. -alis մասնիկը գառնում է -aris, եթե բառի մեջ արդեն մի 1 կա. ինչպես՝ militaris, consularis, popularis և այլն.

2. -clum գառնում է -crum նույն պայմանի տակ, ինչպես՝ simulacrum, lucrum, lavacrum, sepulcrum և այլն.

3. -li- գառնում է -ri- նույն պայմանի տակ, ինչպես՝ volucris, anclabris, celebris, salubris:

Այն բառերը, որոնք այս օրենքին չեն ենթարկված և իրր թե «բացատրութիւն» են, բացատրվում են այլ կանոններով.

1. Օրենքը զործում է լատիներենի հնագույն շրջանում և ավելի հետո վերանում է. այնպես որ նորակերտ բառերը (ինչպես letalis, ligula) և օտարամուտ բառերը (ինչպես liliūm «շուշան») այլևս չեն ենթարկվում նրան.

2. Երբ բառը կրկնական է և կրկնութիւնը զգալի է զեռ. 1...1 մնում է. այնպես ululare «ոսնալ».

3. Երբ 1...1 ընդմիջվում է ր-ով, տարանմանութիւնը տեղի չի ունենում, ինչպես՝ pluralis, floralis:

Հակառակ 1...1-ի, 1...r չի ենթարկվում որևէ տարանմանութիւն. ինչպես՝ aratrum, cribrum, vertebra, creber, cancer, fur-

fur, murmurare, terrestris և այլն. ուշ ժամանակ սկսում է երևալ r...r > l...r, ինչպես՝ peregrinus > pelegrinus, fragrare > flagrare.

Գրամոնի և Վան Գինեկենի-ի հանած օրենքները կարելի է ամփոփել հետևյալ ձևով.

1. Երբ պատահում են երկու հաջորդական ձայներ նման արտաբերություն, գիտակցություն մեջ նման տարրերը շփոթվում են իրար հետ, և այդ երկուսից հաղթանակում է ուժեղը, իսկ մյուս թույլը կորցնելով իր այս կամ այն մասը, փոխանակվում է մի ուրիշով: Արտասանության մեջ ուժ են կազմում զանազան պատճառներ. ինչպես շեշտը, որոշ ձայների խմբակցություն, ձևաբանական կամ ստուգաբանական գիտակցություն:

2. Լեզուն, իբրև հոգեբանական երևույթ, ենթարկված է սիթմի ընդհանուր օրենքին. ըստ այսմ, երբ մի քանի իրար նման հոգեկան երևույթներ հաջորդում են միմյանց, նրանցից մեկը կազմում է կենտրոն, որին ստորադասվում են մյուսները:

Ահա այս երկու օրենքներով կարելի է բացատրել տարանմանության զանազան դեպքերը. երկուսի մեջ էլ ընդհանուր գիծը ուժեղի հաղթանակն է: Տարանմանությունը անգիտակից երկվույթ է. պետք չէ բացատրել այն իբրև կամավոր մի միջոց՝ ձայների տարբերությունը գիտամամբ շեշտելու, կամ արտասանությունը հեշտացնելու և կամ թե միօրինակության ձանձրությունից խուսափելու համար:

4. ԽԱՉԱՉԵՎՈՒՄ

(Contamination, Croisement)

Այս երևույթը գրեթե նույնն է նմանողության հետ. տարբերությունն այն է, որ մինչդեռ նմանողությունը կատարվում է իրար հետ զուգորդված օրե է երկու կամ ավելի ձևերի միջև, խաչածեղմամբ կատարվում է երկու հոմանիշների միջև, որոնք ձայներով էլ նման են իրար. այսպես՝

Ֆրանսերեն comparoir բայը խաչածեղմամբ իր հոմանիշ paraitre բայի, դարձել է comparaitre «երևալ»:

Լատիներեն reddere բայը, խաչածեղմամբ իր հականիշ prendre բայի, դարձել է ֆրանսերեն rendre «վերագարձնել, տալ»:

Սաչածեղմամբ կատարվում է նաև օտար լեզվով մի հոմանիշ ձևի ազդեցությամբ. ինչպես՝

Լատիներեն altus > ֆրանսերեն *aut, խաչածեղմամբ գերմաներեն hoch հոմանիշի, դարձել է haut «բարձր»:

Լատիներեն articulus խաչածեղմամբ կելտերեն ordag ձևի, դարձել է ֆրանսերեն orteil «տոքի բթամաս»:

Պոլիս բախդագ «տախտակ», թուրքերեն բախթա.

Հաճին բափուր «թափօր», թուրքերեն բաբուր «զորքի վայր», որ Հաճին արդեն բափուր ձևն ունի.

Պոլիս փանիր < պանիր թուրքերեն penir «պանիր».

Պոլիս փառասել < փարասել, թուրքերեն paralamaq.

Պոլիս աարողնել, թուրքերեն dârmadağın «տարողնված».

Պոլիս սեղմել — սխմել = թուրքերեն sâqmaq,

Պոլիս ծաղիկ = թուրքերեն çiçek:

Սաչածեղման մի ուրիշ դարմանալի պատկեր է ներկայացնում Պոլիս բարբառով սուլաանջի «ստախոս» շատ սովորական բառը, որ կազմված է թուրքերեն yalanji հոմանիշի վրայից, պահելով ջի մասնիկը և թարգմանելով yalan «սուտ» բառը, բայց միևնույն ժամանակ պահելով այդ բառի վերջին վանկը՝ աճ (տես Գննություն Պոլսոյ բարբառի», 177):

5. ՏԵՂԱՓՈՒՍՈՒԹՅՈՒՆ

(Métathèse)

Տեղափոխություն (métathèse) է կոչվում է այն երևույթը, երբ մի բառի մեջ մի կամ մի քանի ձայն իրենց տեղից հանվելով փոխադրվում են ուրիշ տեղ:

Տեղափոխությունը լինում է մի քանի ձևով.

1. Պարզ տեղափոխություն (métathèse simple), երբ մի ձայն տեղափոխվում է ուրիշ տեղ, բայց նրա տեղ օրե է ուրիշ ձայն չի զրկում. ինչպես՝ կապերտ > կարպետ, փիփեթ > փիթեթ, հաճարեն πειζός > նոր հաճարեն πριζός, ֆրանսերեն Mathilde > Malthide. *սեսուրբ > սերսուփ, գատարկ > գարտակ, սարսակ > սասարկ:

2. Փոխադարձ տեղափոխություն (métathèse réciproque), երբ երկու ձայն իրար են փոխանակում փոխադարձաբար, բայց այս փոխանակությունն էլ լինում է երկու տեսակ՝ ճարակից ձայների միջև և ճեռակա ձայների միջև. ինչպես՝ ֆրանսերեն Felix > Felisk, անգլերեն ask «հարցնել» > ժողովրդական äks, պարս-

կերեն Hurmúzd > Huzmurd «լուսնիթագ», սերբերեն tkó < հին սլավերեն kŭto «սով», սեմական dipša > ասորերեն dišpu «մեղք» (դոշար, արպա). հունարեն ἄλκιον ὄρος > արաբերեն al-Iskandar, լատիներեն exercitus > արաբերեն 'asker «զորք», լատիներեն scintilla > stinčila > ֆրանսերեն étincelle «կայծ», հայերեն օգանել > Հաճին էրգել, հարլա > Հաճին հավլո «ճրուշակ», գլխաւոր > գլխաւոր, բանալի > բալանի, հայերեն աշխարհք > ախշարք, աշխատիլ > ախշատիլ, ոչխար > օխշար, լեւն «լալն» < հին Դվին նեւ-նիպո > Հաճին ջերք, աւրել > Հաճին այվել, նօսր > Հաճին նեյս, ախայ > Հաճին արգօ, փշրել > Հաճին փորշել, փշրանք > Պոլիս փրշանք, հունարեն τήραρον = ասորիկերեն τάρραρον «տապակ»:

Տեղափոխութիւնը կարող է տեղի ունենալ թե՛ ձայնափոխների, թե՛ բաղաձայնների և թե՛ բաղաձայն + ձայնափոխների միջև: Պարզ տեղափոխութիւնից հետո կարող է պակասած ձայնի տեղ մի նոր ձայն ավելանալ. ինչպես՝ կամուրջ > կարմուրջ: Կան տեղափոխութիւններ, որոնք կանոնավոր և ընդհանուր ձայնափոխութիւններ են. այսպես, լատիներեն բառամիջի sk ֆրանսերենի անցնելիս կանոնավոր կերպով տալիս է ks, որ հետո դառնում է is. ինչպես՝ crescere > creistre. այսպես նաև պարսկերենից հայերեն փոխառութիւն միջոցին xš դառնում է շխ., ինչպես իշխան < պարսկերեն *xšana.

Տեղափոխութիւն պատճառները զանազան են լինում. հաճախ արտասանութիւն հեշտութիւն համար է, երբեմն էլ թերևս մի ձայնի մի ուրիշ ձայնի վրա հոգեբանական գերակշռութիւն պատճառով (Rondet, 331):

Հաճախ խոսողը շփոթում է և հաշորդ բառի նախաձայնը փոխանակում է նախորդ բառի հետ. օրինակ՝ առած չեմ ձեզ դառնում է սխալմամբ առած ցեմ ջեզ. նկատելի է, որ ոչ միայն բաղաձայնները փոխանակված են, այլև ամեն մեկն իր աստիճանը փոխել է հարմարվելով մյուսին:

6. ՍՂՈՒՄ ԵՎ ԿՐՃԱՏՈՒՄ
(Elision et raccourcissement)

Այս անվամբ հասկանում ենք այն բոլոր անկանոն հասարակումները, որ կտտարվում են զանազան շատ գործածական բառերի մեջ, ավելի կարճ ձևեր ունենալու նպատակով: Վերածվում են մի քանի տեսակների.

1. Երեք և ավելի վանկանի բառերի մեջ, եթե իրար կողքի պատահեն նման վանկեր, դրանցից մեկը կրճատվում է ամբողջովին կամ մասամբ. այս երևույթը կոչվում է արագարանություն (haplologie), և ավելի հաճախ է տեղի ունենում բարդ բառերի մեջ, ինչպես՝

Լատիներեն semestris փոխանակ *semimestris.
nutritor իգական nutritrix փոխանակ *nutritrix.
venum-do «ի գին տալ» > venundo > vendo «վաճառել».

stipendium փոխանակ stipipendium.
veneficus փոխանակ venenificus.

Իտալերեն postelegrafico փոխանակ postetelegrafico «փոստի և հեռագրական».

postelegrafonico «փոստի, հեռագրի և հեռախոսի».

Ֆրանսերեն contrôle փոխանակ contrerôle.

idolatrie փոխանակ idololatrie.

Հունարեն τετραπέλα «չորս ոտքով սեղան» > τεράπεζα.

Ասորերեն šalāšiseri > šalāšeri „13”.

Ռուսերեն кырносый «տափաքիթ» < հին ռուսերեն korno-syj < *korno-nosyj.

Haplologie բառի բուն նշանակությունն է մի անգամ ասել, բայց հայերենի մեջ թարգմանում ենք արագարանություն (չպետք է սակայն հասկանալ շուտասելու): Արագախոս անձինք, երբ արտասանում են երկու միանման ձայնափոխներով կազմված վանկեր, դրանցից մեկը ջնջում են. օրինակ՝

- Համամաշէն > Համշէն
- Մարմարաշէն > Մարմաշէն
- ճարտարաւան > ճարտաւան
- աշխարհահայացք > աշխարհայացք
- ծխահան > ծխան
- փողահար > փողհար
- ասպապետ > ասպետ
- աշխարհահալած > աշխարհալած
- աշխարհահամար > աշխարհամար
- բազմակալալ > բազմակալ
- գրուագագրել > գրուագրել
- երասանակալալ > երասանակալ
- ընծայարութիւն > ընծարութիւն

թակաղաղ > թակաղ

*խոհեմամաուրիւն > խոհեմաուրիւն

խիստ ստամբակ > խստամբակ

հսկայազն > հսկազն

մեղուանոյշ > մեղոյշ

ուղիղ եղիցիք > ուղիցիք

ուրանալի > ուրալի

չուխայագեստ > չուխագեստ

*ուհահորդել > ուհորդել «առաջնորդել»

վահանակրիայ > վանակրեայ

վշտահամբեր > վշտամբեր, վշտըմբեր

տարահալածել > տարալածել

փեսայացու > փեսացու

փեսայանրաւեր > փեսաւեր

քորեպիսկոպոս > քորիսկոպոս

Արտաշաշատ > Արտաշատ (ըստ Սարգսոնի)

Հաճինի բարբառում կա ձիբոզ, հմմտ. Ջեյթունի բարբառի ձիբիրոզ < ծոճրակ:

ասում ա > ամա (այս ձևն է ստանում պատմվածքների մեջ, ճիշտ ինչպես ուսերենում ГОВОРИТ խոսակցութիւն մեջ դառնում է гпр.):

այսպես ասած > սած (մեր գասախոսներից մեկը խոսակցութիւն մեջ հաճախ կրկնում էր «այսպես ասած», բայց այս բարբառը հաճախութիւն պատճառով այնպես էր կրճատում, որ լսվում էր -սած):

լայնափորտ (ժանոթ է ինձ Առձեռն բառարանի միջոցով, չունի նշՆ). նշանակում է «լայն նափորտ», ուստի բուն ձևն է լայնանափորտ, սակայն այս կարգի բառեր, որոնք հանված են որևէ գրչագրից, կարող են լինել սխալ գրչութիւն արդյունք: Ձեռագրողները, ինչպես կարող են մի վանկը սխալմամբ կրկնել, կարող են նաև սխալմամբ հասցավել: Այսպես, կնքապապ > քապապ ձևի գործածութիւնը 1619 թվականից տես Յուզակ ձեռագրաց վասպուրականի, էջ 861:

Անկանոն սղման օրինակ է նաև Լուսաւորիչ > Լաւորիչ (Պոլիս):

2. Շատ գործածական և հաճախ կրկնված բառերը, որոնք նույնիսկ չեն ներկայացնում միևնույն ձայնի կրկնութիւնը, իրենց առօրյա շփման մեջ ավելի են մաշվում քան այդ թույլ պիտի տա-

լին ձայնական սովորական օրենքները և կրում են նախնայիսի անսովոր կրճատումներ, որոնք սչ մի օրենքի չեն ենթարկվում. այսպես, օրինակ՝

Ֆրանսերեն sieur < լատիներեն senioretem.

» mademoiselle > mamselle.

» mon sieur «տեր իմ» > monsieur, որ նախ դարձել է mesieu, այժմ հնչվում է msyo, Պոլսի հայոց մեջ փոխառվալ ձևով միւսիւ (մյուսյու):

Ֆրանսերեն cousin < լատիներեն consobrinum.

» capitaine > pitaine (գինվորական ծածկալիզով):

» colonel > colon.

» n'est-ce-pas > s'pa «այնպես չէ».

» caporal > cabo (և սչ capo, նմանութիւնը մի արիչ բառի):

Գերմաներեն guten tag > ntag

» guten morgen «բարի լույս» > gmoin.

» heute < հին բարձր գերմաներեն hiutu < hiu tagu «այսօր».

Իտալերեն monna < madonna.

Իսպաներեն usted «դուք» < vuestra merced «ձեր շնորհը».

Հունարեն σὸδὲν > δὲν «ոչ».

» διὰ θεοῦ > նոր հունարեն διὰ θεοῦ «սատանա».

Անգլերեն mistress «տիրուհի» > missis «տիկին» և սրանից էլ miss «օրիորդ».

Պարսկերեն har zaman «ամեն ժամանակ» > կրճատ hāzman (ԳԴ 245բ).

» šādbās > šābās.

Թուրքերեն aya «աղա» > aa, հայերեն ա, ինչպես Հակոբ ա՛

» efendim > efem.

Թուրքերեն Izmid (հիմա Izmit), նաև Iznimid, առաջանում է հունարեն is nikomidia ձևից:

Ռուսերենում, ինչպես հայանի է, սովորութիւն կա ծանոթ անձանց ի պատիվ գործածելու անուն-հայրանունը, թէ արական և թէ իգական. այս շատ հաճախ կրկնված ձևերը բնականաբար կրում են անսովոր կրճատումներ. օրինակ՝ Maria Alexandrovna դառնում է Marsana:

Պարտուգալերենում քաղաքավարական խոսակցութիւն մեջ ասվում է Vossa Mercê «Ձեր շնորհը» = Դու. կրճատմամբ դարձել է Você:

Ուումիներենում քաղաքավարական խոսակցություն մեջ ասում են Domnia-Voastră «Ձեր իշխանությունը» = Դու. կրճատ եղիլ է Domnia ta. Ժողովուրդը ավելի կրճատելով դարձրել է պարզապես Mată:

Լատիներենում si vis «եթե կհաճես» > sis: իբր քաղաքավարական ձև. հոգնակի sultis «եթե կհաճեք», նաև sodes «եթե կհաճես» < si audes.

Վրացերենում դիաղ «այո» համառությամբ են համարում դի-դի արս Ղմբթի «մեծ է Աստված» ձևից (Vogt, 98):

Արաբերենում ալսալիսի կրճատումներով ունենք մի խումբ ամանցներ երկու բառից կազմված (շատ դորժածական բառերից). ինչպես՝

sabḥala որ է subḥān Allah «օրհնելու է Աստուած» ասել:

Jaʿfala, որ է ĵulta tadāka «զատնամ քեզ մասաղ»:

ḥamdula, որ է al-ḥamd ul-lah «Գոհութիւն Աստուծու» ասել:

basmala, որ է bismillāhi «Յանուն Աստուծու» ասել:

Նաև ցեղական անուններից՝
 ʿišāmī, ալն ʿabd-al-šamī ցեղին պատկանող:
 ʿabdarī, որ է ʿabd-al-dāra ցեղին պատկանող:

Ալսալիսի կրճատման ամենաուժեղ օրինակները տալիս են հատուկ անունները, սկսած հնագույն ժամանակներից մինչև ալբմ. հմմտ.

- Հունարեն Zeuxippos > Zeuxis
- Nikēphoros > Nikias
- Agēsilaos > Agis
- Գերմաներեն Baldwin > Baldo
- God-Frid > Godo, Goto
- Ram-bald > Ramo
- Eriðerike > Eritz, Erida, Rike.
- Ռուսերեն Николай > Коля
- Мария > Маша
- Александр > Саша
- Անգլերեն Herbert > Bert
- Albert > Bert

- Arabella > Beila
- Alexander > Sander
- Charlotte > Lottie
- Beatrix > Trix
- Դանիերեն Jakobine > Bine
- Karoline > Line
- Kristine > Stine
- Andres > Dres

Իտալերեն Giuseppe > Beppo

Արաբերենում հատկապես հատուկ անունների կոչականի մեջ վերջին վանկը կրճատվում է. օրինակ՝

կամ յա՛ Ռումա, յա՛ Ռումն (փոխանակ) յա՛ Ռումանու) ո՛վ Ռուման:

Յա՛ Ջաֆա «ով ճաֆար» փոխանակ յա Ջաֆարու:

Ավելի ուժեղ է կրճատումը լուգերենում, ուր անունները և մի բանի շատ սովորական բառեր կոչականում վերածվում են շատ ալլափոխյալ ձևերի. ինչպես՝

Իբրահիմ > Իբա, Հյուսիսի > Բուցն, Հասան > Բացա, Մուսաֆա > Յաֆա. կամ նույնիսկ միայն մի վանկի. ալսալիս՝

- է՛ բա < էլ բաբա «ով հայր».
- է՛ ցա < էյ ցանա «ով մայր».
- է՛ Մու < էյ Մուսաֆա.
- է՛ Մն < էյ Մնհմեղ.
- է՛ բն < էյ Ռեշիա.
- է՛ իս < էյ Խաղիշն.
- է՛ Գյու < էյ Գյուլում «վարդս, սիրելիս».

(Марръ, Грамм. чан. яз., 5, 72):

Ալսալիսի կրճատումների պատճառն ալն է, որ իբրև շատ ծանոթ բառ ամենքին հայտնի են, և մի-երկու վանկ ամբողջությունից՝ բավական է մնացյալն էլ հասկանալու համար:

Հայերենի մեջ նման կրճատման օրինակներ են՝ պարոնյալպ «կեսբալլը» > Հանինի բարբառով բայեմբօբ, բայբօբ.

այս ժամ > գրաբար այժմ.

հիմակ > վանի բարբառով մկա.

ասել > Պոլսի բարբառով ըսել, որի մեջ ա > ը ձայնափոխությունը անկանոն է. նույնպես Գովհասում «ասում է», ուրիշի պատմությունը մեջ բերելու ժամանակ իբր շատ հաճախ կրկնված ձև. դառնում է «ասմա».

անել > Պոլսի բարբառով բնել. սա էլ անել ձեռք.
որովհետև > արագ խոսակցության մեջ որակ:
Հասուկ անուններից նման կրճատումներիով ունենք՝
Ասաուածատուր > Ասատուր, Ասուուր, Ասաիկ, Մասուր,
Ատուր, Մա'աի, Ա'սո.

Գրիգոր > Գիգոր, Գիքո, Գիքի, Գիգո, Կիկլոգի.
Խաչատուր > Խաչիկ, Խաչի, Խեչո, Չատա, Չատի.
Կարապետ > Կարպիս, Կարո, Կրպէ, Կրպօ.

Մարտիրոս > Մարտիկ, Մոգօ, Մոգի, Միաի.
Մկրտիչ > Մուկունչ, Մակի, Մկօ, Մկըր, Միկիչ, Մակիչ.

Յակոբ > Ակօ, Ակօն.
Յովհաննէս > Օհան, Օհնիկ, Հանէս, Ավան.
Պետրոս > Պետիկ, Պետի, Պետօ.

Սարգիս > Սարօ, Սիկի.
Յարութիւն > Յարօ, Արուր, Արթին, Արթաքի.
Ստեփանոս > Ստեփան, Տեփան, Սեփան, Սեփօ

Հետաքրքրական է նշելու, որ անձնանունը իր հալ ու եզրու-
պական բաղձաթիվ կրճատումներիով. ինչպես՝ Էլիզա, Էլիզ, Լիզա,
Իզաբելլա, Զարել, Մարեթ, Էլիսա, Էլիսօ, Բելլա, Բելա, Լիզիկ:

Որեւէ պատճառով, երբ բաղձաձայնի կրկնություն առաջանա,
բաղձաձայններից մեկը կարող է ընկնել. օրինակ՝

Հայերեն պատուել > Սվեդիայի (Մուսա լեռան) բարբառով
բուզվ'իլ «պատել, ման գալ»:

Մոն-քմեր ճյուղին պատկանող խոսի լեզվի մեջ, երբ բառն
սկզբում ունի երկու բաղձաձայն, շատ հաճախ առաջինն ընկնում է.
օրինակ՝ ksah «մատանի» և kti «ձեռք» բարբառով ապրիս են sah-
ti «մատի մատանի» (Grierson, II, 1):

Չափազանց գործածության պատճառով, որոշ բառեր և քե-
րականական մասնիկներ ենթարկվում են անկանոն սղման և կրճ-
ատման:

Այս կողմից նշանավոր են քերականական եզրերը, որոնք հի-
մա մենք մասնիկ կամ վերջավորություն ենք կոչում. դրանք նա-
խապես անկախ բառեր էին, բայց իրենց ինքնությունը կորցրած,
նախադասության մեջ գործածվելով իբր միջոց բառերի այս կամ
այն առնչությունը պարզելու, դարձան երկրորդական ձևեր և իրենց
հաճախակի գործածություն մեջ բոլորովին անկանոն կերպով սղվե-
լով ու մաշվելով՝ դարձան մասնիկ: Այսպես, օրինակ՝ գրաբար պի-
աի, որ անկախ բառ էր «պետք է, կարևոր է» իմաստով հետո

դարձավ սպասնիի օժանդակ և իր այս վիճակում չափազանց մաշ-
վելով բարբառների մեջ դարձավ պիա, պի, աի, նույնիսկ պ կամ
ա: Այն բարբառների մեջ, ուր նա այս վիճակին է հասած, չենք
կարող գտնել մի բառ, ուր նախապես պի կամ վերջավանկ աի չըն-
ջրվի. հետևաբար պիաի բառի կրած ձայնափոխությունը սովորա-
կան օրենքներից դուրս է: Այսպես նաև մեր սահմանականի կը, կ
մասնիկը, առաջացել է գրաբարի կայ ու ձեռք: Թող, որ իսկապես
առանձին բառ է գործածվելով իբր հրամայականի մասնիկ և այս
վիճակում բոլորովին մաշվելով, դարձել է Հաննի բարբառում սլար-
զուպես ք:

Այս պարագային պատահում է, ինչպես և բնական էր սպա-
սել, որ միևնույն բառը, մի տեղ գործածվելով անկախաբար, պա-
հեր իր ինքնուրույն ձևը, իսկ մի ուրիշ տեղ գործածվելով իբր օ-
ժանդակ, ենթարկվեր մի ուրիշ ձայնափոխության և տար բոլոր-
ովին այլ ձև: Այսպես, միևնույն լատիներեն illam բառը գործած-
վելով հաջորդ գոյականի հետ իբր օժանդակ, դարձավ ֆրանսերեն
la հոգը, իսկ գործածվելով իբր անկախ բառ, ավելի elle իգական
գերանունը: la և elle ձևով և գործածություններ այսօր այնքան տար-
բեր են թեև, բայց ծագումով բոլորովին միևնույն բառերն են:

Այսպես նաև հայերեն կայ ու, որ իբր օժանդակ ավել է կու,
կը, կ. իբր անկախ բառ մնում է իր իսկական ձևով և ստում ենք,
օրինակ, կա ու չկա, բացասական չկա ու չկա:

Սերբերեն hōcū «ուզում եմ» իբր առանձին բառ պահում է
ամբողջ ձևը, իսկ գառնալով սպասնիի մասնիկ, վերածվում է ճն.
ինչպես՝ jâ ču činiti «պիտի անեմ»:

Կրճատման շատ լավ օրինակ է առաւօտ > Պոլսի բարբառով
առաու, որ հոլովական առաւօտու ձևի կրճատումից է առաջացած.
հոգով էլ ասվում է առաուն, այն է առաւօտուն, որի նմանու-
թյամբ էլ ունենք երեկոյն = իրիկուն, հոգով իրիկունը, նույնիսկ
Պոլսի բարբառով իրինգունը:

Ամբողջ նախադասությունն էլ կարող է կրճատվել և վերած-
վել մի ձայնի. օրինակ, երեանի բարբառով ես ի՞մ = ես ի՞նչ
իմանամ, չգիտեմ:

Նոր Բալթիկի բարբառով չման ինչ, չսան ինչ = չգիտեմ
ինչ, չգիտես ինչ:

Մարաղայի բարբառով սիււամ = ես ի՞նչ իմանամ, չգիտեմ:
Ղարաբաղի բարբառով իաո = ինձ տուր, կամ նաև ի = ինձ
տուր, օրինակ՝ էն ըլամանը ի աո (ի) = այն աղամանը ինձ տուր:

վանի բարբառով ի՞նչ = (այս) հա = իրա բառից կրճատված:
Այս բոլորի մասին տես իմ հասփածը՝ «Անհոյ բառեր», «Հուշարձան» ժողովածուի մեջ:

3. Գիտական և ուսումնական բնույթ ունեցող մի խումբ բառեր, որոնք կազմված են երկու բառից և բավական երկար են, կրում են բավական ընդարձակ կրճատում, հատկապես վերջի մասից. ինչպես՝

- Ֆրանսերեն kilo (gramme).
- photo (graphie).
- cinéma (tographie).
- vélo (cipède).
- auto (mobile).
- métro (politaine).
- piano (-forte)*.
- dépêche (télégraphique).
- dynamo (machine dynamo-électrique)
- bat d'Al (bataillons d'Afrique).
- Անգլերեն pop = popular concert.
- prep = preparation.
- sup = supernumerary.
- bus = omnibus.
- phone = telephone և այլն:

Շվեդերեն bil = automobile.

Կրճատման այս ձևը, որ գտնում ենք եվրոպայի զանազան ժողովուրդների մեջ, թեև նոր ժամանակի ծնունդն է, բայց չափազանց տարածված է ամեն տեղ էլ: Այժմ մեզ մոտ էլ ունի ընդարձակ գործածություն. օրինակ՝ ժողկոմխորհ, լուսժողկոմ, ֆինժողկոմ, առժողկոմ, հալկոոպ, բանկոոպ և այլն:

4. Կրճատման վերջին աստիճանն է ամբողջ բառից հիշել միայն նախատառի անունը: Այսպիսի ձև կար մեր ժողովրդական ծածկալեզվի մեջ. օրինակ՝ Ազուլիսի բարբառով քո նշանակում է «թագ» և այս բառի նախատառի անունն է. փիւր-փիւր նշանակում է «փոքր-փոքր, քիչ-քիչ» և այս բառի նախատառի անունն է (տե՛ս Սարգսեանց, Ազուլեցոց բարբառը, Բ, 11): Ղարաբաղի բարբառով նշ նշանակում է «հետույք» և եսև բառի նախատառի անունն է:

* Իտալերեն ձևն էր grave cembalo col piano e forte.

Հարեմենում այսպիսի կրճատման գեղեցիկ օրինակ է ցը, որ «ցահուսթյուն» բառի ծայրահեղ կրճատ ձևն է: Այս օրինակը պատկանում է թեև նախորդ համարին (իրրե շատ հաճախ գործածական ձև) և թեև այս համարին: «Ցահուսթյուն» բառը երկու տեսակ կրճատում ունի՝ ցը և ցո: Առաջինը բառի առաջին վանկն է ներկայացնում, իսկ երկրորդը՝ բառի առաջին տառի անունը (հմմտ. Ազուլիսի բարբառի քո «թագ» և այլն): Երկու կրճատումներն էլ գրական ճանապարհով են առաջացել և ոչ թե ժողովրդական, որովհետև բառը ինքն էլ գրական է և ոչ թե բնիկ ժողովրդական: Առաջ սովորական էր կովկասում ցո ձևը, իսկ այժմ վերացել է, որովհետև տառերի անունները ջնջվել են արդի մանկավարժություն մեջ. այս պատճառով էլ մնում է միայն ցը:

Այս կողմից հետաքրքրական է արեմտահայերի գրական լեզուն: Այստեղ ընդհանրապես չկա «ցահուսթյուն» բառի գործածությունը: Թեև ֆրանսերեն au revoir կամ գերմաներեն auf wiedersehen ձևերը ծանոթ են արեմտահայերին, բայց սանձերեն լեզուն չունի այդպիսի բացատրություն: Այլ կա միայն hošja Kalon, hošja Kalonox «մնաս բարով, մնացէ՛ք բարով» և այլն և սրանց հետևություններ էլ հալ ժողովուրդը գործ է ածում միայն «մնաս բարով, մնացէ՛ք բարով», «կեցէ՛ք բարով» ձևերը: Երբ ֆրանսիական վեպերի թարգմանիչները ստիպվեցին իրենց թարգմանությունների մեջ մտցնել այդ ձևերը, թարգմանեցին ի տեսութիւն, ի կրկին տեսութիւն կամ կրկին տեսութիւն, օրինակ՝ Ա. Տիւմալի Բոլին վեպի մեջ (թրգմ. Գրիգոր Մսերեան, Չմիւսնիա, 1872, 87) կարդում ենք. «Կոմսը ինձ «կրկին տեսութիւն» ըսելու տեղ «մնաս բարե» կ'ըսէր»: «Ցահուսթյուն» բառը կովկասահայ բարբառից մտավ արեմտահայերենի մեջ: Այս պատճառով էլ ցը կամ ցո կրճատումը գոյություն չունի արեմտահայերենի մեջ: (Հմմտ., օրինակ՝ Ասանձարի ժողովածու երկեր, Թիֆլիս, 1905, 103—104, ուր հեղինակը պատմում է, թե ինչպես պուրսահայ գրող Ֆանթազյանն առաջին անգամ լսում է սուսահայ տսանոցից ցը ձևը և դարձանում այդ ձևի վրա):

Այս ձևի կրճատման ավելի ընդարձակ և պաշտոնական գործածություն ունեն եվրոպացիք. այսպես՝

Ֆրանսերեն P. C. N. (physique «Փիզիկա», chimie «քիմիա», histoire naturelle «բնական պատմություն»), երեք պարտադիր քրնություններ, որ տալիս են համալսարանի գիտական ֆակուլտետների ուսանողները առաջին և երկրորդ կուրսերում):

Ֆրանսերեն C. G. T. (Confédération générale du travail «Աշխատանքի ընդհանուր կոնֆեդերացիա»):

Ֆրանսերեն T. C. F. (Touring-Club français «Տուրիզմի ֆրանսիական ակումբ»):

Այսպիսի կրճատումները Անգլիայից են անցել Ֆրանսիա (BSL 67, p. 253):

Գերմաներեն Hakatisten (կազմված H. K. T. նախաատուրից և նշանակում է Լեհաստանը գերմանացնելու կուսակցությունը):

Գերմաներեն Cadet (K. D = Konstitutinel-Demokrat):

Այս կարգի կրճատումների համար Եսպերանտո (Ling., 268) օրինակ է բերում բարեկու ժամանակ գլխարկ հանելու սովորությունը. մեծավորներին տեսնելիս հանում են գլխարկը հարգական շարժումներով և ամբողջապես ընկերոջ՝ ավելի քիչ են հանում, իսկ ամենօրյա ծանոթին տեսնելիս՝ անորոշ մի շարժում գլխարկի սղղությունը բավական է:

Կրճատման առանձին մի ձև է ներկայացնում այն, երբ մի ամբողջ գրվածքի առաջին բառը կամ բառերը դառնում են ամբողջի վերնագիր. օրինակ՝ «Ծիծեռնակ» կարծիք ևս երգել (սկիսարկում է «Ծիծեռնակ, ծիծեռնակ, դու դարձան սիրուն թռչնակ» հանրածանոթ երգը), «Ար օրհնես զայնոսիկ»-ը տարված է Վիեննայում 50 լիզիով թարգմանված, իսկ «Հաւատով խոստովանիմ»-ը տարված է Վենետիկում 36 լիզիով թարգմանված: Մայրս զնաց «Նայեաց սիրով» լսելու. «Այսօր անճառ»-ը 36 աուն ունի. այսպես նաև «Աշխարհ ամենայն»-ը, թե «Հաւատով խոստովանիմ»-ը, թե «Նայեաց սիրով»-ը, թե «Այսօր անճառ»-ը և թե «Առաւօտ լուսուլ»-ն Ներսես Շնորհալու գործերն են:

7. ՀԱՐԱԿՑՈՒՄ ԿԱՄ ՀԱՎԵԼՈՒՄ

(Agglutination)

Հարակցում (agglutination) է կոչվում այն երևույթը, երբ բառի մոտ գտնված մի նախաձայն մասնիկ կամ հոդ, արմատական կարծիքով, կցվում է բուն բառին. օրինակ՝ լատիներեն heder > ֆրանսերեն terre, որ l' որոշիչ հոդի հարակցումով դարձել է Herre.—անգլիերեն an ekename, միացնելով անորոշ հոդի ու ձայնը դարձել է a nickname «ծաղրանուն».—հայերեն բարբառ-

ներում սովորական է կ սահմանական մասնիկի կցումը բային, ինչպես՝ ետալ—կետալ:

Նույնպես ունենք որոշյալ և հոդի սխալ կցումով՝ մեղուն, դրացին, թին, ձին:

Նույնը կա նաև ֆրանսերենում, ինչպես՝ Lille (Insula), luette (uvette), lendemain (հին ֆրանսերեն le lendemain), abbé (զավաստական le labbé) և այլն:

ա ձայնարկության կցումով, ադեր (Ղարարաղ) «քահանա, տերտեր», աքիր (Երևան) «քույր», հմմա. բերբերեն yállā «Աստված» (ուղղական փոխանակ կոչականի) (MSL 23, p. 332):

օ կոչականի նշանը իբր բառի մաս համարելով՝ Մարօ, Կարօ և այլն իբր ուղղական (հմմա. եթովպական գալլա լեզվով wā-qayo «երկինք, Աստված», որ wāqā «երկինք» բառի կոչականն է (āyo մասնիկով), ուղղական դարձած (MSL 23, p. 332):

Հանդիպում ենք նաև բառակցում և ձայնի հավելման օրինակների. այսպես, Ասարախանի բարբառով տնենք Նյոբեյ «ոլորեկ», Ներգար «երկար, հեռու», Ներեգի «երեկ», Նով «ոզ»:

Ֆրանսերենում h-ի հավելումով՝ huit < լատիներեն octo, huile լատիներեն < oleum, huitre < լատիներեն ostera:

Մեր բոլոր բարբառներում գրաբար ազանիլ «զգեհնուլ» բայը, ստանալով նախաձայն և հավելումը, դարձել է հազնիլ. այս հավելումը կարծում եմ նրա համար է, որ այդ բայը չչփոթվի մյուս ազանիլ բայի հետ, որ նշանակում է «զիշերել, օթեհանել»:

Բառակցումը դ-ից, ո-ից և ը-ից առաջ ավելանում է ե կամ ա. օրինակ՝

եղբայր = աղբայր < *ղբայր

երանգ < rang.

երասանք = հնչեկրոպական նախալեզվի prok'ton.

արասան, երասան = պարսկերեն rasan.

նույնիսկ առա բառը հնչվում է ուռուս:

Առանձին ուշադրություն է արժանի և բաղաձայնը, որ ավելացված է գրաբարի շատ բառերի վրա: Այս և թեև համարվում է արմատական, բայց չի գտնվում համապատասխան հնչեկրոպական բառերի մեջ: Արմատական ենք համարում, որովհետև այդ և բաղաձայնը ավանդման մեջ էլ մնում է. օրինակ՝ ձուկն, ձկնորս, ձկնեղեն: Բացի սրանից և մնում է նաև հարվման ժամանակ, ինչպես՝ սեռական ձկան, բացառական ի ձկան, և նույնիսկ գործիական ձկամբ, որ նույնիսկ և դարձել է մ' հաջորդ շրթնալին բաղա-

ձայնի պատճառով: Վերջացես ալիպիտի և ունեցող բառը կարող է նաև և որոշիչ հոգ ստանալ, ինչպես՝ ձուկն, զձուկնն, ձկունքն:

Ինչի՞ց է ստաջանում այս և վերջածափնը, որ, ինչպես ստացինք, իր համապատասխանը չունի ցեղակից լեզուներում:

Նախացես կարծում էինք, թե այս և հնդեվրոպական բառերի չեզոք սեռի վերջավորությունն է: Երբ մի լեզվի մեջ սեռը չնշվում է, բոլոր բառերը չեզոք են դառնում (զոնն գաղափարով): Այսպես էլ հայերենի մեջ: Բայց հետո նկատելով, որ արական և իգական բառերի ծայրին էլ ավելացրած կա այդ և ձայնը, ուստի հրաժարվեցինք այս կարծիքից, որովհետև արականը չի կարող չեզոք լինել, ինչպես և իգականը: Այսպես՝ առն արու վայրի ոչխարն է և եզն արական է, ուստի նրանց ծայրի և չեզոք նշան չի կարող լինել: Նմանապես հարսն և եղն իգական են, ուստի նրանց ծայրի և չի կարող չեզոքի նշան լինել:

Մնում էր բնզանել մի այլ բացատրություն.— հնդեվրոպական նախալեզվում ո սչ միայն չեզոքի նշան է, այլև եզակի հալցականի: Հալցականը կարող է երբեմն բռնել ուղղականի տեղը, օրինակ՝ արզի հայերենում երկուս, չորս, բաղանիս, բալնիս (Ողմի, Մոկք, Վան, Սարմասա, Մարապա), հարսնիս (Վան, Ողմի, Մոկք, Մարապա, Սարմասա) և հատկապես բազմաթիվ հատակ անուններ: Այսպես էլ հնադարյն հայերենում հնդեվրոպական շրջանի հալցականն անցել է ուղղականի տեղը: Այսպես էր ընդունում նաև Մեյլեն:

8. ՀԱՐԱՍՈՒԹՅՈՒՆ

(Répétition)

Հարասություն տակելով հասկանում ենք բառի մեջ գտնված այն երևույթը, որով մի ձայն քիչ հետո նորից կրկնվում է: Սրա պատճառն հետևյալն է.— Բառի մեջ մի ձայնի արտաբերություն համար գործարանն իր ձեն ստանալուց հետո, նախ գրությունը շարունակում է ավելի երկար, որով նախ ձայնը կրկնվում է նաև հետո. այսպես՝ գերմաներեն genug բառը արտասանելու համար երբ կատիկը իջնի ո ձայնի համար և իր այս գիրքը պահի ո ձայնը արտաբերելուց էլ հետո, գտնում է genung. ինչպես գտնում ենք ժողովրդական լեզվի մեջ:

Այսպես և՛ անգլերեն syllable, որի վերջին և կրկնություն է, Ֆրանսերեն perdrix < լատիներեն perdicem (Ֆրանսերենի վերջավանդի ր կրկնված), լատիներեն crocodillus > crocodrillus:

Հայերենի մեջ հարասության օրինակներ են՝

կանաչ > կանանչ

նանաչ > նանանչ

մեք > մեքք

ման > մանն

նիգ > նինգ > լինգ

մաչ > մանչ

միրուք > միրունք (Չահարմահալի ժողովրդական բանահյուսություն, էջ 64, 67):

հրեշտակ > Ղարարաղ հրի՛շտակ, Շամախի հրքշտակ, կամաց > կամանց (Ախտա)

տևս և գոքանչ (նախասություն մեջ):

9. ՆԱԽԱՍՈՒԹՅՈՒՆ

(Articulation anticipée)

Նախասությունը հարասության հակառակն է. այսպես է կոչվում այն երևույթը, երբ բառի մեջ հետո հնչվելիք մի ձայն նախապես էլ է հնչվում. օրինակ՝ լատիներեն thesaurus > Ֆրանսերեն *tésor > trésor «գանձ»:

Հայերեն գոքանչ > Պոլիս գոքանչ. բայց այս բառը կարելի է բացատրել այլ ձևով. նախ տեղափոխություն՝ գոքանչ (հմմտ. Ղարարաղ գեմբուչ, Մեղրի գենքուն), հետո հարասությամբ՝ գոքանչ:

Գերմաներեն gestern > գավառական gerstern.

Լատիներեն septem > ստորին լատիներեն septem.

Լատիներեն viginti > ստորին լատիներեն vinginti.

Հայերեն բեքել > բելքել.

երեկոյ > երեկուն > Պոլիս իրինգուն:

10. ԹՅՈՒՎՐԸՄԲՆՈՒՄ

(Malentendu)

Թյարբմբնումը ժողովրդական ստուգաբանության նմանող մի երևույթ է, որ սակայն մի կամ երկու հնչյունի հետ գործ ունի և ոչ բառի հետ:

Թյուրքմբանման լավ օրինակ է առ իս «Ինձ մոտ» բնոր: Այս բնոր կազմված է առ նախդիրով, ես անձնական զերանվան հայցականի (զ) իս ձևից: Սրա նման կարող ենք ասել առ քեզ, առ մեզ, առ նա, առ նմա, առ նուա և այլն: Ղարաբաղի բարբառում կենդանի է առես ձևը, որ նշանակում է «Ինձ մոտ»: Ղարաբաղի բարբառը ոչ մի տեղեկություն չունի զրաբարի առ իս ձևի կազմության մասին և թյուրքմբանմանով, կարծելով, թե դա մի ստանձին բառ է առես ձևով, ենթադրում է, թե վերջի ու ձայնը, որ անձնական ես զերանվան վերջածայնն է, առաջին դեմքի ստացական հոգ է. ուստի ճիշտ նրա նման կազմել է առեդ, առեն «քեզ մոտ, նրա մոտ» ձևերը, առանց դիտակցելու, թե առ քեզ, առ նա և այլն ձևերն էլ գոյություն ունեն:

Թյուրքմբանման լավ օրինակներ են նաև հետևյալները.
 Այլ բնոր Պոլիս և այլուր դարձել է ձին, ուր որոշիչ հոգը (ն) կարծվել է, թե բառի արմատին է պատկանում և կպել նրան: Այսպես նաև զրացի > Պոլիս զրացին, նոր նախիջեան զիրացին: մեղու > Սուչապա մեղուն:

Սրա հակառակ, Երեանի բարբառում, սեռականի -ան վերջավորության միջից ն հոգ կարծվելով ջնջվել է. այսպես՝
 Կաղչիկ, սեռական աղչկան > Երեան աղչկա.
 կնիկ, սեռական կնկան > Երեան կնկա.
 օր, սեռական օրուան > Երեան օրա.
 ձմեռն, սեռական ձմեռուան > Երեան ձմեռուա և այլն:
 Նույն կրճատումը տեղի չի ունեցել ստեղծման մահուան, գարնան, աշնան, ձմռան, և այլն համանման ձևերի մեջ:

Արեղյանը շինեց կերպար և գործարք բառերը, որոնք կազմեց կերպարանք և գործարք բառերից դիտավորյալ թյուրքմբանմանով:

Անգլիերենում a Portuguos, a Maltes «պորտուգալացի, մալթացի» կորցրել են իրենց վերջածայն s՝ սխալմամբ հոգնակիի նշան կարծվելով: Նույնպես՝ Yankee, որ ստաշացել է Jan Kees ձևից. այս բնոր գործածական է այժմ Ֆլանդրիայում հոլանդացի գաղթականների համար և կազմված է Jan (=John) և Kees (=Cornelis կամ Christian) անուններից. s հոգնակի կարծվելով ջնջվել է անգլիերենում (Jespersen, Growth, 172):

Տփղիս և Մանգլիս տեղանունների մեջ, որոնք վրացերեն են, հայերը վերջածայն արմատական ա-ն կարծելով հայեզեն հայցականի նշան, հոլովել են սեռական Տփղեաց, Մանգլեաց ձևով:

11. ԳՐՈՒԹՅԱՆ ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋԱՑԱՅ ԶԵՎԵՐ

Այս կարգի փոփոխությունները լեզվաբանության շրջանակից բոլորովին դուրս են, բայց որովհետև անդրադարձել են լեզվի վրա, ստիպված ենք խոսել նրանց մասին ես:

Այս կարգից են՝

շազանակ. ծագում է պհլ. sähdānak «կանեփի սերմ» բառից. ունի բազմաթիվ սխալ գրչություններ, որոնցից նշվ. ընտրել է շազանակ և այսպիսով արդի գրական լեզվի մեջ մտել է հնուպես անգո ձևը:

շերամ շերաս-ից, որի ա-ն շփոթել են մ-ի հետ:

փուրփուզեայ. հունարեն բնագիրն ունի կորկինթ-ական: Արարերեն թարգմանության մեջ բնոր տառադարձվելով ڤورڤوتيا qōrqintiya, կետերը մասամբ ջնջվել են: Հայ թարգմանիչը գտել կամ կարգացել է ڤورڤوسنا fūrūsna, որով և կազմել է հայերեն փորփուզեայ սխալ ձևը:

սմբուկ «բաղրջան, պատինճան». ինձ թվում է, թե արարերեն anb համանիշից է, որ նախ դարձել է ամբուկ. ապա ա-ի մի ճյուղը կորչելով, կարգացվել է սմբուկ (ավելին տես Արմատական բառարան, Զ, 268):

Այս բոլորն առաջանում են տառաձևերի պատահական նմանությունից:

Տառաձևերի նմանություն կարելի է գտնել ամեն մի այբուրենի մեջ. օրինակ՝ լատինական այբուրենում | և | նույն ձևն ունեն. c, e, o գրեթե նույն ձևն ունեն, շատ գծվար է զանազանել իրարից fi, fl. ուստի ն, h, k, n (մանավանդ ձևազրույց) շատ նման են իրար. արաբական այբուրենում այն բոլոր տառերը, որոնք կետերով են տարբերվում իրարից, միշտ ենթակա են շփոթության և այլն:

Հայերենի մեջ էլ ունենք մի խումբ տառեր, որոնք շատ նման են իրար. այսպես ա և ար, ր և ր, գ և դ, զ և ղ, ղ և շ, ո և ս, ո և ո, ձևազրույցի մեջ էլ վ, զ, չ և այլն: Հ. Ա. Վարդանյանը «Հանդէս ամսօրեայ»-ում հրատարակել է մի հոդված, ուր հավաքում է հին ձևազրույցում տեղի ունեցած սխալագրությունները՝ վ-ի և զ-ի մասին: Նույնիսկ հաջադաններ կան, որ սալթաքել են գրերի նմանությունից և սխալ բառեր հորինել: Կլապրոթը Mémoires, I, 436), Պոսին (Kurd. stud. ZKM 4, 12), Պիկանի (I,

385) ուղտ բանը կարգացել են ուղտ: Պատրուբանին «Հանգէս ամօրեայ», 1908, էջ 152 զանգանավանդ «սանձ» բառը կարգում է զանգանաւանդ և ըստ այսմ կցում գոթերեն gaggan «երթալ» բային: Ապուղայ «փամփուշտ» բառը, որ apāulā ձևից է փոխ առնվել և մինչև այժմ էլ կենդանի է բարբառներում ապուղա (նաև ալարուղա՝ ըստ Մոֆիտ Աճառլանի) ձևով, ձևադրերում կա գրբ-ված նաև ապուղայ և այս ձևով էլ հիշում է ՆՀԲ ապուղայ «կապիկ» բառի տակ:

Տեղը չէ խոսելու այն բարեփոխությունց մասին, որ զանա-զան անձինք առաջարկել են այս տառերի մասին: Բայց կարելի է հարեանցի կերպով հիշել Ա. Արատխանյանի առաջարկը, որ և գործադրության դրավ «Մուրճ» ամսագրում (գ և դ, զ և ղ, ա և ա) և Բյուզանդ Քեչյանի առաջարկը, որ գործադրություն գտավ «Բիւզանդիոն» օրաթերթում (գ, դ, զ, ղ, ա, ա): Բայց լավագույնն է այն, որ գործադրեցին և շարունակում են գործադրել Վենետիկի Մխիթարյան միաբանները իրենց բոլոր հրատարակությունների մեջ (գ, դ, զ, ղ, ա, ա):

Մենք բոլորս վարժված լինելով բառերի ընդհանուր պատ-կերին և ոչ թե առանձին տառերին, չենք նկատում առանձին տա-ռերի գրչությունը, գրա համար է, որ վրիպակները վրիպում են մեր աչքից: Բայց երբեմն պատահում են դեպքեր, որոնք երկու պատկերով էլ գոյություն ունեն. ինչպես՝ Արաքսուման, «Ճանա-պարհ գեպի Կամիշին» վեպի մեջ (Ա. Երևան, 1945, 238) կար-գում ենք. «Ամեն մեկ բառը ոչ թե բերանից, այլ կարծես սրտի դեռես չհայտնաբերված գաղանարանից էր դուրս թռչում»:—Ստո-րագծեալ բառը ամենայն հեշտությամբ կարելի էր կարգալ գազա-նարանից, որ տեղին էլ շատ հարմար է:

Այսպիսի դեպքեր սակայն քիչ են պատահում: Զին լեզվաբանների մեջ կալին այնպիսիները, որոնք ձայ-ների փոփոխությունը տառերի նմանությամբ էին մեկնում. օրի-նակ՝ հունարեն pente և լատիներեն quinque «5» հոմանիշների ձայնական տարբերությունը բացատրում էին p = շուտ տված զ տառերի միջոցով: Արդի գիտությունը այսպիսի պատահական, ար-տաքուստ միայն իրական փաստերի վրա ոչ մի ուշադրություն չի դարձնում, որովհետև լեզուն այնպիսի և շատ այնպիսի առաջ է քան զիրը:

Նվ եթե պատահեն նույնիսկ աչք ծակող նման երևույթներ, լեզվաբանը խուսափում է նույնիսկ նրանք տեսնելուց, օրինակ՝

արաբերեն kataba «գրեց» ներգործական է, որի կրավորականն էլ լինում է kutiba. սրանք ձայնանիշներով միայն տարբեր-վում են իրարից. և որովհետև այժմ ապագրության մեջ ձայնա-նիշները չեն գրվում, ուստի երկու ձևերն էլ գրությունք նույնա-նում են: Այժմ արաբները չեն սիրում գործածել կրավորական, և երբ առիթ լինի գործածել կրավորականը, շուտ են տալիս ներգոր-ծականի: Միամիտ մի լեզվաբան կարող էր այս երևույթը բացա-տրել գրության շփոթությունք. բայց դա կլիներ բոլորովին խարու-սիկ բան, որովհետև կրավորականի տեղ ներգործական զնելու սո-վորությունը շատ տարածված մի երևույթ է զանազան լեզուների մեջ:

12. ՏԱԲՈՒ
(Tabou)

«Ներածություն» մեջ ասել ենք, թե ինչ է տարուն. ժողովրդա-կան նախապաշարմունքով որոշ առարկաների անունը արգելված է արտասանել, դա տարու է. բայց որովհետև պետք է աջնուածենայ-նիվ առարկայի մասին խոսել, ուստի հնարվում է մի ուրիշ բառ, որ ներելի է: Իրա հետեանքով կամ ջնջվում է բառը ամբողջապես և նրա տեղ գրվում է բոլորովին նոր մի բառ, և կամ բառը են-թարկվում է ձայնական որոշ փոփոխություն: Առաջին ձևի մասին արդեն բավական խոսել ենք նույն տեղում. մնում է խոսել այս-տեղ երկրորդի մասին:

Պարսկաստանում կա մի նախապաշարմունք, կարծում են, թե կա մի հրեշտակ, որը հսկում է, որ նամակները անկորուստ հաս-նեն իրենց հասցեատերերին. այդ հրեշտակը կրում է 2468 համա-րը և եթե այս համարը գրվի նամակի վրա, նամակը անշուշտ տեղ կհասնի: Բայց կա նաև մի չար ոգի, որ գիտի այս համարը և երբ տեսնի նամակի վրա գրված 2468, կաշխատի վնասել այդ նամա-կին, գողանալ և կամ որևէ ձևով տեղ չհասցնել: Այս չարիքից զերծ պահելու համար, նամակ գրողները փոխում են չորս թվա-նշանների կարգը և դնում են, օրինակ, 4628, 6284, 8246 և այլն: Չար ոգին, որ այնքան հասկացողություն չունի, չի հասկանում խորամանկությունը, սակայն հրեշտակը հասկանում է, որ իր հա-մարն է և նամակը հասցնում է իր տեղը:

Այսպես է նաև երկրորդ ձևը. բառի վրա այնպիսիով որևէ մասնիկ, կամ անկանոն կերպով փոխելով նրա որևէ ձայնը, բառը

անճանաչելի է դառնում չար ոգուն և նա այլևս չի կարողանում վնասել:

Ահա այսպես է առաջանում տարու եղած բառերի անկանոն ձայնափոխությունը:

Մենք պիտի խոսենք այստեղ գլխավորապես այն բառերի մասին, որոնք հնդեվրոպականից հայերենի անցման ժամանակ ենթարկվել են տարուի ձայնափոխության, սրանք են արք, կամուրջ և օձ բառերը:

Արք բառի նախածին էր հնդեվրոպական նախալեզվում r̥ktho, որ ըստ կարելվույն լավ պահված է հունարեն ἄρκτος, հին իուլանդերեն art, կիմերերեն arth, սանսկրիտ r̥kṣa ձևերի մեջ. մյուս լեզուները շատ են այլափոխել այն. ինչպես՝ զենդերեն arša, սոգդիերեն ašša, պարսկերեն xirs, ալթայերեն arf, լատիներեն ursus և այլն: Հայերենը եթե հավատարիմ մնացած լիներ նախածինն, պիտի ասեր *արքթ, կամ ավելի լավ՝ արթ. բայց անկանոն կերպով փոխել է վերջածայնը և դարձրել արք:

Կամուրջ բառի նախածինը դժվար է որոշել, որովհետև բոլոր մյուս լեզուները ջնջել են այն և նրա տեղ հնարել նոր անուններ Կամուրջ մնում է միայն հայերենի և հունարենի մեջ (վերջինս իր զանազան բարբառներով՝ γέφυρα), երկուսի համեմատությամբ նախածինը կարելի է դնել g^webhura, որ պիտի տար հայերեն *կևուր, իսկ կամուրջ ձևափոխությունը տարուի պատճառով է:

Նկատելի է, որ թե արք և թե կամուրջ տարուի համար ք-ի վրա ավելացրել են ջ, որ ուրիշ բառերի վրա էլ իբրև հավելված զրված է. ինչպես՝ սաքք, անուրջ (բոլորն էլ քջ):

Օձ բառն ավելի բարդ է: Այս կենդանու համար հնդեվրոպացիք ունենին նախ երկու տարբեր բառ. ēg²hi և ang²hi. առաջինից ստացվում է հայերեն իծ (հնդեվրոպական նախալեզվի eg²hi ձևից), սանսկրիտ āhi, զենդերեն aži, հունարեն ὄφις. իսկ երկրորդից լատիներեն anguis, հին պրուսերեն, լիթվաներեն angis, իուլանդերեն -ung, հին բարձր գերմաներեն unc և հայերեն օձ < աւձ հայերեն ձեն ըստ օրինի պիտի լիներ *անգ, բայց տարուի պատճառով ձևափոխվել է այսպես:

Տարուի երկու տարբեր ձևերի միջին տեղն է բռնում միջին հայերեն և գավառական կոր, որ նշանակում է «կարիճ»: Նախապես արամադիր էի կարծելու, որ կոր բառը նույն է իր հոմանիշ կարիճ բառի հետ և նրա արմատն է: Այժմ, որ կարիճ բառն ամբողջությամբ կցել եմ հունարեն καρῖς, καρῖδος բառի հետ, կոր

ձևը մնում է անկախ. սա հայերեն կոր «ծուռ» բառն է և ինչպես պարսկերեն Každum = Ղարաբաղ կըռքիաքի կարիճի նոր անուններն են, նմանապես և՛ կոր (նույն միջատի ծուռ պոչի պատճառով այսպես կոչված. տես Արմատական բառարան, է, 151, 154):

Կոր «կարիճ» բառի մի ուրիշ ձևն է կորչ, որ գործածական է Չարսանճաքի բարբառում, նույն նշանակությամբ: Ըստ իս այս էլ տարուի կրկնակ ձևն է. կոր բառը ինքը տարու էր, բայց արգեն մոռացվելով և սովորական բառ դառնալով, նորից ենթարկվեց տարուի. ինչպես որ Սեբաստիայում օձ բառից հետո զնում են չ՝ որպեսզի օձը փախչի, հեռանա նույնպես և այստեղ կոր բառից հետո ավելացրին չ՝ նույն նպատակով:

Եղնիկի մեջ (էջ 103) գտնում ենք տարուի հիշատակության մի հետք. «Եւ ի գուր է կա՛լ կա՛լն ասել ումեք ի կալս ե ոչ ա՛ն»: Ուրեմն կալերի մեջ ա՛ն «վերցրու» բառը չէին գործածում. հավատացած էին, որ եթե «առ» ասեն, գեը կգա և ցորենը կվերցնի, կտանի. ուստի ասում էին «կալ». գեը շփոթելով կալ բայը կալ գոյականի հետ, ցորենը չէր վերցնում ու տանում:

13. ԱՆԿԱՆՈՆ ԲԱՌԵՐ

(Mots irréguliers)

Այս զանազան տեսակի ձայնափոխություններից դուրս կան նաև այնպիսիները, որոնք սչ մի կանոնի տակ չեն մանում. այս բառերի թիվը մեծ չի լինում, բայց ամեն լեզվի մեջ էլ կա: Սրանք առաջացած են լինում մի որևէ ձայնի անկանոն հավելումով, կամ որևէ ձայնի տարօրինակ ձևափոխությամբ. օրինակ՝

Ֆրանսերեն écrevisse փոխանակ crevice (հին գերմաներեն Kriebiz).

vriille փոխանակ *ville < viticula

soif < լատիներեն sitim.

Եթե ֆրանսերենը, որ հայերենի համեմատությամբ շատ նոր ժամանակի լեզու է և որի մայր լատիներենը այնպիսի մանրամասնությամբ ծանոթ է գիտության, կարող է ունենալ այսպիսի անկանոն ձևեր, ի՞նչ պիտի լիներ հայերենը, որ հազարավոր տարիներով բաժանված է հնդեվրոպական նախալեզվից, այն լեզվից, որ իր գոյությունից սչ մի հետք չի թողել: Այնուամենայնիվ,

գիտնականների աշխատանքի շնորհիվ, շատ բան իր լուծումն է գտել հայերենում: Հայերենի 8775 արմատներից մեկնված է 5987 բառ և ստանց մեկնություն են մնում 3688 բառ:

Հնդեվրոպական նախալեզվի միջոցով մեկնված բառերի մեջ անորոշ կամ անկանոն են մնում հետևյալ բառերը.

Ականջք, որ ունի բառի երկակին է՝ ճիշտ ինչպես աչք երկակին է ակն բառի: ձևապես շատ ալլափոխված է ականջք և ստուգարանորեն դժվար բացատրելի. ազդվելով աչք բառից, սա էլ ստացել է ՀՔ՝ հավելումը, որի մեջ է հետո դարձել է ջ՝ նախորդ անգականի պատճառով:

Այր «աղամարդ», ոմանք գնում են հնդեվրոպական նախալեզվի řsen (հունարեն ἄρσην) ձևից և ոմանք էլ հնդեվրոպական նախալեզվի aner (հունարեն ἀνήρ) ձևից:

Գալլ. այս բառի հնդեվրոպական նախալեզվի ձևն է vlk²o, որից սակայն չի կարող ծագել գալլ ձևը. ուրիշ լեզուներ էլ շեղումներ են ցույց տալիս և երևի այս բառն էլ տարուի ենթարկվելով, զանազան ձևափոխություններ էր ստացել. հայերենն այս ձևի տակ ենթադրում է հնդեվրոպական նախալեզվում vallo:

Գարի. մյուս լեզուները ենթադրում են զանազան նախաձևեր. այսպես հունարենը՝ հնդեվրոպական նախալեզու gherzdā, գերմանականը՝ gherzdā, լատինը՝ ghrzd-, որոնց զեմ սպասելի էր հայերեն գարսի, և հարց է, թե կարո՞ղ էր այս ձևից էլ առաջանալ գարի, ինչպես որ հունարեն χρένι ձևից առաջացել է չրի:

Լաւ. կարելի է համեմատել մի կողմից հունարեն λῆσας «լավ, շահավետ» բառի և մյուս կողմից լիտվաներեն lābas «լավ» բառին. երկուսի էլ ցեղակից ձևերը տես Արմատական բառարան, Գ, 169, հայերենն իր վճռական մեկնությունը չունի:

Լեարդ. այս բառի համապատասխան ձևերն են՝ սանսկրիտ yákr̥t, հունարեն ἵπαρος (սեռական hípatos), լատիններեն jecur, լիտվաներեն jāknos, հին պրուսերեն lagnos, հին իտալերեն lifr, հին բարձր գերմաներեն lebara.— առաջինների նախաձևը գրվում է yēk²rt. հայերենի նախաձևը գնում են զանազան հեղինակներ lipart, lyēk²rt, lek²rt և այլն: Հայտնի չէ թե ո՞րն է ուղիղ ձևը:

Լեզու. այս բառի համապատասխան ձևերն են՝ սանսկրիտ jīhvā, գենդերեն hizvā, hizu, հին լատիններեն lingua, լատիններեն lingua, գոթերեն tuggō, հին սաքսոններեն tunga, հին բարձր գերմաներեն sunga, հին իտալերեն tenga, իտալերեն

ligur, հին սլավերեն yezykū, լիթվաներեն lėžūvis և այլն. այս բոլորի նախաձևն էր հնդեվրոպական նախալեզվում dn̥gʰuā, dn̥gʰh̥, որ ժողովրդական ստուգարանությամբ կապակցվելով «լի-ղել» (հնդեվրոպական նախալեզու leigih) բառի հետ, կրել է նրա ազդեցությունը և ավելի կամ պակաս չափով փոփոխվել: Դեռ պատական շրջանում, հին լատիններեն lingua ազդվելով լատիններեն lingo «լիղել» բառից, գարձավ lingua, նույնպես նաև լիտվաներեն izūvis ազդվելով lėžiū «լիղել» բառից, եզավ lėžūvis. հայերենի մեջ էլ հնդեվրոպական նախալեզվի dn̥gʰh̥, որ պիտի օտար *աան-նու, ազդվելով լեզուլ, լիզուլ բառերից, գարձավ լեզու:

Մրջիւն. այս բառի համապատասխան ձևերը շատ բազմազան են. հիշում ենք նրանցից կարեւորները. հունարեն μύρμηξ-լատիններեն formica, հին սլավերեն mraviji, հին իտալերեն maurr, իտալերեն moirb, գենդերեն maotri, սանսկրիտ vamrā, բուն նախաձևը գրվում է morvo, որ բաղաձայնների շրջմամբ և նմանությամբ ավել է հետո vormo, mormo, mouro և այլն, և ապա զանազան մասնիկներով ընդարձակվել. ինչպես -ka մասնիկով՝ լատիններեն formica, հունարեն μύρμιξας, սանսկրիտ walmika և այլն: Հայերենի մեջ մասնիկ է նախ -իւն (հմմտ. արիւն, արդիւն), որ հանելով մնում է *մրջ, այսինքն մուրջ, այստեղ էլ ջ գնելով մասնիկ (հմմտ. ստերջ, անուրջ, կամուրջ, արջ), կունենանք մուր, որի ու ձայնափոքը բացատրելու համար պետք է ասենլ mouro նախաձևը:

Նկատելի է, որ վերջին մի քանի բառերի մեջ մասնիկը կամ հավելյալ բաղաձայնը ջ է (ր-ից հետո):

Փայծաղն. սրտ էլ համապատասխան ձևերը շատ բազմազան են, սրտնցից կարեւորներն են. սանսկրիտ plīhān, գենդերեն spēṛā-zan, հունարեն σπλήν, σπλάγχνον, լատիններեն lien, հին սլավերեն slēzēna, անգլերեն spleen, լիթվաներեն blužnis, հին պրուսերեն blusne. սրտնց նախաձևը դժվար է վերականգնել, ընդհանրապես գրվում է sphelgʰhen, splenʰgh, splegʰh. ըստ Մելիի (MSL 18, p. 310) փայծաղն էլ այն բառերից է, որ մարմնի ուրիշ անդամների նման, կրոնական նախապաշարմունքով տարուի էր ենթարկված և ալլադան ձևեր է ստացել: Հայերենը գալիս է *փայծղան ձևից, որ տեղափոխությամբ գարձել է փայծաղն և *փածայղն. սրտնց մեջ փ ներկայացնում է sph. հալ բարբառային ձևերը առաջանում են փայծաղ և *փածայղ ձևերից, որ է փածեղ. միայն թոտորջուրի բարբառն է, որ ունի սիպէլս և ծագում է *սիպելն կամ սիպայղն ձևից:

Արդի բարբառներում էլ կան բառեր, որոնք զանազան ձայնական օրենքների հանդիպումով ստեղծել են անկանոն բառեր. օրինակ, Երևանի գյուղերում ասում են շուն-շանգյալ, որ է շուն-շնագալլ. այս վերջին բառի մեջ ա տեղափոխվել է, գ դարձել է գյ և յ ընկել է:

Ջանգեզուրի գավառականով ունենք պամակ փոխանակ նամակ (անս Արմատական բառարան): Այս բառը անշուշտ անկանոն ձայնափոխություն է և ամեն մեկն էլ պիտի համարի խաթարում կամ աղավաղում, բայց ուշադիր աչքով քննելով, նրա մեջ էլ կտեսնենք կանոնավոր ձայնափոխական օրենքներ:

Նամակ բառն իր առաջին վանկում իրար ետևից ունի և և մ. երկուսն էլ ունգական են և առաջինը ատամնական, երկրորդը շրթնալին: Բնական օրենքը սիրում է կանոնավորություն և միօրինակություն: Եթե երկու ունգալիններից մեկը ատամնական է, մյուսը շրթնալին, կանոնավոր չէ. մեկը մյուսին պիտի նմանվի. ուստի պիտի լինեք նամակ կամ մամակ. ստացվել է նախ մամակ ձևը: Սա կարող էր երկար մնալ, իբրև հաստատուն ձև: Բայց այժմ էլ գործել է սկսել տարանմանություն օրենքը, որ երկու նույններից մեկը պահանջում է փոխել: Ըստ այսմ մամակ ձևի կրկնակ մ-երից առաջինը կորցրել է իր ունգալին մասը և մնացել է միայն շրթնալին մասը: Այս դեպքում նա ավելի շուտ պիտի լինեք *բամակ, բայց այստեղ էլ գործել է վերջին խուլ կ բաղաձայնի ազդեցությունը և *բամակը դարձել է պամակ:

Տեսնում ենք, որ մի աննշան և անկանոն համարված ձև, ինչքան երկրորդական, բայց կանոնավոր ճանապարհներից է անցել, հասնելու համար մի ուրիշ նորազուն վիճակի:

14. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԱՌԵՐ

(Mots scientifiques)

Անկանոն բառերի երկրորդ շարքն են կազմում այն բառերը, որոնք օրենքի պահանջած ձայնափոխություններին չեն ենթարկվում. այս կարգին են պատկանում կրոնական, գիտական կամ ուսումնական բառերը, որոնք կարող ենք նաև փոխառություն համարել հին լեզվից. այսպես, օրինակ՝ պաաարագ, վարգապետ, քահանա և այլն բառերը, որոնք մեր կը ճյուղի բարբառներում միջին ա-ի կորուստով պիտի դառնային ըստ օրինի *պաարագ, վարգ-

պետ, քահանա և այլն, չեն կրած այս ձայնափոխությունը և մնում են այնպես: Պատճառը նրանց ուսումնական հանգամանքն է: Կան բառեր էլ, որոնք լեզվի սովորական կանոններից շեղվելով, տարբեր ձայնափոխության են ենթարկվում: Այսպես, Պոլսի բարբառում թեև բ, գ, դ, ձ, ջ մնում են անփոփոխ, բայց ուսումնական բառերի մեջ դառնում են փ, բ, ք, ց, չ. այսպես գիրք > քիրք, գիր > քիր, գրել > քրել, բարեկամ > փարեգամ, դպրոց > քրոց և այլն:

Մինչև անգամ զանազան բարբառներում կան բառեր, որոնք ձևով ունեն իմաստի զանազանություններ. մեկը՝ բնիկ ժողովրդական ձևը, երկրորդը՝ ուսումնական ձև. առաջինը համապատասխան ձայնական ընդհանուր օրենքների, մյուսը՝ անկանոն: Ահա այս կարգի բառերից երկուսը:

գաւազան > Ջելթուն գալագոն «վարդապետի գավազան» և գազվոն «ցուպ».

բագաւոր > Ջելթուն բոգալիւր, Ագուլիս բաբալոյ, Հաճին բագալոյ «արքա» և Ջելթուն բոքվիւյ, Ագուլիս բաճվիւր, Հաճին դագոյ «փեսա»:

15. ԸՆԳՎԱՅՆՈՒՄ

(Amplification)

Երբ բառը զանազան սղումներով և կրճատումներով այնքան է կարճանում, որ այլևս իր ինքնությունը կորցնում և աննշան մի տարր է դառնում, գուցե և ուրիշ համանուն բառերի կամ ձևերի հետ շփոթվում, լեզուն դիմում է այժմ էլ հակառակ միջոցի, այն է՝ երկարել բառը, ընդարձակել ձևով՝ այս ու այն մասնիկի կամ վերջավորության միջոցով: Այս երևույթը կոչվում է ընդլայնում:

Ընդլայնման երևույթներ կան հատկապես այն լեզուների մեջ, որոնք սովորություն ունեն շեշտից հետո գտնված վանկերը կրճատելու: Այսպես է հատկապես Ֆրանսիերենը:

Հայերենի մեջ ընդլայնման լավագույն օրինակ է բոկ—բոբիկ բառը: Սրա նախածին է հնդեվրոպական նախալեզվի bhosó, որ պիտի տար հայերեն բո. բայց այս բառը այնքան կարճ և անզոր է, որ հեշտությամբ կարող էր շփոթվել թեկուզ բո՞՞ ձայնարկության հետ: Ուստի անհրաժեշտ էր մի քիչ ոժ ու կյանք տալ նրան: Դրա համար ավելացրին կ մասնիկը, որ անշուշտ -իկ փաղաքշա-

կան մասնիկն է: Այսպիսով բառը դարձավ բոկ: Ժամանակ անց-
նելով այս ձևն էլ զգացվեց թուլլ և տկար, և նորից ավելանալով
նույն ինչ մասնիկը, որի առաջին հավելումը բոլորովին մոռաց-
ված և աննկատելի էր դարձած, դարձավ բոկիկ: Այս ձևն արգեն
գտնում ենք միջին հայերենում (Շնորհալի, Առակ, Վաստակք, 161,
Տաթևացի, Զմեբան ձԾ (Երիցս): Կամ բարդություն մեջ մտնելով
բոկոտն, բոկոլոք: Այս բոկիկ ձևն անցավ բարբառներին, որոնց
մեջ նոր ձևափոխություններ դարձավ մի կողմից բորիկ, բոպիկ,
մյուս կողմից բոպիկ և երրորդ կողմից՝ ոտաբոպիկ ձևի ազդե-
ցությունը Լարաբազի բարբառով աե՛պեզյ:

16. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍՏՈՒԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

(Etymologie populaire)

Կա մի տեսակ նմանություն, որ առաջանում է բառը գու-
գորդելով մի ուրիշ նմանաձայն բառի հետ և սխալմամբ կարծե-
լով, թե կազմված է նրանից, արվում է նրան այդ բառի ձևը:
Այս երևույթը կոչվում է paralogie, որ հունարեն παραλογια «սխալ,
սխալմունք» բառն է և նշանակում է «անլոգիկացարար կատար-
ված սխալ»։ Նույնը կոչվում է նաև étymologie populaire, որ է
ժողովրդական ստուգաբանություն. օրինակ՝

Գերմաներեն vorburg «արվարձան» (բուն «նախաքաղաք»)՝
փոխառությունը եղավ հին ֆրանսերեն fauxbourg «սխալ քաղաք»,
որ այժմ գրվում է faubourg:

Լատիներեն arcubalista «ուղեղ» դարձել է գերմաներեն Arm-
brust (իրը թե Arm «բազուկ» + Brust «կուրծք»):

Ֆրանսերեն café chantant «երգեցիկ սրճարան» փոխ առ-
նըվելով Բաթումի թուրքերենում և բառը սխալմամբ կապակ-
ցվելով շեյթան «սասանա» բառի հետ, դարձել է šeytan qahvesi:

Ֆրանսերեն califéte, califetret «նավը կարկատել» դարձել է
calfeutrer, կապելով feutre «թաղիք» բառին:

Գերմաներեն Trottoar «մալթ» դարձել է Trittoar, կապելով
Tritt «քալլ» բառին (Kogge, Der Notstand, 44):

Երբ հնգիկները տեղական լեզուներից վերցրին sakkara «շա-
քար» բառը, իսկույն սանսկրիտ çarkarā «խիճ, քարի կաղրտանք»
բառի նմանությունը ձևափոխեցին այսպես:

Ժողովրդական ստուգաբանության ենթարկվում են լեզվի մեջ
նորամուտ, անծանոթ, օտար, հազվագյուտ և լավ չհասկացված
բառեր, որոնք ժողովուրդը վերածում է ծանոթի, կապելով արդեն
լեզվի մեջ սովորական, ընտելացած մի ձևի, այն պայմանով, որ
երկու բառերի միջև ոչ միայն ձայնական, այլև իմաստի սրտ
նմանություն լինի. օրինակ՝ եթե ֆրանսերեն café chantant դար-
ձել է թուրքերեն շեյթան բանվեսի, այստեղ ոչ միայն chantant
և շելթան բառերի ձայնական նմանություն կա, այլև երգեցիկ սր-
ճարանը համարված է իբր վայր զեղխության և սատանայական
ապականության:

Հայերենի մեջ ժողովրդական ստուգաբանության օրինակներ
են՝

Սեն-ժիլ, կիրոպական անուն—կոմսն Զնջիլ (Վարդան պատ-
միչ, կզ):

Էֆիմերդե — եփրեմվերդի:

Վարկարեկել — վարբարեկել:

Ռաշվանդամ — Ռաշվանդամ:

очередь — պոչերևա

մայրապետ (անասունի) — մայրամպետ:

Հետաքրքրական է անցագիր բառը, որ կազմված է ֆրան-
սերեն passeport բառից թարգմանաբար «անցնել նավահանգստից»:
Այնուհետև անցագիրը ոչ միայն ճամբորդության համար, այլև
մի որևէ տեղ հաստատուն բնակելու հրամանագիր կամ արտոնա-
գիր դարձավ: Ըստ այսմ ժողովուրդը ձևափոխեց բառը և դարձ-
րեց անձնագիր (= անձն + գիր, ա հոդակապով), որ և այժմ ըն-
դունված է պաշտոնապես:

արդուկ «fer à repasser, թուրքերեն իւրիւ (ուրու) > սո-
սերեն утюг» բառը կազմված է արևմտահայերի մեջ՝ արդ «ձե»
բառից (ինչպես արդուզարդ և այլն): Մտնելով կովկաս, այս բա-
ռը դարձել է այժմ հարթուկ (հանելով հարթ բառից, իբր թե
հարթուկ): Ժողովրդական ստուգաբանությամբ արդ անսովոր բա-
ռը փոխանակված է հարթ շատ ավելի սովորական բառով, որ
իմաստով էլ շատ պատշաճ է: Սրանից էլ կազմվել է հարթուկել,
որ արևմտահայերի արդուկելն է:

Ժողովրդական ստուգաբանությունը երկու աղբյուր ունի. առա-
ջինը, ինչպես ասացինք, անծանոթը ծանոթի վերածելու սկզբունքն
է: Երկու տարիական մի երեխա կար, որ հազիվ խոսում էր, հան-
դիպեց մի փոքր շուն, որի անունն էր Ժուլիկ. երբ մենք շանը

կանչեցինք այս անունով, երեխան, որ չունի իր լեզվի մեջ այսպիսի բառ, խելուն կապակցեց իրեն վաղուց հայտնի և սովորական շունիկ բառի հետ և սկսեց կանչել «շունիկ, շունիկ, շունիկ»^{*}

Ժողովրդական ստուգարանություն մի ուրիշ ձևն է այն, երբ ժողովուրդը իր չիմացած մի բառով է փոխանակում: Օրինակ, Երևանի փողոցներով անցած առուն, որ մաքուր ջուր էր մատակարարում ժողովրդին, Երևանի բարբառով կոչվում էր արիհայր: Այս բառը պարսկերեն āb «ջուր» + արաբերեն hayyāt «կենդանություն» բառերից: Իսլամների մոտ āb-i-hayyāt նշանակում է 1. «կենաց ջուր», 2. «մաքուր և վճիռ խմելու ջուր»: Երևանի ժողովուրդը, չիմանալով արաբերեն hayyāt «կենդանություն» բառը և իմանալով hayāt «բակ» բառը, նույնը կոչում էր արիհայր, իբր թե աների բակից անցնող ջուր:

Ժողովրդական ստուգարանության օրինակներից մեկն է թուրքերեն rahat loqumə, որ դարձած է նաև ժողովրդական բարբառով հայերեն ռահաթ լոխումի: Այս բառը զուտ արաբերեն է և գրվում է rahat-ul-hulqūm, որ նշանակում է բուն «հանգիստ կուրդի»: Սակայն ժողովուրդը (նաև թուրք ժողովուրդը), չունենալով hulqum բառը, դարձել է loqūm «պատտ»: Այս դեռ դարձանալի չէ՝ նույնիսկ հայ ուսումնականները այս ժողովրդական ձևի համաձայն loqūm բառը թարգմանելով, կազմել են հանգստապատտա բառը:

Թրիլյուսի հայոց մեջ գործածական է «տաակն անխոթելի է» առածը: Այստեղ ունենք անխոթելի բառը, որ անշուշտ դարար անխոթելի «անարհամարհելի, անմերժելի» բառն է, կազմված խոտակ բառից: Բայց որովհետև խոտակ բառը գոյություն չունի բարբառներում, ուստի ժողովրդական ստուգարանությամբ, վերածելով իրենց ժանոթ խոթել ձևին, ստեղծել են անխոթելի անխոտտ բառը, ուր ա դարձել է ք, հակասակ ձայնարանական օրենքների:

Նույն առածը կա նաև թուրքերեն՝ Temsilde xata olmaz «Առածի մեջ հանցանք չի լինի»:

Այստեղ էլ կա xata (խաթա) բառը, բայց անշուշտ նրա վրա լից չէ, որ կազմվել է անխոթելի բառը:

Հայերեն Ովա (Օվա) գեղանունը (որից Օվախեցի), ժողովրդական ստուգարանությամբ դարձել է ալօվ Եուվա (Յուվա), որ Թուրքերեն yuva «բուլն» բառն է:

* Հագորդեց Անահիտ Խաչատրյանը:

Ժողովրդական ստուգարանության մի այլ ձև են ծագրով կամ կատակով կազմված բառերը. նույնիսկ շատ անգամ կարելի է չի լինում զանազանել այդ երկուսը և հայանի չի լինում որոշել, թե ժողովրդական ստուգարանությունը պատահական սխալի արդյունք է, թե՞ զիտմամբ արած այլարանություն՝ ծագրի կամ կատակի համար: Օրինակ, երբ Ֆրանսիայում առաջին անգամ նորաձևությունը դարձավ կանանց ձեռքի ցանցակերպ պալուսակը, ըստ կազմության կոչվեց réticule, որ է «ցանցիկ»: Ժողովուրդը ծագրի ենթաթարկելով ձեռքից կախ գցած այդ պալուսակը, կոչեց հեղնաբար ridicule «ծիծաղելի», և այս բառը մնաց իբր նույն պալուսակի անունը: Այս ձևի տակ փոխ անվեց սուսեխենում ридикуоль, որից անցել է Կովկասի հայերին:

Կատակով կազմված ստուգարանություններ են՝

աղջիկ — կախ չիք.

քամակ «մեջք», որ Ղարաբաղում նշանակում է «հետույք» և ըստ այսմ ստուգարանում են «քամու ակ»:

Հայերենի մեջ ուրիշ օրինակներ են՝

համաաարած — համը տարած.

ոսկի «արոր», որ վեցիլի «վեց եզ լծած արոր» բառից է առջացած, նախ գառնում է ըստ օրինի վեսկի (ինչ որ գործածական էլ է), հետո՝ արորը իբրև մարդկային հարստության սղրչար «սուկի»:

Ժողովրդական ստուգարանությունը երբեմն էլ կատարվում է դիմամբ՝ իբր կատակ, և այն ժամանակ վերածվում է զվարճաբանության. օրինակ՝ Պոլսի հայոց բարբառով փոխանակ ասելու՝

«Արևուզ մեռնիմ, թէ Կատրոյէ՞ն կու գաս կոր, լավանտա քսվեր ես», ասում են կատակով՝

«Աննալուա մեռնիմ, թէ Կաթուռէ՞ն կուքաս կոր, լօքանթա քսվեր ես» (ուր առնվալուա «այրանացի», բեռաբուռ «մի տեսակ ուտելիքին», լօքանրա «ճաշարան» միայն ձայնով են նման, իմաստով բոլորովին տարբեր):

ցերեկ > Պոլիս ցօրեկ, ազգվելով օր բառից.

շղազիր (դրի տեսակ է), այն է շուրղով կամ բարակ ծայրով գրված գիր. հետո դարձել են շեղազիր, իբր թե շեղ գիրքով գրված գիր (տես իմ Հայոց գրերը, էջ 378 ծանոթ.):

Duchesse մի տեսակ ֆրանսիական ընտիր տանձի անուն է. բուն նշանակում է «դքսուհի», իբրև թե «տանձերի դքսուհի»: Այս բառը փոխ անվելով Կովկասում, դարձել է դիւշեշ (դյուշեշ) —

նարդու խաղի մեջ գործ անված բառը, որ է պարսկերեն *du šeš* «2 վեց»: Այստեղ ոչ մի կասկ չկա իմաստի մեջ, այլ պարզապես անծանոթ ֆրանսերեն բառը վերածված է ծանոթ պարսկերեն նմանաձայն ձևին:

Երբ *W.* Արեղյանը հնարեց գործուղել բառը (որեւէ գործի համար մեկին մի ուրիշ քաղաք կամ գյուղ ուղարկել), ժողովուրդը այն պարձրեց իսկույն գործուղել, որ և այժմ շատեր գրում են: Բայց հեղինակը հորինել էր այդ բառը ոչ թե ուղղել բալից, այլ ուղի գոյականից: Որովհետև ուղի բառից ուղել բայ չգիտի հայերենը (կա միայն յղել = հղել), ուստի ախանջները իրավամբ բողոքեցին այդ անսովոր ձևի դեմ և ստեղծեցին գործուղել:

Կովկասում շատերը գրում էին խօսաանալ, իբր թե խօսք բառից կազմված, «խօսք տալ» նշանակությամբ: Մոտ արմատը անծանոթ էր: Նոր ուղղագրությունը բառամեջի օ գրչաթվունը վերացնելով, այս սխալ ձևն էլ վերացավ:

Ժողովրդական ստուգաբանությունների մեջ լայն տեղ են գրավում տեղանունները: Տաճիկները, գրավելով Հայաստանը և հայերեն տեղանունները հարմարեցնելով իրենց լեզվի բասերին, կազմել են՝

Յանու = Ռեզուցյար «երկարներ».

Ճորոխ = Չիւրիւք սու «փոսած ջուր».

Արագած = Ալագեօզ «խաժ աչքերով».

Բազմաշեն (Մարբերդի գյուղերից) = Բօզմա-շեն «ավերած-շէն».

Նորասուրբ, հայցական՝ — սուս = նորագույն «հարթ».

Սուրմալու. հին անունն է Սուրբ Մարի, կրճատված Սուրմարի, տարանմանությամբ (երկու ր-երից մին դարձնելով լ) Սուրմալի, որից իսկույն պատրաստ էր տաճիկերեն Սուրմալի կամ Սուրմալու «աչքին ծարիր քսած».

Տաւուշ = Թօվուս «սիրամարդ».

Ռմբասար = Ռեռում բասար «հունը կոխում է».

Նույն ձևով նաև՝

Սուղաղ = թուրքերեն *su dağ* «ջուր սար».

Սուխում = թուրքերեն *su qum* «ջուր, ավազ».

Անապու «մալր լիքք».

Կապան > Կափան «կշեռք».

Նույնիսկ Կոզմանդնուպուլիս (մալրաքաղաքի) անունը թուրքերը հունարեն իս տին պոլին «ի քաղաքն (Պոլիս)» ձևից հանելով շինել են Սթանպուլ:

Ենթադրում եմ, որ հայերն էլ այսպիսի վերաբերմունք կարող էին ունեցած լինել խալդիներից ժառանգած իրենց տեղանունների վերաբերմամբ: Այնպես որ, կթե Վան, Մասիս, Արարատ, Երասխ և այլն ստանց մեծ ձեռքաբռնության հասել են մեզ, կարելի չէ նույնը ասել նաև մյուս բոլոր տեղանունների համար: Օրինակ, Աշաարակ գյուղի անունը, որ ուղղակի հայերեն աշաարակ բառն է ներկայացնում, կարող էր լինել խալդիների ժամանակ մի այնպիսի նմանահնչյուն բառ, որ խալդերենում բուրբորովին այլ բան նշանակիր, իսկ հայոց մեջ ժողովրդական ստուգաբանությունը ստացավ այս «գուտ հայերեն» ձևը:

Բայց ամեն մի օտար բառ, որ փոխ է ասնվում մի ուրիշ լեզվի մեջ, անհրաժեշտ կերպով չի ենթարկվում ժողովրդական ստուգաբանության: Օրինակ, հայերեն բաբեկեղան բառը փոխ անվելով պարսկերենի մեջ, եղել է *bargandān*, որ գրեթե անփոփոխ ներկայացնում է հայերեն ձևը: Բայց նա կարող էր շատ պատշաճ կերպով դառնալ *bar-xandān*, որ բառացի պիտի նշանակեր «խնդալու, սրախություն վրա»:

Նմանապես տեղանունները միշտ և անպատճառ չեն ենթարկվում ժողովրդական ստուգաբանության: Սարրղամիշ քաղաքի անունը թուրքերեն նշանակում է սարը «գեղին» + դամիշ «եղեգ»: Կարելի է մտածել, թե այս բառը հայերեն Սարազումեշ (ենթադրյալ) ձևից ձևափոխված լինի: Բայց այս ենթադրությունը պարտադիր չէ, ինչպես որ ուսուներն էլ գրավելով այդ քաղաքը տաճիկների ձևաքից, կոչել են *Сара...*, մինչդեռ կարող էին ժողովրդական ստուգաբանությամբ դարձնել *Сорокомышь* «քառասուն մուկ»:

Իրարարի մնացորդներից է «մեծաւ ուրախութեամբ» դարձվածը, որ հաճախ գործ ենք անում, փոխանակ ասելու «մեծ ուրախությամբ»: Այս վերջինը իբր թե սովորական տկար արտահայտություն է, մինչդեռ մեծաւ գրաբար ավելի երկար ձև իմաստին ավելի ուժգնություն է տալիս: Արդի սերունդի մարդիկ, որ գրաբար չգիտեն, չիմանալով մեծաւ գործիականի իմաստն ու արժեքը, ասում են «մեծաւուրախութեամբ»!

Երևանի բարբառում ասվում է լոկ ջուր, այսինքն «միայն ջուր», սրակելու համար անժուր մի բան: Կրկնությունը ասվում է նույն բարբառով լոկ լոկ ջուր: Ախտալում, անշուշտ լոկ անհայտացած բառը կապելով լողալ բառի հետ, նույն իմաստի համար ասում են լող լող ջուր: Լսել եմ նաև մի ուրիշ բարբառում լըղ լըղ ջուր:

17. ԳԻՏԱԿԱՆ ԱՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

(Etymologie scientifique)

Այս երևույթը հատուկ է ավելի եվրոպական լեզուներին և հատկապես նրանց, որոնց ուղղագրությունը ոչ թե հնչական, այլ ստուգաբանական է: Գիտնականները, ստուգաբանելով ժողովրդական բառը և կցելով այն որևէ հին ձևի, ավելացնում են գրություն մեջ մի տառ, որ գտնում են նախածնի մեջ: Այնուհետև այս ձայնը գրությունից անցնում է լեզվին: Այսպես ֆրանսերեն միջին դարում հնչում և գրում էին *oscur, aversaire*. XVI դարում գիտնականները ստուգաբանական պատճառներով ավելացրին *b, d* բաղաձայնները և գրեցին *obscur, adversaire* «մթին, հակառակորդ». սակայն այս նորամուտ տառերը անձայն էին և այդ բառերը հնչվում էին ըստ հնի: Ավելի հետո գրության ազդեցությունը *b, d* հնչյունները մտան լեզվի մեջ:

Թուրքերեն *Istambul* «Կոստանդնուպոլիս» քաղաքի անունը ուսումնականները կեղծ գիտական ստուգաբանություններով *islam* «մահմեդական» և *bol* «առատ» բառերից, վերածեցին *Islambol* «մահմեդականը շատ» ձևին:

Հայերեն այս կարգի բառերից է մահմեդի, որ արաբերեն *muqdisi* ձևից է փոխ առնված (արաբերեն բառն էլ ծագում է *Quds* «Երուսաղեմ» բառից). ժողովրդական ձևն է մուղզի. գիտնականները սխալմամբ կարծելով, թե մահ և տեսի բառերից է, դարձրել են մահմեդի, որ հետո անցել է լեզվին ու ժողովրդին:

Գիտական ստուգաբանության և ժողովրդական ստուգաբանության միջին տեղն են բանում այն բառերը, որոնք իբր ստուգաբանված և սխալ ձև են ստացած տգետ ուսումնականների ձեռքով: Այսպես են, օրինակ, բացօթեայ, որ օթ, օթել բալին անծանոթ «ուսումնականները» կարծելով, թե համահնչյուն օդ բառից է, գրում են բացօթեայ: Այս բառը եթե ժողովրդական լիներ, ինարկե պիտի գնեինք ժողովրդական ստուգաբանությունների շարքը: Բայց ժողովուրդը չգիտի այսպիսի բառ և ուսումնականների մեջ էլ միայն թերուհներն են, որ գրում են բացօթեայ, ուստի գրինք երկուսի միջին տեղը:

Կրամարաիկոս ծագում է հունարեն *κρῆματικός* բառից. կապելով առաջին մասը մեր գիր բառի հետ, հին մասնագրության մեջ դարձրել են գրամարաիկոս, գրամարաիկ, իբրև թե «գրքերի հետ մարանչող»: Այսպես և՛ երգեհոն ծագում է հունարեն *ὄργανον*

«նվագարան» բառից, որ բուն նշանակում է գործիք: Նույն բառի հարազատ սառապարձությունն էր որգանոն (հմմտ. որկանոն ձևը), որ հետո երգ բառից կարծվելով՝ դարձել է երգեհոն, երգիոն:

18. ՉԱՅՆԱՓՈՆՈՒԹՅԱՆ ԱՆՈՐՈՇՈՒԹՅՈՒՆ

ԿԱՄ ՇՓՈՒԹ ՎԻՃԱԿ

Թեև մենք մի քանի օրենքներ այսպես շարեցինք իրար հետևից, սակայն կան այնպիսի բառեր, որոնք կարող են բացատրվել մերթ այս և մերթ այն ձևով: Օրինակ, Պոլսի բարբառով ցօրեգ բառը կարելի էր բացատրել օր բառից, իբրև արգլանք ժողովրդական ստուգաբանության, բայց կարելի է նաև բացատրել նմանաբանությունամբ (անայտգիայով): Սովորական բացատրություն է ասել «օրը ցերեկին կամ օրը ցերեկով», այստեղ օր բառը զուգընթաց է գնում ցերեկ բառի հետ և հետևաբար ձայնավորների նմանությունամբ կարող էր դառնալ մեքենաբար ցօրեկ:

Որովհետև ձայնական օրենքները վերջնական չեն և կարող են իրար հանդիպել, ուստի ուսումնասիրողը մնում է երբեմն անորոշության մեջ և տատանվում է զանազան օրենքների միջև: Այսպես, գրաբար արմուկն բառը զավառական բարբառներում տեղտեղ դարձել է արմուկի: Այս ձայնափոխությունը կարելի է բացատրել 3 ձևով.

1. Նմանողությունամբ ծուկի, քիկի տալ և եղուկ բառերի, որոնց նախավերջին ձայնը անցել է արմուկն բառին.
2. Բառավերջի և վերջավորության տեղափոխությունամբ զեպի ներս:
3. Վերջածայն և-ի անկումով և մ-ից հետո և-ի հավելմամբ: և-ի տեղափոխության օրինակ է ալանջ > ալկաջ, իսկ և-ի հավելման օրինակներ մեք > մեկք, մաչ > մանչ, կանաչ > կանանչ կամ աչ > կամանչ, կամուք > կարմուք, ևիգ > լիկ և այլն:

Ահա թե ինչ է ձայնական փոփոխության անորոշությունը կամ շփոթ վիճակը:
Ըստ իս, սակայն, պետք է բացատրել սովորական կարգով. նախ վերջածայն և ընկել է, ինչպես ամեն տեղ և ստացվել է արմուկ, ինչպես որ այլուր գոյություն ունի. ապա երկրորդ անգամ մ-ից հետո ձևացել է և, որով բառը դարձել է արմուկի: Նկատելի է, որ և-ի այսպիսի հավելումը պատահում է սնդականից հետո, ինչպես մեք, կարմուք և այլն:

Մոագաւորի բառը Պոլսի և Հունգարիայի (Սուչաւայի) բարբառներում գոագաւորի է դարձել, որից հետեւում է, որ նախածայն ծ > զ, որովհետեւ այսպիսի ձայնափոխութիւն չկա ուրիշ բառերում, ուստի ծ-ի այս փոփոխութիւնը այս բառի մեջ արդիւնք է կամ նմանողութիւն (գաւորի բառի նախածայնի նմանութիւնը) և կամ ծաղրական մաքրով: Այսպիսով, արեմն, անորոշ գրութիւն մեջ ենք որոշելու համար, թե ձայնափոխութիւնը ինչ պատճառով է:

ԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գիտենք, որ առհասարակ փոքրիկները, երբ լեզու են կէնում, որոշ ձայններ վատ են արտասանում. ժողովրդական բացատրութեամբ այդ վիճակը կոչում ենք թերխաշ խոսել: Բայց շատ անգամ պատահում են մեծեր, որ նույնպիսի թերութիւններ են ցույց տալիս արտասանութիւն մեջ: Ահա՛ այդ թերութիւններից գլխավորները.

1. Կակազում (bégaiement).—Սա մի նոր հիվանդութիւն չէ, այլ մարդկութիւն հնագույն ժամանակներից երևացել է. օրինակ, Մովսէս մարգարեն կակազ էր և երբ ոգում էր խոսել ժողովրդին, իր եղբոր՝ Ահարոնի միջոցով էր խոսում: Լեզվական թերութիւններ ուներ նաև հույն մեծ ճարտասան Գեմոսթենեսը (384—322 մ. թ. ա.), որ համառ ճիգերով ուղղեց դրանք և դարձավ մեծ հռետոր: Կակազը սովորաբար խոսքի սկիզբն է կակազ, բայց հենց որ սկսեց բառն արտասանել, այնուհետև ազատ շարունակում է, մինչև նոր դադար: Կակազումը համարվում է ձայնական գործարանների ջղալին հիվանդութիւն, որ սկսում է մանկութիւն ժամանակ և որին ընկերանում է շնչառական գործարանների և երբեմն էլ հոգեկան ուրիշ խանգարում: Կակազումը հարատև չէ, այլ ընդհատ և նկատելի է, որ երգեցողութիւն ժամանակ բոլորովին ջնջվում է: Շատ անգամ փորձել են կակազումը բժշկել բժշկական և վիրաբուժական միջոցներով, բայց այդ միջոցների մեջ չհաջողելով, կարծել են, թե դա մի անբուժելի հիվանդութիւն է: Սակայն այդպես չէ: Քերվինը բուժում է այդ հիվանդութիւնը առանց որևէ դեղի, միմիայն արտասանական փորձերով ու վարժութիւն-

ներով, որոնց տեղությունը երեք շաբաթ է (Larousse médical, Paris, p. 139):

2. Rhotacisme կամ grasseyement.—Կայանում է r ձայնը դ-ի նման մի հնչյունի վերածելու մեջ. շատ սովորական է Փարիզում և շատ տեղ հրեաների մեջ: Մեր մեջ նորուսները կարծում են. որ դա հնչական մի գեղեցկություն է, բայց նույնիսկ Փարիզում դա համարվում է տղեղ թերություն և գերասաններն ու հետոսները առանձին դասեր են վերցնում այդ թերությունից ազատվելու համար:

3. Lambdacisme, որ է վատ արտասանություն | ձայնի և կամ նրա փոխանակությունը մի ուրիշով:

4. Zézajement, որ հատուկ է մանուկներին. դա կայանում է j, g հնչյունները իբր z և ch-ը իբր s արտասանելու մեջ:

5. Gaumacisme, որ շատ սովորական է մանուկների մեջ. q, k, p ձայնները հնչվում են դ, ա, ք, ուղղելու համար բավական է դնել լեզվի վրա մի ցպիկ և թույլ չտալ, որ լեզվի ծայրը գիպչի ատամներին. արտասանությունն իսկույն ուղղվում է:

6. Ռեգալտուսբյուն (լըմլըմ).—Առաջ է գալիս քիմքի վարագույրի անդամալուծ լինելուց կամ քիմքի կարճությունից, որ պետք եղած ձևով չի փակում քթի անցքը. բոլոր ձայնավորները դառնում են անգալին:

7. Sigmatisme.—դ ձայնը արտասանում են իբր ա. այսպես նաև չ, ֆ, ջ դառնում են ց, ծ, ձ:

8. Iotacisme.—j, g ձայնը հնչում են y. ինչպես geler > ieler, Jeanne > îâne.—p դարձնում է ր:

9. Chuintement = ճչաձայնություն.— Նախորդի հակառակ երևույթն է. ա, գ ձայնը հնչում է իբր շ, ծ:

10. Bredouillement = խառնախոսություն.— Պոսում են սովորական տեմպից ավելի արագ և այդ պատճառով վանկերի ու ձայնների մի մասը չեն արտասանում կամ հապճեպ են արտասանում, սրանով խոսքը դառնում է շփոթ ու անորոշ:

11. Blésité.—Արտասանում են ա, գ, շ ձայնները լեզուն ավելի երկարելով ատամների միջև. ստացվում է սուր, ավելի ուժեղ և սուլող ձայն:

Այս թերություններից մի քանիսը որոշ լեզուների առանձնահատկությունն է. այսպես zézajement-ը հատուկ է հույներին. նույն ժողովրդի մեջ գտնում ենք նաև sigmatisme-ը, որ հատուկ է մեր մեջ Դերսիմի բարբառին. ճչաձայնությունը հատուկ է Ֆրան-

սիայում օվերնյացիներին և այլն: Երբ որևէ թերություն հատուկ է մի ամբողջ ժողովրդի, նա այլևս թերություն չէ, այլ լեզվական առանձնահատկություն: Այսպես, երբ թուրքը հնչում է ա փոխանակ ց, և գ փոխանակ ձ: Թերություն կոչվում է այդպիսի մի արտասանություն միայն այն դեպքում, երբ ժողովրդի ընդհանրություն մեջ հատուկ է մի կամ մի քանի անհատներին: Այսպիսիները ենթարկվում են մյուսների ծաղրին, որով իրենք էլ գիտակցելով իրենց դրությունը, աշխատում են վաղ թե ուշ ուղղվել: Արտասանական անհատական թերությունները լեզվի ընդհանուր կազմի համար արժեք չունեն:

Սակայն առանձին ուշադրության արժանի է, երբ մի որևէ նորելուկ ձայնական երևույթ սկսում է երևալ միաժամանակ մի խումբ անհատների մոտ: Սրա համար ունենք մի լավ օրինակ Մարաղայի հալոց բարբառի մեջ:

Մարաղայի բարբառում գլ, կլ, քլ ձայներն արդեն սկսել են դառնալ ջ, ֆ, չ: Թեև ընդհանրապես նրանք ունեն գլ, կլ, քլ հնչում, բայց միջին և նոր սերունդի մեջ կան շատերը, որոնք արդեն հնչում են ջ, ֆ, չ: Միևնույն ընտանիքում երկու հնչումն էլ կա: Շատ հետաքրքրական է գիտել նոր սկսվող ձայնաբանական երևույթի ընթացքը: Տեղացիք ձայնափոխությունը նկատում են և այդպես հնչողներին պակասավոր կամ լեզուն քաղցր են համարում: Բայց նրանք ուրիշ ոչ մի կետում պակասավոր հնչում չունեն: Պոսողներն էլ իրենց կարգին երեկ գիտեն իրենց լեզվական դրությունը, որովհետև թեև սովորական խոսակցության ժամանակ ազատ գործ են ածում քմական հնչումը, բայց հենց որ նկատողություն է լինում մյուսների կողմից, աշխատում են փոխել և նմանեցնել սովորական հնչման (տե՛ս «իմ Գնություն Մարաղայի բարբառի», 22): Այս երևույթը այժմ նկատվում է նաև Աշտարակում:

Արտասանական թերություններից մի քանիսը միայն արագաբանության արդյունք են. բայց այդ արագաբանությունները գործադրող անձերը ընդհանրապես արագախոս չեն և միայն այդ մի քանի բառերի մեջ են արագախոս: Այսպես, Երևանում նկատելի մի քանի անձանց մոտ՝ որպիսի փոխանակ որպեսզի, աշտեք փոխանակ աշխատանք, որակ, փոխանակ որովհետև: Վերջինը ամենից ավելի տարածված է. 5 տարեկան մի աղջնակ շարունակ ասում էր որակ, և երբ ես հետազոտեցի նրա լեզուն, տեսա, որ նույնիսկ չգիտի որովհետև ձևը:

Կան որիշ կարգի արտասանական թերութիւնն զեպքեր էլ, որոնք վերաբերում են նույնպէս մի քանի բառերի միայն և նույնիսկ շատ տարածված են, բայց դրանք էլ հնչական դրութիւնն հետ կապված չեն, այլ ուղղակի սխալ են. այսպէս՝

սոււնչ	փոխանակ	շոււնչ
ախշատիլ	»	աշխատել
ոխչար	»	ոչխար
պահման	»	պայման
սայման	»	սանման
ուրեմս	»	ուրեմն
առվողջ	»	առողջ

Պոլսի հայոց նույնիսկ դրական արտասանութիւնն մեզ բառակցրում գտնված երկր- կորցնելով իր առաջին ք ձայնը, գտնում է երկ- ինչպէս՝

եկրորդ	փոխանակ	երկրորդ
եկրագործ	»	երկրագործ

Ղարարաղցիներն մեջ սովորութիւն է երկու ք-ի փոխարենն զնել երկու ա. ինչպէս՝

տառաական	փոխանակ	տարրական
եռորդ	»	երրորդ

Այսպէս է նաև արդի պարսկերեն արտասանութիւնն մեջ, ինչպէս՝ *durrīdan* > *durrīdan*.

Հարց է, թե թերի արտասանութիւնն ունեցող անձը գիտակցում է իր սխալը:

Այստեղ հարցը երկու կողմի է բաժանվում. այն թերութիւնները, որոնք պատկանում են նույն լեզուն խոսող ամբողջ ժողովրդին, այսինքն այդ լեզվի թերութիւններն են, լինում են անգիտակից և մնում անփոփոխ. այսպէս, հույները չունեն շ ձայնը և ամեն օտար լեզվի բռն, որ շ ունի, վերածում են ա-ի. ինչպէս՝ շաքար = *σακχαρο*. նմանապէս ժ գոյութիւնն չունի հունարենի մեջ և նրա փոխարենն հնչվում է գ:

Անգլիացիք չունեն *ö* և *ü* ձայնավորները, ուստի օտարներից փոխ առած բառերի մեջ մեծ դժվարութիւն են հանդիպում:

Այս կարգի դժվարութիւններ սովորական են այն բոլորի համար, որոնք մի օտար լեզու են խոսում և հաճախ ենթակա են արտասանական թերութիւնների: Այսպէս, մի հույն Քրանսերեն խոսելիս, փոխանակ ասելու *je mange «տառում եմ»*, պիտի ասի *ze manze* և այդ սխալը պիտի տևի բավական երկար ժամանակ,

մինչև որ ընտելանա ճիշտ հնչումին: Մենք էլ, երբ սովորում ենք անգլերեն, սխալ ենք արտասանում *ð*(the), *ð*(the) և *w* հնչյունները:

Այս կարգի թերութիւնները, որոնք պատահում են օտար լեզու սովորող անհասանելի արտասանութիւնն մեջ, ոչ երկար ժամանակի մեջ հաղթահարելի են:

Այժմ անցնենք երկրորդ կողմի թերութիւններին, որոնք հատուկ են նույն լեզուն խոսող անձերի: Սրանք իսկական թերութիւններ են:

Կակազը և թոթովը գիտակից են իրենց թերութիւնն, նույնպէս և անգախոսը և որիշ նման թերախոս անձինք: Բայց դրանց թերութիւնը միշտ էլ ծաղրի է ենթարկվում հասարակութիւնն մլուս անդամների մեջ, որով և շարունակ աշխատում են ուղղվել. եթե թերութիւնը բնական պակասութիւնն հետևանք է, դժվար է ուղղել, իսկ եթե անհատական անուշադրութիւնն արդյունք է, կարճ կամ երկար ժամանակի մեջ ուղղելի է:

Պոլսում թուրք լրագրավաճառը կանչում է «Չաղիկ մանդան», փոխանակ ասելու «Ծաղիկ մանկանց», ինչպէս լսում է իր հալ ընկերներից: Գարեր ամբողջ Հայաստանում թուրքերը լսել են Արագած, Օձուն, Չագաձոր, Եղեգլայց ձոր, բայց հնչել են Արագլայ, Ուզունլար, Չանդեղոր, Գարարագլայ > Գարալագլայ փոխանակ ուղիղը սովորելու հայերից, հայերն ստիպվել են այս սխալ ձևերը գործածել:

Մեզ համար այս կարգի թերութիւններից հետաքրքրական է հիշել թուրքախոս հայերի *ä*, *ö*, *ü*, երբեմն էլ *ju* հնչումը: Գիտենք, որ թուրքերը չունեն այս հնչումները, որոնց փոխարենն զնամ են *s*, *z*, *h*:

Թուրքախոս հայերն էլ վարժվելով թուրքական արտասանութիւնն և բնապ առիթ չունենալով հնչելու նույն ձայները, չեն էլ սովորում. ուստի ասում են սրբն սանեսի (*ցորեն ցանեցի*) և այլն: Այսպէս էլ պիտի մնալին և մնում են, եթե հայախոս շրջանի մեջ չեն գտնվում, իսկ երբ անցնում են հայախոս շրջանի մեջ, թեև դժվարութիւններ, բայց վերջ ի վերջն հմտանում են նույն ձայներին: Այսպէս է այժմ Երևանում. այն աղբբեջանցիները, որ հայերեն գիտեն խոսել, այդ ձայները ճիշտ են հնչում:

ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ETYMOLOGIE

Ստուգարանությունը լեզվաբանության այն մասն է, որ քննում է երևան է հանում բառերի ծագումը, այն է անցյալը, ներանց կազմության եղանակը, կրած հաջորդական փոփոխությունները, աշխատելով հասնել մինչև նրանց սկզբնական վիճակը, որ է երևան հանել նրանց արմատը և ածանցիչ մասերը:

Ամեն ժամանակ էլ մարդկային միտքը, որ սիրում է ճանաչել իր շրջապատը և քննել ամեն բանի ծագումը, հետաքրքրվել է բառերի ստուգարանությամբ: Այսպիսով, լեզվաբանության առաջին ձևը եղել է ստուգարանությունը: Այդ փորձերը մեծագույն մասամբ դատարի են եղել, որովհետև չէին հիմնված այն հաստատուն ու ճիշտ սկզբունքների վրա, որ պիտի գնեք գիտական լեզվաբանությունը: Բայց այնուամենայնիվ ստուգարանությունն է, որ եղել է և այսօր էլ է լեզվաբանական օրենքների հիմքը:

Ստուգարանության մեջ առաջին և հիմնական կետը բառերի նմանությունն է: Բառն ունի երկու կողմ. առաջինը՝ ձայն կամ հընչյուն, որ բառի արտաքին կողմն է և երկրորդ՝ իմաստ կամ նշանակություն, որ բառի ներքին կողմն է: Որպեսզի ստուգարանությունը լինի ուղիղ, առաջին և հիմնական պայմանն այն է, որ համեմատելի բառերը այս երկու կողմերով էլ նման լինեն. մեկը առանց մյուսի չի կարող ընդունելի լինել: Այսպես, պարսկերեն ۳۳۰ ۳۳۰ šād šud բոլորովին նույն է հայերեն շատ շուտ ձեռն. բայց դա ոչ մի արժեք չունի, որովհետև իմաստով նույնը չէ: Հայերեն

պատ «որմ» և ֆրանսերեն pâte «խմոր» կամ հայերեն պորտ և ֆրանսերեն porte «դուռ», bord «եզր, ափ» ձևով կատարելապես նույն են, բայց որովհետև նշանակությամբ տարբեր են, ուստի նրանց նմանությունը արժեք չունի, ճիշտ ինչպես որ հայերեն հայր և թուրքերեն ata «հայր» թեև նշանակությամբ նույն, բայց ձևով տարբեր լինելով, համեմատության համար ամենևին արժեք չունեն: Ուրիշ խոսքով՝ բառերի ներքին և արտաքին կողմերը միմյանց համար փոխադարձ ստուգման դեր են կատարում:

Ստուգարանությունը կարելի է կատարել 4 ձևով:

1. Մի լեզվի մի բառը համեմատելով և կապելով միևնույն լեզվի մի ուրիշ բառի հետ. օրինակ՝ բող և բոլլ, նշող և նշոլլ, ծիլ և ընծիլ, մանչ և մոնք և այլն: Կամ մի լեզվի մի բառը մեկնելով իբրև բարդություն կամ ածանց, ինչպես՝ խեչափառ < խեչ «կողքը» + փառ «թև» բառերից. մթաք «աչքի ճիւղ», կազմելված մութ բառից, -ար մասնիկով:

2. Մի լեզվի մի բարբառի բառը համեմատելով նույն լեզվի ուրիշ բարբառների համապատասխան բառերի հետ. օրինակ՝ Վան խրիւք, Զուգա խարուքս, Սեբաստիա հրուք, Երևան հրուցք Պոլիս հուրուկ Եօճառի մաշված կտոր»:

3. Մի լեզվի այնինչ շրջանի բառը համեմատելով նույն լեզվի մի ուրիշ շրջանի համապատասխան բառի հետ. օրինակ՝ գրաբար պատասխան բառը միջին հայերենի պացխուն բառի հետ իբր համանիշ, կամ արցունք = արասուք:

4. Մի լեզվի բառը համեմատելով ուրիշ լեզուների համապատասխան բառերի հետ. ինչպես՝ հայերեն հայր, լատիներեն pater և այլն:

Հայերեն քսան «20» և ֆրանսերեն vq (գրվում է vingt) ոչ մի նմանություն չունեն այսօր, բայց բացարձակապես նույն են գիտական ճշտությամբ: Եվ կհամոզվենք նրանում, եթե քննենք այդ երկու բառերի հին ձևը: Բոլորի աղբյուրն է հնդեվրոպական նախալեզվի wi-k'mti ձևը, որ իր հերթին ծագում է dwoi «երկու» + dék'mti «տասնյակ» բառերից:

Հայերենում բառակզրի w դառնում է q, k տալիս է u, -mti վերջավորությունը դառնում է -ան (այս բոլորը բազմաթիվ օրինակներով հաստատված են): Ըստ այսմ՝ wi-k'mti > *qխան, որից անշեշտ ի կորչելով մնում է *qսան, և q ու u բաղաձայնների համանմանությամբ՝ q դառնալով p՝ վերջապես քսան:

Իսկ ֆրանսերենն *ve* ծագում է լատիներեն *viginti* ձևից, որի հիշատակը պահում է զեռ *ve* հնչման գրչությունը՝ *vingt*: Կարիք չկա ապացուցանելու *viginti*=*wikmti* ձևերի նույնությունը:

Որչափ էլ փոփոխված լինի բառը, լեզվաբանը վերջ ի վերջո ճանաչում է այն, շնորհիվ դանազան հետքերի, բայց մանավանդ լեզվից լեզու համեմատությամբ. օրինակ նոր հնդկական սինդհի լեզվում հայրը կոչվում է *piu*, մայրը՝ *māu*, որոնք շատ քիչ բան են պահած *pāter* և *māter* նախածեղից. բայց հենց որ նկատի առնենք սրանց կոչականը (*piuro*, *māiru*), արդեն բավական կոտենանք նախածեղին (*Trumpp*, 131, 133):

Հայերեն խոսիկ առլ «գուրս վոնդել, հալածել» ոչ մի նմանություն հետք չունի սուսերեն *улица* «փողոց» բառի հետ, բացի իմաստի գույզն նմանությունից: Բայց այդ երկուսը բացարձակապես նույն են:—խոսիկ առլ նոր ձևացած ոճ է խոսիկ բայից. սա էլ ծագում է խրկել < ղրկել ձևից, որ ղարկել ձևի միջոցով ծագում է ուղարկել բառից: Հիշյալ բոլոր միջին ձևերը կենդանի են զեռ բարբառներում: Իսկ ուղարկել կազմված է (յ)ուղի արկանել ոճից. ուղի հնչված ուլի՝ ճշտիվ նույն է սուսերեն *улица* բառի հետ, որի վերջին վանկը՝ *-ца* մասնիկ է:

Այս բոլոր համեմատությունները, եթե կատարված են խրդճճերորեն, կտան մեզ ոչ միայն բառերի ծագումը (այն է ստուգաբանությունը), այլև այդ ստուգաբանություններից կբխեն ձայնաբանական զանազան օրենքներ. օրինակ, թե հին հայերեն *ղ* և *յ* փոխանակում են իրար՝ ո ձայնավորից հետո, բարբառների մեջ *ն* գառնում է *խ*, միջին հայերենի մեջ միջին վանկի անշեշտ ա ձայնը հապավվում է և առ խումբը դառնում է *ց*, հնդեվրոպական նախալեզվի նախածայն *p* դառնում է *ն* և այլն: Այս օրենքները կարող ենք քննել հարյուրավոր բառերի և նույնիսկ տարբեր լեզուների մեջ և եթե նրանց մեջ էլ գտնենք նույն երևույթները, բնականաբար ամենայն ապահովությամբ կարող ենք օրենքը հաստատել և ընդհանրացնել: Շատ կան մարդիկ, որոնք ծագում են լեզվաբաններին ասելով, թե ամեն մի բառ, որ մի շնչին կետով նման են գտնում մի որևէ բառի հետ, ծագմամբ նույն են համարում: Ոչ թե միայն մի շնչին կետով նման, այլ նույնիսկ բոլորովին աննման բառեր կարող են լինել նույն ծագումից, և ընդհակառակը՝ բոլորովին նման բառեր կարող են լինել տարբեր ծագումից. այսպես, հայերեն երկ և հունարեն *ἔργον* նույնը

չեն իրար հետ, իսկ գործ և *ἔργον* նույն են. ֆրանսերեն *feu* և գերմաներեն *feuer*, որոնք ձևով ու իմաստով նույն են, ծագմամբ ոչ մի կապ չունեն, իսկ հունարեն *ἔργον* և հայերեն երկար, որոնք ոչ մի նմանություն չունեն, ծագմամբ նույն են: Այսպես և՛ նույն բառերն են հայերեն *ἀή* և սանսկրիտ *haya*, հայերեն *ἀուλή* և հունարեն *αὐλή*, հայերեն *παρ* և պարսկերեն *pay* և այլն և այլն: Հայերենը հայերենի հետ համեմատելով և ընդհանուր ծագումը գտնելով, նույն բառերն են հողմ և անձն, իժ և օձ: Մրանք նույն են իրար հետ, որովհետև ծագում են սկզբնական մեկ ձևից: Այսօրվա աննմանությունը պատճառ չէ, որ հնություն մեջ նրանք աննման լինեին, ինչպես որ այսօրվա նմանությունը ապացույց չէ, որ անցյալում էլ նրանք նման լինեին: Միևնույն բառը տարբեր տեղերում և տարբեր հանդամանքներում կարող է այնքան զարգանալ ու փոփոխվել, որ բոլորովին տարբեր արդյունք տա:

«Եթե աղետին ասենք, որ ֆրանսերեն *faire* և անգլերեն *do* համանիշները միևնույն հնդեվրոպական բառն են, անշուշտ պիտի կարծի, որ լեզվաբանը ձեռք է ստել նրան, բայց իրոք ոչինչ այնքան հաստատ չէ, որքան այդ երկու բառերի ծագման նույնությունը» (*Meillet*, *Les langues dans l'Europe nouvelle*, 64—65):

Ձայնաբանության մեջ ամեն ձայնական փոփոխություն հնարավոր է. անհնար է միայն ուսումը. արեմն կարևոր է ցույց տալ և հաստատել այն միջին երկրորդական ձայնափոխությունները, որոնցից աստիճանաբար անցնելով մի ձայն վերածվել է մի ուրիշ ձայնի: Օրինակի համար, առաջին ակնարկով տարօրինակ պիտի թվա, եթե ասենք, թե *լ* գառնում է *ն*. բայց տարօրինակությունը կվերանա, եթե նկատի առնենք միջին աստիճանները. այսպես՝ *լ* գառնում է *ղ*, *ղ* գառնում է *խ*, *խ* գառնում է *ն*. օրինակ՝ *Lucas* > *ուկաս* > գաղտական *կուկաս* > թուրքախոս հայոց մեջ *Հուկաս*, արեմն *լ* գառնում է *ն*:

Այն լեզուների մեջ, որոնց զարգացման զանազան շրջանները այլևայլ բնագրերով են ավանդված մեզ, շատ դյուրին է կարգով հետևել միջին աստիճաններին և ձայնափոխությունների պատմությունը երևան հանել ու հաստատել: Այսպես է, օրինակ, ֆրանսերենը, որ սկսած լատիներենից և ստորին լատիներենից մինչև հին ֆրանսերեն և հին ֆրանսերենի զանազան շրջաններից մինչև նորագույն լեզուն և բազմաթիվ բարբառները շատ ու շատ բնագրեր ունի, այնպես որ լուրաքանչյուր բառի ամբողջ պատմությունը

նը կարելի է մտածել շոշափել: Օրինակ, լատիներեն anima բառից ծագում է ֆրանսերեն âme «ճագի»: միջին ձևերից առկան է X դարում anime, XI դարում aneme, XIII դարում anime, որ ազգակի կապվում է լատին մալր ձևի հետ (Brachet, Grammaire historique, 42^e éd., p. 85): Լատիներեն ecce estum «ահա ահավասիկ» բառից ծագում է ֆրանսերեն ce «այս», որա միջին ձևն է cet, որ այժմ էլ գործածական է եզակի արական ձայնավորով սկզբնականի առաջ (փոխանակ oe-ի, հորանջքի առաջը առնելու համար, ինչպես cet enfant, cet étudiant). ավելի հնից ավանդված են cest, cist, icist, որ հասցնում է մեզ X դար, այս ձևն արդեն նույն է լատիներեն ecce istum կամ eccistum բառի հետ:

Դժվարությունն սկսվում է այն ժամանակ, երբ զանազան լեզուների բառերը համեմատվում են իրար հետ, մանավանդ երբ համեմատելի նյութը քիչ և բառերի թիվը սահմանափակ լինի: Քանի գնում ենք խորը անցյալը, քանի մխրճվում ենք հնություն մեջ, քննություններն ավելի դժվար են գտնում և վերջապես գալիս ենք մի տեղ, որ մարդկային միաքն այլևս զազարում է: Այսպես, օրինակ, հնդկավրոպական խմբի մեջ նոր լեզուների միջոցով ուսումնասիրում ենք քույր լեզուները, քույր լեզուներից հետո գտնում ենք մալր լեզուն, բայց ավելի այն կո՛ղմ...: Կան լեզվաբաններ, որոնք թուիչք աալով իրենց երեակալություն, ուզում են գնալ ավելի խորը, մինչև իրր մարդկություն ծագումը, բայց ավելի լուրջ լեզվաբանները զազար են առնում այդտեղ, ապագա մարդկությունը թողնելով գտնելու թերևս ավելի հին գազանիքների բացատրությունը:

Յուրաքանչյուր բառի քննություն ժամանակ պետք է նախապես գտնել նույն լեզվի գրականության մեջ նրա ամենահին ձևը, այնուհետև ստուգել, թե նույն բառն արդյոք որեէ լեզվից փոխառություն չէ՞. հետո որոնել թե ձայնական օրենքների համեմատ ինչ ու ինչ ձևեր կարող էին այդ բառին նախորդել: Որովհետև չենք կարող ստել, թե մի ձայնից միայն մի ձայն կարող է առաջ գալ, ուստի պետք է ընդունենք, թե մի բառ կարող է զանազան նախադր ձևեր ենթադրել: Այսպես, օրինակ, հայերեն հառ ձևը կարող է hav-, pav-, sav-, hap-, pap-, sap- և այլ նման ձևերից ծագել հավասարապես: Այնուհետև պետք է ցեղակից լեզուների մեջ փնտրել նրանցից մեկն ու մեկին համապատասխան ձևեր, նախապես նրանց վրա էլ կատարելով նույն փորձը՝ համաձայն նույն լեզվի ձայնական օրենքների: Եթե գտնվեցին այդպիսի ձևեր,

ընդունվում է, թե նրանք ցեղակից են և ծագում են մալր լեզվից: Բայց կարող է լինել, որ այդ լեզվի մեջ էլ գտնված ձևը պատահական նմանությունն առնենա, կամ բախտի բերմամբ գտնվել երկու ձև, որոնք հավասարապես համապատասխան դուրս գան մեր ուզածներին: Առաջին պարագային խնդիրը կվճարվի մի երրորդ լեզվի օգնությամբ. առնվազն երեք իրարից տարբեր և անշատ լեզուների մեջ գտնված նման ձևերը բավական մեծ գրավական են ծագման նույնություն և բառի հնություն: Իսկ երկրորդ պարագային՝ խնդիրը կվճարվի հավանականությամբ:

Սուուգարանություն մեջ ամենակարևոր կեան է ձայնական օրենքների համաձայնությունը. բայց օրենքները տարբեր են բառ ժամանակի և ըստ վայրի. ինչ օրենք որ այսինչ ժամանակի և այսինչ տեղի համար ուժ ունի, ուրիշ տեղի և ժամանակի համար արժեք չունի: Ֆրանսերեն parole բառը ներկայանում է մեզ երեք տարբեր ձևերով՝ parole «խոսք», parabole «առակ», palabre «բանակցություն սևամորթ իշխանի հետ». այս երեքն էլ լատիներեն parabolum բառի ծնունդներն են, բայց տարբեր ժամանակի և տարբեր տեղի արդյունք. առաջինը ժողովրդական ֆրանսերենի հարազատ ձևն է, որ ֆրանսիական լեզվի ձայնական օրենքներով առաջացել է լատիներենից. երկրորդը գիտնականների փոխ առած ձևն է ուսումնական լատիներենից. երրորդը փոխ է առնված իսպաներեն palabra բառից, որ նույն լատին ձևի հարազատ ծնունդն է: Այս բոլոր հանգամանքները նկատի առնելով, սխալ կլինի մի տեղի և մի ժամանակի օրենքը գործադրել մի ուրիշ տեղի և ժամանակի բառի մեջ: Մի լեզվաբան հեղանքով ասում է, թե ձայնական օրենքների ժամանակագրություն ուշ չզարձենել հավասար է մի այսպիսի արտառոցություն. «Հարավարդ համալսարանի գրադարանը (հիմնված XVII դարում) ինչպես է եղել, որ Ալեքսանդր Վերիայի գրադարանի հրդեհին զոհ չի գնացել» (Terracher, BSL 24, p. 279):

Առանձնապես զգուշ պետք է լինել պատահական նմանություններից: Այս առթիվ մի գասական օրինակ կա: Նապոլեոն անունը մի-մի տառի հապավմամբ կարողացվում է.

«Նապոլեոն ապոլեոն պոլեոն ոլեոն լեոն եոն ոն»:

Այս նախադասությունը, հին հունարեն լեզվով (փոքր վրիպակներով) նշանակում է.

«Նապոլեոնը կործանեց քաղաքները բոլոր, ապա՛հ հավիանական լինելով»:

Այս է տեսնվել արդարիս հաշտ, բայց բոլորովին պատահական զագաղիպություն և նմանություն:

Հայերեն խորգենի «geranium ծաղիկը» առա առ առ նման է պարսկերեն خورْدانی xōrdāni «ուտակիք» բառի հետ, բայց սրանք ոչ մի կապ չունեն. պարսկերեն բառը ծագում է xōr «ուտել» արմատից, իսկ հայերենը կազմված է խորղ «կտանկ թռչունը» բառից, որի ծագումը հայտնի չէ:

Ֆրանսերեն argent (կարգալ «արծան») բոլորովին նման է հնչում հայերեն արծան (եծան) բառի հետ: Բայց սրանք ոչ մի կապ չունեն այն պատճառով, որ նշանակությամբ տարբեր են: Սակայն ֆրանսերեն argent ստուգաբանորեն կապվում է հայերեն արծաթ բառի հետ, ինչպես ցույց են տալիս ձայնական օրենքները:

Ինչպիսիք բնության խոցերից մեկն է. եթե միևնույն լեզվի մեջ բոլորովին տարբեր բառեր զանազան պատճառներով կարող են հասնել միևնույն ձևին (ինչպես հայերեն վեր «վեր» և վեր «վալր, ներքև», կամ երևանի բարբառով շոգ «տաք» և Ղարաբաղի բարբառով շօք «հով»), ինչպես տարբեր լեզուների մեջ նման պատահումները չլինեն: Այսպես են, օրինակ, անգլերեն bad և պարսկերեն bad, երկուսն էլ արդի հնչմամբ ճիշտ ու ճիշտ bād արտասանված, երկուսն էլ հավասարապես «վատ» նշանակությամբ.— ամբիլիյան հատուտ լեզվով biat «օ» և ոտսերեն ИЯТЬ «օ».— պարսկերեն سیتون situn «սլուն, իրբե նեցուկ դրված հենարան» և ֆրանսերեն soutien «նեցուկ, հենարան».— արաբերեն رافنا rafna «նաղ ու նագանքով ման եկող պչրուհի» և ֆրանսերեն rafiné «շատ նորր, քնքշարար մարդ».— ավաներեն lire և ֆրանսերեն lire «կարգալ».— արաբերեն زامق zamq «կողպեքը բանալ» և ոտսերեն замокъ «կողպեք».— Ազուլիսի բարբառով բոկ «արտաքնոց» և օսմաներեն بوق boq «կղկղանք».— անգլերեն mean (կարգալ միև) «նվաստ, ջնջին» և Մարաղայի բարբառով մըին «վաստ, հոսի».— պարսկերեն گرانباه گرانباه girānbahā «թանկագին» և ֆրանսերեն grand prix «մեծագին, մեծ պարգև».— Ղարաբաղի բարբառով խնօթուն «սրբերի գերեզմանից վերցրած հող, որ ջրի մեջ խառնելով խմացնում են հիվանդին իբր դեղ» և ասորերեն xēnā yā «նահատակների նահատակության պսակելու տեղի հողը» (Broc Kelmann, Lex. Syr., 117): Աշխարհիս որ կողմը որ մարդ աչք գարձնի և որ լեզուն էլ որ քննի, կարող է պատահաբար գանել մի քանի բառ, որ նման լինեն այս կամ այն լեզվին: Առեք ձեռքներդ որևէ օտար լեզվի բառարան, համեմատեցեք հայերենի

հետ, տեսեք, թե որքան նմանություններ պիտի գտնեք և բացարձակ նմանություններ. օրինակ, հայերեն և բասկերեն, հայերեն և ճապոներեն, հայերեն և զուլուսերեն, հոտենցոսերեն կամ Ալսարալիսի որևէ մոզովրդի լեզվով: Օրինակ՝

Ամերիկյան հնդկացիների լեզուներից՝

մալգու լեզվով sēūsēupe (կրկնված) «սև» (Boas, Handbook, 722).

աթարսակ լեզվով xūxai «երկխա = խօխա» (անդ, 109).

մալգու լեզվով tsa (ծա) «ծառ» (անդ, 708).

ալգոնկին լեզվով na «հայիկ» (անդ, 782).

» medāsw «10» հմմտ. հայերեն մետասան (անդ, 887).

Ամերիկյան խոտնամա լեզվով huataratara = թրթուր (MSL 20, 46).

» » » kaneka = կնիկ (անդ, 48).

» կարաիբերեն » aku = սկն, աչք (Breton, 13).

» մակիսո » matrin «էջ» (=մայր) (L. Adam, 13).

» մոզասկան » yato = հայերեն եօթը.

» նալահո » nzad «հետու» (հայերեն գալասական գառ (Haile, 56).

Աֆրիկյան հատուտ լեզվով aru = հարիւր (Marre, 58).

Բասկ լեզվով buru «գլուխ» = հայերեն պոյր (Lingua I, 1, 66).

Մալալո-պոլինեզյան բոնոտի-իզորոտ լեզվով amin նշանակում է «ամէն, բոլոր». amin nan koak «ամէն իմ գոյքը» (Seidenadel, 45, 46): նույն լեզվով ðy «այո» (անդ, 162):

Եգիպտերեն՝ wštn «վազք, վազ տալը», gs' «կես», mn «մնալ», ymy «մի» (արգելական), bn.t «փանդիս», ns.t «նիստ, գահ», gs «կուլս, կողմ».

Ֆիլիպինյան նարալոլ լեզվով amin «բոլոր, ամեն» (Scheerer, 108). Սուզանի ֆանտի լեզվով kirew «գրել» (welmers, 32):

Բայց այդ բոլոր բառերը, որոնք այսօր արտաքինով բոլորովին կամ մոտավորապես նույն են, ոչ մի կապ չունեն իրար հետ:

Այս կարգի բառերի նմանությունից ձայնորդ եզրակացություններ չհանելու համար, նախ պետք է փնտրել պատմական միջոցներով, որքան կարելի է, բառի հնագույն ձևը և այն ժամանակ շատ անգամ տեսնվում է, որ նմանությունը կորել է: Այսպես, Ազուլիսի բարբառով բոկ ծագում է հայերեն բակ ձևից,

որով թե՛ ձեռով և թե՛ նշանակութեամբ հեռանում է օսմաներեն ձևից: Նոր նախիջևանի բարբառով խուլի «ջրհոր» և Մարագալի բարբառով խուլի «ջրհոր» ամեն մարդու էլ միևնույն բառը պիտի հրեար. բայց եթե քննենք և տեսնենք, որ նոր նախիջևանի բարբառով խուլի առաջանում է թուրքերեն quya ձևից, իսկ Մարագալի բարբառով խուլի առաջանում է հայերեն հոր ձևից, կտեսնվի, որ quya և հոր բնավ կապ չունեն իրար հետ: Մեր բարբառները գործ են ածում մուշքարի «հաճախորդ» բառը. տգեան իսկույն կարող է ստուգարանել «միշտ արի». մինչ դա արաբերեն ներկա գերբայ է իշքիթա «գնել» բայից: Երկրորդ՝ պետք է ստուգարանել բառն իր մեջ. օրինակ, ֆրանսերեն soutien կազմված է sous «տակը» և tient «բռնում է» բառերից, որով երկուսը բաժանվելով իրարից, այլևս կարիք չի մնա կարծելու, որ նույն է պարսկերեն sutun-ի հետ, որ մի ամբողջական արմատ է: Նույնպես արաբերեն raīna ամբողջական արմատ է rīn ձևից, իսկ ֆրանսերեն raffiné ծագում է fin «նոր» բառից, af և r մասնիկներ են.— mirāt կապ չունի miroir բառի հետ, որովհետև առաջինի արմատն է mir «գիտել».— Ղարաբաղի բարբառով խնօ՛րուն ծագում է օրհնութիւն բառից, ինչպես որ նույնը ցույց են տալիս նոր Բալազան ու խնօք-են, Երևան օրհնութեան հող հոմանիշները, որով արմատը կլինի աւրին-, մինչդեռ ասորի բառի արմատն է xan «ողորմիլ»: Ֆրանսերեն lire ծագում է լատիներեն legere բայից, իսկ սվաներեն liri «կարգալ» կազմված է li մասնիկով ր «կարգալ» արմատից:— Երրորդ՝ պետք է փնտրել, թե երկու լեզուների միջև առհասարակ որևէ կապ կա՞, ցեղակցական կամ փոխառական. որևէ հայերեն բառի նմանություն ճապոներեն որևէ բառի հետ՝ ամենևին արժեք չունի, քանի որ անգրագույն քննութեամբ գիտենք, թե այս երկու լեզուների միջև ցեղակցական որևէ կապ չկա: Ոչ ցեղակից լեզուների բառեր համեմատել իրար հետ առնվազն անխոհեմություն է:

Որքա՞ն մարդիկ մեր մեջ, ի նկատի չունենալով այս պայմանները, աշխատել են նմանություններ որոնել հայերենի և գաղական ոչ ցեղակից լեզուների միջև:

Ստուգարանությունները կարող են 3 կարգի բաժանվել. առաջին կարգին են պատկանում նրանք, որոնք բացարձակապես ստույգ են և չեն կարող կասկած վերցնել. այսպես են, օրինակ՝ հայր, մայր, հինգ, առան և նման բառերի ստուգարանությունը՝ հնգվորդական հողի վրա: Կասկածել այս կարգի ստուգարանու-

թյունների վրա, նշանակում է հրաժեշտ տալ լեզվաբանական գիտություն: Երկրորդ կարգի ստուգարանություններն են նրանք, որոնք մի երկու լեզվի մեջ միայն պահված լինելով, սկեպտիկ գիտնականի համար կարող են կասկածելի լինել: Երրորդ կարգի ստուգարանությունները նրանք են, որ ընդունելու համար բարեհաճ վերաբերմունք պետք է ունենալ. օրինակ, հրր Լիդերը հայերեն դառն բառը հանում է դառնալ բայից (Arm. Stud., § 71):

Ինչպես ասացինք, ստուգարանության հիմնական նպատակն է ավելի բառի ծագումը գտնել:

Բոլոր լեզուների մեջ էլ, ամենահին գրական աղբյուրներից սկսած (եթե կան) մինչև արդի բոլոր տեսակի բարբառները, բառերն ավանդված են մեզ 3 կամ 4 ձևի տակ. արմատ, բարդ, ածանց կամ վերջին երկուսի զուգարով բարդածանց:

Այս բոլորի մեջ ամենահեշտը ածանց բառերը մեկնելն է, որ կատարվում է մասնիկը գտնելով և բառի մնացյալ մարմնից բաժանելով: Ի՞նչ կա ավելի հեշտ, քան (օրինակ առնելով հայերենը) ստել, թե հարստութիւն բառի մեջ մասնիկն է ութիւն, որով բուն բառը կմնա հարուստ. զբանից հետո գտնելով, թե մասնիկ է նաև ուստ, որով բառի պարզ արմատը կմնա հար:

Դժվարությունն սկսում է այն դեպքում, երբ մասնիկն անսովոր կամ քիչ զործածական է: Այս դեպքում կարիք կա մի քիչ ավելի երկար որոնումների, օրինակ, մաեքիմ բառը արմատ է, թե՞ ածանց: Բառի երկարությունը չի թույլ տալիս համարելու արմատ. բայց միևնույն ժամանակ -րիմ մասնիկը շատ անսովոր է հայերենում: Այս մասնիկով բացի մաեքիմ բառից, ունենք ևս երկու բառ, որոնք են ոլեքիմ և հաւաաարիմ: Եթե մաեքիմ բառի մեջ -րիմ իբր մասնիկ կասկածելի էր, որովհետև մտն արմատ վերանում է, որովհետև ոլե և հաւաաա շատ հարյուր արմատներ են, ուստի և մասնիկն է -րիմ (արիմ, երիմ): Այլ հարց է որոշել, թե այս մտն կամ մա ի՞նչպես պետք է մեկնենք և ի՞նչ արմատի հետ պիտի միացնենք (միաք, մուաք, թե՞ մի ուրիշ անհայտ արմատ):

Ածանցների նման, բարդ բառերն էլ հեշտ են ճանաչվում. ո՞վ չգիտի, թե շոգեմավ, երկաթուղի, մարդասեր, ջրաղաց, ջրմուղ և այլն կազմված են երկ-երկու բառերից, որոնք այժմ էլ առանձին գոյություն ունեն մեր լեզվում:

Դժվարությունն սկսվում է այն ժամանակ, երբ զգում ենք, թե բառը բարդ է և նույնիսկ նրա մի մասը ծանոթ է մեզ, իսկ

մյուս մասը մնում է անծանոթ: Այսպես, հայերեն հրդեհ բառը հայտնի կերպով կազմված է հուր բառից (որ շատ սովորական բառ է հայերենում) + դեհ բառից, որի ի՞նչ արմատ լինելը չգիտենք զեռ:

Մրա նման շղուարարոյ, արբշիւ, հեշմակապաշտ և այլն, որոնց մի մասը՝ բարոյ-ք, արբ, պաշա-ել արդեն հայտնի արմատներն են հայերենում, բայց նրանց մյուս մասը՝ շղու, շիւ, հեշմակ անծանոթ են: Ծղու մեկնվում է վրացերեն շու «խենթ, հիմար» բառով, շիւ մնում է անծանոթ, իսկ հեշմակ վրացերեն եշմակի «սատանա» բառի հետ փոխ է առնված իրանական հեշմա, հեշմակ «չար ոգի» բառից:

Անշուշտ կան հայերենի մեջ նաև այնպիսի բառեր, որոնք կարող են բարդ լինել, բայց նրանց ոչ մի եզրը մեզ ծանոթ չէ: Այս կարգի բառերը հայերենում համարվում են արմատ բառեր:

Հայերենի բոլոր արմատ բառերի ուսումնասիրությունն է նվիրված մեր Արմատական բառարանը, որ բովանդակում է 10996 բառ: Մրանցից 2221-ը անստույգ կամ անվավեր բառեր են. մնացյալ 8775-ը բաժանվում են երկու կարգի՝ բնիկ հալ բառեր և փոխառյալ (օտար) բառեր: Արտվհաս հայերենը պատկանում է հնդեվրոպական ընտանիքին, ուստի նրա մեջ բնիկ են միայն այն բառերը, որոնց հնդեվրոպական ծագումը հաստատված է. այսպես են առայժմ 927 բառ: Մնացյալները կամ փոխ են առնված և կամ անծանոթ: Փոխ առնված բառերը մտել են հայերենի մեջ ասուրերենից, խաղերենից, վրացերենից, պարսկերենից, լատիներենից, ասորերենից, հունարենից, արաբերենից, թուրքերենից, եվրոպական լեզուներից և այլն, որոնց ընդհանուր թիվն է 4015. մնացյալը մնում է անհայտ: Նրանց մեջ կան անշուշտ բնիկ բառեր, որիչ փոխառյալ բառեր և այլն, որոնք օսկայն զեռ ապացուցված և հաստատված չեն: Այս անհայտ բառերի գումարն է 3680: Հալոց լեզվի պատմության մեջ հավաքված են հայերենի բոլոր բնիկ, ինչպես և բոլոր փոխառյալ բառերը՝ լուրաքանչյուրը առանձին ցուցակներով:

Ապագա լեզվաբանների աշխատանքը պիտի լինի այն 3680 անծանոթ բառերի քննությունը առաջ տանել և որոշել նրանց ծագումը՝ մեր ձեռքն ունեցած, մանավանդ ունենալիք միջոցներով:

Միջոցներից առաջինը և ամենակարևորը համարում եմ հատկապես վրացերենի Արմատական բառարանը և ընդհանրապես բո-

լոր կովկասյան լեզուների համեմատական բառարանն ու քերականությունը:

Այս երկու աշխատությունները պիտի վճռեն հայերենի անծանոթ բառերից շուրջ 1 000-ի բախտը:

Երկրորդ միջոցը պիտի լինի խաղերեն լեզվի բառամթերքի անակնկալ, բայց ոչ անհուսալի զլուարը: Ասորեստանցիների, բաբելացիների, ելամացիների և հիթիթների բազմաճազար արձանագրությունների գլուար հույս է տալիս մեզ, որ կգա մի օր, երբ խաղյան լեզվով էլ կգտնվեն նույնպես մեծաքանակ արձանագրություններ (նույնիսկ երկլեզվյալ), որոնց սառույց վերծանումով կվճռվի թերևս հայերեն ևս մի 1 000 արմատի ծագումը:

Ստուգարանությունը կատարվում է երկու ճանապարհով. ա) կամ վերցնել հին ձևը (եթե կա) և նրա վրա գործադրել պահանջված ձայնական օրենքները և այս միջոցով հասնել նորին. բ) կամ վերցնել նորը (որ հայտնի է մեզ) և օրենքները շարունակ հետ-հետ տանելով հասնել և գտնել հինը (որ անծանոթ էր մեզ): Երկու դեպքումն էլ արդյունքը լինում է իրար կապել հինն ու նորը, և ցույց տալ նրանց անցած ճանապարհը: Առաջին դեպքում հնից զալիս ենք դեպի նորը, երկրորդ դեպքում նորից գնում ենք դեպի հինը:

Ամենակարևորը ձայնական օրենքների ճիշտ գործադրությունն է, առանց որի սալթաքումը ապահով պատրաստ է:

Տրված է մեզ, օրինակ, հնդեվրոպական նախալեզվի bhrāter բառը, որ նշանակել է «եղբայր» և որ երևան է հանել հնդեվրոպական լեզվաբանությունը, մի խումբ հին ու նոր լեզուների ուսումնասիրությամբ և համեմատական քննությամբ:

Ի՞նչ կտա մեզ այդ բառը հայերենում:

Բառի վրա պետք է գործադրենք հետևյալ ձայնական օրենքները.

1. Բառասկզբի bh տալիս է հայերեն բ.
2. r տալիս է հայերեն ր
3. ā դառնում է հայերեն ա.
4. Երկու ձայնավորի միջև t դառնում է հայերեն յ.
5. Վերջավանդի ձայնավորը ջնջվում է հայերենում:

Այս օ ձայնական օրենքների գործադրությամբ bhrāter պիտի դառնար հայերեն *բրայր:

Այժմ դառնանք հայերենի ներքին ձայնական օրենքներին:

Այստեղ էլ նկատում ենք հետևյալ ձայնական 4 օրենքները.

1. Երկու հաջորդական p-երից մեկը վերածվում է l-ի, ինչպես բրայր > բլայր (տարանմանություն).

2. բլ կարող է շրջվել և դառնալ ր (անդափոխություն) — բլայր > րայր.

3. Բաղաձայնից առաջ գտնված l առանց բացառության դառնում է ղ, որ է թավ l — րայր > ղրայր:

4. Ղ բառակցքում ստանում է շատ անգամ ե, երբեմն էլ ա հենարանը:

Այս է նոր օրենքների գործադրությամբ բրայր դառնում է եղբայր կամ այլ գավառականով՝ աղբայր:

Այս է հնդեվրոպական նախալեզվի bhrātēr բառի վերջին հանդրվանը՝ մինչև V դար: Իսկ եթե ուզենանք շարունակել այն մինչև նոր բարբառները, կստանանք՝

եղբայր = աղբայր > աղբեր > աղբար > ախպեր > ախպար:

Ոչ լեզվաբանի համար bhrātēr և ախպար այնպիսի անհամեմատելի եզրեր են, որ ոչ ոք չի հավատա: Բայց նրանք բացարձակապես ճիշտ համադրներ են, որովհետև ձայնական օրենքների ճիշտ գործադրության արդյունք են, նշանակությամբ էլ բոլորովին նույն:

Տրված է հունարեն pólemos «իրարանցում, կռիվ, պատերազմ» բառը. պետք է գտնել նրա համադր հայերեն ձևը:

1. Հունարեն pol- նախավանկին համապատասխանում է հայերեն ալ, ինչպես ցույց են տալիս հունարեն palfos «ծովի ալիք» = հայերեն ալիք և poliaí «ճերմակ մազեր» = հայերեն ալիք, ալեսց:

2. e անգականից առաջ գտնում է հայերեն ի — pole = ալի.

3. m մնում է մ — polem = ալիմ.

4. Վերջավանկը ջնջվում է հայերենում.

5. Շատ կարճ բառերը ջնջվում են լեզուների մեջ, իսկ կյանք ստանալու համար որևէ մասնիկով զորանում են. հայերեն գրվել է ուկ մասնիկը. ալիմ-ուկ.

6. Շեշտից առաջ գտնված ի ջնջվում է. ալիմ-ուկ > ալմուկ.

7. l բաղաձայնից առաջ գտնում է ղ. ալմուկ > աղմուկ:

Աղմուկ բառի հին գրաբար նշանակությունն է «կռիվ, պատերազմ», որ համապատասխան է հունարենին. այժմ է, որ աղմուկ զործ է ածվում միայն «ժխոր» իմաստով:

Այժմ տանք երկու օրինակ ևս նորից դեպի հինը (ծանոթից դեպի անծանոթը) հետ-հետ գնալու համար.

ա. Ի՞նչ պետք է լինի հայերեն առիծ բառի նախածեր կամ ծագումը:

1. Առիծ բառի հնագույն հայերեն ձևն է առիծ:

2. Սրա նախաձայն ա պետք է լինի հայելված, որ դրված է n-ի պատճառով. ուրեմն սկզբնական ձևն է առիծ:

3. Հայերեն n ծագում է հնդեվրոպական նախալեզվի r-ից.

4. Եւ երկբարբառը ծագում է eu-ից.

5. ծ ծագում է g¹ ձայնից.

6. որով նախածեր լինում է reug¹:

Այս արմատը գոյություն ունի հնդեվրոպականում և նշանակում է «մոնչել». հմմտ. ժառանգ լեզուներից հունարեն έρεύγμαι «առյուծի մոնչել, ցուլի բառաչել», լատիներեն rugio «առյուծի մոնչել» և այլն (մյուսները տես Արմատական բառարան, է, 92): Որովհետև հնդեվրոպացիք առյուծ չունեին, ուստի «առիծ» բառն էլ չկա, այլ միայն «մոնչել» արմատը, որից հայերը կազմեցին հետո առիծ բառը, հենց որ այդ կենդանու հետ ծանոթացան:

բ. Գտնել հայերեն ժպիրն բառի ծագումը:

Ովքեր զբաղված են հայ և իրանական բառերի համեմատությամբ, պիտի զգան, որ այս բառը իրանական է հնչում:

Ըստ հայ-իրանական ձայնական օրենքների, գիտենք, որ՝

1. հայերեն ժ ծագում է իրանական շ ձայնից.

2. հայերեն պ ծագում է իրանական p ձայնից.

3. հայերեն ի շեշտայլ ծագում է իրանական i, ī ձայնից.

4. րն կամ հր ծագում է իրանական ր խմբից. օրինակ՝ աշխարհ < xšaθra, շնորհ < xšnaoθra, Միհր < Miθra և այլն:

5. նախաձայն ժ և պ-ի միջև ենթադրելի է ընկած մի ձայնավոր՝ u կամ i:

Ըստ այսմ ժպիրն բառի զեմ ենթադրելի է իրանական žipiθra կամ župiθra:

Երկրորդը գոյություն չունի իրանականների մեջ, բայց առաջինն իսկույն հիշեցնում է մեզ իրանական *aži-piθra, որ կազմված է aži «օձ» և piθra «հալը» բառերից և նշանակում է «օձահալը, նա որի հալը օձ է»:

Իբրև օրինակ անված այս երկու բառերը ցույց են տալիս, որ ձայնական օրենքների միջոցով կարելի է գտնել և երևան հանել այնպիսի կորած գնացած բառեր, որոնք հին գրականությունները չեն պահել:

լեզվաբանական աշխատությունների մեջ բազմաթիվ օրինակներ կան այսպիսի վերականգնված բառերի, որոնցից հիշատակում եմ երկու հետաքրքրական օրինակ ես:

Հայերեն հովիւ բառի զեմ գրվում է հնդեվրոպական նախալեզվի owi-pā, որ կազմված է owi «ոչխար» և pā «արածացնել» բառերից: Այսպիսի բառը չի ավանդվել ոչ մի լեզվում, բայց առանձին տարրերը կան, իսկ հայերենը դրանք էլ չի պահել: (Այս շատ գեղեցիկ ստուգաբանության գլուտը պատկանում է Փր. Մյուլեր հայագետին):

Հայերեն ուրջու «խորթ որդի» կազմված է ու մասնիկով, ինչպես են հօրու, մօրու «խորթ հայր, խորթ մայր»: Հանելով այս ու մասնիկը, գտնում ենք ուրջ, որ նախորդ երկուսի նման, պիտի լինի սեռական հոլով (ճիշտ ինչպես ունենք զեղջ, կնոջ, միոջ): հետևաբար բառի արմատն է ուր «որդի»:

Բայց այս անսովոր բառն էլ մեկնվում է իբր հնդեվրոպական նախալեզվի putro «որդի», որ պահված է արիական լեզուների մեջ (հնդկերեն և պարսկերեն) և զործածական է մինչև այժմ: (Հնդեվրոպական նախալեզվի putro կորցրել է նախաձայն p. ինչպես pulos > ուլ, tr դարձել է ըստ օրինի հայերեն ւր, ինչպես patros > հաւր, հօր, matros > մաւր, մօր, nutro > մուր, aratro > արաւր, արօր):

Այսպիսով ձայնական օրենքների հիման վրա և հայերեն ուրջու բառի վերլուծմամբ երևան է հանվում հին հայերենի բառամթերքից ուր «որդի» բառը, որ շատ վաղուց կորել ու անհետացել էր:

Պրոֆ. Ռ. Աբրահամյանը (լեզվաբան և միակ պահլավագետը հայոց մեջ) բառաքաղելով ամբողջ պահլավերեն գրականությունը, կազմել է պահլավերենի բառարանը, ուր հավաքված է ավելի քան 6 000 բառ: Հեղինակն ունի մի հոդված (Ակադեմիայի լեզվի ինստիտուտի աշխատություններ, III, 293—296), ուր հայտնում է, թե Արմատական բառարանի մեջ կա 80 հատ վերականգնվող պահլավերեն բառ, որոնցից 40-ը ճիշտ նույն ձևով գտել է արգեն իր ձեռքի տակ ունեցած պահլավ գրականության մեջ:

Պատահում են զեպքեր, երբ բառի ստուգաբանությունը հայտնի է լինում, բայց իր մեջ ապացույցել անհնար է: Այս զեպքում օգնություն է հասնում մի ուրիշ (մանավանդ հարեան) լեզվի նման կազմությանը մի բառը և այդ զեպքում երկուսը իրար են հաստատում. օրինակ՝

Չմերուկ բառը, որ հայտնի պտուղն է նշանակում, անշուշտ ձմեռն բառից է կազմված. բայց կասկածելի է երկու պատճառով. առաջին՝ որ բառի մեջ արմատական և հանդը չի պահված, իբր ձմեռնուկ. երկրորդ՝ որ լավ չի բացատրված, թե ինչու այդ պտուղի անունը պետք էր կապել «ձմեռ» գաղափարի հետ: Բայց երբ նկատի առնենք վրացերեն սազամբրո «ձմեռուկ» բառը, որ նմանապես կազմված է սազամբրո «ձմեռնային», զամբարի «ձմեռն» բառից, կասկածները կվերանան և մեկը մյուսին կծառայի իբրև ապացույց:

Վրացերենի համեմատությամբ է բացատրվում նաև հայերեն մխիթար, մխիթարել «սփոփանք, սփոփել» բառը, որ ուղիղ մեկնեց Մառը, իբր հայերեն մի խիթար «մի ցավիր, մի վախենար» արգելականից, ինչպես կա նաև քաջալիր «քաջ լիր», բայլ՝ քաջալիրել: Ճիշտ նույն է նաև վրացերեն նուզեշի «մխիթարություն», որ կազմված է նուզեշինիս «մի վախենար» արգելականից (սրանց մասին տես Արմատական բառարանում):

Այսպես է նաև միջին հայերենի տուայր բառը, որ նշանակում է ամսանությունն ժամանակ փեռայի աված գրամական գումարը հարսին (օմիա), կամ այն գումարը, որ այլը վճարում է կնոջ՝ իր մահվանից հետո ապրելու իբր միջոց: Առաջին հայացքից թվում է, թե բառը կազմված է հայերեն տու + այր բառերից, այն է «այր մարդու ավածը»: Բայց այս ստուգաբանությունը կեղծ է, որովհետև այդ բառը փոխառություն է ֆրանսերենի douaire հոմանիշից:

Մախալ «չարանալ, նախանձել» բառը ձևով շատ նման է սուսերեն НАХАЛ բառին, որ վատ իմաստով զործածական է նաև Կովկասի հայ բարբառներում: Այս երկու բառերը՝ «մախալ և «նախալ», թեև ձևով իրար շատ նման, ոչ մի կապ չունեն իրականում:

Սուս ու սխալ ստուգաբանությունների զվարճալի ու ծիծաղելի ձևեր են ներկայացնում այն զեպքերը, երբ ստուգաբանողները տառերը սխալ կարդալով, ըստ այնմ էլ սխալ բառերի հետ են կապում. օրինակ՝

Patrubány հունգարահայր, անհասարակ վատ ստուգաբանող, «Հանդէս ամսօրեալ», 1908 թ. էջ 152, դ տառը կարդալով դ, շինում է զանգանաւանդ (փոխանակ զանգանաւանդ > պարսկերեն dandān + band) և մեկնում է գոթերեն gaggan «երթալ» + bindan «կապել»!

Claproth, Mémoires, I, 436, դ շփոթելով զ-ի հետ, կարդում է ուզտ (փոխանակ ուզտ) և միացնում է սանսկրիտ ॐ ԶՏԴ բառի հետ:

Բառերի մեջ կան բազմաթիվ պատահական նմանություններ, որոնցից մի մասը կարելի է շուտով մեկնել, իսկ մյուսները կմնան անծանոթ: Բայց կարելի չէ ամեն մի պատահական բառ, որ ձևով և իմաստով նման է մի ուրիշ բառի հետ, առանց նախնական վերլուծության կապել իրար հետ. այսպես, օրինակ՝

Ռուսերեն подарок «նվեր» բառը ձևով և իմաստով նույն է հայերեն պատարագ բառի հետ, որ նախաքրիստոնեական բառ է և նշանակում է նույնպես «նվեր, ընծա»: Հայ բառի ծագումը հայտնի չէ, բայց հավանաբար իրանական փոխառություն է ամբողջությունում, իսկ ռուսերեն подарок կազմված է по նախամասնիկով և ок հետամասնիկով՝ дар «նվեր» արմատից, որ նույն է հայերեն «տալ, տար» արմատի հետ: Այսպիսով, այս երկու բառերի տառայի նմանությունը հօգս ցնդեց:

Գերմաներեն Taschentuch և հայերեն թաշկիճակ ձևով շատ նման և իմաստով նույն են. բայց երբ նկատենք, որ գերմաներեն բառը կազմված է Taschen «գրպան» + Tuch «կտավ» բառերից, այս նմանությունը հօգս կցնդի:

Հայերեն մաուր և աուսերեն морда նման են իրար. բայց մնում է ստուգել, թե արդյոք կապ անեն:

Կեղծ ստուգաբանությունների շարքին են պատկանում նաև նրանք, որոնք բառակցքին ավելացրած մի տառով են կազմվում: Չհաշված ուսար և դուսար բառերը, բ բաղաձայնով հավելումներ ունենք հետևյալ բառերի մեջ. ողոքել—բողոքել, ողջախոն—բղջախոն, ուղիս—բուղիս, առաջին երկու դուլքը հականիշ, վերջինը՝ համանիշ: Այսպիսի պատահականությունները, ինչքան էլ զվարճալի լինեն, կեղծ են:

Ձայնական օրենքներին խստիվ հետևելը ամենաանհրաժեշտ պահանջն է լեզվաբանության մեջ: Առանց դրան, սալթաքումը պարաստ է և սխալ եզրակացությունները անխուսափելի են:

Ի՞նչ կա ավելի հրապուրիչ, քան հայերեն ուսար և դուսար բառերի կապակցությունը, որ առաջարկեց առաջին անգամ Լազարյը 1868 թվականին. նույնը կրկնեցին հետո ուրիշներ և հատկապես ողորմելին և ծիծաղելին Հյունքյարպեյնեան, որ ընդունում է, թե ուսար բառը ձևացած է դուսար բառից՝ նախաձայն զ-ի անկումով: Այսօր էլ դեռ այդպես մտածողներ կան: Բայց ահա,

թե ինչպիսի սխալ երևույթների է տեղիք տալիս այդ սլանդակ ստուգաբանությունը.

1. Ենթադրել է տալիս, որ հայերենի մեջ հնդեվրոպական նախալեզվի dh > դ նախաձայնը կարող է ջնջվել կամ կորչել, ինչ որ բացարձակ սուտ է:

2. Արական կազմելու համար ենթադրել է տալիս մի նոր ձև (նախաձայնի ջնջումը), որ սչ միայն հայերենի մեջ, այլև ոչ մի հնդեվրոպական լեզվի և ավելին՝ աշխարհի սչ մի լեզվի մեջ գոյություն չունի:

3. Ընդհանրապես բոլոր լեզուների մեջ իզականը կազմվում է արականից և սչ թե արականը իզականից, ինչ որ լեզվաբանության համար սլանդակ երևույթ է:

Այս բոլոր անտեղի և երևակալական երևույթները չէին հանվի հրապարակ, եթե առաջարկողները հետևեին ձայնական օրենքները խստիվ գործադրելու պահանջին:

Գիտություն անգիտակ և լեզուների սնտեղյակ մարդիկ արել են և անում են միշտ ավնպիսի ստուգաբանություններ, որոնց անմըտությունն անմիջապես երևում է: Կարիք չկա որոնումներ անել՝ ցույց տալու համար օրինակներ այս մասին: Աշխարհը լցված է հազարավոր օրինակներով. մի քանի հատ մեջ բերենք.

Երեմիա Չելերին իր Ստամբուլում պատմության մեջ (սոպ. վիեհնա, 1913, 48—49), գրում է.

Կանայք խաբուրք և խաբուրք և սուլթան կաոք փուրացան...

Բուռին շփուին զըուրն զայն՝ յաչս, 'ւի կուրծս 'ւ ի փիստան, Մինչ ի փոր 'ւ ի պորա տանին...

Հրատարակիչ Թորգոմյանը (էջ 350) մեկնում է փիստան բառը «փիս տան», սեռական «փիս տան», իբր «մարմնով ծածուկ կողմերը»: Ծիծաղելի է: Պարսկերեն pistan նշանակում է «սախնք»:

Առենք մի քանի ուրիշ ավելի հետաքրքրական օրինակներ: Ժողովրդական լեզվով ասում ենք ի՞նչ «ի՞նչ», որի հետ բուլղորդին նույն է հնչում Ալթերի արաբերենن اش eš (Blot, 138).

Բայց ոչ մի կապ չունեն իրար հետ. սա առաջանում է اشى egš ձևից, որ գործածական է Ասորիքում. այս էլ կրճատված է ای شى eyy šay «ի՞նչ բան» բառից:

Մուշի բարբառով ուխալ «պտուկ» բուլղորդին նույն է հնչում սանսկրիտ ukhā «պտուկ» հոմանիշի հետ. բայց այս նմանությունը բուլղորդին պատահական է, ըստ որում ուխալ կազմված է իւլ+

հայ բառերից, իբր «լուղ հալելու աման», որի համապատասխանն է Վանի բարբառով իւղախալ !

Զեյթունի բարբառով այգօ նշանակում է «արի» և բոլորովին նույն է հնչում անգլիերեն I go «ես գնում եմ» բառի հետ. բայց սրանց մեջ ոչ մի կապ չկա: Զեյթունի բարբառով այգօ առաջանում է եկո՛, եկո՛ւր, Պոսի եկո՛ւ ձեկց և ծագում է գրաբար եկ արմատից, իսկ անգլիերենում I (ալ) ես գերանունն է, արմատն է go «երթալ»:

Հին իուլանդերեն Iōs «լույս» և միջին իուլանդերեն Iēss «լույս», երկու ցեղակից լեզուներ, որքան նման ձևեր, բայց ամենևին կապ չունեն իրար հետ. առաջինը նույն է մեր լոյս բառի հետ, երկրորդը մեր փայլ բառն է և ծագում է հնդեվրոպական նախալեզվի (s)phel- արմատից. ոչ մի կապ չունի հայերեն լույս բառի հետ:

Պարսկերեն biar «բեր» որչափ նման է հայերեն բեր բառին, մանավանդ մեր զավառական բիբր արտասանության հետ. բայց բացարձակապես տարբեր բաներ են. biar կազմված է հրամայականի bi մասնիկով, արմատն է ar «բեր», որ ոչինչ չունի այլևս բեր ձևի հետ:

Աֆղաներեն hōr «կրակ» բոլորովին նույն է հայերեն հուր բառի հետ. բայց ոչ մի կապ չունեն այդ երկուսը իրար հետ. աֆղաներեն hōr ծագում է օր ձևից, որ նույնպես գործածական է աֆղաներենում. և այս օր ձևը առաջանում է իրանական ād- ձևից (Gram. Iran. phil., I, 209). այնպես որ hōr եթե պիտի համեմատվի հայերենի հետ, պիտի կապվի այրել և առբ- բառերի հետ և ոչ բնավ հուր բառի հետ:

Սեմական լեզուներից հիմնորիտը իբր որոշիչ հոգ գործ է ածում վերջահար n. և սաբեարենն էլ անորոշի համար վերջահար m. երկուսն էլ նույն են հայերեն որոշյալ և և անորոշ մը, մի հոգերի հետ: Բայց քննենք մի քիչ խորը և ամեն բան կփոխվի: Սաբեական m առաջանում է mā «ինչ, մի որևէ բան» բառից. իսկ հայերեն մը ծագում է մի «մեկ» թվականից, ինչպես որ և հոգն էլ ևս գերանունից: Այժմ ուր մնաց նմանությունը:

Արաբերենում բացառական հոլով կազմելու համար սեռականի վրա դնում են ۞ min նախդիրը, որ բոլորովին նույն է ըստ ձևի և ըստ իմաստի հայերեն -մեկ վերջավորության հետ, ինչպես հօր-մեկ, կնոջ-մեկ, ինձ-մեկ. սակայն այս երկուսի միջև ոչ մի կապ չկա. ըստ որում -մեկ երեք տարբեր մասերից է կազմված. մ նշան տրականի, Է նշան բացառականի, և որոշիչ հոգ:

Ինչ որ սասցինք լեզվից լեզու համեմատությունների համար, նույնը կարելի է կրկնել միևնույն լեզվի մեջ իրար նման հնչող գանազան բառերի համար: Օրինակ, զնին «քննություն» բառը նման է զենել «զարնել» բառին. այս նմանությունից հետևցնել, ինչպես արել է Մ. Ս. Գարրիլյանը («Հայք», 1892, № 1, էջ 4ա), թե զնին և զենել նույն են, իբր թե զննելը մի բան առամին զարնելով քննելն է, անճիշտ է: Արդարև, զենել բառի հին ձևն է զանել < զարնել < զարկանել < զ-հարկանել, որով արմատը կլինի զարկ, հարկ և սրա արմատն էլ հար. այժմ ու՛ր մնացին հար և զնին, որի և ձայնը (այն էլ կրկին) արմատական է, իսկ զենել բառի մեջ ածանցական:

* * *

Ստուգարանությունը իմանալու համար հաճախ հարկավոր է իմանալ սոցիալական այն կարգերն ու սովորությունները, որոնց արդյունքն է նույն բառը: Եթե չիմանալինք, թե կիսովայսիների մեջ մեկի վրա թքնելը օրհնություն մի ձև էր, չպիտի ըմբռնեինք, թե ինչ կապ կա marraq «շնորհավորել» և mārāq «թուք» բառերի մեջ (էջ 133): Պարսկերեն գործածում են čašm «աչք» բառը ամեն քաղաքավարական արտահայտության համար. արդ բառը նշանակում է «Ձեր սասժը կիտարեմ սիրով, շատ լավ, այն» և այլն. և ոչ մի լեզվաբան չպիտի հասկանար նրա ծագումը, եթե չիմանալինք, թե պարսիկը սովորություն ունի հարգանքի իբր նշան ձեռքը զննել աչքի վրա, ասել աչքելով, թե քո խոսքը այնքան եմ հարգում, որ աչքիս վրա եմ դնում, աչքիս լույսն է և այլն, ճիշտ ինչպես հայերեն էլ ասում ենք «զլիխս վրա» կամ քրդերեն «սեր ջավուն, սեր սերան»: Ընթեանում բառի (բղավել, կանչել) ծագումը հասկանալի չպիտի լիներ մեզ, եթե չիմանալինք, թե հնկերը սովորություն ունեին բարձրաձայն կարգալ (մտախոհ ընթերցումը շատ կարգացած մարդու գործն է. նորուսները միշտ բարձրաձայն են կարգում): Թուրքերեն bazar «կիրակի» անըմբռնելի պիտի լիներ մեզ, եթե չիմանալինք, թե նա ծագում է՝ պես միևնույն ալսուր Պոլսում կենդանի մնացող այն սովորությունից, որ կիրակի օրերը հալ և հուլն կեղեցիկների շորքը շարժական վաճառանոց է բացվում (պարսկերեն bazar «վաճառ»):

Կարճ խոսքով, ստուգաբանությունները չպետք է լինեն կամայական ու բանադրոսիկ: Երբ ստուգաբանելու համար առիւծ (հին ձևը առևծ) բառը դիմենք հնդեվրոպական նախալեզվի reg' (լատիներեն rex «թագավոր») «տիրել, կառավարել» արմատին, որ պիտի սար հայերեն անծ, ա-ի հենարանով առևծ, ավելացնենք մեր կողմից ւ (առևծ) և դուրս բերենք թագավորից մի գազանի անուն, օրինակ սոնելով պարսկերեն ՏՐ «առլուծ» բառը, որ ծագում է իբր զենդերեն xšī «իշխել» արմատից ինչպես ստուգաբանեց Ղափանցյանը (Տեղեկատու ինստիտուտի, 2, 106), կատարում ենք շատ կամայական ստուգաբանություն: Իրավունք չունենք մեր կողմից որևէ ւ ավելացնելու. պարսկերեն ՏՐ «առլուծ» բառի ծագումը «իշխել» բալթից առաջարկել է Գարմատեոսը (Etym. iran. I, 106), որ հիշում է Հոսնը (§ 803), բայց չի ընդունված լեզվաբանների կողմից և Բարթոլոմեն իր բառարանում ամենին չի էլ հիշատակում այն: Այնպես որ համեմատությունն իսկ անգո է: Շատ ավելի բնական է զենել առևծ հնդեվրոպական նախալեզվի reug' «մանչև» արմատից, որից ունենք հունարեն ἐργάζομαι «մը-արնչելով», արձղ՝ «մանչյուն», լատիներեն rugis «առլուծի մանչևը», միջին իտալերեն «մանչյուն», անգլոսաքսոներեն reoc «վալրի, վալրենի»:

Բուլանրիսի բարբառում հալաւ նշանակում է «գաշտան», շատ բնական է, որ սա հալաւ «շոր» բառն է, ինչպես որ նոր Բալագետի բարբառով ևս ասվում է շոր լինել գաշտան ունենալ: Թողնել այս ամենահասարակ ու բնական բացատրությունը և վեր կենալ հալաւ կապել շարաւ «թարախ» բառի հետ, սրանից հետևյալ թե շ գառնում է հ և ր գառնում է ւ, իբրև «հնէարանական մնացորդ հայերենում», չափազանց բանադրոսիկ է, ինչպես արել էր Ղափանցյանը (Տեղեկատու ինստիտուտի, 2, 85):

Ազդից ստուգաբանությունները նրանք են, որ իրենք իրենց ներկայացնում են մեզ և առանց ճիշտ համոզիչ են մարդկային մտքի համար: «Գտի՛ր ստուգաբանությունները, մի փնտրի՛ր», — ասում է մի նշանավոր լեզվաբան՝ Finde etymologien, suche sie nicht! (Leospitzer):

Մի բառը կամ մի հնչյունը ինքնին ոչինչ բան է. բայց ամբողջ լեզվաբանությունը այս ուշինչ բաների վրա է հիմնված: և, կ, զ ձայները ի՞նչ են ներկայացնում ինքնին. շատ աննշան բան. բայց տես՛ք նրանց փոխանակությունը ինչեր կառաջանան:—Աւազակ-ը կդառնա աւազակ, և աւանակ-ը կդառնա աւազակ: Ան-

նշան բաներ են սրանք: Ահա թե ինչու կարելի չէ առևծ բառի մեջ ւ փոքրիկ տառը արհամարհել և մոնչող գազանը թագավոր (rex) դարձնել:

Բուրբ քննությունների ժամանակ, մեզ հետ ձեռք-ձեռքի պիտի գնա բառի ներքին կողմը, այն է իմաստը կամ նշանակությունը: Ստուգաբանողը պետք է միշտ ի նկատի ունենա, որ բառի իմաստը կարող է աչքան փոփոխվել և հետևալ նախկինից, որ այլևս սրա և նրա միջև ոչ մի նմանություն մնացած չլինի: Այստեղ մեզ պետք է օգնություն հասնի իմաստաբանությունը և լուսաբանի մեզ, թե արդյոք այդ տարրեր իմաստների մեջ ծագման նույնություն կա՞: Ավելացնենք և այն, որ ինչպես բառի ձևի, նույնպես և նրա նշանակության մեջ պետք է փնտրել ու գտնել միշտ նախնական նշանակությունը. այսպես խորան, հրեշտակ, պատարագ և այլն:

Երբեմն պատահում է, որ բառը հայանի կերպով նմանություն ունի մի արիշի կամ արիշների հետ, թե նշանակությամբ և թե ձևով. միայն կա մի փոքր շեղում ձայնական օրենքների մեջ. այս պարագային լեզվաբանը իրավունք ունի կամ ենթադրելու մի հին գավառական ձև, իբր կրկնակ առաջինի, կամ ձայնական օրենքների մի բացատրիկ ձև, որ դեռ իր մանրամասնությամբ կամ արիշ օրինակներով մեզ ծանոթ չէ:

Աստուգաբանական պետք չէ կարծել, թե մարդկային միտքը մեր ներկա հնարավոր միջոցներով կարող է ամեն ինչ լուծել, և հետևաբար պետք չէ ջանալ ամեն զնով ամեն բանի մի բացատրություն տալ, ամեն բառի մի ստուգաբանություն հարմարացնել: Ավելի լավ է և գիտնականին պատշաճ՝ շատ անգամ ընդունել, թե չգիտենք: Քառասուն տարի է սովորաբանները աշխատել են մեկնել ֆրանսերեն aller բառը. առաջարկվել են բազմաթիվ մեկնություններ. բայց հակառակ այս բոլորի, ֆրանսիական այնպիսի հարուստ գրականության, այնքան բազմաթիվ բարբառների, ցեղակից լեզուների առաստալից և այլն, բառը դեռ մնում է անստույգ*: Իտալիա բառը, հակառակ բոլոր լատինագեաների ջանքերի, ստուգաբանորեն մնում է անծանոթ և հայանի չէ սրտեղից է ծագում:

* Այժմ մեկնում են լատիներեն ambulare բառից, որ ասել է իտալերեն andare, պրոֆանոսուլ anar, ֆրանսերեն aller (Meillet, MSL 19, p. 283):

Ամեն լեզվի մեջ էլ գեա կան շատ ու շատ բառեր, որոնք գեա առանց մեկնություն են մտնում: Շատ լեզուների մեջ տարածված race, baron, zinc և այլն բառերը բացատրված չեն:

Բացի հասարակ բառերից, լեզվի մեջ ունենք նաև հատուկ անուններ՝ անձնական և տեղական: Սրանք երկու կարգի են բաժանվում. կամ այնպես պարզ կազմություն ունեն, որ միանգամից աչքի են խփում և գտնում իրենց մեկնությունը (ինչպես Ատառածառուր, Հայրապետ, Տոնապետ, Յամաքաբերդ, Ձիթահող, վարազարոյս) և կամ այնպես տարօրինակ են, որ ոչ մի ձևով չեն բացատրվում (ինչպես Մասիս, Արագած, Արարս և այլն): Այս կարգի բառերը շատ կարևոր են. նրանք մեզ պատկերացնում են այն բոլոր շրջանները, որոնցից անցել է երկիրը: Նրանք մնացորդներ են բոլոր հին ազգերից, մեծ մասը կորած: Նրանց հավաքումը և ուսումնասիրությունը պիտի առ մեզ որոշ ավյալներ կորած լեզուների մասին: Իսկ մեկնել նրանք այս կամ այն ծանոթ լեզվով՝ գիտական անխոհեմություն է. այդ ստուգարանությունները հակասում են օրենքին հենց այն պատճառով, որ ունեն միայն բառի արասքին կողմը առանց ներքինի, այն է՝ ձևն առանց իմաստի, արիշ խոսքով դարկ են կոնստրուկցի:

Ամեն մի հատուկ անվան ստուգարանությունը ընդհանրապես ենթադրական է:

Կան քննիչներ, որոնք ոչ միայն այս կամ այն հատուկ անունը զուգադրում են մի արիշի հետ, այլև տալիս են նրանց գտնադան ստա իմաստներ և գրանից հետո գեա եզրակացություններ էլ են հանում: Օրինակ, Ատրպետը, իր մի շրալի աշխատություն մեջ («Ճորտի աւազանը», Վիեննա, 1929, էջ 64—66) սումեր-ակիադյան աշխարհագրական անունների հետ է կապում Հայաստանի ավելի քան 60 տեղագրական անուններ, որոնց ոչ մեկն էլ չունի ոչ մի հիմնավորում, բացի այս կամ այն տառի պատահական նմանությունից: Ուրիշ մի լեզվաբան գերմաներեն gold «ոսկի», geld «գրամ» կապում է մի կողմից կելտ ժողովրդի անվան հետ և մյուս կողմից հայերեն Գողթն գավառի հետ: Եթե այսպես է, ինչու չշարունակենք Գողթն, գաղթ, Քաղղեա, Խաղաիք, Գաղատիա, Կալաթա (Պոլսի թագերից), Կալկաթա, Գողգոթա, կուլտուրա, Քելքիթ, բիլիս, կեղա, գաղա, և այլն, և այլն, և այլն: Սրանք անարժեք բառախաղեր են և ոչ գիտություն: Եթե մենք թույլ տանք մեզ արգլիսի երեխայական համեմատություններ անել, կարող ենք աշխարհիս բոլոր հատուկ անունները ուզած լեզվից գուրս

բերել, օրինակ՝ հայերենից: Ահա ձեզ մի նմուշ արգլիսի անմիտ համեմատությունների, որ ևս սարքել եմ զվարճությունների համար.

- Ամսաերգամ — համա գեա տամ.
- Անդլիա — անդդ լի ա.
- Բարցելոնա — բարձր լայն ա.
- Բրազիլիա — պրասը լի ա.
- Էդինբուրգ — ետին բուրգ
- Լիոն — լի է հոն.
- Կերչ — կիրճ (նեղ անցք)
- Հունդարիս — հում գարի ա.
- Ճապոն — ճալիլի բույն
- Մոսկուս — մի ոսկի ա և այսպես ինչքան ուզեք:

Թե հատուկ անունների ստուգարանությունը սահասարակ կասկածելի է՝ երևում է հետևյալ հանգամանքից. օրինակ՝

Հայերեն բազ բառը մենք կարող ենք համեմատել ֆրանսերեն pâte «խմոր», patte «տառիկ», pat «ճատրակի մի խաղ», pâti «համեա», bâti «շինվածք», batte «ծեծ», լվացքը թակելու սեղան, կարազ հարկու գավազան», batz «15 սանտիմանոց մի դրամ», անգլերեն bad «վառ», bade «հրամայեց», bath բազանիք, bet «գրավ», bed «անկողին», pat «ճիշտ, հարմար, շուկել, սիրել, շերտ», pate «խելապատակ», pet «սիրունիկ», պարսկերեն bād «քամի», արաբերեն ba'd «հետո» բառերի հետ, բայց այս բոլորից ոչ մեկը ընդունելի չէ, որովհետև իմաստի նույնություն չկա, իսկ հենց որ համեմատենք ասորերեն battā, արաբերեն batl, պարսկերեն bał, բրդերեն bet, չեչեներեն bād, վոզուլերեն batta, վրացերեն բատի, արմաներեն pate և այլն բառերի հետ, բոլորն էլ ընդունելի են, որովհետև ձևի հետ նաև իմաստով նույն են, նշանակում են «բազ կամ սազ»:

Հատուկ անունների մեջ չկա այսպիսի երևույթ, որովհետև նրանց իմաստը հայտնի չէ: Օրինակ, Հայաստանում կա մի գավառ, որ կոչվում է Շակաշեն, պարզ է, որ այս բառը կազմված է շեն, շինել արմատից՝ շակ բառով: Բայց ի՞նչ է այս Շակը:

1. Ստարբոնը գեա I գարում (ծնվել է մ. թ. ա. 63 թ. և մահացել մ. թ. 21—25 թ.) այս բառը մեկնում է սակ կամ շակ ազգի անունից. նա գրում է Σακασηνί (սեա իմ Ստարբոն [Հայոց մասին], Երևան, 1940, էջ 36—37): Այս ստուգարանությունը շատ լավ է համարվում և ընդունված է մեր մեջ: Բայց հայերեն շեն

իրանյան փոխառություն է (պահլավերեն *šēn, սոգդիերեն šēn) և նրա հնութունը գնում է մինչև I դար (անս իմ Հայոց լեզվի պատմություն, I, 236). մինչևև սակերի կամ շակերի արշավանքները գնում են մ. թ. ա. IV, VI, VIII դար: Այս երկուսը ինչպես պետք է հաշտեցնել իրար հետ:

2. Ստրաբոնը գրելով Տառտղոն, գիտմամբ թե պատահամար նույնանգ է դուրս բերում Խորհան (Շորհոն), Կամիսեն (Կարիսոն), Ազիարեն ('Αδιαβην), Ատրոպատեն ('Ατροπατηνή), Արաբսեն ('Αραβην), Արսեն (Αρσην), Գորգիսեն (Γοργων), Գուգարք (Γωγαρην), Դերջան (Δερσην), Եվեղիք ('Αχιλοσην), Լաւիանսեն (Λαυσιανσην), Ծոփք (Σωφην), Կամեսեն (Καμισσην), Կամբիսեն (Καμβσην), Կասպիան (Κασπιασην), Կոմիսեն (Κομισσην), Կոմագեն (Κομμασην), Կուլուպեն (Κωλοσην), Մանտիան (Μαντιανή), Մատիան (Ματσην), Մելիտիան (Μελιτηνη), Որքիստեն (Ορχιστην), Սիդեն (Σιδην), Սոգդիան (Σογδιαν), Փաւսեն (Φασην) տեղանունների հետ, որոնք բոլորը կրում են -են վերջավորությունը: Արեւմն Շակաշեն բառի արմատն էլ լինում է Շակաշ:

3. Եթե Արշամ անունից կարող է ծագել Սամուսա կամ Շամոշաա քաղաքը, կարող է ուրեմն Շակաշենն էլ ծագել Արշակաշեն ձևից, որով այս բառի արմատը կլինի Արշակ: Ահա երեք կարելի ենթադրություն միմիայն հայերենով մի հատուկ անվան մասին: Իսկ եթե ուզենալինք վրացերենով, խաղերենով, հայերենով կամ որևէ կովկասյան լեզվով ստուգաբանել այն, տեսնք, թե քանի՞քանի՞ նոր ստուգաբանություններ կարելի կլինեն առաջարկել:

Այս բոլորը զուր և անօգուտ փորձեր են և ոչ մեկը կարելի է ճիշտ համարել, որովհետև հատուկ անունը իմաստ չունի, որպեսզի ձևի վրա կոտորու լինի:

Առնենք Արմենիա բառը, որքան սուտ ու սխալ մեկնություններ են տրված այս բառի մասին, սկսած հար միննի ձևից մինչև Հարամանի կամ Խարամանի և կամ նորերս էլ դուրս եկած Արմեն ձևը:

Խոսելով ընդհանրապես հատուկ անունների և հատկապես germani «գերմանացիք» բառի ծագման մասին, Մելեն (BSL 68, p. 93) ասում է. «Այս տեսակ բառերի մասին կարելի է անել միայն անապացուցելի ենթադրություններ, նույնիսկ եթե ճիշտ էլ լինեն, և նրանցից ոչ մի եզրակացություն չի կարելի հանել»:

Շատ զրուշալի է գրազվել տեղանունների ստուգաբանությունը, նրանցից շատերն անբացատրելի են, որովհետև ծագում են նախապատմական ժամանակներից և նույնիսկ հայտնի չէ, թե ինչ լեզվի են պատկանում: Այսպես, մեզ համար սովորական ազգերի և տեղերի անուններից հայ, ռուս, թուրք, վրացի, լազ, պարսիկ, Բանաբեռ, Երևան, Օղեսա, Կիև, Քիշեն, Հնդկաստան, Զինաստան և այլն անհայտ են:

Տեղանուններից նրանք, որ պատմական ժամանակի ծնունդ են և հայտնի է, թե որ լեզվից են, հեշտությամբ են բացատրվում, ինչպես՝ Աֆրիկա (հունարեն «ոչ-ցուրտ»), Ցամաքաբերդ, Օնուկ, Ախալքալաք (վրացերեն «նոր քաղաք»), Ախալցխա (վրացերեն «նոր բերդ»), Հիմալայա (հնդկերեն «ձյունալիր»), Սինգապուր (հնդկերեն «առյուծաքաղաք»), Գյուզել-Հիսար (թուրքերեն «գեղեցիկ պարիսպ»), Խուռնաբաղ (պարսկերեն «ուրախ շեն»), Բորզո (ֆրանսերեն «ջրի ափին»), Տուապս (ափսազերեն «ջրի եզրը») և այլն և այլն:

Շատ անգամ տեղանունները միեւնույն նշանակություն ունեն և միայն լեզվով են տարբեր, օրինակ՝ ուսուրեն Սուխոյ-Ֆանտան և տանկերեն Քուրուշեշմե միեւնույն նշանակություն ունեն և առաջինը ուսուրեն, երկրորդը տանկերեն նշանակում են «չոր պղբուր»:

Ճապոնիա նշանակում է «արեւելք» (չինարեն ժա «արև» և պըն «եւք» բառերից), Խորասան նշանակում է «արեւելք» (պարսկերեն خور «արև» և āsān «եյնող» բառերից), Անատոլիա «արեւելք» (հունարեն ανατολία «արեւելք» բառից), գերմաներեն österreich = Ավստրիա «արեւելյան թագավորություն» (գերմաներեն ost «արեւելք» + reich «թագավորություն» բառերից) և այլն: Այս բոլորը միեւնույն նշանակություն ունեն, այնպես որ եթե ասեինք, թե Ճապոնիան, ինչպես և Խորասանը, գտնվում են Անատոլիայի արեւելյան կողմը, իսկ Ավստրիան՝ Անատոլիայի արեւմտյան կողմը, դա ստուգաբանորեն միեւնույնը կլինեն, եթե ասեինք, «Արեւելքը, ինչպես և արեւելքը, գտնվում են արեւելքի արեւելյան կողմը, իսկ արեւելքը գտնվում է արեւելքի արեւմտյան կողմը»:

Շատ քաղաքներ կամ գյուղեր կան, որոնք տարբեր լեզուներով նշանակում են «նոր քաղաք կամ գյուղ», ինչպես՝ հայերեն՝ Նորաքաղաք (=Ղաղարշապատ), Նորազոլուղ, ուսուրեն Նովգորոգ, թուրքերեն Ենիշեհիր, Ենիքոյ, Թագաքենդ, անդերեն New Town, վրացերեն Ախալքալաքի և այլն և այլն:

Հայկայ քաղաքի անունը ժողովուրդն ստուգարանում է արաբերենն haleb «կաթ» բառից: Ըստ ավանդություն, իբր թե Բեթղեհեմի մանուկների կոտորածի ժամանակ, Մարիամ Աստվածածինը վերցրել է Հիսուս մանկան և Հովսեփի հետ փախցրել Եգիպտոս: Ճանապարհին մի տեղ կաթը թափվել է Մարիամի ստիճից և այդտեղ հիմնվել է Հայկայ քաղաքը: Ոհ, կարի է առասպելա, այլև առասպելաց առասպել: Հայկայ քաղաքը գտնվում է Երուսաղեմից դեպի Նյուսիս մի քանի օրվա ճանապարհ հեռու, ուր Մարիամը երբեք չէր կարող օտք կոխած լինել Եգիպտոս փախչելու ժամանակ: Հայկայ բնեագրերի մեջ հիշված է Խլիլպպա ձևով՝ Քրիստոսից հազարավոր տարիներ առաջ:

Արարիլիրը մի քաղաք է, որ ստում են, թե Արծրունյաց դադթականություն ժամանակ է հիմնադրված: Տեղացիք այս անունը ստուգարանում են իբր թե թուրքերեն arab «արաբ» + gir «ժամիր» բառերից: Եթե արարենին են մտել VII դարում է, եթե բառը թուրքերեն է՝ XII դարում է, իսկ Արծրունիները XI դարում են: Թե սրքան փոփոխական են տեղանունները, այդ ցույց է տալիս հենց Արարիլիր բառը, որ մեզ մոտ դարձել է Ալարիլիր, իսկ պատմականորեն հնչում են Արարդեդ, իբր թե «արարի գյուղ»:

Ազգերի, երկրների և լեզուների անունները կարող են պատահաբար իրար շատ նման լինել, բայց այդ երևույթը խարուսիկ է և դրանից չպետք է հետեցնել, թե դրանք ցեղակից են՝ իրար կամ նույն երկրի անունն են, այսպես՝

Armenia (Հայաստան) անվան հետ նման են Ruminia (Ռումինիա), Araméen (Արամայեցիք) և армянский և (Էվեն=լամուա) ասենդուզական մի ցեղի անուն (Цинциус, 7): Մարբրունն էլ արամայեցի, արաբ և Արմենիա իրար ցեղակից է համարում:

Ասորիք անունը նման է Ասորեստանին:

Իրար շատ են նման Սպեր, թուրքերեն Իսպիր և Սիրիր ասենունները: Աֆրիկայում, Կոնգոյի և Մուզանի կողմերում կա մի ժողովուրդ, որ կոչվում է դանդե կամ պադանդե, այս բառերը սրքան նման են հնչում իրանական զենդ ու պազենդ լեզուներին, բայց ո՞վ է մտածել այս երկուսը իրար միացնելու մասին:

Աֆրիկայում կա մի լեզու, որ կոչվում է էվե և որ շատ կարևոր աղբյուր հանդիսացավ աֆրիկյան լեզուների քննություն մեջ: Մայրաքաղաքն Արենլքում ասենդուզական երկու լեզու կա ճիշտ նույն անունով՝ Էվեն և Էվենկի. բայց առաջինի և սրանց միջև ոչ մի կապ չկա:

Զոկ անվամբ մի լեզու կա Ամերիկայում (Մեքսիկա), բայց ի՞նչ կապ կարող է լինել սրանց և մեր զոկերի միջև:

Այսպես են նաև Բալկանների Ալբանիան և Կովկասի աղվանները (Ալբան) կամ աֆղանները, նույնպես հին Իսպանիայի անունը՝ Իրերիա և Վրաստանի Իվերիան:

Որքա՞ն նմանություններ են գտնում բնեագրեաները խաղչյան որևէ գյուղանվան և արդի աշխարհագրական անունների միջև: Իրենք հավատում են, բայց մեկ էլ մեկ հարցրեք: Հիթիթների մոտ գտնվեց Հայաշա անունը, որ համարում են Հայաստան: Դեռ մեկը չի մտածել նմանեցնել այս բառը Կիլիկիայի Այաու նավահանգստի հետ, որ այժմ կոչվում է Այաշ կամ Յուսուրբալը:

Բացարձակ պատահական նմանություն ունեն Սև ծովի մոտ Բուրայիսի քաղաքի անունը և ռուսերեն ԿИТАЙСКИЙ (չինական):

Նորերի ձևերով կազմված անուններ են ինդոս (բնիկ ամերիկացի) և ԱՄՆ-ի նահանգներից մեկի անունը՝ Ինդիանա, որոնք նույն են հնդկի և Հնդկաստան անունների հետ:

Ոմանք Կովկասի Աղուանք երկրանունը կապեցին Աֆղանիստանի հետ, բայց այդ երազը իսկույն կհալվի, եթե մտածենք, թե առաջինի մեջ $\eta = 1$ (1), իսկ երկրորդի մեջ η զուտ η է:

Ակնբախ նմանություններ կան Սամարա, Սամարիա, Սամարղանդ և Ջմառ (վանք Լիբանանի լեռներում), Սահարա, անունների, Լիբանանի և Ալբանիայի, Աստարայի, Աստորիայի և Ալստարիայի միջև և այլն:

Ազգանուններն էլ, իբրև հատուկ անուն, ենթակա են այլընդալու ստուգարանության: Այսպես, Երեանի մեր համալսարանի դասախոսներից հավաքել եմ հետևյալները.

Ռեկտոր Հակոբ Հովհաննիսյանը պատմեց, թե Շուշում կար մի հայ՝ Նիկրչյան ազգանունով: Պրոֆ. Մատին առաջարկել էր տալ այս ազգանվան ծագումը: Մտոր իսկույն խաղչյան բնեագրերի լեզվով գտնում է մի բառ և դրանից հանում այդ ազգանունը: Մինչդեռ ազգանվան ծագումը հետևյալն է եղել:

Ռուսները նոր էին մտել Շուշի: Մի զինվոր մտնում է մի հայի այգի և սկսում է խաղող ուտել: Տերը վրա է հասնում և սկսում է բղավել զինվորի վրա: Զինվորն ասում է. „Не кричи!“ (Մի բղավիր): Հայը կարծում է, թե հայհոյանք է, ինքն էլ նրա վրա է բղավում «Նիկրչի» և այսպես իրար վրա «Նիկրչի» բղավելով՝ զինվորը գուրս է գալիս: Հայը գնում է թափխանան և ամենքի առաջ պատմում իր քաջագործությունը: Դրանից հետո նրա և նրա գերդաստանի անունը մնում է Նիկրչոնք, Նիկրչոնց:

Համարարանում ունենք Անասյան ազգանունով մի բանասեր: Հարցրի նրան այս ազգանվան ծագումը: Նա պատմեց, թե իր պապը եղել է սահավախոս մարդ. ուստի կոչել են Սոյլեմեզյան (թուրքերեն «չխոսող»): Իր հաջորդները հայերենի թարգմանելով այդ անունը, դարձրել են Անասյան, այսինքն «չասողյան»:

Սերաստացի մի դասախոս կոչվում էր Ութմազյան: Հարցրի ազգանվան ծագումը: Պատմեց, թե պապը սովորություն է ունեցել զիշերները ձիով ճամբորդել գյուղերը, որով շներին հանդիստ չէր տալիս. ուստի անունը դրել են իթ—ուլուքմազյան (շներին քնել չտվող). այս երկար և անհամ անունը կրճատելով, նույն դասախոսը հորինել էր Ութմազյան ձևը, որ ամենքս էլ բնականաբար հասկանում էինք «ութ մազ ունեցող»:

Բանաստեղծ Նաիրի Զարյան ուսանող ժամանակ մատաններում արձանագրվել էր Հայաստան եղիագարյան. խոսափելով Հայաստան անունից, դարձրեց Նաիրի, իսկ անշնորհք եղիագարյան ազգանվան շնորհք տալու համար, կրճատեց և դարձրեց Զարյան:

Հայտնի է, որ այս ձևով է կազմված Պետրոս Դուրյան ազգանունը, որ առաջ եղել է Զրմազյան (թուրքերեն զրմպա նշանակում է դուր «երկաթ ծակելու գործիք»), իսկ Դուրյան—Արմենյան հայտնի գերասանուհու ազգանունը առաջ եղել է Դանդուրյան (վրացերեն «փրփրեմ—բալսը»), որ ամուսինը կրճատելով դարձրել է Դուրյան:

Մալխասյան ազգանունը թվում է պարսկերեն մալ-ի-խաս «ընտիր ապրանք» բառից է:

Կարծվածից ավելի է թիվը այնպիսի մարդկանց, որոնց համար երկու պատահական բառի մի կամ երկու բաղաձայնի (կամ նույնիսկ ձայնավորի) թեթե նմանությունը և նշանակության մի հեռավոր նմանությունը բավական են ստուգարանությունն իր հաստատ ընդունելու: Այսպես, հայերեն խաղող նույն է վրացերեն դուրձնի բառի հետ, պակուց (թռչունը) ծագում է մարգարե բառից, հայերեն Հառիճ հատուկ անունը ծագում է կաղնի բառից և այլն (այս բոլորը Մառի ստուգարանություններն են): Եթե այսպիսի նմանությունների վրա հիմնվելով ուղենանք հաստատել բառեր, անկարելի կլինի չապացուցել որևէ գաղափար, որ երբեիցե կարող է անցկենալ մարդկային մաքով: Այս բոլորը ստուգարանական կեղծիք է և ինքնախաբեություն: Որպեսզի ստուգարանությունը արժանի լինի իբրև հաստատ ընդունվելու, պետք է որ

հնչյուն առ հնչյուն բոլոր ձայները համապատասխանեն իրար և համաձայն լինեն ձայնական օրենքների բոլոր պահանջներին: Որքան երկար են համեմատելի բառերը, բնականաբար այնքան էլ հաստատուն է ստուգարանությունը, որովհետև ապացույցների թիվը ավելի է. երբ նմանությունը գտնում ենք չորս հնչյունների մեջ, բնականաբար ստուգարանությունը ավելի ապահով է քան թե երեք հնչյունների մեջ լիներ, և երեք հնչյունների նմանությունը ավելի ապահով է, քան եթե երկու լիներ. և այսպես, եթե բառերը շատ կարճ են, այլևս պատահականություն հավանականությունը բարձրանում է և համեմատությունն էլ դառնում է խախտա:

Վերևում ասացինք, թե համեմատությունները պիտի լինեն միևնույն լեզվական ընտանիքի զանազան անգամների միջև. որևէ լեզվից մի որևէ բառ համեմատել և գուզադրել ոչ ցեղակից մի լեզվի այս կամ այն բառի հետ՝ ի հառաջագունեց դատապարտված է: Չուզադրվածները տարբեր ցեղի լեզուների միջև կարելի է միայն այն դեպքում, երբ մեկը մյուսից փոխ է առնված կամ ուղղակի և կամ մի երրորդի միջոցով: Բայց այդ դեպքում հարկավոր է ապացուցել փոխառությունը պատմական և այլ միջոցներով:

Ամեն մի վերիվերո համեմատություն իբրև ճշմարիտ ընդունող մարդկանց Վիտենլը (La vie du langage, 257) նմանեցնում է մի բնագետի, որ իրար հետ պիտի համեմատեր և միասին պիտի դասակարգեր կանաչ տերևները և կանաչ թուղթը և միջատների կանաչ թեերը և կանաչ քարերը:

Լեզվաբանությունն իհարկե մաթեմատիկա չէ և կարելի չէ սպասել նրանից այն բացարձակ ճշտությունը, որ գտնում ենք մաթեմատիկայի և ճշգրիտ մլուս գիտությունների մեջ: Բայց այս հանգամանքը չպետք է սախի մեզ, որ ամեն բոլոր վեր կենանք և հավանական թվացող ստուգարանություններ ստեղծենք:

Առհասարակ ստուգարանությունը կարելի է երեք տեսակի վերածել.

1. Բոլորովիճ ճիշտ ստուգարանություններ. այս կարգին են պատկանում ճայր, մայր, քոյր, եղբայր, մի, ճիճ, տասն և այլն բառերի ստուգարանությունները: Կասկածել այս կարգի բառերի ստուգարանության վրա, նշանակում է չընդունել լեզվաբանական գիտության գոյությունը և առհասարակ չհավատալ որևէ բացահայտ ճշմարտության:

2. Հավանական ստուգարանություններ, այս կարգին են պատկանում այն բառերը, որոնք վկայվում են միայն 1—2 լեզվի մեջ:

3. Անհավանական և միայն կարելի ստուգարանություններ: Չպետք է երբեք հիմնվել այս վերջինների վրա. ճշտությունը հասցնում է մեզ հաստատուն և զրական օրինքների. իսկ կարելիությունը ոչ ապացույց է և ոչ օրինք*:

* Ստուգարանության մասին տե՛ս նաև ԻՖ՝ զլխի («Անմիջական և նմանողական ձայնափոխություններ») 16-րդ՝ «Ժողովրդական ստուգարանություն» և 17-րդ՝ «Գիտական ստուգարանություն» հատվածները:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԵՐԻ ՏԱՐԲԵՐ ԳՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1898 թվականին, երբ պարապում էի պրոֆ. Հյուբշմանի մոտ (Ստրասբուրգ), նա պարտականություն դրեց իմ վրա, էջմիածնի հնագույն ձեռագիր Ավետարանների մեջ ստուգել մի քանի հայերեն բառերի կասկածելի գրչությունը. այսպես՝ մօրուֆ կամ մօրուֆ, ցօղ կամ ցոլ, ցօղուն կամ ցոլուն և այլն:

Մեյն հայագետն էլ զանազան առիթներով խոսել է այն մասին, թե անհրաժեշտ է հավաքել հին հայ ձեռագրերի մեջ գտնված վրիպակները (տե՛ս հատկապես «Հայ բարբառագիտություն», էջ XII): Ինքն էլ, էջմիածնում եղած ժամանակ, գրել է այս կարգի վրիպակների մասին մի հոդված:

Հյուբշմանի պատվերը իր մասնականից հետո ես իբր կտակ ընդունեցի և իմ Արմատական բառարանի մեջ ոչ թե միայն այն մի քանի բառերի, այլ բոլոր հայերեն բառերի տարբեր գրչությունները նշանակեցի՝ քաղելով նոր Հայկազյան բառարանից (ՆՀԲ) և ուրիշ զանազան բառարաններից:

Այժմ Աշոտ Սուքիասյանը, պրպտելով ամբողջ Արմատական բառարանի 6 հատորները, քաղել է բոլոր հայերեն բառերի գրչության տարբերակները՝ այբուբենական կարգով:

Տալիս ենք այստեղ այդ ամբողջական բառացանկը:

ԲԱՌԵՐԻ ՏԱՐԲԵՐ ԸՆԹԵՐՅՎԱԾՆԵՐ

աալուսան, այալուսան
աբբա, արբայ
աբեղայ, հարեղայ, խարեղայ,
կրճատ՝ արեղ

ազանիմ, հազանիմ, հազնիլ
ադամանդ, ադամանտ, անդամանդ,
ամանդ, անդամանտ
Աղեն, Աղին

Աղոնա, Աղովնա, Աղոնայի, Աղովնայի
ազար, ազապ
ազրն, ասրն, ասպն
ազդր, ասդր
աթարէկ, աթարեկ, աթարակ, աթապակ
Աթխար, աղխար, օթխար, իթխիր
աթութայ, աթրութայ
ալաժահճի, ալաժարի
ալաունք, ալաունք
ալէլու, աղէղու, ալէլուիա, ալէլուիայ
ալիւր, ալիւր
ալփարեա, աղփարեա
ախախիա, աղաղիա, խախիա, կակիա
ախաւեղազէս, աճաւեղազէս, խաւեղազէս, աղաւաղազէս, աղխաղէազէս, ճաւեղազէս
ախժիք, ախժինք
ախմար, աճմար, աղամար
ախնթոր, աղնթոր, աղխնթոր, յախընթոր, յաղխնթոր, յաղընթոր
ախոյնան, ախոյնան
ախունա, աղխունա, ալկունա, արխունա
ախտար, աղխար
ախտարմոլ, ախտարմող, ախտարմալ, ախտարմախ. ուղիղն է՝ ախտարմար
ախցիփեխց, ախցիփեղց, աղցիփեղց, ալժմ՝ ափեղցփեղ
ածուխ, ածուղ
ականդուկ, ակընդուն (բույսը)
ակատ (քարը), ագաթէս, ագաղէս, յակաթ
ակատ (մակուշկ), ակատրիոն
ակիր (խոտը), էգիր, էկիր

ակողութ, ակալութ
ակոնիտոն, ակոնիտովն, անկոնիտովն
ակումիտ, ակիւմիտ
ակտար, ակտար
ակրկարճայ, աքիկահճայ, ակիրկարճա, ախրկարճա (խոտը)
ակբան, որող, էկբան (փուշը)
Աճեկան, աճկի (ճին ճայոց իններորդ ամիսը)
աճիահ, աճյահ (աստված)
աղարողոն, աղէբողոն, աղարողովն, աղարանոս, աղարողոն, զարողոն, զարողոնիկ, զարոնիկ, անաղափ, անաբող, անափող, բողոն կամ բուղոն
աղագ, եղագ, եղանգ, յաղագս, յաղակս
աղանդեր, աղընդեր, աղանտեր
աղանձել, աղնձել, աղնձել,
աղարիկոն, ախարիկոն, զարիկոն
աղբիւ, աղբիւսք, աղբիւ, աղբես. աղբիսք
աղբիւր, աղբեր, աղբեր
աղեկատ, աղէկատ, աղէկանդ
աղթաման, աղցաման
աղշիկ, աղճիկ
աղխմայ, եղամա
աղխ, ախ
աղկաղկ, անկաղկ
աղկիոն, աղկիովն
աղուրի, աղուրայ, աղօր (սերունդ, որթի ճշուղ)
աղտոր, ախտոր, աղտուր (սումախ)
աճառ, օճառ, աճառ
աճաս, աճաղ
աճուռ, աճուր, ճաճուր
աճպարար, աճապարար

աճոնել, աճընել (տրորել)
ամաղթեղջիւր, մաղթեղջիւր
ամարանոց, ամարայնոց (զլիւղարդ)
ամբար, ամպար, ճամբար
ամբարիշտ, ամպարիշտ, անբարիշտ
ամբարճաւաճ, ամպարճաւաճ, ամբարաճաւաճ
ամբարտակ, ճամբարտակ, անբարդակ
ամբարտաւան, ամպարտաւանիլ
ամբատ, ամբոյտ, անբոյտ, ամպոյտ (խլուրդ)
ամբիոն, ամպիոն, անպիոն, ամբոն, ամպոն
ամբոկ, ամբովկ, անբոկ
ամեհճի, ամաճի
ամեթովս (քարը), ամեթիւստոս, ամեթոս, ամեթիւտրոն, ամթիւտրոն
ամիաս (խաղող), մենիաս
ամիր ալ մոմնիք, ամիր մոմնիք
ամիրաշխամ, ամիր իշխան
ամլաճ, ամլէճ
ամղան, ամաղան
ամուրի, ամուրեայ, ամօրեայ
ամպաճ, անպաճ, անապաճ, անապ, անպ
ամպրոպ, անպրոպ
ամփոփ, անփոփ
ալբեր, անբ
ալթիւ, աթիւ
ալիզոն, ալեզոմն, ալզոյն
ալլղան, էլղան
ալո, ալոյ, ճալո, ճալոյ
Ալրաս, Ալրասա
անաղանոս, անագան, անագնովս

անագորոյն, անագորոն, անագորոն, անագորովն
անաթեմայ, անաթէմա
անանուխ, անուխ, աննուխ, անանեխ
անառկել, անըռկել «զուալ»
անբրուր «կայսր», ումբուր, բմբուր, բնբուր, օմբրուն, օմբրութիւն
անգահ «անժամանակ», անկահ, յանգահ, յանգահիլ
անգղ «թուղունը», անկղ
անգղ «կանթ», անկղ
անգոյս «քացի», անդոսնել, անկոսնել, անկուսնել, անկուշնել կամ անկոշնել, անգուշել, անկուշել, անգուշնել
անգումատ «չարճոտ խեծը», անկումատ, անգժատ, անգօժատ, անկժատ, անկիւժէնա, էնկիւժէտ, անկումակ, անիշատ
անգուտան «բույսը», անճիտանն, անկիտան
անդ «արտ», ճանդ
անդանձել «մտածել», անդիճել, անտիճել
անդեայ «տավար», անդէորդ, անդիորդ, անդէաորդ, անդւորդ, անդիւորդ
անդորր «ճանգիտ», անդոյր, բնդոյր, անդոյր
անդրուար «լծած ձի», անդրովար, անդրվար, անդրավար, անդուար
անթիճիւպատոս «փոխ-ճուպատոս», անթիպատութիւն, անթիպատոս, անթիպատ, անթիպատ, անթիպատոս, անթիպատէ

անծեղ «թռչունը» անձեղ, անձեղն
անկան «սանդ», անգան
անկանիլ «բնկնել» անդանիլ, բն-
կանել
աննարուրդ «կոշկի երես», անկա-
նուրդ
անկին «բունջ», անգին
անհեթեթ, անհեղեղ
անձուկ «նեղ», անձուկ
անձրուիթ «խեժը», անզրուտ, անձ-
րուիթ, անզրուիթ
անճարա, անճորա, անճուրայ «ե-
ղիճ»
անուիթ, անիթ «թևատակ»
անշորան, անճորան «բույսը»
անքիլոս, անքիլոս, ենքեղէս «ձու-
կը»
անօսը «նուրբ», նօսը, անուսը
աշարայ, աշօրայ «համար»
աշխարհ, աշխահ
աշխարհաւանդ «պանդոկ», աշ-
խարաւանդ
աշխոյժ, աժխոյժ
աշմ «հասպիս», էաշմ
աշոգի «առանձին», օշոգի, ուշո-
գի, առաշագ, առոշոգի
աշտեայ «նիզակ», աշտէ, աշտէն,
աշտեան
աշտուճ «շոր հաց», աշտուշ, աս-
տուճ
ապակի, ապիկի
ապահարզան, ապահարզան
ապահիւպատ «փոխ-հյուպատոս»,
ապահիւպատ, ապահիւպատ, ա-
պուհիւպատ, ապահիւպատրա-
կի, ապուհիւպատոն, ապուրի-
պատ, ապահիւպատ
ապահիւպատիկոս «փոխ-հյուպա-

տոս», ապուրիպատիկոս, ապա-
իւպատիկոս
ապազաս, ապզաս
ապազարէ, ապարխարէ, ապար-
խօրէ, ապխոր «կոնք»
ապարա (արտաքնոց), ապարախ,
ապահար
ապարանջան, ապրանջան, առ-
պրնճան, ապարանջ
ապարասան «բմբոստ», ապերա-
սան
ապարթան, ապարթանել «խորի-
տանալ», ապրթանել
ապարքտիաս (քամին), ապար-
քտաս
ապելիտտ (քամին), ապելիտդ,
ապելիտդ, ապէլիտդ
ապենիադ, ապէնիադ (անկասար)
ապշուպ (շփոթութիւն) ապշեպ,
աշուպ
ապտպապ (պապի պապը), ապ-
պապ
ապուկալին, ապուկալամին, պու-
կալամին (կերպասը)
ապուտ, ապուր (կողոպուտ)
ապառան (խոտի կտոր), ապռան
ապոխտիկոն (հարավ), ապոխիկ-
կոն, պոտտիկոն, ապոտտիկոն
ապսպարել, ապսպարել, ապրս-
պրել, ապրսպարել, ապսպուա-
րել, ապսուարել
ապստամբ, ապստամբ
ապրզում (ծիու ոտք), ապարզում
ապրիլ, ապրիլ (ամիսը)
ապրիշում, ապրշում
ապրսամ «բալասան», ապրասամ,
ապուրսամ, ապրասագ, ապրը-
սագ, ապուրան

նիպտիքս «մուրհակ», նիպտիքս,
նիպտիկ
առակոուկ «հակառակող», առկը-
ուուկ, առակոուք
առէջ, առէլ (ոստայնի)
առիճ, առինճ, (զշուղ)
առիւծ, առեծ, առեաւծ, առոյծ
առլէղ, արալելղ, արալէղ, յարա-
լէղ
առոյգ, առոգ, ոռոգ, առուղ
առուոյտ, առվոյտ, առոյտ, ա-
ռուտ, առուտտ, առաւիտ, ա-
ռաւոյտ, առաւօտ
ասախ օրենք», արգելք, իսասախ
ասար (զրամ), ասարիոն, ասար,
ասարիա
ասեղն, ասիղն, ասեղ, ասիս
ասմաղուն (ծաղիկ), ասմաղուն,
ասմաղուն, ասմաճուն
աստրեակ (բույսը), աստրեկ, սո-
րեկ, աստրիկ, սորուկ, սորսո-
րուկ
ասպաղէն (ծիու սարք), ասպիղէն
ասպաղօլ (բույսը), ասպաղուղ
ասպանդակ, ասպանտակ, աս-
շատան, ասպատանդ, ասպա-
տանկ
ասպարէղ, ասպարէս
ասպուզան (ծաղիկը), ասպաղան,
ասպաղայ, ասրօսան, ասպո-
նան, ասպուզանուկ
ասպուր (ծաղիկը), ասպուտ, աս-
փուր, ասպուրուկ
աստախոտոս (ոճհան), աստա-
խօտօս, աստօխօտօս, ստախօ-
տօս, աստախտաւաւ, ստո-
խոտոս, ուստախտաւոլ
աստղարոն, աստղարան,

աստոտրոն, աստոտրոն, աստ-
ղոստրոն (աստաստրատիգայ
(զորապետ), աստարիտայք
ասրունճ (ներկ), ասրէճ
ասփողէլոն (շրեշ), ասփողէլու,
ասփոթիլոն
արած (սպի), առած
արական (ղեղնացավ), արեկան,
իրական
արահետ (ճամբա), առհետ
արանդուպարանդ (բույսը), ա-
րիտպարիտ
արաստոյ (քարը), արաղղոյ, և-
րաստոյ
արաք (ծառը), արաղ
արբենա (կախարդական բույսը),
ափրիանա, յարբենայ, տրբենա
արզանդ, արզանտ
(արգատ (որթատունկ յօղ), ար-
քատ)
արգաւանդ, արգեանդ
արգուխա (բույսը), արգուղա, ար-
թուղա, արթուխա
արեկ (զորավոր, սասախիկ), տրեղ,
առեղ
արթը (քերականական հոդ) աթը
արծուէսք (արքեպիսկոպոս),
արծուէսք, արծուլէսք, արծուէս,
արծուէս
արհի, արհ (արքեպիսկոպոս)
արծագանդ, արծագանք, արծա-
գանք, արծագան, արծագան
արձէն, արձեան, արձին, արձի,
(կերբժանի)
արձոյլ, արձուղ, արձոլ (ուռկան)
արմաւ (խորմա), ամբաւ, ամբ-
բաւ, ամպրաւ
արշալոյս, արշալուրշ, արշալուշ,

բէշ, բիշ, պէշ, պիշ (բժշկական խոտը)
բէսմէտ, պէսմէտ (անհույս)
բէշարայ, բէժարայ (թշվառ) ան-
ճար
բէտ, բեթ, բէդ, պէտ (մեծ)
բժիժ, բժուժ (փոքր զանգակ), բո-
ժոժ
բիծ, փիծ
բիծխի, պիծխի, պծղի, պծղի
(ծառը)
բիկար, բեկար (փոխանորդ) Ֆր.
purgatoire
բիբկաթոր, բերքաթուր, բուրգա-
թուր, բիբրքաթուր (քավարան)
բիւր, բեր (տասը հազար, շատ)
բիւրեղ, բերիւղ, բերեղ (պատմա-
կան քար)
բլբուլ, պլպուլ
բլիլած, պալիլած, բէլիլէճ, պլլ-
լիճ, բլլիլիճ (բույսը)
բծիծ, բծեծ (բույսը)
բզակոնք, բզականք (գիշերը հրս-
կող)
բզխոր, բզխորոս (կանաչ)
բզուկ, բզուղ, բզող, բլուղ, բլուղ
(հողե աման)
բզախտհ, բոզախտհ (ցանկա-
սեր)
բնդեան, բնդիւն (բզեզը), բնդերն,
փնդեան, բնդեո
բնդոր, խառնարնդոր, խառնա-
փողոր
բոգ, բոգի, բոք (բույսը)
բողբոջ, բողբուճ, բխբուճ
բոլթ, բոլթն (մեծ մատը)
բոշոյ, բոշոյ (փոքրիկ ձի)
բոս, բոսեղ (իշամեղու)

բորակ, բուրակ, բարակ, բորակ,
բարակ (հանքանյութը)
բորբորիանոս, բարբարիանոս,
բորբորիտոն, բորբորիտոս,
բորբիոս, բորբորիա, բորբիա-
նոս (քրիստոնեական աղանդ,
վավաշոտ)
բորենի, բորեան, բորէ, բորայ
(մարդագայլ)
բորոկոնիմ, բորկոնիմ, բարկէ-
նիմ (փուշը)
բուզաղթն, բազոխտ (աղջամուղջ)
բուլ, պուլ, վուլ (պապական կոն-
դակ)
բուխ, բուղխ, բխել, բղխել
բուխտան, բուզտան (ղրպարտու-
թյուն)
բուկ, պուկ (կոկորդ)
բուշտ, փոշտ, փամփուշտ, փան-
փուշտ, փալափուշտ, փաղա-
բուշտ, փաղափուշտ, փալա-
փուշտ (միզափամփուշտ)
բուստ, պիստ (բույսը)
բուտ, բութ (կերակուր) բտել,
բութել, (պարարտացնել)
բչիչ, բճիճ
բտում, բդում, պտում, պուում,
բուտում, բոթմ (ծառը)
բրաբիոն, բրաբիովն, բրաբիայ
(հաղթութեան մրցանակ)
բրաջուր, բրէջուր (բարոգող) Ֆր.
précheur
բրինձ, բրէնձ, (պրինց, իշխան)
Ֆր. prince
բրնջաս, պարանճասիֆ (ծաղիկը)
բրվիէճ, բրվիիճ (արտոնութեան)
Ֆր. privilège-մենաշնորհ

գար, գափ (բույսը)
գագաշիլ, գարգաշիլ (ցնդվել)
գագայնել, գայգայնել (աբլորի ձայ-
նը)
գազ, կազ (մոշի ծառը)
գազաղ, գազախ (մոխիր)
գազպէն, գազապէն, կազպին,
գազպի, գազապէ (բուսական
հյութը)
գալլոս, գաղոս (ներքինի)
գահել, քահել (զարնել)
գեհ, գիհ (ոչխարի հոտ)
գեհեն, գեհեան
գեղազատ, գելազատ (արու ձի)
գեղարզն, գեղեարզն (մեծ նիզակ)
գերմաստ, գերմաստի, գերմաս-
տի (ծառը)
գերպիել, գերբել (ավերել)
գղմազ, գղմազիճ, գղմաստ, գող-
մազի, գողմոս (մոշի պտուղը)
գէթ, գեթ (գոնե)
գէջ, գէճ (խոնավ)
գէր, գուեր (պարարտ)
գժղմիլ, գժղմնիլ, գժղմիլ, գըժ-
ղմնիլ, գժղմազոյն, գըղմա-
զոյն, գժղմնեցուցանել, գըժ-
ղմութիւն, գժղմութիւն (բար-
կանալ, բարկութեան)
գիւղ, գիւտ (օղ)
գիւղ, գեղ, գեաղ, գեօղ, գեղ
գձուճ, գձուժ
գղթոր, գիթոր, գիտոր (կաղնու
ուռեցքները)
գմբեթ, գմբէթ
գորղայ, գուրղայ, գուրղայ, գո-
րողայ, գորաղայ (Սաղմոսի
մեջ մի բաժանմունք)
գողի, գօղի (բորոս), գոթենոց,
գոթութիւն

գոհար, ջօհար, գաւհար, գուհար
գոճմուկ, գոճամակ, գաճամակ,
գամճակ (բույսը)
գոճմեք, գօջմեք, գոջմէք, կոճմեք,
կօջվէք (ծաղիկը)
գոմէզ, գոմէզ (կովի մեղ)
գոյիբուակ, գոյիբուակ (խունկը)
գոյշ, գուշ (զգույշ)
գոնեա, գուեայ, գոնէ
գոնչակ, գանչակ (փոքր խոյ ?)
գոնջ, գունջ, գունջ, գոնճանալ
(հաշմանգամ)
գոշ, գօշ (քոսա)
գոտեխ, գոտող, գոտիս, գոտեղ,
գոտեհ (իշամեղու)
գոս, քօղ (մեծ թմբուկ)
գովողակ, գովաղակ (խունկը)
գորշ, գոշ (գույնը)
գորշապահանգ, գորշապահանգ,
գորշապահանգ, գորշապար-
հանգ (ականջի օղ)
գորփուրայ, գորփուրալ, կորփո-
րայն, գօրփօրալ, քօրփօյալ,
գօրրօրայ, քօրփօրալ, գօրրօ-
րայ (ծիսակատարութեան հա-
մար քառակուսի ճերմակ կը-
տավ)
գուգէլ, գուղէլ, կուգել (ծաղիկը)
գութայ, գոթան, գութան
գուղճն, գուղցն, բուց, կունճն,
կունճն, գուղճ (հողի կոշտ)
գում, գուն (գրահ)
գունդ, գունտ
գունդատապլ, գոնդատապլ, գուն-
դատապլ, գօնդատապլ, գու-
նուտապլ (արքունի ախոտա-
պեա) Ֆր. contestable
գունց, գունս, գունթ, գունտ,
գունդ, գոնդ (կոմս) Ֆր. comte

գործակալ, գույպա, դուրպալ
գոգի, կոգի (բույսը)
գրամատիկոս, գրամարտիկոս,
գրամարտիկ, գրամարտկոս,
դոմամատիկոս (քերականա-
գետ)
գրատ, գրատ, գրատ, գրատ,
գրատ (հագուստ)
գրեխ, գրիխ (լուծողական սրակե-
լու գործիքը)
գրոհ, կրոհ, գրոխ, գոհ (ամբոխ)
գոշել, գուշել (գիշատել)

դագաղ, դագեղ
դաժան, դարժան
դալ, դալ (մոր առաջին կաթը)
դալուկն, դալուկ (գեղնացավ)
դակու, դակուր (կացին)
դահ, դախ (հնացած)
դահեկան, դարեհեկան (գրամբ)
դահիակ, դահեկ (տասաներորդ)
դահլիճ, դահլիճ, դախլիճ
դահուճ, տահուճ, տէհուճ (թուշու-
նը)
դամոն, դամոն (սալորը)
դայեակ, դահեակ (ծծմայր)
դանգ, դանկ (կշիռը)
դանդան, դանտան (ատամ)
դանդանաւանդ, դանդանաւան
(սանձ)
դանիշման, դանիշմանդ, դանըշ-
ման (մոլլա)
դանկալ, դանքա (գոհարը)
դաշխուրան, տաշտագուրան
(տաշտ)
դաշոյն, դարշոյն
դաշտ, թաշտ (երաժշտական
խաղ)

դասպինիա, յասպինիա (դժվա-
րաշնչութիւն)
դաստապրիկ, դասպրիկ (կուժը)
դաստիշոն, դաշտիշոն, դաշտի-
շոյն (փոքր տաշտ)
դարապաս, դարեպաս, դարպաս
դարաւանդ, դարեւանդ, դարանա-
ւանդ (բարձրութիւն)
դարգ, տարտ (վիշտ)
դարիճենիկ, դարիսեն, դարսե-
նեկ, դարսենի, դարիսենի (բույ-
սը)
դարիսովար, դալիսովար, տալիս-
Ֆար (բույսը)
դարշիշան, դարշիշան, տարշի-
շան (փշոտ բույսը)
դարունաջ, դարինաճ, դարինիճ,
դրունաջ, դրունազ, դարունաճ,
դարունէճ, տարունաճ, դրունաճ
(բույսը)
դափնի, դարնի, դափնէ, դափնիդ,
դարնիդ (բույսը)
դափր, տարր, տափր (ձիու դափ-
յուն)
դնդնչումն, դրնդրնչումն (բնա-
ձայն)
դզուտ, դզուտ (շատախոս)
դելփին, դլփին, տլփին, դելփիս,
դլրին, թելփին, տլրին (ձու-
կը)
դեկանիոն, դեկիանոն (ոստի-
կան)
դեհ, դիհ (կողմ)
դեհպետ, դեհպետ, դեհեպետ
(կուսակալ)
դեղձ, դեղջ
դեմեալիկոս, դիմէալիկոս, դիմե-
սիկոս, դեմեալիկոս, դեմեակը-

լոս (բյուզանդական մի պաշ-
տոն)
դեմեալէր, դեմեար (երկրի աստ-
վածուհին)
դեմոն, դէման, դիպեման (բաղ-
մութիւն)
դենար, դինար (գրամբ)
դենիմազդեզն (դենիմազդէն, դե-
նիմազդէզ) «պարսկական կրո-
նը»
դերբուկ, դարբուկ (առապար)
դերձակ, դերձիկ, դերդիկ
դժգոյն, տժգոյն
դժխեմ, դշխեն, դշխեմ (դաժան),
դժխեմութիւն, դժխիմութիւն,
դժխմութիւն
դժպիրհ, դժպէհ (ժպիրհ)
դիաթիկ, աիաթիկ (կտակ)
դիաւղոն, դիողոն (բմբշամար-
տութիւն)
դիդարքամայ, դիդարքաման (երկ-
դրամյան)
դիկատոր, դեկատոր, ուղղել՝ դիկ-
տատոր
դիոպտա, դիոպտա (երկրաշա-
փական գործիք)
դիրտ, դուրտ դուրտին (մրուր)
դիֆլա, տլփա (դափնեվարդ)
դկուղ, դկուլ (լորի)
դհունաղհունար, հունաղհունար
(արաբական յուղը)
դդեակ, դդեկ
դդորդ, դդուրդ
դմիշկ, դմշխեյ (սուսեր պողո-
վատիկ դամասկյան)
դշխոյ, դժխոյ (թագուհի)
դողդոջ, դողդոջ (դողդողացող)
դոյզն, դոյզ (քիշ)

դոյլ, դոլ, դոլ (ջրի աման), դողել,
դուզել (ջուր քաշել)
դոնդոզ, դոդոզ, դանդոզ, դնդոզ,
դնդոզ
դուլ (դադար), անդուլ, անդոյլ
դուկենարիոս, դուկենարիոս (երկ-
հարյուրապետ)
դուռայ, դուռայ (դգեստ)
դուռէճ, տուռէճ (թուշունը)
դուրթ, դուրդ (գրոհ)
դատիկոն, դատիկոնիա (տան
հարկ)
դրակոնդիկոն, դրոկոնդիկոն,
դրակոնդիկոն, դրագոնդիկոն
(ոսկու վրա [նախշ])
դրաքմայ, դրաքմէ, դրագմէ
(գրամ կշիռը)
դրեմիտոզ, դրեմիտոս (հոտած)
դրուտ, տրուտ (շիտակ)
դրոշակ, դրովշակ (քղանցք)
դոստաքան, տոստոքան, տոստո-
քան, տոստոքանի, տոստոքանի
(մեծ դավաթ)

հաշմ, հասպ (քարը)
հաուլիս, աուլիս, խաուլիս (հրա-
մանագիր)
հրենոս, ապանոս, ոպնիաղ, ա-
բանոս
հթիա, հթիա (թուշունը)
հլակ, հլագ (մորի պտուղը)
հլեկտրիոն, հլեկտրոն, հլեկտոն.
հլեկտոնիոն, հլեքտոնիոն, հլեք-
տոնիոն, հլեքտոնիոն, հլեքտրիոն,
իլեքտոն, իլեքտոնիոն, իլիք-
տոնիոն, ղեկտոն (սաթ)
հլեփանդական, հլեփանդական,

եղեփանդեան, եղափանդական (բորոտութուն)
ելունդն, եղունդն (պալար)
եկեսիկէն, եկիսեան (երկունք)
եկզեսիաստէս, եկկլեսիաստէս, եկկլէսիաստէս, եկլէսիաստէս (քարոզիչ)
եկզեսիաստիկոս, եկլեսիաստիկոս, եկլէսիաստիկոս, եկկլեսիաստիկոս, եկկլէսիաստիկոս (եկեղեցական տիտղոս)
եղամ, էղամ (սրահ)
եղատ, ելատէ (եղեխն)
եղար (ողբ), եղարամայր, եղերամայր (ողբասաց կին)
եղերորոս, եղրորոս, զերերոս, զերորոս, երորոս, երուրոս (բույսը)
եղերգ, եղերգն (բույսը)
եղունգն, եղունկն, եղնեղունք
եղջիւր, եղջեր
եղաիւր, եղաեր, աղաիւր (ճահիճ)
եմփորոն, եմափորոն, եմափորա, էմփորոն, եմփոյր, եմոփորա, եմեփոր, եմափոր, սմոփորոն, ոնփորոն, ոնոփորոն, ամամփորոն (եպիսկոպոսական խաչազարդ ուրար)
ենթ, ընթ, ենթադրել, ընթադրել
ենքեղէս, ենքեղեէս, ենքեղիէս.
ենքեղիս, էնքեղիս (օձածուկ)
եպարիսոս, եպարքոս (կուսակալ)
եպենէս, էպինէս (խեցեմորթ)
եպեր, եպերանք, այպերանք, ապերանք (նախատանք)
եպիգիմիական, եպիգմական, եպիգեմական (համաճարակ)

եպիսկոպոս, եպիսկապոս, եպիսկովպոս
եպիտրոպոս, եպիտրայպոս (հոգաբարձու)
եռանդ, յեռանդ (երեկ չէ՝ նախորդ օրը)
եռիէս, եռես, երես, երեփս (քահանա)
եռմոս, երմոս (բանահայտութուն)
եակոպոտիրայ, էսկապիտորայր, եակոպոտորերայն, եակոպոտիրայն, էսկոպոտորայն (պալատական պաշտոնյա)
երագազ, արագազ (կենդանի բոնելու ցանց)
երախայ, երեխայ
երախայրի, երեխայրի (առաջին պտուղ)
երահ, երահիկ (փառավորված)
երամ, երամակ, արամակ (խումբ)
երան, արանք, արանգ (մեջքից մինչև բարձերը)
երան, էրան (բարակ քամի)
երաշտ, երեշտ
երասան (սանձ), երասանակալ, երեսանակակալ, երեսանակալ, երեսանակակալ, երասանակակալ, երասանակակալ (կառավար)
երգիոն, երգեհոն, երգեոն, դանոն, որգան, որգեն, բրկանոն
երեկ, երեկոյ, երիկուն, երեկուն, երեկոյն
երէ, էրէ, երայ (որսի վայրի կենդանի)

երէկ (երեկվա օրը), երիկեան.
իրիկեան, երեկ
երէց, էրէց, իրից
երիկամն, երիկամունն, երիկամունք
երիսթավ, երիսթաւ, յերիսթաւ (իշխան)
երիվար, երիւար
երկայն, երկեայն
երնջնակ, երնջակ, երնջայ, երնջան, երնճնակ, երինճան, երինճակ, իգաներնջան, իգաներնջայ, երիժնակ (բույսը)
երակիկլոն, երակիկլովն (արեւելյան քամի)
եփուդ, եփուտ, եպուտ (զգեստ)
եթերան, եթիերան (ձկնորսական)
եքինոս, եքենէս (ծովային ոգնի)
եօթանասուն, եթանասուն, իթանասուն, ութանասուն
եօթն, եսթն, եթն, իթն, եթ
զամբեղ, զամբեղայ (վեզար)
զամբիւղ, զամբիւղ (կողով), զամբեղ, զամբիւղ
զամբուտ, զամպուտ (խոտը)
զանգակ, զանկակ
զանճապիլ, զնճապիլ, զնճուպիլ
զարտագոյն, զարտագուն (ծագիւր)
զարտակ, զերգակ (զեղին)
շարօշ, զարոշ (բույսը)
զափրան, զահրան, զաֆրան, զափարան (քրքում)
զգալ, սգալ, բագալ
զգենուլ (հագնավիլ), սգենուլ, զգեստ (հագուստ), սգեստ

զաղիս, զեղ, զեխ
զեղջ, զիղջ
զեղեկ, զերթեկ (թողնել, գանց առնել)
զեփիւտ, զեփիւտոս, զեփիւտոս
զիլ, զիւր, ժիւր (բարձր ձայն)
զինահար, զէնահար, զենէհար (իւր ողորական բացականչութուն)
զինգակապետ, զընգակապետ, զինգակապետ, զնդակապետ (գորայետական աստիճան)
զիստ, զստուի
զիւրկ, զուրկ
զիւզոստատ, զիւզաստատ, զոյզոստատ (զինվորների ոտձիկը կշռող պաշտոնյա)
զկեո, բզկեո, սզեո, սկեո, զզեո, զզեար
զմրազ, զըմրազ (մատանջութուն)
զմուտ, զմուոն, զմուո
զմրիլ, զմբրիլ (թմբրել)
զնդան, զընդան, զնտան
զնին, զընին, զննին (քննութուն, որոնում)
զոգիակոս, զօտիակոս, ծոգիակոս, ծօգիակոս (երկնքի կամարը)
զոխոյ, զօխօ (բույսը)
Ջոհալ, Ջօհալ (մոլորակը)
Ջոհրայ, Ջոհրա, Ջօհա, Ջօհրէ (մոլորակը)
զոզակ, զզալ (բույսը)
զոպայ, զովպայ, զոպա, զուփա, զուֆ, զուֆա, զուֆայ (բույսը)
զովոդ, զովօդ, զուոզ (ընկեր, գործակից)

զուկի, զուկ (սև խունկ)
զուսպ, զիսպ
զուրափէ, զուրափայ, զօրափէ,
զուրաֆայ (ընծուղտ)
զրահ, զրայ, զրեայ, զրեահ, զրեհ
զրիշկ, զրեշկ (ծոր, կոծոխտ)
զրմբատ, զրնպատ, զրումպատ,
զուրումբատ, զուրբատ, զրո-
բատ (բույսը)
զօնաճառ, զանաճառ, զանոյճառ
(զենք ու զրահ)
զօշ, զոշ (որկրամուլ)

էգ, իգ
էլի էլի, էղի էղի (Աստված իմ,
Աստված իմ)
էփիմերաէ, էփիրմետէս, էփիր-
մերաէս

ըմբիշ, ըմպիշ
ընդեր, ընդերք (փորոտիք)
ընդիկտիոն, զիքտիոն, ընդիք-
տիոն, ինդիկտիոն, ինդիքտիոն
(15 տարվա մի շրջան)
ընծայ, ընծայ
ընկեր, ընդեր
ընկոյղ, ընգոյղ, անկոյղ
ընծուիլ, ընծուիլ (ծագել, բխել),
ընծիւղ, ընծիւղ, ընծիւղ, ընծիւղ
(բողբոջ), ընծիւղել, ընծիւղել,
ընծիւղել, ընծեղել, ընծեղել
(բողբոջել, ծխել)
ընջուղ, ընջիւղ (երինջ)
ընտիր, ընդիր
ըսզակ, երզակ (ապրանք)

թաթուլ, թաթուլա (արջու ըն-
կույզ)

թաթրա, թեթրի, թաթրի (բույսը)
թաժայ, թաժահ, դաժայ (թարմ)
թալալիոթ, թալկիոլթ (աշտարակ)
թախանձ, թախանձ, թաղանձ
թախթ, թախտ, թաղտ
թախիծ, թաղծիլ, թաղծիլ
թակաղակ, թակաղաղ (կոշնակի
փոքր թակ)
թակարդ, թակարթ
թաղանթ, թաղանդ
թաղսամաւոր, թաղամաւոր (կո-
րած անասուն)
թաղար, թեղար (խեցեղեն աման)
թաղթ, թաղթիկ, թախթ, թախ-
տիկ (բույսը)
թամբատ, թմբատ (ցնցոտի)
թայրաթուր, թարաթոտ (ազգա-
կան)
թանկ, թանդ
թաշկինակ, թարշինակ
թառ, դառ
թառամ, անթառամ, անդառամ
թատր, թէատրոն, թեատրոն
թարանկուպին, թառանկոյն, թա-
ռոնդին (մանանա)
թարգման, թարքման, անթարքի-
ման
թարխուն, տարխոն, տարղուն,
տարղոն
թարշիշ, թարսիս (աղնիվ քարը)
թարսի, թարր (ձկնորսական կո-
ղով)
թափուտ, թարուտ, թապութ (դա-
դաղ), թաութ
թափօր, թափօր
թաք, թաքիլ, թագշիլ (պահ-
վել)
թեղ, գեղ, դէղ (գեղ)

թեմ, թէմ (եպիսկոպոսի առաջ-
նորդական վիճակը)
թեսմոփորոն (տաճար), թեսմայ
փառեացն, թեսմոյ փորացն,
թեսմայ փառեացն
թետպիր, թպտիր, թատպիր,
թտպիր, թէպտիր (միջոց)
թերափ, թերափիմ (տան կուռք)
թերիակէ, թիրակէ, թերակէ, թի-
րակէ, թրակէ, թրակէս, թրեա-
կիսի, թուրիախ, թրիախ, թըր-
հաղ (դեղթափ)
թե, թեակոխել, թեախողել
թեքել, թեկել
թէատրիկոն, թէատրոնիկոն (դե-
րասանուհի)
թթու, թթու
թիրախ, թիրախ (նշանառության
տեղ)
թիւր, թևր, թոյր (ծուռ)
թղկիլ, թղբիլ, թլբիլ
թղբի, թղկի, թղկենի, թիկի, դըղ-
բի, տիկի (ծառը)
թմրող, թամրող (բույսը)
թմրհնդի, թմրհինտի (բույսը)
թնծկալ, թնծկալ (շան ձագերի
ձայնը)
թողոփա, թուլփ, եթողու, աթո-
ղուս, թէոփալուս, թէոփիլուս,
թէոփիլուս, թէոփալուս, աթո-
ղոփուս, ութողոփաքա, թողոփա,
թէոփիլուս, թէոփիլուս (անա-
սունը)
թսթոշ, դօթօշ (մողես)
թոհ և բոհ, թոխ և բոխ
թոն, դոն (ձուկը)
թոշակ, թօշակ, թորշակ (ճամբի
պաշար)

թոռուպ, թօռուպ, թոռուպ (զրահ)
թորթ, թորթն, թուրթ (բույսը)
թորթոշ, թօրթօշ (ուռճացած)
թուայ, թուայ (թոնիրը)
թուանիկ, գրուանիկ (հարուստ)
թուաքար, թուագար (մտատանջ)
թուենիթ, թուելիդ (վայրկյան)
թութակ, դուգար
թուրիա, թուգիա (ծաղիկը)
թուխ, թուղ
թուխթ, թուղթ (շափը)
թուղբ, թուխպ, ծուղփ (ամպ)
թուղթ, թուխթ (նամակ, թուղթ)
թուման, դուման (տասը հազար)
թունդ, թնթոց
թուր, թոյր
թուրէ, թօրայ (օրենք)
թուրինջ, թրունջ (նարինջը)
թուրիշահ, թուրիշակ, գուրուշահ,
թուրինշահ, թուրինջշահ, թու-
րընջշահ, թուրնուշահ (ծաղիկը)
թուրծ, թուրջ (թրծել)
թոք, թոգ
թպղա, թեպղա, թեպղ (դևը)
թրասկիաս, թրասկիա (քամին)
թրթնջուկ, թթնկիշ, թթնիծ, թր-
թունուկ, թրկիծ, թրթուիծ, թա-
թաիծ, թրթկիծ, թրթնուկ,
թնդոշուկ (բույսը)
թրիանէ, թրանէ (թշունը)
թրմոա, թրմուղ, թրմուղ, թրա-
մուղ (բույսը)
թօշկանալ, թօշկանալ (նխել)
թօպ, թապ, թուպ (տկար)

ժախ, ժախուկ, ժաղուկ, ժաժուկ
(բույսը)
ժահր, ժահն (թույն)

ժայթքել, ժայտքել
ժանգ, ժանկ
ժանգառ, ժանկառ (պղնձի ժանգ)
ժանուար, ժանուառ (գահավորակ)
ժանտ, ժանդ
ժէտ, ախտաժէտ, ախտաժեռ
ժժան, ժըժան (վառելիք)
ժժմակ, ժիժմակ (միջատ)
ժիպակ, ղիպակ (սնդիկ)
ժլատ, շլատ
ժխոր, ժխորել, ժղորել, ժխորտել, ժխորել
ժոխ, ժուղ (բույսը)
ժպիտ, ժմիտ, ժպտիլ, ժմտիլ, ժմրտիլ

իժ, իժժ
իկոն, կոն, կան
իզձ, բղձալ, դձալ
ինզրէ, ինհրէ (մի տեսակ հալվե)
ինձ, ինձ, իւնձ, ունձ. ուժ (զազանք)
իննսուն, իննսնամեայ, իննսնամեան, իննսնեմեան, քննսունամեայ
իշխուն, շղուն (բույսը)
իպպոս, պպոս (աստղը)
իսբոլայիզէ, սբոլայիտէ (կեցցե՛ս)
իսթմիա, իսթիմի, իսթմի (հունական խաղ)
իսկ, իսկոյն, իսկոյն
իսօն, իսան=իսոն (բնագիր)
իրևար, իրար, էրիրաց, իրերաց
իրիս, իոիս, իրիզէ, իրիզէս (ծիածան)
իւղ, եւղ, եղ

լաբիրինթոս, լաբիրինթոս, դաբիրինթոս, լամբիրինթոս, դաբիրինթ, դամբիրինթոս, դամբիրինթ
լարլար, լապլապ (բաղեղ)
լազուարթ, լաժուարդ, լաժուրդ, լաջուարդ, լաջվարդ, լաճվարդ, լազվարդ (քարը)
լալ, դաղ (քարը)
լախլախ, լախլախայ (բույսը)
լախուր, նեխուր, նիախուր, նիախօր, նէախօր (բույսը)
լախտ, լախթ (մահակ)
լական, լեկան, ղեկան, լկան
լակիշ, ղակիշ, ղաշիկ (բանակ)
լամբ (օղակ), լամբաուր, լամպաուր
լամբար, լամպար, ղամբար, ղամպար
լայքայ, լաքայ, լաքա, ղաքայ (ներկը)
լապտեր, ղապտեր
լաւրա, լօռայ, լոռա, լօռա (վանք)
լափ, լափլէզ, լապլիզել
լեարդ, լերդ
լեզէովն, լէզէոն, լեզևոն, լեզևոն, լիզևոն, լեզէոն, լեզեհոն (զինվոր)
լեկաթ, լհկաթ (պապական նվիրակ)
լեղի, ղեղի, լեղ
լեշկ, լեաշկ, լաշկ
լեպեշտի, լպեշտի, ղեպեշտի (լիրք)
լերկ, ղերկ
լեխաթան, ղեխաթան (ծովային վիշապը)

լիրանոն, լեբանան, լիրանօն, լիրանան (խեժը)
լիրանոս, լիրան, լիրանան
լիրանովիտ, լիրանովտան (բույսը)
լիրեննեայ, լիրեննայ (նավը)
լիրիտոն, ղեբիտոն (վերարկուն)
լիթանիա, լեթանիայս, լետանիա (աղոթք)
լիզգինոս, ղիզգինոս (մարմարը)
լիդատոն, լիդատ (կտակով թողնըված)
լիճ, լեճ, լիզիոն (ճորտ)
լիմոն, լիման, լեմոն
լիմպոս, լինպոս, լիմբոս (հոգիների օթևանը)
լինզերիտոն, ղինզիրոն, ղինզիրոն, լինզերիտոն, լիզերիտոն, լիզիրոն, լիզիրոն (քարը)
լինդ, լինա
լիտր, ղիտր
լիանօտոս, լիբանօտոս (քամին)
լիփս, լիրս (քամին)
լկամ, լմակ, լիկեամ (սանձ)
լկիլ, լքնուլ (սառուցիչ հալվելը)
ցոկիլ, ցիոկիլ (զուրս ցայտել)
ցփսի, ցպսի, ցսպի (այծի մազից հյուսած կոշտ կտոր)
ցօզուն, ցոզուն
փաղան, փաղամ, փանղամ, փանամ (լաշակ)
փաթերակ (աղետ), փաթորակիլ
փաթշահ, փատշահ (թագավոր)
փալան, պաղան
փախ, փախշիլ, փաղշիլ
փաղանգ, փալանգ
փաղանամուշկ, փաղանգամուշ, ֆարանճամուշկ, ֆալանճամուշկ (բույսը)
փաղղոս, փաղոս, փալլոս (առնի)
փայիկ, փայեակ, փայեկ (սուրհանդակ)
փայծաղն, փայծեղն, փայծաղն
փանղանել, փանղանղել (ցրվել)
փանղիոն, փանղիո, փանղեոն, բանղիոն, բանղեոն, բամբիոն
Փառազնոտ, Փառանձնոտ, Փառազնոտի, Փառազնօտի, Փա-

րազնոտի (հինգ մուրակներից մեկը)
փասեակ, փասէք, պասէք, փեսեկ (ղատիկ)
փասեան, փասիան (թռչունը)
փասքուս, քսփուս, քսմոս (քուրամբասող)
փարաղ, փարած (մկրատ)
փարայ, փառայ (բույսը)
փարասիոն, ֆարասիոն, վարասիոն (բույսը)
փարման, ֆարման (հրաման)
փարոն, փարոս
փարշ, փարջ
փարսախ, հրասախ, խրասախ, հրասիս, խրասիս, փարսանդ, ֆարսանկ (չափը)
փարտ, ֆարտ (անզույգ)
փարփարնայ, փարփանա, փալփանա (բույսը)
փարփուտ, փարփութ (ղատարկ)
փափազ, փափաք
փերբուարիոս, փետրուար, փետրրվար
փեզանայ, փեզենայ, բեկենա, բեզանոս (խոտը)
փեղմոնի, փելմոնի, փէլոնի (այսինչ կամ այնինչ)
փեննա, փենունայ, փիոնիա, փինա, ֆայունիա, փենատակ (բույսը)
փեռեկ (ճեղք), փեռեկել, պեռեքել
փետ, փետել, փետտել
փետուր, փայտուր, թեպուր
փերեզակ, փերեզիկ, փորեզիկ, փորէզիկ, փորեզիկ, փորէզիկ, փորգեկ (շրջուն մանրավաճառ)
փերեետել, փերեթիլ, փերեեդիլ,

փերեերաիլ, պերեետել (պճնը-վել), թերես և փարատաթել
փերոմ, փերեմ (լաստ կամ նավակ)
փիթիթ, փթոյթ
փիթուր, փիթուղ, փիթութ (մատը)
փիթրախ, բզրաղ (խոտը)
փիլիկոն, փիլիկոն, փիլիկուան, փիլիկպան, փիլիպան, փիլիպան, փիլիպան (պատերազմական գործիք)
փիլիսոփայ, փիլիսոփայ, փիլիսոփայ
փիլիսոփոս, փիլիսոփոս
փիլոն, փիլոն
փիծ, պիծ, պիծ, փից, թերես և բիծ
փիղ, փիւղ, փիլ
փիճիս, փիշիս, փիճի (բուսական մի բե՞րք)
փինջ, փինչ (ցողուն)
փիլղակէ, փիլղակէ (բանտ)
փիւնիկ, փիւնիկս, փիւնիկոս (թռչունը)
փիւսիկան, փիւսիկան (բնագետ)
փղակոն, փղակոն (զիշերային աղոթքների ասող)
փղձուկ, փղձուկ, փղձուք
փխտել, փնդել
փոճոկ, փեճեկ, փեճոկ, փճօք, փշք, փշոկ (կեղև)
փոշիման, փոշիմանութիւն, փոշաման
փոր, պոր (թռչունը)
փորոտալ, փորոտել, փորատել, փարատել (մոնչել)
փոցիս, փոցղ
փու, ֆու (խոտը)
փուճ, փուշ

փուշտիպան, փշտիպան (թիկնապան)
փուտկայ, փութկայ (պանզոկ)
փուրսիշն, փոշիշն (հարցաքննություն)
փուփիլէ, բուբալ, պուպալ, փուպել (բույսը)
փոննի, փրենի (բույսը)
փոնշել, փոնկալ, փոնզալ, փոնըբալ, փոնքտալ, Ֆոնշել
փսալտ, փսաղտ (սաղմոսերգու)
փտոռ, փտուռ, փթութ, փթուշ (խոտը)
փրերուկ, փրիրուկ (արմավ)
փրզանդ, փրզունդ (որդի)
փրիսայ, փարայ (չորացած խոտ)
փրփրեմ, փերփեր, փրփրեան, փերփերան, փարփար, փառփառ (բույսը)
բալամաշի, բալամաճի (թարգման)
բաղաղիր, բաղաղրոն (անկողինը)
բաղբան, գաղբան, գաղբանոս (խեժը)
բաղղեայ, բաղղէ, բաղեայ (գուշակ)
բաղիրթ, բաղիրդ, բաղերթ (անասունների ստամոքսը)
բաղկոլիբանոն, աղիղիբանոս, արկողի բանի (մետաղը)
բաղրայ, բաղրան (խեցեղեն պնակ)
բաղցկեղ, բարցկեղ, բարծկեղ, բաղցրկեղ
բամահել, բամայել, բամահարել, բամահրել
բայո, բեառ (պարանոցին կախելու մանյակ)

բայքայել, բաքայել
բանասար, բանասարիկ
բանուն, բանոն, բանովն
բաշմ, բաշիմ (բույսը)
բապողակ, բակողակ (բույսը)
բապողկրիտակ, բապողկրտակ (բույսը). ուղղել՝ իգաբողիտակ, իգաբողկի տակ
բաս, փաս, փառ. ուղղել՝ քաս
բասքնել, քասքանել (խորշել)
բատոր, քատուր (անասուչգ բույս)
բարաղր, բարարդ, քառաղր, քաղաղր, քաղարդ, քաղանդրոս, քաղանդր, քարաղրոն, կալատրիս (բույսը)
բարաւէ, բարաւիա, քարսէ (բույսը)
բարզոն, քարզոնա (թագավոր)
բարժանակ, քարճանկ (խեցգետին)
բարիւրդ, քարիւրդ, Ֆառիւրդէս (ծովի վտանգավոր հորձանք)
բարձ, քարց (անմորուս)
բարշ, քաշ
բարուպայ, քահրիպա (սաթը)
բարտ, քարտէս, քարտէզ, քարտէշ
բարտակարել (կացինով շարդել սպանել), քարկատեցին, քարտաւարել (բաժանել)
բաղեայ, քողեայ (գուշակ). սխալմամբ նաև՝ քաղ
բափոտ, կափոտ
բաքանաջ, քաքնիշի, քակոնիճ, քանքանաճ, քաբունիճ (բույսը)
քեղի, քթի (ծաղիկը)
քեռինոս, քեռոնեսոս (թերակզգի)
քերթ, քերթել, քերդել, քերել, քերփել, քերուփել

քերթաբաղ, քրթաբաղ (ցնցոտիներ հավաքող)
քերծէ, քրծէ, քերծ, քերց
քերովբէ, քերովբիմ, քերոր, քերովբ, քրովբէ, քերուբ, քրորբիմ, քերորբիմ, քերովբին, քերօբ, քերորէ (հրեշտակը)
քեց, քեցել, քցիլ (բաժանել, ջրկել)
քեքերթ, քերքերթ (բույսը)
քեքել (մերկանալ), քեքութին
քեքուրա, քեքուրդ (զկուտոց)
քէշ, կէշտ, քէշտ (զրադաշտական կրոնը)
քից, քիզիզ (բույսը)
քիմեռ, քեմեռ, քիմառ, քամեռ (առասպելական կենդանի)
քիմեռոն, քիմիւռոն (հյուսիսային սառուցյալ գոտի)
քիմիա, քիմեայ, քեմիայ
քիստ, քիս (ցորենի հասկը պատող փշոտ մտկերը)
քծուար, քձուար (մետաղի կտոր)
քղամիդ, քղամիթ, քաղամիտ (իշխանական ծիրանի)
քմին (դարան). թերևս՝ քիմի
քնթմթալ, քնթըմթալ
քնին, քննին
քնբուշ, քնբուշ
քշութ, քշուշ, քշուս, քշութր, քշուրդ, քշութր, քշուշ (բույսը)
քթանա, քովթանակ (հագուստ)
քոզ, քօզ
քողուկ, գովողակ, քալաի (խեժը)
քոռ, քուռ (շափր)
քովթար, քովթարովթ, քովթարովթ (խոյակ)
քորեպիսկոպոս, սխալմամբ՝ քորիսկոպոս

քուեայ, քուէ, քուայ, բուայ, բեայ, բուէ
քուճապ, քուչապ (անամոթ խոսք)
քունք, քուն (ծնոտի գլուխը)
քուշկէն, քօշկէն, քուշկէն (ուրար), քուշ կենայ
քուշնայ, գուշնայ (ընդեղեն)
քուշտիկիր, քուշտակիր, քուշտընգիր, քուշտընկեր (ըմբիշ)
քուշուպայ, քուշուպ (բույսը)
քուռաթ, քուռիաթ, քուռութ, քուռոս, խառաթ (բույսը)
քուռակ, քուռ, քուռի
քուսիթայ, քիսիթայ, քիսիթն (կրոնավորի զլխարկ)
քուրծ, քուրց
քուրջ, գուրշ, քուրծ
քուրք, քուք (սուտ)
քուք, քոք (ողբ)
քոնկ, քոնկան, քուռիկան, քոնկան (բույսը)
քսիփիէ, քսիփիէ, քսփիէ, քսիփիէ (ձուկը)
քսփիս, քսփիս (մլուկ)
քրիսոպրասոս, քրիսոպրասոս. քրիսոպրոս, քրիսոպրաս (պատվական քարը)
քրիստոնեայ, քրիստովնեայ, քրիստոնայ
քրոնիկոն, քրանիկոն, քրօնիկոն, քննիկոն
քրոնգրափես, քրոնգրոփիս (ժամանակագիր)
քրսամն, քիսամն (ընդեղենը)
քրտիկար, քրտար (բարի գործը)
քօշ, գօշ (արու այծ)
քօշամօրուք, քօշամօրու, քոշամօրուք, գոճամօրուք, գոճմօրու, գոճմորուկ, կոճամիրուս, կո-

Ճամբրու, գոճմօրէք, գուճա-
մուրու, գուճիմօրու (բույսը)

օգոստա, օգոստոս
օդի (ոչխար), օդիկ (ոչխարի մոր-
թից մուշտակ), թերես՝ լօգիկ
օժանդակ, օժընդակ, օժնդակ, օ-
ժանդ

օժիտ, ուժիտ, սժիտ, օժտել, օճ-
տել

օլօխ, օլախ (ասորի բահանայի
կին)

օձտել, օցտել, ոցտել (ճանապար-
հից շեղվել, ցրվել)

օղ, ողակ

օղի, ողի, եաղի

օնոսմա, անոսմա (բույսը)

օշնայ, օշնա, ուշնա (մամուռը)

օշլայ, սշլայ

Օտարիտ, Ոտարիտ (մուրակը)

օշաս, աշաս (աստղերի բոլոր-
ախքը երեացած կալ, բակ)

օրթի, օրթիւ, աւրթի, աւթի, որ-
թի, սոթի, ութի, ութի (Ա-
վետարան կարդացվելուց առաջ
երգված բանաձև՝ «ուղիղ կանգ-
նեցեր»)

օրիորդ, օրտորդ, որիորդ, ուրտորդ

օրօր, օրօրել, որօրել

օրօրաց, որրաց, օրոց, օրուան,
որորան, որրան, որրոց, որոց

օփրանտ, օֆրանթ, օֆոանթ, օֆ-
րանթ, ոփոանտ (եկեղեցուն
տրված նվեր)

Փշարայ, Ֆշրա (բույսը)

Ֆրնր, ֆռեր (խաշակիր զինվոր)

Այժմ պետք է սկսենք մեր քննությունը հիշյալ 2345 բառերի
հազարավոր տարբերակների մասին:

Ախալ կամ վրիպակ կոչվում են այն բոլոր ձևերը, որ գտնում
ենք ձևագրերում և որոնք տարբերվում են ընդհանուր ընդունված
ուղղագրական ձևերից:

Սակայն սխալ և վրիպակ երկու տարբեր բաներ են ցույց տա-
լիս. վրիպակ է կոչվում այն սխալը, որ գրիչը գործել է անզիտակ-
ցաբար. այնպես որ, եթե բիշ հետո նորից կարգար իր գրածը, այդ
վրիպումը պիտի փոխեր. օրինակ՝ ուֆ և ձեոֆ գրելու փոխարեն,
եթե գրած լիներ ոֆ և ձեոֆ, անշուշտ պիտի նկատեր, թե ա տառը
մոռացել է գրել, այսինքն՝ աչքից վրիպել է: Իսկ եթե առաջին դա-
սարանի մի աշակերտ քաղատը գրելու փոխարեն գրել է քաֆավօր,
անշուշտ դա սխալ է, որովհետև չգիտե և նույնիսկ եթե մի բանի
անգամ կարգա իր գրածը, չպիտի նկատե, որ այդ բառի մեջ է, վ,
օ սխալ են: Բայց իրոք քաֆավօր բառի այդ երեք սխալները սխալ
չեն. որիչ խոսքով վրիպակ չեն, այլ ներկայացնում են այն աշա-
կերտի ճիշտ արտասանությունը: Հետևաբար, քննել տարբերակնե-
րը, նշանակում է ջոկել վրիպակները սխալներից ըստ կարելիության,
ճիշտ քննությամբ և հանել գրանից որոշ եզրակացություններ:

Մեր հավաքած բառերի թիվը 2345 է, որոնցից յուրաքանչյուրն
ունի մինչև 13 տարբերակ. այսպես են՝ աշալոյս, քողոփայ, աղա-
բադոն, խղունջն, մագիստրոս, մարգանգոշ, մժեխ, ողոմպիպ,
պունտա, սիղոգոբայ բառերը, որոնք ունեն 12—13 տարբերակ:

Ինչպե՞ս պետք է սրտել, թե սրել բառի «ուղղագույն» գրու-
թյունը ո՞րն է: Մենք այժմ ուղղագույն ասելով հասկանում ենք
այն գրությունը, որ ընդհանուր ընդունված է և մտել է բառարան-
ների մեջ: Բայց բառարանների մեջ գրվելը, ինչպես և ընդհանուր
ընդունված լինելը՝ դեռ չի նշանակում, թե այդ գրությունը ուղիղ
է: Մեր մեջ ընդունված է, օրինակ, գրել շագանակ, որից էլ կազ-
մըված են՝ շագանակագոյն, շագանակենի և այլն բառերը. բայց
նորայր Բյուզանդացու քննությունները այս բառի մասին ցույց
ավիին, որ ոչ միայն այս բառի ձևը, այլև իմաստը սխալ է, պետք
է ուղղել շագանակ: Մի բանի այսպիսի բառեր էլ կան: Պատշգամ
բառն ունի 7 ձև, որոնցից «ուղղաչույնն» է համարվում պատշգամ
ձևը. մինչդեռ պետք է նկատի ունենալ, որ շ-ից հետո չէր կարող
գտնվել գ, այլ՝ կ: նկատենք նաև, որ որոշ բառերի համար արևե-
լահայերն ուրիշ ուղղագրություն ունեն, իսկ արևմտահայերը՝ ուրիշ:
Այսպես, օրինակ, փափագ բառն արևմտահայերը գրում են ֆ-ով,
մինչդեռ արևելահայերը՝ գ-ով: Բառեր էլ կան, որոնց ուղիղ գրու-
թյունը հայանի չէ. ինչպես՝ խնջո՞յֆ, թե խննոյֆ, սանդո՞լֆ, թե
սանդուղֆ, առե՞ջֆ, թե առեչֆ և այլն:

Ուրեմն ինչպե՞ս պետք է սրտել բառերի ուղղագույն ձևը:

Միակ միջոցը բառերի ստուգաբանությունը կամ ծագումը
իմանալն է: Նորայրը շագանակ բառը ուղղագրեց, որովհետև գտավ,
որ այդ բառը ծագում է պարսկերեն շահգանակ ձևից: Սանդուղֆ
բառը պետք է ուղղագրել սանդուղֆ, որովհետև այդ բառը
ծագում է skand արմատից՝ ուղ մասնիկով:

Պատշգամ բառը ծագում է գենդերեն palitškamba բառից, որ
բուն նշանակում է «սյունների շարք»: Այս ստուգաբանությամբ իմա-
նում ենք, որ այդ բառի «ուղղագույն» ձևն է պատշկամը, որ մեր
տարբերակների վերջին ձևերից է: Արևելահայերի մեջ այս ձևը
գործածական է, բայց արևմտահայերի մեջ՝ ոչ: Բառարաններն էլ
բառաշարքում գրում են նախ՝ պատշգամ և հետո, իբրև երկրոր-
դական ձև՝ պատշկամ. այդպես են արել ոչ թե առաջնություն տա-
լով ուղղագույն ձևին, այլ որովհետև այբուբենի կարգով գ տառը
ավելի առաջ է, քան կ տառը: Արևմտահայերի համար պատշգամ
գրությունը ավելի լավ է, որովհետև նրանք գ տառը հնչում են կ.

իսկ արեւելահայերը զ հնչելով ց, հակառության մեջ են ընկնում, որովհետեւ շ-ից հետո անհնարին է հնչել ց: Երանք հնչում են իրապես՝ պատշկամ, թեև գրում են պատշգամ, որովհետեւ բառարաններում նախապատմություն է տրված զ-ով ձևին:

Տարբերակների մեջ կան նաև առանց բ-ի ձևերը: Մենք կարող ենք մտածել, թե բ-ի անկումը բառավերջում մ-ից հետո կատարված է հայերենի ձայնական օրենքների համաձայն, բայց կարելի է նաև մտածել, որ այդ անկումը պարսկերեն ձևի պատճառով է, ուր ունենք peškem:

Բայց ամեն մի բառի ստուգարանությունը մեզ հայտնի չէ. հետևաբար և շգիտենք, թե տրված տարբերակներից ո՞րն է նախնական կամ հարազատ ձևը:

Հեղինակ բառը գրվում է 5 ձևով. բայց որովհետև այդ բառի ստուգարանությունը հայտնի չէ, հայտնի չէ նաև, թե ո՞րն է ճիշտը: Այժմ մեր մեջ ընդունված է գրել հեղինակ, որովհետև ձևագրերի մեծագույն մասի մեջ այդպես է գրված:

Այսպես նաև քաջելը բայը գրվում է թե՛ Բ-ով, թե՛ Գ-ով. մեր մեջ, սովորաբար, ընդունված էր գրել Գ-ով և հայտնի չէր, թե այդ երկու ձևերից ո՞րն է ուղիղը, մինչև որ Մեյի հայագետը ստուգարանելով այդ բառը և կցելով լատիներեն taceo «դու» բային, գտավ, որ ուղիղ ձևն է Բ-ով: Բայց երբեմն էլ՝ բառի ծագումը հայտնի չլինելը չի խանգարում մեզ: Օրինակ, փափագ և հեղ գրվում են վերջատառ Բ-ով կամ Գ-ով, որովհետև այդ բառերի ծագումը հայտնի չէ, ուստի շգիտենք, թե այս երկու գրչություններից որն է ուղիղը, բայց մենք, որ փնտրում ենք տարբերակների գոյացման պատճառաբանությունը, առանց այլևայլի, կարող ենք ասել, որ գրչության տարբերությունը ծագում է այն ձայնական երևույթից, որ բառավերջում զ հնչվում է Բ:

Այս տողերից երևում է, որ տարբերակների ուսումնասիրությունը պահանջում է ամեն մի բառի և ամեն մի ձևի քննությունը: Եվ որովհետև դա առանձին մենագրության նյութ է, ուստի մենք էլ մանրամասնությունները թողնելով, դնում ենք այստեղ հետևյալ ընդհանուր դժերը:

1. ԺՈՂՈՎՐԳԱԿԱՆ ԼԵՋՈՒ ԿԱՄ ԲԱՐԲԱՌՍՅԻՆ ՁԵՎԵՐ

Մեր աշխատության նպատակները հենց ժողովրդական լեզվի ձևերը երևան հանելն էր, ուստի սկզբից ևեթ խոսում ենք այդ մա-

սին: Բայց այս նյութը շատ մանրամասնություններ ունի, մենք էլ առանձին կետերով կխոսենք դրանց մասին:

Արշալույս բառը հին հայերենի ամենասովորական բառերից մեկն է: Երեք անգամ գործածված է Աստվածաշնչում, երկուսը՝ արշալույզ ձևով, երրորդը՝ արշալոյս ձևով: Այսպես՝

Գ Թագ. է 8. Յարեան ընդ արշալույզսն.

Առակ. ԼԱ 15. Յառնէ ընդ արշալույզս.

Յովհ. Ի 1. Գայ առաւօտուն ընդ արշալոյսն:

Եթե բառաբաղկիներ ամբողջ հայ մատենագրությունը, ո՞վ գիտե ղեռ ի՞նչ զանազանություններ կգտնեինք: Մեր տարբերակները ցուցակի համաձայն, այդ բառը 12 ձևով է ավանդված: Այս բոլորը շեք կարող գրչի սխալ համարել, մանավանդ վերջինը, որ գտնվում է Ավետարանում: Պետք է ընդունել, ուրեմն, որ դրանք ժողովրդի բերանում և զանազան բարբառներում ստացած ձևեր են: Ըստ իմ քննության նախնական և հարազատ ձևն է՝ արշալույզ, որ կազմված է արջ (սև) և լույզ (լուրթ) բառերից և նշանակում է «մութն ու լուսուն»: Այսպիսի մի դժվարահնչուն բառ (որի կազմիչ մասերն էլ կորցրել էին իրենց գոյությունը սովորական լեզվի մեջ), չէր կարող զիմադրել, և, հետևաբար, շարունակ ամեն տեղ մի նոր ձև ստացավ և գրիչները, ըստ իրենց բարբառային հնչման, մտցրին ձևագրերի մեջ: Այս կարգի տարբերակներից ոմանք, նույնիսկ, կենդանի են ժողովրդական լեզվի մեջ և մենք կարող ենք գտնել դրանք մեր բարբառներում, ինչպես կտեսնենք քիչ հետո:

Ընտրելով մեր տարբերակներից այս կարգի մի քանի օրինակներ, դնում ենք այստեղ.

այցիսիփեխց, ախցիփեղց, աղցիփեղց, ափեղցփեղ

անութ=անթ, որ կենդանի է դեռ Համշենի բարբառում օճը ձևով

ապարանջան, ապրանջան, ապանճան, ապարանջ

ապսպարել

առուտյա

արմաւ

բարձուենեակ

գէր=գուեր

գուզձն, տե՛ս բառացանկում

Մինչև իսկ գտնում ենք զիստ և զստոփ տարբերակները. վերջինը, անշուշտ, բարբառներում պահված երկակի ձևն է, ինչպես աշուփ, ծկկոփ և այլն:

Թյ. Թնչուկ, 10 ձև
 Խաւարծի, 10 ձև
 Խզունջն, 13 ձև
 Ժնծղայ, 7 ձև
 Ժոթոր, 8 ձև
 Ժուղակ, 6 ձև
 Կաղանչանն, 12 ձև

տե՛ս բառացանկում

շղարշ, նան շարշ, որ պահված է Զեյթունի բարբառում շաշ
 ձևով

ողն=ողան, հմմտ. Մուշ սեռ. օղան, Համշեն էօղօն
 սխալ=սղալ (Երևան)

Բառավերջում այ

Հայերեն բառերի վերջում ընդհանրապես պարզ ա գոյություն չունի. բացառություն են կազմում մի խումբ դերանուններ և բայերի հրամայականը, ինչպես նորա, նմա, ահա, իմա՛, զիտա՛ և այլքն: Այս դեպքում ա ձայնավորն առանձնապես շեշտվում է և շեշտն էլ նույնիսկ նշանակվում է: Իսկ սովորական բառեր, եթե վերջանում են ա ձայնավորով, ստանում են չ կիսաձայնը, ինչպես բայերի կատարյալի առաջին դեմքը՝ ուսայ, նստայ, շոգայ և այլն. նույնիսկ օտար լեզուներից փոխառյալ բառերը, եթե ունեն վերջում պարզ ձայնավոր ա, ստանում են չ հավելվածը. այսպես՝ Բահանայ, սատանայ, շիրայ, ծնծղայ, կասկարայ և այլն, որոնք ասորերենից փոխառյալ բառեր են, ասորերենում վերջանում են պարզ ա-ով, իսկ հայերենում ստացել են չ կիսաձայնը:

Հարց է, թե բառավերջի այս չ կիսաձայնը հին հայոց մեջ հնչվո՞ւմ էր: Իմ կարծիքով՝ այո՛:

Հին հայր անընդունակ էր բառավերջում հնչել լիակ ու մերկ ա. այս դեպքում նա պետք է հնչեր այ. դրա համար է, որ օտար բառերի ծայրին էլ ավելացրել է չ բաղաձայնը: Առանց չ ձայնի մնում էին երկրորդական, թարմատար կամ վերջահար բառերը, ինչպես են՝ նորա, նմա: Միայն շեշտյալ դեպքում (ինչպես են հրամայականները) ա ձայնավորը բառավերջում չէր ստանում չ, բայց սրում շեշտյալ էր:

Սովորական բառերը (այսինքն նրանք, որ ո՛չ թարմատար էին և ո՛չ էլ ուժեղ շեշտյալ, այլ միջակ) ստանում էին, անշուշտ, չ ձայնը:

Ինչպես որ գիտական (ուսումնական) ուղղագրությունն ընդունեց երկու ա միասին գրելու սովորությունը, նմանապես օտար բառերի համար սովորություն կղավ, գրության ճշտությունը պահելու (այսինքն ուղիղ տառագարծելու) համար, օտար բառերի վերջում չգնել չ: Այսպես ձևացան արբա և նման գրություններ:

Վերևում ասացինք, թե ասորերենից առնված բառերն ստանում են հայերենում այ վերջավորությունը, փոխանակ ասորական պարզ ա-ի: Այս երևույթը իրոք ցույց պետք է տար, թե հայերենի մեջ այ վերջավորությունը հնչվում էր ա. բայց այդպես չէ: Սրա ապացույցը այն է, որ

ա. երբ այ վերջավորած բառը հոգ է ստանում, չ կիսաձայնը մնում է. դա նշան է, որ առանց հոգի էլ չ տառը հնչվում էր. ինչպես՝ Բահանայ, Բահանայն, թե ոչ պիտի գրվեր՝ Բահանան:

բ. այ երկբարբառը բաղաձայնից առաջ դառնում է է, ինչպես՝ հայր>հէր. ճիշտ այսպես էլ մինչև այսօր բառավերջի այ, երբ հոգ է ստանում, դառնում է էն. ինչպես՝ Բահանէն, սատանէն, մինչև անգամ՝ Երամվէն: Եթե սրանց մեջ չ-ն չհնչվեր, այսինքն երկբարբառ շիրներ, անշուշտ պիտի ունենայինք ան, ինչպես գտնում ենք ուրիշ բարբառներում՝ Բահանան, սատանան:

էլ ավելի ուշ, բառավերջի չ ձայնը չհնչելու օրերի համաձայն, երկու ձևերը խառնվեցին գրության մեջ և ձևագրերում տեսնում ենք հաճախ թե՛ մի և թե՛ մյուս ձևերը, ինչպես՝

արբա>արբայ:

աւ=օ

աւ երկբարբառը ի վերջո դառնում է օ: Չնույնպես երբեմն գտնում ենք աւ ձևով, երբեմն էլ օ ձևով, ինչպես՝ կաւղիկ=կօղիկ, Պաւղոս=Պօղոս: Այս խմբի տարբերակները չենք հիշատակում:

Այս փոփոխությունը, սակայն, տեղի է ունենում միայն բաղաձայնի մոտ, այնպես որ, օրինակ՝ հաւատ, սարկավարգ և նման բառերը օ-ով, չեն գրվում: Գրչագիրները աւ-ի այս փոփոխությունից ելնելով, սխալմամբ, երբեմն ձայնավորի մոտ էլ աւ-ի տեղ գնում են օ. ինչպես՝ հօատ, սարկօարգ. այս տարբերակներն էլ չենք հիշատակում: Բայց երբեմն էլ օ և ո հնչման նմանության հետևանքով աւ-ի տեղ գրում են օ. կամ նույնիսկ ւ կորցնելով՝ պարզապես ա, ինչպես՝ ահաւ, աւնաւ, օհաւ: Եվ կամ ո-ի տեղ՝ օ. ինչպես՝

ապելիոդ=ապելիոզ, ցօղ=ցող, ցօղուն=ցողուն, մորուք=մօ-
րուք

աստախտոս, տե'ս բառացանկում
կուլ բաղաձայնի մոտ աւ հնչվելով աֆ նույնպես անցել է գրու-
թյան մեջ, ինչպես՝

աւթիմոն, աֆտիմոն, աֆթիմոն
Բառարաններում աւ գրչութիւնը (բաղաձայնի մոտ) վերաց-
ված է և միշտ գրում են օ. բացառութիւն են կաղմում միայն եր-
կու բառ՝ աղաւնի և նար: Կան բարբառներ, որոնք նաև այս դեպ-
քում գնում են օ, ինչպես՝ Ղարաբաղ, յրդօնէզ, նօք:

Առաջին՝ աղաւնի ձևի մեջ ւ-ն գտնվելով թրթռուն բաղաձայնի
մոտ, հնչվում է այժմ վ, իսկ նար բառի մեջ, թեև թավ բաղաձայ-
նի մոտ գտնվելու պատճառով հնչվում է իրապես ֆ, սակայն գրա-
կան լեզուն պահում է նար, իսկ նաֆք ձևը համարվում է օտար
բառ:

Երկու ա-ի հանդիպում

Հայերենը չէր հանդուրժում երկու ա-ի հանդիպումը: Հին հա-
յերենի մեջ երկու ա-ով բառ դոյութիւն չունի: Այժմ է, որ հայե-
րենն սկսել է ներող գտնվել երկու ա-ի հանդիպման. օրինակ,
ասում ենք «ամենամանկ, ամենամանիտ, ամենաարթուն» և այլն:

Օտար բառեր փոխ առնելու ժամանակ, հնազույն հայերենը
կա՛մ այդ դեպքում երկու ա-ի միջև ներմուծել է հ, և կամ ավելի
գիտական ձև տալու համար բառին, պահել է երկու ա, իբրև բա-
ցառիկ ձև:

Այսպես՝ Աբրահամ անունը գրված ունենք Աստվածաշնչում
բե՛ Աբրահամ և թե՛ Աբրահամ:

Փողովուրդը սակայն հնչում էր երկու ա-ի միջև ներմուծելով
յ կիսաձայնը. օրինակ՝ ապուսան>այալուսան:

Հիշենք, վերջապես, շատ տգետ գրիչների մոտ հանդիպող այ
գրչութիւնը բառամիջում, փոխանակ ա-ի. օրինակ՝ համար=հայ-
մար, կամ նույնիսկ՝ հայմայր: Այս սխալ գրչութիւնը ոչինչ չի ցույց
տալիս, այլ միայն այն, որ բառավերջում այ կարգացվում էր ա՝
հետին դարերում:

ա-ի սղում

Քույր կը ճյուղի բարբառներում ա-ի սղումը սովորական երե-
վութի է: Ձեռագրերը, սովորաբար, պահում են հին ձևը, առանց

միջին ա-ի կորստի: Բայց զարմանալի է նաև նրա հակառակ
երևույթը: Արևմտյան գրականում սովորական է անպարար (ֆո-
կուսիկ), որ ծագում է արարերեն ājab ձևից. ուստի ավելի հա-
րազատ ձև է անպարար, ինչպես գտնում ենք մեր տարրերակ-
ների մեջ:

Այստեղ կարելի է հիշել նաև ապստամբ ձևը, որ ընդհանուր
ընդունված է այժմ և միայն Եզնիկի ձեռագրում է, որ գտնում ենք
ապստամբ հնազույն հարազատ ձևը:

Ե և է

Այս երկու տառերի ուղղագրութեան կանոնում բացառութիւն է
կազմում նաև աղեն «գրախոս» բառը, որ գրվում է նաև աղին ձևով:
Բարդութիւնների մեջ ունենք՝ աղենարուղի կամ աղինարուխ, ա-
ղինասարաս, աղենալին, աղենական: Ըստ այսմ՝ Աղին ձևը հաս-
տատ է, թեև ածանցման մեջ ի-ն չի սղված: Մագում է ասորական
āden ձևից, որ կարելի է կարգալ նաև ādin, մանավանդ որ
ասորական ձևն է idinu. այս դեպքում աղին ոչ թե ձեռագրական
սխալ է, այլ տարբեր ընթերցվածք:

Բայց ե և է տառերն էլ գրչութեան մեջ շփոթված են իրար հետ
հնչման նույնութեան պատճառով, ինչպես՝ ապենիազ=ապլենիազ:

Ե և է տառերի հնչման և ուղղագրութեան մասին ընդարձակ
խոսել ենք իր տեղում. այստեղ մի ավելորդ անգամ ևս կարող
ենք հիշել, թե հնչման նույնութեան պատճառով ուշ դարերում, հա-
ճախ, կարող ենք պատահել ե-ի տեղ է և է-ի տեղ և գրչութեան:

եւ=իւ

Հնազույն հայերենում որոշ բառերի մեջ գրվում էր եւ, որ
հետո դարձաւ իւ: Այս ձայնափոխութիւնը գտնում ենք միայն v,
ղ և u բաղաձայններից առաջ. եղած օրինակներն են՝ ալեւր=ալիւր,
հաւեւր=հաւիւր, բեւր=բիւր, բեւր=բիւր, աղբեւր=աղբիւր, մեւա=
միւա, աղբեւա=աղբիւս, գեւլ=գիւլ, եւլ=իւլ:

Յույց տալու համար, որ այս երկու գրչութիւններից հնազույ-
նը եւ ձևն է, ունենք երկու ապացույց. նախ՝ մի բանի բառերի
հնդեվրոպական ձևը, այն է՝ ալեւր>եւիւ. aleuro, աղբեւր>հնիւ.
bheur, աւեււ>հնիւ. reug՝ արմատից. նույնիսկ բեւր բառը փոխառ-
յալ լինելով՝ փոխառու լեզվի մեջ գտնում ենք զենդերեն bāevaer
և պարսկերեն biver:

Երկրորդ ապացույցն այն է, որ հին հայերեն եւ ձայնախումբը դառնում էր է. այսպէս՝ հոլովման մեջ ունենք սեռականում՝ ալեւ—սեռ. *ալեւեւ>ալեւ, աղբեւ—սեռ. *աղբեւեւ>աղբեւ, գեւրդ—սեռ. *գեւեղ>գեղջ. իսկ մեա բառն արդեն ծագում է միւս (մեկ էլ) ձեռք, ուր եւ երկրորդը հայտնապէս երևում է:

Այս ձեռքի տարբերակներն են՝
առեւծ, առիւծ, առեւած, առոյծ
աղբիւս, աղբիւսք, աղբիս, աղբեւ, աղբիսք
աղբիւր, աղբեւր աղբեր:

և տառի ջնջումը

Երբ դաժմայնի մոտ և շունչը թույլ է արտասանւում, ուստի աշխարհ, քանապարհ բառերը միշտ էլ լսում ենք աշխար, քանապար: Հակառակը, ոմանք էլ Երբ դաժմայնից հետո զգում են կամ կարծում են զգալ և, ինչպէս՝

նշխար=նշխարհ. այսպէս և
ալամահրի զրված կա նաև ալամարի

և հավելւած

Ամենքին հայտնի է, որ բառակցում մի քանի տեղ գտնում ենք և հավելւածը, որ ունի սաստկական արժեք. այսպէս են՝ հմուտ, հլու, հգօր, հսկայ, հպարտ (պարծ արմատից), հուժկու (ոյծ արմատից, իսկ կու մասնիկի համար հմմտ. յաղթիւ):

Բայց կան մի քանի բառեր էլ, որոնց նախաձայն և-ն սաստկացուցիչ չէ, ինչպէս ազանիլ>հազանել, աբբեւալ>հաբբել:

Այս երկուսի համար իմ կարծիքն այն է, որ առաջինն ստացել է և հավելւածը՝ տարբերելու համար իրարից զբարբար ազանիլ «հազանել» և ազանիլ «իջանանել» բառերը:

Արդի բարբառներում այս երկու բառերից երկրորդը իսպառ ջնջւած է. այս դեպքում առաջին բառի վրա և ձայնի հավելումը ավելորդ պիտի լինէր. բայց այդ հավելումը շատ հին է և կատարւած է այն ժամանակ, երբ դեռ երկրորդ բառը կորած չէր լեզվից: Այդ հնութիւնը երևում է նրանից, որ արդի շատ բարբառներ հազանիլ բառը դարձրել են խայնել:

Գալով երկրորդին (հաբբել), այստեղ էլ կարծում եմ, որ և-ն սաստկական է. բառն ունի հնապէս պարզ «իմել» նշանակութիւնը (ա՛րբ ջուր), իսկ ետ ստացվեա նաև «գինով լինել» նշանակե-

թիւնը, այս երկուսն իրարից տարբերելու համար երկրորդի վրա ավելացրին և սաստկականը:

և նախաձայնն ունի նաև հարբ բառը, որի և ձայնը ավելացրել են որբ ձեռք վրա, զանազանելու համար որբ (որբատունկ) բառից:

Այս երկու նշանակութիւնները բխում են միևնույն արմատից (տե՛ս Արմատական բառարան, է, էջ 572):

արօր=հարօր

Ոմանք կարծում են, թե այս և նախաձայնը հնդեվրոպական porthu ձեռք Երբ դաժմայնից է. բայց դա ճիշտ չէ. բառակցում հնդեվրոպական նախալեզվի Երբ դաժմայնից թեև a, e ձայնների մոտ գտնում է և, բայց օ ձայնավորի մոտ ջնջւում է. ինչպէս՝ հետք—ոտք, հեղեղ—ողողել: Գալով հարեղայ բառին, սրտ և հավելւածի մասին ոչինչ չգիտենք:

յ ձայնի հավելում

Այս հավելումը կատարւում է անկախ և-ի հավելումից: Գիտենք, որ հին հայերենում և և յ լծորդ են եղել, ինչպէս ցույց են տալիս հինգ—յիսուն, հեա—յեա և այլն բառերը: Գիտենք նաև, որ յ նախդիրը, ինչպէս և ուրիշ նախդիրներ հետագայում ջնջվել են: Այս հիման վրա շփոթութիւն է ծագել այն մասին, թե բառակցում պետք է պարզ ձայնավոր գրել, թե յ ավելացնել: Այս երևույթը հատկապէս նկատելի է Մուշի բարբառում:

Այսպիսով առաջանում է երեք տարբեր երևույթ: Նախ՝ յ և և տառերի շփոթութիւն. երկրորդ՝ յ բաղաձայնի հավելումը ձայնավորով սկսվող բառերի վրա և երրորդ՝ ընդհակառակը յ բաղաձայնի ջնջումը յ-ով սկսվող բառերից: Ահա սրանց համար օրինակներ.

- յովատակ, յովտակ, հովտակ
- ախնթոր=յախնթոր
- յոռի=ոռի
- յովազ=ովազ
- յուրով=ուրով (տե՛ս Վարդան, Առակը, էջ 9 և 108)
- յոխորա=ոխորա
- յեսան=եսան:

և-ի հավելում

Երբ բառակցում մ բաղաձայնը կա, կամ բառի մեջ և կա, ավելանում է ևս մի և. օրինակ՝ մեմեմ, մանչ, կանանչ, հանանչ. կամանց, կարմունց:

Առանց ն-ի կամ մ-ի էլ այսպիսի հավելում լինում է. ինչպես՝
ախիւք, ախիւքն:

Երբ բառի մեջ ն կա, շփոթմամբ նրանից առաջ կամ հետո
ավելացնում են կա մի ն. օրինակ՝ աղամանդ, անդամանդ, աղա-
մանտ, անդամանտ, ակունիդոն, անկունիտովն, աղեկատ, աղէկանդ.

յ

Երբ բառի մեջ պատահում է այս ձայնախումբը, հնչման մեջ
առաջանում է երկդիմութուն. ոմանք հնչում են մի յ (y), ոմանք
կրկնում են այդ կիսաձայնը. այսպես՝ երեկոյեան, արևմտահայե-
րի մեջ հնչվում է երեկոյան, իսկ արեւելահայերի մեջ՝ երեկոյան.
որի հիման վրա էլ կազմվել է Արեղյանի արդի ուղղագրութունը:
Այս հիման վրա ունենք ձեռագրերում՝

ախոյեան, ախոյան

այեր, աներ:

ր-ի հավելում

Երբ բաղաձայնի հավելումը սովորական երևույթ է թե՛ գրաբա-
րում և թե՛ մանավանդ բարբառներում. օրինակ՝ սարկաւազ հընչ-
վում է հարասութամբ սարկաւազ (առաջին ր-ի ազդեցութան
տակ): Կարող է նաև մի որևէ հոմանիշ բառ իր մի ուրիշ հոմանիշի
վրա ավելացնել ր, ինչպես՝ արբուրայ, որ հունարեն արբո
բառի ազդեցութամբ ստացել է արբուրայ ձևը:

խ, ց, դ, զխ

Հայտնի է, որ բարբառների մի մասում (վանից դեպի արևելք)
ն ձայնը դարձել է խ. ձեռագրերում, մանավանդ վասպուրականի
շրջանում գրված ձեռագրերում, այս երկու ձայնները շփոթվում են
իրար հետ: Ուսումնականը գիտեր, որ հայր բառը ժողովրդի մեջ
հնչվում է խէր և աշխատում է ճշտիվ գրել հայր. բայց մի անսո-
վոր բառ, որի ճիշտ հնչումը չգիտե, իր ձեռքի տակ պիտի շփոթվի
և երբեմն խ-ի տեղ պիտի գրե ց, կամ ց-ի տեղ խ: Բայց դ տառն
էլ, թեև ձայնավորի մոտ իր ճիշտ հնչումը պահում է, բայց բաղա-
ձայնից առաջ հնչվում է խ, ինչպես՝ բուղթ, որ հնչում ենք բուխա,
կամ աղխատ, որ հնչում ենք ախկատ. այս պատճառով էլ դ տառն
էլ հաճախ շփոթվում է խ-ի կամ զխ տառի հետ, ինչպես՝

ախանդաղէս, ահանդաղէս, աղաւղաղէս, աղխաղեաղէս,
հանդաղէս

ախմար, ահմար, աղամար

ախնթոր, աղնթոր, աղխնթոր

ախտար, աղթարք

բախտ = բաղդ:

ղբ = խտ

Մեր արդի հնչմամբ դժվարանում ենք խք հնչել միասին. նույն
դժվարութունը ծագում է զբ հնչելիս. այնպես որ բուղթ հնչում
ենք բուխտ, ինչպես որ յաղթել հնչում ենք հախտել: Հնչման տար-
բերութունը բացատրվում է երկու թավ բաղաձայնի միացման
ժամանակ շունչ խնայելու նպատակով: Զեռագրերի մեջ, բոտ այսմ,
գտնում ենք ախտար (պրս. āxtar), աղբարք:

ղխ = խ

Մի խումբ բառերի մեջ գտնում ենք այս տարբերակը, ինչպես՝
բաղխել, ուղխ = ուխ, բղխել = բխել, աղխ = ախ:

Թե սրանցից ո՞րն է հարազատը՝ առանց ստուգարանութունը
գտնելու անհնար է այդ որոշել: Այսպես, բաղխել ձևը, անշուշտ,
սխալ է, որովհետև կրկնավորի մեջ ունենք բարախել. միևնույն
ժամանակ այս բառի դեմ լազերենում ունենք դորախի «ծեծեցի,
խփեցի»: Շփոթման պատճառ է հանդիսացել տեղ-տեղ այն երե-
վույթը, թե սաստկութան համար բաղաձայնը պետք է կրկնվի,
ինչպես որ ասում ենք՝ ամմեն, հիմմար, այսպես և թերևս՝ բղխել,
փոխանակ բխել:

խ և դ

Բառավերջում, ընդհանրապես, թրթուռն և խուլ շփոթվում են
իրար հետ: Բխելով այն երույթից, որ բերանը փակվելու ժամա-
նակ, բերնում հավաքված շունչը պետք է դուրս վտարվի, թրթու-
րը դառնում է խուլ, նույնիսկ՝ թավ: Այս հիման վրա, օրինակ,
առևերեն ЛОБ > ЛОП, կամ հայերեն՝ սարկաւազ, պատարագ, կարագ
հնչվում են սարկավաք, պատարաք, կարաք: նույն հիման վրա
բառավերջի խ > դ, այնպես որ մինչև իսկ երբեմն դժվարանում ենք
խմանալ, թե ո՞րն է ճիշտ ձևը, եթե բառի ստուգարանութունը
հայտնի չէ մեզ: Այսպես՝

զազախ=զազազ
սանդուխք=սանդուգք
ասեղն=ասեխ
ասաղ=ավախ (պրս. 𐭠𐭣𐭠𐭮):

ա=այ

Որովհետև բառավերջում ա հնչյունը գրվում է այ, ազեա գրիչներինց ոմանք կարծում են, թե բառամիջումն էլ այդպես պետք է գրել և պարզ ա-ի տեղ գրում են այ. օրինակ՝ րևամայ փառեացն, րևամայ փառեացն=րևամափորոն, ամաբանոց=ամբայնոց (գլխաշոր):

Կամ նույնի հակառակը, ինչպես՝ այրիո, արիո:

Ճիշտ այսպես, նաև ոչ բառավերջում կարգացվելով ո, ազեա գրիչները երբեմն ոչ-ի փոխարեն գրում են ո և կամ ընդհակառակը, օրինակ՝ այո=այոյ:

Ջանազան մեկնությունների խառնուրդ են ներկայացնում որոշ բառեր. ինչպես՝ կարոս բույսի անունը, որ ունենք գրված մի կողմից ո տառով, մյուս կողմից օ տառով, ինչպես նաև առ ձևով:

Արանցից առաջինը հունարենի տառադարձություն է, երկրորդը, որի հեռանդով նաև երրորդը, այժմ հատուկ է վանա բարբառին:

Ունենք նաև 7 ձև, որոնք սկսվում են Գ բաղաձայնով. սրանք մի կողմից հունարեն Կ բաղաձայնի նոր հնչյունն են ներկայացնում, մյուս կողմից էլ թուրքերեն kereviz ձևի տառադարձությունն են, բնականաբար ք նախաձայնով. այժմ էլ զարարացիք արտասանում են Գառավլուզ:

2. ՉԱՅՆԱՇՐՁՎԱՅ ԲԱՌԵՐ

Բարբառային բառերի մեջ առանձին շարք են կազմում ձայնաշրջված բառերը:

Չայնաշրջություն ասելով հասկանում ենք այն երևույթը, որով հայերենի պայթական բաղաձայնների երեք աստիճանները (բ, պ, փ, գ, կ, ֆ, դ, ա, ք, ջ, ճ, չ) փոխանակում են իրար:

Այս երևույթը սկսվել էր դեռևս V դարում, որի ապացույցներն են հունարեն հեղինակների կազմած բառերից մի քանիսը. ինչպես՝ ապարարք=փխ. ապաղարձ, ներբող=փխ. ներփող, ենրա-

գրել=փխ. ընդադրել և այլն: Ավելի ուշ, հատկապես XII դարում, կիրիկյան շրջանում ձայնաշրջության օրենքը ստացավ լիակատար գործադրություն. բոլոր պարզ խուլերը դարձան թրթռուն, բոլոր թրթռունները՝ շնչեղ թրթռուն կամ պարզ խուլ, խսկ թավերը մնացին թավ, քիչ անգամ միայն (ինչպես Մուշ և Համշեն) դարձան պարզ խուլ: Այս օրենքը մինչև այժմ պահված է արևմտահայ բարբառներում և հաստատուն կերպով գործադրվում է:

Ահա այս օրենքի զանազան երևույթները մեր տարբերակների մեջ:

Տարբեր գրությունների մեջ ամենասովորական երևույթն է թրթռունի և խուլի կամ թավի փոխանակությունը: Ըստ արևելյան տառադարձության, որ ավելի հարազատ է, երբ բառը գրվում է բ, գ, դ, ջ, ն թրթռուն բաղաձայններով, արևմտյան տառադարձությամբ նույն հնչյունն ստանալու համար գրվում է պ, ա, կ, ծ, ճ, չ. ինչպես՝

ազար=ազապ
ասրն=ասպն
ազգր=ասար
ակատ (բարբ), ազաթէս, ազաղէս, յակաթ
չազազս, չազակս
ազջիկ, ազճիկ
առէջ=առէչ
բադ, բազէ=պաա, պազայ
բաթրոն=փաթրոն:

Ռեզականից հետո քրքուոն

Հայերենի բոլոր բարբառներումն էլ անզականից հետո թրթռուն բաղաձայն է գրվում: Այսպիսով հաճախ խուլ և թրթռուն շփոթվում են իրար հետ: Ահա այս կարգի գրությունների մի ցուցակ, որոնց մեջ ըստ արևմտյան տառադարձության ա-ն պետք է կարգալ դ, պ-ն պետք է կարգալ բ, ծ>ձ, ճ>ջ:

ազամանդ>ազամանա, անզամանդ, անզամանա
ազանդեր, ազանտեր
խնջոջք, խնճոջք
աղեկատ, աղեկանդ
ամբարիշտ, ամպարիշտ

Հինգ, հինկ

Այս օրենքը թեև ձայնաշարժության օրենքի մեջ բացատրություն է կազմում, բայց նույնպես շատ հաստատուն է և ցույց է տալիս, որ սնգականից հետո բողաձայնը չի փոխում իր հնչումը և զրա համար տառն է փոխում:

գ=f

Բառավերջում, հնչման նույնության պատճառով, այս երկու տառերն էլ շփոթվում են իրար հետ. ինչպես՝

արուգ=արուք

պատրիարք=պատրիարդ

փափագ=փափաք

հէգ=հէք:

գ=u

Երբ արևելյան և արևմտյան տառադարձության մի գրությունը փոխվում է, պայթուցիկ բողաձայնների կողքին գտնված գ և ս տառերն էլ փոխանակում են իրար. ինչպես՝

ազբն=ասպն=ասբն

ազզբ=աստբ

զզեստ=սզեստ, զզենուլ=սզենուլ, զզալ=սզալ

Այս օրենքից տարբեր է այն երևույթը, որով բառավերջի ս-ն դառնում է գ:

Մեր տարբերակներում ունենք հետևյալ օրինակները.

աճաս=աճագ

զոս=բոզ, և այլն:

3. ՕՏԱՐԱԶԳԻ ԲԱՌԵՐ

Հայերենի մեջ օտար փոխառությունները շատ մեծ թիվ են կազմում. դրանց մի մասը բոլորովին մերվել է հայերենի հետ և մինչև այսօր էլ գործածական է մեր լեզվում: Սակայն շատ մեծ թիվ են կազմում նաև այն բառերը, որոնք, թեև հին գիտական գրքերում գործածվել են, բայց այսօր բոլորովին անգործածական են: Այս վերջին կարգի բառերը, իբրև անսովոր բառեր, գրիչների ձեռքի տակ այլևայլ ազավաղ ձևեր են ստանում:

Տալիս ենք մի քանի ցուցակ այս կարգի ազավաղումների համար, յուրաքանչյուր լեզվի համար առանձին՝ հունարեն, լատիներեն, եբրայերեն, արաբերեն և թուրքերեն.

Հունարենի ազավաղված ձևեր

Այսպիսի օրինակներ շատ կան մեր լեզվի մեջ. հիշում ենք մի քանի կարևոր ձևեր. օրինակ՝

աղարողոն, աղբբողոն, աղբբողովն, աղբբանոս, աղարղոն, զբբողոն, զբբողոնիկ, զբբոնիկ, անաղափ, անարող, անափող, բողոն, բուղոն

թեսմոփորոն, թեսմայ փառոեացն, թեսմոյփորացն, թեսմայփառեացն ամեթովս (քարը), ամեթիստոս, ամեթոս, ամէթիստրոն, ամթիստրոն

Այսպես նաև լատիներեն նոր բառեր, ինչպես՝

գորփուրայ

ելեկարիոն, 12 ձևով

լենգիրիոն, 9 ձևով

կղմինար, 9 ձևով

կոկորդիլոս, 11 ձևով

տե՛ս բառացանկը

Երբեմն հունարեն բառի զանազան ընթերցվածները ցույց են տալիս այն ժամանակվա հունարենի հնչումը, ինչպես՝ մագիստրոս, մածիստրոս, մայիստո, մայէստո:

էս, օս, ոս.—Հունարեն բառերը այս վերջավորությունն ունեն ուղղականում, մինչդեռ մյուս հոլովների մեջ ջնջվում են. մինչև անգամ Յովհաննէս անունը գտնում ենք Յովհանն, սեռ. Յովհաննու ձևերով: Այսպես և ուրիշ բառեր. օրինակ՝

ակատ, ազաթէս (քարը)

ակատ, ակատրիոն (մակույկ)

n>ով.—Հունարենից փոխառյալ բառերի մեջ մեր հին ուսումնականները օ տառը տառադարձել են ո, իսկ օ տառը տառադարձում են ով: Նույնիսկ հայերեն բառերը ձևափոխում են այս ոճով. ինչպես՝ Մեսոռպ=Մեսոռովր, մանավանդ օտար բառերում, ինչպես՝ Յակոր=Յակովր, Աղոնա=Աղովնա, Աղոնայի (Տէր իմ)=Աղովնայի. Ակոնիստոն=ակոնիստովն, աղկիոն=աղկիովն:

Արաբերեն փոխառություններ

Արաբերեն բառերը զրավորի մեջ շատ հաճախ զուրկ են լինում ձայնանիշներից. այդ դեպքում ընթերցողին է մնում կարգալ իր

ուղած ձևով. ուստի ա, է, ի, ձայնավորների տարբերությունը սովորական է:

Այս երևույթը հաճախ տեսնում ենք մեր բժշկարանների կամ նման գիտական աշխատությունների մեջ. օրինակ՝

աթխար, աղխար, օթխոր, իթխիր

ակրկարհայ, ակիկահայ, ակիրկարհա, ակիրկարհա
ամիրաշխամ, ամիրիշխան

նման երևույթ կա նաև երբայերենի համար. օրինակ՝

ակքան, որող, եկքան

ահիահ, ահյահ

Որովհետև արարերեն բառերը մտել են նաև պարսկերենի և թուրքերենի մեջ և նրանց միջոցով անցել են հայերենի, ուստի կարող են ստանալ զանազան ձևեր: Այսպես են նաև պարսկերեն բառերը. օրինակ՝ գոհար բառն ունի հետևյալ ձևերը՝ ջօհար, գաւհար, գուհար: Առաջինը V դարի պահլավերեն ձևն է, երկրորդը (ջօհար) արաբական ձևն է, որ արևմտյան տառադարձությունը կարող էր գրվել նաև ճօհար կամ ճոհար, երրորդը (գաւհար) նոր պարսկերեն ձևն է ստացել, որ կարող էր գրվել նաև կաւհար, չորրորդը (գուհար) թուրքական արասանություն է (որ և կաւհար):

Լավ օրինակներից է այս մասին նաև մարզանգոջ բուսանունը, որ պարսկերեն է և ունի 12 ընթերցված (տե՛ս բառացանկում):

Արարեւեն — արար. — Այս տառը հնչում է գանաղան ձևերով: Բուն հնչումը կոկորդի խորքում կազմված մի ձևն է, որ չկա հայերենում, բայց ունենք վրացերենում՝ Կ ձևով, որ այժմ տառադարձում ենք Կ: Այսօր տաճիկներն այդ տառը հնչում են Կ, Կովկասի թուրքերը՝ Կ, Ղրիմի թաթարները՝ խ. ըստ այսմ էլ հայերեն ձեռագրերը գրում են գանաղան ձևերով, ինչպես՝

ախախիա, աղաղիա, խախիա, կակիա
ախունա, աղխունա, ալխունա, արխունա

Թուրքերեն փոխառություններ

Թուրքերենից փոխառյալ բառերը կարող են ձայնավորների տարբերություն ունենալ, հասկապես ա և և, ձայնավորների: Կարող են նաև ազդված լինել արևելյան կամ արևմտյան տառադարձությունից. օրինակ՝

աթարեկ, աթարեկ, աթարակ, աթարակ
ակիր, էկիր (խոտը)

4. ՏԱՌԱՋԵՎԵՐԻ ՇՓՈԹՈՒԹՅՈՒՆ

Հայերեն այբուբենի մեջ տառեր կան, որոնք ձևով շատ նման են. սրա համար էլ, նույնիսկ այսօր մեր տպագրության մեջ վրիպակները շատ են լինում. ինչպես՝ ա և ա, գ և դ, գ և դ, ո և ս: Նույն շփոթման վտանգին ենթարկված են նաև հին գրիչները. ինչպես՝

ասմաղուն, սամաղուն, ասմաղուն, ասմաճուն

Երկաթագիր գրության մեջ մ նույնպես շփոթվում է ա-ի հետ, որի հայանի օրինակն է գեմեղել (տե՛ս Արմ. բառ.), արբենա=արբենա:

Նույնիսկ չ տառը շփոթվում է երբեմն գ տառի հետ (բառասկզբում). այս մասին առանձին հոդված ունի Հ. Ա. Վարդանյանը:

բոշոյ = բոշոյ

գոյի բուակ = գոյի բուակ

թողոփա = թոլոփ

լեկաթ = լհկաթ

հանդոյրժ, անհանդոյժ, անհանգոյժ

մաշմն = մազմն (բույսը)

մերուզան = մերուշան (ծաղիկը)

մեղգէտ = մեղգէտ:

ս, ա և այլն

Բուրդիր գրության մեջ ս, ա, ա, ս, և հաճախ խառնվում են իրար. գրիչն իրար մոտ շարված տառայունները լավ չտեսնելով շփոթվում է. սրա դասական օրինակը դարձավ Եզնիկի ստարեկայք բառը, որ վաղուց ի վեր կարդացվում էր ասորենայք: (Այս մասին իմ հոդվածները ծանոթ են. բոլորովին վերջերս ընկ. Վարագ Առաքելյանը հայտնեց ինձ, թե Զմյուռնիայի տպագրության մեջ վրիպակների ցանկում այդ սխալն արդեն ուղղված է): Նույն հեղինակի մոտ ունենք նաև փառատուրփին բառը, որ Եզնիկի ձեռագրում գրված է փառատուրփին. և և ո տառերն այնպես մոտիկ գրված են իրար, որ անվարժ աչքը կարող է կարգալ ա, ինչպես տեսնում ենք Վենետիկի տպագրության մեջ:

Այսպիսի սխալները շափազանց շատ են. ինչպես՝

արաունը = արաունը

գոյի բուակ = գոյի բուակ

ակոզութ = ակալութ (ող = ալ)

նման սխալ գրչություններ կան նաև հունարենի գրչության վրա հիմնված. ինչպես՝ ակումիտ = ակիմիտ, ակտար = ակտար:

5. ԲԱՌԵՐԻ ՇՓՈԹՈՒԹՅՈՒՆ

Երբեմն տառերի շփոթությունն այնքան առաջ է գնում, որ ստացվում է բոլորովին տարբեր մի բառ. այսպես՝ աշակ դառնում է վարչամակ:

Այս անհանդուրժելի սխալը մեղմանում է, երբ նկատենք մի-չին գրչագրական սխալները. աշակ, աշախ, վաշախ, վաշաղ:

Քուանիկ (հարուստ) բառն է, որ միայն մի անգամ գործածված բառ է, մի ուրիշ անգամ դարձել է գրուանիկ, շփոթելով գրուան բառի հետ:

6. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս երևույթը, որ ծանոթ է լեզվաբանության մեջ, երբեմն տեղիք է տալիս տարբեր գրչություն, ինչպես՝ աղկաղկ (աղբատ) > անկաղկ (մտածելով, թե աղբատը բացասական գաղափար է):

7. ԳԻՏԱԿԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ինչպես կա ժողովրդական ստուգարանություն, որ կատարվում է հասարակ ժողովրդի բերանում, նույնպես և կա գիտական ստուգարանություն, որ կատարվում է գիտնականների գրչի տակ: Երբ գրականագետը հունարեն grammaticos, բառը գրում է grammaticos, անշուշտ բառը հանում է գիր և մատնելի բառերից. նմանապես, երբ հունարեն draconticon = դրակոնտիկոն դարձնում է գրակոնտիկոն, անշուշտ բառը հանում է գիր բառից: Այսպիսի գիտական ստուգարանության արդյունք են՝

ախտարմար, ախտարմուլ, ախտարմուղ, ախտարմաղ, ախտարմախ

ասեկան, ասկի

ամեհի, ամահի (կարծելով ան բառից)

աուեզ = յարալեզ

բղջախոհ = բողջախոհ

դահեկան = դարեհական

հարազատ, հայրազատ

Չանձախարիք բառը ո՛վ գիտե ո՛ր գրիչը ձանձրանալ բառից կարծելով, գրել է ձանձրախարիք: Թվում է, թե նույնպիսի մի սխալ է յղեակ = ղեկ գրչությունը, իբր թե յղել բառից:

Լ=Պ

Կիտենք, որ հին հայերենում ղ հնչվում էր լ, որ հետո դարձավ ղ և այդպես էլ մնաց լեզվի մեջ. օրինակ՝ խաղող, որ հների մոտ հնչվում էր խալոլ, այսօր ամեն տեղ էլ հնչվում են խաղող: Բայց հատուկ անունները և օտար բառերը այստեղ խառնվեցին իրար: Մենք գիտենք Գաղղիա ճիշտ չէ և դարձնում ենք այժմ Գալղիա: Հներն էլ գրում էին ըստ դիպի՝ աղէղու, ալէլու, ալէլուփա, ալէլուփայ. աղխունա, ալկունա:

8. ԱՆՁԻ ՆՎԱՍՏԱՅՄԱՆ ՁԵՎԵՐ

Արևելքի ժողովուրդների մեջ խոսակցին բարձրացնելու, իսկ իր անձը նվաստացնելու սովորությունն ընդհանուր է: Այս կողմից նշանավոր են շինացիք, որոնք խոսակցի աստիճանի և տարիքի համեմատ բազմաթիվ հարգական ձևեր ունեն: Պարսկերենում «ես» ասելու փոխարեն միշտ ասում են «banda», որ բուն նշանակում է «ծառա»: Հայերենի մեջ էլ միշտ ասում ենք հումանֆդ:

Անձի նվաստացման համար ձևազարդի հիշատակարաններում բազմաթիվ ձևեր կան. ինչպես՝ նուաստս, շնչիես, ոչիեչս, ծառայս, հող և մոխիր ոտից ձերոց, զարչապար և այլն:

Ե. Լալայանի «Յուրազի ձևազարդ Վասպուրականի» գրքում, մի հիշատակարանի մեջ գտնում եմ ներբան բառը, որի մոտ Լալայանն ավելացրել է հարցական նշան: Անշուշտ պետք է կարգով ներբան, որ է «զարչապար»:

Նվաստական ձևերից մեկն էլ ուղեցել է գործադրել Պսակ կամ Ստեփանոս անունով մի բահանա, որ իր անունը դարձրել է ԼՊխա, իբր թե «սատանա», բայց դուրս է եկել պարսկերեն Izid «Աստված» (տե՛ս «Հայոց անձնանունների բառարան», հատ. 2, էջ 381):

Վերջապես կա անձի անարգական մի ուրիշ ձև, որ կազմվում է բառախաղով. այսպես՝ արեղայ բառը դարձրել են խարեղայ, այսինքն «խար եղայ», խարվեցի:

9. ԱՆՍՏՈՒՅԳ ԲԱՌԵՐ

Այն բոլոր ձևերից դուրս, որ բնում ենք այստեղ, կան նաև անստույգ բառեր: Երբ բառը արդի լեզվում գոյություն չունի, կամ հին գրականության մեջ հազիվ մեկ կամ երկու անգամ է գործած-

ված, մանավանդ, երբ նրա ստուգաբանությունը հայտնի չէ, անհր-
 նար է որոշել նրա ճիշտ ձևը, եթե ձևագրերում տարբեր գրչու-
 թյամբ է ներկայանում. այսպես՝

ականդուկ, ակընդուն
 աղթաման, աղցաման և այլն:



ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձայնագրություն	5
Մասք	5

**ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ
 ՉԱՅՆԱՓՈՒԹՅՈՒՆ**

Գրվի Ա. Ձայն	
Գրվի Բ. Ձայնական գործարաններ և նրանց գործունեությունը	31
Գրվի Գ. Այբուբեն և տառագարություն	53
Գրվի Դ. Ուղղագրություն	83
Գրվի Ե. Ձայնարանական գործիքներ	92
Գրվի Չ. Ձայների զասակարգությունը	104
Գրվի Է. Ձայնավորներ	110
Գրվի Ը. Կրտավաններ	139
Գրվի Պ. Բաղաձայններ	153
Ա) Ընդհանուր ուսումնասիրություն	153
Բ) Սեղմ կամ տեղական բաղաձայններ	161
Գ) Պայթական բաղաձայններ	183
Դ) Կրտավայթական բաղաձայններ	196
Ե) Կողմնապայթական և սեղմապայթական բաղաձայններ	201
Ամփոփում	206
Գրվի Ժ. Հնդերոպական նախալեզվի և հայերենի ձայնական գրությունը	218
Գրվի ԺԱ. Ձայնախմբեր և վանկ	251
Գրվի ԺԲ. Ձայնի բարձրությունը	283
Գրվի ԺԳ. Ձայնի ուժգնությունը	312
Գրվի ԺԴ. Ձայնի տևողությունը	340
Գրվի ԺԵ. Բիթմ և զաղար	350
Գրվի ԺԶ. Կետագրություն	357
Գրվի ԺԷ. Համառոտագրություն	378

**ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ
 ՉԱՅՆԱՓՈՒԹՅՈՒՆ**

Գրվի ԺԸ. Ձայնական փոփոխություններ	389
1. Ձայնական օրենք	389
2. Ձայնարանական ուսումներ	420
3. Բաշատություն	421

	4. Զայնափոխության վերադարձ	425
	5. Չայնական օրենքների ժամանակագրությունը	425
Կլույս	ԺԹ. Չայնավորների ճայնափոխությունը	433
Կլույս	Ի. Կիսաճայնների և բաղաճայնների փոփոխությունը	446
	1. Կիսաճայնների ճայնափոխությունը	449
	2. Չայնորդների ճայնափոխությունը	451
	3. Պայթականների ճայնափոխությունը	455
	4. Կիսապայթականների փոփոխությունը	460
	5. Շփականների ճայնափոխությունը	460
Կլույս	ԻԱ. Հնդերօպական լեզուների ճայնափոխությունը	463
	1. Չայնավորներ	464
	2. Չայնորդներ	482
	3. Երկբարբառներ	511
	4. Պայթականներ	516
	5. Շփական	555
	6. Կրկնակ բաղաճայններ	563
	7. Բաղաճայնների խմբերը հայերենում	569
	8. Բառավերջ	570
	9. Չայնավորի անկումը վերջավանդում	575
	10. Բաղաճայնների անկում	576
	11. Հավելում	578
	12. Տեղափոխություն	581
	13. Հայերեն ճայնների համապատասխանները հնդերօպականում	582
	14. Ընդհանուր ակնարկ հնդերօպականից հայերեն ճայնափոխության	584
Կլույս	ԻԲ. Հայերենի ճայնափոխությունը	591
	1. Չայնավորների փոփոխությունների ընդհանուր նկարագիրը	591
	2. Չայնավորների ճայնափոխությունը	594
	3. Չայնավորի անկումը	601
	4. Չայնավորների ներդաշնակություն	605
	5. Չայնավորի հավելում	606
	6. Երկար ճայնավորներ	607
	7. Երկբարբառների ճայնափոխությունը	608
	8. Երկբարբառացում	608
	9. Երկբարբառների ճայնավորացում	609
	10. Բաղաճայնների ճայնափոխությունը	625
	11. Բաղաճայնների փոփոխությունը ըստ ճայնավորի	659
	12. Բաղաճայնների աստիճանի հարմարեցում	660
	13. Հայերեն բաղաճայնների երեք աստիճանները	660
	14. Բաղաճայնները բառավերջում	661
	15. Քրթում բաղաճայններ	663
	16. Պայթական բաղաճայնների փոփոխությունները	668
	17. Կիսապայթական բաղաճայնների փոփոխությունները	669
	18. Բառամիջի բաղաճայնների փոփոխությունները	669
	19. Բաղաճայնների տարբերացում	670
	20. Հայերենի յուրահատուկ ներքին օրենքներից	670
	21. Միջին հայերենի ճայնաշրջությունը	673

	22. Նոր հայերենի ճայնափոխությունները	678
Կլույս	ԻԳ. Անմիջական և նմանողական ճայնափոխություններ	679
	1. Նմանարանություն	680
	2. Համանմանություն	686
	3. Տարանմանություն	698
	4. Խառնակում	702
	5. Տեղափոխություն	703
	6. Սղում և կրճատում	704
	7. Հարակցում կամ հավելում	714
	8. Հարասություն	716
	9. Նախասություն	717
	10. Քյուրըմբում	717
	11. Գրություն նմանությունից առաջացած ձևեր	719
	12. Տարու	721
	13. Անկանոն բառեր	723
	14. Ուսումնական բառեր	726
	15. Ընդլայնում	727
	16. Ժողովրդական ստուգարանություն	728
	17. Գիտական ստուգարանություն	734
	18. Չայնափոխության անորոշություն կամ շփոթ վիճակ	735
Կլույս	ԻԿ. Արտասահական թերություններ	737
Կլույս	ԻԸ. Ստուգարանություն	742
	Հ ա վ ե լ Վ ա ծ	773
	1. Ժողովրդական լեզու կամ բարբառային ձևեր	824
	2. Չայնաշրջված բառեր	834
	3. Օտարազգի բառեր	836
	4. Տառաձևերի շփոթություն	838
	5. Բառերի շփոթություն	839
	6. Ժողովրդական ստուգարանություն	840
	7. Գիտական ստուգարանություն	840
	8. Անձի նվաստացման ձևեր	841
	9. Անստույգ բառեր	841

ՀՐԱԳՅԱԼ ՀԱՎՈՐԻ ԱՃԱՌՅԱՆ

ГРАЖДЯ АКОПОВИЧ АЧАРЯН

ԼԻԱԿԱՏԱՐ ՓԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՅ ԼԵԶՎԻ

Հատոր VI

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
Հ. Անաոյանի անվան լեզվի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակչական խմբագիր՝ Ա. Հ. ՇԱՂԳԱՄՅԱՆ,
Նկարչական ձևավորումը՝ Կ. Թ. ՏԻՐԱՏՈՒՐՅԱՆԻ
Տեխնիկական խմբագիր՝ Մ. Ա. ԿԱՓԼԱՆՅԱՆ,
Սրբագրիչներ՝ Լ. Ս. ՍԱՐԱՖՅԱՆ,
Ա. Ա. ՂԱՓԼԱՆՅԱՆ

ԽՆԽ 1034 Հրատ. 2712 Պատվեր 147 Տպաքանակ 3000
Հանձնված է արտադրության 12/V 1967 թ., ստորագրված է տպա-
գրության 15/II 1971 թ., տպագր. 52,88 մամուլ, հրատ. 43,23 մամուլ,
պայմ. 74,0 մ., թուղթ № 1, 70 × 108¹/₁₆: Գինը 4 ռ. 73 կ.:

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության էջփածկի տպարան